

Ա Ե Ո Դ Ո Շ
Ղ Ի Ա Յ Ձ Լ Ւ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տ Ա Ս Ը
ՀԱՏՈՐՈՎ

„ՀԱՅԱՍՏԱՆ“ ԿՐԱԿՄԱՐԻ ԿԸՆԿՐԱՆ
ԵՐԿԵՐԻ 1967

թ տ թ թ թ թ
դ բ Ա Յ Ձ Ե Շ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ
ԵՐԵՐՈՐԴ

„ՀԱՅԱՍՏԱՆ“ իրադարձություններ
ԵՐԵՐՈՐԴ 1967

И (Udör)

¶ 85

Թումերենից բարգմանեց
Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ТЕОДОР ДРАИЗЕР
Собрание сочинений в десяти томах,
том III
Финансист

7—3—4 (на армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1967

ՏԻԼԱՐԱՒՄ

ԳԼՈՒԽ I

Ֆիլադելֆիան, որտեղ ծնվել էր Ֆրենկ Ալզերնոն Քառւ-
փերվուդը, ավելի քան երկու հարյուր հիսուն հազար բնակիչ
ուներ. Այդ քաղաքը հարուստ էր գեղեցիկ զբոսայգիներով,
փառաշուրջ շենքերով ու հին հուշարձաններով: Այն ժամանակ
դեռ շատ բան շկար այն ամենից, ինչ իմանում ենք մենք և
ինչ հետո միայն իմացավ Ֆրենկը. Հեռագիր, Հեռախոս,
նամակներ տուն բերելու սովորություն, քաղաքային փոստի
ցանց և օվկիանոսային շոգենավեր: Ո՛չ փոստանիշեր կային
ո՛չ էլ պատվիրված նամակներ: Դեռ ձիաքարշը գործածության
մեջ չէր մտել: Կարճ տարածության վրա երթևեկում էին ան-
համար հանրակառքեր, իսկ հեռու վայրեր մեկնելու համար
կար դանդաղ զարգացող երկաթուղացանց, որ դեռ սերտորեն
կապված էր նավարկելի ջրանցքների հետ:

Ֆրենկը բանկի շարքային ծառայողի որդի էր, բայց
տասը տարի անց, երբ մանշուկն սկսեց հետաքրքրասեր ու
սրատես հայացքով դիտել շրջապատը, մեռավ բանկի վար-
չության նախագահը, և բոլոր պաշտոնյաները համապատաս-
խանաբար առաջ քաշվեցին: Հենրի Ուորթինգտոն Քառվիեր-
վուդը «Ժառանգեց» գանձապահի օգնականի, այն ժամա-
նակվա նրա հասկացողությամբ, փայլուն պաշտոնը՝ տարե-
կան երեք հազար հինգ հարյուր դոլար ունիկով: Նա անմի-
ջապես ուրախությամբ հայտնեց կնոջը, թե որոշել է Բաթըն-
վուդ փողոցի № 21 տնից փոխադրվել նյու-Մարքեթ-սթրիթի

№ 124 տունը. ո՞շ այդ շրջանն էր այսպես ետ ընկած, ո՞շ էլ տունը՝ այն աղյուսաշեն եռահարկ մենարանը, որևէ ձեռվ չէր կարող համեմատվել Քառուիերվուդների ներկայիս կացարանի հետ։ Նրանք բոլոր հիմքերն ունեին ենթադրելու, որ ժամանակին կփոխադրվեն ավելի ընդարձակ մի բնակարան, բայց առայժմ սա էլ վատ չէր։ Միստր Քառուիերվուդը սըրտագին շնորհակալություն հայտնեց իր բախտին։

Հենրի Ուորթինգտոն Քառուիերվուդը հավատում էր միայն այն ամենին, ինչ տեսնում էր սեփական աշքով և միանդամայն բավարարված էր գանձապահի իր վիճակով։ Հետագայում այդ բանը նրան բանկիր դառնալու հարավորություն էր ընձեռում։ Այդ տարիներին նա պատկառելի տղամարդ էր՝ բարձրահասսակ, նիշար, զուսպ, հայացքը խոհուն, իսկ կոկիկ ու կարճ խուզած այտամորուքները գրեթե հասնում էին մինչև ականջների բլթակները։ Վերին շրթունքը, որ տարօրինակ կերպով շատ էր հեռու երկար և ուղիղ քթից, միշտ մաքուր ածիլված էր, ինչպես նաև սրածայր կզակը։ Սև ու թավ հոնքերը ստվերում էին կանաչավուն գորշ աշքերը, իսկ կարճ ու սղալած մազերը բաժանված էին կանոնավոր մասերի։ Նա մշտապես հագնում էր սերթուկ. այդ տարիներին ֆինանսական շրջաններում դա «լավ ճաշակ» էր համարվում, գլխին էլ ցիլինդր էր դնում։ Եղունգները պահում էր անթերի մաքուր։ Մի քիչ խիստ տպավորություն էր գործում, սակայն այդ խստությունը շինծու էր։

Զգտելով առաջադիմել հասարակության մեջ ու ֆինանսական աշխարհում՝ միստր Քառուիերվուդը ամեն անգամ զգուշությամբ ծանր ու թեթև էր անում, թե ում հետ է խոսում և ինչի մասին։ Հավասարապես զգուշանում էր, թե՛ իր շրջանում ժողովրդականություն շվայելող հասարակական կամ քաղաքական հարցերի մասին խոսելուց, թե՛ վաս համբավ ունեցող մարդկանց հետ շփվելուց։ Նշենք նաև, որ նա քաղաքական որոշակի համոզմունք չուներ։ Ո՛չ կողմնակից էր ստրկատիրության, ո՞շ էլ հակառակորդ, թե՛ այն ժամանակ մթնոլորտը հագեցած էր ստրկությունը վերացնել ցանկացողների և դրա պահպանման կողմնակիցների միջն

մզվող պայքարով։ Քառուիերվուդը հաստատ համոզված էր, թե երկաթուղիներ կառուցելու գործում կարելի է մեծ հարըստություն դիզել, միայն թե բավականաշափ կապիտալ լիներ, ինչպես նաև մի ուրիշ տարօրինակ բան. անձնական հմայք, այսինքն՝ իր հանդեպ վստահություն ներշնչելու ընդունակություն։ Նրա համոզմունքով՝ էնդրյու Ջեկսոնը բնավ էլ իրավացի չէր, որ հանդես էր գալիս նիկոլաս Բիոլի¹ և Միացյալ Նահանգների բանկի ղեմ. այս պրոբլեմն այդ տարիներին հուզում էր մարդկանց մտքերը։ Նա վերին աստիճանի անհանգստացած էր շրջանառության մեջ՝ գտնվող և իրենց բանկը ստեղ-ստեղ մտնող «փրուն փողերի» հոսանքից, թեև բանկն այնուամենայնիվ զեղչում էր գրանք և իր համար շահավետ կերպով շրջանառության մեջ էր զնում՝ տալով փոխառությունների ձգողը հաճախորդներին։ Ֆիլառելֆիայի ազգային երրորդ բանկը, ուր աշխատում էր նա, գործարարական թաղամասում էր, որ այդ ժամանակ համարվում էր ամբողջ ամերիկյան ֆինանսական աշխարհի կենտրոնը. բանկի տերերը զուգընթաց զբաղվում էին նաև բորսայական խաղով։ «Նահանգների բանկերը»՝ մեծ ու փոքր, այդ տարիներին բուժնում էին ամեն քայլափոխին. նրանք արդեն առանց վերահսկողության բաց էին թողնում սեփական բանկտոմսեր անհույս և որևէ մեկի անհայտ ակտիվների հիման վրա և անհավատալի արագությամբ կոտր էին ընկնում կամ ժամանակավորապես դադարեցնում վճարումները։ Այդ բոլոր գործերին իրազեկ լինելը միստր Քառուիերվուդի գործունեության անխափան պայմանն էին, որի պատճառով էլ նա դարձել էր զգուշության մարմնացում։ Ցավոք սրտի նրան պակասում էր երկու հատկություն, որ անհրաժեշտ էին ամեն մի ասպարեզում առաջադիմելու համար՝ անձնական հմայք ու հեռատեսություն։ Խոշոր ֆինանսիստ նա չէր կարող դառնալ, բայց և այնպես լավ ասպարեզ էր սպասում նրան։

Միստր Քառուիերվուդը բարեպաշտ կին էր. բաց թխագույն

¹ Էնդրյու Ջեկսոն՝ ԱՄՆ-ի յոթերորդ պրեզիդենտը (1828—1837). Նիկոլաս Բիոլ՝ ԱՄՆ-ի բանկի վարչության նախագահը։

վարսերով ու մուգ շագանակագույն զինջ աչքերով։ Այդ փոքրամարմին կինը երիտասարդության տարիներին թվում էր հրապուրիչ, սակայն ժամանակին դարձավ մի քիչ սեթևեթ և ամբողջովին կլանվեց առօրյա հոգսերով։ Նա խիստ լրջորեն էր նայում երեք տղաներին ու աղջկան դաստիրակեցու մայրական պարտականությանը։ Տղաները, որոնց պարագըլուխը մեծն էր՝ ֆրենկը, մշտական մտահոգության աղբյուր էին նրա համար, որովհետև ստեղ-ստեղ «արտելքներ» էին կատարում դեպի քաղաքի տարբեր ծայրերը, որտեղ մեկ էլ տեսար հարաբերեցին վատանուն տղաների հետ, տեսան ու լսեցին այն, ինչ նրանց հասակում ո՛չ տեսնել էր պետք, ո՛չ էլ լսել։

Ֆրենկ Քառվիերվուդը տասը տարեկան հասակում իրեն պահում էր բնածին պարագլիխ պես։ Թե՛ տարրական, թե՛ միջնակարգ զպոցում ամենքն էլ կարծում էին, որ կարելի է հույս դնել նրա ողջամտության վրա՝ ինչ հանգամանքներում էլ լինի։ Ինքնուրույն բնավորություն ուներ նա, համարձակ էր ու տաքարյուն։ Քաղաքականությունն ու տնտեսական կյանքը մանկուց հրապուրում էին նրան։ Գրքերով չէր հետաքրքրվում։ Արտաքուստ մաքրասեր, թիկնեղ ու բարեկազմ տղա էր նա։ Դեմքը անխարդախ, աշքերը խոշոր, զինջ ու մոխրագույն, ճակատը լայն, մազերը մուգ շագանակագույն ու կարճ խուզած, շարժուձեռքը հախուսն ու ինքնավստահ։ Ամենքին ու յուրաքանչյուրին հարցակոխ անելով՝ նա ձեռք չէր քաշում, մինչև սպասիչ ու խելացի պատասխան չէր ստանում։ Ֆրենկը չէր իմանում ինչ բան է հիվանդությունը կամ տկարությունը, հիանալի ախորժակ ուներ և լիակատար իշխանություն եղբայրների վրա։ «Հապա, Ջո՛», «Դե՛ շուտ, շուտ եկ է՛դ»։ Նրա հրամանից զգացվում էր ոչ թե կոպտություն, այլ հեղինակություն, և Ջոն էլ, էդն էլ հնագանդվում էին։ Մանկությունից էին նրանք վարժվել մեծ եղբորը համարելու մի հրամանատար, որի խոսքերը պետք է հաշվի առնել։

Նա մշտապես միտք էր անում, միտք էր անում անդադար։ Աշխարհում ամեն ինչ հավասարապես ապշեցնում էր

Նրան, որովհետև նա պատասխան չէր գտնում գլխավոր հարցին՝ ի՞նչ է կյանքը և ի՞նչպես է կառուցված . ի՞նչպես են աշխարհում մարդիկ առաջացել. ի՞նչն է նրանց նշանակումը. ո՞վ է ամեն ինչի սկիզբը դրել: Մայրը պատմել էր նրան Աղամի ու Եվայի առասպելը, սակայն նա չէր հավատացել դրան:

Քառուփերվուղների տունը հեռու չէր ձկան շուկայից, ուստի և Ֆրենկը հոր մոտ՝ բանկ գնալիս և կամ դասերից ազատ ժամերին եղայրների հետ որևէ «արտելք» կատարելիս սիրում էր կանգ առնել ցուցափեղկի առաջ, ուր ակվարիում էր դրված, և Դիելավարի ծոցի ձկնորսները հաճախ լրացնում էին դա ծովի խորքերի ամեն տեսակ տարօրինակ արարածներով: Մի անգամ նա տեսավ այդտեղ ծովածի, որ մի քիչ նման էր ձիուկի, մի ուրիշ անգամ՝ էլեկտրական օձաձուկ, որի հատկություններն էին թենյամին Ֆրանկլինին թելադրել նրա նշանավոր հայտնագործությունը: Մի գեղեցիկ օր էլ ակվարիում էին գցել ծովային խոշոր խեցքետին ու թանաքածուկ, և Ֆրենկն ականատես եղավ մի ողբերգության, որը ողջ կյանքում շմոռացավ և օգնեց շատ բան իմանալու: Հետաքրքրասեր դիտողների խոսակցությունները նա իմացավ, որ խեցգետնին ոչ մի ուտելիք չէին տալիս, որովհետև սրա օրինական որսը համարվում էր թանաքածուկը: Խեցգետինը պառկած էր ապակե անոթի ավազապատ հատակին ու թվում էր, թե ոչինչ չի տեսնում. անկարելի էր որոշել, թե ուրեն նայում սրա ուզունքանման սև ալզերը, բայց պետք է կարծել, որ չէին կտրվում թանաքածկան մարմնից: Ճարպակտորի նմանող այդ անարյուն ու մոմանման թանաքածուկը շարժվում էր հրումներով, ինչպես ծովային ականը, սակայն թշնամու անողոք աքցանները ամեն անգամ մի նոր կտոր էին պոկում սրա մարմնից: Խեցգետինը ասես քարանետ գործիքից արձակված՝ խոյանում էր այն տեղը, ուր կարծես նիրհում էր թանաքածուկը, սա վէլ ընդուստ ետ նետվելով՝ թաքնվում էր իր մարմնից արձակած թանաքի փոքրիկ ամպի ետքը: Բայց այս մաները միշտ հաջող չէր լինում: Նրա մարմնի ու պոշի կտորները հետզհետե ավելի հաճախ էին մնում ծովա-

յին հրեշի աքցանների միջև։ Պատանի Քառվերվուդը ամեն օր վագում էր այդտեղ ու ասես հմայված՝ հետեւում էր ողբերգության ընթացքին։

Մի առավոտ էլ նա կանգնած էր ցուցափեղկի առաջ՝ համարյա թե քիթը ապակուն սեղմած։ Թանաքաձկնից մնացել էր միայն մի տակ կտոր, գրեթե դատարկ էր նրա թանաքապարկը։ Խեցգետինը թաքնվել էր ակվարիումի անկյունում և ըստ երեսյթին պատրաստվում էր մարտական գործողությունների։ Պատանին այդ դաժան գոտեմարտից կախարդված՝ ամբողջ ազատ ժամանակը համարյա կանգնում էր ցուցափեղկի առաջ։ Հիմա, արդեն շուտով, գուցե մի ժամ հետո, բայց գուցե և վաղը, էլ՝ թանաքաձուկը չի լինի. խեցգետինը դրա հոգին կհանի ու կլափի։ Ֆրենկը հայացքը փոխադրեց ակվարիումի անկյունում գտնվող կանաչ, պղնձափայլ ավերիչ մեքենայի վրա։ Հետաքրքրական է՝ շուրջ կինի դա։ Երեկոյան հարկ կլինի դարձյալ գալ այստեղ։

Իշխավ երեկոն, և ի՞նչ։ Սպասվածը կատարվեց։ Ցուցափեղկի մոտ մարդիկ էին խոնվել։ Խեցգետինը թաքնվեց մի անկյունում, իսկ նրա առաջ ընկած էր երկատված, համարյա արդեն լափված թանաքաձուկը։

— Վերջապես հերն անիծեց, -- ասաց պատանու կողքին կանգնած մի մարդ։ — Ամբողջ ժամանակ կանգնած էի այստեղ. մոտ մի ժամ առաջ խեցգետինը հանկարծ վրա տվեց ու բռնեց նրան։ Թանաքաձուկը հոգնել էր, այլևս ճարպկություն չուներ. փորձեց մի կողմ նետվել, բայց խեցգետինը հենց դրան էր սպասում, արդեն վաղուց էր նախատեսել իր զոհի նվազագույն շարժումը և ահա այսօր էլ հոգին առավ։

Ֆրենկը նայում էր աշքերը լայն բացած։ Ակսոս, շատ ափսոս, որ նա բաց էր թողել այդ պահը։ Մի վայրկյան նրա մեջ խղճահարություն առաջացավ սպանված թանաքաձկան հանդեպ։ Ապա նա հայացքը դարձրեց հաղթողի վրա։

«Այդպես էլ պիտի լիներ, — մտքում ասաց նա։ — Թանաքաձուկը բավականաշափ ճարպկություն չուներ»։ Փորձեց քննարկել պատահածը։ «Թանաքաձուկը չէր կարող խեցգետինին սպանել. ոչ մի գենք չուներ դրա համար։ Խեցգետինը

կարող էր սպանել թանաքաձկան. նա շատ լավ է զինված: Թանաքաձուկը ուտելու բան չուներ, իսկ խեցետնի առաջ կար մի որս՝ թանաքաձուկը: Ի՞նչ պիտի լիներ դրա վերջը: Ուրիշ վախճան կա՞ր արդյոք: Ոչ, խեղճը դատապարտված էր», — եզրակացրեց նա՝ արդեն տանը մոտենալիս:

Այս պատահարը անջնջելի տպավորություն գործեց Ֆրենկի վրա: Նա ընդհանուր գծերով պատասխանում էր երկար ժամանակ իրեն տանջող առեղծվածին՝ ինչպես է կառուցված կյանքը: Այսպես ահա գոյություն ունի ամենայն կենդանի արարած՝ մեկը մյուսի հաշվին: Խեցգետինները լափում են թանաքաձկներին և այլ արարածների: Իսկ ո՞վ է լափում խեցգետիններին. պարզ է՝ մարդը: Այո, իհարկե, այս է առեղծվածի լուծումը: Լավ, իսկ ո՞վ է լափում մարդուն, — անմիջապես հարցրեց նա իրեն: Մի՞թե այլ մարդիկ: Ոչ, գաղանները: Մեկ էլ հնդկացիներն ու մարդակերները: Շատ շատերն էլ մահանում են ծովում ու դժբախտ պատահարներից: Նա հավատացած չէր, որ մարդիկ էլ ապրում են միմյանց հաշվին, բայց որ սպանում են իրար, սա արդեն գիտեր: Վերցնենք թեկուզ պատերազմները, փողոցային կոփեները, շարդերը: Ֆրենկը մի շարդ տեսել էր իր աշքով: Նա վերադառնում էր դպրոցից, երբ ամբոխը հարձակվել էր «Պաբլիկ լեզեր» թերթի խմբագրության վրա: Հայրը բացատրել էր, թե ինչն էր դրա պատճառը: Կրերը բորբոքվել էին ատրուկների պատճառով: Այո, իհարկե, մարդկանց մի մասն ապրում է ուրիշների հաշվին: Բայց չէ՝ որ ստրուկներն եւ մարդ են: Ահա այդ պատճառով էլ այդ ժամանակները այդպիսի բորբոքված վիճակ էր: Մարդկանց մի մասն սպանում էր այլ մարդկանց՝ սկամորթներին:

Ֆրենկը տուն դարձավ իր արած եզրակացություններից խիստ գոհ:

— Մայրի'կ, — գոշեց նա՝ ոտքը հազիվ ներս դրած: — Վերջապես նրա հաշիվը մաքրեց:

— Ո՞վ, ո՞ւմ, — զարմացած հարցրեց մայրը: — Գնա, ձեռքերդ լվա:

— Խեցգետինն, Է՛լի, որի մասին պատմում էի քեզ ու Հայրիկին: Թանաքաձկան հոգին առավ:

— Ափսոս, շա՛տ ափսոս: Բայց ի՞նչ հետաքրքրական բան կա այդտեղ: Շո՛ւտ արա, ձեռքերդ լվա:

— Օ՛, այդպիսի բան միշտ հնարավոր չէ տեսնել: Ես, օրինակ, առաջին անգամ էի տեսնում:

Նա գնաց բակը, ուր գտնվում էր զրի ծորակը, կողքին էլ՝ հողի մեջ մտցված մի փոքրիկ սեղան՝ ջրով լի դույլը և թիթեղե փայլուն կոնքը վրան:

— Հայրի՛կ, — դարձավ նա հորը՝ ընթրիքից հետո, — հիշում ես, չէ՞՝, որ պատմում էի թանաքաձկան մասին:

— Հիշում եմ:

— Դե լավ. այդ ձուկը արդեն չկա: Խեցգետինը լափեց: Նրան:

— Մե՛ծ դժբախտութուն, — անտարբեր ասաց հայրը՝ շարունակելով կարդալ:

Սակայն Ֆրենկը ամիսներ անընդհատ խորհրդածում էր իր տեսածի ու կյանքի մասին, որի հետ բախվել էր, որովհետեւ արդեն սկսել էր հետաքրքրվել այն հարցով, թե ինչ կդառնա: Ինքը և ինչպես կդասավորվի իր բախտը: Դիտելով դրան հաշվող իր հոր զբաղմունքը՝ նա որոշեց, թե ամենից ավելի հետաքրքիր է բանկային գործը: Իսկ երրորդ փողոցը, ուր պաշտոնավարում էր հայրը, նրան թվում էր աշխարհի ամենահրապուրիչ փողոցը:

Գ Լ Ո Ւ Խ Ա

Ֆրենկ Ալզերնոն Քառուիերվուդի մանկությունն ընթանում էր ընտանեկան անդորրի ու բարեկեցության մեջ: Բաթնվուդ-սթրիթը, ուր նա ապրում էր մինչև տասը տարեկան, ամեն մի տղայի սրտով կլիներ: Ընդհանուր առմամբ դա կառուցապատված էր կարմիր աղյուսից շինված, սպիտակ մամարե ցածր աստիճաններ ունեցող երկհարկանի մենատներով, որոնց դռների ու պատուհանների շրջանակներն էլ

նույն մարմարից էին: Փողոցի երկայնքով խիտ-խիտ տնկված էին ծառեր: Խոշոր ու կլոր խիճերով պատված սալահատակը անձրևից հետո մաքուր փայլում էր, իսկ կարմիր աղյուսե մայթերը, որոնք միշտ թեթևակի խոնավ էին, զովություն էին արձակում: Ամեն մի տան ետևում կար մի բակ՝ ծածկված ծառերով ու խոտով: Տեղ-տեղ նույնիսկ ծաղկանոցներ էին տնկված, որովհետև կանաչ տարածություններն այդտեղ մի հարյուր ոտնաշափ ձգվում էին դեպի խորքը, իսկ տները ավելի մոտ էին սալահատակին, և դրանց ետեր ազատ տեղ շատ էր մնում:

Հայր և մայր Քառուփերվուգները, որ բավական բարեհոգի ու զգայուն մարդիկ էին, կարողանում էին հրճվել և ուրախանալ իրենց զավակների հետ: Ուստի և այն ժամանակ, երբ հայրը որոշեց փոխադրվել Նյու-Մարքեթ-սթրիթի նոր տունը, ապա ընտանիքը, ուր Յորենկի ծնվելուց հետո երկուերեք տարին մեկ մի երեխա էր ավելանում, մինչև որ դրանց թիվը հասավ շորսի, ինքնին մի փոքրիկ, աշխույժ աշխարհ էր: Այն օրվանից, ինչ Հենրի Ուորթինգտոն Քառուփերվուգը սկսեց ավելի պատասխանատու պաշտոն վարել, նրա ծանոթությունները անընդհատ ավելացան, և նա քիշ-քիշ դարձավ ականավոր անձնավորություն: Նա ծանոթություն հաստատեց իրենց բանկի առավելապես նշանակալի շատ հաճախորդների հետ, իսկ քանի որ ի պաշտոնե նա կարիք էր ունենում լինելու նաև այլ բանկային տներում, ապա նրան սկսեցին «իրենց մարդը» համարել և Միհացյալ նահանգների բանկում, և Դրեքսելների, Էդվարդսների ու այլ հաստատություններում: Բորսայի միջնորդները ճանաշում էին նրան որպես մի ամուր ֆինանսական կազմակերպության ներկայացուցչի, և նա ամենուրեք համարվում էր եթե ոչ փայլուն մտքի տեր, ապա վերին աստիճանի ազնիվ ու պարկեշտ մարդ:

Պատանի Քառուփերվուգը հետզհետե ավելի էր հասուլինում հոր զբաղմունքի մանրամասնություններին: Շաբաթ օրերը հաճախ էին նրան թույլ տալիս գնալ բանկ, ուր նա մեծագույն հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչպես են կատարվում միջնորդական գործարքները և ինչպիսի ճարպ-

կությամբ են փոխանակվում ամեն տեսակ արժեթղթեր։ Նա ցանկանում էր իմանալ, թե որտեղից են գալիս այդ արժեթղթերը, ինչու են հաճախորդները դիմում բանկին՝ դրանք զեղչել տալու համար¹, ինչու է բանկը այդպիսի զեղչ կատարում և ինչ են անում մարդիկ այդ ստացած փողերով։ Հայրը՝ գոհ, որ տղան հետաքրքրվում է իր գործով, հաճությամբ բացատրութուններ էր տալիս, այնպես որ Ֆրենկը շատ կանուխ՝ տասից մինչև տասնհինգ տարեկան հասակում, արդեն բավականին լրիվ պատկերացում կազմեց Ամերիկայի ֆինանսական սիստեմի մասին, իմացավ, թե ինչ բան է տվյալ նահանգի բանկը և ինչով է նա տարբերվում Ազգայինից, ինչով են զբաղվում միջնորդները, ինչ են բաժնետոմսերը և ինչու դրանց արժեքը շարունակ տատանվում է։ Նա սկսեց պարզեց փողի, որպես փոխանակության միջոցի, նշանակությունը և հասկացավ, որ ամեն մի արժեքը հաշվվում է ըստ հիմնականի՝ ոսկու արժեքով։ Նա ֆինանսիստ էր հենց իր խառնվածքով և այդ դժվարին արվեստի հետ կապված ամեն ինչ նկատում էր այնպես, ինչպես բանաստեղծն է նկատում ամենանուրբ ապրումները, զգացմունքների բոլոր նրբերանգները։ Ոսկին՝ փոխանակության այդ միջոցը, սաստիկ զբաղեցնում էր նրան։ Հորից իմանալով, թե ինչպես է դա արդյունահանվում, Ֆրենկը սկսեց երազում տեսնել իրեն ոսկերի հանքերի տեր, իսկ երբ արթնանում էր, տենչում էր, որ երազն իրականանա։ Սակավ հետաքրքրություն շեին առաջացնում նրա մեջ բաժնեթղթերն ու պարտատոմսերը։ Նա իմացավ, որ լինում են իրենց տպված թուղթն անգամ շարժող արժեքներ, և ընդհակառակը՝ այնպիսիք, որոնք ավելի են գնահատվում իրենց անվանական արժեքից։

— Ա՛յ, որդյակ, նայիր, — ասաց Հայրը մի անգամ, — այսպիսի թղթեր այնքան էլ հաճախակի չեն պատահում մեր կողմերում։

Խոսքը վերաբերում էր Թրիտանական Արևելահնդկական

¹ Արժեթղթեր զեղչել՝ նշանակում է գնել դրանք այն ժամկետից առաջ, երբ դրանց տերը կարող է ներկայացնել, որ վճարեն։

ընկերության բաժնեթղթերին, որոնք իրենց վրա նշանակված գնի երկու երրորդով գրավ էին դրված ի ապահովություն հարյուր հազարանոց մի փոխատվության: Դրանք պատկանում էին ֆիլադելֆիացի մի խոշոր կապիտալիստի, որը կանխիկ դրամի կարիք էր ունեցել: Պատանի Քառուփերվուզը մեծ հետաքրքրությամբ զննում էր այդ թղթերի կապոցը:

— Արտաքրուստ չի կարելի ասել, թե այդքան փող արժեն, — նկատեց տղան:

— Սրանք իրենց անվանական արժեքից քառապատիկ ավելի են գնահատվում, — ժպտալով պատասխանեց Հայրը:

Ֆրենկը նորից սկսեց զննել բաժնեթղթերը:

— «Բրիտանական Արևելահնդկական ընկերություն», — կարդաց նա բարձրաձայն: — Տասը ֆունտ՝ մոտավորապես հիսուն դոլլար:

— Քառասունութ դոլլար և երեսունհինգ սենտ, — գործար շեշտով ուղղեց Հայրը: — Բա՛, եթե այսպիսի մի կապոց ունենայինք, առավոտից երեկո աշխատելու կարիք չէր լինի: Ուշք դարձրու, որ սրանց վրա համարյա ծակ չի երևում. ուրեմն հաղթագեղ են շրջանառության մեջ մտնում: Ըստ երեվույթին ասացին անգամ են գրավ դրվում:

Որոշ ժամանակ ձեռքում պահելուց հետո պատանի Քառուփերվուզը վերադարձրեց կապոցը Հորը՝ զարմանալով, թե որքան բազմաճյուղ է ֆինանսական գործը: Ի՞նչ բան է այդ Արևելահնդկական ընկերությունը, ինչո՞վ է զբաղվում: Եվ Հայրը բացատրեց:

Ֆրենկը տանն էլ էր լսում կապիտալ ներդրումների և ֆինանսական հանգուգն գործողությունների մասին: Նրան հետաքրքեց Հոր սատմածը խստ հետաքրքիր մի անձնավորության ոմն Սթիմբերջերի վերաբերյալ, որը մսի խոշոր սպեկուլյանտ էր Վիրջինիա նահանգում ու վերջերս էր երեվացել Ֆիլադելֆիայում՝ մեծ ու մատչելի վարկից հրապուրված: Ըստ Հոր պատմածի՝ Սթիմբերջերը կապ ուներ նիկոլաս Բիոլի, Լարզների և Միացյալ Նահանգների բանկի այլ ղեկավարների և նույնիսկ մտերիմ բարեկամ էր դրանցից մի քանիսի հետ: Այսպես թե այնպես նա այդ բանկից ձեռք էր

բերում համարյա այն ամենը, ինչ ուզում էր Անասունի խո-
շորագույն գնումներ էր նա կատարում Վիրջինիա, Օհայո, և
այլ նահանգներում և փաստորեն մենաշնորհ էր դարձրել մասի
առևտուրը Արևելյան նահանգներում։ Մա մի հսկայական մարդ
էր, դեմքը, ինչպես միստր Քառվերվուդն էր ասում, շատ էր
հիշեցնում խողի գունչ. անփոփոխ կերպով գնում էր ջրշան
մորթե մի բարձր գլխարկ ու հագնում գորեղ մարմնի վրա
տատանվող երկար ու լայն սերթուկ։ Սթիմբերջերը հնարյ
գտել էր բարձրացնելու մսի գները, հասցնելու ֆունտը երե-
սուն ցենտի, որով և վրդովմունքի փոթորիկ էր առաջացրել
մանր առևտրականների ու սպառողների միջավայրում և վատ
համբավ էր ձեռք բերել։ Մոտենալով Ֆիլադելֆիայի բանկի
ֆոնդային բաժնին՝ նա բերել էր Միացյալ Նահանգների բանկի
մեկ կամ երկու հարյուր հազար գոլլարի կարճժամկետ-
յա պարտատոմսեր, որ բաց էին թողված մեկ, հինգ և տասը
հազարանոց թղթերով, մի տարի պայմանաժամով։ Այդ
պարտաթղթերը նա անվանական արժեքից տասը-տասներկու
տոկոս զեղով առել էր, իսկ հիմա դրանց համար Միացյալ
Նահանգների բանկին վճարում էր մուրհակով՝ լրիվ արժեքով,
չորս ամիս ժամկետով։ Հասանելիք գումարը նա ստանում էր
Երրորդ ազգային բանկի ֆոնդային բաժնում՝ Վիրջինիայում.
Օհայոյում և Արևմտյան Պենսիլվանիայում գտնվող տարբեր
բանկերի բանկտոմսերի կապոցներով և անվանական ար-
ժեքով, որովհետև հենց այդ նահանգներում էր նա գլխավորա-
պես կատարում իր հաշվարկները։ Երրորդ ազգային բանկը
Հիմնական գործարքից ստանում էր չորսից հինգ տոկոս շահ,
ինչպես նաև զեղչի տոկոս էր պահում Արևմտյան նահանգ-
ներից, որ նմանապիս պակաս օգուտ չէր տալիս։

Հոր պատմածների մեջ հաճախ էր հիշատակվում ոմն Ֆրենսիս Գրանդ՝ վաշինգտոնցի նշանավոր մի լրագրող, որ
պակաս գեր չէր կատարում ԱՄՆ-ի կոնգրեսի կովիսների
ետևում և ամեն տեսակ գաղտննիքներ, մանավանդ ֆինանսա-
կան օրենսդրությանը վերաբերող, փորփոն-իմանալու մեծ
վարպետ էր, Պրեզիդենտի ու մինիստրների կարինետի, ինչ-
պես նաև սենատի ու ներկայացուցիչների պալատի գուղտին

գործերը ասես մի բաց գիրք էին նրա համար։ Ժամանակին Գրանդը երկու թե երեք միջնորդական գրասենյակի միջոցով՝ քննել էր մեծաքանակ պարտագրեր և Թեքսասի պարտատոմսեր։ Իր անկախության համար Մեքսիկայի հետ մարտնչող այդ հանրապետությունը մի քանի փոխառություն էր բաց թողել տասը-տասնհինգ միլիոն դոլար գումարով։ Պոյությունը ուներ Թեքսասը ԱՄՆ-ի մեջ մտցնելու ծրագիր, և այդ կապակցությամբ կոնգրեսն ընդունել էր մի նախագիծ՝ հինգ միլիոն դոլար հատկացնել ի հաշիվ այդ հանրապետության հինգ պարտքը մարելուն։ Գրանդը դրա հոտն առել էր, իմացել էր նաև, որ պարտագրերի մի մասը, դրանց թողարկման հատուկ պայմանների շնորհիվ, կվճարվեն լրիվ, իսկ մյուսը՝ պակաս դնահատմամբ և հենց սկզբից էլ որոշված է օրինագծի տապալման ներկայացում ցուցադրել սեսիաներից մեկում, որպեսզի վախեցնեն նրանց, ովքեր այդպիսի կոմբինացիայի լուրն առնելով՝ վաստակ անելու նպատակով մտածեն գնել հին պարտագրերու Գրանդն այդ մասին իմաց տվեց Երրորդ տպային բանկին, հետեւրար և զա իմացավ գանձապահի օդինական Քառուիերվայրու Առ Էլ ամեն ինչ պատմեց կնոջը, որից և լուրի հաստավ Ֆրենկին, տղայի խոշոր, զինջ աշքերը շողշողացին Ինչո՞ւ, — հարցնում էր նա իրեն, հայրս չի օգտագում այս տախիթից ու չի գնում Թեքսասի հանրապետության պարատառմունքը անձամբ իր համար։ Զէ՞ որ նա ինքն էր տուում, թե Գրանդը և ուրիշ երեք-շորս մարդ այդ գործից յուրաքանչյուրը մի հարյուր հազար շահել էին։ Պետք է կարծել, թե նո ոչ այնքան օրինական բան էր համարում դա, թեև հերան առած՝ ոչ մի տարօրինի բան էլ չկար։ Իսկ ինչո՞ւ շվարդականի առաջարկությունը ու պաշտոնական իրավեկության առմարտ Ֆրենկի եղբակացրեց, թե հայրը շափից ավելի աղօնիք է, շափից ավելի շրջանաշապաց, իսկ երբ ինքը մեծանա, կը դառնան բորսայտկան մարդ, բանկիր ու ֆինանսիստ և իհարկե այլպիսի տախիթ ձեռքից բաց չի թողնի։

Հենց այդ օրերին Քառուիերվումների մոտ եկավ մի ազգական, որ մինչ այդ երեք շէր այցելել նրանց։ Սենեկա Փեիսոր՝ տիկին Քառուիերվուգի եղբայրը, մի ճերմակագեմ,

վարդագույն, կապուտաշյա ու քաջառողջ մարդ էր՝ հասակը հինգ ոտնալավի ու ինը մատնաշափի, ամրակազմ, կլորիկ, նըմանապես և կլորագուլ՝ ճաղատը ոսկեցեկ, խուճում, ցանցառ մազերով շրջանակված: Շքեղ էր նա հագնվում՝ խնամքով հետեւելով նորաձեռությանը. ծաղկանկար ժիլետներ, մոխրագույն երկար սերթուկ և ցիլինդր (բարգավաճող մարդու անքակտելի պատկանելիքը): Առաջին իսկ հայացքից Ֆրենկը գերվեց նրանով: Միստր Դևիսը պլանտատոր էր և մի մեծ ուանչո ուներ Կուլայում: Նա պատմում էր տղային կղզու կյանքից, խոռվություններից, գարաններից, մաշետեն՝ ձեռքին կատաղի ընդհարումներից իր պլանտացիայում և ուրիշ շատ հետաքրքրական բաներ: Նա իր հետ բերել էր Հնդկական զարմանալի իրերի մի իսկական հավաքածող, ահագին փող և մի քանի ստրուկ: Նրանցից մեկը՝ բարձրահասակ ու նիհար նեզր Մանուելը, մշտապես նրա հետ էր լինում որպես համհարզ ու թիկնապահ: Միստր Դևիսը իր պլանտացիաներից արտահանում էր կիսապատրաստ շաքար, որը բեռնաթափվում էր Ֆիլադելֆիայի Հարավային նավակայանում: Քեռին դյութել էր Ֆրենկին իր անմիջական կենսուրախությամբ, որն այդ անխոռվ ու զուսպ ընտանիքում նույնիսկ մի քիչ կոպիտ ու սանձարձակ էր թվում:

Մի կիրակի, իրիկնապահին, բոլորովին անսպասելի ժամանելով՝ քեռին հրճվագին զարմանք պատճառեց ամբողջ ընտանիքին:

— Այս ի՞նչ եմ տեսնում, քույրի՛կ,— գոշեց նա՝ միսիս Քառիկերվուդին հազիվ տեսած: — Դու մազաշափ իսկ չես շաղացել: Իսկ ես, երբ դու ամուսնացար քո հարգարժան Հենրիի հետ, կարծում էի, թե եղբորդ պես կտողես: Տես է՛, մի սրան մտիկ արեք: Պատի՛վս վկա, հինգ ֆունտ էլ շկառ:

Ու Նենսի Արաբելային մեջքից բռնելով՝ վեր նետեց, ի մեծագույն զարմանս երեխաների, որոնք վարժված չէին տեսնելու, որ այդքան առանց այլկայլության վարվեն իրենց մոր հետ:

¹ Իսպանական լայնաբերան դանակ:

Հենրի Քառվերվուդը խիստ գոհ ու շոյված էր ըզ-
գում իրեն հարուստ աղքականի գալուց: Տասնհինգ տարի
առաջ, երբ ինքը փեսացու էր, Սենեկա Պետրոս պարզապես
ուշք էլ չէր դարձնում նրան:

— Մի այս փոքրիկ քաղաքաբնակներին նայեցեք, —
աղմկում էր քեռին, — կարծես կավիճ են քսել քիթ-մռութ-
ներին: Այս, վատ չէր լինի գային իմ ունչոն ու մի քիչ արե-
վակեզ լինեին, Մոմե տիկնիկներ լինեն կարծես, ուրիշ
ոչինչ, — այսպիսի խոսքերով նա կսմթեց հինգամյա Աննա
Աղելահդայի այտը: Պետք է ասեմ, Հենրի, վատ չեք տե-
ղավորվել այստեղ, — շարունակեց նա՝ քննադատական մի
հայացք նետելով ոչ մի բանով աշքի շընկնող այդ եռահարկ
տան հյուրասենյացին:

Քսան ոտնաշափ լայնություն և քսանչորս ոտնաշափ եր-
կարովյուն ունեցող այս սենյակը, որ երեսպատված էր
«բալենու նմանակերպ» յուղաներկով ու զարդարված Շե-
րատոնի ոճի կահուլքով, մի քիչ արտասովոր էր երեսում,
րայց բնիդանուր տոմամի հաճելի էր: Երբ Հենրի Քառվեր-
վուդը զարձակ զանձապահի օգնական, եվրոպայից բերել
ամից մի զաշնամուր, որ մեծ շքեղություն էր այդ ժամա-
նակվա հասկացողությամբ: Սենյակը զարդարում էին և այլ
հաղվակյուտ իրեր՝ գազավառ ջահը, ոսկեձկնիկներ պարու-
նակող ակվարիումը, արտասովոր ձեհ մի քանի հիանալիո-
րեն փայլեցված խեցեպատյաններ և մարմարե մի կուպիդոն՝
ծաղիկների զամբյուղը ձեռքին: Ամառ էր, և բաց լուսամուտ-
ներից երեսում ու հայացք էին շոյում իրենց սաղարթներով
աղյուսի մայթերը ստվերող ծառեր: Սենեկա քեռին դանդա-
ղորեն զնաց րակրությունը:

Իիստ հաճելի անկյուն, — նկատեց նա՝ կանգնելով
մի ճյուղատարած ծփիի տակ և զննելով մասամբ աղյուսա-
պատ և նույնպես աղյուսե պատով շրջափակված (որի վրա
փաթաթված աճել էր վայրի խաղողը) բակը: — Իսկ ո՞ւր է
ձեր ցանցաճոճը, միթե ամուսնը ցանցաճոճ չեք կախում
այստեղ: Սեն-Պեդրոյի իմ վերանդայում մի վեց-յոթ
հատ կա:

— Մենք շգիտեմ ինչու շենք մտածել ցանցաճռնի մասին. չէ՞ որ շուրջ բոլորը հարեաներ են: Շատ լավ կլիներ դա, — պատասխանեց տեկին Քառվերվուղը: — Հենց վաղին էլ կիսնդրեմ Հենրին գնի:

— Ես մի քանի հաստ բերել եմ ինձ հետ. անգուկի մեջ են՝ հյուրանցում: Կուրայի իմ սևամորթներն են հյուառմ դրանք: Վաղը, առաջոտյան, մի հատ կռւղարկեմ Մանուելի միջոցով:

Նա խաղողի մի տերև պռկեց, թեթև քաշեց էդուարդի սկանզը, տղաներից կրտսերին՝ Զողեֆին խոստացավ հընդկական մի թոժահավկ՝ մարտական կացին, ու վերագարձավ տուն:

— Այս, այս մանշուկը գուր է գալիս ինձ,— առաց նա քիչ հետո և ձեռքը դրեց Ֆրենկի ուսին: — Ինչպես է սրա առնուն ազգանունը:

— Ֆրենկ Ալչերնոն:

— Հըմ, իմ անունը պետք է դնեիք: Այս մանշուկի մեջ կա մի բան... Արի մատնք ինձ հետ Կուբա, որդյակս. Ես քեզ կդարձնեմ պլանտատոր:

— Այդպիսի ձգուում չունեմ, — պատասխանեց Քառվերվուղի անդրամիկ տղան:

— Համենայն գեպս անկեղծ խոսք է: Իսկ ինչո՞ւ դեմ ես դրան:

— Ոչ մի պատճառով: Միայն թե այդ գործը շեմ իմանամ:

— Հապա ո՞րն ես իմանում:

Տղան մպտաց թեթևակի խորամանկությամբ:

— Առայժմ քիչ բան եմ իմանում:

— Լավ. իսկ ի՞նչն է հետաքրքրում քեզ:

— Դրամը:

— Տես է: Ուղեմն արյանդ մեջ է. Ըորդ ես քաշու: Ինչո՞ւ չէ. դրա մեջ վատ բան չկա: Բւ աղամարդու պես էլ կշռադատում ես: Լավ, փոքրիկս, մենք գեռ շատ կզրուցենք իրար հետ: Այնպես է երեսում. Նե՞նսի, որ քո թևի տակ ֆի-

նահասիստ է մեծանում։ Իսկական գործարարի պես է նա-
յուամ իրերին։

Քեռին ավելի ուշադիր նայեց Ֆրենկին։ Անտարակույս
ուժ էր նկատվում այդ վճռական պատանու մեջ։ Նրա խոշոր,
գորշ ու վճիռ աշքերը խելք էին արտահայտում, շատ բան
էին թաքցնում իրենց մեջ և ոչինչ չէին ցույց տալիս։

— Հետաքրքրաշարժ տղա է, — ասաց պարոն Դեկսն իր
փեսային։ — Ես հավանում եմ նրա ժրությունը։ Լավ երե-
խաներ ունեք։

Հենրի Քառակիերվուդը ժպտաց միայն։ Քանի որ Ֆրենկը
այսքան գուր է գալիս նրան, այդ քեռին շատ բան կարող է
անել նրա հայեաբ։ Օրինակ՝ ժամանակին իր կարողությունն
մի մասը թողնել նրան։ Միստր Դեկսը հարուստ էր և ամուրի։

Քեռի Սենեկան սկսեց հաճախակի լինել Քառակիերվուդ-
ների տանը՝ միշտ էլ ուղեկցությամբ իր սևամորթ թիկնա-
պահ Մանուելի, որը, ի մեծ զարմանս երեխաների, խոսում
էր անգլերեն ու իսպաներեն։ Ֆրենկը հետզհետե ավելի էր
հետաքրքրում նրան։

— Երբ երեխան մեծանա ու որոշի, թե ինչ է ուզում
դառնալ, ես կօգնեմ նրան ստքի կանգնելու, — մի անգամ էլ
նկատեց Դեկսը քրաջ հետ զրուցելիս, և սա էլ շերմագին
շնորհակալություն հայտնեց նրան։

Քեռին զրուցներ էր ունենում Ֆրենկի հետ և այդպես
իմացավ, որ տղային քիչ են հետաքրքրում գրքերը և ընդ-
հանրապես դպրոցական առարկաների մեծ մասը։ Քերակա-
նությունը պարզապես զգվելի բան է, գրականությունը՝ ցըն-
դարանություն, լատիներենը՝ զուր ժամանականություն։
Պատմությունը՝ էլի մի բան է։

— Սիրում եմ հաշվապահությունն ու մաթեմատիկան, —
ասաց Ֆրենկը։ — Իսկ ընդհանրապես կուզենայի վերջ տալ
այդ ամենին ու գործի անցնել։

— Վաղ է գեռ, բարեկամս, — պատասխանեց քեռին։ —
Քանի՝ տարեկան ես՝ տասնչորս։

— Տասներեք։

— Տեսնում ես. իսկ տասնվեցից առաջ չի կարելի թող-

նել դպրոցը: Ավելի լավ կլինի սովորել մինչև տասնյոթ տասնութ տարեկան: Դրանից վնաս չի գա քեզ: Երկու անգամ մանշուկ չեն լինում:

— Ես չեմ ուզում մանշուկ լինել: Աշխատել եմ ուզում:

— Մի՛ շտապիր, որդյա՞կ: Միննույն է՝ մեկ էլ տեսարշափահաս ես դարձել: Զէ՞ որ դու կարծես ձգուում ես բանկիր դառնալու:

— Այո, քեռի՛:

— Ինչո՞ւ չէ. երբ աստված անի ժամանակը գա և դռւ էլ միտքդ շփոխես, սկզբնական շրջանում ես քեզ կօգնեմ: Միայն թե տե՛ս, քեզ լավ պահիր: Թե քո տեղը լինեի, մի երկու տարի կաշխատեի որևէ խոշոր հացահատիկային կոմիսիոն գրասենյակում: Այդտեղ կիմանաս շատ բաներ, որոնք հետագայում պետք կգան քեզ: Իսկ մինչև այդ հետկիր առողջությանդ և ուսանիր: Երբ կարիք լինի, իմաց տուր ինձ, ո՛ւր էլ ես լինեմ: Ես կգրեմ ու կիմանամ, թե ինչպես ես քեզ պահում:

Նա տասը գոլլարից մի ոսկեդրամ տվեց տղային, որպեսզի սա՛իր համար հաշիվ բաց անի բանկում: Զարմանալի չէ ուրեմն, որ այդ արագաշարժ, իր ուժերին հավատացած և կյանքից շաղարտված պատանին միստր Գևիսին լավ տրամադրեց Քառուփերվուդների ամբողջ ընտանիքի նըկատմամբ:

ԳԼՈՒԽ III

Երբ տասնշորս տարեկան էր Ֆրենկ Քառուփերվուդը, առաջին անգամ ձեռնամուխ եղավ առեւրական արկածախընդրովթյան: Մի անգամ Ֆրոնտ-սթրիթից անցնելիս, ուր գտնվում էին ներմուծվող ապրանքների և մեծաքանակ վաճառքի ֆիրմաներ, նկատեց աճուրդային մի փոքրիկ դրոշ մթերային մեծաքանակ վաճառատան դռան վերևը. ներսից լսվում էր աճուրդը վարողի ձայնը.

— Ինչքա՞ն կտաք Քավայի սքանչելի սուրձի մի պար-

տիայի համար: Շուկայի այսօրվա մեծաքանակ վաճառքի գինը յոթ դոլար երեսուներկու ցենտ է պարկի համար: Ինչ-քա՞ն եք տալիս: Միայն թե ամբողջ պարտիան միասին է ծախվում: Ինչքա՞ն կտաք:

— Տասնութ դոլար, — գոշեց դռան մոտ կանգնած խանովթանձ՝ ճիշտն ասած լոկ նրա համար, որ աճուրդը ըսկիզբ առնի:

Ֆրենկը կանգ առավ:

— Քսաներկու, — գոշեց մի ուրիշ ձայն:

— Երեսուն, — լսվեց երրորդը:

— Երեսունհինգ, — բացականշեց չորրորդը:

Գինը հասավ յոթանասունհինգ դոլարի, որ սուրճի իսկական արժեքի կեսից պակաս էր:

— Յոթանասունհինգ դոլար, Յոթանասունհինգ, — գոռում էր աճուրդ վարողը: — Ով ավելին կտա: Յոթանասունհինգ դոլար՝ մե՛կ: Ով ութսուն կտա: Յոթանասունհինգ դոլար՝ երկո՛ւ... — Նա դադար առավ և դրամատիկական մի շարժմանքով լարձրացրեց ձեռքը, ապա ծափ տվեց: — Ծախված է միստր Սայլաս Գրեգորիին յոթանասունհինգ դոլարով: Գրեցէք, Ձե՛րի, — դարձավ նա իր շեկ ու պեպենոտ օգնականին և անմիջապես անցավ մթերային ապրանքի մի ուրիշ պարտիա՝ տասնհինգ տակառիկ օսլա ծախելուն:

Պատանի Քառակին մտքում արագ հաշվեց: Սուրճի շուկայական գինը, եթե հավատանք աճուրդ վարողին, մի պարկը յոթ դոլար երեսուներկու ցենտ է. ուրեմն յոթանասունհինգ դոլարով դա գնած խանովթանը անմիջապես կարող է վաստակել ութսունվեց դոլար չորս ցենտ, իսկ մանրավաճառ ծախելիս՝ է՛լ ավելի: Որքան հիշում է ինքը՝ մայրը ֆունտին քսանութ ցենտ է վճարում: Ֆրենկը, դասագրրքերը թևատակին, խցկվեց առաջ և սկսեց ավելի ուշադիր հետևել աճուրդի ընթացքին: Օսլայի տակառիկը, ինչպես շուտով լսեց նա, արթեր տասը դոլար, իսկ այստեղ ծախում էին վեցով: Մի քանի տակառիկ քացախ ծախվեց իսկական գնի մեկ երրորդով: Ֆրենկը շատ էր ուզում մասնակցել աճուրդին, սակայն նրա գրպանում միայն մանր դրամ

կար: Աճուրդավարը նկատեց ձիշտ իր առաջ կանգնած ման-
շուկին և ապշեց նրա դեմքի վրա դրոշմված լրջությունից ու
համառությունից:

— Առաջարկում եմ մի պարտիա կաստիլյան հիանալի
օճառ՝ յոթ արկղ, ո՛չ ավելի, ո՛չ պակաս: Դուք պետք է իմա-
նաք, եթե օճառից որևէ գաղափար ունեք, որ դրա կտորն
արժե տասնչորս ցենտ: Իսկ մի արկղի համար ձեզանից
կվերցնեն տասնմեկ դոլար և յոթանասունհինգ ցենտից ոչ
պակաս: Ինչքա՞ն կտաք, ինչքա՞ն կտաք:

Նա խոսում էր արագ, աճուրդավարի սովորական շեշ-
տերով ու շափից ավելի ոգեստված, բայց դա պատահի
Քառակերպութի վրա չէր ազդում: Նա մտքում արագ հաշիվ
էր անում: Յոթ արկղ՝ ամեն մեկը տասնմեկ ու յոթանասուն-
հինգ, ընդամենը ոսթուներկու դոլար քսանհինգ ցենտ: Եվ
եթե այդ պարտիան ծախվի կես գնով...

— Տասներկո՞ւ դոլար, — առաջարկեց մեկը:

— Տասնհի՞նգ, — բարձրացրեց մի ուրիշը:

— Քսա՞ն, — գոռաց երրորդը:

— Քսանհի՞նգ, — ավելացրեց չորրորդը:

Դրանից հետո հավելումներ կատարվեցին մի մի դոլա-
րով, որովհետև կաստիլյան օճառը առաջին անհրաժեշտու-
թյան ապրանք չէր:

— Քսանվե՞ց:

— Քսանյո՞թ:

— Քսանո՞ւթ:

— Քսանհի՞նը:

Բոլորն էլ լոեցին:

— Երեսո՞ւն, — վճռականորեն ասաց պատանի Քառ-
փերվուդը:

Աճուրդավարը, որ փոքրամարմին, նիշար, տանջված
դեմքով ու գգգված մազերով մի մարդ էր, հետաքրքրու-
թյամբ ու մի քիչ էլ անվստահ խեթեց Ֆրենկին՝ ի միջի այ-
լոց ոչ մի բոպե շունչով: Պատանու լարված հայացքը ակա-
մա գրավեց նրա ուշադրությունը, և նա էլ հենց այսպես՝
մի անգամից, ինքն էլ շիմանալով ինչու, համակվեց վստա-

Հությամբ ու եղրակացրեց՝ տղան փող ունի: Հավանորեն
որևէ մթերավաճառի որդի է:

— Երեսո՞ւն դոլլար, երեսո՞ւն դոլլար, երեսո՞ւն դոլլար
մի պարտիա կաստիլյան հիանալի օճառի համար: Սքանչե-
լի՝ օճառ է: Հատավաճառով կտորը ծախվում է տասնշորս
ցենտ: Ո՞վ կտա երեսունմեկ դոլլար: Ո՞վ կտա երեսունմեկ:

— Երեսունմեկ, — լսվեց մեկի ձայնը:

— Երեսուներկո՞ւ, — ասաց Քառուիերվուդը:

Աճորդը վերսկսվեց:

— Երեսուներկո՞ւ դոլլար, երեսուներկո՞ւ դոլլար, երե-
սուներկո՞ւ դոլլար: Ո՞վ այս պատվական օճառի համար
կտա երեսուներեք: Յոթ արկղ կաստիլյան հիանալի օճառ:
Ո՞վ կտա երեսուներեք:

Պատանի Քառուիերվուդի ուղեղը լարված աշխատում էր:
Նա գրպանում փող շոներ, բայց հայրը երրորդ ազգային
բանկի գանձապահն էր, և Ֆրենկը կարող էր վկայակոչել
նրան: Այդ ամբողջ օճառն անկասկած հնար կլինի ծախել
այն մթերավաճառին, որից իրենք ապրանք էին առնում,
իսկ եթե ոչ նրան, ապա մի ուրիշ խանութպանի: Չէ՞ որ
եղան այդ գնով ձեռք բերել ցանկացող ուրիշ մարդիկ, էլ
ինչո՞ւ Ֆրենկը չպիտի գներ օճառը:

Աճորդավարը դադար արավ:

— Երեսուներկու դոլլար՝ մեկ: Ո՞վ երեսուներեք կտա:
Երեսուներկու դոլլար՝ երկո՞ւ Յոթ արկղ հիանալի օճառ: Ո՞վ
ավելի կտա: Մե՛կ, երկո՞ւ, երե՛ք, ո՞վ ավելի կտա: — Նրա ձեռ-
քը դարձյալ վեր բարձրացավ: — Ծախված է պարոն...

Նա մի փոքր կուցավ վաճառահղանի վրա, հետաքրք-
քը ությամբ զննեց պատանի գնորդի դեմքը:

— Ֆրենկ Քառուիերվուդին՝ երրորդ ազգային բանկի
գանձապահի որդուն, — հաստատուն ձայնով ասաց տղան:

— Շա՞տ լավ, — ասաց աճորդավարը՝ ենթարկվելով
նրա հայացքին:

— Կսպասե՞ք, մինչև գնամ բանկ, փող բերեմ:

— Լա՞վ: Միայն թե շուշանաք. եթե մի ժամից շվերւ-
դառնաք, նորից վաճառքի կդնեմ:

Ֆրենկն արդեն չէր պատասխանում նրան։ Նա վազելով հեռացավ և ամենից առաջ շտապեց ծանոթ մթերավաճառի մոտ, խանովթը մի թաղ էր հեռու Քառվիերվուդների տնից։

Վերջին երեսուն քայլը նա գնաց դանդաղ, ապա անհոգ տեսք ընդունեց և մտնելով խանութ՝ սկսեց աշքերով կաստիլյան օճառ փնտրել։ Ահա և դա՝ սովորական տեղում, նույն տեսակի և նույնպիսի արկղով, ինչպես «իր» օճառը։

— Ի՞նչ արժե այս օճառի կտորը, միստր Դելրիմֆլ, — Հարցրեց Ֆրենկը։

— Տասնվեց ցենտ, — արժանապատվությամբ պատասխանեց խանութպանը։

— Եթե ես ձեզ տուածարկեմ յոթ արկղ ձիշտ այսպիսի ապրանք վաթսուն երկու դոլլարի, դուք կգնե՞ք։

— Ձիշտ այսպիսի՝ ապրանք։

— Այո սը՛ր։

Միստր Դելրիմֆլը մտովի հաշիվ արեց։

— Զէ շեմ ասի, — զգուշ պատասխանեց նա։

— Եվ կարո՞ղ էիք այսօր իսկ վճարել ինձ։

— Մուրհակ կտայի ձեզ։ Իսկ որտե՞ղ է ապրանքը։

Միստր Դելրիմֆլը մի քիչ մտածմունքի մեջ ընկավ հարևանի տղայի այս անսպասելի առաջարկութունից։ Նա լավ էր ճանաչում Հենրի Քառվիերվուդին, ոչ պակաս նաև Ֆրենկին։

— Ուրեմն դուք կառնե՞ք օճառը, եթե այսօր հանձնեմ ձեզ։

— Կառնեմ, — պատասխանեց խանութպանը։ — Այս ի՞նչ է՝ օճառո՞վ եք զբաղվում։

— Ոչ, բայց ես գիտեմ, թե որտեղ կարելի է էժան գնել։

Ֆրենկը շտապ դուրս եկավ ու վազեց հոր մոտ։ Բանկում գործարքներն արդեն դադարել էին, բայց տղան գիտեր դրա բոլոր ելումուտերը, ինչպես և այն, որ միստր Քառվիերվուդը գոհ կմնա, եթե տղան երեսուն դոլլար վաստակի։ Նա միայն մի օրով էր դրամ ուզում։

— Ի՞նչ է պատահել, Ֆրենկ, — գլուխը գրասեղանից

բարձրացնելով՝ հարցրեց միստր Քառուփերվուդը, տեսնելով
կարմրած ու շնչակտուր իր որդուն:

— Ուզում եմ երեսուներկու դոլար խնդրել քեզանից
փոխ, հայրի'կ:

— Լավ: Իսկ ինչի՞ համար կարիք ունեցար:

— Օճառ եմ գնելով՝ յոթ արկղ կաստիլյան օճառ: Ես գի-
տեմ, թե որտեղից կարելի է ճարել, և արդեն գնող ունեմ:
Միստր Դելրիմփլը առնում է ամբողջ պարտիան: Նա վաթսուն-
երկու դոլար առաջարկեց ինձ դրա համար: Իսկ ես առնում
եմ երեսուներկու դոլարով: Եթե դու ինձ փող տաս, ես ան-
միջապես կթոշեմ ու կվճարեմ աճուրդավարին:

Միստր Քառուփերվուդը ժպտաց: Նրա տղան գեռ երբեք
այսպիսի գործարարություն չէր ցուցաբերել: Տասներեք տա-
րեկան հասակում նա արդեն բացառիկ աշքաբաց ու ճարպիկ
մանջուկ էր:

— Ուրեմն, Ֆրենկ, — ասաց նա՝ մոտենալով այն արկղին՝
ուր մի քանի թղթադրամ կար, — ինչպես երեսում է՝ դու արդեն
ֆինանսիստ ևս դառնում: Իսկ հավատացած ես, որ վնաս
չես անի: Հաշիվ տալի՞ս ես քեզ, թե ինչ գործ ես բռնում:

— Դե՛ փող տուր, հայրի'կ, — պաղատական շեշտով
ասաց Ֆրենկը: — Իսկ ես քեզ կապացուցեմ, թե ինչի եմ ըն-
դունակ: Միայն թե փող տուր: Կարող ես հավատալ ինձ:

Նա նման էր այն որսորդական ջահել շանը, որը թոշունի
հոտ է առել Հայրը չէր կարող դիմադրել նրա պահանջին:

— Անշուշտ, Ֆրենկ, ես քեզ հավատում եմ, — ասաց
նա՝ համրելով հենց իր՝ ծրբորդ ազգային բանկի վեց հատ
հինգ դոլարանոց բանկտոմս և երկու հատ էլ մի մի դոլա-
րանոց: — Ստացի՛ր:

Ծնորհակալություն բլբլալով՝ Ֆրենկը դուրս նետվեց և
ամենայն արագությամբ սլացավ աճուրդի վայրը: Երբ նա հա-
սավ, շաքար էին աճուրդի հանել: Ֆրենկը խցկվեց-հասավ
սեղանին, որի մոտ նստել էր վերահսկիլը:

— Ուզում եմ վճարել օճառի արժեքը, — ասաց նա:

— Հիմա՞:

— Այո: Ստացական կգուե՞ք:

— Կարելի է:

— Ապրանքը տեղ հասցվելո՞ւ է:

— Ոչ, փոխադրական շունենք: Ինքներդ պետք է վերցնեք մեկ օրվա մեջ:

Անսպասելի գժվարությունը չշփոթեցրեց Ֆրենկին:

— Լավ,— ասաց նա՝ ստացականը դնելով գրպանը:

Աճուրդավարն աշքով ակամա ուղեկցեց նրան: Կես ժամ հետո վերադարձավ Ֆրենկը՝ հետն էլ մի փոխադրորդ, որ իր ասյլակի հետ քարշ էր գալիս նավահանգստում և պատրաստ էր մի բան վաստակել, ինչ էլ լիներ:

Նա համաձայնեց վաթսուն ցենտով օճառը փոխադրել նշված տեղը: Կես ժամ հետո արդեն նրանք կանգնած էին զարմացած միստր Դելրիմֆիլի խանութի առաջ, բայց ապրանքը սայլից իշեցնելուց առաջ Ֆրենկը խանութպանին ստիպեց դուրս գալ փողոց ու նայել արկղերին: Եթե գործարքը գլուխ չգար, տղան որոշել էր օճառը փոխադրել տուն: Թեև դա նրա առաջին սպեկովացիան էր, այնուամենայնիվ նա մշտապես պահեց իր հոգեկան կորովը:

— Հըմ, — ասաց միստր Դելրիմֆիլը՝ մտածելու քորելով ալեհեր գլուխը, — Հըմ, նույն օճառն է: Առնում եմ: Խոսքը պետք է հարգել: Արտեղից եք ճարիկ, Ֆրենկ:

— Աճուրդից՝ Բիբսոմի վաճառատանը. այստեղից քիչ է հեռու, — անկեղծորեն ու բարեկիրթ պատասխանեց պատանի Քառիկերվուդը:

Խանութպանը հրամայեց օճառը տանել ներս և որոշ ձևականություններից հետո, որոնք բարդանում էին վաճառողի անշափահաս լինելուց, գրեց մուրհակը՝ երեսուն օր պայմանաժամով:

Ֆրենկը շնորհակալություն հայտնեց և դրեց ծոցագըրպանը: Նա որոշեց մի անգամ էլ գնալ հոր մոտ ու գեղջել տալ մուրհակը, ինչպես նրա աշքի առաջ անում էին ուրիշ մարդիկ, պարտքը վճարելու և իր վաստակը կանխիկ ստանալու համար: Այդպիսի գործողություններ, որպես կանոն, բանկը փակվելուց հետո չեն կատարվում. բայց հայրը բացառության կարգով ընդառաջեց նրան:

Եվ տղան սուլելով ճանապարհ ընկավ։ Հայրը նորից ժպտաց, երբ տեսավ նրան։

— Հը՞, Ֆրենկ, գործոք գլուխ չեկա՞վ, — հարցքեց միստր Քառուփերվուդը։

— Ահա երեսուն օրվա մուրհակ, — ասաց տղան՝ սեղանին դնելով Թելրիմփից ստացած պարտավորաթուղթը։ Խնդրեմ զեղչես սա՞ պահելով հանդերձ քո երեսուներկու դոլարը։

Հայրն ուշադիր զննեց մուրհակը։

— Վաթսուներկու դոլար, — կարդաց նա։ — Միստր Թելրիմփի, Ամեն ինչ կարգին է։ Կավ, ես սա կզեղեմ։ Տասը տոկոս կնստի սա քեզ վրա, — կատակեց։ Իսկ ինչո՞ւ չես ուզում մուրհակը պահել մոտու ես։ Կարող եմ մինչև ամսվա վերջը սպասել։ Մինչև երեսուներկու դոլարս տաս։

— Ոչ, չեմ ուզում, — առարկեց Ֆրենկը, — ավելի լավ է զեղչես ու առնես քո փողը։ Իմը կարող է ինձ պետք գալ։

Տղայի գործարար տեսքը զվարճացրեց Հենրի Քառուփերվուդին։

— Կավ, վաղը ամեն ինչ կարվի, — ասաց հայրը։ Իսկ հիմա պատմիր, թե ինչպե՞ս կարողացար հաջողացնել։

Եվ տղան պատմեց։ Երեկոյան ժամը յոթին այս պատմությունն իմանում էր միսիս Քառուփերվուդը, մի քիչ ուշ էլ քեռի Սենեկան։

— Բա ի՞նչ էի ասում ձեզ, Քառուփերվուդ, — բացականչեց, քեռին։ Այս տղան հույսեր է ներշնչում։ Ա՛յ, հետո արդեն ուրիշ բաներ կանեներ։

Ճաշի ժամանակ միսիս Քառուփերվուդը հետաքրքրախուրդ նայում էր որդուն։ Մի՞թե այս տղային վաղուց չէ, որ կրծքով կաթ էր տալիս։ Որքա՞ն շուտ հասունացավ։

— Հուտավ եմ, Ֆրենկ, հետո էլ կհաջողես այդպիսի գործեր անել, — ասաց մայրը։

— Ես էլ հուտավ եմ, մայրի՛կ, — բակոնիկ պատասխանեց տղան։

Ճիշտ է, ամեն օր աճուրդ չէր պատահում և ամեն օր հնարավոր չէր գործադքներ կատարել մթերավաճառի հետ,

բայց Ֆրենկն արդեն պատանեկան տարիներից կարողանում էր փող վաստակել. պատանեկան հանգեսի բաժանորդագրություն էր հավաքում, աշխատում էր որպես շմուզկի մի նոր տեսակ տարածող գործակալ, իսկ մի անգամ էլ նույնիսկ գայթակղեցրեց շրջակայքի տղաներին որպեսզի մեծածախ գնով ծղոտե գլխարկ առնեն ամռան համար: Խնայողությամբ դրամագլուխ դիմելու մասին Ֆրենկը չէր էլ մտածում: Համարյա մանկությունից նա համակվել էր այն համոզությունով, որ շատ ավելի լավ է փող ծախսել առանց համբելու և որ այսպես թե այնպես ինքը կհասնի այդ հնարավորության:

Հենց այդ տարին կամ մի քիչ առաջ նա սկսեց հետաքրքր քըրվել աղջկներով: Նրա հայացքը մշտապես կանգ էր առնում ամենագեղեցիկի վրա: Եվ որովհետև ինքն էլ գեղեցիկ էր ու գրավիչ, ապա ոչ մի գժվարություն չէր քաշում իրեն դոր եկած աղջկանը հետաքրքրել իր անձով: Տասներկու տարեկան Փեյշենս Բարլոուն՝ նրանց դրկիցը, առաջին աղջիկն էր, որին նայելուց չէր կշտանում և որը նույնպես հիացած էր նայում նրան:

Բնությունն օժտել էր Փեյշենսին փայլուն և սկ աշքերով ու սկ վարսերով, որ պիրկ հյուսում էր երկու գիսակով: Նըրքակոճ գեղեցիկ ոտքերը հեշտությամբ կրում էին աղջկա գեղանի մարմինը: Նրա ծնողները քվաքերներ¹ էին, և նրա գլխին միշտ էլ գեղեցիկ նստած էր մի համեստ ու փոքրիկ շեղուիկ: Բայց և այնպես բնավորությաք շատ աշխույժ էր, և այդ համարձակ, ինքնավստահ և ուղղամիտ տղան դուր էր գալիս նրան: Մի անգամ էլ, երբ արդեն բազմիցս խուսափուկ հայացքներ էին փոխանակել իրար հետ, Ֆրենկը կանգնեցրեց նրան (աղջիկն էլ նույն ուղղությամբ էր գնում) և ժպտալով ու համարձակ, ինչպես միշտ, հարցրեց.

— Դուք կարծեմ մեր փողոցում եք ապրում, այնպես չէ՞:

— Այո,— պատասխանեց աղջիկը մի փոքր հուզվելով ու զղայնորեն ճոճելով գրքերի պայուսակը,— ապրում եմ հարյուր քառասունմեկ տանը:

¹ Քրիստոնյա աղանդավորների մի տեսակ:

— Ես գիտեմ այդ տունը, — ասաց տղան, — տեսել եմ,
թե ինչպես դուք մտնում էիք այնտեղ: Կարծես դուք նույն
դպրոցում եք, որտեղ իմ քույրն է: Կարծեմ ձեր անունը
Փեյշենս Բարլոու է:

Նա լսել էր, որ դասընկերներից մեկը անունով էր կանչել
նրան:

— Այո, — պատասխանեց աղջիկը: — Որտեղից եք իմա-
նում:

— Հսել եմ, — ժպտաց Ֆրենկը: — Ես հաճախ եմ տես-
նում ձեզ: Մաստաշաքար չե՞ք ուզում:

Եվ փորփորելով գրպանը՝ մի քանի հատ թարմ մաստա-
շաքարի ձողիկ հանեց (այն ժամանակ դա իիստ հաճելի
օաղցրավենի էր):

Փեյշենսը քաղցր հայացքով շնորհակալություն հայտնեց
ու մի հատ վերցրեց:

— Երկի այնքան էլ համեղ չէ: Վաղուց է իմ գրպանում:
Այս քանի օրը տյանուշկա ունեի:

— Ոչ, անուշահամ է, — պատասխանեց աղջիկը՝ ծծելով
ձողիկի ծայրը:

— Դուք կարծեմ ճանաշում եք իմ քրոջը՝ Աննա Քառ-
փերվուդին, — հարցրեց Ֆրենկը՝ վերադառնալով սկսած խո-
սակցությանը և կարծես ներկայանալով իր հարկանուհում: —
Ճիշտ է, նա մի դասարան ցած է ձեզնից, բայց դուք գուցե
ծանոթ եք:

— Ես ճանաշում եմ նրան: Դպրոցից վերադառնալիս
մենք հանդիպում ենք:

— Ես ապրում եմ ա՛յ, այնտեղ, աջ կողմում, — Ֆրենկը
մատնացուց արեց այն տունը, որին մոտենում էին, կար-
ծես աղջիկը առանց այդ էլ չէր իմանում ուր է ապրում տը-
ղան: — Հուսով եմ, որ հիմա հաճախ կտեսնենք իրար:

— Դուք ծանո՞թ եք Ռութ Մերիեմին, — հարցրեց աղ-
ջիկը, երբ Ֆրենկն արդեն պատրաստվում էր թեքվել դեպի
րրհնց տունը տանող սալարկած ուղին:

— Ոչ, իսկ ինչո՞ւ եք հարցնում:

- Երեքշաբթի հավաքույթ ունի նա, — ի արժես ի միջի
այլոց նկատեց աղջիկը:
- Որտե՞ղ է նա ապրում:
- Համար քսանութ տանը:
- Ես դեմ չէի լինի այցելել նրան, — խոստովանեց
Ֆրենկը՝ թեքվելով դեպի տուն:
- Դուցե նա ձեզ հրավիրի: — Փեյշենսը հետզհետե ավե-
լի էր քաջանում, ինչքան ավելի էր տարածությունը մեծա-
նում նրանց միջև: — Կինդրեմ նրան:
- Ընորհակալ եմ, — Ժպտաց տղան:
- Աղջիկն ուրախ շարունակեց ճամփան:
- Ֆրենկը դեմքը շողջողուն նայում էր նրա ետևից: Սքան-
չելի էր այդ աղջիկը: Նա Փեյշենսին համբուրելու սաստիկ
ցանկություն դգաց և անմիջապես երեկակայեց Ռութ Մերիեմի
տան երեկոն ու այն ամենը, ինչ դա խոստանում էր նրան:
- Դա բոլորովին մանկական սիրաբանություն էր դեռ, մե-
կը երեխայական այն հրապուրանքներից, որ ժամանակ առ
ժամանակ համակում էին Ֆրենկին պորյա դեպքերի հողմա-
պտույտների միջև: Փեյշենս Բարլոուի հետ հաճախ համբուր-
վեց մեկուսացած անկյուններում, նախքան մի ուրիշի գրտ-
նելը: Զմռանը Փեյշենսը հարեան աղջիկների հետ վագում էր
փողոց ձնագնդի խաղալու և կամ ձմեռային երկար երեկոնե-
րին նստում էր իրենց տան դռան մոտի նստարանին: Այդ
ժամերին նրան բռնելն ու համբուրելը նույնքան հեշտ էր,
որքան հեշտ էր երեկոյան հավաքույթներին ամեն տեսակ
ցնդարանություն փսփսալ նրա ականջին: Փեյշենսին փոխա-
րինեց Դորա Ֆիթլերը (այդ ժամանակ Ֆրենկը տասնվեց
տարեկան էր), ապա, երբ տասնյոթ տարեկան էր, տասնհին-
գամյա Մարզորի Մթեֆորդը՝ մի խարտյաշ փամփլիկ աղ-
ջիկ, աշքերը կապտագորշ, ինքը կամրաթշիկ ու թարմ, ինշ-
պես արշալույսը:

Երբ Ֆրենկը տասնյոթ տարեկան էր, որոշեց թողնել
գլորոցը: Ընդամենը երեք տարի սովորեց նա բարձր դասա-
րաններում, բայց արդեն լիովի կշտացել էր ուսումնառու-
թյուննց: Տասներեք տարեկանից նրա ուշքն ու միտքը ամ-

բողջովին ֆինանսական գործն էր՝ Երրորդ փողոցում դիտած ձևով: Ժամանակ առ ժամանակ նա կատարում էր այնպիսի հանձնարարություններ, որոնք հնարավորություն էին տալիս որևէ բան վաստակել: Քեզի Սենեկան թույլ տվեց նըրան օգնել կշռողին ապրանքային նավակայանում, որտեղ կառավարական աշալուրչ տեսովների հսկողության ներքո մաքսատան կից գտնվող պետական համբարանոցներն էին դարսվում երեք հարյուր ֆունտանոց շաքարի պարկերը: Երբեմն, երբ շատ շտապ գործ էր լինում, օգնում էր հորը նդրա համար աշխատավարձ էր ստանում: Ֆրենկը նույնիսկ մտագրվեց խոսել միստր Դելրիմփլի հետ շաբաթ օրերը նրա մոտ աշխատելու վերաբերյալ, բայց երբ նա մտավ տասնհինգի մեջ, հայրը դարձավ գլխավոր գանձապահ՝ տարեկան չորս հազար դոլար ոռոճիկով, ուստի և վաճառասեղանի ետեր աշխատելու մասին, իհարկե, խոսք շէր կարող լինել:

Հենց այդ ժամանակ դարձյալ Ֆիլագելֆիա եկավ քեռի Սենեկան՝ էլ ավելի գիրացած, ավելի իրավազոր, և ասաց քրոջ որդուն.

— Տե՛ս, ի՞նչ եմ ասում, Ֆրենկ, եթե ուզում ես գործի անցնել, ես քեզ համար մի լավ պաշտոն եմ պահել: Առաջին տարին կաշխատես առանց ոռօճիկի, բայց եթե գլուխ հանես, ապա հավանորեն պարգևավճարներ կտան քեզ: Լսե՞լ ես երկրորդ փողոցում գտնվող «Հենրի Ուոթերմեն» և Ընկ.» ֆիրմայի մասին:

— Դիտեմ որտեղ է նրանց գրասենյակը:

— Ուրեմն նրանք համաձայն են ընդունել քեզ որպես հաշվետար: Դրանք հացահատիկ առնող-ծախող և ընդհանրապես միջնորդական գործերով զբաղվող մարդիկ են: Դումի անգամ ասացիր, թե ուզում ես աշխատել այդ ասպարեզում: Երբ ուսումնական տարին վերջանա, գնա պարոն Ուոթերմենի մոտ, իմ անունը տուր, և նա կարծում եմ քեզ կընդունի: Հետո ինձ իմաց արա, թե ինչպես եք պայմանավորվել:

Քեզի Սենեկան այժմ արգեն ամուսնացած էր. նա իր հարստությամբ նվաճել էր Ֆիլագելֆիայի «բարձրաշխարհին» պատկանող մի աղքատ, բայց փառասեր տիկնոց սիր-

ար, Այդ ամուսնության շնորհիվ, հանուր կարծիքով, պետք է Քառուփերվուղների կապերը խիստ ամրանային: Հենրի Քառուփերվուղը մտմտում էր Հյուսիսային Ֆրոնտ փողոցը տեղափոխվելու մասին, որտեղից փառահեղ տեսարան էր ռացվում զեպի գետը և որտեղ արդեն սկսվել էր գեղեցիկ առանձնատըների շինարարությունը: Այդ ժամանակների համար՝ Քաղաքացիական պատերազմից¹ քիչ առաջ, նրա շորս հազար դոլար աշխատավարձը բավական պատկառելի գումար էր: Լինելով ողջամիտ ու զգուց մարդ՝ Հենրի Քառուփերվուղը երրեք իր խնայողությունները չեր ներդնում անգամ շատ քիչ ոհսկուտ գործերի մեջ և իր ճշտապահության, շրջահայեցության ու ճշգրտության շնորհիվ, բոլոր հիմքերն ուներ, ինչպես ենթադրում էին պաշտոնակիցները, ապագայում դառնալ իր աշխատած բանի փոխ-դիրեկտորը կամ նույնիսկ դիրեկտորը:

Քեռի Սենեկայի առաջարկությունը «Ուոթերմեն և Ընկ» մասին՝ Ֆրենկը միանգամայն հարմար գտավ որպես գործի սկիզբ: Ուստի և հունիսին նա գնաց Հարավային Երկրորդ փողոցը և Հենրի Ուոթերմեն-ավագը բարեհաճ ընդունեց նրան: Մրանից բացի, ինչպես պարզվեց, կային նաև Հենրի Ուոթերմեն-կրտսերը՝ քսանամյա մի երիտասարդ, և ոմն Զորջ Ուոթերմեն՝ Ուոթերմեն-ավագի տասնհինգ տարեկան եղբայրը, բոլոր գործարքներին իրազեկ մի վստահյալ անձ: Ձեռնարկությունը զլխավորում էր հիսնամյա Ուոթերմեն-ավագը: Կարիքի գելքում նա մեկնում էր քաղաքամերձ վայրերի հաճախորդների մոտ. վերջին խոսքը նրան էր պատկանում այն հարցերում, որ եղբայրը անձամբ չեր կարող լուծել. նա էլ ձեռնարկում էր նոր գործարքներ, այնպես որ նրա շահընկերներին ու ծառայողներին մնում էր կենսագործել դրանք: Արտաքուստ պաղարյուն, կարճուն ու ցնփոր մի գիրուկ, ուուած աշքերի ու կարմիր վզի վրա մանր կնճիռների մի

¹ Քաղաքացիական պատերազմը, որ մղվեց 1861—1865 թվականներին արդյունաբերական Հյուսիսային և ստրկատիրական հարավային նահանգների միջև, վերջացավ Հյուսիսի հալթանակով՝ ստրկատիրությունը վերացնելու համար մարտնչող ժողովրդական հոծ զանգվածների մասնակցության շնորհիվ:

խիտ ցանցով՝ Հենրի Ութերմեն-ավագը իրականում խորա-թափանց, բարեհոգի, մեղմաբարո ու սրամիտ մարդ էր: Բնա-ծին ողջամտության և առինքնող բարյացակամության շնոր-հիվ նա կարողացել էր ստեղծել մի հաստատուն ու բարզավա-ճող գործ: Սակայն տարիներն արդեն զգալ էին տալիս իրենց, և հիմա նա սրտանց կուրպախանար որդու գործակցությամբ, եթե միայն դա գործին վնաս շնասցներ:

Բայց այդ մասին երազել շարժեր: Որդին ոչ այնքան դեմոկրատ, ինչպես Հայրը, զրկված նրա արագ կոռահունա-կությունից և աշխատունակությունից, ոչինչ չէր զգում, բացի առևտրական գործունեության նկատմամբ զգվանք տածելուց: Եթե գործը թողվեր նրա խնամքին, անկասկած քարուքանդ կլիներ: Հայրը տեսնում էր դա, վշտանում և միշտ հույս ու-ներ, թե կճարի որևէ երիտասարդի, որը կշահագրգովի գոր-ծով, կշարունակի դա նախկին հիմունքներով և միաժամանակ դուրս չի մղի իր որդուն. մի խոսքով միայն կրտսեր շահըն-կերոց գերով բավարարվող մի մարդու:

Եվ ահա Սենեկա Դեկսի հանձնարարականով ներկայա-ցավ երիտասարդ Քառուփերվուդը: Միստր Ութերմենը քննա-դատական հայցքով շափեց նրան: Այո, մտածեց ծերուկը, պիտանի տղա է: Սրանից մարդ դուրս կա: Ֆրենկն անկաշ-կանդ էր պահում իրեն, միաժամանակ և արժանապատվու-թյամբ՝ առանց հուզվելու կամ նեղվելու նվազագույն նշանի: Ասում էր, թե կարողանում է պահել հաշվային մատյանները, թեև հացահատիկային կոմիսիոն գործի բոլոր նրբություննե-րը չի իմանում: Բայց այդ ասպարեզը հետաքրքրում է նրան, ուստի և կուզենար իր բախտը փորձել այդտեղ:

— Ինձ դուր է զալիս այդ պատանին,— ասաց Հենրի Ութերմենն իր եղբորը, երբ Ֆրենկը գնաց՝ հաջորդ առավոտ իր նոր պարտականություններին ձեռք զարկելու առաջարկու-թյուն ստանալուց հետո:— Ինչ-որ բան կա նրա մեջ: Այսպիսի երիտասարդ, աշքաբաց ու եռանդուն մարդ վաղուց ոտքը մեր շեմքից ներս չէր դրել:

— Այո,— համաձայնեց Ջորջը, որ եղբորից նիհար էր ու բարձրահասակ, աշքերը սրճագույն, մի քիչ պղտոր ու մտած-

կոտ, մազերը սև ու ցանցառ, որոնք էլ ավելի էին շեշտում նրա ձման գլխի ճաղատի սպիտակությունը:— Խիստ հաճելի երիտասարդ է: Տարօրինակ է, որ հայրը չի տանում իր մոտ՝ բանկ:

— Ի՞նչ իմանաս, հավանորեն չի կարող,— առարկեց եղբայրը:— Չէ՞ որ նա ընդամենը գլխավոր գանձապահ է այնտեղ:

— Ճիշտ է:

— Ինչու չէ, փորձենք իմ կարծիքով ամեն մի գործից գլուխ հհանի: Եատ խոստումնալից պատանի է:

Հենրի Ռոթերմենը վեր կացավ և դիմեց դեպի Երկրորդ փողոցի վրա բացվող շքամուտքը: Նրան որուր էին գալիս շենքերի (այդ թվում և իր գրասենյակի շենքի) համատարած պատով առավոտյան արևից պաշտպանված խճապատ սալահատակի զովությունը, սմբակների տկտկոցը, սալերի դղորդոցը, խլրտոցը: Նա նայեց ճանապարհի մյուս կողմը եղած երեք ու չորս հարկանի, գրեթե բոլորն էլ գորշ քարից շինված տներին, ուր նույնպես եռում էր կյանքը: Եվ Հենրի Ռոթերմենը շնորհակալ եղավ աստծուն, որ ժամանակին մտածեց իր գործը հիմնել մի այդպիսի բանուկ տեղ: Միայն թե ափսոս, որ ժամանակին մի քանի հողամաս ևս ձեռք չէր բերել այդտեղ:

«Երանի թե այս երիտասարդ Քառիկերվուդը լինի այն, որը պետք է ինձ,— ասում էր մաքում ծերումին:— Ես կազմատվեի բաղմաթիվ ավելորդ գլխացավանքներից»:

Հատկանշականն այն էր, որ հինգ րոպեի խոսակցությունը բավական էր եղել՝ համոզվելու այդ տղայի գործիմացությանը: Հենրի Ռոթերմենը համարյա չէր կասկածում, որ իր հույսերը կիրականանան:

ԳԼՈՒԽ IV

Յրենկ Քառիկերվուդի ալտաքինն այդ տարիներին համակրելի էր ու հաճելի: Հաղթանդամ հինգ ոտնաշափի ու տասը մատնաշափի, թիկնեղ ու բարեկաղմ, գլուխը խոշոր ու գեղե-

ցիկ, մազերը մուգ շագանակագույն ու գանգրացող նրա աշ-քերում խելք էր առկայծում, բայց հայացքն անթափանց էր, գրանից ոչինչ չէր կարելի կռահել: Ֆրենկի քայլվածքը թեթև էր, հաստատ ու արագ: Ո՛չ բախտի ժանր հարվածների էր ճանաշել նա, ո՛չ էլ հիմաթափությունների գառնություն: Ո՛չ հիվանդություններից տառապելու առիթ էր ունեցնել, ո՛չ էլ պրկանքներից: Ճիշտ է, շուրջը ավելի հարուստ մարդիկ էր տեսել, բայց չէ՝ որ ինքն էլ հարստանալու հույս ուներ: Իրենց ընտանիքը հարգանք էր վայելում, հայրը լավ պաշտոն ուներ: Ֆրենկը երբեք և ոչ ոքի պարտք չէր եղել: Մի անգամ միայն ժամկետի հետաձգում էր արել մի մուրհակի, որ տվել էր քանկին, և հայրը այնպես էր նախատել նրան, որ ամբողջ կյանքում նա շմոռացավ այդ:

— Ես շորեքթաթ կտղայի, բայց չէի թողնի, որ ի՞ն մուրհակը բողոքարկվի, — գոշում էր միստր Քառվիերվուդը:

Եվ Ֆրենկը մի անգամ ընդմիշտ հասկացավ, և ճիշտն ասած՝ կարելի էր հասկանալ առանց այդպիսի պաթետիկ բացականչությունների, թե ինչ բան է վարկի նշանակությունը: Այդ գեպքից հետո նրա տված ո՛չ մի մուրհակ չէր բողոքարկվել կամ նրա անհօգությամբ ժամկետանց չէր եղել:

Բանից դուրս եկավ, որ Ֆրենկը ամենագործնական ծառայողն է, որպիսին երբեմէ ճանաշել էր «Ռութերմեն և Ընկ» առևտրական տունը: Սկզբում նրա առաջ դրին հաշվեմատյանները որպես հաշվապահի օֆնականի, վերջերս աղաւատ արձակված թումաս թրիքալերի փոխարեն, բայց արդեն երկու շաբաթ անց Ջորջ Ռութերմենն ասաց.

— Իսկ ինչո՞ւ Քառվիերվուդին հաշվապահ չնշանակենք: Նա մի բուքում ալելի է ըմբռնում, քան մեր Սեմսոնը ողջ կյանքում:

— Լավ, Ջորջ, ես շեմ առարկում, բայց այդ մասին շատ մի՛ խոսիր: Քառվիերվուդը երկար ժամանակ հաշվապահ չի մնա: Տեսնենք, թե շատ ժամանակ շանցած չի՞ կարող արդյոք փոխարինել ինձ որոշ գործերում:

«Ռութերմեն և Ընկ» առևտրական տան բավականինքն բարեգ հաշվապահությունը մանեական պվարճություն էր Ֆրեն-

կի համար: Նա այնքան հեշտ, այնքան արագ էր հասու լինում մատյաններին, որ նրա նախկին պետ Սեմսոնը ապուզ էր կտրում:

— Ոչ, այս տղան շատ է արագաշարժ, — առաջին օրն իսկ, նայելով նրա աշխատանքին, հայտարարեց նա մի ուրիշ ծառայողի: — Նա կիսճճվի: Հիշեցեք իմ խոսքը: Ճանաչում են՝ այդ ցեղը: Սպասեցեք միայն, որ սկսվեն վարկավորումների ու փոխանցումների թեժ օրերը:

Չնայած միստր Սեմսոնի կանխագուշակության՝ Ֆրենկը շխճճվեց: Մի շաբաթ էլ շանցած՝ նա արդեն գիտեր Ռութերմեն հաստատության ֆինանսական վիճակը տերերից եթե ոչ լավ, ապա և ոչ վատ: Նա գիտեր ում պետք է հաշիվ ուղարկել, ո՞ր շրջաններում են ավելի շատ գործարքներ կնքվում, ո՞վ է լավ արտադրանք մատակարարում և ո՞վ՝ վատ. այս վերջինի պերճախոս ապացուցը գների տատանումն էր տարվա ընթացքում: Ցանկանալով ստուգել իր ենթադրությունները՝ նա աշքի անցկացրեց մայր-մատյանի հին հաշիվները: Նա հաշվապահությամբ հետաքրքրվում էր միայն այն շափով, ինչ շափով դա արձանագրում ու արտացոլում էր ֆիրմայի կյանքը: Նա գիտեր, որ երկար չի մնա այդ աշխատանքում: Հետո արդեն կերեա: Իսկ հիմա նա անմիջապես, մինչև նվազագույն մանրամասնությունները, հասու եղավ հացահատիկային կոմիսիոնի էությանը: Նա տեսավ, թե ինչպիսի լուրջ վնասներ են կրում տերերը, ալելի ճիշտ՝ հաճախորդները, քանի որ ֆիրման սեփական ոչինչ չուներ միջնորդավաճառման համար ստացվող ապրանքների ոչ բավականաշափ արագ իրացումից, ինչպես նաև մատակարարողների, գնորդների և այլ կոմիսիոն ֆիրմաների հետ կարգավորված շփում շինելուց: Հաճախորդն, օրինակ, ուղարկում էր միրգ կամ բանջարեղեն՝ կողմնորոշվելով շուկայի կայուն և ոչ թե նույնիսկ աճող գներով: Բայց երբ դա անում էին միաժամանակ տասը մարդ կամ ուրիշ միջնորդներ՝ ապրանքի կուտակում էր առաջանում, ուստի և գներն անմիջապես ընկնում էին: Բեռնապտույտը երբեք կայուն չէր: Անմիջապես Ֆրենկի մտքով անցավ, որ եթե զբաղվի, որպես առտաքին հանձնարարություն-

ների գործակալ, ապրանքի մեծ պարտիաներ իրացնելով, ապա ֆիրմային շատ ավելի օգուտ կտա: Բայց որոշեց մի առժամանակ այդ հարցը չարծարծել: Ավելի, քան հավանական էր, որ մոտիկ ապագայում ամեն ինչ կլուծվի ինքն իրեն:

Երկու Ուոթերմենները՝ Հենրին ու Ջորջը, անվերջ գովեստով էին խոսում, թե ինչպես է Ֆրենկը վարում իրենց հաշվետվությունը: Հենց նրա ներկայությունը հավատ էր ներշնչում իրենց, որ ամեն ինչ լավ է բնթանում: Շուտով Ֆրենկը «եղբայր Ջորջի» ուշադրությունը հրավիրեց մի քանի հաշիվների գրության վրա՝ հանձնարարելով հաշվեկշռել մի քանիսը, մյուսներն էլ բոլորովին փակել, որով և անասելի գոհունակություն պատճառեց ծեր շենտլմենին: Այդ երիտասարդի գործնականությունը խոստանում էր նրան սեփական աշխատանքների թեթևացում, միաժամանակ անձնական բարեկամության զգացում էր ծայր առնում Ֆրենկի նկատմամբ:

«Եղբայր Հենրին» կողմնակից էր երիտասարդին արտաքին գործողությունների ասպարեզում փորձելուն: Քանի որ ֆիրմայի առկա պաշարները ոչ միշտ կարող էին բավարարել սպատվիրատուններին, ապա ապրանքի համար հարկ էր լինում դիմել այլ գրասենյակների և կամ բորսային. և սովորաբար դա անում էր ֆիրմայի պետը: Մի անգամ, երբ առավոտյան ստացվեցին բեռնագրեր որոնք կանխագուշակում էին ալյուրի առատություն ու հացահատիկի պակաս շուկայում (նախ՝ Ֆրենկը նկատեց դա), ավագ Ուոթերմենը հրավիրեց նրան իր առանձնասենյակն ու ասաց.

— Ֆրենկ, ես ձեզ կխնդրեի մտածել ու ասել, թե ինչպես դուրս գանք ստեղծված դրութունից: Վաղը ալյուրի կուտակում կառաջանա մեղ մոտ: Մենք շենք կարող պահելավարձ վճարել, մինչդեռ առկա պատվերները շեն սպառի ամբողջ ապրանքը: Այնինչ հացահատիկի պակաս ենք զգում: Գուցե գուք կարողանաք ավելորդ ալյուրը ծախել որևէ միշնորդի և բավականաշափ հացահատիկ ճարել պատվերները բավարարելու համար:

— Կիլորձեմ,— պատասխանեց Քառուփերվուդը:

Իր հաշվապահական գրքերից Ֆրենկն իմանում էր տարբ

բեր կոմիսիոն գրասենյակների հասցեները։ Գիտեր նաև, թե ինչ ունի տեղական ապրանքային բորսան և ինչ կարող են առաջարկել այդ ասպարեզում աշխատող այս կամ այն միջնորդները։ Մտեղծված ապրանքակուտակումը վերացնելու առաջարկությունը նրա սրտով էր։ Շատ հաճելի էր կրկին թարմ օդում լինել ու տնե-տուն ման գալ։ Զգվել էր գրասենյակում նստելուց, գրելուց ու մատյանների վրա տքնելուց։ Շատ տարիներ անց Ֆրենկն ասաց. «Իմ գրասենյակը իմ գլուխն է»։ Իսկ հիմա նա շտապեց խոշորագույն կոմիսիոններների մոտ՝ իմանալու, թե ինչպես է ալյուրի վիճակը և առաջարկելու իր ավելցուկը այնպիսի գնով, որ կտար եթե իրենց ֆիրմային ապրանքակուտակման վտանգ շսպառնար անգամ։ Զկա՞ արդյոք վեց հարյուր տակառ առաջնակարգ ալյուր գնել ցանկացող՝ անմիջական (այլ խոսքով՝ երկու օրում) հանձնելու պայմանով, տակառը ինը դոլլար։ Գնել ցանկացողներ շեղան։ Այդ ժամանակ Ֆրենկն սկսեց առաջարկել փոքրաքանակ, և այդ պայմանը հաջողություն ունեցավ։ Մոտ մի ժամ հետո մնաց երկու հարյուր տակառ, և նա չէ որոշեց առաջարկել ականավոր գործարար ոմն Զենդերմենի, որ իրենց ֆիրմայի հետ առևտրական հարաբերություններ չուներ։ Զենդերմենը, որ խոշոր մարմնով մարդ էր՝ սպիտակած մազերով, մի քիչ ուռած և ծաղկահար դեմքով, ծանր կոպերի տակից խորամաններեն փայլվացող փոքր աշքերով՝ հայացքը հետաքրքրությամբ սեենեց Ֆրենկի վրա։

— Ինչպես է ձեր անունը, երիտասարդ, — հարցրեց նա՝ հենվելով փայտե բազկաթոռի թիկնակին։

— Քառուիկերվուց։

— Ուրեմն դուք Ութերմենների մոտ եք աշխատում։ Երկի որոշել եք աշքի ընկնել, ուստի և եկել եք ինձ մոտ։

Քառուիկերվուզը իբրև պատասխան Ժպտաց միայն։

— Ինչո՞ւ չէ. կառնեմ ձեր ալյուրը. ինձ պետք կլինի Գրեցեք հաշիվը։

Քառուիկերվուզը շտապեց հրաժեշտ տալ։ Զենդերմենի մոտից նա շիփ-շիտակ գնաց Ուլնըթ փողոցի միջնորդական գրասենյակը, որի հետ իրենց ֆիրման գործեր էր անում։

Հրամայեց բորսայում գնեն պետք եղած քանակությամբ հացահատիկ ու վերադարձավ իր գրասենյակը:

— Արադ գլուխ բերիք, — ասաց Հենրի Ուոթերմենը՝ նրա զեկուցը լսելուց հետո: — Եվ երկու հարյուր տակառն էլ ծախեցիք ծեր Զենդերմենի՞ն: Լավ, շատ լավ: Նա կարծեմ մեր հաճախորդն էլ չէ:

— Ոչ, սը՛ր:

— Ուրեմն եթե դուք կարողանում եք այդպիսի գործեր անել, ապա երկար շեք կուանա մատյանների վրա:

Շատ շանցած Ֆրենկին արգեն ճանաշում էին թե՛ միշնորդական գրասենյակներում և թե՛ առևտրական բորսայում: Նա ապրանքային մնացուկներ էր գնում իր տերերի համար, ձեռք էր բերում պատահաբար հանդիպած իրեն անհրաժեշտ ապրանքների պարտիաներ, նոր հաճախորդներ էր հավաքագրում, լուծարքի ենթարկում շծախվող ապրանքներ ու մանրմանը ծախում բոլորովին անսպասելի գնորդների: Ուոթերմենները ապշում էին, թե ինչպիսի հեշտությամբ էր այդ ամենն անում նա: Ֆրենկը օժտված էր իրեն բարյացակամորեն լսել տալու, քարեկամական հարաբերություններ ստեղծելու, առևտրական որոշ շրջաններ թափանցելու ընդունակությամբ: Մի նոր աղբյուր բխեց «Ուոթերմեն և Ընկ.» առևտրական տան հին հունի մեջ: Այժմ հաճախորդներին անհամեմատ ակելի լավ էին սպասարկում, և Զորջն սկսեց պնդել, թե Ֆրենկին պետք է ուղարկել ոյուղավայրերը առևտուրն աշխուժացնելու համար, քանի որ նա հաճախ էր քաղաքից մեկնում:

Ծննդյան տոնի նախօրյակին Հենրի Ուոթերմենը եղորդ ասաց.

— Մի լավ նվեր պետք է տալ Ֆրենկին: Չէ՞ որ նա ոռմիկ չի ստանում: Ինչ ես կարծում՝ հինգ հարյուր դոլարը բավակա՞ն է:

— Մեր ժամանակների համար դա խոշոր գումար է, բայց ըստ իս նա արժանի է դրան: Այդ տղան անկասկած արդարացրեց մեր բոլոր ակնկալությունները և նույնիսկ գերազանցեց: Կարծես ստեղծված է հազարատիկային կոմիսիոն գործի համար:

— Իսկ ի՞նչ է ասում ինքը դրա մասին։ Բան չե՞ս լսելոց դո՞ւ՞չ է։

— Ո՞՛, ինձ թվում է, թե միանգամայն բավարարված է։ Ասենք դու ինձանից պակաս շես տեսնում նրան։

— Ուրեմն այդպես էլ որոշենք՝ հինգ հարյուր դոլլար։ Իսկ երբ ժամանակը գա, կարելի է ընդունել նրան գործընկեր մեր ֆիրմայում։ Իսկական առևտրականի ջիղ ունի։ Կարգադրություն արա այդ գումարի մասին ու մի քաղցր խոսք ասա մեր երկուսի անունից։

Եվ ահա ճրագալուցի նախօրյակին, երբ Ֆրենկը ինչ-որ բեռնագրեր ու հաշվեթերթեր էր տնտղում՝ գալիք տոնից առաջ բոլոր գործերը կանոնավոր վիճակում թողնելու համար, նրա սեղանին մոտեցավ Զորշ Ռոթերմենը։

— Ի՞նչ է, զեռ աշխատո՞ւմ եք, — հարցրեց նա՝ կանգ առնելով նավթագագի շլացուցիշ լամպի տակ և հավանության հայացքով նայելով ջանասեր երիտասարդին։

Դրսում արդեն իշնում էր մթնշաղը, և սառնամանիքը նախշերով էր ծածկել ապակիները։

— Հենց այնպես, որոշ գործեր եմ նայում՝ թղթերը հավաքելով առաջ, — Ժապալով պատասխանեց Քառուփերվուդը։

— Ես ու եղբայրս գոհ ենք ձեր այս կիսամյա աշխատանքից։ Ուստի կուլենայինք որեւէ ձեռվ արտահայտել մեր երախտագիտությունը, հետեւաբար խնդրում ենք ընդունեք այս պարզեր՝ հինգ հարյուր դոլլար։ Իսկ եկող տարվանից կանոնավոր ոռնիկ կնշանակենք ձեղ՝ շաբաթական երեսուն դոլլար։

— Շատ շնորհակալ եմ ձեզանից, — պատասխանեց Ֆրենկը։ — Ես այդպիսի ոռնիկի հույս չունեի։ Ավելի է, քան կարող էի ենթադրել։ Զէ՞ որ ձեզ մոտ աշխատելով՝ ես շատ բան սովորեցի։

— Լավ, լավ։ Դուք արժանի եք այս դրամին և կարող եք մնալ մեզ մոտ, որքան ուզենաք։ Միշտ ուրախ ենք ձեզ տեսնելու։

Քառուփերվուդը ժպտաց ինչպես սովորաբար՝ սիրալիր ու բարեհոգի։ Նրա արժանիքների բացահայտ ընդունումը խիստ

շոյեց նրան։ Հաճելի էր նայել այդ ուրախ, ժպտադեմ ու անգիտական լավ մահուղից կարված կոստյումով երիտասարդին։

Երեկոյան, տուն վերադառնալիս, Ֆրենկը մտմտում էր՝ ի՞նչ բան է այն ձեռնարկությունը, որտեղ ինքը աշխատում է։ Նա նվազագույն ցանկություն իսկ չուներ երկար մնալու այդ պաշտոնում՝ չնայած պարգևներին ու խոստացված ոռօճիկին, Ուոթերմեն եղբայրները երախտագետ էին իրեն. ի՞նչ զարմանալի բան կար այստեղ։ Եռանդուն աշխատող էր և ինքն էլ գիտեր այդ։ Նրա մտքով իսկ չէր անցնում դասելու իրեն, «պաշտոննեռության» շարքը. Ընդհակառակը՝ ժամանակին մարդկային այդ ցեղը պետք է աշխատի իր համար։ Այս աշխարհնկալման մեջ ո՛չ շարացածություն կար, ո՛չ էլ զայրուցի բախտի դեմ, ո՛չ ևս անհաջողության հանդիպելու վախ։ Իր տերերին գիտում էր նա որպես որոշ տիպի գործարարների։ Տեսնում էր նրանց թուլություններն ու թերությունները, ինչպես շափահաս մարդն է տեսնում մանկան թերությունները։

Ճաշից հետո, երր պատրաստվում էր գնալ իր բարեկամուհու՝ Մարջորի Սթեֆորդի մոտ, Ֆրենկը հորը պատմեց ստացած պարգևի ու խոստացված ոռօճիկի մասին։

— Հիանալի՝ է, — ուրախացավ Քառուկերվուդ-ավագը։ — Դու նույնիսկ ավելի մեծ առաջադիմություններ ես անում, քան ենթադրում էի։ Պետք է կարծել, թե նրանց մոտ չես մնա։

— Ոչ, չեմ մնա։ Եկո՛ղ տարի կհեռանամ նրանցից։

— Ինչո՞ւ։

— Ի՞նչ ասեմ, չի քաշում։ Վատ գործ չէ, բայց կուզենայի իմ ուժերը փորձել դրամական բորսայում։ Դա ավելի հետաքրքիր է ինձ համար։

— Իսկ չե՞ս կարծում, թե լավ բան չես անի քո տերերի հանդեպ, եթե վաղօրոք չնախազգուշացնես նրանց։

— Ամենակին։ Ես պետք եմ նրանց, — պատասխանեց Ֆրենկը հայելու առաջ փողկապը հանգուցելով ու սերթուկը շտկելով։

— Մորդ պատմե՞լ ես։

— Դեռ ոչ։ Հիմա կգնամ մոտը։

Նա մտավ ճաշաւենյակը, ուր նստած էր մայրը, գրկեց
նրա փոքր մարմինը ու ասաց.

— Թե կարող եմ իմացիր ի՞նչ եմ պատմելու քեզ:

— Չեմ կարող, — պատասխանեց մայրը՝ քնքշագին նա-
յելով նրա աշքերին:

— Այսօր ստացել եմ հինգ հարյուր դոլար պարգև, իսկ
տարեսկզբից ինձ նշանակում են ոռօնիկ՝ շաբաթական երեսուն
դոլար: Եննդի առթիվ ի՞նչ նվեր բերեմ քեզ:

— Ի՞նչ ես ասում: Հիանալի բան է: Շատ ուրախ եմ:
Երկի քեզ շատ են սիրում այնտեղ: Արդեն շափահաս մարդ
ես գառնում:

— Իսկ ի՞նչ ծննդյան նվեր բերեմ քեզ:

— Ոչինչ: Ոչ մի բանի պետք չունեմ: Իմ երեխաները
բավական են ինձ:

Ֆրենկը ժամաց:

— Դե թող այդպես լինի: Ոչինչ չես ուզում, ուրեմն ոչինչ
չեմ բերի:

Բայց մայրը գիտեր, որ տղան անպայման որևէ նվեր
կառնի իր համար:

Դուրս գալիս ֆրենկը մի ակնթարթ հապաղեց շեմքի
վրա՝ գրկեց քրոջ մեջքը, նախազգուշացրեց մորը, որ շուտ
չսպասեն իրեն, և շտապեց Մարզորիի մոտ, որի հետ պայմա-
նավորվել էր գնալ թատրոն:

— Քեզ ի՞նչ ծննդյան նվեր տամ, Մարզի, — հարցրեց
նա՝ համբուրելով աղջկանը կիսախավար նախասենյակում: —
Այսօր հինգ հարյուր դոլար եմ ստացել:

Աղջկա տասնհինգ տարին նոր էր լրացել, այնպես որ
նրա մեջ դեռ ո՛չ խորամանկություն կար, ո՛չ էլ շահասիրու-
թյուն:

— Է՛, ի՞նչ ես ասում. ոչ մի բան էլ պետք չէ ինձ:

— Պետք չէ, — կրկնեց նա՝ աղջկան սեղմելով փրեն ու
նորից համբուրելով շրթունքները:

Լա՞վ է ուղի հարթել այս աշխարհում, լա՞վ է վայելել
լյանքի բոլոր հաճույքները:

Հաջորդ տարվա հոկտեմբերին՝ տասնութ' տարին լրանալուց վեց ամիս հետո, Ֆրենկը վերջնականապես համոզվելով, որ հացահատիկային կոմիսիոն գործը (որքան կարող էր նաև դրակացնել Ռութերմեն ընկերությունից) իր կոչումը չէ, որոշեց գուրս գալ այդ ֆիրմայից ու ծառայության մտնել «Թայ և Ընկ.» բանկիրական գրասենյակը:

Ֆրենկը ժանովացել էր միստր Թայի հետ որպես «Ռութերմեն և Ընկ.» առևտրական տան գործակալ, և սա անմիշապես հետաքրքրվել էր այդ երիտասարդով:

— Հ՞ը, ինչպե՞ս են ձեր տերերի գործերը, — երբեմն բարեմտորեն հարցնում էր նա:

Եվ կամ.

— Ասացեք խնդրեմ՝ աճո՞ւմ է ձեր մուրհակային թրոքապանակը:

Երկրի տաղնապալի վիճակը, արժեթղթերի շափից ավելի տողած թողարկումը, ստրկատիրության դեմ մղվող պրոպագանդան և այլն ստիպում էին վախենալ ապագայի համար: Եվ Թային թվում էր, թեև ինքն էլ չէր կարող ասել ինչու, որ այդ պատանու հետ արժե զրուցել հրատապ խնդիրների: մասին: Եվ նրա տարիքն էլ կարծես այնքան չէ, որ այդ ամենից զլուխ հանի, բայց և այնպես գլուխ է հանում:

— Ծնորհակալ եմ, միստր Թայ, մեր գործերը լավ են ընթանում, — սովորաբար պատասխանում էր Քառափերվուդը:

— Ա՛յ, կտեսնիք, — ասաց մի առավոտ էլ Թայը Ֆրենկին, — եթե ստրկատիրության դեմ ուղղված այս պրոպագանդան շղապարի, մենք գիռ շատ վշտեր կճաշակենք:

Հենց այդ ժամանակ մի կուբացու պատկանող մի ստրուկ վերցված էր իր տիրոջից ու ազատ արձակված, որովհետեւ ըստ Պենսիլվանիայի օրենքների ամեն մի նեգր այդ նահանգութերիտրիայում գտնվելու դեպքում, թեկուզ և տարանցիկ կերպով, ազատություն էր ստանում: Այս դեպքը մեծ իրարանցում առաջացրեց: Մի քանի մարդ ձերբակալեցին, թերթերը անասելի աղմուկ բարձրացրին:

— Երբեք շեմ հավատա, որ Հարավը հանդուրժի իրերի այսպիսի վիճակ։ Դա խառնաշփոթ կառաջացնի մեր գործերի մեջ, և պետք է ենթադրել՝ նաև մյուս ասպարեզներում։ Կհշշեք իմ խոսքը՝ մենք բանը կհասցնենք այն կետին, որ Հարավային նահանգները կանցատվեն։

Միստր Թայն այս իմաստուն խոսքն ասաց իռլանդական նկատելի շեշտով։

— Այո, այդ կողմն է թեքվում, — անխոռվ պատասխանեց Քառվիերվուղը։ — Եվ այստեղ ոչինչ չի կարելի անել։ Նեգրն իշարկե շարժե այս բոլոր խոռվությունները, բայց նրա օգտին արվող ագիտացիան շարունակվելու է։ Էլ ինչո՞վ պիտի զբաղվեն զգայուն մարդիկ։ Դա խիստ կվնասի Հարավի հետ կատարվող մեր առևտորին։

— Ես էլ այդ կարծիքին եմ և ամեն կողմից էլ նույնն եմ խում։

Երիտասարդ Քառվիերվուղի մեկնելուց հետո միստր Թայը զբաղվեց մի ուրիշ հաճախորդով, բայց մեկ էլ տեսար հիշեց այդ պատանուն, որն ապշեցրել էր իրեն ֆինանսական գործերի մասին արած դատողությունների խորությամբ ու ողջամտությամբ։

«Եթե այդ երիտասարդն ուզենա փոխել իր աշխատանքի տեղը, կառաջարկեմ գա ինձ մոտ», — եղրակացրեց նա։

Եվ մի անգամ էլ Ֆրենկին ասաց։

— Զէի՞ք ուզենա ձեր ուժերը փորձել դրամական բորսայում, Հենց հիմա մի ազատ պաշտոն ունեմ։

— Հաճությամբ, — Ժապաւով պատասխանեց Քառվիերվուղը՝ նկատելիորեն շոյված։ — Ես ինքս էլ պատրաստվում էի այդպիսի բան խնդրել ձեղնից։

— Ինչո՞ւ չէ. Եթե որոշեք գալ ինձ մոտ, այդ պաշտոնը ձերը կլինի։ Եկեք, երբ հարմար նկատեք։

— Ես պետք է նախօրոք հայտնեմ իմ տերերին, — նկատեց Ֆրենկը։ — Զէի՞ք կարող սպասել մեկ կամ երկու շաբաթ։

— Անշո՛ւշու։ Շտապելու բան չկա։ Կանոնավորեցեք ձեր

բոլոր գործերը: Ես բնավ չեմ ուզում Ուոթերմեններին դժվարին կացության մեջ դնել:

Երկու շաբաթ հետո միայն Ֆրենկը հրաժեշտ տվեց Ուոթերմենների ընկերության. նրան հետաքրքրում, բայց ամենաին չէին արբեցնում իր առաջ բացված հեռանկարները: Միստր Ջորջ Ուոթերմենը խիստ տիրեց, իսկ միստր Հենրիին այդ «դավաճանությունը» ջղային վիճակի մատնեց:

— Իսկ ես կարծում էի, թե հավանում եք մեր գործը, — բացականչեց նա, երբ Քառուփերվուզը հայտնեց նրան իր որոշումը: — Չլինհ՝ թե դժգոհ եք ոռծիկից:

— Ոչ, միստր Ուոթերմեն, պարզապես ուզում եմ բորսայի գործով զբաղվել:

— Ի՞նչ արած: Ցավում եմ, շա՞տ եմ ցավում: Չեմ ուզում տարհամոզել ձեզ, եթե դա ի վնաս ձեր շահերին է: Դուք ավելի լավ եք հասկանում: Բայց ես ու ջորջը պատրաստվում էինք որոշ ժամանակ հետո առաջարկել ձեզ դառնալ մեր բաժնընկերը: Մինչդեռ դուք հանկարծ, առանց ուստժառի, վեր կացաք ու ցտեսություն: Չէ՞ որ մեր գործի մեջ, գրո՞ղը տանի, կարելի է լավ փող վաստակել:

— Գիտեմ, — Ժապալով պատասխանեց Քառուփերվուզը, — բայց սա իմ սրտով չէ: Ես այլ ծրագրեր ունեմ: Չեմ ուզում նվիրվել հացահատիկային կոմիսիոն գործին:

Հենրի Ուոթերմենը ոչ մի կերպ չէր կարող ըմբռնել, թե ինչու այս ասպարեզը չի հետաքրքրում Ֆրենկին, քանի որ նա բացահայտորեն առաջ էր գնում այդտեղ: Բացի դրանից, նա վախենում էր, որ երիտասարդի հեռանալը կարող է վնաս հասցնել ֆիրմայի գործերին:

Շատ շանչաց Քառուփերվուզը եկավ այն եզրակացության, որ նոր աշխատանքը շատ ավելի իր ճաշակով է՝ թե՛ հեշտ է, թե՛ ձեռնտու: Նախ և առաջ թեկուզ այն, որ «Թայ և Ընկ.» ֆիրման տեղավորված էր մի գեղեցիկ, քարաշեն գեղնականաշ շենքում՝ Նվաթսունվեց տանը, Հարավային երրորդ փողոցում, որը այդ ժամանակ, ինչպես և շատ տարիներ անց, ֆինանսական աշխարհի կենտրոնն էր: Հենց նրանց կողքին էին գտնվում ոչ միայն Ամերիկայում, այլև նրա սահմաննե-

րից դուրս էլ հայտնի բանկիրական տներ «Դրեքսել և Ընկ.», Երրորդ ազգային բանկը, Առաջին ազգային բանկը, ինչպես նաև դրամական բորսան և այլ նման հաստատություններ։ Մոտակայքում ծվարել էին մոտ երկու տասնյակ ավելի փոքր բանկեր ու բորսայական գրասենյակներ։ Ֆիրմայի «ուղեղը» հանդիսացող էղուարդ Թայը բնիկ բոստոնցի էր, որդին այդ պահպանողական քաղաքում առաջադիմած ու հարստացած մի ներգաղթած իուլանդացու Ֆիլագելֆիայում պարոն Թային հրապուրել էր սպեկուլացիայի լայն հնարավորությունը։ «Ամենահարմար վայրն է սա այն մարդու համար, ով կարող է ականջը սրած պահել», — իուլանդական թեթև առողջանությամբ ասում էր նա իր բարեկամներին։ Եվ իրեն համարում էր հենց այդպիսի մարդ։ Միշահասակ էր նա, ոչ շատ գեր, թեթև ու մի քիչ վաղաժամ ալեհեր մազերով, բնավորությամբ կենսուրախ ու բարեհոգի, միաժամանակ և տաքարյուն ու ինքնավստահ։ Նրա վերին շրթունքի վրա ցցված էին կարճ խուզած սպիտակ բեղերը։

— Փորձանք է այս պենսիլվանիացիների հետ գործ ունենալը, — գանգատվում էր նա արդեն տեղափոխվելուց հետո, — երբեք կանխիկ շեն վճարում։

Այդ ժամանակ Պենսիլվանիացի, ուստի և Ֆիլադելֆիացի վարկը, չնայած նահանգի հարուստ լինելուն, խիստ ցածր էր։

— Եթե բանը հասնի սպատերազմի, — ասում էր միստր Թայը, — ապա սենսիլվանիացիների ահագին գումարտակներ կսկսեն մուրհակներ առաջարկել իրենց ճաշի համար։ Եթե երկու դար ապրեի, կհարստանայի պենսիլվանյան մուրհակներ ու պարտաթղթեր առնելով։ Մի օր չէ մի օր երեկի վճարեն, բայց աստված իմ, որքան դանդաղ է դա արվում։ Ես գերեզմանում պառկած կլինեմ, նախքան նրանք կվճարեն թեկուզ և իրենց պարտքի տոկոսները։

Նա չէր սխալվում։ Նահանգի ու քաղաքի ֆինանսները ողորմելի վիճակում էին։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը բավական հարուստ էին, բայց քանի որ գանձարանը կողոպտում էր ամեն ոք, ով չէր ալարում, և ամեն կերպ, ասկա բոլոր նոր նախաձեռնումները նահանգում պահանջում էին նոր սլարտա-

վորաթղթերի թողարկում։ Այդ պարտատոմսերը կամ, ինչպես
անվանում էին դրանք, «պարտավորագրերը», երաշխավորում
էին տարեկան վեց տոկոս, բայց երբ գալիս էր տոկոսները
վճարելու ժամկետը, քաղաքի կամ նահանգի գանձապետը
դնում էր ներկայացված օրվա թվականը կրող կնիք, և այդ
օրվանից էլ տոկոսներն սկսում էին բանել ոչ միայն անվա-
նական գումարի, այլև կուտակված տոկոսների համար։ Այ-
կերպ ասած՝ դա տոկոսների աստիճանական կուտակում էր։
Կանխիկ գրամի կարիք ունեցողները դրանից շատ քիչ օգուտ
ունեին, որովհետև այդպիսի «պարտավորագրերը» գրավ դնե-
լիս բանկերը տալիս էին նրանց կուրսային արժեքի յոթանա-
սուն տոկոսից ոչ ավելի, իսկ ծախվում էին դրանք ոչ թե ըստ
պարփառետի, այլ հարցուրի դիմաց իննսուն։ Կարելի էր ան-
շուշտ գնել դրանք «օգուտով», բայց շատ երկար սպասել էր
պետք։ Այդ պարտավորագրերի վերջնական ետ գնումը դարձ-
յալ կապված էր ամեն տեսակ խարդախությունների հետ։
Իմանալուի, որ այս կամ այն «ուղարտավորագրեր» գտնվում
են «լավ ծանոթիների» ձեռքին, զանձաւելով հրապարակում
էր մի հազարդադրություն, թե վճարելու են այսինչ համարնե-
րը, այսինքն հենց այն, որ հայտնի էին նրան։

Ավելին, Միացյալ Նահանգների ամբողջ դրամական սիս-
տեմը այն ժամանակ նոր էր սկսում կատարելապես քառսա-
յին վիճակից անցնել մի քիչ կանոնավորություն հիշեցնող
վիճակի։ Միացյալ Նահանգների բանկը, որ հիմնել էր Նիկո-
լաս Բիգը, վերջանականապես լուծարվի ենթարկվեց 1841-ին։
1846 թվականին Միացյալ Նահանգների ֆինանսների մի-
նիսարարթյունը կաղմակերպեց զանձարանների իր սիստեմը։
Եթ այնուամենայնիվ այնքան շատ անվստահելի բանելը
կային, որ դրամափոխության մի փոքրիկ գրասենյակի տերը
պարտավոր էր լինել վճարունակ և անվճարունակ ձեռնարկու-
թյունների տեղեկատուն։ Դրությունը, ճիշտ է, հետզհետև
բարելավվեց, քանի որ հեռագիրը հեշտացնում էր բորսայա-
կան կուրսի ընթացքի փոխանակումը ոչ միայն նյութորքի,
բոստոնի ու Ֆիլադելֆիայի միջև, այլ նույնիսկ տեղական
բորսայական միջնորդի գուստենյակի ու գրամական բորսայի

կապը։ Այլ կերպ ասած՝ սկսեցին գործածության մեջ դրվել կարճ հեռավորության վրա աշխատող մասնավոր հեռագրական գծեր։ Ինֆորմացիայի փոխանակումը օր օրի վրա դարձավ ավելի արագ, մատչելի ու սկսեց կատարելագործվել:

Երկաթուղիներն արդեն ձգվեցին գեղի հարավ, արևելք, հյուսիս ու արևմուտք։ Թայց գեն կուրսերի ավտոմատ ցուցիչ շկար, շկար և հեռախոս։ Նյութ-ջորքում վերջերս միայն մտածեցին կիրառել հաշվարկային վճար, իսկ Ֆիլադելֆիայում դա գեռ չէր հաստատվել։ Դրան փոխարինում էին բանկերի ու բորսայական գրասենյակների միջև վազվզող ցրիշները, ովքեր և անփոփում էին հաշիվները բանկային հաշվեգրույներում, մուրհակների փոխանակում կատարում և շաբաթը մի անգամ բանկ տանում ոսկեդրամ՝ պարտքի վերջնական հաշվեհարդարի միակ միջոցը, որովհետև այդ տարիներին պետական կայուն վալյուտա գոյություն չուներ։ Բորսայում, երբ զանգը ազդարարում էր, թե դադարեցված են այդ օրվա գործարքները, սրահի մեջտեղը, ճիշտ ինչպես կոնդոնում, շրջան էին կազմում «Հաշվարկային գրագիր» կոչվող երիտասարդներ, ստուգում ու հանրագումարի բերում ամեն տեսակ գնումներ ու վաճառքներ՝ զնշելով դրանցից այնպիսիք, որոնք փոխադարձաբար մարվում էին ֆիրմաների միջև կատարված կրկնակի գործարքների հետևանքով։ Նայելով հաշվեգրերին նրանք գոռում էին այդ օրը կատարված գործարքները։ — «Դելավար և Մերիլենդը» վաճառել է «Բոմոնթ» ընկերության, «Դելավար և Մերիլենդը» վաճառել է «Թայ» ընկերության և այլն։ Այս եղանակը պարզեցնում էր ֆիրմաների հաշվապահությունը, արագացնում ու աշխուժացնում գործարքները։

Դրամական բորսայի պաշտոնյայի վճարը երկու հազար դոլլար էր։ Ըստ այն կանոնների, որ վերջերս էր մտցրել բորսայի կոմիտեն, թույլ էր տրվում գործարքներ կնքել առավոտյան ժամը տասի ու ցերեկվա ժամը երեքի միջև (առաջ անում էին ուղած ժամանակ՝ առավոտից մինչև կես գիշեր)։ Նույն կոմիտեն հաստատուն վճարներ էր սահմանել միջնորդների կատարած հանձնարարությունների համար՝ առաջվա

կամայական շորթումների փոխարեն Խախտողները ենթարկվում էին խիստ տույժերի: Այլ կերպ ասած՝ հնարավոր ամեն ինչ անում էին բորսան ամրապնդելու համար, և էղուարդ Թայը, մյուս միջնորդների նման, ապագայի մեծ հույսեր ուներ:

ԳԼՈՒԽ VI

Այդ միջոցին Քառուփերվուղների ընտանիքը արդեն տեղավորվել էր Հյուսիսային Ֆրոնտ-սթրիթի նոր, ավելի ընդարձակ ու լավ կահավորված բնակարանում, ուղիղ գետի մոտ: Տունը քառահարկ էր, ճակատի երկարությունը քսան-Հինգ ոտնաշափ, տնամերձ բակ չկար: Քառուփերվուղներն սկսեցին ժամանակ առ ժամանակ ոչ մեծաթիվ ընդունելություններ կազմակերպել առևտրի տարբեր ճյուղերի այն ներկայացուցիչների համար, որոնց հանդիպում էր Հենրի Քառուփերվուղի իր զործունեաթյան լնթացքում, որը անշեղութեան տարբել էր նրան զլիսավոր զանձաւդիալի պաշտոնին: Այդ հասարակաթյանը աշխի չը ընկնում նրբաճաշակությամբ, սակայն հյուրերի մեջ կային նույնպես հաջողություն ունեցած, ինչպիսի ինքը՝ Քառուփերվուղը, անձինք՝ նրա բանկի հետ զործարար հարաբերություններով կապված փոքր ձեռնարկությունների պետեր, մանուֆակտուրայի, կաշեղենի, հացահատիկի առևտրականներ ու մեծածախ մթերավաճառներ: Երեխաներն էլ իրենց բարեկամներն ունեցան, երբեմն էլ միսիս Քառուփերվուղն էր ցերեկային թեյասեղան կամ երեկույթ տալիս եկեղեցու իր ծանոթներին, և այն ժամանակ Քառուփերվուղն ինքը շանում էր բարձր դասի մարդու գեր կատարել, որը սովորաբար ոչ այլ ինչ էր, եթե ոչ այն, որ բարեհոգիանմիտ տեսքով կանգնում ու ողջունում իր կնոջ հյուրերին: Եվ որովհետեւ նա կարողանում էր լուրջ-հանդիսավոր արտահայտություն տալ դեմքին և լսել ընդարձակ պատասխան շպահանջող ողջունները, ապա այդ արարողությունը առանձնապես ծանր բեռ չէր նրա համար: Քառուփերվուղների տանը երբեմն երգում էին, երբեմն մի քիչ պարուած շատ շանցած

սկսեցին հյուրեր գալ պարզապես ճաշի, մի բան, որ առաջ երբեք չէր լինում:

Եվ աշա նոր կացարանում ապրելու առաջին իսկ տարին Ֆրենկը ծանոթացավ ոմն միսիս Սեմփլի հետ ու հրապոեր վեց նրանով: Այդ կող ամուսինը կոշիկի խոշոր վաճառատուն ուներ երրորդ փողոցին մոտիկ Զեսթնուտ-սթրիթում և արդեն մտածում էր երկրորդն էլ բացել նույն փողոցում՝ ըիշ հեռու:

Մի երեկո էլ Սեմփլն ու կինը այցի եկան Քառուիերվուդ-ներին: Միստր Սեմփլը ուզում էր տան տիրոջ հետ իրուսել քաղաքում նոր-նոր սկիզբ առած փոխադրության նոր տեսակի՝ ձիաքարշ երկաթուղու մասին: Մեկուկես մղոնանոց փորձնական գիծը, որ կառուցել էր Հյուսիս-Պենսիլվանյան երկաթուղային ընկերությունը, նոր էր շահագործման հանձնըվել: Սկիզբ առնելով Ուիլուու փողոցից՝ այդ գիծը գնում էր Ֆրոնտ-սթրիթի երկայնքով մինչև Զերմանֆառւն-Ռոդը, այդտեղից էլ զանազան փողոցներով հասնում էր այն տեղին, որ հայտնի էր «Կոհոկսինկ կայարան» անունով: Կարծում էին, թե փոխադրության այդ ձևը աստիճանաբար ետ կմղի հարյուրավոր հանրակառեր, որոնք երթևեկում էին քաղաքում և խստ դժվարացնում հետիւտն շարժումը առևտրական թաղամասում: Երիտասարդ Քառուիերվուդը սկզբից էլ հետաքրքրվեց այդ ձեռնարկությամբ: Երկաթուղային գործն ընդհանրապես դրավում էր Ֆրենկին, սա էլ նրա տարատեսակն էր՝ մասնավոր ձևի: Զիաքարշը աշխույժ վիճաբանություններ էր առաջացնում, և Ֆրենկը ուրիշ հետաքրքրասերների հետ գնաց տեսնելու դա: Տարօրինակ ու անսովոր տեսքի մի վագոն՝ տասնչորս ոտտնաշափ երկարությամբ, յոթ՝ լայնությամբ և մոտավորապես նույնքան էլ՝ բարձրությամբ, դրված էր երկաթե փոքր անիվների վրա, անհամեմատ ավելի մեծ հարմարություններ էր ընձեռում ուղևորներին, քան հանրակառը: Ալֆրեդ Սեմփլը արդեն լոելյայն մտածում էր փող ներդնել նախատեսվող երկրորդ գծի մեջ, որը օրենսդիր ժողովը հավանությանն արժանանալուց հետո, պետք է անցներ Հինգերորդ ու Վեցերորդ փողոցներով:

Քառուիերվասդ-ավագն այդ ձեռնարկությանը մեծ ապագա
էր գուշակում, թեև դեռ չէր իմանում, թե որտեղից միջոցներ
պիտի ճարվեն դրա իրագործման համար: Ֆրենկն էլ իր կող-
մից կարծում էր, թե Թայ ընկերությունը պետք է հանձն
առնի Հինգերորդ և Վեցերորդ փողոցների ձիաքարշի գծի
բաժնետոմսերի իրացումը, եթե քաղաքը այդ թույլատրու-
թյունը տա: Նա լսել էր, որ քաժնետիրական ընկերությունը
կազմակերպվել է և արդեն պատրաստվում է բաց թողնել
մեծաքանակ բաժնետոմսեր, որոնք վաճառքի են հանվելու
հատը հինգ դոլլարով, վերջին հաշվով՝ հարյուր դոլլար պա-
րիտետով: Ֆրենկը շատ էր ափսոսում, որ բավականաշափ
փող չունի, որպեսզի այդ բաժնետոմսերից մի պատկառելի
կապոց գնի:

Այդ միջոցին Լիլիան Սեմֆլը գերեց Ֆրենկին ու տիրա-
ցավ նրա երևակայությանը: Դժվար է ասել, թե ինչն էր երի-
տասարդ Քառուիերվուդին մղում դեպի այդ կինը, որովհետեւ
ո՛չ խառնվածքով, ոչ խելքով Ֆրենկին հավասար չէր: Ֆրենկն
արդեն որոշ փարձ էր ձեռք րիերել կանանց հետ և առաջվա-
պես մտերիմ էր Մարչուրի Սիեֆորդին: Լիլիան Սեմֆլը թեև
ո՛չ խելքավ, ո՛չ էլ գեղեցիկությամբ գերազանց չէր ուրիշնե-
րից, առավել ևս ամուսնացած էր, այնպես որ Ֆրենկը «օրի-
նական» հավակնություն չէր կարող ունենալ նրա վրա, այ-
նուամենայնիվ բոլորից ավելի էր հուզում երիտասարդին:
Լիլիանը քսանչորս տարեկան էր, իսկ ինքը տասնինը, սա-
կայն հոգով ու մարմնով այդ կինը նույնքան երիտասարդ էր
թվում, որքան Ֆրենկը: Բարձրահասակ, տղայից մի քիչ ավե-
լի, թեև սա այդ միջոցին արդեն հասել էր իր առավելագույն
հասակին (հինգ ոտնաշափ և իննուկես մատնաշափ), այնուա-
մենայնիվ Լիլիանը շատ էր պերճագեղ: Նրանից ճառագում
էր մի անայլայլ հանգստություն, որի պատճառն ավելի շուտ
ընկալման մակերեսայնությունն էր, քան թե բնավորության
ուժը: Լիլիանի վարսերը խիտ էին, փարթամ ու մոխրագույն
երանգով, դեմքը դժգույն, նեղ, համարյա մոմագույն, շըր-
թունքները նուրբ վարդագույն, քիթը ուղիղ: Նրա գորշ աշքերը,
նայած լուսավորության, թվում էին մերթ կապույտ, մերթ

թուլս: Ապշեցուցիչ էին ձեռքերի նրբությունն ու գեղեցկությունը: Ո՛չ աշխուժությամբ էր աշքի ընկնում նա, ո՛չ փայլուն մտքով. շարժումները դանդաղ էին և մի տեսակ անգիտակցական-պլաստիկ: Քառուփերվուդին ձգում էր նրա արտաքինը: Լիլիանը լիովին համապատասխանում էր գեղեցկության իդեալի մասին ունեցած նրա այդ ժամանակվա պատկերացումներին: «Որքա՞ն գեղանի է, — մտածում էր նա, — որքա՞ն անուշիկ, ըստ որում որքա՞ն արժանապատվություն կամեզը»: Եթե նա կարողանար ընտրություն անել, հենց այսպիսի կին կընտրեր իր համար:

Կանանց մասին Քառուփերվուդն առաջնորդվում էր ավելի զգացմունքով, քան բանականությամբ: Զգտելով հասնել հարըստության, հեղինակության ու ազդեցության՝ նա իհարկե մեծ նշանակություն էր տալիս կնոջ վայելչատեսությանը, հասարակության մեջ ունեցած դիրքին և այլն: Եվ այնուամենայնիվ անհրապույր կանայք երբեք չէին գրավում նրան, իսկ գեղեցկուհիները առինքնում էին: Տանը հաճախ էր նա լսում պատմություններ անձնազո՞չ կանանց, ինչպես նաև տղամարդկանց մասին, լսել էր ստրկորեն իրենց ամուսիններին կամ երեխաներին, և կամ թե ամբողջ ընտանիքին նվիրված աշխատավոր կանանց մասին, ովքեր ժանր պահերին հրաժարվում էին ամեն ինչից հարազատների կամ բարեկամների համար՝ դրվագ պարտքից ու բարեսրտությունից: Բայց այսպիսի պատմությունները շգփենս ինչու չէին հուզում նրան: Նա գերազանցում էր բոլոր մարդկանց համարել բացահայտորեն եսասեր: Իսկ ինչու չէր կարող բացատրել: Ինքնապաշտպանության անընդունակ և ուղած դրությունից ելք գտնել չկարողացող մարդիկ թվում էին նրան տիմար կամ լավագույն դեպքում՝ դժբախտ: Որքա՞ն շատ էին շուրջ բոլորը խոսում բարձր բարոյականության մասին, որքա՞ն էին փառաբանվում առաքինություններն ու պարկեղտությունը, որքա՞ն հաճախ ձեռքերը երկինք էին կարկառում առաքինության սարսափ զգալով նրանցից, որոնք խախտում էին յոթերորդ պատվիրանը¹ կամ կասկածվում էին, թե խախտում

¹ Միշ շնանար:

Են դա: Ֆրենկը լուրջ բանի տեղ չէր դնում այդ խոսակցությունները: Ինքն էլ հաճախ խախտել էր այդ պատվիրանը: Նույն էին անում նաև մյուս երիտասարդները: Ճիշտ է, փողոցային կանայք զգվանք էին պատճառում նրան: Նրանց հետ շփում ունենալու մեջ շատ ստոր ու նողկալի բան կար: Սկզբնական շրջանում նրան դուր էր գալիս «զվարճութան տների» խարութիկ գոեհիկ փայլը: Դրանց պերճանքի մեջ որոշ շուայլութուն կար. կարմիր թափիշով պատված կահույք: դուների կարմիր, շքեղ վարագույրներ, անձաշակ, սակայն թանկարժեք շրջանակների մեջ դրված նկարներ և ամենից առաջ բնակչուհիներ՝ առողջ և ուժեղ և կամ զգայասեր ու սառնարյուն, կանայք, ովքեր (ինչպես նրա մայրն էր ասում), «դարանակալ սպասում էին» տղամարդկանց: Նրանց մարմնի դիմացկունությունը, և հոգու վավաշշությունը, ցուցադրական քնքշանքով ու բարեհոգությամբ իրար ետկից տղամարդիկ ընդունելու ունակությունը սկզբում ապշեցնում էին Ֆրենկին, բայց շատ շանցած սկսեցին զգվանք առաջացնել նրա մեջ: Առավել ևս, որ նրանք բթամիտ էին: Նրանցից անկարելի էր որի, կենդանի խոսք լսել: Եվ երեակայել, որ ուրիշ ոչ մի բան չէին կարսղ անել նրանք: Նա մտովի պատկերացնում էր նրանց թախծոտ արթնանալը անզուսպ գիշերներից հետո, հոգում կուտակված գարշելի դիրտը, որ մասամբ միայն կարսղ էին փարատել քունն ու վաստակի ծարավը: Եվ Ֆրենկին, չնայած նրա երիտասարդությանը, տիրություն էր համակում: Նա ուզում էր այնպիսի մոտիկություն, որի մեջ լիներ ավելի մտերմություն, նրբաճաշակություն, ինքնատիպություն ու անձնականություն:

Եվ ահա հայտնիեց կրիան Սեմփլը՝ նրա իդեալի լոկ նշույլը: Այնուամենայնիվ նա ավնվացըք Ֆրենկի պատկերացումը կանանց մասին: Նրա մեջ անասնական ուժ և սանձարձակություն չկար, ինչպես անառականոցի կանանց մեջ. որոնք կոպիտ ու անամօթ կերպով խախտում էին հանրաճանաչ դոգմաներն ու հայացքները. և հենց սա էլ բավական էր, որ կրիանը դուր դար նրան: Այս կինն ապրում էր նրա մտքում նույնիսկ այս թեժ օրերին, որոնք բոցի բռնկումնելի

պես լուսավորում էին նրա գործունեությունը։ նոր ասպարեզ գում, որովհետև բորսայական աշխարհը, ուր նետվեց Քառվականական պատմական էլ մեզ թվար այսօր, նրա համար լի էր հմայքով։ Երրորդ փողոցում գտնվող դրամական բորսան, ուր հավաքվում էին միջնորդները, նրանց գործակալներն ու պաշտոնյաները, ընդամենը մի հարյուր հիսուն մարդ, բնավէլ ճարտարապետական ուշագրավ կոթող չէր, այլ մի քառակուսի շենք՝ փաթուն ունաշափ երկայնքը, նույնքան էլ լայնքը, և գրավում էր մի քառահարկ տան վերին երկու հարկերը։ Բայց դա զմայլանք էր պատճառում Ֆրենկին։ Այդուեղ պատուհանները բարձր էին ու նեղ, ուղիղ դռան դիմաց, արևմտյան պատի վրա, կախված էր հսկայական թվացուցով մի ժամացուց, իսկ հյուսիսային արևելյան անկյունում խճողված էին բարձրադիր սեղաններ, աթոռներ ու հեռագրական ապարատների մի ահագին հավաքածու Բորսայի գոյության նախնական շրջանում սրահում դրված էին շարք-շարք աթոռներ, որոնց վրա նստում էին միջնորդներ և ունկնդրում բաժնեթղթերի ամեն տեսակ առաջարկներին։ Հետագայում այդ աթոռները վերացրին, և սրահի տարբեր կետերում հաստատեցին կարճ այուներ (կամ նշաններ արեցին հատակին), որոնք ցուց էին տալիս, թե որտեղ են ծախվում՝ այս կամ այն թղթերը։ Այդ սյուների շուրջը խոնկում էին գործարք կնքելով շահագրդոված մարդիկ։ Երրորդ հարկի միջանցքից մի դուռ տանում էր հասարակության համար մի կերպ կահավորված նիզիլ լղատշգամբը։ Սրևմայան պատից կախված էր մի ահագին գրատախտակ, որի վրա նշանակվում էր նյու-Յորքից ու Բոստոնից հեռագրով ստացված բաժնեթղթերի օրվա կուրսը։ Սրահի մեջտեղը, մի ցածրիկ պատվարի ետեր, գտնվում էր պաշտոնական արձանագրողի տեղը, իսկ երրորդ յարուսի բարձրության վրա, արևմտյան կողմից, կար մի փոքրիկ պատշգամբ ևս, որտեղից բորսայական կոմիտեի քարտուղարը անում էր արտակարգ հաղորդումները։ Հարավ-արևմտյան անկյունում կար մի դուռ, որը տանում էր այն սենյակը, ուր բորսայի անդամները ծանոթանում էին

ամեն տեսակ հաշվետվություններին ու տարեկան տեսություններին:

Երիտասարդ Քառուփերվուգին թույլ չէին տա մտնել բորսա ո՛չ իբրև միջնորդ, ո՛չ էլ իբրև միջնորդի գործակալ կամ օգնական, եթե Թայը, որ կարիք ուներ նրան ու հավատացած էր, որ այդպիսի մարդը օգտակար կլինի իրեն, մի տեղ չգներ նրա համար: Այդ տեղի արժեքը՝ երկու հազար դոլլարը, նա պարտապրեց Ֆրենկի վրա, որից հետո ի լուր ամենեցուն, հայտարարեց նրան իր շահընկերը: Այս շինձու ընկերությունը հակասում էր բորսայի կանոններին, սակայն միջնորդները հաճախ էին դիմում այդ միջոցին: Կրտսեր բաժնընկերներին ու օգնականներին կոչում էին «ութերորդական» և «երկդուլարանոց միջնորդ», որովհետև նրանք ընկնում էին ամեն մի փոքրիկ պատվերի ետևից ու պատրաստ էին -առուժակի անելում հանձնարարությամբ ասես՝ կատարած գործառնությունների համար իհարկե հաշիվ տալով իրենց ֆիրմային: Ֆրենկը, շնայած իր ակնառու ընդունակություններին, սկզբում նույնպիս համարվում էր «ութերորդական» և Թայ ընկերության բորսայի լիազոր ներկայացուցիչ պ. Արթուր Ռիվերսը գարձավ նրա զեկարարը:

Արտակարգ եռանդում մարդ էր Ռիվերսը՝ մոտ երեսուն-հինգ տարեկան, պերճաշուր ու բարեկազմ, մաքուր ածիլած, խիստ ու ասես շարիմաքաշ գեմքով, որը զարդարում էին կարճ խուզած սև բեղերն ու նոլրը, սև հոնքերը: Մազերը մեջտեղից երկու հավասար մասի էին բաժւանվում: Կզակը հազիվ նկատելի երկատվում էր: Ռիվերսի ձայնը մեղմ էր, շարժուծները հանդիսատ ու զուտապ. նա ամենուրեք ու միշտ բարեկիրթ էր: Ռիվերսի մասին չեմ բարոնում, թե ինչու այդպիսի վարժ մի գործարար, ինչպիսին էր Ռիվերսը, ծառայում է միստր Թային. բայց հետագայում իմացավ, որ բաժնընկեր է գործին: Թայը կազմակերպիչն էր. նա հաճախորդներին ընդունում էր զրասենյակում, իսկ Ռիվերսը ֆիրմայի ներկայացուցիչն էր բորսայում և արտաքին հարաբերություններն էր վարում:

Շուտով Ֆրենկը համոզվեց, որ չարժե նույնիսկ փորձել հասկանալ, թե ինչու բաժնեթղթերը մերթ բարձրանում են,

մերթ ընկնում։ Դա իհարկե որոշվում էր ինչ-որ ընդհանուր պատճառներով, ինչպես բացատրեց Թայը, բայց համարյաթե անկարելի էր հաշվի առնել դրանք։

— Ամեն մի պատճառ կարող է բորսայում առաջացնել և «բում»¹, և խուճապ, — ասում էր Թայը իր յուրահատուկ խառնվածքով, — լինի դա բանկի կործանում կամ հենց մի լուր, թե ձեր հորեղբօր տղայի տատը հարբուխ է ընկել։ Բորսան բոլորովին առանձնահատուկ մի աշխարհ է, Քառուփերվուդ Աշխարհում ոչ ոք չի կարողանա բացատրել դա ձեզ։ Ես տեսել եմ, թե ինչպես են սնանկացել բաժնետիրական ընկերություններ, թեև ամենափորձված բորսայականը չէր կարող ասել, թե ինչո՞ւ ։ Ես տեսել եմ նաև, թե ինչպես բաժնետոմսերը անբացատրելի կերպով բարձրացել, երկինք են հասել։ Օ՛, այդ բորսայական շշուկները։ Սատանան ինքն էլ այդպիսի բան չի կարող հնարել։ Սովորաբար, երբ բաժնետոմսերն ընկնում են, նշանակում է, որ որևէ մեկը բորսա է նետում դրանք վաճառքի համար և կամ թե շուկայում ընդհանուր թուլացածովյուն է։ Երբ բաժնետոմսերը բարձրանում են, նշանակում է, որ կամ իրադրությունը լավ է, կամ մեկը մեծաքանակ գնում է։ Սա արդեն փաստ է։ Ավելին... Ասենք թող Ոլիվերսը ծանոթացնի ձեզ դրա բոլոր դադտնիքներին։ Ես ձեզ մի բան եմ նախազգուշացնելու՝ երբեք ինձ վնասի տակ չզցեր։ Դա մեծագույն մեղքն է, որ կարող է կատարել իմ դրասենցակի լուսահելի անձը։

Այս խոսքի վրա Թայը ժպտաց սիրալիր, բայց բազմանշանակ։

Քառուփերվուդը հասկացավ, բայց... դա ոչինչ շավելացրեց նրա տեղեկություններին։ Այդ խորամանկ աշխարհը դուր էր գալիս նրան ու համապատասխանում էր նրա խառնըվածքին։

Շշուկներ, շշուկներ, շշուկներ էին գալիս ամեն կողմից՝ երկաթուղիների ու ձիաքարշների շինարարության լայն ծրագրերի, նոր հողեր մշակելու, կառավարության կողմից

¹ Արժեթղթերի կամ ապրանքների գների արհեստական ու կարճատև բարձրացում բորսայում։

մաքսային տարիքները վերանայելու, ֆրանսիայի ու թուրքիայի միջև ծագելիք պատերազմի, մոռասատանում և իոլանդիայում տիրող սովի մասին և այլն, և այլն, Անդրատլանտյան առաջին հեռագրալարը դեռ չէր անցկացված և արտասահմանից լուրերը համանում էին դանդաղ կամ ժլատ, Այնուամենայնիվ բորսայի արենայում արդեն գործում էին այնպիսի խոշորագույն ֆինանսիստներ, ինչպես Սայրուս Ֆիլդը, Ուիլյամ Վանդերբիլդը կամ Ֆ. Դրեսելը.՝ սրանք հրաշքներ էին կատարում, և նրանց գործունեությունը, ինչպես նաև դրա վերաբերյալ ամեն տեսակ շշուկներ վիթխարի դեր էին խաղում բորսայի կյանքում:

Ֆրենկը արագ տիրապետեց գործի տեխնիկային, նա իմացավ, որ «եզ» էին անվանում նրան, ով գնում էր՝ կուրսը՝ բարձրանալու հույսով, իսկ եթե այդ միջնորդը արդեն գնել էր մեծ պարտիաներով որոշ արժեթղթեր, ապա դրա մասին ասում էին, որ նա «բեռնվել է ծայր աստիճան»։ Երբ նա սկսում էր ծախել, այդ նշանակում էր, որ նա «իրացնում է» իր վաստակը, իսկ երբ նրա մարդը¹ սպառվում էր, նա «վառվում էր»։ «Արջ» էին կոչում այն բորսայականին, որը ծախում էր մեծ մասամբ առկա չունեցած բաժնետոմսեր՝ հուսալով, թե դրանք անկում կունենան, որպեսզի այն ժամանակ էժան գնի ու ծածկի իր վաճառած գործարքները։ Քանի դեռ նա ծախում էր չունեցած արժեթղթեր, ապա համարվում էր «դատարկ»։ Իսկ երբ առնում էր բաժնետոմսեր հաճախորդին բավարարելու և օգուտը գրպանը գնելու և կամ թե կուրսի անընդհատ բարձրանալուց վնասից խուսափելու նպատակով, ապա բորսայի խոսվածքով դա նշանակում էր, որ նա «ծածկվում է»։ Երբ պարզվում էր, թե նա չի կարող բաժնետոմսեր ճարել, սրպեսզի վերադարձնի նրանց, ումից մինչ այդ փոխ էր առել պատվերը կատարելու համար, դառնում էր «անկյուն քշված»։ Այդ ժամանակ նա ստիպված էր լինում ծածկել իր պարտքը այն անձանց նշանակած գներով, ում նա և ուրիշ «դատարկներ» արժեթղթեր էին ծախել։

¹ Արժեթղթի անվանական արժեքի և միջնորդի պահանջած գնի տարբերությունը։

Սկզբնական շրջանում Ֆրենկին գլարճացնում էին երիտասարդ միջնորդներին հատուկ խորհրդավոր տեսքն ու ամենադեռ լինելու արտահայտությունը։ Մրանք խիստ անկեղծ ու նույնքան էլ անհեթեթ կերպով կամկածամիտ էին։ Նրանց ավելի փորձված պաշտոնակիցները, որպես կանոն, մնում էին անթափանցելի։ Մրանք անտարբերություն ու անվճականություն էին ցուցադրում, այնինչ գիշատիչ ձկների նման զննում էին գայթակղիշ որսը։ Մի ակնթարթ, և հնարավորությունը ձեռքից ձեռք է թողված, մի ուրիշը օգտավեց դրանից։ Մրանից ցուրաքանչուրը մշտապես ձեռքին էր պահում ծոցատերը։ Ամեն մեկն ուներ աշքով անելու իր ձեր, իր բնորոշ կեցվածքը կամ ժեստը, որ նշանակում էր. «Եղավ։ Առնում եմ»։ Երբեմն թվում էր, թե նրանք համարյաշեն հաստատում իրենց վաճառքներն ու գնումները. չէ՞ որ շատ լավ էին ճանաշում իրար։ Բայց թվում էր միայն այդպես։ Երբ բորսայում այս կամ այն պատճառով աշխատություն էր տիրում, ապա հավաքվում էին շատ ավելի բորսայականներ ու նրանց գործակալներ, քան այն օրերին, երբ բորսան թույլ էր աշխատում և լճացում էր նկատվում գործերի մեջ։ Առավոտյան ժամը տասին հնչող զանգը ազդարարում էր գործառնությունների սկիզբը, և երբ նկատվում էր որևէ բաժնեթղթի կամ բազմաթիվ արժեթղթերի գների բարձրացում կամ անկում, հետաքրքիր պատկեր կարելի էր տեսնել այնտեղ։ Մի հիսուն, երբեմն նույնիսկ հարյուր մարդ միաժամ գոռում էին, թափահարում ձեռքերը, այս ու այն կողմ էին նետվում ասես ածխահոտից բժնված, չանում էին օգուտ քաղել առաջարկվող կամ պահանջվող արժեթղթերից։

— Հինգ ութերորդական եմ տալիս հինգ հարյուր հատ «Պ»-ի կամ «Ու»-ի համար, — գոշում էր միջնորդը՝ միվերսը, Քառերկուուր և կամ մի ուրիշը։

— Հինգ հարյուր երեք քառորդով, — գոռում էր ի պատասխան այն գործակալը, որ հրահանգ էր ստացել ծախել այդ գնով կամ խաղում էր իշեցնելու նպատակով։ Հուսալով, թե հետո եղնի իրեն անհրաժեշտ բաժնետոմսերը, կկատարի

ստացած պատվերը ու մի բան էլ կիաստակի տարբերությունից:

Երբ բորսայում այդ գնանոց բաժնետոմս շատ էր լինում, ապա գնորդը, ասենք Ռիվերսը, իր «Հինգ ութերորդից» վեր չէր ելնում: Սակայն երբ նկատում էր, որ աճում է իրեն շահագրգոռ արժեթղթերի պահանջը, վճարում էր դրանց համար և «երեք քառորդ»: Երբ պրոֆեսիոնալ բորսայակնները կասկածում էին, որ Ռիվերսը այս կամ այն բաժնետոմսերը մի խոշոր պարտիայի պատվեր է ստացել, ամեն կերպ ջանում էին առաջ վազել ու գնել թեկուզ և «երեք քառորդով»՝ հուսալով, թե մի փոքր վաստակով կծախեն նրան: Այդ պրոֆեսիոնալներն իհարկե նուրբ հոգեքաններ էին: Նրանց հաջողությունը կախված էր այն պարագան կոահելու ընդունակությունից, թե որևէ խոշոր բորսայականի, ասենք Թայի, ներկայացուցիչը հանդիսացող այս կամ այն միջնորդը արդյոք բավական մեծ պատվեր ունի՞, որպեսզի ազդի շուկայի վրա և հնարավորություն տա իրենց, ինչպես նրանց էին ասում, «գործ տեսնել», նախքան նա: Կավարտի իր գնումները: Այսպես ուրուզն է զգույշ սպասում որպար թշնամու մագիլներից հափշտակելու առիթին:

Չորս, հինգ, տասը, տասնհինգ, քսան, երեսուն, քառասուն, հիսուն մարդ, երբեմն էլ ամբողջ բազմությունը, ջանում էին օգտագործել այս կամ այն արժեթղթի բարձրացումը՝ առաջարկելով կամ գնելով: Այդպիսի դեպքում աներևակացելի իրարանցում էր առաջանում և աղմուկը դառնում էր խորացուցիչ: Առանձին խմբեր շարունակում էին այլ թղթերի տառածախ, ստիլայն ճնշող մեծամասնությունը մի կողմ է: Պնտում իր բարսր գործերի, սրտիսապի բաց շթողնի նպաստավոր տուիթրը Ավելի երիտասարդ միջնորդներ ու զործակատարներ տնհովք տեղի ունեցածն ընդդրկելու և արժեթղթերի անկումն ու բարձրացումը հօգուս իրենց շրջելու ցանկությամբ բորբոքված՝ ետ ու առաջ էին սուրում, գրգռված թափահարում ձեռքերը ու նշաններ փոխանակում՝ վեր ցցելով պայմանական թվով մատները: Ծովոված դեմքեր էին երեսում ուրիշների ուսերի, ուրիշների ձեռքերի ետևից: Աւելնքն էլ մի տե-

սակ տարօրինակ ձևվ կոտրատվում էին՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար: Բավական էր, որ մեկը՝ մտադրություն հայտներ գնելու կամ ծախելու արժեթղթեր օգուտ խոստացող գնով, և նա արդեն առնվում էր ձեռքերի, ուսերի ու գլուխ-ների մի իսկական շրջապտույտի մեջ: Սկզբում այս ամենը, ավելի ճիշտ՝ այս ամենի արտաքին կողմը խիստ գրավում էր երիտասարդ Քառուիկեվուդին, որովհետև նա սիրում էր բազմությունը, սիրում էր աշխուժությունը. բայց շուտով իր իսկ մասնակցած այդ տեսարանների գունագեղությունն ու դրամատիզմը կորցրին իրենց փայլը նրա համար, և նա սկսեց պարզել այդ ամբողջ տեղի ունեցածի ներքին իմաստը: Բաժնետոմսեր գնելն ու վաճառելը արվեստ էր, նույն վարպետություն, համարյա հոգեկան հուզում: Կասկածա-մտություն, նպատակամիտություն, հոտառություն. ահա թե ինչ էր պետք հաջողության համար:

Որոշ ժամանակ անցնելուց հետո նա արդեն սկսեց քննել այն հարցը, թե, ճիշտն ասած, այդ գործում ո՞վ է ամենից ավելի վաստակում՝ միջնորդները, ամենկին: Նրանցից ոմանք հիրավի լավ վաստակ ունեին, սակայն բոլորն էլ,— և Յրենկը շուտ հասկացավ դա,— քաղցած որոր-ների կամ մրրկահավերի նման քամու հակառակ կողմից՝ վրա էին տալիս, ագահաբար հետամտում անզգույշ ձկան: Նրանց ետք կանգնած էին ուրիշներ՝ անսպառ նենգության տեր մարդիկ, խարդախ մտքեր. խոշոր կապիտալիստներ, որոնց ձեռնարկություններն ու հարստությունը մարմնավորվել էին այդ բաժնետոմսերով: Նրանք էին նախագծում ու կառուցում երկաթուղիներ, մշակում հանքեր, ստեղծում առևտրական ձեռնարկություններ և վիթխարի գործարաններ: Ճիշտ է, նրանք բորսայական գործողությունների համար դիմում էին միջնորդների աշակցության, բայց ամեն ինչ՝ և՛ գնումը, և՛ վաճառումը, պետք է լիներ միայն կողմնակի երևույթ և իս-կապես էլ էր. հիմքը մնում էին հանքերը, երկաթուղիները, բերքերը, ալրաղացները և այլն: Մնացած ամեն ինչ, որը շուտափույթ կերպով կանխիկ կապիտալ ստանալու նըպա-տակով արկող սովորական վաճառք չէր կամ կապիտալ ներ-

գնելու մտադրությամբ արվող սովորական գնում, պարզապես մի անսքող ազարտային խաղ էր, դրանով գբաղվողներն էլ խաղամոլներ: Եվ Ֆրենկն ինքն էլ՝ ընդամենը խաղամոլի մի գործակալ: Այժմ նա դեռ չէր վշտանում դրանից, բայց այլևս առեղծված չկար. նա գիտեր, թե ով է ինքը: Ինչպես և առաջ, երբ աշխատում էր «Ուտթերմեն և Ընկ.» ֆրիմայում նա սիրում էր մտովի դասակարգել իր արհեստակիցներին. ոմանք թուղակամ էին, ոմանք՝ հիմար, ոմանք՝ խելացի, ոմանք էլ՝ զանդաղաշրժ, բայց բոլորն էլ ճղճիմ հոգու տեր, ոչ լիարժեք մարդիկ, որովհետեւ գործակալ, գործիք էին ուրիշի ձեռքին կամ թունդ խաղամոլներ: Իսկական մարդը երբեք չի դառնա ո՛չ գործակալ, ո՛չ ուրիշի կամքի անմոռնչ կատարածու, ո՛չ էլ հօգուտ իրեն թե ուրիշների, միեննույն է, ասպարեզ իշած մի խաղամոլ. ոչ այդ տիպի մարդիկ պետք է սպասավորեն իրեն՝ Ֆրենկին: Իսկական մարդը՝ ֆինանսիստը, չի կարող գործիք լինել ուրիշի ձեռքին: Նա ինքն է օգտվում դրանից: Նա ստեղծում է, ղեկավարում է:

Քառուիերվուդը հստակ, սպառիչ կերպով հստակ հասկցավ դա տասնինը թե քսան տարեկան հասակում: Բայց այդ ժամանակ նա դեռ չէր հասունացել իր գիտելիքներից գործնական եզրակացություններ անելու համար: Այնուամենայնիվ հաստատ հավատացած էր, թե կդա և իր ժամը:

Գ Լ Ո Ւ Խ VII

Այդ միջոցին, որքան էլ տարօրինակ լինի, ծածկաբար սկսում էր սասականալ Ֆրենկի հափշտակությունը միստր Սեմփլի կնոջով: Մի անգամ էլ իրենց տուն այցելելու հարավեր ստանալով՝ մեծ հաճությամբ ընդունեց: Սեմփլներն ապրում էին Քառուիերվուդենց տնից քիչ հեռու՝ Հյուսիսային Ֆրոնտ-սթրիթում: Ամուանը նրանց փոքրիկ մենատունը թաղվում էր կանաչների մեջ: Հարավակողմյան փոքրիկ ապակեպատ պատշգամբից սքանչելի տեսարան էր բացվում դեպի գետը.

վերին հարկի բոլոր պատուհաններն ու դռները զարդարված էին մանր ապակիների կիսաշրջանակներով։ Տան ներքին կահավորումը բնավ՝ էլ այնպես չէր, ինչպես ուզում էր տեսնել ֆրենկը։ Արիստոկրատականության ո՛չ մի նշույլ, թեև կահույքը նոր էր ու լավորակ։ Նկարները... ի՞նչ ասես, նկար էին էլի։ Գրքերն արդեն ամենեին արժանի չէին հիշատակվելու։ Աստվածաշունչ, երկու-երեք մոդայական վեպ, մի քանի քիչ թե շատ լուրջ տարեգիրը և հնացած, անպետք գրքերի մի կույտ, որ ժառանգությամբ անցել էր Սեմփլներին։ Հախճապակին գերազանց էր, զարդանաշխերը՝ նուրբ։ Գորգերն ու որմնապատառները ճղճղան գույներ ունեին։ Բայց լավ էր ինքը՝ կիլիանը, ինչ կեցվածք էլ ընդուներ այդ կինը, միշտ էլ մնում էր դեղանի։

Երեխա շունեին, բայց ոչ միսիս Սեմփլի մեղքով։ նա շատ էր ուզում ունենալ, Քիչ էր հանդիպում ունենում նա ձարդկանց հետ, եթե շնչարդ կուսական տարիների ծանոթներին, երբ ծնողներին երբեմն այցելում էին ազգականներն ու հարևաններից ոմանք։ Լիլիանի երկու եղբայրն ու քույրը նույնպես ապրում էին Ֆիլադելֆիայում և արդեն ընտանիք էին կազմել։ Նրանք կարծում էին, որ լիլիանը շատ հաջող էր ամուսնացել։

Լիլիանը երեք թունդ սիրահարված շէր միստր Սեմփլին, թեև հաճությամբ ամուսնացավ հետք։ Սեմփլը բնավ էր այն մարդկանցից չէր, ավելի ընդունակ են ուժեղ զգացմունք հարսցել կնոջ մեջ։ Նրա հատկանշական գծերն էին գործնականությունն ու մեթոդիկ կարգուկանոն սիրելը։ Նրա կոշիկի վաճառատունը լավն էր, ունենում էր մոդայական ապրանքի ձոխ ու բազմազան տեսակներ, լուսավոր էր ու խիստ մաքուր։ Միստր Սեմփլը երբեմն դառնում էր զրուցասեր, և այն ժամանակ նա երկար-բարակ խոսում էր կոշիկի արտադրության, կաղապարների ու մողելների մասին։ Այն ժամանակ նոր էր սկսում առեստրական շրջանառության մեջ մտնել պատրաստի կոշիկը, որ մասամբ արդեն մեքնայական արտադրանք էր։ Միստր Սեմփլը միշտ ունենում էր այդպիսի կոշիկի պաշար, բայց չէր հրաժարվում տնայնագործ կոշկակարների։ աշ-

խաստանքից, որոնք կարում էին ըստ շափի տրված պատվերների:

Միսիս Սեմֆլը երբեմն սիրում էր կարդալ, բայց ավելի հաճախ մնում էր նստած, կարծես խորհրդածությունների մեջ թաղված, որի պատճառը, ասենք, բնավ էլ խորամտությունը չէր: Բայց այդ դեպքերում նա փայլում էր այն բացարիկ գեղեցկությամբ, որը նմանեցնում էր նրան հնագարյան արձանի, հունական երգչախմբի մասնակցի: Անկասկած հենց այդպիսին էլ նա երևաց Քառուփերվուդին, որովհետև սկզբից իսկ նա անկարող էր աչքը կտրել նրանից: Միսիս Սեմֆլը նկատում էր նրա զմայլված հայացքները, բայց առանձնակի նշանակություն չէր տալիս: Վարժված լինելով հարգել պայմանականությունները և հավատացած, որ իր հակառագիրն ընդմիշտ կապված է ամուսնու բախտին՝ նա վարում էր այդ հանդարտ ու անխռով կյանքը:

Սկզբնական շրջանում, երբ Ֆրենկն սկսեց լինել նրանց տանը, կիլիանը չէր իմանում ինչ խոսեր հետը, սիրալիր դիմավորում էր հյուրին, սակայն զրուցի բեռն ամբողջովին ընկնում էր ամուսնու վրա: Քառուփերվուդը ստեպ-ստեպ նայում էր միսիս Սեմֆլին՝ հետեւը նրա դեմքի փոփոխություններին, և եթե սա մի փոքր կուհող լիներ, կհասկանար, թե ինչ կա դրա տակ: Բարեբախտաբար կուհող չէր նա: Ամուսինը սիրալիր կերպով զրուցում էր երիտասարդ Քառուփերվուդի հետ, որովհետև սա նախ՝ նկատելի առաջիսազցում էր կատարել ֆինանսական աշխարհում, բարեկիրթ էր ու շողոմ, և երկրորդ միստը Սեմֆլը դեմ չէր բազմապատկերու իր կարողությունը, իսկ Ֆրենկը նրա աշբում ֆինանսական հաջողության մարմնացում էր: Մի գարնանային երեկո նրանք երեքով նստել էին աղակեպատ պատշգամբում ու շաղակրատում էին՝ դեսից-դենից: դատարկ բաների՝ նեգրական հարցի, ձիաքարշի, հենց նոր պայթած ֆինանսական խուճապի (տեղի ունեցավ 1857-ին) և Արևմուտքի արագ զարգացման մասին: Միստը Սեմֆլը ուզում էր ավելի մասնամասնորեն իմանալ դրամական բորսայի մասին, Ֆրենկն էլ

կոշիկի գործի վերաբերյալ հարցեր էր տալիս, թեև ճիշտն ասած՝ բնավ էլ գրանով չէր հատաքրքրվում։ Զրուցի ամբորչընթացքում նա գաղտագողի հետևում էր կիլիանին։ Իրեն պահելու ինչպիսի՞ մեղմ, փաղաքշական ու սքանչելի կերպունի, մտածում էր Ֆրենկը։ Տիկինը թեյ ու թխվածք մատուցեց։ Քիչ հետո բոլորն էլ, մոծակներից ազատվելու համար, գնացին սենյակները։ Միսիս Սեմֆլը նստեց դաշնամուրի առաջ։ Ժամը տասին Ֆրենկը հրաժեշտ տվեց։

Այդ երեկոյից հետո երիտասարդ Քառուփերվուղը մեկ թե մեկուկես տարի կոշիկ էր գնում միստր Սեմֆլից, երբեմն էլ պարզապես մտնում էր Զեսթնաթ-սթրիթի նրա խանութը մի երկու խոսք փոխանակելու համար։ Մի անգամ Սեմֆլը հարցրեց նրան՝ արժե՞ արցյոք ձեռք բերել ձիաքարշի այն գծի բաժնետումսեր, որն արդեն ստացել է քաղաքի թույլատրությունը, կառուցվելու է Հինգերորդ ու Վեցերորդ փողոցներում և մեծ աճիոտաժ է առաջացրել բորսայում։ Քառուփերվուղը շարադրեց իր նկատառումները։ Այդ գործն անկասկած եկամուս է խոստանում։ Ինքն արդեն հարյուր բաժնետումս է ձեռք բերել՝ հատը հինգ դոլլարով, ուստի և հաստատապես խորհուրդ է տալիս Սեմֆլին հետեւելու իր օրինակին։ Ճիշտն ասած, այդ մարդը ոչ մի բանով չէր հետաքրքրում Ֆրենկին, սակայն միսիս Սեմֆլը առաջվաց գուր էր գալիս նրան, թեև ինքը հազվադեպ էր տեսնում կիլիանին։

Մոտ մի տարի հետո միստր Սեմֆլը վախճանվեց։ Անժամանակ էր այդ մահը, պատահական, սակավ նշանակալի մի դրվագ այլ իրադարձությունների ֆոնի վրա, բայց տիտր գեաք մերձավորների համար։ Ուշ աշնանը նա մրսեց՝ դառտարկ հիվանդություն, որ առաջանում է ոտքերի թացանալուց կամ խոնավ եղանակին առանց վերաբեկուի դուրս գալուց։ Այնուամենայնիվ նա գնաց վաճառատում՝ շնայտ միսիս Սեմֆլի հորդորներին։ Կինելով սուսիկ ու զուսպ մարդ՝ այս նուամենայնիվ յուրովի խիստ համառն էր և անդադար իր գործի մասին էր մտածում։ Նա արդեն տեսնում էր իրեն մոտիկ ապագայում հիսուն հազար դոլլար կարողության

տեր: Ու մեկ էլ մրսեց, ինն օր թոքերի բորբոքումով անկողնում պառկեց, և այլևս միստր Սեմփլը շկար: Կոշկի վաճառատունը մի քանի օրով փակեցին, տունը լցվեց ցավակցող բարեկամներով ու եկեղեցու սպասավորներով: Այնուհետև հուղարկավորական արարողություն երիցականների եկեղեցում (որի ծովին էին Սեմփլ ամուսինները) և թաղում: Միսիս Սեմփլը գառնորեն լաց եղավ: Այդքան մոտիկից տեսած մահը ցնցեց նրան և որոշ ժամանակ նա մնաց բնկը ված: Նրա եղբայրը՝ Դեկիդ Ուիգինը, ժամանակավորապես հանձն առավ վարել խանութի գործերը: Կտակ շկար մեջտեղ, բայց երբ ժառանգության հարցը հարթվեց և վաճառատունը ծախվեց, միսիս Սեմփլը ստացավ ավելի քան տասնութ հազար դոլար, որովհետեւ ոչ ոք չէր վիճարկում, որ նա իրավունք ունի անբաժան կերպով տիրանալու ամբողջ ունեցվածքին: Նա մնաց ապրելու նույն Ֆրոնտ-սթրիթում և համարվում էր հետաքրքրություն շարժող այրի:

Այդ իրադարձությունների ամբողջ ընթացքում երիտասարդ Քառվիերվուդը, որի քսան տարին նոր լրացավ, բավական գործունյա ցուցադրեց իրեն: Միստր Սեմփլի հիվանդության օրերին նա այցի էր գալիս: Մասնակցեց հուղարկավորությանը: Տիկնոց եղբորն օգնում էր լուծարքելու կոշիկի գործը: Հուղարկավորությունից հետո երկու անգամ այցելեց այրիին, հետո էլ երկար ժամանակ չէր երևում: Մի հինգ ամիս հետո դարձյալ երևաց և դրանից հետո սկսեց այցելել կիլիանին շաբաթը կամ տասն օրը մեկ:

Կրկնում ենք՝ դժվար է ասել, թե ինչ էր նա գտել կիլիան Սեմփլի մեջ: Թերևս նրա գեղեցիկ, մոմանման դեմքն էր հրապուրում, գուցե և նրա անտարբերությունն էր բորբոքում Ֆրենկի տաքարյուն խառնվածքը: Ինքն էլ չէր կարող բացատրել, թե ինչու էր այդպիս համառորեն ու սաստիկ տենչում նրան: Նա չէր կարող հանգիստ մտածել կիլիանի մասին ու համարյա երբեք չէր խոսում նրա վերաբերյալ: Ընտանիքում գիտեին, որ Ֆրենկը լինում է նրա մոտ, բայց Քառվիերվուդներն այդ ժամանակ արգեն սովորել էին հարգել Ֆրենկի ներքին ուժն ու խելքը: Միրալիր էր նա, կենսուրախ և մեծ

մասամբ զվարիթ, բայց ոչ շաղակրատ, գումարած և այն, որ անկասկած հաջողության մեջ է: Ամենքն էլ գիտեին, որ նա արդեն սովորել է փող վաստակել: Շաբաթական հիսուն դոլ-լար ոռնիկ էր նա ստանում և ամեն հիմք ուներ շուտով հավելման սպասելու: Մի քանի հողամաս, որ երեք տարի առաջ գնել էր նա Ֆիլադելֆիայի արևմտյան մասում, բավական թանկացել էին: Զիաքարը երկաթուղիների մեջ ներդրած նրա գումարները բազմապատկվում էին շնորհիվ նոր կազմակերպված ընկերությունների հիսուն, հարյուր և հարյուր հիսուն բաժնետոմսանոց ծրարների, որ գնել էր նա: Չնայած ծանր ժամանակներին՝ այդ բաժնետոմսերը դանդաղ, բայց աննահանջ թանկանում էին և նախնական հինգ դոլլար արժեքի փոխարեն այժմ գնահատվում էին տասը, տասնհինգ ու քսանհինգ դոլլար, իսկ ժամանակին պետք է հասնեին հավասար արժեքի: Ֆրենկին սիրում էին ֆինանսական շրջանակներում, ապագան պատկերանում էր նրան ծիսածանի գույներով: Հասուն խորհրդածությամբ նա եղրակացրեց, որ պրոֆեսիոնալ բորսայական խաղամոլ չի լինի ինքը: Հիմա արդեն մտածում էր մուրհակազեղման գործի մասին, որը, ըստ նրա զննումների, ավելի ձեռնտու էր և կապիտալ լինելու դեպքում զերծ էր ոփսկի որևէ տարրից: Իր աշխատանքի և հոր կապերի շնորհիվ Ֆրենկը հանդիպում էր բազմաթիվ առևտրականների, բանկային գործիչների, մեծաքանակ վաճառորդների: Նա զիտեր, որ սրանք հաճությամբ կհանճնարարեն իրեն իրենց գործերը կամ գոնե դրանց մի մասը: «Դրեքսել և Ընկ.» ու «Կլարք և Ընկ.» գրասենյակներում բարյացակամ էին վերաբերվում նրան, իսկ Ջեյ Կուքը՝ բանկային մի նորածագ լուսատու, նրա բարեկամն էր:

Այդ միջոցին Ֆրենկը շարունակում էր աշցելել միսիս Սեմփլին, և որքան հաճախ էր լինում նրա մոտ, այնքան ավելի էր սա դուր գալիս նրան: Զի կարելի ասել, թե նրանք փայլուն ու նրամիտ զրուցներ էին ունենում, բայց Ֆրենկը ուզած ժամանակ կարող էր լինել հաճելի ու զբաղեցնող: Նա գործարարական այնպիսի խելացի խորհրդադիր էր տալիս կիլիանին, որ սրա ազգականներն անգամ լսում էին դրանք:

Քիշ-քիշ նա սկսեց դուք գալ տիկնողք» ուշադիր, անխռով ու դրական Ֆրենկը պատրաստակամությամբ բացատրում էր լիլիանին այս կամ այն գործարարական հարցը, մինչև որ ամեն ինչ պարզ շդառնար նրան: Նա տեսնում էր, որ երիտասարդը հետևում է իր գործերին ոչ պակաս ուշադրությամբ, քան եթե դրանք նրա սեփականը լինեին, և ջանում է ամրապնդել տիկնող նյութական բարեկեցությունը:

— Որքան բարի եք դուք, Ֆրենկ,— ասաց մի անգամ կիլիանը: — Մեծապես շնորհակալ եմ ձեզնից: Արդարեւ, չեմ իմանում, թե ինչ կարող էի անել ես, եթե դուք վինեիք:

Եվ նայեց Ֆրենկի գեղեցիկ դեմքին, որ մանկական անմիջականությամբ հառած էր իրեն:

— Դե լա՞վ, լա՞վ: Այնքան հաճելի է դա ինձ: Ես հուսահատության կմատնվեի, եթե շկարողանայի օգտակար լինել ձեզ:

Ֆրենկի աշքերը շբոցավառվեցին, բայց համակվեցին մի մեղմ, զերմ լույսով: Միսիս Սեմփլը քնքանքի գեղում զգաց, որքան լավ է, երբ կարելի է հենվել մի այսպիսի մարդու:

— Ինչ էլ լինի, ես սրտանց շնորհակալ եմ ձեզ: Դուք շատ բարի եք իմ հանդեպ: Դարձյալ հրամեցեք՝ կիրակի կամ որևէ ուրիշ երեկո: Ես տանը կլինեմ:

Ճիշտ այդ ժամանակ, երբ Ֆրենկը հաճախակի դարձրեց իր այցելությունները միսիս Լիլիանին, Կուբայում վախճանվեց քեռի Սենեկան՝ տասնհինգ հազար դոլար թողնելով նըրան: Ավելացնելով այդ գումարը թր տնեցածին՝ Ֆրենկն իր տրամադրության տակ ուներ քսանհինգ հազար դոլար և արդեն գիտեր, թե ինչպես կտեղավորի դրանք: Միստր Սեմփլի մահվանից շատ շանցած ֆինանսական աշխարհը մատնվեց խումապի՝ ակներև կերպով ցույց տալով Ֆրենկին, թե որքան անհույս բան է միշնորդական գործը: Արդյունաբերական աշխարհում սաստիկ լճացում առաջացավ: Ազատ փողք դարձավ հազվագյուտ, կարելի է ասել բոլորովին շքվեց: Խախտված առևտրից և երկրի ընդհանուր դրամական դրությունից ահարեկված կապձտալը խորը մտավիր թաքստոցները՝ բանկերը, նկուղները, գովազաների ու խնայատուփերի

մեջ։ Թվում էր, թե երկիրը գահավիժում է անդունդ։ Առջևում արդեն ուրվագծվում էր պատերազմը Հարավի հետ կամ նույնիսկ սրա անջատումը Հյուսիսից։ Զղային մի տեսնդ համակեց ամբողջ ազգին։ Մարդիկ շուկա էին հանում իրենց բոլոր արժեթղթերը, միայն թե կանխիկ փող ճարեն։ Թայը ազատեց իր գրասենյակի ծառայողներից երեքին։ Նա ջանում էր տնտեսել ինչից հնարավոր էր և շրջանառության մեջ դրեց իր բոլոր անձնական խնայողությունները, միայն թե փրկի արժեթղթերի մեջ ներդրած կապիտալը։ Նա գրավ դրեց իր տունն ու հողամասերը, մի խոսքով ամբողջ ունեցվածքը երիտասարդ Քառուփերվուդը հաճախ էր միջնորդի գեր կատարում նրա համար ու բաժնետոմսերի ծրարներ էր տանում տարբեր բանկեր՝ ըստ հնարավորին դրանց փոխարեն փող ստանալու առաջադրանքով։

— Ի՞նչցեք տեսնեմ՝ տասնհինգ հազար փոփ շի՛ տա արդյոք ձեր հոր բանկը սրա դիմաց, — ասաց նա մի անգամ Ֆրենկին՝ հանելով «Ֆիլադելֆիա և Ուիլմինգտոն»-ի բաժնետոմսերի մի հաստ կապոց։

Ֆրենկը հիշում էր, որ մի ժամանակ հայրը միանգամայն հուսալի էր համարում դրանք։

— Ընդհանուր առումով դրանք լավ արժեթղթեր են, — անվճռական ասաց Քառուփերվուդ-ավագը այդ թղթերը տեսնելիս։ — Ավելի ճիշտ՝ դրանք լավ կլինեին ուրիշ անգամ։ Բայց հիմա այնքան դժվար է կանխիկ դրամի վիճակը։ Մենք մնածագույն դժվարություններով ենք վճարում մեր սեփական պարտավորությունները։ Այնուամենայնիվ կխոսեմ միստը Կուգելի հետ (Կուգելը բանկի վարչության նախագահն էր)։

Մի երկար խոսակցություն ու երկար սպասում հաջորդեց դրան։ Վերջապես վերադարձավ Քառուփերվուդ-ավագը ու հայտնեց Ֆրենկին, որ հազիվ թե կարողանան կատարել այդ գործառնությունը։ Ութ տոկոսը, որ այդ ժամանակ հաստատված էր որպես զեղչի սակ, շատ քիչ կոպար էր՝ նկատի ունենալով դրամական պահանջը։ Պարոն Կուգելը, եթե համա-

ձայնի իսկ, միայն ցպահանջ փոխատվության¹ պայմանով և տասը տոկոսի հաշվով։ Ֆրենկը վերադարձավ իր տիրոչ մոտ, որի առևտրական հոգին թունդ ելավ, պատասխանը լսելով։

— Ասացեք խնդրեմ, գրո՞ղը տանի, — վրդովված գոշեց նա, — մի՞թե ամբողջ քաղաքում այլևս փող չկա։ Զէ՞ որ տնաքանդություն է այդպիսի տոկոս վճարելը։ Զէ, շեմ դիմանա ես։ Դե լավ, ետ տարեք այս տոմսերը ու փող բերեք ինձ։ Զէ, սա բանի նման չէ, ամենկին բանի նման չէ։

Ֆրենկը կրկին գնաց բանկ։

— Միստր Թայը համաձայն է տասը տոկոսի, — անխոռվ Հայտարարեց նա։

Թային տասնհինգ հազար դոլարի վարկ բացվեց՝ տալով նրան անհապաղ օգտագործելու իրավունք, և նա անմիջապես ամբողջ գումարի համար մի շեկ գրեց Ձիրարդի ազգային բանկի անվանը, որպեսզի լցնի այդտեղի «Ճեղքվածքը»։ Այսպես էին ընթանում գործերը։

Այդ միջոցին երիասարդ Քառուիերվուդը ուշի-ուշով դիտում էր երկրի օր-ավուր բարդացող ֆինանսական դրությունը։ Սարկասիրության պրոբլեմը, Հարավային նահանգների անջատվելու վերաբերյալ խոսակցությունները, երկրի ընդհանուր վերելքը կամ բարեկեցության անկումը անհանգստացնում էին նրան միայն այն շափով, ինչ շափով անմիջականորեն շոշափում էին նրա շահերը։ Նա ձգտում էր դառնալ իսկական ֆինանսիստ, բայց հիմա բորսայական գործի ծածուկ կյանքին ծանոթանալուց հետո, արդեն վստահ չէր բորսայական գործչի կարիերա ստեղծելու իր ցանկությանը։ Այդ խուճապի ստեղծած պայմաններում բորսայական խաղը կապված էր ծայրահեղ ոիսկի հետ։ Միջնորդներից շատերը տնաքանդ եղան։ Ֆրենկը նայեց-տեսավ նրանց տանջահար դեմքը, երբ նրանք վազում էին միստր Թայի

¹ Այսինքն փոխատվություն տոկոսաբեր թղթերի դիմաց, որոնք բանկը իրավունք ունի ծախսել իր հայեցողությամբ, եթե առաջին իսկ պահանջին վերցված գումարը շվճարվի։

մոտ ու խնդրում չեղյալ համարել իրենց այս կամ այն հայտերը: Տանն անգամ նրանք անվտանգ չեն զգում իրենց, ասում էին նրանք: Վերջնական կործանում է սպառնում իրենց, կին ու երեխաները փողոց կշպրտվեն:

Ի միշի այլոց այս խումապը օգնեց Ֆրենկին պարզելու թե իրականում ինչով էր ինքն ուզում զբաղվել: Այժմ, եթք ազատ միջոցներ ունի, կսկսի ինքնազլուխ գործել: Ֆրենկին չգայթակղեցրեց անգամ միստր Թայի առաջարկը՝ դառնալու իր կրտսեր բաժնընկերը:

— Իմ կարծիքով դուք շատ լավ գործ ունեք, — ասաց նա իր հրաժարականը բացատրելիս, — բայց ես ուզում եմ բացել իմ սեփական մուրհակազեղման գրասենյակը: Բորսայական խաղի վրա հույս դնել չի կարելի: Սեփական, թեկուղ և փոքր, գործը գերադասում եմ աշխարհի բոլոր բորսաներից:

— Բայց դուք դեռ շատ եք երիտասարդ, Ֆրենկ, — առարկեց տերը: — Շատ ժամանակ ունեք ինքնազլուխ աշխատելու համար:

Վերջիվերջո նա հրաժեշտ տվեց թե՛ Թային և թե Ռիվերսին որպես բարեկամների:

— Օ՛, շա՞տ խելացին է այս տղան, — ափսոսանքով նկատեց Թայը:

— Իր նողատակին կհասնի, — հաստատեց Ռիվերսը: — Կյանքում այսպիսի ընդունակ երիտասարդի չեմ հանդիպել:

ԳԼՈԽ VIII

Աշխարհը վարդագույն էր պատկերանում Քառվիերվուդին: Նա սիրահարված էր և փող էլ ուներ սեփական գործ սկսելու համար: Քաղաքային երկաթուղիների անընդհատ թանկացող բաժնետոմսերի դիմաց նա կարող էր ստանալ դըրանց կուրսային արժեքի յոթանասուն տոկոսը: Անհրաժեշտության դեպքում կարող էր գրավ դնել նաև իր հողամասերը և այլպիսով պատկառելի գումար վճարել: Կարգավորված հարաբերություն ուներ նա Զիրարդ բանկի հետ. Ֆրենկը դուր էր գալիս դիրեկտոր Դեկսոնին և հույս ուներ, որ սա ժամա-

Նակին վարկ կբացի իրեն։ Մնում էր միայն կապիտալն այնպես ներդնել, որ կարելի լինի արագ ու անվնաս իրացնել։ Ֆրենկի կարծիքով հիանալի եկամուտ էին խոստանում ձիաքարշի շարունակ ճյուղավորվող գծերը։

Այդ օրերին Ֆրենկը ձեռք բերեց մի ձի ու երկանիվ կառո՞ւ երկուսն էլ շքեղ, և դրանցից լավը հազիվ թե գտնվեր։ Այս զվարճանքը հինգ հարյուր դոլար նստեց նրան։ Այնուհետև նա միսիս Սեմփլին հրավիրեց զբոսանքի։ Սա նախ՝ հրաժարվեց, իսկ հետո զիջեց։ Ֆրենկը հայտնեց նրան իր հաջողությունները, ծրագրերը, խոսեց տասնհինգ հազար դոլարի մասին, որ կարծես երկնքից էր ընկել իր բուռք, և վերջապես ասաց, թե մտադիր է զբաղվել մուրհակապեղման գործով։ Միսիս Սեմփլը գիտեր, որ նրա հորը ապագայում սպասում է Երրորդ ազգային բանկի փոխ-դիրեկտորի պաշտոնը, առավել ևս որ Քառիկերվուդներն ընդհանրապես գուրեն դալիս իրեն։ Նա արգեն սկսում էր հասկանալ, որ Ֆրենկի վերաբերմունքն իր նկատմամբ չի կարելի պարզապես բարեկամություն անվանել։ Նա, որ վորուց շի, ինչ պատահնի էր, դարձել էր տղամարդ, և ինքն լի մղվում էր գեպի նա։ Դա համարյա ծիծաղելի էր թվում կիլիանին։ Ինքը մեծ է նրանից, այրի է, վարում է խաղաղ, մեկուսացած կյանք։ Սակայն այդ երիտասարդի համառ, անայլայլ վճռականությունը խոսքից ավելի պերճախոս կերպով ցույց էր, տալիս, որ ոչ մի պայմանականություն չի կասեցնի նրան։

Քուփերվուզը շէր խարում իրեն և շէր իդեալականացնում էր վերաբերմունքը նրա հանդեպ։ Գեղանի կիլիանը հոգեպես ու ֆիզիկապես անդիմագրելիորեն հրապուրում էր նրան։ Դրանից ավելի բան նա իմանալ էլ շէր ուզում։ Ոչ մի ուրիշ կին շէր կարողանա նրան այդպես գամել իրեն։ Ըստ այդմ նրա մտքով անգամ շէր անցնում, որ հիմա ինքը չի կարող կամ շպետք է հետաքրքրվի այլ կանանցով։ Ընտանեկան օջախի սրբության մասին եղած շաղակրատանքը հեռու էր վանվում նրանից, ինչպես սիսեռը՝ պատից։ Միսիս Սեմփլի դրամին նա աշք չուներ, բայց իմանալով, որ սա սեփական կապիտալ ունի, հավատացած էր, թե կկարողանա օգտավետ շրջանա-

ոռովիշյան մեջ դնել դա: Նա տեսնում էր տիրանալ նրան և
արդեն հետաքրքրասիրովիշյամբ էր մտածում իրենց ունենա-
լիք երեխաների մասին: Որքա՞ն էր նա ուզում իմանալ, թե
ինքը կկարողանա արդյոք ստիպել նրան անձնուրաց կերպով
սիրել իրեն, կհաջողվի՝ արդյոք նրա հիշողությունից ջնջել
նախկին կյանքի հիշողությունը: Տարօրինա՞կ փառասիրու-
թյուն, կարելի է ասել՝ տարօրինա՞կ խեղաթյուրվածություն:

Չնայած իր վախին ու տարակուսներին՝ կիլիան Սեմֆիլն
ընդունում էր Ֆրենկի սիրաթովությունն ու հոգատարությու-
նը, որովհետև նույնակամա մղվում էր դեպի նա: Մի
գիշեր էլ, պատրաստվելով անկողին մտնել, նա մոտեցավ
արդուզարդի սեղանին ու հայելու մեջ դիտեց իր դեմքը, մերկ
ուսերն ու բազուկները: Որքա՞ն լավիկն է ինքը: Անբացատրե-
լի հուզմունք համակեց նրան, երբ նա զննեց իր երկար, մոխ-
րաերանգ վարսերը: Նա մտածեց երիտասարդ Քառուիերվուդի
մասին, բայց անմիջապես աշքի առաջ հառնեց հանգուցյալ
միստր Սեմֆիլի պատկերը: Նա սառեց և իսկուն շիկնեց ամո-
թից՝ պատկերացնելով, թե հասարակական վրդովմունքի ինչ-
պիսի՞ փոթորիկ կարող է առաջացնել դա:

— Ինչո՞ւ եք այդքան հաճախ գալիս ինձ մոտ,— հարցը-
րեց նա, երբ հաջորդ երեկոյան Ֆրենկը գնաց նրա տունը:

— Մի՞թե ինքներդ չեք իմանում,— ասաց նա՝ կարծես
ամեն ինչ լացատրելով իր հայացքով:

— Ո՛չ,

— Ամենի՞ն չեք իմանում:

— Ինչպես ասեմ... Ես գիտեմ, որ դուք բարյացակամ
էիք միստր Սեմֆիլի և իմ նկատմամբ որպես նրա կնոջ: Բայց
միստր Սեմֆիլն այլևս չկա:

— Բայց կաք դուք,— պատասխանեց Ֆրենկը:

— Ե՞ս:

— Այո: Եվ դուր եք գալիս ինձ: Հաճելի է ինձ ձեզ հետ
լինել: Իսկ մի՞թե դուք էլ նույնը չեք զգում:

— Ճիշտն ասած՝ այդ մասին չեմ մտածել: Այնքան փոքր
եք դուք ինձից: Զէ՞ որ հինգ տարվա տարբերություն կա մեր
մեջ:

— Տարվա, այո, — ասաց Ֆրենկը, — բայց դա նշանակություն չունի: Մնացած ամեն ինչում ես ձեզնից մի տասնհինգ տարով մեծ եմ: Ես կյանքն ավելի լավ եմ ճանաշում, քան դուք երբեք կճանաշեք: Ասենք դուք էլ չեք տարակուսում, — ավելացրեց նա մեղմ, համոզիլ շեշտով:

— Այո, այդ ճիշտ է: Բայց փոխարենը ես էլ դիտեմ շատ բաներ, որ դուք չեք իմանում:

Լիլիանը կամացուկ ծիծաղեց՝ ցուցադրելով իր սքանչելի ատամները:

Մթնել էր արդեն: Նրանք նստած էին ապակեպատ պատշգամբում: Ներքեսում գետը կամացուկ թավալում էր իր ջրերը:

— Հնարավոր է, — ասաց Ֆրենկը, — որովհետև դուք կին եք: Տղամարդը երբեք չի կարող կնոջ տեսակետին լինել: Իսկ ես խոսում էի կյանքի գործնական կողմի մասին. այդ իմաստով ես ձեզնից մեծ եմ:

— Հետո՞ ինչ:

— Ոչինչ: Դուք հարցրիք՝ ինչո՞ւ եմ ես գալիս ձեզ մոտ, ես էլ բացատրեցի: Ոչ ամբողջովին, իհարկե:

Նա լռեց և սկսեց նայել գետին:

Միսիս Սեմփլը հայացքը հառեց իր հյուրի վրա: Ֆրենկի գեղեցիկ մարմինը, որ տարեց տարի ավելի էր ամրանում, այժմ հասուն տղամարդու կազմվածք էր: Նրա խոշոր, զինջ աշքերի անթափանցելի հայացքը մանկական արտահայտություն էր տալիս դեմքին: Լիլիանը չէր կուհում թե ինչ էր թաքնված դրանց խորքում: Երիտասարդի այտերը վարդագույն էին, ձեռքերը ոչ խոշոր, բայց մկանուտ և ուժեղ: Լիլիանի սակալարյուն, քնքուշ մարմինը անգամ հեռավորությունից ներծծում էր նրանից հառնող եռանդը:

— Ինձ թվում է, թե պատշաճ չէ, որ այդպես հաճախ լինեք ինձ մոտ: Մարդիկ կարող են վատ բան կապածել:

Նա որոշեց խոսակցությունը վարել պատվարժան կնոջ զուսպ սիրալիր շեշտով, որը պահպանում էր իրենց ծանոթության սկզբից իսկ:

— Մարդիկ, — կրկնեց Ֆրենկը: — Դրանից մի՛ անհան-

գըստանաք: Մարդկիկ մեր մասին մտածում են պյան, ինչ մենք ուզում ենք, որ մտածեն: Ինձ հաճելի չէ, որ դուք այսպես շոր եք խոսում ինձ հետ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես ձեզ սիրում եմ:

— Բայց դուք չպետք է սիրեք ինձ: Լավ չէ դա: Զէ՞ որ ես շեմ կարող ամուսնանալ ձեզ հետ: Դուք այնքան երիտասարդ եք, իսկ ես ծեր եմ:

— Բավակա՞ն է, — կտրականապես ասաց Յրենկը: — Այդ ի՞նչ ցնդաբանություն է: Ես ուզում եմ, որ դուք դառնաք իմ կինը: Դուք էլ այդ գիտեք: Ավելի լավ է ասեք, թե երբ ամուսնանանք:

— Ի՞նչ եք ասում, — բացականշեց Լիլիանը: — Կյանքումս ոչ մի այդպիսի բան չեմ լսել: Լինելու բան չէ դա, Ֆրենկ, երբե՞ք:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա:

— Որովհետեւ... որովհետեւ ես ձեզնից մեծ եմ: Բոլորին էլ տարօրինակ կթվա դա: Ես էլ նոր եմ այրիացել:

— Նոր թե վաղուց. ի՞նչ նշանակություն ունի, — ջղայնացած վրա բերեց Յրենկը: — Միակ բանը որ չեմ հավանում, ձեր մշտական խոսքն է. «Ի՞նչ կասեն մարդիկ»: Ձեր կյանքը «մարդիկ» չեն կառուցում: Առավել ես իմը: Նախ և առաջ մտածեցիք ձեր մասին: Դուք ինքներդ պետք է ստեղծեք ձեր կյանքը: Մի՞թե դուք թուզ կտաք, որ ձեր և ձեր ցանկության միջև ցցվի այն, թե ինչ կասեն ուրիշները:

— Բայց ես այդ ցանկությունը չունեմ, — ժպտալով նրա խոսքը կտրեց Լիլիանը:

Յրենկը վեր կացավ, մոտեցավ նրան ու նայեց աշքերին:

— Հետո՞ւ, — հուզված ու մի քիչ էլ ծաղրաբար հարցրեց կինը:

Յրենկը շարունակեց նայել նրան:

— Հ՞ը, հետո՞ւ, — կրկնեց կինը ավելի ու ավելի կորցնելով իրեն:

Յրենկը կռացավ նրան գրկելու, բայց սա վեր կացավ:

— Ոչ, մի՛ մոտենաք ինձ: — պաղատագին ասաց Լիլիա-

Նը:— Հիմա ես կզնամ սենյակ և այլես թույլ չեմ տա ձեզ գալ: Սարսափելի՞ է սա: Դուք խենթացե՞լ եք: Հանգիստ թողեք ինձ:

Լիլիանն այնպիսի վճռականություն երևան բերեց, որ Ֆրենկը հնազանդվեց: Միայն թե այդ երեկոյան: Նա շարունակում էր գալ: Եվ մի անգամ էլ, երբ մոծակները քշեցին նրանց սենյակ, և միսիս Սեմֆլը նորից սկսեց պնդել, որ Ֆրենկը դադարեցնի այցելությունները՝ հավատացնելով, որ իր հանդեպ ցուցաբերած այդ ուշադրությունը ամենքի աշխին է խփում, ինքն էլ խախտառակվելու է, Ֆրենկը շնայած նրա հուսահատ դիմադրության, վճռականապես իր գիրկն առավ նրան:

— Ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում: Վե՛րջ տվեք,— գոշում էր Լիլիանը:— Զէ՞ որ ձեզ ասել եմ: Վերջապես անմտություն է: Զհամարձակվե՛ք համբաւել ինձ: Օ՛, օ՛, օ՛...

Նա պոկ եկավ ու վազելով սանդուղքն ի վեր՝ մտավ իր ննջարանը: Քառուիերվուղը արագ հետևեց նրան: Երբ Լիլիանն ուղում էր կուսր փակել, Ֆրենկը ուժով լուցեց, դարձյալ դեռատի կնոջը զիրկն առավ ու բարձրացրեց օգ:

— Ինչպե՞ս եք համարձակվում,— գոռաց Լիլիանը:— Ես ձեզ այլես ճանաչել չեմ ուղում: Եթե այս րոպեին ինձ ցած շդնեք, ձեր ոտքն իմ տանը է՛լ շի լինի: Բա՛ց թողեք ինձ:

— Բաց կիրողնեմ ձեզ, ո՞վ իմ հրճվանք: Ինքս կտանեմ ձեզ ներքեւ, — պատասխանեց Ֆրենկը՝ սեղմելով նրան կրծքին ու համբույրներ դրոշմելով դեմքին:

Ֆրենկը սաստիկ բորբոքված էր ու հուզված:

Զնայած այն բանին, որ Լիլիանը շարունակում էր պոկվելու ճիգեր թափել ու բողոքել, Ֆրենկը տարավ նրան հյուրասենյակ և իշեցրեց խոշոր բաղկաթառի վրա՝ առաջված պես կնոշն ամուր սեղմելով կրծքին:

— Ա՛խ, — հառաշեց Լիլիանը՝ համոզվելով, որ Ֆրենկը բաց շի թողնի, և գլուխը անզոր իշեցրեց նրա ուսին: Հետո աննկուն վճռականություն կարդալով Ֆրենկի դեմքի վրա ու հանկարծ զգալով նրա ամբողջ ձգողական ուժը՝ ժպատաց:— Եթե ամուսնանամ ձեզ հետ.— Հոգնած արտաբերեց նա, —

ինչպես բացատրեմ իմ արարքը: Ի՞նչ կասի ձեր հայրը, ձեր մայրը:

— Ոչ մի բան բացատրելու կարիք չեք ունենա: Այդ բանը ես կանեմ: Եվ անհանգստանալու հարկ չկա: Իմ հարազատները ոչինչ չեն ասի:

— Իսկ ի՞մ ընտանիքը, — ցնցվելով, ասաց Լիլիանը:

— Նրանց ի՞նչ գործն է: Ես ամուսնանում եմ, ոչ թե ձեր ընտանիքի, այլ ձեզ հետ: Մենք երկուս էլ նյութապես անկախ ենք:

Լիլիանն սկսեց նոր առարկություններ անել, իսկ Ֆրենկը պատասխանում էր դրանց նոր համբույրներով: Նրա փաղաքը շանքներին հնարավոր չէր շենթարկվել: Միստր Սեմփլը երբեք այդպես կրակու չէր եղել: Ֆրենկը արթնացրեց նրա մեջ այնպիսի զգացմունքներ, որ նա մինչ այդ չէր ճանաչել: Լիլիանը և սարսափում էր, և ամաշում:

— Ուրեմն այսպես. մի ամիս հետո մենք կամուսնանա՞նք, — ուրախությամբ հարցրեց երիտասարդը, երբ կինը լոեց:

— Դուք էլ գիտեք, որ ոչ, — հուզախոռվ բացականչեց Լիլիանը: — Այս ի՞նչ համառություն է: Զխոսենք այդ մասին:

— Միկնույն չէ», թե երբ: Վաղ թե ուշ դուք կդառնաք իմ կինը:

Ֆրենկին արգեն մտածում էր, թե որքան հմայիչ կլինի նա մի սուրիշ՝ նոր զոյալիճակում: Ոչ սա, ոչ էլ իր ընտանիքը ապրել շգիտեն:

— Բայց ոչ մի գեպքում մի ամիս հետո: Պետք է սպասել: Ես կամուսնանամ ձեզ հետ, երբ դուք համոզվեք, որ իրոք ցանկանում եք:

Ֆրենկը նրան ամուր սեղմեց կրծքին:

— Ես քեզ կապացուցեմ դա, — շշնչաց նա:

— Հերիք է: Ցավ եք պատճառում ինձ:

— Հ'ը, ուրեմն ե՞րբ: Երկու ամիս հետո:

— Ոչ, ոչ:

— Իսկ երեք ամսի՞ց:

— Թերեւս:

- Ոչ մի թերեւս: Դու կլինես իմ կինը:
- Բայց դուք դեռ բոլորովին պատանի եք:
- Այդ մասին մի՛ անհանգստանա: Կիմանաս, թե ինչ-պիսի պատանի եմ:

Թվում էր, թե մի նոր աշխարհ բացվեց Լիլիանի առաջ, ու նա հասկացավ, որ դեռ երբեք՝ ինչպես հարկն է չէր ապրել: Այս մարդու մեջ կար այնպիսի ուժ, այնպիսի հորիզոններ էին բացվում նրա առաջ, որոնց մասին իր ամուսինը մտածել իսկ չէր համարձակվում: Երիտասարդ լինելով հանդերձ՝ սա սարսափելի էր, անընկճելի:

- Լավ, երեք ամիս հետո,— շշնչաց Լիլիանը, երբ Ֆրենկը քնքշաղին օրորում էր նրան:

Գ Լ Ո Ւ Խ IX

Քառութերվուդն իր մուրհակազեղչկան գործն սկսեց Հարավային Երրորդ վաղողցի համար վաթուունչորս տանը հիմնելով մի փորբիկ դրասննյակ և շատ շուտ ել ուրախությամբ համոզվեց, որ իր նախկին, լավ կարգավորված գործարարական կատարեր մնացել են ուժի մեջ: Նա դիմում էր իր ենթադրությամբ կանխիկ դրամի կարիք ունեցող որևէ ֆիրմայի և առաջարկում կա՛մ զեղչել նրա մուրհակները և կա՛մ կոմիսիոն հիմունքով հանձն առնել տարածել այս կամ այն պարտավորագրերը, որ այդ ֆիրման ուզում է թողարկել տարեկան վեց տոկոսով. այնուհետև մի փոքր հավելումով նա ծախում էր այնպիսի հաճախորդի, որը առիթ էր փնտրում իր փողը ներդնել մի հուսալի գործի մեջ: Հայրը կամ ժանոթներից որևէ մեկը ժամանակ առ ժամանակ խորհուրդ էին տալիս նրան երբ և ինչպես գործելու: Այդպիսի կրկնակ գործարքներից նա սովորաբար ստանում էր չորս հինգ տոկոս: Առաջին իսկ տարին, բոլոր վերադիր ժախսերը դուրս գալուց հետո, մնաց նրան վեց հազար դոլլար: Այնքան էլ շատ չէր իհարկե, սակայն Ֆրենկը շանում էր բազմապատկել այդ նկամուտը ուրիշ միջոցով, որը, նրա կարծիքով ապագայում մեծ վաստակ էր խոստանում:

Ֆրոնտ-սթրիթով հաղիվ մի կերպ անցնող առաջին ձիաքարշից առաջ Ֆիլադելֆիայի փողոցները բռնված էին՝ խճաքարե սալարկի վրա դղրդոց բարձրացնող հարյուրավոր անզսպանակ հանրակառքերով Բայց հիմա Նյու-Յորքում, Զո՞ն Ստեֆենսոնի մտահղացմամբ, արդեն երկիծ ուղիներ էին գցված և բացի Հինգերորդ և Վեցերորդ փողոցների գծից (վագոնները գնում էին մի ուղղությամբ մի փողոցով և հակառակ ուղղությամբ մյուս փողոցով), որ հենց սկզբից էլ հիանալի եկամուտ էր տալիս, նոր բազմաթիվ գծեր էին նախատեսված և կամ արդեն շահագործման էին հանձնված: Քաղաքը շտապում էր հանրակառքերը փոխարինել ձիաքարշով, ինչպես դրանից առաջ ջրանցքներ էր փոխարինել երկաթուղիներով: Ոմանք, անշուշտ, հակառակում էին այս նորամուծություններին: Այդպիսի գեպքերում առանց դիմադրության շի լինում: Սկսեցին գոռալ մենաշնորհների մասին: Հանրակառքերի կործանված տերերը և անգործ մնացած ձիավարները բարձրածայն տրտնչում էին:

Քառուիերվուլը կուրորեն հավատում էր քաղաքային երկաթուղիների ապագային: Այդ հավատը մղում էր նրան ոիսկի դիմել և ամբողջ աղատ դրամը ներդնել նոր ձիաքարշային-երկաթուղային լոնկերությունների թողարկած բաժնետոմսերի մեջ: Նա շարունակ ջանում էր իմանալ գործի ծածուկ կողմը, բայց այս ղեպքում հեշտ չէր. Ֆրենկը գեռ շատ էր երիտասարդ, երր գցվում էին առաջին գծերը, և տակալին լուրջ կապեր շուներ Փինանսական շրջաններում, որոնք հնարավորություն տային նրան թափանցելու գործի բուն էությանը: Հինգերորդ և Վեցերորդ փողոցների վերջերս շահագործման հանձնված գիծը օրական բերում էր վեց հարյուր դոլլար եկամուտ: Մի նոր գծի նախագիծ էր մշակվում Ֆիլադելֆիայի արևմտյան մասում (Ուոլսթ և Չեսթնաթ փողոցներով) և մի քանի ուրիշ գիծ, որոնք պետք է անցնեին երկրորդ և երրորդ փողոցներով, Ռեյս ու Վայն, Սպրուս և Պայն, Գրին և Կոթս, Տասներորդ և Տասնմեկերորդ փողոցներով և այլն: Այս գծերի շինարարությունն ու Փինանսավորումը գտնվում էր հզոր կապիտալիստների ձեռքին, որոնք կապեր ունեին նահանդի

օրենսդիր ժողովում և, չնայած հասարակայնության ուժգին բողոքներին, թույլտվություն էին ստանում, Ստեղ-ստեղ կաշառատվության վերաբերյալ մեղադրանքներ էին հնչում: Նշում էին, որ քաղաքային փողոցները արժեքավոր տարածություն են, ուստի և պետք էր քաղաքային երկաթուղային ընկերությունների վրա ճանապարհատուրք դնել՝ հաղար դուլար ամեն մի մղոնին: Սակայն գիխավոր ձեռնարկատերերը ամեն տեսակ ստով ու փշով կարողացան պետք եղած մենաշնորհներն ստանալ և Հինգերորդ ու Վեցերորդ փողոցներից գծերի բերած եկամուտների լուրն առնող բազմաթիվ մարդիկ շտապեցին բաժնետոմսեր գնել: Սրանց թվումն էր և Քառվիրլութը. հենց որ հայտնի դարձավ, թե նոր գիծ են անցկացնելու երկրորդ ու երրորդ փողոցներում, նա փող ներդրեց այդ ձեռնարկությունում, իսկ քիչ անց՝ նաև Ուղնաթ և Զեսթնաթ փողոցների գործերում: Ֆրենկին արդեն ուրվագըծվամ էր մի այդպիսի գծի տերը դառնալու հնարավորությունը, սակայն այդ երազն իրականացնելու սեալ ուղիներ դեռ չեր տեսնում: Նրա գրասենյակի դեռ բնակ էլ փինանսական էլեկտրակայական ջեր:

Այդ միջացին Ֆրենկիր տմուածւացավ միսիս Սեմֆլի հետ ձարսանիրը համեստ էր, տառնց ավելորդ աղմուկի. ալդպես էր աւգուստ Ֆրենկիր, տանք ապագա կինն էլ ներվայնանում ու վախենում էր հասարակական կարծիքից: Ֆրենկի ընտանիքը այնրան էլ հավանություն չէր տալիս նրա ընտրությանը: Խնազների կարծիքով կիլիանը շատ մեծ էր նրա համար, բայց դրանից, Ֆրենկի առաջ բացվում էին այնպիսի փայլուն հետանիարներ, որ նա կարող էր շատ ավելի լավ ընտրություն կտարել: Նրա քույրը՝ Աննան, միսիս Սեմֆլին համարում էր հաշվենկատ ու նենդ. բայց դա իհարկե այդպես չէր: Եղրացրներին՝ Զոգեթին ու Էդուարդին, այս ամբողջ պատմությունը թվում էր խիստ հետաքրքրական, բայց կարգին չէին իմանում ինչ կարծիք կազմեն, այսպես թե այնպես միսիս Սեմֆլը լավիկն էր և փող էլ ուներ:

Հոկտեմբերյան մի հաճելի օր Ֆրենկն ու կիլիանը կանգնեցին Քելոուհիլ-սթրիթում գտնվող երիցական Առաջին եկե-

լեցու խորանի առաջ, որտեղ պսակվել ցանկացավ հարսը: Լիլիանը, ի մեծ բավականություն Ֆրենկի, սքանչելի էր կրեմագույն ժանյակներով զարդարված ու երկար տտունավոր զգեստով, մի ստեղծագործություն, որ բազմամայա աշխատանք էր պահանջել ժանեկագործուհիներից: Արարողությանը ներկա էին Ֆրենկի ծնողները, միսիս Դեկսը՝ քեռի Սենեկայի այրին, Լիլիանի եղբայրներն ու քույրերը և մի քանի ծանոթ մարդիկ: Այդ հասարակությունն անգամ բազմամարդ էր թվում Ֆրենկին, բայց այդպես էր Լիլիանի ցանկությունը: Պսակի ժամանակ Ֆրենկը կանգնած էր ուղիղ ու ձգված, սև, պիրկ սերթուկով՝ նույնպես հարսի ցանկությամբ, սակայն ծիսակատարությունից հետո հագուստը արագ փոխեց ու հագավ ճամփորդական շքեղ կոստյում: Այնպես էր նա դասավորել իր գործերը, որ հնարավորություն ունենա երկու շաբաթով մեկնել Նյու-Յորք ու Բոստոն: Իրիկնապահին նրանք նստեցին զնացք, որը հինգ ժամից հասցրեց Նյու-Յորք: Երբ երկարատև ձևացումից և մարդկանց առաջ շինծու անտարբերություն ցուցադրելուց հետո նրանք վերջապես դեմ առ դեմ մնացին «Աստոր հառուց»-ի համարում, Ֆրենկը իր գիրկն առավ նրան:

— Ի՞նչ երանություն, որ վերջապես մենակ ենք, — գոչեց նա:

Լիլիանը նրա ավյունին պատասխանեց այն բարկացնող անհամարձակիությամբ, որը միշտ հիացնում էր Ֆրենկին: Քայց հիմա այդ վեհերությունը շաղախված էր Ֆրենկից իրեն հաղորդվող ցանկությամբ: Քառուփերվուդին թվում էր, թե ինքը երբեք չի կշտանա նրանից, նրա հրաշագեղ դեմքից, նրբատես բազուկներից, քնքուշ մարմնից: Նրանք անընդհատ քաղցր խոսքեր էին մրմնջում, հոգ տանում միմյանց, կառքով շրջագայում էին քաղաքում ու վայելում հանդիսարանների ցուցադրումները: Ֆրենկը անհամբերությամբ ուզում էր լինել Նյու-Յորքի ու Բոստոնի ֆինանսական կենտրոններում: Այս երկու քաղաքներն էլ հրապուրում էին նրան իրենց առևտրական պատկառելիությամբ: Առաջին քաղաքը դիտելուց հետո, Ֆրենկը հարցնում էր իրեն՝ սիրտ կանի՛ երբեք հրաժեշտ տալ

Ֆիլադելֆիային։ Զէ՞ որ հիմա, մտածում էր նա, երջանկավետ կյանք է սպասում այնտեղ Լիլիանի, հետո էլ թերևս փոքրիկ Քառվերվուդների մի ամբողջ երամի հետ։ Նա կաշխատի առանց ուժերը խնայելու ու շատ կվաստակի։ Իր ունեցած կապիտալով ու կնոջ միջոցներով, որ հիմա դրվում էին իր տրամադրության տակ, նա հույս ուներ շուտով դառնալու միանգամայն ունկոր մարդ։

ԳԼՈՒԽ X

Այն առնուտեղը, որով երիտասարդները շրջապատեցին իրենց՝ ճամփարդությունից վերադառնալուց հետո, իր նրբազեկությամբ բավական դիրավանց էր այն ամենից, որով առգրում էր միսիոն Քառվերվուդը միտք Սևմիլի օրոք։ Նըրանք սրուշեցին ճամանակավարապես փոխազրկել Ֆրոնտութիւնի կողմանի առանձին ծննդարձությունը այդ տարիներին իրեն համուկած ամենայն նրբաճաշակի ձգտումին։ Ֆրենկը նշանգրերից անմիջապես հետո սկսեց առարկել կահույքի և տան հարդարմուն սճի, ալիև ճիշտը՝ «անոնճության» դեմ, և թույլատրության խնդրեց կահավորել իրենց կացարանը նրբագեղության ու գեղեցկության մասին ունեցած իր սեփական հասկացողություններին ճամապատասխան, հասկացողություններ, որ հենց այնպիս՝ բնադրաբար յուրացըել էր հասունացման շրջանում։ Ես ասիմ էր ունեցել տեսնել բազմաթիվ աներ, որոնք կահավարված էին անհամեմատ ալելի լավ ճաշկով, բայց իր ծնողների տանը։ Այդ ժամանակաշրջանում անկարելի էր անցնել Ֆիլադելֆիայի փողոցներով ու շպատ ավելի կալառութական ու շքեղ կենցաղի ձգտումը և շվարակվել գրանուլի Փողոցները կառուցապատվում էին փառաշուշությունունը։ Մոդայական էր դարձել ծաղկանոցներ ունենալ առան ճակատների երկայնքին։ Միստր Թայի, միստր Լիի, Ար-

թուր Ռիվերսի և ուրիշ ծանոթների տներում Ֆրենկի ուշադրությունը գրավում էին նրբագեղ ու թանկարժեք իրերը՝ բրոնզ, մարմար, դռան վարագույրները, նկարներ, ժամացույց, գորգեր:

Ֆրենկը որոշեց, որ առանց համեմատաբար մեծ ծախսերի կկարողանա իր սովորական կացարանը վերածել անդորրավետ ու գողարիկ տան: Օրինակ՝ որքան ավելի գրավիչ կարելի էր դարձնել սեղանատունը, որի, հարավային տերրասին նայող երկու պատուհաններից տեսարան էր բացվում թիվերով ու ծառերով պատված մարգագետնի վրա, որը ձգվում էր մինչև միստր Սեմփլի կալվածը հարևան հողամասից բաժանող ցանկապատը: Մրածայր ու գորշ ցցապատնեղը պետք է վերացնել ու փոխարինել կանաչ ցանկապատով: Սեղանատունը հյուպասենյակից բաժանող պատի մեջ կարելի էր խորշ փորել ու ծածկել գեղեցիկ վարագույրով, իսկ երկու երկարագուն լուսամուտների փոխարեն կարելի է սարքել այսպես կոչված «լուսանց» որի երկիեղիկ պատուհաններից՝ արձիճե շրջանակների մեջ ագուցված շեղանկյունի ապակիներից, երեալու է մարգագետնի տեսարանը: Այդ ամբողջ հնացած կահույքը, որ աստված գիտե, թե որտեղից է հավաքված՝ մասսամբ ժառանգված: Սեմփլ ընտանիքից, մասսամբ Ուիդիններից, մասսամբ էլ անձամբ է ձեռք բերված, դեն պետք է զցել կամ ծախել և փոխարեն նորը գնել: Ֆրենկը վերջերս ծանոթացել էր դալրոցական նստարանից նոր բաժանված մի երիտասարդ ճարտարապետի՝ ոմն էլսուորթի հետ, և նրանք անմիջապես աշխույժ հետաքրքրություն ու մի անբացարելի մղում զգացին իրար հանդեպ: Ուիլտոն էլսուորթը լրջամիտ, հանդարտ, նրբաճաշակ մարդ էր, բառի բուն նշանակությամբ արտիստական խառնվածքի տեր: Զրուցելով Զեսթնաթ-սթրիթում կառուցվող տան մասին, էլսուորթը համարեց դա սարսափելի: Նրանք անցան արվեստի քննարկմանն ընդհանրապես, ավելի ճիշտը՝ Ամերիկայում արվեստ չինելուն: Ֆրենկի մտքով անմիջապես անցավ, որ էլսուորթը որևէ մի ուրիշից ավելի լավ կարող է իրագործել իր մտա-

Հղացումները տան վերակառուցման վերաբերյալ: Երբ նա այդ մասին խոսեց Լիլիանի հետ, սա անառարկելիորեն համաձայնեց, ինչպես համաձայնում էր իրենց կացարանի փոփոխություններին վերաբերող ամուսնու առաջարկած բոլոր պլաններին:

Քառութերվուդ ամուսինները հարսանեկան ուղևորության մեկնելուց հետո, էլսուրորթը ձեռնամուխ եղավ գործին՝ ելնելով երեք հազար գոլլարի նախահաշվից, ուր մտնում էր նաև կահավորման փոփոխությունը: Աշխատանքն ավարտվեց նրանց վերադարձից երեք շաբաթ հետո միայն, բայց տունն արդեն գրեթե անճանաչելի դարձավ: «Լուսանցք», ըստ Ֆրենկի մտահղացման, ասես կախված էր մարգագետնի կանաչի վրա, իսկ արձիճե շրջանակների մեջ ագուցված շեղանկյուն ապակիներով լուսամուտներն ունեին պղնձե ծխնիներ: Այժմ հյուրասենյակը սեղանատնից բաժանված էր ետ ու աստղ շարժման գոռներով, որոնք ենթադրվում էր ծածկել նորմանգական դեղյակահան հարսանիք պատճերող մետաքսե գարսակայլությունը: Սեղանատնիներ զարդարված էր անողիական հնամենի, կտղնեփայտե կտհույրավ, իսկ հյուրասենյակն ու ննցարանի՝ ջիպենգիի ու Շերատոնի ամերիկյան նմանեցումուի: Մի բանի համեստ ջրանկարներ զարդարում էին պատերը, այս ու այն տեղ դրված էին Հոսմերի ու Պաուերսի կերտած բրոնզե արձանիկներ: Զարդարանք էր նաև այժմ բոլորովին մոռացված քանդակագործ Պոտերի մարմարե վեներան և մի քանի ուրիշ, ի գեպ երկրորդական իրերը: Միսիս Քառութերվուդը մի քիչ շփոթված էր Վեներայի մերկությունից, դա Ամերիկայում շընգունված եվրոպական անպարկեցության մթնոլորտ էր ստեղծում տանը, բայց ձայն շհանեց տյապես թե այնպես այդ զարդարանքը հաճելի էր աշքի համար և, բացի դրանից, նա իրեն գիտակ չէր համարում այդ բնագավառում, Ֆրենկը շատ ավելի իրազերկ է այդ ամենին, երբ վարձվեցին սպասավորներ՝ աղախին ու սպասավոր Քառութերվուդներն սկսեցին սեղմ հրավերքներ սարքել:

Ամեն ոք, ով հիշում է իր ամուսնական կյանքի առաջին

տարիները, հիշում է այն հազիվ նկատելի փոփոխությունները, որ տեղի ունեցան Ֆրենկի մեջ պսակվելուց հետո, որովհետև իրեն Հիմենի¹ հանգուցով կապած ամեն մի մարդ որոշ շափով ընկնում է իր ընտանեկան շրջապատի ազգեցության տակ: Ելնելով նրա բնավորության որոշ գծերից՝ կարելի չը ենթադրել, որ բախտը նրան կանխորոշել է դառնալու օրինավոր ու պատվարժան քաղաքացու տիպար: Թվում էր, թե Ֆրենկը շատ է հափշտակված ընտանեկան կյանքով: Ամեն երեկո մեծագույն ուրախությամբ էր նա վերադառնում կնոջ մոտ՝ հանգստանալու գործարար թաղամասերի իրարանցումից, փողոցային աղմուկից ու մշտատե շտապումից: Ֆանը նա անմիջապես համակվում էր իր նյութական ու ֆիզիկական բարօրությամբ: Ճաշի համար պատրաստ սեղանը, վառվող մոմերը (այս միտքը Ֆրենկինն էր), կիլիանը՝ մինչև հատակը հասնող բաց կապույտ կամ կանաչ մետաքսե ըլզգեստով (Ֆրենկը շատ էր սիրում կնոջ վրա տեսնել այդ գույշ ները), մեծ բուխարին՝ մեջը բոցավավող հաստ փայտերով, ու դարձյալ իրեն փարած կիլիանը՝ այս ամենը գերության մոջ էին պահում նրա տակավին շհասունացած երկակայությունը: Դրերը, ինչպես արդեն ասել ենք, չէին հետաքրքրում Ֆրենկին, սակայն կյանքը, նկարները, ծառերը, սիրեցյալ կնոջ մերձավորությունը իշխում էին նրա վրա՝ չնայած նրան արդեն քրենց մեջ առած ֆինանսական բարդ կոմբինացիաներին: Ճոփի, հրճվալի ու լեցուն կյանք. ահա թե ինչ էր տեսնում նա իր ամբողջ էությամբ:

Միսիս Քառուփերվուդը, չնայած տարիքային տարբերության, այդ ժամանակ թվում էր նրան կատարելապես հարմար ընկերութիւն: Դուրս բերվելով իր կրսաքուն վիճակից՝ նա խիստ կապվել էր Ֆրենկին, հաճոյակամությամբ էր արձագանքում նրա բոլոր ցանկություններին և սիրում էր անրջել նրա հետ: Երկուսն էլ երեխա էին տենչում, և շատ շանցած կիլիանը շշնչաց ամուսնուն, որ սպասում էր այդ հրճվալի իրադարձ-

¹ Կամ՝ Հիմենե ըստ հունական դիցաբանության՝ ամուսնության աստվածուհին: Ս. թ.

ձությանը։ Առաջ նա կարծում էր, թե շբերության պատճառն ինքն է, ուստի և զարմացավ, և ուրախացավ, երբ համոզվեց, որ սիսալվել է։ Նոր հորիզոններ բացվեցին նրա առաջ՝ հիանալի ապագա, որը հիմա վախենալու տեղիք չէր թողնում։ Ֆրենկն ուրախանում էր երեխայի մեջ իր կրկնությունը տեսնելու մտքով։ Հպարտությամբ էր նա մտածում փոքրիկ Քառվիերվուդի մասին։ Բազում օրեր, շաբաթներ, ամիսներ և նույնիսկ տարիներ, համենայն դեպս առաջին շրս-հինգ տարիները, անսասելի բավականություն էր պատճառում նրան տուն վերադառնալը, բակում ման գալը, բարեկամներին ճաշի հրավիրելը, կնոջ հետ քաղաքում կառքով զբունելը, նրան իր ծրագրերին հաղորդակից դարձնելը։ Լիլիանը բան չէր հասկանում ամուսնու ֆինանսական բարդ կոմբինացիաներից, բայց սա առանձնապես չէր էլ պնդում դրա վրա։

Դրա փոխարեն լիլիանի սքանչելի մարմինը, շրթունքները, հանդարտ շարժուձերը՝ այս ամենի ձգողական ուժը, դամարտած դրան նաև երկու երիտաները, որ աշխարհ էին եկել նշանց ամսունության շրտ տարիներին, լիակատար բաժանունաթյան երև ստանառում նրան։ Նա ծնկների վրա սրորդ էր իր տատշնեկ Ֆրենկ-կրտսերին, նայում նրա փամփոխ առափելներին, կայծձկլտուն աշխեներին, համարյա դեռ տունի և այնուամենայնիվ կոկոնի նմանող բերանին ու խորհրդածում որդենության զարմանալի պրոցեսի մասին։ Խորհրդածության մի անսպառ աղբյուր՝ սերմի սկզբնական դարգացումը, պտղի հասունանալու ապշեցուցիչ շրջանը մոր արգանդում և դրա հետ կապված բոլոր վտանգները։ Ծանր բողբեներ ապրեց նա, երբ միսիս Քառսիերվուդը բերում էր կրտսեր Ֆրենկին, նախ և առաջ այն պատճառով, որ լիլիանն ինքը խիստ վախեցած էր։ Ֆրենկը շատ էր վախենում իր կնոջ մարմնի գեղեցկության համար, սարսափում էր նրան կորցնելու մտքից և երեխայի աշխարհ գալու օրը դռան ետևը կանգնած՝ իրականում առաջին անգամ ճանաշեց իսկական, թեև ոչ այնքան սաստիկ տագնապ, դրա համար նա շատ էր հավասարակռված, շատ էր իրենով զբաղված։ Եվ այնուամենայնիվ նա սարսափում էր այն մտքից, որ կինը կարող

է մեռնել, և այնժամ վե՛րջ ներկա երջանիկ կյանքին։ Հետո էլ սուր, սրտակեղեք ճիշեր, աշքալույս, որ ամեն ինչ բարեհաջող վերջացավ, և նորածնին նայելու թույլատրովթյուն։ Այդ օրվա ապրումներն ընդարձակեցին Ֆրենկի մտահորիզունը, նրա կենսարմբոնմանը մեծ խորովթյուն տվին։ Մի անգամ ևս նա համոզվեց, որ երեսությունների մակերեսի տակ, ինչպես կոպիտ փայտը փայլուն ջնարակի շերտի տակ, ողբերգություն է ծածկված։ Կրտսեր Ֆրենկը, հետո էլ կապուտաշվի ու ոսկեգանգուր պստիկ լիլիանը մի առժամ գրավեցին նրա երեսակայությունը։ Ընտանեկան օշախի միտքը վերջիվերջու վատ միտք չէ։ Այդպես է կառուցված կյանքը, և կյանքի անկյունաքարը տունն է։

Հնարավոր չէ նշել այստեղ կարծես թե փոքր, բայց ընդհանուր առմամբ էական բոլոր փոփոխությունները, որ իրենց հետ բերին այդ տարինները։ Այնքան աստիճանաբար էին առաջանում դրանք, որ աշքի համար մնում էին աննկատելի, ինչպես ջրերի դանդաղ հոսելը։ Հինգ տարում Ֆրենկի կարողությունը զգալիորեն աճել էր, մանավանդ եթե վերհիշենք, որ նա շատ քչով սկսեց։ Հետզհետև նա մոտեցավ (որքան առետրական գործերն ընդհանրապես մերձեցումը թույլ են տալիս) Ֆիլադելֆիայի անընդհատ աճող ֆինանսական աշխարհի մի քանի առավելապես ճարպիկ ներկայացուցիչներին։ Միստր Թայի մոտ և բորսայում աշխատելու տարիններին հաճախ մատնացույց էին անում նրան «քաղաքականությունից վաստակ անող» քաղաքացին ինքնավարության կամ նահանգի կառավարչության քիչ թե շատ խոշոր գործիչների, ինչպես նաև պետական մասշտաբի գործիչների հետաքրքրական անձնավորությունները, որոնք գալիս էին Վաշինգտոնից տեսնելու «Դրեքսել և Ընկ.», «Կլարք և Ընկ.» ու նույնիսկ «Թայ և Ընկ.» բանկիրական տների ներկայացուցիչներին։ Այդ մարդիկ առաջուց, ինչպես նա իմացավ, տեղյակ էին օրենսդրական մոտալուտ բարեփոխություններին ու տնտեսական փոփոխություններին, որոնք անխուսափելիորեն պետք է արտացոլվեին որոշ արժեթղթերի և առետրական որոշ ճյուղերի վրա։ «Թայ և Ընկ.» ֆիրմայի

գրասենյակում մի անգամ երիտասարդ մի պաշտոնակից քաշեց Ֆրենկի թևը:

— Նկատեցի՞ք այդ մարդուն, որ հիմա մտավ մեծավորի առանձնասենյակը:

— Այս:

— Մերթագն է՝ քաղաքի գանձապետը: Նա, բան եմ ասում, անկասկած խաղում է: Պետական բոլոր փողերը նրա տրամադրության տակ են, իսկ ինքը հաշվետվություն է անում միայն հիմնական կապիտալի վերաբերյալ. այդպիսով տոկոսները մտնում են նրա գրպանը:

Քառուփերվուղի հասկացավ: Քաղաքի ու նահանգի բոլոր պաշտոնյաները սպեկուլյացիայով են զբաղվում: Նրանք ափանդագրում էին քաղաքի կամ պետական միջոցները որոշ բանկիրների կամ միջնորդների մոտ, որոնց կառավարությունը կամ լիազորում էր կամ նույնիսկ նշանակում պահել ավտոնուները: Բանկերն այդ ավանդների համար տոկոս չէին վճարում ոչ սրի, բացի դանձապիտիթյան ներկայացուցիչներից: Այս վերցինների դադանի ցուցումներով նրանք պետական փող էին փոխ տալիս բորսայականներին, սրանք էլ ներկնում էին «վստահելի» թղթերի մեջ: Ֆիլադելֆիայում զարգում էր մի ահազին ոհմակ: բաժնընկեր էին քաղաքապետը, քաղաքապետիթյան մի քանի անգամ, գանձապետը, սոսիկանության պետը, հանրային աշխատանքների լիազորը և այլ պաշտանյաներ: Նրանց նշանաբանն էր՝ «Ճեռքն է ձեռքը լիտնում»: Սկզբում այսպիսի «գործունեությունը» զգվածիր էր պատճառում Քառուփերվուղին, բայց դրանցից շատերը նախատեսած են երաշտին ոչ որ չեր ան հանդասանում: Թերթերն անվերջ շեփորում էին քաղաքապիտական պարագանության ու հայրենասիրական վարագալու մասին, սակայն այդպիսի նենգությունների վերաբերյալ ոչ մի բառ չէին ասում: Իսկ դրանք կատարած մարդիկ պահում էին իրենց իշխանությունը և հանուր հարդար էին վայելում:

Բանկիրային շատ տներ, որոնց թիվն անընդհատ մեծանում էր, Ֆրենկին համարում էին վստահելի միջնորդ

վճարային պարտավորություններն իրացնելու և մուրհակային վճարները գանձելու համար։ Թվում էր, թե նա անմիջապես կուահում էր՝ ուր պետք է դիմել փող ճարելու համար։ Առաջին իսկ օրից Ֆրենկը կանոն դարձրեց իր համար մի քսան հազար կանխիկ փող ունենալ մոտը, որպեսզի անհապաղ և առանց ավելորդ խոսակցությունների ընդառաջի ձեռնտու առաջարկներին։

Այսպիսով, նա ստեղծեց այնպիսի պայմաններ, որոնց շնորհիվ մեծ մասամբ կարող էր պատասխանել. «Այո, անշուշտ ես կարող եմ հանձն առնել դա»։ Նրան դիմում էին կատարելու այս կամ այն բորսայական գործողությունները։ Այն ժամանակ Ֆրենկն իր տեղը չուներ բորսայում և սկզբում չէր էլ պատրաստվում գնել այդ. բայց հիմա նա միտքը փոխեց և տեղ գնեց ոչ միայն Ֆիլադելֆիայում, այլև Նյու-Յորքում։ Մանուֆակտուրայի առևտրական ոճն Զոգեֆ Զիմերմենը, որին նա օգնել էր գետեղելու մի քանի մուրհակ, առաջարկեց նրան իր վարույթի տակ առնել քաղաքային երկաթուղիների իր բաժնետոմսերը, և Ֆրենկը կրկին դարձավ դրամական բորսայի մշտական այցելուն։

Այդ միջոցին փոխվեց նաև նրա տնային կյանքը, ընտանիքի հիմքերը դարձան ավելի անսասան հաստատուն, կենցաղը՝ ավելի նրբին։ Միսիս Քառվիերվուդը, օրինակ, հարկադրված էր ժամանակ առ ժամանակ քննադատորեն վերանայել իր, Ֆրենկն էլ իր ծանոթությունները։ Միստր Աւմիլի կենդանության օրոք կիլիանի շրջապատը գերազանցորեն կազմված էր մանրածախ և մի քանի մեծածախ, այնուամենայնիվ համեմատած փոքր առևտրականների ընտանիքներից։ Բացի դրանից, կիլիանը բարեկամական հարաբերություններ ուներ նույն Առաջին երիցական եկեղեցու ծուխ հանդիսացող երկու թե երեք տիկինների հետ։ Հազվագել կազմակերպվում էին այսպես կոչված «եկեղեցական թեյասեղաններ» ու երեկութներ, որոնց մասնակցում էր նա միստր Սեմփլի հետ, և կամ նրանք տաղտկալի այցելություններ էին կատարում մեկի կամ մյուսի ազգականներին։ Քառվիերվուդները, Ուոթերմենները և նույն դասի մյուս

ընտանիքները երջանիկ բացարություն էին այդ ընդհանուր աղոտ ֆոնի վրա: Հիմա ամեն ինչ փոխվել էր: Երիտասարդ Քառուկիերվուողը այնքան էլ չէր հետաքրքրվում կիլիանի ազգականներով. սրանք էլ իրենց կողմից հեռացել էին նրանից, ըստ իրենց կարծիքի, անվայել ամուսնության պատճառով: Ֆրենկի ընտանիքն առաջվա պես կապված էր նրան ազգակցական շերմ ու սերտ զգացմունքներով և բարեկեցության ընդհանուր ձգտումով, բայց ամենազիստորն այն էր, որ Ֆրենկը կարողացել էր նվաճել մի քանի հիրավի ականավոր անձանց բարյացակամությունը: Ֆրենկը իր տունն էր հրավիրում բանկիրների, տարբեր ձեռնարկների մեջ ներդրամ կատարած ունեոր մարդկանց, ներկա և ապագա հաճախորդների՝ բնավ էլ ոչ գործեր քննարկելու համար, որովհետև ցա ամենեին նրա սրտով չէր լինի: Սքուլքիլ, Ուիսաջիկոն գետակների ափին և ուրիշ շատ տեղերում կային քաղաքամերձ ճաշարաններ, ուր հաճելի էր գնալ կիրակի օրերը: Ֆրենկին ու Լիլիանը միսիս Սևենեկա Դեկսի հաճախի կուրույն դնում էին գասափոր Քիոչչնի մոտ, այցելում ժանութ իրավարան էնվիյան Շարլիեսին, Հարուկը Սթեքըրին, որ Ֆրենկի և շատ ուրիշների անձնական հավատարմատարն էր: Պատիւթյուղը օժակած էր բահամամբույր ու անբռնազբռս վարժեցագության շնորհքով: Նրան ճանաշողներից ոչ ոք, չարդ թե կին, չէր իմանում, թե որքան խոր խառնվածքի աեր է նաև Ֆրենկը մտածում էր, մտածում, բայց դա չէր խառնվարսից վայելելու կանքը:

Նրա տօնեասկզբնական ու առավելապես անկեղծ ափատկամեջաններից մեկը նկարչությունն էր: Նա չերմադիս սիրում էր բնամեյանը, բայց չկխան ինչու կարծում էր, թէ այն ավելի լավ է ձանաշխում նկարչի մեկնաբանությամբ, և իշտ այնպիս, ինչպես ուրիշների միջոցով ավելի լավ է ուրարդում օրենքների ու քաղաքական գեպքերի իմաստը: Կիրիանն ավելի քան անտարեքը էր նկարչության հանդեպ, սակայն ուղեկցում էր ամուսնուն բոլոր ցուցահանդեսները՝ ներգուատ անընդհատ մտածելով, որ Ֆրենկն այնուամենայ-նիդ տարօրինակություններ ունի: Սիրելով իր կնոջը՝ ամու-

սինը փորձում էր մտային վայելքների հետաքրքրություն արթնացնել նրա մեջ, բայց կիլիանը թեև ձևանում էր, թե նկարչությունը գրավում է իրեն, իրականում կույր ու անտարբեր էր նրա հանդեպ. երեսի այդ բնագավառը պարզապես անմատչելի էր նրան:

Երեխաները խլում էին կիլիանի ժամանակի մեծ մասը, բայց դա ամուսնուն բնավ չէր վշտացնում, նա զմայլելի ու վերին աստիճանի հարգարժան էր համարում մայրական այդ անձնվիրությունը: Դրանով հանդերձ նրան դուր էին գալիս կիլիանի սառնարյունությունը, մոլորուն ժպիտը և նույնիսկ աշխարհում ամեն ինչի նկատմամբ անտարբեր լինելը, որ երբեմն, ի դեպ, շինծու էր և պատճառը նրա անդորր հոգեվիճակն էր ու ապահովվածությունը: Որքա՞ն տարբեր մարդիկ էին նրանք: Իր երկրորդ ամուսնությունը կիլիանն ընկալեց այնպես, ինչպես առաջինը. նրա համար դա լուրջ իրադարձություն էր և բացառում էր մտքերի ու զգացմունքների մեջ որևէ փոփոխություն մտցնելու հնարավորությունը: Գալով ֆքնկին՝ նա պատվում էր մի աղմկալի աշխարհում, որը, համենայն դեպս ֆինանսական տեսակետից, ամբողջովին կազմված էր փոփոխություններից, հանկարծակի ու ապշեցուցիչ հեղադարձություններից: Ֆրենկն սկսեց մերթ-մերթ զննել կնոջը՝ ոչ խիստ քննադատաբար, որովհետև սիրում էր նրան, սակայն ջանալով ճիշտ զնահատել նրան: Նա ճանաշում էր կիլիանին արդեն հինդ տարուց ավելի: Բայց ճիշտն ասած՝ ի՞նչ էր խմանում նրա մասին: Նրանց համատեղ կյանքի առաջին տարիներին երիտասարդական ավյունը շատ բաների վրա աշքը փակել էր տալիս, բայց հիմա, երբ նա միմիայն իրեն էր պատկանում...

Այդ շրջանում դանդաղ առաջանում էր պատերազմը և վերջապես հայտարարվեց Հյուսիսի ու Հարավի միջև՝ առաջերելով մտքերի այնպիսի բորբոքում, որ թվում էր, թե ամենքն էլ կլանված են միմիայն դրանով: Սկզբում աներեակայելի բան էր կատարվում: Այնուհետև սկսվեցին միտինգներ՝ բազմամարդ ու փոթորկալի, փողոցային անկարգու-

թյուններ, Զոն Բրառունի¹ աճյունը փոխադրելուց առաջացած միջադեպը, Լինկոլնի՝ ժողովրդական այդ մեծ տրիբունի Ֆիլադելֆիա գալը՝ Սպրինգֆիլդից. (Իլինոյսի նահանգ) Վաշինգտոն գնալիս, որտեղ նա երդում պետք է տար ու ստանձներ պրեզիդենտի պաշտոնը. Թուլ-Ռենի, Վիքսբուրգի, Գեթիսբուրգի ճակատամարտերը և այլն: Այդ միջոցին Քառվերվուղը քսանհինգ տարեկան երիտասարգ էր՝ սառնարյուն ու նպատակամետ. Նրա կարծիքով՝ ստրկության գեմ մղվող պրոպագանդան, մարդկայնության տեսակետից, գուցե և կատարելապես հիմնավորված է, նույնիսկ անկասկած այդպես է, բայց առետրի համար խիստ վտանգավոր: Նա ցանկանում էր Հյուախի հաղթանակը, բայց գիտեր, որ իր հմյուս Փինանսիստների բանը կարող է խիստ դժվարանալ: Ինքն անձամբ կովելու ցանկություն չուներ. անմիտ զբաղմունք ցայտուն արտահայտված անհատականության տեր մարդու համար: Թող ուրիշները կովեն. աշխարհում բավականին շատ են իրենց կարծիքը զնդակին դեմ տալու պատրաստ աղքատներ, միամիտներ ու խելքից պակասներ, որոնք միայն մի բանի են պիտանի՝ որ մեկը հրամայի նրանց և ուղարկի մահվան բնանու Գոլովի իրեն՝ նա իր կյանքն համարում էր սուրբ և ամրապնդին ընտանիքին ու գործարար շահերին պատեսնող: Նու հիշում էր, թե ինչպես մի անգամ, այն ժամին, երբ լանվորները վերադառնում են գործից, մի փողոցում քաջարի քայլում էր հավաքագրող զննվորների կապույտ համականութիւնը մի փոքրիկ ջոկատ: Թմբկահարությունը, Միացյալ նահանգների ծածանվող դրոշը իհարկե մի նպատակ միայն անելին՝ ցնցել մինչ այժմ անտարբեր կամ տառանվազ բազարացաւ հոգին, այնպիս էլեկտրականացնել նրան, որ նու կարցնի շափի ու ինքնապահպանման զգացմանը և հիշելով, որ ինքը պետք է երկրին՝ մոռանա ամեն ինչ՝ կնոշը, ծերունիներին, տունն ու երեխաներին և միանա-

¹ Զոն Բրառու (1800—1859) նեգրերի աղատազրության համար մարտնչող՝ ԱՄՆ-ում: 1859-ին ապստամբություն բարձրացրեց Վիրջինիայում, ուղարկաթյուն կրեց, գերի վերցվեց ու մահապատժի ենթարկվեց:

զոկատին: Ֆրենկը տեսավ, թե ինչպես մի բանվոր, որ քայլելիս թեթևակի ճռճռում էր իր ճաշամանը և բնավ էլ չէր մտածում, որ իր աշխատանքային օրն այդպիսի վերջավորություն կունենա, հանկարծ կանգ առավ և սկսեց ունկնդրել ջոկատի մոտեցող դոփյունին, իսկ երբ զինվորները հավասարվեցին նրան, հապաղեց մի քիչ, անվճռական ու վարանոտ հայացքով ուղեկցեց շարքերին և հանկարծ միանալով ջոկատի պոշին՝ դեմքի հաղթական արտահայտությամբ քայլեց դեպի հավաքագրման կետը:— Ի՞նչը հրապուրեց այդ բանվորին, — հարցնում էր իրեն Ֆրենկը:— Ինչո՞ւ այդքան հեշտ ենթարկվեց, ուրիշի կամքին: Զէ՞ որ նա չէր պատրաստվում պատերազմ գնալ: Նրա դեմքի վրա դեռ մնացել էին յուղի ու մրի հետքեր. նա մի քանինդ տարեկան երիտասարդ էր, բայց երկույթին ձուլող կամ փականադործ: Ֆրենկը նայեց փոքրիկ ջոկատի ետևից այնքան ժամանակ, որ սա հասավ փողոցի ծայրին ու շրջվելով՝ այլևս չերևաց:

Որքա՞ն տարօրինակ է ուզմական ոգու այդ հանկարծակի զարթոնքը: Ֆրենկին թվում էր, թե մարդիկ ոչինչ չէին ուզում լսել, բացի թմբուկների ու շեփորների ձայնից, ոչինչ չէին ուզում տեսնել, բացի հրացանների սառը պողպատն ուսերին ճակատ դիմող հազարավոր դինվորներից, ոչ մի այլ բանով չէին հետաքրքրվում, բացի պատերազմից ու ուզմի լուրերից: Անտարակույս դա հուզող զգացմունք էր, նույնիսկ վսիմ, բայց ոչ ձեռնտու նրանց համար, ովքեր աւպել էին այն: Դա անձնազոհության էր կոչում, իսկ Ֆրենկը չէր հասկանում այդ: Եթե ինքը գնա կոիվ, իրեն կարող են սպանել, իսկ այն ժամանակ ի՞նչ օգուտ իր վսեմ զգացմունքներից: Զէ՞ ավելի լավ է ինքը փող վաստակի ու զբաղվի քաղաքական, հասարակական ու ֆինանսական գործերով: Խե՞ղճ տխմար, որ հետևեց հավաքագրող ջոկատին. բայց ո՛չ, ո՛չ տխմար, ինքն այդպես չի անվանի նրան. պարզապես մի շփոթված խեղճ բանվոր. աստված ողորմի նրան, նրանց բոլորին ողորմի: Ճշմարտապես դրանք չեն հասկանում, թե ինչ են անում:

Մի անգամ նա առիթ ունեցավ տեսնելու կինկունին. այդ անշնորհք քայլող, երկար-երկար, ուկրուտ ու արտաքուստ

Հասարակ մարդը անջնջելի տպավորություն գործեց Ֆրենկի վրա։ Փետրվարյան մի ցուրտ ու անձրևային եղանակ էր պատերազմական ժամանակաշրջանի մեծ պրեզիդենտը նոր էր ավարտել ժողովրդին ուղղած իր հանդիսավոր դիմումը, որով նա ասում էր, որ նահանգներին իրար կապող թելերը կարող են առավելագույն չափով ձգվել, բայց չպետք է Կտորվեն։ Երբ նա դուրս էր գալիս Անկախության Պալատից¹, այն հոչակավոր շենքից, որտեղ ծնվեց ամերիկյան ազատությունը, նրա դեմքը տխուր էր և մտածկուտ-հանդարտ։ Քառուիերվուդը աշքը չէր կտրում պրեզիդենտից, երբ նա դուրս էր գալիս շքամուտքից՝ շրջապատված շտաբի սպաներով, տեղական իշխանության ներկայացուցիչներով, գաղտնի ոստիկաններով և համակրանքով տրամադրված հետաքրքրասեր բազմությամբ։ Ուշադիր զննելով կինկոլնի արտասովոր, կոպիտ հատված դիմագծերը՝ նա համակվեց այդ անձնավորության զարմանալի մաքրության ու ներքին վեհության գիտակցությամբ։

— Ահա մի իսկական մարդ, — մտածում էր Ֆրենկը։ — Ի՞նչ արտակարդ բնակուրություն։ — Պրեզիդենտի ձեռքի ամեն մի շարժումն ալլշեցնում էր Ֆրենկին։ Նայելով, թե ինչպես է կինկոլնը կառք նստում, նա մտածում էր. «Սա» է ուրեմն հիմքեր խորտակողը, գավառական այս նախկին փաստաբանը։

Կինկոլնի պատկերը դեռ երկար մնաց Ֆրենկի աշքի տուած, և պատերազմի տարիներին նրա մտքերը հաճախ էին վերագրանում դեպի այդ բացառիկ մարդը։ Նա համոզված էր, թե ինքը բախար ունեցավ անսնկլու աշխարհի հիրավի մեծ մարդկանցից մեկին։ Պատերազմն ու պետական գործունեությանը շնորհ հրատարակում Ֆրենկին, բայց գիտեր, թե ժամանակ առ ժամանակ որքան կարեոր է և՛ մեկը, և՛ մյուսը։

¹ Ֆիլադելֆիայի այն շենքը, որտեղ 1776 թ. հունիսի 4-ին հոչակվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախությունը։

Պատերազմի շրջանում, մանավանդ երբ ակներև դարձավ, որ այդ պատերազմը երկարատև կլինի, Քառուփերվուղն հաճախ՝ հնարավորություն ունեցավ ցուցադրելու ֆինանսիստի հր ընդունակությունները հիրավի խոշոր գործի մեջ։ Այդ շրջանում ամբողջ երկիրը, նահանգը, քաղաքը դրամի սուր կարիք էին զգում։ 1861 թ. հովհանն կոնգրեսը թույլ տվեց հիմուն միլիոն դոլարի ներքին փոխառություն բաց թողնել պարտատոմսերով, որոնք մարվելու էին քսան տարում և յոթ տոկոս տարեկան օգուտ էին բերելու ունեցողներին։ Նահանգն էլ իր հերթին նույն պայմաններով հավանություն տվեց բաց թողնել երեք միլիոնի փոխառություն։ Առաջին փոխառության իրացումը կատարում էին նյու-Յորքի, Բուտոնի ու Ֆիլադելֆիայի, մյուսինը՝ միայն Ֆիլադելֆիայի ֆինանսիստները։ Քառուփերվուղը չէր մասնակցում այդ գործին։ Նա դեռ բավականաշափ հայտնի չէր։ Թերթերում նա կարդում էր այն նիստերի մասին, որտեղ անձամբ կամ միայն անունով իրեն ծանոթ ֆինանսիստները «քննարկում էին երկրին կամ նահանգին օգնություն մատուցելու առավել նպատակահարմար միջոցառումները»։ Նրանք Ֆրենկին չէին հրավիրում, մինչդեռ նա ամբողջ հոգով տենչում էր լինել դրանց մեջ։ Այդ ժամանակ նա արդեն հասկացել էր, որ գործի հաջողության համար հաճախ հարրուստ մարդու մի խոսքն էլ բավական է։ ո՛չ փող է պետք, ո՛չ տեղեկանք, ո՛չ էլ կոնկրետ պարտավորություն, ոչինչ, միայն նրա խոսքը։ Երբ շշուկներ էին պտտում, թե որևէ գործի հետեւում կանգնած են «Դրեքսել և Ընկ.», «Ձեյ Կուք և Ընկ.» կամ «Գովդ ու Ֆրենկեն», ապա դա համարվում էր հուսալի։ Երիտասարդ ֆիլադելֆիացի Ձեյ Կուքը մի հիանալի գործառնություն կատարեց։ Հանձն առավ Դրեքսելի հետ իրացնել նահանգի բաց թողած փոխառությունը և ծախեց դա անվանական գներով։ Հանուր կարծիքով փոխառությունը կարող էր տարածվել միայն հարյուրը իննսուն դոլարի գնով։ Կուքը շհամածայնեց այդ կարծիքին։ Նա կարծում էր, որ սեփական նա-

Հանգի համար զգացած հպարտությունը և քաղաքացիների հայրենասիրությունը կօգնեն իրացնելու փոխառությունը մանր բանկերի ու մասնավոր անձանց շրջանում, այնպես որ բաժանորդագրության գումարը կծածկի բաց թողած գումարը, թերևս նույնիսկ ավելի: Հետագա դեպքերը հաստատեցին, որ ճիշտ էր Կուքի հաշիվը, և դա ամրապնդեց նրա գործարարական հոչակը: Քառուիկերվուդն էլ շատ էր ցանկանում մի այդպիսի բան անել, բայց նա բավականին գործնական էր, որպեսզի չնախանձեր Կուքին, որովհետև միշտ ենում էր փաստերից և իրական հնարավորություններից:

Նրա ժամը եկավ կես տարի հետո, երբ պարզվեց, որ Պենսիլվանիային շատ ավելի փող պետք կլինի: Այն զինվորներին, որ հավաքագրել էր նահանգը ըստ մասնահատկացման, պետք էր հանդերձավորել ու վճարել: Բացի դրանից, պետք էր մի շարք պաշտպանական միջոցառումներ կատարել և ի լրումն դրա՝ ծածկել գանձատան պակասը: Օրենսդիր ժողովը երկար վիճաբանություններից հետո, վերջապես թույլ տվեց քսաներեք միլիոն դոլարի ներքին փոխառություն բաց թողնել: Ֆինանսական շրջաններում աշխուժորեն քննարկում էին այն հարցը, թե ում է հանձնարարվելու փոխառության իրացումը, և ամենից առաջ տալիս էին Դրեքսել և Ջեյ Կուք ընկերությունների անունները:

Քառուիկերվուդը շատ էր մտածում այդ մասին: Եթե ինքը ձեռք բերի այդ հսկայական փոխառության մի մասն իրացնելու լիազորությունը, հազիվ թե ի վիճակի լինի ամբողջովին գլուխ բերել, քանի որ բավականաշափ կապեր չունի, թեն զգալի կերպով կրաքարացնի բորսայական միջնորդի իր համբավը և միաժամանակ բավական փող կվճարվի իրեն: Իսկ ի՞նչ գումար կարող է հանձն առնել: Ահա այս է հարցը: Ո՞վ կուգենա նրանից ձեռք բերել պարտատոմսերը: Հոր բանկը: Շատ հավանական է: «Ուտթերմեն և Էնկ.»: Մի փոքր գումարով միայն: Դատավոր Քիտչե՞նը: Չնշին մի քանակ: «Միլս-Փեիդ» ընկերությունը: Այո՛: Եվ նա սկսեց մտքում թվել այն ձեռնարկություններն ու մասնավոր անձանց, ովքեր այս կամ այն նկատառումներով (անձնական բարեկամությունից դըրդ-

ված, հարմարվող բնավորության, անցյալում մատուցված ծառայության և այլ պատճառներով) նրա միջոցով կբաժնեցվեին այդ յոթ տոկոսանի պարտառումսերի մի մասին: Ֆրենկն ի մի գումարեց իր հնարավորությունները և տեսավ, որ նախնական որոշ «մշակումից» հետո ամենայն հավանականությամբ կկարողանա իրացնել մեկ միջիոն դոլլարի պարտառումս, եթե Ֆիլադելֆիայի քաղաքական ազդեցիկ գործիշները նպաստեն, որ փոխառության այդ մասը տրվի իրեն:

Ֆրենկն ամենամեծ հույսը դնում էր ոմն էղուարդ Մելիա Բաթլերի վրա, որն աշքի զգարնող, բայց խիստ կարեոր կապեր ուներ քաղաքական աշխարհում: Բաթլերը կապալառու էր՝ ստանձում էր կոյուղու ու ջրմուղի խողովակներ անցկացնելու, հիմքեր զցելու, փողոցներ սալահատակելու աշխատանքներ և այլն: Վաղուց անցած տարիներին, Քառուիերվուտքը նրան ծանոթանալուց շատ առաջ, Բաթլերը ոիսկով ու պատասխանատվությամբ աղբը դուրս տանելու կապալ էր վերցնում: Այդ ժամանակ քաղաքը տակավին չգիտեր ինչ բան է փողոցները կանոնավորապես մաքրել, առավել ևս ծայրամասերում և չքավորությամբ բնակեցված մի քանի հին շրջաններում: Էղուարդ Բաթլերը, որ այն ժամանակ մի չքավոր իուզանդացի էր, սկսեց անվճար կուտակել ու տանել այն թափոնքը, որ դառնում էր իր խողերի ու անասունների կեր: Հետագայում նա տեսավ, որ կան մարդիկ, որ պատրաստ են մի քան վճարել այդ ծառայության համար: Իսկ ավելի ուշ տեղական մի գործիշ, քաղաքապետարանի անդամ ու Բաթլերի բարեկամը (երկուսն էլ կաթոլիկ էին) նայեց այդ գործին բոլորովին այլ տեսակետից: Ինչո՞ւ Բաթլերին չնշանակել աղբի պաշտոնական հավաքող: Քաղաքապետությունը կարող է այդ նպատակով ամենայա հատկացումներ անել: Բաթլերին հնարավորություն կտրվի գործի դնել մի քանի երկվեցյակ աղբատար ֆուրգոն: Ավելին՝ քաղաքում ուրիշ ոչ մի աղբահավաք չի մնա: Հիմա այդպիսիք իհարկե կան, սակայն Բաթլերի ու քաղաքապետության մեջ կնքված պաշտոնական պայմանադիրն ամեն մի մրցակցության վերջ կտա: Այս միանգամայն ձեռնըտու գործի վաստակի մի մասից հարկ կլինի հրաժարվել՝

սիրաշահելու ու հանգստացնելու համար նրանց, ում կապալ չէին տվել, Ընտրությունների ժամանակ հարկ կլինի դրամ փոխ տալ մի քանի կազմակերպությունների ու առանձին անձանց, բայց դա դժբախտություն չէ, խոսքը փոքր գումարների մասին է: Այսպիսով՝ Բաթլերը և քաղաքապետության անդամ Պատրիկ Կեին Կոմիսսարին գործարար համաձայնություն կնքեցին (Կոմիսսարին իհարկե գաղտնի): Բաթլերն արդեն աղբատար ֆուրգոն չէր ման ածում: Նա վարձեց իր կողքըն ապրող իուլանդացի մի ճարպիկ պատանու՝ անունը Զիմի Շիհեն, որը դարձավ նրա օգնականը, կառավարիչը, ձիապահը, հաշվապահը, մի խոսքով՝ ամե՛ն ինչ: Շատ շանցած՝ Բաթլերն սկսեց տարեկան շորսից հինգ հազար վաստակել. առաջ դժվարությամբ էր երկու հազար քամում, փոխադրվեց քաղաքի հարավային ծայրամասում գտնվող մի աղյուսաշեն տուն ու երեխաններին դպրոց ուղարկեց: Միսիս Բաթլերը դադարեց օճառ եփել ու խոզեր բուծել: Այդ ժամանակից սկսած բախտը միշտ բարյացակամ եղավ էղուարդ Բաթլերի հանգեպ:

Առաջ նա ո՛չ կարդալ գիտեր, ո՛չ էլ գրել, բայց հիմա իհարկե գրագիտություն սովորեց: Կոմիսսար հետ ունեցած գրուցներից նա պարզեց, որ կան նաև այլ կապալներ՝ օրինակ, կոյուղու, ջրմուղի ու գազատար մայրուղիների անցկացում, փողոցների սալահատակում և այլն: Էլ ո՞վ պետք է հանձն առնի դրանք, եթե ոչ էղուարդ Բաթլերը: Սա ծանոթ է քաղաքապետության շատ անդամներին. հանդիպում է նրանց դարեցրատների հետեւ սենյակներում, ճաշկերույթներում, որ կաղմակերպում են քաղաքի կառավարիչները շաբաթ ու կիրակի օրերին, նախրնարական խորհրդակցությունների ու նիստերի ժամանակ, որովհետև ճաշակելով քաղաքի առատաձեռնություններից՝ պետք է օգներ նրան ոչ միայն դրամով, այլև խորհուրդով: Հետաքրքիր է, որ շուտով Բաթլերը քաղաքական արտասովոր կանխատեսովթյուն երևան բերեց: Բավական էր, որ նայեր մի մարդու, որպեսզի ասեր՝ առաջընթաց կոմենաշարդյոք նա: Նրա հաշվապահներից, կառավարիչներից ու տաբելավարներից շատերը ուրծածան քաղաքապետարանի

կամ օրենսդիր ժողովի անդամ: Ընտրությունների ժամանակ առաջադրած նրա թեկնածուներն անցնում էին հաջողությամբ: Ազգբում նա ազդեցություն ձեռք բերեց այն շրջանում, որտեղ քվեարկվում էր նրա դրածոն, այնուհետև իր ընտրական տեղամասում, հետո էլ իր կուսակցության, իհարկե վիգերի¹, քաղաքային ժողովներում, և վերջապես նրան համարեցին քաղաքական ինքնուրույն կազմակերպության պարագլուխը:

Ինչոք խորհրդավոր ուժեր քաղաքապետարանում աշխատում էին հօգուտ նրան: Նրան էին բաժին ընկնում խոշոր կապալները, նա մասնակցում էր բոլոր աճուրդներին: Աղքահավաքման աշխատանքի մասին նա անգամ մոռացել էր մտածել: Միատր Բաթլերի մեծ տղան՝ Օուենը, օրենսդրական ժողովի անդամ էր և հոր բաժնընկերը: Երկրորդ տղան՝ Քելեմը, պաշտոնավարում էր քաղաքի շրամատակարարման բաժնում, նույնպես և մասնակցում էր հոր գործերին: Մեծ աղջկը՝ տասնհինգամյա էլլինը, դեռ սովորում էր սուրբ Ագաթ վանքի գիշերօթիկ դպրոցում՝ Զերմանիայում: Մյուսը՝ տասներեք տարեկան նորան, ընտանիքի ամենակրտսերը, գնում էր կաթոլիկ միանձնուհիների հսկողության տակ գտնվող մասնավոր դպրոց: Բաթլերների ընտանիքը Ֆիլադելֆիայի հարավային մասից տեղափոխվեց Ջիրարդ պլուտան՝ ավելի մոտ արխտուրատական թաղամասին, ուր արդեն ծնունդ էր առնում «բարձր դասի» եռուն կյանքը: Բաթլերները չեին պատկանում ընտրյալ շրջանակին, բայց ընտանիքի պետը՝ հիսնամյա կապալառուն, որ համարյակես միշտոն «արժեր», շատ բարեկամներ ուներ քաղաքական ու ֆինանսական աշխարհում: Ասենք նա այլևս առաջվա «անտաշ հաղթանդամ երիտասարդը» չէր, այլ մի ամրակազմ մարդ՝ գեմքը կարմրավուն ու թեթևակի քամհարված, ալեհեր, գորշակն, լայնաթիկունք ու հզորալանջ, տիպիկ իռանդացի: Հարուստ կենսափորձը նրա գեմքին տվել էր հանդարտ,

1 Վիգերի ոեակցիոն կուսակցությունը կազմվեց 1834 թ. պրեզիդենտ Էնդրյու Ջեկսոնի դեմ պայքարելու համար:

իմաստնացած ու անթափանցելի արտահայտություն։ Խոշոր ձեռքերն ու ոտքերը հիշեցնում էին այն օրերը, երբ նա դեռ չէր հագնում անզիական մահուգեց հիանալի կոստյումներ ու դեղին կոշիկ, բայց «ուամկական» ոչինչ չէր մնացել նրա մեջ, և մեծ արժանապատվությամբ էլ պահում էր իրեն։ Ճիշտ է՝ առաջվա պես էլ իրանդական առողջանությամբ էր խոսում, բայց միշտ էլ աշխույժ, սիրալիր ու համոզիչ։

Նա առաջիններից մեկն էր, որ հետաքրքրվեց քաղաքացին երկաթուղիների շինարարությամբ և Քառուկերը ուղիղ ու շատ ուրիշների նման հանգեց այն եղրակացության, որ այդ գործը մեծ ապագա ունի։ Լավագույն ապացույցն իր գնած բաժնետոմսերի բերած եկամուտն էր։ Բաթլերը գործում էր միջնորդների միջոցով, որովհետեւ դրանց կազմակերպվելու շրջանում շկարողացավ մտնել այդ ձեռնարկությունների մեջ։ Նա գնում էր բոլոր ձիաքարշ երկաթուղային ընկերությունների բաժնետոմսեր՝ կարծելով, որ դրանցից ամեն մեկի առաջ բացվում են հիանալի հեռանկարներ, բայց ամենից ավելի տեսնչում էր ամրուցովին իր ձևոքն առնել մեկ կամ երկու գծի վերահսկողությունը։ Սյու մտադրությունը գլուխ բերելու համար նա որոնում էր մի վստահելի, ընդունակ ու ազնիվ երիտասարդի, որը գործի իր ցուցումներով, կատարի այն ամենը, ինչ կասեն նրան։ Մեկը հանձնարեց Քառուփերվուդին, նա էլ նամակով կանչեց սրան։

Քառուկերվուդը ներկայացավ անհապաղ, որովհետև շատ էր լսել Բաթլերի, նրա կարիերայի, կապերի ու ազգեցության մասին։ Փետրվարյան մի շոր ու ցուրտ օր Ֆրենկը ուղղվեց Բաթլերի տունը։ Հետագայում նա հաճախ վերհիշում էր այդ փողոցը՝ աղյուսե լայն մայթերը, թեթեակի ծյունով ծածկված սալահատակը, վտիտ ու մերկացած փոքրիկ ծառերը և լապտերների սյուները։ Բաթլերի տունը թեև նոր չէր (գնելուց հետո նորոգել էր) ժամանակի ճարտարապետության վատ նմուշ չէր։ Ճակատի կողմից հիսուն ոտնաշափ ունեցող այդ քառահարկ տունը շինված էր գորշ կրաքարից, շորս լայն ու սպիտակ աստիճան տանում էին դեպի շքամուտքը։ Սպիտակ շրջակալ ունեցող լուսամուտները V տառի ձև ունեին, ներսից

ծածկված էին ժանյակե վարագույրներով, և կահույքի կարմիր թափեցը, որ թեթևակի արտացոլվում էր ժանյակների միջից, ցուրտ ու ձյունապատ փողոցից առանձնապես անդորրավետ էր թվում:

Պճնված իոլանդու՞ի աղախինը դուռը բացեց Քառիկերվուդի առաջ. սա ներս մտավ և իր այցետոմսը տվեց նրան:

— Պարոն Բաթլերը տա՞նն է;

— Չեմ կարող ասել, սը՛ր: Հիմա կիմանամ: Թերես դուրս է եկել:

Մի քանի րոպե անց Ֆրենկին առաջնորդեցին վեր: Բաթլերն ընդունեց նրան մի քիչ գրասենյակ հիշեցնող սենյակում: Յյոտեղ կար գրասեղան, փայտե բազկաթոռ, կաշեպատ մի քանի կարասի և գրապահարան: Այդ բոլոր իրերն այնպես էին տեղադրված, ինչպես կահույքը չեն տեղադրում ո՛չ գրասենյակում, ո՛չ էլ բնակելի տանը: Պատից նկարներ էին կախված. մեկը, որ յուղաներկ էր, բոլորովին աներեակայելի բան էր՝ մուգ ու մոռայլ. մյուսը վարդագույն ու ճապաղ կանաչ երանգներով՝ պատկերում էր ջրանցք, ընթացող բեռնանավը վրան, վերջապես ազգականների ու բարեկամների մի քանի ոչ վատ դագեռոննկար¹... Քառիկերվուդն ուշք դարձրեց երկու աղջիկների թեթևակի գոյնավորված սքանչելի նկարին. մեկի վարսերը շեկ-ոսկեգույն էին, մյուսինը՝ շագանակազույն ու հավանորեն մետաքսանման: Դրանք քելտական տիպի անուշիկ, առողջ և ուրախ աղջիկներ էին. նրանց գլուխները համարյա դիպլում էին իրար, աշքերը շեշտակի նայում էին դիտողին: Ֆրենկը զմայլված դիտեց և մտածեց, որ երսի տնատիրոջ դստրերն են:

— Միստր Քառիկերվուդ, — դիմավորեց նրան Բաթլերը. Նա տարօրինակ կերպով երկարացնում էր ձայնավորները և ընդհանրապես դանդաղաշարժ, ծանրումնեծ և մտածկոտ մարդ էր:

Ֆրենկն ուշք դարձրեց նրա ամուր, հին կաղնու նման ուժեղ, անձրեցից ու հողմերից կոփված մարմնին: Նրա դեմքի

¹ Ֆրանսիացի գյուտարար Լուի Դագենի անունով էին կոչվում առաջին լուսանկարները: Ս. թ.

մաշկը պիրկ ձգված էր, ասենք նա ամբողջովին ձգված ու հավաք էր:

— Այո,— պատասխանեց Յորենկը:

— Մի փոքրիկ գործ ունեմ ձեզ հետ՝ բաժնետոմսեր գնելու վերաբերյալ, և մտածեցի ավելի լավ է գաք ինձ մոտ, բան ես գամ ձեր գրասենյակը: Այստեղ կարող ենք խոսել դեմ առ դեմ, բացի գրանից, տարիքս էլ արդեն այն չէ:

Եվ թեթևակի կկոցելով աշքերը՝ նայեց հյուրին:

Քառուիկերվուղը ժպտաց:

— Պատրաստ եմ ձեզ ծառայելու, — բարեկիրթ պատասխանեց նա:

— Այժմ մի բան է շահագրգում ինձ. ուզում եմ բորսայում ձեռք բերել մի քանի ձիաքարշային երկաթուղիների բաժնետոմսեր: Մանրամասնությունները հետո հհայտնեմ ձեզ: Զէ՞ք ուզենա մի բան խմել: Յուրաք է այս առավոտ:

— Ծնորհակալ եմ. ես երբեք չեմ խմում:

— Երբե՞ք: Կատակ եք անում, եթե խոսքը վիսկիի մասին է: Բայց այսողես թե այնպես գուլելի չէ: Իմ տղաներն էլ մի կաթիլ բերան չեն առնում, և ես շատ ուրախ եմ դրա համար: Ուրեմն ուզում եմ բորսայում ձեռք բերել որոշ բաժնետոմսեր, բայց ճիշտն ասեմ ձեզ՝ է՛լ ավելի ուզում եմ գտնել մի աշքաբաց երիտասարդ, ինչպես ասենք դուք, որի միջոցով կարողանամ գործել: Դուք հո գիտեք, որ մի գործ միշտ իր հետ է բերում մի ուրիշը, — և Բաթլերը նայեց հյուրին փորձող, բայց և բարյացակամ հայացքով:

— Շատ ճիշտ է, — համաձայնեց Քառուիկերվուղը՝ ի պատասխան հյուրընկալի հայացքին բարեհամբույր ժպտալով:

— Բա՛, — մատածկուա ասաց Բաթլերը՝ շգիտես իրեն, թե Քառուիկուղին դիմելով, — խելքը գլխին երիտասարդը ինձ խիստ օգտակար կարող էր լինել գործերում: Երկու որդի ունեմ. անխելք տղաներ չեն, բայց ես չեմ ուզում, որ խաղան բորսայում, և եթե նույնիսկ ուզենայի, շգիտեմ, գուցե և նըրանք շկարողանային: Բայց ճիշտն ասած՝ բանը դա չէ: Ես ընդհանրապես շատ եմ զբաղված և ինչպես ասացի տարիքը արդեն այն չէ: Հիմա ես այնքան էլ դյուրաշարժ չեմ: Իսկ եթե

Հարմար երիտասարդ լիներ մոտս (ի գեպ՝ ամեն ինչ իմացել եմ ձեր աշխատանքի մասին), կկարողանար կատարել զանազան ոչ խոշոր հանձնարարություններ բաժնետոմսերի ու փոխառությունների գծով. դրանք երկուսին էլ մի բան կտային: Հաճախ այս կամ այն հարցի մասին ինձ խորհուրդ են հարցնում երիտասարդներ, ովքեր կուզենային իրենց դրամագլուխը ներդնել գործի մեջ, այնպես որ...

Նա լրեց և, ասես ձեռ առնելով հյուրին, սկսեց նայել պատուհանին, շատ լավ իմանալով, որ շահագրգուեց Քառվիերլուղին և որ գործարարական աշխարհում ազդեցություն ունենալուն և առետրական կապերին վերաբերող այս խոսակցությունն է՛լ ավելի կրորեքի նրան: Բաթլերը հասկացրեց, որ այդ գործերի մեջ գլխավորը հավատարմությունն է, տակտը, ճարտարամտությունն ու գաղտնապահությունը:

— Ինչո՞ւ չէ, եթե դուք տեղեկացել եք, թե ինչ եմ անում ես...— նկատեց Ֆրենկը՝ այս խոսքերին միացնելով իր համար հատկանշական ժապիտը և շավարտելով նախադասությունը:

Բաթլերն այս սակավաթիվ բառերի մեջ ուժ և համոզչություն զգաց: Նրան զուր էր գալիս երիտասարդի զսպվածությունն ու հավասարակշռությունը: Քառվիերլովուդի մասին շատերից էր նա լսել: (Այժմ ֆիրման կոչվում էր «Քառվիերլովուդ և Ընկ.»), ըստ որում «ընկերությունը» բոլորովին շինծու էր): Նա մի քանի հարցեր ևս տվեց Ֆրենկին բորսայի և շուկայի ընդհանուր գրության մասին, տեղեկացավ, թե ինչ է նա իմանում երկաթուղիների վերաբերյալ և ի վերջո շարադրեց իր ծրագիրը՝ այն է, որքան կարելի է շատ գնել իններորդ. Տասներորդ, Տասնհինգերորդ և Տասնվեցերորդ փողոցների ձիաքարշային գծերի բաժնետոմսեր, բայց որքան կարելի է կամաց, առանց աղմուկ հանելու: Այստեղ հարկ կլիներ զգուց գործել՝ բաժնետոմսերի մի մասը գնելով բորսայի միջոցով, մի մասն էլ առանձին ունեցողներից: Բաթլերը շասաց, թե մտադիր է ճնշում գործադրել օրենսդրական օրդանների վրա և թույլատրություն ստանալ շաբունակելու հիմիկված ծայրակետերը, որպեսզի, երբ աշխատանքներին ձեռնամուխ լինելու

ժամանակը գա, շշմեցնի երկաթուղային կոնցեռները՝ հայտարարելով, որ դրանց խոշորագույն բաժնետերերը Բաթլերներն են՝ հայրը կամ որդիները։ Հեռատեսային մի ծրագիր, որը նպատակամիտում էր վերջին հաշվով այդ գծերը ամբողջովին Բաթլեր ընտանիքի ձեռքն անցնելուն։

— Ես երջանիկ կլինեմ գործակցելու ձեզ հետ, միստր Բաթլեր, ինչ կերպ որ դուք ուզեք, — ասաց Քառուփերվուդը։ Ես չեմ ասի, թե հիմա արդեն մեծ գործ ունեմ. սա դեռ սկիզբն է։ Բայց լավ կապեր ունեմ։ Ես նյութորքի և Ֆիլադելֆիայի բորսաների անդամ եմ։ Ովքեր առիթ են ունեցել գործ ունենալու ինձ հետ, միշտ, իմ կարծիքով։ Գոհ են մնացել արդյունքից։

— Զեր աշխատանքի մասին ես արդեն որոշ բան գիտեմ, — կրկնեց Բաթլերը։

— Շատ լավ! Երբ ես ձեզ պետք լինեմ, դուք թերևս անցնեք իմ գրասենյակը կամ գրեք ինձ, և ես կգամ ձեզ մոտ Կհայտնեմ ձեզ իմ գաղտնի կողը, այնպիս որ ձեր գրած ամեն բանը խստորեն ծածուկ կմնա։

— Լավ, լավ! Հիմա է՛լ այդ մասին չենք խնսի։ Շուտով կրկին կտեսնվենք։ Եվ այն ժամանակ իմ բանկում որոշ գումարով վարկ կբացվի ձեզ համար։

Նա վեր կացավ ու պատուհանից դուրս նայեց։ Քառուփերվուդը նույնպես ոտքի ելավ։

— Կարծեմ լավ եղանակ է այսօր։

— Հիանալի՞ եղանակ։

— Լավ, ես հավատացած եմ, որ ժամանակին մենք ավելի կիստիկանանք իրար։

Եվ ձեսքը պարզեց Քառուփերվուդին։

— Ես ես հուսով իմ։

Քառուփերվուդը դիմեց դեպի դուռը, և Բաթլերը ուղեկցեց նրան մինչև այնտեղ։ Այդ րոպեին փողոցից ներս վաղեց մի դեռատի, շառագունած կապուտաշվի աղջիկ՝ կնգուղավոր հիանալի թիկնոցը շեկ ոսկեգույն վարսերին գցած։

— Վա՛յ, հայրիկ քիչ մնաց գլորեի ձեզ։

Նա ժպտաց հորը, միաժամանակ և Քառուփերվուդին խըն-

գուն, լուսաշող ու անհոգ ժպիտով։ Նրա ատամները փայլուն
էին ու մանր, իսկ շրթունքները ասես կարմիր կոկոն լինեին։

— Այսօր շուտ վերադարձար, Կարծում էի, թե ամբողջ
օրով ես գնացել։

— Այդպես էլ ուղում էի, բայց հետո միտքս փոխեցի։
Եվ թափահարելով ձեռքերը՝ անցավ առաջ։

— Ուրեմն, — շարունակեց Բաթլերը, երբ աղջիկը այլևս
չերեաց, — սպասենք մի երկու օր։ Ցտեսությո՛ւն։

— Ցտեսությո՛ւն։

Քառուփերվուզը իջնում էր սանդուղքից ուրախ, որ ֆի-
նանսական գործունեության հեռանկարներ են բացվում իր
առաջ, և հանկարծ նրա երեսակայության մեջ հառնեց իր
հանդիպած շառագունած աղջիկը՝ երիտասարդության կենդանի
մարմնացումը։ Որքա՞ն պայծառ, առողջ ու կենսուրախ էր
նա։ Նրա ձայնից հնչում էր տասնհինգ կամ տասնվեց տարի-
ների ամբողջ թարմությունն ու առուցք ուժը։ Կյանքը բխում
էր նրա մեջ աղբյուրի պես։ Համեղ մի պատառ, որ ժամանա-
կին բաժին կհասնի որևէ երիտասարդի՝ գումարած դրա վրա
և այն, որ հայրը կհարստացնի այդ տղային կամ ամենապա-
կասը՝ կնպաստի նրա հարստանալուն։

Գ Լ Ո Ւ Խ Խ II

Էդուարդ Մելիքա Բաթլերին էլ գիմեց Քառուփերվուզը գրեթե
երկու տարի անց, երբ մտածեց, որ ինքը կարող էր հասնել
խիստ աղղեցիկ դրության, եթե իրեն հանձնարարեին տարա-
ծել բաց թողած փոխառության մի մասը։ Հնարավոր է, որ
Բաթլերն ինքն էլ կշահագրգովի պարտատոմսերի մի կապոց
ձեռք բերելով և ոչ թե պարզապես կօգնի իրեն տեղավորելու
դրանք։ Այդ միջոցին Բաթլերն արդեն անկեղծ համակրում
էր Քառուփերվուզին և սրա մատյաններում գրանցված էր որ-
պես արժեթղթերի խոշոր գնորդ։ Քառուփերվուզին նույնպես
դուր էր գալիս նաև Բաթլերի կյանքի ամբողջ պատկառելի իուանդացին։
Դուր էր գալիս նաև Բաթլերի կյանքի ամբողջ պատմությունը։
Ծանոթացել էր նրա կնոջ՝ խիստ գեր ու պաղարյուն իուանդու-

Հուն: Սա խելացի կին էր, ու մի ցուցադրական բան չէր կարողանում հանդուրժել և մինչև հիմա էլ սիրում էր մտնել խոհանոց և անձամբ ղեկավարել ճաշեփր: Ֆրենկն արդեն ծանոթ էր և Բաթլերի որդիների՝ Օռւենի ու Քելեմի, ինչպես նաև դստրերի՝ Նորայի ու Էլլինի հետ: Էլլինը հենց նա էր, որին բախվել էր սանդուղքի վրա նախանցյալ տարի, երբ առաջին անգամ այցելել էր Բաթլերին:

Երբ Քառվերվուդը մտավ Բաթլերի յուրատեսակ կաբինետ-գրասենյալը, բուխարու մեզ մարմանդ պլազում էր կրակը: Գարունը մտենում էր, բայց երեկոները դեռ ցուրտ էին: Միստր Բաթլերը հյուրին առաջարկեց հարմարավետ նստել կաշեպատ խոր բազկաթոռին՝ կրակի մոտ և պատրաստվեց լսել նրան:

— Հըմ, դա այնքան էլ հեշտ գործ չէ,— ասաց նա, երբ Քառվերվուդը վերջացրեց: — Զէ՞ որ դուք ինձնից ավելի լավ եք հասկանում այդ գործերը: Ինչպես գիտեք, ես ֆինանսիստ չեմ, — և ժպտաց՝ ասես ներողություն խնդրելով:

— Ես գիտեմ, որ դա աղդեցության ու հովանավորության հարց է, — շարունակեց Քառվերվուդը: — «Դրեքսել և Ընկ.», «Կուք և Ընկ.», կապեր ունեն Հարիսրուրգում: Այնտեղ նրանք ունեն իրենց շահերը պաշտպանող հավատարիմ մարդիկ: Նահանգի գլխավոր դատախազի ու գանձապետի հետ խիստ բարեկամական հարաբերություններ ունեն: Եթե նույնիսկ ես մասնակցեմ աճուրդին և ապացուցեմ, որ կարող եմ հանձն առնել վոխառության տարածումը, մեկ է՝ այդ գործը չեն հանձնարարի ինձ: Հաճախ է արդեն այդպես եղել: Ես պետք է ապահովեմ բարեկամների սատարը, նրանց ազդեցությունը, դուք Հո դիտեք, թե ինչպես են գլուխ բերվում այդպիսի գործերը:

— Բավական հեշտ են գլուխ բերվում, երբ որոշակի գիտենք, թե ում ենք դիմելու, — ասաց Բաթլերը: — Վերցնենք, օրինակի համար, Զիմմմի Օլիվերին. նա պետք է շատ թե քիչ տեղյակ լինի գործին:

Զիմմի Օլիվերն այդ ժամանակ շրջանային դատախազ էր և մերթ-մերթ արժեքավոր խորհուրդներ էր տալիս Բաթ-

լեղին: Երջանիկ պատահականությամբ նա միաժամանակ և նահանգի գանձապետի բարեկամն էր:

— Իսկ փոխառության ո՞ր մասի վրա աշք ունեք:

— Հինգ միլիոնի:

— Հինգ միլիոնի, — ուղղվեց Բաթլերն իր բազկաթոռի մեջ: — Այդ ի՞նչ եք ասում, սիրելի՞ս: Զէ՞ որ դա փոքր գումար չէ: Որտե՞ղ եք տեղավորելու այդշափ պարտատոմսեր:

— Ես հինգ միլիոնի հայտ կներկայացնեմ, — փափկությամբ հանգստացրեց Քառուփերվուղը, — բայց կստանամ մեկ միլիոն, իսկ այդ հայտը կբարձրացնի իմ հեղինակությունը, իսկ հեղինակությունը նույնպես արժեքավորվում է շուկայում:

Բաթլերը թեթևացած շունչ քաշեց ու հենվեց բազկաթոռի թիկնակին:

— Հինգ միլիոն, հեղինակություն: Մինչդեռ ուղում եք միայն մեկ միլիոն: Ի՞նչ արած, որ այդպես է՝ գործը փոխվում է: Ճիշտն ասած՝ վատ չէ այդ միտքը: Մենք երկի կարողանանք ճարել այդ գումարը:

Նա ձեռքով սղալեց կզակը և հայացքը հառեց կրակին:

Այդ երեկո Քառուփերվուղը Բաթլերի մոտից վերադառնալիս չէր տարակուսում, որ սա չի խարի իրեն և գործի կդնի իր ամբողջ մեքենան: Ըստ այդմ նա բնավ էլ շզարմացավ ու շատ լավ հասկացավ, թե ինչ է նշանակում այն, որ մի քանի օր անց իրեն ներկայացրին քաղաքի դանձապետ Զուլիան Բոուլին, ստ էլ իր հերթին խոստացավ ծանոթացնել նրան նահանդի գանձապետ Վան-Նոստրենդի հետ և հոգ տանել, որ Քառուփերվուղի առաջարկությունը քննության առնվի:

— Դուք իհարկե գիտեք, — ասաց նա Քառուփերվուղին Բաթլերի ներկայությամբ, ում տանը տեղի էր ունենում այս տեսակցությունը, — որ բանկային կլիկը շատ հզոր է: Դուք գիտեք, թե ով է գլխավորում: Նրանք չեն ցանկանում, որ փոխառությունը թողարկելու գործին միջամտեն կողմնակի մարդիկ: Ես խոսակցություն ունեցա Թերենս Ռելիխենի՝ այնտեղ, վերը ունեցած նրանց ներկայացուցչի (նա նկատի ուներ նահանգի մայրաքաղաք Հարիսբուրգը) հետ, որը հայտարարեց, թե ոչ մի միջամտություն չեն հանդուրժի փոխառության

գործում։ Դուք կարող եք բավական անախորժություններ ունեցնալ այստեղ՝ Ֆիլադելֆիայում, եթե հասնեք ձեր ուղածին. չէ՞ որ նրանք շատ հզոր մարդիկ են։ Իսկ դուք արդեն պատկերացնո՞ւմ եք, թե որտեղ պետք է տեղավորեք փոխառությունը։

— Այո, պատկերացնում եմ, — պատասխանեց Քառվիերվուդը։

— Դե լավ. իմ կարծիքով հիմա ամենից լավը շշաղակրատելն է։ Հայտներկայացրեք ու պրծավ գնաց։ Վան-Նոստրենդը, նահանգապետի համաձայնությամբ, կհաստատի։ Իսկ երբ հաստատումը ձեռք բերեք, հավանորեն կցանկանան մեծ խոսակցություն սկսել ձեզ հետ, իսկ դա արդեն ձեր գործն է։

Քառվիերվուդը ժպտաց իր անթափանցելի ժպիտով։ Որքան բազմազան ելումուտեր կան ֆինանսական այդ աշխարհում։ Ստորերկրյա հոսանքների մի իսկական լարիրինթոս։ Մի քիչ խորաթափանցություն, մի քիչ աշքաբացություն, մի քիչ հաջողաւթյուն՝ ժամանակ ու առիթ. ահա թե մեծ մասամբ ինչն է լուծում զործի Վերցնենք թևկուլ իրեն. բավական էր, որ ինքը զգար կարիերա ստեղծելու փառասիրական ցանկություն, միայն ցանկություն, ուրիշ ոչինչ, և ահա կապ է հաստատել նահանգի գանձապետի ու նահանգապետի հետ։ Նըրանք անձամբ պիտի քննեն իր գործը, որովհետև ինքն այդպես պահանջեց։ Մյուսը, իրենից ավելի ազդեցիկ, գործարարները փոխառությանը մասնակցելու միջտ այդպիսի իրավունք ունեին, բայց չկարողացան այդ իրավունքից օգտվել։ Համարձակություն, նախաձեռնություն, ձեռներեցություն՝ որքան մեծ նշանակություն ունեն սրանք, գումարած և բարերախառնիլ։

Մեկնելիս Ֆրենկը մտածում էր, թե որքան կզարմանան «Կուք և Ընկ.», «Թրեքսել և Ընկ.», երբ իմանան, որ ինքը հանդես է եկել որպես նրանց մրցակից։ Տանը նա բարձրացավ երկրորդ հարկը, ննջասենյակի կողքի փոքր սենյակը, որը դարձրել էր աշխատասենյակ. այդտեղ կար գրասեղան, անկեզ պահարան և կաշեպատ բազկաթոռ, և սկսեց ստուգել իր միջոցները։ Նա շատ բան մտմտալու ու կշռելու կարիք ուներ։

Նորից նայեց այն անձանց ցուցակները, որոնց հետ արդեն պայմանավորվել էր և որոնց բաժնեգրվելու վրա կարող էր համարձակորեն հույս դնել: Մեկ միլիոն դոլարի պարտատոմսեր տեղաբաշխելու հարցը չէր անհանգստացնում նրանք, իր հաշիվներով պետք է վաստակեր ընդհանուր գումարի երկու տոկոսը, այսինքն քսան հազար դոլար: Եթե գործը գլուխ գա, որոշել էր գնել մի տուն Զիրարդ պողոտայում, Բաթլերներից քիչ հեռու, բայց գուցե և ավելի լավ կաներ, եթե մի հողամաս ձեռք բերեր ու սկսեր շինել: Շինարարության փող կճարի՝ գրավ դնելով հողամասն ու տունը: Հոր գործերը բնավ էլ վատ շեն ընթանում: Թերեւ նա էլ ուզենա կողքին տուն շինել, այնժամ դուռ դռան կից կապրեն: Գրասենյակն այս տարի, անկախ փոխառության գործառնությունից, պետք է տա մի տասը հազար: Ֆրենկի ներդրումները ձիաքարշում, որ համնում էին հիսուն հազար դոլարի, տարեկան վեց տոկոս օգուտ էին բերում: Իր կնոջ կարողությունը՝ իրենց այժմյան տունը՝ պետական փոխառությունների պարտատոմսերը և ֆիլադելֆիայի արևմտյան մասում եղած անշարժ ունեցվածքը, կազմում էին ևս քառասուն հազար: Հարուստ մարդ էր ինքը, բայց հույս ուներ շուտով ավելի հարստանալ: Հիմա պետք է միայն գործել խելացիորեն ու սառնարյուն: Եթե փոխառության գործառնությունը հաջող ընթանա, կարող է իրինել այն և նույնիսկ ավելի մեծ չափով. չէ՞ որ դա փոխառության վերջին թուղարկաւմը չէ: Մի քիչ էլ նստելուց հետո նա հանգցրեց լուսը և գնաց կնոջ մոտ, որ արդեն քնել էր: Դայակն ու երեխաները զբաղեցնում էին սանդուղքի մյուս կողմը եղած սենյակը:

— Ուրեմն այսպես, կիլիա'ն,— ասաց նա, երբ սա արթնացավ ու շրջվեց նրա կողմը,— ինձ թվում է, թե փոխառության գործը, որի մասին պատմել եմ քեզ, հաջողվելու վրա է: Ես հավանորեն տեղաբաշխելու համար ստանամ մեկ միլիոն: Դա քսան հազար եկամուտ կբերի: Եթե ամեն ինչ հաջող ընթանա, մենք տուն կշինենք Զիրարդ պողոտայում: Ժամանակին կապոնա լավագույն փողոցներից մեկը: Հիանալի հարեւան կլինի կոլեջը:

— Հրաշալիք է, Ֆրենկ,— ասաց կինը ու շոյեց նրա ձեռքը, երբ ամուսինը նստեց մահճակալի եզրին։ Բայց նրա շեշտի մեջ թեթև տարակույս կար:

— Մենք պետք է ուշադիր լինենք Բաթլերների նկատմամբ։ Նա շատ լավ վարդեց ինձ հետ և ի՞նչ արկե հետագայում էլ օգտակար կլինի։ Ինձ ու քեզ հրավիրեց մի օր անցնել իրենց մոտ։ Հարժե անտեսել այդ հրավիրը։ Սիրալիր եղիր նրա կնոջ հետ։ Եթե Բաթլերն ուզենա, շատ բան կարող է անել ինձ համար։ Ի միջի այլոց երկու աղջիկ ունի։ Հարկ կլինի նրանց էլ ամբողջ ընտանիքով հրավիրել մեզ մոտ։

— Ճաշի կկանչենք նրանց, — հաճոյակամ պատասխանեց Լիլիանը։ — Այս քանի օրը կանցնեմ միսիս Բաթլերի մոտ և կառաջարկեմ կառով զբոսանք կատարել ինձ հետ։

Լիլիանն արդեն կարողացել էր իմանալ, որ Բաթլերները, համենայն դեպս կրտսեր սերունդը, սիրում են ցուցադրական շքեղությունը, խիստ զգայուն են իրենց ծագման վերաբերող խոսակցություններին և, նրանց կարծիքով փողը վճռականորեն քավում է բոլոր թերությունները։

— Սեր Բաթլերը միանդամայն ակնածելի մարդ է, — նկատեց մի անդամ Ֆրենկը, — իսկ միսիս Բաթլերը... ասենք նա էլ, ճիշտն ասած, վատ չէ, բայց շատ է հասարակ։ Սակայն բարի ու անկեղծ կին է։

Ֆրենկը լիլիանին խնդրեց նաև սիրալիր վարվել էլլինի ու նորայի հետ, քանի որ հայր ու մայր Բաթլերները ամենից ավելի իրենց աղջիկներով են պարծենում։

Այդ ժամանակ լիլիանը երեսուներկու տարեկան էր, Ֆրենկը՝ քսանյոթ։ Երկու երեխա քերելը և նրանց հոգ տանելը որոշ շավառի մոխել էին նրա արտաքինը։ Նա կորցրել էր նախկին զայթակղկցուցիչ նրբագլությունը ու մի քիչ սմքել լիր։ Այսիւրը ներս ընկած նրա դեմքը հիշեցնում էր Ռոսետիի և Բյորն-Ջոնսի¹ նկարների կանանց դեմքերը։ Խախտվել էր

1 Գանթե Գաբրիել Ռոսետի (1828—1882) և էդուարդ Բյորն-Ջոնս (անգլ.՝ Լիական նկարիչներ, պատկանում են նախառաֆայելյանների անկումային դպրոցին, որը ձգտում էր վերակենդանացնել միջնադարյան միստիկան։

նրա առողջությունը. երկու երեխաներին հետևելը և վերջերս երեան եկած ստամպքսի կատափի նշանները շատ ուժ էին խլել: Ներվային սիստեմը քայքայվել էր, և երբեմն նա մելամաղձության նոպաներ էր ունենում: Այս ամենը նկատում էր Քառուիկերվուղը և զանում էր առաջվա պես սիրալիր լինել նրա հանդեպ և ուշադիր, սակայն օգուտ որոնող ու գործնական միտք ունենալով՝ չէր կարող շըմբռնել, որ վաղ թե ուշ իր խնամքին կմնա մի հիվանդ կին: Կարեկցանքն ու մտերմությունը իհարկե մեծ բան են, բայց կիրքն ու ցանկասիրությունը պետք է պահպանվեն. շատ դառն է լինում դրանք կորցնելը: Այժմ Ֆրենկը հաճախ էր զննում դեռատի, կենսուրախ ու քաշառող աղջիկներին: Գովելի, խոհեմ ու ձեռնտու է հարգել առաքինությունը՝ ըստ բարոյախոսության հանրահայտ օրենսգրքի. բայց եթե կինդ հիվանդ է... Եվ ընդհանրապես, մի՞թե մարդը գամված է իր կնոջը, մի՞թե նա իրավունք չունի ոչ մի կնոջ նայելու: Խսկ ինչպե՞ս վարվի, եթե մի ուրիշը նրա սրտովն է: Ազատ պահերին Ֆրենկը շատ էր մտածում այսպիսի հարցերի մասին ու հանգեց այն եղրակացության, որ այդ ամենը այնքան էլ սարսափելի չէ: Եթե մերկացվելու վտանգ չկա, ապա ամեն ինչ կարգին չէ: Միայն թե պետք է խիստ շրջահայաց լինել: Այժմ, երբ նա նստած էր կնոջ մահճակալի եղրին, այդ մտքերը նորից ծագեցին գլխում, որովհետև ցերեկը տեսել էր էյլին Բաթլերին: Երբ ինքն անցնում էր հյուրասենյակով, օրիորդը երգում ու դաշնամուրով նվազակցում էր իրեն: Էյլինը նման էր վառվուն փետականիրով պճնված թունիկի և առողջություն ու հրճվանք էր արձակում: Մանրմնացած երիտասարդություն:

«Տարօրինակ է կառուցված աշխարհը», — մտածեց Ֆրենկը: Բայց այս մտքերը պահում էր հոգու խորքում և որևէ մեկի շէր ուզում հաղորդել:

Փոխառության զործառնությունը հետաքրքրական արդյունքներ տվեց. ճիշտ է, Ֆրենկը ստացավ իր քսան հազարը, նույնիսկ քիչ ավելի, և բացի դրանից, գրավեց Ֆիլադելֆիայի ու Պենսիլվանիայի ֆինանսական աշխարհի ուշադրությունը, բայց այդպես էլ առիթ չունեցավ ատրածելու փոխառությունը:

Նա տեսակցություն ունեցավ նահանգի գանձապետի հետ Ֆիլադելֆիայի մի նշանավոր իրավագետի գրասենյակում, ուր սովորաբար իր գործերով էր զբաղվում գանձապետը, երբ Ֆիլադելֆիա գալու առիթներ էին լինում: Խիստ սիրալիք էր նա Քառուկերվուղի նկատմամբ (էլ ուրիշ բան չէր մնում սրան) և բացատրեց, թե ինչպես են Հարիսբուրգում արվում այսպիսի գործերը: Նախընտրական կամպանիայի համար միջոցներ են ճարում խոշոր ֆինանսիստներից, որոնք իրենց մարդիկն ունեն նահանգի ներկայացուցական պալատում ու սենատում: Նահանգապետն ու գանձապետն իհարկե կարող են իրենց ուզածն անել, բայց ստիպված են հիշել, որ գոյություն ունեն այնպիսի գործոններ, ինչպես հեղինակությունը, բարեկամությունը, հասարակական ազգեցությունն ու քաղաքական փառասիրությունը: Խոշոր գործարարները համախ մի սեղմ կորպորացիա են կազմում. անշուշտ ոչ այնքան հաճելի մի փաստ: Բայց մյուս կողմից ամենենին էլ օրինական երաշխավոր չեն խոշոր փոխառությունների թողարկման դեպքում: Եսահանգր հարկադրված է լավ հարարելություններ պահպանել նրանց հետ, մանավանդ այսպիսի ժամանակ: Քանի որ միստր Քառուկերվաւը մեկ միլիոնի պարտատոմսեր իրացնելու հիմնալիք հնարավորություն ունի (կարծես այդքան դումար և նա հավակնում ստանալ), պարտ է բավարարել նրա խուսանքը: Սակայն Վան-Նոսթրենգն ուզում է մի այլ տատացարկ անել նրան: Քառուկերվուղը շեմ համաձայնի արդյոք (հիմք այդպես ցանկանա փոխառությունն իրացնող ֆինանսիստների խումբը) իր հայտը հաստատվելուց հետո, որոշ վարձատարարությամբ, (այսինքն այնքան, որքան նա հուզ ունի շահակ) փոխասամփյունն իրացնելու իր բաժինը դիշել նրանց: Այս է մի բանի ֆինանսիստների ցանկությունը: Վտանգավոր կրիսեր զիմազրել նրանց: Նրանք բնավ էլ շեն առարկում նրա ներկայացրած հինգ միլիոն հայտին, որը պետք է բարձրացնի նրա հեղինակությունը: Թող նույնիսկ համարվի, որ նա տեղաբաշխել է մեկ միլիոն. նրանք սրա դեմ էլ շեն առարկում: Բայց ուզում են անբաժան կերպով ստանձնել ամբողջ քսան-երեր միլիոն դոլլարի իրացումը մի անգամից: Այդպես ավելի

ազգու կլինի: Ըստ որում բնավ կարիք չկա ի լուր ամենեցուն գոռալ, թե Քառուկիերվուղը հրաժարվել է փոխառության իրացմանը մասնակցելուց: Նրանք համաձայն են թույլ տալ, որ նա վաստակի այն դափնիները, որ սպասում էին նրան, եթե ավարտեր սկսած գործը: Յավը միայն այն է, որ դա կարող է վատ օրինակ դառնալ: Կլինեն նաև ուրիշներ, ովքեր կցանկանան ընթանալ նրա հետքերով: Բայց եթե ֆինանսիստների նեղ շրջանում մասնավոր աղբյուրներից լուր տարածվի, որ նրա վրա ճնշում է գործադրվել և նա էլ հրաժարադրամն ստանալուց հետո փոխառության տարածումից հրաժարվել է, ապա ապագայում դա ետ կպահի ուրիշներին նման մի քայլից: Իսկ եթե Քառուկիերվուղը չհամաձայնի իրեն առաջարկված պայմաններին, նրան ամեն տեսակ անախորժություն կարող են պատճառել: Օրինակ՝ պահանջել, որ մարի իր ցպահանջ փոխառումները: Շատ բանկերում հետագայում նրա հետ նվազ սիրալիք կլինեն: Նրա հաճախորդներին այս կամ այն կերպ կարող են փախցնել նրանից:

Քառուկիերվուղը հասկացավ: Եվ... համաձայնեց: Աշխարհիս այդքան հզորներին չոքեցնելն արդեն մի բան արժե: Սյոդիսով նրա մասին լսեցին, հասկացան, թե ով է: Շա՞տ լավ է, հիանալի: Կառնի իր քսան հազարը կամ մոտ այդքան ու կնահանջի: Գանձապետը զմայլած էր: Դա թույլ տվից նրան դուրս գալու խիստ փափուկ դրությունից:

— Ուրախ եմ, որ տեսակցեցի ձեզ հետ,— ասաց նա, — ուրախ եմ, որ լնդհանրապես հանդիպեցինք իրար: Երբ նորից այս կողմերը գամ, կանցնեմ ձեզ մոտ, և միասին կնահանջենք:

Գանձապետը զգաց, որ գործ ունի մի մաղու հետ, որը հնարավորություն կտա իրեն փող վաստակելու: Քառուկիերվուղը բացառիկ խորաթափանց հայացք ուներ, իսկ դեմքն աշխույժ ու խոր միտք էր ցուցադրում: Վերադառնալով տուն՝ գանձապետը նահանգապետին ու մի քանի ծանոթ գործարարների պատմեց երիտասարդ ֆինանսիստի մասին:

Փոխառությունն իրացնելու բաշխումը վերջապես հաստատվեց: «Դրեքսել և Քնկ.» ֆիրմայի ղեկավարների հետ

գաղտնի բանակցություններ վարելուց հետո Քառուփերվասպը քսան հազար դոլար ստացավ և փոխառությունը տարածելուն մասնակցելու իր իրավունքը տվեց նրանց: Հիմա ժամանակ առ ժամանակ նրա գրասենյակում սկսեցին երեալ նոր անձինք, ի թիվս որոնց Վան-Նոսթրենդը և արդեն հիշատակված Թերենս Ռեխիլինը՝ մյուս քաղաքական խմբի ներկայացուցիչը Հարիսբուրգում: Մի անգամ ուստորանում նախաճաշելիս Ֆրենկին ծանոթացրին նահանգապետի հետ: Նրա անունն սկսեց հիշատակվել Թերթերում, նա արագ սկսեց բարձրանալ հասարակության աշխում:

Ֆրենկն անհապաղ ձեռնամուխ եղավ երիտասարդ էլ-սուորթի հետ մշակելու իր նոր տան նախագիծը: Կառուցվելու է բացառիկ մի շենք, ասաց նա կնոջը: Հիմա իրենք ստիպված կլինեն մեծ հրավերքներ կազմակերպել: Հյուսիսային Ֆրոնտ-սթրիթը հիմա շատ է խաղաղ իրենց համար: Ֆրենկը հին տունը ծախելու հայտարարություն տվեց, խորհրդակցեց նոր հետ ու պարզեց, որ սա էլ դեմ չէ տեղափոխվելու: Ֆրենկի հաջողությունը բարենպաստ աղդեց նաև հոր կարիերայի վրա: Բանկի դիրեկտորն օր օրի վրա ավելի սիրալիր էր դառնում նրա հետ: Բանկի վաշության նախագահ Կուգելը պատրաստվում էր հաջորդ տարին պաշտոնը թողնել: Հայր Քառուփերվուղին, որդու կատարած ֆինանսական փայլուն գործողության, ինչպես և նրա բազմամյա պաշտոնավորության շնորհիվ, որոշել էին նշանակել այդ պաշտոնին: Ֆրենկը խոշոր փոխառություններ էր կատարում նրա բանկում, ուստի և խոշոր ավանդատու էր: Խիստ գրական էր գնահատվում նաև նրա գործարարական կապը էղուարդ Բաթլերի հետ: Ֆրենկը բանկի պարագլուխներին հաղորդում էր այնպիսի տեղեկություններ, որ առանց սրան նրանք չէին կարող ստանալ: Քաղաքի ու նահանգի գանձապետներն սկսեցին հետաքրքրվել այդ բանով: Քառուփերվուդ-ավագի աշքի առջեն գծագրվում էր բանկի նախագահի քսան հազարանոց տարեկան ոռնիկը, և դրա համար զգալի շափով պարտական էր իր որդուն: Այժմ երկու ընտանիքների հարաբերությունները շափականց լավ էին: Աննան, որի քսանմեկ տարին

արդեն լրացել էր; էղուարդն ու Զոգեֆը հաճախ էին երեկուներն անցկացնում եղբոր տանը: Լիլիանը գրեթե ամեն օր այցելում էր նրա մորը: Քառուիերվուդներն աշխուժորեն ընտանեկան նորույթներ էին փոխանակում իրար հետ, և վերջապես որոշվեց տուն շինել Ֆրենկի կողքին: Քառուիերվուդ-ավագը հիսուն ոտնաշափանոց հողամաս գնեց որդու երեսուն ոտնաշափանոց հողամասի կողքին, և նրանք միասին ձեռնամուխ եղան երկու գեղեցիկ ու հարմար տների շինարարության, որոնք իրար միացած պիտի լինեին պատըշգամբով, այսպես կոչված պերգոլայով՝ ամռանը բաց, ձմեռը ապակեպատ:

Ճակատի երեսապատման համար ընտրեցին Ֆիլադելֆիայում լայնորեն տարածված կանաչ գրանիտը, բայց միստր Էլսուորթը խոստացավ այդ քարին տալ աշքի համար առանձնապես հաճելի տեսք: Քառուիերվուդ-ավագը որոշեց, որ կարող է թույլ տալ իրեն շինարարության վրա ծախսելու յոթանասունհինգ հազար դոլլար (նրա կարողությունը զնահատվում էր արդեն երկու հարյուր հիսուն հազար), իսկ Ֆրենկը պատրաստվում էր հատկացնել հիսուն հազար՝ ստանալով այդ գումարը գրավադրման միջոցով: Միաժամանակ նա մտադիր էր իր գոասենյակը փոխադրել մի առանձին շենք նույն երրորդ փողոցում, բայց քիչ հարավէ նա իմացավ, որ այնտեղ ծախվում է քսանհինգ ոտնաշափ երկարությամբ հակատ ունկնդու մի տուն, ճիշտ է՝ հին, բայց եթե երեսապատվի մուսկ գույնի քարով, առաջ միանգամայն տպավորիչ տեսք կունենա: Ֆրենկի մտահայացքի առաջ արդեն ուրվագծվում էր գեղեցիկ մի շենք խոշոր հայելազարդ լուսամուտով, որի միջից երևում են ներքին պատերի փայտե կցվածքները, իսկ դռան վերևը ու կողքերին ոսկեգույն տառերով կգրվի (Քառուիերվուդ և Ընկ.): Տարտամ, բայց արդեն նշմարելի, ինչպես վարդագույն ամպիկը հորիզոնի վրա, տեսնում էր նա իր ապագան: Հարուստ կլինի ինքը, օ՛, շա՞տ հարուստ:

Այն միջոցին, երբ Քառվիերվուդի գործերն հաջող էին՝ ընթանում կենսական գործերում, ապստամբած Հարավի դեմ՝ մղվող մեծ պատերազմը մոտենում էր վախճանին։ 1864 թվականի հոկտեմբերն էր։ Մորիլի գրավումը և «անտառային թավուտների ճակատամարտը»¹ դեռ թարմ էին ամենքի հիշողության մեջ։ Գրանթն արդեն Պիտերսբուրգի մատուցների մոտ էր, իսկ հարավցիների քաջարի գեներալ կին վերջին փայլուն ու անհույս փորձերն էր անում փրկելու դրությունը՝ գործի դնելով ստրատեգի ու ռազմիկի իր բոլոր ունակությունները։ Երբեմն օրինակ այն երկար ու հոգեմաշշ շրջանում, երբ ամբողջ երկիրը սպասում էր Վիբորուրգի ընկնելուն կամ Պոտոմակ գետի ափին գտնվող բանակի հաղթական հարձակման, իսկ կին այդ միջոցին ներխուժել էր Պենսիլվանիա. բաժնետոմսերի գները սրբնթաց ընկնում էին, և շուկան ծայրաշեղ անկման վիճակի էր մատնվում։ Այդպիսի պահճերին Քառվիերվուդն օդնության էր կանչում իր ամբողջ հնարապիտիտիտնիր. նաև ստիլված էր ամեն բոպե դդասաւ լինել, սրտկազի ամբողջ վաստակածը հօդս լցնդի որևէ շնորհատեսված ու կործանարար լուրից։

Անկախ նրա հայրենասիրական զգացմունքից, որը պահանջում էր պահպանել Միության² ամբողջականությունը, նրա անձնական վերաբերմունքը պատերազմին հանգում էր այն կարծիքին, որ դա թանկ նստող ու ավերիչ ձեռնարկություն է։ Նա այնքան զուրկ չէր ազգային հպարտությունից, որպեսզի շդիտակցեր, թե Միացյալ նահանգները, որոնք հիմա ձգվել էին Առլանսյանից մինչև Մեծ Օվկիանոսը և Կանադայի ձներից մինչև Մեծ Բարի ծոցը, արժե թանգարակածը 1837 թվականին ծնված Քառվիերվուդն ականա-

¹ Մորիլ քաղաքի (Ալաբամայի նահանգ) և «անսառային թավուտների» ճակատամարտերը, որ տեղի ունեցան 1864-ին, խոշոր իրադարձություն էին Հյուսիսի ու Հարավի պատերազմում։

² Միություն ասելով՝ պետք է հասկանալ Միացյալ նահանգներ։

տես էր եղել, թե ինչպես ամբողջ Երկիրը ձգտում էր տերիտորիալ ամբողջականության (Եթե շհաշվենք Ալյասկան): Նրա պատանեկության օրերին ԱՄՆ Հարստացել էր իսպանացիներից գնած Ֆլորիդայով. Մեքսիկան անարդար պատերազմից հետո 1848 թ. Նահանգներին էր զիշել Թեքսասը և նրա արևմտակողմի տերիտորիան: Վերջապես Հարթվել էին սահմանային վեճերը Անգլիայի ու Միացյալ Նահանգների միջև հեռավոր հյուսիս-արևմուտքում: Սոցիալական ու ֆինանսական հարցերի վերաբերյալ լայն հայացքներ ունեցող մարդք չէր կարող այդ բոլոր փաստերի նշանակությունը շհասկանալ: Համենայն դեպս դրանք Քառուփերվուղին ներշնչում էին այն գիտակցությունը, թե առևտրական ի՞նչ անսահման հնարավորություններ է ընձեռում այդպիսի ընդարձակ պետությունը: Նա ֆինանսական արկածախնդիրների կամ երկակայական ծրագրեր կազմողների դասին չէր պատկանում, որոնք անսահման վաստակի աղբյուր են տեսնում ամեն մի շուտումնասիրված վտակի, խոտհարքերի ամեն մի թզի մեջ. բայց երկրի ծավալներն ինքնին խոսում էին այն վիթխարի հնարավորությունների մասին, որոնք, ինչպես հույս ուներ Ֆրենկը, կարելի է պատվարել ամեն տեսակ ոտնձգությունից: Մի օվկիանոսից մյուսը ձգվող տերիտորիան պարունակում էր այնպիսի պոտենցիալ հարստություններ, որոնք կկորսվեին, եթե Հարավային նահանգները անշատվեին Հյուսիսային նահանգներից:

Դրանով հանդերձ նեղրերի ազատագրության պրոլեմն էական չէր թվում Քառուփերվուղին: Նա մանկությունից հետեւ էր այդ ցեղի ներկայացուցիչներին, նկատել նրանց արժանիքներն ու թերությունները, որ համարում էր բնածին, ու կարծում էր, թե դրանով էլ պայմանավորված է նրանց բախտը:

Օրինակ՝ նա բնավ էլ վստահ չէր, որ նեգրերին կարող է սահմանվել ավելի մեծ դեր, քան այն, որ կատարում են նրանք: Համենայն դեպս նրանք մղելու են երկար ու դժվարին պայքար, որի ելքը շեն տեսնի գալիք սերունդները: Նա առանձին առարկություններ շուներ այն տեսության դեմ, որն

ազատություն էր պահանջում նրանց համար, բայց և չէր
տեսնում այնպիսի պատճառներ, որոնց համար հարավցիները
շպետք է բոլոր ուժերով հակառակվեին իրենց սեփականու-
թյան ու տնտեսաձեկի դեմ ուղղված ոտնձգություններին։
Եատ ցավալի է իհարկե, որ որոշ դեպքերում վատ են վարվում
սեամորթ ստրուկների հետ։ Նրա կարծիքով այդ հարցը պետք
էր վերանայել, սակայն ոչ մի լուրջ բարոյագիտական հիմք
չէր տեսնում այն պայքարի համար, որ մղում էին սեամորթ-
ների հովանավորողները։ Նա գիտակցում էր, որ տղամարդ-
կանց ու կանանց հսկայական մեծամասնության վիճակը¹
շատ քիչ էր տարբերվում ստրուկների վիճակից, թեև իբր թե
նրանց պաշտպանում էր երկրի սահմանադրությունը։ Այնու-
հետև գոյություն ուներ հոգեսոր ստրկությունը՝ հոգով ու
մարմնով թույլերի ստրկությունը։ Քառսկերվուղը լարված
հետաքրքրությամբ հետևում էր Սեմների, Հարիսոնի, Ֆիլիպ-
սի և միսիս Բիլեր-Սթոուփ¹ ելույթներին, բայց երբեք այդ
պրոբլեմը կենսականորեն կարեոր չէր համարում իր համար։
Նա զինվոր լինելու կամ զինվորներին հրամայելու ցանկու-
թյուն չուներ, ոչ էլ բանավիճելու շնորհք. իր մտակառուց-
վածքով նա անգամ ֆինանսների բնագավառում վիճա-
բանելու սիրահարներից չէր։ Նա հետաքրքրվում էր միայն
նրանով, ինչ կարող էր ձեռնտու լինել իր համար, և նրա բո-
լոր մտքերը նվիրված էին օգուտին։ Նրա երկրում տեղի
ունեցող եղբայրասպան պատերազմը չէր կարող օգուտ բե-
րել իրեն։ Նրա կարծիքով միայն խանգարում էր դա երկրին՝
ամրապնդվելու առետրական ու ֆինանսական տեսակետից,
և հույս ուներ, թե չուտով կվերջանա այդ պատերազմը։ Նա
դառն մղկտոցների անձնատուր չէր լինում ուազմական բարձր
հարկերի առթիվ, թեև գիտեր, որ շատերի համար ծանր
փորձություն է դա։ Մահացություններին ու դժբախտությու-
ներին վերաբերող պատմությունները շատ էին հուզում
նրան, բայց... այդպես են մարդկային կյանքի հեղհեղուկու-
թյունները, և նրա ուժերից վեր էր որևէ փոփոխություն

¹ Նեգրերի ազատագրության անվանի մարտիկներ։

մտցնել դրա մեջ։ Այդպիս ընթանում էր նա իր ուղիով՝ օրավոր հետևելով զորամասերի գալուն ու գնալուն, ամեն մի քայլափոխին հանդիպելով ուզմագաշտից կամ հիվանդանոցներից վերադարձող կեղտուտ, նիշարած գղղղված ու կիսահիվանդ մարդկանց խմբերի։ Նրան մնում էր միայն խղճալ դրանց։ Այդ պատերազմը նրա համար չէր։ Նա չէր մասնակցում դրան և գիտեր միայն, որ խիստ կուրախանա, երբ դա վերջանա՝ ո՛չ որպես հայրենասեր, այլ՝ ֆինանսիստ, Քայքայիչ, ողբերգական ու դժբախտություն բերող էր այդ պատերազմը։

Օրերն իրար էին հաջորդում։ Այդ ժամանակ տեղի ունեցավ իշխանության տեղական օրգանների ընտրություն, Կ փոխվեցին քաղաքի գանձապետը, հարկային լիազորը և քաղաքագլուխը։ Սակայն էդուարդ Մելիք Բաթլերը ըստ երկույթին շարունակում էր ունենալ նախկին ազգեցությունը։ Բաթլերների ու Քառուկերվուդների միջև սերտ բարեկամություն էր ստեղծվել։ Միսիս Բաթլերը խիստ բարյացական էր կիլիանի հանդեպ, թեև տարբեր դավանանքի էին պատկանում։ Երկու կանայք միասին զբոսնում էին կառքով, միասին խանութից խանութ էին մտնում։ Ճիշտ է, միսիս Քառուկերվուդը մի քիչ քննադատաբար էր վերաբերվում իր տարեց բարեկամուհուն ու թեթևակի ամաշում էր նրա կիսագրագետ խոսակցությունից, իւլանդական առողջապահությունից ու գոեհիկ ճաշակից, կարծես ինքն էլ այդպիսի պլեբեյական ընտանիքից սերած շիներ։ Բայց մյուս կողմից նա չէր կարող շխոստովանել, որ այդ կինը շատ բարի է ու սրտակից։ Ապրելով լիառատ պայմաններում՝ նա սիրում էր մարդկանց հաճելի բան անել, նվերներ էր տալիս ու փաղաքշում կիլիանին ու նրա երեխաներին։

«Չմոռանաք, հա՛, անպայման կգաք մեզ մոտ ճաշելու» (Բաթլերներն արդեն հասել էին բարեկեցության այն աստիճանին, երբ ըստ սովորության ուշ են ճաշում) կամ «Վաղը պետք է ինձ հետ զբոսանքի գնաք»։

«Էյլինը, աստված ողջ-առողջ պահի նրան, հրաշալի՛ աղջիկ է» կամ «Խեղճ նորան այսօր լավ չի զգում իրեն»։

Այնինչ էյլինն իր քմահաճություններով, կրակոտ բնաւ վրությամբ, իրեն ուշք դարձնելու պահանջով ու անափառությամբ ջղայնացնում, երբեմն էլ նույնիսկ վրդովում էր Լոլիանին: Էյլինն այժմ արդեն տասնութ տարեկան էր, և նրա ամբողջ պատկերից հառնում էր մի նենգ գայթակղություն: Նրա շարժուձեռը տղայի էին, սիրում էր երբեմն շարություն անել ու չնայած մենաստանի դաստիարակության՝ ըմբոստանում էր իր ազատությունը նվազագույն շափով կաշկանդելու դեմ: Բայց այդ դեպքում էյլինի կապույտ աշքերում առկայում էր մի մեղմ շող, որ նշան էր կարեկից ու բարի սրտի:

Զանալով իրենց աղջկան դաստիարակել, ինչպես իրենք էին ասում, որպես «բարի կաթողիկ», էյլինի ծնողները նրա համար ընտրեցին սուրբ Տիմոթեոսի եկեղեցին և Զերմանթունի վանական դպրոցը: Սյուտեղ էյլինը ծանոթացավ կաթոլիկության աստվածաբանական ու ծիսական կողմերին, սակայն բան չհասկացավ: Մինչդեռ նրա երեակայության մեջ խորապես զրացմվեցին աաճարը՝ աղոտ լուսավորող իր պատուհաններով, բարձր ու սովորակ խորանը և նրա աջ ու ձախ կողմերում զրված սուրբ Հովսեփի ու Մարիամ կույսի արձանները՝ ոսկեգույն աստղերով սփռված կապուտակ զգեստներով, լուսապսակը գլուխներին ու գայիսոնը ձեռքներին: Տաճարն ընդհանրապես, իսկ առավել ևս ամեն մի կաթոլիկական տաճար, հաճելի է աշքին ու խաղաղեցնում է հոգին: Տաճարը, որ պատարագի ժամանակ ողողված է հիսուն, հաճախ և ավելի մոմերի լույսով, և թվում է է՛լ ավելի փառաշուշը ու պերճագեղ՝ շնորհիվ քահանաների ու փոքրավորների ծոխ, ժանեկաղաքադ զգեստավորման. սքանչելի ասեղնագործներն ու շուրջառների, ուրարների ու թևնոցների վառվոռն երփներանգը դուր էին գալիս էյլինին ու կաշկանդում նրա ուշադրությունը: Պետք է ասել, որ նրա մեջ միշտ կենդանի էին փառահեղության ձգտումը, վառ գույնների սերը և «սիրո սերը»: Փոքր հասակից էր էյլինն իրեն կին զգում: Նա երբեք չէր ձգտում խորամուխ լինել իրերի էռւթյանը, չէր հետաքրքրվում ճշգրիտ գիտելիքներով: Այսպես

Են համարյա բոլոր զգայասեր մաղիկ: Նրանք քնքշակյան ցություն են անում արկի շողերում, արթենում են գույներով, պերճանքով, արտաքին փառահեղությամբ ու դրանից հեռու չեն գնում: Պատկերացման ճշտությունը պետք է ուազմատենչ, սեփականասիրական բնավորություններին, որոնց մեջ դա վեր է ածվում հափշտակելու ձգտումի: Մարդուն ամբողջովին համակած տիրական զգայասիրությունը հատուկ չէ ո՛չ գործունյա, ո՛չ էլ բժախնդիր խառնվածքներին:

Վերև ասվածն անհրաժեշտ է պարզաբանել էյլինի նկատմամբ կիրառելիս: Արդարացի չեր լինի հավաստել, որ այդ ժամանակ նաև արդեն ակներև զգայասեր էր: Այդ ամենը դեռ նիրհում էր նրա մեջ: Հատիկը շուտով չէ բերք տալիս: Խոստովանարանը, շաբաթ երեկոների կիսախավարը, երբ եկեղեցին լուսավորվում է միայն մի քանի լապտերով, քահանայի հորդորումները, նրա դրած պատիժները ու եկեղեցու ներումը, որ շշնչում էին վանդակապատ մի փոքրիկ պատուհանից, տարտամորեն հուզում էին աղջկան: Իր մեղքերից չեր վախենում նա: Մեղավորներին սպասող դժոխքը չեր սարսափեցնում էյլինին: Խղճի խայթերը չեին տանջում նրան: Ծերունիներն ու պառավ կանայք, ովքեր համրընթաց գնում էին եկեղեցի և համրիչը վեր-վար տալով՝ աղոթքի բառերն էին մրթմրթում, նրա համար շատ քիչ բանով էին տարբերվում փայտե կուտքերի այն յուրօրինակ շարքից, որոնց գերը խաչի սրբությունը շեշտելն էր: Նրան դուր էր գալիս, մանավանդ տասնչորս-տասնհինգ տարեկանին, խոստովանվել, ունելիքնդրել հոգեհորը, որ իր բոլոր խրատներն սկսում էր «Ուրիմն, սիրեցյալ զավակ իմ...» խոսքով: Մի քրանսիացի ծերունազարդ քահանա, որ խոստովանեցնում էր գիշերօթիկ դպրոցի սաներին, իր բարեսրտությամբ ու մեղմությամբ առանձնապես հուզում էր էյլինին: Նրա օրհնությունները հնչում էին անկեղծ, ավելի անկեղծ, քան այն աղոթքները, որ կարդում էր աղջիկը շտապ-շտապ ու անուշադիր: Հետո էլ նրա երեակայությանը տիրացավ սուրբ Տիմոթեոս եկեղեցու երիտասարդ հովիվ՝ հայր Դավիթը, մի կարմրերս առողջ մարդ՝ սև մաղերի խոպոպը ճակատին և ոչ առանց պմնամո-

լության իր հովվական խույրը կրելիս Կիրակի օրերը սա
ման էր գալիս նստարանների միջով ու ձեռքի վճռական,
վեհաշուք թափահարումներով օրհնած զուր է ցողում իր
հոտի վրա, մինչդեռ փոքրավորները պահում էին նրա սքե-
մի թեքերը: Նա խոստովանեցնում էր աշակերտուհիներին,
և էյլինը սիրում էր երբեմն շշուկով հայտնել իր գլխով անցած
մեղապարտ մտքերը՝ ջանալով հանդերձ կուահել, թե ինչ է
մտածում իր մասին հոգեհայրը: Որքան էլ էյլինն ուզենար
նրա մեջ տեսնել աստվածային իշխանության ներկայացու-
ցի, այնուամենայնիվ չէր կարողանում: Շատ էր երիտա-
սարդ այդ քահանան, շատ էր սովորական մարդ: Եվ էյլինի՝
իր մասին արբեցումով պատմելու, հետո էլ զղացող մեղա-
վորի տեսքով գեպի դուռը հեղաքար դիմելու ձեկի մեջ կար
ինչ-որ նենգ, շարաձճի ու տնազ անող բան: Սուրբ Ագաթի
դպրոցում նա համարվում էր «դժվար դաստիարակվող» աշա-
կերտուհի, որովհետեւ, ինչպես շուտով նկատեցին բարի
միանձնուհիները, շատ էր կենսուրախ, եռանդով լի, որպեսզի
ենթարկվեր սրիշի կամքին:

— Այդ միսս Բաթլերը, — ասաց մի անգամ վանա-
մայրը էյլինի անմիջական դաստիարակ քույր Սեմպրոնիա-
յին, — շատ աշխույժ աղջիկ է: Դուք շատ գլխացավանք
կունենաք նրանից, եթե բավականին տակտ չունենաք: Հստ
իս պետք է մանր զիջումների դիմեք: Այդ կերպ երկի ավելի
շատ բանի հասնեք:

Այդ օրվանից քույր Սեմպրոնիան ջանում էր կուահել
էյլինի ցանկությունները, երբեմն էլ նույնիսկ դիմում էր
կաշառքի: Բայց սա էլ միշտ չէ, որ հաջողություն էր բերում
միանձնուհուն. Էյլինը համակված էր այն գիտակցությամբ,
որ հայրը հարուստ մարդ է և ինքն էլ՝ մյուսներից գերազանց:
Ճիշտ է, երբեմն նա ցանկություն էր ունենում տուն մեկնելու
կամ խնդրում էր դաստիարակչուհուց թույլ տալ, որ կրի
երենոսե խաչ ու արծաթե փոքրիկ Քրիստոս ունեցող խոշո-
րահատիկ ուլունքները, որ այդ դպրոցում մեծ առավելություն
էր համարվում: Այդ և այլ գերազանցությունները (շաբաթ
երեկոները մենաստանի կալվածներում զբոսնելու, ուզածի

շափ ծաղիկ քաղելու, մի քանի ավելորդ զգեստ ունենալու և պարզեր կրելու թույլատրություն) առաջարկվում էին նրան որպես պարզե, միայն թե հանդարտ մնար դասարանում, կամացուկ քայլեր ու կամաց խոսեր (որքան թույլ էին տալիս նրա ուժերը), լույսը հանգցնելուց հետո չսողոսկեր մյուս աղջիկների ննջարանները և հանկարծակի բնքշանք տածելով այս կամ այն դաստիարակչունու նկատմամբ՝ շխեղեր իր գրկում: Էյլինը սիրում էր երաժշտություն ու շատ էր ուզում նկարչությամբ զբաղվել, թեև նկարելու ոչ մի ընդունակություն չուներ: Դրերը, գլխավորապես վեպերը, նմանապես հետաքրքրում էին նրան, բայց ճարելու տեղ չուներ: Մնացած ամեն ինչ՝ քերականություն, ձեռագործ, կրոնագիտություն և ընդհանուր պատմություն, ատում էր: Բարեկրթության կանոնները էլի մի կերպ հետաքրքրական էին: Դուր էին գալիս ծերծեքուն ուներանսները, որ սովորեցնում էին նրան, և հաճախ էր նա մտածում, թե ինչպես այդպիսի խոնարհություններով պիտի ողջունի հյուրերին, երբ վերադառնա հայրենի տուն:

Հենց որ Էյլինը կյանք մտավ, նրան սկսեցին հուզել տեղական հասարակության առանձին խավերի գրության մեջ եղած բոլոր նույր տարբերությունները, նա սաստիկ տենչում էր, որ հայրը մի լավ առանձնատուն կառուցի, ուրիշների մոտ տեսածների նման, ու ճանապարհ բացի իր առաջ հասարակության մեջ մանելու Այս բանը շեղավ, և դրանից հետո նրա ամբողջ մտածմունքը կենտրոնացավ թանկարժեք իրերի, նժույգների, կառքերի և, անշուշտ, բազմաթիվ զգեստների՝ այն ամենի վրա, ինչ կարող էր ունենալ ի փոխարինություն: Իրենց ապրած տունը հնարավորություն չէր ընձեռում մեծաթիվ հրավերքներ կազմակերպել, և տասնութ տարիկան հասակում էյլինն արդեն ճաշակեց խոցված ինքնասիրության տվայտանքները: Նա այլ կյանք էր տենչում: Բայց ինչպես իրագործեր իր ցանկությունները:

Էյլինի սենյակը, որ լի էր զգեստներով, գեղեցիկ սնոտի առարկաներով և թանկարժեք զարդերով, որ կրելու սակավ առիթներ էր ունենում, կիսակողիկներով, գուլպաներով ու

ժանյակներով, կարող էր լինել անհամբեր ու սնափառ խառնվածքի թուլություններն ուսումնասիրելու օրինակ: Էյլինը ուսումնասիրել էր բոլոր մակնիշների անուշահոտություններն ու շպարը (թեև վերջինիս կարիքը չուներ) և առատորեն գնում էր երկուսից էլ: Կանոնավորությունը նրա հատկանիշը չէր, իսկ ցուցադրական պերճանքը շատ էր սիրում: Դուան ու լուսամուտների վարագույրների, մանր պաճուճանքների ու նկարների ճոխ կուտակումը նրա սենյակում վատ էր համադրվում տան մնացած կահավորման հետ:

Էյլինը միշտ էլ Քառվիերվուդի մեջ անզուսպ ու քմահաճ ձիու պատկերացում էր առաջացնում: Հաճախ էր նա հանդիպում Էյլինին, երբ սա մոր հետ խանութներ էր գնում և կամ կառքով ման էր գալիս հոր հետ, ու ամեն անգամ ծիծաղեցնում և զվարճացնում էր այն տաղտկալի տոնը, որ ընդունում էր նա Ֆրենկի հետ խոսելիս:

— Տե՛ր իմ աստված, որքա՞ն ձանձրալի է ապրել աշխարհում, — ասում էր նա, մինչեւ իրականում կյանքի ամեն մի ակնթարթը նրա համար լի էր թրթոռն հրճվանքով: Քառվիերվուդը ճիշտ էր բնորոշում նրա հոգեսոր էությունը. մի աղջիկ է նա, որի մեջ կա հորդաբուխ կյանք, ոռմանտիկ է, հափշտակված է սիրո և այն ամենի մտքերով, ինչ բերում է իր հետ սերը: Երբ Ֆրենկը նայում եր նրան, թվում էր, թե տեսնում է լավագույնն այն ամենից, ինչ կարող էր ստեղծել բնությունը, եթե փորձեր կերտել ֆիզիկապես անթերի մի բան: Նրա մտքով անցավ, որ շատ շանցած որևէ բախտավոր երիտասարդ կամուսնանա հետը ու կտանի: Բայց նա, ում բաժին ընկնի, ստիպված կլինի պահել նրան պաշտելով, նուրբ շղողքորթությամբ ու հարատե ուշաղրությամբ:

— Այդ փոքրիկ ոչնչությունը (ամենից քիչ էր նա ոչնչություն) երևակայում է, թե ամբողջ աշխարհը իր հոր գրպանում է, — նկատեց մի անգամ կիլիանը ամուսնու հետ խոսելիս: — Նրան լսելիս կարող ես մտածել, որ Բաթլերների տոհմը սկիզբ է առնում իոլանդական թագավորներից: Իսկ նրա՝ երաժշտությամբ ու արվեստով հետաքրքրվելը պարզապես ծիծաղելի է:

— Լավ, այդքան խիստ մի՛ լինիր նրա հանդեպ,— դիվանագիտորեն հանդարտեցնում էր նրան Քառվերվուղը, որին այդ ժամանակ արդեն շատ էր զուր գալիս Էլլինը:— Լավ է նա նվագում ու հաճելի էլ ձայն ունի:

— Ճիշտ է, բայց նա զուրկ է իսկական ճաշակից: Ասենք որտեղի՞ց ձեռք բերի: Բավական է նայել հորն ու մորը:

— Ես անձամբ առանձնապես ոչ մի վատ բան չեմ տեսնում, նրա մեջ,— իրենն էր առաջ տանում Ֆրենկը:— Ուրախ բնավորություն ունի, ինքն էլ լավիկն է: Իհարկե բոլորովին երեխա է դեռ ու մի քիչ էլ սնամիառ. բայց դա կանցնի: Բացի դրանից անխելք չէ ու եռանդուն է:

Էլլինը, Ֆրենկն այդ գիտեր, շատ էր լավ տրամադրված իր հանդեպ: Ինքը զուր էր դալիս աղջկան... Քառվերվուղենց տանը լինելիս նա սիրում էր դաշնամուր նվագել ու երգել, ըստ որում երգում էր միայն Ֆրենկի ներկայությամբ: Նրա վստահ, հավասարաշափ քայլվածքը, ուժեղ մարմինն ու գեղեցիկ գլուխը հրապորում էին աղջկան: Չնայած իր անհանդիսական բնավորությանն ու եսապաշտության՝ Էլլինը երբեմն անհամարձակ էր դառնում նրա առաջ: Բայց որպես կանոն՝ նրա ներկայությամբ առանձնապես ուրախ և հմայիչ էր լինում:

Աշխարհի ամենաանհույս բանը մարդու բնավորությունը ճիշտ որոշել ջանալան է: Ամեն մի անհատ հակասությունների կծիրի է, ասավիկ ևս շնորհալի անձնավորությունը:

Ուստի և անկարելի է սովառչ կերպով նկարագրել Էլլին Բաթլերին: Անկասկած նա խելք ուներ, թեև անտաշ ու անմշակ, ինչպես նաև ուժեղ բնավորություն, որ երբեմն սանձահարվում էր ժամանակակից հասարակության հայացքնեռով ու պայմանականություններով, երբեմն էլ հանդես էր գալիս տարերայնորեն և ավելի շուտ դրական, քան բացասական կերպով: Նոր էր լրացել նրա տասնութ տարին, և Ֆրենկ Քառվերվուղի նման մարդուն սքանչելի էր թվում նա: Նրա ամբողջ էռթյունը համակված էր այն բանով, որ մինչ այդ չէր տեսել ոչ մի կնոջ մեջ և գիտակցաբար ոչ մեկից չէր

պահանջել՝ աշխուժությամբ ու կենսուրախությամբ։ Թայց չէ՞ր որ ոչ մի աղջեկ կամ կին, որոնց երբեք ճանաշել էր, շուներ այդ բնածին կենսական ուժը։ Նրա շեկ-ոսկեթույր, ավելի ճիշտ հազիվ նկատելի շեկ երանգափայլ, զուտ ոսկեգույն վարսերը ալիք-ալիք բարձրանում էին ճակատի վրա ու ձգվում ծոծրակին որպես հանգույց։ Անթերի էր նրա քթի ձևը՝ ուղիղ, ոռմագերը պստիկ, աշքերը խոշոր՝ հուզիլ ու զգայական փայլով։ Քառուփերվոսին դուր էր գալիս դրանց կապտագորշ, երկնագույնին մոտիկ երանգը։ Նրա արդուղարդն ակամա վերակենդանացնում էր հիշողության մեջ հարեմի հարճերի ձեռքի ու ոտքի ապարանջանները և կրծքաթասերը, թեև ոչ մի այդպիսի բան չէր կրում նա։ Շատ տարիներ անց կյլինը խոստովանեց նրան, որ հաճությամբ կարմիր կներկեր եղունգներն ու ձեռքերը։ Լինելով առողջ և ուժեղ՝ միշտ հետաքրքրվում էր, թե ինչ են մտածում տղամարդիկ իր մասին և ինչպես է նա թվում նրանց ուրիշ կանանց համեմատությամբ։

Կառքերով ման զալը, Զիրադ պողոտայի մենատանն ապրելը, այնպիսի տներում լինելը, ինչպիսին էր Քառուփերվոսինց տունը, մեծ նշանակություն ուներ նրա համար. բայց այդ տարիներից արդեն հասկանում էր նա, որ կյանքի իմաստը միայն այդ առանձնաշնորհները չեն։ Չէ՞ որ մարդիկ ապրում են՝ առանց դրանք ունենալու։

Այնուամենայնիվ ուրիշներից հարուստ ու գերազանց լինելը պատում էր նրա գլուխը։ Դաշնամուրի առաջ նստած, կառքով կամ ոտքով զբոսնելիս և կամ հայելու առաջ կանգնած՝ նա համակվում էր իր գեղեցկության, թովիլ լինելու և այն գիտակցությամբ, թե ինչ է նշանակում դա տղամարդկանց համար և ինչ նախանձ է հարուցում կանանց մեջ։ Երբեմն աղքատ, տափակակուրծք ու տգեղ աղջիկներ տեսնելիս խղճահարություն էր զգում նրանց հանդեպ. երբեմն էլ անբացատրելի մի շկամություն էր բռնկվում նրա մեջ որեւէ աղջկա կամ կնոջ հանդեպ, որը համարձակվել էր մրցել իր գեղեցկության կամ հասարակության մեջ ունեցած դիրքի հետ։ Պատահում էր, որ անվանի ընտանիքների պատկանող

աղջիկներ հանդիպելով էյլինին Զեսթնեթ-սթրիթի թանկածախ խանութներում և կամ զրոսայգում ծիռվ կամ էառքով ման գալիս՝ քթները տնկում էին որպես ապացուց, որ իրենք ավելի լավ են դաստիարակված և դա հայտնի է իրենց։ Այդպիսի հանդիպումների ժամանակ երկու կողմերն էլ սպանիչ հայացքներ էին փոխանակում։ Էյլինը շատ էր ցանկանում մուտք գործել բարձր հասարակության մեջ, թեև այդ շրջանի թեթևողիկ զենումեններն ամենկին-չէին գրավում նրան։ Խսկական տղամարդ էր նա երազում։ Ժամանակ առ ժամանակ նրա աշքին էր դիպլոմ «Կարծես թե Հարմար» մի տղամարդ, բայց դրանք սովորաբար լինում էին իր հոր ծանոթները, քաղաքական մանր գործիչներ կամ տեղական օրենսդրական ժողովի անդամներ, ովքեր սոցիալական սանդուղքի վրա իրենից վեր չէին կանգնած, ուստի և նրա համար արագ կորցնում էին ամեն տեսակ հետաքրքրութուն ու ձանձրացնում էին։ Ծեր Բաթլերը ճիրավի ընտիր հասարակությունից ոչ ոքի չէր ճանաչում։ Բայց միստր Քառուփերվուդը... այնքան նրբաճաշակ, ուժեղ և զուապ էր թվում նա. միսիս Քառուփերվուդին նայելիս էյլինը հաճախ մտածում էր, թե որքան երջանիկ պետք է լինի Ֆրենկի կինը։

Գ Լ Ո Ւ Խ ԽIV

Քառուփերվուդի՝ «Քառուփերվուդ և Հնկ.» ֆիրմայի ղեկավարի արագ առաջընթացը, որ հաջորդեց փոխառության գործողությունը փայլուն կերպով կատարելուն, մի հետեւանք ունեցավ՝ վերջապես նա հանդիպեց մի մարդու, որը խիստ զգալի կերպով աղղեց նրա կյանքի վրա բարոյական, ֆինանսական և ուրիշ շատ տեսակետներից։ Զորշ Սթիներն էր դա՝ քաղաքի նոր գանձապետը, ուրիշների ձեռքին խաղալիք և կարեռը անձ էր դարձել հենց իր թուլակամության պատճառով։ Այդ պաշտոնին նշանակվելուց առաջ Սթիներն ապահովագրության մանր գործակալ էր և անշարժ կայք լաճառելու

կոմիսիոներ։ Այդպիսի մարդիկ, որ հազարներով պատահում են ամեն մի քայլափոխին, շունեն նվազագույն խորաթափանցություն, իսկական նրամտություն, հնարագիտություն, որևէ ձիրք իր ամբողջ կյանքում ոչ մի թարմ միտք չէր արտահայտել նա: Ճիշտ է, ոչ ոք չէր կարողանու վատ մարդ անվանել նրան: Արտաքուստ թախծոտ էր, գորշ, ծայր աստիճան առօրեական, բայց դրա պատճառը այնքան արտաքին պատկերը չէր, որքան հոգեոր: Կապտագորշ, ջրալի աշքեր, բաց գույնի ոչ խիտ մազեր, ոչինչ շարտահայտող բերան: Սթիները բավական բարձրահասակ էր՝ համարյա վեց ոտնաշափ, բավական թիկնեղ, բայց ամբողջովիշյամբ մի տեսակ անշնորհք: Սովորություն ուներ մի քիչ կոանալ, այնինչ փորը մի փոքր առաջ էր ցցված: Նրա խոսակցությունը կազմված էր ամբողջովին ընդհանուր պարբերություններից՝ թերթային ու քաղենիական շաղակրատանք և առևտրական բամբասանքներ: Ծանոթներն ու դրացիները լավ էին վերաբերվում նրան, համարում էին ազնիվ ու բարի. ու կարելի է ասել այդպես էլ էր: Կինն ու զորս երեխաները անգույն էին ու գրեթե աննշան, ինչպես սովորաբար լինում են այդպիսի մարդկանց կանայք ու երեխաները:

Զնայած այդ բոլորին, իսկ քաղաքականության տեսակետից, թերևս հենց դրա շնորհիվ, ջորջ Սթիներն առժամապես ընկավ հասարակական ուշադրության կենտրոնը, որին նպաստում էին արդեն մոտ հիսուն տարի Ֆիլադելֆիայում կիրառվող քաղաքական հայտնի մեթոդները: Նախ՝ Սթիները հարում էր այն քաղաքական հայացքներին, որոնց և տիրապետող կուսակցությունը՝ Քաղաքային խորհրդի անդամները ու նրա շրջանի կառավարուղները Սթիներին ճանաչում էին որպես հավատարիմ մարդ, առավել ևս խիստ օգտակար՝ նախընտրական կամպանիայի ժամանակ հավաքելու համար: Երկրորդ՝ թեև իբրև հոետոր ամենեին պիտանի չէր, որովհետև չէր կարող իրենից ոչ մի ինքնատիպ միտք քամել, նրան կարելի էր ուղարկել տնից-տուն՝ իմանալու մթերավաճառի, դարբնի կամ մսագործի տրամադրությունը: Ավելին՝ կարելի էր «լցնել» մի քանի տափակ նախադասություններով,

որ կրկնում էր նա օրից-օր. «Հանրապետական կուսակցությունը (սա նոր էր հիմնվել, բայց արդեն իշխանությունն իր ձեռքն էր առել Ֆիլադելֆիայում) կարիք ունի ձեր քվեին» Զի կարելի թույլ տալ, որ մեր նահանգը կառավարեն այդ սրիկա դեմոկրատները»։ Իսկ ինչո՞ւ չի կարելի՝ Սթիները հազիվ թե կարողանար բացատրել: Իրենք պաշտպանում են ստրկությունը: Մարտնչում են առեւրի աղատության համար¹: Բնավ էլ նրա մտքով չէր անցնում, որ այդ ամենը մաղաշափ անգամ շի վերաբերում Ֆիլադելֆիա քաղաքի գործադիր ու ֆինանսական օրգաններին: Ի՞նչ կփոխվեր այն բանից, որ դեմոկրատները այդպիսի մեղք ունե՞ն, թե՞ ոչ:

Ֆիլադելֆիայի քաղաքական բախտն այդ տարիներին տնօրինում էին Միացյալ Նահանգների սենատոր ոմն Մարկ Սիմփոնը, էղուարդ Մելիա Բաթլերը և ածխի հարուստ առեւրական ու ձեռնարկու Հենրի Մոլենհառերը: Սրանք ունեին գործակալների, կամակատարների, լրտեսների ու դրածո մարդկանց մի իսկական բանակ: Այդ մարդկանցից էր և Սթիները՝ մի փոքրիկ անիվ նրանց քաղաքական ինտրիգաների անաղմուկ աշխատող մեքենայում:

Հազիվ թե այդպիսի մի մարդ կարողանար գանձապետ ընտրվել մի այլ քաղաքում, սակայն Ֆիլադելֆիայի բնակչությունն աշքի էր ընկնոսմ զարմանալի անտարբերությամբ աշխարհի ամեն ինչի նկատմամբ, բացի իր քաղքենիական գործերից: Բնակիչների մեծագույն մասը, հատուկենտ բացառություններով, քտղաքական սեփական ծրագիր չուներու Քաղաքականությունը կապակով էր տրված գործարարների կլիկին: Պաշտոնները բաժանվում էին այս կամ այն անձանց, այս կամ այն խմբակների միջև՝ ի վարձատրություն մա-

¹ Հարավցիները (և նրանց պաշտպանող «դեմոկրատական» կուսակցությունը) պահանջում էին առեւրի աղատություն, որ ձեռնտու էր բամբակարտահաններու համար. Հյուսիսցիները (և «հանրապետական» կուսակցությունը), ընդհակառակը, կողմնակից էին պրոտեկցիոնիզմի և ներմուծման բարձր մաքսերի՝ արդյունաբերությունը եվրոպական մրցությունից զերծ կաշնելու համար:

տուցված ծառայության։ Ասենք ով չի իմանում, թե ինչպես
է կատարվում այդպիսի «քաղաքականությունը»։

Այսպիսով, Զորջ Սթիները ժամանակին դարձել էր persona grata¹ էղուարդ Սթրոբիկի աշքին, որը նախ՝ քա-
ղաքապետարանի անդամ էր, հետո էլ իր շրջանի կառավա-
րի և ի վերջո քաղաքապետարանի նախագահ, իսկ մաս-
նավոր կյանքում քարհանքի ու աղյուսի գործարանի տեր։
Սթրոբիկը Հենրի Մոլենհաուերի՝ քաղաքական լիդերների
այդ եռյակի ամենատոռուզ ու գիշատիչ անդամի պոշն էր։
Երբ Մոլենհաուերը շահախնդրաբար ուսպում էր որևէ բան
ձեռք բերել քաղաքապետարանից, Սթրոբիկը հլու գործիք էր
դառնում նրա ձեռքին։ Մոլենհաուերի ցուցումով Սթիներն
ընտրվեց քաղաքապետարանի անդամ, իսկ քանի որ հնա-
զանդաբար իր ձայնը տվել էր հօգուտ նրան, ում հրամայել
էին տալ, ապա նա դարձավ ճանապարհների բաժնի վարիչի
օգնականը։

Այդտեղ էլ նա ընկավ էղուարդ Մելիա Բաթլերի տեսա-
դաշտը և սկսեց փոքրիկ ծառայություններ մատուցել նրան։
Որոշ ժամանակ հետո հանրապետական կուսակցության
կենտրոնական կոմիտեն Բաթլերի պլանավորությամբ որոշեց,
որ քաղաքային գանձապետի ոլաշտոնի համար պետք է մի
փափուկ, հլու ու միաժամանակ անառարկելիորեն հավատա-
րիմ մարդ. այսպիսով Սթիների անունը մտավ ընտրական
թերթիկի մեջ։ Սթիները թույլ էր ֆինանսական հարցերից,
թեև հիանալի հաշվապահ էր. բայց իրավախորհրդատու
նիգանը, որ նույնպես մի անխոս գործիք էր ամենազոր
եռապետության ձեռքին, միթե չէ՞ր կարող ուզած ժամանակ
օգտակար խորհուրդ տալ նրան։ Իհարկե կարող էր Այսպիսով
Սթիների թեկնածությունն անցկացնելը դժվարություն չէր
հարուցում։ Թեկնածուների ցուցակի մեջ մտցվելը հավասա-
րագոր էր ընտրվելուն։ Եվ մի քանի շաբաթվա հոգնեցուցիչ
հրապարակային ելույթներից հետո, երբ նա կմկմալով ու

¹ Բարեհաճ անձնավորություն (լատ.)։

տրորված նախադասություններով թոթվում էր; թե Ֆիլադելֆիային նախ և առաջ պետք է քաղաքային ազնիվ ինքնավարություն, Սթիներին պաշտոնապես նշանակեցին այդ գործին: Այս է բոլորը:

Այն հարցը, թե Զորջ Սթիների վարչական ու ֆինանսական ընդունակությունները որքան համապատասխան էին այդ պաշտոնին, ընդհանրապես ասած՝ ոչ մի դեր չէր կատարի, եթե Ֆիլադելֆիան, ինչպես ոչ մի այլ քաղաք, այդ ժամանակ չտառապեր վերին աստիճանի անհաջող ֆինանսական սիստեմից կամ ավելի ճիշտը՝ այդպիսին բնավ շունհնալուց: Բանն այն է, որ հարկային լիազորին ու գանձապետին իրավունք էր տրված քաղաքին պատկանող միջոցները կուտակել ու պահել քաղաքային սեյֆերից դուրս, ըստ որում ոչ ոք նրանցից չէր էլ պահանջում, որ այդ փողերը եկամուտ բերեն քաղաքին: Հիշյալ պաշտոնատար անձանց վրա պարտականություն էր դրված պաշտոնից հեռանալու դեպքում վերադարձնել քաղաքին միայն հիմնական դրամագլուխը:

Ոչ մի տեղ նախատեսված չէր, որ այդ ձեռվ դիզված կամ որևէ այլ աղբյուրից ստացված միջոցներն անձեռնմխելիութեն պահվեն քաղաքային գանձարանի սեյֆերում: Այդ փողերը կարող էին տրվել տոկոսով, ավանդադրվել բանկել րում կամ օգտագործվել մասնավոր ձեռնարկություններ ֆինանսավորելու համար, միայն թե վերադարձվեր հիմնական դրամագլուխը: Հասկանալի է, որ այսպիսի ֆինանսական քաղաքականությունը պաշտոնապես չէր վավերացվել, բայց դրա մասին դիտեին և՛ քաղաքական շրջանները, և՛ մամուլը, և՛ խոշոր ֆինանսավորությունը: Ուրեմն ինչպես կարելի էր վերջ դնել դրան:

Գործարարական հարաբերության մեջ մտնելով էդուարդ Մելիս Բաթլերի հետ՝ Քառութերվուդն անկախ իր կամքից և ըստ էռության ինքն էլ չգիտակցելով՝ ներգրավվեց արատավոր ու ամոթալի մեքենայությունների ոլորտի մեջ: Ցոթ տարի առաջ «Թայ և Ընկ.» գրասենյակից հեռանալիս երդվեց այլևս երբեք շըրադվել բորսայական խաղով: Խսկ հիմա դարձյալ անձնատուր եղավ դրան, միայն թե ավելի մեծ կրքոտությամբ,

որովհետև իր իսկ հաշվին՝ «Քառուփերվուդ և Ընկ.» ֆիրմայի հաշվին էր աշխատում և մեծ ցանկություն ուներ բավարարելու իր նոր հաճախորդներին՝ գործարարական հզոր աշխարհի ներկայացուցիչներին, որոնք հետզհետե ավելի հաճախ էին դիմում նրա աջակցության։ Այդ բոլոր մարդկանց մոտ փող էր լինում, թեկուզ և ոչ շատ։ Բոլորն էլ գաղտնի ինքորմացիա էին ճարում և հանձնարարում Քառուփերվուդին իրենց համար այս կամ այն բաժնետոմսերը գնել՝ առուծախի տարբերությամբ, որովհետև նրա անունը հայտնի էր քաղաքական շատ գործիչների, և նա էլ համարվում էր միանգամայն հուսալի մարդ։ Հիրավի այդպիսին էլ էր։ Մինչ այդ նա բորսայում ու սպեկուլյացիա էր արել, ո՛չ էլ խաղացել էր իր հաշվին։ Հաճախ նույնիսկ հանգստացնում էր իրեն այն մտքով, որ բոլոր տարիներին բորսայում հանդես չէր եկել իր անունից՝ խստորեն հարգելով իրեն տված կանոնը՝ սահմանափակվել ուրիշների հանձնարարությունները կատարելով։ Եվ ահա հիմա ներկայացավ նրան Զորջ Սթիները այնպիսի առաջարկով, որը չէր կարելի նույնացնել բորսայախաղի հետ, թեև ըստ էության ոչնչով չէր տարբերվում նրանից։

Անհրաժեշտ է անմիջապես պարզաբանել, որ Քաղաքացիական պատերազմից առաջ ու նրա ընթացքում Ֆիլադելֆիայում կիրառվում էր այսպիսի սովորույթ. գանձարանում կանխիկ միջոցներ պակասելու դեպքում թողարկվում էին այսպես կոչված քաղաքային պարտավորագրեր, այլ կերպ ասած՝ նույն մուրհակները տարեկան վեց տոկոս եկամուտով, որոնց ժամկետը լրանում էր երբեմն մի ամսից, երբեմն էլ վեց ամսից՝ նայած դումարին և այն րանին, թե գանձապետի կարծիքով բազարը երր ի վիճակի կլինի վճարել ու մարել այդ պարտավորագրերը։ Սովորաբար այդ կերպ էլ վճարում էին թե՛ մանր առևտրականներին, թե՛ խոշոր կապալառուներին։ Սակայն առաջինները՝ քաղաքային հիմնարկությունների մատակարարողները, կանխիկ դրամի կարիք զգալու դեպքում ստիպված էին գեղշով ծախել այդ մուրհակները՝ հարյուրի փոխարեն իննուուն, մինչդեռ մյուսները հնարավորություն ունեին պահել դրանք ու սպասել

Ժամկետի հասնելուն։ Այս սիստեմը իհարկե բացահայտողն վնասաբեր էր մանր առևտրականներին, բայց խիստ ձեռնտու խոշոր կապալառուներին ու բանկիրային գրասենյակներին, քանի որ ոչ մի կասկած չկար, թե քաղաքը ժամանակին կվճարի այդ պարտավորաթղթերը, իսկ դրանց բացարձակ բարեհուսության գեպքում տարեկան վեց տոկոսը հիանալի եկամուտ էր։ Մանր առևտրականներից պարտավորագրերը գնելով գոլլարի փոխարեն իննսուն ցենտով՝ բանկերն ու միջնորդները, եթե իհարկե սպասելու հարավորություն ունեին, վերջին հաշվով խոշոր վաստակ էին ունենում։

Սկզբում քաղաքի գանձապետը հավանորեն մտադիր էր վնաս հասցնել իր համաքաղաքացիներից որևէ մեկին, հնարավոր է, որ այդ ժամանակ դանձարանում իսկապես կանխիկ միջոցներ չկային վճարելու համար։ Բայց հետագայում այդպիսի պարտավորագրեր թողարկելն արդեն ոչ մի բանով չէր արդարանում, որովհետև քաղաքային տնտեսությունը կարող էր ավելի խնայողաբար վարվել։ Բայց այդ շրջանում այդ պարտավորագրերը, ինչպես Հեղտ է պատկերացնել, արդեն դարձել էին մեծ վաստակի աղբյուր միջնորդական գրասենյակ ունեցողների, բանկիրների ու խոշոր սպեկուլյանտների համար, ուստի և դրանց թողարկումը նախատեսվում էր քաղաքի ֆինանսական քաղաքականությամբ։

Ստկայն դա էլ ուներ իր շրջոնքը։ Ստեղծված գրությունը իր համար առավելապես ձեռնառու օգտագործելու մտադրությամբ պարտավորագրեր պահող խոշոր բանկիրը պետք է վներ նաև «իրենց մարդկանցից», այսինքն լավ հարաբերություններ ունենար Ֆիլադելֆիայի քաղաքական պարագուինների հետ, ապա թե ոչ, երբ նա կանխիկ դրամի կարիք ունեանար և իր պարտավորագրերն առած՝ գար քաղաքի գանձապետի մոտ, պարզվում էր, որ դրանց դիմաց վճար չի կատարվում։ Բայց բավական էր, որ նա հանձնի գրանք կառավարող կլիկին մոտիկ կանգնած որմէ բանկիրի կամ միջնորդի, այն ժամանակ գործը փոխվում էր։ Քաղաքի գանձառանն անմիջապես միջոցներ էր գտնում դրանք վճարելուց եվ կամ թե, եթե դա գալիս էր միջնորդի կամ բանկիրի

գործին (անշուշտ «յուրային»), ապա երեք ամսով տրված և արդեն վճարման ենթակա մուրհակների գործունեության ժամկետը երկարաձգվում էր և շատ տարիներով և առաջվա պես տարեկան վեց տոկոս էր տրվում, թեկուզ և քաղաքը դրանք մարելու միջոցներ ունենար: Այդպես ահա տեղի էր ունենում քաղաքի գանձարանի ծածուկ ու ոճրապարտ արնաքամությունը: «Փող չկա» բանաձեռ սքրողում էր բոլոր մեքենայությունները: Հասարակության լայն շրջանները ոչինչ չգիտեին: Եվ որտեղից պիտի իմանային: Թերթերը բավականաշատ զգոնություն հանդիս չէին բերում, որովհետև դրանցից շատերը կապալով էր վերցրել հենց նույն կառավարող կլիկը: Թեկուզ որևէ չափով քաղաքական կշիռ ունեցող մարդկանցից այդ շարաշահումների դեմ պայքարող համառ ու համոզված մարտիկներ չէին առաջանում: Պատերազմի շրջանում շմարված քաղաքային պարտավորագրերի ընդհանուր գումարը, տարեկան վեց տոկոսով հանդերձ, հասավ երկու միլիոն դոլլարից ավելի գումարի, և բանն սկսեց սկանդալային բնույթ ստանալ: Բացի դրանից, ալվանդատուններից մի քանիսը որոշեցին իրենց փողերը և ապահանջել:

Ահա այդ ժամկետանց պարտքը վճարելու, ինչպես նաև նորից ամեն բան թաքուն շարունակելու համար քաղաքի իշխանությունները որոշեցին փոխառություն բաց թողնել մոտավորապես երկու միլիոն դոլլարի (գումարի ճշգրտություն չէր պահանջվում) տոկոսաբեր սերտիֆիկատների ձեռվ՝ յուրաքանչյուրի անվանական արժեքը հարյուր դոլլար, որոնք ենթակա էին ետ գնվելու վեց, տասներկու ու տասնութ ամիս հետո: Սերտիֆիկատները, որոնք ետ գնելու համար մարման ֆոնդ էր առանձնացվում, ազատ վաճառքի էին հանվում և դրանցից ստացված փողով ենթադրվում էր մարել վաղուց ժամկետանց պարտավորագրերը, որոնք վերջերս այնքան անցանկալի ասեկուսեների տեղիք էին տվել:

Միանգամայն ակներեք էր, որ այդ ամբողջ կոմբինացիան ուներ մի նպատակ՝ «կողոպտել Պետրոսին՝ վճարելու համար Պողոսին»: Փաստացի ոչ մի խոսք չէր կարող լինել ժամկետանց պարտավորագրերը ետ գնելու մասին: Այդ

ամբողջ մտադրությունը հանգում էր այն բանին, որ նույն կլիկի ֆինանսիստները կարողանան առաջվա պես մաքրագործել քաղաքի գանձարանը. սերտիֆիկատները ծախում էին «ում պետք է», հարյուրի համար իննսուն և նույնիսկ ավելի պակաս, այն պատրվակով, որ ազատ շուկայում դրանք իրացվել չեն կարող՝ քաղաքի սակավ վարկումակության պատճառով: Մասսամբ այդպես էլ էր: Պատերազմը նոր էր վերջացել: Փողը արժեք ուներ: Կապիտալիստները կարող էին ուր ասես ավելի բարձր տոկոս ստանալ, եթե քաղաքային փոխառության սերտիֆիկատները իննսուն դոլարով շտրվեին նրանց: Սակայն քաղաքագետների մի փոքր խումբ, որ մասնակից չէր քաղաքի կառավարչությանը և զգույշ էր վերաբերում նրա գործունեությանը, ինչպես նաև մի շարք թերթեր ու քաղաքականությունից հեռու կանգնած որոշ ֆինանսիստներ երկրում առաջացած հայրենասիրության ընդհանուր վերելքի ազդեցությամբ պնդում էին, որ փոխառությունը հավասարարժեք տարածվի: Ուստի և փոխառություն թողարկելու որոշման մեջ հարկ եղավ մտցնել համապատասխան կետ:

Ինքնին հասկանալի է, որ այս հանգամանքը խախտում էր սերտիֆիկատները իննսուն դոլարով ստանալու հույս ունեցող քաղաքագետների ու ֆինանսիստների ծածուկ համաձայնությունը: Պետք էր այսպես թե այնպես կորզել քաղաքի ժամանեանց պարասավորագրերի մեջ անշարժացած իրենց փողերը, քանի որ քաղաքը միշոց չունենալու պատճառով ետ չէր գնում դրանք: Մնում էր մի ելք՝ գտնել բորսայի բոլոր նրբություններին իրազեկ միջնորդ: Այդ միջնորդը հանձն առնելով տարածել քաղաքի նոր փոխառությունը՝ կապիտալը ձեռնտու կերպով՝ ներդնելու տեսք կտար դրան և այդպես սերտիֆիկատները կիրացներ դրսում՝ հատը հարյուր դոլարով: Իսկ հետո, եթե փոխառության գինն ընկներ (իսկ քա անխուսափելի էր), իրենք կկարողանային ուզածի շահ սերտիֆիկատ գնել և առաջին իսկ հարմար առիթով ներկայացնել քաղաքին՝ անվանական գնով վճարելու համար:

Զորջ Սթիները, որ հենց այդ ժամանակ նշանակվեց

գանձապետ, այնուամենայնիվ բավականաշափ ֆինանսական ընդունակություններ չուներ այդքան բարդ պրոբլեմ բուծելու համար, ուստի բավականին անհանգստացել էր: Քաղաքային բազմաթիվ հին պարտավորագրեր ունեցող Հեյրի Մոլենհառտերը, որ այժմ ցանկանում էր ստանալ իր փողերը ու ներդնել Արևմուտքի խոստմնալի ճեռնարկություններում, այցելության եկավ Սթիներին, ինչպես նաև քաղաքապետին: Նա, Սիմֆոնն ու Բաթլերը կազմում էին «մեծ եռյակը»:

— Ես կարծում եմ, թե ժամանակն է արդեն մի կերպ ազատվել ժամկետանց պարտավորագրերի հետ կապված դրությունից, — հայտարարեց նա: — Դրանցից հսկայական քանակությամբ կուտակվել է ինձ մոտ, ասենք և ուրիշների մոտ: Երկար ժամանակ մենք օգնում էինք քաղաքին առանց մի խոսք ասելու, բայց հիմա վերջապես կարելի է գործել: Սիստր Բաթլերը և միստր Սիմֆոնը նույն կարծիքին են: Չի կարելի արդյոք նոր փոխառության սերտիֆիկատները գնահատման դնել դրամական րորսայում և այդպիսով իրացնել դրամները: Ճարապիկ մի միջնորդ կկարողանար հասցնել գրանք հավասար արժեքի:

Սթիները խիստ շոյվեց Մոլենհառտերի այցելությունից: Այս մարդը հազվադեպ էր նեղություն քաշում մարդկանց մեջ երեալու, իսկ երր երեսում էր, առաջ համապատասխան ազդեցություն գործելու մասղբությամբ: Այժմ նա եղել էր քաղաքակետի և քույաքապետարանի նախագահի մոտ, որոնց, ինչպես և Սթիների հետ խոսելիս պահում էր մեծամիտ, անմատչելի ու անթափանց տեսք: Մի՛թե դրանք նրա համար պարզապես գեսուգեն վագեցնելու մանշուկներ չեին:

Որպեսզի պարզենք, թե ինչն էր Մոլենհառտերի՝ Սթիների հանդեպ ցուցաբերած հետաքրքրության պատճառը և որքան մեծ նշանակություն ունեին նրա այցելությունը և դրան հաջորդած գանձապետի գործողությունները, անհրաժեշտ է մի հայացք նետել նկարագրվող գեպերին նախորդած քաղաքական իրազրության վրա: Թեև Զորջ Սթիները որոշ շափով Մոլենհառտերի կամակատարն էր ու դրածոն, բայց սա մակերասորեն էր միայն ճանաշում նրան: Ճիշտ է, նա մի քանի ան-

գամ տեսել էր Սթիներին ու որոշ բաներ լսել նրա մասին, բայց նրա անոնք թեկնածուական ցուցակի մեջ մտցնելուն համաձայնել էր միայն իր մերձավորների հորդորանքով, որոնք հավատացնում էին, թե Սթիները «շատ լավ տղա է», հնագանդ էլ կմնա, ոչ մի գլխացավանք չի պատճառի ոչ ոքի և այլն։ Մոլենհառերը առաջ՝ մյուս կառավարչության օրոք ևս կապ էր պահպանում քաղաքի գանձապետության հետ, սակայն միշտ էլ այնքան զգուշ, որ ոչ ոք չէր կարող բռնել նրան։ Նա շատ ականավոր դեմք էր թե՛ քաղաքական, թե՛ ֆինանսական աշխարհում։ Այնուամենայնիվ նրան բնավանախորժություն շպատճառեց եթե ոչ Բաթլերի, ապա Սիմֆոնի հնարած պլանը՝ քաղաքական ու առեւտրական աշխարհին պատկանող դրածո մարդկանց օգնությամբ, կամցուկ, առանց սկանդալի, քաղաքային գանձարանից քաշել այն ամենը, ինչ հնարավոր է։ Այսպիսով մեր նկարսահրած դեպքերից մի քանի տարի առաջ այդ նպատակով կազմված էր հատուկ գործակալություն՝ քաղաքային խորհրդի նշխագահ էղուարդ Սթրորիկը, այն ժամանակվա քաղաքապետ էյս Քոնքինը, օլդերմեններ¹ Թոմաս Ուայքրոֆթը, Զեյքեր Հարմոնը և շատ ուրիշներ։ Սրանք կազմակերպել էին մի շարք ֆիրմաներ բազմազան շինծու անոններով ու ծախում այն ամենը, որ կարող էր պետք լինել քաղաքի տնտեսությանը՝ փայտեղին, քար, երկաթ, պողպատ, ցեմենտ և այլն, և այլն, անշուշտ հոկայական օգուտ տալով նրանց, ովքեր թաքնված էին այդ մատացածին անունների տակ։ Դա քաղաքին ազատում էր ապնիվ ու բարեխիղճ մատակարարներ փնտրելու հոգսից։

Քանի որ Քառուկերվուդի հետագա պատմությունը կապվելու է այդ «ֆիրմաներից» երեքի հետ, անհրաժեշտ է համառոտակի նկարագրել դրանց գործունեությունը։ Դրանց դեկավարն էր էղուարդ Սթրորիկը՝ Մոլենհառերի ամենահռանգուն արքանյակներից մեկը։ սա ճարպիկ ու ծակամուտ մի մարդ էր՝ մոտ երեսունհինգ տարեկան, նիհար, սեպահեր, սեազվի, սև ահագին բեղերով։ Հագնվում էր

1 Քաղաքային խորհրդի անդամներ (Ամերիկայում)։

նա պերճ ու սեթեեթ՝ զոլավոր շալվար, սպիտակ ժիլետ, սև այցազգեստ ու մետքասե բարձրադիր զիտիարկ: Աըտակարգ ծեքծեքուն ձեի կոշիկները միշտ մաքուր էին փայլիլու աստիշան: Իր անթերի արտաքինի համար արժանացել էր «պշրասեր» մականունին: Դրանով հանդերձ նա բավական ընդունակ մարդ էր, ու շատերն էին սիրում նրան:

Նրա երկու գործակիցները՝ միստր Թոմաս Ուայքրոֆթը և միստր Հարմոնը այդքան հաճելի ու փայլուն արտաքին շռնեխն: Հարմոնը, որ հասարակության մեջ տաղտուկ էր պատճառում ամենքին, բավական լավ էր հասկանում ֆինանսական հարցերը: Մուգ շագանակագույն աշքերով լողլող ու շեկիկ այդ մարդը, չնայած իր մելամազդու արտաքինին, անխելք չէր ու միշտ պատրաստ էր նետվելու ոչ այնքան մեծ շափի և քրեական օրենսգրքի տեսակետից բավական անվտանգ որեւէ աֆերայի մեջ: Այնքան էլ խորամանկ չէր նա, բայց ամեն գնով ուզում էր առաջ գնալ:

Թոմաս Ուայքրոֆթը՝ այս օդտակար, սակայն կիսահարդ եռապեսամիլյան վիրջին անգամի, մի բարձրահասակ, նիհար մարդ, հյուծված, մակաղաթանման դեմքով ու խոր ընկած աշքերով, չնայած իր սպորմելի արտաքինին, օժտված էր անսովոր խելուսի: Ջրագմունքով ձուլող էր նա և պատահաբար էր բաղաբական զործիլ դարձել, ինչպես և Սթիները, որովհետի կարողանում էր օգտակար լինել: Նա կարողացել էր մի փոքրիկ գումար դիզել շնորհիլ Սթրորիկի գլխավորած այդ եռապեսամիլյանը մասնակցելուն, որը զբաղվում էր բազմազան ու բավական յուրօրինակ գործերով, որոնց մասին կխոսենք ստորև:

Այն ֆիրմաները, որ կազմակերպել էին Մոլենհաուերի արբանյակները դեռ քաղաքապետարանի հին կազմի օրոք, մսի, շինանյութերի, լապաերի սյուների, ճանապարհաշինական պիտույքների ու այն ամենի առեսուր էին անում, ինչ կարող էր պետք լինել քաղաքի տնտեսությանը: Քաղաքի տված կապալը ենթակա չէ շեղյալ համարվելու, բայց դա ստանալու համար նախ՝ անհրաժեշտ է «յուղել» քաղաքային ինքնավարության անդամներից ոմանց, իսկ դրա համար

փողէ պետք։ Ֆիրման բնավ էլ պարտավոր չէ անձամբ անաստան մորթել կամ լապտերի սյուներ ծովել նա պարտավոր է միայն կազմակերպել այդ գործը, առևտրական պատենտ ստանալ, քաղաքային ինքնավարությունից մատակարարման կապալ ձեռք բերել (իսկ մնացածը արդեն կհոգան Սթրոբիկը, Հարմոնը և Ուայքրոֆթը), հետո էլ կապալը հանձնել սպանդանոց ունեցողներին կամ ձուզման գործարանին, որոնք և կմատակարարեն պահանջվածը՝ միշնորդ ֆիրմային մասնահանելով եկամուտի համապատասխան բաժինը. այդ բաժինն էլ իր հերթին կբաշխվի և մասամբ կտրվի Մոլենհաուտերին ու Սիմիսոնին՝ անվանելով դա կամավոր նվիրատվություն ի պետս նրանց գլխավորած քաղաքական ակումբի կամ միավորման։ Այս ամենը արվում էր շատ պարզ ու որոշ շափով միանգամայն օրինական ձևով։ Սպանդանոցի կամ ձուզարանի տերը չէր էլ համարձակվում կապալն անձամբ ձեռք բեռ բեռ մասին երազել։ Սթիները կամ որևէ մի ուրիշը, որ այդ ժամանակ քաղաքային գանձարանի վարիչն էր և որ բարձր տոկոսով սպանդանոցի կամ ձուզարանի տիրոջն անհրաժեշտ դրամ էր փոխ տալիս՝ իբրև մատակարարման ապահովում կամ կապալը կատարելու համար, ստանում էր ոչ միայն իր մեկ կամ երկու տոկոսը, որ զնում էր գրապանը (չէ՞ որ այդպես էին արել նրա նախորդները), այլև եկամուտի մի պատկասելի մասը։ Որպես գլխավոր գործավար Սթիներին հանձնարարել էին խոնարհ և բերանը փակ պահել իմացող մի մարդու՝ «յուրացիններից»։ Գանձապետին ամենեին չէր վերաբերում, որ Սթրոբիկը, Հարմոնը և Ուայքրոֆթը, գործելով հօգուտ Մոլենհաուտերի, եղբեմն երբեմն քաղաքից փոխ առած միջոցները գործածում էին ոչ այն նպատակով, որի համար վերցված էին։ Նրա պարտականությունն այն էր, որ դրամ փոխ տա դրանց։

Բայց տեսնենք,թե ինչ եղավ հետու նախքան Սթիները նկատի կառնվեր որպես քաղաքի գանձապետ, Սթրոբիկը, ի դեպ ասած, այդ պաշտոնին ձգտելիս նրա երաշխավորներից մեկը (որ ինքնին արդեն ապօրինի էր, որովհետեւ ըստ Պենսիլվանիա նահանգի սահմանադրության՝ ոչ մի պաշտոնա-

կան անձ չի կարող մի ուրիշի երաշխավորը լինել) ակնարկեց նրան, որ իր ընտրությանը նպաստող մարդիկ իրենից ոչ մի ապօրինի բան չեն պահանջի, բայց նա պետք է հարմարվող լինի, շառարկի քաղաքի ուուած բյուզեի դեմ, կարճ ասած՝ չկծի իրեն սնուցող ձեռքը: Ոչ պակաս հստակությամբ հաշկացրին նրան, թե հենց որ անցնի պաշտոնի, որոշ բան է: Իր ձեռքը կընկնի: Ինչպես արդեն ասել ենք՝ Սթիները ողջ կյանքում աղքատ էր եղել: Նա տեսնում էր, որ քաղաքականությամբ գրադպող մարդիկ նյութապես բարգավաճում էին, մինչդեռ ինքը, լինելով ապահովագրական գործերի և անշարժ կայքի վաճառման գործակալ, հազիվ ծայրը ծայրին էր հասցնում: Քաղաքական մանր արբանյակի նրա բախտին ընկնում էր շատ ու ծանր աշխատանք: Քաղաքական մյուս գործիչները հիանալի մենատներ էին ձեռք բերում քաղաքի նոր շրջաններում: Զվարճալի ուղևորություններ էին կատարում նյու-Յորք, Հարիսբուրգ կամ Վաշինգտոն: Ամուսն սեղոնին իրենց կուսանց կամ սիրուհների հետ զվարճանում էին քաղաքամերձ հյուրանոցներում, իսկ իր ասաց զեօն փակ էր այդ բախտավորների բնկերության մեջ մուտք դործելը: Միանգամայն բնական է, որ այդ խստառամները հրապարեցին նրան, և նու ոչ մի ջանք չէր խնայում: Վերջապես ինքն էլ կհասնի բարեկեցության:

Երբ նրա մոտ եկավ Մոլենհաուերը և ասաց, թե անհրաժեշտ է բարձրացնել քաղաքային փոխառության սերտիֆիկատների կուրսը և հասցնել անվանական արժեքին (թեև այս խոսակցությունն անմիջականորեն չէր վերաբերում այն հարաբերություններին, որ Մոլենհաուերը Սթրոբիկի և ուրիշների միջոցով պահպանում էր գանձապետի հետ), Սթիները լսելով տիրոջ ուժգին ձայնը, շտապեց ստորագրել իր քաղաքական ստրկահաճության տակ ու սլացավ Սթրոբիկի մոտ՝ ավելի մանրամասն ինֆորմացիա ստանալու:

— Ինչպես կվարվեիք իմ տեղը, — հարցրեց նա Սթրոբիկին, որն արդեն գիտեր, թե Մոլենհաուերը եղել է գանձապետի մոտ, բայց սպասում էր, որ նա ինքը խոսի այդ մասին: — Միստր Մոլենհաուերը դանկություն հայտնեց, որ փո-

խառությունը գնահատման դրվի բորսայում ու հասցվի անվանական արժեքի, այսինքն ամեն մի սերտիֆիկատը ծախվի հարյուր դոլարով:

Ո՞չ Սթրոբիկը, ո՞չ Հարմոնը, ո՞չ էլ Ուայքրոֆթը չէին իմանում ինչ անեն, որ բաց շուկայում իննուուն դոլար գնահատվող քաղաքային փոխառության սերտիֆիկատները բորսայում ծախվեն հարյուրով. բայց Մոլենհաուերի քարտուղար ոմն էքներ Սենգսթեկը հասկացրեց Սթրոբիկին՝ դիմել երիտասարդ Քառուփերվուդին. այսպես թե այնպես նրա հետ գործեր է բռնում Բաթլերը, իսկ Մոլենհաուերը երկի չի պնդի, որ այս գործի մեջ ներգրավեն իր անձնական միջնորդին, ուրեմն ինչո՞ւ շփորձել Քառուփերվուդին:

Ահա թե ինչպես եղավ, որ Ֆրենկը հրավեր ստացավ անցնելու Սթիների մոտ: Մտնելով նրա առանձնասենյակը ու դեռ շիմանալով, թե այդ հրավերի տակ թաքնված են Մոլենհաուերն ու Սիմֆոնը, նա առաջին իսկ հայացքը նետելով տարօրինակ կերպով ոտքը քարշ տվող այդ այտոսկրավոր մարդուն՝ հասկացավ, որ գանձապահը ֆինանսական գործերում իսկական ծծկեր է: Օ՛, եթե կարողանա դառնալ այդ մարդու խորհրդականը, միակ կոնսուլտանտը նրա պաշտոնավարության չորս տարիներին:

— Բարեկ ձեղ, միստր Սթիներ,— մեղմ ու շողոմ շեշտով ասաց Քառուփերվուդը, երբ դանձապետը ձեռքը մեկնեց նըշքան: — Շատ սրբայի եմ ձեզ հետ ծանոթանալուս համար: Ես, անշուշտ, շատ եմ լսել ձեր մասին:

Սթիներն սկսեց երկար-բարակ ու տաղտկալի շարադրել Քառուփերվուդին ստեղծված դժվարությունը: Հեռվից և կսելով ու ստեղպ-ստեղպ կմկմալով՝ նա բացատրեց, թե որքան են սարսափեցնում իրեն մոտալուս դժվարությունները:

— Գլխավոր խնդիրը, որքան հասկանում եմ ես, այդ սերտիֆիկատների համարժեք գնահատման հասնելն է: Ես կարող եմ դուրս հանել դրանք ուզած քանակությամբ և ձեզ համար ցանկալի հաճախականությամբ: Ներկայումս ես ուզում եմ ձեռք դցել մի գումար, որը բավականացնի մարելու

Երկու հարյուր հազար դոլլարի կարճաժամկետ պարտավորագրերը, իսկ հետո՝ որքան հաջողվի:

Քառուկիերվուղն իրեն զգաց այն բժշկի դերում, որն ունկընդունմ է Հիվանդին, թեև սա բնավ էլ Հիվանդ չէ, բայց սաստիկ ուզում է, որ իրեն հանգստացնեն և դրա համար մեծ վճար է խոստանում: Թորոսյի դրամական մանվածապատ խաղերը հասկանալի էին նրան, ինչպես երկու անգամ երկու՝ չորս: Նա գիտեր, որ եթե փոխառության իրացումը միմիայն իր ձեռքն ընկնի, եթե ինքը կարողանած ծածուկ պահել, թե գործում է քաղաքի կողմից, և եթե վերջապես Սթիները թույլ է տալիս իրեն գործել բորսայում «եղի» դերում, այսինքն սերտիֆիկատներ գնել մարման ֆոնդի համար ու միաժամանակ հմտորեն ծախել դրանք կուրսը բարձրացնելու միջոցով, ապա ինքը խիստ փայլում արդյունքների կհասնի անգամ ամենախոշոր թողարկման դեպքում: Բայց ինքը պետք է տնօրինի անձամբ և ունենա սեփական գործակալներ: Նրա գլխում արդեն մշակվում էր այն ոլլանիր, որով անշրջահայտց բորսայականներին սիրափառ հարկադրեր խաղալ իշխնելու միտումով. պետք է միայն ոսախողել նրանց հավատալու, որ այդ փոխառության սերտիֆիկատներից որքան ասես կա շրջանառության մեջ, այնպիս որ ցանկացած դեպքում ժամանակ կունենա հավաքագրել դրանք: Հետո ուշքի կգան ու կտեսնեն, որ ֆարել չի կարելի, որ բոլոր սերտիֆիկատներն իր ձեռքին են, թուուիերվուղի ձեռքին: Բայց ինքը միանգամից բաց չի անի իր զաղանյիբու: 0՝, ոչ. ո՞չ մի դեպքում: Կսկսի բարձրացնել սերտիֆիկատի արժեքը ու հասցնել անվանականին, հետո էլ վաճառքի կհանի: 0՝, այնժամ ինքն էլ կարգին վաստակ կանի այդ գործից: Քառուկիերվուղը շատ էր աշքաբաց, որպեսզի շհասկանար, որ այդ բոլորի ետևում թաքնված են քաղաքի նույն կառավարիչները, իսկ Սթիների ետեղ կանգնած են շատ ավելի խելացի ու նշանակալի մարդիկ: Բայց դրանից ի՞նչ վնաս: Որքան զգույշ ու խորամանկ են վարվել նրանք՝ դիմելով իրեն Սթիների միջոցով: Հնարավոր է, որ իր անուն

սկսում է կշիռ ստանալ տեղի քաղաքական շրջաններում: Իսկ դա շատ բան է խոստանում իրեն ապագայում:

— Այսպես ուրեմն, միստր Սթիներ,— ասաց նա՝ գանձապետի քացատրությունները լսելով ու տեղեկանալով, թե քաղաքային փոխառության ո՞ր մասը կուզենար իրացնել նա եկող տարի:— Ես հաճությամբ հանձն կառնեմ այդ գործը: Բայց ինձ պետք է մեկ կամ երկու օր, որպեսզի մի լավ մտմտամ ամեն ինչ:

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, միստր Քառուփերվուդ, — շտապշտապ համաձայնեց Սթիները:— Աճապարելու կարիք չկա: Բայց հայտնեցեք ինձ, հենց որ հանգեք այս կամ այն որդիման: Ի դեպ, ինչքա՞ն եք կոմիսիոնային վերցնում:

— Գիտեք ինչ, միստր Սթիներ, դրամական բորսայում հաստատված է որոշ դրույք, որը մենք՝ միշնորդներս, պետք է հարգենք. այն է՝ պարտատոմսի կամ պարտավորագրի անվանական արժեքի շորս տոկոսը: Ճիշտ է՝ կարող է ես հարկադրված լինեմ կատարել մի շարք շինծու գործարքներ (հետո կբացատրեմ ձեզ ինչպես և ինչ), բայց դրա համար ձեզնից ոչինչ չեմ առնի. դա կմնա մեր մեջ: Ես ձեզ համար կանեմ այն ամենը, ինչ պատում է իմ ուժը, միստր Սթիներ, կարող եք չկասկածել: Բայց թողեք մի երկու օր մտածեմ:

Նրանք սեղմեցին միմյանց ձեռքը ու բաժանվեցին երկուսն էլ զոհ, Քառուփերվուդը, որ ֆինանսական մի խոշոր դործարք էր կատարելու, Սթիները, որ գտել էր մի մարդ, որի վրա կարող էր հույս գնել:

ԳԼՈՒԽ ԽՎ

Մի քանի օր մտմտալուց հետո Քառուփերվուդի մշակած պլանը կարող է հասկանալի լինել ամեն ոքի ,ով փոքրիշատե ըմբռնում է առետրական ու ֆինանսական կոմբինացիաները, սակայն մշուշային կմնա անիրազեկների համար: Նախ և առաջ գանձապետը պետք է քաղաքային միջոցներն ավանդ դնի Քառուփերվուդի գրասենյակում: Այնուհետև փաստորեն սրա տրամադրության տակ դնի և կամ նրա վարկին

գրի իր մատյանների մեջ և իրավունք տա ուզած ժամանակ ստանալու քաղաքային փոխառության սերտիֆիկատներ՝ մաս-մաս, սկզբում երկու հարյուր հազար դոլարի, քանի որ այդպիսի գումարը ցանկալի էր արագ իրացնել, որից հետո Քառուիերվուղը պարտավորվում է շրջանառության մեջ մտցնել այդ սերտիֆիկատները և միջոցներ ձեռք առնել դըրանց անվանական արժեքին հասցնելու համար։ Այնժամ քաղաքի գանձապետն անմիջապես կդիմի դրամական բորսայի կոմիտեին՝ մտցնելու դրանք գնահատման դրվող արժեթղթերի ցուցակի մեջ, իսկ Քառուիերվուղը ի գործ կդնի իր ամբողջ ազդեցությունը՝ այդ միջնորդության քննարկումն արագացնելու համար։ Համապատասխան թույլատրություն սաացվելուց հետո Սթիները նրա միջոցով, և միմիայն նրա միջոցով, կիրացնի քաղաքային փոխառության բոլոր սերտիֆիկատները։ Այնուհետև Սթիները թույլ կտա նրան մարման փոխի համար զնելու այնքան սերտիֆիկատ, որքան Քառուիերվուղն անհրաժեշտ համարի զնել՝ դրանց դինն անվանական արժեքին հասցնելու նպատակով։ Դրան հասնելու համար (երբ արտիկ զգալի քանակությամբ սերտիֆիկատ շըրջանառության դրուի), զայտն անհրաժեշտ լինի դարձյալ գնել զրանք լրագրական քանակությամբ, հետո էլ, որոշ ժամանակ անց, կրկին վաճառքի հանել։ Հարկ կլինի որոշ չափով անտեսել այն օրենքը, ըստ որի սերտիֆիկատը կարելի է ծախել միայն անվանական արժեքով, իսկ դա նշանակում է, թե շինծու ու նախնական գործարքները հաշվի չեն առնվի, մինչև որ սերտիֆիկատները հասնեն անվանական արժեքին։

Քառուիերվուղը հասկացրեց Սթիներին, որ այդ պլանը րավականին առավելություններ ունի։ Նկատի ունենալով, որ սերտիֆիկատները վերջին հաշվով այսպես թե այնպես կհասնեն անվանականին, ապա ոշինչ չի խանգարի Սթիներին, ինչպես և ամեն մի ուրիշի, գնել դրանք էժան՝ փոխառության իրացման հենց սկզբին ու պահել, մինչև որ դրանց դինն սկսի բարձրանալ։ Քառուիերվուղը հաճությամբ ուզած գումարի հաշիվ բաց կանի Սթիներին, որպեսզի սա հաշվե-հարգար կատարի իր հետ ամեն ամսվա վերջին։ Բայ այսմ

ոչ ոք չի պահանջի, որ նա իսկապես սերտիֆիկատ գնիւթակութեալ նրա հաշիվը կպահի որոշ, շափավոր տարբերասակով, ասենք տասը կետով, այդպիսով Սթիները կարող է համարել, թե փողերն արդեն իր գրպանն են: Եվ դեռ շխոսելով այն մասին, որ մարման փոնդի համար սերտիֆիկատներ կարելի կլինի գնել շատ էժան, որովհետև Քառութերվուդն իր տրամադրության տակ ունենալով փոխառության հիմնական ու պահեստի թողարկումը՝ շուկա կնետի դրանք անհրաժեշտ քանակությամբ ճիշտ այն պահերին, երբ որոշի գնել, և դրանով իսկ ճնշում կգործադրի բորսայի վրա: Իսկ հետո գներն արդեն անկասկած կսկսեն բարձրանալ: Եթե անբաժան կերպով իր ձեռքին պահի փոխառության թողարկումը, իսկ դա հնարավորություն կտա բորսայում կամայականորեն բարձրացնել ու իշեցնել գները, ապա կարելի է շկասկածել, որ վերջին հաշվով քաղաքը կիրացնի իր ամբողջ փոխառությունը անվանական արժեքով, իսկ այդպիսի արհեստական տատանումների շնորհիվ ակներեաբար կհաջողվի դարձյալ շահավետ գործ անել, այն էլ ոչ վատ: Վաստակի տեսակետից Քառութերվուդն իր գլխավոր հույսը գնում էր այդ հանգամանքի վրա: Փոխառության սերտիֆիկատները հավասարարժեք ծախելու համար իր իսկապես կատարած բոլոր գործարքների դիմաց քաղաքը կլարձատրի նրան սովորական միջնորդավճար տալով (դա անհրաժեշտ է բորսայի կոմիտեի հետ թյուրիմացություններից խուսափելու համար): Ինչ վերաբերում է մյուս ամեն ինչին, օրինակ շինծու գործարքներին, որոնց հաճախ հարկ կլինի դիմել, ապա նա հույս ունի ինքը վարձատրել իրեն իր ջանքի համար՝ հիմնվելով բորսայական խաղի ճանաչողության վրա: Եթե Սթիներին հաճելի է բաժնընկեր դառնալ իրեն բորսայական մեքենայությունների մեջ, ինքը շատ ուրախ կլինի:

Այսպիսի կոմբինացիան, որ մանվածապատ է անիրազելի մարդուն, միանգամայն պարզ է ամեն մի փոքրիշատե փորձված բորսայականին: Ամենաբազմազան տրյուկներ վաղուց անտի կատարվել են բորսայում, երբ բանը վերաբերել է անբաժան կերպով մի մարդու կամ որոշ խմբակի վերահսկո-

զության տակ գտնվող արժեթղթերին: Այս կոմքինացիան ամենակին չէր տարբերվում այն բանից, ինչ հետագայում արվում էր «իրի», «Ստանդարտ օյլ», «պղնձի», «շաքարի», «ցորենի» և ամեն տեսակ այլ բաժնետոմսերի հետ: Քառ-փերվուդն առաջիններից մեկն էր (դեռ երիտասարդ բորսայական լինելիս), որ հասկացավ, թե ինչպես են գործ դրսութում: Առաջին անգամ Սթիներին հանդիպելու պահին նա բանութ տարեկան էր: Երբ վերջին անգամ «գործակցեց» նրա հետ, լրացավ նրա երեսունչորս տարին:

Ավագ ու կրտսեր Քառուփերվուգների տների կառուցումը ու «Քառուփերվուգ և Ընկ.» բանկիրական գրասենյակի ճակատի վերափոխումն արագ առաջ էին ընթանում: Գրասենյակի ճակատը վաղ ֆլորենտական ոճով էր՝ գեպի վեր նեղացող պատուհաններով, կոփածո նախշավոր դուռ՝ նրբագեղ, քանդակազարդ սյուների և թուփ կրաքարե կամարների միջև: Այս ոչ բարձր, բայց զեկոցիկ ու ազդու դռան կենտրոնում հմտութեն կերամիա եր մի նուրբ ու բարակ ձեսր՝ բոցավառ ցանքը վիր պահածու էլուսուրիթ Քառուփերվուգին բացառքից, որ Շնում Վենետիկում այսուիսի ձեսր էին պատկերում լուժայիսիների կրտսեների ցուցանակների վրա, բայց հիմա այս խորհրդանշական նշանակությունը մոռացվել է:

Ներսից շենքը պատված էր փայլեցրած փայտով, որի նախադասությունը նման էր ծառաբռնի: Պատուհանները՝ շողջողում էին բաղմաթիվ մանր, զղկված, ձվածե, երակարավուն, քառակուսի ու կլոր ապակիներով, որոնք դասավորված էին ըստ սրոշակի, ակնահաճո պատկերի: Գազի լեզվակները շինված էին հոսմեական կանթեղների ձևով, իսկ գրասենյակի անկեզ դրամարկղը, որքան էլ տարօրինակ լինի, զարդարանքի դեր էր կատարում՝ դրված էր գրասենյակի խորքում, մարմարե պատվանդանին, և նրա ջնարկված արծաթագորշ մակերեսի վրա ոսկետառ քանդակված էր «Քառիկերպուդ և Ընկ.»: Ամ- րոդշ շենքը, որ ձեավորված էր ազնվորեն զուսպ ճաշակով, միաժամանակ և բարգավաճման, պատկառելիության ու հաւաալիության վկայություն էր: Երբ շենքը պատրաստ էր,

Քառուկիերվուղը դիտեց ու գոհ արտահայտությամբ գովեց էլսուորթին:

— Հավանում եմ, շատ գեղեցիկ է: Այստեղ աշխատելը հաճույք կլինի: Եթե տներն էլ այսպես ստացվեն, հիանալի կլինի:

— Սպասեցեք, դեռ մի՛ գովեք. դեռ պատրաստ չեն: Ասենք ես կարծում եմ, որ գոհ կմնաք, միստր Քառուկիերվուցւ ես շատ եմ միտքս տանջել ձեր տան պատճառով՝ նրա փոքր շափերի համար: Զեր հոր տունն ավելի հեշտ եմ հատակագծում: Բայց ձերը...

Եվ նա սկսեց նկարագրել նախասրահն ու մեծ և փոքր հյուրասենյակները, որոնք տեղադրել ու այնպես էր մշակել, որպեսզի ավելի ընդարձակ ու ազդու տեսք ունենային, քան թույլ էին տալիս նրանց համեստ շափերը:

Երբ շինարարությունն ավարտվեց, պարզվեց, որ հիրավի երկու տներն էլ խիստ տպավորիլ են, ինքնատիպ և բնավ նման չեն կողքներին եղած սովորական առանձնատներին: Դրանք բաժանված էին մոտ տասներկու ոտնաշափ լայնություն ունեցող կանաչ բացատով: Ճարտարապետը որոշ բաներ վերցնելով՝ թյուղորների դպրոցից՝ հրաժարվել էր այն պաճումներից, որոնք հետագայում հատկանշական դարձան Ֆիլադելֆիայի ու ամերիկյան այլ քաղաքների շատ մինատների համար: Լավ էին մանավանդ լայն, ցած ու ժլատորին դարդանակարիլած կամարների մեջ գտնվող դռները և արտասովոր ձկի երեք լապտերապատուհանները՝ մեկը երկրորդ հարկում, երկուսը ներքեւում՝ հոր տան ճակատին: Երկու տների ճակատների վերևում երեսում էին տանիքի գարողաձիերը՝ երկուսը ֆրենկի, չորսը հոր տան վրա: Ամեն մի ձակատն առաջին հարկում ուներ մի լուսամուտ խոր որմնախորշում, որը կազմվել էր արտաքին պատի ելուստներից: Խոր որմնախոռոչների մեջ գտնվող այս պատուհանները փողոցի կողմից պաշտպանված էին ցածլիկ ճաղաշարով ավելի ճիշտը՝ բազրիքով: Դրա վրա կարելի էր դնել մագրւցող բույսեր ու ծաղիկներ պարունակող թաղարներ, որը և արվեց հետո գնամայում: Այնպես որ կանաչապատ լուսամուտ-

ները կողոցից առանձնապես հաճելի տեսք ունեին։ Որմնախոռոշների խորքում Քառակերպութներն աթոռներ դրին։

Երկու տների ստորին հարկերում ձմեռային պարտեզներ սարքվեցին՝ մեկը մյուսի դիմաց, իսկ ընդհանուր բակի մեջտեղը՝ սպիտակ մարմարե ութ ոտնաշահ տրամագծով շատրվան, կենտրոնում մարմարե մի կուպիդոն, որի վրա էին ընկնում ջրի շիթերը։ Այդ բակը, որ շրջապատված էր լուսածերպեր ունեցող ու կանաչավուն աղյուսե պատվարով (այդ աղյուսը թրծված էր գրանիտագույն, դրանով էլ շինված էր տունը) և վերը երեսապատված էր սպիտակ մարմարով, ամբողջովին ցանված էր թավշանման կանաչ խոտով և փափուկ, կանաչ գորգի տպավորություն։ Էր թողնում։ Երկու աներն էլ, ինչպես հենց սկզբից էր նշվել, միացած էին կանաչ սյուներից շինված գալերեայով, որը ձմռանն ապահեպատվում էր։

Հիմտ արդեն կլսուորթն սկսեց աստիճանաբար սարքել ու կահավորել սենյակները տարբեր դարաշրջանների ոճով, որ մեծ դեր կատարեց Ֆրենկ Բաուֆերվուսի դեկարվեստական հաշվակը գործարներու գործում և բնվագրնեց նրա պատերացումն արվիստի մեծ աշխարհի մասին։ Այս տեսակետից խօսու տոսանելի և արժեքավոր էին նրա համար երկար զրոյցները ելաւորթի հետ ճարտարապետության ու կահույքի ուների ու ախտերի, փայտի տարբեր տեսակների, նախշեր պատարգածելու, հյուսվածքների դիմացկունության, լուսամուտների ու դռների վարագույրների, կահույքը ֆաներապատերու և պարկետի բազմազան տեսակների մասին։ Ելուսորթը, ճարտարապետության հետ, ուսումնասիրում էր նաև գեկորատիվ արվեստը և շատ էր խորհրդածում ամերիկյան ժողովրդի գեղարվեստական ճաշակի հարցի մասին։ Մեր ճաշակը, ինչպես ենթադրում էր նա, պետք է խիստ զարդարանար ժամանակին։ Երիտասարդ ճարտարապետը սաստիկ ձանձրացել էր քաղաքամերձ վիլայի և մենատան այդ ժամանակ տիրապետող ոռմանական զուգորդումից։ Հասել էր ինչ-որ նոր բանի ժամանակը։ Նա ինքն էլ չէր իմանում, թե ինչպիսին կլինի այդ նորը, բայց առայժմ ուրախանում էր,

որ Քառուկիերվուղների համար նախազժած տները ուրուցն էին, պարզ ու ակնահաճությունների շնորհիվ նրանք ցայտուն հակապատկեր էին ամբողջ փողոցի ճարտարապետությանը: Ըստ Էլսուորթի մտահղացման՝ Ֆրենկի տան ներքեւ հարկում տեղավորված էին սեղանատունը, դահլիճը և բուֆետը, ինչպես նաև գլխավոր նախասրահը, ներքին սանդուղքը և դրա տակ գետեղված հանդերձարանը. Երկրորդ հարկում՝ գրադարանը, մեծ ու փոքր հյուրասենյակները, Քառուկիերվուղի աշխատասենյակը և Լիլիանի զարդասենյակը, որ միանում էր հանդերձարանին ու լոգարանին:

Հմտորեն պլանավորված ու լոգարան և հանդերձարան ունեցող երրորդ հարկում գտնվում էին մանկական, ըստապասավորների, ինչպես նաև հյուրերի համար նկատի առնըլած սենյակները:

Էլսուորթը ցուց տվեց Քառուկիերվուղին ամենանրաաճաշակ ձևի կահույքի, դռան վարագույրների, բրդածն դարակների, պահարանիկների ու դաշնամուրների էսքիզները նրանք միասին քննարկում էին փայտի մշակման տարբեր եղանակները՝ ժակոբ, մարքետրի, բուլ ու դրա բազում ձևերը՝ վարդագույն, մահոգենի, ընկույզ, անզլիական կաղնի, թիկի, «ծտի աչք»: Էլսուորթը բացատրում էր, թե ինչ վարպետություն է պահանջում «բուլ» կահույքի պատրաստումը և որքան աննպատակահարմար է դա ֆիլադելֆիայում: Բրոնլի կամ կրիայի պատյանե դրվագները կորանում են առաջանական ից ու խոնավությունից, հետո էլ կսկսեն փուչիկներ կազմել ու ճաքել: Նա պատմեց նաև մշակման մի քանի տեսակների բարդ ու թանկ լինելու մասին և վերջիվերջո առաջարկեց ոսկեղող կահույք մեծ հյուրասենյակի, գորելենյան աանո փոքրիկ, ֆրանսիական վերածնության ոճի սեղանատան ու գրադարանի համար, իսկ մնացած սենյակների՝ «ծտի աչք»՝ տեղ-տեղ բաց կապույտ, տեղ-տեղ էլ բնական գույնի, ինչպես նաև թեթև կահույք դրվագազարդ ընկույզից: Նրա կարծիքով դռան վարագույրները, պաստառներն ու գորգերը պետք է ներդաշնակեին կահ-կարասիների պաստառներին, բայց ոչ ճշտիվ երանգներով համընկնեին

Գրանց: Դաշնամուրը և փոքր Հյուրասենյակի նոտապահարանը, ինչպես նաև դահլիճի բրդաձեւ պահարանները, պահարանիկները հանձնարարում էր, եթե Ֆրենկը թանկությունից շվախենա, այնուամենայնիվ անել «բուլ» կամ «մարքետրի» ոճով:

Էլսուրոթը խորհուրդ տվեց. նաև եռանկյունաձև դաշնա-
մուր պատվիրել, քանի որ քառանկյունաձեռ տաղտկացուցիչ
է. Քառութերվուղը լսում էր նրան կախարդվածի պես: Նրա
աշքի առաջ արդեն գծագրվում էր տունը՝ ազնվաշուր, ան-
դորրավետ, շքեղ: Նկարները, եթե նա ցանկանա ձեռք բե-
րել, պետք է դրվեն զանգվածային, ոսկեզօծ ու քանդակված
շրջանակների մեջ. իսկ եթե որոշի պատկերասրահ կազմել,
ապա գրադարանը կարելի է հարմարեցնել դրան, իսկ
գրքերը տեղավորել երկրորդ հարկի մեծ հյուրասենյակում՝
գրադարանի ու փոքր հյուրասենյակի միջև: Հետագայում,
երբ Ֆրենկի մեջ իսկական արլեստասիրություն զարգացավ:
նաև իրազրծեց այս միաբար:

Այս շրջանից ել նրա մեջ սկիզբ տավ աշխատյժ հետաքրքրավիտուն արվեստի գործերի և գեղարվեստական կերտվածքների՝ նկարների, բրոնզի, փորապրված սնութիների ու տրանիկիների նկատմամբ, որոնցով լցնում էր իր նոր տան պահապահիները և դարակները։ Ֆիլադելֆիայում ընդհանրապես գժվար էր գտնել այդպիսի իրոք շքեղ իրեր, իսկ վաճառատներում նման բաներ բնավ չկային։ Ճիշտ է, բազմաթիվ մասնավոր տներ լի էին հեռավոր ուղևորություններից բերված զմայլելի սնութիներով, բայց Քառութերվուղը տակավին քիչ կապեր ուներ քաղաքի «լավ ընտանիքների» հետ։ Այդ տարիներին հոչակված էին երկու ամերիկացի քանդակագործ՝ Պաուլեսն ու Հոսմերը (Ֆրենկը գրանց գործերից ուներ), բայց ըստ էլապուրթի՝ դրանք բնավ էլ արվեստի վերջին խոսքը չէին, և նա խորհուրդ էր տալիս ձեռք բերել հնադարյան որևէ արձանի պատճենը։ Վերջիվերջո Քառութերվուղին հաջողվեց գնել Թորվալդսենի Դավթի գլուխը, որով նա զմայլում էր, և Հենտի, Սյուլվիի ու Հարթի մի քանի

բնանկարները, որոնք որոշ շափով վերարտադրում էին արդիականության ոգին:

Այդպիսի տունն անկասկած կնիք է դնում իր բնակիչների վրա: Մենք մեզ համարում ենք մեր կացարանների և իրերի ազգեցությունից դուրս և նույնիսկ բարձր անհատներ. սակայն նրանց ու մեր միջև գոյություն ունի հազիվ նկատելի կապ, որի ուժով իրերը նույն շափով արտացոլում են մեզ, որ շափով մենք ենք արտացոլում դրանք: Մարդիկ ու իրերը փոխադարձաբար միմյանց են հաղորդում իրենց արժանիքը, նրբաճաշակությունն ու ուժը՝ գեղեցկությունը կամ տգեղությունը և, ինչպես մաքոքը զուհակի հաստոցի վրա, մեկից մյուսին են գնում-գալիս: Փորձեցեք կտրել թելը, մարդուն հեռացնել այն բանից, ինչ իրավամբ պատկանում է նրան, ինչ նրա համար արդեն դարձել է բնորոշ, և ձեր առաջ ցցվում է զգիտես երջանիկի, թե ձախողակի անհեթեթ անձը՝ անոստայն մի սարդ, որը մինչև այն պահը չի դառնա ա՛յն, ինչ էր, քանի դեռ չեն վերադարձվի նրան իր իրավունքներն ու մենաշնորհները:

Նայելով, թե ինչպես է բարձրանում իր նոր տունը, Քառուփերվուզը համակվեց իր կարևորության գիտակցությամբ, իսկ քաղաքի գանձապետի հետ ծայր առած նրա անսպասելի հարաբերությունները ասես հաջողության ծղյուսյան դաշտերը¹ տանող լայն բացված դուռ էր: Քաղաքում նա ման էր գալիս մի զուգ աշխետ ձի լծված կառքով, որոնց փայլող դավակները ու շողալու աստիճան մաքրված լծասարքը ապացուցում էին ձիապանի ու կառապանի հսկատար Հովանավորությունը: Էլսուորթն արդեն մի ընդգարձակ ախոռ էր կառուցում նոր տների ետեր նեղ փողոցում՝ երկու ընտանիքների ընդհանուր օգտագործման համար: Ֆրենկը կնոջը խոստացել էր, հենց որ տեղավորվեն նոր կացարանում, գնել մի «վիկտորիա» (այն տարիներին այդպես էր կոչվում բաց ու ցածրիկ քառանիվ կառքը). չէ՞ որ

¹ Դժոխիքի մի մասը, ուր գնում էին մահվանից հետո հերոսներն ու առաքիները և վարում էին երջանիկ կյանք (ըստ Հուն. դիցաբանության):

տնից դուրս գալու կարիք շատ կունենան: Եթեկույթներ պիտի տան, ասում էր Ֆրենկը, որովհետև ինքը կարիք ունի ընդարձակել իր ծանոթությունների շրջանը: Իր քույր Աննայի և Զովեֆ ու Էդուարդ եղբայրների հետ հրավերքների համար կօգտագործեն թե այս և թե այն տունը: Իսկ ինչո՞ւ Աննան հաջող կերպով շամուսնանա: Պետք է հուսալ, որ Զոն ու Էդգար նույնպես կկարողանան ձեռնտու կերպով՝ ամուսնանալ, քանի որ հիմա արդեն պարզ է, թե առևտրի ասպարեզում նրանք մեծ բանի չեն հասնի: Համենայն դեպք կարող են փորձել:

— Միթե՞ այս ամենը քո սրտովը չէ, — հարցրեց Ֆրենկը: Կնոջը՝ հրավերքների մասին զրուցելուց հետո:

Կիլիանը թույլ-թույլ ժպտաց:

— Կվարժվեմ, — պատասխանեց նա:

Գ I. ՈՒԽ XVI

Գանձարկեա Սիրիների ու Քառսիերվագի միջև կայացած համաձայնաւիյտնից րիշ հետո քաղաքական-ֆինանսական բարդ մերենան սկսեց աշխատել նրանց մտահղացումն փրազսմծիլու համար: Երկու հարյուր հազար դոլլարի վեց տակոսանոց սերտիֆիկատները, որ ենթակա էին վճարման տասը տաքի հետո, քաղաքային ինքնավարության մատյան-ներում գրվեցին «Քառսիերվուդ և Ընկ.» բանկիրային գրասենյակի հաշվին: Քառսիերվուդն սկսեց փոխառություն տուաջարկել փոքր քանակությամբ՝ իննուն դոլլարից բարձր դներով, ըստ որում ամեն կերպ ներշնչում էր մարդկանց, որ կապիտալի այդ կերպ ներդրումը մեծ օգուտ է խոստանում: Սերտիֆիկատների գինն աստիճանաբար բարձրանում էր, և Ֆրենկը հետզհետե ավելի մեծ քանակությամբ էր իրացնում, մինչև որ վերջապես հասան հարյուր դոլլարի, և ամբողջ բացթողնումը՝ երկու հարյուր հազար դոլլար, այսինքն երկու հազար սերտիֆիկատ, ծախվեցին փոքր պարտիաներով: Սթիները գոհ էր: Երկու հարյուր սերտիֆիկատ, որ նրա հաշ-

վին էր գրված ու ծախվել էր հարյուրական դոլլարով, երկու հազար դոլլար օգուտ տվին նրան։ Ապօրինի վաստակ էր դա, անազնիվ միջոցով ձեռք բերված, սակայն խիղճն այնքան էլ չէր տանջում Սթիներին։ Ասենք հազիվ թե խիղճ ունենար նա։ Երջանիկ ապագայի երազ էր տեսնում Սթիները։

Դժվար է կատարյալ հստակությամբ բացատրել, թե այդպիսով ինչպիսի՞ անտեսանելի, բայց հզոր ուժ կենտրոնացավ Քառիկերվուղի ձեռքում։ Զպետք է մոռանալ, որ նա նոր էր դարձել քսանինը տարեկան։ Պատկերացրնք մի մարդ, որ ի բնե օժտված է ֆինանսիստի տաղանդով և հսկայական գումարներ՝ բաժնետոմսեր, սերտիֆիկատներ, պարտատոմսեր ու կանխիկ դրամ է ձեռքի մեջ խաղացնում նույնքան աղատ, ինչպես մի ուրիշը տամայի քարերը ու շախմատի ֆիգուրներն է խաղացնում տախտակի վրա։ Խակ ավելի լավ է պատկերացնեք մի վարպետի, որ տիրապետել է շախմատախաղի բոլոր գաղտնիքներին, այն հոչակավոր շախմատիստներից մեկին, որը մեջքը տախտակին դարձրած՝ միաժամանակ խաղում է տասնչորս հոգու հետ, հերթով հայտարարում է քայլերը, հիշում է բոլոր ֆիգուրների դիրքը բոլոր տախտակների վրա և շարունակ տանում է։ Այդ ժամանակ Քառիկերվուղն իհարկե դեռ այդպես հմուտ չէր, բայց այնուամենայնիվ այս համեմատությունը միանգամայն թույլատրելի է։ Հոտառությունն ասում էր նրան, թե ինչպես պետք է վարվել փողի հետ։ Նա կարող էր ավանդ տալ մի տեղ որպես կանխիկ փող և միաժամանակ օգտագործել դա վարկի համար և որպես շրջանառության շեկերի բազա ուրիշ շատ տեղերում։ Նման գործառնություններ մտածված, հետեւ վողական ձեռվ վարելու հետևանքով նա սկսեց ձեռք բերել այնպիսի գնողունակություն, որ տասը, երեմն էլ տասներկոս անգամ ավելի էր իր տրամադրության տակ դրվող սկզբնական գումարից։ Քառիկերվուղը բնազդաբար յուրացրել էր բարձրացնելու և իջեցնելու խաղի սկզբունքը։ Նա ոչ միայն ճշգրտորեն իմանում էր, թե ինչ ձեռով օրից օր, տարեց տարի իր կամքին պետք է ենթարկեր քաղաքային սերտիֆիկատների կուրսի բարձրացումն ու իջեցումը (եթե իհարկե

կարողանա իր ազդեցությունը պահել գանձապետի վրա), այլ նաև այդ փոխառության օգնությամբ բանկերում ապահովել այնպիսի վարկ, որն առաջ չէր էլ երազում։ Առաջիններից մեկը, որ օգտվեց ստեղծված դրությունից, նրա հոր բանկն էր. սա ավելացրեց Ֆրենկի վարկը։ Տեղի քաղաքական կառավարողներն ու գործարարները՝ Մոլենհաուերը, Բաթլերը, Սիմֆոնինը և ուրիշներ, համոզվելով նրա հաջողությանը, սկսեցին քաղաքային փոխառության սպեկուլյացիայով զբաղվել։ Քառուփերվուղն սկսեց հայտնի դառնալ Մոլենհաուերին ու Սիմֆոնին եթե ոչ անձամբ, ապա որպես մի մարդ, որը կարողանում է հաջողությամբ գլուխ բերել քաղաքային փոխառության թողարկման գործը։ Ասում էին, որ Սթիները շատ խելացի էր վարչել Քառուփերվուղին դիմելով։ Դրամական բորսայի կանոնները պահանջում էին բոլոր գործարքները հանրագումարի բերել օրիվա վերջին ու հաշվեկշռի մեջ մտցնել հաջորդ օրիվա վերցին. ստկայն նոր գանձատպետի հետ համաձայնության գալը Քառուփերվուղին ազատեց այդ կանոնը հարգելուց, և նրա արամատրության առակ միշտ ժամանակ էր լինում մինչի հացորդ ամսվա մեկը, այսինքն երբեմն արդի երեսուն օր, սրապեսվի հաշիվ տա փոխառության թուղթրկման հետ կապված բոլոր գործարքների համար։

Ավելին. ըստ էության դա նույնիսկ չէր կարելի հաշվեալություն անվանել, որովհետեւ բոլոր թղթերը նրա ձեռքին էին։ Քանի որ փոխառության շափր շատ նշանակալի էր, ապա նշանակալի էին նաև Քառուփերվուղի տրամադրության տակ դանվող գումարները, իսկ այսպես կոչված տրանսֆերտներն¹ ու հաշվեկշռային ամփոփագրերն ամսվա վերջին գառնում էին լոկ ձեականություն։ Ֆրենկը կատարյալ հնարավորություն ուներ օգտվել քաղաքային փոխառության սերտիֆիկատներից սպեկուլյատիվ նպատակներով, ավանդ դնել որպես իր սեփականը ուզած բանկում իբրև փոխառյալ գումարի երաշխիք և այսպիսով դրանց դիմաց կանխիկ ստանալ նրանց

1 Տրանսֆերտ՝ արժեթղթերի փոխանցում մի հաշվից մյուսը,

անվանական արժեքի յոթանառուն տոկոսը, մի բան, որ անում էր նա առանց խղճի խայթի: Այդ ձեռք ձեռք բերած դրամը, որի հաշիվը տալիս էր միայն ամսվա վերջին, Քառուգերվուղը կարող էր օգտագործել բորսայական այլ գործողությունների համար, բացի դրանից, դա հնարավորություն էր տալիս նորանոր գումարներ փոխ առնելու: Այժմ նրա հկամուտները անսահլի մեծացել էին. միայն ժամանակն ու սեփական եռանդը և հնարամտությունը սահմանափակել կարող էին դրանք: Ֆիլադելֆիայի քաղաքական ղեկավարները պատկերացում անգամ չունեին, թե ինչպիսի՝ ոսկեհանք էր դարձել Քառուգերվուղի համար այդ ձեռնարկությունը, որովհետև չէին երևակայում նրա մտքի ամբողջ սրությունը: Երբ Սթիները քաղաքապիտ Սթրորիկի և յուսների հետ նախօրոք խոսելուց հետո Քառուգերվուղին ասաց, թե տարվա ընթացքում քաղաքային ինքնավարության մատյաններով նրա անվանը կգրի փոխառության ամբողջ գումարը՝ երկու միլիոնը, Քառուգերվուղը ոչ մի բառ չասաց զմայլանքը լեզուն կապեց: Երկու միլիոն: Եվ ինքը պիտի իր հայեցողությամբ վարվի դրանց հետ: Նրան հրավիրեցին որպես ֆինանսական, խորհրդատու. նա խորհուրդ տվեց, և այդ խորհուրդն ընդունվեց: Հիանալի՞ է: Քառուգերվուղը այն մարդկանցից չէր, ովքեր հակամետ են խղճի խայթ զգալու: Զի որ նա ավելի դաժան ու անողոք չէր, քան որևէ մի ուրիշը կլիներ նրա աելլը:

Անհրաժեշտ է նախազգուշացնել, որ Սթիների մանկրները քաղաքի դրամական միջոցների հետ ոչ մի առնչություն չունեին այն դիրքին, որը գրավում էին տեղական տեր-տիրականները քաղաքային երկաթուղիների վերահսկողության հարցում. այդ հարցը մի նոր ու հուզող փուլ էր քաղաքի ֆինանսական կյանքում: Դրանով շահագրգուժած էին առաջատար ֆինանսիստներից ու քաղաքագետներից շատերը, օրինակ՝ Մոլենհաուերը, Բաթլերը և Սիմփոնը, որ այստեղ գործում էին առանձին-առանձին, ամեն մեկը իր ոփսկով: Այս անգամ նրանց մեջ համաձայնություն չկար: Ճիշտ է, ավելի խորը նայելով հարցին՝ նրանք երեկ որոշեին թույլ շտալ կողմնակի

անձի միջամտություն։ Բայց այն ժամանակ Ֆիլադելֆիայում ձիաքարշ երկաթգծերն այնքան քիչ էին, որ ոչ ոքի մտքով չէր անցնում ստեղծել քաղաքային երկաթուղիների մի խոշոր միավորում, ինչպես հետագայում կատարվեց։ Այնուամենայնիվ իմանալով Սթիների ու Քառուփերվուդի միջև կայացած համաձայնությունը՝ Սթրոբիկը եկավ Սթիների մոտ ու շարադրեց իր նոր մտահղացնմքը։ Նրանք բոլորն էլ զգալիորեն կվաստակեն Քառուփերվուդի շնորհիվ, և ամենից առաջինը՝ Սթրոբիկն ու Սթիները։ Ուրեմն այդ դեպքում ի՞նչն է խանգարում իրեն ու Սթիներին, Քառուփերվուդի հետ՝ որպես իրենց ներկայացուցչի, ավելի ճիշտը Սթիների գաղտնի ներկայացուցչի, քանի որ Սթրոբիկը չէր համարձակվում բացահայտորեն մասնակցել այդ գործին, գնել քաղաքային երկաթուղու գծերից մեկի բաժնետոմսեր ավելի շատ քանակությամբ ու իրենց վերահսկողությունն ապահովել դրա վրա։ Հետո էլ, եթե ինքը՝ Սթրոբիկը կարողանա նոր գծեր գցելու թույլատրություն ձևոր րերել քաղաքապետարանից, առա այդ գծերը, ինչ եւ որ իինի, իրենց ձևորք կրնկնեն։ Ճիշտ է՝ Սթրոբիկը հայտ առներ հետապայտում դուրս մղել Սթիներին։ Բայց զայտ այն ժամանակ իրենաւ իսկ առաջմ չէ՝ որ մեկն ու մեկր նորագույն աշխատանք պետք է կատարի, և ինչո՞ւ, ճիշտն ասած, դա չի կարող Սթիները կատարել։ Միաժամանակ Սթրոբիկը հասկանում էր, որ այդպիսի «աշխատանքը» պահանջում է խստագույն շրջահայեցություն, որովհետև նրա մեծավորները իհարկե մշտապես աշակերդ են ու եթե երեան բերեն, որ նա խառնվել է այդպիսի գործի և սկը անձնական շահի, կզրկեն իրեն քաղաքական գործունեությունը շարունակելու հնարավորությունից, որի շնորհիվ միայն կարող էր ինքն իրեն հովանավորել։ Զպետք է մոռանալ, որ ամեն մի կազմակերպություն, օրինակ՝ արդեն գործող քաղաքային գծերից մեկի տերը հանդիսացող ընկերությունն իրավունք ուներ հարց հարուցել քաղաքապետարանի առաջ և խնդրել գիծը երկարացնելու թույլատրություն։ Դա հօգուտ քաղաքի բարեկարգության էր, ուստի և խնդրանքը պետք էր որ բավարարվեր։ Առավել ևս, որ Սթրոբիկը չի

կարող միաժամանակ լինել ձիաքարշ երկաթուղու բաժնետեր ու քաղաքային ինքնավարության նախագահ։ Այլ բան է, երբ Քառուփերվուղը մասնավոր կարգով գործում է ի շահ Սթիների։

Ուշագրավ է, որ այդ պլանը, որը Սթիները Սթրոբիկի անունից շարադրեց Քառուփերվուղին, արմատապես փոխում էր վերջինիս դիրքը քաղաքային իշխանությունների նկատամամբ։ Զնայած այն բանին, որ Քառուփերվուղը գործեր էր անում էդուարդ Բաթլերի հետ մասնավոր կարգով, որպես նրա գործակալ, ու չնայած նաև այն բանին, որ նա ոչ մի անգամ չէր տեսակցել ո՛չ Մոլենհաուսերի, ո՛չ էլ Սիմֆոնի հետ, այնուամենայնիվ կոահում էր, որ քաղաքային փոխառությամբ գործառնություններ անելով՝ փաստացի նրանց համար է աշխատում։ Մյուս կողմից, երբ Սթիները գնաց նրա մոտ և առաջարկեց աստիճանաբար գնել քաղաքային երկաթգծի բաժնետոմսեր, Ֆրենկը նրա վարմունքից իսկույն հաւացավ, որ դա մաքուր գործ չէ, և Սթիներն ինքն էլ ապօբինի է համարում իր արարքը։

— Ասացեք տեսնեմ, Քառուփերվուդ, — սկսեց քաղաքի գանձապետը, երբ առաջին անգամ խոսեց այդ գործի մասին՝ (նրանք Սթիների առանձնասենյակում էին՝ քաղաքապետարանի հին շենքում, Վեցերորդ ու Զեսթնաթ փողոցների անկյունում, և գանձապետը նախատեսելով՝ հսկայական շահը՝ լավագույն տրամադրության մեջ էր), — շոշանառության մեջ կա՞ն արդյոք քաղաքային երկաթգծի որևէ արժեթղթեր, որ կարելի լիներ գնել, որպեսզի հետագայում, բավականաշափ կապիտալ լինելիս, այդ ուղին անցներ իրենց ձեռքը։

Քառուփերվուդը գիտեր, որ այդպիսի թղթեր կան։ Նրա արագ գործող միտքը արդեն հոտն առավ, թե ինչպիսի հնարավորություններ են պարունակում դրանք։ Հանրակառքերն աստիճանաբար անհետանում էին։ Քաղաքային երկաթուղու լավագույն երթուղիներն արդեն գրավված էին։ Այնուամենայնիվ դեռ բավական շատ փողոցներ էին մնացել, իսկ քաղաքն աճում էր ոչ թե օրավուր, այլ ժամ առ ժամ։ Ազգաբնակչության աճը մեծ գործեր էր խոստանում ապագայում։

Կարելի էր ոխսկ անել և ուզած գինը վճարել արդեն գոյուաթյուն ունեցող կարճ գծերի համար, եթե սպասելու և հետագայում դրանք երկարացնելու հնարավորություն կար՝ ուղիներ գցելով ավելի բանուկ և հարուստ շրջաններում։ Քառափերվուղի գլխում արդեն ծնունդ էր առնում «անվախճան շղթայի» կամ «ընդունելի բանաձեկի» տեսությունը, ինչպես կոչվեց դա հետագայում և որի էությունը հետևյալն է. գնելով այս կամ այն ունեցվածքը վճարման մեծ ժամկետով, թողարկել բաժնետոմսեր կամ պարտատոմսեր այնպիսի գումարով, որը բավական լինի ոչ միայն իր իսկ շարչարանքին հատուցելու համար, չխոսելով արդեն այդ միջոցով հավելյալ միջոցներ ձեռք բերելու մասին, որ հետո կարելի է ներդնել այլ հանգունակ ձեռնարկությունների մեջ, այնուհետև հիմնելով դրանց վրա՝ թողարկել նոր բաժնետոմսեր, և անվերջ այդպես Հետագայում դա դարձավ գործարարական սովորական եղանակ, բայց այն ժամանակ նորույթ էր գա, Քառափերվուղի իր միտքը ծածուկ էր պահում։ Այնուամենայնիվ նա ուրախացավ, երբ Սթիները խոսեց իր հետ, որովհետև բաղադրային երկաթուղիների ֆինանսավորումը նրա երազանքն էր, և նա համոզված էր, որ դրանց ձեռքն առնելուց հետո, հետագայում փայլուն կերպով առաջ կտանի այդ դործու։

— Այո, անշուշտ, Ձո՞րչ, — զուսպ պատասխանեց նա, — կա երկու-երեք գիծ, որոնցից, փող ունենալու գեպքում, ժամանակին կարելի է լավ վաստակել։ Ես արդեն նկատել եմ, որ բորսայում մեկն ու մեկը վեր է կենում ու ծրարներով առաջարկում դրանց բաժնետոմսերը։ Արժեր, որ գնեինք դրանք, իսկ հետո կնայենք՝ գուցե և ունեցողներից մի ուրիշի խելքին փշի ծախել իր ծրարը։ Ամենից ավելի հետաքրքրուդ առաջարկ են ինձ հիմա թվում Գրին և Քոութս փողոցների գծերը։ Թե մի երեք-չորս հարյուր հազար ունենայի և կարողանայի աստիճանաբար ներդնել այդ գործի մեջ, կզբաղվեի դրանցով։ Երկաթուղուն վերահսկելու համար պահանջվում է բաժնետիրական կապիտալի ինչ-որ երեսուն տոկոսը։ Բաժնետոմսերի մեծ մասը սփուլած է հիմա քիչ-քիչ սրա-նրա

ձեռքը, դրանք էլ երեք չեն լինում ընդհանուր ժողովներում և քվեարկությանը չեն մասնակցում: Իմ կարծիքով երկու կամ երեք հարյուր հազարը բավական էր լիովին մեր ձեռքն առնելու երկաթուղու վերահսկողությունը:

Նա մի այլ ուղեգիծ ևս նշեց, որը ժամանակին կարելի էր իրենց ձեռքն առնել նույն միջոցով:

Սթիները մտածմունքի մեջ ընկավ:

— Շատ խոշոր է այդ գումարը, — անվճռական ասաց նա: — Դե լավ, մի անգամ ևս կիրուսենք, — բայց անմիջապես գնաց Սթրոբիկի մոտ խորհրդակցելու:

Քառուփերվուղը դիտեր, որ Սթիները երկու կամ երեք հարյուր հազար չունի, որ կարողանա գործի մեջ ներդնել: Այդպիսի գումար կարող է նա ճարել մի միջոցով, այն է՝ փոխ առնել քաղաքի գանձարանից, զոհելով տոկոսները: Բայց հազիվ թե նա միայնակ խիզախի այդպիսի բան անել: Որևէ մեկը կանգնած է նրա մեջքին. և ո՞վ է դա. եթե ոչ Մոլենա Հառւերը, Սիմֆոնոնը կամ թերեւս նույնիսկ Բաթլերը. վերջին նիս վերաբերյալ Քառուփերվուղը կատարելապես հավատացած չէր, եթե իհարկե այդտեղ ևս լոելյայն չի համագործակցում «Եռապետությունը»: Եվ ի՞նչ զարմանալի բան կա: Քաղաքական դեկավարները միշտ էլ փող են վերցրել քաղաքի գանձարանից, և Քառուփերվուղը հիմա մտածում էր միայն, թե ինչպես պեսք է պահի իրեն այս գործում: Ճիշտն ասած՝ ի՞նչ կարող է սպանալ իրեն, եթե Սթիների ավանտյուրան հաջողությամբ պսակվի: Իսկ ի՞նչ հիմքեր կան ենթադրելու, թե դա կտապալվի: Բայց չէ՞ որ այդ դեպքում անգամ ինքը՝ Քառուփերվուղը գործում է միայն որպես գործակալ: Բացի դրանից, նա հասկանում էր, որ Սթիների համար այդ փողերը գործառնության դնելով, հանգամանքների նպաստավոր դասովլորության դեպքում, ինքն էլ իր համար կկարողանա հասնել մի քանի որոշակի ուղեգծերի վերահսկելուն:

Ամենից ավելի հետաքրքրվում էր նա այն գծով, որ վերջերս էր գցվել իր նոր տան մոտերքում՝ այսպես կոչված Տասնյոթերորդ և Տասնիններորդ փողոցների գծով: Երբեմն Քառուփերվուղը առիթ էր ունենում օգտվել դրանից, երբ երկար

Էր հապալում որևէ անդ կամ չէր ուզում սպասել կառքին։
Գիծն անցնում էր երկու բանուկ փողոցներով, որոնք կառու-
ցապատված էին կարմրազյուս տներով, և ժամանակին, երբ
քաղաքն աճեր, անկասկած պիտի դառնար խիստ եկամտաբեր
գիծ։ Հիմա դա դեռ շատ կարճ էր։ Այս եթե կարողանար ձեռք
բերել այդ գիծը ու կապեր թաթլերի, Մոլենհառուերի կամ
Սիմֆոնի գծերին (Հենց որ դրանք դարձնի նրանցը), այն
ժամանակ կարելի է օրենսդրական ժողովից կառուցումը
շարունակելու թուզլատրություն ձեռք բերել։ Ֆրենկի աշքին
արդեն երևում էր այն կոնցեռնը, որ ստեղծել են թաթլերը,
Մոլենհառուերը, Սիմֆոնն ու ինքը։ Այդպիսի կազմով իրենք
կկարողանան ձեռք բերել ինչ ուզենան։ Սակայն թաթլերը
բարեկործությամբ զբաղվող չէ։ Նրա հետ խոսելու համար
լուրջ հաղթաքարտ սիրտի ունենաս ձեռքդ։ Նա պետք է աշքով
սեսնի ու համոզվի, որ նման կոմբինացիան գրավիլ է։ Բացի
դրանից, Քառիկերվուդը թաթլերի գործակալն էր քաղաքի
երկաթուղիների բաժնիասմեր դնելու դժով, և եթե հենց այդ
գիծը այլպիսի վաստակ էր խստանում, ապա թաթլերը
բնականարար կարող էր հետարբրիվել, թե ինչու դրա բաժնե-
տումսերը նոյն և առաջ իրեն չեն տուաջարկվել։ Ավելի լավ է
սպասել, որսչեց Ֆրենկը, մինչև ուզին փաստորեն դառնա
իրենը, իր սեփականը։ Այն ժամանակ բանը կփոխվի. այն
ժամանակ ինքը թաթլերի հետ կխոսի այնպես, ինչպես կապի-
տալիստը կապիտալիստի հետ։ Անրջելիս նրա առջև արդեն
պատկերանում էր քաղաքային երկաթուղիների մի ահագին
ցանց, որին վերահսկում են սակավաթիվ գործարարներ.
Քայլ ավելի լավ կլինի մեկը՝ Քառիկերվուդը։

ԳԼՈՒԽ XVII

Ժամանակին Ֆրենկ Քառիկերվուդն ու էլլին թաթլերն
ավելի մոտիկից ճանաշեցին իրար։ Մշտապես զբաղված իր
գործերով, որոնց շրջանակը շարունակ ընդլայնվում էր,
Ֆրենկը չէր կարող այնքան ուշադիր լինել նրա նկատմամբ,

որքան կուզենար, բայց ընթացիկ տարում հաճախ էր տեսնում նրան։ Արդեն լրացել էր էյլինի տասնինը տարին, հասունացել էր նա, և նրա կարծիքներն ավելի ինքնուրուց էին։ Օրինակ՝ նա սկսել էր լավ ճաշակը վատից տարբերել տան կահավորման ու զարդարման գործում։

— Հայրիկ, մի՞թե մենք միշտ այս ախոռում ենք ապրելու, — մի երեկո էլ հարցրեց նա հորը, երբ ամբողջ ընտանիքը հավաքվել էր ճաշասեղանի շուրջը։

— Իսկ ինչո՞վ է վատ այս տունը, թույլ տվեք իմանալ, — պատասխանեց Թաթլերը, որ կիպ նստել էր սեղանի մոտ ու անձեռոցիկը մտցրել օձիքի տակ, որ անում էր ամեն անգամ, երբ ճաշին կողմնակի մարդ չէր մասնակցում։ — Ոչ մի վատ բան չեմ տեսնում այս տանը։ Ես ու մայրդ բնավ էլ վատ չենք ապրում այստեղ։

— Ա՞խ, հայրիկ, զգվելի տուն է սա, ինքդ էլ գիտես, — միջամտեց Նորան։ Արա տասնյոթ տարին լրացել էր և սա էլ նույնքան աշխաույժ էր, որքան քույրը, միայն թե դեռ քիչ էր ճանաշում կյանքը։ — Ամենքն էլ միաբերան այդ են ասում։ Մի նայիր, թե որքան հրաշալի տներ կան չորս բոլորը։

— Ամենքն էլ ասում են, ամենքն էլ ասում են։ Շատ կուզենայի իմանալ, թե ովքե՞ր են այդ «ամենքը», — հեգնաբար, թեև ոչ առանց զղայնության, հարցրեց Թաթլերը։ — Ինձ, օրինակ, դուր է վալիս։ Ոչ ոքի բոնի չեն ստիպում ապրել այստեղ։ Ասացեք խնդրեմ, ովքե՞ր են այդ «ամենքը»։ Եվ ինչո՞վ այնքան վատ է այս տունը։

Առաջին անգամ չէր, որ բարձրացվում էր տան հարցը, և դրա բննարկումն ամեն անգամ հանգում էր նույն բանին, եթե իհարկե թաթլերը լուեր ու շահմանափակվեր իր իռանդական հեգնական քմծիծաղով։ Բայց այդ երեկո շհաջողվեց այդ մաներով հարցը փակել։

— Դու ինքդ էլ շատ լավ ես հասկանում, հայրիկ, որ անպետք տուն է, — կտրուկ հայտարարեց էյլինը։ — Ուրեմն ինչո՞ւ ես բարկանում։ Հին տուն է, տգեղ, կեղտոտ։ Կահարասին փուլ է գալիս։ Իսկ այս դաշնամուրը պարզապես այնպիսի հնոտի է, որ վաղուց պետք է հանել, դուրս գցել։

Ես այլես դրանով չեմ նվագի: Քառուիերվուղների մոտ, օրինակ...

— Հի՞ն է տունը: Ահա՝ թե ինչ,— բացականչեց Բաթլերը, և նրա իոլանդական առոգանությունը ավելի ցայտուն դարձավ այն զայրույթի ազդեցությամբ, որ նա էր արծարծում ներսում:— Կեղտոտ է, ինչպես չէ: Եվ այդ ո՞ր կահերարասին է փով գալիս: Ցույց տուր, աղաշում եմ, որտե՛ղ է փով գալիս:

Նա արդեն պատրաստվում էր կառշել իրենց Քառուիերվուղներին համեմատելու էլլինի փորձից, բայց ժամանակ չունեցավ, որովհետև մեջ ընկավ միսիս Բաթլերը: Սա մի գեր, լայներես, համարյա միշտ ժպտադեմ կին էր՝ այժմ արդեն կարգին խունացած իոլանդական գորշ աշքերով և սպիտականալուց աղոտացած շիկավուն ծամերով: Նրա ձախ այտին, ստորին շրթունքի մոտ, բազմել էր մի խոշոր գորտնուկ

— Երեխանե՛ր, երեխանե՛ր,— բացականչեց նա (միստր Բաթլերը, չնայած առևտորի ու քաղաքական ասպարեզում ունեցած իր բոլոր հաջողություններին, նրա համար միշտ նույն երեխան էր):— Ընչի՛ եք կովտում: Հերիք է, զե՛րչ: Պոմիդոր տվեք հայրիկին:

Ճաշին սպասավորում էր իոլանդացի աղախինը, բայց և այնպես կերակուրների սկուտեղները ձեռքից ձեռք էին տըրպում: Սեղանի վերը կախված էր անշնորհք զարդարված ջահճ՝ սպիտակ հախճապակե մոմերի նմանող գազի տասնվեց լեզվակներով. ևս մի վիրավորանք էլլինի դեղագիտական զդացուղությանը:

— Մայրի՛կ, քանի տնզամ եմ ասել քեզ «ընշի» շամես,— աղաշական շեշտով ասաց նորան, որը շատ էր վշտանում մոր քերականական սխալներից:— Հիշո՞ւմ ես, որ խոստացար հետեւ քեզ:

— Իսկ ո՞վ է քեզ թույլ տվել մորը սովորեցնելու, թե ինչպես խոսի, — փրփրեց Բաթլերը այդ անսպասելի հարձակումից:— Բարեհաճիր ականջիդ օդ անել, որ քո մայրը այդպես էր խոսում, երբ դու չէիր էլ աշխարհ եկել: Եվ եթե

նա ողջ կյանքում տաժանակրի պես աշխատած լիներ, զու չէիր ունենա այն նրբաճաշակ շարժուձևերը, որոնցով հիմա պարծենում ես նրա առաջ: Ականջիդ օդ արա սա, լսո՞ւմ ես: Նա հազար անգամ ավելի լավ է քո բոլոր բարեկամուհիներից, աներեսի մե՛կը:

— Մայրիկ, լսեցի՞ր ինչպես անվանեց ինձ,— թընկթընկաց նորան՝ թափնվելով մոր ետևը և վախեցած ու վիրավորված ձևանալով:

— Ե՛ղի, Ե՛ղի,— կշտամբելու շեշտով ամուսնուն դիմեց միսիս թաթլերը:— Նորա, մանկիկս, զու հոգիտես, որ հայրդ այդպես չի կարծում: Ճի՞շտ է:

Եվ փաղաքաբար շոյեց իր «մանկիկի» գլուխը: Կիսագրագետ բառի դեմ արված հարձակումը բնավ էլ շվիրավորեց նրան:

Թաթլերն արդեն ափսոսաց, որ փոքր աղջկան անվանել էր աներես: Բայց այս երեխաները, տե՛ր աստված, ճիշտ որ կարող են մարդու համբերովթյունից հանել: Դե ասացեք խնդրեմ, ինչո՞վ սրանց համար լավ չէ այս տունը:

— Զարժե, բարեկամնե՞րս, այսպիսի աղմուկ բարձրացնել ճաշելու ժամանակ,— նկատեց Քելեմը, որ բավական գեղեցիկ երիտասարդ էր՝ սե, խնամքով սանրված, կոկված և երկմասված մազերով ու կարճ, ցից բեղիկներով: Նրա քիթը մի քիչ տնկված էր, ականջները մի փոքր դուրս ընկած, բայց լոնդհանուր առմամբ նա գրավիչ էր ու խելացի:

Նա էլ, Օուենն էլ տեսնում էին, որ տունը իսկապես վատ է ու վատ էլ կահավորված, բայց այդտեղ եղած ամեն ինչ հորն ու մորը դուր էր գալիս, ուստի և խելամտովթյունն ու ընտանեկան խաղաղովթյան հոգատարությունը թելադրուն էին նրանց լուր մնալ:

— Իսկ ինձ զայրացնում է, որ մենք ստիպված ենք ապրել այսպիսի հին խրճիթում, երբ մեզանից շատ ավելի աղքատ մարդիկ ապրում են հիանալի տներում: Նույնիսկ ինչ-որ Քառուփերվուդներ...

— Ի՞նչ ես մի գլուխ կրկնում՝ Քառուփերվուդնե՞րը, Քառուփերվուդնե՞րը: Ինչո՞ւ ես կպել Քառուփերվուդներից, —

գոռաց թաթլերը՝ լայն, կարմրատակած դեմքը շրջելով
դեպի կողքին նստած էլլինը:

— Նրա համար, որ նրանց տունը շատ ավելի լավ է
մերից, թեև Քառուփերվուդը ընդամենը քո գործակալն է մի-
այն:

— Քառուփերվուդնե՞րը, Քառուփերվուդնե՞րը: Ե՛լ չեմ
ուզում նրանց մասին լսել: Ես չեմ պատրաստվում դասեր
առնել Քառուփերվուդներից: Թեկուզ և ամենագեղեցիկ տունն
ունենան, ի՞նձ ինչ: Իմ տունը իմ տունն է: Ես այստեղ եմ
ցանկանում ապրել: Շատ երկար եմ ապրել այստեղ, որպեսզի
հանկարծ առանց պատճառի, մեկնեմ այստեղից: Եթե քնն
համար հաճելի չէ այստեղ, շատ լավ գիտես, որ փեշդ չեմ
բռնի: Փոխադրվիր ուր ուզում ես: Իսկ ես այստեղից չեմ
շարժվի:

Երբ ամենաշնչին մի պատճառից բռնկվող այսպիսի
կովտուք էր առաջանում ընտանիքում, թաթլերը սովորու-
թյուն ուներ ձեռքերն սպառնալից թափ տալ կնոջ ու երեխա-
ների քմի առակ:

— Օ՛, վստահ եղիր, շուտով կշքվեմ այստեղից,— պա-
տասխանում էր ելլինը: Փա՛ռք քեզ, տե՛ր, ողջ կյանքս այս-
տեղ չեմ անցկացնելու:

Նրա երեակայությամբ անցան սքանչելի հյուրասենյա-
կը, գրադարանն ու զարդասենյակները Քառուփերվուդների
տներում. գրանց զարդարումը, ինչպես ասել էր Աննան, վեր-
ջանալու վրա էր: Իսկ ինչպիսի՞ հրաշալի եռանկյուն դաշնա-
մուր ունեն Քառուփերվուդները՝ ոսկեդրվագ ու վարդագույն,
կապուտակ չնարակով պատված: Ինչո՞ւ իրենք ես չունենան
այդպիսի գեղեցիկ իրեր: Իրենք հավանորեն մի տասն անգամ
ավելի հարուստ են: Բայց իր հայրը, որին սիրում էր ամբողջ
հոգով, հին կոփվածքի մարդ էր: Ճիշտ են ասում նրա մասին
մարդիկ՝ անտաշ իրանդացի կապալառու: Ոչ մի օգուտ նրա
հարստությունից: Ահա այս էլ զայրացնում էր էլլինին. ինչո՞ւ
իր հայրը հարուստ և միաժամանակ արդիական ու նրաճա-
շակ լինի: Այն ժամանակ իրենք կկարողանային... Է՛, ի՞նչ
օգուտ տրամադրությունը փշացնելուց: Առայժմ ինքը կախ-

ված է հորից ու մորից, իր կյանքն էլ կընթանա հին ձեռվ։
Մնում է միայն մի բան՝ սպասել։ Դրությունից կարելի էր
դուրս գալ ամուսնանալով հարմար մարդու հետ։ Բայց ո՞ւմ
հետ ամուսնանա։

— Լավ, կարծում եմ այսօրվա համար բավական կըռ-
վըտեցինք, — հաշտարար տոնով նկատեց միսիս Բաթլերը՝
անվրդով ու համբերատար, ինչպես ճակատագիրն է։ Նա շատ
լավ էր իմանում, թե ինչն է այդպես վրդովում էյլինին։

— Իսկ ինչո՞ւ լավ տուն չունենանք, — պնդում էր սա։

— Կամ թեկուզ վերակառուցենք, — շշնչաց նորան մոր
ականջին։

— Սո՞ւս, ձա՛յնդ կտրիր, Ամեն ինչ իր ժամանակն
ունի, — սկատախիանեց մայրը նորային։ — Ա՛յ, կտեսնես, մի
օր այդպես էլ կանենք։ Իսկ հիմա գնա դասերդ պատրաստիր։
Հերիք է լվատաս։

Նորան վեր կացավ ու դուրս եկավ սենյակից։ Էյլինը
ձայնը կտրեց։ Իր հայրը պարզապես համառ, անտանելի
մարդ է։ Բայց և այնպես լավն է։ Էյլինը փքվեց, որպեսզի
հորն ստիպի զղալ իր ասածների համար։

— Դե՛ լավ, բավական է, — ասաց հայրը, երբ բոլորը
վեր կացան սեղանից։ Նա հասկանում էր, որ դուստրը բար-
կացած է իր վրա և պետք է որևէ բանով սիրտն առնել։ —
Մի բան նովոգիր ինձ համար, միայն թե լավ բան։

Նա զերագասում էր աղմկալի, մարտաշեշտ գործեր,
որոնց մեջ արտահայտվեին դստեր իրեն ապշեցնող տաղանդն
ու տեխնիկան։ Ահա, տեսեք, թե ի՞նչ է տվել նրան դաստիա-
րակությունը։ որքա՞ն արագ ու ճարտար է նվագում նա այս
դժվարին գործերը։

— Կարող ես մի նոր դաշնամուր գնել քեզ համար, եթե
ուզում ես։ Գնա խանութ ու ընտրիր։ Ինձ համար սա էլ լավ
է, բայց եթե դու չես հավանում սա, արա ինչպես գիտես։

Էյլինը թեթեսկի սեղմեց հոր ձեռքը։ Ինչո՞ւ վիճեմ նրա
հետ։ Ի՞նչ կտա նոր դաշնամուրը, երբ փոփոխություն է պա-
հանջում ամբողջ տունը, ամբողջ ընտանեկան մթնոլորտը։
Այնուամենայնիվ նա սկսեց նվագել Շումանի, Շուրերտի,

Օֆենքախի ու Շոպենի գործերից, իսկ Բաթլերը սենյակն էր շափշփում ու մտածկում ժպտում։ Որոշ գործեր էյլինը նվազում էր իսկական ավյունով ու պատշաճ ըմբռնումով, որովհետեւ չնայած իր ֆիզիկական ուժին, եռանդի ու կրակոտության գեղումին՝ կարողանում էր նրբորեն զգալ։ Սակայն հայրը այդ ամենը չէր նկատում։ Նայում էր նա էյլինին՝ իր փայլում, առողջ, գեղեցիկ դստերը ու մտածում, թե ինչպես կդասավորվի նրա կյանքը։ Որևէ հարուստ մարդ կամուսնանա հետը՝ բարեկիրթ, հարուստ, գործարարի տվյալներ ունեցրության հայրը այդ ամենը չէր նկատում։ Ինչ է հարուստ մարդ կամուսնանա հետը՝ բարեկիրթ, հարուստ, գործարարի տվյալներ ունեցրության հայրը, իսկ ինքը՝ հայրը, մի գեղ փող կթողնի աղջկան,

Բնակարանամուտի առթիվ Քառուփերվուդները մեծ կոչունք տվին։ Հյուրերը նախ՝ պետք է հավաքվեին Ֆրենկի մոտ, հետո միայն, պարերի համար, անցնեին ծեր Քառուփերվուդների ավելի պերճագեղ ու ընդարձակ տունը, որի ստորին հարկում էին գտնվում մեծ և փոքր սրահները, երաժշգական սենյակը և ձմեռային այդին։ Էլսուորթը այնպես էր հասակալծել այդ սենյակները, որ կարելի էր դրանք վերածել մի դաշտիձի, այնովիսի դաշտիձի, որը բարձականաշափ ընդարձակ լիներ համերդների, պարերի կամ պարամիջյա զրուերթի համար, մի խոսքով ուզած նպատակի համար, որի կարիքը կարող է զգացվել մեծ բազմություն հավաքվելու գեղքում։ Երիտասարդ ու ծեր Քառուփերվուդները շինարարության սկզբից իսկ ենթադրում էին միասին օգտագործել երկու տներն էլ։ Երկու տանն էլ սպասավորում էին նույն լվացարարութիները, աղախիներն ու պարտիզանը։ Ֆրենկը դաստիարակշունչի հրավիրեց իր երեխաների համար։ Բայց տանը ամեն ինչ դեռ մեծատունի ընթացք չուներ։ օրինակ՝ ծառայապետը միաժամանակ կատարում էր Հենրի Քառուփերվուդի սպասավորի պարտականությունը, ճաշին նա էր տապակածը կտրատում, ղեկավարում մյուս ծառաներին և անհրաժեշտության դեպքում աշխատում մերթ այս, մերթ այն տանը։ Ընդհանուր ախոռը հսկում էին ձիապանն ու կառապանը, իսկ երբ միաժամանակ երկու կառք էր պետք լինում, երկուսն էլ կառավար էին դառնում։ Ընդհանուր առ-

մամբ տնտեսությունը վարելու հարմար ու խնայողական սիստեմ էր դա:

Քառուփերվուղը հրավերքի պատրաստությունը համարում էր շափազանց կարևոր գործ, որովհետև գործարական նկատառումներից ելնելով՝ պետք էր ընտիր հասարակություն հրավիրել: Ուստի և երկար խորհրդաժություններից հետո ցերեկվա ընդունելությանը Ֆրենկի տանը (որպեսզի հետո էլ անցնեն ավագ Քառուփերվուղի տունը) որոշվեց հրավիրել նախօրոք ցուցակի մեջ մտցված բոլոր անձանց: Դրանցից էին՝ միստր և միսիս Թայերը, Սթիներները, Բաթլերները, Մոլենչառուերները և ավելի ընտիր շրջանների ներկայացուցիչներ, ինչպես, օրինակ, Արթուր Ռիվերսը, միսիս Սենեկա Դևիսը, Թրենոր Դրեյկին ու Կինը, երիտասարդ Դրեքսելներն ու Կլարքները, որոնց ծանոթ էր Ֆրենկը: Քառուփերվուղները այնքան էլ հույս չունեին, որ վերջիններս կրարեհաճեն գալ, բայց և այնպես պարտ էր նրանց ևս հրավիրատոմս ուղարկել: Ենթադրվում էր, որ ավելի ուշ՝ երեկոյան կգա ավելի ընտիր հասարակություն. այս երկրորդ ցուցակը նախատեսում էր Աննայի, միսիս Քառուփերվուղի, էդուարդի ու Ջոզեֆի ծանոթներին և այն բոլորին, որոնց նշել էր Ֆրենկը: Երկրորդ ցուցակն էր համարվում «գլխավորը»: Հասարակության ընտրանին, երիտասարդության ծաղիկը, այն ամենքը, որոնց վրա կարելի էր ներփործել միայն խնդրանքով, հրամայելով կամ համոզելով, պետք է արձագանքեին հրավերին:

Չէր կարելի չհրավիրել Բաթլերներին՝ ծնողներին ու զավակներին, թե՛ ցերեկային, թե՛ իրիկնային ընդունելությանը, քանի որ Ֆրենկը բացահայտորեն համակրում էր նրանց, թեև բնավել ցանկալի չէր ծեր Բաթլերների ներկայությունը: Անգամ էյլինը, ինչպես ճիշտ էր ենթադրում Ֆրենկը, Աննային ու Լիլիանին այնքան էլ հարմար չէր թվում իրենց մոտ հավաքվող հասարակության համար. ցուցակը քննարկելիս, սըրանք շատ խոսեցին էյլինի մասին:

— Մի տեսակ խելառ է նա, — նկատեց Աննան հարսին հասնելով էյլինի անվանը: — Աստված գիտե, թե ի՞նչ է երեակայում իր մասին, մինչդեռ չի էլ իմանում ինչպես պահ

իրեն։ Հապա հայրը։ Այդպիսի հայր եթե ես ունենայի, շատ խոնարհ կլինեի։

Իիիանը, որ նստել էր փոքր գրասեղանի առաջ իր նոր զարդասենյակում, թեթևակի բարձրացրեց հոնքերը ու ասաց.

— Հավատա՛, Աննա, երբեմն ես շատ եմ ցավում, որ Ֆրենկի գործերը ստիպում են ինձ շփվել այդպիսի մարդկանց հետ։ Միսիս Բաթլերը... աստված իմ, այդ ի՞նչ տաղտկալի կին է։ Բարեսիրտ է, բայց անսաելի տգետ։ Իսկ էյլինը՝ պարզապես մի անտաշ աղջիկ։ Եվ անսանձ է սաստիկ։ Գալիս է մեր տուն ու անմիջապես նստում դաշնամուրի առաջ, մանավանդ երբ Ֆրենկը տանն է։ Վերջիվերջո ինձ համար մեկ է, թե ինչպես է նա պահում իրեն, բայց ըստ իս դա զղայնացնում է Ֆրենկին։ Եվ ընտրում է ինչ-որ մարտաշունչ գործեր։ Երբեք որևէ նրբագեղ ու լուրջ բան չի նվագում։

— Բնավլ էլ իմ սրտով չէ նրա հաղնվելու ձեզ, — Հարսին ձայնակցից Աննան։ — Ե՞նչ էլ սիրում է այդպիսի խուճումնունք րաներ կախ տալ իրենից։ Այս բանի օրը հանդիպեցի նրան գրսոնելիս, բայց որում կաւոքն ինքն էր վարում։ Օ՛, ցավում եմ, որ գու շտեսար այդ պատկերը։ Երեակացիք, «Կուամի»¹ վառ կարմիր ժակետ սև լայն երիզով և շալմայածե գլխանոց՝ հսկայական վառ կարմիր փետուրը վրան ու նույն գույնի ժապավեններ կախված համարյա մինչև մեջքը։ Շատ հարմար գլխարկ կառքով ման գալու համար։ Եվ ինչպիսի ինքնավստահ տեսք։ Հապա ձեռքե՞րը։ Պիտի տեսնեիր ինչպե՞ս էր պահել ձեռքերը։ ահա այսպես ու դաստակները մի քիչ ծալած...։ Աննան ցույց տվեց, թե ինչպես էր էյլինն այդ արել...։ Կրում էր երկար, դեղին ձեռնոցներ։ մի ձեռքով երասանակն էր բռնել, մյուսով մտրակը։ Ի միշտ այլոց, երբ նա է կառքը վարում, քշում է սանձակոտոր, իսկ

¹ Ֆրանսիական բանակի հատուկ գորամաս, որ հավաքագրվում էր գըլխավորապես ալժիրցիներից և կարմիր համազգեստ ուներ։ Այժմ այլևս չկա

ժառան՝ Վիլյամը, միայն վեր-վեր է թռչում ետքի նստոցի վրա։ Չէ, շատ եմ ափսոսում, որ դու շտեսար նրան։ Աստված իմ, որքան է նա երեսակայում, — ասաց Աննան հանդիմանական քմծիծաղով։

— Եվ այնուամենայնիվ ստիպված ենք հրավիրել նըրան։ Խուսափելու ոչ մի հնար չեմ գտնում։ Բայց նախօրոք պատկերացնում եմ նրա վարքը՝ քիթը տնկած ու կեցվածք ընդունած ման պիտի գա սենյակներում։

— Ճիշտ որ չեմ հասկանում՝ ինչպես կարելի է այդ կերպ պահել իրեն, — վրա բերեց Աննան։ — Ա՛յ, նորան դուր է գալիս ինձ։ Սա շատ ավելի համակրելի է, եվ առանձնապես չի էլ երեսակայում։

— Նորան ինձ էլ է դուր գալիս, — հաստատեց միսիս Քառուփերվուդը, — Շատ անուշիկն է, և իմ կարծիքով նրա անխոռվ գեղեցկությունը շատ ավելի գրավիլ է։

— Օ՛, իհա՞րկե։ Միանգամայն համաձայն եմ քեզ։

Նշանակալի է սակայն, որ հատկապես էյլինն էր գրավում ամբողջ ուշադրությունը և իր տարօրինակություններով բորբոքում նրանց հետաքրքրությունը։ Մի որոշ շափով իրավացի էին դատում նրա մասին, իսկ դա, ասենք, չէր խանգարում էյլինին հիրավի գեղեցիկ լինելու, իսկ խելքով ու բնավորության ուժով զգալիորեն գերազանց էր շրջապատից։ Վերին աստիճանի փառասեր էյլինը ուշադրություն էր գրավում (շատերին էլ ջղայնացնում էր) նրանով, որ հոխորդում էր հենց այն թերություններով, որոնք ներքուստ ջանում էր հաղթահարել։ Նա վրդովվում էր, որ իր ծնողներին (ոչ առանց հիմքի) համարում են ընտիր հասարակության համար անարժան և ահա այդ էլ տարածվում է նաև իր վրա։ Ո՛չ, ինքը ո՛չ մի բանով ոչ ոքի չի զիջում։ Ա՛յ, օրինակ, Քառուփերվուդը, որ այնքան ընդունակ ու հասարակության մեջ արագ դարգացող մարդ է, հասկանում է այդ։ Ժամանակին էյլինը մոտիկացավ նրան։ Սա էլ միշտ սիրալիր էր վարդում էյլինի հետ ու հաճությամբ զրուցում։ Երբ էլ ֆրենկը լիներ նրանց տանը կամ էյլինն այցելեր Քառուփերվուդներին, նրա հետ մի

քանի խոսք փոխանակելու առիթ գտնում էր: Սովորաբար մուտ էր գալիս նրան և նայում ուրախ ու բարեկամաքար:

— Հը՞, ինչպե՞ս եք, էլլին, — հարցնում էր, և դեռատի աղջկը տեսնում էր իր վրա սկեռված փաղաքշական հայցք: — Հայրիկն ինչպե՞ս է, մայրիկն ինչպե՞ս է: Զիոն զրունե՞լ եք: Այդ լավ է: Այսօր ես ձեզ տեսա: Դուք դյութիչ էիք:

— Ո՞, ի՞նչ եք ասում, միստր Քառվիերվուդ:

— Ճիշտ եմ ասում՝ մի հրաշք բան էիք: Ամազոնուհու զգեստը շատ է պատշաճում ձեզ: Իսկ ձեր ոսկեթուցր վարսերը հեռվից եմ ճանաշում:

— Ոչ, այսպիսի բաներ չպետք է ասեք ինձ: Սնախառ կդարձնեք, իսկ ծնողներս առանց այդ էլ երեսով են տալիս, թե սնախառ եմ:

— Մի՛ լսեք նրանց: Ես ձեզ ասում եմ, որ դյութիչ էիք. և դա ճշմարտություն է: Ասենք դուք միշտ էլ թովիչ եք:

— Ո՞:

Երջանիկ մի հառաշ գուրս թսավ աղջկա կրծքից: Շառայլը ներկեց նրա այտերը, Միստր Քառվիերվուդը գիտի ինչ է ասում: Ամեն ինչ գիտի նա և այնքան ուժեղ մարդ է: Շատերն են հիանում նրանով, ներառյալ և իր հայրը, մայրը, և, ինչպես լսել է, անգամ միստր Մոլենհառերը և միստր Սիմֆոնը: Եվ որքան գեղեցիկ տուն ունի, ինչպիսի սքանչելի գրասենյակ: Բայց գլխավորը այն էր, որ Ֆրենկի հանդարտ նպատակալացությունը հավասարակշռում էր էլլինի մեջ փոթորկվող ուժը:

Այսպիսով էլլինն ու քույրը հրավեր ստացան, իսկ հայր և մայր Բաթլերներին ամենափուկ ձևով հասկացրին, որ հրավերքը վերջանալուց հետո պարահանդես է կազմակերպվում բացառապես երիտասարդության համար:

Ահագին բազմություն հավաքվեց Քառվիերվուդների տանը: Ստեղ-ստեղ իրար էին ներկայացնում հյուրերին: Հյուրընկալները պատշաճ համեստությամբ բացատրում էին, որ էլսուրթը կարողացել է լուծել իր առաջ ծագած դժվարին խնդիրները: Հասարակությունն զբոսնում էր ծածկած ճեմա-

սրահում և դիտում երկու տները։ Հրավիրյալներից շատերը վաղուց ծանոթ էին իրար, մտերմաբար զրուցում էին գրադարաններում ու սեղանատներում։ Մեկը սրախոսում էր, մի ուրիշը թմփթմփացնում բարեկամի ուսին, մի ուրիշ խմբում զվարճալի անկեղոտներ էին պատմում, իսկ երբ ցերեկվան հաջորդեց երեկոն, հյուրերը սկսեցին մեկնել տները։

Էյլինը, որ կապույտ մետաքս զգեստով էր, նույն գույնի կարճ թիկնոցով և մանր ծալքերի ու փոթերի մի քմածին բանվածքով, մեծ հաջողություն ունեցավ։ Արհեստական մուգ կարմիր խոլորձածաղկով զարդարված կապույտ մետաքսի բարձրագագաթ գլխարկը մի քիչ անսովոր ու կրակու տեսք էր տալիս նրան։ Նրա շիկա-ոսկեթույր վարսերը հավաքված էին զլխարկի տակ որպես մի խոշոր մազակույտ, իսկ խռովոպներից մեկն ընկնում էր ուսին։ Էյլինն ի բնե երբեք այդպես գրգռիչ կերպով համարձակ չէր, ինչպես թվում էր, բայց նրան հաճելի էր, որ մարդիկ հենց այդպես են մտածում իր մասին։

— Ճմայլելի եք դուք այսօր,— ասաց Քառուիերվուդը, երբ նա անցավ իր մոտով։

— Երեկոյան ավելի՝ լավ կլինեմ,— եղավ պատասխանը։

Թիթեռան ու խրսխտ անցավ նա սեղանատուն, ու գուրը ծածկեց նրան։ Նրան ու մայրը հապաղեցին՝ զրուցի բռնը-վելով լիլիանի հետ։

— Ս՛խ, որքա՞ն գեղեցիկ է ձեր տունուտեղը,— սքանչանում էր միսիս Բաթլերը։ — Եվ անպայման երջանիկ կլինեք այստեղ։ Հիշեցեք իմ խոսքը։ Երբ իմ էղդին գնեց մեր հիմակվա տունը, ես հենց այդպես էլ հայտարարեցի նրան։ «Գիտես, էղդի, այս տունը շատ է լավ մեզ համար, աստված վկա»։ Իսկ ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատասխանեց նա։ «Նորա, — ասաց, — ո՛չ այս, ո՛չ էլ այն աշխարհում շափից շատ լավ բան չկա քեզ համար»։ Ասաց ու պաշեց ինձ։ Պատկերացնո՞ւմ եք, այդպես լողլող մարդը երեխայի պես էր պահում իրեն։

— Իմ կարծիքով դա շատ լավ է, միսիս Բաթլեր, — պա-

տասխանեց կիլիանը՝ զդայնորեն շուրջը նայելով, որ Ախնի թե մեկը լսի իրենց:

— Մայրիկը շատ է սիրում այսպիսի բաներ պատմել, — միշտեց Նորան: — Գնա՞նք, մայրիկ, սեղանատունը դիտենք:

— Դե՛, աստված բախտավոր անի ձեզ նոր տանը: Ես ողջ կյանքում բախտավոր եմ եղել իմ տանը: Ձեզ էլ նույնն եմ ցանկանում, ի բոլո՞ր սրտեւ:

Եվ միսիս Բաթլերն օրորվելով ու բարեհոգի ժպտալով՝ դուրս եկավ սենյակից:

Երեկոյան ժամը յոթի ու ութի միջև Քառուփերվուղները հապշտապ ճաշեցին ընտանեկան շրջանում:

Ժամը իննին դարձյալ սկսեցին հյուրեր գալ. բայց հիմա դա մի խայտաբղետ ու վառվուն բազմություն էր. բաց մանիշակագույն, կրեմագույն, վարդագույն և արծաթագորշ շրջազգեստներով աղջիկներ շտապ-շտապ հանում էին ժանյակագրդ շալերը և լայն վերնազգեստները ու նետում սև կոստյում հագած կավալերների ձեռքին: Ցուրտ փողոցուն ստեպ-ստեպ շրիկում էին մոտեցող կառքերի դռնակները. Միսիս Քառուփերվուղն ամուսնու և Աննայի հետ դիմավորում էր հյուրերին դաշլիճի դռան մոտ, իսկ ծեր Քառուփերվուղները որդիների՝ ջողեփի և էղուարդի հետ ողջունում էին նրանց մյուս ծայրում: Լիլիանը զգլիիշ տեսք ուներ «թառամող վարդ» գույնի երկարատուն շրջազգեստով ու վզի խոր, քառանկյունի կտրվածքով, որի տակից երևում էր հիանալի ժանեկաշապիկը: Նրա դեմքն ու կազմվածքը տակավին գեղեցիկ էին, բայց նա կորցրել էր այն թարմությունն ու քնչությունը, որոնք մի քանի տարի առաջ զիրում էին Ֆրենկին: Սննա Քառուփերվագր լուսիկը շլու, թեև չը էլ կարելի տգեղ տնկանել. փարրակագմ էր, թուի, քիթը վեր ցցված, աչքերը աշխաւոյժ ու ուս: Նրա դեմքն արտահայտում էր ինքնուրուցնություն, համառություն, խելք և, ավաշղ, մի փոքր քննադատական վերաբերմունք մարդկանց նկատմամբ: Հագնվել էր մհծ ճաշակով: Վրան փայլուն զանակներ սփոված սև զգեստը, չնայած նրա թուխ մաշկին, շատ էր պատշաճում նրան, ինչպես նաև վարսերի մեջ խրված կարմիր վարդը:

Աննան ուներ քնքուշ, հաճելիորեն կլորիկ բազուկներ և ուսեր: Խորամանկ աշքերը, կայտառ շարժումները, սրամտությունն ու պատրաստախոսությունը որոշ հմայք էին տալիս նրան, թէկ, ինչպես ինքն էր ասում, այդ ամենը ապարդյուն էր. «Տղամարդկանց տիկնիկներն են դուր գալիս»:

Այդ ամբողջ երիտասարդ բազմության հետ ժամանեցին նաև Բաթէր քույրերը՝ էլլինն ու Նորան: Էլլինը իր եղբոր՝ Օուենի ձեռքը նետեց սև ժանյակե նուրբ շալը և սև մետաքսի վերնազգեստը: Նորային ուղեկցում էր Քելեմը՝ բարեկազմ ծգված, ժպտադեմ երիտասարդ իրանդացին, որի ամբողջ տեսքը ասում էր, թե նա մտադիր է հիանալի կարիերա ստեղծել: Նորան հագիլ էր սովիտակի մետաքսի դեռ համեմատաբար կարճ, կոճկրի հաղիկ ծածկող մի օդեղեն զգեստ՝ վրան խիստ բաց մանիշակագույն նախշեր, իսկ քղանցքի ժանյակե բոլորակարի վրա նույնպես բաց մանիշակագույն մանր վարդակապեր: Տերեփուկի գույնի լայն ժապավենը սեղմում էր նրա իրանը, նմանօրինակ մի հանգույց ի մի էր բերել վարսերը: Ժպտահայաց ու բորբոքված նորան հիանալի տեսք ուներ:

Բայց նրա ետևից քայլում էր քույրը՝ արծաթա-կարմիր զանակների ցանցով պատված սև ատլասի զգլխիչ արդուզարդով: Նրա կլորիկ, հիասքանչ բազուկներն ու ուսերը մերկ էին, իրանակալը կրծքի ու մեջքի վրա այնքան ցածր էր կտրված, սրբան թույլ էր տալիս պատշաճությունը: Էլլինի գեղահասակ ֆիգուրը իր բարձր կրծքով ու մի փոքր լայն ազդրերով՝ միաժամանակ աշքի էր ընկնում գծագրության մեղմ ներդաշնակությամբ: Իրանակալի վայր իշնող եռանկյուն կտրվածքը և արծաթագույն երակներ ունեցող սև շղարշը, որ վարագուրում էր շրջազգեստը, ավելի տպավորիչ էին դարձնում նրան: Վարդասպիտակ, գիրուկ, ասես շարխած վիզը ավելի էր ցայտուն դառնում սև, հղկված սաթե մանյակից: Նրա առողջ ու քնքուշ կարմրության հրապուցրը շեշտվում էր այտին փակցված պստլիկ սև խալով: Շեկ-ոսկեթուց վարսերը հմտորեն ուռեցված էին ճակատի վրա, իսկ ետևից այդ ամբողջ ոսկեղեն ցովեժը երկու հաստ գիսակի

հյուսված՝ մտցվել էր զգի վրա իշնող սկ ցանցի մեջ. թե թեակի քսված հոնքերը ավելի էին շեշտում նրա վարսերի արտասովոր գույնը: Այդ ամբողջ բազմության մեջ էլլինը մի քիչ ավելի գրգռիշ տեսք ուներ, սակայն դրա պատճառը այնքան նրա արդուղարդը չէր, որքան նրանցից ժայթքող կյանքի ուժը: Իրեն ավելի նպաստավոր լույսի տակ ցուց տալու հմտութունը էլլինի համար կնշանակեր նվազեցնել իր հոգեկան ու ֆիզիկական ակնբախությունը: Բայց կյանքը միշտ հրում էր նրան ուղղակի հակառիք գործողությունների:

— Էլլիա՛ն:

Աննան կամացուկ բոթեց եղբոր կնոջ թեր: Նա շատ էր վշտացել, որ էլլինը նույնպես սկ զգեստ է հագել և իրենցից շատ ավելի հրապուրիշ է:

— Տեսնում եմ,— կիսաձայն պատասխանեց հարսը:

— Ահա և վերադարձաք,— դիմեց նա էլլինին:— Դուրս երեխ շատ ցուրտ է:

— Ռիշտն տսած՝ շնկատեցի: Ի՞նչ հրաշալի է այստեղ՝ ձեզ մոտ:

Նա հայացքը մտն ածեց մելմ լույսով ողողված սենյակում և հյուրերի բակմության վրա:

Նորան անմիջապես սկսեց շաղակրատել Աննայի հետ:

— Գիտեք ինչ, կարծում էի, թե չեմ կարողանա այս շրջագգեստը քաշել վրաս: Ջզվելի էլլինը ո՛չ մի կերպ չէր ուզում օգնել ինձ:

Էլլինն արագ դիմեց այնտեղ, ուր իր մոր հետ կանգնած էր Ֆրենկը: Նա ձեռքից բաց թողեց տտումը պահող ատլասե ժամանակին և սարի անհամրեր շարժումով ուղղեց այն: Չնայած նրա տմրուց բնածին զսասզամտության՝ նրա աշքերում երիաց աղաղական արտահայտություն, ինչպես շուլանդական գական գամփոր աշքերում, և միահավասար ատամները շլացուցիչ փայլեցին:

Քառուփերվուց հիանալի հասկացավ նրան, ինչպես կը հասկանար ամեն մի ցեղական կենդանի:

— Խոսք չեմ գտնում ասելու ձեզ, թե որքա՞ն սքանչելի

եք դուք, — այնպես շշնջաց Ֆրենկը, ասես նրանց միջև գոյություն ունեին միայն իրենց հայտնի վաղեմի հարաբերություններ: — Դուք ամբողջովին հո՛ւ եք ու ե՛րգ:

Ֆրենկն ինքն էլ չէր իմանում, թե ինչու ասաց այս խոսքը: Ճիշտն ասած՝ նա բանաստեղծության հակում չուներ: Նախօրոք չէր պատրաստվել, բայց հենց որ նկատեց էլլինին նախարահում, նրա բոլոր մտքերն ու զգացմունքները սկսեցին բարախել ու խայտալ, ինչպես քմահաճ նժույգները: Նրա բոլոր մկաններն ակամա լարվեցին, իսկ դեմքի արտահայտությունը; որքան մոտենում էր էլլինը, դառնում էր ավելի վճռական, առնական ու խիստ:

Բայց իսկույն եեթ երկու քույրերին էլ շրջապատեցին երիտասարդներ, ովքեր տենչում էին ներկայացվել նրանց ու դրվել նրանց պարահանդեսային գրքույկների մեջ, և Քառի փերվուդը միառժամ տեսողությունից կորցրեց նրանց:

Գ Լ Ո Ւ Խ XVIII

Դժվար է հասու լինել կյանքի փոփոխության ամեն մի հատիկին, որպէսիւ նա խոր է արմատավորված մարդու մեջ: Բավական էր, որ միսիս Քառի երվուոն ու Աննան Հիշեցնեին պարահանդեսը, որ էլլինն զգար այնտեղ ավելի վառ փայլելու ցանկություն, քան կարողացել էր անել մինչև հիմա, չնայած հոր ամրող հարստության: Այն հասարակությունը, որտեղ պիտի ներկայանար նա, անհամեմատ ավելի ընտիր էր, քան այն, ուր սովորաբար եղել էր: Բացի դրանից, Քառի երվուոդը հիմա նրա համար բան արժեր, և արդեն աշխարհում ոչ մի բան չէր կարող ստիպել, որ նրա մասին շմտածի:

Մի ժամ առաջ, երբ էլլինը փոխում էր իր գգեստները, Ֆրենկը շարունակ կանգնած էր նրա ներքին հայացքի առաջ: Նա իր արդուզարդին հոգ էր տանում դարձյալ գլխավորապես Ֆրենկի համար: Նա չէր կարող մոռանալ այն պահերը, երբ Ֆրենկը նայում էր իրեն քննախույզ, փաղաքշող հայացքով: Մի անգամ նա գովել էր իր ձեռքերը: Այսօր էլ ասաց, թե ին-

բը «սքանչելի» է, և մտածեց, թե որքան հեշտ կլինի իր համար երեկոյան է՛լ ավելի ուժեղ տպավորություն գործել նրա վրա, ցույց տալ, թե հիրավի որքան լավն է ինքը:

Երեկոյան ութից մինչև ինը էյլինն անցկացրեց հայելու առաջ՝ մտմտալով, թե ինչ հագնի, և ինն անց քառորդին միայն պատրաստվեց բոլորովին: Նրա խիստ ընդարձակ ու ահագին հանդերձարանը զարդարված էր երկու բարձր հայելիներով, երրորդն էլ այդ սենյակի դռան մեջ էր ագուցված: Էյլինը այս վերջինի առաջ կանգնած՝ նայում էր իր մերկ թերին և ուսերին, իր բարեկազմ մարմնին, իսկ մտքերն անցնդհատ թռչում էին ձախ ուսի փոսիկից դեպի կարկեհանե ու արծաթե սրտածե ճարմանդներ ունեցող ծնկակապերը, որոնք և այսօր դարձան նրա ընտրության արգասիքը: Սեղմիրանն սկզբում չէր կարողանում բավական պիրկ ձգել և բարկանում էր իր սպասումու՛ Քեթլին Քելլիի վրա: Այնուհետեւ նրա ամբողջ ուշադրությունը կլանեց սանրվածքը, և բավական շարշարվեց նա, մինչև որոշեց վերջնականապես, թե ինչպես զարարի վարսերու էյլինը ներկեց-կոկեց հոնքերը, մի թիթի հարեց վարսերը. Թուզ ապատ բնկնեն ու շեշտեն հակատու Մանիկյարի միրատով տարբեր շափի մանր բոլորակներ կորեց մոմադատ սե սնդուսից ու սկսեց փակցնել իր այսահրին վերջապես գտնվեց անհրաժեշտ խալի շափն ու հարմար տեղը: Նա գլուխը թեքում էր այս ու այն կողմ՝ ուսումնասիրելով սանրվածքի, ներկված հոնքերի, փոսիկավոր ուսերի ու շինծու խալերի ընդհանուր տպավորությունը: 0՝, եթի որևէ տղամարդ տեսնե՞ր իրեն: Բայց ո՞վ: Այս միտքը աշարեկիված մինիկի նման ճարպկորեն ծլկեց իր բանրը: Զնույած իր վճռական բնավորության՝ էյլինը սարսափում էր նրա մտսին՝ իր միակ տղամարդու մասին մտածելուց:

Հետո արդեն զբաղվեց շրջազգեստի ընտրությամբ: Քեթլինը փոեց նրա առաջ հինգ հատ. էյլինը վերջերս միայն հասկացավ այդ իրերի պատճառած ուրախությունն ու հալարտությունը և հոր ու մոր թուլատրությամբ ամբողջովին անձնատուր եղավ արգուզարդին: Երկար ժամանակ նա

ուսումնասիրում էր ոսկեղին մետաքսե շրջազգեստը կրե-
մագույն ժանյակե ուսակապերով և խորհրդավոր կերպով
փայլվացող կարկեհաններով շաղված տտունով. բայց դա
մի կողմ դրեց: Այնուհետև սկսեց հաճությամբ զննել մե-
տաքսե զգեստը սև ու սպիտակ շերտերով, որոնք միախառն-
վելով՝ ստեղծում էին հիանալի գորշ երանգ, սակայն որքան
էլ մեծ լիներ գայթակղությունը, այնուամենայնիվ վերջիվերջո
հրաժարվեց և դրանից: Նրա առաջ փոված շորերի մեջ կար
մի շագանակագույն շրջազգեստ՝ սպիտակ մետաքսե ծալա-
բոլորքով ու տյունիկով, մեկն էլ կրեմագույն հրաշալի ատ-
լասից և վերջապես զանակավոր սկը, որը և ընտրեց էլլինը:
Ճիշտ է, սկզբում նա գեռ կրեմագույն ատլասե զգեստն էր
շափ ու ձև անում՝ կարծելով, որ հաղիվ թե ավելի հարմարը
դտնի, բայց պարզվեց, որ սարքած հոնքերն ու խալերը չեն
ներդաշնակում դրանց: Այնժամ նա հագավ արծաթակարմիր
թեփուկավոր սև մետաքսե զգեստը, և, ո՞վ ուրախություն,
անմիջապես դա փարատեց նրա բոլոր տարակույսները: Ար-
ծաթաթույր շղարշը, որ պլրանքով վերակարված էր ազդուերի
մասում, անմիջապես գերեց նրան: Շղարշե տյունիկներն
այն ժամանակ նոր էին սկսում մոդայական դառնալ. ավելի
պահպանողական մոդայամոլուհիներից տակավին ճանաշում
չստացած՝ այնուամենայնիվ էլլինին զմայլեցնում էին: Սար-
սուռ անցավ նրա մարմնով այդ սև զգեստի շրջունից. նա
ուղղվեց ու թիթեակի ետ տարավ գլուխը. հիանալի էր նըս-
տել զգեստը վրան: Իսկ երբ թեթևինը ափրուհու պահանջով
ավելի ձգեց սեղմիրանը, նա բարձրացրեց տտունը, գցեց
թերի վրա ու հայելու մեջ դարձյալ դիտեց իրեն: Այնուամե-
նայնիվ ինչ-որ բան պակասում էր: Դե իհարկե: Վզին էլ մի
բան պետք է գցել: Կարմիր մարզա՞ն: Ո՞չ, շատ հասարակ
կերևա: Մի շար մարգարիտ: Նմանապես չի պատշաճում:
Նա ուներ նաև արծաթի մեջ ագուցված մանր կամեռների
մանյակ՝ մոր նվերը, և աղամանդաշար ճտնոց, որ իրակա-
նում պատկանում էր միսիս թաթլերին, բայց ո՞չ մեկը, և
ո՞չ մյուսը չէին սազում նրա արդուզարդին: Վերջապես նա
հիշեց սև սաթե իր մանյակը, որ առանձնապես երբեք չէր

Հավանել և, ա՞խ, որքա՞ն պատեհ ժամի մեջտեղ եկավ, որքա՞ն սպիտակ, քնքուշ ու ողորկ էր թվում նրա կղակը այդ ֆոնի վրա, էյլինը գոհունակությամբ շոյեց վիզը, հրամայեց տան իրեն սև ժանեկազարդ թիկնոցը, դոյեց կարմիր աստառած սև մետաքսե բարձրադիր գլխարկը, և արդուղաբն ավարտված էր:

Երբ նա եկավ, պարասրահն արդեն լի էր: Երիտասարդներն ու օրիորդները, որոնց տեսավ այդտեղ, խիստ գրավիչ թվացին նրան. Երկրպագուներն իսկովն շրջապատեցին էյլինին: Այդ երիտասարդներից առավելապես ձեռներեցներն ու համարձակները անմիջապես զգացին, որ այդ աղջկա մեջ անթեղված է ինչ-որ կյանքի կոչ, գոյության կիզիչ հրձվանք: Եվ շրջապատեցին նրան, ինչպես քաղցած հանճերն են շրջապատում մեղրով լի բջիջը:

Բայց երբ նրա պարահանդեսային գրքույկն սկսեց արագ դրսավիլ, մտքովն անցավ, որ շուտով ոչ մի տեղ չի մնա միստր Քառուփերվուդի հետ պարելու համար, եթե սա ցանկանա պարել իր հետ:

Վերցին հյուրերին զիմավորելիս Քառուփերվուդը մտածում էր, թե ինչ նուրբ ու բարդ բան է սեռերի փոխհարաբերությունը: Երկո՛ւ սեռու նա հավատացած չէր, որ այդ փոխհարաբերությունները կառավարում է որենք օրենք: Էյլին Բաթլերի համեմատությամբ նրա կինը թվում էր անգույն ու բացահայտուրեն ոչ երիտասարդ, իսկ երբ ինքը մի տասը տարով էլ մեծանա, կիլիանը բոլորովին կպառավի:

— Անշուշտ, մեծ է էլսուորթի հաջողությունը այս երկու տները կասուցելու դրծում. նա նույնիսկ գերազանցեց մեր տկնկալամբյանները, — ասում էր Քառուփերվուդը երիտասարդ բանիկի Հենրի Հեյլ-Սևնդերսոնին: — Ճիշտ է, նրա խնդիրը հեշտացնում էր երկու տները մեկի մեջ համագրելու հնարավորությունը. սակայն իմ տան լուծումը իհարկե ավելի դժվար եղավ նրա համար, քանի որ սա ավելի համեստ շափեր ունի: Հորս տունն ավելի ընդարձակ է: Ես արդեն այդպես էլ ասում եմ՝ նա բնակեցրեց ինձ կողքաշենքում:

Ծեր Քառուփերվուդը բարեհամների հետ գնաց իր փառա-

Հեղ տան ճաշասենյակը՝ ուրախանալով, որ կարողացավ հեռանալ հյուրերի բազմությունից: Ֆրենկը ստիպված եղավ փոխարինել նրան, ասենք ինքն էլ այդ էր ուզում: Հիմա գուցե կարողանա պարել էլլինի հետ: Իր կինը պարելու այնքան էլ սեր շունի, բայց հարկ կլինի մի անգամ էլ նրան հրավիրել: Ա՛յ, այնտեղ ժամանակում է իրեն միսիս Սենեկա Դեկսը. էլլինը նույնպես: Գրողը տանի, շա՞տ լավիկն է: Այսպես էլ աղջի՞կ:

— Պետք է կարծել, որ ձեր բոլոր պարերն արդեն նշված են: Թույլ կտա՞ք նայեմ:

Ֆրենկը կանգ առավ նրա առաջ, և էլլինը պարզեց նրան մի պստիկ ծոցատեր կապույտ կտրվածքով ու ոսկե սկզբնատառերով: Դահլիճում թնդաց երաժշտությունը: Շուտով կսկսվեն պարերը: Պատերի երկայնքով ու արմավենիների ետևը արդեն դրված էին թեթև, ոսկեզօծ աթոռներ:

Ֆրենկը նայեց նրա աշքերին՝ այդ հուզաթաթավ, արբեցած և կենսապապակ աշքերին:

— Ամբողջ գրքույկն արդեն լցված է: Տվեք մի անգամ ևս նայեմ: Իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ: Ի՞նչ արած, կարծես բավական է: Հազիվ թե ես կարողանամ շատ պարել: Բայց, դե, հաճելի է այսպիսի հաջողություն ունենայ:

— Ես այնքան էլ վստահ շեմ երրորդ պարի վերաբերյալ: Ինձ թվում է, թե մի բան շփոթել եմ: Եթե ուզում եք՝ կարուղ իմ պահել զա ձեղ համար:

Էլլինը ճիշտ չէր ասում. ոչ մի բան էլ չէր շփոթել նա:

— Երկի դուք այնքան էլ շեք հետաքրքրվում ձեր այդ կավալերով, — նկատեց Ֆրենկը ու թեթևակի շառագունեց:

— Ոչ:

Էլլինը նույնպես կարմրատակեց:

— Հրաշալի՞ է: Երբ հայտարարեն պարը, ձեզ կգտնեմ: Սքանչելի եք դուք: Բայց ես վախենում եմ ձեզնից:

Ֆրենկը մի փորձող արագ հայացք նետեց նրան ու հեռացավ: Էլլինի լանջը բարձրանում էր: Երբեմն որքա՞ն դժվար է լինում շնչել այդպես շիկացած օդում:

Պարերի ժամանակ Ֆրենկի դամաներն էին՝ նախ իր

կինը, ապա միսիս Դեկսիս և միսիս Ուոքերը. Հազվագեց էր նա կարողանում նայել էլլինին, և ամեն անգամ նրան համակռում էր ուժի, գեղեցկության ու բուռն եռանդի հրճվալի զգացողությունը՝ այս ամենը, որին նա ընդհանրապես շեր կարող դիմադրել, իսկ այդ երեկո՝ մասնավորապես Որքան մանկահասակ է գեռ այդ աղջիկը, որքան դյութիչ: Եվ ինչ խայթող խոսքեր էլ ասեր իր կինը նրա հասցեին, ինքն զգում էր, որ ելլինը ավելի է համապատասխան իր ուղղամիտ, գործունյա, տարակուսել շիմացող խառնվածքին, քան որևէ մի ուրիշ կին: Պարզամիտ է մի քիչ այս աղջիկը (նա չեր կարող շտեսնել այդ), սակայն մյուս կողմից շափազանց քիչ զանք պետք կլինի շատ բաներ հասկացնելու համար նրան: Նա մի շատ մեծ բանի տպավորություն էր գործում Ֆրենկի վրա. Իհարկե ոչ թե ֆիզիկական իմաստով, թեև հասակով գրեթե հավասար էր իրեն, այլ հուզական: Ամբողջովին կենսասիրությամբ է առարկաված այդ աղջիկը: Պարելիս էլլինը հաճախ էր սարսում նրա մոտից՝ հայտցրը խնդում, բերանը կիսաբաց և մաղաղիս ցուցաբրելով շրացուցիչ ճերմակ ատամները: Եվ ամեն անգամ Քառուիկիրվագր ունենում էր ուժին սքանչացման ատկային իրեն անհայտ մի զգացմունք՝ անդիմագրելիսրեն ձգաւամ էր գեպի նա: Էլլինն ամբողջովին և նրա յուրաքանչյուր շարժումը լի էր հրապուցրով:

— Ուրեմն ինչպես, էլլին, հաջորդ պարին ազատ եք դուք, — հարցրեց նա՝ երրորդ պարագրանին մոտենալով նրան:

Նոր էր նա ավարտել պարը և իր կավալերի հետ նստել էր հեռավոր մի անկյունում մեծ դահլիճի, որի մոմապատ պարկետը փայլում էր հայելու պես: Այդ անկյունում հմտորեն դասավորված մի քանի արմավենի կազմում էին կանաչ քարանձավի նման մի բան:

— Հուսով եմ, որ կներեք ինձ, — բարեկիրթ շեշտով ավելացրեց Ֆրենկը՝ դառնալով գեպի էլլինի կավալերը:

— Անշուշտ, — պատասխանեց երիտասարդը վեր կենալով:

— Այո, այս պարն ազատ է, — ասաց էլլինը: — Եկեք

նստենք այստեղ. շուտով արդեն կսկսվի: Դուք որևէ առարկություն չունե՞ք, — դիմեց նա իր նախկին պարընկերոջը՝ շլաքուցիշ մի ժպիտ պարգելով նրան:

— Ի սե՞ր աստծո, ես արդեն մեծագույն հաճույք ստացա՛ վալս պարելով ձեզ հետ:

Նա դնաց: Քառուիկերվուղը նստեց էյլինի մոտ:

— Եթե շեմ սխալվում, դա երիտասարդ կեղո՞քսն է: Տեսա, թե ինչպես էիք պարում նրա հետ: Կարծում եմ, թե դուք սիրո՞ւմ եք պարել:

— Խենթանալու աստիճան:

— Այդ նույնը չեմ կարող ասել իմ մասին: Թեև անշուշտ զվարճալի զբաղմունք է դա: Ամեն ինչ կախված է այն բանից, թե ում հետ ես պարում: Միսիս Քառուիկերվուղը նույնպես պարի մեծ սիրահար չէ:

Լիլիանին հիշելը օրիորդին մղեց զգալու իր գերազանցությունը նրանից:

— Բայտ իս՝ դուք շատ լավ եք պարում: Ես էլ ձեզ էի հետեւում, — նկատեց էյլինը:

Ավելի ուշ էյլինը հանդիմանում էր իրեն այս խոսքի համար: Դա հնչեց գրգռիչ, համարյա լկտի:

— Իսկապէս: Դուք հետեւո՞ւմ էիք ինձ:

— Այո:

Ֆրենկը խիստ լարված վիճակում էր, նրա մտքերը մշաւշլում լին էյլինն ակամա միջամուխ եղավ իր կյանքի մեջ, ավելի ճիշտ՝ միջամուխ կլիներ, եթե ինքը թույլ տար, ուսւոի և նրա խոսքերը հնչում էին նույնիսկ մի տեսակ անհստացակ: Նա մտածում էր ինչ ասի, բառեր էր փնտրում, որոնք թեկուզ մի քիչ մերձեցնեին իրենց, բայց չէր գտնում: Մինչդեռ շատ բան էր ուզում ասել:

— Դուք շատ սիրալիր եք, — ասաց նա բավական երկարատև լուսթյունից հետո: — Բայց ի՞նչը դրդեց ձեզ հետեւելու ինձ:

Ֆրենկը նայեց էյլինին՝ թեթևակի քմծիծաղով: Նորից հնչեց նվազք: Պարողներն սկսեցին վեր կենալ: Նա նույնպես ստքի ելալ:

Քառակերպությունը չէր մտածել իր հարցման մեջ որևէ լուրջ նշանակություն դնել, բայց հիմա, երբ էլլինը այնքան մոտ, հենց իր կողքին էր կանգնած, նա շեշտակի նայեց նրա աշքերին՝ ու մեղմ համառությամբ կրկնեց.

— Ի՞նչը ուրեմն դրդեց ձեզ:

Նրանք դուրս եկան արմավենիների հովանու տակից: Ֆրենկն աշ ձեռքով պարուրեց էլլինի իրանը, ձախով էլ պահել էր նրա պարզած աշ բազուկը՝ ափը ափին: Էլլինի ձախ ձեռքը հանգչում էր Ֆրենկի ուսին. նա կանգնել էր երիտասարդին խիստ մոտ ու նայում նրա աշքերին: Երբ նրանք պտտվեցին վալսի որթմիկ հողմապտույտի մեջ, էլլինը շրջեց իր հայացքը, խոնարհեց աշքերը ու շպատասխանեց Ֆրենկի հարցին: Նրա շարժումները թեթև էին ու օդային՝ նման թիթեռի թռիչքին: Ֆրենկն ինքն էլ հանկարծակի թեթևություն զգաց, ասես էլլինից էլեկտրական հոսանք հաղորդվեց իրեն: Նա ցանկացավ օրինորդի հետ մրցել մարմնի ձկունությամբ: Էլլինի ձեռքերը, նրա մարմինը պարուրած սև շրջապղեսաի արծաթակայտմիլի զանտիների փայլվելը, պարանացն ու սուկեցող վարսերը մշատչեցին Ֆրենկի ուղեղը նրանից հասնում էր առողջություն, երիտասարդություն և ջամարտապես սրանշելի էր թվում նա Ֆրենկին:

Դուք գեռ շպատասխանեցիք ինձ,— հիշեցրեց Ֆրենկը:

— Ի՞նչ հրաշալի նվագ:

Նա սեղմեց էլլինի մատները:

Օրինորդը աշքերն անհամարձակ բարձրացրեց. շնայած իր ուրախ, առույգ ուժին՝ նա վախենում էր Ֆրենկից: Որքա՞ն ակներև էր Ֆրենկը գերազանցում այցտեղ ներկա ամենքին: Հիմա, պարելիս, երբ օրինորդը այնքան մոտ էր իրեն, զարմանալի հետաքրքրական էր թվում նրան. սակայն էլլինի ներվերը տեղի տվին, և առանց ետ նայելու՝ փախուստի դիմելու ցանկություն զգաց:

— Ի՞նչ արած. չէ, ուրեմն չէ,— ժպտաց Ֆրենկը մի փոքր ծաղրաբար:

Ֆրենկը երեակայեց, թե էլլինին դուր է գալիս. խոսակցության այդ տոնը, թե ինքը գրգռում է նրան՝ ակնարկու-

թյուններ անելով իր թաքուն զգացմունքին, նրա հանդեպ զգացած իր անսանձ մղումին: Բայց ի՞նչ հետևանք կունենա այդպիսի: խոստովանությունը:

— Պարզապես ուզում էի նայել՝ լա՞վ եք դուք պարում, թե ոչ, — մի քիչ շոր պատասխանեց էլլինը:

Վախենալով այժմ իրենց միջև տեղի ունեցածից՝ էլլինը շանաց զսպել իր զգացմունքը: Ֆրենկը նկատեց այդ փոփոխությունը և ժպտաց: Որքա՞ն հաճելի է պարել սրա հետ: Նոր երեք շէր կարծել, թե պարերն այսքան հրապույր ունեն:

— Ես ձեզ դուր գալի՞ս եմ, — անսպասելիորեն հարցրեց Ֆրենկը հանց այն բոպեին, երբ երաժշտախումբը դադարեց-նում էր նվազը:

Էլլինի ամբողջ մարմնով սարսուռ անցավ այդ հարցը լսելուց: Օձիքի տակ գցված սառուցի կտորը ավելի շէր սարսուցնի նրան: Թվում էր, թե հարցն անտակտ է, բայց այն շեշտը, որով արվեց, բացառում էր որևէ անտակտություն: Էլլինը արագ բարձրացրեց աշքերը, շեշտակի նայեց Քառւիկուդին, բայց չկարողացավ դիմանալ նրա հայացքին:

— Այո, իհարկե, — պատասխանեց նա՝ զանալով զսպել ձայնի թրթիռը, ուրախացած, որ նվազն արդեն լոեց, և հիմա կարելի է հեռանալ նրանից:

— Դուք այնքան դուր եք գալիս ինձ, — խոստովանեց Ֆրենկը, — որ ես ողետք է իմանամ՝ թեկուզ մի քիչ էլ ես դուր դալի՞ս եմ ձեզ:

Նրա ձայնի մեջ և՛ աղաշանք կար, և՛ քնքշանք, և՛ թախիծ:

— Այո, իհարկե, — կրկնեց էլլինը՝ փարատելով քարացումը, որ քիչ էր մնացել համակեր իրեն: — Եվ դուք գիտեք այդ:

— Ինձ պետք է, որ դուք բարեհաճ լինեք իմ հանդեպ, — շարունակեց Ֆրենկը նույն շեշտով: — Ինձ պետք է մի մարդ, որի հետ կարողանամ խոսել: Առաջ ես չէի մտածում այդ մասին, բայց հիմա անհրաժեշտ է դա ինձ: Դուք շեք իմանում, թե որքա՞ն հրաշագեղ եք:

— Պետք չէ, — նրա խոսքը կտրեց էյլինը: — Ես չպետք է... Աստված իմ, ի՞նչ եմ անում ես:

Նա տեսավ անշտապ իրեն մոտեցող մի երիտասարդի ու շարունակեց.

— Պարտ է, որ ես ներողություն խնդրեմ նրանից: Այս պարը նրան էի խոստացել:

Քառուիերվուղը հասկացավ և հեռացավ: Տաքություն եկավ վրան, ջղերը լարվեցին: Նա հասկանում էր, որ կատարեց (կամ համենայն դեպք հղացավ) ուխտադրուժ մի արարք: Ըստ հասարակական բարոյականության օրենսդրության՝ նա իրավունք չուներ այդպես վարվելու: Դա հակասում էր մի անդամ ընդմիշտ հաստատված նորմաներին, ինչպես հասկանում էին շրջապատում ամենքը. օրինակ՝ էյլինի հայրը, կամ իր ծնողները, կամ իրենց շրջանի որևէ ներկայացուցիչ: Ինչքան էլ որ ծածուկ շիմախտվեին այդ նորմաները, այնուամենայնիվ միշտ մնում էին ուժի մեջ: Մի անգամ դպրոցում դասընկերներից մեկը, երբ խոսք եղավ աղջիկ պղծած մարդու մասին, ասաց.

— Այդպես չե՛ն վարվում:

Ինչ էլ լիներ, այնուամենայնիվ կատարվածից հետո էյլինի պատկերը շարունակ կանգնած էր նրա առաջ: Ու թեև անմիջապես նրա մտքով անցավ, որ այդ պատմությունը կարող է ծայր աստիճան խճճել իր հասարակական ու ֆինանսական դրությունը, այնուհանդերձ ինչ-որ տարօրինակ շահագրգությամբ էր նա հետևում, թե ինչպես ինքը մտածված, ծրագրված, ավելին՝ հիացմունքով բորբոքում էր իր մեջ ցանկութան բոցը: Բորբոքել մի կրակ, որը կարող է ժամանակին ոչնչացնել իրեն. և անել դա հմտորեն ու կանխամտածված:

Էյլինը ձանձրուկթից խաղացնում էր հովհարը ու լսում, թե ինչ է ասում իրեն երիտասարդ, սկահեր ու նրբադեմ իրավաբան-ուսանողը: Հեռվում տեսնելով նորային՝ նա ուսանողից ներողություն խնդրեց ու մոտեցավ քրոջը:

— Ա՞խ, էյլին, — բացականշեց նորան: — Ես ամեն տեղ փնտրեցի քեզ: Ո՞ւր էիր անհետացել:

— Պարում էի, իհարկե: Քո կարծիքով էլ ո՞ւր կարող էի լինել: Միթե դու ինձ շտեսար դահլիճում:

— Ոչ, շտեսա,— դժգո՞հ շեշտով պատասխանեց Նորան, կարծես խոսքը մի խիստ կարևոր բանի էր վերաբերում: — Դու դեռ շա՞տ ես մտադիր մնալ այստեղ:

— Հավանորեն մինչեւ վերջը: Ասենք շեմ իմանում:

— Օուենն ասաց, թե տասներկուախն կգնա տուն:

— Հետո՞ ինչ: Ինձ որեէ մեկը կուղեկցի: Ուրա՞խ ես զգում քեզ:

— Շա՞տ: Օ՛, չգիտես ինչ եմ պատմելու քեզ. վերջին պարի ժամանակ ոտքս դրի մի տիկնոջ շրջազգեստին: Այնպէ՞ս շարացավ նա: Եվ ի՞նչ հայացք նետեց ինձ:

— Լավ, անուշիկս, մի վախենա, քեզ չի ուտի: Հիմա ո՞ւր ես գնում:

Էյլինը միշտ քրոջ հետ խոսում էր մի քիչ հովանավուրողի շեշտով:

— Ուզում եմ Քելեմին փնտրել: Նա պետք է պարի ինձ հետ հաջորդ պատույտում: Ես զիտեմ, թե ինչ է նրա միտքը՝ ուզում է խույս տալ ինձնից, բայց չի կարողանա:

Էյլինը ժպտաց: Սքանչելի էր Նորան, մանավանդ և այնքա՞ն խելացի: Ի՞նչ կմտածեր նա քրոջ մասին, եթե ամեն ինչ իմանար: Էյլինը շրջվեց. շորորդ կավալերը իրեն էր փնտրում: Եվ անմիջապես էլ սկսեց ուրախ շաղակրատել նրա հետ՝ հիշելով, որ պետք է անբռնազբոսիկ պահի իրեն: Սակայն ականջներում անդադար հնչում էր նույն շեշտակի տրված հարցը. «Դո՞ւր եմ գալիս ես ձեզ» և իր անվստահ, բայց ճշմարտացի պատասխանը. «Այո՛, իհա՞րկե»:

Գ Լ Ո Ւ Խ Խ

Կրքի զարգացումը յուրօրինակ երևույթ է: Մեծ խելքի, ինչպես նաև արտիստական խառնվածքի տեր մարդկանց կիրքը հաճախ սկսվում է իրենց ապագա առարկայի որոշ արժանիքների հիացմունքով, որոնք ի դեպ ընկալվում են անհաշիվ

վերապահումներով։ Եսապաշտը, որ ապրում է բանականությամբ ու շատ քիչ է զոհաբերում իր եսը, ի պատասխան պահանջում է շատ բան։ Այնուամենայնիվ կյանքը սիրող մարդուն, լինի այր կամ կին, այդպիսի եսասիրական խառնքվածքի հետ ներդաշնակորեն շփվելը շատ բան է խոստանում։

Քառուփերվուզը ի ծնե նախ և առաջ դատողունակ եսապաշտ էր, թեև զգալի շափով այդ հատկություններին խառնըվում էր մի բարյացակամ ու ներողամիտ վերաբերմունք մարդկանց հանդեպ։ Մեզ թվում է, թե եսապաշտությունը և մտավոր շահագրգոռությունների գերիշխումը նպաստում են արվեստի տարբեր ասպարեզներում աշխատելուն։ Ֆինանսական գործունեությունը նույնպես արվեստ է՝ մտացի ու եսամոլ մարդկանց գործողությունների խրստ բարդ հանրագումարը։ Քառուփերվուզը ֆինանսիստ էր հենց իր խառնվածքով։ Փոխանակ ուշգը գնալու ի տես բնության ստեղծագործությունների, նրանց գեղեցկության ու բարդությունների՝ մոռանալով կյանքի նյութական կողմը, նա արտագ մտածողության շնորհիվ ձևոր րերեց մի բարերասարիկ բնույնականություն՝ մտավորապես ու հաղորդանորեն վայելել կեցության հրավուցները, տատնոց վնասո հասցնելու իր անդադրում ֆինանսական հաջիկներին Խորհրդածելով կանանց, բարոյականության մտսին, այսինքն՝ այն մասին, ինչ այնքան սերտորեն կապված է գեղեցկության, երջանկության, կատարյալ ու բազմազան կյանքի ծարավի հետ, նա սկսում էր տարակուսել միասիրության չարաբաստիկ գաղափարին՝ կարծելով, որ դա հազիվ թե որևէ այլ հող ունի իր տակ, բացի գոյութուն ունեցող հասարակական կացությածեր պահպանելու ձգություն։ Ինչո՞ւ այդքան մարդկանց կարծիքները իրար բռնկեցին հենց այս կետում, թե կարելի է ու պետք է ունենալ միայն մի կին ու հավատարիմ լինել նրան մինչև գերեզման։ Այս հարցին նա պատասխան չէր գտնում։ Նա բնավ ցանկություն շուներ գլուխ ջարդելու էվոլյուցիոն տեսության նրբությունների վրա, որի մասին արդեն այն ժամանակ շատ էին խոսում Եվրոպայում, կամ վերջիշելու այդ նյութին վերաբերող պատմական անեկդոտները։ Զափազանց զբաղված մարդ

Էր նաւ թացի դրանից, հաճախ էր նա տեսել հանգամանքների ու խառնվածքների այնպիսի միահյուսում, որոնք ապացուցում էին այդ գաղափարի կատարյալ խախուսությունը: Ամուսինները մինչև գերեզման հավատարիմ շէին մնում իրար, իսկ եթե հազարավոր դեպքերում հարդում էին հավատարմությունը, ապա ոչ թե բարի կամքով: Մտքի արագություն ու համարձակություն, հանգամանքների պատահական ու բարենպաստ զուգադիպություն. ահա թե ինչն էր օգնում որոշ մարդկանց իրենց ընտանեկան ու հասարակական անհաջողությունների տեղը հանել. շատերն էլ իրենց բժամտության, անխելամտության, աղքատության կամ անձնական հմայքի պակասի պատճառով դատապարտված էին հավիտենական անլուսաշող տաղտուկի: Ծնվելու անիծյալ պատահականությունը, սեփական կամագրկությունը կամ հնարամիտ շինելը ստիպում էր նրանց կամ անընդհատ տառապել և կամ թոկի, դանակի, գնդակի ու թույնի միջոցով ազատվել զզվելի կյանքից, որը այլ հանգամանքներում կարող էր հրաշալի լինել:

«Ես էլ կգերադասեի մեռնել», — մտովի ասաց Քառվակերվուդը՝ թերթում կարդալով մի կիսամուրացիկ մարդու մասին, որ գամփած էր անկողնին և այնուամենայնիվ տասներկու տարի գոյություն էր պահել մի պստիկ խցիկում՝ դանվելով գառամած, ակներեսաբար նույնպես տկար, աղախնի հոգատարամիյան տակ Դուլտա լցնելու ասեղը, որ խրել էր սիրաբ, վերջ էր դրել նրա երկրացին տառապանքներին: «Գրո՛զը տանի այդպիսի կյանքը: Ինչո՞ւ այդ բանը չէր արել հիվանդության երկրորդ կամ երրորդ տարում»:

Եվ այնուամենայնիվ միանգամայն պարզ է (դրա ապացուցները տեսնում ենք ամեն մի քայլափոխին), որ բոլոր դժվարությունները լուծում է մտավոր ու ֆիզիկական ուժը: Զ՞է որ արդյունաբերական ու ֆինանսական ջոշերը կարողանում են գործել (և գործում են) այս կյանքում այնպես, ինչպես ցանկանան: Քառուիերվուդն արդեն հաճախ էր համոզվել դրան: Ավելին՝ այսպես կոչված օրենքի ու բարոյականության այդ բոլոր ողորմելի հարգողները՝ մամուլը,

եկեղեցին, ոստիկանությունը և ամենից առաջ կամավոր բարոյախոսները, որոնք մոլեգնորեն դատափետում են մոլությունը, երբ դա հայտնաբերում են ստորին դասակարգերում, և երկշուաբար լուսում են, երբ բախվում են դրան ունեորների դասակարգում, ծպտուն իսկ չէին հանում, քանի դեռ մարդք զորեղ էր, սակայն բավական էր, որ նա սայթաքի, և դրանք արդեն ոչ մի բանից չվախենալով՝ հարձակվում էին նրա վրա: Օ՛, ինչպիսի՝ աղմուկ էր բարձրանում այդ ժամանակ, ինչպիսի՝ թմբկահարություն, ինչպիսի՝ կեղծավոր ու գոեհիկ բառաժայթքում. «Եկե՛ք, եկե՛ք, բա՛րի մարդիկ, նայեցեք ու կտեսնեք ձեր աշքով, թե ինչպիսի՝ պատժի է ենթարկվում մոլությունը անգամ հասարակության վերին խավերում»: Քառուփերվուղը ժպտում էր այդ մասին մտածելիս: Ինչպիսի՝ փարիսեցիություն, ինչպիսի՝ կեղծ հգնավորություն: Բայց, դե՛հ, այդպես է կառուցված աշխարհը, և իրեն չե մնացել ուղղել այն: Թող ամեն ինչ ընթանա իր հերթին: Իր խնդիրն է տեղ գրավել կյանքում ու պահել այն, բարիբարոյության ու պատկառելիության այնպիսի համրավ ստեղծել, որը կարողանա դիմանալ ամեն տեսակ փորձության և համարվի իր իսկական էությունը: Դրա համար ուժ է պետք Եվ արագ գործող միտք: Իսկ ինքը ուներ թե՛ մեկը, թե՛ մյուսը: «Նախ և առաջ իմ ցանկությունները». ահա Քառուփերվուղի նշանաբանը: Նա կարող էր համարձակ փորագրել դա այն վահանի վրա, որով գնում էր մարտնչելու հանուն բախտի ընտրյալների շարքում տեղ գրավելուն:

Իսկ հիմա նա կարիք ուներ մանրակրկիտ մտածելու ու որոշելու, թե ինչպես վարվի հետագայում էլլինի հետ, թեև Քառուփերվուղը՝ այդ ուժեղ ու նպատակամետ մարդը, այս հարցում ևս մնում էր զուսպ: Նրա համար պրոբլեմ էր դա և շատ քիչ էր տարբերվում այն Փինանսական բարդ պրոբլեմներից, որոնց բախվում էր ամեն օր: Անլուծելի չէր թվում դա նրան, ի՞նչ է պետք ձեռնարկել: Չէր կարող կիլիանին լքել և փախչել էլլինի հետ. կասկածից դուրս էր դա: Շատ թելերով էր նա կապկապված: Ոչ միայն հասարակական

կարծիքից վախենալը, այլև ծնողների ու զավակների սերը, ինչպես նաև ֆինանսական նկատառումները բավական ամուր կաշկանդում էին նրան։ Բացի գրանից, նաև նույնիսկ հավատացած չէր, թե ինքն ուզում է այդ։ Նա բնավ էլ մտադիր չէր գոհաբերելու իր գործարարական շահերը, որոնք աճում էին օրեցօր, բայց միաժամանակ միտք էլ չուներ իսկույն հրաժարվել էլլինից։ Զափից շատ հրճվանք էր խոստանում այդ աղջկա մեջ անսպասելիորեն բռնկված զգացմունքը։ Միսիս Քառվիերվուդը այլևս չէր բավարարում նրան ո՛չ ֆիզիկապես, ո՛չ էլ հոգեպես, և դա բավարար արդարացում էր էլլինով հափշտակվելուն։ Ինչի՞ց պիտի վախենար։ Այդ դրությունից էլ նա կկարողանա դուրս գալ առանց որևէ վնաս հանցնելու իրեն։ Սակայն լինում էին պահեր, երբ նրան թվում էր, թե գործնականապես չի կարողանա իր և էլլինի համար մշակել գործողությունների բավական անվտանգ ծրագիր, որից և նա դառնում էր լուակյաց ու մտածկոտ, որովհետև հիմա անդիմադրելիորեն ձգտում էր դեպի էլլինը և հասկանում էր, որ իր մեջ աճում է համառորեն ելք պահանջող մի հզոր զգացում։

Իր կնոջ մասին մտածելիս Քառվիերվուդը նույնպես ունենում էր ոչ միայն բարոյական, այլև նյութական բնույթի տարակույսներ։ Թեև լիլիանն այրիանալուց հետո շդիմացավ Ֆրենկի երիտասարդական բուռն գրոհին, բայց ավելի ուշ նա հասկացավ, որ այդ կինը հասարակական բարքերի տիպիկ կեղծավոր հարգող է։ Նրա սառն, ձյունանման մաքրությունը այդպես էր միայն հասարակության աշքում։ Մինչդեռ իրականում հաճախ էին պաշարում նրան մոռայ հեշտասիրության պոռթկումները։ Ֆրենկը համոզվեց նաև, որ կինը ամաշում էր մերթ-մերթ իրեն համակող ու հավասարակշռությունից հանող կրքից։ Եվ դա շղայնացնում էր Քառվիերվուդին, որովհետև նա ուժեղ, իշխանատենչ բնավորություն ուներ և միշտ ուղղակի դիմում էր դեպի նպատակը։ Նա իհարկե չէր պատրաստվում ամեն մի պատահական մարդու հայտնել կիլիանի նկատմամբ ունեցած իր զգացմունքները, բայց ինչո՞ւ իրենք ևս գեմ առ դեմ պետք է լուս-

թյան մասնեին իրենց հարաբերությունները, իրար հետ շխոս-սեին ֆիզիկական մերձավորության մասին։ Ինչո՞ւ մի բան մտածել և այլ բան անել։ Լիլիանն իհարկե հավատարիմ էր իրեն յուրովի՝ անխռով ու անկիրք, մի խոսքով միայն բանականությամբ։ Հետադարձ հայացք նետելիս՝ նա չէր կարող հիշել կնոջը այլ կերպ, չհաշված հազվադեպ պահերը։ Պարտականության զգացմունքը, ինչպես լիլիանն էր հասկանում, մեծ դեր էր կատարում ամուսնու նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի մեջ։ Պարտականությունը ամեն ինչից վեր էր դասում նա։ Այնուհետև գալիս էր հասարակության կարծիքը և ժամանակի ոգու պահանջը։ Էյլինն, ընդհակառակը, հավանորեն պարտականության մարդ չէր, և խառնվածքն ըստ երեսութին ստիպում էր անտեսել պայմանականությունները։ Վարքի կանոններն անկասկած ներշնչել էին նրան, ինչպես և այլ աղջիկների, բայց նա բացահայտորեն չէր ուզում հաշվի առնել դրանք։

Հաջորդ երեք ամիսներին՝ նրանք է՛լ ավելի մոտիկացան։ Շատ լավ հասկանալով, թե ծնողներն ու հասարակությունը ինչպես կվերաբերվեին այն երեսութին, ինչ համակել էր իր հոգին, էյլինը այնուամենայնիվ համառորեն մտածում էր նույն բանի մասին, համառորեն նույնն էր տեսնչում։ Հիմա, երբ նա այսքան հեռու էր գնացել ու անվանարկել իրեն եթե ոչ արարքներով, ապա մտքերով, Քառուիերվուդն սկսեց թվալ նրան ավելի գայթակղիւ։ Էյլինին հուզում էր ոչ միայն նրա ֆիզիկական հրապույրը (ուժեղ սերը այդպիսի սահմանափակում չի ճանաչում), այլև նրա ներքին ամբողջականությունը դրավում ու թովում էր նրան, ինչպես բոցը թիթեռին։ Ֆրենկի աշբերում շաղցողում էր կրթի կայծը՝ թեկուղ և նրա կտորից թուլացված, բայց և այնուևս աիրական և, էյլինի ովատկերացմամբ ամենազոր։

Երբ հրամեցած տալիս Ֆրենկը բռնում էր էյլինի ձեռքը, սրան թվում էր, թե էլեկտրական հոսանք է անցնում իր մարմնով, և նրանից բաժանվելուց հետո հիշում էր, թե որքա՞ն դժվար էր իր համար ուղղի նայել նրա աշքերին։ Երբեմն երբեմն այդ աշքերից մի տեսակ ավերիչ ուժ էր ցայտում։

Շատերը, մանավանդ տղամարդիկ, դժվարությամբ էին զիմանում նրա հայացքի սառը փայլին: Նրանց թվում էր, թե իրենց նայող աշխերի ետևում թաքնված է սևմի զույգ աշշը, որոնք նայում են ծածուկ, բայց տեսնում են ամեն ինչ: Ոչ ոք չէր կարողանա կուահել, թե ինչ է մտածում Քառիկերվուլը:

Հետագա ամիսներին էլլինն ավելի սաստիկ կապվեց նրան: Մի երեկո էլ, երբ նա Քառիկերվուլների տանը նստած էր դաշնամուրի առաջ, Ֆրենկը օգտվելով պատեհ՝ բռպեից (սենյակում ոչ ոք չկար), կուացավ ու համբուրեց նրան: Լուսամուտների վարագույրների միջով երեսում էին ցուրտ, ձյունապատ փողոցը և գաղե առկայծող լաւտերները: Քառւիկերվուլը շուտ էր վերադարձել տուն ու լսելով էլլինի նվազը՝ մտել էր այն սենյակը, որտեղ դաշնամուրն էր: Էլլինը հագել էր բրդի գորշ շրջաղղեստ՝ վրան արկելյան ճաշակի նարընցագույն ու կապույտ քմահաճ ասեղնագործ նախշեր: Շրջաղղեստին համագույն գորշ գլխարկը նմանապես նարընցագույն ու կապույտ փետուրներով՝ ավելի էր շեշտում նրա գեղեցկությունը: Ստեղների վրա ցատկուող նրա մատներին շողջողում էին շորս թե հինգ մատանի (համենայն դեպք շատ շատ էին) արևաքարե, զմրովստե, սուտակե ու տփամանդե ակներով:

Ֆրենկը ներս մտավ, և էլլինը առանց շրջվելու իմացավ, որ նա է: Քառիկերվուլը մոտեցավ նրան, և էլլինը ժպտալով հառեց նրան աշխերը, որոնց մեջ Շուբերտի հարուցած երազայնությանը հաջորդեց բոլորսվին ուրիշ մի արաւահայտություն: Ֆրենկը հանկարծ կուացավ ու համբուրց դրոշմեց նրա շրթունքներին: Քառիկերվուլի բեղերի մետաքսային հպոմից սարսուռ անցավ աղջկա մարմնով: Էլլինն ընդհատեց նվազը, նրա կուրծքը զղաձդորեն բարձրացավ, և որքան էլ ուժեղ լիներ, այնուամենայնիվ շունչը կտրվեց: Միրտը խփում էր ծանր մուրճի նման: Նա չգոշեց. «ա՞խ», կամ «պե՛տք չէ», այլ վեր կացավ, մոտեցավ պատուհանին ու մի քիչ բարձրացնելով վարագույրը՝ ձևացավ, թե նայում է փողոցին: Նրան թվում էր, թե հենց հիմա ուշաթափ կլինի վարարած երջանկությունից:

Քառուփերվուգն՝ արագ հետևեց նրան։ Գրկելով նրա իրանը՝ նայեց նրա կարմրատակած դեմքին, վճիռ ու խոնավ աշքերին և բոսորագույն բերանին։

— Սիրո՞ւմ ես դու ինձ, — շշնչաց նա, և նրան համակած կրօռտ ցանկությունից այդ հարցը հնչեց խստաշունչ ու տիրական։

— Այո՛, այո՛. չէ՞ որ դու դիտես։

Ֆրենկը դեմքը սեղմեց նրա երեսին, իսկ էյլինը բարձրացրեց ձեռքերը և սկսեց շոյել նրա մազերը։

Երջանկության, այդ աղջկանը, նրա մարմնին տիրելու և սիրելու հրճվանքի միահեծան զգացմունքը պաշարել էր ֆրենկին։

— Ես քեզ սիրում եմ, — կրկին ասաց նա, ասիս ինքն էլ զարմացավ իր ասածից։ — Ես չէի իմանում այդ, բայց հիմա գիտեմ։ Որքա՞ն լավն ես դու։ Ես պարզապես խելքս թոցնում եմ։

— Ես էլ քեզ եմ սիրում, — պատասխանեց էյլինը։ — Ոչ մի կերպ չեմ կարսդ զսպել ինձ։ Գիտեմ, որ շպետք է անեմ, բայց… 0՛…

Էյլինը լուսեց ֆրենկի դլուխը և շրթունքները սեղմեց նրա շրթունքին՝ մշուշառատ հայացքը շկտրելով աշքերից։ Մյուսհետեւ արագ պոկվեց ու նորից սկսեց նայել փողոցը, իսկ Քառուփերվուղը քաշվեց հյուրասենյակի խորքը։ Բոլորովին մենակ էին նրանք։ Ֆրենկն արդեն մտածում էր, թե կարող է մի անգամ ևս համբուրել նրան, եթե դռանը երևաց նորան (կողքի սենյակում էր նա՝ Աննայի մոտ), նրա ետևից էլ սենյակ մտավ կիլիանը։ Մի քանի րոպե հետո էյլինն ու նորան մեկնեցին տուն։

Գ Լ Ո Ւ Խ Խ

Այսպիսի սպառիչ ու պարզորոշ խոստովանությունից հետո Քառուփերվուղի և էյլինի հարաբերությունները բնականաբար պետք է ավելի սերտ լինեին։ Չնայած էյլինի ստացած

կրոնական դաստիարակության՝ նա շէր կարող պայքարել իր կրքերի դեմ: Կրոնական հանրահայտ ու ընդունված հայացքը ներս ու հասկացությունները նրա համար կաշկանդող նաև խասկիզե չէին: Վերջին ինը թե տասը տարիներին նրա երեակայության մեջ աստիճանաբար կազմավորվել էր սիրեցյալի պատկերը: Դա լինելու էր ուժեղ, գեղեցիկ մարդու ուղղամիտ, առաջադիմող, վճիտ աշքերով ու առողջ կարմը րությամբ, միաժամանակ և զգայուն, կարեկից, իրենից ոչ պակաս կենսասեր: Շատ երիտասարդներ էին փորձում նվաճել էյլինի բարեհաճությունը: Նրա իդեալին թերևս ամենից ավելի էր մոտենում սուրբ Տիմոթեոս եկեղեցու տեր Դավիթը, բայց սա քահանա էր՝ կուսակրոնության ուխտով կաշկանդված: Նրանք երբեք որևէ խոսք չէին փոխանակել, թեև կուահում էին միույանց զգացմունքները: Հետո մեջտեղ եկավ Ֆրենկ Քառուփերվուդը, որ հաճախակի խոսակցությունների ու հանդիպումների շնորհիվ աստիճանաբար նրա անուրջներում ընդունեց իդեալական սիրահարի պատկերը էյլինը ձգտում էր դեպի նա, ինչպես մոլորակը դեպի արեգակը:

Հայտնի չէ իհարկե, թե ինչպես կդասավորվեր ամեն ինչ, եթե այդ ժամանակ գործի անցնեին հակամարտ ուժերը: Երբեմն լինում է, որ նման զգացումներ ու հարաբերություններ արմատից են կտրվում: Ամեն մի բնավորություն որոշ շափով ենթարկվում է մեղմացման, փոխվում է, սակայն նրա վրա ներդրող ուժերը պետք է խիստ նշանակալի լինեն: Հաճախ հզոր զսպիչ աղդակ է լինում վախը, եթե ոչ կրոնական ու բարոյական պատկերացումներից ներշնչվածը, ապա նյութական վնաս կրելու վախը. սակայն հարստությունը և հասարակության մեջ գրաված դիրքը, որպես կանոն, ի շիք են դարձնում այն: Չէ՞ որ երբ շատ փող ունես, ամեն ինչ հեշտ է գլուխ բերվում:

Ոչ մի բանից չէր վախենում էյլինը: Քառուփերվուդը վարժված չէր հաշվի առնելու ո՛չ բարոյական, ո՛չ էլ կրոնական նկատառումները: Նայում էր նա այդ աղջկան ու միայն մի

բան էր մտածում՝ ինչպե՞ս խաբի հասարակությանը ու վայելի նրա սերը՝ առանց արատավորելու իր անունը։ Նա սկզբում էր էյլինին իր ամբողջ էությամբ։

Գործերը ստիպում էին նրան հաճախակի լինելու թաթևրների տանը, և ամեն անգամ նա տեսնում էր էյլինին։ Սիրո խոստովանությունից հետո առաջին անգամ նրանց տուն գնալիս էյլինը կարողացավ ծածուկ հասնել նրա մոտ, սեղմել ձեռքը ու մի ջերմ և արագ համբույր պոկել։ Մի ուրիշ անգամ, երբ Ֆրենկն արդեն մեկնում էր, դռան վարագույրի ետևից հանկարծ դուրս եկավ էյլինը։

— Սիրելի՞ս։

Նրա ձայնի մեջ ներում կար ու քնքշանք։ Քառուփերվուդը շրջվեց և նախագործական նշան արեց հոր սենյակի ուղղությամբ։ Սակայն էյլինը շարունակում էր մնալ կանգնած, չեր շարժվում ու ձեռքերն էր պարզում դեպի նա։ Հապճեպ մոտեցավ Ֆրենկը։ Այն ժամանակ նրա ձեռքերը փաթաթվեցին Քառուփերվուդի վզին, և նա աղջկան սեղմեց կրծքին։

— Այնպես եմ ուղում տեսնել քեզ։

— Ե՞ս էլ։ Ես ամեն ինչ կկարգալորեմ։ այդ մասին եմ միայն մտածում։

Եվ ազատվելով նրա գրկեց՝ դուրս եկավ, իսկ էյլինը վազեց դեպի պատուհանը ու սկսեց նայել նրան։ Ոտքով էր նա գնում, որովհետև հեռու չէր ապրում, իսկ էյլինը երկար ժամանակ աշքը չէր կտրում նրա լայն թիկունքից, նրա ամբողջ վայելչակազմ հասակից։ Ի՞նչ արագ ու վստա՞քայլվածք ունի։ Օ՛, իսկական տղամարդ է նա՝ ի՞ր Ֆրենկը։ Արդեն իրենն էր համարում։ Լուսամուտից հեռանալով՝ էյլինը նստեց դաշնամուրի առաջ և մինչև ճաշ մտախո՞նվագում էր զանազան մեղեղիներ։

Ճարպիկ և միջոցների նեղություն չունեցող Ֆրենկին մեծ ջանք պետք չէր, որպեսզի ստեղծված դրությունից ելք գտներ։ Երիտասարդության օրերին, երբ նա քարշ էր գալիս ամեն տեսակ «անառակավայրերում», հետո էլ, արդեն ամուսնացած, պատահում էր, որ շեղվի առաքինության նեղ ջավդից և մանրակրկիտ ուսումնասիրեց այն բոլոր հնարա-

մտություններն ու սողանցքները, որ մոլությունն է օգտագործում։ Ֆիլադելֆիայում որ այդ ժամանակ կես միլիոնից ավելի բնակիչ ունեցող քաղաք էր, կային բավականաշատ։ Երկրորդական հյուրանոցներ, որոնք գույգերին թաքցնում էին հետաքրքրասեր հայացքներից։ Կային նաև արտաքուստ պատկառելի մենատներ, որտեղ որոշ վճարով կարելի էր ժամադրություն նշանակել։ Իսկինչ վերաբերում է այն միջոցներին, որոնք զերծ են պահում նոր կյանք ծնելուց, ապա Քառափերվուղը վաղուց գիտեր դրանք։ Զգուշությունն ու շրջահայեցությունը նրա նշանաբանն էին։ Ասենք այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև Քառափերվուղն արագ դառնում էր ականավոր ու աղղեցիկ անձնավորություն։ Իսկ էլլինն իհարկե չէր գիտակցում (և եթե գիտակցում էր, ապա խիստ տարտամորեն), թե ուր է իրեն տանում կիրքը, չէր իմանում ուր է այդ հափշտակովթյան սահմանը։ Մեր էր տենչում նա, ուզում էր, որ իրեն գգվեն ու փաղաքշեն։ Հետագայի մասին չէր մտածում։ Նրա մտքերը մկների նման էին՝ գլուխը հանում են մովթ անկյունի ծակից և որևէ ձայնից վախեցած, ետեն ծրկում։ Քառափերվուղի հետ կապված ամեն ինչ սքանչելի էր թվում նրան։ Նա գեռ հավատացած չէր, թե Ֆրենկը սիրում է իրեն այնպես, ինչպես ինքն է ուզում։ Բայց դա գալու է, էլլինը չէր հասկանում, որ ոտնձգություն է անում նրա կնոջ իրավունքների գեմ։ Հգիտես ինչու նրան թվում էր, թե այդպես չէ։ Ի՞նչ է կորցնում միսիս Քառափերվուղը, եթե Ֆրենկը սիրի նաև իրեն՝ էլլինին։

Ինչպես բացատրել սանձարձակությունից ու կրքից ներշնչված այսպիսի ինքնախաբեռությունը։ Մենք պատահում ենք դրան ամեն մի քայլափոխին։ Կիրքը համառ է, իսկ այն ամենը, ինչ բնության մեջ՝ մարդկային փոքրիկ օրգանիզմից դուրս է կատարվում, ցուց է տալիս, որ բնությունը չի նկատում դա։ Մենք դիտենք կրքի վրա համառ պատիժները՝ բանտ, տկարություն, տնտեսական քայլայում ու սնանկություն, բայց գիտենք նաև, որ այդ ամենը չի ազդում մարդկային խառնվածքի մշտնշենական ձգտումների վրա։ Մի՛թե դրա համար չկա օրենք, բացի նպատակին հաս-

նելու ձգտող անհատի հնարամիտ կամքից և ուժից Եյն այդպես է, ապա ճիշտ եմ ասում՝ վաղուց ժամանակն է, որ ամենքն էլ, առանց բացառության իմանան այդ: Մեկ է այն ժամանակ էլ մենք կվարվեինք այնպես, ինչպես վարվում ենք, բայց համենայն դեպ կցնդեին այն անհեթեթ պատրանքները, թե աստված միջամտում է մարդկանց գործերին: Զայն բազմաց, ձայն տյառն:

Այսպիսով նրանք սկսեցին հանդիպել, դեմ առ դեմ անցկացնել երանավետ ժամեր, հենց որ էյլինի մեջ բռնկված կիրքը մղեց նրան մոռանալու այդպիսի հանդիպումների հետ կապված վախն ու հսկայական վտանգը: Քառվերվուղի տանը պատահական ու բոպեական հանդիպումներից, երբ ոչ ոք չէր տեսնում, նրանք անցան գաղտնի տեսակցությունների՝ քաղաքից գուրս: Քառվերվուղն այն մարդկանցից չէր, ովքեր ընդունակ են գլուխը կորցնել և աշքաթող անել բոլոր գործերը: Որքան ավելի էր նա մտածում անսպասելիորեն իր վրա հորդած այդ կրքի մասին, այնքան ավելի էր նրա մեջ ամրանում մի վճռականություն՝ չիւսնել, որ էյլինր միշտամուխ լինի իր գործերին, իր դասասպավիլյանների խելացի զգոնությանը: Գրասենյակի պահանջում էր նրանից արթուն ուշագրաւթյուն՝ առավոտյան իննից մինչև միջօրեի երեքը: Բայց նա գործերով հափշտակված՝ որպես կանոն, մնում էր այնտեղ մինչև հինգ անց կեսը: Եվ քանի որ դրա անհրաժեշտությունը շկար, ապա շաբաթը երկու անգամ նրա բացակայությունը՝ երեք անց կեսից մինչև հինգ անց կեսը կամ վեցը՝ ոչ ոքի աշխիքն շեր կարող խփել: Էյլինի համար սովորություն դարձազ ամեն օր՝ երեք անց կեսից մինչև հինգը կամ վեցը միայնակ զբոսնել մի զույգ աշխետ վարդուն լծած կառքով կամ արշավել նժույզ հեծած, որ հայրն էր գնել նրա համար բալտիմորցի մի հայտնի ձիավաճառից: Եվ քանի որ Քառվերվուղն էլ էր զբոսանքի գնում կառքով կամ ձիով, ապա նրանց համար հեշտ էր ժամագրություն նշանակել քաղաքից գուրս: Ուիսահիկոնի ափին կամ Սկայքիլդի ճանապարհին: Վերջերս սարքված զբոսայգում կային այնպիսի անկյուններ, որոնք պակաս մեկուսացած չէին, քան թավ անտառում: Ճիշտ է,

ճանապարհներին միշտ կարելի էր հանդիպել որևէ ծանոթի, բայց չէ՝ որ միշտ էլ հնարավոր է մի ձգմարտանման բացատրություն գտնել: Ասենք դա նույնիսկ ավելորդ կլիներայդպիսի հանդիպումը ոչ ոքի մեջ կասկած չէր հարուցի:

Ահա այսպես էր սկզբում ընթանում այս սիրաբանությունը՝ քննչաղաղի խոսքեր, փոխադարձ հավաստիացումներ, ոչ մի խոսք լուրջ, վճռական քայլի մասին, և դրանով հանդերձ ձիով թովշալի իդիլիական զբոսանքներ արդեն կանաչած զբոսայգու ստվերում: Նոր կիրքը Քառուիերվուղի մեջ ապրելու այնպիսի հրճվանք առաջացրեց, որպիսին գեռ չէր ճանաշել: Լիլիանը շատ լավն էր այն ժամանակ, երբ ինքը սկսեց այցելել նրան Հյուսիսային Ֆրոնտ-սթրիթում և իրեն անսանելի երջանիկ էր համարում. բայց այդ օրերից անցել էր համարյատասը աարի, և այդ ամենը մոռացվել էր: Ամուսնությունից հետո որևէ ուժեղ կիրք չէր զգացել նա, փոքր ի շատե երկարատեկ կապ չէր ունեցել, և հանկարծ անսպասելի կերպով, գործարարական փայլուն հաջողությունների հողմապտույտի ժամանակ, էյլի՞նը՝ հոգով ու մարմնով դեռատի, կրքու անուրջներով լի: Ամեն մի քայլափոխին նա զգում էր, որ էյլինը, չնայած իր հանդուն համարձակության, ոչինչ չի իմանում այն հաշվենկատ ու դաժան աշխարհի մասին, ոչ աելինքն է ողտովում: Հայրն ընծայում էր նրան այն ամենը, ինչ կարող էր զվարճացնել, մայրն ու եղբայրները, մանավանդ մայրը, երիս էին ատլիս, իսկ կրասեր քույրը պաշտում էր: Ոչ ոքի մտքով անգամ չէր անցնի, որ էյլինը կարող է որևէ վատ բան անել: Ինչ էլ որ լինի, նա շատ ողջամիտն է և ամբողջովին տոգորված հասարակության մեջ հաջողություն ունենալու ցանկութամբ: Եվ ինչո՞ւ պիտի մտածի աբրգելածի մասին, եթե նրա առաջ բացվում էր երջանիկ կյանք և շուտով սպասում էր նրան սիրուց բխող ամուսնություն հաճելի և ամեն կողմից նրան համապատասխան երիտասարդի հետ:

— Երբ դու ամուսնանաս, էյլի՞ն, հրաշալի կապենք այստեղ, — հաճախ ասում էր մայրը: — Անպայման կնորոշենք ու կվերակառուցենք ամբողջ տունը, եթե իհարկե մինչ այդ շանենք: Ես կստիպեմ էղդիին, որ ձեռնամուխ լինի այդ

գործին, իսկ թե շուղենա, ինքս հանձն կառնեմ: Կարող ես
միամիտ լինել:

— Լավ կլիներ արդեն հիմիկվանից ձեռնամուխ լինել
վերակառուցմանը,— պատասխանում էր էյլինը:

Բաթլերը իրեն բնորոշ կոպիտ փաղաքշանքով թըմփ-
թըմփացնում էր դստեր ուսին ու հարցնում.

— Հը՞, արդեն գտե՞լ ես:

Եվ կամ.

— Հը՞՝ ինչպե՞ս է, դեռ չի՞ պտտվում քո լուսամուտի
տակ:

Իսկ եթե նա պատասխաներ՝ «ոչ», ծերունին ասում էր.

— Վնաս չունի, կհայտնվի, մի՛ մտածիր. լինում են
ավելի մեծ դժբախտություններ: Բայց ինձ համար դժվար
կլինի բաժանվել բեզնից, աշո՞ւ Կարող ես ապրել հորենական
տանը որքան ուղենաս, և մի՛ մոռանա՝ ուզածդր րոպեին կա-
րող ես վերադառնալ մեզ մոտ:

Էյլինը ուշք չէր դարձնում հոր ձեռ առնելուն, նա սիրում
էր հորը, բայց նրա ասածները շատ տափակ էին հնչում:
Առօրեական էին դրանք, ոչ մի բանով աշքի շընկնող, թես
մշտապես հաճելի:

Բայց ինչպիսի՞ կրքով էր նա անձնատուր լինում Քառ-
փերվուդի փաղաքշանքներին այդ գարնանային օրերին՝ կա-
նաշող ծառերի տակ: Նա չէր գիտակցում, թե որքան մոտ է
այն ակնթարթը, երբ վերջնականապես անձնատուր կլինի
նրան, որովհետև հիմա Ֆրենկը փաղաքշում էր միայն նրան
ու իր սիրուց էր խոսում: Լինում էին պահեր, երբ Ֆրենկը
համակվում էր տարակուսով: Որ նա հետզհետե ավելի ազա-
տություն էր թույլ տալիս իրեն, միանդամայն բնական էր
թվում նրան, սակայն ելնելով ասոյետական մղումներից՝
ոյնուամենայնիվ մի անդամ էյլինին ասաց, թե ուր կարող է
հասցնել իրենց զգացմունքը: Կանի՞ արդյոք նա այդ քայլը,
հասկանո՞ւմ է արդյոք, թե ինչ է անում: Առաջին պահին
էյլինը վախեցավ ու շփոթվեց: Նա կանդնել էր Ֆրենկի առաջ
իր սկ ամազոնազգեստով ու մետաքսե ցիլինդրով, որ ան-
փույթ քաշել էր շեկ-ոսկեթույր վարսերին, և կարճ մտրակը

թմփթմփացնելով իր սրունքին՝ մտմտում էր նրա ասածների վրա: Ֆրենկը հարցրեց՝ հասկանո՞ւմ է նա, թե ինչ է անում. մտածո՞ւմ է, թե այս ամենը ուր կտանի իրենց. և արդյոք ճշմարտապե՞ս է սիրում: Նրանք ձիերը թողել էին խիտ բուսականության մեջ՝ մայրուղուց և արագահոս գետակից մի քսան քայլ հեռու, որի ափին կանգնել էր նա Ֆրենկի հետ՝ ձևանալով, որ իբր թե նայում է՝ ձիերը լա՞վ են կապված: Բայց նայում էր նա դրանց շտեսնող հայացքով. մտածում էր Քառիկերվուգի, ինչպես և այն մասին, թե որքան պատշաճում է նրան կոստյումը և ինչքա՞ն սքանչելի են այդ րոպեները: Եվ ի՞նչ հիանալի խայտախոր ձի ունի նա: Նոր փթթած տերեները մի թափանցիկ կանաչ ժանյակ էին հյուսել նրանց գլխավերնում: Շուրջ բոլորը, ուր էլ նայեիր, անտառ էր, բայց նրանք տեսնում էին զա ասես կանաչ զանակներով ասեղնակարած վարագույրի միջով: Դորշ քարերն արդեն մամուռի թեթև ծածկույթ էին հագել, առուն կայծկլտում էր ու խոխոչում, ծառերի վրա ճովուղում էին առաջին թոշունները՝ շիկահավը, կեռնեխը և ցախսարեկը:

— Փոքրի'կս,—ասաց Քառիկերվուգը, — գիտակցո՞ւմ ես դու արդյոք, թե ինչ է կատարվում: Քեզ հաշիվ տալի՞ս ես, թե ինձ հետ հանդիպելով՝ ինչ ես անում:

— Կարծում եմ՝ այս:

Նա մտրակը խիեց սրունքին և գլուխը խոնարհեց, ապա լարձրացրեց աշրերը և տերեների միջով նայեց կապուտակ երկնքին:

— Նայիր ինձ, սիրելիս, — ասաց Ֆրենկը:

— Չե՛մ ուզում:

— Դե՛ նայիր, աղավնյա՛կս, ես քեզ որոշ բաներ պետք է հարցնեմ:

— Մի՛ ստիպիր, Ֆրե՛նկ, չեմ կարող:

— Ոչ, կարող ես, եյլին, թանկագի՞նս:

— Չե՛մ կարող:

Նա բռնեց եյլինի ձեռքերը, սա ընկրկեց, բայց խսկուն էլ մոտեցավ նրան:

— Դե՛ հիմա նայիր աշքերիս:

— Ու, չե՞մ կարող:
— Դե՛ նայիր, էլլի՛ն:
— Չեմ կարող, մի՛ խնդրիր: Ես կպատասխանեմ այն ամենին, ինչ հարցնես. բայց մի՛ ստիպիր նայել քեզ:
Ֆրենկը քնքագին շոյեց նրա այտերը, հետո ձեռքը դրեց ուսին, և էլլինկը գլուխը սեղմեց նրան:

— Ի՞մ բերկրանք, որքա՞ն գեղեցիկ ես դու, — ասաց վերջապես Ֆրենկը: — Ես անզոր եմ հրաժարվել քեզնից: Ես գիտեմ, թե ինչ պետք է անեի, երկի դու նույնպես գիտես: Բայց ես չեմ կարող: Դու պետք է իմը լինես: Եվ այնուամենայնիվ եթե իմանան, երկուսիս բանն էլ վատ կլինի: Հասկանո՞ւմ ես ինձ:

— Այո:

— Ես այնքան էլ ծանոթ չեմ քո եղբայրներին, բայց արտաքուստ նրանք վճռական մարդիկ են: Եվ շատ էլ սիրում են քեզ:

— Օ՛ այո:

Ֆրենկի վերջին խոսքերը թեթևակի շոյեցին էլլինի ինքնասիրությունը:

— Եթե նրանք իմանային, թե ինչ է տեղի ունենում այս տեղ, երկի անմիջապես սպանեին ինձ: Իսկ քո կարծիքով ի՞նչ կանեն, եթե... մի խոսքով եթե ժամանակին որևէ բան պատահի:

Նա լոեց՝ հայացքը սեեռելով էլլինի սքանչելի դեմքին:

— Բայց ոչինչ չպե՛տք է պատահի: Միայն թե չպետք է շատ հեռու գնալ:

— Էլլի՛ն:

— Ես չեմ նայի քեզ: Ո՛չ էլ խնդրիր: Չեմ կարող:

— Էլլի՛ն, լո՞ւրջ ես խոսում դու:

— Չեմ իմանում: Մի՛ հարցնիր, Ֆրե՛նկ:

— Մի՞թե դու չես հասկանում, որ մենք չենք կարող կանգ առնել սրա վրա: Ու, դու հասկանում ես: Սա վախճանը չէ: Բայց եթե...

Հավասարաշափ, հանգիստ ձայնով նա սկսեց բացատրել էլլինին արգելված հանդիպումների ձեր:

— Վախենալու բան չունես, գուցե թերես այն, որ հանգամանքների ցավալի բերմամբ, մեր գաղտնիքը կարող է բացվել։ Ամեն ինչ հնարավոր է։ Եվ այն ժամանակ իհարկե դառնություն կճաշակենք։ Միսիս Քառուփերվուղը ոչ մի գնով չի համաձայնի ապահարզան տալ։ Եվ ինչո՞ւ եթե ամեն ինչ ընթանա այնպես, ինչպես ես եմ ենթադրում, եթե մի միլիոն շինեմ, ապա դեմ շեմ վերջ տալու ամեն տեսակ գործերին։ Ես բնավ էլ շեմ ուղում աշխատել ամբողջ կյանքում։ Միշտ էլ պատրաստվում էի վերջակետ գնել երեսունհինգ տարեկանին։ Մինչ այդ ես բավական փող կունենամ։ Եվ կոկսեմ ճամփորդել։ Բայց պետք է մի քանի տարի ևս համբերել։ Եթե դու ազատ լինեիր... եթե քո ծնողները ողջ չլինեին (հետաքրքիր է, որ էլլինը հոնքն անգամ շթարթեց այս գործնական դիտողությունը լսելով), այն ժամանակ բանն այլ կերպ կլիներ։

Նա լոեց։ Էլլինը տակավին մտախոհ նայում էր իր ոտքերի մոտից հոսող առվին, իսկ նրա մտքերը հեռու էին։ Ժողովում, զրոսանավում, որն իրենց երկուսին տանում է դեպի այն ափը, ուր կանգնած է մի անհայտ ապարանք, որտեղ ոչ ոք չի լինի, բացի իրենից ու Ֆրենկից։ Նրա կիսափակ աշքերի առջեկց հոսում էր մի մեծ, երջանիկ աշխարհ։ ասես կախարդված՝ լսում էր նա Քառուփերվուղի խոսքերը։

— Թեկուզ կ սպանես, բայց ես ուրիշ ելք շեմ տեսնում։ Մինչդեռ ես սիրում եմ քեզ! — Նա էլլինին մոտեցրեց կրծքին։ — Ես սիրում եմ քեզ, սիրում եմ։

— Այո՞ւ, այո՞ւ, — հուզմունքից դողալով պատասխանեց էլլինը։ — Ես էլ քեզ եմ սիրում։ Եվ ոչ մի բանից շեմ վախենում։

— Մի տուն եմ վարձել Հյուսիսային Տասներորդ փողոցում, — ասաց Ֆրենկը՝ ընդհատելով լուսթյունը, երբ արդեն ձիերը հեծան։ — Դա դեռ կահավորված չէ, բայց շուտով վլուխ կգա։ Ես նկատի ունեմ մի կին, որը հանձն կառնի հսկել տանը։

— Ո՞վ է նա։

— Մի սիրունիկ այրի է՝ մոտ հիսուն տարեկան։ Խելա-

յի է, խիստ հաճելի և կենցաղային մեծ փորձ ունի: Ես գտա
դրան հայտարարությունից: Երբ ամեն ինչ պատրաստ լինի,
գնա նրա մոտ ու տես այդ անկյունը: Առիթ շես ունենա շատ
գործ ունենալ նրա հետ: Այնպես, երբեմն: Համաձա՞յն ես:

Եյլինը մտախոր շարունակում էր ճանապարհ՝ առանց
պատասխանելու նրա հարցերին: Որքա՞ն գործնական էր
Ֆրենկը, որքա՞ն անշեղորեն էր ընթանում դեպի իր նպա-
տակը:

— Կգնա՞ս: Վախենալու ոչինչ շունես: Կարող ես հա-
մարձակորեն ծանոթանալ նրա հետ: Շատ պարկեցած կին է:
Ուրեմն կգնա՞ս, էյլին:

— Կասես, երբ ամեն ինչ պատրաստ կլինի, — վերջի-
վերջո պատասխանեց էյլինը:

ԳԼՈՒԽ ԽI

Կրքի քմահաճություննե՞ր, հնարանքնե՞ր, խիզախում-
նե՞ր, նրա բակինին բերվող զոհե՞ր:

Շատ քիչ ժամանակ անցավ, և այն առաստարանը, որի
մասին խոսում էր Քառափերմանը, և որը նույտակ ուներ պա-
հել գաղտնիրը, պատրաստ էր: Տանը հետեւում էր այրին, որ
ըստ երեսութին վերջերս էր կրել այդ ծանր կորուստը, և
էյլինն սկսեց հաճախակի լինել այդտեղ: Այդպիսի իրադրու-
թյան մեջ և այդպիսի հանգամանքներում մեծ շանք պետք
չէր համոզելու, որ էյլինը ամբողջովին անձնատուր լինի իր
սիրեցյալին, որովհետեւ այլևս չէր կարող դիմադրել կրքի
բուռն ու կույր հակումին: Նրա արարքը որոշ շափով քավում
էր սերը, քանի որ իսկապես աշխարհում ոչ ոքի պետք չու-
ներ նա, բացի այդ մարդուց: Նրան, միայն նրան էին պատ-
կանում էյլինի բոլոր մտքերը, բոլոր զգացումները: Երե-
վակայությունը կերտում էր նրա համար ապագայի
պատկերներ, երբ ինքը և նա ինչ-որ ձեռվ առհավետ անբա-
ժան կլինեն: Մի՞թե չի կարող պատահել, որ միսիս Քառ-
փերվուգը մեռնի կամ Ֆրենկը հեռանա նրանից ու գա իր մոտ,
երբ երեսունհինգ տարեկան հասակում կուտակի մեկ միլիոն:

Ամեն ինչ մի կերպ կկարգավորվի: Բնությունն ինքն է այդ մարդուն կանխորոշել իր համար: Էյլինը անառարկելիորեն վստահում էր նրան: Երբ Ֆրենկն ասաց, թե Էյլինի հոգսը կստանձնի ինքը ու չի թողնի, որ որևէ վիշտ դիպչի նրան, նա ոչ մի վայրկյան չկասկածեց նրա խոսքին: Այնպիսի մեղքի մասին, ինչպիսին էր Էյլինինը, քահանաները հաճախ էն լսում խոստովարաններում:

Հատկանշական է, որ քրիստոնյա աշխարհը տրամաբանական ինչ-որ հնարանքի միջոցով եկել է այն եղրակացության, թե չի կարող լինել այլ սեր, բացի այն սիրուց, որը սրբազնագործված է ավանդական սիրաթովումով ու դրան հաջորդող ամուսնությամբ: «Մի կյանք, մի սեր». ահա քրիստոնեության դաղափարը, և այդ նեղ շրջանակների մեջ է նա փորձում սեղմել ամբողջ աշխարհը: Հեթանոսությանը խորթ էին այսպիսի պատկերացումները: Հին աշխարհում առանձին պատճառներ միտքելու կարիք չկար: Իսկ նախնադարյան աշխարհում սեռերի միասնությունը նախատեսվում էր երեխի միայն այն շրջանի համար, որը անհրաժեշտ էր սերունդ աճեցնելուն: Նորագույն ժամանակների ընտանիքը անկասկած աշխարհի ամենագեղեցիկ հաստատություններից մեկն է, երբ խարսխված է փոխադարձ հակումի ու համակրանքի վրա: Բայց սրանից դեռ չի բխում, թե դատապարտման հնիթակա է ամեն մի այլ սեր, որ այնքան էլ երջանիկ չէ ու չի հանդիւ նույնիքան լրարկաստիկ լուծման: Կյանքը չի կարելի զեաեկել ոչ մի շրջանակի մեջ, և պետք է, որ մարդիկ մի անդամ ընդմիշտ հրաժարվեին այդպիսի փորձերից: Նրանք, ովքեր բախտ են ունեցել համերաշխ ընկերակցություն կնքել ամբողջ կյանքի համար, թող շնորհավորեն իրենց և զանան արժանի լինել իրենց բախտավորությանը: Իսկ նրանք, ում ճակատագիրը չի պարգևել դա, համենայն դեպս արժանի են ներողամտության, թեկուզ և հասարակությունը պարիա հոշակի նրանց: Բացի դրանից, անկախ դատողություններից ու տեսություններից ունեցած մեր կախումից, ի զորու են մնում բնության հիմնական օրենքը ները: Համասեռ մասնիկները մզվում են դեպի իրար: Բնա-

Վորովթյան ու խառնվածքի փոփոխությունները անխուսափելիորեն առաջ են բերում նաև հարաբերությունների փոփոխություններ։ Ճիշտ է, ոմանց զսպում է դոգման, ոմանց էլ՝ վախր։ Սակայն կան մարդիկ, որոնց մեջ ուժգին հնչում է բնության ձայնը, և այդպիսիների համար ո՛չ դոգմա կա, ո՛չ էլ վախր։ Հասարակությունը ձեռքերը երկինք է կարկառում սարսափած։ Սակայն դարեղար երևան են գալիս այնպիսի կանայք, ինչպես Հեղինեն, Մեսալինան, Դյուբարին։ Պոմպադուրը, Մենթենոնը և Նելլի Գվինը, և մատնացուց են անում տղամարդու ու կնոջ հարաբերությունների ավելի մեծ ազատության ուղին, քան այն, որ առաջ թույլատրելի էր համարվում։

Անսասելի իրար կապվեցին Քառուփերվուդն ու Էյլինը։ Ավելի մոտիկից ճանաչելով Էյլինին՝ Ֆրենկը համակվեց այն վստահությամբ, թե սա միակ կինն է, որի հետ կարող էր բախտավոր ապրել կյանքի մնացորդը։ Եյնքա՞ն դեռատի էր Էյլինիր, անրա՞ն դյուրահավատ, լիահույս ու այնքա՞ն անվեհեր։ Այդ բոլոր ամիսներին, երր նրանք առաջին անգամ մղվեցին դեպի իրար, ֆրենկին անբնիգատ համեմատում էր նրան իր կնոջ հետ։ Ամուսնական կյանքից բավարարված շինելը, որ մինչև հիմա տարտամ էր, հիմա ավելի զգալի էր դառնում։ Ճիշտ է, երեխաները առաջվա պես ուրախացնում էին իրեն, տունն էլ հրաշալի էր։ Ալարկոտ, նիհարած կիլիանը տակավին գեղեցիկ էր, Վերջին տարիներին նա շատ թեքից բավարարված էր կնոջից, սակայն հիմա նրա դժգոհությունն սկսեց անընդհատ աճել։ Լիլիանը ոչ մի բանով նըման չէր Էյլինին։ ո՛չ նրա երիտասարդությունն ուներ, ո՛չ աշխատությունը, ու թեև Քառուփերվուդը սովորաբար շատ էր համակերպվող, այժմ հաճախ ջղայնության նոպաներ էր ունենում։ Սկսվեց լիլիանի արտաքինին վերաբերող հարցումներից։ Խիստ սովորական այդպիսի «ինչու»-ներ չեն կարող շփիրավորել ու շնուրալիքել կնոցը, ինչո՞ւ նա բաց մանիշակագույն շրջազգեստին ներդաշնակող գլխարկ չի գնել, ինչո՞ւ ավելի շատ ժամանակ չի անցկացնում բաց օդում։ Զբոսանքը խիստ

օգտակար կլիներ նրան։ Ինչո՞ւ նա այս շի անում, այն շի անում։ Բայց հազիվ թե Ֆրենկը հաշիվ էր տալիս իր վարձունքի համար, սակայն կիլիանը ամեն ինչ նկատում էր, կուահում այդ հարցերի իսկական դրդապատճառը և վիրավորված էր զգում իրեն։

— Այդ ի՞նչ անվախճան «ինչու»-ներ ու «ինչի համար»-ներ են, — վրդովվեց մի անգամ նա։ Ինչո՞ւ համար են այդ բոլոր հարցերը։ Դու պարզապես այլևս ինձ այնպես չես սիրում, ինչպես առաջ, ուրիշ ոչինչ, ես շատ լավ եմ հասկանում։

Քառուիկերվուղը այս բռնկումից ապշած՝ մեջքը տվեց աթոռի թիկնակին։ Կիլիանի համար առիթ ծառայեց հավանորեն ոչ թե էյլինի մասին կոռահումներ անելը, այլ պարզապես նրա հերթական նկատողությունը։ Բայց նա կատարելապես վստահ չէր, խզմի թեթև խայթ էր զգում, որ կիլիանին համբերությունից հանել էր, ուստի և ներողություն խնդրեց նրանից։

— Լավ, դատարկ բան է, — պատասխանեց կինը։ Դա ինձ ամեննեին չի հուզում։ Բայց ես նկատում եմ, որ դու հիմա ինձ շատ ավելի քիչ ես ժամանակ հատկացնում։ Շարունակ գործեր ունես, գործե՞ր ու գործե՞ր։ Ոչ մի վայրկյան չես դադարում դրանց մասին մտածելուց։

Քառուիկերվուղը թեթևացած շունչ քաշեց. ուրեմն ո՞չ մի կասկած չանի։

Բայց որքան ավելի էր աճում նրա մերձեցումը էյլինին, նա դադարում էր անհանգստանալ այն մտքից՝ կինը կասկածո՞ւմ է, թե՞ ոչ երբեմն մտքում վեր վար անելով ստեղծված դրության հնարավոր հետևանքները՝ նա հանգում էր այն եղրակացության, թե այդպես թերևս ավելի լավ կլիներ։ Զէ՞ որ կիլիանը եռանդուն կանանց ցեղից չէ, այն կանանցից չէ, ովքեր կարողանում են պաշտպանել իրենց իրավունքները։ Ճանաշելով նրա բնավորությունը, երբեմն հուսադրվում էր, որ կիլիանը գուցե շի փորձի այնպես համառորեն դիմադրել իրենց ընտանեկան կյանքում առաջացած փոփոխության, ինչպես առաջ էր վախենում։ Անհնարին չէ, որ նա ապա-

Հարզան տա իրեն։ Կիրքը և երջանկության պապակը մղում
էին նրան դատելու ոչ այնքան զգաստ, ինչպես սովորաբար։

Ոչ, ասում էր նա իրեն, հիմա խոշընդոտը բնավ էլ իր
ընտանիքում չէ, այլ Բաթլերների տանը։ Էգուարդ Մելիա
Բաթլերի հետ նա գործարարական խիստ սերտ կապ ուներ։
Ծերունին ոչ մի գործարք չէր կատարում բազմաթիվ արժե-
թղթերի հետ, որոնց պահողն էր ինքը, առանց Քառուիերվուղի
հետ խորհրդակցելու։ Բաթլերը այնպիսի ձեռնարկություն-
ների բաժնետեր։ Էր, ինչպես Պենսիլվանիայի ածխային ընկե-
րությունը, «Դելավար-Հուդզոն» ջրանցքը, «Մորիս-Էսեքս»
ջրանցքը և Ռոդինգի երկաթուղին։ Հասկանալով այն նշանա-
կությունը, որ ստացել էին Ֆիլադելֆիայի քաղաքային
երկաթուղիները, նա որոշեց ըստ հնարավորին ձեռնտու
իրացնել իր մոտ եղած արժեթղթերը և այդ ձևով ձեռք բերված
կապիտալը ներդնել տեղական գծերի մեջ։ Նրան հայտնի էր,
որ այդպես են անում Մոլենհաուերը և Սիմփոնը, իսկ
նրանցից լավ ոչ ոք գլուխ չի հանում տեղական գործերից։ Նա
էլ Քառուիերվուղի նո՞ան կարծում էր, որ քաղաքային երկա-
թուղու բավականաշատի բաժնեատմուն կենարունացնելով իր
ձեռքը, վերջին հաշվով կարսկանա գոնե գործակցել Մոլեն-
հաուերի ու Սիմփոնի հետ։ Իսկ այն ժամանակ դժվար չի
լինի օրենսդրական օրգանների միջոցով անցկացնել երկա-
թուղիները համախմբելու համար նպաստավոր օրենքներ։
Իրենք թույլատրություն կստանան գցելու նոր գծեր և եր-
կարացնելու արդեն եղածները։ Բաթլերի արժեթղթերի այս
փոխարկումը, ինչպես նաև տեղական՝ քաղաքային երկաթու-
ղիների բաժնետոմսների պատահական ծրարների գնումը
մտնում էին Քառուիերվուղի պարտականության մեջ։ Իր
որդիների՝ Օուենի ու Քելեմի միջոցով, Բաթլերը այդ ժամա-
նակ ոգի ի բոին ճիգեր էր թափում նոր գիծ անցկացնելու
և անհրաժեշտ թույլատրություն ստանալու համար։ Ցանկա-
նալով հասնել այն բանին, որ օրենսդրական ժողովը իր
ուղած եղրակացությունը հանի, նա առատաձեռն կերպով
բաշխում էր բաժնետոմսների ծրարներ և կանխիկ դրամ։ Բայց
և այնպես հեշտ գործ չէր, որովհետև այն շահը, որ կարելի

էր ստանալ ստեղծված դրությունից, պարզ էր և ուրիշ շատերին, որոնց հետ և Քառուփերվուղին։ Մեծ շահի աղբյուր տեսնելով այդտեղ՝ Քառուփերվուղը իհարկե իր սեփական օգուտին էլ էր հոգ տանում, այնպես որ իր գնած բաժնետոմոերի մի մասն էր հասնում Բաթլերի, Մոլենհաուերի և նրա մյուս հաճախորդների ձեռքբ: Այլ կերպ ասած՝ նա այնքան չէր ձգտում սպասարկել Բաթլերին կամ որևէ մի ուրիշի, որքան իրեն:

Ահա թե ինչու այնքան գայթակղիշ թվաց Քառուփերվուղին այն առաջարկը, որով ներկայացավ նրան ստվերի տակ մնալ ցանկացող Սթրոբիկի, Ուայքրոֆթի և Հարմոնի փաստական ներկայացուցիշ Սթիները: Սթիների ծրագիրը հետևյալն էր՝ Քառուփերվուղին վարկ բացել բաղաքային դրամարկղում տարեկան երկու տոկոսի հաշվով, կամ եթե նա հրաժարվի կոմիսիոն հասանելիքից, նույնիսկ անվճար (զգուշությունը պահանջում էր, որ Սթիները գործի միջնորդի ձեռքով), Քառուփերվուղն այդ դրամով պետք է Հյուսիսային Պենսիլվանիական ընկերությունից գներ Ֆրոնտ-սթրիթով անցնող ձիաքարշի դիմք, որ մեծ եկամուտ չէր բերում և այնքան էլ բարձր չէր գնահատվում կարճության (մեկուկես մղոն) և այն շահագործելու համար տրված կարճատև թույլատրության պատճառով: Հմտորեն կատարած գործարքի համար որպես վարձարարություն Քառուփերվուղը ստանում էր կարգին գումար՝ բայց բաժնետոմսերի բուան տոկոսը: Սթրոբիկն ու Ուայքրոֆթը զիտեին, թե սրանդից կարելի է դնել դրանց վերահսկչական ծրարը, պետք էր միայն արագ գործել: Հետագայում այդ ծրագիրը նախատեսում էր հետևյալը՝ քաղաքային դրամարկղից վերցված դրամը կօգտագործվի թույլատրության ժամկետը երկարաձգելու և գիծն անցկացնելու համար. այնուհետև կթողարկվի բաժնետոմսերի մեծ ծրարը, որոնք ավանդ կդրվեն «ծանոթ» բանկերից մեկում. այսպիսով որո՞շ ժամանակ անց քաղաքը ետ կստանա իրենից միուս վերցված կապիտալը, իրենք էլ կսկսեն գրավանել գծի բերած եկամուտը: Քառուփերվուղի համար այս պլանը շատ թե քիչ ընդունելի էր, եթե չհաշվենք այն, որ բաժնետոմսերը

ერცოგმ ხელ აეთ განახუნეთიშვან բილი მასნალენერები
მჩგე, ხსკ ჩრენ բილი გარგარანტენერები ու աշխատանքի հա-
մար մնում էր միայն համեմատաբար փոքր բաժին:

Բայց Քառվիերվուդը երեկք բաց չէր թողնում իր օգուտը: Իսկ այդ ժամանակ նա մշակել էր գործարարական մի ուրուզն բարոյախոսություն՝ Գինանսսիստի բարոյախոսություն: Անխոհեմ բան էր համարում նա գողանալ միայն այն դեպքում, երբ գոփելու կամ վաստակելու նման արարությ կոչվում էր գողություն: Անխոհեմ բան էր, վտանգավոր, ուստի և վատ: Կարող էր պատճել, որ ձեռք բերելու կամ վաստակելու եղանակը տարակույս ու պարսավանք առաջցներ: Քառվիերվուդի պատկերացմամբ էթիկան ձևափոխվում էր նայած հանգամանքներին, համարյա թե նայած կլիմային: Ֆիլադելֆիայում արմատացել էր մի տրագիֆիա (անշուշտ տեղական քաղաքագետների և ոչ թե ամբողջ բնակչության շրջանում), բայց որի գանձառելով կարող էր անվնար օգտագել բաղարի գրամից, պայմանով, որ ժամանակին վերադարձական կամաց գանձարանն ու գանձապես ինքնին հիշեցնում էին մեղրով լի վեթակ ու մայր մեկու, որի շարքը վաստակի նողատակով պտույտ են գտնիս լուսերը, այսինքն աֆերիստներն ու քաղաքական գործիչները Սթիների հետ ունեցած համաձայնության միակ անախարժ կողմը այն էր, որ ո՞չ Բաթլերը, ո՞չ Էլ Մոլենհաուերն ու Սիմֆոնը, այսինքն՝ Սթիների ու Սթրոբիկի վաստացի «պետերը», այդ համաձայնության մասին ոչինչ չգիտեին: Ինը Սթիները, ինչոք նաև նրա ետքը կանգնած անձինք, զործում էին նրա միջացով, իրենց անձնական շահերի համար: Աշխարհիս հարսներն այլ բանն իմանալով՝ կարող են բարկանալ: Իսկ եթե ինքը հրաժարվի Սթիների կամ տեղական տեր-տիրախաններից որևէ մի ուրիշի հետ այդքան նպաստավոր գործ անելուց, միայն իրեն վնաս կտա, որովհետեւ ուրախությամբ իրեն կփռխարինի մի ուրիշ բանկիր կամ միջնորդ: Այնինչ բացի դրանից, ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ Բաթլերը, Մոլենհաուերը և Սիմֆոնը դրա հոտը կառնեն:

Այդ կապակցությամբ հարկ է ասել նաև, որ Քառուիեր-

վուդը պատահականորեն անցնելով Տասնյոթերորդ և Տաս-
նիններորդ փողոցների ծփաքարշով՝ համարեց դա խիստ
գայթակղիչ օբյեկտ. պետք էր միայն ճարել անհրաժեշտ
իրապիտալը: Այդ գիծը սկզբնապես ուներ հայտարարված
արժեքը՝ հինգ հարյուր հազար դոլար. բայց հետագայում,
վերասարքավորման կապակցությամբ, բաժնետոմսերի լրա-
ցուցիչ սերիա թողարկվեց երկու հարյուր հիսուն հազար
դոլարի, և հիմա ընկերությունը տոկոսները վճարելու համար
լուրջ նեղության մեջ էր: Բաժնետոմսերի մեծ մասը սփրո-
ված էր փոքրաքանակ պահողների մեջ, և Քառակերպուդին
սկետք էր երկու հարյուր հիսուն հազարից ոչ պակաս՝ վե-
րահսկողական ծրարին տիրանալու և վարչության նախագահ
ընտրվելու համար: Բայց ձեռքն այդ գծի վրա դնելուց հե-
տո արդեն նա կարող էր բաժնետոմսերը տնօրինել իր
Հայեցողությամբ, օրինակ՝ ժամանակավորապես գրավա-
դրել հոր բանկում ըստ հնարավորին ավելի մեծ գումարի
դիմաց, այնուհետև նոր բաժնետոմսեր թողարկել, դրանց
միջոցով կաշառել տեղական օրենսդրական ժողովի ան-
դամներին և այդպիսով գիծը երկարաձգելու թույլատրու-
թյուն ձեռք բերել, հետո արդեն ընդարձակել գործը կամ
նոր, հաջող գնումների, կամ ուրիշ ընկերությունների հետ
համաձայնելու միջոցով: «Կաշառք» բառն այստեղ գործ
է ածլած գործարարական, զուտ ամերիկյան իմաստով,
որովհետև չկար մի մարդ, որը նոհանգի օրենսդրական
ժողով հասկացությունը շշաղկապեր «կաշառք» բառի հետ
Հարիսբուրգի ֆինանսական շրջանների ներկայացուցիչ
թերենս Ուելխենը՝ մի կարճահասակ, թխադեմ իռան-
դացի, որ սիգում էր շքեղ հագուստով ու կիրթ շարժուձեռովնի
(ժամանակին նա եկել էր Քառուփերվուդի մոտ հինգ միլիոնա-
նոց փոխառությունը տեղաբաշխելու գործով), հավաստում
էր, որ նահանգի մայրաքաղաքում ոչ մի բանի շի կարելի
հասնել առանց փողի կամ դրանց համարժեքի, այսինքն ար-
ժեթթվերի: Օրենսդրական ժողովի ամեն մի քիչ թե շատ պա-
րզցիկ անդամին հարկ էր «յուղել» նրա ձայնը կամ աշակցու-
թյունն ստանալու համար: Իոլանդացին ակնարկել էր, որ եթե

Քառակիրվուդը կարիք ունենա որևէ կոմբինացիա գլուխ բերելու, ապա ինքը ուրախ կլինի բանակցելու նրա հետ: Քառակիրվուդն արդեն հաճախ մտմտացել էր Տասնյոթերորդ ու Տասնիններորդ փողոցների ձիաքարշի գիծը գնելու իր ծրագիրը, բայց դեռ վերջնականապես սիրտ չէր անում ձեռնամուկ լինել այդ գործին: Նա շատ ուրիշ պարտավորություններ ուներ, սակայն մեծ էր գայթակղությունը, և նա անդադրում այդ հարցի մասին էր խորհրդածում:

Սթիների առաջարկած վարկը Հյուսիսային Պենսիլվանիական գծի հետ մեքենայություն անելու համար՝ ավելի իրական էր դարձնում նաև Տասնյոթերորդ ու Տասնիններորդ գծերի շահախնդրական քայլը: Քառակիրվուդն այդ ժամանակ, ենելով քաղաքային գանձարանի շահերից, արթուն հետևում էր քաղաքային փոխառության պարտատոմսերի կուրսին. խոշոր քանակի կությամբ գնում էր դրանցից, երբ բորսայում տնկման հակամ էր նկատում, և ծախում էր, ճիշտ է՝ մեծ զգացրությունը. բայց ոչ պակաս խոշոր պարտիաներով, երբ ոչ առաջ էր, որ դրանց կուրսը բարձրանամ է: Այդ բոլոր մերժակալիքանների համար տնհամելչա վր մեծ քանակությունը կանխիկ փոկ անենալ արամագրության տակ: Նա շարունակ վախճանում էր, որ հաճկարծ բորսայում սնանկացում անելի շունչնոտ, որտեղետև դրա հետևանքով ինքը կկորցնի իր ունեցած բոլոր արժեթղթերը և ի լրումն դրա՝ իրենից կտահանցնեն, որ վճարի բոլոր պարտքերը: Ճիշտ է, այդ ժամանակ ոչ մի փոթորիկ չէր նախատեսվում, և Քառակիրվուդը հուզում ուներ, որ կործանումից կխուսափի, բայց և այնպես չէր ուզում շափից ավելի մասնատել իր միջոցները: Հիմա շատ բան էր փոխվել: Եթե ինքը քաղաքային միջոցներից վերցնի հարյուր հիսուն հազար դոլար և ներդնի Տասնյոթերորդ ու Տասնիններորդ փողոցների գծի մեջ, ապա դա չի նշանակի, թե ինքը մանրացնում է կապիտալը, քանի որ Սթիների նոր առաջարկությունը թույլ կտա նրան դիմելու վերջինիս և խնդրելու խոշոր վարկեր՝ այլ գործեր կատարելու համար: Բայց եթե որևէ մի բան պատահի... Այդ էլ այն ժամանակ կերեա:

— Ֆրենկ, — ասաց մի անգամ Սթիները (նրանք վագուց արդեն անունով էին իրար գիմում), ժամը շորսից հետո գնալով նրա մոտ, երբ գրասենյակում աշխատանքը վերջանալու վրա էր, — Սթրոբիկը կարծում է, որ Հյուսիսային Պենսիլվանիայի գծի գործը բավականաշափ նախապատրաստված է, որ բաժնետոմսերի վերահսկողական ծրարը գտնվում է ոմն Կոլտոնի, ոչ թե Այզ Կոլտոնի, այլ Ֆերդինանդի ձեռքը։ Տարօրինակ անուն է, չէ՞։

Զաղացած Սթիները բարեհոգի քմծիծաղեց։ Մեծ փոփություններ էին կատարվել նրա կյանքում այն օրվանից, երբ պատահաբար դարձավ քաղաքի գանձապետ։ Այդ պաշտոնին անցնելուց հետո նա սկսեց հիանալի հագնվել, և նրա ամբողջ անձը շողջողում էր այնպիսի բարեհոգությամբ, այնպիսի ինքնավստահությամբ, որ եթե նա որպես կողմնակի դիտեր, երկի ինքն էլ շնչանաշեր իրեն այդ նոր կերպարանքով։ Նրա մանրիկ աշքերը դադարեցին այս ու այն կողմ սլքտալուց, իսկ մշտական լարվածությանը փոխարինեց անխոռվ անդորրը։ Սթիների հաստ ոտքերը ամփոփված էին ամենափափուկ կաշուց կարված ընտիր կոշիկների մեջ։ պնդակազմ իրանը և գեր ազդրերը ծածկված էին հիանալի ձևված գորշաթուխ կոստյումով։ սպիտակ սրածայր օձիքը և մետաքսե թուխ փողկապը ավարտում էին նրա արդուզարդը։ Լայն կուրծքը աստիճանաբար անցնում էր կլորացած փորին, որի վրա ցուցադրված էր մի ծանր սսկե շղթա։ Ճյունասպիտակ թեղնիքների վրա փայփլում էին ոսկե խոշոր կոճակներ ու դրանց բավականին մեծ սուտակները։ Նրա ամբողջ կերպարանքից ճառագայթում էր վարդագույն և կուշտ սնվելու գիրություն։ Մի խոսքով բացահայտորեն բարգավաճող մի մարդ էր։

Հարավային հններորդ փողոցում գտնվող փայտաշեն երկհարկանի տնակից նա ընտանիքով հանդերձ փոխադրվեց Սպլինգ-Գարդեն-սթրիթում շինված շատ ավելի ընդարձակ մի բարաշեն տուն։ Նրա կինը ծանոթություն հաստատեց քաղաքական այլ գործիչների կանանց հետ։ Երեխաները սովորում էին միջնակարգ դպրոցում, որ ժամանակին մի

անիրագործելի երազ էր նրա համար: Այժմ նա քաղաքի տարբեր մասերում ուներ տասնչորս թե տասնհինգ էժանագին հողամասեր, որոնք խոստանում էին ժամանակին դառնալ արժեքավոր անշարժ կայք: Նա գաղտնի բաժնետեր էր Հարավային Ֆիլադելֆիայի մետաղագործական և «ամերիկյան տավարի ու խոզի մսի» ընկերությունների: Երկու ձեռնարկություն, որ գոյություն ունեին միայն թղթի վրա և որոնց ամբողջ գործունեությունը լոկ այն էր, որ քաղաքից կապալներ ստանալով՝ հանձնում էին դրանք ձուլարանների ու մսի խանութների համեստ տերերին, որոնք և կարող էին կատարել հրամանները՝ առանց ավելորդ հարցեր տալու:

— Այո, անսովոր անուն է,— համաձայնեց Թառվերվուղը:— Ուրեմն նա բաժնետոմսերի տեր է: Ես միշտ կարծում էի, թե այդ գիծը իր ծախսը շի հանի, շատ է կարձ: Արժեր երակարացնել երեք մղոն դեպի Կենսինգտոնի շրջանը:

— Միանկամայն ճիշտ է,— համաձայնեց Սթիները:

— Ամբորդիկը ձեզ հայտնի է, թե Կոլասոնի ինչքան է ուզում իր լամփնետոմսերի համար:

— Կարգես վախսուանութ դոլլար:

— Այսինքն ընթացիկ զնով: Ի՞նչ ասեմ՝ վատ ախորժակ բանի, չէ՞: Այդ զնով դա կանի, Զորջ, — նա մտքում արագ հաշվեց Կոլասոնի ձեռքի բաժնետոմսերի արժեքը, — մոտ հարյուր քսան հազար միայն նրա ծրարի համար: Մինչդեռ դա բնավ էլ ամբողջը չէ: Մնում են նաև Կիթչենը, Զովեֆ Զիմերմանը և սենատոր Դոնովենը (Թառվերվուղը նկատի ուներ Պենսիլվանիայի սենատի անդամին):— Մի խոսքով այդ գործը շատ թանկ կնստի ձեզ: Խոկ գեռ ինչքան հարկ կլինի ծախսեր անել գիծը երկարացնելու վրա: Ըստ իս՝ շատ թանկ է դա:

Թառվերվուղը մտածում էր, թե որքան ավելի պարզ կլիներ, եթե այդ գիծը միացվեր Տասնյոթերորդ և Տասնիներորդ փողոցների ցանկալի գծին, ուստի մի փոքր լուսավորունից հետո հարցրեց.

— Ասացեք, Զորջ, ինչո՞ւ դուք այս բոլոր կոմբինացիաները կատարում եք Սթրորիկի, Ուայքրոֆթի ու Հարմոնի

միջոցով։ Մի՞թե մենք երկուսս չեինք կարող գլուխ բերել այս գործը՝ առանց մի քանի մասնակիցներ ներդրավելու իմ կարծիքով դա շատ ավելի ձեռնտու կլիներ ձեզ համար։

— Անշո՞ւշտ, անշո՞ւշտ, — բացականչեց Սթիները և նրա կլորիկ աշքերը մի տեսակ անզոր պաղատանքով սեռվեցին խոսակցի վրա։ Քառուփերվուզը պատկառանք էր ազդում, և նա միշտ հույս ուներ մոտենալու նրան ոչ միայն որպես գործարարի, այլև մարդու։ — Արդեն սկսեցի մտածել այդ մասին։ Բայց նրանք, Ֆրե՛նկ, ավելի փորձված են այսպիսի գործերում, քան ես։ Հէ՞ որ այնքան ժամանակ է դրանցով են զբաղվում։ Իսկ ես դեռ այնքան էլ լավ չեմ հասկանում այդ ամենը։

Քառուփերվուզը մտովի ժողովաց, թեև դեմքը մնաց անտարբեր։

— Մոռացեք դրանց, Զորշ, — շարունակեց նա բարեկամական ու գաղտնապահ շեշտով։ — Մենք երկուսս կարող ենք իմանալ և իմանում ենք այնքան, որքան նրանք, և այդ գործը գլուխ կրերենք ոչ վատ, եթե ոչ ավելի լավ։ Ես գիտեմ ինչ եմ ասում։ Վերցրեք թեկուզ ձեզ հետաքրքրող ձիաքարշի կոմբինացիան։ Մենք երկուսս դա գլուխ կրերեինք ոչ վատ, քան Ուայքորֆթի, Սթրոքիկի ու Հալմոնի մասնակցությամբ։ Հո գերագույն իմաստությամբ շե՞ն օժտված նրանք։ Փողը մուծում են ոչ թե նրանք, այլ դուք։ Նրանք միայն մի անելիք ունեն՝ այդ ամբողջ ձեռնարկությունն անցկացնել օրենսդրական ժողովի և քաղաքապետության միջոցով։ Հստ որում օրենսդրական ժողովում նրանք ավելի բան չեն կարող ձեռք բերել, քան մի ուրիշը, օրինակ՝ ես։ Ամեն ինչ կախված է Ռելիխենի հետ համաձայնելուց, իսկ դրա համար պետք է հատկացնել միայն մի որոշ գումար։ Ինչ վերաբերում է քաղաքային խորհրդին, ապա Ֆիլադելֆիայում միայն Սթրոքիկը չէ, որ ելումուտ է անում այդ հիմնարկության մեջ։

Քառուփերվուզը հույս ուներ, որ ձեռք բերելով որևէ գծի վերահսկողությունը, կխոսի Բաթլերի հետ և կհաջողեցնի նրա աջակցությունը։ Դա, ի դեպ, կխաղաղեցներ Սթրոքիկին ու նրա արբանյակներին։

— Ես չեմ առաջարկում, որ դուք վիոխեք ձեր մտադրությունը Հյուսիսային Պենսիլվանիականի վերաբերյալ: Թերեւ անհարմար լիներ դա: Բայց չէ՝ որ կան և ուրիշ կոմքինացիաներ: Գուցե և ապագայում մենք երկուսս որևէ գործ գլուխ բերենք: Դա խստ շահավետ կլինի ձեզ, ինչպես և ինձ համար: Քաղաքային փոխառությունից մենք պակաս չվաստակեցինք: դուք այդ շեք բացասի:

Հիրավի վատ վաստակ չունեցան նրանք: Զիստելով արդեն «կետերին» բաժին հասած վաստակի մասին, Սթիներն ինքն իր նոր տան, հողամասերի, բանկում ունեցած հաշվի, լավ կոստյումների, իր ամբողջ փոխված աշխարհգգացողովթյան համար պարտական էր այն հաջող խաղին, որ կատարեց Քառուփերվուղը քաղաքային փոխառության սերտիֆիկատներով: Նկարագրվող ժամանակաշրջանում արդեն թողարկված էր պարտատոմսերի շորս սերիա՝ յուրաքանչյուր երկու հարյուր հազար դոլար: այդ պարտատոմսերով Քառուփերվողի կատարած շրյանառավիյունը հասնում էր համարյա երեր միլիոնի, սրովհետեւ նու մերիթ զնում, մերթ ծախութ էր դրանք՝ իսպատով դիմումներու հարձացներու կամ իշեցնելու նորուառնութ, նայած իրավուաթյան: Սթիները հիմա առնվազը հարյուր իրաւուն հազար կարողովթյուն ուներ:

Նո քաղաքում գիտեմ մի գիծ, որը, մի փոքր եռանդ թագիկիս, կարելի էր խստ եկամտաբեր դարձնել,— մտած լուս շարունակեց Քառուփերվուղը: — Շատ կարճ է դա, ինչպես և Հյուսիսային Պենսիլվանիականը, ուստի և սպասարկում է ոչ այնքան մեծ տարածության: Արժեք երկարացնել: Եթե մենք երկուսս ստանանք այդ գիծը, կարող ենք դրա կառավարչովթյունը միացնել մի Հյուսիսային Պենսիլվանիականի կամ մի ուրիշ գծի կառավարչովթյան հետ: Այդպիսով կտնտեսեինք գրասենյակ պահելու, նրա անձնակազմի և ուրիշ շատ ծախսերից: Կարճ ասած՝ շրջանառության մեծ կապիտալ ունենալու դեպքում միշտ էլ կարելի է շահավետ գործ գտնել:

Նա լոեց և մտմտալով ապագայի ակնկալիքների մասին՝ սկսեց նայել իր շքեղ կահավորված, փայլեցված փայտով:

պատված առանձնասենյակի լուսամուտից դուրս։ Այդ լուսամուտը նայում էր այն շենքի հետնաբակին, որ առաջ բնակելի տուն էր, իսկ հիմա վերածված էր գրասենյակների։ Քակում կանաչին էր տալիս վտիտ խոտը։ Տան կարմիր պատը և աղյուսե հինավուրց շրջափակը ինչ-որ բանով հիշեցնում էին Քառութերվուդին Նյու-Մարքեթ-սթրիթի իրենց տունը, ուր գալիս էր կուբացի առետրական քեռի Սենեկան լր սեամորթ ծառայի ուղեկցությամբ։ Լուսամուտից նայելիս Քառութերվուդը տեսնում էր նրան իր առաջ որպես կենդանի մարդ։

— Էլ ինչո՞ւ մենք երկուսս շտիրանանք այդ գծին, — ծանրումեծ շեշտով հարցրեց Սթիճերը՝ խայժից բռնված։ — Ֆինանսական կողմից, կարծում եմ, ես կկարողանայի ապահովել այդ գործառնությունը։ Զեր կարծիքով որքա՞ն գումար է մեզ սկետք։

Քառութերվուդը դարձյալ ներքուստ ժպտաց։

— Հիմա ճիշտ գումարն ասել չեմ կարող, — պատասխանեց նա մի փոքր լոելուց հետո։ — Անհրաժեշտ է, որ մանրամասնորեն ուսումնասիրեմ այդ հարցը։ Ցավն այն է, որ ես առանց դրան էլ խոշոր գումարներ եմ վերցրել քաղաքային գանձարանի միջոցներից։ Ինչպես հայտնի է ձեզ՝ ինձ վրա պարտագրված է քաղաքային փոխառության գործառնությունների համար տրված երկու հարցուր հաղար դոլլար։ Իսկ այդպիսի կոմբինացիան կպահանջեր կա երկու կամ երեք հարյուր հաղար։ Եթե այս հանգամանքը չիներ...

Նա մտածում էր բորսայական անբացատրելի խուճապների, տարօրինակ, Ամերիկայի համար տիպական լճացումների մասին, որոնց պատճառը ոչ այնքան երկրի ընդհանուր դրությունն էր, որքան ամերիկացիների բնավորությունը։

— Եթե Հյուսիսային Պենսիլվանիական գծի գործը արդեն վերջացած լիներ...

Նա մաժեց կզակը ու սղալեց խնամված մետաքսանման բեղերը։

— Այլևս որևէ բան մի՛ հարցնեք ինձ, — ասաց նա վերջապես՝ տեսնելով, որ զրուցակիցը գլուխ է տրաքացնում։

իմանալու, թե խոսքը ո՞ր գծի մասին է: — Եվ ոչի ո՞չ մի խոսք: Ես նախ մի լավ կստուգեմ բոլոր տվյալները, հետո արդեն կխոսենք: Իմ կարծիքով՝ որոշ ժամանակ անց պետք է զբաղվենք դրանով, երբ Հյուսիսային Պենսիլվանիականի գործը արդեն բարենպաստ ընթանա: Հիմա այնքան հոգ ունեմ, որ սիրտ չեմ անում ձեռնամուխ լինելու մի նոր գործի: Առաջմ սուս կացեք, իսկ հետո կտեսնենք...

Նա շրջվեց դեպի իր սեղանը, և Սթիները վեր կացավ:

— Հենց որ որոշեք, թե գործելու ժամանակն է, Ֆրենկ, ես վարկ կբացեմ ձեզ այնքան, որքան պետք լինի, — բացականչեց նա՝ զարմանալով ներքուստ, որ Քառվիերվուդը այնքան էլ չի այրվում այդպիսի գործ ձեռնարկելու ցանկությունից, թեև դրա համար կարող է հույս դնել իր՝ Սթիների աջակցության վրա, ինչպես ասենք որևէ այլ ձեռնտու կոմբինացիայի գեպօւմ: Ինչո՞ւ այս տաղանդավոր, ճարպիկ Քառվիերվուդը Հարստացնի իրենց՝ երկուսին: — Դուք մը այն իմաց տվիք Սթիներին, և նա չիկ կուղարկի ձեզ: Սթիների կարծում է, որ մենք ողեաք և զործենիք անհապագ:

— Ես կպատգիմ դրանավ. Խո՛րզ, — քաջալիրեց Քառվիերվուդը: Ամեն ինչ լույ կիխնի: Հույսը դրեք ինձ վրա:

Սթիները թափանարկ հաստ ոտքերը, շտկեց շալվարը և ձեռքը ողարկեց Քառվիերվուդին: Այդ նոր ծրագրի մասին մտածելով՝ նա ելավ փողոց: Խոսք չկա, որ եթե ինքը կարողանա լեզու գտնել Քառվիերվուդի հետ, իր հարստությունն առահովված է. այդ մարդը բացառիկ հաջողակն է և ծայրաստիճան զգուցչ: Նրա նոր տունը, ֆառահեղ գրասենյակը, աճող ժղովրդականությունը և խորամանկ կոմբինացիաները, որ կենսագործում է Բաթլերի և ուրիշների հետ՝ ակնածանք էին ներշնչում Սթիներին: Զիաքարշ երկաթուղու մի գի՞ծ ևս: Իրենք կտիրանան և՛ դրան, և՛ Հյուսիսային Պենսիլվանիականին: Օ՛, եթե այդպես շարունակվի, ապա ինքը՝ Ձորջ Սթիները, կյանքի ապահովագրման և անշարժ կայքի վաճառման ողորմելի գործակալը, կդառնա մագնատ, այս, այս, խոկակա՞ն մաղնատ: Այդ անրջանքների մեջ խորասուղված՝

նա քայլում էր փողոցով, մոռացած, որ կան այնպիսի
հասկացություններ, ինչպես քաղաքացիական պարտքը և
հասարակական էթիկան:

ԳԼՈՒԽ

Հաջորդ մեկուկես տարում Քառվերվուդը բազմաթիվ
ու գաղտնի ծառայություններ էր մատուցում Սթիներին,
Սթրոքիկին, Բաթլերին, Նահանգի գանձապետ Վան-Նոսթրեն-
դին, Պենսիլվանիայի սենատի անդամ, Հարիսբուրգի այսպես
կոչված «Փինանսական շրջանների ներկայացուցիչ» Ռելի-
խենին և զանազան բանկերի, որոնց հետ այդ շենտլմեն-
ները բարեկամական հարաբերություններ էին պահպանում:
Սթիների, Սթրոքիկի, Ռայքրոֆթի ու Հարմոնի համար, իրեն
էլ շմոռանալով, նա գլուխ բերեց Հյուսիսային Պենսիլվանիա-
կանի գործը, որի հետևանքով դարձավ այդ գծի բոլոր բաժնե-
տոմսերի հինգերորդ մասի տերը: Սթիների հետ նա գնեց
Տասնյոթերորդ ու Տասնիններորդ փողոցների ձիաքարշ լծի
բաժնետոմսերը, ինչպես նաև նրա հետ կիսրար սկզբունքով
սկսեց խաղալ բորսայում:

1871 թվականի ամռանը, երբ Քառվերվուդը մոտ երե-
սունշորս տարեկան էր, նրա բանկիրային գրասենյակը
դնահատվում էր իրկու միլիոն դոլար, որից համարյա կես
միլիոնը պատկանում էր անձամբ իրեն և դասելով նրա առաջ
բացվող հեռանկարներից՝ մոտիկ ապագայում նա կարող էր
դառնալ ամերիկան ամեն մի հարուստի մրցակցորդը:
Քաղաքը, ի գեմս գանձապետ Սթիների, իր ավանդատուն էր՝
մոտ հինգ հարյուր հազար դոլարով: Նահանգը, ի գեմս
գանձապետ Վան-Նոսթրենդի, ավելի քան երկու հարյուր
հազար ավանդ էր դրել նրա մոտ: Բոռեղք հիսոմն հազար
դոլարի քաղաքային երկաթուղու բաժնետոմս էր գնել, ճիշտ
նույն գումարով էլ՝ Ռելիխենը: Քաղաքական գործիչների ու
նրանց պոշերի մի իսկական ոհմակ իրենց գումարները նրա
մոտ էին պահում: Էղուարդ Մելիս Բաթլերի գրավադրված

Հաշիվը հասնում էր հարյուր հիսուն հազարի: Քառեկերվուդի տարբեր բանկերին ունեցած պարտքը, նայած, թե նրա ունեցած արժեթղթերից որո՞նք էին գրավ դրված, տատանվում էր յոթից մինչև ութ հարյուր հազար դոլարի միջև: Նման այն սարդին, որ հյուսել է իր արծաթաթուլը ոստայնի ամեն մի թելը ու փորձել, Քառուփերվուդն էլ գտնվելով գործարարական փայլուն կապերի ցանցի կենտրոնում՝ ակնասեռ հետևում էր այն ամենին, ինչ կատարվում էր շուրջը:

Նրա նախասիրած գործը, որին անձնատուր էր եղել առավելագույն ավյունով, քան մյուսներին, քաղաքային երկաթուղիների և ամենից առաջ Տասնյոթերորդ ու Տասնիններորդ փողոցների գծերի բաժնետոմսերի խաղն էր, իսկ վերջին գծի վերահսկողությունը փաստացի գտնվում էր նրա ձեռքին: Այն նախահաշվային վարկի շնորհիվ, որ բացել էր Սթիները Քառուփերվուդի բանկիրային գրասենյակին այն պահին, երբ այդ գծի բաժնետոմսերը առանձնապես ցածր էին գնահատվում, նա կարողացավ դնել իր և Սթիների համար լուսուր լուսմիևառմսերի հիսունմելի տոկոսը, և այժմ կարող էր սեփական հայեցաղությամբ տնօրինել այդ դիմու: Դրա համար նա կարիք ունեցավ դիմել խիստ «յուրօրինակ» մի մեթոդի, ինչպես հետագայում էին անվանում ֆինանսական շըրջաններում, բայց փոխարենը նա գնեց պարտատոմսերը իր իսկ նշանակած գնով: Սկզբում իր գործակալների միջոցով նա մի քանի հայց հարուցեց ընկերության դեմ ու պահանջեց հատուցել այն վնասները, որ առաջացել էին նրանից հասանելիք տոկոսները շվճարելուց: Դրածո անձի ձեռքին՝ ոչ մեծաքանակ բաժնետոմսերի մի ծրար, դիմում դատարանին՝ նշանակելու վերաբնում, որը հաստատեր, թե պետք չէ՝ արդյոք հիմնել ընկերության գործերի կոնկորսային մարմին¹, միաժամանակ մի քանի կողմից սկսված հարձակումը բորսայում, ուր այդ ընկերության բաժնետոմսերն սկսեցին առաջարկել ընթացիկ կուրսից երեք, հինգ, յոթ ու տասը

¹ Պարտատերերի կոճիտե, որ նշանակվում է կառավարելու սնանկացած գործարարի ունեցվածքը:

կետ պակաս. այս բոլոր միջոցառումների համարումը ստիպեց ահաբեկված բաժնետերերին իրենց արժեթղթերը շուկա նետել: Բանկերը հանգեցին այն եզրակացության, որ այդ գիծը խիստ ուսկու ձեռնարկություն է, ուստի և ընկերությունից պահանջեցին մարել իր պարտքերը: Այն բանկը, ուր աշխատում էր Քառուփերվուղի Հայրը, ժամանակին փոխառվություն էր արել գծի գլխավոր բաժնետերերից մեկին և հիմա նույնպես պահանջում էր վերադարձնել գումարը: Այնուհետև, դարձյալ դրածո անձի միջոցով, բանակցություններ սկսվեցին խոշորագույն բաժնետերերի հետ առ այն, թե նրանց հնարավորություն է տրվում ստեղծված դրությունից դուրս գալ՝ ծախելով իրենց պարտատոմսերը հարյուրանոցը քառասուն դոլլարով: Եվ քանի որ նրանք ոչ մի հնար չունեին պարզելու, թե որտեղից թափվեցին այդ բոլոր պատուհասները, ապա երեակայեցին (թեև դրա մեջ ճշմարտության հատիկ իսկ չկար), որ գիծը անտերության է մատնված: Ավելի լավ է ազատվել դրանից: Փողն արդեն պատրաստ պահել էին Քառուփերվուղն ու Սթիները, և նրանք էլ դարձան բաժնետոմսերի հիսունմեկ տոկոսի տերը: Բայց քանի որ Քառուփերվուղը, ինչպես Հյուսիսային Պենսիլվանիական գծի խաղում, ծածուկ գնում էր մանր բաժնետերերից այն ամենը, ինչ կարելի էր գնել, ապա վերահսկչական ծրարը, որ հավասար էր բաժնետոմսերի հիսունմեկ տոկոսին, հենց նրա ձեռքին էր, իսկ Սթիները հանդիսանում էր ևս քսանհինգ տոկոսի տերը:

Դա արբեցրեց Քառուփերվուղին, որովհետև նա այժմ տեսնում էր իր վաղնջական երազն իրականացնելու հնարավորությունը, այսինքն՝ վերակառուցել այդ գիծը Հյուսիսային Պենսիլվանիականի հետ միացնելով, թողարկել երեքական նոր բաժնետոմս յուրաքանչյուր հնի փոխարեն, բոլորն էլ իրացնել, բացի վերահսկչական ծրարից, այնուհետև ստացված գումարներով դառնալ քաղաքային երկաթուղիների մյուս գծերի բաժնետեր, ուսեցնել նոր ձեռք բերված արժեթղթերի գինը և վերջիվերջո ծախել դրանք ուսեցրած գներով: Կարձասած՝ Քառուփերվուղը այն հանդուգն շարաշահողներից մեկն

էր, ովքեր հետագայում իրենց ձեռքը հավաքեցին ամերիկյան տնտեսության ուրիշ, ավելի կարևոր ճյուղերը և անձամբ հարստանալու նպատակով վերջիվերջո դրանք ամբողջովին ենթարկեցին իրենց:

Գալով մի քանի գիծ միաձուկելու այս առաջին հարցին, ապա Քառուկերվուղի պլանն այսպես էր՝ լուր տարածել, որ շուտով երկու ընկերությունները դառնալու են մեկ, օրենսդրական օրգաններից թույլատրություն ձեռք բերել գիծը շարունակելու, տպել գրավիչ ուկլամային հայտագրեր, իսկ ավելի ուշ՝ տարեկան հաշվետվություններ և դրանց հետեւ վանքով բաժնետոմսերի գինը այնպես բարձրացնել դրամական բորսայում, որքան թույլ կտան օր-օրի վրա աճող իր նյութական աղբյուրները Ելյդ գործառնությունն ուներ այն դժվարությունը, որ այդպիսի հսկայական գումարի (կես միլիոնից ավելի) բաժնետոմսերի տարածմանն ու սպառմանը նպաստող հնարավորություններ ստեղծելու համար, առավել ևս կես միլիոնի բաժնետոմսեր էլ իր մոտ պահելու պայմանով, անընդունակության վեհականության վեհականության վեհականության մեջ գցում և ունեցողը կարողանում է ծախսել բաժնետոմսերի զգալի մասը, նա էլ ստիպված է լինում բավական ժամանակ պահպան գործարկ առաջացնել: Եթե այդպիսի արհեստական աժի՛տագրը հասարակությանը մոլորության մեջ է գցում և ունեցողը կարողանում է ծախսել բաժնետոմսերի զգալի մասը, նա էլ ստիպված է լինում բավական ժամանակ պահել դրանց կուրսը, որպեսզի վերջնականապես ազատվի դրանցից: Եթե, օրինակի համար, Քառուկերվուղը ծախսեր հինգ հազար բաժնետոմս, հինգ հազարն էլ պահեր իր մոտ, ինչպես եղավ այս գեպքում, ապա ստիպված կլիներ ամեն ջանք թափել, որպեսզի որոշ մակարդակի վրա պահի իրենից դուրս եկած բաժնետոմսերի կուրսը, որովհետև հակառակ գեպքում անխուսափելիորեն կընկներ իր ձեռքին մնացած արժեթղթերի գինը: Իսկ եթե (ինչպես միշտ արվում էր) նա սեփական բաժնետոմսերը գրավ դներ բանկում և դրանց դիմաց ստացած դրամը օգտագործեր իր մյուս ձեռնարկներում, ապա այդ բաժնետոմսերի կուրսն ընկնելու գեպքում շանկը, պաշտպանելով իր շահը, կպահան-

շեր. առաջին իսկ պահանջին վճարվելիք հաշվի լրացուցիչ ապահովում կամ նույնիսկ պարտքի լրիվ մարում: Իսկ դա արդեն կնշանակեր, որ նրա խաղը տապալվել է, իրեն էլ սնանկացնում է սպառնում: Այժմ Քառուիերվուղը ֆինանսական խիստ բարդ կամպանիա էր մղում քաղաքային փոխառության թողարկման կապակցությամբ, որի կուրսն անընդհատ տատանվում էր. տարբերությունը միայն այն էր, որ տվյալ դեպքում տատանումները նրա համար խիստ ցանկալի էին, որովհետև վերջին հաշվով նա շահում էր դրանցից:

Նրա ստանձնած այդ լրացուցիչ բեռը, չնայած ձեռնարկի ամբողջ դրավշությանը, կրկնակի զգոնություն էր պահանջում: Բաժնետոմսերը բարձր կուրսով ծախելով՝ նա կկարողանա վերադարձնել քաղաքի դանձապետից վերցրած փոխառությունը: Նրա սեփական բաժնետոմսերը խորատեսության, անգամ հեռավոր ապագայից և ճարպկորեն կազմված հայտագրերից ու հաշվետվություններից օգուտ քաղելու հմտության շնորհիվ հավասար կլինեն անվանական աժեքին կամ դրանից շատ քիչ պակաս: Անհավանական չեն նաև, որ ժամանակին նա իր ձեռքը առնի քաղաքային երկաթուղիւնների ամբողջ սիստեմի ղեկավարությունը և այն ժամանակ կդառնա միլիոնատեր: Քառուիերվուղի խորամանկ հնարքներից մեկը, որ այդ մարդու հեռատեսության ու արտասովոր խելքի վկայությունն էր, հետեւյալն էր՝ ինչ չափով որ երկարացվում էին հղած զծերը կամ շինովում էին նոր ճյուղեր, ամեն անգամ նա ինքնուրույն ձեռնարկություն էր ստեղծում: Այսինքն՝ ունենալով երկու-երեք մղոն երկարությամբ մի գիծ և ցանկանալով երկարացնել այն նույնքան և նույն փողոցում, Քառուիերվուղը այդ նոր տեղամասը չէր հանձնում գոյություն ունեցող բաժնետիրական ընկերությանը, այլ ստեղծում էր մի նոր ընկերություն, որը վերահսկում էր ծիաքարչ գծի այդ երկու-երեք մղոնը: Այդ ձեռնարկությունը նա կապիտալացնում էր որոշ գումարով, որի չափով բաց էր թողնում բաժնետոմսեր ու պարտատոմսեր, իսկ դա հնարավորություն էր ընձեռում նրան անմիջապես ձեռնամուխ լինելու նոր գծի կառուցմանը և արագ էլ շահագործման

Հանձնելու Այդ գործն ավարտելուց հետո քույր ձեռնարկությունը միացնում էր սկզբնական ընկերությանը՝ դրա համար և դրա անունից թողարկելով բաժնետոմսերի ու պարտատոմսերի մի նոր շարք, որոնց լայն սպառումն ապահովում էր վաղօրոք։ Անգամ նրա համար աշխատող եղբայրները չէին իմանում նրա ձեռնարկությունների բազմաթիվ ճյուղավորումները և միայն կուրորեն կատարում էին նրա հրամանները։ Պատահում էր, որ Զողեֆը շփոթված հարցնում էր, եղուարդին։

— Նը՞մ. պետք է կարծել Ֆրենկն այնուամենայնիվ հաշիվ է տալիս իրեն, թե ինչ է անում։

Մյուս կողմից էլ Քառուիերվուղը ուշադիր հետևում էր, որ իր ընթացիկ բոլոր պարտավորությունները վճարվեն ժամանակին կամ նույնիսկ ավելի շուտ, որովհետև իր համար կարեոր էր ամենքին ցուց տալ իր բացարձակ վճարունակությունը։ Ոչ մի բան ավելի արժեքավոր չէ, քան լավ համարվավը և կայուն դրությունը։ Նրա հեռատեսությունը, զգուշությունը և ճշտապահությունը շատ էին հավանում բանկիրային տների դեկադակարները, և իսկապես էլ նա ձեռք էր բերել ամենասովորմիտ ու խորաթափանց գործարարներից մեկի համրավը։

Եվ այնուամենայնիվ այնպես պատահեց, որ 1871 թվականի ամառնամուտին Քառուիերվուդի միջոցները խիստ սփռվեցին, թեկուզ և ոչ այնքան, որ գրությունը կարելի լիներ անվանել սպառնալի։ Մշտապես նրան ուղեկցող հաջողության ազդեցությամբ նա սկսեց նվազ մանրակրկիտությամբ ծանր ու թեթև անել իր ֆինանսական մեքենայությունները։ Քիչ քիչ, տոգորված իր բոլոր մտադրությունների իրականանալու հավատով, նա հորն էլ համոզեց մասնակցելու քաղաքային երկաթուղիների սպեկուլյացիային։ Ծեր Քառուիերվուդը օգտվելով երրորդ ազգային բանկի միջոցներից, պետք է մասսամբ ֆինանսավորեր որդուն և վարկ բացեր նրան, երբ սա շտապ պետք ունենար գրամի։ Սկզբում ծեր չենտլմենը մի քիչ ներվայնանում էր և թերահավատ էր տրամադրված, բայց որքան ավելի ժամանակն անցնում էր

և վաստակից բացի, գործարքը ոչինչ չէր պատճառում նրան, նա համարձակ դարձավ և ավելի վատահ զգաց իրեն:

— Ֆրենկ, — հարցնում էր նա երբեմն՝ ակնոցի վերևից նայելով որդուն, — շախն անցկացնելուց շե՞ս վախենում: Վերջերս դու շատ մեծ գումարներ ես փոխ առել:

— Ոչ ավելի, քան առաջ էի փոխ առնում, հա՛յր, եթե հաշվի առնենք իմ աղբյուրները: Անկարելի է խոշոր գործեր անել առանց մեծ վարկի: Դու այդ գիտես ինձանից ոչ պակաս:

— Այդ իհարկե ճիշտ է, բայց... օրինակի համար վերցնենք Դրին և Կոռութս գիծը. տե՛ս, որ շիրվես այդ գործում:

— Ոչինչ չի լինի, ես մանրամասն իմանում եմ այդ ընկերության դրությունը: Նրա բաժնետոմսերը վաղ թե ուշ պետք է բարձրանան: Ես ինքս էլ կրամացնեմ դրանք: Եթե հարկ լինի, կհամաձայնեմ այդ գիծը իմ մյուս գծերին միացնելուն:

Հայր Քառուփերվուղը զարմացած նայեց որդուն: Աշխարհը դեռ այսպիսի հանդուգն, անվախ կոմքինատոր շի տեսել:

— Մի՛ անհանգստանա ինձ համար, հա՛յր: Իսկ եթե վախենում ես, ավելի լավ կլինի պահանջես մարեմ իմ վերցը-րած փոխատվությունները: Ամեն մի բանկիր ինձ փող կտա իմ բաժնետոմսերի դիմաց: Ես պարզապես գերադասում եմ, որ օգուտը քո բանկին բաժին ընկնի:

Հենրի Քառուփերվուղը տեղի տվեց: Այսպիսի փաստարկումների դիմաց ինչ կարող էր նա առարկել: Նրա բանկը լայնորեն վարկավորում էր Ֆրենկին, բայց վերջիվերջո ոչ ավելի լայն, քան մյուս բանկերը: Իսկ ինչ վերաբերում է այն անձնական ներդրումներին, որ արել էր նա որդու ձեռնարկներում, ապա Ֆրենկը խոստացավ նախօրոք զգուշացնել նրան, եթե ճգնաժամային պահը հասնի: Ֆրենկի եղբայրները նույնպես շարունակ գործում էին նրա թելադրանքով, և հիմա նրանց շահերը անխզելիորեն կապված էին մեծ եղբոր սեփական շահերին:

Օր օրի վրա հարստանալով՝ Քառուփերվուղն ավելի ճշն կյանք էր վարում: Ֆիլադելֆիայի անտիկավաճառները

լսելով, որ նա գեղարվեստական հակումներ ունի և հարստությունն էլ աճում է, իրար առաջ կտրելով առաջարկում էին կահ-կարասիներ, գորելեններ, գորգեր, արվեստի գործեր ու նկարներ՝ նախ ամերիկյան, հետո արդեն բացառապես օտարերկրյա վարպետների: Թե՛ իր սեփական և թե՛ հորենական տանը դեռ քիչ էին գեղեցիկ իրերը. ավելացնենք նաև, որ գոյություն ուներ Հյուսիսային Տասներորդ փողոցի տունը, որ նա ուզում էր զարդարել որքան կարելի է լավ: Էյլինը միշտ աննպաստ էր խոսում իր ծնողների կացարանի մասին: Գեղեցիկ իրերի սերը դեռատի աղջկա խառնվածքի անքակտելի մասն էր, թեև նա գուցե չէր գիտակցում: Այն անկյունը, ուր տեղի էին ունենում նրանց ծածուկ հանդիպումները, պետք է անդորրավետ ու շքեղ կահավորված լինի: Երկուսն էլ հաստատ համոզված էին դրան: Այդպիսով դա վերածվեց իսկական գանձարանի, ուր որոշ սենյակներ ավելի նրբաճաշակ էին կահավորված, քան Ֆրենկի տանը: Սա սկսեց այդտեղ հավաքել միջնադարյան եկեղեցական դգեստների, գորգերի ու զորեկինների հավակնուու նմուշներ. ձեռք բերեց Գևորգ արքայի դարաշրջանի ոճով շինված կահույք՝ Զիտենդելի, Շերամոնի և Հեղուայթի զուգադրումը, որ մի փոքր փոփոխվել էր խտալահան վերածնության և Լյուտովիկոս Տասնչորսերորդի ոճի աղդեցությամբ: Նա ուշադիր դիտեց հախճապակու, քանդակի, հունական վազաների հիանալի նմուշներ և փղոսկրե ճապոնական փորագրված իրերի զմայլելի կոլեկցիաներ: «Քեյլ և Գրեյ» ֆիրմայի երիտասարդ գործընկեր Ֆլեշեր Գրեյը, որ մասնագիտացել էր արվեստի իրեր ներմուծելու գործում, մի անգամ եկավ Քառուիերվութի մոտ առաջարկելու XIV դարի մի գորեկեն: Լինելով հնադարյան գործերի իսկական խանդավառ՝ նա անմիջապես կարուղացավ վարակել Քառուիերվութին ամենայն գեղեցիկի իր գուսապ, միաժամանակ և բոցավառ սիրով:

— Միմիայն կապուտակ հախճապակու մի որոշ երանգի արտադրության մեջ տարբերում են հիսուն շրջան, միստր Քառուիերվութ, — պատմում էր Գրեյը: — Մեզ ծանոթ են առնվազը յոթ տարբեր շրջանների ու դպրոցների գորգեր՝

պարսկական, հայկական, արաբական, ֆլամանդական, ժամանակակից լեռական, հունգարական և այլն։ Եթե դուք երբեք հետաքրքրվեք այդ գործով, ես ձեզ խորհուրդ կտայի ձեռք բերել՝ ուզում եմ ասել որևէ կամ բոլոր շրջանների համար բնորոշ գորգերի կողեկցիա։ Որքա՞ն գեղեցիկ են դրանք։ Մի քանի կոլեկցիա տեսել եմ իմ աշքով, իսկ մյուսների մասին կարդացել եմ միայն։

— Ձեզ համար այնքան էլ դժվար չէ ինձ դարձնել ձեր հավատին, — պատասխանեց Քառվիերվուլը։ — Արվեստը մի օր էլ ինձ սնանկության կհասցնի։ Ես իմ խառնվածքով իսկ անտարբեր չեմ նրա հանդեպ, իսկ դուք, ինչպես և էլսուորթը և Գորդոն Սթրեյքը (նա նկատի ուներ մի ծանոթ երիտասարդի), որ նկարչության շերմեռանդ սիրահար էր) բոլորովին հոգիս հանում եք։ Սթրեյքը մի փայլուն միտք է հղացել։ Նա պահանջում է, որ ես անհապաղ սկսեմ հավաքել տարբեր դարաշրջանների ու դպրոցների համար հատկանշական գլուխ-գործոցների նմուշներ և հավատացնում է, որ մեծ վարպետների կտավների գները հետզհետե ավելի կրարձրանան, և այն, ինչ հիմա գնում եմ մի քանի հարյուր հազարով, հետագայում միլիոններով են գնահատվելու։ Բայց նա խորհուրդ շիտակիս զբաղվելու ամերիկյան նկարիչներով։

— Նա իրավացի է, թեև ինձ համար շահավետ չէ գովել մրցակցի, — բացականչեց Գրեյը։ — Բայց այդ գործի համար վիթխարի գումարներ են պետք։

— Այնքան էլ ոչ վիթխարի։ Եվ համենայն գեպս ոչ մի անգամից։ Այդ մտադրությունն իրագործելու համար տարիներ պետք կլինեն։ Սթրեյքը կարծում է, որ հիմա էլ կարելի է ճարել տարբեր դպրոցների սքանչելի նմուշներ, որպեսզի հետագայում, որևէ լավ բան պատահելիս, կարելի լինի վոխել դրանք։

Զնայած Քառվիերվուլի արտաքին անդորրին՝ նրա հոգին միշտ մի բան էր փնտրում։ Սկզբում նրա միակ ձգտումը հարստությունն էր ու կանացի գեղեցկությունը։ Հիմա նա սիրեց արվեստը հենց ի սեր արվեստի, և դա ասես այդաբացի, առաջին շողերը լինեին երկնքում։ Նա սկսեց հասկա-

նալ, որ կանացի գեղեցկությունը պետք է շրջապատված լինի այն ամենով, ինչ գեղեցիկ է կյանքում, իսկ մեծ գեղեցկության համար կա միայն մի արժանի ֆոն՝ մեծ արվեստը։ Այդ աղջկեր՝ էյլին թաթլերը, որ տակավին գեռատի է ու կյանքով շողարձակ, հարուցեց նրա մեջ գեղեցկության ձգտում, որ առաջ այս շափով հատուկ չէր նրան։ Անկարելի է սահմանել այն նրբագույն ռեակցիաները, որ առաջանում են բնավորությունների փոխազդեցությամբ, որովհետև ոչ ոք իմանում, թե ինչ շափով է մեզ վրա ազդում այն, ինչ մեր հիացմունքի առարկան է։ Սերը, ինչպես այն, որ արթնացագի Քառակերպուդի ու էյլինի միջև, ներկի մի կաթիլ է մի բաժակ մաքուր ջրի մեջ, ավելի ճիշտ՝ մի անհայտ քիմիական նյութ՝ վերածված քիմիական մշակված բանաձեկ։

Կարճ ասած՝ էյլին թաթլերը, չնայած իր մանկահասակության, անտարակույս ուժեղ անձնավորություն էր։ Նրա համարյա անխոհեմ փառասիրությունը մի յուրօրինակ բողոք էր տնային գորշ շրջապատի գեմ։ Զպետք է մոռանալ, որ ծնվելով թաթլեր լինուանիքում՝ շատ տարիներ եղել էր միաժամանակ և նախոնական հակառակություններուն, քաղքենիական կենսահայցքների կրող, և՛ դրանց զսհը, մինչդեռ հիմա, Քառիկերվուսի հետ շփվելով, նա իմացավ կյանքի այնպիսի հրավույցներ, որ հարստությունն ու հասարակական բարձր դիրքն են պարգևում մարդուն, որոնք առաջ չէր էլ իմանում։ Օրինակ՝ որքա՞ն էր գերում նրան այն հաջողության միտքը, որ կոնենար նա բարձր հասարակության մեջ որպես Ֆրենկ Քառիկերվուսի կին։ Հապա Ֆրենկի սուր փայլուն մի՛տքը, որ բացվեց էյլինի առաջ տեսակցությունների երկար ժամերին, մի միտք, որով այդ աղջկեր չէր կարող շնչանալ՝ լսելով Ֆրենկի որոշակի, հստակ բացատրություններն ու խրատները։ Որքա՞ն փառահեղ էին ֆինանսական կարիերային, արվեստին, հասարակական դրությանը վերաբերող նրա երազանքներն ու ծրագրեր։ Իսկ գլխավորը՝ ինքը պատկանո՞ւմ էր իրեն։ Լինում էին պահեր, երբ էյլինի գլուխը պտտվում էր երջանկությունից ու հրճվանքից։

Միաժամանակ այն գիտակցությունը, որ Ֆիլադելֆիա-

յում ամենքն էլ ճանաշում էին իր հորը որպես նախկին աղբատարի («թրիքի բլոճ» էին անվանում հին ծանոթները), իրենց տնային կենցաղի անձաշակության ու գոեհկության դեմ պայքարելու իր սեփական զուր ջանքերը, շքեղափայլ դաստակերտները մուտք գործելու անկարելիությունը, որոնք թվում էին նրան անխախտ արժանահարգության և բարձր դիրքի «սրբություն սրբոցներ». այս ամենը նրա երիտասարդ հոգու մեջ սերմանեց մի անսանձ թշնամանք հորենական տան մթնոլորտի նկատմամբ: Իրենց տան կյանքը ոչ մի կերպ չի կարելի համեմատել Քառուփերվուղենց տան կյանքին: Ինքը սիրում է հորը, բայց որքա՞ն տգետ է նա: Եվ այնուամենայնիվ այդ բացառիկ մարդը՝ իր սիրեցյալը, խոնարհվեց մինչև իրեն սիրելը, խոնարհվեց այն աստիճան, որ իր մեջ տեսնի սպազա կնոջը: Աստվածի իմ, երանի իրականանա դա: Սկզբում ինքը հույս ուներ Քառուփերվուղերի միջոցով ծանոթանալու բարձր դասի երիտասարդության, հատկապես հասարակական սանդուղքի վրա իրենից բարձր կանգնած տղամարդկանց հետ, որոնց պետք է գրավեր իր գեղեցկությունը և հարուստ ժառանգի վիճակը: Բայց այդ հույսը շարդարացավ: Քառուփերվուղերը նմանապես, չնայած Ֆրենկի գեղարվեստական հակումներին ու աճող հարստությանը, տակավին չեին թափանցել բարձր հասարակության ինքնամփոփ շրջանակը: Ըստ էության նրանք դեռ շատ հեռու էին դրանից, եթե չհաշվենք այն մակերեսային և այսպես ասած կանխակալ ուշադրությունը, որ դարձնում էին նրանց:

Այնուամենայնիվ էյլինը բնազդաբար կռահում էր, որ Քառուփերվուղը կօգնի դուրս գալու ներկա վիճակից և փառահեղ ապագա կապահովի իրեն: Այդ մարդը կհասնի այն բարձունքներին, որ նա անգամ դեռ չի համարձակվում երազել. Էյլինը հավատացած է դրան: Ֆրենկի մեջ թեկուզ և անորոշ, դժվար ճանաչելի ձեռվ անթեղված են մեծ նախադրյալներ, որոնք խոստանում են ավելի, քան էյլինն էր երազում: Նա ծարավի էր ճոխության, փայլի և հասարակական դիրքի: Հետո ի՞նչ, այդ ամենը կամ, եթե Ֆրենկը պատկանի իրեն: Ճիշտ է, նրանց ճանապարհին կային առաջին

Հայացքից անհաղթահարելի խոչընդոտներ, բայց չէ՝ որ իրենք երկուսն էլ ողջախոհ մարդիկ են: Ինչպես երկու հովազ ծմակում՝ նրանք գտել էին իրար: Էյլինի խակ, լոկ կիսակազմավորված և կիսաարտահայտված մտադրությունները իրենց ուժով և անշեղ ուղղամտությամբ չէին զիջում Ֆրենկի Հանդուգն ձգտումներին:

— Իմ կարծիքով՝ հայրիկը պարզապես չի կարողանում ապրել, — ասաց նա մի անգամ Քառւփերվուդին: — Դա նրա հանցանքը չէ, ոչ էլ ինքը որևէ մեղք ունի: Ինքն էլ է գիտակցում այդ, գիտակցում է նաև, որ ես անշուշտ կկարողանայի կյանք կերտել: Քանի տարի է ես փորձում եմ դուրս բերել նրան այդ հին տնից: Ինքն էլ է հասկանում, թե որքան անհրաժեշտ է մեզ տեղափոխվել: Բայց, ասենք, դրանից էլ որևէ օգուտ չի լինի:

Նա լռեց և Ֆրենկի վրա սկսոեց իր ուղղամիտ, հստակ ու համարձակ հայացքը: Ֆրենկը սիրում էր նրա ասես կոփածոդիմագծերը, դրանց անբասիր, անտիկ կերտվածքը:

— Մի՛ վշտանար, ազգի՛կո, — պատասխանում էր նա, — ժամանակին ամեն ինչ կկանոնավորիլի: Ես հիմա գեռ չեմ իմանում, թե ինչպիս գուրս գամ այս իւճճվածքից, բայց թվում է, թե ամենից ավելի լավը կիլիանին խոստովանելն է, հետո արդեն գործողությունների ծրագիր մշակելու: Պետք է ամեն ինչ այնպես անեմ, որ երեխանները շտուժեն: Ես նրանց շատ լավ ապահովելու հնարավորություն ունեմ և բնավ էլ չեմ զարմանա, եթե կիլիանը համաձայնի ազատություն տալ ինձ: Ես գրեթե համոզված եմ, որ նա կուզենա խուսափել բամբասանքներից ու ասեկուսեներից:

Այս ամենը նա դիտում էր զուտ գործնական, այն էլ տղամարդու տեսակետից՝ իր հաշիվները կառուցելով երեխանների հանդեպ կիլիանի տածած սիրո վրա:

Էյլինը հարցական նայեց նրան: Մերձավորի վշտին կարեկցելու ընդունակությունը որոշ շափով կար նրա մեջ, սակայն տվյալ դեպքում ամեն մի կարեկցանք ավելորդ էր համարում: Կիլիանը երբեք բարյացակամ չէր վերաբերվել իրեն. շատ տարբեր էին իրենց կենսահայացքները: Միսիս

Քառուփերվուղը չէր հասկանում, թե ինչպես օրիորդը կարող է այդպիս քիթը տնկել ու «երեակալայել իր մասին»։ Էյլինն էլ չէր կարող հասկանալ, թե ինչպես կարելի է լինել այնպես դանդաղկոտ ու նազ ծախող, ինչպես կիլիան Քառուփերվուղը։ Կյանքը նրա համար է ստեղծված, որ ձի հեծնեն, կառքով ման գան, պարեն ու զվարճանան։ Մեկ էլ նրա համար, որ քիթը տնկեն, ձեռ առնեն, միմյանց խայթնեն, կոկետություն անեն։ Սիրտը խառնում է այդ կնոջը նայելուց այնպիսի հիանալի, այնպիսի երիտասարդ մարդու, ինչպիսին է Քառուփերվուղը, կինը (կարեոր չէ, որ սա հինգ տարով մեծ է նրանից ու երկու երեխայի մայր) այնպես է պահում իրեն, կարծես նրա համար արդեն ոչ ոռմանտիկա գոյություն ունի, ոչ էլ հիացմունք ու կյանքի ուրախություն։ Լիլիանն իհարկե Ֆրենկի զույգը չէ։ Նրան պետք է իհարկե դեռատի կին, այնպիսին, ինչպես ինքը էլլինը, և բախտը պետք է միացնի իրենց։ Օ, ինչ հարաշալի կապրեն իրենք այն ժամանակ։

— Ախ, Ֆրենկ, եթե վերջիվերջո ամեն ինչ կարգավորվեր, — ստեպ-ստեպ բացականչում էր նա։ — Ինչ ես կարծու՞չ Շույս կարող ենք ունենալ, թե ոչ։

— Կարող ենք հույս ունենալ։ Անպայման։ Լոկ ժամանակի հարց է դա։ Հստ իս՝ եթե ես ամեն ինչ ասեմ կիլիանին առանց այլկայլության, ապա նա չէ չի ուզենա, որ ես մնամ իր մոտ։ Միայն թե, տես, զույց եղիր։ Եթե քո հայրը կամ եղբայրները կտակածեն ինձ, ապա մեր քաղաքում հսկայական սկանդալ կառաջանա, եթե ոչ ավելի վատ բան։ Նրանք կամ տեղնուտեղը կսպանեն ինձ, կամ արշավ կսկսեն իմ գեմ՝ իմ բոլոր գործերում։ Ասա, դու մանրակրկիտ կշուադատում ես քո բոլոր արարքները։

— Ես ոչ մի վայրկյան չեմ մոռանում։ Եթե որևէ բան պատահի, ես ամեն ինչ կուրանամ։ Նրանք ոչ մի բան չեն կարողանա ապացուցել։ Մեկ չ՝ վաղ թե ուշ ես ընդմիշտ կդառնամ քոնը։

Այս խոսակցությունը տեղի էր ունենում Տասներորդ փողոցի տանը։ Խելահեղորեն սիրահարված էլլինը ձեռքով քնքշագին շոյեց ֆրենկի դեմքը։

— Ես քեզ համար, սիրելի՛դ իմ, ամեն բան կանեմ
աշխարհում, — ասաց էլլինը: — Պատրաստ եմ մեռնել քեզ
համար: Օ՛, ինչպե՞ս եմ սիրում քեզ:

— Լավ, հոգյա՞կս, այդպիսի բան չի սպառնում քեզ:
Աշխարհու կարիք չես ունենա: Միայն թե շրջահայաց եղիր:

Գ Լ Ո Ւ Խ Հ Խ Խ

Եվ ահա, երբ մի քանի տարի էր անցել Քառուիերվուդի ու
Էլլինի գաղտնի կապից հետո, որի ընթացքում նրանց
փոխադարձ հակումն ու ըմբռնումը ոչ միայն չէին թուլացել,
այլ նույնիսկ ամրապնդվել էին, փոթորիկ պայթեց՝ անսպա-
սելի, ինչպես որոտը պայծառ երկնքում և բոլորովին անկախ
մարդկային կամքից կամ մտադրություններից: Սկզբում դա
հրդեհ էր լոկ, մանավանդ որ պատահել էր Ֆիլադելֆիայից
հեռու, Զիկագոյի պատմական հրդեհը 1871 թ. հոկտեմբերի
7-ին, երբ քաղաքը, ավելի ճիշտ՝ նրա լնդարձակ առևտրական
շրջանն այրվեց ամբողջովին, և այդ աղետը վայրկենապես
առաջացրեց հուսահատական, թեկուզ և ոչ երկարատև խու-
ճապ Ամերիկայի ֆինանսական աշխարհում: Շաբաթ օրը
բռնկված հրդեհը շթուլացող ուժով շարունակվեց մինչև
շորեքաթերթի՝ ոչնչացնելով բանկեր, առևտրական ձեռնարկու-
թյուններ, նավամատուցներ, երկաթուղային ապրանքա-
պահեստներ և բնակելի տների բազմաթիվ թաղամասեր:
Մեծագույն վնասը բնականաբար կրեցին ապահովագրական
ընկերությունները, որոնց մեծ մասը դադարեցրեց վճարում-
ները: Դրա հետևանքով լինասների ամբողջ ծանրությունն
ընկավ Զիկագոյի հետ գործեր ունեցող այլ քաղաքների ար-
դյունաբերողների ու մեծաքանակ առևտուր անողների, ինչ-
պես նաև Զիկագոյի վաճառականների վրա: Հսկայական
վնասներ ունեցան նաև Արևելյան նահանգների կապիտալիստ-
ները, որոնք տարիներ շարունակ տերերը կամ վարձակալ-
ներն էին շքեղ գրասենյակների ու դաստակերտների, որոնցով
Զիկագոյն այդ ժամանակ արգեն կարող էր մրցել մայրցա-

մաքում եղած որևէ քաղաքի հետ։ Հարաբերությունը խզվեց Զիկագոյի, հետ, և նյութորքի Ռուլ-սթրիթը, Ֆիլադելֆիայի երրորդ փողոցն ու Բոստոնի Սթեյթ փողոցը առաջին իսկ հեռագրերից լուրջ դրության հոտն առան։ Շաբաթ ու կիրակի արդեն ոչ մի բան կարելի չէր ձեռնարկել, որովհետեւ առաջին լուրերն ստացվեցին բորսան փակվելուց հետո։ Բայց երկու շաբթի արդեն լուրերն սկսեցին հասնել անընդհատ հոսանքով։ Եվ երկաթուղային, պետական, քաղաքային բաժնետոմսեր ու պարտատոմսեր, այլ խոսքով ամեն տեսակի ու կարգի արժեթղթեր ունեցողներն սկսեցին շուկա նետել դրանք՝ հուսալով կանխիկ դրամ ձեռք բերել։ Բանկերը բնականաբար սկսեցին ետ պահանջել արված փոխատվությունները։ Դրա հետևանքը եղավ այն, որ դրամական բորսայում խուճապ առաջացավ, որն իր շափերով հավասար էր դրանից երկու տարի առաջ նյութորքում պատահած «ՄԱ ուրբաթ»-ին։

Երբ հրդեհի լուրն ստացվեց, ոչ Քառիերվուդն էր քաղաքում, ո՛չ էլ նրա հայրը։ Մի քանի բանկային գործիչների հետ նրանք մեկնել էին ծանոթանալու քաղաքամերձ երկաթուղու այն գծին, որը շարունակելու համար փոխատվություն էին խնդրել։ Նրանք երկանիկ կառքերով անցան ապագա գծի զգալի մասի երկայնքով և կիրակի, ուշ երեկոյան վերադառնալով Ֆիլադելֆիա՝ լսեցին լրագրավաճառ մանջուկների ճղճան ձայները։

— Արտակարդ համա՞ր, արտակարդ համա՞ր։ Զիկագոյի հրդեհի մանրամասնովթյուննե՞րը։

— Արտակարդ համա՞ր, արտակարդ համա՞ր։ Զիկագոյն բոցերի մե՞ջ է։ Արտակարդ համա՞ր։

Երկարածիգ, շարագուշակ, սրտակեղեք ճիշեր։ Այդ թախծալի երեկոյան մթնշաղին, երբ քաղաքն ասես կիրակնօրյա հայեցողական-աղոթքային տրամադրության մեջ էր, իսկ օդից ու ծառերի սաղարթներից արդեն զգացվում էր ամուսն հոգեվարքը, դրանք ստիպում էին սրտերին սեղմվել՝ պատուհասի մուայլ նախազգացումից։

— Է՛յ, ա՛յ տղա, — ունկնդիրելով ճիշերին՝ կանչեց Քառւիերվուդը մի փոքրիկ գջլոտի, որ դուրս պրծավ անկյունից՝

թերթերի կապոցը թե տակ: — Ի՞նչ է եղել: Զիկագոն վառ-
վո՞ւմ է:

Բազմանշանակ հայացք փոխանակելով հոր և մյուս
ուղեկիցների հետ՝ նա ձեռքը պարզեց թերթին և վերնագրերն
աշքի անցկացնելուց հետո՝ վայրկենապես գնահատեց աղետի
շափերը:

«ԶԻԿԱԳՈՆ ԲՈՑԵՐԻ ՄԵՋ»

«Երեկ երեկոյից բոցը անզուսպ մոլենում է քաղաքի առևտրական
մասում: Բանկերը, հասարակական շենքերը մոխիր են դարձել: Այ-
սօր ցերեկվա ժամը երեքից հետո խզված է հեռագրական ուղիղ
կապը: Ո՞ւ մի հույս, որ աղետը շուտով կվերջանա»:

— Ըստ երեսութին վիճակը լուրջ է, — հանգիստ ասաց
Քառուփերվուղը՝ դառնալով իր ուղեկիցներին. Նրա աշքերի ու
ձայնի մեջ մի սառն ու տիրական բան նկատվեց:

Քիչ անց հորը շշնչաց.

— Խուճապ է սպասնամ, եթե իհարկե բանկերն ու բոր-
սայական գրասենյակները միասնարար շփործեն:

Շտապ, որոշակի ու հստակ վերստեղծեց նա իր սեփա-
կան պարագերի պատկերը: Հոր բանկում գրավ են գրված իր
քաղաքային երկաթգծերի բաժնետոմսերը հարյուր հազար
դոլլարի, դրանց դիմաց վերցված է վաթսուն տոկոս, իսկ
քաղաքային փոխառության սերտիֆիկատների դիմաց, որոն-
ցից ուներ հիսուն հազար դոլլարի, յոթանասուն տոկոս:
Քրոսայական մեքենայություններ անելու համար ծեր Քառ-
փերվուղը տվել էր նրան ավելի քան քառասուն հազար
դոլլար կանխիկ դրամ: «Դրեքսել և Ծնկ.» բանկիրային
տունը, ըստ Ֆրենկի մատյանների, հարյուր հազար դոլլար
պարտը էր տվել իրեն. նրանք իհարկե կպահանջեն անմի-
ջապես վերադարձնել պարտը, եթե գթասիրության հան-
կարծական նոպա չհամակի նրանց, որ այնքան էլ հավանա-
կան չէ: «Ձեզ Կութք» ընկերությունը նույնպես հարյուր հիսուն
հազարի վարկ էր բացել իրեն: Սրանք էլ անկասկած կպահան-
ջեն վճարել: Չորս ավելի փոքր բանկերից և երեք բորսայա-

կան գրասենյակից հիսուն հազարական դոլլար պարտք էր վերցրել, Քաղաքային գանձապետը իր գործերին մասնակցում էր մոտ հինգ հարյուր հազար դոլլարով, և եթե դա հայտնաբերվի, սկանդալն անխուսափելի է. նահանգի գանձապետը նույնպես երկու հարյուր հազար էր մուծել իր գրասենյակը: Այնուհետև կային հարյուրավոր մանր հաշիվներ՝ հարյուր դոլլարից մինչև հինգ և տասը հազար: Թորսայի խուճապը առաջ կրերի ոչ միայն ավանդների վերադարձում, և պարտքերը մարելու անհրաժեշտություն, այլև կհարվածի արժեթղթերի կուրսին: Ինչպես ինքը իրացնի իր արժեթղթերը: Այս է խնդիրը: Ինչպես հնար գտնի ծախելու դրանք շատ կետերով կուրսից պակաս, որովհետև այլ կերպ դա կլափի իր ամբողջ կարողությունը, և ինքը անխուսափելիորեն քարուքանդ կլինի:

Նա մտքում արագ ծանր ու թեթև էր անում ամեն ինչ, որ սպառնում էր իրեն ստեղծված գրությունը, երբ հրաժեշտ էր տալիս բարեկամներին, ովքեր ցրվում էին տները՝ նույնպես իրենց առաջ ծագելիք դժվարությունների մասին մոայլ խորհրդածություններ անելով:

— Գնա տուն, հա՛յր, իսկ ես պետք է մի քանի հեռագիր տամ (այն ժամանակ դեռ հեռախոսը չէր հնարված): Ծուտով կվերադառնամ, և միասին կքննարկենք գրությունը: Վիճակը վատ է: Մինչև մեր գրույցը ոչ ոքի ոչինչ մի՛ ասա: Անհրաժեշտ է գործողության պլան մշակել:

Սեր Քաղաքական արդեն շփոթված ու տագնապահար՝ իր այտմորուքներն էր քաշքում: Նա լարված մտածում էր, թե ինչ կլինի իրեն, եթե որդին սնանկանա, քանի որ մինչև ականջները թաղվել էր նրա գործերի մեջ: Սերունու դեմքը սարսափից գորշացել էր, որովհետև ընդառաջելով որդու ցանկություններին՝ թույլատրված սահմանից շատ էր առաջ գնացել: Եթե Ֆրենկը ի վիճակի չինի, բանկի առաջին իսկ պահանջին, հենց հաջորդ օրն էլ մարել վերցրած հարյուր հիսուն հազար դոլլարը, ապա ամբողջ պատասխանատվությունը, ամբողջ խայտառակությունը կընկնի հոր վրա:

Ֆրենկն էլ իր կողմից էր լարված մտածում իրադրության

մասին; որը ավելի էր բարդանում քաղաքի գանձապետի հետ ունեցած իր կապով և այն բանով, որ ինքը միայնակ իհարկե շպիտի կարողանա բորսայում պահել աժեթյթերի կուրսը: Նրանք, ովքեր կարող էին փրկել իրեն, նույնպես ծանր կացության մեջ էին: Հանգամանքները դասավորվել էին խիստ աննպաստ: «Դրեքսել» ընկերությունը վերջերս ուռեցնում էր երկաթուղային բաժնետոմսերի կուրսը և դրանց դիմաց խոշոր փոխառություններ էր անում: «Զեյ Կուք» ընկերությունը ֆինանսավորում էր Հյուսիսային Խաղաղ օվկիանոսյան երկաթուղուն՝ ամեն կերպ ջանալով թույլ շտալ, որ ուրիշներ ևս մասնակցեն այդ վիթխարի միջցամաքային գծի շինարարությանը: Հասկանալի է, որ նրանք էլ հիմա ընկել են խիստ փափուկ դրության մեջ: Առաջին խսկ տագնապալի լուրն առնելուն պես կշտապեն ծախել ամենից ավելի հուսալի արժեթղթերը՝ կառավարական պարտատոմսերը և այլ այդպիսի թղթերը, միայն թե փրկեն իրենց սեփականները, որոնցով կարելի է սովորույցիա անել: «Արցերն» անմիջապես վաստակի հուս կառնեն և առանց խղճի խայթի կըսկսեն ամեն ինչի գինը կոտրել: Խսկ ինքը չի համարձակվի հետևել դրանց օրինակին: Այնտեղ կարելի է շատ շուտ անհաջողության մատնվել, խսկ իր համար ամենակարևորը ժամանակ շահելն է: Օ՛, եթե ինքը ժամանակ ունենար՝ երեք օր, մի շաբաթ, տասը օր, ապա մրրիկն անկասկած կշրջանցեր իրեն:

Ամենից ավելի նրան անհանգստացնում էր այն կես միինը, որ Սթիները ներդրել էր իր ձեռնարկության մեջ: Մոտենում էին աշնան ընտրությունները: Երրորդ անգամ դրված էր Սթիների թևնածությունը, թեև արդեն երկու ժամանակաշրջանով նա եղել էր իր պաշտոնում: Քաղաքի գանձարանում հայտնաբերված շարաշահումները խիստ լուրջ հետևանքների կհասցնեին: Սթիների պաշտոնեական կարիերան կվերջանար, ինքն էլ ամենից շուտ կնստեր մեղադրյալի աթոռին: Խսկ հանրապետական կուսակցության համար դա նշանակում էր տապալվել ընտրություններում: Ինքը՝ Քառութերվուղն էլ չի կարողանա, մի կողմ քաշված մնալ: շափոց շատ էր խրվել այդ գործի մեջ: Եթե ամպրոպը պայման

ինքը պարտավորված կլինի պատասախան տալ հանրապետական կուսակցության պարագումներին։ Ուժեղ ճնշման դեպքում ինքն անխուսափելիորեն կսնանկանա, իսկ այն ժամանակ լույս աշխարհ կգա ոչ միայն այն, որ ինքը փորձում էր ձեռքը դնել քաղաքային երկաթուղիների՝ «արգելավայրերի» վրա, որ քաղաքական գործարարները խնամքով պահում էին իրենց համար, այլև այն, որ նա այդ անում էր քաղաքային գանձարանից կատարած ապօրինի փոխառությունների միջոցով, որի պատճառով էլ իրենք հիմա ընտրություններում տապալվելու սպառնալիքի տակ են։ Նրանք մատների արանքից չեն ուզենա նայել այդպիսի գործերին։ Իրեն չեն օգնի այն հավաստիացումները, թե ինքը տարեկան երկու տոկոս է վճարել այդ գումարների համար (գգուշությունից դրդված՝ նա պայմանագրերի մեծ մասի մեջ մտցրել էր այդ կետը) և կամ ինքը գործել է լոկ որպես Սթիների գործուկալ։ Անիրազեկ մարդիկ դեռ կարող էին հավատալ։ Դրան, սակայն փորձված քաղաքագետներին այդպես հեշտ չես խարի։ Դրանից ավելի բարդ բաներ են տեսել նրանք։

Մի հանգամանք միայն չէր թողնում, որ Քառուփերվուդը վերջնականապես հուսալքվի։ Նա շատ լավ էր իմանում, թե ինչպես են գործում Ֆիլադելֆիայի քաղաքական գործիչները։ Նրանցից ամեն մեկը, ինչ բարձր դիրք էլ գրավի, այդ ճգնաժամային բոպեներին մի կողմ կդնի իր ամբարտավանությունը, որովհետև բոլորն էլ՝ մեծից փոքր, օգուտ են քաղում քաղաքի տված թույլատրություններից։ Բաթլերը, Մոլենհաուսերը և Սիմֆոնը (Քառուփերվուդն այդ գիտեր) վաստակում էին կապալներից, որոնք կարծես միանգամայն օրինական էին, սակայն բաշխվում էին միայն «յուրայինների» միջև, և այն հսկայական գումարներից, որ քաղաքը գանձում էր որպես հարկ՝ հողային, ջրային և այլն, և պահ դնում այն բանկերում, որ հանձնարարում էր այդ եռյակը և մի քանի այլ անձինք։ Այնպես էր համարվում, որ բանկերը ծառայություն են մատուցում քաղաքին՝ նրա փողերը պահելով իրենց անկեղ դրամարկղերում։ ուստի և դրանք տոկոս չէին վճարում այդ ավանդների համար, բայց շրջանառության

մեջ էին դնում, հարց է ծագում, հօգուտ ո՞ւմ: Քառուփերվուդրությունը մի հիմք չուներ դժգոհելու շարաբաստիկ եռյակից. սրանք բնավ էլ վատ չէին վերաբերում իրեն, բայց ինչո՞ւ այդ մարդիկ կարծում են, թե քաղաքի բոլոր եկամուտների օգտագործման մենաշնորհը իրենց է տրված: Նա անձամբ ո՛չ Մոլեն-Հառուերին էր ճանաշում, ո՛չ էլ Սիմֆոնին. բայց գիտեր, որ նրանք, ինչպես և Բաթլերը, վատ չէին շահում քաղաքային փոխառություն թողարկելու առթիվ իր կատարած մեքենայություններից: Բաթլերը դարձալ շատ լավ էր տրամադրված նրա հանդեպ: Բացառված չէ, որ եթե ամեն ինչ վատ ընթացք ստանա, և ինքը՝ Քառուփերվուդը իր քարտերը բաց անի նրա առաջ, ապա սա հաշվի առնելով խիստ լարված վիճակը՝ օգնության հասնի իրեն: Նա արդեն մտովի որոշեց այդպես էլ անել, եթե շհազողվի դուրս պրծնել առանց հայտնի դարձելու, միմիայն Սթիների օգնությամբ:

Բայց ամենից առաջ, մտածում էր նա, գործողությունների պլան մշակելով, պետք է զնալ Սթիների տունը և լրացուցիչ փոխառության պահանջել նրանից՝ Արեք-շորս հարյուր հազար դոլարի: Սթիները, որ միշտ լի աշխի լի բնիկում զիջող լինելով, տվյալ դիպրում իշարիկ կհասկանա, թե որքան կարևոր է, որ իր զանձարանից պահասող կես միլիոնը հանրահայտ շդանակ: Այնուհետև անհրաժեշտ է էլի փող ճարել, որքան կարելի է շատ: Բայց որտեղի՞ց: Հարկ կլինի բանակցություններ սկսել բանկերի ու բաժնետիրական ընկերությունների դիրեկտորների, խոշոր բորսայականների հետ և այլն: Գալով այն հարյուր հազար դոլարին, որ պարտք էր Բաթլերին, ապա ծեր կապալառուն թերևս համաձայնի հետաձգել այդ գումարի վերադարձնելը:

Քառուփերվուդը շտապեց տուն, դեռ շեմքից հրամայեց լծել կառքը ու մեկնեց Սթիների մոտ:

Ի մեծագույն կսկիծ նրա պարզվեց, որ Սթիները քաղաքում չէ, մի քանի բարեկամների հետ մեկնել է Զիվաւլիկ ծովախորշը բադ սպանելու ու ձուկ որսալու, և նրան սպասում են մի քանի օր հետո միայն: Խսկ հիմա նա ման է գալիս ճահիճներում՝ մի փոքրիկ քաղաքի շրջակայքում: Քառուփերը

վուղը շտապ հեռադիր ուղարկեց այդ քաղաքին՝ ամենամուտիկ հեռագրատունը և ավելի վստահ լինելու համար հեռագրեց նույն շրջանի մի քանի այլ վայրեր՝ խնդրելով Սթիներին անհապաղ վերադառնալ։ Չնայած այդ ամենին՝ նա բնավէլ վստահ չէր, որ Սթիները կկարողանա ժամանակին գալ, և վարանած մնացել էր, թե ինչ պետք է անի հիմա։ Օգնություն էր պետք նրան, անհետաձգելի օգնություն ինչ աղբյուրից էլ լինի։

Հանկարծ հուսադրիլ մի միտք ծագեց նրա զլխում։ Բաթլերը, Մոլենհաուերը և Սիմփսոնը քաղաքային երկաթգծերի խոշորագույն բաժնետերերն են։ Նրանք պետք է միանան, որպեսզի շուկայում գները բարձրացնեն և դրանով էլ պաշտպանեն իրենց շահերը։ Նրանք կարող են բանակցել խոշոր բանկերի հետ, ինչպես «Դրեքսել և Ընկ.», «Կուք» և այլն, ու պնդել, որ սրանք նեցուկ հանդիսանան շուկային։ Նրանք կարող են ազդել իրավիճակի վրա՝ գնորդների միավորում կազմակերպելով. այդպիսի աջակցության դեպքում ինքը կկարողանա ծախել իր արժեթղթերը այնպիսի մի գումարի, որը հնարավորություն կտա իրեն դուրս պրֆենել, ավելին կարող է պատահել, որ ինքը խաղա իշեցնելու միտումով ու բավականին վաստակ անի։ Փայլուն միտք էր դա՝ արժանի լավագույն կիրառման, իսկ դրա միակ թույլ կետը այն էր, որ նա լիովին հավատացած չէր, թե դա կիրականանա։

Նա որոշեց անմիջապես գնալ Բաթլերի մոտ՝ մզկտալով միայն նրա համար, որ ստիպված լիինի բացել իր և Սթիների քարտերը։ Բայց ճա՞րն ինչ։ Քառուիերվուդը նստեց կառք ու ալացավ Բաթլերի մոտ։

Երբ Քառուիերվուդը եկավ, ծեր կապալառուն ճաշի սեղան չէր նստած։ Նա չէր լսել, թե ինչպես լրագրավաճառները գոռում էին արտակարգ համարներ, և դեռ ոչինչ չէր իմանում Զիկագոյի հսկայական հրդեհի մասին։

Երբ ծառան հայտնեց Քառուիերվուդի գալը, Բաթլերը վեր կացավ և սիրալիր ժպտալով՝ գնաց նրան ընդառաջ։

— Հրամեցեք, նստեցեք։ Ի՞նչ կկամենաք՝ թե՞յ, թե՝ սուրճ։

— Շնորհակալ եմ, — պատասխանեց Քառուփերվուղբ: — Այսօր շատ եմ շտապում: Մի քանի րոպէ ձեզ հնա խոսելիք ունեմ, հետո ուրիշ տեղ պետք է գնամ: Ձեզ երկար չեմ զբաղեցնի:

— Ի՞նչ արած, քանի որ այդպես է, հիմա ձեր տրամադրության տակ կլինեմ:

Եվ Բաթլերը վերադարձավ սեղանատուն՝ հանելու անձեռոցիկը, որ խրել էր օծիքի տակ: Էյլինը, որ նույնպես սեղան էր նստած, ճանաչեց Քառուփերվուղի ձայնը և ականջները սրեց: Ինչպես տեսներ նրան: Ի՞նչն էր նրան բերել հոր մոտ այդքան ուշ ժամանակ: Նրա համար անհարմար էր խսկույն վեր կենալ սեղանից, բայց հույս ուներ, որ Քառուփերվուղի գնալուց առաջ կկարողանա մի երկու խոսք փոխանակել նրա հետ: Քառուփերվուղը նրա մասին էր մտածում նույնիսկ հիմա, երբ նրա գլխին ուր որ է կարող էր փոթորիկ պայթել, ինչպես որ մտածում էր իր կնոջ և ուրիշ շատ բաների մասին: Եթե ինքը կործանումից շխուսափի, ծանր վիճակի կմատնվեն լուսարի, սվրիր կապված են իր հետ: Նա չէր կարող ասել, թե ինչ ձև կտանա այդ ամենը. չէ՞ որ ամպերը դեռ ծածկել են հորիվոնը: Քառուփերվուղը կրկին ու կրկին լարված մտածում էր գրության մասին, շարունակելով պահպանել հոգու կատարյալ արիություն: Անայլայլ էին մնացել նաև նրա դասական կանոնավոր դիմագծերը, և միայն աչքերն էին սովորականից ավելի վառ շողում սաղը, պողպատե փայլով:

— Ահա և ես ձեր տրամադրության տակ եմ, — ասաց Բաթլերը վերադառնալով: Նրա դեմքը արտահայտում էր լրիվ գոհունակություն կյանքից, իր ճանաշած կյանքից: — Ի՞նչ է պատահել ձեզ: Հուսով եմ ոչ մի լուրջ բան չի եղել: Շատ է լավ այսօրվա օրը:

— Ես ինքս էլ հուսով եմ, որ առանձնապես ոչ մի լուրջ բան չի եղել, — պատասխանեց Քառուփերվուղը: — Բայց և այնպես անհարաժեշտ է, որ խոսեմ ձեզ հետ: Ավելի լավ չէ արդյոք բարձրանանք ձեր առանձնասենյակը

— Ես էլ հենց այդ էի ուզում առաջարկել, — վրա բերեց թաթլերը: — Ի դեպ, իմ սիգարն էլ վերեռում է:

Նրանք շարժվեցին դեպի սանդուղքը՝ առջկից թաթլերը. երբ ծեր կապալառուն սկսեց վեր բարձրանալ, ճաշասենյակից մետաքսե զգեստի շրջուն առաջացնելով դուրս եկավ էլլինց: Նրա փառահեղ վարսերը՝ ճակատից ու ծոծրակից վեր սանրած, գալարահյուսվել էին գագաթի վրա ու կազմել կարմրավուն մի զարմանալի թագ: Նրա դեմքը վառվում էր, իսկ մերկ թևերն ու ուսերը դուրս գալով մուգ կարմիր զգեստից՝ շլաշուցիչ սպիտակ էին թվում: Նա անմիջապես մի անախորժքան զգաց:

— Ա՛, միստր Քառուփերվուդ, ինչպե՞ս եք, — բացականշեց նա՝ ձեռքը սպարզելով, երբ նրա հայրը շարունակուած էր սանդուղքը բարձրանալ:

Նա աշխատում էր կասեցնել Ֆրենկին մի քանի խոսք փոխանակելու համար, իսկ դիմելու համարձակ-անփուցիթ ձեր շրջապատի մարդկանց համար էր:

— Ի՞նչ է պատահել, սիրելի՛ս, — շշնչաց նա, երբ հայրն արդեն վերեկի հարթակում էր: — Մտահոգ տեսք ունես:

— Հուսով եմ՝ ոչ մի սարսափելի բան, աղջի՛կս, — պատասխանեց նա: — Զիկագոն վառվում է, և վազը այստեղ անպատճելի իրարանցում կառաջանա: Ես պետք է խոսեմ հայրիկիդ հետ:

Էլլինը կարողացավ միայն արտաքիրել մի կարեկցական ու վախեցած «0», բայց Քառուփերվուդը ազատելով ձեռքը՝ հետեւց նրա հորը: Մի անգամ ևս սեղմելով նրա բազուկը՝ էլլինը գնաց հյուրասենյակ, ուր նա նստեց ու խորասուզվեց մտածմունքների մեջ, որովհետեւ դեռ երբեք չէր տեսել Ֆրենկի դեմքին այդպիսի կենտրոնացած, խիստ արտահայտություն: Անխոռվ մի դեմք, ասես մոմածուլ, և մոմի պես էլ սառը, իսկ աշքերը խոր, թափանցող, անհասանելի... Զիկագոն վառվո՞ւմ է: Ի՞նչ կապ ունի դա նրա հետ, ի՞նչ գործ ունի այդտեղ Ֆրենկը: Սա երբեք էլլինին իրազեկ չէր դարձրել իր գործերին, և գեռատի աղջիկը դրանք կհասկանար ոչ ավելի, քան միսիս Քառուփերվուդը: Բայց և այնպես տագնապը համակեց

նրան. չէ՞ որ այդ ամենը երեխ վերաբերում էր Ֆրենկին, որի հետ կապված էր ինքը և, ինչպես նա էր կարծում, անքակտելի կապերով:

Գրականությունը, եթե շխոսենք դասականների մասին, միայն մի տիպի սիրուհու պատկերացում է տալիս մեզ՝ խորամանկ ու հաշվենկատ գայթակղիչ կնոջ, որի գլխավոր վայելքը տղամարդկանց իր ցանցը նետելն է։ Բարոյականության հարցերին վերաբերվող ժամանակակից բրոշյուրները հեղինակներն ու լրագրողները արտասովոր եռանդով պաշտպանում են նույն մեկնությունը։ Կարելի է կարծել, թե ասաված գրաքննություն է հաստատել կյանքի վրա, ծայրահեղ պահպանողականներին էլ նշանակել է գրաքննիչ։ Մինչդեռ կան սիրային կապեր, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն սառը հաշվենկատության հետ։ Կանանց մեծ մասամբ խորթ են խորամանկությունն ու խաբեությունը։ Միշակ կինը, որ ենթարկվում է զդացմունքի ձայնին և սիրում է խորապես, ձշմարտապես, բնդունակ չէ։ Նկնդության, ինչպես փոքր երեխան, նա միշտ պատրաստ է զոհարերել իրեն և զանում է ըստ հասրավութիւն շատ տար։ Արքան ահաւմ է, սերը, նա այդպիս է, անուամ է։ Զգացմունքը կարող է փոխվել, և այնժամ «զմուխրի իսկ չի տեսել այդպիսի ցասում», բայց և այնպես սիրուհիները մեծ մասամբ աշքի են ընկնում զոհաբերությամբ, անբաժան կերպով սիրեկանին տրվելու պատրաստակամությամբ և քնքուշ հոգատարությամբ։ Այդպիսի հարաբերությունը, որ հակադրված են օրինական ամուսնության ափակությանը, վերջինիս ամրոցներին ամենից ավելի ավերածություն են պատճառել։ Մարդը, այր թե կին, չի կարող շխոնարհվել, չակնածել անշահախնդրության ու ինքնազոհության այդպիսի դրսերումներից։ Դրանք հավասար են կյանքի վեհ կոշումներին, ազգակից են արվեստի գագաթներին, այսինքն ոգու վսեմությանը, որով է ամենից առաջ տարբերվում սքանչելի նկարը, գեղեցիկ շենքը, գեղեցիկ արձանն ու մանրամասն՝ այն վսեմությանը, որը և շռայլորեն, անսահմանափակ կերպով իրեն պարգևելու, իր գեղեցկու-

թյունը ճառագայթելու ընդունակությունն է։ Սրանից էլ բխում էր ելլինի համար անսովոր հոգեվիճակը։

Բաթլերի ետևից վեր բարձրանալով՝ Քառուփերվուղը նորից ու նորից էր մտքում թվում ստեղծված դրության բոլոր մանրամասնությունները։

— Նստեցեք, խնդրեմ, որևէ բան շխմե՞նք։ Ա՞-ա, դուք խմող չեք. Հիշում եմ, Հիշո՞ւմ։ Լավ, գոնե մի սիդար վերցրեք։ Դե ասացեք, ինչի՞ց է այսօր փշացել ձեր տրամադրությունը։

Ավելի խիտ բնակչություն ունեցող թաղամասերի կողմից լուսամուտ էին մտնում տարտամ կանչեր։ «Արտակա՞րգ համար, արտակա՞րգ համար։ Զիկագոյի հրդեհի մանրամասնություննե՞րը։ Ամբո՞ղջ քաղաքը բոցերի մեջ է»։

— Ահա թե ինչն է տրամադրությունս փշացրել, — ունկընդուելով այդ կանչերին՝ պատասխանեց Քառուփերվուղը։ — Հուրը լսե՞լ եք։

— Ոչ։ Այդ ի՞նչ են գոռում լրագրավաճառները։

— Հսկայական հրդեհ է ծագել Զիկագոյում։

— Ա՞-ա... — գոշեց Բաթլերը՝ դեռ շկարողանալով պարզել այդ դեպքի նշանակությունը։

— Քաղաքի ամբողջ գործարարական մասը վառվում է, միստր Բաթլեր, — մոայլ շարունակեց Քառուփերվուղը, — և ոչ ուշ, քանի վաղը, մեղ մոտ՝ այստեղ, ֆինանսական ցնցումներ կատարանան։ Ահա այդ մասին էլ եկել եմ խոսելու ձեզ հետո։ Ինչպես են ձեր կապիտալ ներդրումների գործերը։ Հիմնովի՞ն եք «նստել»։

Քառուփերվուղի դեմքի արտահայտությունից Բաթլերը հանկարծ հասկացավ, որ աղետալի բան է տեղի ունենում։ Ետ նետվելով կաշեպատ լայն բազկաթոռի թիկնակին՝ նա բարձրացրեց խոշոր ձեռքը և ծածկեց բերանն ու կզակը։ Մատների հաստ հոգերից վեր, լայն ու կրծիկակերպ քթից վեր, թափ հոնքերի տակ փայլփլում էին նրա խոշոր աշքերը։ Կարճ խուզած սպիտակ մազերը ծածկել էին գլուխը հավասար ու կարծր ստեփի նման։

— Ահա՝ թե ինչ, — ասաց նա։ — Դուք կարծում եք, թե

վաղը փոթորիկ կպայթի այստեղ: Խսկ ինչպես են ձեր սե-
փական գործերը:

— Եմ գործերը կարող են քիչ թե շատ մնալ կարգին,
եթե միայն մեր ֆինանսական մեծամեծները խումապի
շմատնվեն: Վաղը, նույնիսկ այսօր, բոլորիս էլ պետք կլինի
մեծ ողջամտություն ունենալ: Զէ՞ որ մենք գտնվում ենք իս-
կական բորսայական խումապի նախօրեին: Դուք պետք է
նայեք ճշմարտության աշքերին, մի՛ստր Բաթլեր: Այդ խու-
մապը երկար չի տեի, բայց կարճ ժամանակամիջոցում էլ
կարող են բավականաշափ դժբախտություններ պատահել:
Վաղը, բորսան բացվելու առաջին րոպեից, արժեթղթերը
վայր կալանան տասից տասնհինգ կետով: Բանկերը կակսեն
իրենց փոխառավությունները պահանջել, և նախնական պայ-
մանավորվածությունը միայն կարող է ետ պահել նրանց
այդպիսի քայլից: Սակայն ո՛չ մի մարդ ի վիճակի չէ ազգել
նրանց վրա սեփական ուժով: Այստեղ անհրաժեշտ են մի
խումբ մարդկանց համատեղ ջանքերը: Դուք միստր Սիմփ-
ոնի և միստր Մոլինհաուերի հետ կարող եք համեմ դրան՝
բանկերի զեկուարաններին արամարդկանով, որ կազմակերպվեն
ու նեցուկ դասնան շուկային: Քաղաքային բոլոր երկաթու-
ղիների զիմ հարձակում է սկսվելու: Եթե կուրսը շպահեն,
դրանց բաժնետոմսերի գինը ազետալի կերպով կընկնի: Ես
գիտեմ, որ դուք խոշոր ներդրումներ ունեք այդ ուղիների մեջ:
Հետեւաբար և մտածեցի, թե թերևս դուք, Մոլենհաուերը և
մի քանի ուրիշներ կցանկանաք ձեռք առնել ձեր միջոցները:
Եթե դուք այդ շանեք, շեմ թաքցնում, իմ բանն էլ դժվար
կլինի: Ես այնքան ուժեղ չեմ, որ միայնակ դիմագրավեմ:

Նա գլուխ էր ջարդում՝ որոշելու, թե ինչպես հայտնի
Բաթլերին Սթիների վերաբերյալ ամբողջ ճշմարտությունը:

— Հը՞մ, լավ բան չի ստացվում, — մտածկոտ նկատեց
ծերունին:

Նա իր գործերի մասին էր մտածում: Խումապը, իհարկէ,
իրեն էլ օգուտ չէր տա, բայց գրությունը այնքան էլ վատ
չէր: Սնանկությունից վախենալու տեղիք չուներ նա: Իհարկե
կարող է որոշ վնաս կրել, ոչ այնքան սարսափելի, նախքան

կեարողանա կարգի բերել իր գործերը: Իսկ նա չէր ցանկաւ նում ոչ մի բան կորցնել:

— Իսկ ինչպե՞ս դուք ընկաք այդպիսի դժվարին կացության մեջ,— հետաքրքրվեց Բաթլերը: Նա ուզում էր իմանալ, թե ինչու Քառուփերվուղը այդպես սարսափում էր քաղաքային երկաթուղային ընկերությունների կործանումից:— Մի՞թե գուք ներդրումներ եք կատարել այդ ձեռնարկությունների մեջ:

Քառափերվուղի առաջ հառնեց մի հարց՝ ստե՞լ, թի՞ ձշմարտությունն ասել, ո՞չ, ստելը խիստ վտանգավոր կլիներ: Եթե ինքը չկարողանա ապահովել Բաթլերի կարեկցանքն ու սատարը, կարող է սնանկանալ, և այն ժամանակ մեկ է՝ ձշմարտությունը երևան կգա:

— Ես ձեզնից ոչինչ չեմ թաքցնի, մի՛ստր Բաթլեր, — ասաց նա՝ ապավինելով ծերունու բարյացակամ վերաբերմունքին և նայելով նրան համարձակ ու վստահ հայացքով, որն այնքան հավանում էր Բաթլերը:

Սա երբեմն Քառուփերվուղով պարծենում էր ոչ պակաս, քան իր որդիներով: Բացի դրանից, զգում էր, որ երիտասարդ բանկիրը այդքան նկատելիորեն առաջադիմել էր հենց իր՝ Բաթլերի շնորհիվ:

— Չեղ պետք է ասեմ, որ վերջին ժամանակներս առնում էի քաղաքային երկաթուղիների բաժնետոմսեր, ճիշտ է, ոչ միայն ինձ համար: Գուցե և պիտօք չէ որ հայտնեի ձեզ այն, ինչ հիմա կհայտնեմ, բայց եթե այլ կերպ վարվեմ, վնաս կպատճառեմ ձեզ էլ, ուրիշ շատ անձանց էլ, որոնց կուզենայի զերծ պահել դրանից: Ինձ անշուշտ հայտնի է, որ գուք շահագրգոված եք գալիք աշնան ընտրությունների ելքով: Եվ չեմ ուզում ձեզնից թաքցնել, որ շատ բաժնետոմսեր եմ գնել Սթիների և նրա բարեկամներից ոմանց համար: Չեմ ասի, թե այդ գնումների համար անհրաժեշտ միջոցները միշտ էլ վերցվել են քաղաքային գանձարանից, բայց մեծ մասսամբ դա երեի այդպես էր: Ես հասկանում եմ, որ իմ սնանկացումը կարող է անդրադառնալ նաև Սթիների վրա, հանրապետական կուսակցության վրա, ձեր շահերի վրա:

Միստր Սթիներն, իհարկե, միայնակ չի մտմտացել ու հասել այդպիսի կոմբինացիայի, և այստեղ ես արժանի եմ ոչ պակաս կշտամբանքի, քան մյուսները. բայց այդ ամենը ինքնըստինքյան բխել է այլ գործերից: Ինչպես ձեզ հայտնի է, ես, Սթիների առաջարկությամբ, իրացրի քաղաքային փոխառության թողարկումը, և այդ գործառնությունից հետո նրա բարեկամներից մեկը առաջարկեց ինձ իրենց միջոցները ներդնել քաղաքային երկաթուղիների մեջ: Այդ օրվանից ես շեմ դադարել գործեր անել նրանց համար: Ես անձամբ Սթիներից մեծ գումարներ եմ վերցրել տարեկան երկու տոկոսի հաշվով: Ավելին ասեմ՝ սկզբում բոլոր գործարքները ծածկվում էին հենց այդ ձևով, և ես բնավ շեմ ուզում ամբողջ հանցանքը գցել ուրիշների վրա: Պատասխանատվությունն ընկնում է ինձ վրա, և ես պատրաստ եմ կրել այն. բայց եթե ես կործանվեմ, Սթիների անունը կարատավորվի, և դա աղետալի կանգրադառնա ամբողջ քաղաքային ինքնավարության վրա: Ես, տնչուղարք, շեմ ուզում մնանկանալ, դրա համար ոչ մի հիմք էլ չկա: Եթե խուճապի սպասնալիք չփնի, ես կասեի, որ իմ գործերը երրեք այսքան լույլ չեն եղիլ: Սակայն ես ի վիճակի շնորհ լինի վիմանալ փոխրկին, Եթե օգնություն շստանամ, և ուղում եմ իմանալ՝ կմատուցեք դուք դա ինձ: Եթե դուքս պրինցեմ, ապա խոսք եմ տալիս ձեզ ամեն միշոց ձեռք առնել շուտափույթ կերպով դրամը քաղաքային գանձարանին վերադարձնելու համար: Ափսո՞ս, որ միստր Սթիները հիմա քաղաքում չէ, ապա թե ոչ նրան ձեզ մոտ կբերեի, որպեսզի հաստատեր իմ խոսքերը:

Քառուփերվուգը ստում էր ամենաանամոթ կերպով, երբ խոսում էր Սթիներին իր հետ բերելու մասին. դրամը քաղաքային գանձարանին վերադարձնելու նույնպես մտադրություն չուներ, եթե ոչ մաս-մաս և իրեն հարմար ժամկետներին: Բայց այդ ամենը հնչում էր ազնվորեն ու համոզիչ:

— Ի՞նչ գումար է ներդրել Սթիները ձեր ձեռնարկության մեջ, — հարցրեց Բաթլերը: Նա մի քիչ շշմած էր գործերի այդքան անսպասելի ընթացքից: Այդ ամբողջ պատմությունը

Քառուփերվուղին և Սթիներին ցուցադրում էր նրանց համար խիստ աննպաստ լույսի տակ:

— Մոտ հինգ հարյուր հազար դոլլար, — պատասխանեց Քառուփերվուղը:

Ծերունին ուղղվեց բազկաթոռում:

— Մի՞թե այդքան շատ, — դուրս թռավ նրա բերանից:

— Այո, մոտավորապես. գուցե մի քիչ ավելի կամ պակաս. ճիշտ չեմ իմանում:

Ծեր կապալառուն վշտահար ու ծանր ու մեծ արտահայտությամբ լսելով այն ամենը, ինչ հայտնում էր Քառուփերվուղը, միաժամանակ՝ մտածում էր, թե այդ բոլորը ինչպես կանգրադառնա հանրապետական կուսակցության շահերի և քաղաքային ինքնավարության հետ կնքած իր սեփական պայմանագրերի վրա: Քառուփերվուղը համակրանք էր ներշնչում նրան, բայց այն գործը, որի մասին պատմեց, կասկածելի և խիստ անազնիվ էր թվում նրան: Բաթլերը դանդաղկոտ ու ծանրամիտ մարդ էր, բայց երբ սկսում էր մտածել որևէ հարցի մասին, ապա մտածում էր մինչև վերջը: Նա զգալի գումարներ էր ներդրել Ֆիլադելֆիայի քաղաքային երկաթուղիների մեջ՝ առնվազն ութ հարյուր հազար դոլլար: Մոլենհառուղը՝ հավանորեն դրանից ավելի: Որքան էր ներդրել այդ գործի մեջ Սիմֆոնոն՝ նա չգիտեր: Սակայն Քառուփերվուղը համանակին ասել էր նրան, որ սենատորն էլ քաղաքային երկաթուղիների բաժնիսամսերի խոշոր ծրարներ ուներ: Նրանք, ինչպես և Քառուփերվուղը, այդ թղթերի մեծ մասը գրավագրել էին տարբեր բանկերում, իսկ դրանց դիմաց ստացած դրամները ներդրել էին այլ ձեռնարկությունների մեջ: Փոխատվությունները մարելու պահանջը ոչ մի լավ բան չէր խոստանում նրանց, բայց այնուամենայնիվ այդ եռապետությունից ոչ մեկի գործերն այսպիսի վատ վիճակում չէին: Նրանք կկարողանան դուրս պրծնել առանց մեծ շարշարանքների, թեև հնարավոր է ոչ առանց վնասի, եթե անմիջապես բոլոր միջոցները ձեռք չառնեն ինքնապաշտպանության համար:

Բաթլերն այդ գործին այդքան նշանակություն չէր տա,

եթե Քառուիերվուղը հայտներ, թե Սթիները ներդրել է մի յոթանասունհինգ կամ հարյուր հազար։ Դա կարելի էր մի կերպ հարթել։ Բայց հինգ հարյուր հաշար...

— Մեծ գումար է,— ասաց Բաթլերը՝ զարմանալով Սթիների արտակարգ համարձակության վրա, բայց գեռ շաղկապելով դա Քառուիերվուղի խորամանկ մեքենայությունների հետ։ — Պետք է մի լավ մտածել-պարզել։ Եթե վաղը խուճապ սկսվի, ոչ մի բռպե չպետք է կորցնենք իսկ մե՞ծ օգուտ կունենաք դուք, եթե մենք նեցուկ դառնանք շուկային։

— Շատ մեծ,— պատասխանեց Քառուիերվուղը, — թեև, իհարկե, ես հարկադրված կլինեմ փող ճարել և այլ միջոցով։ Ի դեպ, ինձ մոտ է ձեր հարյուր հազար դոլլարի ավանդը։ Ի՞նչ եք կարծում մոտ օրերս այդ գումարը պետք կգա՞ ձեղութեամբ։

— Հնարավոր է։

— Բացառված չէ, որ ես էլ այդ դրամին այնքան պետք կունենամ, որ ի վիճակի շեմ լինի անմիջապես վերադարձնել ձեղութեամբ։ Եթե դուք ամուսին լուրջ վիճակի, — նկատեց Քառուիերվուղը։ — Եթե դուք ամուսին լուրջ վիճակի, բայց ամուսինը մեկն է միայն։ Եթե դուք, սենատոր Սիմֆոնոն ու Մոլենհաուերը միանաք, — չէ՞ որ բաժնեառումսերի հիմնական մասը ձեր ձեռքին է, — և ազգեք միստր Դրեքսելի ու միստր Կուքի վրա, կկարողանաք նկատելիորեն հանգստացնել մթնոլորտը։ Ես շատ լավ դուրս կգամ այս դրությունից, եթե ինձանից շպահանջեն պարտքի մարում, իսկ եթե բորսայում կուրսերի մեծ անկում տեղի չունենա, ապա ոչ ոք այդ պարտքը չի պահանջի։ Հակառակ դեպքում իմ բոլոր թղթեղը կարժեքագրկեն, ես էլ շեմ դիմանա։

Մեր Բաթլերը վեր կացավ։

— Գործը լուրջ է, — ասաց նա, — չպետք է կապվեիք Սթիների հետ։ Այս ամենը, ինչպես էլ շուր տաս, բավական անախորժ բան է։ Վատ, շատ վատ պատմություն է, — խստորեն ավելացրեց նա։ — Այնուամենայնիվ ես կանեմ այն ամենը, ինչ հնարավոր է։ Շատ բան շեմ խոստանում, բայց ես միշտ լավ եմ վերաբերվել ձեզ և շեմ ուզում ձախորդու-

թյան մեջ թողնել, եթե, իհարկե, ինձ չստիպեն այդպես անել: Անախորժ է, շա՞տ անախորժ: Եվ մի՛ մոռանաք նաև, որ մեր քաղաքում մենակ ես շեմ լուծում գործերը:

Այս խոսքերն ասելիս Բաթլերը մտածեց, որ Քառվիերվուդն ըստ էության շատ լավ վարվեց, որ ժամանակին նախազգուշացրեց իրեն իր սեփական շահերի և քաղաքապետական ընտրությունների վրա կախված սպառնալիքի մասին, թեև մյուս կողմից էլ նա իրեն էր թոկից ազատում: Այսպես թե այնպես, Բաթլերը որոշեց հնարավոր ամեն ինչ անձլ նրա համար:

— Զի՞ կարելի այնպես անել, որ Սթիների և քաղաքային գանձատան այս պատմությունը մի երկու օր չտարածվի: Մինչև որ ես մի լավ հասու լինեմ կատարվող ամեն ինչին, — գգույշ հարցրեց Քառվիերվուդը:

— Չեմ խոստանում, — պատասխանեց Բաթլերը, — թեև կանեմ այն ամենը, ինչ կախված է ինձնից: Բայց դուք կարող եք հանգիստ լինել: Այդ պատմությունը ավելի հեռու չի գնա, քան այնքան, որքան պետք կլինի ձեր իսկ բարօրության համար:

Հիմա նա արդեն մտածում էր, թե ինչպես իրենք դուրս պրծնեն Սթիների կատարած հանցագործության հետևանքուներից, եթե Քառվիերվուդը այնուամենայնիվ սնանկանա:

— Օուե՛ն, — կանչեց նա՝ դուրը բացելով և սանդուղքի ճաղերից կունալսկ:

— Ի՞նչ է, հա՛յր:

— Հրամայիր Դենին լծի կառքը ու սպասի շքամուտքի մոտ: Դու էլ հագնվիր, որ հետո գաս:

— Լավ, հա՛յր:

Բաթլերը վերադարձավ սենյակ:

— Այսպիսի՝ բան: Ահագին փոթորիկ մի բաժակ ջրի մեջ չէ: Զիկագոյում հրդեհ է, իսկ ես այստեղ՝ Ֆիլադելֆիայում գլխացավանքից շեմ ազատվի: Այս քեզ բան:

Քառվիերվուդն արդեն վեր կացավ և ուղղվեց դեպի դուռը:

— Իսկ դուք ո՞ւր եք գնում:

— Տուն: Այնտեղ հավաքվելու են մի քանի մարդ, որոնց հետ ես պիտի տեսակցեմ: Բայց եթե գուք թույլ տաք, մի անգամ ես կանցնեմ՝ ավելի ուշ:

— Այո, այո, ի՞հարկե, — պատասխանեց Բաթլերը: — Կարծում եմ, որ տասներկուսին անպայման տանը կլինեմ: Դե՛, երթաք բարով: Ասենք, երկի, կրկին տեսնվենք: Ես ձեզ կպատճեմ այն ամենը, ինչ կարողանամ իմանալ:

Նա շգիտես ինչու վերադարձավ իր առանձնասենյակը, և Քառուփերվուղը մենակ իջավ սանդուղքը: Ներքեռում, դռան վարագուցրի մոտ կանգնած էլլինը նշան արեց, որ մոտենա իրեն:

— Հուսով եմ ոչ մի սարսափելի բան չի պատահել, թանկագի՞նս, — տագնապահար հարցրեց նա՝ նայելով Ֆրենկի այդ օրը մի տեսակ լուրջ-հանդիսավոր աշքերին:

Այժմ սիրային գեղգեղանքի ժամանակ չէր, և Քառուփերվուղը զգում էր դա:

— Ոչ, — համարյա սառը պատասխանեց նա, — պետք է կարծիվ, որ ոչ մի սարսափելի լուն չկա:

— Միայն թե տե՛ս, Ֆրենկի, քո զործերի ողատճառով ինձ երկար շմոռունաս: Չես մոռանա, չէ՞: Այնպե՞ս եմ ես սիրում քեզ:

— Ոչ, ոչ, չեմ մոռանա, — պատասխանեց Ֆրենկը լուրջ ու արագ, թեև շեշտից զգացվում էր, որ մտքերը հեռու են: — Մի՞թե կարող եմ մոռանալ, — և ուզում էր համբուրել նրան, բայց վախեցավ ինչ-որ շրջունից: — Սո՞ւս:

Քառուփերվուղն ուղղվեց դեպի գուռը, և էլլինը ուղեկցեց նրան սիրատոշոր, կարեկցանքով լի հայացքով:

Իսկ եթե իր Ֆրենկին մի փորձանք պատահի՞: Քի՞շ դժբախտություններ կան աշխարհում: Այն ժամանակ ի՞նչ անի ինքը: Ամենից ավելի այս միտքն էր տանջում նրան: Ի՞նչ ձեռնարկի ինքը, ի՞նչ կարող է ձեռնարկել՝ նրան օգնելու համար: Ֆրենկն այսօր այնքան դժգույն, այնքան հոգնած է երևում:

Որպեսզի ճիշտ լուսաբանենք այն դրությունը, որի մեջ ընկավ Քառուփերվուղը, ստիպված ենք մի քանի խոսք ասելու այն հարաբերությունների մասին, որ գոյություն ունեին Ֆիլադելֆիայի հանրապետական կուսակցության և Ջորջ Սթիների, Հենրի Մոլենհաուերի, սենատոր Սիմֆոնի և մյուսների միջև։ Բաթլերը, ինչպես արդեն տեսանք, կապված էր Քառուփերվուղի հետ սովորական գործարար շահերով, միաժամանակ և բարեկամաբար էր տրամադրված նրա հանդեպ։ Սթիները կույր գործիք էր Քառուփերվուղի ձեռքին։ Մոլենհաուերը և սենատոր Սիմֆոնը հաջողությամբ մրցակցում էին Բաթլերի հետ քաղաքի գործերի վրա ազդելու գծով։ Սիմֆոնը նահանդի օրենսդրական ժողովում ներկայացնում էր հանրապետական կուսակցությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող էր քաղաքային ինքնավարությունից պահանջել տեղական ընտրական օրենքները փոփոխել, վերանայել քաղաքային հիմնարկությունների կանոնադրությունները, կատարել քաղաքական կազմակերպությունների և առանձին անձանց գործունեության հետաքննություն։ Սիմֆոնին ի սպաս էին դրված բազմաթիվ ազդեցիկ թերթեր, բաժնետիրական ընկերություններ, բանկեր, Մոլենհաուերը, պատկանելի ու հարգարժան մի մարդ, Ֆիլադելֆիայի գերմանացիների, մի քանի ամերիկյան ընտանիքների ու մի քանի էլ բաժնետիրական խոշոր ընկերությունների ներկայացուցիչն էր։ Երեքն էլ ուժեղ, ընդունակ մարդիկ էին և վտանգավոր հակառակորդներ այն ըոլորի համար, ովքեր բախվում էին նրանց հետ քաղաքական ասպարեզում։ Վերջին երկուսը բավականին հույս ունեին այն ժողովրդականության վրա, որ վայելում էր Բաթլերը իուլանդացիների, մի քանի շրջանային կուսակցական լիդերների ու ականավոր կաթոլիկների շրջանում, ովքեր այնպես էին հավատում նրան, ասես իրենց հոգեհայրը լիներ։ Բաթլերն էլ իր հերթին կողմնակիցներին հատուցում էր հովանավորություն, ուշադրություն, օգնություն և անփոփոխ բարյացակամություն ցույց տալով։ Ի

Վարձատրություն այդ հոգատարության՝ քաղաքն էլ, Մոլեն-Հառերի ու Սիմֆոնի միջոցով, նրան էր տալիս փողոցները սալարկելու, կամուրջներ և անցակամուրջներ կառուցելու, կոյուղիներ անցկացնելու խոշոր կապալները, որոնք սակայն կարելի էր ստանալ միայն մի պայմանով՝ հանրապետական կուսակցության գործերը, որի ականավոր գործիչն էր նա և որը այսպես ասած կերակրում էր նրան, կատարվեն պարտ ու պատշաճ։ Մյուս կողմից էլ, ճիշտն ասած, ինչո՞ւ ինքը պարտավոր է ավելի հոգալ դրան, քան ՄոլենՀառերը կամ Սիմֆոնը. չէ՞ որ Սթիները իր դրածոն չէ; Ի պաշտոնե գանձապետը ենթարկվում էր գլխավորապես ՄոլենՀառերին։

Ահա թե ինչի մասին էր մտածում ամեն ինչից խիստ անհանգստացած Բաթլերը՝ որդու հետ կառք նստելիս։

— Ենց նոր ինձ մոտ էր Քառուիերվուդը, — ասաց նա Օուենին, որը վերջերս սկսել էր շատ լավ գլուխ հանել ֆինանսական գործերից, իսկ քաղաքական ու հասարակական հարցերում նույնիսկ ավելի մեծ խորաթափանցություն էր ցուցաբերում, քան հայրը, միևնույնիսկ ամենավարակություն չէր։ — Ասում է, ին բնիկել է խիստ զժվարին զրաւթյան մեջ։ Ա՛յ, լսո՞ւմ ես, — տվիլացրեց նա, երբ իրենց հասան «Արտակար» դր համար, արտակար դր համար» գոշունները։ — Զիկագոն այրվում է։ Վաղը բորսայում խումապ կառաջանա։ Մեր երկաթուղային բաժնետոմսերը գրավադրված են զանազան բանկերում։ Ականջներս պետք է սուր պահենք, ապա թե ոչ, կպահանջեն, որ մարենք մեր պարտքերը։ Վաղը ամենից առաջ հոգ պիտի տանենք, որ այդպիսի բան չպատահի։ Իմ հարյուր հազար գոլլարը Քառուիերվուդի մոտ է, սակայն նա խնդրում է շգանձել դա. բացի դրանից, ասում է, որ իր մոտ են գրավադրված Սթիների փողերը։

— Սթիների, — զարմացավ Օուենը։ — Ուրեմն նա՞ էլ է «Չփանում» բորսայում, — Օուենի ականջին համանում էին շշուկներ Սթիների ու նրա արբանյակների մասին, բայց նա շգիտես ինչու նշանակություն չէր տալիս դրանց և դեռ ոշինչ չէր կարողացել հայտնել հորը։ — Իսկ նրա փողերից շա՞տ կա Քառուիերվուդի մոտ։

Բաթլերն անմիջապես չպատասխանեց:

— Բավական շատ, — արտաքերեց նա վերջապես: — Ճիշտն ասած՝ նույնիսկ շատ-շատ, մոտ հինգ հարյուր հազար դոլլար: Եթե դա հայտնի դառնա, աներևակայելի աղմուկ կբարձրանա:

— Պահո՞ւ, — պոռթկաց ապշած Օուենի բերանից: — Հինգ հարյուր հազար՝ դոլլար: Տե՛ր աստված: Մի՞թե Սթիները գոփել է կես միլիոն: Անկեղծ ասած՝ ես չեի հավատա, թե նրա խելքը կկտրի այդպիսի գործի: Հինգ հարյուր հազար՝ դոլլար: Ի՞նչ խայտառակություն կլինի, եթե իմանան:

— Լավ, լավ, մի՛ շտապիր եզրակացություններ անել, — պատասխանեց Բաթլերը՝ ջանալով ըստ հնարավորին հստակ պատկերացնել, թե ինչպես կարող էր այդպիսի բան լինել: — Մենք չենք իմանում բոլոր կողմնակի հանգամանքները: Հնարավոր է, որ սկզբում Սթիները չէր էլ մտածում այդքան շատ վերցնել: Դեռ ամեն ինչ կարող է կարգավորվել: Դրամը ներդրված է տարբեր ձեռնարկությունների մեջ: Քառուիերվուղը դեռ սնանկ չէ: Եվ դրամն էլ դեռ չի կորել: Հիմա պետք է որոշել, թե ինչ պետք է ձեռնարկել նրան փրկելու համար: Եթե նա ճիշտ է խոսում, — իսկ մինչև հիմա չի եղել մի դեպք, որ նա ստի, — ապա կարող է օձիքն ազատել, եթե միայն վաղը քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերը թափալոր շընկնեն: Հիմա ես կտեսնեմ Մոլենհաուերին ու Սիմֆոնին Նրանք էլ ին այդ արժեկթղթերով շահագրգուված: Քառուիերվուղը խնդրեց, որ խոսեմ նրանց հետ. գուցե կարողանամ ազդել բանկերի վրա, որ շուկան պահեն: Նրա կարծիքով, մենք մեր ցպահանց հաշիվները կամրապնդենք, եթե վաղը բորսայում գնենք այդ բաժնետոմսերը՝ կուրսը պահպանելու համար:

Օուենը մտքում արագ թվարկեց այն ամենը, ինչ գիտեր քառուիերվուղի մասին: Նրա կարծիքով, պետք էր Քառուիերվուղին մի լավ դաս տալ: Այդ ամենը նրա և ոչ թե Սթիների խաղն է. Օուենը չէր կասկածում: Նա զարմանում էր միայն, որ հայրը չի տեսնում ու չի զայրանում Քառուիերվուղի վրա:

— Ահա թե ինչ կարող եմ ասել քեզ, հա՛յր, — մի փոքր

լոելուց հետո ասաց նա՝ գրեթե շինծու շեշտով: — Քառուկեր-վուդը Սթիներից վերցրած փողերով բաժնետոմսեր է գնել ու խրվել է: Եթե հրդեհ չպատճեր, նա կմարսեր, իսկ հիմա ուզում է, որ դու, Մոլենհաուերը, Սիմֆոնինը և ուրիշներ փրկեն իրեն: Նա լավ տղա է, և ես էլ լավ եմ վերաբերվում նրան. բայց անխելքություն կլինի, եթե դու գործես նրա ցուցումով: Առանց դրան էլ նա իր ձեռքն է գցել ավելի, քան պետք էր: Այս քանի օրը լսեցի, որ Ֆրոնտ-սթրիթի գիծը և Գրին ու Կոութս գծի մեջ մասը պատկանում է նրան, և նա, Սթիների հետ, Տասնյոթերորդ ու Տասնիներորդ փողոցների գծերի տերն է: Բայց ես շհավատացի և շարունակ մածում էի հարցնել քեզ, թե իրո՞ք այդպես է: Ես կասկածում եմ, որ Քառուկերվուդը թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում իր համար է պահել բաժնետոմսերի վերահսկական ծրարը: Սթիները կողքից գնացող է՝ միայն. Քառուկերվուդը ուզածի պես պտտեցնում է նրան:

Օուենի աշքերը բռնկվեցին ազահությունից ու դժկամությունից: Քառուկերվագր պետք է կարգին պատճվի. աճուրդի պետք է հանել նրա ձեռնորկությունը, իրևն էլ վտարել քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերի շարքից: Օուենը վաղուց էր տենչում առաջատար դիրք գրավել այդ գործում:

— Գիտես ինչ, — խոռ ձայնով պատասխանեց Թաթլերը, — ես միշտ կարծել եմ, որ նա խելացի երիտասարդ է, բայց որ այդպիսի խարդախն է, չեի կարծում: Շարունակ նվազում էր ըստ նոտաների: Դու էլ, ինչպես տեսնում եմ, միամիտ մարդ չես: Դե՛հ, պետք է ամեն ինչ լավ կշռել, ու թերևս այդ գործը կարգավորենք: Այստեղ մի խիստ էական հանգամանք կա: Նախ և առաջ մենք պետք է մտածենք հանրապետական կուսակցության մասին: Մեր հաջողությունը, ինչպես գիտեն, անքակտելիորեն կապված է նրա հաջողության հետ: — Նա լոեց ու նայեց որդուն: — Եթե Քառուկերվուդը սնանկանա և դրամը չվերադառնա գանձարանին... — ծերունին հանկարծ կտրեց սկսած միտքը: — Այս գործում ինձ անհանգստացնում է միայն Սթիները և քաղաքային գանձարանը: Եթե մենք ոչ մի բան չձեռնարկենք, ապա հանրապետական կուսակցու-

թյան վիճակը ծանր կլինի աշխան ընտրություններում, գրա հետ կարող են հօդս ցնդել մեր մի քանի կապալները: Մի՛ մոռանա, որ հոկտեմբերին ընտրություններ են լինելու: Ես շարունակ մտածում եմ՝ վերցնե՞մ նրանից այդ հարյուր հազար դոլարը, թե՞ ոչ: Առավոտյան ես բավական շատ փողի կարիք կունենամ՝ պարտփերս վճարելու համար:

Հոգեբարնական մի հետաքրքիր մանրամասնությունն էիմա՝ միայն Բաթլերն սկսեց ինչպես հարկն է պարզել դրության ամբողջ դժվարությունը: Քառուիերվուղի ներկայությամբ, որն այնպիսի պիրճախոսությամբ շարադրում էր իր կարիքները, նա այն աստիճան ենթարկվեց նրա անձնավորության աղղեցությանը և նրա հանդեպ ունեցած իր բարյացակամությանը, որ նույնիսկ կարգին շրմբոնեց, թե որքան այդ պատմությունը շոշափում է իր անձնական շահերը: Եվ միայն այսպես, իրիկնապահին թարմ օդում, իր սեփական փառասիրական մտադրությունները փայփայող և Քառուիերվուղին խնայելու ոչ մի հակում շունեցող Օուենի հետ գրուցելիս, Բաթլերն սկսեց ուշքի գալ, և ամբողջ պատմությունը երևաց նրան շատ թե քիչ ճիշտ լույսի տակ: Նա հարկադրված եղավ խոստովանել, որ Քառուիերվուղը լրջորեն անվանարկել է հանրապետական կուսակցությանը և սպառնալիքի տակ է դրել քաղաքային գանձարանը, միաժամանակ և իր՝ Բաթլերի անձնական շահերը: Եվ այնուամենայնիվ ծերունին հսկմակրում էր նրան և մաազիր չեր թողնել բախտի քմահաճուքին: Այժմ նա զնում էր Մոլենհաուերի ու Սիմֆոնի մոտ, որպեսզի փրկեր Քառուիերվուղին, ճիշտ է՝ դրա հետ նաև հանրապետական կուսակցությանը և իր սեփական գործերը: Բայց և այնպես ի՞նչ խայտառակություն: Նա բարկանում էր ու վրդովվում: Ի՞նչ անդգամն է այդ երիտասարդը: Ո՞վ կարող էր մտածել, որ նա կնետվի այդպիսի ավանտյուրաների մեջ: Այնուամենայնիվ հիմա էլ Բաթլերը չեր կորցրել իր բարյացակամությունը նրա հանդեպ, զգում էր, որ պետք է որոշ քայլերի դիմի Քառուիերվուղին փրկելու համար, եթե իհարկե գեռ կարելի է փրկել: Հնարավոր է նաև, որ ինքը կկատարի Ֆրա խնդրանքը և, եթե մյուսներն էլ համակրանքով վերա-

բերվեն նրան, մինչև վերջին բոպեն ձեռք չի տա իր հարցուր հազար ավանդին:

— Ճիշտ եմ ասում, հայր, — լուությունը խզնց Օուենը, — ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ դու ավելի պետք է անհանգըստանաս, քան Մոլենհաուերն ու Սիմֆոնը: Եթե դուք երեքդ ցանկանաք օգնել Քառուփերվուղին դլուփեք պրծացնելու, այդ ձեր գործն է. միայն թե մեռնեմ, թե հասկանամ՝ ինչների՞դ պետք է: Իհարկե, եթե այդ պատմությունը մեջտեղ գա ընտրություններից առաջ, ապա ոչ մի լավ բան չի ստացվի. բայց մի՞թե չի կարելի մինչ այդ լուության մատնել: Չո ներդրումները քաղաքային երկաթուղիներում շատ ավելի կարեոր են, քան այդ ընտրությունները, և եթե դու հնար գտնեիր ձիաքարշը ձեռքդ գցելու, այլևս կարիք չէիր ունենա անհանգստանալ ընտրությունների համար: Իմ խորհուրդն է՝ առավոտյան իսկ պահանջես քո հարյուր հազարը, որպեսսպի քավարարես բանկերի հավակնություններն այն դեպքում, եթե քո բաժնետոմսերի կուրսը խիստ ընկնի: Դրաւ հետեւանքը կարող է լինել Քառուփերվուղի սնանկությանը, բայց քեզ բնակ, չի վնասի: Դու կդնաս րորսու ու կդնես նրա բաժնետոմսերը. ես չեմ զարմանու, եթե ինքը վազի քեզ մոտ ու այդպիսի առաջարկ անի: Դու պետք է ազդես Մոլենհաուերի ու Սիմֆոնի վրա. Թող նրանք վախեցնեն Սթիներին ու պահանջնեն, որ այլևս ո՛չ մի դոլլար փոխ շտա Քառուփերվուղին: Եթե դու այդ շանես, նա կվազի Սթիների մոտ ու դարձյալ փող կվերցնի նրանից: Սթիներն արդեն շափ-սահմանն անցել է: Եթե Քառուփերվուղը շուտենա ծախել իր թղթապանակը, իր գործն է. բայց համարյա անվրեպ կոտր կընկնի, և այն ժամանակ դու կարող կլինես բորսայում ուզածիդ շափ գնել նրա բաժնետոմսերը: Ես անձամբ կարծում եմ, որ նա վաճառքի կհանի: Իսկ դու բնավ էլ կարիք շունես արյունդ պղտորել Սթիների հինգ հարյուր հազարի պատճառով: Ոչ ոք չի ստիպել նրան փոխ տալ Քառուփերվուղին: Թո՛ղ գլուխը պրծացնի ինչպես ուզում է: Ճիշտ է, կուասկցությունը կարող է հարվածների ենթարկվել, բայց հիմա ամենապլիսավորը այդ չէ: Դու և Մոլենհաուերը ձնշում կգործադրեք թերթերի

վրա, որոնք և լուռ կմնան, մինչեւ որ ընտրությունները
վերջանան:

— Մի՛ շտապիր, այդպես մի՛ շտապիր,— ասաց ծեր
կապալառուն որդուն և նորից թաղվեց խորհրդաժությունների
մեջ:

Գ Լ Ո Ւ Խ Խ V

Հենրի Մոլենհառուերը, ինչպես և Բաթլերը, ապրում էր
քաղաքի նոր թաղերից մեկում՝ Հարավային Բրոդ-սթրիթում,
զրադարձանի նույնակես նոր ու գեղեցիկ շենքից քիչ հեռու:
Ընդարձակ էր նրա տունը և տիպական այդ ժամանակաշրր-
շանի նորելուկ հարուստի համար. քառահարկ մի շենք, երե-
սապատված դեղին ալյուսով ու սպիտակ քարով, առանց
որևէ որոշակի ոճի, բայց համենայն դեպս աշքի համար բա-
վական հաճելի: Լայն սանդուղքը տանում էր ընդարձակ
պատշաճամբը, որի մեջտեղը գտնվում էր դրվագագարդ ծանր
դուռը, իսկ դրա երկու կողմերում՝ խիստ նրբագեղ, բաց կա-
պույտ ծաղկակալներով զարդարված նեղ պատուհաններ: Այդ տան քսան սենյակն էլ պարկետե հիանալի հատակ ուներ
և այդ տարիներին խիստ թանկ արժող փայտե որմնածած-
կեր: Առաջին հարկում էին դահլիճը, ընդարձակ հյուրա-
սենյակը և կաղնեիփայտով պատված, երեսուն քառակուսի
ոտնաշափից ոչ պակաս սեղանատունը. երկրորդ հարկում՝
երածշտական սենյակը, որ դրված էր տանտիրոց՝ իրենց
երածիշտ երևակայող երեք դուռտրերի տրամադրության տակ, Մոլենհառուի առանձնասենյակը, գրադարանը և նրա կնոջ
զարդախուցը՝ դրան կից լոգանքի սենյակով ու ձմեռային
փոքրիկ պարտեղով:

Մոլենհառուերը համարվում էր խիստ կարևոր անձնավո-
րություն և ինքն էլ էր այդպես կարծում: Բացառիկ սուր միտք
ուներ նա ֆինանսական ու քաղաքական գործերում: Թեև նա
գերմանացի էր, ավելի ճիշտը գերմանածագում ամերիկացի,
նրա արտաքինը տիպիկ ամերիկյան էր, ըստ որում՝ խիստ

պատկառելիք նրա աշքերի մեջ շողզողում էր սառը և սուր միտքը: Բարձրահասակ էր նա ու ամրակազմ: Նրա հզոր կուրծքը և լայն ուսերը հիանալի էին ներդաշնակում գեղեցիկ գլխին, որը, նայած դիտման հեռակետին, թվում էր մերթ կլոր, մերթ երկար: Ուսուցիկ ճակատը ժանր կախված էր աշխուց, խորաթափանց ու ծակող աշքերի վրա: Մոլենհառուերի քիթը, բերանը, կզակը, ինչպես նաև լիքը ու հարթ այտերը՝ մի խոսքով ամբողջ խոշոր, արտահայտիչ ու կանոնավոր դեմքը վկայում էր, որ այդ մարդը իմանում է, թե ինչ է ուզում և կարողանում է իր ասածը անել, հակառակ բոլոր խոշընդուտներին: Մոլենհառուերը էղուարդ Մելիս Բաթլերի հետ կապված էր սերտ բարեկամությամբ, որքան դա հնարավոր էր երկու գործարարի միջև, իսկ Մարկ Սիմֆոնին հարգում էր մոտավորապես այնպես, ինչպես վագրն է հարգում մյուս վագրին: Նա կարողանում էր գնահատել ակնառու ընդունակությունները և միշտ պատրաստ էր ազնվորեն խաղալ, եթե խաղն աղնիվ էին վարում: Հակառակ դեպքում նրա նենգությունը սահման չէր ճանաչում:

Մոլենհառուերը ո՛չ էղուարդ Բաթլերին էր սպասում կիրակօրյա երիկոյան, ո՛չ էլ նրա որդուն: Այդ մարդը, որին էր պատկանում Ֆիլադելֆիայի բոլոր հարստությունների մեկ երբորդը, գրադարանում նստած՝ կարդում էր ու լսում իր երեք դուստրերից մեկի նվազը: Կինն ու մյուս երկու աղջիկը գնացել էին եկեղեցի: Բնավորությամբ տնակյաց էր նա: Իսկ քանի որ կիրակի երեկոն ընդհանրապես հարմար ժամանակ է համարվում աշխարհի բոլոր քաղաքագետների համար, ապա Մոլենհառուը ենթադրում էր, որ հանրապետական կուսակցության իր ականավոր կուսակիցներից մեկնումեկը կարող է գալ այցելության: Ուստի և երբ սպասավորը, նույն ինքը ծառայապետը, հայտնեց, որ եկել են Բաթլերն ու որդին, նա նույնիսկ ուրախացավ:

— Այս ո՞ւմ եմ տեսնում, — ողջունեց նա Բաթլերին՝ ձեռքը պարզելով: — Եատ ուրախ եմ, շատ: Օուե՞նն էլ ձեզ հետ է: Գործերն ինչպե՞ս են, Օուե՞ն: Ի՞նչ կհրամայեք հրամցնել ձեզ, զենումեննե՛ր, և ի՞նչ եք ծխելու: Սկզբից

Իի՞-մի սկահակ պետք է խմել: Զո՞ն,— դարձավ նա ծառաւ յին,— մի լավ բան փնտրեցեք այստեղ.« Ես էլ նստել ու լսում էի, թե ինչպես է նվագում Կարոլինան: Բայց դուք ակներևար խրտնեցրիք նրան:

Նա բազկաթոռ հրեց գեպի Բաթլերը և մի տեղ էլ մատնանշեց Օուենի համար: Մի բոպե իսկ շանցած վերադարձավ ժառան՝ արծաթե շքեղ մատուցարանը ձեռքին, առատորեն ծածկված վիսկիի, հին գինու շշերով ու տարբեր տեսակի սիգարների տուփերով: Օուենը գործարաբների այն նոր տիպից էր, որոնք զուսպ են մնում գինուց ու ծխելուց: Նրա հայրն էլ թե՛ մեկից և թե՛ մյուսից թույլ էր տալիս իրեն խիստ շափակոր քանակովթյամբ:

— Հարմարավետ է ձեր տունը, — ասաց Բաթլերը՝ սկզբում լուսիցան մատնելով իր այցելության պատճառը: — Գարամանալի չէ, որ կիրակի երեկոյան էլ դուք տնից դուրս չեք գալիս: Ի՞նչ նորություն կա քաղաքում:

— Առանձնապես ոշինչ, որքան ես գիտեմ, — հանգիստ պատասխանեց Մոլենհաուերը: — Ամեն ինչ ընթանում է հաջող: Բայց դուք, կարծեմ, ինչոր բանից անհանգստացած եք:

— Այո, մի քիչ, — պատասխանեց Բաթլերը՝ դատարկելով իր համար պատրաստված սողա-բրենդին: — Տագնապալի լուրեր կան, իրիկնային թերթերը դեռ չե՞ք կարդացել:

— Ոչ, չեմ կարդացել, — և Մոլենհաուերն ուղղվեց բազկաթոռում: — Իսկ մի՞թե այսօր իրիկնային թերթերը լուս են տեսել: Եվ ի՞նչ է պատահել:

— Ոշինչ, եթե շաշվենք Զիկագոյի հրդեհը: Եվ այնպես է երեսում, որ վաղը մեր դրամական բորսայում կարգին իրարանցում կակալի:

— Ի՞նչ եք ասում: Ես դեռ ոչ մի բան չեմ լսել: Ուրեմն իրիկնային թերթերը լուս են տեսել... Ուրեմն այդպես... Իսկ մե՞ծ հրդեհ չ ժագել:

— Ասում են՝ ամբողջ քաղաքը կրակի մեջ է, — վրաբերեց Օուենը, որ հետաքրքրությամբ հետևում էր իր դիմաց նստած քաղաքական գործի դեմքի արտահայտությանը:

— Այո... դա արդե՛ն նորություն է: Պետք է ուղարկել

թերթ բերեն, Ձո՞ն,— կանչեց նա ծառային, և երբ սա ներս
եկավ, ասաց.— որևէ տեղից թերթ ճարեցիք: Իսկ ինչո՞ւ դուք
կարծում եք, թե դա կարող է անդրադառնալ և մեզ վրա,—
ծառայի մեկնելուց հետո դարձավ նա Բաթլերին:

— Գիտեք ինչ, կա մի հանգամանք, որի մասին ես
ոչինչ շեմի իմանում մինչև վերջին լուսեն: Մեր սիրելի Սթիների
դրամարկղից կպակասի բավական մեծ գումար, եթե, իհարկե,
բանը լավ ուղղություն շտանա, ինչպես ենթադրում են
ոմանք,— անխոռվ բացատրեց Բաթլերը:— Իսկ այդպիսի
պատմությունը, ինչպես ինքներդ էլ հասկանում եք, հազիվ
թե նպաստավոր տպավորություն գործի ընտրություններից ա-
ռաջ,— ավելացրեց նա, և նրա խելացի, գորշ աշքերը գամ-
վեցին Մոլենհաուերի վրա, որը նույն սկեռուն հայացքով
պատասխանեց նրան:

— Այդ որտեղից իմացաք,— սառեցնող շեշտով հարց-
րեց Մոլենհաուերը:— Մի՞թե միտումներով է զեղծում կատա-
րել: Եվ որքա՞ն է վերցրել, այդ էլ դիտե՞ք:

— Բավական մեծ գումար, — առաջիւ պես անխոռվ
պատասխանեց Բաթլերը:— Որքան ևս հասկացա՞մու հինգ
հարյուր հազար դոլար: Առայժմ դա վատնում չէ: Բայց
գործն ինչ ընթացք կստանա հետագայում, հայտնի չէ:

— Հինգ հարյուր հազա՞ր, — ապշած բացականշեց
Մոլենհաուերը՝ ակամա կորցնելով հավասարակշռությունը:—
Չի կարող պատահել: Իսկ ե՞րբ է սկսել դրամ վերցնել և ի՞նչ
է արել:

— Հինգ հարյուր հազարի մոտ փոխ է տվել երրորդ
փողոցի երիտասարդ Քառվիերվուդին, այն մարդուն, որն
իրացրեց քաղաքային փոխառությունը: Այդ գումարներով
իրենց անձնական շահի համար զանազան շահադիտական
գործեր են բռնել, գլխավորապես գնել են քաղաքային եր-
կաթուղիների բաժնետումսեր:

Քաղաքային երկաթուղիների անունը լսելով՝ Մոլենհա-
ուերի անայլալ դեմքը թեթևակի ցնցվեց:

— Քառվիերվուդի կարծիքով այդ հրդեհը վաղը խուճապ

կառաջացնի բորսայում, և նա վախենում է, որ այդ գրությունից չի պրծնի՝ առանց ազդու աջակցության: իսկ եթե սնանկանա, ապա քաղաքի գանձատանը կառաջանա հինգ հարյուր հազարի պակասորդ, որն արդեն անկարելի կելինի լրացնել: Սթիները քաղաքում չէ, իսկ Քառուփերվուդը եկավ ինձ մոտ ու խնդրեց, որ իրեն աջակցելու միջոց գտնեմ: Պետք է ասեմ, որ նա ժամանակին իմ որոշ հանձնարարությունները կատարել է, ուստի և հույս ուներ, որ հիմա ես օգնության կհասնեմ նրան, այսինքն ձեզ և սենատորին կթեքեմ ազդելու խոշոր բանկերի վրա, որպեսզի վաղը այդ ձեռվ արժեթղթերի կուրսը պահպանվի բորսայում: Այլապես Քառուփերվուդը կանգնած կլինի սնանկության առաջ, իսկ սկանդալը, որ նրա կարծիքով անխուսափելիորեն կպայթի, կարող է վնասել մեզ՝ ընտրությունների ժամանակ: Ինձ թվում է, թե նա այստեղ ոչ մի խաղ չի խաղում, այլ պարզապես ճիգ է թափում, որ ըստ հնարավորին փրկի իրեն ու շխաթի ինձ, կամ, ավելի ճիշտ՝ մեզ:

Բաթլերը լոեց: Մոլենհառուերը՝ նենք ու ծածկամիտ, նույնիսկ ցուց չտվեց, թե անհանգստացած է այդ անսպասելի լուրից: Բայց քանի որ միշտ էլ հավատացած էր, թե Սթիները ֆինանսական ու կազմակերպչական ընդունակության հատիկ իսկ չունի, ապա նրա հետաքրքրասիրությունը սաստիկ բորբոքվեց: Ուրեմն իր դրած մարդն իրենից թաքուն օգտվել է գանձարանի միջոցներից և հիմա կանգնել է դատական հետապնդման սպառնալիքի առաջ: Մոլենհառուերը Քառուփերվուդին ճանաշում էր միայն լսելով, որպես մի մարդու, որին ժամանակին հրավիրել էին փոխառության գործողությունն իրականացնելու: Այդ գործողությունից որոշ բան շահել էր նաև ինքը՝ Մոլենհառուերը: Պարզ է, որ այդ բանկիրը հիմարացրել էր Սթիներին և նրանից ստացած փողով քաղաքային երկաթուղիների բաժնետոմսեր էր գնել: Հետևաբար, նա ու Սթիները բավականին շատ ունեն այդ թղթերից: Մոլենհառուերին ծայրաստիճան հետաքրքրող մի հանգամանք:

— Հինգ հարյուր հազար դոլար, — կրկնեց նա, երբ Բաթլերն ավարտեց իր պատմությունը: — Ի՞նչ խոսք, որ

բավական կլորիկ գումար է: Եթե Քառուփերվուղին կարողանար փրկել միայն շուկան պահելը, մենք թերես ընդառաջենք նրան. բայց լուրջ խումապի դեպքում այդպիսի մաները անհետևանք կմնա: Եթե այդ երիտասարդը դրամական շատ նեղություն է քաշում, և բորսայում արժեթղթերի մեծ անկում սկսվի, ապա նրան փրկելու համար հարկ կլինի բազմաթիվ լրացուցիչ միջոցներ ձեռք առնել: Ես փորձից գիտեմ: Պատահմամբ չե՞ք իմանում ինչքան պարտք ունի:

— Ոչ, չգիտեմ,— պատասխանեց Բաթլերը:

— Ասում եք ձեզնից փող շխնդրե՞ց:

— Ուզում է, որ ես չվերցնեմ իմ հարյուր հազարը, մինչև որ դրությունը որոշակի դառնա:

— Իսկ Սթիները իսկապե՞ս քաղաքում չէ,— հարցրեց ի բնե կասկածամիտ Մոլենհաուերը:

— Քառուփերվուղն այդպես ասաց: Մենք պետք է մեկին ուղարկենք, որ ստուգի:

Մոլենհաուերն արդեն մտմտում էր, թե ինչպես խելացիությամբ դուրս կա դրությունից: Արժեթղթերի կուրսը պահելը, իհարկե, ամենաալայի միջոցն է, ևթև այդպիսով հաջողվի փրկել Քառուփերվուղին, նրա հետ և գանձապետին ու հանրապետական կուսակցության պատիվը: Սթիները հարկադրված կլինի գանձարանին վերադարձնել հինգ հարյուր հազար դոլարը, որի համար ստիպված կլինի ծախել իր ունեցած բաժնետոմսերը, իսկ այդ ժամանակ ինչո՞ւ ինքը՝ Մոլենհաուերը, չգնի դրանք: Բայց այստեղ ըստ երևույթին պետք կլինի հաշվի առնել նաև Բաթլերի շահերը: Իսկ ճիշտն, ասած՝ ի՞նչ կարող է պահանջել նա:

Բաթլերի հետ վարած հետագա խոսակցությունից Մոլենհաուերը պարզեց, որ Քառուփերվուղը պատրաստ է հատուցել շարաբաստիկ հինգ հարյուր հազար դոլարը, եթե, իհարկե, կարողանա այդքան դրամ հավաքել: Զիաքարշի տարրեր գծերի մեջ ունեցած նրա մասնաբաժինների մասին դեռ խոսք չէր եղել: Բայց ի՞նչ վստահություն, որ կհաջողվի այդ ձևով փրկել Քառուփերվուղին և որ նա անգամ այդ դեպքում ցանկություն ու հնարավորություն կունենա հավաքել հինգ հարյուր

Հազար դոլար ու վերադարձնել Սթիներին։ Այժմ նա կարիք ունի կանխիկ դրամի, բայց ո՞վ փող կտա նրան այն ժամանակ, երբ անխուսափելի խուճապն առաջանաւ։ Ի՞նչ երաշխիք կարող է նա առաջարկել։ Իսկ մյուս կողմից, եթե մի լավ հուպ տան, կարելի կլինի երկուսին էլ՝ նրան ու Սթիներին, չնչին գնով ծախել տալ իրենց երկաթուղային բաժնետոմսերը Եթե ինքը՝ Մոլենհաուերը, կարողանա ձեռք գցել դրանք, ապա, Ճիշտն ասած՝ նրա ի՞նչ գործն է, թե իր կուսակցությունը աշնան ընտրություններում հաղթի, թե՝ կտապալվի. ասենք նա, ինչպես և Օուենը, կարծում էր, թե կարելի է տապալումից խուսափել։ Ավելի Ճիշտը՝ կարելի է, ինչպես նախորդ տարիներին, գնել հաղթանակը։ Սթիների վատնումը, եթե Քառուկերությունի կործանման պատճառով նա վատնող դառնա, կարելի է թաքցնել մինչև ընտրություններում հաղթելը։ Բացի դրանից, նրա մտքով անցավ, ավելի ցանկալի կլիներ այնպես վախեցնել Սթիներին, որ սա հրաժարվի լրացուցիչ օգնություն մատուցել Քառուկերությունը, հետո արդեն գրոհել նրա քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերի ու դրանով իսկ մյուս բոլոր բաժնետոմս ունեցողների վրա, չբացառելով և Բաթլերին ու Սիմֆոնին։ Այդ գծերը ժամանակին Ֆիլադելֆիայում կդառնան հարստանալու գլխավոր աղբյուրներից մեկը։ Բայց հիմա պետք է այնպես ցուց տա, որ իրեն ամենից առաջ մտահոգում է կուսակցությանը փրկելու համար առաջիկա ընտրություններում։

— Ես, իհարկե, ոչինչ չեմ կարող ասել սենատորի փոռի ամեն, — մտածկուտ սկսեց Մոլենհաուերը, — ու չգիտեմ, թե ինչ տեսակետ կունենա նա։ Բայց ինքս անձամբ պատրաստ եմ անել ինձնից կախված ամեն ինչ արժեթղթերի կուրսը պահելու համար, եթե դա որևէ օգուտ է բերում։ Պատրաստ եմ թեկուզե այն պատճառով, որ բանկերը ինձնից էլ կարող են պահանջել պարտքերի մարում։ Բայց հիմա մենք պետք է ամենից առաջ հոգ տանենք, որ ընտրություններից առաջ համարացյալ չդառնա, եթե այնուամենայնիվ Քառուկերությունը կոստրնենի։ Զէ՞ որ մենք բնավ վստահ չենք, որ շուկան պահելու մեր ջանքերը հաջողությամբ կպսակվեն։

— Ամենելի՞ն — մոայլ հաստատեց թաթլերը:

Օուենին արդեն սկսեց թվալ, որ Քառուփերվուդի կործանումն անխուսափելի է: Թայց այդ բոպեին դուան մոտից զանգ լսվեց: Աղախինը, որ փոխարինում էր թերթ բերելու գնացած սպասավորին, հայտնեց, որ եկել է սենատոր Սիմֆոնը:

— Անունը տուր, սփոռոցը գցի՞ր, — բացականշեց Մոլեն-Հառուերը: — Ներս հրամեցեք: Հիմա մենք կիմանանք նրա կարծիքը:

— Ես կարծում եմ, որ լավ կլինի ձեզ մենակ թողնեմ, — ասաց Օուենը հորը: — Ես կգնամ օրիորդ Կարոլինայի մոտ և կիմողրեմ երգիր ինձ համար: Քեզ կսպասեմ, հա՛յր, — ավելացրեց նա:

ՄոլենՀառուերը հավանության ժպիտ պարգևեց նրան, և Օուենը գուրս եկավ՝ դուան մեջ բախվելով սենատոր Սիմֆոնին:

Պենսիլվանիայում, որն արդեն բավական մեծ հետաքըրքը բրական անձնավորություններ էր աշխարհ բերել, դեռ երբեք չէր փթթել ավելի հիասքարրաշարժ մի տիպ, քան սենատոր Սիմֆոնը: Ի հակադրություն Բաթլերի ու ՄոլենՀառուերի, որոնք զերմաղին սպասունցին նրան, արտաքուստ նա բավական աննշան էր. միջահասակ էր՝ հինգ ոտնաշափ ինը մատնաշափ, այնինչ ՄոլենՀառուերի հասակը հավասար էր վեց, իսկ Բաթլերինը՝ հինգ ոտնաշափի ու տասնմեկ մատնաշափի, դեմքը թթված և կզակը հատու կտրված. մյուս երկուսի թշերը ասես հյութալի էին, իսկ ժանր կզակները առաջ էին ցցված: Նրա հայացքը նույնպես այնքան բաց չէր, ինչպես Բաթլերինը, և ոչ էլ այնքան ամբարտավան, ինչպես ՄոլենՀառուերինը: Թայց սրա աշքերում առկայծում էր արտակարգ խելք: Տարօրինակ, խոր ընկած ու անհատակ էին նրա աշքերը և հիշեցնում էին այն կատվի աշքերը, որ մութ անկյունից հետամուտ է իր որսին կատվային ցեղի ամբողջ խորամանկությամբ: Սև մազերի գեղն ընկնում էր նրա գեղեցիկ, նեղ ու սպիտակ ճակատի վրա, իսկ դեմքն աշքի էր ընկնում կապտավուն դժգունությամբ, ինչպես վատառողջ մարդկանցն է: Զնայած այս արտաքինին՝ այդ մարդու մեջ կար մի յուրօրի-

նակ, համառ ու արտասովոր ուժ, որով և նա իրեն էր ենթարկում մարդկանց, խորամանկություն, որ սովորեցրել էր նրան բորբոքել ընչափաղությունը վաստակի խոստումներով և անողոք լինել այն մարդկանց գատաստանը տեսնելիս, որոնք համարձակվում էին հակառակվել իրեն։ Սիմվոնը սուսիկ-փուսիկ էր, ինչպես այդ խառնվածքի շատ մարդիկ, նիհար, ձեռքերը սառն ու լպրծուն, ժպիտը տարտամ, սակայն աշքերն իրենց արտահայտչությամբ քավում էին նրա արտաքինի բոլոր թերությունները։

— Բարի երեկո, Մա՛րկ, ուրախ եմ ձեզ տեսնելով, — ողջունեց նրան Բաթլերը։

— Բարե ձեզ, էղուա՛րդ, — լսվեց ցածրաձայն պատասխանը։

— Իմ թանկադի՛ն սենատոր, ժամանակը ոչ մի հետք չի թողնում ձեզ վրա։ Ի՞նչ լցնեմ ձեզ համար։

— Ոչ, Հե՛նրի, ես ոչինչ չեմ խմի, — պատասխանեց Սիմվոնը։ Մի քանի րոպեով եմ եկել ձեզ մոտ, տուն գնալիս։ Կինս մոտիկ մի տեղ է՝ Կենոնուենց տանը, և պետք է գնամ նրա ետևից։

— Դուք նույնիսկ չեք իմանում, թե որքան պատեհ ժամանեցիք, սենատո՛ր, — սկսեց Մոլենհառերը՝ նստելով, երբ արդեն նստեց հյուրը։ Բաթլերը հենց նոր պատմում էր ինձ քաղաքական բնույթի մի փոքր դժվարության մասին, որ ծագել է այն ժամանակամիջոցում, ինչ մենք իրար չենք տեսնել։ Դուք հավանորեն լսել եք, որ Զիկագոյում հսկայական հըրդեհ է։

— Այո, հենց նոր պատմեց Կենոնուեն։ Ըստ երեսույթին զեպքը շատ է լուրջ Վաղը առավոտ պետք է սպասել արժեթղթերի խստ անկում։

— Ես էլ այդպես եմ կարծում, — վրա բերեց Մոլենհառերը։

— Ահա և իրիկնային թերթը, — գոշեց Բաթլերը, տեսնելով թերթը ձեռքին ներս մտնող ծառային։

Մոլենհառերը վերցրեց թերթը ու այնպես բացեց, որ ամենքն էլ կարողանային կարդալ։ Դա ասազին արտակարգ

Համարներից մեկն էր Ամերիկայում. հսկայագան տառերով տպված վերնագրերը հաղորդում էին, որ «լճափնյա» քաղաքում դեռ երեկ սկսված հրդեհը ժամառ ժամ ավելի է տարածվում:

— Սարսափելի է,— ասաց Սիմֆոնը:— Հոգիս մըզ-կրտում է Զիկագոյի համար: Այնտեղ բարեկամներ շատ ունեմ: Հուսանք, որ իրականում ամեն ինչ այնպես սարսափելի չի լինի, ինչպես գրում են:

Սիմֆոնն ամենուրեք և բոլոր հանգամանքներում մի քիչ ճոռում էր խոսում:

— Այն, ինչ պատմեց ինձ Բաթլերը,— շարունակեց Մոլենհաուերը, — որոշ շափով կապված է այդ պատուհասի հետ: Զեղ հայտնի է, որ մեր գանձապետները սովորություն ունեն քաղաքային դրամը տարեկան երկու տոկոսով փոխ տալու...»

— Այո, ունեն, հետո՝ ինչ, — հարցրեց Սիմֆոնը:

— Այն, որ միստր Սթիները, ինչպես պարզվեց, բավական առատաձեռն կերպով քաղաքի դրամներից փոխ է տվել երրորդ փողոցի երիտասարդ Քառուկերվուդին՝ այն մարդուն, որն զբաղվում էր մեր փոխառության իրացմամբ:

— Ի՞նչ եք ասում, — բացականչեց Սիմֆոնը՝ զարմանք ցուցադրելով: — Եվ շատ է տվել:

Սենատորը, ինչպես և Բաթլերն ու Մոլենհաուերը, նըմանապես պակաս վաստակ չեր արել այդ նույն աղջյուրից վերցված անվարձ փոխառություններից, որոնք ավանդի ձեռվ տրվում էին տարբեր բանկերի:

— Սթիները ըստ երկուլիթին, մոտ կես միլիոն դոլլար է փոխ տվել նրան, և եթէ Քառուկերվուդը փոթորկին շղիմանա, ապա Սթիների դրամարկղում այդքան գումար կպակասի: Ինչպես ինքներդ էլ հասկանում եք, այդ պատմությունը խիստ աննպաստ տպավորություն կգործի ընտրողների վրա: Քառուկերվուդը հարյուր հազար պարտք է միստր Բաթլերին և այսօր եկել է նրա մոտ բանակցությունների: Միստր Բաթլերի միջոցով նա խնդրել է մեզ օգնել իրեն դուրս պրծնելու: Հակառակ դեպքում (Մոլենհաուերը նշանակալի ժեստ արեց ձեռքով) կսնանկանա:

Սիմֆոնիկ նույրը ձեռքով սղալեց իր տարօրինակ կերպով ծուած շրթունքներն ու ծնոտը:

— Իսկ ի՞նչ են արել այդ կես միլիոնը, — հարցրեց նաև

— Այդ տղաները մի փոքր կողմնակի վաստակ են արել, — կատակեց Բաթլերը: — Ի թիվս այլոց կարծեմ գնել են քաղաքային երկաթուղիների բաժնետոմսեր, — ավելացրեց նա, բթամատերը դնելով ժիլետի թևատակին:

Մոլենհառերն ու Սիմֆոնիկ տարտամորեն ժպտացին:

— Այդպես ուրեմն, — ասաց Մոլենհառերը:

Ենատոր Սիմֆոնիկ լուռ էր, և միայն դեմքի արտահայտությունն էր վկայում, որ միտքը լարված աշխատում է: Նա ևս մտածում էր, թե որքան անմիտ բան է այդպիսի խնդրանքով դիմել գործարար քաղաքագետների խմբին, առավել ևս վերահաս ճգնաժամի դեմ-հանդիման: Ճիշտ է, անցավ նրա մտքով, կա բավական լավ մի ելք. ինքը, Բաթլերն ու Մոլենհառերը կմիանան և սատար կկանգնեն Քառուփերվուդին, որի համար իբրև շնորհակալություն՝ սա քաղաքային երկաթուղիների իր բոլոր բաժնետոմսերը կզիշի իրենց: Այդ դեպքում, ինչո՞ւ չէ, կարելի է և լուսթյան մատնել գանձատան պատմությունը, բայց մյուս կողմից ի՞նչ երաշխիք, որ, նախ Քառուփերվուդը կհամաձայնի մնաս բարով ասել իր բաժնետոմսերին և երկրորդ, Բաթլերն ու Մոլենհառերը այդ գործարքում համամիտ կլինեն իրեն: Բաթլերն ակներևարեկել է այստեղ լարեխոսելու հօգուտ Քառուփերվուդի: Գալով Մոլենհառերին, ասու սա միշտ էլ ծածուկ մրցել է իր հետ: Թեև իրենք գործակցել են քաղաքական ասպարեզում, բայց իրենց ֆինանսական նպատակներն արմատապես տարբեր են: Նրանք ֆինանսական ընդհանուր շահեր շունեին, ասենք շունեին և Բաթլերն ու Մոլենհառերը: Այնուհետև Քառուփերվուդն այնքան էլ պարզամիտ մարդ չէ: Եկ այս գործում նրա հանցանքը բնավ չի կարելի համեմատել Սթիների հանցանքին. չէ՞ որ փոխատուն Սթիներն է և ոչ թե Քառուփերվուդը: Արժե՞ արդյոք գործակիցներին հայտնել հարցի այն խորամանկ լուծումը, որ ծագեց նրա գլխում, հարցրեց ինքն իրեն աենատորը և իսկույն էլ որոշեց՝ ո՛չ, չարժե: Մոլենհառերը

շատ նենգ է, որպեսզի կարելի լիներ նրա գործակցության վրա հույս դնել այսպիսի գործում: Ճիշտ է, հեռանկարները փայլուն են, բայց վտանգն էլ փոքր չէ: Ավելի լավ է անջատանջատ գործել: Նախ՝ իրենք կպահանջեն Սթիներից, որ ստիպի Քառվիերվուղին վերադարձնել հինգ հարյուր հազար դոլլարը: Եթե դրանից բան դուրս չգա, ապա, ըստ երեսույթին, հարկ կլինի զոհաբերել Սթիներին՝ ի շահ կուսակցության: Ինչ վերաբերում է Քառվիերվուղին, ապա նրա գործերի վիճակի մասին ճշգրիտ ինֆորմացիա ունենալու դեպքում կարելի է լիսակատար հնարավորություն ունենալ լավ վաստակ անելու բորսայում դրածո անձանց միջոցով: Մրանք նախ՝ լուր կտարածեն այն ճգնաժամային դրության մասին, որի մեջ ընկել է Քառվիերվուղը, հետո արդեն կառաջարկեն նրան զիջել իր բաժնետոմսերը, իհարկե, չնշին գնով: Ո՞ւ բարի ժամի շի դիմել Քառվիերվուղը Բաթլերին:

— Ահա թե ինչ կարող եմ ասել ձեզ,— խոսեց սենատորը երկար լուսավորությունից հետո: — Ես, անշուշտ, շատ եմ կարեկցում պարոն Քառվիերվուղին և հեռու եմ կշտամբելու նըրան քաղաքային երկաթուղիների բաժնետոմսեր գնելու համար, քանի որ հնարավորություն ունեցել է. բայց, ճիշտն ասած, չեմ իմանում, թե ինչով կարելի է օգնել նրան, այն էլ այսպիսի ճգնաժամային շրջանում: Զգիտեմ, դուք ինչպես, զենտլմեննե՞ր, բայց ես հիմա իրավունք չունեմ ուրիշների համար կրակից շագանակ հանել, եթե անգամ ուզենամ: Նախ և առաջ մենք պետք է որոշենք՝ արդյո՞ք մեծ է կուսակցությանն սղատոնացող վտանգը, որպեսզի ուզենանք մեր քսակերը բանալի:

Հենց որ խոսքը եկավ կանխիկ դրամ՝ դուրս բերելուն, Մոլենհաուերի դեմքը ձգվեց:

— Ես էլ, հավանորեն, չեմ կարողանամ միստր Քառվիերվուղին փոքրիշատե էական աշակցություն մատուցել, — հառաշելով ասաց նա:

— Գրո՛զը տանի, — գոշեց Բաթլերը և իրեն հատուկ հումորով ավելացրեց, — այնպես է դուրս գալիս, որ ես

պետք է ետ վերցնեմ նրանից իմ հարյուր հազար դոլարը
Դրանից էլ սկսեմ իմ վաղվա օրը:

Այս անգամ ո՛չ Սիմֆոնը, ո՛չ էլ Մոլենհաուերը
շղիջանեցին նույնիսկ ցուցադրելու այն դժբույն ժամկետը, որն
առաջ մեկ էլ տեսար երևում էր նրանց դեմքին, ուր կար
միայն անթափանց ու հանդիսավոր արտահայտություն:

— Իսկ ինչ վերաբերում է քաղաքի գանձարանից վերց-
ված գումարներին, — շարունակեց Սիմֆոնը, երբ ամենքն
էլ մի փոքր հանդարտվեցին, — ապա մենք այդ գործը պետք
է մի լավ ժանրութեթև անենք: Եթե միստր Քառովերվուզը
սնանկանա և գանձարանը կորցնի այդ գումարը, ապա մենք
կընկնենք խիստ ժանր դրության մեջ: Իսկ քաղաքային եր-
կաթուղիների ո՞ր գծերով էր ամենից առաջ հետաքրքրվում
այդ Քառովերվուզը, — հարցրեց նա կարծես ի միջի այլոց:

— Ճիշտն ասած, չեմ իմանում, — պատասխանեց Բաթ-
լերը, անհրաժեշտ շհամարելով հայտնել այն, ինչ ճանա-
պարհին՝ Մոլենհաուերի մոտ գալիս, հաղորդել էր իրեն Օուենը:

— Բայց եթե մենք չկարողանանք հարկադրել Սթիներին,
որ վերադարձնի պակասող գումարը, նախքան Քառովերվու-
զը կսանկանա, ապա մեկ է՝ հետագայում ևս չենք խուսափի.
մեծ անախորժություններից, — ասաց Մոլենհաուերը: — Մյուս
կողմից, եթե Քառովերվուզը հասկանա, որ մենք սպասում
ենք իրենից լնամաների հատուցում, նա, հավանորեն, իսկուզն
կրտակը կփակի: Այնպիս որ, ճիշտն ասած, այստեղ ասելու
և անելու բան չկա: Բացի դրանից, լավ չեր լինի մեր բարե-
կամ էդուարդի նկատմամբ, եթե մենք որևէ բան ձեռնարկե-
ինք, նախքան նա վերջացներ իր գործը Քառովերվուզի հետև

նա նկատի ուներ Բաթլերի ավանդը Քառովերվուզի մոտ:

— Անշուշտ, անշուշտ, — դիվանագիտորեն հաստատեց
քաղաքական սուր հոտառություն ունեցող Սիմֆոնը:

— Անհոգ եղեք, իմ հարյուր հազարը ես վաղն իսկ
կստանամ, — վրա բերեց Բաթլերը:

— Եթե մեր երկյուղն իրականանա, — ասաց Սիմֆ-
ոնը, — կարծում եմ, թե պետք կլինի ամեն շանք գործադրել՝
աղետը մինչև ընտրությունները թաքցնելու համար: Թերթե-

րին պետք է ստիպել: Բայց ես կառաջարկեի նաև,— ավելացրեց նա, հիշելով քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերը, որ այնքան ճարպկորեն գնել էր Քառուփերվուղը, — քաղաքի գանձապետին նախազգուշացնել, որ հաշվի առնելով ստեղծված դրությունը՝ այլևս ոչ ոքի չփինանսավորի: Թե չէ մեկ էլ տեսար Քառուփերվուղը դարձյալ փող պահանջեց նրանից: Զեր խոսքը, Հենրի, միանգամայն բավական է նրա վրա ազդելու համար:

— Հավ, ես կխոսեմ նրա հետ, — մոայլ պատասխանեց Մոլենհաուերը:

— Իսկ իմ կարծիքով թող իրենք գլուխները պրծացնեն ինչպես կարող են, — անորոշ նկատեց Բաթլերը՝ մտածելով, թե ինչպես սխալվեց Քառուփերվուղը՝ դիմելով հասարակական կարգուկանոնի այս հարգարժան պահպանողների օգնության:

Այսպես փուլ եկան Քառուփերվուղի հույսերը, թե Բաթլերն ու մյուս ֆինանսական սյուները կպաշտպանեն իրեն այդ դժվարին բոպեներին:

Բաթլերից բաժանվելուց հետո Քառուփերվուղը սովորական եռանգով սկսեց փնտրել երկու անձանց, ովքեր կարող էին օգնել իրեն: Նա տիկին Սթիներին խնդրեց, որ ամուսնուց որևէ չուր ստանալուն պես իմաց տա իրեն: Գտնելով «Դրեսեն» և Հնկ.» բանկիրական տան անդամ Ուոլթեր Լիին և էվերի Սթոունին՝ «Ճեյ Կուք և Հնկ.» ֆիրմայից, ինչպես նաև Ջիրարդ ազգային բանկի նախագահ՝ Դևիսոնին՝ Քառուփերվուղն ուզում էր իմանալ նրանց տեսակետն ամբողջ անցուդարձի մասին, նմանապես և խոսել Դևիսոնի հետ փոխառություն ստանալու վերաբերյալ՝ իր ամբողջ շարժական ու անշարժ գույքը գրավ դնելու պայմանով:

— Ոչինչ չեմ կարող ասել ձեզ, Ֆրենկ, — համառորեն կրկնում էր Ուոլթեր Լին, — ես չեմ իմանում, թե վաղը ինչպես կծավալվեն իրադարձությունները: Շատ լավ է, որ գուք կարգի եք բերում ձեր գործերը: Անհրաժեշտ է: Ես պատրաստ եմ ամեն ինչով ընդառաջել ձեզ: Բայց եթե շեֆերը որոշեն, թե շի կարելի շպահանջել որոշ կատեգորիայի փոխառություն-

ների մարում, ապա մենք ստիպված կլինենք ենթաբեկվել. Ճարնե՞րս ինչ: Ես ամեն ջանք կթափեմ, որպեսզի, ըստ Հնարավորին, մթնոլորտը խաղաղեցվի: Բայց եթե Զիկագոն իսկապես ջնջված է աշխարհի երեսից, ապահովագրական ընկերությունները, համենայն դեպս դրանց մի մասը, կոտր կընկնեն, իսկ այն ժամանակ... կարող ես՝ դիմացիր: Ես կարծում եմ, որ դուք ինքներդ պարտապաններից կպահանջեք մարեն իրենց պարտքերը:

— Միայն ժայրահեղ անհրաժեշտության դեպում:

— Ի՞նչ արած, ճիշտ այդպես էլ մեզ մոտ են նայում դրան:

Նրանք սեղմեցին միմյանց ձեռքը: Երկուսն էլ համակրում էին իրար: Լին աշխարհիկ մարդ էր՝ օժտված բնածին նրբագիղ շարժուածներով, որոնք չէին խանգարում նրան ունենալ իսկական ողջամտություն և հարուստ կենսափորձ:

— Ահա թե ինչ կարող եմ ասել ձեզ, Ֆրե՛նկ, — ավելացրեց նա հրաժեշտ տալիս: — Ես վաղուց կարծում չի, որ դուք շափն անց եք կացնում քաղաքային երկաթուղիների գործում: Եթե կարողանաք բաժնետոմսերը պահել, հիանալի բան կլինի, բայց այնպիսի ծանր պահին, ինչպես հիմա է, դրանցից կարելի է սաստիկ տուժել: Դուք վարժվել եք շափից ավելի արագ «փող շինել» այդ թղթերից ու մեկ էլ քաղաքային փոխառության ուրարտասումներից:

Նա շեշտակի հայեց իր վազմի բարեկամի աշխերին, և երկուսն էլ ժպաացին:

Մոտավորապես նույն զրույցը տեղի ունեցավ նաև Սթունի, Դեկսի և մյուս բոլորի հետ: Քառուիերվուդի գալու պահին վերահաս աղետի լուրերն արդեն հասել էին նրանց: Ոչ մի մարդ չէր կարող վստահ ասել, թե ինչ կընկը վաղվա օրը: Բայց լավ բան քիչ էր խոստանում այդ վաղը:

Քառուիերվուդը որոշեց դարձյալ անցնել Բաթլերի մոտ, որովհետեւ համոզված էր, որ սա արդեն տեսել է Մոլենհաուերին ու Սիմֆոնին: Բաթլերը, որ արդեն մտածում էր, թե ինչ ասի Քառուիերվուդին, բավական սիրալիր ընդունեղ նրան:

— Ա՛, արդեն վերադարձա՞ք, — ասաց նա՝ տեսնելով
Ֆրենկին:

— Այո, մի՛ստր Բաթլեր!

— Պետք է ասեմ ձեզ, որ իմ մտադրությունները խիստ
հարաբերական հաջողությամբ պսակվեցին: Վախենամ բան
դուրս չգա, — զգուշ սկսեց նա, — դժվարին առաջադրանք
տվեցիք ինձ: Մոլենհառւերը, ըստ երևույթին, մտադիր է պա-
հել շուկան ի սեր սեփական շահերի, և ես կարծում եմ այդ-
պես էլ կանի: Սիմվոնն էլ իր շահերն ունի և կպաշտպանի
դրանք: Դեռ, ես էլ իհարկե գնելու եմ ինձ համար:

Նա լռեց, ըստ երևույթին, մտքերը կենտրոնացնելու համար:

— Ես առայժմ չկարողացա համոզել նրանց խորհրդակ-
ցություն կազմակերպելու խոշոր կապիտալիստներից որևէ
մեկի հետ, — շարունակեց նա՝ խնամքով բառերն ընտրե-
լով: — Ուզում են սպասել ու տեսնել, թե ինչպես կդասավոր-
վեն հանդամանքները վազ առավոտյան: Բայց և այնպես
եթե ես լինեի ձեր տեղը, զեռ չէի վհատի: Եթե բանը շատ
վաս րիմֆոցր ստանա, նրանք կարող է պատճել փոխեն
իրենց սրացումբ: Անտխորժ զործ է, բայց նրանք հուսով են,
որ դուք կկարողանաք դուրս պրծնել, և այն ժամանակ ամեն
ինչ կհարթիի: Ես նույնպես հուսով եմ: Գալով ձեր մոտ ունե-
ցած իմ ալվանդին, ի՞նչ ասեմ, օրը կգա, բարին հետը: Եթե
կարողանամ առանց դրան գործ տեսնել, ապա ետ չեմ վերց-
նի: Բայց ավելի լավ է այդ մասին խոսենք վաղը: Ի դեպ, եթե
ձեր տեղը լինեի, չէի փորձի: Էլի փող ստանալ Սթիներից:
Այդ ամենը առանց այն էլ բավական անդուր է:

Քասիկիրվուտին անմիջապես պարզ դարձավ, որ շարժե
այդ մարդկանցից օդություն սպասել: Միակ բանը, որ
անհանգստացրեց նրան, Սթիների անոնը տալն էր: Մի՞թե
նրանք կապվել են հետը ու նախազգուշացրել: Այդ գեպքում
իր այցելությունը Բաթլերին անհաջող էր. բայց մյուս կողմից,
եթե վաղը սնանկություն է սպասնում իրեն, ապա ինքը ինչ-
պե՞ս կարող էր այլ կերպ վարվել: Համենայն գեպս այդ
պարուները գիտեն, թե ինչ վիճակի մեջ է ինքը: Երբ իրեն
վերջնականապես հուսպ տան պատին, նորից կդիմի Բաթլերին:

և այս ժամանակ իրենց կամքն է՝ օգնե՞ն իրեն, թե՛ ոչ եթե մերժեն, և ինքը սնանկանա, հանրապետական կուսակցությունն էլ ընտրություններում պարտվի, ապա ոչ ոքի շեն կարողանա մեղադրել, բացի իրենցից։ Հիմա կարեոր է կանխել նրանց ու ավելի շուտ տեսնել Սթիներին. պետք է հուսալ, որ սա բավականաշատ խելք կունենա, որպեսզի իրեն հարվածի տակ չդնի։

— Հիմա իմ դրությունը բավական մոայլ է, միստր Բաթլեր, — պարզապես ասաց նա, — բայց ես կարծում եմ, որ այնուամենայնիվ կկարողանամ դուրս պրծնել։ Համենայն դեպս հույսս չեմ կտրում։ Շատ եմ ցավում, որ անհանգրստացրի ձեզ, ես իհարկե կուզենայի, որ դուք՝ զենտլմեններդ, անհրաժեշտ ու հնարավոր համարեիք օգնել ինձ, բայց որ շկա՝ շկա՛։ Ես ինքո դեռ կարող եմ որոշ միջոցներ ձեռք առնել։ Բացի դրանից, հույս ունեմ, որ դուք ինձ մոտ կթողնեք ձեր ավանդը, քանի դեռ ձեզ համար հնարավոր լինի։

Նա արագ դուրս եկավ, և Բաթլերը մտածմունքի մեջ ընկավ։ «Խելացի է այս երիտասարդը, — մտովի ասաց նա։ — Շա՛տ ափսոս։ Բայց կարող է պատահել, որ կարողանա գլուխը ազատել»։

Քառուիթրվուդը շտապեց տուն։ Հայրը դեռ անկողին չէր մտել և նստել էր՝ մոայլ մտքերի մեջ սուլված։ Նրանց միջն տեղի ունեցած խոսակցությունը տոգորված էր խոր սրտացավությամբ։ Հայր ու որդի խոսքի կեսից հասկանում էին իրար, Ֆրենկը սիրում էր հորը։ Նա համակրում էր ներքնախավից դուրս գալու նրա անխոնց ձգտումին և ոչ մի րոպե չէր մոռանում, որ մանկուց միայն գուրգուրանք և ուշադրություն էր տեսել նրանից։ Այն վարկը, որ ստացել էր նա երրորդ ազգային բանկից՝ իբրև երաշխիք տալով Յունիոնաթրիթի գծի ոչ այնքան արժեքավոր բաժնետոմսերը, հավանորեն կարողանա մարել, եթե, իհարկե, բորսայում տեղի չունենա կուրսերի աղետալի անկում։ Այդ գումարը պետք է վերադարձնի ի՞նչ գնով էլ լինի։ Բայց ինչպե՞ս վարվի քաղաքային երկաթուղիներում կատարած հոր ներդրումների հետ, որոնք աճման ընթացքում ավելացրել էին իր սեփական

բաժնետոմսերը ու բոլորը միասին հասել էին երկու հարյուր հազար դոլարի. ինչպես փրկել այդ փողերը: Բաժնետոմսերը վաղուց էին գրավ դրվել, իսկ դրանց դիմաց ստացված վարկը դորձածված էր այլ նպատակների համար: Անհրաժեշտ է լրացուցիչ գրավական մուծել բանկերը, որտեղից ստացված էին այդ փոխատվությունները: Փոխատվություններ, փոխատվություններ, փոխատվություններ, և մտահոգությունը՝ ո՛չ ծայր ունի, ո՛չ վախճան: Եթե միայն հնար լիներ ստիպելու Սթիներին ավանդ տալու իրեն ևս մի երկու կամ երեք հարյուր հազար: Մակայն ֆինանսական հնարավոր դժվարությունների գեմ-հանդիման դա արդեն ոճրագործության կմուենար: Հիմա ամեն ինչ կախված էր վաղվա օրից:

Բացվեց հոկտեմբեր 9-ի գորշ ու ամպամած երկուշաբթին: Առավոտյան ծեզին վեր կացավ Քառուփերվուգը, ածիլվեց, հագնվեց և գորշականաշ պատշգամբով գնաց հոր մոտ: Ծիրաւմին ամբողջ գիշերը չեր քնել և արդեն ոտքի վրա էր: Նրա ձերմակ հոնքերն ու մազերը զպպվել էին, և այտմուսներն էլ այդ օրը բարեւաև չին երկում: Մեր շենալմենի աշքերը հայտն էին հոգնած, զեմքը զսրչավոն էր դարձել: Հայրը հայացքը բարձրացրեց փսքրիկ ու կողարիկ «բուզ» գրասեկանից, որ չփանս որտեղից ճարել էր նրա համար էլուստրիլ և որի առաջ նստած՝ այժմ ուշի-ուշով ստուգում էր իր պարտքն ու պահանջը: Քառուփերվուգը ցնցվեց: Նա միշտ էլ տանջվում էր, եթե հորը տեսնում էր տաքնապահար, իսկ հիմա անզոր էր օգնելու նրան: Եթե նրանք միասին կառուցում էին այս նոր տները, Ֆրենկը հավատացած էր, որ հոգսի ու անհանգստության օրերն ընդմիշտ անցել են ծերունու համար:

— Հանրագումա՞ր ես անում, — սովորական կատակալին շեշտով հարցրեց նա՝ շանալով ուժերի ներածի շափ գոտեպնդել հորը:

— Վերանայում եմ իմ ունեցվածքը, որպեսզի իմանամ, թե ինչի հետ գործ պիտի ունենամ, եթե...— նա շեղակի նայեց որդուն, և Ֆրենկը ժպտաց:

— Պետք չէ անհանգստանալ, հայր: Ես քեզ արդեն ասել եմ՝ ամեն ինչ այնպես եմ արել, որ Բաթլերն ու նրա ըն-

կերները հարկադրված կլինեն պահել շուկան։ Ես խնդրել եմ
Արվեստին, Թարգումին և Հարբի Էլթինցին օգնեն ինձ՝ բորսա-
յում ժախելու իմ թղթերը։ Հէ՞ որ դրանք լավագույն միջնորդ-
ներն են։ Նրանք գործելու են խիստ զգույշ։ Ես չէի կարող
հանձնարարել դա էղին կամ Ջոյին, որովհետև այն ժամա-
նակ ամենքն էլ կհասկանային, թե ինչ է կատարվում ինձ
հետ։ Իսկ այդ տղաները այնպիսի տպավորություն կստեղծեն,
որ իբր հողմացրիվ են անում արժեթղթերի կուրսը, բայց
միաժամանակ ոչ այնքան սաստիկ։ Անհրաժեշտ է, որ ես
բորսա նետեմ այնքան բաժնետոմս, որ կուրսից տասը կետ
պակաս ծախելով՝ իրացնեմ հինգ հարյուր հազար դոլար։
Հնարավոր է, որ թղթերը ավելի պակաս շընկնեն։ Հիմա էլ
դժվար է որևէ բան գուշակել։ Հոգի կարող անկումն անվերջ
շարունակվել։ Եթե միայն իմանայի, թե ինչ են անելու խո-
շոր արագածովարական ընկերությունները։ Առավոտյան թերթ
դեռ չե՞ն բերել։

Քառուիերվուղն ուզում էր զանգ տալ, բայց մտածեց, որ
ծառաները հազիվ թե վեր կացած լինեն։ Եվ ինքը գնաց նա-
խասենյակ։ Փոստարկում էին «Պրես» և «Պարլիկ լեշեր»
թերթերը՝ տպագրական ներկից տակավին խոնավ։ Մի թոռ-
ցիկ հայացք նետելով առաջին էշերին, դեմքն անմիջապես
այլայլվեց։ «Պրես»-ում զետեղված էր Զիկագոյի մի մեծ, ամ-
բողջ էջը դրավող և սարսափեցնող մոռայլ տեսքի սև հատա-
կադիմ։ այդաւեղ սև գույնով նշված էր քաղաքի այրվող
մասը։ Նա դեռ երբեք պատեհություն չէր ունեցել տես-
նելու Զիկագոյի այդպիսի սպառից, հստակ հատակա-
գիծը, որտեղ սպիտակ տարածությունը Միշիգան լիճն
էր, ահա և Զիկագո գետը, որ քաղաքը բաժանում է
համարյա երեք հավասար մասերի՝ հյուսիսային, արևմտյան
և հարավային։ Հանկարծ Քառուիերվուղի աշքին ընկավ,
որ քաղաքը մի քիչ անսովոր է հատակագծված և
ինչ-որ բանով Ֆիլադելֆիան է հիշեցնում։ Առետրական
մասը՝ երկու կամ երեք քառակուսի կիլոմետր տարածու-
թյամբ, գտնվում էր քաղաքի երեք մասերի մերձեցման կե-
տում՝ գետի հիմնական հունից դեպի հարավ, այնտեղ, ուր

Հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան թերթի միանալուց հետո թափվում է՝ լինք։ Դա մի խոշոր շրջան էր քաղաքի կենտրոնում, բայց ըստ քարտեզի՝ ամբողջովին հրկիզվել էր։ «Զիկագոն համատարած հրդեհ է», ասում էր էջի ամբողջ լայնքը բռնող խոշոր, հաստ տառերով տպված վերանգիրը։ Այնուհետեւ գալիս էին մանրամասնությունները՝ անօթևան մնացածների տառապանքները, կրակի մեջ զոհվածների, ամբողջ կարողությունը կորցրածների թիվը։ Ապա քննարկվում էր այն հարցը, թե ինչպես կանդրադառնա հրդեհը Արևելյան նահանգների վրա։ Կարծիքներ էին հայտնվում, որ ապահովագրական ընկերությունները և արդյունաբերողները հնարավոր է անզոր լինեն դիմանալու այսպիսի վիթխարի վնասներին։

— Անե՞ծք, — մոայլ արտաքերեց Քառվերվուդը։ — Սատանան դրդեց ինձ խճճվել այդ բորսայական գործերի մեջ։

Նա վերապարձակ հյուրասենյակ ու թաղվեց թերթերի բնիթերցանության մեջ։

Այնուհետեւ, շնորհած վակ ժամին, հար հետ մեկնեց գրասենյակի։ Այդտեղ սպասում էր նրան փսառը՝ մի տասնյակից տվիրի նամակներ տառաջարկում էին շեղյալ համարել այս կոտ այն զործարքը կամ թե ծախել արժեթղթերը։ Երբ նա սարի վրա նայում էր օրվա թղթակցությունը, ցրիշ մանշուկը երեք նամակ ևս բերեց։ Դրանցից մեկը Սթիներից էր, որ հայտնում էր, թե քաղաքում կլինի ժամը տասներկուսի մոտ, ավելի շուտ ո՛չ մի կերպ չի հաջողվի։ Քառվերվուդը միաժամանակ և՛ վախ, և՛ թեթևություն զգաց։ Խոշոր գումարների կարիք կունենա ինքը, սրպեսզի վճարի մի շարք պարտքեր դեռ ժամը երեքից առաջ։ Այժմ թանկ է ամեն մի բոպեն։ Անհրաժեշտ է բռնել Սթիներին կայարանում ու խոսել նրա հետ, նախքան մի ուրիշը կանի դա։ Այսո, սկսվում էր մի ծանր, գըժվարին ու լարված օր։

Քառվերվուդի գալու պահին երրորդ փողոցն արդեն լեփ-լեցուն էր բանկիրներով ու բորսայականներով, որոնց այդտեղ էր բերել բոպեի ծայրահեղ սրությունը։ Ամենքն էլ շտապում էին շգիտես ուր, օդում զգացվում էր այն էլեկտրա-

կանացած վիճակը, որով տարբերվում են մի հարյուր տագ-նապահար մարդկե մի հարյուրակ անխռով մարդկանցից թորսայում նույնպես տենդագին մթնոլորտ էր տիրում։ Գոնդի հնչելու հետ միաժամանակ սրահը լցվեց աներեսակայելի աղ-մուկով։ Տակավին չէր վերջացել նրա երկարածիգ, մետաղա-ձայն դղրդոցը, երբ երկու հարյուր մարդ՝ տեղական բորսա-յական կազմակերպությունը, ինչ-որ անըմբոնելի հնչյուն-ներ արձակելով, վրա տվին՝ ոմանք արժեթղթեր ծախելու, ոմանք էլ, ընդհակառակը, ճանկելու տվյալ պահին ձեռնտու առաջարկությունները։ Ներկաների շահերը այնքան բազմա-ցան էին, որ կողմնակի դիտողը չէր կարողանա հասկանալ, թե ինչն է հիմա ձեռնտու՝ ծախե՞լը, թե՞ դնելը։

Որվերսն ու Թարդուկը ցուցում ստացան մնալու խռնված բազմության մեջ, իսկ Ֆրենկի եղբայրները՝ Զողեֆն ու Էդուարդը, խլրտալ ամեն կողմ և առիթ գտնել ծախելու բաժ-նետոմսերը շատ թե քիչ տանելի գներով։ «Արշերը» համա-սորեն իշեցնում էին կուրսը, այնպես որ ամեն ինչ կախված էր այն բանից, թե Մոլենհաուերի, Սիմֆոնի և Բաթլերի գոր-ծակալները, ինչպես նաև մյուս բորսայականները աշխատո՞ւմ են պահել քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերի կուր-սը և արդյո՞ք այդ բաժնետոմսերը որևէ արժեք կպահեն։ Նա-խորդ երեկոյան Քառուփերվուղին հրաժեշտ տալիս Բաթլերն ասաց, թե իրենք կանեն իրենցից կախված ամեն բան։ Բաժ-նետոմսեր կդնեն մինչև վկրչին հնարավորությունը։ Նա իհար-ել չէր կարող խոստանալ, թե անսահմանափակ կերպով կպահի շուկան, ինչպես որ չէր կարող երաշխավորել Մոլեն-հաուերին, ու Սիմֆոնին։ Ասենք նա չէր էլ իմանում, թե ինչ վիճակում են նրանց գործերը։

Երբ առավելագույն շափի հասավ հուզմունքը, ներս եկավ Քառուփերվուղի։ Նա հենց դոնից էլ սկսեց աշքով փընտ-րել Ռիվերսին, բայց այդ բոպեին նորից գոնզը հնչեց, և գործարքները դադարեցին։ Ամբողջ բազմությունը վայրկե-նապես շրջվեց գեպի այն փոքրիկ պատշգամբը, որտեղից բորսայի քարտուղարը անում էր իր հաղորդումները։ Եվ իս-կապես էլ այդ փոքրիկ, թուխ, մոտ երեսունութ տարեկան

մարդը, որի թույլ կազմվածքը և գունատ, տիպիկ պաշտոնյայի դեմքը նրա մեթոդիկ, խիզախ թռիչքներից զուրկ մտքի վկայությունն էին, արդեն կանգնել էր իր տեղը, իսկ ետքից նայում էր բաց դուռը։ Նրա աջ ձեռքին սպիտակին էր տալիս մի թերթ թուղթ։

— Բոստոնի հակահրդեհային ապահովագրության ամերիկյան ընկերությունը սնանկություն է հայտարարում։

Նորից հնչեց գոնդը։ Եվ նույն ակնթարթին պայթեց փոթորիկ՝ է՛լ ավելի կատաղի, քան առաջ։ Եթե այդ կիսախավար առավոտյան, բորսայի բացման պահից հազիվ կես ժամ անցած, արդեն կոտր ընկավ ապահովագրական մի ընկերություն, ապա ի՞նչ են խոստանում հաջորդ շորս-հինգ ժամերը կամ հետևյալ օրերը։ Դա նշանակում էր, որ Զիկագոյի հրդեհից տուժածներն արդեն չեն կարող վերականգնել իրենց ձեռնարկությունները։ Այդ նշանակում էր, որ բանկերն արդեն պահանջել են կամ հիմա կպահանջեն սնանկացած ընկերության հետ կտպված րոլոր փոխառավությունները։ Սարսափահար «եղների» ճիշերու արոնը հետպահան ավելի էժան էին տուացրկում երկարագոյն։ Հյուսիսային Խոտղազօվկիանոսյան, Էլլինոսյան, Մենարալ, Մեզինի, Լիքր-Շոր և Ուոբեշ ընկերության հաղանակող, ինչպես և քաղաքացին երկաթուղիների բաժնետոմսերի և Քառութերվուղի իրացրած փոխառության պարտատման սերի ծրարներ, մղկտացնում էին բոլոր նրանց սրաերը, ովքեր մասնակից էին այդ ձեռնարկություններին։ Քառութերվուղը, օգավելով բոպեական լուսիցունից, մոտեցավ Արթուր Ռիվերսին, բայց ոտ և ոչինչ չէր կարող ասել նրան։

Բայտ իսկ Մոլենհատուերի ու Սիմփոնի գործակալները այնքան էլ եսանդապին չեն ստացալունում դները, — մտահոգ տասց Քառափերվուղը։

— Դրանք նյու-Յուրիֆից տեղեկություն են ստացել, — մոայլ պատասխանեց Ռիվերսը։ Այնպես որ այստեղ ջանք թափելու բան էլ չկա։ Որքան ես հասկացա, այնտեղ ուր որ է՝ ապահովագրական մի երեք ընկերություն ևս հօգս կցնդեն։ Ուզած բոպեին կարող են հայտարարել։

Նրանք կարճ ժամանակով դուրս եկան այդ ահավոր դժոխքից, որպեսզի քննարկեն հետագա միջոցառումները: Սթիների հետ ունեցած համաձայնությամբ Քառուփերվուրի լիազորված էր մինչև հարյուր հազար դոլլարի քաղաքային փոխառության պարտատոմսեր գնել՝ անկախ դրանց հետ կատարվող բորսայական խաղից, որից երկուսն էլ բավականին վաստակ էին արել: Բայց դա միայն այն գեպօւմ, եթե ընկնող կուրսը պահելու անհրաժեշտություն լիներ: Այժմ Քառուփերվուրը որոշեց վաթսուն հազար դոլլարի պարտատոմս գնել և գրանցով ամրապնդել այլ տեղերից ստացված փոխառությունները: Սթիներն անմիջապես կհատուցի այդ գումարը և նորից կանխիկ դրամ կտա: Այսպես թե այնպես այդ կոմբինացիան կօգնի նրան կամ համենայն դեպս հնարավորությունն կտա սրոշ ժամանակ ոտքի վրա ողաճել այլ արժեթղթեր և իրացնել դրանք նախքան կուրսի աղետալի անկումը: Օ՛, եթե նա միջոցներ ունենար ու հիմա իշեցնելու միտումով սկսեր խաղալ, եթե այդպիսի խաղը անմիջական կործանում չսպառնար նրան: Եվ բնորոշ է՝ անգամ այսպիսի վըտանգավոր պահին Քառուփերվուրի համար գաղտնիք չէր, որ այն հանգամանքները, որոնք ներկա նեղ վիճակում սպառնում էին սնանկացնել նրան, մի այլ ժամանակ լավ օգուտ կտային: Բայց հիմա նա չէր կարող օգտվել դրանցից: Զի կարելի միաժամանակ կանոնել և՛ այս, և՛ այն կողմում: Կամ «արջ» ես դու, կամ «եղջ». և անհրաժեշտությունն ստիպում էր նրան «եղ» լինել: Իրադարձությունների տարօրինակ ընթացք, ի՞նչ կարող ես անել: Այժմ անօգուտ էր նրա ամբողջ ճարպկությունը: Նա արդեն պատրաստվում էր դուրս գնալ ու տեսնել մի բանկիրի, որից հույս ուներ դրամ ստանալ իր տունը գրավ դնելով, երբ կրկին հնչեց գոնքը: Ու դարձյալ գործարքները դադարեցին: Արթուր Ծիվերսը այն գործասեղանի մոտից, ուր ծախում էին նահանգի արժեթղթերը և քաղաքային փոխառության պարտատոմսերը (նա նոր էր սկսել վերջիններից գնել), արտահայտիլ կերպով նայեց Քառուփերվուրին: Նույն րոպեին նրա մոտ վազեց նյուտոն Թարգուր:

— Ամեն ինչ ձեր դեմ է,— բացականչեց նա: — Զարժե

անգամ ծախելու փորձ անել այսպիսի կոնյունկտուրայի դեպքում: Անօգութ զբաղմունքը նրանք քանդում են ձեր ոտքի տակի հողը: Լարումն արդեն հասել է սահմանագծին: Մի քանի օր հետո բեկում կակսվի: Գուցե և կարողանաք դիմանալ: Դեհ, պատրաստվեցեք նոր անախորժության:

Նա աշքով ցույց տվեց այն փոքրիկ պատշգամբը, որտեղ կրկին երևաց բորսայական կոմիտեի քարտուղարը:

— Հսկահրդեհային ապահովագրության Արևելյան և Արևմտյան ընկերությունները սնանկություն են հայտարարում:

Բվկոց անցավ սրահով, երկարաձիգ «օ՞օ՞օ»-ի նման մի բան:

Քարտուղարը մուրճը մի քանի անգամ խփեց՝ կարգի հրավիրելու համար:

— Ռոշեստերի հակահրդեհային ապահովագրության «երի» բնկերաւթյունը սնանկություն է հայտարարում:

Խորից «օ՞օ՞օ»:

Առ զարձալ մուրճի հարվածներ:

— Եյտ. Յորիքի Ամերիկյան վարմային ընկերությունը գտղարեցրել է վճարումները:

— Օ՞օ՞օ:

Մոլեգնում չը մրիիկը:

— Հը՛, ի՞նչ կասեք, — հարցնում էր Թարգուլը: — Կարելի՞ է միթե կանգնել այսպիսի փոթորկի դեմ: Զէի՞ք կարող դադարեցնել վաճառքը և մի քանի օր դիմանալ: Գուցե և ավելի լավ կանեք, եթե իշեցնելու միտումով խաղաք:

— Հիմա ոկետք էր փակել բորսան, — մրթմրթաց Քառիերվուսկը: — Դա պատվյունից դուրս գալու հիմանալի ելք կլիներ: Այլապես գործին չենք օգնի:

Նա շտապ մոտեցավ բորսայականների այն խմբին, որոնք իր վիճակի մեջ էին ընկել. գուցե դրանք իրենց ազդեցությամբ աջակցեն իրագործելու իր մտադրությունը: Դա դաժան քայլ կլիներ նրանց հանդեպ, ում համար այս կոնյունկտուրան նպաստավոր էր և որոնք այժմ բերք էին հնձումն Բայց իր ի՞նչ հոգսն են նրանք: Գործը գործ է, Անիմաստ էք

իր թղթերը ծախել տնաքանդ անող ցածր գներով, և նակարգ գաղտեց իր գործակալներին ժամանակավորապես դադարեցնել վաճառքը: Եթե բանկիրները չեն ուզում մի ակնառու՝ ծառայություն մատուցել իրեն, եթե դրամական բորսան չփակվի, եթե չհաջողվի Սթիներին համոզել, անմիջապես երեք հարյուր հազարի վարկ ևս բացել իրեն, ինքը կործանված է: Առանց մի րոպե իսկ կորցնելու, նա գնաց տեսնելու մի քանի բանկիրների ու բորսայականների, որոնց գրասենյակները նույն երրորդ փողոցում էին, և առաջարկեց, որ նրանք պահանջեն փակել բորսան: Իսկ տասներկուսից մի քանի րոպե առաջ սլացավ կայարան՝ Սթիներին դիմավորելու: Բայց ի մեծագույն կակիծ իրեն, չհանդիպեց նրան: Հնարավոր է, որ Սթիները չէր հասել այդ գնացքին: Սակայն Քառուփերվուղը նենդություն զգաց և որոշեց գնալ նախ՝ քաղաքապետարան, հետո էլ Սթիների տունը: Գուցե և սա վերադարձել է, բայց աշխատում է չհանդիպել իրեն:

Սթիներին քաղաքապետարանում զգտնելով՝ Քառուփերվուղը հրամայեց կառապանին քշել նրա տունը: Եվ նույնիսկ շզարմացավ, երբ մուտքի մոտ բախվեց նրան: Սթիները գունատ էր և ակնհայտ կերպով վատ տրամադրության մեջ: Քառուփերվուղին տեսնելով՝ ավելի գունատվեց:

— Ա, բարե ձեզ, Ֆրենկ, — շփոթված ողջունեց գանձապետը: — Որտեղից եք գալիս:

— Ի՞նչ է պատահել, Ջորջ, — իր հերթին հարցրեց Քառուփերվուղը: — Հույս ունեի հանդիպելու ձեզ Բրոդ-սթրիթի կայարանում:

— Այս, սկզբում մտածում էի այստեղ իշնել, — պատասխանեց Սթիները (ըստ այդմ նա հիմար տեսք ուներ), — բայց հետո իշա Վեստ-Ֆիլադելֆիայում, որպեսզի տուն գալու և հագուստներս փոխելու ժամանակ ունենամ: Այսօր շատ անելիքներ ունեմ: Պատրաստվում էի գալ ձեզ մոտ:

Քառուփերվուղի շտապ հեռագրից հետո այս հայտարարությունը բավական անմիտ հնչեց, սակայն երիտասարդ բանկիրը շլսելու տվյեց:

— Նստեցեք իմ կառքը, Ջո'րջ. — Հրավիրեց նա Սթինե-

րին:— Մենք պետք է լրջորեն խոսենք: Ես ձեզ հեռագրել էի, որ բորսայում կարող է խումապ սկսվել: Այդպես էլ եղավ: Ոչ մի բոպե շենք կարող կորցնել: Բաժնետոմսերը աղետալի շափով ընկել են, և բանկերն արդեն պահանջում են, որ մարեմ իմ փոխառությունների մեծ մասը: Ես պետք է իմանամ՝ մի քանի օրով երեք հարյուր հիսուն հազար դոլլար փոխ կտա՞ք ինձ տարեկան չորս կամ հինգ տոկոսով: Մինչև վերջին ցենտը կվերադարձնեմ ձեզ: Ես փողի շափազանց մեծ կարիք ունեմ: Առանց դրան կոտր կը լինեմ: Հասկանո՞ւմ եք ինչ է նշանակում դա, Զո՞րք: Իմ ամբողջ ակտիվը՝ մինչև վերջին դոլլարը, «սառուց կկտրի», միաժամանակ և ձեր ներդրումները քաղաքային երկաթուղիներում: Ես չեմ կարողանա դրանք տալ ձեզ իրացնելու համար, և քաղաքի գանձարանից փոխ տրված գումարների այդ պատմությունը մեջտեղ կգա ամենաանախորժ լույսի տակ: Թուք գրամարկդի պակասորդը ծածկելու միջոց շիք ունենա, իսկ ի՞նչ հոտ է գալիս դրանից, կարծում եմ ինքնիրդ և առոկանում եր երկուու և միաժամանակ ցեխորն ենր բնիկի ես ուզում եմ, որ զոր կարստանար զարս դալ պարզերս, բայց տոտեց ձեր օգնությունի վիճակի շեմ անել: Եթեկ ես հարկադրութ և դիմել Բաթլերին՝ նրա ավանդի հարցուի և ունին ցոնք թափում եմ այլ աղբյուրներից ևս փող հարելու համար: Բայց վախենում եմ դուրս չպրծնեմ, եթե զոր հրաժարվեք աջակցել ինձ:

Քառուիերվուդը լուց: Նա ձգտում էր որքան կարելի է Սթիների առաջ հստակ ցույց տալ ամբողջ պատկերը, նախքան սա ժամանակ կունենա մերժել. թող իմանա, որ նրա վիճակն էլ լավ չէ:

Իսկ իրականում պատահեց այն, ինչ, իրեն հատուկ խորաթափանցությամբ, կամկածում էր Քառուիերվուդը: Սթիներին «Ճանկելու» ժամանակ ունեցել էին: Նախորդ երեկոյան, հենց որ Բաթլերն ու Սիմֆոնը մեկնել էին, Սոլեն-Հառուերը կանչել էր իր քարտուղար էրներ Սենգութեկին, որ խիստ ճարպիկ երիտասարդ էր, և հանձնարարել իմանալ Սթիների գտնվելու վայրը: Սենգութեկը մանրամասն հեղագիր ուղարկեց Սթրոբիկին, որ Սթիների: Հետ գնացել էր որսի:

և եռանդագին հանձնարարեց, որ սրան զգուշացնի Քառուփեր-վուղից: Գանձարանի վատնումը երևան է բերված: Ինքը՝ Սենգսթեկը, Սթրոբրիկին ու Սթիներին կդիմավորի Վիլմինգտոնում (Քառուփերվուղին կանխելու համար) և կհայտնի մանրամասնությունները: Դատական պատասխանատվությունից վախենալով, Սթիները պետք է դադարեցնի փոխ տալ Քառուփերվուղին: Նախքան որևէ մեկին հանդիպելը, Սթիներին հանձնարարվում է տեսնել Մոլենհաուերին: Պատասխան հեռագիր ստանալով Սթրոբրիկից, որը հայտնում էր, թե նրանք հույս ունեն վերադառնալ վաղը կեսօրին, Սենգսթեկը մեկնեց դիմավորելու Վիլմինգտոնում: Ահա թե ինչու Սթիները կայարանից ուղիղ զգնաց գործարարական թաղամասը, այլ իջավ Վեսո-Ֆիլադելֆիայում՝ պատրվակելով, թե պետք է զնա տուն հագուստները փոխելու, իսկ իրականում Մոլենհաուերին տեսնելու՝ նախքան Քառուփերվուղին հանդիպելը: Նա սաստիկ ահաբեկվել էր և աշխատում էր ժամանակ շահել:

— Ո՛չ, Ֆրենկ, չեմ կարող, — աղաշեց նա: — Առանց այդ էլ շատ եմ թաղվել այդ գործի մեջ: Մոլենհաուերի քարտուղարը եկել էր մեզ դիմավորելու հատկապես նրա համար, որ նախազգուշացնի ինձ այդ քայլից: Սթրոբրիկն էլ նույն կարծիքն ունի: Նրանք գիտեն, թե որքան փող եմ ես բաժանել: Կամ դուք ինքներդ, կամ մի ուրիշը հայտնել է նրանց ես չեմ կարող դեմ զնալ Մոլենհաուերին: Ես նրան եմ պարտական այն, ինչ հիմա սնեմ: Նա է հաջողեցրել գանձատեսի իմ պաշտոնը:

— Լսեցեք, թե ինչ եմ ասում, Զո՞րջ: Ինչպես էլ հիմա վարվեք դուք, այնուամենայնիվ մի՞ թույլ տաք ձեզ խելքահան անեն կուսակցության նկատմամբ պարտականություն ունենալու խոսակցություններով: Դուք խիստ վտանգավոր դրության մեջ եք, նույնպես և ես: Եթե դուք հիմա ինձ հետ միջոցներ ձեռք շառնեք ձեզ փրկելու համար, ոչ ոք չի փրկե, ո՛չ հիմա, ո՛չ էլ հետո: Զխոսելով արդեն այն մասին, որ «Հնատո» արդեն ուշ կլինի: Ես երեկ համոզվեցի դրան, երբ Բաթերին խնդրում էի օգնել մեզ երկուսիս: Նրանք արդեն իմանուեն, որ մենք շահագրգուշ ենք քաղաքային երկաթուղինե-

րով, և ամեն կերպ ուզում են փետրահան անել մեզ. ամբողջ ցավն այդ է: Հիմա հարցը այսպես է դրված՝ ո՞վ ուա կհաղթի: Եվ մեզ մնում է միայն մի բան՝ կամ փրկել մեզ ու պաշտպանվել, կամ միասին սուզվել. ահա այն ամենը, ինչ ուզում էի ասել ձեզ: Զեր ճակատագիրը Մոլենհառուերին նույնքան քիչ է հուզում, որքան այս լապտերի ճակատագիրը: Նրան անհանգստացնում է ոչ թե այն փողը, որ դուք տվել եք ինձ, այլ այն, թե դրանցից ո՞վ կշահի և ո՞րքան: Մի՞թե դուք չեք հասկանում, որ նրանք իմացել են, թե ես և դուք մեր ձեռքըն ենք առնում քաղաքային երկաթուղիները, իսկ դա նրանց սրտով չէ: Հենց որ մեր ձեռքից խլեն դրանք, մենք անմիջապես կդադարենք գոյություն ունենալ իրենց համար. մի անգամ ընդմիշտ հիշեցեք սա: Եթե մեր ներդրումները հօդս ցնդեն, դուք վերջին մարդը կլինեք, նույնպես և ես: Ոչ ոք մատն անգամ չի շարժի մեզ օգնելու համար, անգամ քաղաքական նկատառումներից ելնելով: Ես ուզում եմ, որ դուք վիսվին լուրուներ այս տիսուր հշմարառությունը, Զո՞րջ: Եվ նախրան «ոչ» կտոհի ինձ, բանի որ Մոլենհառուերն է պահանջում ձեզնից, դուք պետք է մի լով մամտաք իմ խոսքերի վրա:

Նու շիշտակի նայեց Սթիներին՝ փորձելով իր հոգու ուժով սահմանագետին համաձայնել այն միակ քայլին, որը կարող էր փրկել իրեն՝ Քառակերպուդին, թեկուզ կիրշին Հաշվով Սթիները քիչ օգուտ ուներ դրանցից: Հետաքրքրական է նշել, որ Հիմա Սթիները բնավ չէր շահագրգում նրան: Նրա համար Սթիները պարզապես մի արարած էր, որին շարժում էր ամեն ոք իր հայեցողությամբ, ում ձեռքն ընկներ: Եվ ի հեճուկս Մոլենհառուի, Սիմֆոնի ու Բաթլերի՝ Քառութիրվաղը ուզում էր պահել այդ արարածին: Նա հայացքը գամեց Սթիների վրա, ինչպես օձը՝ թռչունի, զանալով ենթարկել նրան իր կամքին և սարսափից կիսամեռ այդ մարդու մեջ արթնացնել ինքնապահպանման բնագդը:

Բայց Սթիները շփոթվել էր և արդեն ոչ մի բան տպավորություն չէր գործում նրա վրա: Նրա գեմքը մի տեսակ ցորշակապույտ գույն էր ստացել, կոպերն ուռել էին, աշքերը

փոս ընկել, ձեռքերն ու շրթունքները խոնավացել էին: Աստված է իմ, ի՞նչ պատմության մեջ խճճվեց:

— Այդ ամենն այդպես է, Ֆրե՛նկ, — հուսահատ ձայնով բացականշեց գանձապետը: — Ես գիտեմ, որ դուք իրավացի եք: Բայց մտածեցեք, թե ինչ վիճակի մեջ կընկնեմ, եթե այդ գումարը տամ ձեզ: Չէ որ նրանք ողջ-ողջ կուտեն ինձ: Մի պահ ձեզ դրեք իմ տեղը: Ա՛խ, երանի Բաթլերին դիմած չլինեիք: Դուք սկզբից պետք է ինձ հետ խոսեիք:

— Ինչպէ՞ս կարող էի խոսել ձեզ հետ, Զո՛րջ, երբ դուք շգիտես որտեղ բադ էիք սպանում: Ամեն տեղ հեռագրեր ուղարկեցի, փորձելով կապ ստեղծել ձեզ հետ: Էլ ի՞նչ էր մնում ինձ անել: Ես պարտավոր էի գործել: Բացի դրանից, կարծում էի, որ Բաթլերը ավելի բարյացակամ կլինի իմ նկատմամբ, քան իրականում եղավ: Հիմա ժամանակը չէ երեսով տալ, որ ես դիմել եմ Բաթլերին. պետք է դրությունից դուրս գալ: Երկուսս էլ անախորժ պատմության մեջ ենք ընկել: Խոսքն այն մասին է՝ դուրս կդա՞նք, թե՞ կսուզվենք հատակը. այո, մենք, և ուրիշ ո՛չ ոք. հասկանո՞ւմ եք: Բաթլերը չէր կարող կամ չուզեց անել այն, ինչ խնդրեցի նրանից, այսինքն՝ համոզել Մոլենհաուերին ու Սիմֆոնին, որ պահեն արժեթղթերի կուլսը: Նրանք հիմա ճիշտ հակառակն են անում: Բայց իրենց խաղն են խաղում, իսկ դրա նպատակն է մեզ փետրահան անել: Մի՞թե չեք հասկանում: Ուզում են խլել մեզնից այն ամենը, ինչ կուտակել ենք: Մենք ինքներս պետք է փրկենք մեզ, Զո՛րջ, ահա թե ինչու եմ եկել ձեզ մոտ: Եթե երեք հարյուր հիսուն հազար դոլլար շտաք ինձ, կամ գոնե՛ երեք հարյուր, երկուսս էլ կորած ենք: Եվ ձեր վիճակն ավելի վատ կլինի, քան իմը, որովհետեւ իրավաբանորեն ես ոչ մի պատասխանատվություն չեմ կրում: Բայց խնդիրը դա չէ: Ես ուզում եմ փրկել ինձ էլ, ձեզ էլ. ես գիտեմ մի միջոց, որը ամբողջ կյանքում մեզ կազատի դրամական դժվարություններից՝ ինչ էլ նրանք ասեն, ինչ դավ էլ նյութեն մեր գեմ, և ձեզանից է կախված օգտվել դրանից իշահ մեզ երկուսիս: Մի՞թե ինքներդ չեք հասկանում: Ես ուզում եմ փրկել իմ գործը, իսկ այն ժամանակ կփրկվեն և՛ ձեր անունը, և՛ ձեր փողերը:

Քառուիերվուղը խոսքն ավարտեց՝ հուսալով, որ կարողացավ, վերջապես, համոզել Սբիներին բայց սա առաջվագեն վարանում էր:

— Ի՞նչ կարող եմ անել, Ֆրե՛նկ,— թույլ ու ողբացին ձայնով առարկեց նա:— Ես չեմ կարող Մոլենհառուերին հակառակ գնալ: Եթե անեմ այն, ինչ խնդրում եք դուք, նրանք դատի կտան ինձ, հերս կանխծեն: Զէ՛, չեմ կարող, Ֆրե՛նկ: Ես բավականաշահի ուժեղ չեմ: Եթե նրանք ոչինչ չիմանային, եթե դուք հայտնած Ախնեիր նրանց, այն ժամանակ գուցե, այն ժամանակ ուրիշ, իսկ հիմա...

Նա գլուխն օրորեց, իսկ գորշ աշքերը անհուն հուսահատություն էին արտահայտում:

— Զո՛րջ, — վերսկսեց Քառուիերվուղը՝ հասկանալով, որ եթե կարողանա որևէ արդյունքի հասնել, ապա միայն ամենաանվիճելի փաստարկների միջոցով, — այլևս չխոսենք իմ արածի մտախն: Ես արեցի այն, ինչ անհրաժեշտ էր: Դուք արդեն կորցրել եք ամենայն ինքնաաիրապես և պատրաստ եք անուղղելի սխալ գործել: Ես չեմ ուզում, որ հասնեք այդ կետին: Ես հինգ հարյուր հաղար գոլլար քաղաքային փող եմ ներզրիլ ձեր, մասամբ էլ իմ օգտին, բայց այնուամենայիլ ավելի շատ հօգուտ ձեզ...

Այս հայտարարությունը այնքան էլ չէր համապատասխանում ճշմարտության:

— Ա..Եվ ահա այսպիսի պահին դուք տատանվում եք, չեք իմանում՝ պաշտպանե՞ք ձեր շահերը, թե՞ ոչ: Ես հրաժարվում եմ հասկանալ ձեզ: Զէ՞ որ սա ճգնաժամ է, Զո՛րջ: Բաժնետոմսերը թափալգոր ընկնում են, միայն մեզ չէ կործանում սպառնում: Բորսայում խուճապ է, հրդեհից առաջացած խուճապ, և նա, ով ոչինչ չի ձեռնարկում իրեն պաշտպանելու համար, իհարկե, գլուխը չի փրկի: Դուք ասում եք, թե գանձապետի պաշտոնի համար պարտական եք Մոլենհառուերին և վախենում եք, որ կարող է ձեր հախիցը գաւ Միլավ մտածեցեք ձեր և իմ դրության մասին, և կհասկանաք, որ նա ոչինչ չի կարող անել ձեզ, քանի դեռ ես սնանկացած

շեմ: Բայց եթե ես սնանկացած հայտարարեմ ինձ, ի՞նչ կլինի ձեզ: Այն ժամանակ ո՞վ կփրկի ձեզ դատարանից: Զլինի թե երևակայում եք, որ Մոլենհառուերը վազեվազ կգա ու ձեր փոխարեն կես միլիոն դոլար կմուծի գանձարանը: Այդ օրը շեք տեսնի: Եթե Մոլենհառուերը և մյուսները հաշվի են առնում. ձեր շահերը, հապա ինչո՞ւ այսօր չեն պաշտպանում ինձ բորսայում: Իսկ ես գիտեմ ինչու Նրանք աշքը տնկել են քաղաքային երկաթուղիների մեր բաժնետոմսերի վրա, իսկ որ հետո ձեզ կցցեն բանտ, նրանց հոգսը չէ: Խելքներդ գլուխ հավաքեցեք և լսեցեք ինձ: Ես հոգատարությամբ եմ վարվում ձեր շահերին, դուք շեք կարող հերքել: Ի՞մ շնորհիվ եք դուք փող կուտակել, այն էլ՝ ոչ բիշ: Խելքի եկեք, Զո՞րջ, գնացեք գանձատուն և, նախքան որևէ բան ձեռնարկելը, երեք հարյուր հազար դոլարի շեկ գրեցեք ինձ: Ոչ մի մարդու մի՛ հանդիպեք և մի՛ խոսեք հետը, քանի այդ բանը շեք արել: Ոշխար է կորել, թե զառ՝ պատասխանատվությունը նույնն է: Ոչ ոք չի կարող արգելել ձեզ, որ այդ շեկը տաք ինձ: Հենց որ այդ գումարը լինի իմ ձեռքը, ես այս անախորժությունից դուրս կգամ և մի՛ շաբաթ, շատ-շատ երկու շաբաթ հետո լրիվ կվերադարձնեմ ձեզ: մինչ այդ խումապը, անկասկած, կվերանա: Երբ այդ փողը վերադարձի գանձարանին, մենք կպայմանավորվենք նաև այն հինգ հարյուր հազարի մասին: Երեք ամիս հետո, գուցե և ալելի շուտ, ես այնպես կանեմ, որ դուք կարողանաք ծածկել պակասորդը: Ավելին ասեմ՝ ես երկու շաբաթ հետո էլ կարող եմ այդ անել, հնարավորություն տվեք ինձ կրկին ոտքի կանգնելու: Ժամանակ, ահա թե ինչ պետք է ինձ: Դուք շեք կորցնի ձեր ներդրումները, իսկ եթե փողը վերադարձնեք, ոչ ոք անախորժություն չի պատճառի ձեզ: Նրանք ոչ մի գնով չեն ուզենա սկանդալ սարքել: Դեհ, ասեք, ինչպես եք մտադիր վարվել, Զո՞րջ: Մոլենհառուերը չի կարող խանգարել ձեզ շեկ գրելու ինձ, ինչպես ես շեմ կարող ստիպել, որ այդ բանն անեք: Ձեր բախտը ձեր սեփական ձեռքին է: Հիմա ասացեք՝ ինչպե՞ս եք մտադիր վարվել:

Սթիները կանգնել էր նրա առաջ, շարունակում էր միտք անել ու տատանվել, թեև գտնվում էր կործանման եղրին:

Վախենում էր գործել: Վախենում էր Մոլենհառուերից, վախենում էր Քառուկերվուղից, վախենում էր կյանքից ու հենց իրենից: Խուճապի, իրեն սպառնացող աղետի միտքը նրա պատկերացման մեջ կապվում էր ոչ այնքան նրա ունեցվածքային, որքան հասարակության մեջ և քաղաքական աշխարհում եղած նրա դրության հետ: Աշխարհում քիչ են այնպիսի մարդիկ, ովքեր հասկանում են, թե ինչ բան է ֆինանսական հզորությունը: Քչերն են զգում, թե ինչ է նշանակում իրենց ձեռքին պահել ուրիշների հարստության վրա իշխանություն ունենալը, տիրելը այն բանին, ինչ սոցիալական էներգիայի աղբյուրն է և բնական փոխանակման միջոցը: Բայց նրանք, ովքեր ըմբռնել են այս բանը, ծարավի են հարստության արդեն ոչ ի սեր հարստության: Մարդիկ սովորաբար փողը դիտում են որպես կենսական որոշ հարմարություններ ապահովելու միջոց, մինչդեռ ֆինանսիստի համար փողը բարիքների բաշխմանը վերահսկելու, հարգանքի, հզորության ու իշխանության համակարգի միջոց է: Ի տարրերություն Սթիների, Հենց այսպես էր վերարկրվում լիովին Քառիվերվուղը: Սթիները, որ միշտ Քառիվերվուղի հայեցողության էր թողնում գործել իր փոխարեն, այժմ, երբ Քառուկերվուղը պարզ ու հստակ ցույց տվեց դրությունից դուրս գալու միակ հնարավոր ելքը, վախենում էր ավելի, քան երեսից: Կշռադատելու նրա ընդունակությունը մթագնել էր Մոլենհառուերի հնարավոր ցասումից ու վրեժինդրությունից, Քառուկերվուղի հնարավոր սնանկացումից և ճգնաժամին արիաբար դիմագրավելու սեփական անընդունակությունից: Քառուկերվուղի ֆինանսական բնածին տաղանդը այժմ արդեն վստահություն չէր ներշնչում նրան: Շատ երիտասարդ է այդ բանկիրը և ոչ բավականաշափ փորձված: Մոլենհառուերը ավելի մեծահսամակ է ու հարուստ: Նույնպես և Սիմֆոնն ու Բաթլերը: Այդ մարդիկ իրենց կապիտալներով մի անհաղթահարելի զորության մարմնավորումն էին: Բացի դրանից, միթե Քառուկերվուղը շխոստովանեց նրան՝ Սթիներին, որ ինքը վտանգի է մատնվել, որ իրեն դեմ են արել պատին: Ոչ մի խոստովան թյուն չէր կարող ավելի վախեցնել Սթիներին, բայց Քառուկերվուղն

ստիպված էր անել գա, որովհետև Սթիները վտանգին շեշտակի նայելու արիություն չուներ:

Ուստի նրանց գանձատուն տանող կառքում ևս Սթիները շարունակում էր մնալ գունատ, ընկճված, մտքերը կենտրոնացնելու, իր դրությունը արագ ու հստակ տեսնելու և դրանից դուրս բերող միակ հնարավոր ելքը պատկերացնելու անկարող, Քառուփերվուդը Սթիների հետ մտավ գանձատուն, որպեսզի մի անգամ ևս փորձի ազդել նրա վրա:

— Ուրիմն, Զո՞րջ,— խստորեն ասաց նա, — ես պատասխանի եմ սպասում: Ժամանակը չի սպասի: Ոչ մի րոպի մենք շենք կարող կորցնել: Փող տվեք ինձ, և արագ դուրս կպրծնեմ այս պատմությունից: Եղա՞վ: Մի անգամ ևս կրկնում եմ՝ թանկ է ամեն մի րոպեն: Մի՛ ենթարկվեք այդ պարունների ահարեւկմանը: Նրանք ի սեր իրենց սեփական շահի են խաղ իւազում: Հետևեցեք նրանց օրինակին:

— Չեմ կարող, Ֆրե՛նկ, — թույլ ձայնով վերջապես պատասխանեց Սթիները. Մոլենհառուերի գաֆան ու տիրակալ անձի հիշեցումը խլացնում էր նրա մեջ սեփական ապագայի ստագնապը: — Ես պետք է մտածեմ: Այդպես միանգամից շեմ կարող: Սթրոբիկը ձեր գալուց մի քանի րոպե առաջ բաժանվեց ինձնից, և նա էլ կարծում է...

— Մա՛րդ աստծո, Զո՞րջ, — վրդովված բացականչեց Քառուփերվուդը, — ի՞նչ եք Սթրոբիկից խոսում: Նա ի՞նչ գործ ունի: Չեր մասին մտածեցեք, մտածեցեք, թե ձեզ ի՞նչ կլինի: Խոսքը ձեր և ոչ թե Սթրոբիկի ապագայի մասին է:

— Ամեն ինչ հասկանում եմ, Ֆրե՛նկ, — համառում էր տարաբախտ Սթիները, — բայց, ճիշտն ասած, չեմ պատկերացնում ինչպես անեմ: Ազնի՛վ խոսք: Դուք ինքներդ ասում եք, թե վստահ շեք՝ կկարողանաք դուրս պրծնել այդ պատմությունից, հիմա էլ երեք հարյուր հազար դոլլար... դաշայսպես թե այնպես երեք հարյուր հազար է: Ո՛չ, Ֆրե՛նկ: Չե՛մ կասող: Բայն դուրս չի' գա: Բացի դրանից, նախ պետք է խոսեմ Մոլենհառուերի հետ:

— Աստված իմ, ի՞նչ անհեթեթ բան եք ասում, — վերջապես պայթեց Քառուփերվուդը: Հարացած ու անքող արա

Համարհանքով նայեց գանձապէտէն: — Լա՛վ, վազեցե՛ք Մոլենհառւերի մոտ, հարցրեք՝ ինչպէ՞ս կտրեք ձեր վիզը ի սեր նրա շահերի: Ինձ երեք հարյուր հազար դոլլար ևս փոխ տալ չի կարելի, իսկ գանձարանից արդեն վերցված հինգ հարյուր հազարը վտանգել և կորցնել կարելի է: Այդպէ՞ս հասկացած ձեզ: Զէ՞ս որ դուք ջանում եք միայն կորցնել այդ դումարը, դրա հետ և մնացած ամեն ինչ: Ըստ իս, դուք, պարզապես, ցնդել եք: Մոլենհառւերի առաջին իսկ ազգանշանը մահու շափ վախեցրեց ձեզ, և դուք արդեն պատրաստ եք ամեն ինչ վտանգի դնել. ձեր կարողությունը, համբավը, դրությունը: Հասկանո՞ւմ եք, թե ինչ կլինի ձեզ, եթե ես սնանկանամ: Դուք կդառնաք կալանավոր: Զեկ բանտ կնետեն, Զո՛րջ, և ուրիշ ոչինչը: Իսկ ձեր Մոլենհառւերը, որ արդեն ժամանակ ունեցել է ցուցում տալու ձեզ, թե դուք ինչ շպիտի անեք, մատը մատին շի խփի ձեզ համար, երբ դուք խայտառակեվեք: Մտաքերեցրեք, մի՞թե ես չեմ օգնել ձեղ, մի՞թե մինչեւ վերջին րոպեին հաջողությամբ շեմ վարել ձեր գործերը: Ի՞նչ եք լցրել ձեր զլուխը, կուպենայի իմանութ, ինչի՞ց եք վախենում:

Սթիները պատրաստվում էր մի սակավ համոզիչ փաստարկ ևս բերել, երբ ներս մտավ նրա գրասենյակի կառավարիչ Ալբերտ Սթայերսը: Սթիները այնպես էր հուզված, որ անմիջապես չնկատեց նրան, իսկ Քառուփերվուդը մտերմաբար դիմեց նրան.

— Ի՞նչ կասեիք, Ալբե՛րտ:

— Միստր Սենգութեկը, միստր Մոլենհառւերի հանձնարարությամբ, սւզում է տեսնել միստր Սթիներին:

Այս ահավոր անունը լսելիս Սթիները կծկվեց, ինչպես տերեւ՝ սառնամանիքից: Դա շխուսափեց Քառուփերվուդից: Նա հասկացավ, որ խորտակվում է իր վերջին հույսը՝ Սթիներից երեք հարյուր հազար դոլլար ստանալը: Բայց և այնպես գենքը ցած շգրեց:

— Ել ի՞նչ ասեմ, Զո՛րջ, — նկատեց նա, երբ Սթայերսը գնաց հայտնելու Սենգութեկին, որ Սթիները պատրաստ է ընդունելու նրան, — ամեն ինչ պարզ է ինձ համար: Այդ

մարդը հիպնոզել է ձեզ։ Դուք շատ եք ահաբեկված և արդեն ինքներդ ձեզ չեք իշխում։ Թող ամեն ինչ մնա այնպես, ինչպես է։ Ես դեռ կվերադառնամ։ Միայն թե, ի սե՞ր աստծու, սթափվեցեք և արիացեք։ Մտածեցեք, թե ինչ է բախտախաղի դրված։ Ես ձեզ արդեն ասացի, թե ինչ տեղի կունենա, եթե դուք ձեր միտքը չփոխեք։ Ինձ լսեցեք, և կդառնաք անկախ ու հարուստ մարդ։ Հակառակ դեպքում ձեզ սպասում է կալանավորի բաճկոնակը։

Որոշելով մի անգամ ևս բանկիրներից ու բորսայականներից օգնություն ստանալու փորձ անել՝ նախքան Բաթլերի մոտ գնալը, Քառուփերվուղը արագ դուրս եկավ գանձատնից ու ցատկեց իրեն սպասող թեթև, զսպանակավոր երկանիվը։ Դա մի զմայլելի, ղեղնադույն կառք էր, նույնպես կաշե դեղին նստատեղով, և աշխետ ղամբիկ էր լծած։ Քառուփերվուղը կանգ էր առնում մերթ այս, մերթ այն շենքի առաջ և կեղծ անտարբերությամբ թշում էր բանկերի և բորսայական գրասենյակների սանդուղքներն ի վեր։

Բայց ամեն ինչ գուր էր անցնում։ Ուշադիր, նույնիսկ կարեցաբար լսում էին նրան և անմիջապես էլ վկայակոչում դրության խախուտ լինելը։ Զիրարդ ազգային բանկը հրաժարվեց հետաձգել փոխատվության վերադարձը թեկուզ մի ժամով, և Քառուփերվուղն ստիպված եղավ անմիջապես ուղարկել նրանց իր առավել արժեքավոր թղթերի հաստ կապոցը՝ ծածկելու համար բորսայում կուրսերը ընկնելուց առաջացած տարրերությունը ժամը երկուսին ցրիլ եկավ ծեր Քառուփերվուղի մոտից։ որպես երրորդ ազգային բանկի նախագահ, նա ստիպված էր պահանջել հարյուր հիսուն հազար դոլար փոխատվության մարումը։ Ֆրենկի գրավ դրած բաժնետոմսերը, դիրեկտորների կարծիքով, բավականաշատ հուսալի չէին։ Քառուփերվուղը անմիջապես մի շեկ գրեց այս բանկում ունեցած հիսուն հազար դոլար ավանդի վրա, ավելացրեց դրան իր գրասենյակում կանխիկ պահվող քսանհինդ հազար դոլարը, «Թայ և Ընկ.» ֆիրմայից պահանջեց հիսուն հազար դոլար փոխատվության մարումը, անվանական գնի մեկ երրորդով ծախեց Գրին և Կոուտս փողոցների։ (այն նույն

գծի, որի հետ այնքան հուզմունք էր կապել) երկաթուղու բաժնետոմսերը։ Այդ ձևով ստացված ամբողջ գումարը ուղարկեց Երրորդ ազգային բանկ։ Ծեր Քառուփերվուղին թվաց, թե քար ընկավ ուսից, բայց միաժամանակ և սաստիկ ընկճված էր։ Կեսօրին նա անձամբ գնաց իմանալու, թի որքան կարսղ է ստանալ իր արժեթղթերի համար։ Այդպես վարվելով՝ նա մասամբ անվանարկում էր իրեն, բայց նրա հորենական սիրտը տանջվում էր, իսկ բացի դրանից, նա պարտավոր էր մտածել և իր անձնական շահերի մասին։ Տունը գրավադրելով և կահ-կարասիների, կառքերի և հողամասերի ու բաժնետոմսերի դիմաց փոխառություն ստանալով՝ նա իրացրեց հարյուր հազար դոլլար և ավանդագրեց Ֆրենկի անվան՝ իր բանկում։ Սակայն այդպիսի ուժեղ փոթորկի պահին դա շատ թեթև խարիսխ էր։ Ֆրենկը առնվազն երեք-չորս օրով վճարումների հետաձգում ձեռք բերելու կարիք ուներ։ Այդ ճակատագրական օրվա ժամը երկուսին Քառուփերվուղը մի անդամ ևս ծանրաւթեթև անհլուկ իր զործերի վիճակը՝ տիտուր մրթիմրթիաց։

«Ո՛չ, այդ Միիները ողիոք է, երեք հարյուր փոխ տա ինձ, և աւրիշ ոչինչ։ Իսկ հիմա պետք է տեսնել Բաթլերին, ապա թե ոչ նա կպահանջի իր ավանդը գրասենյակը փակելուց առաջ»։

Նա դարձյալ թռավ կառք և խելագարի պես սլացավ Բաթլերի մոտ։

Գ Լ Ո Ւ Խ ՀХVI

Շատ բան էր փոխվել այն պահից, ինչ Քառուփերվուղը զբուցում էր Բաթլերի հետ։ Այն ժամանակ ծերունին բարեկամաբար էր վերաբերվել Մոլենհաուերին ու Միմփսոնին միանալու և բորսայում արժեթղթերի կուրսը պահելու առաջարկին, բայց առավոտյան, այդ հիշարժան երկուշաբթին, առանց այն էլ խճճված դրությունը բարդացավ մի նոր հանգամանքով, որը Բաթլերին ստիպեց արմատապես փոխել իր

գրաված դիրքը։ Այդ նույն օրվա առավոտյան ժամը իննին, երբ Քառուփերվութը ջանում էր օգնություն ստանալ Սթիներից, Բաթլերը դուրս եկավ տնից և արդեն պատրաստվում էր կառք նստել, երբ փոստատարը շորս նամակ հանձնեց նրան, նա էլ հապաղեց, որպեսզի կարդա դրանք։ Առաջինը մանր կապալառու Շիգգինսից էր, երկրորդը՝ Բաթլերների խոստովանահայր, սուրբ Տիմոթեոս եկեղեցու քահանա տեր Մայքըլից, որ շնորհակալություն էր հայտնում աղքատախնամի ծխական ֆոնդին արած նվիրատվության համար։ Երրորդը՝ «Դրեքսել և Ընկ.»-ից ինչ-որ ավանդի վերաբերյալ։ շորրորդը վատ թղթի վրա, ըստ երեսութին ոչ այնքան գրագետ, ավելի շուտ կնոջ դրած անստորագիր նամակ էր։ Գժվար ընթեռնելի խղզոցով հետեւյալն էր գրված այնտեղ։

«Հարգելի՝ պարոն, հայտնում եմ ձեզ, որ ձեր դուստր էլլինը հարաբերվում է մի մարդու հետ, որի հետ շպետք է հարաբերվեր, ոմն Ֆրենկ Քառուփերվուդի հետ, որ բանկիր է։ Եթե չեք հավատում, հետեւյեք Հյուսիսային Տասներորդ փողոցի № 931 տանը։ Այն ժամանակ կհամոզվեք սեփական աշխով։»

Ոչ ստորագրություն, ո՛չ էլ որևէ նշան, որոնցից կարելի լիներ ենթադրել, թե որտեղից է ուղարկված նամակը։ Բաթլերն անմիջապես այն առավորությունը ստացավ, թէ նամակը գրել է այդ տան կողքին ապրող մեկը։ Մերունին երեմն աշքի էր ընկնում ծայրաստիճան սուր հայտնատեսությամբ։ Նամակը հիրավի սուրբ Տիմոթեոս եկեղեցու ծխական մի աղջկանից էր, որ ապրում էր նամակում նշված տան մոտերքում։ Սա գեմքով ճանաշում էր էլլինին և ատում էր նրան գրգոր տեսքի ու շքեղ արդուզարդերի համար։ Գունատ, նիհար, մշտապես դժգոհ այդ աղջկիը մեկն էր այն բնավորություններից, որոնք պարտ են համարում հետևելու ուրիշի բարոյականությանը։ Ապրելով Քառուփերվուդի գաղտնի վարձած տան առիշեղ՝ հետեւում էր այդտեղ մտնող մարդկանց և քիշ-քիշ որոշեց (համենայն դեպս այդպես թվաց նրան) դրա

նշանակությունը։ Նա կարիք ուներ միայն փաստերը ենթա-դրություններով լրացնելուն և այդ ամենը ի մի ձուլելու այն կոռագումակության շնորհիվ, որը հաճախ մոտ է իսկական իմացությանը։ Նրա ջանքերի արգասիքն էլ հանդիսացավ այն նամակը, որ բացվեց Բաթլերի աշքերի առաջ իր ամբողջ անպահույց անկեղծությամբ։

Իոլանդացիները փիլիսոփայական, միաժամանակ և գործնական մտածելակերպ ունեն։ Անախորժ դրության մեջ ընկած ամեն մի իոլանդացու առաջին ու անմիջական մղումն է՝ դրանից դուրս գալու ճար գտնել և ամեն ինչ պատկերացնել նվազ տխուր լույսի տակ։ Երբ Բաթլերը առաջին անգամ կարդաց այդ երկտողը, մազերը փշաքաղվեցին։ Նրա ծնոտները սեղմ վեցին, գորշ աշքերը կկոցվեցին։ Մի՞թե ճիշտ է դա։ Բայց այլ կերպ մի՞թե նամակի հեղինակը կհամարձակվեր այդպես կտրուկ կերպով գրել. «Եթե չեք հավատում, Հետևեցեք Հյուսիսային Տասներորդ փողոցի № 931 տանը»։ Մի՞թե այս բառերի տպարդ գործնականությունը ինքնին անհերքելի ապացուց չէ, եթե խոսքը այն նույն մարդու մասին է, որը հենց նախորդ օրը դիմեց իր օգնությանը, և որի համար ինքը այնքան շատ բան է արել։ Բաթլերի դանդաղաշարժ, բայց սուր մտքում ավելի վառ, քան երբեք, հառնից իր գեղանի դստեր պատկերը, և նա հանկարծ որոշակի հասկացավ, թե ինչ մարդ է Ֆրենկ Ալզերնոն Քառվերվուդը։ Ինչպես բացատրել, որ ինքը՝ Բաթլերը, չէր նկատել այդ մարդու նենգությունը։ Ինչպես կարող էր պատահել, որ Քառվերվուդն ու էյլինը ոչ մի բառով, ո՛չ մի ժեստով չէին մատնել իրենց, եթե հիրավի նրանց մեջ ինչ-որ հարաբերություններ կային։

Ծնողները սովորաբար հալվատացած են, թե շատ լավ են ճանաշում իրենց զավակներին, և ժամանակը միայն այն է անում, որ ամրացնում է նրանց այդ մոլորությունը։ Մինչեւ Հիմա ոչինչ չէր եղել, ոչինչ էլ չի լինի առաջիկայում։ Իրենք տեսնում են նրանց ամեն օր, բայց տեսնում են սիրուց մշուշապատ աշքով։ Այդ սիրուց կուրացած՝ նրանք համոզված են, որ բոլոր մանրամասնություններով ճանաշում են իրենց

զավակներին, որոնք և, ինչքան էլ հրապուրիշ լինեն, անպայչ
ման ապահովագրված են ամեն տեսակ գայթակղություն-
ներից: Մերին լավ աղջիկ է, ճիշտ է՝ մի քիչ խելառ, բայց
ի՞նչ փորձանք կարող է պատահել նրան: Զոնը ուղղամիտ
և նպատակամետ տղա է. մի՞թե նա կարող է ենթարկվն լ
շարին: Եվ ի՞նչ սրտակեղեք հեծեծանքներ է արձակում
ծնողների մեծ մասը, երբ պատահաբար բացահայտվում է
իրենց զավակների վատ գաղտնիքը: «Իմ Զո՞նը, իմ Մերի՞նը
Անկարեկի՛ բան է դա»: Բայց հնարավոր է: Շատ հնարավորք
Եվ նույնիսկ հավանական: Շատ ծնողներ, որ բավական
փորձված չեն, բավականաշափ չեն ճանաշում կյանքը, շա-
րանում են, դառնում դաժան: Վերհիշելով զավակների վրա
վատնած գուրգուրանքը և նրանց արված բոլոր զոհողություն-
ները՝ վիրավորված են զգում իրենց: Նրանք բոլորովին
ընկճվում են մեր կյանքի այդքան բացահայտ անկայունու-
թյան դեմ-հանդիման, այն վտանգներին դեմառդեմ, որոն-
ցով լի է նա, և մարդու հոգում կատարվող առեղծվածային
պրոցեսներին ի տես: Շատերն էլ, ում արգեն խիստ դասեր է
տվել կյանքը, և կամ ի բնե օժտված են ներքմբոնմամբ ու
խորաթափանց մտքով, այդ բոլոր երկույթներին վերաբերվում
են որպես կյանքի անխոստովանելի խորհուրդի և իմանալով,
որ այդտեղ պայքարը համարյա աննպատակ է ու անկարելի,
ապա ծածուկ միջոցներով միայն շանում են շտեմանել վատը
կամ համակերպվել դրան ժամանակ շահելու համար: Ամեն
մի մտածող մարդ գիտե, որ կյանքը մի անլուծելի հանելուկ
է. մյուսները զվարճանում են անհեթեթ հերյուրանքներով
ու մեկ էլ անտեղի հուզվում են և համբերությունից գորս
գալիս:

Եվ ահա խելացի ու մեծ փորձառության տեր էդուարդ
Բաթլերը իր տան սանդուղքին կանգնած՝ կոպտացած ու
շլուտ ձեռքին պահել էր էժանագին թղթի մի կտոր, որի վրա
ահավոր մեղադրանք էր գրված իր դստեր վերաբերյալ: Նա
մտովի տեսնում էր նրան իր գիմաց գեռ բոլորովին փոքր
(էլլինը նրա առաջին աղջիկն էր): Ինչպիսի՞ հոգ էր տարել
ինքը նրան այդ բոլոր տարիների ընթացքում: Սքանչելի

Երեխա էր նա. նրա ոսկեթուցը գլուխը որքա՞ն հաճախ էր սեղմվել իր կրծքին, իր կոշտ ու կոպիտ մատներն էլ հազար անգամ շոյել էին նրա քնքուշ այտերը: Իսկ հիմա էլլինն արդեն քաններեք տարեկան է և գեղեցիկ, տաքվուին ու ինքնասածի: Մոռայլ, ֆանտաստիկ ու ծանր մտքեր էին պաշարում Բաթլերին. նա չէր իմանում ինչպես նայի այդ ամենին, ինչ որոշի, ինչ ձեռնարկի: Վերջիվերջո հայտնի չէ, թե այս գեպքում ո՞վ է իրավացի և ո՞վ հանցավոր,— մտքուն ասաց նա: Էլլինը, էլլինը, ի՞ր էլլինը: Եթե կինն իմանա այս բանը, ապա նրա ծերացած սիրտը չի դիմանա: Ոչ, նա ոչինչ չպետք է իմանա, ոչի՞նչ: Բայց և այնպիս գուցե պե՞տք է ասել նրան:

Ծնողակա՞ն սիրտ: Այս աշխարհում սերը ընթանում է խճճված, ոտք չդրված շավիղներով: Մոր սերն ամենազոր է, նախնադարյան, եսապաշտական, միաժամանակ և անշահախնդիր: Ոչ ոքից կախված չէ: Ամուսնու սերը կնոջ կամ սիրեկանինը սիրուհու հանդեպ միակամության ու փոխադարձության հեշտալի կապ է, հոգատարության ու քնքանքի մրցություն: Հոր սերը որպու կամ դստեր հանդեպ (երբ այդ սերը կոյտաթյուն ունի) դրսեորդում է նրանով, որ հայրը լինի առաաաձեռն՝ անշափ, առանց փոխարենը որևէ բան սպասելու. դա օրհնությունն է և ողջերթը, որ տրվում է ուղեորին, և որի անվտանգությունը ամեն ինչից թանկ է ձեզ, դա թուլության և ուժի ինսամքով կշռված հարաբերակցությունն է, որը ստիպում է մղկտալ սիրեցյալի անհաջողությունների և հրճվել նրա հաջողությունների համար: Այդ զգացումը վեհ է և փիլիսոփայական ոչ մի բան չի պահանջում և ջանում է միայն խելացիորեն ու առատ տալ: «Միայն թե տղաս բարգավաճի, միայն թե աղջիկս երջանիկ լինի»: Ո՞վ այսպիսի խոսքեր չի լսել, ո՞վ չի խորհրդածել ծնողական իմաստության ու սիրո այս արտահայտությունների վրա:

Քաղաքի կենտրոնը դիմելիս Բաթլերը իր ոչ սովորական, սակայն դանդաղաշարժ ու որոշ շափով նախնադարյան մտքին մատչելի առավելագույն արագությամբ վեր-վար էք անում այդ հանկարծակի, կսկածալի ու տագնապալի հայտ-

նության բոլոր հնարավոր հետևանքները: Ինչո՞ւ Քառուիեր-վուդը շի բավարարվում իր կնօզով, ինչո՞ւ կարիք էր ունեցել մուտք գործել իր՝ Բաթլերի տունը և այդտեղ էլ սկիզբ է դրել այդ անարժան ու ծածուկ կապին: Ի՞նչ շափով հանցավոր է այդտեղ էլլինը: Նա բնավ էլ անխելք չէ և պետք է հաշիվ տար իր արարքների համար: Բացի դրանից, նա բարի կաթոլիկ է, համենայն դեպս իր դաստիարակությամբ: Այս բոլոր տարիներին նա գնում էր խոստովանության և հաղորդվում էր: Ճիշտ է, վերջերս Բաթլերն սկսել էր նկատել, որ դուստրը այնքան էլ ջերմեռանդությամբ շի գնում եկեղեցի, երբեմն էլ պատրվակ է փնտրում կիրակի օրը տուն մնալու: բայց չէ որ, որպես կանոն, այնուամենայնիվ գնում է: Իսկ հիմա, հիմա... Այս կետում Բաթլերի մտքերը փակուղի էին մտնում, նա կրկին վերադառնում էր ամենագլխավորին, և ամեն ինչ վերսկսվում էր սկզբից:

Նա դանդաղ բարձրացավ սանդուղքը, մտավ իր առանձնասենյակը, նստեց սեղանի առաջ և նորից սկսեց մտածել, մտածել: Հնչեց ժամը տասը, ապա տասնմեկը: Տղան մի քանի անգամ եկավ մոտք գործարարական հարցումներ անելու, բայց համոզվելով, որ հայրը վատ տրամադրության մեջ է, հանգիստ թողեց: Հնչեց տասներկուսը, հետո՝ մեկը, իսկ Բաթլերը առաջվա պես նստած մտածում էր, երբ հանկարծ հայտնեցին, որ եկել է Քառուիերվուդը:

Բաթլերին տանը շգտնելով և այնտեղ էլ էլլինին շհանդիպելով՝ Քառուիերվուդը շտապեց նրա գրասենյակը: Այդ տանն էին գտնվում նաև քաղաքային երկաթուղիների մի քանի գծերի վարչությունները, և Բաթլերը դրանց խոշորագույն բաժնետերերից մեկն էր: Գրասենյակը ըստ սովորականի անջատված էր հաշվապահների ու հաշվետարների, ճանապարհային տեսուչների, գանձապահի և այլոց աշխատավայրից: Օուեն Բաթլերն ու հայրը զբաղեցնում էին դրա խորքում գտնվող երկու փոքրիկ, բայց շքեղ կահավորված առանձնասենյակները, ուր կատարվում էին բոլոր կարևորագույն գործերը:

Բաթլերի մոտ գնալիս Քառուիերվուդին, այն տարօրինակ

նախազգացումի հետևանքով, որ այնքան հաճախ է նկատվել աղետի առաջ կանգնած մարդու մեջ, անընդհատ հետապնդում էր էյլինի մասին մտածմունքը: Նա մտածում էր իրեն նրա հետ կապող անսովոր կապերի մասին; մտածում էր, որ այժմ ինքը շտապում է նրա հոր մոտ օգնություն խնդրելու: Մի ժանր զգացմունք համակեց նրան, երբ ինքը բարձրանում էր սանդուղքը, բայց, բնականաբար, նշանակություն շտվեց դրան: Բաթլերի վրա նետած առաջին իսկ հայացքից նրա համար պարզ դարձավ, որ վատ բան է տեղի ունեցել: Բաթլերը շբարենց նրան, ինչպես անում էր սովորաբար, նայում էր խեթ-խեթ, իսկ դեմքի վրա այնպիսի խստություն կար, որպիսին Քառուիերվուղը մինչ այդ երբեք չէր տեսել նրա երեսին: Նա անմիջապես հասկացավ, որ խոսքը շի վերաբերում միայն այն բանին, որ Բաթլերը շի ուզում օգնել իրեն՝ շպահանջել իր մոտ գտնվող ավանդը: Ի՞նչ էր պատահանձն ուրեմն, էյլի՞նը: Երեկի այդպես էր: Մեկը մատնել էր իրենց: Անշուշտ, իրենց տեսել էին միասին: Հետո՝ ինչ. դա դեռ ոչինչ շի ապացուցում: Նա այժմ ոչ մի բառով շի մատնի իրեն: Բայց Բաթլերն, անկասկած, ավանդը ետ կպահանջի: Իսկ ինչ վերաբերում է լրացուցիչ փոխառության, առա առանց խոսելու էլ պարզ է, որ դրա վրա իմաշ պետք է քաշել:

— Ես եկա իմանալու, թե ինչ եք որոշել ձեր ավանդի մասին, մի՛ստր Բաթլեր, — անմիջականորեն և, ինչպես միշտ, անբոնազբոս ձևով ասաց նա:

Ո՛չ նրա վարմունքից, ո՛չ էլ դեմքի արտահայտությունից կարելի շէր ենթադրել, որ նա որևէ բան է նկատել:

Բաթլերը (նրանք մենակ էին առանձնաւենյակում) շեշտակի նայում էր նրան թավ հոնքերի տակից:

— Ինձ պետք է իմ փողը, — կցկտուր և մոայլ պատասխանեց նա:

Տեսնելով իր էյլինի պատիվը գողացած այդ հանդուսն կեղծավորին՝ Բաթլերի կրծքի տակ բարձրացավ այնպիսի մի ցասում, որ ծերունին վաղուց չէր զգացել, և նա աշքերը մեխեց այցելուի վրա:

— Դատելով դեպքերի ծավալվելու ընթացքից՝ ես են-

թաղրում էի, որ դուք կպահանջեք ձեր փողը, — հանգիստ, ձայնը չդողացնելով, պատասխանեց Քառուիերվուդը: — Ամեն ինչ փլչում է, որքան ես եմ հասկանում:

— Այո՛, ամեն ինչ փլչում է և կարծում եմ, թե շուտով կարգի չի ընկնի: Այսօր իսկ փողը պետք կլինի ինձ: Ես չեմ կարող սպասել:

— Լավ, — ասաց Քառուիերվուդը, որ պարզ գգում էր իր դրության խախուսությունը:

Ծերունին անտրամադիր էր: Այս կամ այն պատճառով Քառուիերվուդի ներկայությունը զղայնացնում, ավելին՝ վիրավորում էր նրան: Քառուիերվուդն արդեն չէր կասկածում, որ այդ ամենը էլլինի պատճառով է, որ Բաթլերը մի բան իմանում է կամ առնվազն կասկածում է: Պետք է ցույց տալ, որ գործերը ստիպում են իրեն շտապել, և վերջ դնել այս խոսակցության:

— Շատ եմ ցավում, — ասաց նա: — Ես հուս ունեիր. թե կհետաձգեք, բայց ինչ կարող եմ անել: Զեր փողը կպատրաստվի: Եվ անմիջապես կուղարկեմ ձեզ:

Նա շրջվեց և արագ դիմեց դեպի դուռը:

Բաթլերը վեր կացավ: Նա կարծում էր, թե ամեն ինչ այլ կերպ կլինի: Պատրաստվում էր մերկացնել Քառուիերվուդին, գուցե և շրիկացնել նրա դեմքին: Պատրաստվում էր այնպիսի բան ասել, որը դրդեր Քառուիերվուդին պատասխանելու, ուղղակի երեսին շպրտել մեղադրանքը: Բայց նա արդեն դուրս էր եկել՝ պահելով իր սովորական անբոնազբոսակրածիր տեսքը:

Ծերունին մատնվեց անասելի խոռվության. Նա կատագել էր ու հիասթափվել: Բացելով այն փոքրիկ դուռը, որն իր առանձնասենյակը միացնում էր կից սենյակին, ձայն տվեց:

— Օուե՛ն:

— Այո՛, հա՛յր:

— Որեէ մեկին ուղարկիր Քառուիերվուդի գրասենյակը՝ փողն ստանալու:

— Ուրեմն այնուամենայնիվ որոշեցիր ե՞տ վերցնել քո ավանդը:

— Այս:

Օուենին մտահոգեց Հոր զայրույթը: Ի՞նչ կարող էր պատահած լինել, — Հարցնում էր ինքն իրեն և եղրակացրեց, թե հայրը որևէ պատճառով ընդհարվել է Քառուփերվուդի Հետո Նա վերադարձավ իր սեղանի մոտ, պահանջագիր գրեց ու կանչեց պաշտոնյաներից մեկին: Թաթլերը մոտեցավ պատուհանին և սկսեց նայել փողոցը: Վշտացած էր նա, շարացած, կատաղած:

— Շո՛ւն, — իր համար էլ անսպասելի կերպով խոխոաց նա: — Ո՛չ մի դոլլար չեմ թողնի նրա մոտ, մինչև վերջին շապիկը կտկլորացնեմ: Դեռ բա՛նտ էլ կղնեմ, կոչնչացնե՛մ նրան: Սպասի՛ր, կուտե՛ս:

Նա սեղմեց Հսկայական բռունցքները ու սեղմեց ատամները:

— Նրա դատաստանը կտեսնե՞մ, հախիցը կգա՞մ: Շո՛ւն, ստո՛ր արարած:

Նա գեր էր կյանքում չէր զգացել այսպիսի ցասում, ոլրիժառության այսպիսի ցանկություն:

Սկսեց երթեւեկել առանձնասենյակում ու մտմտալ իր անելիքը: Հարցաքննել էլլինին. ահա թե ինչից կսկսի: Սա կսկսի ուրանալ, բայց եթե ինքը նրա դեմքից տեսնի, որ իր կասկածները իրավացի են, ապա Քառուփերվուդի դատաստանը կտեսնի: Հենց միայն քաղաքի գանձապետի պատմությունը բավական է: Ճիշտ է, Քառուփերվուդը ձևականորեն դատական պատասխանատվություն չի կրում, բայց ինքն արդեն ամեն ինչ այնպես շուռ կտա, որ այդ մանկլավիկն է՛լ աշքը բաց շանի:

Այս որոշումն անելուց հետո Թաթլերը գրագրին հրամայեց հայտնել Օուենին, որ շուտով կվերադառնա, դուրս եկավ, նստեց ձիաքարշի վագոնը ու գնաց տուն: Դուանը նա բախվեց իր մեծ աղջկա հետ, որ արդեն դուրս էր գալիս: Նա հագել էր նեղ ոսկերիկ շրջակար ունեցող մի մուգ կարմիր շըրշապեստ, գլխին էլ դարձյալ նույն գույնի ու ոսկենախոշ փաթթոց: Ոտքերին բրոնզագույշն կաշե կոշիկներ էին, իսկ ձեռքերը սեղմված էին բաց տերեփուկագույն զամշե ձեռ-

նոցներով։ Էյլինի ականջները զարդարում էին սև սաթե երկար գինդեր (սաթը նրա վերջին հափշտակության առարկան էր)։ Աղջկան տեսնելով՝ ծեր իուլանդացին ավելի հստակ, քան երբեք, հասկացավ, որ մեծացրել է հազվագյուտ փետրավորում ունեցող մի թռչնիկ։

— Ո՞ւր էիր ուզում գնալ, Էյլի՛ն, — հարցրեց նա՝ իզուր շանալով թաքցնել վախր, վիշտը և ներսում եռացող բարկությունը։

— Գրադարան, — անխոռվ պատասխանեց Էյլինը, բայց վայրկենապես էլ զգաց, որ վատ բան է կատարվում հոր հետ։ Նրա դեմքը մի տեսակ ծանրացել էր, գործ ու գունատ էր։ Մոռայլ էր թվում նա ու հուզված։

— Մի բոլի բարձրացիր վեր՝ իմ առանձնասենյակը, քեզ հետ խոսելիք ունեմ, — ասաց Բաթլերը։

Էյլինը հնազանդվեց՝ հետաքրքրասիրության ու զարմանաքի խառն զգացմունքով համակված։ Շատ տարօրինակ է, որ հայրը հանկարծ կարիք ունեցավ խոսելու իր հետ առանձնասենյակում և այն պահին, երբ ինքը պատրաստվում էր դուրս գնալ։ Նրա տեսքն ու շեշտը կամկած չէին թողնում, որ այդ անսովոր հրավերին հաջորդելու է անախործ խոսակցություն։ Ինչպես իր ժամանակի բարոյականությունը ոտնակոխ արած ամեն ոք, ճյլինն էլ մտքով վերադառնում էր հնարավոր մերկացման կործանարար հետևանքներին։ Հաճախ էր նա արդեն մտածել, թե ինչպես կվերաբերվի ընտանիքը իր արարքին, բայց որևէ ճշգրիտ բան պատկերացնել չէր կարող։ Հայրը շատ վճռական մարդ է, ծիշտ է, ինքը երբեք չէր տեսել, որ նա սառը կամ խիստ վերաբերվի իրեն կամ ընտանիքի անդամներից որևէ մեկին, առավել ևս՝ իրեն։ Միշտ էլ այնպես է սիրել, որ թվում էր, թե ոչ մի բան չի կարող հեռացնել նրան իր դստրիկից։ Բայց ի՞նչ իմանաս։

Բաթլերը առօկից էր գնում՝ դանդաղ փոխելով ծանր ոտքերը։ Էյլինը բարձրանում էր նրա ետևից, արդեն կարողացել էր մի թռուցիկ հայացք նետել պատի հայելուն և հիմա մտածում էր, թե որքա՞ն լավիկն է ինքը, և ի՞նչ է հիմա սպասում իրեն։ Ի՞նչ է ուզում հայրն իրենից։ Երբ մտածեց

այն խոսակցության մասին, որ կարող էր սկսվել հիմա, մի վայրկյան արյունը շքացավ նրա դեմքից:

Բաթլերը մտավ իր հեղձուցի առանձնասենյակը և թաղվեց կաշեպատ հսկայական բազկաթոռի մեջ, որը անհամաշափ էր մնացած ամբողջ կահույքին և համապատասխանում էր միայն գրասեղանին: Այդ սեղանի առաջ, լույսի դեմ, դրված էր այցելուների բազկաթոռը, որի վրա թաթլերը նստեցնում էր նրանց, ում դեմքերն ուզում էր ավելի լավ դիտել: Երբ էյլինը ներս մտավ, հայրը մատնացուց արեց այդ բազկաթոռը, որ նույնպես շարագուշակ նախանշան թվաց աղջկան:

— Այդտե՛ղ նստիր,— ասաց հայրը:

Էյլինը նստեց՝ դեռ չհասկանալով, թե ուր է տանում այդ ամենը: Նա հաստատապես հիշում էր Քառուիերվուդին տված խոստումը՝ ի՞նչ գնով էլ լինի ուրանալ: Եթե հայրը պատրաստվել է հարցաքննել իրեն, ապա դա ոչ մի արդյունք չի տա: Ֆրենկի առաջ ունեցած իր պարտավորությունն ասում է՝ բացառել ամեն ինչ: Էյլինի զեղեցիկ դեմքը խստացավ ու լարվեց: Մանր ու սովորակ տտամների կույց շարքերն ամուր սեղմվեցին, և Բաթլերի համար պարզ դարձավ, որ դուստրը աշակերջացավ ու սպասեց հարձակման: Հայրը դրա մեջ նկատեց նրա հանցանքի հաստատումը և համակվեց ավելի մեծ կսկիծով, ամօթով, զայրուցիով և իր դժբախտության գիտակցությամբ: Նա փորփորեց սերթուկի ձախ գրպանը, թղթերի մի մեծ կապոց հանեց, քաշեց դրանից ճակատագրական, արտաքուստ այնքան աննշան նամակը: Նրա հաստ մատները դողում էին, երբ ծրարից հանում էր թերթիկը: Էյլինը աշքը չէր կտրում հոր դեմքից ու ձեռքերից, բայց չէր կուահում, թե ինչ է ուզում ցույց տալ իրեն: Վերջապես, թաթլերը էյլինին մեկնեց իր խոշոր ձեռքի մեջ պստիկ թվացող թուղթը և մրթմրթաց.

— Կարդա:

Էյլինը վերցրեց և մի ակնթարթ թեթևություն զգաց: Համենայն դեպս կարելի է աշքը խոնարհել թղթի վրա: Բայց

այդ զգացմունքը վայրկենապես ցնդեց. չէ՞ որ ինքը հիմա դարձյալ հարկադրված կլինի նայել ուղիղ հոր դեմքին:

«Հարգելի՛ պարոն, հայտնում եմ ձեզ, որ ձեր դուստր էլլինը հարաբերվում է մի մարդու հետ, որի հետ շպետք է հարաբերվեր, ոմն Ֆրենկ Քառվերվուդի հետ, որ բանկիր է: Եթե չեք հավատում, հետևեցեք Հյուսիսային Տասներորդ փողոցի № 931 տանը: Այն ժամանակ կհամոզվեք սեփական աշխով»:

Էլլինի դեմքը, հակառակ իր ցանկության, սպիտակեց, բայց արյունը նորից խուժեց բուռն ու տաք ալիքի նման:

— Սո՛ւտ է, — բացականչեց նա հայացքը դարձնելով հորը: — Ո՞վ է համարձակվում այսպիսի նողկալի բան գրել իմ մասին: Ի՞նչ լիտիություն: Ո՞վ է այդ ստորը:

Ծեր Բաթլերը ակնասեեռ նայում էր աղջկան: Նրա հուսուտանքը շխաբեց հորը: Եթե էլլինը, իրոք, ոչ մի հանցանք չունենար, ապա իր բնավորության մղումով վեր կթոշեր վրդովված ու զայրացած: Իսկ հիմա նա շտապեց մեծամտության դիմակ դնել: Նրա այդ վոթկացող բողոքի մեջ հայրը կարդաց դամեր դեմ վկայող ճշմարտություն:

— Իսկ ինչո՞ւ ես դու կարծում, աղջի՛կս, որ ես շեմ կարգադրել հետևել այդ տանը, — ծաղրանքով հարցրեց նա: — Ինչո՞ւ ես կարծում, որ քեզ չեն տեսել այդտեղ մասնելիս:

Էլլինին այդ ծուլակից փրկեց միայն այն հանդիսավոր խոստումը, որ տվել էր նա իր սիրեցյալին: Նա գույնը գցեց, բայց նրա աշքի առաջ անմիջապես երևաց Ֆրենկի պատկերը, եղբ սա խստորեն հարցնում էր նրան՝ ի՞նչ կասես, եթե մեր գաղտնիքը հայտնաբերվի:

— Սո՛ւտ է, — բեկբեկ ձայնով նորից բացականչեց էլլինը: — Ես երբեք չեմ եղել այդ տանը, և ոչ ոք չի տեսել ինձ այդտեղ մտնելիս: Ինչպե՞ս կարող ես այդպիսի բանի մեջ կասկածել ինձ, հայր:

Չնայած իրեն փոթորկող կասկածներին, որոնք տարօրինակ կերպով խառնվում էին էլլինի հանցավոր լինելու անխախտ վստահությանը, Բաթլերը չէր կարող չհիանալ նրա

գրգորի տեսքի և այն վճռականության վրա, որով ստում էր էլլինը իրեն պաշտպանելու համար։ Այս դեպքում նրա գեղեցկությունը մեծ ծառայություն մատուցեց էլլինին և բարձրացրեց հոր աշխում։ Վերջ ի վերջո ի՞նչ կարող ես անել այդպիսի խառնվածք ունեցող կնոջ հետ։ Զէ՞ որ նա այլևս տասնամյա աղջիկ չէ, ինչպես հայրը շարունակում էր մտով՝ տեսնել նրան։

— Քեզ չէր վայելի անճիշտ բան ասել ինձ, էլլի՛ն, — նկատեց Բաթլերը։ — Լավ չէ ստել։ Կրոնն արգելում է սաել։ Ո՞վ այդպիսի բան կգրեր, եթե ճիշտ շլիներ։

— Բայց ճիշտ չէ, — պնդում էր էլլինը՝ զայրացած ու վիրավորված ձևանալով։ — Եվ ես կարծում եմ, որ դու իրավունք չունես վիրավորել ինձ այդպիսի կասկածներով։ Ես այդ տանը չեմ եղել և միստր Քառուփերվուդի հետ չեմ հարաբերվել։ Աստված իմ, չէ՞ որ հազիվ ծանոթ եմ նրա հետ և հաղութեալ եմ միայն տեսնում նրան հասարակության մեջ։

Բաթլերը մսայլ օրորեց զրությունը։

Մեծ հարված է դա ինձ համար, աղջի՛կս, մե՞ծ հարված։ Իրկնեց նու։ — Ես պատրաստ եմ հավատալ քո խսսքիրին, բայց չեմ կարսլ շմտածել, թե որքա՞ն ցավալի է, եթե զու ստում եաւ Ես ոչ ոքի չեմ հանձնարարել հետևել այդ տանը նամակն ստացված է այս առավոտ միայն։ Եվ այն, ինչ ասված է դրա մեջ, հավանորեն ճիշտ չէ։ Հուսով եմ, որ ճիշտ չէ։ Բայց հիմա մենք այլևս չենք խոսի այդ մասին։ Իսկ եթե դրա մեջ կա ճշմարտության թեկուզ մի մասնիկ և դու շատ հեռու չես ընթացել ու կարող ես փրկել քո հոգին, աչքա քեզնից կինդրեի մտածել քո մոր, քո բրոց ու եղբայրներիդ մասին և խելքդ գլուխոդ հավաքել։ Հիշիր եկեղեցին, որ դաստիարակել է քեզ, այն անունը, որի պատիվը պարտավոր ես պահել։ Հասկացիր։ Եթե դու որեւէ վատ բան ես արել և մարդիկ իմանան, ապա որքան էլ մեծ լինի Ֆիլադելֆիան, այնուամենայնիվ մենք այդ քաղաքում տեղ չենք ունենաւ։ Քո եղբայրները պետք է բարի համբավ ստեղծեն, իսկ նրանք այս քաղաքում են աշխատում։ Դու և նորան մի օր կուզենաք ամուսնանալ։ Ինչպե՞ս ես դու նայելու մարդկանց աշքին,

ինչպե՞ս ես դու ապրելու, եթե նամակի մեջ ասվածը ճիշտ է:
և այդ ճիշտը երևան գա:

Սերունդ ձայնը խուզ էր հնչում իրեն ալեկոծող տար-
օրինակ, տխուր ու անսովոր զգացմունքների պատճառով: Նա
շէր ուզում հավատալ, որ իր դուստրը հանցավոր է, բայց և
այնպես գիտեր, որ այդպես է: Նա չէր ուզում անել այն, ինչ,
որպես հաստատակամ մարդ ու հավատացյալ, համարում էր
իր պարտքը, այսինքն՝ խստորեն նախատել նրան: Մի ուրիշ
հայր, նման հանգամանքներում, կվանդեր աղջկան և կամ
գործը նախօրոք հետաքննելուց հետո՝ կսպաներ Քառիկերվու-
դին: Բայց նա այդ բանը չի անի: Եթե կարիք ունենա վրեժ-
խնդիր լինելու, ապա դա կանի որպես ֆինանսիստ և քաղա-
քագետ, այսինքն այդ սրիկացին դուրս կմղի ֆինանսական ու
քաղաքական աշխարհից: Սակայն էլլինի նկատմամբ որևէ
կտրուկ բան ձեռնարկելու մասին մտածել իսկ չէր կարողա-
նում:

— Ո՞հ, հայր,— պատասխանեց էլլինը՝ վարպետորեն
օգտվելով իր դերասանական ընդունակություններից և վիրա-
վորված անմեղ աղջկա դիրք բռնելով,— ինչպե՞ս դու կարող
ես այդպես խոսել, երբ գիտես, որ ես հանցավոր չեմ:
Երդվո՞ւմ եմ քեզ:

Սակայն ծեր իւզանդացին խոր թախծով կարդաց ճշմար-
տությունը նրա շինծու վիրավորանքի տակ ու տեսավ, որ իր
ամենանվիրական հույսերից մեկը հօդս է ցնդում: Նա շատ
բան էր սպասում էլլինից թե՛ հասարակության մեջ ունենա-
լիք նրա հաջողության և թե՛ երջանիկ ամուսնության տեսա-
կետից: Քանի՛քանի հիանալի երիտասարդներ երջանիկ
կլինեին նրա բարեհաճությունից, նա զմայլելի թոռնիկներ
կբերեր իր համար՝ ի մխիթարություն ծեր օրերի:

— Այլևս այդ մասին լինուենք, աղջկիս,— հոգնած ձայ-
նով ասաց նա: — Դու միշտ էլ այնքան մեծ նշանակություն
ես ունեցել ինձ համար, որ ես դժվարանում եմ այդ ամենին
հավատալ: Վկա՞ է աստված, ինքս էլ չեմ ուզում հավատալ:
Դու շափահաս կին ես և եթե վատ քայլ կատարես, ալպա ես
քեզ կասեցնել չեմ կարողանա: Ես քեզ, իհարկե, կարող էի

վոնդել տնից. շատ հայրեր հենց այդպես էլ կվարվեին, բայց ես այդպիսի բան չեմ անիւ Սակայն, եթե իսկապես դու պարսավելի կյանք վարես,— Բաթլերը ձեռքը բարձրացրեց էլլինի բողոքը կանխելու համար,— հիշի՛ր, որ վաղ թե ուշ ես կիմանամ իսկությունը, և այն ժամանակ Ֆիլադելֆիան թե՛ ինձ և թե՛ այդպիսի վիշտ ինձ պատճառած մարդու համար նեղ կգա: Ես կհասնեմ դրան, — սպառնալի ասաց ծեր Բաթլերը վեր կենալով, — ես կհասնեմ դրան և տեղնուտեղը...

Նա գունատվեց ու շուր եկավ: Էլլինը շատ պարզ հասկացավ, որ Ֆրենկը, բացի նրան սպառնացող բոլոր անախորժություններից, ստիպված է նաև ուժերը շափել իր հոր հետ: Այդ պատճառով չէ՛ր արդյոք, որ նախորդ երեկոյան այնքան խիստ նայեց իրեն:

— Քո մայրը վշտամեռ կլիներ, եթե իմանար, որ մեկնումեկը վատ է խոսում քո մասին, — դողդոց ձայնով շարունակեց Բաթլերը: — Այդ մարդը ընտանիք ունի՝ կին ու երեխանիր: Գու նրանց շարիք շտկաք է պատճառեիր: Եթե ես չեմ սիստվամ, առանց այն լի մստիկ տպագոյամ խորոր անախորժությաններ են սպառում նրանց: — Բաթլերի ծնոտներն ամելի սեղմմիցին: Գու զեղեցիկ ազգիկ ես, դեռատի, հարստաց Տառնյատի երիտասարդներ պատիվ կհամարեին, եթե կարսղանային քեզ անվանել իրենց կինը: Ի՞նչ էլ միտքդ զնես, ի՞նչ էլ անես, իմացիր, միայն թե կյանքդ իզուր չկործանես: Զկործանես քո անմահ հոգին: Վերջնականապես շփշրես և իմ սիրաբ:

Էլլինը, որ ի բնե ամենակին շար չէր, տառապագին պայքարում էր հակասական զգացմունքների՝ որդիական սիրո և Քառուփերվոսդի նկատմամբ զգացած կրքի դեմ, դժվարությամբ էր արցունքը զսպում: Ամբողջ հոգով խղճում էր հորը, բայց չէր էլ տատանվում Ֆրենկի հանդեպ ունեցած սիրուց ու հավատարմությունից: Ուզում էր որեէ բան ասել, ավելի համոզիչ կերպով արտահայտել իր վրդովմունքը, սակայն հասկանում էր, որ անօգուտ է դա: Հայրը գիտեր, որ դուստրը ստում է:

— Ես այլես ասելիք չունեմ, հայր,— ասաց նա վեր կենալով։ Դրսում արդեն մթնում էր։ Ներքեցից դռան թեթև շրխկոց լսվեց։ ակներևաբար, վերապարձավ երիտասարդ Բաթլերներից մեկը։ Էյլինն այլես ոչ մի ցանկություն չուներ գրադարան գնալու։ — Մեկ է դու ինձ չես հավատաց Բայց կրկնում եմ՝ զուր են մեղադրել ինձ։

Բաթլերը բարձրացրեց իր խոզոր, թուխ ձեռքը ի նշան լուելու։ Էյլինը հասկացավ, որ իր խայտառակ կապը արդեն գաղտնիք չէ հոր համար և տանջալի խոսակցությունը նրա հետ արդեն վերջացած է։ Նա շրջվեց ու դուրս եկավ՝ ամոթից շառագունած։ Բաթլերն սպասեց, մինչև նրա ոտնաձայնը մարեց հեռվում։

Այնժամ վեր կացավ նա ու դարձյալ սեղմեց հսկայական բուռնցքները։

— Սրիկա՞—, — լսելի ասաց նա, — սրիկա՞։ Ես կըշեմ նրան Ֆիլադելֆիայից, թեկուզե ստիպվեմ ծախսել դրա համար իմ բոլոր փողերը՝ մինչև վերջի՞ն դոլլարը։

ԳԼՈՒԽ ՀԽVII

Առաջին անգամ իր կյանքում Քառուփերվուդը բախվեց մի յուրօրինակ երեսույթի, որի անունն է հայրական խոցված զգացմունք։ Ճշդրասրին շիմանալով, թե հատկապես ինչը Բաթլերին մատնեց այդպիսի զայրույթի, այնուամենայնիվ նա կուահում էր, որ շարժառիթը էյլինն է։ Քառուփերվուդն ինքն էլ հայր էր։ Իր տղայով՝ կրտսեր Ֆրենկով, նա առանձանապես չէր սքանչանում։ Սակայն նրբագեղ, փոքրիկ լիլիանը իր խարտյաշ, ասես լուսապսակով շրջապատված գլխով՝ միշտ էլ քնքշանք էր ներշնչում նրան։ Կմեծանա նա, հրապուրիչ կին կդառնա, մտածում էր հայրը և տենչում ամրացնել նրա դրությունը կյանքում։ Սիրում էր ասել նրան, որ նա «ուզումք աշքեր» ունի, «ոչ թե ոտքեր, այլ կատվի տոտեր», իսկ ձեռքերը «հինգ սենտանոցին զույգ են», այնքան որ փոքր են։ Աղջնակը պաշտում էր հորը, շարունակ նրան էր

որոնում, որտեղ էլ նա լիներ՝ գրադարանում, հյուրասենյակում, աշխատանոցում կամ ճաշի սեղանի մոտ, և անվերջ հարցեր էր տալիս:

Հարազատ դստրիկի նկատմամբ ունեցած վերաբերմունքը թույլ էր տալիս նրան պատկերացնել այն զգացմունքները, որ էյլինի վարքը պետք է հարուցեր Բաթլերի մեջ: Նա հարց էր տալիս իրեն, թե ինչ կզգար ինքը, եթե խոսքը վերաբերեր իր պստիկ լիլիանին: Բայց մի տեսակ չէր հավատում, թե ինքը տագնապահար պիտի լիներ ու տանջեր նրան այսպիսի մի պատմության պատճառով, եթե նա էյլինի հասակին լիներ: Չէ՞ որ երեխաները վաղ թե ուշ դուրս են գալիս ծնողական կամքին հնազանդվելուց, և հոր համար միշտ էլ ոժվար է դեկավարել նրանց, եթե միայն զավակները ի բնե հնազանդ չեն ու չեն ցանկանում, որ դեկավարեն իրենց:

Քառուփերվուղը մոռայլ ժպտաց՝ մտածելով, թե որքան փորձանքներ պայթեցին իր զլիխին. Զիկագոյի հրդե՛ք, Սթիների անժամանակ մեկնումը, Բաթլերի, Մոլինհասերի ու Սիմփոնի կտառարյալ անառրերաթյունը թե՛ Սթիների և թե՛ իր բախտի նկատմամբ Հիմա լի, երիի, հայտնաբերված է, իր կտառ էյլինի հետ ետք հայտացած չէր, որ իրենց զտպանիրը ի հայտ է րերված, սակայն հոտառությունն ասում էր, որ այսպես է, ինչպե՞ս կպահի իրեն էյլինը, ի՞նչ կամի, իմի հանկարծ հայրը կանչի պատասխան տալու. ահա թե ինչն էր Հիմա սաստիկ անհանգստացնում Քառուփերվուղին: Միաւ՞յն թե կարողանա մի կերպ կապվել նրա հետ: Բայց եմի հարկ լինի վերադարձնել Բաթլերին իր ավանդը և մարել այլ փոխառություններ, որոնք այսօր չէ վաղը կարող են ուղանջել, ապա չի կարելի ոչ մի րոպե կորցնել: Կամ պետք է վճարել, կամ անմիջապես անվճարունակ հայտարարել իրեն: Ժամանակավորապես հետին պլան անցան Բաթլերի զայրուցիքը, էյլինը, իրեն սպառնացող վտանգը: Նրա միտքը ամբողջովին կենտրոնացավ մի բանի վրա. ինչպե՞ս փրկել սերտական ֆինանսական գրությունը:

Նա շտապեց տեսնել ջորջ Ուոթերմենին, իր աներորդի Դեկիդ Ուիգինին, որ այդ ժամանակ ունեռ մարդ էր դարձել,

մանուփակտուրայի խոշոր առևտրական ջողեֆ ջիմերմենին, որի հետ անցյալում գործեր էր արել, նախկին դատավոր Քիթչենին, հարուստ ու խոշոր ձեռնարկատեր, Պենսիլվա-նիայի գանձապետ Ֆրեդերիկ Վան-Նութրենդին, որ շահագործված էր քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերով, և շատ ուրիշներին: Նրանցից մեկը, ում օգնությանը դիմեց նա, հիրավի ի վիճակի շէր օգնելու, մյուսը վախեցավ, երրորդը՝ ագահաբար մտովի հաշվում էր, թե ինչքան պոկի Ֆրենկից, շորրորդը՝ բավական վճռական չէր և մտածելու համար անասելի շատ ժամանակ էր պահանջում: Ամենքն էլ կուահում էին նրա գործերի իսկական դրությունը, բոլորըն էլ մտածելու ժամանակի կարիք ունեին, այնինչ հենց ժամանակն էր, որ նա չուներ: Դատավոր Քիթչենը այնուամենայնիվ համաձայնեց պարտք տալ նրան երեսուն հազար դուլար, ողորմելի մի գովմար: Ջողեֆ ջիմերմենը ցցանկացավ քսանհինգ հազար դոլլարից ավելի վտանգել: Քառուիերվուուր համոզվեց, որ ընդամենը կկարողանա հավաքել յոթանասուն-հինգ հազար՝ դրա դիմաց գրավ դնելով ավելի քան կրկնակի քանակությամբ բաժնետոմսեր: Բայց դա ծիծաղելի գումար էր: Նա նորից սկսեց հաշվել՝ մինչև մեկ դոլլարի ճշգրտությամբ, և եկավ այն եղրակացության, որ իր ամբողջ կանխեկից բացի, պետք է ճարի առնվազն երկու հարյուր հիսուն հազար, հակառակ դեսպում ստիպված կլինի գրասենյակը փակել: Վաղը, ժամը երկուսի մոտ, ամեն ինչ կպարզվի: Եթե ինքը շկարողանա դուրս պրծնել, առա Ֆիլադելֆիայի տասնյակ մայր հաշվեմատյանների մեջ իր անվան դիմաց կգրվի «սնանկ» բառը:

Լավ վերջավորություն այն մարդու համար, որ դեռ մի քանի օր առաջ այնքան բարձր էր սլանում իր հույսերի մեջ: Ամենից առաջ նա պետք է մարեր ջիրարդ ազգային բանկի հարյուր հազար փոխատվությունը: Դա Ֆիլադելֆիայի խոշորագույն բանկն է, և պարտքը ժամանակին վճարելու դեպքում պահելով նրա կառավարիչների բարեհաճությունը՝ Ֆրենկը, ինչ էլ պատահեր, կարող էր հետագայում ևս հույս դնել նրանց բարյացակամության վրա: Հիմա նա նույնիսկ չէր էլ պատկե-

բացնում, թե որտեղից փող ճարի՛ Սակայն մի փոքր մտածելուց հետո որոշեց հենց այդ երեկոյան դատավոր Քիթշենին ու Զիմերմենին հանձնել այն բաժնետոմսերը, որոնց դիմաց սրանք համաձայնել էին փոխառություն անել իրեն, և չեկ կամ կանխիկ դրամ վերցնել նրանցից։ Այնուհետև կհամոզի Սթիներին տալ իրեն վաթսուն հազար դոլարի մի չեկ՝ քաղաքային փոխառության այն սերտիֆիկատների արժեքը, որ առավոտյան գնել էր բորսայում։ Դրանցից կվերցնի բանկի վճարն ամբողջացնելու համար պակասող քանակին հազարը, որից հետո նրա տրամադրության տակ կմնա ևս երեսունհինգ հազար։

Այդ նախագծման միակ բացասական կողմն այն էր, որ դա կառուցված էր սերտիֆիկատների պատմությունը ավելի ես խճճելու վրա։ Առավոտյան գնելով դրանք՝ Քառոսիերվուղը ոչ միայն շհանձնեց մարման ֆոնդին, ինչպես կարգն էր (այդ թղթերը իր գրասենյակն էին բերել մեկն անց կեսին), այլև անմիջապես գրավ գրեց հերթական պարտքը վճարելու համար։ Վտանգավոր քայլ էր, եթե նկատի ունենամք, որ Քառոսիերվուղը սնանկանալու սովորութիւն տակ էր և վստահ չէր, որ կկարողանաւ ժամանակին ետ գնել սերտիֆիկատները։

Բայց մյուս կողմից, մտածում էր Քառոսիերվուղը, չէ՞ ո՞ համաձայնություն գոյություն ունի իր և գանձապետի միջև (իհարկե ապօրինի), որի շնորհիվ այդ կոմբինացիան կարող է միանգամայն պատշաճ ու ձեւականորեն ճիշտ համարվել անդամ նրա սնանկանալու դեպքում, քանի որ նա պարտավոր չէ մինչև ամսի վերջը հաշվեկշռի բերել իր բոլոր գործարքները։ Եթե նա կոտր ընկնի և մարման ֆոնդում այդ պարտառմանը վերը լինեն, կարող է ասել, թե վարժված չէ այդ թվերին հանձնել պարտառմանը, այնպես որ պարզապես մոռացել է։ Հետեւաբար, եթե նա չեկ ստանա այդ տակավին շհանձնված պարտառմանը արժեքը վճարելու համար, ապա, ճիշտն ասած, մի կողմ թողնելով օրենքն ու էթիկան, նրա քայլը միանգամայն հիմնավորված կլինի ճիշտ է, քաղաքը վաթսուն հազար դոլար ևս կկորցնի։ Բայց ի՞նչ նշանակություն ունի, քանի որ մեկ է՝ հինգ հարյուր հազար պակասորդ է

սպառնում նրան: Ալրեմն կլինի հինգ հարյուր վաթսում Քառուփերվուդին հատուկ զգուշությունն այստեղ բախվում էր անհրաժեշտությանը, ուստի և նա որոշեց առայժմ շխոսել այդ չեկի մասին, քանի դեռ Սթիները վերջնականապես չի մերժել երեք հարյուր հազարը: Այդ գեպքում նա իրավունք կունենա չեկ պահանջելու: Ամենահավանականն այն է, որ Սթիները չի էլ հարցնի, պարտատոմսերը մարման ֆոնդին հանձնված են, թե՛ ոչ իսկ եթե հարցնի, հարկ կլինի ստել, և ուրիշ ոչինչ:

Քառուփերվուդը նորից թուավ կառքը և սլացավ ետ՝ գրասենյակ, որտեղ, ինչպես կարծում էր, արդեն նրան էր սպասում Բաթլերի գրավոր պահանջը: Նա անմիջապես չեկ գրեց այն հարյուր հազար գոլլարի վրա, որով սիրագորով հայրը վարկավորել էր նրան իր բանկում, և ուղարկեց Բաթլերին: Այդ միջոցին մի նամակ էլ ստացվեց Սթիների քարտուղար Ալբերտ Սթայերսից, որով սա նախազգուշացնում էր այլևս չգնել և չծախել քաղաքային փոխառության պարտատոմսեր, որովհետև այդ գործարքները հաշվի չեն առնվելու մինչ հատուկ կարգադրություն: Քառուփերվուդն անմիջապես հասկացավ, թե որտեղից է քամին փշում: Սթիները խորհրդակցել էր Բաթլերի կամ Սոլենհաուերի հետ, սրանք էլ շտապել էին նախազգուշացնելու և վախեցնելու նրան: Չնայած դրան՝ Ֆրենկը ուղիղ քշեց դեպի քաղաքային գանձատունը:

Քառուփերվուդի հետ տեսնվելուց հետո Սթիները դարձյալ զրուց էր ունեցել Սենգսթեկի, Սթրոբիկի և այլ անձանց հետ, որոնց ուղարկել էին նրա մոտ մի լավ վախեցնելու համար: Այդ զրուցներից հետո գանձապետը կտրականապես դիմադրում էր Քառուփերվուդի բոլոր նախագծումներին: Սթրոբիկը նույնպես խիստ տագնապահար էր: Նա, Ուայքրոֆթը և Հարմոնը նույնպես օգտվում էին քաղաքային գանձարանի միջոցներից, ճիշտ է, ավելի քիչ քանակությամբ, քանի որ նըրուանց հատուկ չեր Քառուփերվուդի ֆինանսական թափը, և հիմա պետք է վճարեին իրենց պարտքը նախքան փոթորկի պայթելը: Եթե Քառուփերվուդը սնանկանա և Սթիների պակասորդը հայտնաբերվի, ապա կառող են ստուգել ամբողջ բյու-

չեն, և այն ժամանակ լույս աշխարհ կգան նաև իրենց նենդությունները: Որպեսզի շմեղադրվեն պարտքի հանցագործությամբ, պետք էր այսպես թե այնպես վերադարձնել դրամը:

— Գնացեք Մոլենհառւերի մոտ, — խորհուրդ տվեց Սթիներին Սթրոբիկը, հենց որ Քառվիերվուղը գնաց, — և ամեն ինչ հայտնեցեք նրան: Նա է պաշտպանել ձեր թեկնածությունը ու հաջողեցրել այս պաշտոնն ստանալ: Պատմեցեք, թե ի՞նչ դրության մեջ եք և հարցրեք ինչպե՞ս վարվել: Նա արդեն ելք կգտնի: Զեր բաժնետոմսերն առաջարկեցեք նրան օգնության դիմաց: Մտիպված եք այդ զոհողությունն անել: Ո՛չ մի այլ բան չի մնում ձեզ անել: Իսկ Քառվիերվուղին, գրո՞ղը տանի, էլ ո՛չ մի դոլլար մի տաք: Հիշեցեք, որ նա է ձեզ մղել անդունդ, որտեղից շեք իմանում ինչպես դուրս գաք: Եվ, վերջապես, եթե Մոլենհառւերը հրաժարվի օգնել ձեզ, գոնեք թող Քառվիերվուղին ստիպի վերադարձնել գանձարանին իր պարտքերը: Մոլենհառւերն արդեն կկարողանա ազդել նրա վրա:

Սթրոբիկը ուրիշ շատ փաստարկներ էլ բերեց, և նրա գնալուց հետո Սթիները ամենայն արագությամբ շտապեց Մոլենհառւերի մոտ: Այնպես էր նա ահաբեկվել, որ շնչակտուր էր լինում և պատրաստ էր ծունկ շոքել այդ ամերիկյան գերմանացու, մեծ ֆինանսիստի ու քաղաքագետի առաջնորդ, եթե միստր Մոլենհառւերը համաձայնե՞ր օգնել իրեն, այն ժամանակ հույս կունենար դուրս պրծնել այդ գործից ու բանտ շնետվել:

— Աստված իմ, աստված իմ, — շշնչում էր նա՝ Մոլենհառւերի մոտ դնալիս, — ի՞նչ անեմ:

Խստաշունչ դպրոց անցած դաժան քաղաքագետ ու գործարար Հենրի Մոլենհառւերի բռնած դիրքը այնպիսին էր, ինչպիսին կրոներ ամեն մի կապիտալիստ նման բարդ հանգամանքներում:

Մտովի թվարկելով այն, ինչ ասել էր Բաթլերը, Մոլենհառւերը ամենից առաջ մոտավորապես հաշվեց, թե ինչ օգուտ կարող է քաղել ինքը ստեղծված դրությունից: Պետք է

(Եթե, իհարկե, կարելի է անել դա առանց անվանարկելու իրեն) տիրանալ Սթիների ձեռքին գտնվող քաղաքային երկառութիւնների բաժնետոմսերին: Դժվար չէ բորսայի միջնորդների միջոցով այդ բաժնետոմսերը փոխադրել որևէ դրածո անձի, Հետո արդեն իր՝ Մոլենհաուերի անվան: Դրա համար Հարկ կլինի մի լավ հուպ տալ գանձապետին, երբ սա այսօր ներկայանա իրեն. իսկ ինչ վերաբերում է գանձարանի դրամարկղից պակասող հինգ հարյուր հազար դոլարին, ապա Մոլենհաուերը դեռ չէր պատկերացնում, թե ինչ կարելի է անել: Ամենայն հավանականությամբ Քառուիերվուդը չի կարողանա վճարել իր պարտքը. ի՞նչ արած, այդ գեղքում քաղաքը վնաս կունենա, բայց անհրաժեշտ է այդ խայտառակությունը կոծկել մինչև ընտրությունները վերջանան: Եթե կուտակցության մյուս ողարավությունները մեծահոգի շինեն, ինչպես և կարծում էր Մոլենհաուերը, ապա իհարկե Սթիները չի խուսափի մերկացվելուց, ձերբակալությունից, դատվելուց, ունեցվածքի բռնագրավվելուց ու, հավանաբար, նույնիսկ բանտարկությունից: Ճիշտ է, երբ հասարակական զայրուկթի ալիքը մի քիչ հանդարտվի, կարելի կլինի դատավճռի մեղմացում ձեռքբերել նահանգապետից: Առկա՝ էր արդյոք այդ գործում Քառուիերվուդի հանցավոր մասնակցությունը. Մոլենհաուերը դրանով չէր հետաքրքրվում: Մեկի դիմաց հարյուր, որ հանցավոր չէ: Այդ մարդը բավականին խորամանկ է ու զգուց: Ասկէք, եթե հնարավորություն ներկայանա պաշտպանել գանձապետին՝ մեղքը Քառուիերվուդի վրա գցելով և այդպիսով բիծը կուսակցության վրայից հանել, Մոլենհաուերը, իհարկե, չի առարկի: Բայց նախ պետք է ավելի մանրամասնորեն իմանալ այդ բորսայական մարդու և Սթիների հարաբերությունների պատմությունը և անցողակի ձեռք ձգել այն ամենը, ինչ սա կարողացել է վաստակել գանձապետի պաշտոնում:

Մտնելով Մոլենհաուերի սենյակը՝ Սթիները վերջնականապես թուլացավ ու ընկավ բազկաթոռի վրա: Նրա ուղեղը հրաժարվում էր աշխատել, ջղերը տեղի տվեցին, և վախը համակեց նրան:

— Ի՞նչ կասեք, միստր Սթիներ, — ազդու շեշտով հարցրեց Մոլենհառտերը՝ ձևանալով, որ իբր թե չի իմանում ինչն է գանձապետին բերել իր մոտ:

— Եկել եմ խոսելու այն գումարների մասին, որ փոխ եմ տվել միստր Քառովիերվուդին:

— Իսկ ի՞նչ է գործի իսկությունը:

— Նա պարտք է ինձ, կամ ավելի ճիշտ՝ քաղաքային գանձարանին հինգ հարյուր հազար դոլար: Որքան հայտնի է ինձ, սնանկություն է սպառնում նրան, և այդ դեպքում չի կարողանա վերադարձնել այդ գումարը:

— Զեզ ո՞վ ասաց, որ սնանկություն է սպառնում նրան:

— Միստր Մենգսթեկը, հետո էլ ինքը՝ միստր Քառովիերվուդը եկավ ինձ մոտ: Նա ասաց, որ կործանումից խուսափելու համար պետք է նորից փող ճարի: Եվ լրացրացիշ երեք հարյուր հազար դոլար խնդրեց: Նա հավատացնում է, թե ինչ գնով էլ լինի՝ այդքան գումար է պետք իրեն:

— Ի՞նչ եմ ասել, — ծոր ավեց Մոլենհառտերը՝ ծայրահետ դարմացած ձեռնալով: — Բայց պետք է կարծել, որ դուք շհամաձայնեցիք: Առանց այդ էլ բավականաշախ անախորժություններ ունեք: Եթե ուզում է իմանալ, թե ինչու եք մերծում տալ, ուզարկեցեք նրան ինձ մոտ: Ու էլ ո՛չ մի դոլար մի տաք նրան: Հակառակ դեպքում, եթե գործը հասնի դատարանին, ձեզ չեն խղճա: Այնպես էլ ես չեմ իմանում, թե ինչ կարելի է անել ձեզ համար: Բայց եթե դուք այլևս փող շտաք նրան, մենք թերեւս մի բան մտածենք-գտնենք: Զեմ երաշխավորում, իհարկե, բայց կփորձենք: Միայն թե տեսեք, ո՛չ մի դոլար այլևս չպետք է գանձարանից հոսի այդ մութ գործը շարունակելու համար: Առանց այդ էլ դա բավական անդուրյան է:

Մոլենհառտերը նախազգուշացնող հայացք նետեց Սթիների վրա: Այս տանջված ու ջարդված մարդն էլ իր մեծավորի խոսքերի մեջ գիտասրտության մի թույլ ակնարկ նկատելով՝ ստիգ բազկաթոռից ու չոքեց նրա առաջ և կարկառեց ձեռքերը, ինչպես աղոթողը՝ խաչելության առաջ:

— Ո՞չ, միստր Մոլենհառտեր, — կմկմում էր նա լացից

խեղդվելով,— հավատացեք, ես ո՞չ մի վատ բան չէի ուզում անել։ Սթրոբիկն ու Ռայքրոֆթը հավատացնում էին ինձ, թե դա միանգամայն օրինական է։ Դուք ինքներդ ուղարկեցիք ինձ Քառուփերվուղի մոտ։ Ես անում էի միայն այն, ինչ ուրիշներն էին անում։ Համենայն դեպս ինձ այդպես էր թվում։ Իմ նախորդը՝ միստր Բոուլը, ճիշտ այդպես էր վարվել։ Նա այդ գործերը վարում էր «Թայ և Ընկ.» ֆիրմայի միջոցով։ Ես կին ունեմ ու շորս երեխա, միստր Մոլենհաուեր։ Մտածեցեք, թե ինչ կլինի նրանց համար իմ ձերբակալությունը։ Ես չեմ ուզում բանտ գնալ։ Ես չէի կարծում, թե ապօրինի եմ վարվում, ազնիվ խոսք, չէի կարծում։ Կտամ այն ամենը, ինչ ունեմ։ Վերցրեք իմ բաժնետոռմանը, և՛ տները, և՛ հողամասերը, ամեն, ամեն՝ ինչ, միայն թե փրկեցեք ինձ փորձանքից։ Մի՛ թողնեք, որ կոխեն ինձ ծակը։

Գանձապետի հաստ, սպիտակած շրթումքները ջղաճպուրեն ճպվում էին, տաք արցունքներ էին հոսում նրա մերթ գունատ, մերթ շառագույն դեմքով։ Համարյա անճշմարտանման մի տեսարան, որ ցավոք սրտի այնքան էլ հազվադեպ չէ, երբ մի փոքր բացվում է փինանսական ու քաղաքական աշխարհի հսկաների կյանքը ծածկող վարագույրը։

Մոլենհաուերը նայում էր նրան հանգիստ ու մտախոհ։ Հաճախ էր նա իր առաջ տեսնում թույլ, իրենից ոչ ավելի անազնիվ, սակայն խելքից ու արիությունից գուրկ մարդիկ, որոնք ճիշտ այսպես պալատում էին իրեն՝ ոչ անպայման ծնկաշոք, բայց միևնույն է՝ դրանք հոգով ու կամքով խորտակված մարդիկ էին։ Առօրյա հարուստ ու բարդ փորձ ունեցող այդ մարդու պատկերացմամբ կյանքը առօրյա մի կծիկ էր՝ անհույս խճճված։ Ի՞նչ կհրամայեք անել այսպես կոչված բարոյականության ու բարոյական պատվիրանների հետ։ Այս Սթիները համարում է իրեն անազնիվ մարդ, իսկ իրեն՝ Մոլենհաուերին ազնիվ։ Ահա նա զղջում է իր առաջ իր հանցագործությունների համար ու դիմում իրեն՝ ասես արդար ու սուրբ մարդու։ Մինչդեռ Մոլենհաուերն իմանում է, որ ինքն էլ պակաս անազնիվը չէ, միայն թե ավելի խորամանկ է, հեռատես և հաշվենկատ։ Բանն այն չէ, որ Սթիներն անբարոյական է,

այլ այն, որ երկշուր է ու անխելք։ Այս է նրա գլխավոր հանցանքը։ Կան մարդիկ, ովքեր երեակայում են, թե կա ինչ-որ իրավունքի խորհրդավոր օրենսգիրք, մարդկային վարքի ինչ-որ իդեալ՝ գործնական կյանքից կտրված և անհունորեն հեռու։ Սակայն ինքը՝ Մոլենհաուերը, երբեք շի տեսել, որ դըրանք կենսագործվեն, իսկ եթե այդպես լիներ, ապա դա կհասցներ նրանց ֆինանսական (ոչ թե բարոյական, այսպիսի բան նա չէր հավաստի) կործանման։ Նրանք, ովքեր կառչում էին այդ անիմաստ իդեալին, երբեք ականավոր գործի չէին եղել որևէ գործնական ասպարեզում։ Դրանք ընդմիջտ մնում էին շքավոր, ողորմելի ու անուշագրության մատնված երազողներ։ Որքան էլ նա ցանկանար, չէր կարողանա հասկացնել այդ բանը Սթիներին, ասենք, չէր էլ ձգտում լուսավորել նրան։ Մեղք են, անշուշտ, նրա երեխաները, մեղք է նրա կինը։ Սա էլ հավանորեն ստիպված է եղել բավական աշխատել կյանքում, ինչպես, ասենք, նրա ամուսինը, նախքան ճանապարհ հարթելը և մարդամեջ մտնելը։ Եվ հանկարծ այս անսպասելի աղետը, Զիկագոյի այդ հրգեհը, որ խորտակեց նրանց բոլոր ճիգ ու զանքերը։ Հանգամանքների տարօրինակ գուգորդում։ Եթե որևէ բան մղում էլ էր Մոլենհաուերին տարակուաել բարի ու ամենազոր նախախնամության գոյությանը, ապա հենց այսպիսի ֆինանսական ու սոցիալական իրադարձությունները, որոնք պայթում էին ինչպես որոտը շինչ երկրներում և կորստյան ու կործանման մատնում բազմաթիվ մարդկանց։

— Վեր կացեք, Սթիներ, — հանգիստ ասաց նա մի փոքր լուկուց հետո։ — Զի կարելի այդպես բարոյակքվել։ Լաց լինելու բան չկա, արցունքով չեք օդինի գործին։ Հավաքեցեք ձեր մտքերը և մի լավ ժանրութերեք արեք ձեր գրութունը։ Գուցե և դա այնքան էլ անհույս չէ։

Մոլենհաուերի խոսելու պահին Սթիները դարձյալ նստեց բազկաթոռին և անզոր հեկեկում էր՝ թաշկինակով սրբելով աշքերը։

— Ես կանեմ այն ամենը, ինչ հնարավոր է, Սթիները թեև հիմա ոչ մի որոշակի բան չեմ խոստանում և հետեանքն

էլ երաշխավորել չեմ կարող: Մեր քաղաքում գործում են քաղաքական տարբեր ուժեր: Գուցե և ես շկարողանամ փրկել ձեզ, բայց կփորձեմ: Իսկ դրա համար դուք լիովին պետք է վստահեք ինձ: Ոչ մի բան շանեք ու շասեք՝ առանց նախօրոք ինձ հետ խորհրդակցելու ժամանակ առ ժամանակ իմ քարտուղարին կուղարկեմ ձեզ մոտ, որպեսզի ասի ինչպես գործեք: Ինձ մոտ մի՛ դաք, մինչև ինքս շկանչեմ: Հասկացա՞ք:

— Այս, միստր Մոլենհաուեր:

— Դեհ, հիմա սրբեցեք արցունքները: Անհարմար է իմ գրասենյակից դուրս գալ արտասվալից աշքով: Գնացեք ձեր տեղը՝ գանձատուն, իսկ ես կուղարկեմ ձեզ մոտ Սենգսթեկին: Նրանից լիմանաք, թե ինչ պետք է անեք: Ճշտիվ կատարեցեք նրա ցուցումները: Բայց հենց որ ես իմաց անեմ, անմիջապես եկեք:

Վեր կացավ նա՝ հաղթահասակ, ինքնավստահ, անխռովուն նրա մշուշապատ խոստումները վերադրին Սթիների հոգեկան հավասարակշռությունը: Միստր Մոլենհաուերն ինքը, հզոր ու մեծ Մոլենհաուերը կօգնի իրեն պատուհասից պըրծնելու: Վերջ ի վերջո բացառված չէ, որ բանտն էլ իր կողքով անցնի: Երբ մի քանի րոպե հետո Սթիները դուրս եկավ գանձատուն գնալու համար, նրա գեմքի վրա, որ ճիշտ է, արցունքից գեռ կարմիր էր, արդեն չէր նկատվում նախորդ ցընցման այլ հետք:

Մի ժամ էլ շանցած, այդ օրը երկրորդ անգամ գանձատուն եկավ էրներ Սենգսթեկը՝ մի թխադիմ մարդուկ, որի աշգոսացած ոտքը ծածկված էր մի հաստաներբան կոշիկով: Այտոսկրերը ցցուն, արտակարգ խելացի գեմքի վրա փայլում էին աշխույժ, խորաթափանց, բայց անթափանցելի աշքերը: Սենգսթեկը ավելի քան հարմար էր Մոլենհաուերի քարտուղարի գերի համար: Բավական էր նայել նրան՝ համոզվելու համար, որ նա Սթիներին կստիպի վարվել ճիշտ իրենց ընդհանուր մեծավորի ցուցումով: Հիմա նրա խնդիրն էր՝ համոզել գանձապետին անմիջապես Բաթլերի միջնորդների՝ «Թայ և Ընկ.» միջոցով քաղաքային երկաթուղու իր բաժնետոմսերը փոխանցել Մոլենհաուերի կլիկի մանր գործակալ-

Ներից մեկի անվանը, սա էլ հետո, իր հերթին, փոխանցելու է դրանք մեծավորի անվան։ Այն քիչը, որ Սթիները պետք է ստանա այդ թղթերի համար, պետք է մուծվի գանձարան՝ պակասորդը ծածկելու համար։ «Թայ և Ընկ.» կկարողանա գործն այնպես տանել, որ ոչ ոքի ձեռք չընկնեն այդ արժեա թղթերը, և միաժամանակ սովորական բորսայական գործարա քի ձեւ կտան նրան։ Սենգսթեկն արդեն կարողացել էր ստուգել Սթիների գործերի վիճակը հօգուտ իր մեծավորի և իմացել էր, թե գանձարանից ինչի համար փող էին վերցրել Սթրոբի կը, Ուայքրովֆին ու Հարմոնը։ Այդ եռյակին, մի ուրիշ միջնորդի միջոցով, նույնպես առաջարկել էին՝ կամ անմիջապես ծախել իրենց ունեցած բաժնետոմսերը, կամ կանգնել դատա րանի առաջ։ Դրանց հետ շարժեր նազուառուղ անել. սրանք Մոլենհաուերի քաղաքական մեքենայի փոքրիկ ատամնանիվ ներն էին միայն։ Խստորեն պատվիրելով Սթիներին ոչ ոքի անվանը շփոխանցել իր ունեցվածքի մնացորդները և ոչ ոքի խորհուրդին, նամանավանդ Քառուփերվուգի մաքիավելիական խրատներին շահսալ, Սենգսթեկը զնաց։

Հազիվ թե արժե հիշեցնել, որ Մոլենհաուերը խիստ գոհ մնաց գործի այսպես շրջվելուց։ Հիմա Քառուփերվուգը ավելի շուտ ստիպված կլինի գիմել իրեն. բայց եթե նույնիսկ նա այդ բանը չանի, ապա միենալոյն է՝ արդեն Մոլենհաուերի ձեռքին քիչ շեն այնպիսի ձեռնարկություններ, որտեղ դեռ վերցերս Քառուփերվուգը առաջատար դեր էր կատարում։ Իսկ եթե իրեն ամեն տեսակ խոսքով հաջողվի ձեռք գցել և մնա ցածը, ապա Սիմֆոնն ու Բաթլերը առիթ շեն ունենա շատ խոսել քաղաքային երկարութիւնների մասին։ Այժմ այդ գործի մեջ անհեղած նրա բաժինը ոչ միայն պակաս չէր մյուս բաժնետերերի ունեցածից, այլև թերևս գերազանցում էր դրանից։

ԳԼՈՒԽ ՀXVIII

Իրադրությունն այսպես էր երկուշաբթի, օրվա վերջը, երբ Քառուփերվուգը կրկին եկավ Սթիների մոտ։ Գանձապետը

նստած էր իր առանձնասենյակում՝ միայնակ, ընկճված, անմեղսագիտակության մոտեցող դրության մեջ։ Նա տենչում էր մի անգամ էլ տեսնել Քառուփերվուղին, բայց միաժամանակ և խուսափում էր նրան հանդիպելուց։

— Զո՞րջ, — անհապաղ սկսեց Քառուփերվուղը, — ես ոչ մի ավելորդ բոպի շունեմ ու եկել եմ, որ վերջին անգամ ասեմ ձեզ՝ դուք պետք է երեք հարյուր հազար դոլլար տաք ինձ, եթե շեք ուղում, որ կս սնանկանամ։ Այսօր գործերը շատ վատ ընթացք ստացան։ Ես բառացիորեն անելանելի դրության մեջ եմ։ Բայց այսպիսի փոթորիկը երկար ժամանակ մոլեգնել չի կարող. դա ակներեւ է իր իսկ բնույթից։

Նա նայում էր Սթիներին և նրա դեմքի վրա կարդում վախ ու տանջալի, բայց աներկբա դիմադրություն։

— Չիկագոն այրվում է, բայց շատ շուտով կսկսեն նորից կառուցել։ Եվ այն ժամանակ գործերի մեծ վերելք կսկսվի։ Ուրեմն խելքի եկեք և օգնեցեք ինձ։ Մի՛ ենթարկվեք ահին։ — Սթիները շփոթված խլրում էր բազկաթոռում։ — Մի թույլ տաք այդ քաղաքական արկածախնդիրներին, որ այդպես ահարեկեն ձեզ։ Մի քանի օրից խուճապը կհանդարտվի, և մենք երկուս էլ ավելի հարստանանք, քան մինչև այժմ ենք։ Դուք տեսա՞ք Մոլենհառւերին։

— Այո՛։

— Եվ ի՞նչ ասաց նա։

— Այն, ինչ կարծում էի կլսեմ նրանից։ Նա արգելեց, որ կատարեմ ձեր խնդրանքը։ Ես շեմ կարող, Ֆրե՛նկ, հասկանո՞ւմ եք, չե՞մ կարող, — ճշաց Սթիները՝ վեր թոշելով։ Այսպես էր նա ներվայնացած, որ ի վիճակի շեր այդ խոսակցության ընթացքում նստելու իր տեղը։ — Չե՞մ կարող։ Նրանք դեմ են արել ինձ պատին, հալածել։ Նրանք գիտեն մեր բոլոր գործերը։ Լսե՛ք, Ֆրե՛նկ, — Սթիները ձեռքերն անհեթեթ թափահարեց, — դուք պետք է փորձանքից ազատեք ինձ, պետք է վերադարձնեք այդ հինգ հարյուր հազար դոլլարը, ապա թե ոչ կորած եմ։ Եթե դուք պարտքը շվերադարձնեք ու սնանկանաք, ինձ կուղարկեն բանտ։ Իսկ ես կին ունեմ ու շորս երեխա, Ֆրե՛նկ։ Ես

շեմ կարող դիմանալ դրան։ Դուք չափից ավելի թէ առաք։ Ես իրավունք չունեի այդպես վտանգել ինձ։ Ասենք, ես այդ վտանգը հանձն չէի էլ առնի, եթե դուք չհամոզեիք ինձ։ Մկրում ես չէի պատկերացնում, թե ինչով կարող է վերջանալ այդ ամենը։ Բավակա՞ն է ինչ արել եմ, Ֆրե՛նկ, Զե՛մ կարող։ Իմ բոլոր բաժնետոմսերը կտամ ձեզ, իսկ դուք վերադարձրեք այն հինգ հարյուր հազարը, և մենք քվիտ կլինենք։

Սթիների ձայնը խզվեց, նա ձեռքով սրբեց քրտնած ճակատը և սկսեց բուժ, աղաշական հայացքով նայել Քառակերպութիւն։

Սա էլ իր հերթին մի քանի վայրկյան նայեց նրան սառն, անշարժ հայացքով։ Նա լավ էր ճանաչում մարդկային խառնը-վածքը, ուստի նրան չէր կարող դարմացնել վարքի ոչ մի տարօրինակոթյուն, մանավանդ խուճապահար վիճակում։ Սակայն Սթիները գերազանցեց նրա բոլոր ակնկալությունները։

— Էլ ո՞ւմ հետ եք տեսնվել, Զո՛րշ, իմ գնալուց հետո։ Ո՞վ է եղել ձեզ մոտ։ Սինդսթեկի ինչի՞ն էիք դուք պետք։

— Նա ինձ ասաց նույնը, ինչ որ Մոլենհառութը։ Ո՛չ ոքի և ո՛չ մի հանգամանքում այլևս փոխ շտալ, իսկ գլխավորը՝ որքան կարելի է շուտ վերադարձնել այդ հինգ հարյուր հազարը։

— Եվ դուք կարծում եք, թե Մոլենհառութը ուզում է օգնել ձեզ, այնպես չէ՞,— հարցրեց Քառակերպութը, իզուր փորձելով սքողել այդ մարդու հանդեպ զգացած արհամարհանքը։

— Կարծում եմ՝ այս էլ ս՞վ կարսդ է օգնել ինձ, Ֆրե՛նկ, եթե ոչ նա։ Մոլենհաստերը միծ ուժ է մեր քաղաքում։

— Լսեցեք ինչ եմ ասում, — վերսկսեց Քառակերպութը, հայացքով շաղափելով Սթիներին։ Մի փոքր դադար առաջ նա։ — Մոլենհառութը ինչպէս հրամայեց ձեզ վարվել քաղաքային երկաթուղիների ձեր բաժնետոմսերի հետ։

— Մախել դրանք «Թայ և Ընկ.» գրասենյակի միջոցով և դրամը մուծել գանձարան։

— Իսկ ո՞ւմ ծախել, — Հարցրեց Քառուիերվուղը, լարված մտածելով Սթիների վերջին խոսքի վրա:

— Տարօրինակ Հարց. ամեն ոքի, ով, կարծում եմ, ցանկանա գնել:

— Ամեն ինչ հասկանալի է, — վրա բերեց Քառուիերվուղը, ըմբռնելով բանի էությունը: — Ասենք, ինքու էլ կարող էի կուահել: Զո՞րշ, դրանք կողոպտում են ձեզ, աշխատում են խլել ձեզնից ձեր արժեթղթերը: Մոլենհառուերը մատի վրա է խաղացնում ձեզ: Նա գիտե, որ ես հիմա շեմ կարող անել այն, ինչ պահանջում է ինքը, այսինքն՝ վերադարձնել ձեր հինգ հարյուր հազարը: Դրա համար էլ ստիպում է ձեզ բորսա նետել ձեր բաժնետոմսերը, որը նա արդեն կարողանա գոփել դրանք: Կարող եք վստահ լինել, որ նա ամեն ինչ նախապատրաստել է: Հենց որ դուք լսեք նրան, ես կընկնեմ նրա ճանկը. համենայն դեպս այդպես է կարծում նա, ավելի ճիշտ նրանք՝ նա, Բաթլերն ու Սիմֆոնը: Այդ երեք մարդիկ ուզում են իրենց ձեռքը գցել քաղաքային երկաթուղիները. ես գիտեմ, զգում եմ: Վաղուց եմ արդեն սպասում դրան: Մոլենհառուերը նույնքան քիչ է մտածում ձեզ օգնելու մասին, ինչպես որ թեմերը թափահարելու ու թոշելու մասին: Հիշեցեք իմ խոսք՝ հենց որ ձեր բաժնետոմսերը ծախեք, դուք ամեն իմաստ կորցնեք նրա համար: Մի՞թե կարծում եք, որ նա մատն անդամ կշարժի ձեղ բանտից ազատելու համար, երբ դուք արդեն առնչություն չեք ունենա քաղաքային երկաթուղիների հետ: Ինչպիսի՞ ցնդաբանություն: Եթե դուք, Զո՞րշ, հույս ունեք դրա վրա, ապա ավելի հիմար եք, քան կարծում էի: Խելքներդ մի՞ թոցնեք: Մարդն է՞լ այդ աստիճան գլուխը կորցնի: Ուշքի եկեք ու նայեցեք վտանգին դեմ-հանդիման: Հիմա ամեն ինչ բացատրեմ ձեզ: Եթե հիմա դուք շաջակցեք ինձ, եթե ամենաուշը մինչև վաղը առավոտյան երեք հարյուր հազար շտաք ինձ, ես կորած մարդ եմ, ինչպես և դուք: Մինչդեռ ըստ էության մեր գործերը վատ չեն: Մեր բաժնետոմսերը այսօր պակաս գին չունեն, քան առաջ ունեին: Հասկացեք, էլի՛, գրո՞ղը տանի, այդ բաժնետոմսերը պափառված են գոյություն ունեցող երկաթուղիներով:

Իսկ ուզին եկամտաբեր ձեռնարկ է: Տասնյոթերորդ ու Տասնիններորդ փողոցների գիծը հիմա արդեն օրական հազար դոլար է բերում: Ել ի՞նչ ապացուց եք ուզում դուք: Դրին և Քոռվթս գիծը օրական հինգ հարյուր դոլար է տալիս: Զեր արածը վախկոտովթյուն է, Զո՞րշ: Զեզ ահաբեկիլ են այդ նզոված աֆերիստները: Դուք նույնքան իրավունք ունեք դրամ փոխ տալ, ինչպես ձեր նախորդները՝ Բոռուզն ու Մերթագը: Նրանք մշտապես զբաղվում էին դրանով: Քանի դեռ դուք նույն բանն անում էիք Հօգուտ Մոլենհաուերի ու նրա արբանյակների, ամեն ինչ կարգին էր: Տեսնենք, թե ինչ է նշանակում ավանդադրել բանկում քաղաքային գանձարանի միջոցները: Մի՞թե դա նույն փոխատվությունը չէ:

Քառուիերվուզը նկատի ուներ լայնորեն կիրառվող այս սովորովթյունը, երբ քաղաքային միջոցների մի մասը՝ օրինակ՝ մարման ֆոնդը, խիստ փոքր տոկոսով կամ բոլորվին անտոկոս, ավանդադրվում էր այն բանկերում, որոնց հետ կապված էին Մոլենհաուերը, Բաթլերն ու Սիմֆոնիը: Դա համարվում էր նրանց «օրինական» եկամուտը:

— Մի՛ հրաժարվեք փրկվելու վերջին հայանականություններից, Զո՞րշ: Մի՛ վայր զնեք զենքերը: Մի քանի տարի անց զարդ միլիոններ կունենաք, և այն ժամանակ մինչև ձեր կյանքի վախճանը կարող եք ձեռքերը ծալած նստել: Մի մտահոգություն կմնա ձեզ՝ պահել այն, ինչ ունեք: Երաշխավորում եմ ձեզ, եթե դուք չպաշտպանեք ինձ, նրանք կհրաժարվեն ձեզնից նույն վայրկյանին, հենց որ ևս սնանկանամ, և միանգամայն հանգիստ կթողնեն, որ ձեզ տանեն բանտ: Ո՞վ ձեր փոխարեն կես միլիոն դոլար կմուծի քաղաքային գանձարանը, Զո՞րշ: Այսպիսի ժամանակ որտեղից այդպիսի գումար կճարի Մոլենհաուերը, կամ Բաթլերը և կամ մի ուրիշը: Այժմ դա աներեակայելի է: Ասենք, նրանք չեն էլ պատրաստվում այդպիսի բան անել: Երբ գա իմ վախճանը, կգա և ձեր վախճանը. բայց լավ իմացեք, քրեական կարգվ հետապնդեն չեզ և ոչ թե ինձ: Նրանք ինձ ուշնչ անել չեն կարող, Զո՞րշ: Ես պարզապես միշնորդ եմ: Ես ձեզ չեմ կանչել: Դուք եք ինքնակամ եկել ինձ մոտ: Եթե

դուք չօգնեք ինձ, ձեր երգը երդված է, և դուք ուղիղ կմեկնեք բանտ. ես այդ երաշխավորում եմ: Ինչո՞ւ դուք չեք պաշտպանվում, Զո՞րջ: Ինչո՞ւ չեք պաշտպանվում ձեզ: Զէ՞ որ կին ու երեխաներ ունեք, որոնց մասին պարտավոր եք մտածելս ի՞նչ կարող է փոխվել այն բանից, եթե երեք հարյուր հազար ևս փոխ տաք ինձ, եթե ձեզ պատասխանավության կանչեն, դրանից ոչ մի տարբերություն չի առաջանա: Իսկ գլխավորը, եթե այդ գումարը պարտք տաք ինձ, ոչ մի դատի մասին խոսք լինել չի կարող: Այն ժամանակ սնանկություն չի սպառնա ինձ: Մի շաբաթ, տասն օր հետո փոթորիկը կհանգարտվի, և մենք դարձյալ հարուստ կլինենք: Իսկ ասածուք, Զորջ, մի՛ բարոյալքվեք: Գոտեանդվեցեք ու խելացի գործեցեք:

Նա լոեց, որովհետև Սթիների գեմքը հուսահատությունից նմանվեց ճապաղած դոնդողի:

— Զե՞մ կարող, Ֆրե՛նկ, — նվաց նա: — Զեմ կարող՝ ասում եմ ձեզ: Նրանք իմ դատաստանը կտեսնեն առանց խղճի խայթ զգալու, ինձ աշխարհի երեսից կսրբեն: Դուք այդ մարդկանց չե՞ք ճանալում:

Սթիների խայտառակ թուլության մեջ Քառուփերվուգը կարդաց իր դատավճիռը: Ի՞նչ կարելի էր անել այդպիսի մարդու: Ինչպե՞ս առույգություն ներշնչել նրան: Ո՛չ, անհույս բան է: Զղլանք, հողարտ անտարբերություն ցուցաբերելով և հետագա ամեն տեսակ փորձերից հրաժարվելու մի ժեստ անելով՝ նա դիմեց դեպի դուք, բայց շեմքին կանգ առավ:

— Զո՞րջ, — ասաց նա, — շատ եմ խղճում, սրտանց խղճում եմ ձեզ և ոչ թե ինձ: Վաղ թե ուշ ես դուրս կպրծնեմ թվ կհարստանամ: Բայց դուք, Զո՞րջ, կատարում եք ձեր կյանքի մեծագույն սխալը: Դուք կդառնաք մուրացկան, տաժանապարտ և, ձեզնից բացի, ոչ ոքի մեղադրելու իրավունք չեք ունենա: Բորսայի այս ամբողջ գոյավիճակի պատճառը հրդեհն է: Իմ գործերը, եթե չհաշվենք արժեթղթերի անկումը բորսայում՝ խուճապի հետևանքով, միանգամայն կարգին են: Իսկ դուք նստել եք այստեղ՝ փողի վրա և թույլ եք տալիս, որ ձեզ ահաբեկի բանսարկուների ու շանտաժիստա-

ների մի խումբ, որը ձեր և իմ գործերի մասին գիտե ոչ
ավելի, քան ամեն մի պատահական մարդ: Նրանք հետա-
քրքրվում են ձեզնով այնքան միայն, որքան հույս ունեն
փետրահան անել: Մի' մոռանաք, որ նրանք ձեզ ետ են պա-
հում միակ քայլից, որը կարող էր դեռ փրկել ձեզ: Մի ինչ-որ
չնշին, երեք հարյուր հազարի պատճառով, որ ես երեք կամ
շորս շաբաթ հետո կվերադարձնեի ձեզ հնգապատիկ, դուք
պատրաստ եք դատապարտելու ինձ կործանման, իսկ ձեզ՝
տաժանակրության: Ես հրաժարվում եմ հասկանալ ձեզ,
Զո՞րջ: Խելքներդ թոցրել եք դուք: Մինչև վերջին շունչ կզշաք
այս որոշման համար:

Մի քանի վայրկյան նա սպասեց. թերևս վերջին րոպեին
իր խոսքերը մի որեւէ ազդեցություն գործեն. բայց համոզ-
վելով, որ Սթիները առաջվա պես խուզ է բանականության
բոլոր փաստարկներին, տխուր օրորեց գլուխը և դուրս եկավ:

Կյանքում առաջին անգամ Քառսկերվուդը մի ակնթարթ
հոգեկան խոնջանք զգաց, ավելին՝ հուսահատություն: Նա
միշտ ծաղրանքով էր վերաբերվում հունական դիցարանու-
թյան այն մարդուն, որին հալածում են շար կանայք: Բայց
հիմա չար ճակատագիրը կարծես, հիրավի, հետապնդում էր
իրեն: Շատ է դրան նոնան: Բայց այսպես թե այնպես ինքը
շի թողնի տհարեկեն իրեն: Եվ նույնիսկ ծանր փորձության
այս առաջին պահերին նա գուրս եկավ իր սովորական առուցդ
քայլվածքով, գլուխը բարձր և ուսերը ուղիղ:

Սթիների առանձնասենյակին կից խոշոր սենյակում
Քառսկերվուդը հանդիպեց քաղաքային գանձապետի գրասեն-
յակի կառավարիչ և քարտուղար Ալբերտ Սթայերսին: Քառ-
սկերվուդը բարեկամաբար էր վարվում նրա հետ և հաճախ
միասին քննարկել էին քաղաքային փոխառության վերաբե-
րող երկրորդական գործարքներ, որովհետև Սթայերսը իր պե-
տից ավելի լավ էր հասկանում փինանսական գործողություն-
ների նրբություններն ու հաշվետվությունը:

Սթայերսին տեսնելուն պես Քառսկերվուդը հանկարծ
հիշեց քաղաքային փոխառության սերտիֆիկատները, որոն-

ցից ինքը վաթսուն հազար դոլարի գնել էր։ Նա դրանք չէր տվել մարման ֆոնդին և մոտ օրերս չէր պատրաստվում հանձնել, թեկուզկ բոլորովին հնարավորություն շունենար այդ անելու, մինչև որ կրկին դրամական զգալի աղբյուր չլիներ ձեռքին։ Բանն այն է, որ սերտիֆիկատները գործածեց նա անհետաձգելի վճարներ կատարելու համար, իսկ դրանք ետ գնելու, ավելի ճիշտ, իրացնելու դրամ շուներ, ինչպես և շուներ ետ դնելու ցանկություն։ Ըստ օրենքի՝ Քառութերվուղը պարտավոր էր անմիջապես ավանդադրել սերտիֆիկատները քաղաքային գանձարանի անվան և հետո միայն գանձապետից վարձատրություն ստանալ դրանց համար։ Այլ կերպ ասած՝ քաղաքի գանձապետը իրավունք շուներ վճարել այդ տեսակ գործողության համար, մինչև որ Քառութերվուղը անձամբ՝ կամ իր գործակալների միջոցով հավաստագիր չներկայացներ նրան առ այն, որ իր ձեռք բերած սերտիֆիկատները հանձնված են բանկին կամ մի ուրիշ նման հաստատության։ Իրականում՝ ո՞չ Քառութերվուղը, ո՞չ էլ Սթիները այդ օրենքը բանի տեղ չէին դնում։ Քառութերվուղը կարող էր քաղաքային փոխառողջան սերտիֆիկատներ գնել մարման ֆոնդի համար ուղած գումարով, ավանդադրել դրանք ուրուգենար և համապատասխան վարձատրություն ստանալ քաղաքային գանձարանից առանց որևէ մեկի հաստատման։ Ամսի վերջին գանձարանը սովորաբար կարողանում էր տարբեր աղբյուրներից հավաքել այնքան սերտիֆիկատ, որքան անհրաժեշտ էր պակասորդը ծածկելու համար, բայց (և դա հաճախ էր պատահում) մատների արանքով էին նայում պակասորդին, եթե սերտիֆիկատներից ստացված դրամը պետք էր լինում՝ Քառութերվուղին իր բորսայական մեքենայությունների համար։ Դա, իհարկե, հակասում էր օրենքին, բայց ո՞չ Քառութերվուղը, ո՞չ էլ Սթիները հաշվի չէին առնում, ավելի ճիշտ՝ չէին ուզում հաշվի առնել օրենքը։

Տվյալ դեպքում դժվարացնողը այն էր, որ Քառութերվուղը Սթիներից հրաման էր ստացել՝ ո՞չ սերտիֆիկատ դնել և ո՞չ էլ ծախել. այդ հրամանը խիստ պաշտոնական հարաբերությունների մեջ էր դնում նրան քաղաքային գանձարանի հետ։

Ճիշտ է, վերջին գնումը կատարված, եր նամակն ստացվելուց
առաջ, բայց Քառվերվուղը սերտիֆիկատները ֆոնդին չեն
հանձնել: Այժմ նա պետք է չեկ ստանար ծախսած գումարը
համար: Բայց մի՞թե բացառված չէ, որ ամսի վերջին հաշվե-
կշիռը կատարելու հին և հարմար սիստեմն արդեն վերացված
լինի: Սթայերսը կարող է սերտիֆիկատները բանկին հանձ-
նելու ստորագրություն պահանջել իրենից: Այն ժամանակ նա
վաթսուն հազար դոլարի չեկը չի տեսնի, ինչպես չի տեսնի
իր ականջները, հետևաբար և անկարելի է ավանդադրել
դրանք: Իսկ եթե Սթայերսը ոչինչ չպահանջի, ապա Քառ-
վերվուղը կատանա իրեն անհրաժեշտ չեկը, բայց հետագա-
յում այդ նենգությունը կարող է դառնալ դատական հետա-
պնդում հարուցելու հիմք: Եթե սնանկանալուց առաջ սերտի-
ֆիկատները չհանձննի, կարող են մեղադրանք հարուցել
իր դեմ խարդախության համար: Բայց և այնպես, ասուն
էր նա իրեն, կարող է պատահել նաև, որ ինքը չի սնանկանա:
Եթե գոնե այն բանկերից մի քանիսը, որոնց հետ գործ է
անում ինքը, այս կամ այն պատճառով փոխեն իրենց դիրքը
ու դադարեցնեն իրենց պարտքը մարելու պահանջը, ապա
ինքը փրկված է: Հետաքրքիր է, աղմուկ կրարձացնի՝ ար-
դյուք Սթիները, եթե այնուամենայնիվ ստանա իրեն անհրա-
ժեշտ չեկը: Եվ ինչպես կնայեն դրան քաղաքի կառավարող-
ները: Կգտնվի՝ արդյոք մի դատախազ, որ ընթացք տա այդ
գործին, եթե Սթիները գանգատ ներկայացնի: Ո՛չ, հազիվ
թե. և ընդհանրապես այստեղ վախենալու բան չկա: Ամեն մի
դատարան նկատի կունենա այն համաձայնությունը, որ գո-
յություն է ունեցել իր և Սթիների, միջնորդի ու հաճախորդի
միջև եվ ընդհանրապես երբ փողը նրա ձեռքին լինի, հարյուր
հավանականություն ընդգեմ մեկի, որ Սթիները դա չի էլ
հիշի: Այդ գումարը կավելացվի ուրիշ շմարված պարտավո-
րություններին, և վե՛րջ: Այս բոլոր նկատառումները կայծա-
կի արագությամբ անցան Քառվերվուղի գլխով: Համարձա-
կություն է պետք: Եվ նա մոտեցավ գործերի վարիչի գրա-
սեղանին:

— Լսեցեք, Ալբե՛րտ, — դածրաձայնասաց նա, — այս

առավոտ մարման ֆոնդի համար քաղաքային փոխառության սեբաթիքիկատներ եմ ձեռք բերել՝ վաթսուն հազար դոլարի: Վաղը մարդ կուղարկեմ ձեզ մոտ չեկն ստանալու, բայց ավելի լավ է հենց հիմա գրեցեք: Գործառնությունները գտարեցնելու վերաբերյալ ձեր ծանուցաթուղթն ստացաւ: Հիմա գնում եմ գրասենյակի: Դուք կարող եք պարզապես վարկավորել մարման ֆոնդին ութ հարյուր պարտատոմսով՝ հաար յոթանասունհինգից ութսուն դոլար հաշվով: Մանրամասն ցուցակը հետո կուղարկեմ:

— Ինդեմ, միստր Քառուփերվուդ, շնորհ արեք, — պատրաստակամ համաձայնեց Ալբերտը: — Լսեցի, որ բաժնետոմսերը թավալգոր ընկնում են: Հուսով եմ, այդ խուճապը ձեզ չի դիպել:

— Մասամբ միայն, Ալբե՛րտ, — ժպտադեմ պատասխանեց Քառուփերվուդը, երբ Սթայերսը արդեն ստորագրում էր շեկը:

Իսկ եթե հիմար պատահականությամբ իր առանձնասենյակից հիմա դուրս գա Սթիները և Հթողնի՛, որ չեկը տրվի իրեն, թեև դա օրինական գործառնություն է: Ինքը՝ Քառուփերվուդը այդ չեկն ստանալու իրավունք ունի, իհարկե, մի պայմանով, որ, ինչպես կարգն է, պարտատոմսերը ավանդադրի մարման ֆոնդը պահողի մոտ: Քառուփերվուդը հուզմունքով էր սպասում, երբ Ալբերտը լրացնում էր բլանկը: Ե երբ չեկն արդեն նրա ձեռքին էր, թեթևացած շունչ քաշեցա վաթսուն հազար արդեն ունի, երեկոյան էլ կաշխատի իրացնել իրեն խոստացված յոթանասունհինգ հազարը: Վաղը պետք է դարձյալ տեսնվել Քիթլենի, Ուոլթեր Լիի, «Զեյ Կուք և Ընկ.», «Կլարք և Ընկ.» հետ, այն բոլոր անձանց ու ֆիրմաների հետ, ում ինքը փող է պարտք (դրանք մի երկար ցուցակ էին կազմում) և իմանալ՝ ինչպե՞ս է իրադրությունը: Միա՛յն թե ժամանակ շահի, միա՛յն թե գոնե մի շաբաթով տարկետում ստանա:

Սակայն այդ լարված պահին ոչ մի հետաձգման մասին խոսք չէր կարող լինել: Յոթանասունհինգ հազար դոլլարը, որ փոխ առավ բարեկամներից, և Սթայերսից ճարած վաթսուն հազարը տվեց Ջիրարդի ազգային բանկի պարտքը մարելուն, մնացած երեսունհինգ հազարը Քառուփերվուղը դրեց իր տան անկիզելի դրամարկղը: Այնուհետև վերջին անգամ նա դիմեց բանկային ու ֆինանսական գործիչներին՝ օգնություն խընդուելով, բայց մերժում ստացավ: Սակայն իր համար ծանր այդ ժամին իսկ Քառուփերվուղը թուլության նշույլ անգամ շցուցաբերեց: Նա նայեց միայն իր առանձնասենյակի պատուհանից փոքրիկ բակին ու հառաջեց: Էլ ի՞նչ կարող էր ձեռնարկել նա: Մի երկտող ուղարկեց հորը՝ խնդրելով, որ նախաճաշին գա: Մի այդպիսի երկտող էլ ուղարկեց իրավախորհրդատու Հարպեր Սթեցերին, որ իր հասակալիցն էր և որին շատ էր սիրում: Քառուփերվուղի միտքը տենդագին մշակում էր հետաձգում ստանալու նորանոր պլաններ՝ դիմել պարտատերերին և այլն. բայց, ավա՞լ, անխուսափելի էր նրա սնանկացումը: Եվ ամենավատն այն էր, որ այն ժամանակ կրացահայտվեն նրա կատարած խարդախությունները քաղաքային գանձարանի հետ, և ոչ միայն հասարակական, այլև քաղաքական սկանդալ կծագի: Նրան սպառնացող ամենամեծ վտանգներից մեկը այն էր, որ իրեն կմեղադրեն քաղաքի միջոցները, եթե ոչ իրավաբանորեն, ապա բարոյականորեն կողոպտելուն մասնակցելու մեջ: Նրա ախոյանները շատ ջանք կթափեն այդ փաստը ուղեցնելու համար: Ինքը սնանկանալուց հետո էլ, իհարկե, կկարողանա հետզետե ոտքի կանգնել, բայց դա բնավ էլ հեշտ չի լինի: Հապա հայրը... Նրան էլ շեն խնայի: Գուցե և նա ստիպված լինի հրաժարվել բանկի դիրեկտորի պաշտոնից: Ահա թե ինչպիսի մտածմունքներ էին հոգեմաշ անում Քառուփերվուղին, եթե նրա առանձնասենյակը մտավ ցրիչ մանշուկը և հայտնեց, որ եկել է էլլին Բաթլերը և համարյա միասին ժամանած Ալբերտ Սթայերսը:

— Ներս հրամցրու օրիորդ թաթլերին, իսկ պարոն Սթայերսին առաջարկիր սպասել, — ասաց Քառուփերվուզը վեր կենալով:

Արագ ու վճռական քայլերով ներս մտավ էլլինը: Տպավորիչ ոսկեթուցր-շագանակագույն կոստյումը իր մուգ կարմիր կոճակներով շեշտում էր նրա կազմվածքի գեղեցկությունը: Այդ օրը նա դրել էր մի երկար փետուրով զարդարված փոքրիկ կինամոնագույն գլխարկ. նա համոզված էր, որ այդ գլխարկը շատ է պատշաճում իրեն. նրա վիրով շրջանակել էր ոսկե ուղունքների եռակի շարանը: Զեռքերը սովորականի պես պարուրված էին ձեռնոցների մեջ, փոքրիկ ոտքերին կրում էր շքեղ կոշիկներ: Աչքերը մանկական-վշտու արտահայտություն ունեին, որն, ասենք, ամեն կերպ էլլինը շանում էր թաքցնել:

— Միրեցյալ լդ իմ, — բացակաշեց նա՝ ձեռքերը պարզելով Ֆրենկին: — Ի՞նչ է պատահել: Երեկ երեկոյան այնքան էի ուզում ամեն ինչի մասին հարցնել: Մի՞թե, իսկապես, քեզ սնանկություն է սպառնում: Հայրս ու Օուենը երեկ այդ մասին խոսում էին:

— Հատկապես ի՞նչ էին ասում, — հարցրեց Քառուփերվուզը, գրկելով նրան ու հանգիստ նայելով նրա տագնապալի աշքերին:

— 0^o, դու շես իմանում, որ հայրիկը խիստ բարկացած է քեզ վրա: Նա կասկածում է մեզ: Մեկը անստորագիր նամակ է գրել նրան: Երեկ նա իսկական հարցաքննության ենթարկեց ինձ, սակայն բան դուրս չեկավ: Ես ամեն ինչ ուրացա: Այս առավոտ արդեն երկու անգամ եկել եմ այստեղ, բայց դու չկայիր: Այնքան էի վախենում, որ հայրս ինձնից առաջ կտեսնի քեզ, դու էլ բերանիցդ խոսք կթոցնես:

— Ե՞ս, էլլին:

— Ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Ես այդպես չէի կարծում: Ասենք, ինքս էլ չէի իմանում, թե ինչ էի կարծում: 0^o, սիրելի՛ս, այնպե՞ս տագնապահար եմ: Ամբողջ գիշերը շեմ քնել: Ինձ ավելի ուժեղ էի կարծում, բայց այնքան էի անհանգստանում քեզ համար: Գիտե՞ս ինչ արեց նա. նստեցրեց ինձ իր սե-

դանի մոտի բազկաթոռին, ուղիղ լույսի դիմաց, որպեսզի
ավելի լավ տեսնի դեմքս, և ցույց տվեց այս «գրությունը»:
Առաջին րոպեին այնպես շշմեցի, որ հիմա չեմ էլ իմանում
ինչ և ինչպես պատասխանեցի:

— Այնուամենայնիվ ի՞նչ ասացիր:

— Կարծեմ ասացի. «Ի՞նչ անամոթություն: Սո՛ւս է՛տ
Բայց անմիշապես շասացի: Սիրտս խփում էր դարբնի մուրճը
պես: Վախենամ ամեն ինչ հասկացավ իմ դեմքից: Անդամ
շունչս կտրվեց:

— Քո հայրը խելացի մարդ է, — նկատեց Քառվիեր-
վուղը: — Նա ճանաշում է կյանքը: Հիմա դու տեսնում ես ինչ
դժվարին վիճակի մեջ ենք մենք: Էլի փա՛ռք աստծու, որ այս
նամակը ցույց է տվել և ոչ թե վեր կացել ու հետեւ տանը:
Երկի նրա համար շատ դժվար էր այդ քայլն անել: Խսկ հիմա
ոչինչ չի կարող ապացուցել: Բայց ամեն ինչ իմանում է.
Նրան կարելի չէ խաբել:

— Խսկ ինչո՞ւ կարծում ես, թե իմանում է:

— Երեկ տեսնվել եմ նրա հետ:

— Քեզ որեւէ բա՛ն է ասել:

— Ոչ: Բայց ես տեսնում էի նրա դեմքը. ինձ համար
բալական էր հենց այն, թե ինչպես էր նայում ինձ:

— Սիրելի՛դ իմ, բանն այն է, որ հորս էլ եմ խղճում:

— Անշո՞ւշտ: Ես էլ: Ասենք, հիմա արդեն ո՞ւշ է: Այդ
մասին առաջ պետք էր մտածել:

— Բայց ես այնպե՞ս եմ սիրում քեզ: Ա՛խ, թանկագի՛նս,
նա այդ բանը երբեք չի նկրի: Նա պաշտում է ինձ: Եվ չպետք
է իմանա: Ես ոչ մի բան չեմ խոստովանի: Բայց... Աստված՝ ծ
իմ, աստվա՞ծ իմ:

Նա զույգ ձեռքերը սեղմեց կրծքին, խսկ Քառվիերվուղը
նայում էր նրա աշքերին ու ջանում հանգստացնել: Էլինի
կոպերը ցնցվում էին, շրթունքները դողդողում: Սիրտ:
մղկածում էր հոր համար, իր համար, ֆրենկի համար: Նայե-
լով նրան՝ Քառվիերվուղը պատկերացնում էր Բաթլերի
ծնողական սիրո բովանդակ ուժը, ինչպես նաև ծեր կապալա-
ռուի զայրույթի ամրող ուժն ու վտանգը: Խսկ քանի՛-բանի

տարբեր հանգամանքներ միահյուսվել էին այստեղ և որքա՞ն ողբերգականորեն այդ ամենը կարող էր վերջանալ իր համար:

— Դեհ, հերի'ք է, — ասաց Ֆրենկը: Հիմա այլևս գործին չենք կարող օգնել: Հապա որտե՞ղ է իմ ուժեղ, համարձակ էյլինը: Ես քեզ ավելի արիասիրտ էի համարում: Մի՞թե սխալվել եմ: Իսկ հիմա ինձ շատ անհրաժեշտ է, որ դու քաջլինես:

— Ճի՞շտ ես ասում:

— Անշո՛ւշտ:

— Մե՛ծ գլխացավանքների մեջ ես:

— Հավանորեն ինձ սնանկություն է սպասում, սիրելի՛ս:

— Զի՛ կարող պատահել:

— Այո՛, աղջի՛կս: Փակուղի են քեզել ինձ: Եվ առայժմ դուրս գալու ելք չեմ տեսնում: Հիմա սպասում եմ հորս և իմ իրավագետ Սթեղծերին: Դու չես կարող մնալ այստեղ, անուշի՛կս: Քո հայրն էլ ուղած ռոպեին կարող է գալ: Մենք պետք է որեւէ տեղ հանդիպենք վաղը, ասենք օրվա երկրորդ կեսին: Դու ճանաշո՞ւմ ես Հնդկացիների ժայռը Ուկսահիկոնում:

— Ճանաշում եմ:

— Վաղը շորսին կարո՞ղ ես լինել այնտեղ:

— Կարող եմ:

— Միայն թե, տե՛ս, հո չե՞ն հետեւում քեզ: Եթե մինչև շորսն անց կեսին չգամ, է՛լ մի սպասիր: Այդ կնշանակի, որ ես հետամատթյան կամկած ունեմ: Ասենք, վախենալու բան չկա, միայն թե զգուշ պետք է վարվել: Իսկ հիմա գնա, սիրելիս: № 931 տանը այլևս չենք կարող լինել: Ստիպված կլինեմ մի ուրիշ տեղ գտնել:

— Ա՛խ, իմ հոգու հատոր, ինչքա՞ն սոսկալի է այս ամենը:

— Վնաս շունի, էյլի՛ն, ես գիտեմ, որ դու քո հավասարակոռությունը կգտնես ու քաջ աղջիկ կլինես: Ինքդ էլ ես տեսնում, որ դա կարեոր է ինձ համար:

Առաջին անգամ էր, որ Քառուիերվուդն ընկճված տեսք ուներ:

— Լա՛վ, սիրելի՛ս, լավ, — պատասխանեց էյլինը՝

գրկելով նրան և իրեն քաշելով: — Այո՛, այո՛, դու կարող ես հույս դնել ինձ վրա: Օ՛, Ֆրե՛նկ, ինչպե՞ս եմ քեզ սիրում: Ես մեռածի պես եմ: Բայց գուցե և դու խուսափես սնանկությունից: Ասենք, մե՞զ ինչ դա, սիրելի՛ս, մեկ է՝ ոչինչ չի փոխվի, այնպես չէ՞: Մի՞թե մենք պակաս կսիրենք իրար: Քեզ համար պատրաստ եմ ամե՞ն ինչ անել, թանկագի՞նս: Եվ ամեն ինչում կլսեմ քեզ: Հավատա ինձ: Ինձնից ո՞չ ոք ոչի՞նչ չի իմանա:

Նա զննում էր Ֆրենկի խստատես, դժգույն դեմքը, և սիրած մարդու համար պայքարելու ցանկությունն աստիճանաբար աճում էր նրա սրտում: Նրա սերը անիրավ էր, ապօրինի, բարոյազանցական, բայց սեր էր, իսկ օրենքից մերժված սերին հատուկ է բոցավառ տաքարյունություն:

— Ես քեզ սիրո՞ւմ եմ, Ֆրե՛նկ, այնպե՞ս եմ սիրում, — շշնչաց նա:

Քառիկերվուզը ազատվեց նրա գրկից:

— Գնա՛, կյանքի՞ս ուրախություն: Հիշի՛ր, վաղը շորսին: Կապտում քեզ, իսկ զիստավորը՝ լովիր: Ոչոքի ոչինչ մի՛ խոստովանիր:

— Անհոգ կաց:

— Եվ մի՛ անհանգստանա ինձ համար: Ամեն ինչ կկանոնավորվի:

Նա հազիվ փողկապն ուղղելու և անբռնազբոսիկ դիրքով պատուհանի մոտ նստելու ժամանակ ունեցավ, երբ առանձնասենյակ ներխուժեց Սթիների գրասենյակի կառավարիչը՝ գունատ, այլայլված, ըստ երևուցին, հուզմունքից խելակորույս:

— Մի՛ստր Քառիկերվուդ, այն չեկը, որ երեկ երեկո գրեցի ձեր անվանը... Այնպես որ մի՛ստր Սթիներն ասում է, ապօրինի է, որ այդպիսի բան ես չպետք է անեի, և սպառնում է ամբողջ պատասխանատվությունը գցել ինձ վրա: Ասում է, թե կարող են ձերբակալել ինձ հանցագործության մասնակցելու համար, թե ինքը գործից կհանի ինձ, եթե չեկը շվերադանեմ, և անմիջապես կուղարկի բանտ: Մի՛ստր Քառիկերվուդ, չէ՞ որ դեռ շատ երիտասարդ եմ: Դեռ նոր

Եմ սկսել ապրել: Իմ ձեռքին են նայում կինս ու փոքրիկ տղաս: Մի՞թե դուք թուզլ կտաք, որ նա այդպես իմ դատաստանը տեսնի: Ո՛չ, դուք այդ շեկը կվերադարձնեք ինձ, այնպես չէ՞: Առանց դրան ես չեմ կարող վերադառնալ գանձատուն: Նա հավատացնում է, թե ձեզ սնանկություն է սպասում, իսկ դուք գիտեիք, ուստի և իրավունք չունեիք շեկ վերցնել ինձնից:

Քառուփերվուղը հետաքրքրությամբ նայում էր նրան: Նա ապշում էր՝ տեսնելով, թե որքան բազմադեմ էին աղետի այդ բոլոր պատվիրակները: Այո՛, գժբահւտությունը, որ դալիս է, գալիս է ամեն կողմից: Սթիները իրավունք չունի իր ենթակայի վրա այդպիսի մեղադրանք բարդել: Չեկի գործառնությունը ապօրինի չէր: Երեսում է, որ դանձալեար սարսափից բոլորովին ցնդել է: Ճիշտ է, ինքը կարգադրություն էր ստացել այլևս քաղաքային փոխառության պարտատոմսեր չառնել ու շծախել, բայց այդ կարգադրությունն արդեն ստացվել էր այդ պարտիան գնելուց հետո և հակադարձ ուժ չուներ: Սթիները սարսափեցնում ու ահաբեկում էր իր տարաբախտ քարտուղարին, իրենից շատ ավելի արժանավոր մի մարդու, միայն թե ետ ստանար վաթսուն հազար դոլարի այդ շեկը: Ողորմելի՞ երկշուտ: Ճիշտ է ասել մեկը, որ անշափելի են այն ստորության խորխորատները, ուր կարող է ընկնել տխմարը:

— Գնացեք Սթիների մոտ, Ալբե՛րտ, և ասացեք, որ անհնար է: Քաղաքային փոխառության պարտատոմսեր ձեռք էին բերվել նախքան նրա կարգադրությունը: Այդ բանը կարելի է ստուգել դրամական բորսայի օրագրով: Այստեղ ո՛չ մի ապօրինի բան չկա: Ես այդ շեկն ստանալու իրավունք ունեմ, և ամեն մի դատարան, եթե ցանկանամ դիմել նրան, հարցը կլուծի հօգուտ ինձ: Զեր Սթիները բոլորովին գլուխը կորցրել է: Իսկ ես դեռ սնանկ չեմ: Զեզ ոչ մի դատական հետապնդում չի սպառնում, իսկ եթե որևէ այդպիսի բան պատահի էլ, ապա ես հոգ կտանեմ, որ ձեզ պաշտպանեն: Չեկը շեմ կարող վերադարձնել ձեզ, որովհետև մոտս չէ. բայց եթե մոտս էլ լիներ, չեի վերադարձնի, որովհետև դա

ինշանակեր, որ մի տխմարի թույլ տվի հիմարացնել ինձ:
Շատ եմ ցավում, բայց ոչ մի բանով չեմ կարող օգնել ձեզ:
— Ո՞հ, մի՞ստր Քառուփերվուդ, — Սթայերսի աշքերում
արցունքներ փայլեցին: — Սթիները կազատի՛ ինձ, կը ո՞ւ ա-
դրավի՛ իմ գրավականը: Ինձ կշպրտե՛ն փողոց: Ռոճիկից
բացի, համարյա ոչի՞նչ շունեմ:

Նա մատնվեց խոր հուսահատության, բայց Քառուփեր-
վուդը միայն տիպուր օրորում էր գլուխը:

— Այնքան էլ սարսափելի չէ այդ ամենը, ինչպես
պատկերացնում եք դուք, Ալբե՛րտ: Սթիները սպառնում է
միայն: Նա ձեզ ոշինչ անել չի կարող: Անարդար ու ապօրինի
բան կլիներ դա: Դուք կարող եք նրա վրա գանգատ ներկայաց-
նել դատարանին ու ստանալ այն, ինչ հասնում է ձեզ: Ես
ինձնից կախված ամեն ինչ կանեմ ձեզ օգնելու համար: Բայց
վաթսուն հազար դոլլարի այդ շեկը չեմ կարող վերադարձնել
ձեզ, որովհետեւ ինձ մոտ չէ, հասկանո՞ւմ եք: Այդ կետում
ես անզոր եմ: Կրկնում եմ՝ ինձ մոտ չէ: Դա տրված է որպես
պարտատոմսերի վճար: Այդ պարտատոմսերն էլ ինձ մոտ
չեն. մարման ֆոնդում են կտո՞ւ մոտ օրերս կլինեն այնտեղ:

Քառուփերվուդն իր խոսքը կտրեց՝ ափսոսալով, որ Ֆի-
շատակեց զաւ Վերջին բառերն ակամա դուրս թռան նրա
բերանից. շափազանց քիչ էր այդպիսի բան պատահում նրան,
իսկ հիմա դրա պատճառը րոպեի բացառիկ դժվարությունն
էր միայն: Սթայերսը շարունակում էր աղաշել, բայց Քառու-
փերվուդը հայտարարեց, որ դա անօգուտ է: Վերջապես
երիտասարդը գնաց՝ ահաբեկված, զարդված, ընկճված: Նրա
աշքերի մեջ արցունք կար: Քառուփերվուդը սրտանց մեղքում
էր նրան:

Հազիվ էր դուրը փակվել Սթայերսի վրա, երբ Քառուփեր-
վուդին հայտնեցին, որ եկել է հայրը:

Սերունին իսպառ տանջված տեսք ուներ: Նախորդ օրը
նա ու Ֆրենկը զրուցել էին համարյա մինչև լուսաբաց, սա-
կայն այդ զրուցի արդյունքը եղել էր միայն ապագային
կատարելապես անվստահ լինելու զգացմունքը:

— Բարի լույս, հա՛յր, — առուցք ողջունեց Ֆրենկը՝ նկատելով ծերունու ընկճված վիճակը:

Նա ինքն էլ հիմա արդեն հասկանում էր, որ փրկվելու հույս այլևս չկա. բայց ի՞նչ օգուտ կար խոստովանելուց:

— Հը՛, ինչպե՞ս են գործերը, — հարցրեց Հենրի Քառվակերը՝ ճիգով հայացքը հառելով որդու վրա:

— Ինչպես ասեմ՝ ամպրոպային ամպեր են կուտակվել: Որոշել եմ, հա՛յր, կանչել իմ պարտատերերին և հետաձգում պահանջել: Ուրիշ ոչ մի բան չի մնում ինձ: Ես գրկված եմ որևէ զգալի գումար իրացնելու հնարավորությունից: Հույս ունեի, որ Սթիները միտքը կփոխի, բայց այդ մասին խոսք իսկ չի կարող լինել: Նրա գլխավոր հաշվապահը հենց նոր դուրս եկավ այստեղից:

— Ինչո՞ւ էր եկել, — հարցրեց հայր Քառվակեր-վուդը:

— Ուզում էր, որ վերադարձնեմ իրեն վաթսուն հազար դոլարի չեկը, որ տվել էր ի վճար երեկ գնածս քաղաքային փոխառության պարտատոմսերի:

Բայց և այնպես Ֆրենկը ոչինչ շասաց այն մասին, որ գրավդրել էր այդ պարտատոմսերը, ինչպես նաև լուսական մատնեց այն, որ չեկը գործածել էր մարելու Ջիրարդի ազգային բանկին ունեցած պարտքը ու, բացի դրանից, պահել էր իրեն երեսունհինգ հաղար դոլար կանխիկ փող:

— Օ՛, այդ արդեն շատ վատ բան է, — վորովվեց ծեր Քառվակերվուդը: — Ես կարծում էի, թե նա ավելի ողջամիտ է: Չէ՞ որ դա միանգամայն օրինական գործարք է: Ասում ես՝ ե՞րբ քեզ հայտնեց, թե պետք է դադարեցնել պարտատոմսեր գնելը:

— Երեկ, տասներկուսին մոտ:

— Խելքը թոցրե՞լ է նա, — լակոնիկ կերպով նկատեց ծերունին:

— Այդ ամենը Մոլենհաուերի, Սիմֆոնի ու Բաթլերի գործն է, գիտեմ: Նրանք հավաքվում են քաղաքային երկաթուղիների իմ բաժնետոմսերի շուրջը: Բայց բան չեն կարողանա անել, թերևս միայն այն ժամանակ, երբ վերահսկիչ

մարմին ստեղծվի իմ ունեցվածքի վերաբերյալ և խուճապն էլ հանդարտվի: Իմ պարտատերերին է ընձեռվելու այդ թղթերը ձեռք բերելու նախամեծար իրավունքը: Թող նրանցից գնեն, եթե ուզում են: Եթե հինգ հարյուր հազարի փոխառության այդ պատմությունը շիներ, ես չէի անհանգստանա: Իմ պարտատերերը կպաշտպանեին ինձ: Բայց հենց որ դա հանրահայտ դառնա... Բացի գրանից, ընտրություններն էլ խիստ մոտ են: Քեզ պետք է ասեմ, որ շցանկանալով հարաբերություններս փշացնել ֆեսի հետ, ես գրավադրել եմ այդ պարտատոմսերը: Հույս ունեի, թե բավական փող կհավաքեմ ու ետ կգնեմ դրանք: Զէ՞ որ, ճիշտն ասած, պետք է գտնվեին մարման ֆոնդում:

Սեր զենտմենը իսկույն հասկացավ գործի էությունը ու խոժոռվեց:

— Այդպիսով կարող ես մեծ անախորժություններ ունենալ, Ֆրե՛նկ:

— Դա զուտ տեխնիկական հարց է, — պատասխանեց որդին: — Ի՞նչ իմանաս. զույն և ես մտապիր էի ետ գնել դրանք: Առենք, կաջխատեմ այդպես էլ անել այսօր, մինչև ժամը երեքը, եթե հասցնեմ: Իմ պրակտիկայում պատահել է, որ ուիթ օր, տասն օր է անցել, հետո եմ սերուիֆիկատները հանձնել մարման ֆոնդին: Այնպիսի փոթորկի պահին, ինչպես հիմա է, ես իրավունք ունեմ իմ խաղաքարտերը շարժել իմ հայեցողությամբ:

Ավագ Քառակերպությունը դարձյալ տրորեց կզակը: Նրան ծայրաստիճան անհանգստացրեց իր լսածը, բայց և ստեղծված դրությունից էլ դուրս գալու հնար չէր գտնում: Նրա անձնական աղբյուրները սպառվել էին: Նա քաշքեց այսպամբուսները և հայացքը սեռեց լուսամուտից երևացող կանաչ բակի վրա: Գուցե և հիրավի զուտ տեխնիկական հարց է դա: Ի՞նչ իմանաս: Քաղաքային գանձապետի ֆինանսական հարաբերությունները այլ միջնորդների հետ Ֆրենկից առաջ էլ պատշաճորեն եամոնավորված չէին: Դա հայտնի է ամեն մի բանելային գործչի: Գուցե և այս դեպքում էլ այդ սովորությը նկատի առնվիւ: Դժվար է ասել: Լավ կըներ, եթե Ֆրենկը

կարողանար հանել պարտատոմսերը ու գրավադրել ինչպես
հարկն է:

— Քո տեղը ես կաշխատեի ետ գնել դրանք,— խորհուրդ
տվեց հայր Քառուփերվուղը:

— Այդպես էլ կանեմ, եթե կարողանամ:

— Ինչքա՞ն փող ունես:

— Ի մի գումարած՝ մի քսան հազար: Մի քիչ կանխիկ
դրան պետք է ունենամ, ի դեպս վճարումների դադարեցման:

— Մինչև երեկո մի ութ-տասը հազար կհավաքեմ ես:

Ծերունին հույս ուներ այդ գումարն ստանալ տունը
վերստին գրալ գնելով:

Ֆրենկը հանգիստ նայեց նրան: Նա ամեն ինչ ասել էր
հորը և այլևս ասելիք չուներ:

— Քո մեկնելուց հետո վերջին անգամ ես կփորձեմ կոտ-
րել Սթիներին,— ասաց նա:— Կզնամ նրա մոտ Հարպեր Սթե-
շերի հետ, որին սպասում եմ րոպե առ րոպե: Եթե Սթիները
իր ասածը պնդի, ապա ես ծանուցագիր կուղարկեմ բոլոր
պարտատերերին, ինչպես նաև իմաց կտամ բորսայի քար-
տուղարին: Ինչ էլ որ պատահի, հա՞յր, խնդրում եմ շվհատ-
վել: Ասենք, դու կարողանում ես քեզ շկորցնել: Ես գահավի-
ժում եմ խորխորատ, մինչդեռ եթե Սթիները մի կաթիլ խելք
ունենար...— Ֆրենկը լոեց:— Բայց ի՞նչ օգուտ այդ մասին
խսուելուց:

Նա սկսեց նայել պատուհանին ու մտածել, թե որքա՞ն
հեշտ կարող էր ամեն ինչ կանոնավորել Բաթլերի օգնու-
թյամբ, եթե լիներ այն շարաբաստիկ անստորագիր նամակը:
Բաթլերը, փոխանակ իր իսկ կուսակցությանը վնասելուց
ծայրահեղ գեղագում անկասկած կփրկեր. Ֆրենկին: Իսկ հիմա՝

Հայրը վեր կցցալ ու պատրաստվեց դուրս գալ: Հուսա-
հատությունը վատորակ ցրտառության պես համակել էր
նրան:

— Այդպիսի՞ բան, — հոգնած կմկմաց նա:

Քառուփերվուղը անսաելի ցավ էր զգում հոր համար: Ի՞նչ
խայտառակություն: Իր հա՞յրը... Նա զգում էր, թե ինչպես
հոգու խորքից բարձրանում է ծանր թախծի ալիքը, բայց մի

բոպե անց նա արդեն տիրապետեց իրեն ու սկսեց մտածել գործերի մասին, սովորականի պես արագ ու որոշակի: Հենց որ ծերունին դուրս եկավ, Քառուփերվուղը կարգադրեց հրավիրեն Հարպեր Սթեղերին: Սրանք սեղմեցին իրար ձեռք և անմիջապես մեկնեցին Սթիների մոտ: Բայց սա կծկվել էր դատարկված օդապարիկի պես և արդեն անկարելի էր օդ լցնել մեջը: Քառուփերվուղն ու Սթեղերը ձեռնունայն թողին գնացին:

— Հստ իս՝ դեռ ձեզ համար վշտանալը շուտ է, Ֆրե՛նկ,— նկատեց Սթեղերը: — Մենք ամենաօրինական հիմունքներով այս գործը կճգծենք մինչև ընտրությունները և նույնիսկ ավելի, իսկ այդ միջոցին ամբողջ աղմուկը կհանդարտվի: Այնժամ դուք կհրավիրեք պարտատերերին և կաշխատեք խելքի բերել նրանց: Նրանք շեն ուզենա հրաժարվել իրենց արժեթղթերից, եթե անգամ Սթիները նետվի բանտ:

Սթեղերը դեռ շէր իմանում Քառուփերվուղի դրավադրած վաթսուն հազարի պարտատոմների մասին, ինչպես որ տեղյակ շէր էլլին Բաթլերի հանդամանքին ու նրա հոր անզուսպ զայրույթին:

Գ Լ Ո Ւ Խ XXX

Այդ միջոցին տեղի ունեցավ մի դեպք ևս, որը Քառուփերվուղը շէր կոահել: Այդ նույն օրը, երբ փոստը Բաթլերին հասցրեց իր դատելը վերաբերող անստորագիր նամակը, միսիս Ֆրե՛նկ Ալչերնոն Քառուփերվուղը ստացավ նույն նամակի գրեթե ճիշտ պատճենը, ուր շգիտես ինչու էլլինի անունը նշված շէր:

«Զեզ հավանորեն հայտնի չէ, որ ձեր ամուսինը հարաբերություն ունի մի այլ կնոջ հետ: Եթե չեք հավատում, հետևեցեք Հյուսիսային Տասներորդ փողոցի № 931 տանը»:

Եթկուշաբթի առավոտ, երբ միսիս Քառուփերվուղը չերմոցի ծաղկները ջրելով էր զբաղված, սպասումին հանձնեց նրան այդ նամակը: Այդ առավոտ վերին աստիճանի անխռով

տրամադրության մեջ էր կիլիանը, որովհետեւ բացարձակաւագես ոչինչ չէր իմանում նախորդ գիշերվա երկարատև խորհրդակցության մասին։ Պատահում էր, որ Ֆրենկը առաջ էլ մտահոգվում էր ֆինանսական փոթորիկներից, բայց դրանք սովորաբար շրջանցում էին նրան՝ առանց վնաս պատճառելու։

— Նամակը դրեք գրադարանի սեղանին, Է՞ննի՛ Հետո կարդամ։

Նա ենթադրում էր, թե որկէ հրավեր կլինի։

Մի քանի րուպե անց կիլիանը առանց շտապելու (նա շտապել չէր իմանում) ցնցուղը ցած դրեց ու գնաց գրադարան։ Նամակը դրված էր հսկայական սեղանի զարդերից մեկը հանդիսացող կանաչ կաշվով պատված ծծանի վրա։ Նա ձեռքն առավ ծրարը, հետաքրքրությամբ նայեց (թուղթը էժանագին էր) և բացեց։ Նամակը կարդալուց հետո նա թիթեակի գունատվեց, մի քիչ էլ ձեռքը դողաց։ Սաստիկ սիրելու անընդունակ լինելով՝ նա չէր էլ կարողանում խիստ տառապել։ Վիրավորված էր նա, զայրացած, առաջին պահին նույնիսկ կատաղած, իսկ զիսավորը՝ վախեցած։ Բայց հոգեկան արիությունը՝ չկորցրեց։

Տասներեք տարի Քառուփերվուդի հետ ապրելը շատ բան էր սովորեցրել նրան։ Նա գիտեր, որ ամուսինը եսապաշտ է, միայն իրենով՝ է վրազված, իսկ կնօշով բնավ էլ այնպես հափշտակված չէ, ինչպես առաջ։ Իրենց տարիքի տարբերության առաջացրած երեքմնի երկյուղը արդարանում էր։ Որոշ ժամանակից ի վեր Ֆրենկն արդեն այնպես չէր սիրում նրան, և կիլիանը զգում էր։ Ի՞նչն է դրա պատճառը, երեքմն հարցնում էր ինքն իրեն, և այդ հարցը հնչում էր՝ ո՞վ է դրա պատճառը։ Չիննի՛ թե գործերն այնպես են կլանել ամուսնուն, որ նա ամբողջովին անձնատուր է եղել իր ֆինանսներին։ Իսկ հիմա այդ նամակը նշանակո՞ւմ է արդյոք, որ հասել է իր՝ կիլիանի թագավորության վախճանը։ Կարո՞ղ է պատահել, որ Ֆրենկը պատրաստվում է թողնել իրեն։ Ո՞ւր գնա ինքը, ի՞նչ անի։ Նա, իհարկե, անօգնական չէր, քանի որ ուներ իր կալիտավը, որը Ֆրենկն էր տնօրինում։ Բայց ո՞վ է այդ մյուս կինը։ Դեռատի՞ է արդյոք, սիրո՞ւն է, ի՞նչ դիրք ունի հասա-

բակովթյան մեջ: Զլինի՞ թե... Միսիս Քառվերվուդի շոմը բռնվեց. Աինի՞ թե... նա ակամա բացեց բերանը... էլլին թաթլերն է:

Լիլիանն անշարժ կանգնած, հայացքը սևեռել էր նամակին ու վանում էր իրենից այդ միտքը: Չնայած էլլինի ու Ֆրենկի զգուշության՝ նա հաճախ նկատել էր, որ նրանք ձգտում են իրար Ֆրենկը համակրութ էր էլլինին և մշտապես պաշտպան էր կանգնում նրան: Լիլիանն ինքն էլ հաճախ մտածում էր, որ նրանք զարմանալի նման խառնվածք ունեն: Ֆրենկը սիրում էր երիտասարդությանը: Բայց չէ՞ որ հասարակական սանդուղքի վրա էլլինը անհամեմատ ցածր է կանգնած նրանից, գումարած և այն, որ ամուսնացած է և երկու զավակ ունի... Նրա դրությունը հասարակության մեջ և ֆինանսական աշխարհում հաստատ է ու ամուր, իսկ վրա հետ մարդիկ կատակ չեն անում: Այնուամենայնիվ միսիս Քառվերվուդը մտածմոնքի մեջ ընկալվ. քառասուն տարեկան է, երկու երեխա ունի, աշքերի տակ կնճիռներ կան, զիտակցում է, որ ինքը արդեն տյնիքան սիրելի չէ, ինչպես առաջ. սրանք կարող են մատասնչություն պատճառել յուրաքանչյուր, անգամ հարուստ ու անհկախ կնոջը: Ինքը կարող է հեռանալ նրանից. բայց ո՞ւ կը, ի՞նչ կասեն մարդիկ, ինչպե՞ս վարվի երեխաների հետ, կկարողանա՞ արդյոք մերկացնել նրա ապօրինի կապը, հանցանքը կատարելիս բռնել. և կուզենա՞ ինքն այդ բանը անել:

Այժմ նա հասկացավ, որ երբեք այնպես չէր սիրել Ֆրենկին, ինչպես կանանցից ոմանք են սիրում իրենց ամուսիններին: Իր զգացմունքը պաշտամունք չէր: Այդ բոլոր աարիներին Ֆրենկին համարել էր իր կյանքի անքակտելի պատկանելիությունը և հուսացել, թե նա էլ իր հերթին բավականին կապված է իրեն կամ առնվազն այնքան է հափշտակված իր երեխաներով, որ ոչ մի գոեհիկ կապ, ինչպես այն, որի մասին խոսված է այս նամակում, հոգեկան հավասարակշռությունից շի հանի նրան, խոշրնդությունը շի դառնա նրա փայլուն կարիերային: Ակներեաբար, լիլիանը սիալվել էր: Ուրեմն ի՞նչ անի հիմա, ի՞նչ ասի, ինչպե՞ս գործի: Նրա բնավ էլ ոչ փայլուն

միտքը հրաժարվում էր օգնել իրեն այդ ճշնաժամային պահն: Նա ո՛չ կարող էր մտածել ապագայի մասին, ո՛չ էլ պարքաբել:

Սովորական միտքը լավագույն դեպքում հիշեցնում է մի պարզ մեխանիզմ: Նրա ֆունկցիաները նման են ոստրեի, ավելի ճիշտ՝ կակլամորթի օրգանական ֆունկցիաներին: Իր սիֆոնային մտածողական փոքրիկ ապարատով նա շփվում է փաստերի ու հանգամանքների հզոր օվկիանոսին: Բայց այդ ապարատը այնքան քիչ է ող կլանում, այնքան թույլ է արտամղում, որ նրա աշխատանքը չի անդրադառնում ջրային անսահման տարածության վրա, որպիսին է կյանքը: Այդպիսի միտքը չի նկատում կեցության հակասությունները: Առօրեական փոփորիկների ու աղետների նվազագույն արձագանքը չի հասնում նրան, թերևս միայն պատահաբար: Եթե որևէ կոպիտ ու խորհրդածության մղող փաստ, ինչպիսին էր ավլակ դեպքում նամակը, հանկարծ իր գոյությունն է իմաց տալիս իրադարձությունների համաշափ ընթացքի պահին, այդպիսի ուղեղի մեջ տանջալի խառնաշփոթ է տեղի ունենում, նրա, այսպես սասած, ամբողջ նորմալ աշխատանքը խանգարվում է: Սիֆոնային ապարատը դադարում է պատշաճորեն գործել, ահ ու տառապանք է ներծծում: Վատ սարքված ծամացույցը ճռճռում է աղտոտված մեքենայի պես, և կյանքը կա'մ հանգչում է, կա'մ հաղիլ առկայցում:

Միսիս Քառիկերլուդի միտքը խիստ սովորական էր: Ըստ էության նա ամենակին չէր ճանաշում կյանքը, և կյանքը ոչինչ չէր կարող սովորեցնել նրան: Նրա ուղեղը հարկ եղած շափով չէր հակազդում շուրջը տեղի ունեցածի վրա: Նա բոլորովին զուրկ էր այն աշխատությունից, որով աշքի էր ընկնում էլլին Բաթլերը, թեև իրեն երևակայում էր շատ աշխույժ, Ավաղ, մոլորվում էր նա: Լիլիանն սքանչելի էր երեսում նրանց աշքին, ովքեր գնահատում են անխռովությունը: Այլ կառուցվածքի մարդկանց համար նա զուրկ էր որևէ հրապույրից: Նրա մեջ ո՛չ հմայք կար, ո՛չ փայլ, ո՛չ էլ ուժ: Զուր չէր, որ Ֆրենկ Քառիկերվուդը համարյա առաջին իսկ օրերից հարցնում էր իրեն. ճիշտն սասած, ինքը ինչո՞ւ ամուսնացալ

սրա հետ: Հիմա արդեն կիլիանն այսպիսի հարցեր չեր տալիս, որովհետև անխելքություն էր համարում փորփրել անցյալի սխալներն ու անհաջողությունները: Որևէ բան ափսոսալ, նրա կարծիքով, անհեթեթություն էր: Նա նայում էր միայն առաջ ու մտածում ապագայի մասին:

Եվ այնուամենայնիվ միսիս Քառուփերվուդը խիստ ցնցված էր յուրովի: աննպատակ թափառում էր տանը՝ ենթակա իր դառն խոհերին: Նամակում խորհուրդ էին տալիս, որ իր սեփական աշքով համոզվի Քառուփերվուդի դավաճանությանը, բայց նա որոշեց գեռ սպասել: Տակավին պետք էր մտածել-գտնել № 931 տանը հետևելու ձեր, եթե արդեն պետք էր այդ բանն անել: Ֆրենկի մտքով ոչինչ չպետք է անցնի: Եթե պարզվի, որ էջին թաթլերն է դա, թեև ավելի հավանական էր, որ այդ նա չէր, ապա պետք կլինի իմաց տալ նրա ծնողներին: Բայց, մյուս կողմից էլ նշանակում էր հրապարակային ժաղքի ենթարկել իրեն: Լիլիանը որոշեց ուժերի ներածի շափ ճաշին ցուց շտալ իր հոգեվիճակը, բայց Ֆրենկը ճաշին չեկավ: Այնքան էր նա զրադված, այնքան ժամանակ էր նա անցկացրել տարրեր մարդկանց հետ գաղտնի զրույցների, հոր և այլ գործարաների հետ խորհրդակցելու վրա, որ լիլիանը համարյա շտեսավ նրան ո՛չ այդ երկուշաբթին, ո՛չ էլ հաջորդ օրերը:

Երեքշաբթի, ժամը երկուսն անց կեսին, Քառուփերվուդը կանչեց իր պարտատերերին, իսկ հինգն անց կեսին արդեն որոշված էր, որ նա գործերը կհանձնի խնամակալ վարչությանը: Բայց անգամ այդ ժամերին, իր գլխավոր պարտատերերի դեմ-հանդիման (իսկ նրանք մի երեսուն հոգի կլինեին), նրան չէր թվում, թե աղետ է տեղի ունեցել: Այդ ամենը լոկ ժամանակավոր դժվարություն է: Այժմ, իհարկե, մոայլ պատկեր է ստացվում: Քաղաքային գանձապահությանն ունեցած պարտքի պատմությունը մեծ աղմուկ կրաքրացնի: Ոչ պակաս աղմուկ կրաքրանա քաղաքային փոխառության իր ավանդադրած պարտատոմսերի համար, եթե Սթիները շփերադասի այդ մասին լուել: Բայց ինչ էլ լիներ, այնուամենայնիվ Քառուփերվուդը իրեն վերցացած մարդ չէր համարում:

— Ձենտլմեննե՛ր, — ասաց նա ավարտիլով իր խոսքը, որ պակաս հստակ, ինքնավստահ, անկախ ու համողիշ չէր, քան ինչպես միշտ, — այժմ դուք տեսնում եք բանի էլությունը: Այդ թղթերը այժմ պակաս շարժեն, քան երբեմ, որովհետեւ դրանց մարմնավորած նյութական արժեքներին բացարձակապես ոչինչ չի պատահել: Եթե դուք մի տասնհինգ կամ, ասենք, քսան օրվա հետաձգում ընձեռեք ինձ, ես, անտարակուս, իմ գործերը ամբողջովին կարգի կբերեմ: Եվ ես թերեւ միակ մարդն եմ, որ ի վիճակի է անել դա, որովհետև մինչն վերջին մանրամասնը ինձ հայտնի է բորսայի դրությունը: Շուտով բորսան նորմալ դրության կվերադառնա: Ավելին՝ գործերում աննախընթաց վերելք կառաջանա: Ինձ միայն ժամանակ է պետք: Ներկա իրադրության մեջ ժամանակը ամեն ինչ է: Խնդրում եմ ասեք ինձ՝ կարո՞ղ եմ արդյոք տասնհինգ կամ քսան օրվա, և կամ եթե դուք հնարավոր եք գտնում՝ մեկ ամսվա հետաձգման հույս ունենալ: Ահա այն, ինչ պետք է ինձ:

Նա դուրս եկավ ընդունարանից, որի ոլորվող վարագույրները շրջահայեցությամբ իշեցված էին, ու փակվեց իր առանձնասենյակում, որպեսզի պարտատերերը հնարավորություն ունենան մտքերի ազատ փոխանակություն կատարել: Դրանց մեջ կային նաև իրեն պաշտպանող բարեկամներ: Նա սպասեց մի ժամ, երկու, երեք ժամ, իսկ նրանք խորհրդակցում էին: Վերջապես նրա սենյակը մտան Ռուլթեր կին, դատավոր Քիթչենը, «Ձեյ Կուք և Ընկ.» ներկայացուցիչ էվերի Սթոունը և մի քանի այլ մարդիկ: Դա ինքնին այն կոմիտեն էր, որ ընտրել էին նրա գործերի վիճակը ավելի լավ պարզելու համար:

— Այսօր արդեն ոչինչ անել հնարավոր չէ, ֆրե՛նկ. — Հանդարտ շեշտով հայտնեց Ռուլթեր կին: — Մեծ մասը պընդում է, թե պետք է վերստուգել հաշվետվությունը: Քաղաքային գանձապետի հետ ունեցած խճճված հաշիվներում, որոնց մասին խոսում էիք, որոշ կետեր մութ են մնում: Նրանք այն կարծիքին են, որ դուք այսպես թե այնպես պետք է ժամանակավորապես անվճարունակ հայտարարեք ձեզ. բացարձակ

ՀԵ, որ հետագայում ձեզ հնարավորություն տրվի վերսկսելու ձեր գործը:

— Շատ եմ ցավում, ջենտլմեններ, — զուսպ պատասխանեց Քառվիերվուղը: — Եթե իմ կամքը լիներ, ես կգերադասեի ամեն ինչ, միայն թե վճարումները շընդհատեի անգամ մի ժամ, որովհետև գիտեմ, թե ինչ է նշանակում դա: Եթե զուք ինձ պատկանող արժեթղթերը դիտեի իրենց իսկական շուկայական արժեքի լույսի տակ, ապա կհամոզվեք, որ իմ ակտիվը զգալի շափով ավելի է պասսիվից, բայց ի՞նչ օգուտ դրանից: Եթե իմ գրասենյակի դուռը փակվի, այլևս չեն վստահի ինձ: Լավ կլիներ շարունակեի գործու:

— Շատ անախորժ է, Ֆրենկ, բարեկամու, — ասաց լին, սրտագին սեղմելով նրա ձեռքը, — ես անձամբ որքան ասես հետաձգում կտայի ձեզ: Բայց այդ ծեր տխմարները շեն ցանկանում ունենդրել խոհեմության ձայնին: Սարսափելի վախեցած են խուճապից: Ըստ երեսութին իրենց վիճակն էլ լավ չէ, այնպես որ առանձնապես չի կարելի մեղադրել նրանց: Ես չհմ կտսկածում, որ զուք կրկին ոտքի կկանգնեք, թեև, իհարկե, զավ կլիներ կրապակը չփակել: Բայց այդ պարոններին բան հասկացնել անկարելի է: Գրո՛ղը տանի, սնանկության մասին խոսք անգամ չի կարող լինել: Մի տասն օր հետո ձեր թղթերը նորից կհասնեն իրենց լրիվ արժեքին:

Դատավոր Քիթշենը նմանապես համակրանք արտահայտեց Քառվիերվուղին, որի վիճակը սակայն դրանից չէր թեթևանում: Նրան հարկադրում էին փակել գործը: Որոշված էր մի փորձագետ հաշվապահ հրավիրել նրա գրասենյակային մատյաններն ստուգելու համար: Բայց չէ՝ որ այդ միջոցին Բաթլերը կարող է հրապարակել քաղաքային գանձապետի հետ կապված պատմությունը, Սթիներն էլ դատարանին հայտնել քաղաքային փոխառության պարտատոմսեր գնելու վերջին գործառնության մասին:

Վեց բարեկամ, որ ցանկանում էին օգտակար լինել նրան, մինչև գիշերվա շորսը մնացին նրա հետ, բայց այնուամենայնիվ նա ստիպված եղավ գրասենյակը փակել: Այդ անելուց հետո Քառվիերվուղը հասկացավ, որ հարստության ու փառքի

տիրանալու իր երազներին հասցված է խորտակիչ հարված, գուցե և վերջնական պարտություն է կրում ինքը:

Վերջապես, մենակ մնալով իր ննջարանում, նա հայելու մեջ դիտեց իրեն: Դեմքը գունատ էր ու հոգնած, բայց առաջվա պես առնական ու եռանդուն: «Գրո՛ղը տանի,— ասաց նա մտովի:— Նրանք ինձ չեն հաղթի: Ես դեռ երիտասարդ եմ: Եվ զուրս կդամ այս անախորժությունից: Անպայման դուրս կգամ: Ես կգտնեմ ելքը:

Ծանր մտածմունքների մեջ թաղված՝ նա սկսեց դանդառ դորեն, ասես շուգելով, հանգել: Հետո ձգվեց անկողնի վրա և մի քանի վայրկյան անց, որքան էլ տարօրինակ լիներ այդքան բարդ ու խճճված հանգամանքներում, արդեն քնել էր: Այդպես էր նրա խառնվածքը. նա կարող էր քնել հանգիստ, ֆսֆը սացնելով, այնինչ նրա հայրը շափշփում էր սենյակը ու անդորր չէր գտնում: Մեր ջենալմենին ամեն ինչ երևում էր խիստ մոռայլ գույներով, ապագան լի էր անհուսությամբ: Իսկ նրա որդու առաջ այնուամենայնիվ հույս էր նշուշում:

Այդ միջոցին կիլիան Քառվերվուդը իր ննջարանում կողքից-կողք էր շրջվում անկողնում, գլխին պայթած նոր աղետից ցնցված: Հոր, ամուսնու, Աննայի և սկեսրոջ հետ ունեցած կցկոտը խոսակցություններից նա հասկացել էր, որ Ֆրենկը սնանկանալու նախօրյակին է կամ արդեն սնանկացել է. դեռ ոչ ոք ճշգրիտ չէր իմանում: Ֆրենկը շատ էր զբաղված, որպեսզի կարողանար բացատրություններ տալ: Ամեն ինչի պատճառը Զիկագոյի հրդեհն էր: Քաղաքի գանձապետի հետ կապված պատմությունը առայժմ չէր հիշատակվում: Ֆրենկը ընկել էր ծուղակ և այժմ հուսահատ պայքար էր մզում փրկվելու համար:

Այդ ճգնաժամային բոպեներին միսիս Քառվերվուդը միառժամ մոռացավ նամակը, որով խոսվում էր ամուսնու դավաճանության մասին, ավելի ճիշտ, այդ մասին չէր մտածում: Նա զլատված էր, ահարեկված, շշմած: Նրա փոքրիկ, զմայլելի աշխարհը հանկարծ մոլեզնորեն պտույտ եկավ իր աշքի առաջ: Նրանց բարեկեցնության շքեղազարդ նավը սկսեց անգըթորեն կողքից կողք ճոճվել, նրան թվուած էր, թե պարտա-

Վոր է մնալ անկողնում և փորձեց քնել, բայց աշքերը լայն բացված էին և գլուխը մտածմունքից ցավում էր: Մի քանի ժամ առաջ Ֆրենկը համառորեն համոզում էր կնոջը շանհանգրստանալ իր համար՝ ասելով, թե մեկ է, ոչ մի բանով Միարող օգնել իրեն, և լիլիանը հեռացավ նրանից՝ տանջալիուրեն երկմտելով, թե ո՞րն է իր պարտականությունը, ի՞նչ վարդագիծ պետք է վարի ինքը: Պայմանական պատշաճությունների օրենսգիրքը ասում էր նրան՝ կաց ամուսնուդ մոտ: Եղայդպես էլ որոշեց անել: Նույնն էլ թելադրում էր կրոնը, ինչպես նաև՝ սովորույթը: Պետք է մտածել երեխաների մասին: Նրանք ո՛չ մի հանցանք չունեն: Պետք է ետ նվաճել Ֆրենկին, եթե դեռ կարելի է: Նրա այդ հափշտակությունը կանցնի: Բայց և այնպես ինչպիսի՞ ծանր հարված:

Գ Լ Ո Ւ Խ Խ X X X I

«Ֆրենկ Քառվիերվուդ և Բնիկ.» բանկիրական գրասենյակի անվճարունակության լուրը մեծ իրարանցում առաջացրեց դրամական րորսայում և ընդհանրապես Ֆիլադելֆիայում: Զավիլց ալիքի անսապասելի էր դա և արդեն մեծ գումարի մասին էին խոսում: Փաստացի նա սնանկացել էր մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դոլարով, իսկ նրա ակտիվը՝ պահանջները, արժեթղթերի փաստ իշած գների կուրսով հազիվ էր հասնում յոթ հարյուր հիսուն հազարի: Սակավ ջանք շթափվեց Քառվիերվուդի հաշվեկշիռը կազմելու վրա, իսկ երբ այդ հաշվեկշիռը պաշտոնապես հայտարարվեց, բաժնետոմսերի գինը նորից ընկավ երեք կետով, իսկ հաջորդ օրը թերթերը բազմաթիվ հոդվածներ նվիրեցին դրան խոշորատառ վերնագրերով: Քառվիերվուդը մտադիր չէր կատարելապես սնանկ հայտարարելու իրեն: Նա մտածում էր միայն առժամ դադարեցնել վճարները, որպեսզի որոշ ժամանակ անց համաձայնության դա պարտատերելի հետո ու գործը վերսկսի: Դրան հասնելու համար միայն երկու խոշոնդուր կար նրա ճանապարհին. առաջին՝ հինգ հարյուր հազար դոլարի պատմությունը, մի գումար, որ առել էր քաղաքի

միջոցներից ծիծաղելիորեն ցածր տոկոսով, իսկ դա պարզորոշ ցույց էր տալիս, թե ինչպես էին գործ անում գանձապետությունում, երկրորդ՝ վաթսուն հազար դոլլարի չեկը: Քառուիերա վուդի Փինանսական աշխաբացությունը դրդեց նրան իր ունեցած բաժնետոմսերը գրել ամենամեծ պարտատերերի անվանքուն հետագայում պետք է օգներ իրեն վերսկսելու իր գործը: Էլի նույն Հարպեր Սթեչերը պատրաստեց փաստաթղթերը, որոնց մեջ «Զեյ Կուք և Ընկ.», «Էղուարդ Կլարք և Ընկ.», «Դրեքսել և Ընկ.» ու մի քանի այլ բանկիրային տներ կոչվում էին գերադասելի պարտատերեր: Քառուիերվուդը շատ լավ էր հասկանում, որ եթե մանր պարտատերերը վրդովվեն ու դատի տան իրեն՝ ուղենալով վերանայել տալ այդ որոշումը և նույնիսկ սնանկ հայտարարեն իրեն, ապա դա մեծ դեր չի կատարի: Շատ ավելի կարևոր է, որ ինքը մտադրություն է ունեցել բավարարելու առավել ազդեցիկ պարտատերերի պահանջները: Դա նրանց սրտովը կլինի, և հետագայում, երբ ամեն ինչ հանդարտվի, բացառված չէ, որ նրանք կցանկանան օգնել իրեն: Բացի դրանից, այսպիսի ճգնաժամային պահին բազմաթիվ հայցեր լինելը լավագույն միջոցն է ժամանակը ձգձգելու համար, մինչև որ բորսան ու մտքերի տրամադրությունը նորմայի գան, և Քառուիերվուդը նույնիսկ ուզում էր, որ շատ հայցեր լինեն: Հարպեր Սթեչերը խոժոռապեմ ժպատաց (թեև ֆինանսական այդ մրրիկի թեժ պահին ժպատը հազվագեպ բան էր), երբ նրանք միասին հաշվում էին հայցերի քանակը:

— Ճիշտ եմ ասում, Ֆրենկ, քաջ մարդ եք դուք, — բացականչեց նա: — Շուտով ձեզ կշրջապատի հայցերի մի այնպիսի ցանց, որ ոչ ոք դրա միջից դուրս չի կարող գալ: Զերբուլոր պարտատերերը կսկսեն դատ վարել իրար դեմ:

Քառուիերվուդը քմծիծաղեց:

— Ռւզում եմ միայն ժամանակ շահել, ուրիշ ոչինչ, — պատասխանեց նա:

Եվ այնուամենայնիվ կյանքում առաջին անգամ մի քիչ ընկճված զգաց իրեն, որովհետեւ այդքան տարիներին նրա

ամբողջ եռանդը. և մտավոր ուժը կլանող գործերն այլևս գոյացիում չունեին:

Նրա անհանգստության գլխավոր պատճառը քաղաքային գանձարանից վերցրած հինգ հարյուր հազար դոլարը չէր, թե՛ն նա գիտեր, որ այդ փոխառության լուրը ծայրաստիճան կալեկոծի հասարակական կարծիքն ու ֆինանսական աշխարհը. Բայց, վերջապես, դա օրինական կամ համենայն դեպք կիսաօրինական մի գործառնություն էր, այլ վաթսուն հազար դոլարի քաղաքային փոխառության սերտիֆիկատները, որ ժամանակին չէր տվել մարման ֆոնդին և հիմա չէր էլ կարողանաւ տալ, եթե դրանք ետ զնելու գումարը երկնքից ընկներ: Սերտիֆիկատները նրա ձեռքից դուրս էին եկել, և դա անվիճելի փաստ էր: Քառուիերվուզը գիշեր-ցերեկ մտածում էր, թե ինչպես դուրս գա այդ վիճակից: Միակ բանը, որ հիմա կարելի է անել, որոշեց նա, վերջապես, Մոլենհաուերի կամ Սիմֆոնի մոտ (նա անձամբ ո՛չ մեկին էր ճանաշում, ո՛չ մյուսին, սակայն Բաթլերի հետ հարաբերությունները խղելուց հետո էլ ուրիշ ոչ ոքի չէր կարող դիմել) զնալ ու ասելն էր՝ հիմա, Ճիշտ է, ես ի վիճակի շեմ վերադարձնելու հինգ հարյուր հազար դոլարը, բայց եթե իմ դեմ հետապնդում չսկսեն, իսկ դա ինձ կզրկի հետագայում իմ գործը վերսկսելու հնարավորությունից, ապա ես խոսք եմ տալիս վերադարձնել այդ գումարը մինչև վերջին ցենտը: Եթե նրանք չհամաձայնեն, և իր գործին անուղղելի վնաս հասցվի, այն ժամանակ թող սովասին, մինչեւ ինքը բարեհաճի հատուցել այդ փողերը, մի րան, որ ամենայն հավանականությամբ երբեք չի լինի: Բայց, անհեղությամբ տառձ, նա ինքն էլ կարդին չէր իմանում, թե ինչպես նրանք, իրենց հպարտյամբ հանդերձ, կարող էին կտուեցնել դատական հետապնդությունը: Նրա հաշվապահական մատյաններում նշված էր, որ ինքը այդ գումարը ողարտք է քաղաքային գանձարանին, իսկ քաղաքային գանձարանի մատյաններում գրված էր, որ հինգ հարյուր հազար դոլարը պարտագրված է իրեն: Բացի դրանից, կար մի տեղական կազմակերպություն, որը կոչում էր իրեն «Քաղաքային ինքնավարությանն օգնող քաղաքացիների ընկերակ-

ցոլթյուն» և որը ժամանակ առ ժամանակ ստուգում էր հասաւ րակական ֆոնդերը։ Քառուիերվուղի կողմից քաղաքային միջոցների յուրացումը շի թաքցվի նրանից, և այն ժամանակ կարող է հասարակական հետաքննություն նշանակվի։ Այդ գործի մասին արդեն իմանում էին մասնավոր շատ անձինք, ինչպես, օրինակ, նրանից հաշվետվություն պահանջող պարտատերերը։

Այսպես թե այնպես Քառուիերվուղ անհրաժեշտ էր համարում հանդիպել Մոլենհառուերին կամ Սիմֆոնին։ Մինչ այդ նա որոշեց խոսել Հարպեր Սթեցերի հետ։ Եվ գրասենյակը փակվելուց մի քանի օր անց կանչեց նրան ու պատմեց այդ գործառնության մասին, սակայն լուսվյան մատնեց այն, որ բնավ էլ շի պատրաստվում պարտատոմսերը հանձնել մարման ֆոնդին, քանի դեռ իր գործերը շեն նորմալացել։

Հարպեր Սթեցերը բարձրահասակ, նիհար, պերճաշուր տղամարդ էր, համելի ձայնով ու գեղեցիկ շարժուձերով, թեև նրա քայլվածքը տարօրինակ ձեռվ հիշեցնում էր շան մոտիկության հոտն առած կատվի քայլվածքը։ Նրա բարակ, երկարավուն դեմքը այն տիպից էր, որը շատ է գուր գալիս կանանց։ Նրա աշքերը կապույտ էին, իսկ մազերը շագանակ սգույն՝ շեկ երանգով։ Սկեռուն, առեղծվածային հայացքը, որ նա հառում էր բարակ ձեռքի վերեկից (նա սովորություն ուներ մտախոհ ժամանակ ծածկել բերանն ու կզակը), ուժեղ տպավորություն էր գործում զրուցակցի վրա։

Բառի բուն նշանակությամբ դաժան մարդ էր նա, բայց այդ դաժանությունը արտահայտվում էր ոչ թե գործողություններով, այլ՝ աշխարհի ամեն ինչի նկատմամբ կատարելավա՛ս անտարբեր լինելով։ Նրա համար ոչ մի սուրբ բան չկար։ Աղքատ չէր նա, ոչ էլ աղքատության մեջ էղ ծնվել։ Բնությունն օժտել էր նրան սուր մտքով, որն ուղղված էր գլխավորապես իր աշխատանքի շարժիչ խթանի՝ է՛լ ավելի հարստություն ու հոչակ ձեռք բերելու վրա։ Քառուիերվուղի հետ աշխատակցելը հարստանալու լայն ուղի էր բացում։ Բացի դրանից, Քառուիերվուղը շատ էր հետաքրքրում նրան։ Իր հաճախորդներից ոչ մի ուրիշով այնպես չէր հիանում Սթեցերը։

— Թող դատական հետապնդություն հարուցեն, — այսաց նա որպես փորձված իրավագետ՝ դրության բոլոր մանրամասներին վայրկենապես հասու լինելուց հետո: — Մեղադրանքը զուտ ձևական կլինի: Եթե նույնիսկ բանը հասնի դատարանին, իսկ ես այնքան էլ հավանական չեմ համարում, ապա մեղադրանքը կհանգի վստահյալ անձի կողմից գումարը վատնելուն կամ յուրացնելուն: Տվյալ դեպքում վստահյալ անձը դուք էիք: Եվ դրությունից դուրս գալու ելքը ձեզ համար հետեւյալը կլինի՝ երդումով ցուցմունք տալ, որ դուք չեկն ստացել եք Սթիների գիտությամբ ու համաձայնությամբ: Այն ժամանակ, ես կարծում եմ, որ ձեզ կներկայացնեն զուտ ձևական մեղադրանք՝ անցել եք իրավունքների սահմանից, և հազիվ թե գտնվի երդվյալների այնպիսի մի կազմ, որը սիրուանի մեղադրական վճիռ արձակել լոկ այն հիման վրա, որ ձեր ու քաղաքային գանձապետի միջև եղել են ոչ ամբողջովին պաշտոնական հարաբերություններ:

Եվ այնուամենայնիվ ես ոչ մի բան չեմ երաշխավորում. սկզբից երբեք չի կարելի իմանալ, թե ինչ կասեն երդվյալ ատենակալները: Դա կպարզվի միայն քննության պրոցեսում: Ամեն ինչ կախված կլինի այն բանից, թե ում հանդեպ ավելի վստահություն կցուցաբերի դատարանը՝ ձեր, թե՝ Սթիների, մեկ էլ այն բանից, թե քաղաքի կառավարիչներին որքա՞ն ցանկալի կլինի քավության նոխազ գտնել ու պաշտպան կանգնել Սթիներին: Ամեն ինչ կախված է ընտրություններից: Եթե այս խոռնապը պատահեր մի այլ ժամանակ...

Քառափերսուզ ձեռքի շարժումով Սթեղների խոսքը կտրեց: Ինքն էլ էր իմանամ այդ:

— Ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես անհրաժեշտ կհամարեն գործել մեր քաղաքագետները: Եսկ նրանց ես այնքան էլ չեմ հավատում: Խիստ բարդ իրադրություն ստեղծվեց: Հիմա այս գործը արդեն ծածուկ պահել կարելի չէ: — Խոսակցությունը տեղի էր ունենում Քառափերվուդի տանը, նրա աշխատասենյակում: — Ինչ ուզում է լինի, — ավելացրեց նա: — Իսկ հիմա ասացեք, Հա՛րպեր, ինձ ինչ կըսպառնա, եթե մեղադրեն վստահացողի սեփականությունը

յուրացնելու մեջ և դատարանը հանցավոր ճանաչի ինձ: Քառ
նի՝ տարվա բանտարկություն կրերի դա հոռեղույն դեպքում:
Սթեղերը մտածկոտ շփեց կզակը:

— Ինչպես ասեմ,— խոսեց նա վերջապես,— լուրջ հարց
տվիք գուք ինձ: Օրենքը ասում է՝ մեկից մինչև հինգ տարի:
Բայց սովորաբար այդպիսի գործերի դատավճիռը երեք տառ
բուց ավելի շի լինում: Ի՞արկե, ձեր դեպքում...

— Լավ, պետք չէ,— ոչ առանց ջղայնանալու ընդհատեց
Քառուիերվուղը: — Իմ գործը բնավ էլ շի տարբերվոամ ուրիշ
այդպիսի գործերից, և դուք շատ լավ գիտեք: Եթե պարոն քառ
զաքագետները ցանկանան վատնում անվանել դա, ուրեմն
վատնում էլ կկոչվի:

Նա մտածմունքի մեջ ընկավ, իսկ Սթեղերը վեր կացավ
ու սկսեց առանց շտապելու շափշփել սենյակը: Նա էլ էր
մտածում:

— Ասեք, խնդրե՛մ, հարկ կլինի՝ արդյոք մեկնել բանտ
նախքան գործը վերջնականապես ավարտվի, այսինքն քանի
գեռ շի անցել բոլոր ատյաններից, թե՞ոչ, — դաժան անմիջառ
կանությամբ հարցրեց Քառուիերվուղը:

— Գիտեք ինչ, այս տեսակ դատական բոլոր գործեռ
բում, — պատասխանեց Սթեղերը՝ ականջը քաշքշելով և շանաւ
լով ըստ հնարավորին մեղմ արտահայտվել, — քննության
առաջին շրջաններում դեռ կարելի է կալանքից խուսափել
սակայն դատարանի մեղադրական վճիռ արձակելուց հետո
արդեն դժվար է, նույնիսկ անկարելի: Հստ օրենքի, բանտում
միայն կարելի է սպասել գործը վերանայելու թույլատրության
և բեկման գանգատի հիմնավորածութունը հաստատելուն,
իսկ դրա համար սովորաբար պահանջվում է հինգ օր:

Երիտասարդ բանկիրը առաջվա պես համառորեն նայում
էր պատուհանին, իսկ Սթեղերը նկատեց:

— Բարդ պատմություն է ստացվում:

— Հապա ինչպե՞ս բարդ լինի, — պատասխանեց Քառու
փերվուղը և իր համար ավելացրեց. «Բա՞նոտ: Հինգ օր
բանտո՞ւմ...»:

Նկատի ունենալով մյուս բոլոր հանդամանքները՝ դա
սոսկալի հարված էր նրա համար: Հինգ օր բանտում, մինչև
որ հաստատվի բեկման գանգատի հիմնավոր լինելը, եթե
այդպիսի հաստատում ընդհանրապես հաջորդի: Ո՛չ, դրանքց
պետք է խուսափել ամեն գնով: Բա՞նտ. ուղղի՛ բանտ
Ֆինանսիստի իր համբավին խորտակից հարված կհասպի:

¶ L 0 H U XXXII

Ի մի հավաքվելու և ցավոտ հարցը վերջնականապես լուծելու անհրաժեշտությունը պարզ դարձավ երեք ֆինանսիսաներին էլ՝ Մոլենհաուերին, Բաթլերին ու Սիմփոնին, որովհետև գրությունը ժամառժամ սպառնալի էր դառնուուժ երրորդ փողոցում լուրեր էին պտտվում, որ խոշոր սնանկությունից բացի, մի բան, որ խիստ աննպաստ էր անդրադարձել Զիկաֆոյի Հրդեհից հետո ստեղծված առանց այն էլ աղետավի ֆինանսական իրազրության վրա, Քառուիերվուզը Սթիների կամ Սթիների Քառուիերվուզի օգնությամբ քաղաքային դանձարանից կողուստել էին հինգ հարյուր հազար դոլար: Հիմա հարց էր ժագում. ինչպես լուրության մատնել այս գործը մինչև ընտրությունները ավարտվեն, իսկ դրանք պետք է տեղի ունենային միայն երեք շաբաթ հետո: Բանկիրներն ու միջնորդները փսփսում էին, որ Քառուիերվուզը, արդեն իմանալով իրեն սպասող սնանկությունը, քաղաքային դանձարանից վերցրել է շեկ, այն էլ առանց Սթիների գիտության: Բացի դրանից, վտանգ կար, որ դրա հոտը կառնի րավականին անհանգիստ մի կազմակերպություն, որը հայտնի է «Քաղաքային ինքնավարությանն օգնող քաղաքայիների ընկերություն» անունով և որի նախագահն էր Ֆիլադելֆիայում ժողովրդականություն վայելող երկաթամշակման մի գործարանի տեր Սքելտոն Ուիթթը՝ բացառիկ ազնվության ի բարձր բարոյականության տեր մի մարդ: Քանի տարի էր արդեն, ինչ Ուիթթը հետևում էր իշխանությունն իր ձեռքն առած հանրապետական կուսակցության դրածոներին՝ նրանց բաղաքական խիղճն արթնացնելու ապարդյուն հույսով:

Հուրց ու խստապահանջմարդ էր նա՝ մեկը այն աննկուն ու արդարասեր անձերից, ովքեր կյանքը դիտում են պարտականության պրիզմայի միջով և առանց գայթակղվելու որևէ ստոր կրքով՝ գնում են իրենց ճամփով ու ջանում ապացուցել, որ տասնաբանյա պատվիրանները ավելի բարձր են մարդկանց հաստատած կարգերից:

Այդ Ընկերությունն սկզբնապես ստեղծվեց հարկահավաքման ապարատում չարարկումները արմատախիլ անելու նպատակով: Բայց հետո, ընտրությունների միջակաշրջանում, նա սկսեց անխոնջ կերպով ընդլայնել իր գործունեության շրջանակը. նրա օգտակարությունը երբեմն՝ երբեմն՝ հաստատվում էր մերթ պատահական լրագրային փոքր հողվածով, մերթ էլ հապճեպ զզումով որևէ երկրորդական քաղաքային գործչի, որը դրանից հետո սովորաբար թաքնըկում էր Բաթլերի, Մոլենհաուերի ու Սիմֆոնի նման քաղաքական հզոր կառավարիչների ետևում և այն ժամանակ արդեն կատարելապես անվտանգ էր զգում իրեն: Տվյալ պահին Ընկերությունը անելիք չուներ, և Քառուփերվութի գրասենյակի կողմից վճարների դադարեցումը, ինչպես նաև քաղաքային գանձարանի միջոցների շարաշահման մասնակցելը, շատ քաղաքագետների ու բանկիրների կարծիքով, հենց գործունեության այն ասպարեզն էր, որը Ընկերությունը երկար փնտրում էր:

Քառուփերվութի բախտը որոշող խորհրդակցությունը տեղի ունեցավ նրա սնանկացումից հինգ օր հետո՝ Ռիթենհաուզեաքվերում գտնվող սենատոր Սիմֆոնի տանը, այն շրջանի կենտրոնում, ուր ապրում էր Ֆիլադելֆիայի տոհմական ֆինանսական ավագանին: Սիմֆոնը, որ սերում էր քվաքերական¹ ընտանիքից, օժտված էր դեղարվեստական արտասովոր ճաշակով և ֆինանսիստի բնածին հոտառությամբ, որից լայնորեն օգտվում էր քաղաքական ազգեցություն ձեռք բերելու համար: Նա բացառիկ առատաձեռնություն էր

¹ Բողոքականների մի աղանդ, որ սկիզբ է առել XVII դ. Անգլիայում, հետո տարածվել նաև Հյուսիսային Ամերիկայում:

Հանդես բերում այն դեպքերում, երբ կարելի էր դրամով հավաքագրել քաղաքական հզոր և զամ թեկուղ օգտակար հետերդի, և լայնորեն վերաքննիչների, հոգաբարձուների, դատավորների, հանրապետական կուսակցության լիազորների և այլ վարչական պաշտոնների էր նշանակում բոլոր նրանց, ովքեր անձնվիրաբար և անառարկելի կերպով իրագործում էին նրա կամքը: Իր հզորությամբ նա շատ աչելի գերազանցում էր Մոլենհաուերին ու Բաթերին, որովհետև ինքնին մարմնավորում էր նահանգի ու ամբողջ պետության իշխանությունը: Երբ հանրապետական կուսակցության պարագլուխները պատրաստվում էին նախընտրական կամպանիա ծավալել ամբողջ երկրում և փափագում էին իմանալ, թե Պենսիլվանիա նահանգը ինչ դիրք է գրավելու այդ կուսակցության նկատմամբ, դիմեցին հատկապես սենատոր Սիմֆոնին: Եվ Սիմֆոնը սպառիշ պատասխան տվեց: Նահանգի քաղաքական ասպարեզից վաղուց թևակոխելով համապետական քաղաքական ասպարեզը՝ նա նկատելէ դեմք էր Վաշինգտոնում, Միացյալ Նահանգների սենատում, և նրա ձայնը մեծ կշիռ ուներ ֆինանսական հարցերին վերաբերող բոլոր խորհրդակցություններում:

Նրա զբաղեցրած վենետիկան ոճի քառահարկ տունը աշքի էր ընկնում բազմաթիվ արտասովոր ճարտարապետական մանրամասներով, ապակենկար պատուհանով, մրակամար դռնով, պատի մեջ սարքված գունավոր մարմարէ մեղադիոնով և այլն: Սինատորը վենետիկի խանդավառ երկըրպագու էր: Համախ էր նա եղել այսակազ, ինչպես և Աթենքում ու Հռոմում, և րիբել էր այդ տեղերից անցած-գնացած ժամանակիների մշտիույթի ու արվեստի քաղմաթիվ հիանալի նոմիշներ: Նա շատ էր սիրում հոռմեական խստատես կայսրերի անդրիներ, ինչպես նաև՝ հելենների գեղարվեստական մտահղացումները պերճախոս կերպով վկայող դիցական տատվածների ու աստվածուհիների արձանների բեկորներ: Սիմֆոնի արտասովոր տան վերեի կիսահարկում պահվում էր նրա հավաքածոյի ամենաարժեքավոր գանձերից մեկը՝ մարմարե քանդակադրվագ պատվանդանի վրա դրված

շորս ուսնաշափ բարձրությամբ մի կոնածկ միակտուր քար, որը պասակված էր Պանի ծայրաստիճան վավաշոտ գլխով այդ միակտուր քարի կողքին երևում էին մինչեւ ծունկը կոտրված փոքրիկ ոտքեր, որոնք, ամենայն հավանականությամբ, մի ժամանակ պատկանել էին մի սքանչելի մերկ չրա՞շարսի: Միակտուրն ու ջրահարսի տոտիկները պահող պատվանդանը զարդարված էր մարմարի նույն կտորից քանդակված եղների գանգերով ու իրար փաթաթված վարդերով: Միմփսոնի ընդունարանը զարդարված էր Կալիգուլայի, Ներոնի և Հռոմեական այլ կայսրերի անդրիներով, իսկ աանդրւորի երկայնքին ձգված էին բարձրաքանդակներ, որոնք պատկերում էին մատաղի անասուններին դեպի զոհասեղան քաշող ջրահարսերի ու քուրմերի երթը: Տան հեռավոր անկյուններից մեկում դրված էր մի երաժշտական ժամացույց, որը քառորդ ժամը մեկ արձակում էր տարօրինակ, քաղցրալուր ու աղերսալի հնչյուններ: Սենյակների պատերը ծածկված էին ֆլամանդական գորելեն-գորգերով. պարահանդեսի դահլիճում, գրադարանում, մեծ ու փոքր հյուրասենյակներում դրված էին իտալական Վերածնունդի շրջանի քանդակադրվագ կահ-կարասիներ: Նկարչության բնագվառում սենատորն իրեն գիտակ չէր համարում, ուստի և իր ճաշակի վրա հույս ունենալ չէր կարող. սակայն նրա ունեցած բոլոր նկարները պատկանում էին ականավոր վարպետների վըրձնին: Նկարներից շատ ավելի գրավում էին նրան ներմուծված բրոնզե արձանիկներով, վենետիկյան ապակե իրերով ու շինական նեֆրիտե պաճուճանքներով ծանրաբեռնված բրգադարակները: Միմփսոնը մոլի կոլեկցիոներ չէր, սակայն առանձին հազվագյուտ նմուշները ահագին հաճույք էին պատճառում նրան: Այս ու այնտեղ նետված հովազի ու վագրի մորթիները, մշկաեզան մորթիով ծածկված բազմոցը և սեղանները, որոնց վրայի նախշուն լայք ու սեկ կաշիների տեղը բռնել էր սովորական մահուղը, այդ կացարանը դարձնում էին պճնագեղ և նրբաճաշակ շքեղ: Միմփսոնի գեղեցիկ ճաշասենյակը կահավորված էր ժակոր ոճով, իսկ մառանի գինին լրացնելուն հետևում էր ֆիլադելֆիայի լավագույն մաս-

Նագետը: Սենատոր Սիմֆոնը սիրում էր խոշոր հրավերք-ներ կազմակերպել, և երբ նրա տան դուռը բացվում էր հրա-վիրյալ ճաշի, բանկետի կամ պարահանդեսի համար, կարե-լի էր վստահ ասել, որ այնտեղ կհավաքվի տեղական հասա-րակության ընտրանին:

Խորհրդակցությունը տեղի էր ունենում գրադարանում. սենատորը իր պաշտոնակիցներին ընդունել էր այն մարդու սրտաբացությամբ, որը իմանում է, որ կայանալիք զրույցը միայն հաճելի բան է խոստանում իրեն: Սեղանի վրա պատ-րաստ դրված էին սիգար, գինի, տարրեր տեսակի վիսկիներ: Սպասելով Բաթլերին՝ Մոլենհաուերն ու Սիմֆոնը ընդհանուր դիտողություններ էին անում օրվա նյութի մասին, սիգար էին ծխում, և ամեն մեկը սրտում էր պահում իր նվիրական մտքերը:

Այնպես եղավ, որ նախորդ օրը Բաթլերը շրջանային դատախազից՝ Դեկիդ Փեթթիից, իմացավ վաթսուն հազար դոլլարանոց շեկի գործառնությունը: Այդ մասին Մոլենհաուե-րին հայտնեց նաև Սթիները: Եվ Մոլենհաուերը (ու ոչ թե Բաթլերը) անմիջապես կուահեց, որ, օգտվելով Քառուփերվուդի դրությունից, թերեւս հնարավոր լինի մեղադրանքը կուսակ-ցությունից հեռացնել, միաժամանակ և կորզել նրանից իրեն պատկանող քաղաքային երկաթուղիների բաժնետոմսերը, անշուշտ, Բաթլերից ու Սիմֆոնից թափուն: Դրա համար ովետք է միայն վախեցնել Քառուփերվուդին դատական հե-տապնդում հարուցելով:

Շատասի և լավ և թաթլերը, ներողություն խնդրեց ուշա-նալու համար: Փորձելով իր վիշտը թաքննել բարեհոգության դիմակի առակ, ասաց.

— Համա՞ թե կյանք է: Բոլոր բանկերը պահանջում են իրենց փոխատվությունների ապահովում: Ինչպես ուզում ես գտիր ու բեր, ասում են:

Մի սիգար վերցրեց ու վառեց:

— Իսկապես էլ դրությունը այնքան հուսալի չէ, — Ժըպ-տալով պատասխանեց սենատոր Սիմֆոնը: — Խնդրե՛մ, պարոննե՛ր, նստեցեք: Մի քանի ժամ առաջ խոսակցություն

ունիցա էմերի Սթոռունի հետ, որ «Զեյ Կուք և Ծնկ.» բանկի-
րային գրասենյակից է: Նա ասում էր, թե Երրորդ փողոցում
արդեն խոսում են, որ Սթիները մասնակից է Քառվիերվուդի
սնանկանալուն, և թերթերն էլ, իհարկե, շեն հապաղի սոսկա-
լի աղմուկ բարձրացնել, եթե համապատասխան միջոցներ
ձեռք չառնվեն: Ես չեմ կասկածում, որ այդ լուրը շատ շան-
ցած կհասնի «Քաղաքային ինքնավարությանն օգնող ընկե-
րության» նախագահ միստր Ռիթի ականջին: Մենք պետք
է, շենալմեննե՛ր, անմիջապես որոշենք, թե ինչպես պետք է
գործենք: Իմ կարծիքով, ամենից առաջ պետք է առանց ավե-
լորդ աղմուկի ջնջենք Սթիների թեկնածությունը մեր ցուցակ-
ներից: Այդ պատմությունը կարող է լուրջ հետեանքներ
առաջացնել, այնպես որ մենք պետք է իսկույն մեզնից
կախված ամեն ինչ անենք դրանք կանխելու համար:

Սոլենհառուերը սիգարը քաշեց և արձակեց ծխի կապտա-
գորշ ամպիկ: Նա լուր էր և կարծես խորասուզված դիտում էր
հանդիպակաց պատի գորելենները:

— Միանգամայն ակներկ է,— շարունակեց սենատոր
Սիմֆոնը, նկատելով, որ իր պաշտոնակիցները լուրում են,--
եթե մեր նախաձեռնությամբ ամենակարճ ժամանակամիջո-
ցում դատական հետապնդում շնչարուցենք, ապա մի ուրիշը
կանի, և ամբողջ պատմությունը մեջտեղ կգա խիստ ան-
նպաստ լույսի տակ: Իմ կարծիքը այս է. սպասենք մինչև
պարզվի, թե որմէ մեկը, թեեկուզն այդ շարարաստիկ Ծնկե-
րությունը, արդեն պատրաստ է գործել, և այն ժամանակ
ինքներս կդիմենք դատարանին, ձեւանալով, թե դա մեր վա-
ղուցվա մտադրությունն էր: Ամենակարևորը ժամանակ շա-
հելն է, ուստի ես առաջարկում եմ բոլոր հնարավոր միջոց-
ներով դժվարացնել քաղաքային գանձարանի մատյաններին
գոտենալը: Իսկ եթե այնուամենայնիվ վերաքննություն սկսվի,
ես անպայման հնարավոր եմ համարում, պետք է ջանանք,
որ փաստերը ըստ հնարավորին դանդաղ հաստատվեն:

Սենատորը անհարժեշտ շէր համարում ակնարկություն-
ներով խոսել իր ազգեցիկ եղբայրակիցների հետ, երբ խոսքը
վերաբերում էր լուրջ հարցերի, և այդպիսի դեպքերում, հա-

կառակ ճոռոմախոսելու իր սովորությանը, գերադասում էր ամեն ինչ իր անունով կոչել:

— Ինչո՞ւ չէ, ըստ իս, միանգամայն խելածիտ առաջարկություն, — ասաց Բաթլերը, ավելի խոր նստելով բազկաթոռին և ամեն կերպ չանալով թաքցնել իսկական տրամադրությունը: — Չեմ կասկածում, որ մեր աշխատողները կկարողանան մի երեք ամսով ձգձգել վերաբնությունը: Որքան հայտնի է ինձ՝ նրանք շտապել չեն սիրում:

Այս խոսքից հետո նա մտածում էր միայն, թե ինչպես անի, որ խոսակցությունը փոխադրի Քառուփերվութի վրա և խորհուրդ տա ըստ հնարավորին շուտ դատական հետապնդում հարուցել նրա դեմ, բայց այնպես, որ ոչ ոք չկարողանա կշտամբել իրեն, թե ինքը անտեսում է կուսակցության զահերը:

— Այո, վատ միտք չէ, — հաստատեց Մոլենհաուերը անխոռվ, ծովի արձակելով և մտածելով, թե ինչ ձեռվ ընդհանրապես խոսափի Քառուփերվութի և նրա հանցագործության մասին խոսելուց, մինչև որ ինքը նրա հետ շտեսնվի:

— Մենք պետք է գործողության մանրամասն ծրագիր մշակենք, — նորից խոսեց սենատոր Սիմֆոնը, — որպեսզի անհրաժեշտության դեպքում անհապաղ ձեռնամուխ լինենք դրան: Ես կարծում եմ, որ այդ գործը մշշտեղ կգա մի շաբաթից ոչ ուշ, գուցե և ավելի շուտ, այնպես որ չի կարելի ժամանակ կորցնել: Ահա իմ խորհուրդը, թող քաղաքապետը գրի գանձապետին ու բացատրություն պահանջի այդ գործի վերաբերյալ, գանձապետն էլ պատասխանի այդ գրությանը. այնուհետեւ բաղաքատերը, քաղաքապետության անգամների համաձայնությամբ, թող ժամանակալորապես գանձապետին հրաժարեցնի իր պաշտոնից (ըստ իս՝ օրենքն այդ իրավունքը տալիս է նրան), կամ թե առնվազն թող զրկի հիմնական լիազորություններից: Հասկանալի է, որ մենք այդ միջոցառումները չպետք է հանրահայտ դարձնենք, քանի դեռ ստիպված չենք այդպիսի բան անել: Սակայն նամակները պատրաստ կլինեն մեզ մոտ, և մենք անմիջապես կհրապարակենք մամուլում այն դեպքում, եթե մեզ ստիպեն գործել:

— Եթե զենալմենները շեն առարկում, ապա ես հոգ կտանեմ, որ նամակները պատրաստվեն, — հանդիստ ու առանց շտաբելու վրա բերեց Մոլենհառուերը:

— Այո, խելացի նախազգուշություն է, — անբռնազբուսիկ նկատեց Բաթլերը: — Ստեղծված իրադրության մեջ համարյա թե ուրիշ ոչինչ շենք կարող անել, եթե ոչ այն, որ պատասխանատվությունը գցինք մի ուրիշի վրա. այս իմաստով էլ ես կուզենայի խոսելու կարող է պատահել, որ մենք բնավ էլ այնպես անզոր շենք, եթե հաշվի առնենք բոլոր հանգամանքները:

Հաղթական մի կայծ փայլեց նրա աշքերում, իսկ Մոլենհառուերի դեմքով վրդովմունքի թեթև ստվեր անցավ: Ուրեմն Բաթլերն իմանում է, գուցե նաև Սիմֆոնիը:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով, — հարցրեց սենատորը և հետաքրքրախույզ հայացքով նայեց Բաթլերին: Նա չեկի պատմությանն անտեղյակ էր, որովհետև ընդհանրապես այնքան էլ ուշադիր չէր հետեւմ քաղաքացին գանձարանի գործունեությանը և նախորդ խորհրդակցությունից հետո իր պաշտոնակիցներից որևէ մեկի հետ չէր տեսնվել: — Մի՞թե մի ուրիշ կողմնակի մարդ մասնակից է այդ գործին:

Քաղաքագետի նրա սուր միտքը եռանդագին աշխատում էր:

— Հըմ... Ես կողմնակի չեմ ասի նրան, — բարեկիրթ շեշտով շարունակեց Բաթլերը: — Ես նկատի ունեմ Քառուփերվուղին: Մեր վերջին հանդիպումից հետո, շենտլմեննե՛ր, պարզվեցին որոշ մանրամասնություններ, որոնցից եզրակացնում եմ, որ այդ երիտասարդը բնավ էլ այնպես մաքուր չէ, ինչպես ենթադրում էինք: Այնպես է երեսում, որ նա է ամբողջ ավանտյուրայի նախաձեռնողը և Սթիներին այդ գործի մեջ ներգրավողը՝ հակառակ. սրա ցանկության: Ես իմ նախաձեռնությամբ վրազվեցի այդ գործով և կարծում եմ, որ Սթիները այնքան էլ մեղավոր չէ: Որոշ տվյալներից պարզվեց, որ Քառուփերվուղը հաճախ սպառնացել է Սթիներին ամեն տեսակ դժբախտություններով, եթե սա դարձալ փող շտա իրեն և հենց վերջին օրերս խաբեռությամբ մի խոշոր գումար է կոր-

զել նրանից, որից և հետևում է, թե նա պակաս հանցավոր չէ, քան Սթիները: Քաղաքը վճարել է նրան վաթսուն հազար դոլլար քաղաքային փոխառության պարտատոմսերի դիմաց, որոնք, սակայն, շգիտես ինչու չեն մատենագրված մարման ֆոնդում: Եվ եթե հիմա սպառնալիքի տակ է կուսակցության համբավը, ապա նև չեմ հասկանում, թե ինչու նազուառող պիտի անենք Քառուիերվուդի հետ:

Բաթլերը լոեց, համոզված, որ լուրջ հարված հասցրեց Քառուիերվուդին: Եվ չէր սխալվում. սենատորն ու Մոլեն-Հառուերը ծայրաստիճան՝ զարմացել էին, որովհետև առաջն խորհրդակցության ժամանակ Բաթլերը բարյացակամ էր երկում երիտասարդ բանկիրի նկատմամբ, իսկ այն, ինչ հաղորդեց նա հիմա, հազիվ թե կարողանար բավականին հիմք լինել այդքան թշնամական ելույթի համար: Հատկապես զարմացել էր ՄոլենՀառուերը, որովհետև Քառուիերվուդի հանդեպ Բաթլերի տածած համար լիրանքի մեջ նա ժամանակին գալթակղության քար է տեսել իր ծրագրերի համար:

— Ասացե՞ք, ինդրեմ, — մտածկոտ խոսեց սենատոր Սիմֆոնը, սպիտակ ու լավ պահված ձեռքով շրթունքները սղալելով:

— Այո, ես կարող եմ հաստատել, — հանգիստ ասաց ՄոլենՀառուերը, տեսնելով, որ Քառուիերվուդին ահարեկելու հքաղաքային երկաթուղիների բաժնետոմսերը նրանից կորպելու այնքան լավ մտահղացված իր սեփական պլանը հօգս է ցնդում: — Այս քանի օրը ես զրույց ունեցա Սթիների հետ այդ սարծի մասին. նու հավատացնում է, թե Քառուիերվուդը աշխատաւմ էր ևս երեր հարյուր հակար զոլլար ճանկել նրանից. բայց երբ համոզվել էր, թե դւանից բան դուրս չի գա, հնարք գտել էր առանց նրա գիտության և համաձայնության ստանալ վաթսուն հազար դոլլար:

— Բայց ինչպե՞ս, — անվստահ շեշտով հարցրեց սենատոր Սիմֆոնը:

ՄոլենՀառուերը պատմեց Քառուիերվուդի արարքը:

— Ահա՝ թե ինչ, — նկատեց սենատորը, երբ Մոլեն-

ճառւերը վերջացրեց, — ի՞նչ ճարպիկն է: Եվ ասում եք, թե
այդ պարտատոմսերը մարման ֆոնդին շեն հանձնված:

— Ոչ, չեն հանձնված, — պատրաստակամ հաստատեց
Բաթլերը:

— Ի՞նչ ասեմ. դա միայն ձեռնտու է մեզ, — թեթևացած
շունչ քաշեց Սիմֆոնը: Կարծես թե քավության նոխազը
գտնված է: Հենց այդ էլ պետք է մեզ: Այս հանգամանքներում
ես իմաստ չեմ գտնում Քառուփիերվուդին պաշտպանելու մեջ:
Ընդհակառակը, եթե կարիք լինի, կարող ենք նրան դարձնել
ուշադրության կենտրոն: Եվ այն ժամանակ թող թերթերը
ուզածի շափ շաղակրատեն: Վերջ ի վերջո, դրա համար էլ նը-
րանք գոյություն ունեն: Խսկ մենք կզանանք պատշաճ ձևով
լուսաբանել գործը, և այն ժամանակ ընտրություններն էլ տե-
ղի կունենան-կպրծնեն, նախքան բոլոր մանրամասնություն-
ները պարզվեն, անգամ, եթե միստր Ռիթը միջամտի: Մա-
մուկի հոգու ես հաճությամբ հանձն կառնեմ:

— Որ այդպես է, — ասաց Բաթլերը, — ապա հիմա մեր
հոգուները թերես դրանով սպառվում են: Այնուամենայնիվ ես
կարծում եմ, որ Քառուփիերվուդը պետք է Սթիներին հավասար
շափով պատժվի: Նա պակաս հանցավոր չէ, գուցե և ավելին
է, և ես անձամբ ուզում եմ, որ նրան ըստ արժանվույն հա-
տուցեն: Նրա տեղը ուղղիլ բանտն է, և ես ինձնից կախված
ամեն բան կանեմ, որ նրան ուղարկեն այնտեղ:

Մոլենառէերն ու Սիմֆոնը զարմացած նայեցին սովո-
րաբար այնքան բարեհոգի իրենց պաշտոնակցին. ի՞նչ էր
նշանակում Քառուփիերվուդին պատժելու այդ հանկարծակի
ձգուումը: Մոլենհառուերի ու Սիմֆոնի կարծիքով Քառուփի-
վուդը (մի այլ ժամանակ Բաթլերն էլ այդպես կվերաբերվել
դրան), խախտելով իրավաբանական իրավունքները, չեր
խախտել իր մարդկային իրավունքները: Նրանք շատ ռվելի
քիչ էին մեղադրում նրան իր արածի համար, քան Սթիներին,
որը թույլ էր տվել նրան անելու այդ բանը: Սակայն քանի որ
Բաթլերը այդպիսի տեսակետ էր ընտրել և ձեականորեն հան-
ցագործությունն առկա էր, ապա նրանք էլ բնականաբար
ցանկանում էին այդ ամենը շրջել հօգուտ հանրապետական

Հուսակցության, եթե նույնիսկ Քառվիերվուդը հարկադրված լինի բանտ նստել:

— Թերևս իրավացին դուք եք,— զգուց նկատեց սենատոր Սիմվոնը: — Այսպես ուրեմն, պատրաստեցեք նամակ-ները, Հենրի, և եթե ընտրություններից առաջ մենք ստիպված լինենք հետապնդում հարուցել որևէ մեկի դեմ, ապա թերևս ամենանպատակահարմարը Քառվիերվուդի դեմ հարուցելն է: Սթիներին մենք կհիշատակենք միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Ես այս գործը թողնում եմ ձեր հոգացողությանը, որովհետեւ ուրբաթ օրը անհրաժեշտաբար մեկնելու եմ Պիտորուրդ. շեմ կասկածում, որ դուք ոչ մի բան անտես չեք առնի:

Սենատորը վեր կացավ: Նա միշտ էլ թանկ էր գնահատում իր ժամանակը: Բաթլերը շատ գոճ էր խորհրդակցության արդյունքներից: Եթե հիմա հասարակական բողոք բարձրանա կամ հարձակումները լինեն հանրապետական կուսակցության դեմ, եռապետությունն արդեն չի խնայի Քառվիերվուդին: Կարենոր է միայն, որ շուտ լսվեն բողոքող ձայներքց ամեն ինչից երեսում էր, որ քիչ է մնացել դրան սպասելը: Պետք է նաև մի լավ խորամուխ լինել Քառվիերվուդի առանց այդ էլ չղայնացած պարտատերերի գործերին. Եթե հաջողվի նրանցից գնել մուրհակները ու դրանով իսկ խանդարել Քառվիերվուդին վերսկսելուիր գործը, ապա նրա երգս երգված է: Այս՝ այլևս երանի չի տա նա այն օրվան, երբ ճշմարտության ուղուց շեղեց էլլինին, մտածեց Բաթլերը: Դատաստանի մոտենում է:

ԳԼՈՒԽ XXXIII

Այն ամենը, ինչ տեսավ ու լսեց Քառվիերվուդը, ամրապնդեցին նրա այն միտքը, թե «քաղաքի հայրերն» ուղում են իրեն դարձնել քավության նոխազ, այն էլ մոտ ապագայում: Մի քանի օր էր, ինչ Քառվիերվուդը փակել էր իր գրասենյակը, երբ նրա մոտ եկավ Ալբերտ Սթայերսը և բավական

կարեոր լուրեր հաղորդեց; Սթայերսը տակավին վարում էր իր պաշտոնը քաղաքային գանձարանում, ինչպես նաև՝ Սթիռները, և պահանջված բացատրություններ էր տալիս Սենգութեկին, նմանապես և Մոլենհաուերի մի լիազորին, ովքեր զբաղված էին գանձարանի մատյաններն ստոսքելով։ Սթայերսը եկել էր Քառուփերվուղի մոտ, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ ստանար նրանից վաթսուն հազար դոլլար շեկի մասին, դրա հետ նաև խոսելու այդ գործին ունեցած իր մասնակցության վերաբերյալ։ Ինչպես պարզվեց, Սթիները իր կառավարչին ահարեկել էր դատարանով, պնդել, որ նա է հանցավոր այդ գումարի պակասորդի համար, ուստի երաշխավորները ստիպված են պատասխան տալու նրա համար Քառուփերվուղը լսեց նրա խոսքերը, ծիծաղեց միայն և վըստահեցրեց Սթայերսին, որ այդ ամենը ոտից-գլուխ հիմար րություն է։

— Ալբե՛րտ, — ժպտալով ասաց նա, — Հավատացնում եմ ձեզ, որ այդ ամբողջ պատմությունը կոպեկ շարժե։ Դուք ամենեին պատասխանատու չեք ինձ չեկ տված լինելու համար. խորհրդակցեցեք իմ իրավախորհրդատու Սթեների հետադա ոչ ոչ մի ցենտ չի արժենա ձեզ, և նա ճիշտ ու ճիշտ կասի ձեզ, թե ինչ է պետք ձեռնարկել։ Իսկ հիմա վերադարձեք ձեր տեղը՝ գանձատուն, և է՛լ մի անհանգստանաք։ Շատ եմ ցավում, որ այսքան անխորժություն պատճառեցի ձեզ, բայց, միևնույն է, Հարյուր Հավանականությունից մեկի դեպքում միայն դուք ձեր պաշտոնը կպահեիք նոր գանձապետի մոտե իսկ ես ժամանակին մի հարմար պաշտոն կգտնեմ ձեզ համար։

Երկրորդը, որ Քառուփերվուղին լուրջ մտածել տվեց, էյլինի նամակն էր, ուր մանրամասն շարադրված էր այն խոսակցությունը, որ տեղի էր ունեցել Բաթլերների տանը, ճաշշի ժամանակ, երբ ընտանիքի հայրը բացակա էր։ Օուենը ասում էր, որ Հանրապետական կուսակցության գործիչները՝ իր հայրը, Մոլենհաուերը և Սիմֆոնը, պատրաստվում են «Հուպ տալ» Քառուփերվուղին ֆինանսական ապօրինի կոմբինացիայի համար։ Հատկապես ինչի համար, էյլինը կարգին

չէր ըմբռնել; բայց, կպիծես; խոսքը մի շեկի մասին էր; էյլինը անհանգստովթյունից իւնթանում էր; Մի՞թե զրանք ուզում են բանտ նետել նրան, հարցնում էր նա իր նամակում. իր սիրեցյալի՝ ն, իր աշքի լույս ֆրենկի՝ ն; Մի՞թե իսկապես այդպիսի դժբախտովթյուն կարող է պատահել նրան:

Այս նամակը կարդալուց հետո Քառիկերվուղը խոժովվեց ու սեղմեց ատամները; Որևէ բան պետք է ձեռնարկել, գուցե և տեսնել Մոլենհառւերին կամ Սիմֆոնին, կամ երկուսին էլ, ու նրանց միջոցով փոխադարձ զիջման լուծում առաջարկել քաղաքին: Ներկայումս ինքը չէր կարող կանխիկ դրամ խոստանալ նրանց, այլ միայն՝ մուրհակներ, սակայն բացառված չէր, որ դա կբավարարեր նրանց; Մի՞թե նրանք մտադիր են կործանել իրեն մի այնպիսի դատարկ գործի պատճառով, ինչպիսին է շեկի գործառնովթյունը: Զէ՞ որ այդտեղ ապօրինի բան էլ չկա: Այն ժամանակ ի՞նչ ասել հինգ հարյուր հազարի մասին, որ Սթիներն էր տվել իրեն, կամ նախորդ քաղաքային գանձապետների կասկածելի գարծառնովթյունների մասին: Ինչպիսի ստորովթյուն: Քաղաքականովթյան տեսակետից ճիշտ է մտածված, բայց որքա՞ն ստորքան է դա և ինչպիսի ահավոր վտանգ է սպառնում իրեն:

Բայց Սիմֆոնը քաղաքում չէր, մեկնել էր տասն օրով, իսկ Մոլենհառւերը, հիշելով Բաթլերի առաջարկը, օգտվել Քառիկերվոսի արարքից հօգուտ կուսակցության, արդեն կատարել էր այն քայլերը, որոնց մասին պայմանավորվել էին: Նամակներն արդեն կազմված էին և առաջման էին միայն սպասարկ: Բայցի զրանից, մեր նկարագրած խորհրդակցությունից հետո, հանրատպեատկան կուտակցության մասը, աննշան առնդամները, հետեւելով իրենց հրամայողների օրինակին՝ սկսեցին բոլոր անկյուններում թմբկահարել շեկի այդ պատմովթյունը, հավաստելով, որ քաղաքային գանձարանի պակասորդի պատասխանատվությունը հիմնականում ընկնում է Քառիկերվուղի վրա: Մոլենհառւերը առաջին իսկ հայցքը նետելով Քառիկերվուղի վրա, հասկացավ, թե ինչպիսի ուժեղ մարդու հետ գործ ունի: Քառիկերվուղը նվազագույն երկյուղ չցուցաբերեց: Սովորականի պես հանգիստ ու բարձ-

կիրթ, նա հայտարարեց, որ սովորություն ուներ քաղաքային գանձարանից դրամ փոխ առնել ցածր տոկոսով, որ բորսայի խումապը խստ մեծ հարված է հասցրել իրեն և ներկա պահին ինքը հնարավորություն չունի վերադարձնելու պարտքը:

— Եշուկներ են հասել իմ ականջին, մի'ստր Մոլեն-Հառուեր, — ասում էր նա, — որ պատրաստվում են գործ հարուցել իմ դեմ, որպես գանձապետի արարքի մասնակցի: Ես այնուամենայնիվ հույս ունեմ, որ քաղաքը չի դիմի այդ միշտցառմանը, և դուք ձեր ազդեցությամբ կկանխեք այդ քայլը: Իմ գործերը քնավ էլ վատ դրության մեջ չեն և դրանք վերջանականապես կարգի բերելու համար ինձ պետք է մի քիչ ժամանակ: Ես իմ պարտատերերին առաջարկում եմ դոլլարի գիմաց հիսուն ցենտ կանխիկ և մնացած պարտքը մարելու համար էլ մեկ, երկու ու երեք տարվա ժամկետով մուրհակներ: Իսկ ինչ վերաբերում է այն փոխառությանը, որ վերցրել եմ քաղաքային գանձարանից, ապա եթե մենք որևէ համաշայնության գանք, ես դոլլարի դիմաց կտամ մի դոլլար և կինդրեմ միայն մի փոքր հետաձգում: Արժեթղթերի կուրսը ինչպես դուք էլ հասկանում եք, պետք է բարձրանա և, եթե շխոսենք իմ արդեն ունեցած վնասների մասին, ես դարձյալ ուտքի վրա կմնամ: Որքան ինձ հայտնի է, բանը բավական առաջ է գնացել: Թերթերն ուզած բոպեին կարող են աղմուկ բարձրացնել, եթե նրանց բերանը չփակեն այն անձինք, ովք քեր նրանց տնօրենն են: — Քառուիերվուդը արտահայտիչ հայացքով նայեց Մոլենհառուերին: — Եթե այս գործը քննելիս ինձ հաջողվեր քիչ թե շատ հեռու մնալ, ապա, իհարկե, շարատավորված անունով ես շուտով ոտքի կկանգնեի: Այդպես ձեռնտու կլիներ և՛ քաղաքի համար, որովհետև այն ժամանակ ես անպայման լրիվ կմարեի իմ պարտքը:

Նա ժպտաց իր ամենահաճելի և ամենաշողոմ ժպիտով: Առաջին անգամ նրան տեսնող Մոլենհառուերի վրա նա անպայման տպավորություն գործեց: Սա հետաքրքրությամբ նայում էր ֆինանսիսաների աշխարհից գուրս եկած երիտասարդ Կավճին: Եթե Քառուիերվուդի առաջարկությունը ընդունելու թևկուգ նվազագույն հնարավորություն լիներ և թեկուզ նվա-

զագույն հույս, որ փողերն, իսկապես, կվերադարձվեն և Քառափերվուղը կրկին ոտքի կկանգնի մոտ ապագայում, Մոլենհառուերը կարգին կմտմտար իր պատասխանը: Զէ՞ որ այդ դեպքում կարելի էր հույս ունենալ, որ Քառափերվուղը իր անվանը կփոխանցի այն, ինչ կկարողանա փրկել իր ունեցվածքից: Սակայն ստեղծված հանգամանքներում համարյա թե հավանականություն չկար, թե նա երեսէ ոտքի կկանգնի: Մոլենհառուերը լսել էր, որ իբր «Քաղաքային ինքնավարությանն օգնող ընկերությունը» շարժվել է և արդեն ձեռնամուխ է եղել, թե՝ պատրաստվում է ձեռնամուխ լինել հետաքննության: Իսկ եթե նա ձեռքը դնի այդ գործի վրա, ապա անտարակույս կհասցնի մինչև վերը:

— Գիտեք ինչ, մի՛սոր Քառափերվուղ, — սիրալիր շեշտով պատասխանեց նա, — ամբողջ ցավն այն է, որ գործը շատ է առաջ գնացել և փաստորեն իմ ազդեցության ոլորտից դուրս է: Ես ոչ մի առնչություն չունեմ այդ գործի հետ: Բայց եթե ես ճիշտ հասկացա, ձեզ անհանգստացնում է ոչ այնքան գանձարանից վերցրած հինգ հարյուր հազար դոլլարի հարցը, որքան վաթսուն հազարի այն շեկը, որ այս քանի օրն եք ստացել: Միստր Սթիները հավաստում է, որ դուք պաօրինաբար եք տիրացել շեկին, և ամեն կերպ նշավակում է ձեզ: Այդ մասին արդեն իմացել է քաղաքապետը և ուրիշ պաշտոնական անձինք, և, իհարկե, բացաված չէ, որ նրանք այս կամ այն քայլին կդիմեն: Ես գործին իրազեկ շեմ:

Մոլենհառուերը խոսում էր բացահայտորեն ոչ անկեղծ: Դա երեսում էր այն լուսնից, որ նա խոսուափողաբար հիշատակից իր ձեռքին խաղալիք հանդիսացող քաղաքապետին: Քառափերվուղը առաջին իսկ խոսքերից հասկացավ, սաստիկ զղայնացավ, բայց տիրապետեց իրեն ու շարունակեց բարեկիրթ, հարդալիր շեշտը:

— Ես վաթսուն հազար դոլլարի շեկն ստացել եմ իմ անվճարունակությունը հայտարարելու նախօրյակին, — շինծու անկեղծությամբ պատասխանեց նա, — այդ ճիշտ է: Բայց դա նրա համար էր, որ վճարեմ միստր Սթիների կարգադրությամբ գնված սերտիֆիկատների համար, և գումարն ինձ

Հասնում էր օրինականապես: Դա պետք էր ինձ, ուստի նպահանջեցի: Ի՞նչ օրինախախտում է արված:

— Ոչ մի օրինախախտում չկա, եթե գործառնությունը կատարված է բոլոր ձևականությունների պահպանմամբ, — պատրաստակամ համաձայնեց Մոլենհառուերը: — Բայց չէ՞ որ, ինչքան ես եմ հասկանում, այդ սերտիֆիկատները ձեռք էին բերված մարման ֆոնդի համար, մինչդեռ դրանք չեն մուժվել այնտեղ: Ինչպես եք դուք բացատրում այդ:

— Պարզ անփութությամբ, — ամենամիամիտ շեշտով և նույնպիսի պատրաստակամությամբ, ինչպես Մոլենհառուերն էր արել, պատասխանեց Քառուիերվուդը: — Սերտիֆիկատներն այնտեղ կավանդրվեին, եթե ստիպված չլինեի միանգամայն հանկարծակի անվճարունակ հայտարարել ինձ: Ես ի վիճակի չէի անձամբ հետեւելու ամեն ինչին: Ասենք, մենք չենք էլ ունեցել այդպիսի կարգ, որ սերտիֆիկատներն անմիջապես հանձնենք մարման ֆոնդին: Եթե դուք հարցնեք միստր Մթիներին, նա այդ կհաստատի:

— Ահա՝ թե ինչ, — ասաց Մոլենհառուերը, — Մթիների հետ ունեցած խոսակցությունից ես ուրիշ տպավորություն ստացա: Այսպես թե այնպես դրանք մարման ֆոնդում չկան, և օրենքի տեսակետից դա էական տարրերություն է առաջացնում: Ես այդ գործում ամեննեին շահագրգուված չեմ, կամ համենայն դեպս ոչ ավելի, քան ամեն մի հանրապետական Ըստ գորթյան չեմ տեսնում ձեզ օգնելու որևէ հնարավորություն: Զեր կարծիքով ինչպես կարող է արտահայտվել իմ միջամտությունը:

— Չեմ կարծում, թե դուք կարողանայիք որևէ բան անել ինձ համար, մի՛ստր Մոլենհառուեր, — բավական չոր պատասխանեց Քառուիերվուդը, — թերես միայն այն, որ ցանկանաք բոլորովին անկեղծ լինել ինձ հետ: Թէ՞ որ ես նորելուկ չեմ Ֆիլադելֆիայի քաղաքական գործերում: Եվ ինձ հայտնի են դրանք շարժող ուժերը: Ես կարծում էի, որ դուք կարող եք արմատապես կտրել դատական կարգով ինձ հետապնդելու այդ մտադրությունը և կարող եք վերստին ոտքի կանգնելու ժամանակ տալ ինձ: Այդ վաթսուն հազար դոլարի համար

Ես ավելի պատասխանատվության շեմ ենթարկվի, քան այն հինգ հարյուր հազարի համար, որ ստացել եմ գանձարանից, գուցե և ավելի քիչ: Ես շեմ այդ խումապը հարուցել բորսայում: Ես շեմ հրկիզել Զիկագոն: Միստր Սթիներն ու նրա բարեկամները պակաս օգուտ շեն քաղել ինձ հետ ունեցած գործարարական հարաբերություններից: Մի՞թե քաղաքին մատուցած իմ բոլոր ծառայություններից հետո ես իրավունք չունեի ինձ փրկելու փորձ անել. մի՞թե ես չէի կարող հույս դնել քաղաքային վարչության որոշ ներողամտության վրա, քանի որ այնքան օգուտ եմ տվել նրան: Ես եմ համահավասար պահել քաղաքային փոխառության կուրսը: Դալով այն դրամներին, որ փոխ է տվել ինձ միստր Սթիները; ապա նա գանգատվելու տեղիք չունի, քանի որ այդ գործից ավելի քան բարձր տոկոս էր ստանում:

— Միանգամայն ճիշտ է,— համաձայնեց Մոլենհաուերը, շեշտակի նայելով Քառիկերվուդին և ակամա հարգանք զգալով՝ այդ մարդու ինքնատիրապետման և նրա լրջմտության նկատմամբ: — Ես շատ լավ եմ հասկանում. թե ինչպես եղավ այդ ամենը, մի՛սար Քառիկերվուդը: Միստր Սթիներն անկասկած շատ բան ձեզ է պարտական, ինչպես նաև ամբողջ քաղաքային ինքնավարությունը: Ես շեմ շոշափի այն հարցը, թե ինչպես պետք է վարվի քաղաքապետությունը: Ես գիտեմ, որ դուք կամա թե ակամա ընկել եք խիստ խճճված պատմության մեջ և որոշ շրջանների հասարակական կարծիքը շափազանց գրգռված է ձեր դեմ: Ես անձամբ շեմ կանգնի ո՛չ այս և ո՛չ էլ այն կողմը, և եթե չստեղծվեր այն դրությունը, երբ արդեն ոչինչ չի կարելի անել, ապա ես չէի տուարկի ձևի հնարավոր օդնություն մատուցելու դեմ: Իսկ հիմա ի՞նչ կարելի է անել: Հանրապետական կուսակցությունն ընտրությունների նախօրյակին խիստ ծանր դրության մեջ ընկավ: Եվ դրա պատասխանատվությունը, թե կուզե ակամա, ընկնում է ձեզ վրա, միստր Քառիկերվուդը: Միստր Բաթլերը, ինձ անհայտ պատճառով, շափազանց անբարյացակամ է տրամադրված ձեր դեմ: Մինչդեռ միստր Բաթլերը մեզ մոտ մեծ ազդեցություն ունի...

«Կարո՞ղ է պատահել, որ Բաթլերը հայտնած լինի սը-
րանց, թե ինչ վիրավորանք եմ հասցրել իրեն», — մտածեց
Քառուիկերվուղը, բայց իսկույն էլ ետ մղեց այդ միտքը: Շատ
էր անհավանական այդ ենթադրությունը:

— Ես ամեն կերպ կարեկցում եմ ձեզ, միստր Քառու-
իկերվուղ, բայց միակ բանը, որ կարող եմ խորհուրդ տալ
ձեզ, այս է. խոսեցեք միստր Բաթլերի ու միստր Սիմփոնի
հետ: Եթե նրանք ձեզ օգնելու որևէ միջոց գտնեն, ես հաճու-
թյամբ կիմանամ նրանց: Ճիշտն ասած, ես ոչ մի այլ բան
գտնել չեմ կարող: Ես որևէ շափով զգալի ազդեցություն չու-
նեմ քաղաքի գործերի վրա:

Իրականում Մոլենհաուերը սպասում էր, որ այդ միջո-
ցին Քառուիկերվուղը կառաջարկի իրեն իր արժեթղթերը: Բայց
նա այդ բանը շարեց և միայն ասաց.

— Շատ շնորհակալ եմ ձեզնից, միստր Մոլենհաուեր,
ձեր սիրալիք ընդունելովթյան համար: Հաճությամբ հավա-
տում եմ, որ դուք կօգնեիք ինձ, եթե հնարավորություն ունե-
նայիք: Իսկ հիմա ես ստիպված եմ ինքս պայքար մղել,
իհարկե, իմ ուժերի ներածին շափ: Թույլ տվեք հրաժեշտ
տալ ձեզ:

Քառուիկերվուղը վեր կացավ և դուրս գնաց: Հիմա միայն
նա հասկացավ, թե որքան անհույս էր իր փորձը:

Այդ միջոցին նկատելով, որ գանձարանի պատմության
շշուկները թեև աճում ու տարածվում են, բայց ըստ երկույթին
ոչ ոք չի պատրաստվում որևէ քայլ կատարել դրա պարզա-
բանման համար, միստր Սքելտոն Ուիթթը՝ «Քաղաքացին ինք-
նավարությանն օգնող ընկերության» նախագահը, վերջ ի-
վերջո ստիպված եղավ (բնավ էլ ոչ իր կամքին հակառակ)՝
Մարքեթ փողոցի սրահում գումարել Ֆիլադելֆիայի տասը
քաղաքացիներից կազմված կոմիտեի (որի նախագահն էր)
նիստ և զեկուցել, թե ինչպես է տեղի ունեցել Քառուիկերվուղի
անանկությունը:

— Ես կարծում եմ, ջենտլմեննե՛ր, — հայտարարեց
նա, — որ մեր կազմակերպությանը առիթ է ներկայանում
մատուցելու քաղաքին ու նրա բնակիչներին ոչ փոքր ծառա-

յոսթյուն և այդպիսով արդարացնել այն անունը, որ ընտրել
ենք. պետք է որքան կարելի է մանրակրկիտ հետաքննություն
կատարել ու պարզել այդ գործի բոլոր գաղտնիքները: Դրանքից
հետո միայն, հենվելով փաստերի վրա, վճռականապես պա-
հանջել, որ մի անգամ ընդմիշտ վերջ դրվի այն այլանդակ
շարաշահումներին, որ տեղի են ունեցել այս դեպքում: Ես
գիտեմ, որ դա հեշտ խնդիր չէ: Հանրապետական կուսակցու-
թյունը և նրանք, որոնց վրա է նա հենվում քաղաքում ու նա-
հանգում, իհարկե, մեր դեմ կլինեն: Նրա պարագլուխները,
անշուշտ, կվախենան աղմուկից. դա կիանգարի ընտրու-
թյունների ժամանակ նրանց ցուցակի հաղթանակին, և ան-
տարբեր չեն դիտի մեր ծավալած գործունեությունը: Բայց
եթե մենք բավականաշափ տոկունություն հանդես բերենք,
ապա դրանով մեծ գործ արած կլինենք: Մեր հասարակական
կյանքում ոչ ամեն ինչ բարեհաջող է: Զի կարելի թույլ տալ,
որ իրավունքի սկզբունքը անվերջ ոտնակոխ լինի: Ժամանակն
է, որ սովորենք հարգել այն: Այդ պատճառով էլ ես այս
հարցը դնում եմ ձեր բարեհաճ քննությանը:

Միստր Ռիթը նստեց իր տեղը, և կոմիտեն անմիջապես
զբաղվեց հարցի քննությամբ: Նախ և առաջ որոշվեց կազմել
մի հաճախաժողով՝ (հետագայում այդպես էր ասում կոմիտեի
պաշտոնական հաղորդագրությունը) «հետաքննելու այն
տարօրինակ շշուկները, որոնք պատվում էին քաղաքում ու
արատավորում քաղաքային ինքնավարության ամենակարևոր
բաժիններից մեկը»: Հանձնաժողովին առաջարկվեց զեկուցել
հետաքննության արդյունքների մասին կոմիտեի նիստում,
որը նշանակվեց հաջորդ երեկո: Երկու նիստերի միջև ընկած
մի օրում կոմիտեի շորս անդամ՝ շորսն էլ ֆինանսական գոր-
ծի խոշար զիտակիներ, կատարեցին իրենց վրա կրված խնդիրը
և ներկայացրին մանրակրկիտ կազմված մի հաշվետվություն,
որը թեև ճշգրտութեն չէր համապատասխանում փաստերին,
բայց այնուամենայնիվ մոտ էր ճշմարտությանն այնքան,
որքան կարելի է մոտենալ դրան այդքան կարճ ժամանակա-
ժիշտում:

«Ինչպես պարզվեց (ասված էր այդ հաշվետվության մեջ

այն ազդու խոսքերից հետո, որոնք բացատրում էին; թե ինչ նպատակով կազմվեց Հանձնաժողովը, քաղաքային գանձարանում շատ տարիներ կիրառվել է այսպիսի մի սովորույթ՝ քաղաքային խորհուրդը հաստատված փոխառությունների թողարկման իրացումը Հանձնարարել է որևէ բորսայական միջնորդի. սա էլ, որպես կանոն, փոքր ժամանակամիջոցներով, սովորաբար ամեն ամսի մեկին, հաշիվ է տվել քաղաքի գանձապետին, թե ինչ գումար է ստացված պարտատոմսերը ծախելուց: Տվյալ դեպքում այդ միջնորդը եղել է Ֆրենկ Ա., Քառուկիերվուրդը, որի հետ ունեցած հարաբերություններում գանձապետությունն ըստ երեսութին չի հարգել անգամ այդ արատավոր ու նույնիսկ ոչ գործարար սիստեմը: Վերջին օրերի դեպքերը՝ Զիկագոյի հրդեհը, դրամական բորսայում նրա առաջացրած արժեթղթերի անկումը և դրան հաջորդած Ֆրենկ Ա. Քառուկիերվուրդի սնանկությունը, այն աստիճան են խճճել գործերը, որ Հանձնաժողովը ի վիճակի չէր ճշգրտորեն սահմանելու. կիրառվել է արդյոք որևէ կանոնավոր հաշվետվություն: Սակայն գատելով այն բանից, թե ինչպես է միստր Քառուկիերվուրդը քաղաքային փոխառության պարտատոմսերը խաղացրել, ավանդագրելով դրանք բանկերում և այլն, կարելի է եզրակացնել, որ նա ոչ ոքի հաշիվ չի տվել և որ նրա տրամադրության տակ միշտ եղել են քաղաքին պատկանող հարյուր հազարներով կանխիկ գումարներ, ինչպես նաև՝ արժեթղթեր, որոնց միջոցով կատարել է ֆինանսական տարբեր գործառնություններ: Ցավոք սրտի, մենք դեռ հնարավորություն չենք ունեցել մանրամասնորեն իմանալ, թե ինչ հետեւանքների են հասցրել այդ գործառնությունները:

Դրանցից մի քանիսը եղել են այսպես. մեծաքանակ պարտատոմանք գրավադրվել են նախքան թողարկվելը, ըստ որում փոխատուին հավաստիագիր է տրվել գանձարանի գրասենյակից առ այն, որ համապատասխան քանակությամբ պարտատոմանք օրդերը գրված է ու ձեւակերպված: Այսպիսի մեթոդներ ըստ երեսութին կիրառվել են արդեն բավական վաղուց, և քանի որ հաղիվ թե այդ կարող էր արվել առանց քաղաքային գանձապետի գիտության, ապա մնում է ենթա-

դրել, որ նրա ու միստր Քառուփերվուղի միջև գոյություն է ունեցել մի հանցապարտ համաձայնություն, որի նպատակն է եղել քաղաքի միջոցների ապօրինի օգտագործումը անձնական շահի համար:

Այնուհետև քաղաքը բավականաշափ տոկոս է վճարել վերոհիշյալ գրավադրման գործողությունների համար, իսկ այդ ձեռվ ստացված փողերը մնացել են գանձապետի հրավիրած բորսայական միջնորդի ձեռքը, ուստի և քաղաքին ոչ մի օգուտ չեն տվել: Քաղաքի կարճատես պարտավորագրերի գծով վճարումները ժամանակավորապես դադարեցվել են, իսկ այն փողերով, որոնք պետք է գտնվեին քաղաքային դրամարկղում, միստր Քառուփերվուղի խոշոր պարտիաներով ու ցածր գներով գնել է այդ պարտավորագրերը: Դրա հետեւ վանքով քաղաքային փոխառության պարտատոմսերի օրինական օրդերներ ունեցողները չեն կարողացել ստանալ այն, ինչ հասնում էր նրանց, քաղաքային գանձարանն է' լ ավելի մեծ վնաս է ունեցել, քան ինքնին հինգ հարյուր հազար դոլարից անցնող պակասորդն է: Ներկայումս քաղաքային գանձապետի հաշվետվությունը ստուգում է մի էքսպերտ— հաշվապահ, և մի քանի օր հետո ճշգրտորեն կպարզվի, թե ինչպես են արվել այդ գործառնությունները: Հույս ունենանք, որ գործի հրապարակումը վերջ կդնի այդպիսի արատավոր մեթոդներին»:

Հաշվետվությանը կցված էր հասարակական վստահությունը շարաշահելուն վերաբերող քրեական օրենսդրության հոդվածի պատճենը: Այնուհետև ասված էր, որ եթե հարկատուներից ոչ մեկը չի ցանկանա դատական գործ հարուցն այս հանցագործությանը մասնակցած անձանց գեմ, ապա Հանձնումուսում իր պարարի է համարում ինքն ստանձնել այդ, հաշվի շատներով այն, որ նման գործողությունները հաղիւլ թե մանաւմ են իր իրավասության մեջ:

Հաշվետվությունն անմիջապես հանձնվեց թերթերին: Աւ թեկ Քառուփերվուղի և հանրապետական կուսակցության պարագայինները արդեն ամեն ինչին պատրաստված էին, այնուամենայնիվ դա մեծ հարված եղավ՝ նրանց համար: Սթիները սարսափից գլուխը բոլորովին կորցրեց: Սառը քրտինք

պատեց նրան, երբ նա տեսավ մի փոքրիկ հողված, որ կրում
էր «Քաղաքային ինքնավարությանն օգնող քաղաքացիների
ընկերության նիստը» զուսպ վերնագիրը: Բոլոր թեր-
թերը այնքան սերտորեն էին կապված Ֆիլադելֆիայի
քաղաքական ու ֆինանսական կառավարողների հետ,
որ չին համարձակվում բացահայտորեն մեկնաբանություն-
ներ անել: Խմբագիրներն ու հրատարակիչները մոտ մի շա-
բաթ արդեն հասու էին եղել գործի մանրամասնություններին,
սակայն Մոլենհաուերից, Սիմֆոնից ու Բաթլերից հրաման
էր ստացվել՝ մեծ աղմուկ շբարձրացնել. իբր թե դա խիստ
աննպաստ կանդրագառնա քաղաքի գործերի վրա, վնաս
կհասցնի առևտորին և այլն: Զպե՛տք է արատավորել Ֆիլա-
դելֆիայի պատիվը: Մի խոսքով, հի՞ն պատմությունը:

Նախ և առաջ հարց ծագեց, ո՞վ է գլխավոր հանցադոր-
ծը. քաղաքի գանձապե՞տը, բորսայական միջնո՞րդը, թե՞
գուցե երկուսն էլ Փաստացի որքա՞ն փող է անհետացել դան-
ձարանից, ո՞ւր է գնացել այդ փողը, ո՞վ է Ֆրենկ Ալզերնոն
Քառիկերվուդը և ինչո՞ւ չի ձերբակալված. ինչպե՞ս է նա կա-
րողացել այդ աստիճան շահել քաղաքի ֆինանսական հաս-
տատությունները գլխավորող անձանց վստահությունը: Ու
թեև այն ժամանակ դեռ չէր եկել կյանքն ու առանձին անձնա-
վորությունների արարքները եռանդագին մեկնաբանող այս-
պես կոչված «դեղին մամուլի» դարաշրջանը, այնուամե-
նայնիվ տեղական լրագրերը, անգամ նրանք, որոնց ձեռք ու
ոտքը կապել էր քաղաքական ու ֆինանսական մագնատների
կամքը, հնարավոր շհամարեցին լուսավոր անցնել այս գոր-
ծի կողքից:

Լույս տեսավ անխուսափելի առաջնորդողը, որը հանդի-
սավոր ու խիստ զուսպ գույներով պատմում էր, թե ինչպիսի՞-
անարգանք ու անպատվություն կարող է նետել մի մարդ մի
մեծ քաղաքի և քաղաքական ազնիվ կուսակցության վրա:

Ահա այդ ժամանակ էլ գործի դրվեց այն պլանը, որ
թիւել էին Մոլենհաուերը, Բաթլերն ու Սիմֆոնը «հոռեգույն
դեպքում» կիրառելու համար և որի էությունը հետևյալն էր:
ամբողջ հանցանքը բարդելով Քառիկերվուդի վրա, դրանով

իսկ, թեկուզ առժամանակ, անարգանքի բիծը սրբել հանրապետական կուսակցության վրայից։ Զվարճալի էր տեսնել, թե ինչպիսի՝ պատրաստակամությամբ բոլոր թերթերը և նույնիսկ «Քաղաքային ինքնավարությանն օգնող քաղաքացիների ընկերությունը» համաձայնեցին, որ գլխավոր, եթե ոչ միակ, հանցավորը Քառուփերվուդն է։ Իհարկե, Սթիները փոխառություն էր արել նրան, ավելին, նրան էր հանձնել քաղաքային փոխառությունների իրացումը, բայց այնուամենայնիվ, շգփտես ինչու, համարում էին, որ Քառուփերվուդը լկտիորեն իշարն էր գործադրել գանձապետի վստահությունը։ Այնուհետև հաջորդում էին անորոշ ակնարկություններ, թե նա վաթուն հազար դովարի շեկ է ստացել այն պարտատուժների համար, որոնք մարման ֆոնդում շեն եղել. ոչ ոք չէր սիրու անուամ կտրականապես հաստատել դա, նախքան ճշգրիտ տեղեկություններ ստանալը, որովհետև թե՛ թերթերը, թե՛՛ հետաքննություն կատարող հանձնաժողովը գիտեին, որ նահանգի օրենքները խիստ պատիժ են նախատեսում գրպարտության համար։

Ժամանակը պատեհ համարելու պես քաղաքապետարանը մամուլին հանձնեց մի «ազնվագույն» նամակագրություն։ Մի նամակով քաղաքապետ Զեյկոր Բորչարդը պահանջում էր, որ միստր Զորշ Սթիները անհապաղ բացատրի իր տաօրինուկ վարքը, մյուսն էլ միստր Սթիների պատասխանն էր միստր Բորչարդի հարցումին։ Հանրապետական կուսակցության պարագլուխները կարծում էին, որ դա լավագույն կերպով կապացուցի կուսակցության ձգտումը՝ մաքրել իրենց շարքերը ամեն տեսակ մութ անձնավորություններից և միաժամանակ դործու կձգձգի մինչև ընտարաւթյունների վերջանալը։

ՖԻԼԴԵԼՖԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԳՐԱՍՆՅԱԿ
18 հոկտեմբերի, 1871 թ.

Քաղաքի գանձապետ
միստր Զորշ Սթիներին

ՄԵԾԱՎԱԹԻ'Վ պարոն

Տեղեկություններ ենք ստացել, որ քաղաքային փոխառության մի պատկառելի ծրար, որ բաց եք թողել դուք քաղաքային գանձարանի կողմից և, ենթադրում ենք, քաղաքապետի թույլատրությամբ, ծախելու համար, դուրս են եկել Զեր վերահսկողությունից, իսկ նշված պարտատոմսերի վաճառքից ստացված գումարները շեն մուծված գանձարան:

Այնուհետև մեզ հայտնի է դարձել, որ քաղաքին պատկանող մի խոշոր գումար ընկել է մեկ, գուցե և մի քանի բորսայական միջնորդների կամ բանկիրների ձեռքը, ովքեր գրասենյակ ունեն երրորդ փողոցում, և որ հիշյալ բորսայական միջնորդները կամ բանկիրները ֆինանսական դժվարին կացության մեջ են, որի հետևանքով կարող է էական վնաս հասցվել քաղաքի շահերին:

Ուստի խնդրում ենք անհապաղ հաղորդել. Համապատասխանո՞ւմ են արդյոք այս տեղեկությունները ճշմարտության, որպեսզի, եթե այս ցավալի փաստերը հիրավի տեղի են ունեցել, քաղաքապետը կարողանա ժամանակին ձեռք առնել այն միջոցները, որ դրված են նրա վրա ըստ պարտականության ու պարտավորության:

Հարգանաց հավաստիքով՝
Ձեյկոր Բորչարդ
Ֆիլադելֆիայի քաղաքապետ
ՖԻ.ԱԴԵԼՅԻՒ.ՅԻ.ԳԱ. ԳԱ.ՆՉԱՊԵՏԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հարգանաց հավաստիքով՝
Ձեյկոր Բորչարդ
Ֆիլադելֆիայի քաղաքապետ

Հարգարժան
Ձեյկոր Բորչարդին

ՄԵԾԱՎԱԹԻ'Վ պարոն

Սույն գրությամբ հաստատում եմ Զեր այս ամսի 18 թվակիր նամակի ստանալը և խիստ ցավում եմ, որ ներկա պահին ի վիճակի շեմ ներկայացնելու Զեր պահանջած տեղեկությունները: Ցավոք սրտի, ես պետք է հաստատեմ, որ քաղաքային գանձարանը հիրավի ապրում է դժվարություններ, որոնք բխում են այն բորսայական միջնորդի պարտազան-

ցումից, որը մի քանի տարի է, ինչ իրացնում էր քաղաքային փոխառությունները։ Հայտնում եմ նաև Զեղ, որ այդ բանը հայտնաբերվելու պահից ես շեմ դադարել և ոչ էլ դադարում եմ ամեն ջանք թափել կանխելու կամ գոնե նվազեցնելու համար քաղաքին սպառնացող կորուստներ։

Խորին Հարգանոք՝
Զորչ Սթիներ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

Քաղաքի գանձապետ
միստր Զորչ Սթիներին

ՄԵծապատի'վ պարոն

Ստեղծված հանգամանքների բերումով անհրաժեշտ ենք համարում շեղյալ համարել քաղաքային փոխառություններ իրացնելու Զեղ տրված լիազորության այն մասը, որը տակավին իրացված չէ։ Թողարկման համար թույլատրված, սակայն դեռ շթողարկված պարտատոմսեր ստանալու բոլոր դիմումները անհրաժեշտ է ուղարկել մեր գրասենյակին։

Հարգանաց Հավաստիքով՝
Զեյկոք Բորշարդ
Ֆիլադելֆիայի քաղաքապետ

Միստր Զեյկոք Բորշարդը գրե՞լ էր արդյոք այն նամակները, որոնց տակ կար նրա ստորագրութունը։ Ո՞չ, չէր գրել։ Գրանու կազմել էր էրիներ Անգոլիեկո միստր Մայենհաուերի դրասինյատկում, և միստր Մորենհաուերը, ծանօթանալով դըրանց բովանդակությանը, նկատեց, որ «մերեւ լավ կլինի, նույնիսկ շատ լավ»։

Իսկ Սթիները՝ Ֆիլադելֆիա քաղաքի գանձապետը, գրե՞լ էր արդյոք իր խիստ դիվանագիտական պատասխանը։ Ո՞չ, չէր գրել։ Միստր Սթիները կատարելապես պարտասուն վիճակում էր և մի անգամ էլ, լոկանք ընդունելիս, նույնիսկ լաց հղավ։ Այդ նամակը նույնպես գրել էր էրներ Սենգսթեկը և

միայն տվել էր նրան ստորագրելու։ Իսկ միստր Մոլենհառերը նամակն ուղարկելուց առաջ կարդալով՝ գտավ, որ զա կազմված է «ինչպես պետք է»։ Հիմա այնպիսի ժամանակ էր, որ բոլոր առնետներն ու մկները թաքնվել էին իրենց բներում, որովհետև խավարից իր հսկայական, բոցարձակ աշխերով նրանց էր նայում մի գաղան՝ հասարակական կարծիքը, իսկ գործել համարձակվում էին միայն ամենածեր, ամենափառուն առնետները։

Այդ նույն ժամանակամիջոցում Մոլենհառերը, Բաթլերն ու Սիմֆոնը մի քանի օր խորհրդակցում էին շրջանային դատախազ միստր Փեթթիի հետ այն միջոցառումների մասին, որոնք նպաստելով Քառուիերվուդի պաշտոնական մեղադրանքին՝ Սթիներին հնարավորություն տային ջրից չոր գուրս գալու; Ինքնին հասկանալի է, որ Բաթլերը պնդում էր Քառուիերվուդի գեմ դատական հետապնդություն սկսելու վրա Փեթթին գտնում էր, որ Սթիներին չքմեղացնել չի կարելի, քանի որ Քառուիերվուդի մատյանները լի են նրա համար քաղաքային երկաթուղու բաժնետոմսեր ձեռք բերելու գրանցումներով։ Գալով Քառուիերվուդին... «Թույլ տվեք մտածեմ», — ասաց նա: Այնուհետև նրանք քննարկում էին, թե պետք չ։ արդյոք կալանավորել Քառուիերվուդին և, եթե հարկ լինի դատել, որովհետև կալանավորման փաստն ինքնին հասարակության աշխում կլինի ոչ միայն նրա հանցավոր լինելու, այլև միաժամանակ քաղաքային ինքնավարության ազնիվ վրդովմունքի ապացույց, և այդպիսով մինչև ընտրությունների վերջանալը հասարակայնության ուշադրությունը կշեղի այն կասկածելի գերից, որ տվյալ դեպքում կատարել էր հանրապետական կուսակցությունը։

Այդ բոլոր բանակցությունների հետևանքը եղավ այն, որ 1871 թ. հոկտեմբերի 26-ի երեկոյան Մոլենհառերը քաղաքապետի մոտ ուղարկեց քաղաքային ինքնավարության նախագահ էղուարդ Սթրոբիկին՝ պաշտոնական հայտարարություն անելու, ըստ որի բորսայական միջնորդ Ֆրենկ Քառուիերվուդը, որ հրավիրված էր քաղաքային գանձապետի կողմից փոխառությունն իրացնելու, մեղադրվում էր ուրիշների

դրամը յուրացնելու ու վատնելու մեջ։ Որևէ գեր չէր խաղում
այն, որ այդպիսի մեղադրանք ներկայացված էր նաև Զորչ
Սթիներին։ Քավության նոխազ էր ընտրված Քառուփերվուդը։

Գ. Ա. Բ. Խ. ԽХХIV

Այն զարմանալի հակապատկերը, որ այդ ժամանակ ներ-
կայացնում էին Քառուփերվուդն ու Սթիները, աղժանի է մի
փոքր ավելի նկարագրվելու Սթիների գեմքը դարձել էր մոխ-
րագորշ, շրթունքները կապտել էին։ Քառուփերվուդը, չնայած
հնարավոր բանտարկության և այն տխուր մտքերին, թե ինչ-
պես կընդունեն այդ բանը ծնողները, կինը, զավակները, ար-
հեստակիցները և բարեկամները, մնում էր անխոռվ ու հա-
վասարակշռված, որ հետեանք էր նրա բացառիկ կայուն ոգու։
Աղեաների այդ հողմում նա ոչ մի վայրկյան չէր կորցնում
զգաստ մտածողությունն ու արհությունը։ Խիզճը, որ կրծում
է մարդուն ու հաճախ էլ հասցնում կործանման, երբեք չէր
անհանգստացնում Քառուփերվուդին։ Նրա համար գոյություն
շուներ մեղք հասկացությունը։ Նրա յուրօրինակ տեսակետից՝
կյանքը միայն երկու կողմ ուներ՝ ուժ և թուկություն։ Արդար
ու անարդար ուղինե՞ր։ Այսպիսի տարբերություն անծանոթ
էր նրան։ Նրա պատկերացմամբ այդ ամենը մետաֆիզիկա-
կան, վերացական հասկացություններ էին, որոնց վրա
մտածելու ցանկություն շուներ նաև Զար ու բարի։ Զիկը խս-
կաններ են դրանք, որ տերտերները հնարել են վաստակի
համար։ Ինչ վերաբերում է հասարակական բարեհաճ վերա-
բերունքին կամ ընդհակառակը՝ զուրս մղվելուն, որին հա-
ճախ է ենթարկվում փորձանքի մեջ ընկած մարդը, ապա,
ճիշտն ասած, ի՞նչ բան է զուրս մղվել։ Մի՞թե երբենէ իրեն
կամ իր ծնողներին ճամփա արլած էր մուտք գործելու
ընտիր հասարակության մեջ։ Ո՞չ ի՞նկ չէ՞ որ բնավ էլ
բացառված չէր, որ այդ փորձանքներն անցնելուց հետո
հասարակությունը դարձյալ կճանաշի իրեն։ Թարոյակա-
նություն և անբարոյականություն։ Մաքո՞ւր ցնդաբանու-

Թյուն: Ուժու թուլությո՞ւն, ա՞յլ, դա ուրիշ բան է: Եթե մարդը ուժեղ է, միշտ էլ կարող է պաշտպանել իրեն և ստիպել ուրիշներին, որ հաշվի նստեն իր հետ: Իսկ եթե մարդը թուց է, պետք է փախչի թիկունք, ծլկի կրակի գծից: Իսկ Քառու փերվուղն ուժեղ էր, գետեր այդ բանը և միշտ էլ հավատում էր իր երջանիկ աստղին: Կարծես թե մեկի ձեռքը (նա չեր կարողանա ասել հատկապես ում, և դա մետաֆիզիկայի ասպարեզից միակ բանն էր, որը հետաքրքրում էր նրան) միշտ եամեն ինչում օգնում էր նրան, ամեն ինչ հարթում, թեկուզե ամենավերջին բոպեին: Այդ ձեռքը զարմանալի հնարավորություններ էր բացում նրա առաջ: Ինչո՞ւ նա օժտված էր այդպիսի խորաթափանցությամբ, ինչո՞ւ բախտն այնպես ժըպտում էր նրան ֆինանսական գործերում ու անձնական կյանքում: Նա ոչ մի բանով չէր արժանացել դրան, ամենեին չէր ձգտել դրան: Պատահականությո՞ւն. բայց այդ դեպքում ինչպե՞ս բացատրել նրան երեք լրող վստահության զգացողությունը, նրա գործարարական «ներշնչումները», գործելու հանկարծակի ու քանի անգամ փորձած «մղումները»: Կյանքը մի մուլթ ու առեղծվածային խորհուրդ է, բայց ինչէլ լինի, նրա բաղկացուցիչ մասերն են ուժն ու թուլությունը: Ուժը հաղթանակ է տանում, թուլությունը պարտություն կրում: Այժմ նրան մնացել է մի բան. Հույս զնել իր արագ խելամտության, հաշիվների ճշտության ու ճիշտ դատողության վրա, և ուրիշ ոչինչ: Ալդարե, Քառուի կրվությո՞ւնը աշխույժ, համարձակ, փափկասուն ու շքեղ հագնված, բեղերը ոլորած, կոստյումը խնամքով արդուկված, մաքուր ածիլած դեմքին առողջ կարմրություն, կարող էր լինել աննկուն եռանդի ու խիզախության նմուշ:

Նա էլ գնաց Սքելտոն Ուիթի աշխատավայրը և փորձեց շարադրել նրան այդ պատմության մասին ունեցած իր տեսակետը, պնդելով, որ ինքը վարվել էր ճիշտ այնպես, ինչպես իրենից առաջ վարվել էին շատ ուրիշներ: Ուիթը լսեց նրան կասկածամտորեն: Օրինակ՝ նա չէր հասկանում, թե ինչո՞ւ մարման ֆոնդում շկան վաթսուն հազար դոլար գումարով գնված պարտատոմսերը: Նրա վրա տպավորություն շգործեց

Քառակիերվուղի «սովորական իրավունք» վկայակոչությունը։ Միստր Ուիթը, ճիշտ է, համաձայնեց, որ քաղաքական աշխարհին պատկանող այլ մարդիկ ևս Քառակիերվուղից պակաս վաստակ չեն արել և առաջարկեց նրան հանդիս գալ որպես մեղադրության վկա, իսկ Քառակիերվուղը առանց մտածելու մերժեց։

— Ես մատնիչ չեմ, — շիփ-շիտակ հայտարարեց նա միստր Ուիթին։

Սա էլ ի պատասխան միայն ծուռ քմծիծաղեց։

Միստր Բաթլերը, չնայած մոտալուս ընտրություններով մտահոգված լինելուն, ցնծում էր, որովհետև հիմա «ազդանպիտանը» վերջապես ընկել էր ցանցի մեջ, որից շուտ չէր կարող դուրս գալ։ Հայրապետական կուսակցությունը հաջողություն ունենալու դեպքում նկատի ուներ շրջանացին դատախազ Փեթթիի աեղը նշանակել Բաթլերի մարդուն՝ երիտասարդ իռլանդացի Դենիս Շենոնին, որ հաճախ խորհուրդներ էր տվել Բաթլերին իրավաբանական հարցերի վերաբերյալ։ Մյուս երկու պարագլուխները հաճությամբ համաձայնեցին նրա թեկնածությանը։ Այդ խելացի Շենոնը՝ հինգ ոտնաշաբաթ ու տասը մատնաշաբաթ հասակով, աթլետիկ կազմվածքով, գեղեցիկ, խարտյաշ, կապուտաշյա ու կարմրաթշիկ երիտասարդը, խիստ հմուտ ու կրակոտ դատական հոետոր էր և իրավաբան։ Նա շատ էր հպարտանում ծեր Բաթլերի համակրական վերաբերմունքով, որը բարեհանձել էր մտցնել իրեն հանրապետական կուսակցության կողմից պաշտոնները բաշխելու ցուցակի մեջ և խոստացել ընտրվելու դեպքում ուժերի և կարողության ներածին շափ կատարել նրա կամքը։

Սակայն մեզը այդ տակառում հայրապետական կուսակցության համար կար նաև մի դդալ ձյութ, այն է՝ Քառակիերվուղի դատապարավելու դեպքում նույն բախտն սպասում էր նաև Սթիներին։ Հնարավոր չէր, ավաղ, գտնել մի սողանցք, որով քաղաքի գանձապետը կարողանար դուրս պրծնել։ Եթե Քառակիերվուղը հանցավոր էր խարեռությամբ քաղաքին պատկանող վաթսուն հազար դոլարը յուրացնելու համար, ապա Սթիները յուրացը էր հինգ հարյուր հազար։

Դրան սպառնում էր հնգամյա բանտարկություն։ Սթիները կարող էր բացասել իր հանցանքը, ապացուցելով, թե գործել է հաստատված տրադիցիաների ոգով, կարող էր խոսափել իրեն հանցավոր ճանաշելու դառն անհրաժեշտությունից, բայց դա չէր փրկի նրան։ Ինչ կազմություն էլ ունենար երդվալների խոմբը, չէր համարձակվի անտեսել այդքան պերճախոս փաստերը։ Գալով Քառուփերվուդին՝ ապա, չնայած հասարակության կանխակալ կարծիքին, կարելի էր տարակուսել, մեղադրական վճիռ կարծակվի՞ նրա դեմ, թե՞ ոչ։ Իսկ Սթիների դեմ կասկած լինել չէր կարող։

Անհրաժեշտ է համառոտակի պատմել, թե ինչպես ծավալվեցին դեպքերը՝ Քառուփերվուդին և Սթիներին պաշտոնական մեղադրանք ներկայացնելուց հետո։ Քառուփերվուդի իրավախորհրդատու Սթեջերը հոտ առավ, որ արդեն հետապնդություն է հարուցված ավելի շուտ, քան դա հայտնի կդառնարի։ Նա խորհուրդ տվեց Ֆրենկին անմիջապես նեռկայացնել հետաքննիչ օրգաններին, առանց սպասելու կալանքի հրամանագրին, և դրանով իսկ կանխել լրագրային ազմուկը, որն անխուսափելիորեն կառաջանար, եթե նրան տանելու գար ոստիկանությունը։

Հենց որ քաղաքաբետը ստորագրեց Քառուփերվուդին ձերբակալելու օրդերը, սա էլ, հետևելով Սթեջերի ցուցումներին, նրա հետ էլ ներկայացավ միստր Բորչարդին և մուծեց քսան հաղար դոլլար դրավական (նրա երաշխավորը Ջիրարդ ագգային բանկի նախագահ միստր Դեկսոնն էր) որպես երաշխիք, որ ինքը կներկայանա ոստիկանության կենտրոնական վարչություն՝ գործը լսելու։ Քաղաքի շահերը պաշտպանելու համար քաղաքային խորհրդի նախագահ Սթրոբիկը հրավիրեց փաստաբան Մարկ Օլդշոուին։ Քաղաքապետը հետաքրքրությամբ էր նայում Քառուփերվուդին, որովհետև համեմատաբար նոր մարդ լինելով Ֆիլադելֆիայի քաղաքական աշխարհում, առաջ չէր ճանաչում նրան։ Քառուփերվուդը քաղցր հայացքով պատասխանեց նրան։

— Լավ կատակերգություն է, պարոն քաղաքապետ, — հանգիստ նկատեց Քառուփերվուդը, և Բորչարդը ժպտալով՝

սիրալիր առարկեց, որ ինքն անձամբ այդ ամբողջ արարությանը նայում է որպես այսպիսի տագնապալի ժամանակ՝ անխուսափելի ձևականության:

— Ասենք, ինքներդ էլ լավ եք հասկանում այդ, միստր Քառուկերվուդ, — հայտարարեց նա:

— Այո, իհարկե, հասկանում եմ, — քմծիծաղով պատասխանեց Ֆրենկը:

Դրան հաջորդեց ևս մի քանի բավական անփույթ կատարված հետաքննություն այսպես կոչված կենտրոնական դատարանում, որտեղ Քառուկերվուդը, երբ հանձնեցին նրան մեղադրական արձանագրությունը, հայտարարեց, որ իրեն հանցավոր չի համարում: Այդտեղ էլ, նոյեմբերին, նշանակված էր գործի նախնական քննությունը, և Քառուկերվուդը, հաշվի առնելով Փեթթիի կազմած մեղադրականի բարդությունը, բարվոք համարեց ներկայանալ երդվյաներին, ովքեր որոշելու էին դատի տալու հարցը: Սրանք էլ նոր նշանակված շրջանային դատախմազ Շենոնի ճնշմամբ (իսկ սա ջանում էր այդ ամենը հանդիսավոր կերպով ցուցադրել) որոշեցին, որ նրա գործը լսվելու է դեկտեմբերի 5-ին, եռամսյակային նստաշրջանի առաջին բաժնի, այսինքն՝ այդ բնույթի քրեական գործերը քննող Պենսիլվանիայի դատարանի տեղական բաժանմունքի անդամ, դատավոր Պեյդերսոնի նախագահությամբ: Քառուկերվուդի դատը տեղի ունեցավ, ինչպես և պետք էր սպասել, արդեն աշխանային փոթորկալի ընտրություններից հետո: Անգամ ընտրողի անձնավորության վրա ճնշում գործադրելուց և բյուզետենները կեղծելուց շնորշած Մոլենհաուերի ու Սիմֆոնի խորամանկ մեքենայությունների շնորհիվ բնարությանները նոր հաղթանակ բերին հանրապետական կուսակցությանը, թեև նրա դրածոները ավելի սակավաթիվ ձայն ստացան, քան անցած անգամ: «Քաղաքային ինքնավարությանն օգնող քաղաքացիների ընկերությունը», չնայած ընտրություններում կրած պարտության, որի պատճառը հակառակորդների խարդախություններն էին, խիզախաբար շարունակում էր զախշախել նրանց, ում համարում էր գլխավոր շարամիտներ:

Այդ միջոցին էլլին Բաթլերը հետևում էր Քառվերվուղի գործի հեղաղարձություններին բատ լրագրային ճղճան հոգվածների ու քաղաքում տեղի ունեցող ասեկուսների. հետևում էր այն ամբողջ տաքարյունությամբ, կրքով ու լարումով, որոնց ընդունակ էր նրա ոչ սովորական և ուժեղ խառնվածքը Այնտեղ, ուր խառն էր զգացմունքը, էլլինը կշռադատել չէր կարողանում. նա հաճախ էր տեսնվում Ֆրենկի հետ, սա էլլ շատ բան էր պատմում նրան, իհարկե, այնքան, որքան թույլ էր տալիս նրա բնածին զգուշությունը. ուստի և, չնայած լրագրային աղմուկին ու խոսակցություններին, որ լսում էր տանը, ճաշի ժամանակ և օտար մարդկանցից, հաստատ համոզված էր, որ ինչքան էլլ վատ պատկերեին նրան, իրականում նա բնավ էլլ այդպես չէր: Միայն լրագրային մի փոքր հոգված, որ կտրել էր էլլինը Ֆիլադելֆիայի «Պարլիկ լեզեր» թերթից, անմիջապես այն բանից հետո, երբ Քառվերվուղին ձեական մեղադրանք էին ներկայացրել խարդախության համար, մի քիչ միսիթարում ու հանգստացնում էր նրան: Էլլինը թաքցրել էր այդ բանը կրծքի վրա, որովհետև այլ տողերը զփիտես ինչու թվում էին նրան ապացուց, որ իր պաշտելի Ֆրենկը այնքան էլլ հանցավոր չէ և նրա վրա շատ է անհիմն մեղադրանք բարդված: Իսկ այդ հոգվածը, պարզապես, համառոտ շարադրանքն էր այն բազմաթիվ «մանիֆեստներից» մեկի, որ հրապարակում էր «Քաղաքային ինքնալարությանն օգնող քաղաքացիների ընկերությունը»: Այդտեղ գրված էր.

«Ըստ երեսույթին գործն ավելի լուրջ է, քան կարելի էր ենթադրել: Հինգ հարյուր հազարի պակասորդը առաջացել է ոչ թե քաղաքային փոխառության պարտատոմսերի վաճառքից և դրա պատշաճ հաշվետվությունը լինելուց, այլ այն փոխառություններից, որ արել է քաղաքի գանձապետը բորսայական միջնորդին: Բացի դրանից, կոմիտեն արժանահավատ տեղեկություններ է ստացել, որ բորսայական միջնորդի ծախած քաղաքային փոխառության հարտատոմսերի ամսական հաշվարկը կատարվել է ընթացիկ ամսվա ամենացածր կուրսով, իսկ այդ կուրսի և պարտատոմսերի փաստորան

Գախված գնի տարբերությունը քաղաքային գանձապահն ու միջնորդը բաժանել են իրար մեց: Սրանից հետևում է, որ երկու կողմերի շահերը պահանջում էին ժամանակ առ ժամանակ ճնշում գործադրել շուկայի վրա, նպատակ ունենալու վեասնել հաշվարկային ցածր կուրսի: Այնուամենայնիվ կոմիտեն բորսայական միջնորդ միստր Քառվերվուդի դեմ հարուցված դատական հետապնդումը համարում է լոկ մի փորձ հասարակության ուշադրությունը շեղելու իսկական հանցավորներից ու զրանով իսկ հնարավորություն տալու նրանց իրենց համար առավելապես ձեռնուու ձեռվ հարթելու գործը:

«Ա՛յ, հիմա ամե՞ն ինչ պարզ է», — ասաց Էյլինը այդ հոդվածը կարդալուց հետո: Այդ քաղաքագետները, այդ թվում և իր հայրը, ինչպես հասկացավ նա իր ու նրա խոսակցությունից, փորձում են Ֆրենկի վրա նետել իրենց սեփական հանցագործությունները: Ֆրենկը բնավ էլ այնքան վատ մարդ չէ, ինչպես պատկերում են: «Ընկերության» հաշվետվության մեջ այդպես էլ ասված է: Նա հրամակում էր «Հասարակության կարծիքը իսկական հանցափորներից շեղելու մի փորձ խոսքով: Մի՞թե նույն բանը չէր տսում Ֆրենկը այն երջանիկ ժամերին, որ անց էին կացնում իրենք մերթ այս, մերթ այն վայրում, իսկ գերազանցորեն Հարավային Վեցերորդ փողոցի այն տանը, որ վարձել էր Ֆրենկը, երբ արդեն ստիպվել էին հեռանալ իրենց նախկին ապաստանից: Ֆրենկը շոյում էր նրա փարթամ վարսերը, գորգուրում նրան և վստահեցնում, որ այդ ամբողջ պատմությունը սարքել են տեղի քաղաքական կառավարողները հանցանքը իր վրա գցելու և ըստ հնարավորին կուսակցությանն ընդհանրապես և Սթիներին մասնավորապես զերծ պահելու նպատակով: Քառվերվուդը, իհարկե, դուրս կպրծնի, բայց և այնպես էյլինը պետք է զեղուն իրեն պահի: Նա չէր բացասում, որ բավական ժամանակ գործարար ու փոխադարձաբար ձեռնուու հարաբերություններ էր ունեցել Սթիների հետ, և ճիշտ էլ բացատրել էր այդ հարաբերությունների էությունը: Էյլինը ամեն ինչ հասկացել էր կամ համենայն դեպս կարծել էր, թե հասկացել է:

Ֆրենկը վստահեցրել էր նրան, որ ինքը անմեղ է, և դա բաւական էր էլլինի համար:

Ինչ վերաբերում է ավագ ու կրտսեր Քառուփերվուդների տներին, որոնք դեռ վերջերս այնպիսի փայլով ի մն էին հավաքվում բարգավաճման օրերին, իսկ հիմա կապված էին ընդհանուր դժբախտության դառն կապերով, ապա կյանքը համարյա մեռած էր այնտեղ: Այդ կյանքի աղբյուրը Ֆրենկ Ալզերնոնն էր: Նա էր ուժ և արիություն տալիս հորը, ոգեշնչում ու բարերարում էր եղբայրներին, երեխանների ապավենն էր, կնոջ հենարանը, Քառուփերվուդների անվան շուրջն ու հպարտությունը: Նրա մեջ, բոլոր մերձավորների համար, մարմնացել էին հաջողությունը, ուժը, փառասիրական ձգումները, արժանապատվությունն ու երշանկությունը: Սակայն հիմա նրա վառ շողշողացող աստղը աղոտացել և ըստ երկույթին մոտեցել էր մայրամուտին:

Այն նույն առավետից, երբ ճակատագրական նամակը սումբի նման խորտակել էր Լիլիան Քառուփերվուդի ամբողջ սովորական ապրելածելը, նա ընկել էր մի տեսակ կիսամեռ դրության մեջ: Ահա արդեն մի քանի շաբաթ է, ինչ Լիլիանը մեթոդիկ կերպով կատարելով իր պարտավորությունները (համենայն դեպս այդպես էր երկում արտաքուստ), անձնատուր էր եղել մշտատե ու տանջող մտածմունքների: Լրացել էր նրա քառասուն տարին, և թվում էր, թե այդ տարիին նրա կյանքը պետք է խարսխվի ամուր, անսսաման հիմքի վրա, իսկ հիմա նրա գլխին կախված էր մի սպառնալիք, որ դաժան մի ձեռք կպոկի նրան այն հարազատ հողից, ուր ծաղկել ու ապրել էր նա, և դեն նետվելուց հետո կթառամի դառնությունների ու նվաստացումների կիզիչ շոգից:

Ավագ Քառուփերվուդի գործերն էլ սրբնթաց գահավիժում էին ցած: Ինչպես արդեն ասել ենք, անսահման էր նրա հավատը որդու հանդեպ, բայց նա հասկանում և շարունակ կրկնում էր մտքում, որ Ֆրենկը ըստ երկույթին մի ինչ-որ պահին սխալ էր կատարել և այժմ դաժանորեն հատուցում էր դրա համար: Մերունին, իհարկե, կարծում էր, թե Ֆրենկը իրավունք ուներ փրկվելու փորձ անել արդեն մեզ հայտնի

ձեռվ. սակայն չէր կարող շտառապել այն գիտակցությունից, որ իր որդին ընկել է այժմ այդ բոլոր ասեկուսեներին տեղի տվող հանգամանքների ծուղակը: Նրա կարծիքով Ֆրենկը շտեսնված փայլուն մարդ էր: Նա կկարողանար բացառիկ հաջողությունների հասնել, եթե չկապվեր ո՛չ քաղաքային գանձապետի և ո՛չ էլ քաղաքական տիրակալների հետ: Կործանեցին նրան քաղաքային երկաթուղին ու սպեկուլյանտ քաղաքագետները: Օրեր շարունակ քայլելով անկյունից անկյուն՝ ծեր Քառուփերվուդը հետզհետե ավելի պարզ էր հասկանում, որ աստղը մոտենում է մայրամուտին, որ Ֆրենկի կործանումը նաև իր կործանումն է և որ այդ խայտառակությունը՝ անազնիվ գործառնություններ կատարած լինելու հրապարակային մեղադրանքը, իրեն էլ տնաքանդ կանի: Մի քանի շաբաթվա մեջ նրա մազերը վերջնականապես ձերմակեցին, քայլվածքը դանդաղեց, դեմքը գունատվեց, աշքերը խոր ընկան: Այտմուրուքները այժմ հիշեցնում էին հին գրոշներ՝ վաղուց անցած-դնացած լավ օրերի գարդեր: Նրա միակ մխիթարյանքն այն էր, որ Ֆրենկը լրիվ վճարել լրերորդ ազգային բանկին, ոչ մի զոլլար պարտք չէր մնացել նրան: Եվ այնուամենայնիվ ծերունին գիտեր, որ բանկի վարչությունը շի հաշտվի, որ իր կազմում լինի մի մարդ, որի տղան նպաստել է քաղաքային դրամարկղը կողոպտելուն և հիշատակվում է այժմ այդ գործի հետ կապված լրագրային բոլոր հաղորդագրությունների մեջ: Բացի դրանից, Հենրի Քառուփերվուդը ծեր էր, հասել էր պաշտոնաթող լինելու ժամանակը:

Հանգուցը լուծվեց այն օրը, երբ Ֆրենկը ձերբակալվեց հասարակական գումարներ յուրացնելու մեղադրանքով: Սերունուն նախազգուշացրել էր որդին, որին էլ նախազգուշացրել էր Սթեղերը, ասելով, թե դրանից խուսափել անկարելի էր, և, ինչպես միշտ, նա գնաց բանկ, թեև նրան թվում էր, թե մի ծանր քար կուցնում է իրեն գետին: Անքուն գիշերից հետո, տանից դուրս գալուց առաջ, նա պաշտոնաթողության խնդրագիր էր գրել վարչության նախագահ Ֆրուեն Քեսոնի անվամբ, որպեսզի անմիջապես հանձնի նրան: Միստր Քե-

սոնը՝ թիկնեղ, բարեկազմ և արտաքուստ խիստ գրավիչ, մատ հիսնամյա մի մարդ, ներքուստ թեթևացած շղնչ քաշեց այդ թուղթը տեսնելով:

— Ես հասկանում եմ, մի՛ստր Քառվիերվուդի, թե որքան ծանր է ձեր գրությունը, — կարեկցաբար ասաց նա: — Մենք, ես իրավունք ունեմ ասել այդ մեր վարչության բոլոր անդամների անունից, ձեզ հետ ապրում ենք ձեր վիշտը: Մեզ միանագամայն հասկանալի է, թե ինչպես ձեր որդին մասնակից դարձավ այդ գործին: Նա քաղաքային վարչության գործերին մասնակցած միակ բանկային գործիշը չէ: Բնավ էլ ոչ միակը: Հին սիստեմ է դա: Մենք բարձր ենք գնահատում ձեր երեսնու ամյա հավատարիմ ծառայությունը: Եթե մենք թեկուց նվազագույն հնարավորություն ունենայինք օգննլու ձեզ այդ ժամանակավոր դժվարությունները հաղթահարելու համար, միայն երջանիկ կլինեինք. սակայն ինքներդ բանկային գործիչ եք ու հասկանում եք, որ այժմ այդպիսի հնարավորություն չունենք: Եթե փոթորիկը հանդարտվեր, եթե գոնե իմանայինք երբ կհանդարտվի...

Նա լոեց, որովհետև չէր կարող ստիպել իրեն ասելու, որ թե՛ իրեն, թե՛ բանկի վարչությանը խիստ ցավալի է հրաժեշտ տալ միստր Քառվիերվուդին ալյսպիսի հանգամանքներում: Ավելի լավ է՝ թող միստր Քառվիերվուդը խոսի:

Նրա հետ խոսելիս՝ ձեր Քառվիերվուդը մեծ ճիգ գործադրեց, որպեսզի ընդհանրապես ի վիճակի լինի թեկուց մի խոսք ասելու: Նա հանեց քաթանե խոշոր թաշկինակը, քիթը մաքրեց, ապա ուղղվեց բազկաթոռում և բավական հանդարտ ձեռքերը դրեց սեղանին: Սակայն ջղերը լարված էին ծայրաստիճան:

— Ես չեմ դիմանա սրան, — հանկարծ պոռթկաց նրա բերանից: — Շատ կխնդրեի ձեզ հիմա մենակ թողնեիք ինձ:

Քեսոնը՝ այդ պճնատես, փափկասուն ջենտլմենը, վերկացավ ու դուրս եկավ սենյակից: Նա շատ լավ էր հասկանում, թե ինչ լարված վիճակում պետք է գտնվի այդ մարդը, որի հետ հենց նոր խոսում էր: Դուրը հազիվ էր փակվել, երբ

‘ծեր Քառվիերվուղը գլուխը հակեց ձեռքերի վրա, և նրա մարմինը ցնցվեց շղաձգական հեկեկանքից:

«Երբե՛ք, երբե՛ք չէի կարծում, թե այս օրը կտեսնեմ,— մրմնջում էր նա ինքն իրեն:— Երբե՛ք չէի կարծում»:

Հետո նա սրբեց տաք, աղի արցունքները, մոտեցավ լուսամուտին ու նայելով փողոց՝ սկսեց մտածել, թե հիմա ինչով պիտի զբաղվի:

Գ Լ Ո Ւ Խ XXXV

Ժամանակն անցնում էր, իսկ Բաթլերը գնալով ավելի էր խճճվում ենթադրությունների մեջ ու հետզհետե ավելի մտածում, թե ինչպես վարվի դատեր հետ: Մրա գաղտնապահությունը և ամեն կերպ իր հետ խոսակցության բռնվելուց խոսափելը համոզեցին ծերունուն, որ նա շարունակում է հանդիսել Քառվիերվուղին, իսկ դա վաղ թե ուշ պետք է վերջանա հրատարակային խայտառակությամբ: Նա նույնիսկ ուզում էր գնալ միսիս Քառվիերվուղի մոտ և ստիպել, որ սա հակազդի տմունու վրա, բայց հետո միաքը փոխեց: Նախ՝ նա բոլորվին վստահ չէր, որ էյլինը հանդիպում է Քառվիերվուղին, երկրորդ՝ միսիս Քառվիերվուղը կարող էր և տեղյակ լինել ամուսնու դավաճանությանը: Հետո նա մտադրվեց գնալ ուղիղ Քառվիերվուղի մոտ ու սպառնալ. բայց դա արդեն ծայրահեղ միջոց էր, և դարձյալ ինքը ոչ մի ապացույց չուներ: Լրտեսության բյուրոյին դիմելու սիրտ չէր անում, ինչպես և սիրտ չէր անում հայտնել ընտանիքի անդամներից որևէ մեկին: Մի անգամ ինքը գնաց թափառելու Տասներորդ փողոցի 931 տան շուրջը, բայց ապարդյուն: Տունը վարձով էր տրվում. Քառվիերվուղը դրանից հրաժարվելու ժամանակ ունեցել էր:

Վերջապես, Բաթլերը կանգ առավ հետևյալ ծրագրի վրա. Էյլինին հյուր ուղարկել որևէ հեռու տեղ՝ Բոստոն կամ Նոր Օռլեան, որտեղ մորաքույրն էր ապրում: Բայց պետք էր շատ նրբամտությամբ գործել, իսկ Բաթլերը այդպիսի գոր-

ծերի վարպետ չէր: Այնուամենայնիվ նա սկսեց նախապատրաստությունը: Նամակ գրեց նոր Օոլեան՝ քենուն ու հարցրեց, թե չի կարող սա, առանց Բաթլերին մատնելու, խնդրել քրոջը միառժամանակ իր մոտ ուղարկել մեծ աղջկան և միաժամանակ հրավեր ուղարկել Էլլինին: Բայց հետո պատռեց այդ նամակը: Մի քանի օր անց Բաթլերը պատահաբար խմացավ, որ միսիս Մոլենհառուերը և նրա երեք աղջկները՝ Կարոլինան, Ֆելիցիան ու Ալտան, պատրաստվում են դեկտեմբերի առաջին օրերին մեկնել Եվրոպա, մտադիր են լինել Փարիզում, Միջերկրականի Հյուսիսային ափերին ու Հռոմում, և որոշեց խոսել Մոլենհառուերի հետ, որպեսզի սա համոզի կնոջը իր հետ հրավիրելու նորային ու Էլլինին կամ ծայրահեղ դեպքում միայն Էլլինին. դա կարելի էր պատճառաբանել նրանով, որ միսիս Բաթլերը չի ուզում մենակ թողնել իրեն, իսկ աղջկները պետք է աշխարհ տեսնեն: Դա Էլլինին որոշ ժամանակ հեռացնելու հիմնալի միջոց կլիները, Նրանք պատրաստվում էին Եվրոպայում մնալ առնվազն կես տարի: Մոլենհառուերը հաճությամբ կատարեց նրա խնդրանքը. երկու ընտանիքը շատ մտերիմ էր: Միսիս Մոլենհառուերը ոչ պակաս հաճությամբ համաձայնեց (քաղաքական բնույթի նկատառումներից); և հրավերը տեղի ունեցավ: Նորայի ուրախությանը սահման չկար: Նա տենչում էր գոնե կարճ ժամանակով ապրել Եվրոպայում ու վաղուց էր այդպիսի հնարավորություն երազում, Էլլինը շայլած զգաց իրեն միսիս Մոլենհառուերի ուղադրությունից: Եթե դա պատահեր մի քանի տարի առաջ, նա անմիջապես կհամաձայներ: Սակայն հիմա հրավերն ընդունեց որպես մի նոր արգելք, որպես մի ուրիշ, թեկուղն երկրորդական խոշնդուտ Քառուիերվուդին հանդիպելու ճանապարհին: Ոչինչ չկասկածող միսիս Բաթլերը հազիվ էր խոսել իրեն այցելության եկած միսիս Մոլենհառուերի հրավերի մասին, երբ Էլլինը սառնությամբ մերժեց:

— Նա շատ է ուզում, որ դուք իրենց հետ մեկնեք, եթե հայրդ դեմ Ալինի, — պնդում էր մայրը: — Եվ ես համոզված եմ, որ շատ լավ ժամանակ կանցկացնեք: Նրանք միառժամ

կապրեն Փարիզում, հետո էլ կմեկնեն Միջերկրականի ծովափ:

— Օ՛, հրաշալի է,— գոչեց Նորան: — Միշտ էլ ցանկացել եմ լինել Փարիզում: Իսկ դո՞ւ, է՛յ ի՞նչ հիանալի կլիներ:

— Չգիտեմ ինչու՝ գնալ չեմ ուզում, — պատասխանեց էլլինը: Նա որոշեց հենց սկզբից էլ որևէ հետաքրքրություն չցուցաբերել այդ ձեռնարկման նկատմամբ՝ հորը շհուսագրելու համար: — Բացի դրանից, ձմեռային զգեստներ չունեմ: Ավելի լավ կլինի սպասեմ և մի ուրիշ անգամ գնամ:

— Քեզ ի՞նչ է եղել, էլլին, խելքի՛ եկ, — վրդովվեց Նորան: — Տասնյակ անգամ ասել ես, որ ուզում ես ձմեռ լինել արտասահմանում: Իսկ հիմա, երբ այսպիսի առիթ է ներկայանում... Չգեստներ կարելի է այնտեղ էլ կարել:

— Արտասահմանում հավանորեն որևէ հարմար բան կլինի, — պաշտպանեց միսիս Բաթլերը: — Բացի դրանից, մինչև մեկնելը երկու-երեք ամիս կա:

— Իսկ նրանք չե՞ն ուզում, որ իրենց հետ մեկնի տղամարդկանցից որևէ մեկը, մայրի՛կ, որպես առաջնորդող կամ խորհրդատու, ինչպես տասնմ, — հարցրեց Քելեմը:

— Ես էլ դեմ չեմ իմ ծառայությունը առաջարկելու իրենց, — զուսպ նկատեց Օուենը:

— Չգիտեմ, ազնիվ խոսք, չգիտեմ, — քմծիծաղեց միսիս Բաթլերը, պատառը ծամելով: — Հարկ կլինի, որ հարցնեք նրանց:

Էլլինն իր ասածն էր պնդում: Գնալու ցանկություն չունի: Շատ է անսպասելի: Այս այսպես չէ, այն այնպես չէ: Հենց այդ միջոցին էլ ներս մտավ հայր Բաթլերը և նստեց իր տեղը, սեղանի գլխին: Շատ լավ իմանալով, թե ինչի մասին է խոսքը, նա հետեղականորեն ձեացավ, թե իբր դա իրեն չի վերաբերում:

— Հավանորեն դու չես առարկի, եղուա՛րդ, — հարցրեց նրան կինը, ընդհանուր գծերով հայտնելով նրան բանի էությունը:

— Առարկե՞մ, — հիանալի կատարված կոպիտ կատակաբանությամբ պատասխանեց Բաթլերը: — Ես հո ինձ

թշնամի չե՞մ: Եվ երջանիկ կլինեմ, եթե միառժամ ազատվեմ
ձեր այս ամբողջ խմբակցությունից:

— Ա՛յ, ի՞նչ եմ ասել,— բացականչեց միսիս Բաթ-
լերը:— Պատկերացնում եմ, թե դու մենակ ինչպես կապրեհր
այստեղ:

— Բայց ես մենակ չէի լինի, կարող ես վստահ լինել,—
ասաց Բաթլերը:— Մեր քաղաքում քիչ չեն լինի այնպիսի
տները, որտեղ ուրախ կլինեն տեսնելու ինձ. այնպես որ
առանց ձեզ էլ կապրեմ:

— Մեր քաղաքում քիչ չեն այնպիսի տները, որտեղ քեզ
շեմքից ներս էլ չեն թողնի, եթե ես վլինեմ: Սա արդեն
անվիճելի է,— բարեհոգությամբ նրա խոսքը կտրեց միսիս
Բաթլերը:

— Ի՞նչ ասեմ. այդ էլ վիճելու բան չէ,— համաձայնեց
Բաթլերը, քնքաղին նայելով կնոջը:

Էլլինն աննկուն էր: Նորայի ու մոր բոլոր փաստարկները
ապարդյուն անցան: Սակայն իր ծրագրի խորտակումից
վրդովված՝ Բաթլերը գեռ գենքերը ցած չէր գրել: Երբ տեսավ,
որ մեկ է՝ էլլինին անկարելի է համոզել ընդունելու միսիս
Մոլենհառուերի հրավերը, նա մի քիչ ևս մտածելուց հետո,
որոշեց դիմել լրաեսի աջակցության:

Այդ տարիներին առանձնապես հոչակված էր նշանավոր
լրտես Վիլյամ Պինկերտոնի դորժակալությունը: Աղքատ
ընտանիքից սերած այդ մարդը, կյանքի բազմաթիվ հեղա-
դաբածություններից հետո խիստ ակնառու տեղ էր գրավել իր
յուրօրինակ և շատերի համար անդուր բնագավառում: Նրա
հայրենասիրական վարքը քաղաքացիական պատերազմի
շրջանում և Աբրահամ Լինկոլնին մոտիկ լինելը լավագույն
հանձնարարականն էին այն մարդկանց համար, ովքեր այս
կամ այն տիսուր հանգամանքի թերմամբ ստիպված էին դի-
մելու Պինկերտոնի աջակցության: Հենց նա, ավելի ճիշտ, նրա
ընտրած մարդիկ, պահանջում էին Լինկոլնին իշխանության
դեկը վարելու նրա ամբողջ փոթորկալի շրջանում: Պինկեր-
տոնի ստեղծած ձեռնարկությունը բաժանմունքներ ուներ
Ֆիլադելֆիայում, Վաշինգտոնում, Նյու-Յորքում և ուրիշ

շատ քաղաքներում: Բաթլերը հաճախ էր տեսել Ֆիլադել-
ֆիայի բաժանմունքի ցուցանակը, բայց չէր ցանկացել դիմել
նրան: Վերջնականապես որոշելուց հետո նա մտադրվեց մեկ-
նել Նյու-Յորք, ուր, ինչպես ասել էին, գլխավոր գործակա-
լությունն էր:

Նախօրյակին նա պարզապես ասաց, թե մեկնում է մի
օրով, ինչպես հաճախ էր անում, Երկաթուղով կարելի էր
Նյու-Յորք հասնել հինգ ժամից, և ժամը երկուսին
մոտ նա հասավ: Բրոդվեյի ներքեւ մասում գտնվող գրասեն-
յակում նա հարցրեց՝ ուր է դիրեկտորը, և նրան ընդունեց մոտ
հիմնամյա բարձրահասակ, ալեհեր ու գորշակն, խոշոր, մի
քիչ ուստած, բայց խելացի ու խորամանկ դեմքով մի մարդ:
Նրա հաստատամիտ ու կարճ ձեռքերը հաճախորդների հետ
զրուցելիս անընդհատ տկտկացնում էին սեղանը: Նա հագել
էր մուգ կինամոնագոյն սերթուկ, որը Բաթլերին շափից ավե-
լի պճնամոլական թվաց, իսկ փողկապը զարդարում էր մի
աղամանդակուու պայտաձև գնդասեղ: Ինքը՝ ծեր Բաթլերը,
մշտապես հագնում էր համեստ, գորշագույն զգեստ:

— Բարի՛ օր,— ասաց նա, երբ մանշուկը մացրեց նրան
այդ արժանահարդ իւլանդացու ու ամերիկունու շառավիլը
հանդիսացող և Մարտինսոն անունը կրող մարդու մոտ:

Միստր Ջիլբերտ Մարտինսոնը ի պատասխան գլխով
արեց, ապա մի հայացքով շափեց Բաթլերին և գուշակելով, որ
սա ուժեղ բնավորության տեր է և հավանորեն աշքի ընկնող
դիրք է գրավում հասարակության մեջ, վեր կացավ և աթոռ
առաջարկեց նրան:

— Նստեցե՛ք, խնդրե՛մ,— ասաց նա, թավ ու խիտ հոն-
քերի տակից զննելով այցելուին:— Ինչո՞վ կարող եմ օգտա-
կար լինել:

— Եթե շեմ սիսալլում, դիրեկտորը դո՞ւք եք,— հարցրեց
Բաթլերը, զննողաբար նայելով նրան:

— Այո, պարո՞ն,— պլարզապես պատասխանեց Մար-
տինսոնը:— Այստեղ ես վարում եմ դիրեկտորի պաշտոնը:

— Իսկ գրասենյակի տեր, միստր Պինկերտոնն այժմ

այսուհետ չէ, — զգույշ հարցրեց Բաթլերը: — Զվիրավորվեք, խնդրեմ, բայց ես ուզում էի խոսել անձամբ նրա հետ:

— Միստր Պինկերտոնն այժմ Զիկագոյսմ է, և ես սպասում եմ նրա վերադարձին մի շաբաթից ոչ շուտ կամ տասնօրից, — պատասխանեց Մարտինսոնը: — Դուք կարող եք խոսել ինձ հետ նույնպիսի անկեղծությամբ, ինչպես նրա հետ Այստեղ ես եմ փոխարինում նրան: Բայց, անշուշտ, դա ձեր գիտնալիքն է:

Բաթլերը մի քիչ տատանվեց, մտքում գնահատելով զրուցակցին:

— Ասացե՛ք, խնդրեմ, դուք ընտանիք ունե՞ք, — վերջապես, տվեց նա մի քիչ անսպասելի հարցը:

— Այո, պարո՞ն, — լրջորեն պատասխանեց Մարտինսոնը: — Ունեմ կին ու երկու երեխատ:

Որպես փորձված հետախուզ, նա հասկացավ, որ այժմ խոսքը ընտանիքի անդամներից մեկի՝ որդու, աղջկա, կնոջ վատ արարքի մասին կլինի: Հաճախ էր նա գործ ունեցել այդպիսի դեպքերի հետ:

— Գիտեք ինչ, ես մտածում էի, թե կիսուեմ անձամբ միստր Պինկերտոնի հետ, բայց եթե դուք փոխարինում եք նրան... — Բաթլերն իր խոսքը շավարտեց:

— Այո, պարո՞ն, ես եմ այստեղ ղեկավարում ամբողջ գործը, — ասաց Մարտինսոնը: — Դուք կարող եք վստահել ինձ այնպես, ինչպես կվստահեիք միստր Պինկերտոնին: Հրամեցեք գնանք իմ առանձնասենյակը: Այնտեղ ավելի հարմար է զրուցել:

Նա վեր կացավ և Բաթլերին մատնացուց արեց կից սենյակը, որի լուսամուտները նայում էին Բրոդվեյին. այդտեղ կ'ար մի երկարաձև, հղկված ու փայլեցված փայտե սեղան և կաշեպատ թիկնակով չորս աթոռ, պատին մի քանի նկար, որոնք պատկերում էին քաղաքացիական պատերազմի այն մարտական դրվագները, որոնց հետևանքով հյուսիսցիները հաղթանակի հասան: Բաթլերը երկմտելով հանդերձ հետևեց Մարտինսոնին: Կողմնակի մի մարդու էլլինի գործերին իրազեկ դարձնելու միտքը զզվանք էր պատճառում

Նրանք նույնիսկ հիմա էլ նա դեռ հավատացած չէր, թե կորոշի խոսել: Կնայի միայն, թե «ինչ տեսակ տղաներ են սըրանք», — ասում էր ինքն իրեն ծերուկը, և այն ժամանակ է կորոշի իր անելիքը: Նա մոտեցավ լուսամուտներից մեկին և սկսեց դիտել անհամար կառքերով ու հանրակառքերով լի փողոցը: Միստր Մարտինսոնը հանգիստ փակեց դուռը:

— Ուրեմն ինչո՞վ կարող եմ օգտակար լինել ձեզ, միստր... — ու կանգ առավ նա, հույս ունենալով այդ անմեղ խաղի միջոցով իմանալ այցելուի անունը: Երբեմն դա հաջողվում էր, բայց Բաթլերը այնքան էլ պարզամիտ չէր:

— Ես դեռ տատանվում եմ. սկսե՞մ այդ գործը, թե՝ ոչ, — դանդաղ ասաց Բաթլերը: — Առավել ևս, որ առայժմ լիովին հավատացած չեմ, թե ամեն ինչ պատշաճորեն կկազմակերպվի: Դեռ որոշ բաներ պետք է իմանամ... որոշ տեղեկություններ ստանամ... Բայց այդ գործը գերազանցորեն անձնական բնույթ ունի...

Նա լռեց, մտմտալով, թե ինչպես ասի, որ լավ լինի, միաժամանակ և աշքը Մարտինսոնից շկարելով: Սա շատ լավ հասկացավ նրա հոդելիճակը: Այդպիսի դեպքեր շատ էր նա տեսել:

— Թույլ տվեք ամենից առաջ ասեմ ձեզ, միստր...

— Սքենլոն, — եթե անպայման անունս պետք է ձեզ, — մեզմ ընդհատեց Բաթլերը: — Դա վատ չէ որեւէ մի ուրիշից, իսկ իմ իսկական անունը որոշ ժամանակ գերազասում եմ շասել:

— Թող լինի Սքենլոն, — նույն մեղմությամբ կրկնեց Մարտինսոնը: — Ճիշտն ասած, ինձ համար մեկ է, դա ձեր իսկական անունն է, թե ոչ: Հենց հիմա պատրաստվում էի ասել ձեզ, որ դուք կարող եք բնավ էլ շհայտնել ձեր անունը. բայց դա կախված է այն բանից, թե ինչպիսի տեղեկություններ են ձեզ պետք: Իսկ ձեր գործը, համարձակվում եմ վստահեցնել, գաղտնի կմնա, ինչպես եթե երբեք և ոչ ոքի հետ խոսած լինեիք: Մեր կազմակերպության հեղինակությունը խարսխված է մեզ ցույց տրվող վստահության վրա, և մենք շենք կարող ի շարք գործադրել դա, որովհետև անցանկալի

Հետեանքներ կունենար: Մեր պաշտոնյաների մեջ կան երեսուն տարուց ավելի աշխատող տղամարդիկ ու կանայք. մենք երեք և ոչ ոքի չենք արձակում, թերևս միայն խստ լուրջ զանցանքի համար. սակայն ընտրում ենք այնպիսի մարդիկ, որոնց հարկ չի լինում ազատել լուրջ զանցանքների համար: Միստր Պինկերտոնը շատ լավ է մարդ ճանաշում: Մենք ունենք այնպիսի աշխատակիցներ, ովքեր համարում են իրենց սրտագետ: Տարվա մեջ մենք կատարում ենք ավելի քան տասը հազար հանձնարարություն Միացյալ Նահանգների բոլոր ծայրերում: Եվ գործը վարում ենք այնքան, որքան ձեռնտու է հաճախորդին: Եվ զանում ենք իմանալ, միայն այն, ինչ հաճախորդը իմանալու կարիք ունի: Առանց անհրաժեշտության չենք միշտամում ուրիշի գործերին: Երբ պարզվում է, որ պահանջվող տեղեկությունները չենք կարող ստանալ, անհապաղ հայտնում ենք նրան: Շատ գործերից կտրուկ հրաժարվում ենք և չենք էլ սկսում: Կարող է պատահել, որ ձեր գործն էլ դրանցից է: Մենք հանձնարարությունների ետևից չենք ընկած և չենք թաքցնում: Քաղաքական բնույթի, անձնական հաշիվներ մաքրելու բնույթի որոշ գործեր, պարզապես, հրաժարվում ենք ստանձնել, որովհետև չենք ցանկանում մասնակից դառնալ դրանց: Հիմա ինքներդ դատեցեք: Դուք, պետք է կարծել, բանիմաց մարդ եք: Ես՝ ևս: Կարո՞ղ եք ուրեմն պատկերացնել, որ այնպիսի մի կազմակերպություն, ինչպես մերն է, շարաշահեր որևէ մեկի վատահությունը:

Նա լոեց ու ակնասենո նայեց Բաթլերին, սպասելով հավանության:

— Հազի՞վ թե, — պատասխանեց Բաթլերը: — Իրավացի եք դուք: Բայց և այնպես հեշտ չէ երևան հանել սեփական մասնավոր գործերը, — տիսուր ավելացրեց նա:

Երկուսն էլ մի պահ լոեցին:

— Ի՞նչ արած, — ասաց, վերջապես, Բաթլերը: — Դուք պարկնշտ մարդու տպավորություն եք գործում ինձ վրա, իսկ ինձ խորհուրդ է պետք: Նկատի ունեցեք, որ ես պատրաստ եմ լավ վճարել, իսկ ինձ հետաքրքրողը դժվար չէ պարզել: Ես ցանկանում եմ իմանալ. հանդիպո՞ւմ է արդյոք մի անձ, որ

ապրում է իմ ապրած քաղաքում, մի կնոջ հետ, իսկ եթե այս, ապա կոնկրետ որտե՞ղ՝ Կարծում եմ, որ սա գժվար չէ ձեզ համար:

— Դրանից պարզ բան չի կարող լինել, — պատասխանեց Մարտինսոնը: — Մենք շարունակ կատարում ենք այդպիսի հանձնարարություններ: Թույլ տվեք, միստր Սքենլոն, Հեղտացնել ձեր խնդիրը: Ինձ համար միանգամայն պարզ էր, որ դուք շեք ցանկանում ասել ավելի, քան անհրաժեշտ է, մենք նույնպես շենք ուզում իմանալ ձեզնից որևէ ավելի բան: Բայց, իհարկե, պետք է իմանանք, թե ո՞ր քաղաքն եք դուք նկատի ունենում, ինչպես նաև անուններից մեկը՝ տղամարդունը կամ կնոջը. երկուար պարտադիր չէ, եթե, իհարկե, դուք ինքներդ չուզենաք այդ իմաստով ընդպառաջել մեղ: Երբեմն իմանալով միայն մեկի, օրինակ, տղամարդու, անունը և կնոջ արտաքին պատկերը, իհարկե, միանգամայն ճիշտը, և կամ սրա լուսանկարը, մենք մի քանի ժամանակ հետո արդեն հայտնում ենք այն, ինչ հետաքրքրում է հաճախորդին. բայց, անշուշտ, ավելի ճշգրիտ առյալները հեշտացնում են մեր գործը: Իսկ դա արդեն ձեզնից է կախված. ինչպես հարմար գտնեք: Հայտնեցեք ինձ ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ համարեք, և ես երաշխավորում եմ, որ մենք մեզնից կախված ամեն ինչ կանենք, ձեզ հետաքրքրող՝ տեղեկությունները ձեռք բերելու համար:

— Հըմ, ահա բանի էությունը, — ասաց Բաթլերը, վերջապես իր որոշումն անելով, թեև ոչ առանց ներքին դիմագրության, — անկեղծությամբ ամեն ինչ կասեմ: Իմ անունը Սքենլոն չէ, այլ՝ Բաթլեր: Ապրում եմ Ֆիլադելֆիայում: Այնտեղ կա մի բանկիր՝ անունը Քառվիերվուդ, Ֆրենկ Ա. Քառվիերվուդ...

— Մի բոպե, — ընդհատեց Մարտինսոնը, գրանից ծոցատեր ու մատիտ հանելով: — Հիմա գրի կառնեմ: Ինչպես ասացիք:

Բաթլերը կրկնեց:

— Շատ լավ: Լսում եմ ձեզ:

— Երրորդ փողոցում նա դրասենյակ ունի՝ «Ֆրենկ Ա.

Քառուկիերվուղ». այնտեղ ամեն մեկը ցույց կտա ձեզ: Վերջերս
նա սնանկացավ:

— Ա՛, այն է,— վրա բերեց Մարտինսոնը: — Լսել եմ
նրա մասին: Նա մասնակից է քաղաքային միջոցները վատ-
նելու մի պատմության: Դուք, հավանորեն, շեք ցանկացել
դիմել Ֆիլադելֆիայի մեր բաժանմունքին, որպեսզի այնտե-
ղի գործակալները շիմանան ձեր գործերը, այնպես չէ:

— Շատ ճիշտ է. իսկ այդ մարդը հենց այն է, որի մասին
լսել եք, — պատասխանեց Բաթլերը: — Ես շեմ ուզում, որ
Ֆիլադելֆիայում որևէ մեկը իմանա իմ գործը: Դրա համար էլ
եկել եմ այստեղ: Այդ Քառուկիերվուղն ապրում է սեփական
տանը՝ ջրարդ պողոտայում, № 19—37: Այդ էլ դժվար չէ
գտնել:

— Ինքնին հասկանալի է, — կրկնեց Մարտինսոնը:

— Ուրեմն ես ուզում եմ իմանալ նրա մասին... և մի
կնոջ, ավելի ճիշտ՝ աղջկա մասին...

Ծեր Բաթլերը լոեց, և նրա դեմքը տառապագին խոժոռ-
վեց, երբ հարկ եղավ հայտնել էլլինի անունը: Նա ոչ մի կերպ
չէր հաշտվում այդ մտքի հետ. շատ էր սիրում իր դստերը,
շատ էր հպարտանում իր էլլինով: Նրա կրծքի տակ ատելու-
թյուն էր կուտակվում Քառուկիերվուղի նկատմամբ:

— Պետք է ենթադրել, որ ձեր ազգականն է, — փափ-
կանկատությամբ հարցրեց Մարտինսոնը: — Կարիք չկա, որ
որևէ բան հայտնեք ինձ. եթե կարելի է, նկարագրեցեք միայն
օրիորդի արտաքինը: Դա բավական է մեզ համար:

Նա որոշակի տեսնում էր, որ գործ ունի մի պատվարժան
ծերունու հետ, որը սաստիկ ընկճած է: Այդ էր վկայում
Բաթլերի հանկարծ թմրած, տիսուր դեմքը:

— Դուք կարող եք անկեղծ խոսել ինձ հետ, մի՛ստր
Բաթլեր, — ավելացրեց նա: — Ես հասկանում եմ ձեր ան-
վճռականությունը: Մենք ուզում ենք ձեզնից ստանալ միայն
այնպիսի տեղեկություններ, որոնք մեզ հնարավորություն
տան գործելու. ուրիշ ոչինչ:

— Այո, — մոռայլ հաստատեց Բաթլերը, — իմ ազգակա-
նութին է նա: Ուղղակի ասեմ ձեզ՝ իմ դուստրը: Դուք ազնիվ,

խելամիտ մարդ եք թվում ինձ: Ես նրա հայրն եմ և ոչ մի գնով չէի ուզենա թեկուզ նվազագույն շարիք պատճառել աղջըկանս: Փորձում եմ փրկել նրան. ուրիշ ոչինչ: Ինձ պետք է տղամարդը, այո՛:

Նրա հսկայական ձեռքը սեղմվեց, դարձավ բոռնցք:

Այս շարժումը շխուսափեց Մարտինսոնից. նա ինքը երկու աղջկա հայր էր:

— Ես հասկանում եմ, թե դուք ի՞նչ պետք է զգաք, միստր Բաթլեր, — ասաց նա: — Չէ որ ես էլ հայր եմ: Մենք ձեզ համար ամեն ինչ կանենք, ինչ ներեն մեր ուժերը: Եթե դուք մանրամասն նկարագրեք օրիորդին կամ իմ գործակալներից մեկին հնարավորություն տաք իր թե պատահաբար նայելու նրան, ձեր տանը կամ գրասենյակում, կարծում եմ, որ շատ շուտ կկարողանանք ասել ձեզ, թե շատ թե քիչ կանոնավոր հանդիպումներ ունենում են նրանք, թե ոչ: Կարծեմ հենց այդ էլ դուք ուզում եք իմանալ, այնպես չէ՞:

— Այո՛, — խոժոռադեմ պատասխանեց Բաթլերը:

— Ի՞նչ կա որ, դրա համար շատ ժամանակ պետք չէ, միստր Բաթլեր. մի երեք-չորս օր, եթե գործը հաջող ընթանա. իսկ ծայրահեղ դեպքում՝ մի շաբաթ, տասն օր, երկու շաբաթ, բայց ոչ մի դեպքում դրանից ավելի: Ամեն ինչ կախված է այն բանից, թե որքան կհրամայեք դուք հետեւլու նրանց, եթե առաջին օրերին շկարողանանք որևէ բան հայտնաբերել:

— Ես ուզում եմ իմանալ իսկությունը, որքան էլ դա ժամանակ խլի, — դառնովթյամբ ասաց Բաթլերը: — Ես պետք է իմանամ, եթե նույնիսկ դրա համար պահանջվի մի ամիս, երկու, երեք ամիս: Պե՛աք է իմանամ, — ասաց ծերունին ու վեր կացավ վճռականովթյամբ լի, աննկուն: — Ուզարկեցիք ինձ մոտ փորձված ու տակառվ մարդիկ: Ավելի լավ է այնպիսի մարդ, որը նույնպես հայր է, եթե այդպիսին ունեք և եթե նա կարողանում է բերանը խուփ պահել:

— Հասկանում եմ ձեզ, միստր Բաթլեր, — պատասխանից Մարտինսոնը: — Հույս դրեք ինձ վրա: Դուք գործ կունենաք կատարյալ վստահության արժանի լավագույն գործա-

կալների հետ։ Նրանք շաղակրատ չեն։ Այսպես կանեմ։ նախ՝ կուղարկեմ ձեզ մոտ մի մարդ, որպեսզի դուք ինքներդ կարողանաք որոշել, թե ձեր գործին կա՞ նա։ Ես նրան ոշինչ չեմ ասի։ Ինքներդ կիսուսեք նրա հետ։ Եթե ձեր գործին եկավ, պատմեցեք բանի էությունը, նա արդեն կիմանա, թե ինչպես գործի։ Եթե օգնության կարիք ունենա, էլի մարդիկ կուղարկեմ։ Որտե՞ղ եք դուք ապրում։

Բաթլերը տվեց իր հասցեն։

— Իսկ այս ամենը կմնա՞ մեր մեջ, — մի անգամ ևս հարցրեց նա։

— Կարող եք վստա՞ լինել։

— Իսկ ե՞րբ ձեր գործակալը կներկայանա ինձ։

— Վաղը, եթե հաճու է ձեզ։ Ես նկատի ունեմ մի մարդ, որին այսօր իսկ կարող եմ ուղարկել Ֆիլադելֆիա։ Հիմա նա դուրս է եկել, թե չէ կկանչեի, որպեսզի ինքներդ կարողանացիք խոսել նրա հետ։ Ասենք, ամեն ինչ կրացատրեմ նրան։ Դուք բնավ անհանգստանալու տեղիք չունեք։ Զեր դստեր բարի անունը հուսալի ձեռքի մեջ կլինի։

— Շատ շնորհակալ եմ, — ընդհատ-ընդհատ ասաց Բաթլերը, մի քիչ մեղմացած։ — Մեծապես պարտական եմ։ Դուք մեծ աշակցություն մատուցած կլինեք ինձ, ես էլ լավ կվճարեմ…

— Զարժե այդ մասին խոսել, միստր Բաթլեր, — ընդհատ-տեց Մարտինսոնը։ — Դուք կարող եք օգտվել մեր կազմակերպության սպասավորումից ըստ սովորական սակագնի։

Նա ուղեկցեց Բաթլերին մինչև դուռը ու սպասեց, որ փակվի, Բաթլերը դուրս եկավ ընկճված ու ողորմելի։ Երևակայելո՞ւ բան է, որ ինքը ստիպված է լրտեսներ նշանակել իր դստեր։ Իր էյլինի ետևից։

Գ Լ Ո Ւ Խ XXXVI

Հաջորդ օրն իսկ Բաթլերի գրասենյակը մտավ երկարահասակ ու նիհար, անճոռնի ու մոայլադիմ, սևահեր ու սևաշվի մագաղաթագույն մաշկով երկարադեմ և զարմանալի կերպով

բազեի գլուկս հիշեցնող գլխով մի մարդ: Բաթլերի հետ ավելի քան մի ժամ խոսելուց հետո նա գնաց: Իրիկնապահին, ձաշի ժամանակ, նա դարձյալ եկավ նրա մոտ, արդեն տունը, և Բաթլերի առանձնասենյակում, մի փոքր խորամանկության միջոցով հնարավորություն ունեցավ նայելու էլլինին: Բաթլերը կանչեց նրան, իսկ ինքը մնաց դռանը, փոքրինչ մի կողմ քաշվելով, որպեսզի ազդիկը լավ երեա, երբ մոտենա իրեն: Լրտեսը կանգնել էր դռան վարագույրներից մեկի ետեր, որ արդեն ձմռան մոտենալու առթիվ կախել էին, և ձևանում էր, թե նայում է փողոց:

— Այսօր որևէ մեկը Քույրիկով դուրս եկե՞լ է, — հարցուեց Բաթլերը էլլինին: Քույրիկը Բաթլերների ընտանիքի սիրեցյալ գամբիկն էր:

Հստ նրա պլանի, եթե էլլինը լրտեսին նկատեր, ապա ինքը կներկայացներ նրան որպես ձի գնելու կամ ծախելու եկած մի վաճառորդ, իսկ լրտես ջոնաս Օլդերսոնը արտաքուստ միանդամայն կարող էր ձիավաճառ համարվել:

— Զիմ կարծում, Հա՛յր, — պատասխանեց էլլինը: — Օրինակ՝ ես ոչ մի տեղ չեմ դնացել: Բայց Հիմա կհարցնեմ:

— Զարժե: Ուզում էի միայն իմանալ, թե վաղը առավոտյան, քեզ պետք չի լինի Քույրիկը:

— Առանց նրան էլ կարող եմ դուրս գալ, եթե քեզ պետք է: Զերբին լիովին բավարարում է ինձ:

— Լավ. այդ գեղքում թող նա մնա ախոռում:

Բաթլերը հանգիստ փակեց դուռը: Էլլինը մտածեց, որ խոսքը ձի առնել-ծախելու մասին է: Բայց որովհետեւ վստահ էր, որ առանց իր հետ խորհրդակցելու հայրը Քույրիկը չի ծախի, քանի որ ինքը սիրում է զամբիկը հեծնել, ապա իսկուն էլ մոռացավ այդ խոսակցությունը:

Երբ նա գնաց, Օլդերսոնը դուրս եկավ վարագույրի ետեմից ու ասաց, որ այլևս ոչ մի բանի կարիք չունի:

— Այն ամենը, ինչ ուզում էի իմանալ, այս է, — ասաց նա: — Զեզ կտեղեկացնեմ, հենց որ կարողանամ որևէ բառ պարզել:

Նա գնաց, և երեսունվեց ժամ հետո Քառուիերվուղի

տունը ու դրասենյակը, Հարպեր Սթեղիքի գրասենյակը, Բաթլերի տունը, ինչպես նաև Քառուիերվուսն ու Էյլինը արդեն գտնվում էին մանրազնին Հակողովթյան տակ: Ակզբում դրա համար պետք եղավ վեց մարդ, հետո, երբ հայտնաբերվեց Հարավային Վեցերորդ փողոցում Քառուիերվուսի վարձած երկրորդ բնակարանը, այնտեղ գործուղեցին յոթերորդ լրտեսին: Մրանք բոլորն էլ Նյու-Յորքից էին ուղարկված: Մի շաբաթ անց Օլդերսոնն արդեն ամեն ինչ գիտեր: Նա պայմանավորվեց Բաթլերի հետ, որ իմաց կտա նրան, ե՞րբ է Էյլինը Հանդիպելու Քառուիերվուսին, որպեսզի հայրը անհապաղ մեկնի ցույց տրված հասցեով տունը ու հանցագործության տեղում բռնի նրան: Բաթլերը մտադիր չէր սպանել Քառուիերվուսին (*Օլդերսոնը* թույլ չէր տա այդ, համենայն դեպս իր աշքի առաջ), սակայն արդեն ոչ ոք չէր կարող արգելել նրան, որ ամենահետին խոսքերով հայնոյի անպիտան մարդուն, ծեծի նրան ու տանի Էյլինին: Յ՛, այն ժամանակ աղջիկը կդադարի վստահեցնել հորը, թե չի հանդիպում Քառուիերվուսին, կդադարի գատողություններ անել ու ինքնագլուխ գործեր կատարել: Էյլինը ստիպված կլինի հնազանդվել հոր իշխանությանը, կամ կուղղվի, կամ հայրը կուղարկի նրան ուղղիլ տուն: Երբ մտածում ես, թե ինչպիսի՝ օրինակ կարող է դառնալ դա քրոջ կամ մի ուրիշ պատվախնդիր աղջկա համար: Հիմա Էլլինն արդեն ելքոպա կգնա, ուղած տեղը, որը որ հայրը կմատնանշի:

Բաթլերն ստիպված էր իրազեկ դարձնել *Օլդերսոնին* այդ ծրագիրը, և սա առանց այլևայլության հայտարարեց, որ իր պարտքն է՝ պահպանել Քառուիերվուսին կատարվելիք որեւէ ոտնձգությունից:

— Մենք իրավունք չունենք թույլ տալ ձեզ, որ ծեծեք նրան կամ ընդհանրապես բոնության դիմեք, — ասաց նա Բաթլերին, երբ առաջին անգամ խոսք եղավ այդ մասին: — Գա մեր կանոններին դեմ է: Գուք կմտնեք տուն, ուր նրանք հանդիպում են. եթե պետք լինի, մենք օրդեր ձեռք կբերենք խուզարկելու համար, իհարկե, թաքցնելով ձեր մասնակցությունը գործին: Մենք կասենք, թե հետամուտ ենք նյու-յորքցի

մի աղջկաւ թայց գուք կմտնեց տյնտեղ իսմ մարդկանց ներկաւ յությամբ: Իսկ նրանք թուզէ շեն տա սկանդալ սարքել: Թուզք կարող եք տանել ձեր աղջկան: մենք կտանենք նրան և եթե ցանկանաք, նաև այն մարդուն: թայց այդ դեպքում գուք պարտավորված կլինեք որևէ մեղադրանք ներկայացնել նրան: թացի գրանից, բացառված չէ, որ Հարեաններից որևէ մեկը նկատի, իսկ մենք շենք կարող երաշխավորել, որ գուք դրանով հետաքրքրասերների բազմություն չեք հավաքի:

թաթլերին նմանապես տանջում էին կասկածները: Այդպիսի մի քայլ, իհարկե, կապված է Հանրահայտ գարճներու մեծ վտանգի հետ: Եվ այնուամենայնիվ նա ուզում էր իսկությունն իմանալ: Ուզում էր ահաբեկել էլլինին, ազդել նրա կրա ամենախրժատ միջոցներով:

Այսպիսով, մի շաբաթ անց թլքերսոնն իմացավ, որ էլլինն ու Քառվիերվոսը հանդիպում են Հարավարքին Վեցերորդ փողոցում, ըստ երեսվթին, մասնավոր տան մեջ: Իսկ իրականում դա մի իսկական ժամանակավայր էր, միայն ֆիտիկի բարձր կարդի: Այդ աղյուսաշնն, քառահարի, սպիտակ սալիկներով երեսպատճառ շենքում կար ճշացող պերճանքով կահափորիած, սակայն հաճելի տասնութ սենյակ: Այցելուներն էլ վիրին աստիճանի պերճաշուք անձինք էին և կարու էին մուտք գործել այնտեղ միայն հին հաճախորդների հանձնարարությամբ: Այդ էլ ապահովում էր գաղտնապահությունը, որին այնքան կարիք ունեն ամեն աեսակ արգելված գործերը: թավական էր ասել: «Ես ժամադրություն եմ նշանակել այստեղ», և տիրուհին, եթե երկու կողմերն էլ ժանոթ էին նրան, անմիջապես նորեկներին տանում էր Հարմարավեա Հարկարամին: Այդ տունը վաղուց ծանոթ էր Քառվիերվուզին, և երբ նրանք ստիպված եղան բաժանվել Հյուսիսային Տաշներորդ փողոցի հարմարավեատ լնակարանից, նա էլլինին առաջարկեց այդտեղ հանդիպել իրար:

Երբ թլքերսոնն իմացավ, թե ինչ հաստատություն է, ասաց թաթլերին, որ Հափաղանց ոժվար է մուտք գործել այնտեղ ու փնտրել որևէ մեկին: Դրա համար խուզարկելու օրդեր էր պետք, իսկ օրդեր ստանալը շատ շէ: Կարելի՞ է,

իհարկե, բռնի ներխուժել այնտեղ, ինչպես երբեմն արվում է Հանրային բարոյականությունը վիրավորող գործերում։ Բայց այն ժամանակ ծագում է մի վտանգ՝ բախվել տան տերերի կամ այցելուների կատաղի դիմադրության։ Այդ կարող էր պատահել և այստեղ։ Միակ ճիշտ միջոցը աղմուկից խուսափելն է, պայմանավորվել տիրուհու հետ մի պատկառելի գումարի օգնությամբ։

— Բայց տվյալ դեպքում այդպիսի բան կարծես շարժեանել, — նկատեց Յլդերսոնը։ — Ես հիմք ունեմ ենթադրելու, որ տիրուհին ջատ բարյացակամ է ձեզ հետաքրքրող մարդու նկատմամբ։ Իմ կարծիքով, ավելի լավ է ոիսկ անել և փորձել հանկարծակիի բերել նրանց։

— Բացի գործողությունը ղեկավարողից, — բացատրեց նա, — մեզ պետք կլինի երեք կամ չորս մարդ։ Նրանցից մեկը կմտնի նախասենյակ, հենց որ զանգից հետո դուռը բացեն, իսկ մնացածները կհետեւն նրան աջակցություն մատուցելու։ Այնուհետև հարկ կլինի արագ խուզարկություն կատարել, պահանջելով, որ բացեն բոլոր դռները։ Գալով ծառաներին, եթե նրանք այնտեղ լինեն, պետք է ամեն կերպ ստիպի նրանց լուն։ Երբեմն դա ձեռք է բերվոամ փողով, երբեմն էլ ֆիզիկական ուժով։ Դրանից հետո լրտեսներից մեկը, որպես թե ծառա, կըախի առաջին, երկրորդ, երրորդ դուռը (Բաթլերը մյուս գործակալների հետ պետք է հետեւ նրան), և երրորդ դուռը բացեն, հնարավոր կլինի հաստատել. այդտեղ է արդյոք այն անձը, որին փնտրում են իրենք։ Եթե բախելուց հետո շբացեն, հարկ կլինի ջարդել դուռը։ Տունը խիստ բնակված թաղամասում է, այնպես որ այդտեղից փախչել կարելի է միայն շքամուտքից կամ դարպասից, իսկ այդ կետերուն մարդիկ կդրվեն։

Համարձակ մտածված պլան էր, որը հնարավորություն էր տալիս աննկատելի կերպով տանել էլլինին, չնայած բոլոր խոշընդուներին։

Երբ այս ամբողջ տնախորժ ծրագիրը բացատրվեց Բաթլերին, նա խիստ հուզվեց։ Մի պահ մտածեց հրաժարվել այդ գործողությունից և սահմանափակվել դստեր հետ խոսելով։

առել նրան, որ ամեն ինչ հայտնի է իրեն և նրա ժխտումն աննպատակ է, հետո էլ առաջարկել ընտրել երկուակից մեկը՝ Եվրոպա կամ Փիշերօթիկ ուղղիշ տուն։ Սակայն մասսամբ սեփական խառնվածքի բնածին կոպտության, մասսամբ էլ այն պատճառով, որ Էյլինի տաքարյուն, անզուսպ բնավորությունը ակամա վախ էր ներշնչում իրեն, Բաթլերը վերջ ի վերջո ընտրեց մի այլ մեթոդ։ Նա առաջարկեց միայն Օլգերսոնին մի անգամ ևս ամեն ինչ մանրաքնին մտածել և հենց որ հաստատվի, որ Էյլինն ու Քառուկերվուղը մտան տուն, իմացնեն իրեն։ Նա անմիջապես վրա կհասնի և հետախուզվածների օգնությամբ կմերկացնի Էյլինին։

Այդ պլանը անխոհեմ էր ու զզվելի, Հորը անարժան և մոլորված աղջկան ուղղելու իմաստով ամենկին ոչ ազդու։ Բոնացումը երբեք լավ վախճանի չի հասցնի։ Սակայն Բաթլերը այդ բանը չէր հասկանում։ Նա ձգտում էր ահարեկել Էյլինին և իսկա շշպումի միջոցով գիտակցել տալ իր արարքի ամրող ահաւորակիցունրա Մի ամրուղ շաբաթ անցավ սովասման մեջ և ի վերջո, երր արցեն Բաթլերի չղիրը ծայրաստիճան լարվեցին, վրտ հասով հանգուցալուծումը։ Այդ ժամանակ արցեն պաշտոնապես մեղադրանք ներկայացվեց Քառուկիրվագիրն և նա սպասում էր դատին։ Էյլինը ժամանակ առ ժամանակ հայտնում էր նրան, թե իր կարծիքով ինչպես է հայրը վերաբերվում Ֆրենկին։ Նա իր կուհումները հառուցում էր, իհարկե, ոչ թե Բաթլերի հետ զրուցելու վրա։ Աա խիստ ինքնամփոփ էր իր դստեր հետ, որովհետեւ չէր ուզում նա իմանա, թե ինչպես ինքը անխոնջ կերպով ջանք է թափում, որ Քառուկերվուղը վերջնականապես կործանվի, այլ Օուենի պատահական դիտողությունների վրա։ Օուենը իր լսածները հայտնում էր Քելեմին, սա էլ, առանց որևէ բան կասկածելու, իր հերթին պատմում էր քրոջը։ Օրինակ՝ Էյլինն իմացել էր, թե ով է նկատի առնված շրջանային դատախազի պաշտոնի համար և ինչ դիրք կբռնի սա Քառուկերվուղի գործի նկատմամբ, որովհետեւ այդ մարդը հաճախ էր լինում։ Բաթլերենց տանն ու գրասենյակում։ Օուենը Քելեմին ասել էր, որ Շենոնն, ըստ երկույթին, իրենից կախված ամեն ինչ

կանի՝ Քառուկիերվուղին «ծակը կոխելու» համար և որ «ծերուկի» ասածով՝ միայն գա արդարացի կլինի:

Նա իմացավ նաև, որ իր հայրը ուզում է խանգարել Քառուկիերվուղին՝ նորից բանալու իր գրասենյակը, որովհետև այդ կլիներ ոչ արժանի ներողամտություն:

— Պարզապես բախտավորություն կլինի, եթե հասարակությունը, վերջապես, ազատվի այդ խաթերայից, — ասել էր մի անգամ Բաթլերը Օուենին, թերթում մի փոքր հոդված կարդալով այն պայքարի մասին, որ մղում էր Քառուկիերվուղը բռնորդ գատական ատյաններում:

Հետո Օուենը եղբորը հարցրել էր՝ չի՞ իմանում արդյոք, թե ինչու հայրը այդպես գայրացած է Քառուկիերվուղի դեմ: Թայց Քելեմն էլ ոշինչ շգիտեր: Այդ բոլոր խոսակցությունները էլլինի միջոցով համառմ էին Քառուկիերվուղին: Այդպես էլ նա իմացավ, որ դատավոր Պեյմբրանը, որը պետք է դատէր իրեն, Բաթլերի վաղեմի բարեկամն էր, իսկ Սթիներին, հավանորեն, դատապարտեին բանտարկության օրենքով նախատեսված ժամկետով, բայց շատ շանցած միջնորդեին ներուն ստանալու համար:

Քառուկիերվուղը առաջվա պես առուցդ էր: Նա հավատացնում էր էլլինին, որ ֆինանսական աշխարհում ինքը ունի հզոր բարեկամներ, որոնք դատարանի մեղադրական վճիռ արձակելու դեպքում կդիմեն նահանգապետին՝ ներում հայցելու: Եվ առհասարակ ինքը շի կարծում, թե կդատապարտեն իրեն, որովհետև մեղադրանքը բավականին հիմնավոր չէ: Ամբողջ խնդիրն այն է, որ քաղաքական տնօրենները հասարակության դժգոհությունից վախճացած և Բաթլերից հրահըրված՝ որոշել են իրենց գլուխը նրա մաշկով փրկել: Այդ ամբողջ պատմությունն սկսվեց այն պահից; Երբ Բաթլերն ստացավ անսարքագիր նամակը:

— Եթե շիներ քո հայրը, ո՞վ իմ հրճվանք, ես վայրկենապես գլուխս կազմակի այդ մեղադրանքից: Համոզված եմ, որ ո՞չ Մոդենհառերը, ո՞չ ևս Սիմֆոնը անձամբ իմ դեմ որևէ բան չունեն: Ճիշտ է, նրանք ուզում են իմ ձեռքից կորզել քաղաքային երկաթուղինները և, բնականաբար, շանում են

ամենից առաջ թեթևացնել Սթիների վիճակը: Բայց եթե սինքը քո հայրը, նրանք, իհարկե, այսպես հեռու չեին գնա և իրենց զոհը ինձ չէին ընտրի: Բացի դրանից, քո հայրը մատի վրա և խաղացնում այդ Շենոնին և մյուս բոլոր աննշան արարածներին՝ իր ուզածի պես: Ահա այդ է ամբողջ ցավը: Իսկ քանի ոք սկսել են, այլևս չեն կարող կանգ առնել:

— Ա՛, հասկանո՞ւմ եմ,— վրա բերեց էյլինը: — Այդ ամենը իմ պատճառով է: Եթե ես ու այդ բոլոր կասկածները շլինեին, նա, իհարկե, օգնության կհասներ քեզ: Երբեմն ինձ թվում է, թե ես քեզ դժբախտություն բերի: Հիմա չեմ էլ իմունում ինչ անեմ: Նույնիսկ պատրաստ եմ մի որոշ ժամանակ քեզ հետ հանդիպում չունենալ, եթե դա կօգնի քեզ. բայց հիմա հավանորեն ալլես ոչ մի բանով կարելի չէ օգնել: Օ՛, ինչպե՞ս սիրում եմ քեզ, Ֆրե՛նկ, ինչպե՞ս եմ սիրում: Քեզ համար պատրաստ եմ ամեն ինչ անելու: Իմ ի՞նչ գործն է, թե մարդիկ ինչ են կարծում կամ անում: Ես սիրո՞ւմ եմ քեզ:

— Այդպես է թվում քեզ, — կատակեց Ֆրենկը: — Քիշրիւ այլիս չես սիրի: Կովան ուրիշներ:

— Ուրիշնե՞ր, — բացականչեց էյլինը, և նրա ձայնը հընչեց արհամարհանքով ու վրասվմունքով լի: — Քեզնից հետո ինձ համար ուրիշներ գոյություն չունեն: Ինձ միայն դու ես պեսոք, Ֆրե՛նկ: Եթե դու երբեք լքես ինձ, ես վերջ կտամ կյանքիս: Ա՛յ, կտեսնե՞ս:

— Այդպես մի՛ խոսիր, էյլի՛ն, — բարկացավ Քառուփերվուդը: — Զեմ ուզում հիմար բաներ լսել: Դու քեզ ոշինչ էլ չես անի: Ես քեզ սիրում եմ, և ինքդ էլ զիտես, որ ես քեզ չեմ լրի: Բայց եթե հիմա դու լքեր ինձ, քեզ համար լավ կլիներ:

— Ա՛յ քեզ ցնդաբանություն, — բացականչեց էյլինը: — Լքե՞լ քեզ: Եվ քո կարծիքով ես ընդունա՞կ եմ դրան: Բայց եթե դու լքես ինձ, հիշի՛ր, թե ինչ ասացի: Երդվում եմ, ազդուես էլ կանեմ:

— Լավ, բավակա՞ն է, բավակա՞ն է, լոի՛ր:

— Երդվո՞ւմ եմ, երդվում եմ իմ սիրով. Երդվում եմ քո բարեկեցությամբ և իմ երջանկությամբ: Ես ինքնասպան կլինեմ: Դու ես միայն ինձ պետք:

Քառուկերվուղը վեր կացավ։ Այն կիրքը, որ հարուցել էր ինքը էլլինի մեջ, այժմ վախեցնում էր իրեն։ Վտանգավոր էր այդ կիրքը և հայտնի չէր, թե ուր կարող էր տանել իրենց։

Նոյեմբերյան մի ամպամած օր էր, երբ Օլդերսոնը լուր ստանալով հերթապահող լրտեսից, որ էլլինն ու Քառուկերվուղը եկան Հարավային Վեցերորդ փողոցի տունը, եկավ Բաթլերի գրասենյակը և առաջարկեց անմիջապես մեկնել իր հետ։ Բայց հիմա անգամ Բաթլերը դժվարությամբ էր հավատում, որ իր դատերը կգտնի այդպիսի վայրում։ Ի՞նչ խայտառակություն, ի՞նչ սարսափելի բան, ի՞նչ պիտի ասի նրան։ Եվ նախատելու ուժ կունենա՞ արդյոք, ինչպե՞ս վարվի Քառուկերվուղի հետ։ Նրա խոշոր ձեռքերը ցնցվում էին, երբ մտածում էր, թե ինչ պիտի անի նշանակված վայրից մի քանի տուն չհասած՝ նրանց մոտեցավ մի այլ լրտես, որ հերթապահում էր փողոցի մյուս կողմում։ Բաթլերն ու Օլդերսոնը դուրս եկան նրանցքից ու նրա հետ շարժվեցին դեպի շքամուտքը։ Արդեն շորս անց կեսին մոտ էր Նրանց մոտեցած տան սենյակներից մեկում այդ ժամանակ Քառուկերվուղը առանց բաճկոնի ու ժիլետի նստած՝ լսում էր էլլինի տրտումները։

Նրանց գտնված սենյակը խիստ տիպական էր պերճանքի վերաբերյալ այդ տարիներին իշխող քաղքենիական պատկերացմանը։ Կահույքի «շքեղ» կոմպլեկտների մեծ մասը, որ շուկա էին հանում այն ժամանակի դահույքի ֆարրիկանտները, կուտովիկոսներից որևէ մեկի ոճի նմանակերպումն էր։ Դոների վարագույրները, որպես կանոն, ծանր կտորից էին, արծաթե կամ ոսկե թելերով ասեղնագործած և մեծ մասամբ կարմիր։ Գորգերը աշքի էին ընկնում գունագեղությամբ և թաշշանման խիտ խավով։ Կահ-կարասին, ինչ ատաղձից էլ շինեին, ապշեցնում էր իր ծանրաքաշությամբ, խոշորությամբ ու առատ նախշերով։ Մեր հիշատակած սենյակում կար ընկույզի փայտից մի ծանր մահճակալ, հանդերձարան, կոմոդ և նույն փայտե արդուզարդի սեղան։ Այս սեղանի վերեր կախված էր ոսկեզօծ շրջանակի մեջ դրված մի խոշոր ուղղանկյուն հայելի։ Պատերին, նույնպիսի ոսկեզօծ շրջանակների միջից նայում էին մի քանի անճաշակ բնապատկեր-

ներ ու մերկ կահանց նկարներ։ Ոսկեգույն աթոռները դիպակներոց ու թիկնակ ունեին. այդ դիպակը վառվուն ծաղկանկարներ ուներ և ամրացված էր պղնձե փայլուն գամերով։ Բրյուսելյան հաստ ու բաց գույնի գորգի վրա գործված էին ծաղիկներով լի խոշոր, բաց կապույտ զամբյուղները։ Ընդհանուր առմամբ սենյակը թողնում էր լուսավոր, փարթամորեն կահավորված ու փոքր-ինչ հեղձուցիշ տպավորություն։

— Գիտես ինչ, երբամն սարսափ է պատում ինձ,— ասում էր էյլինը։ — Զէ՞ որ միանգամայն հնարավոր է, որ հայրս հետեւում է մեզ։ Քանի անգամ արդեն ինքս ինձ հարցրել եմ, ի՞նչ անենք, եթե նա մեզ բռնի։ Այդ դեպքում արդեն ոչ մի սուտ չի օգնի։

— Այո՛, ի՞սորկե, — համաձայնեց Քառուկերվուղը։

Ինչպես միշտ, նա գտնվում էր էյլինի թովշանքի իշխանության ներքո։ Այնքան սքանչելի, քնքուշ ձեռքեր ուներ նա, այնքան բարեձև, ճերմակ վիզ. շեկ-ոսկեթուցր վարսերը վառ լուսապսակի նման շրջանակում էին նրա գլուխը, փայլում էին խոշոր աշրկեր։ Նրա ամրուց անձից հառնում էր ծաղկափթիթ, կանացի հրապարակ՝ հափշտակվալ, անհավասարացիշիւ, սումանսիկ առ... հրաշապեղ։

— Ինչ որ լինելու է՝ կինի, — ասաց Ֆրենկը։ — Եվ այնուամենայնիվ ինքս էլ արդեն մտածել եմ, ավելի լավ չի լինի արդյոք միառժամանակ հանդիպումներից խուսափել։ Ճիշտն ասած, այդ նամակը պետք է սովորեցներ մեզ խելացի լինել։

Նա գրկեց էյլինին, որ արդուզարդի սեղանի առաջ կանգնած՝ վարսերն էր կարգի բերում, ու համբուրեց նրա զմայլելի բերանը։

— Շա՞տ ոլշրասերն ես դու, էյլին. բայց քեզանից սիրելի ոչ ոք չկա աշխարհում, — շշնչաց նրա ականջին Ֆրենկը։

Այդ նույն պահին Բաթլերն ու երկրորդ լրտեսը մուտքի դռնից ետ քաշվեցին, իսկ գործողության հրամանատարությունն ստանձնած Օլգերսոնը զանգը քաշեց։ Դուռը բացեց մի սեամորթ աղախին։

— Հը՞՝ միսիս Դկիսը տա՞նն է, — սիրալիր շեշտով

Հարցը թու Օլդերսնը, տալով տիրուհու անունը: — Կուզենայի
տեսնել նրան:

— Հրամեցեք, խնդրեմ, — պատասխանեց ոչինչ շկաս-
կածող աղախինը, ցուց տալով մուտքի աջ կողմը. գտնվող
ընդունարանի դուռը:

Օլդերսոնը հանեց իր փափուկ, լայնեզր գլխարկը ու
ներս մտավ: Աղախինը հազիվ էր վեր բարձրացիլ տիրուհուն
կանչելու, երբ Օլդերսոնը վերադարձավ նախասենյակ և ներս
առավ թաթիերին ու երկու լրտեսին: Առանց որևէ մեկից
նկատվելու շրուն էլ մտան ընդունարան: Մի քանի րոպե անց
հայտնվեց ինքը՝ «մադամը», ինչպես ընդունված է անվանել
այդպիսի տների տիրուհիներին: Թարձրահասակ, ամրակազմ
ու բավական հաճելի արտաքինով մի խարտյաշ կին էր, կա-
պուտաշվի ու ժպտագեմ: Ոստիկանության հետ հաճախակի
շփում ունենալը և երիտասարդ տարիներին ցոփ կյանք վա-
րելը գարգացրել էին նրա մեջ զգուշություն և անվստահու-
թյուն մարդկանց հանդեպ: Իր ապրուատը վաստակելով ազ-
նիվ աշխատանքի հետ ոչ մի ընդհանրություն չունեցող միջոց-
ներով և այլ արհեստ շիմանալով, նա ամենից առաջ մտա-
հոգված էր ոստիկանության ու հաճախորդների հետ հաջո-
ապրելով, ինչպես, ասենք, մի որևէ առևտրական որևէ այլ
ընագավառում: Հագել էր նա մի լայնկեկ, կապույտ ժաղկա-
վոր սենեկազգեստ՝ օձիքի մոտ կապույտ ժապավենով այն-
պես ի մի հավաքված, որ կտրվածքից երեսում էր թանկար-
ժեք սպիտակեղենը: Նրա ձախ ձեռքի միջնամատը զարդարել
էր արևաքար ակնով մի մատանի, իսկ ականջները կապույտ
փիրուուք գիների: Նրա արդուլարդն ավարտում էին գեղին
մետաքսե մաշիկները՝ ագուցված բրոնզագույն ճարմանդնե-
րով: Ընթանուր առմամբ տանտիրուհու արտաքինը միան-
գամայն ներդաշնակ էր ընդունարանին, որի կահ-կարասին
կազմված էր ոսկեգույն պաստաներից, բրյուսելյան: Կրեմա-
գույն ու կապուտակ նախշեր ունեցող գորգից, ոսկեզօծ հաւ-
տամեստ շրջանակների մեջ դրված և մերկ կանայք պատկերով
փորագրանկարներից, նմանապես ոսկեզօծ շրջանակի մեջ առ-
նըված մի խոշոր, հատակից առաստաղին հասնող հայելուց:

Արժե՞ս՝ արդյոք ասել, որ թաթլերը մինչև հոգու խորքը ցնցվեց անառակության այդ մթնոլորտից, որի կործանարար թով-շանքը ըստ երեսութին համակել էր և իր դատերը:

Օլդերսոնը նշան արեց լրտեսներից մեկին, որն անմիջապես կանգնեց կնոջ ետևը, կտրելով սրա նահանջի ուղին:

— Շատ եմ ցավում, որ անհանգստացրի ձեզ, միսի՛ս Դեկս, — ասաց Օլդերսոնը, — քայց մենք պետք է տեսնենք մի զույգի, որը գտնվում է ձեր տանը: Խոսքը անից փախած մի աղջկա մասին է: Ո՞չ մի իրարանցում չի լինի. մենք պետք է միայն գտնենք նրան ու տանենք:

Միսիս Դեկսը գույնը գցեց ու բացեց քերանը:

— Չլինի թե փորձեք ճշալ, — ավելացրեց Օլդերսոնը: Նկատելով այդ: — Ապա թե ոչ ստիպված կլինենք ձեռք առնել մեր միջոցները: Իմ մարդիկ ամեն կողմից հսկում են տանը: Ոչ ոք չի կարող դուրս գալ այստեղից: Ճանալո՞ւմ էք դուք Քառուփերվուդ անունով մի պարոնի:

Բարերախտարար, միսիս Դեկսը ոչ խիստ զղացին և ոչ էլ տառնձնապես սակամաշունչ բնափորաթյաններից չէր և շատ թե բիշ փիլիսոփոյորեն: Եթ վերաբերվում կյանքին: Ֆիլադելֆիայում նա դեռ չէր կարսղացել կապ հաստատել ստիկանություն հետ, ուստի և վախենում էր քոնվելուց: Ի՞նչ օգոստ կա ճշալուց՝ մտածեց նա: Մեկ է, տունը շրջապատված է. և մոտակայքում չկա մեկը, որ կարողանա փրկել այդ զույգին: Տանտիրուհին նրանց խսկական անունները չէր իմանում: Նրանք իր համար միստր և միսիս Մոնթեգյու էին:

— Այդ անունով ոչ մեկի շեմ ճանաշում, — հուզված պատասխանեց նա:

— Մի՞թե այստեղ շիկահեր աղջիկ չկա, — հարցրեց Օլդերսոնի օգնականներից մեկը: — Եվ մի տղամարդ, բեղերը շագանակագույն, կոստյումը գողշ: Նրանք եկան կես ժամ առաջ: Մի՞թե դուք նրանց լնկատեցիք:

— Ամբողջ տանը հիմա միայն մի զույգ կա. քայց ես շեմ իմանում, թե ձեր փնտրա՞ծն են: Եթե ցանկանում եք, ես կխնդրեմ նրանց իշնեն այստեղ: Միայն թե, ի սե՞ր աստծու, աղմուկ մի՛ բարձրացրեք:

— Զեղ հանդարտ պահեցեք, և ո՞չ մի աղմուկ չի լինի, — պատասխանեց Օլդերսոնը: — Մի՛ հուզվեք: Մենք մի բան ենք ուզում. գտնել այդ աղջկան ու տանել այստեղից: Մնացեք այստեղ: Ո՞ր սենյակում են նրանք:

— Երկրորդ հարկի երկրորդ սենյակում: Բայց դուցե դուք թույլ տաք, որ ես էլ դամ ձեզ հետ: Այդպես ավելի լավ կլինի: Ես կրախեմ գուռը և կփնդրեմ դուրս դան:

— Ո՞չ, մենք ինքներս կանենք: Մնացե՞ք այստեղ: Վախենալու բան չկա: Միայն թե մնացե՞ք տեղում, — համառորեն կրկնեց լրտեսը:

Օլդերսոնը ձեռքի շարժումով հրավիրեց Բաթլերին հետեւյու իրեն, բայց սա հանկարծ խելքի եկավ, որ մեծ սխալ է կատարել՝ ձեռնարկելով այս կեղտոտ գործը: Ի՞նչ օգուտ, որ ինքը ներխուժի սենյակը ու ստիպի էլլինին դուրս գալու, քանի որ իրավունք չունի սպանելու Քառուփերվուդին: Բավական է, որ ստիպեն նրան իշնելու ցած: Նա կհասկանա, որ ամեն ինչ հայտնի է Հորր: Չարժե, որոշեց նա, մարդկանց ներկայությամբ խայտառակել Քառուփերվուդին: Նա վախենում էր այդ տեսարանից, վախենում էր ինքն իրենից:

— Թող նա գնա այնտեղ, — մոռայլ ասաց նա, մատնացուց անելով միսիս Դևիսին: — Խսկ դուք միայն հետեւցեք նրան: Ասեք աղջկան, որ իշնի ինձ մոտ:

Անմիջապես ըմբռնելով, որ խոսքը ընտանեկան ողբերգության մասին է և Հուալով, որ կկարողանա բարեհաջող կերպով պրծնել այս գործից, միսիս Դևիսը իսկույն բարձրացավ վեր: Օլդերսոնն ու նրա օգնականները կրնկակոխ հետեւցին նրան: Մոտենալով էլլինի ու Քառուփերվուդի զբաղեցրած սենյակին՝ տիկինը թեթևակի բախեց գուռը: Աչդ միջոցին նրանք երկուսով նստած էին լայն թիկնաթոռին: Բախյունը լսելով՝ էլլինը գուշնը գցեց ու վեր թռավ: Առանձնապես ջղացին շլինելով հանդերձ, նա շգիտես ինչու այդ ամբողջ օրը ձախորդության նախազգացում ուներ: Քառուփերվուդի հայացքը վայրկենապես խստացավ:

— Մի՛ անհանգստանա, երկի, սպասավորներից մեկն է, — ասաց նա: — Ինքս կգնամ բաց անելու:

Նա դիմեց դեպի դուռը, բայց էյլինը կասեցրեց նրան:

— Սպասի՛ր: — Եվ մի փոքր հանդարտվելուց հետո մոտեցավ պահարանին ու հանելով սենեկազգեստը՝ քաշեց իր վրա: Զարկը կրկնվեց: Այնժամ էյլինը փոքրինչ բացեց դուռը:

— Միսիս Մոնթեգյու, — հուզված, բայց ջանալով տիրապետել իրեն, ասաց միսիս Դևիսը, — ներքեռում մի շենտլմեն ձեզ է հարցնում:

— Ի՞նձ, — բացականչեց էյլինը, ավելի գունատվելով: — Վստա՞հ եք, որ ինձ է հարցնում:

— Այո, ասաց, որ ուզում է ձեզ տեսնել: Նրա հետ մի քանի մարդ էլ կա: Ինձ թվում է, թե ձեր ազգակիցներից մեկն է:

Ե՛վ էյլինը, և Քառուփերվուդը վայրկենապես հասկացան, թե ինչ է տեղի ունենում: Իրենց հետեւ էին՝ Բաթլերը կամ Լիլիանը, ավելի շուտ Բաթլերը: Քառուփերվուդը ամենից առաջ մտածեց, թե ինչպես պաշտպանի էյլինին: Իր համար այդ պահին առանձտպիս չէր վախճանում: Բավականաշափ տապեատաթյուն ուներ նա, որպեսսպի թույլ շաար, որ վախը ուղաշարեր իրեն այնաև, ուր խոսքը վերաբերում էր կոչ: Բացառված չէր, որ Բաթլերը եկել էր իրեն սպանելու մտադրությամբ, բայց նա շվախեցավ, անզամ թույլ շտվեց իրեն կանգ առնել այդ մտքի վրա, թեև մոտը զենք չուներ:

— Կհագնվեմ ու կիշնեմ ցած, — ասաց Ֆրենկը՝ նայելով էյլինի գունատ գեմքին: — Դու կաց այստեղ: Եվ խնդրում եմ, մի՛ հուզվիր, ամեն ինչ լավ կլինի: Միայն թե հանգիստ եղիր... Ամեն ինչ թող ինձ: Ես եմ ամեն ինչում հանցավոր, ես էլ կլուծեմ այս հանդուցը: — Նա կախարանից վերցրեց վերարկուն, գլխարկը և ալելացրեց: — Հագնվիր, շուտ, իսկ ես առաջ կդնամ:

Դուռը նոր էր փակվել միսիս Դևիսի վրա, որ էյլինն սկսեց հագնվել, հապշտապ, սաստիկ հուզվելով: Նրա ուղեղը աշխատում էր առավելագույն արագությամբ գործի դրված մոտորի նման: Կարո՞ղ է պատահել, որ հայրս է, — հարցնում էր նա իոեն: — Ո՞չ, ո՞չ, նա չէ՛: Գուցե և տանը գտնվում է մի

այլ կ' ն, որի անունը հիրավի Մոնթեգյու է: Բայց եթե, այնու-
ամենայնիվ, Հայրս է, ապա որպիսի՛ մեծահոգություն, որ
նա պահեն է գաղտնիքը, տնեցիներից ոչ մեկին չի հայտնել: Հայրը սիրում է իրեն. Էյլինն այդ գիտե: Այդպիսի արկածի
մեջ ընկած աղջկա համար մեծ նշանակություն ունի, երբ
տանը սիրում են իրեն, շոյում ու երես են տալիս: Իսկ էյլինին
սիրում էին, գտալաքում, երես տալիս: Նա չէր կարող պատ-
կերացնել, թե Հայրն ընդունակ էր ֆիզիկական ներգործման
դիմելու իր կամ մի ուրիշի հանգեց: Բայց ինչպե՞ս կզգա նա,
երբ հանդիպի Հորը, նայի նրա աշքերին: Հոր պատկերը, որ
հառնեց նրա երևակայության մեջ, իսկույն ևեթ թելազրեց
նրան, թե ինչ պետք է անի:

— Ո՛չ, Ֆրենկ,— հուզախոռվ շշնչաց նա Քառիկերվու-
դին.— Եթե Հայրս է, ապա ավելի լավ է ինքս գնամ: Ես
գիտեմ, թե ինչպես պետք է խոսել նրա հետ: Նա ինձ ոչինչ
չի անի: Իսկ ես չեմ վախենում, ճիշտ որ չեմ վախենում:
Եթե դու պետք լինես ինձ, կանչեմ:

Ֆրենկը մոտեցավ նրան, զոյգ ձեռքով բռնեց նրա
սքանչելի դեմքը և լրջորեն նայեց աշքերին:

— Ոչ մի բանից մի՛ վախենա, — ասաց նա: — Ինքս
կիշնեմ ցած: Եթե քո Հայրն է, գնա նրա հետ: Ես հավատա-
ցած եմ, որ նա ոչինչ չի անի ո՛չ քեզ, ո՛չ ինձ: Այդ դեպքում
մի քանի տող ուղարկիր գրասենյակիս հասցեով: Այնտեղ
կլինեմ: Եթե կարող եմ քեզ օգտակար լինել, իմաց տուր ինձ:
Մի բան կհնարենք: Կարիք չկա, որ բացատրություններ տաս:
Ամենեին մի՛ պատասխանիր նրան:

Նա արդեն հագել էր սերթուկն ու վերարկուն և այժմ
կանգնած էր դռանը՝ գլխարկը ձեռքին: Էյլինը համարյա
հագնված էր և շտապ-շտապ շրջազգեստն էր կոճկում,
դժվարությամբ ագուցելով հաղարջի նման կարմիր կոճակ-
ների շարանը: Քառիկերվուդն օգնեց նրան: Երբ Էյլինն
արդեն գլխարկը դրել ու ձեռնոցները հագել էր, Ֆրենկը մի
անգամ ևս կրկնեց.

— Թույլ տուր առջենից ես գնամ: Ուզում եմ տեսնել ով-
քիր են այնտեղ:

— Ո՞ւ, Ֆրենկ, շատ եմ խնդրում, — բաջաքար բողոքեց էլլինը: — Թող առաջ անցնեմ: Ես գիտեմ՝ հայրս է: Ուրիշ ոչ ոք: — Նույն բողեին էլ նրա մտքով անցավ, որ թաթլերն իր հետ բերել է և որդիներին. բայց անմիջապես էլ վանեց այդ միտքը: Ո՞ւ, այդպիսի բան չի կարող լինել: — Դու կգաս, եթե կանչեմ, — շարունակեց նա: — Նա ինձ ոչինչ չի անիւ իսկ եթե դու գնաս, անմիջապես կկատաղի: Թող գնամ, իսկ դու կաց այստեղ՝ դուանը: Եթե չկանչեմ քեզ, նշանակում է, որ ամեն ինչ կարգին է: Եղա՞վ:

Նրա գեղեցիկ ձեռքերը ֆրենկի ուսերին էին, երբ նա լարված մտմտում էր էլլինի խոսքերի վրա:

— Լավ, — ասաց վերջապես ֆրենկը, — բայց ես կգամ քո ետևից:

Նրանք մոտեցան դուանը, և այն բացեց ֆրենկը: Դուանը կանգնել էր Օլդերսոնը իր երկու օգնականների հետ, իսկ նրանցից մի քանի քայլ հեռու՝ միսիս Դևիսը:

— Ի՞նչ եք ուզում, — խստությամբ դիմեց Քառուփերվուզը Օլդերսոնին:

— Նիրքիստ սպասում է մի զենալմին. Նա ուզում է խոսել այս տիկնոջ հետ, — պատասխանեց լրտեսը: — Կարծում եմ նրա հայրն է, — հանգիստ ավելացրեց նա:

Քառուփերվուզը մի կողմ քաշվեց, որպեսզի էլլինը առաջ անցնի: Սա արագ առաջ անցավ, կատաղած, որ այդ մարդիկ իմացել էին իր գաղտնիքը: Անմիջապես վերադարձավ նրա ամբողջ խիզախությունը: Նա զայրացած էր, ինչպես կարողացել էր հայրը ծաղրի ենթարկել տալ իրեն: Քառուփերվուզը փորձեց հետեւ էլլինին:

— Խորհուրդ չէի տա, որ հիմա գնաք այնտեղ, — խոհեմությամբ զգուշացրեց նրան Օլդերսոնը: — Նրա հայրն է այնտեղ: Ազգանունը Բաթլեր է, այնպես չէ՞: Դուք նրան շատ չեք հետաքրքրում: Նա իր աղջկան է ուզում տեսնել:

Այնուամենայնիվ Քառուփերվուզը առաջացավ ու կանչ առաջ հարթակի վրա:

— Ինչո՞ւ ես եկել այստեղ, հա՛յր, — ֆրենկի ականջին հասավ էլլինի ձայնը:

Բաթլերի պատասխանը նա շլեց ու հանկարծ հանդառավեց՝ հիշելով, թե այդ մարդը որքա՞ն է սիրում իր գստերը։
Հոր հետ զեմառդեմ գտնվելուց հետո էյլինն ուզում էր խոսել հանդուգն ու խայթող շեշտով, սակայն թավ հոնքերի տակից նայող Բաթլերի գորշ, խոր ընկած աշքերի հայացքը ցուցադրում էր այնպիսի տառապանք, այնպիսի մեծ վիշտ, որ չնայած իր զայրույթին՝ էյլինը մի տեսակ ընկճվեց։ Զափից ավելի տիսուր էր այդ ամենը։

— Երբեք չէի կարծում, որ քեզ կգտնեմ այսպիսի վայրում, աղջի՛կս,— ասաց Բաթլերը։ Կարծում էի, որ դու ավելի ես հարգում քեզ։ — Նրա ձայնը երերաց, և նա կանդ առավ։ — Գիտեմ, թե դու ում հետ ես եկել այստեղ, — շարունակեց նա, զլուխը տիսուր օրորելով։ — Անպիտա՞նը. ես նրա հաշիվը հետո՝ կմաքրեմ։ Իմ հրամանով շարունակ հետևում էին քեզ։ Եվ ինչո՞ւ ես ապրեցի այնքան, որ տեսնեմ այս անարգանքը... Դու իսկույն ինձ հետ կգաս տուն։

— Ցավն էլ այն է, հա՛յր, որ դու մարդիկ ես վարձել ինձ լրտեսելու համար, — սկսեց էյլինը։ — Ինձ թվում էր, թե դու պետք է...»

Նա լռեց, որովհետև հայրը ձեռքը բարձրացրեց տարօրինակ, տառապալի, բայց և հրամայական շարժումով։

— Լոկ'ր, լոկ'ր, — գոշեց նա, մոայլ նայելով գստերը խոժողած, սպիտակ հոնքերի տակից։ — Ես շեմ դիմանամա.. Մեղք գործելու մի՛ մղիր ինձ։ Մենք դեռ այս հաստատության պատերի մեջ ենք։ Նա էլ դեռ այստեղ է։ Դու անմիջապես կգաս գնանք տուն։

Էյլինը հասկացավ. հայրը խոսում էր Քառիկերվուդի մասին, և դա սարսափեցնում էր նրան։

— Ես պատրաստ եմ, — ալեկոնձված հայտարարեց նա։ Ծեր Բաթլերը՝ վշտաբեկ, առաջ անցավ։ Նա գիտեր, որ կյանքում երբեք չի մոռանա այս ծանր րոպեները։

Զնայած իր ամբողջ զայրուցին, բոլոր միջոցներով Քառւ-
փերվուդի գատաստանը տեսնելու վճռականության՝ Բաթլերն
այնպես էր շշմել ու ցնցվել էյլինի վարքից, որ իրեն բոլորո-
վին այլ մարդ էր զգում, քան քսանչորս ժամ առաջ: Էյլինն
իրեն պահում էր անայլայլ, ավելին՝ հանդուգն, մինչդեռ Բաթ-
լերը հավատացած էր, որ հանցանքի տեղում նրան բռնելուց
հետո, կհուսալքվի: Եվ ահա հիմա, երբ իրենք դուրս եկան
այն շարաբաստիկ տնից, հայրը, ի հուսահատություն իրեն,
տեսավ, որ դստեր մեջ արթնացրեց այն մարտական կրակը.
որ խիստ նման էր հենց իրեն փոթորկող կրակին: Էյլինի բնա-
վորությունը պակաս աննկուն չէր, քան իրենն ու Ծուենինից:
Նստած հոր կողքին վարձու մի կառքում, որն իրենց տանում
էր տուն, նրա գեմքը մերթ կարմրատակում էր, մերթ էլ՝ գու-
նատվում գլուխը ներխուժող մտքերի կուտակումից: Քանի որ
արդեն թաքցնելու կարիք չկար, ապա էյլինը որոշեց պաշտ-
պանել իր դիրքը, բացահայտորեն ասել հորը, որ կապված է
Քառվիերվուդի հետ, որ սիրում է նրան, հայտնել իր հայացք-
ները այդպիսի հարաբերությունների մասին: Իր ի՞նչ գործն
է, թե հայրն ինչ է մտածում հիմա, ասում էր նա մտքում:
Դատ մտնողը թրջվելուց շի վախենաւ: Ինքը սիրում է Քառվիեր-
վուդին. Հոր աշքում ինքն ընդմիշտ անպատված է: Մեկ չէ՝
ուրեմն, թե ինչ կասի նա: Զնայած հայրական սիրույն՝
Բաթլերը այնքան էր ստորացել, որ լրտեսել էր աղջկան,
խայտառակել կողմնակի մարդկանց՝ գործակալների, Քառւ-
փերվուդի աշքում: Մի՞թե այս ամենից հետո կարող էր ինքը
նախկին սերը տածել հոր հանդեպ: Նա սիսալ էր կատարել
դստեր նկատմամբ: Կատարել էր անիմաստ ու անարժան
մի քայլ, որը, մեկ է, արդարացում չուներ, որքան էլ վատ
արարք կատարած լիներ ինքը: Ի՞նչ ձեռք բերեց նա աղջկան
խայտառակելով, նրա ամենանվիրական գաղտնարանների
վրայից պոկելով վարագույրը, այն էլ օտար մարդկանց, և
ո՞ւմ՝ լրտեսների ներկայությամբ: Օ՛, որքան տառապակից
էին այդ մի քանի քայլերը՝ ննջարանից մինչև ընդունարանը:
Երբաք ինքը շի ների հորը, երբեք, երբեք:

որդիական իր սերը։ Սրանից հետո իրենց միջև սկիզբ է առնելու մի անողոք կոփիւ Եվ այն ժամանակ, երբ նրանք լուսումունջ գնում էին կառքով, նրա փոքրիկ բռունցքները շարացած սեղմվում էին ու բացվում, մի ձեռքի եղունգները խրվում մյուսի մեջ, շրթունքներին սառը քմծիծաղ էր խաղում։

Դեռ ոչ ոք չի լուծել այն հարցը, թե կոպիտ բռնությունը կարո՞ղ է արդյոք օգուտ տալ։ Բռնությունը այնքան անքակտելիորեն է կապված մեր անցավոր գոյության հետ, որ օրինաշափության բնույթ է ստանում։ Ավելին՝ գուցե և դրան ենք մենք պարտական այն հանդիսարանի համար, որը կոշվում է կյանք, և դա կարելի է թերեւս գիտականորեն ապացուցել։ Բայց այն ժամանակ ի՞նչ արժեք ունի այդ ամենը։ Ի՞նչ արժե այդ «հանդիսարանը»։ Մասնավորապես ի՞նչ արժե այն տեսարանը, որ տեղի էր ունենում ելլինի ու նրա հոր միջև։

Ծեր Բաթլերը ճանապարհին մտածում էր այն ամենի մասին, ինչ անելու է նա սրանից հետո, կլինի դստեր դեմ մղվող մի մենամարտ, որը աստված գիտե, թե ուր կհասցնի իրենց։ Ի՞նչ կարող է անել ինքը դստեր հետ։ Ահա նրանք առաջանում են այդ տեսարանի թարմ տպավորության տակ։ Իսկ ելլինը ո՛չ մի խոսք չի ասում։ Նույնիսկ համարձակվեց հարցնել իրեն, թե ինչո՞ւ է եկել այնտեղ։ Ինչպե՞ս նրա հայսից գա, երբ նրան չկոտրեց անգամ այն, որ բռնեցին հանցագործության վայրում։ Բաթլերի խորամանկ մտահղացումը, որ այնքան հաջող էր թվում իրեն, բարոյապես ամբողջովին ձախողվեց։

Մոտեցան տանը, և ելլինը դուրս եկավ կառքից։ Ծեր Բաթլերը շատ էր ցնցված, որպեսզի անմիջապես որեւէ քայլ աներ, ուստի որոշեց մեկնել իր գրասենյակը։ Սակայն ճանապարհին կառքը կանգնեցրեց ու ոտքով շարունակեց։ Նրա համար անսովոր մի արարք, որովհետև շատ տարիներ էր, ինչ նա չէր իմանում, թե ինչ բան է քայլել մտածմունքի մեջ խորասուզված։ Երբ հավասարվեց կաթոլիկ եկեղեցուն, որտեղ ժամերգություն էր տեղի ունենում, նա ներս մտավ և սկսեց պաղատել երկնքին՝ լուսավորելու իր միտքը։ Կիսա-

խավարը, թորհրդատուփիի առաջ վառվող կանթելն ու բարձր, սպիտակ, մոմազարդ բեմը փոքր-ինչ խաղաղեցրին նրա այլայլված զգացմունքները:

Եկեղեցում մի փոքր մնալուց հետո, նա վերադարձավ տուն, ճաշին էլլինը չեկավ, ծերունու կոկորդից էլ պատաս չէր իշնում ցած: Առանձնանալով իր աշխատասենյակում՝ կարծյալ նա սկսեց մտածել, մտածել ու մտածել: Անբարոյական տանը՝ բռնված էլլինի մասին մտածելը հանգիստ չէր տալիս նրան: Պատկերացնո՞ւմ եք, Քառսիկերվուղը համարձակվել էր այդպիսի տեղ տանել էլլինին՝ ծեր Բաթլերների երես առած զավակին: Բայց աղոթքը աղոթք, սակայն և այնպես, չնայած իր վստահ լինելուն էլլինի դիմադրությանն ու այդ ամբողջ պատմության տանջալիությանը՝ ինքը պարտավոր է դատերը փորձանքից ազատել: Էլլինը պետք է միառժամանակ մեկնի... Հրաժարվի Քառսիկերվուղից: Ամենայն հավանականությամբ նրան կուղարկեն ուղղիչ բանտ, և աշխարհում հազիվ թե գտնվի մի մարդ, որ ավելի մեծ շափով արժանի լինի այդ վիճակին: Անկասկած, Բաթլերը դրա համար կաշխատի լույսը զսովանակները շարժման միջ դնել: Վերջ ի վերջո այդ նրա պարտականությունն է: Իսկ դրան հասնելու համար բավական է, որ ինքը դատական աշխարհում մի ակնարկ անի, թե այդպես է ուզում: Եվ չի էլ ուզենակաշառել երդվյալ ատենակալներին, որովհետև դա հանցագործություն կլիներ. բայց կհետեւ, որ գործը լուսաբանվի պատշաճ ձևով: Իսկ երբ արդեն դատավճիռը արձակվի Քառսիկերվուղի դեմ, ոչ ոք, բացի աստծուց, չի օգնի նրան: Չի փրկի բարեկամների ո՛չ մի միջնորդություն: Բոլոր ատյանների դատավորները շատ լավ են հասկանում իրենց շահավետությունը: Նրանք քիչ տարբեր կերպ կլուսաբանեն գործը հօգուտ նրանց, ովքեր տվյալ պահին իշխանության գլուխ են կանգնած. այս բանին նա կարող է հասնել:

Այդ միջոցին էլլինը եռանդագին ջանում էր քննարկել ստեղծված դրությունը: Զնայած տուն վերադառնալիս երկուսն էլ լուս էին, բայց էլլինը գիտեր, որ հետ խոսակցություն պիտի ունենա: Դա անխուսափելի է: Հայրը կպա-

Հանջի, որ ինքը որևէ տեղ մեկնի: Ամենահավանականն այն է, որ նա այս կամ այն կերպ դարձյալ խոսակցություն կսկսի Եվրոպա մեկնելու մասին: Հիմա էլլինը հասկացել էր, որ միսիս Մոլենհաուերի հրավերը հոր հերթական խորամանկությունն էր, և իրեն էր մնում որոշել՝ կմեկնի՝, թե՞ ոչ: Մի՞թե ինքը Քառուփերվուղին կլքի հիմա, երբ շուտով դատն է լինելու: Ո՛չ, ո՛չ մի կերպ: Ինքը պետք է իմանա, թե ինչ է կատարվում Ֆրենկի հետ: Ավելի լավ է, եթե փախչի տնից ազգականների, բարեկամների, վերջապես, օտարքարդկանց մոտ և ապաստան խնդրի նրանցից: Էլլինը մի քիչ գրամ ուներ: Ժամանակ առ ժամանակ հայրը բավական խոշոր գումար էր տալիս նրան: Նա հագուստներից որոշ բաներ կվերցնի ու կփախչի: Տնեցիները, իհարկե, կիմնդրեն վերադառնալ, երբ որոշ ժամանակ մնան առանց նրան: Մայրը բոլորովին խելքը կթոցնի: Նորան, Քելեմը և Օուենը վշտից ու զարմանքից գլուխները կկորցնեն, իսկ հայրը, է՛, ի՞նչ ասես հոր մասին, բավական է նայել նրան: Գուցե և իր փախուստը խելքի բերի նրան: Էլլինը, շնայած իր խելառության, ամբողջ տան հպարտությունն էր ու հոգին և շատ լավ էլ իմանում էր դա:

Ահա թե ինչ ուղղությամբ էր աշխատում նրա ուղեղը, երբ նվաստացուցիչ մերկացումից մի քանի օր անց, հայրը կանչեց նրան իր առանձնասենյակը: Այդ օրը Բաթլերը շուտ վերադարձավ գրասենյակից՝ հույս ունենալով, որ էլլինին կգտնի տանը և երես առ երես կխոսի հետք: Բաթլերի հաշիվը ճիշտ դուրս եկավ. վերջին ժամանակները էլլինը դուրս գալու ոչ մի ցանկություն չուներ. շատ լարված՝ սպասում էր ամեն տեսակ անախորժությունների: Հենց նոր էր նա նամակ ուղարկել Քառուփերվուղին ու խնդրել հանդիպել իրեն վաղը՝ Ուիսահիկոնի ափին, եթե նույնիսկ Ֆրենկը համոզվի, որ հետևում են իրեն: Ինքը պետք է հանդիպի նրան: Հայրս, գրել էր նա, առայժմ ոչինչ չի արել, սակայն ինքը համոզված է, որ նա փորձում է որևէ բան ձեռնարկել: Ահա այդ մասին էլ ուղում է խոսել Ֆրենկի հետ:

— Ես շարունակ քո մասին եմ մտածում, էլլի՛ն, մտա-

ծում եմ, թե ինչ անենք,— առանց որևէ նախաբանի սկսեց թաթլերը, հենց որ նրանք իրար հանդիպեցին հոր առանձնասենյակում:— Դու անվիճելիորեն գտնվում ես կործանման ճանապարհին: Ինձ սարսափի է տիրում, երբ մտածում եմ, թե ինչպես ես դու սպանում քո անմահ հոգին: Ես ուզում եմ օգնել քեզ, զավա՛կս, քանի դեռ ուշ չէ: Այս ամբողջ ժամանակամիջոցում անընդհատ նախատել եմ ինձ ու մտածել, թե գուցե և ես կամ մայրդ որևէ բան սխալ ենք արել և կամ ընդհակառակը՝ որևէ բան անտեսել ենք քո դաստիարակության գործում, և ահա դու ընկել ես այսպիսի փորձանքի մեջ: Հարկ չկա ասելու, որ դա, զավա՛կս, ծանրացել է իմ խղճի վրա: Դու քո առաջ տեսնում ես սիրտը խորտակված մի մարդ: Այլևս երբեք ես չեմ կարողանա բարձրացնել իմ գլուխը: Ի՞նչ խայտառակություն, ի՞նչ խաղքություն: Եվ ինչո՞ւ այնքան ապրեցի, որ տեսնեմ սա:

— Բայց թող ես էլ իսոսեմ, հա՛յր, — ընդհատեց էյլինը՝ սարսուալով այն մտրից, որ ստիպված է մի երկար քարոզ լսելու աստծու, և կեղեցու, ընտանիքի, Հոր և մոր հանդեպ ունեցած իր պարագանանության մասին: Այդ ամենը սրանից առաջ խիստ կարեոր էր թվում իրեն, սակայն այլ հայացքներ ունեցող Քառուփերվուդի հետ հարաբերվելը փոխել էր նրա տեսակետը: Նրանք միասին հաճախ էին քննարկել այդ հարցերը՝ ծնողների, զավակների, ամուսինների, կանանց, եղբայրների ու քույրերի մասին: Քառուփերվուդի «մի՛ միջամտիր դեպքերի բնական ընթացքին» տեսությունը խորապես մտել էր էյլինի գիտակցության մեջ և վերակառուցել նրա ամբողջ աշխարհայացքը: Էյլինը իրերը դիտում էր Քառուփերվուդի դաժան, անվերապահ բանաձևի լուսի տակ, այն է՝ «Ամենից առաջ իմ ցանկությունները»: Ֆրենկը ցավում էր, որ մարդկանց միշկ ծագում են մանր տարածայնություններ, որոնց հետևանքը լինում են լեզվակոխվներ, գժտություններ, թշնամանք և... խզում, բայց կարծում էր, թե դրանց դեմ պայքարել անհնար է: Մի մարդ գերազանցում է մյուսին: Մարդկանց հայացքները փոխվում են, որից և փոփոխություններ են առաջանում հարաբերությունների մեջ: Թուի ինչ վերաբե-

րում է բարոյական հիմքերին, ապա ոմանք ունեն դրանք, ոմանք չունեն. զրանց գիմ պայքարել չի կարելի: Սեռական կապի մեջ ֆրենիլը անձամբ ոչ մի վատ բան չէր տեսնում, եթե տղամարդն ու կինը հարմարվում են իրար, ապա նրանց հարաբերությունները մաքուր են ու գեղեցիկ: Եյլինը՝ նրա անպսակ, բայց սիրելի ու սիրող կինը, ոչ միայն պակաս լավ ու մաքուր չէր, քան աշխարհի որևէ այլ կին, այլ դրանց մեծ մասից ավելի լավ ու ավելի մաքուր էր: Մարդը ասդրում է որոշ հասարակարգում, կենցաղային որոշ պայմաններում և համամիտ է իր ժամանակի որոշ հայացքներին: Հասարակության մեջ հաջողություն ունենալու համար, առանց որևէ, մեկի վիրավորելու, իր կյանքի ուղին թեթևացնելու համար և այն, մարդը, թեկուղեւոկ լոկ արտաքուատ, պետք է հաշվի առնի ամենքից ընդունված նորմաները: Ուրիշ ոչինչ պետք չէ: Միայն թե ականջդ սուր պահիր: Իսկ որ բռնվեցիր, պայքարիր անխոս, ատամները սեղմած: Այդպես էլ նա անում էր հիմա՝ գտնվելով ֆինանսական ոժվարությունների շրջանում: Այդպես էլ նա պատրաստ էր վարվել այն օրը, երբ իրենց բռնեցին Վեցերորդ փողոցում: Այս ամբողջ կենցաղային իմաստությունը հաւաք հոր խրատները լսող եյլինի ուղեղում:

— Թող ես էլ խոսեմ, հա՛յր: Ես սիրում եմ միստր Քառվիերվուդին ճիշտ այնպես, եթե նրա կինը լինեի: Եվ ես կլինեմ նրա կինը, երբ նա ապահարզան ստանա միսիս Քառվիերվուդից: Դու շես ուղում հասկանալ մեզ: Նա սիրում է ինձ, ես էլ նրան եմ սիրում: Ես անհրաժեշտ եմ նրան:

Բաթիերը նայում էր նրան տարօրինակ, տարակուսական հայացքով:

— Ասում ես՝ ապահարզա՞ն, — սկսեց նա, մտածելով կաթոլիկ եկեղեցու դավանանքների մասին: — Նա կրաժանվի կնողից, կրքի երեխաներին, և այդ ամենը ի սեր քե՞զ: Դու անհրաժեշտ ես նրան, այդպես, հա՞: — Կծու հեգնանքով ավելացրեց նա: — Իսկ նրա կնոջ ու երեխաների մասին ի՞նչ կասես: Պետք է ենթադրել, որ նա պետք չէ նրանց, հա՞: Սրանք էլ խոսք ու գրո՞ւց են:

Ելլինը կովարար ձեռվ թափահարեց գլուխը:

— Այնուամենայնիվ այդ այդպես է, — պատասխանեց նա: — Միայն թե դու չես ուզում հասկանալ:

Թաթլերն իր ականջներին շէր հավատում: Կյանքում այդպիսի բան երբեք չէր լսել: Զարմանքն ու զայրույթը պաշտեցին նրան: Նա շատ լավ էր հասկանում քաղաքականության և առեւտրի բոլոր նրբությունները, բայց ոոմանտիկան անհայտ էր նրան: Աներեակայելի՛ բան. իր աղջիկը, «ր կաթոլիկ է, այսպես է տրամաքանում: Եվ ումի՞ց է ձեռք բերել այսպիսի պատկերացումներ. գուցե միայն մաքիավելիական, ամեն ինչ ապականող խելքի տեր Քառուիերվուդից»:

— Վաղո՞ւց է այդպիսի հայացքներ ունես, զավա՛կս, — անսպասելիորեն հանգիստ ու համաշափ ձայնով հարցրեց նա: — Եվ որտեղի՞ց: Տանը երբեք չէիր կարող այդպիսի բան լսել. ես երաշխավորում եմ: Այն, ինչ ասում ես դու, խելագարի զառանցանք է:

— Լավ, վերջ առ՛ւր, հա՛յր, — տաքացավ էլլինը, համոզվելով, թե որքան տնհույս բան էր վիճել նրա հետ այդպիսի հարցերի մասին: — Հո երեխա չե՞մ ես: Քսանչորս տարեկան եմ: Դու ոչինչ չես հասկանում. միստր Քառուիերվուզը չի սիրում իր կնոջը, աշխատում է ապահարզան ստանալ նրանից, և այն ժամանակ կամունանա ինձ հետ: Ես սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում, ուրիշ ոչինչ:

— Ուրիշ ոչինչ Շատ լավ, — կրկնեց Թաթլերը, անխախտ որոշում անելով այսպես թե այնպես խելքի բերելու այդ աղջկան: — Ուրեմն, դու չե՞ս էլ ուզում հաշվի առնել նրա կնոջն ու երեխաներին: Իսկ այն, որ նա զուտով բանտ կգնա, նույնպե՞ս ոչինչ չի նշանակում քեզ համար, պետք է ենթադրել: Երբ նա զոլավոր բաճկոնակ հագնի, դու, երեկ, սիրես նրան առաջվա պես, գուցե և ավելի՛ (ծերունին շատ լավն էր, երբ հեգնանքով էր խոսում): Ի՞նչ արած, այդպիսի բախտավորություն հավանորե՞ն ապահովված է քեզ համար: Էլլինը բռնկվեց:

— Իհարկե, ես այդպե՞ս էլ գիտեի, — ցասումնալից գո-

շեց նա: — Հենց միայն այդ ես երազում: Ես գիտեմ, թե քո ուկածն ինչ է: Գիտե նաև Ֆրենկը: Դու ուզում ես խոթել նրան բանտ այնպիսի հանցագործությունների համար, որ նա չի արել: Եվ այդ ամենը ի՞մ պատճառով: Օ՛, ես շատ լավ եմ հասկանում: Բայց ոչի՞նչ չես անի նրան: Չի՛ հաջողվի քեզ: Նա ավելի խելացի ու լավն է, քան դու կարծում ես, և քո բոլոր ջանքերից բացարձակապես ոչի՞նչ չի ստացվի: Նա նորից ջրի երես գուրս կգա: Դու ուզում ես իմ պատճառով նրան պատժել, բայց դա նրա վրա բնավ չի ազդի: Այսպես թե այնպես ես կամուսնանամ նրա հետ: Ես սիրում եմ նրան ու պիտի սպասեմ և դառնամ նրա կինը: Իսկ դու կարող ես անել այն, ինչ հաճո է քեզ: Ուրիշ ոչի՞նչ:

— Դու կդառնաս նրա կի՞նը, — ապշած ու մի քիշ էլ շփոթված կրկնեց Բաթլերը: — Ահա՝ թե ինչ: Դու պիտի սպասես նրան ու ամուսնանաս հե՞տք: Դու կիլես նրան կնոշից ու երեխաններից, որոնց մոտ պետք է լիներ նա, եթե մի կաթիլ ազնվություն ունենար, փոխանակ քո ետևից ընկնելու: Դու կդառնաս նրա կի՞նը: Ուրեմն դու չե՞ս ամաշի խայտառակ անելու քո հորը, մորը, ամբողջ ընտանիքը: Եվ համարձակվո՞ւմ ես կանգնել այստեղ ու այդ ամենն ասել ինձ՝ քեզ դաստիարակողին, մեծացնողին, քեզ մարդ դարձնողին: Ի՞նչ կլինեիր դու հիմա, եթե լինեի ես, լիներ քո խեղճ մայրը՝ այդ անխոնչ աշխատավորուհին, որ տարեցտարի հոգ է տարել քեզ, շանացել բարիոքել քո կյանքը: Բայց, պետք է ենթագրել, դու մեզնից ավելի՝ խելացի ես: Դու ճանաշում ես կյանքը ինձնից լավ, բոլոր նրանցից լավ, ովքեր մի բարի խորհուրդ կարող էին տալ քեզ: Ես քեզ մեծացրի իսկական լեզիի պես և ահա թե ի՞նչ ստացա: Պարզվում է, որ ես ոչ մի բան չեմ հասկանում, իսկ դու պնդում ես, թե սիրում ես մոտալուտ կալանավորին, վատնողին, սնանկին, ստախոսին, գողին...

— Հա՛յր, — կտրուկ շեշտով ընդհատեց էլլինը, — ես չեմ ցանկանում լսել: Այն ամենը, ինչ ասացիր նրա մասին, ձիշտ չէ: Ես այլևս չեմ ուզում մնալ այստեղ:

Նա ուղղվեց դեպի գուրք: Սակայն Բաթլերը վեր թռավ ու փակեց նրա ճանապարհը: Նրա ճակատի երակներն ուղեցին, իսկ դեմքը զայրութից կարմրեց:

— Սպասի՛ր, ես դեռ չեմ վերջացրել հաշիվներս նրա հետ,— շարունակեց նա՝ ուշք շդարձնելով էլլինի գուրս գալու մտադրությանը և զգիտես ինչու համոզված, որ սա վերջ ի վերջո կհասկանա իրեն:— Ես նրա հախիցը նոր կգամ, և դա նույնքան ճիշտ է, որքան այն, որ իմ անունը Բաթլեր է: Զէ՞ որ օրենք կա մեր երկրում, և ես այնպես կանեմ, որ նրա հետ վարվեն ըստ օրենքի: Ես ցուց կտամ նրան, թե ինչ է նշանակում սողոսկել պարկեշտ ընտանիքների մեջ և զավակներին իւլել ծնողներից:

Նա կանգ առավ շոմչ քաշելու համար, իսկ էլլինը գույնը գցած՝ շեշտակի նայում էր հորը: Որքա՞ն ծիծաղելի էր լինում երբեմն հայրը: Որքա՞ն հետամնաց մարդ է նա Քառուփերվուղի համեմատությամբ: Հենց միայն այն, որ ասում է, թե Քառուփերվուղը եկալ իրենց տունը և ծնողներից գողացալ իրեն, մինչդեռ ինքը այնքա՞ն պատրաստակամ կերպով գնաց նրա ետևից: Ի՞նչ ցնդաբանություն: Բայց արժե՞ արդյոք վիճել: Ի՞նչ կարող է ինքը ձեռք բերել, եթե իր ասածը պնդի: Էլլինը լոելու ու միայն շեշտակի նայում էր հորը: Սակայն Բաթլերի շունչը դեռ տեղը չէր եկել: Ամեն ինչ եռում-փոթորկվում էր նրա ներսում, թեև նա ջանում էր զսպել իր զայրութիւն:

— Ես շատ եմ ցավում, աղջի՛կս,— արդեն ավելի հանգիստ շարունակեց նա, եզրակացնելով, թե էլլինն այլիս առարկություն չի գտնում:— Զայրուցի գերիշխեց ինձ: Ես բնավ էլ չէի ուզում այդ մասին խոսել, երբ կանչեցի քեզ: Մտքումս բոլորովին այլ բան էր: Կարծում էի, որ հիմա գուցե և ցանկանաս մեկնել ելլրոպա՝ երաժշտություն սովորելու: Հիմա պարզապես խելքդ գլխիդ չէ: Հանգիստ է քեզ պետք իսկ դրա լավագույն միջոցը միջավայրը փոխելն է: Դու կարող էիր շատ լավ ժամանակ անցկացնել այնտեղ: Եթե ուզում ես, քեզ հետ կգա նորան, ինչպես նաև քո նախկին

ուսուցչուհին՝ քույր Կոնստանցիան։ Զեմ կարծում, թե առարկես նրա ընկերակցության դեմ։

Հենց որ էլլինը լսեց Եվրոպա ուղևորվելու խոսքը, այն էլ քույր Կոնստանցիայի հետ (երաժշտովթյունը բացահայտորեն կցել էին՝ հին տարբերակին նորություն տալու համար), փոթորկվեց, բայց միաժամանակ և հազիվ զսպեց ժըպիտը։ Որքա՞ն անհեթեթ ու անտակտ բան է անում հայրը, որ խոսակցություն է սկսում այդ մասին՝ Քառիկերվուդի և իր հասցեին արած այնքան մեղադրանքներից ու սպառնալիքներից հետո։ Որքա՞ն սակավ դիվանագետ է նա այն գործերում, որոնք մոտիկից շոշափում են իրեն։ Պարզապես ծիծաղելի է։ Բայց նա դարձյալ զսպեց ու լուռ մնաց՝ հասկանալով, որ հիմա ամեն մի փաստարկ անօգուտ է։

— Զարթե այդ մասին խոսել, հա՛յր, — սկսեց Էլլինը մի քիչ մեղմանալով։ — Հիմա ես չեմ ուզում Եվրոպա մեկնել։ Զեմ ուզում Ֆիլադելֆիայից դուրս գալու ես գիտեմ, որ դու դրան ես ձգտում, բայց հիմա ես ուղևորության մասին մտածել իսկ չեմ կարող։ Ես բացակայել չեմ կարող։

Բաթլերի դեմքը կրկին մոռավակեց։ Ճիշտն ասած, ինչի՞ն է ուզում հասնել այս աղջիկը իր համառությամբ։ Հո չի՞ ուզում իրենից ավելի համառը լինել, այն էլ այսպիսի հարցում։ Անհեթեթ միտք։ Բայց և այնպես Բաթլերը ջանաց տիրապետել իրեն և շարունակեց համեմատաբար մեղմ շեշտով։

— Ամենալավը այդ կիներ քեզ համար, Էլլի՛ն։ Հո չե՞ս ուզենա մնալ այստեղ, այսպիսի։

Նա լեզուն կծեց, որովհետև քիչ մնաց բերանից փախչեր՝ «այսպիսի բան կատարելուց հետո» արտահայտովթյունը։ Իսկ նա գիտեր, թե ինչպիսի հիվանդագին ձևով կընկալի գա Էլլինը։ Նրա սեփական վարքը, աղջկան բռնելու համար իսկական շուրջկալ կազմակերպելը այնքան անհամապատասխան էին Հորենական Հոգաաարության Էլլինի պատկերացմանը, որ սա, իհարկե, վիրավորված էր զգում իրեն։ Մյուս կողմից էլ ի՞նչ անպատվություն էր Էլլինի արարքը։

— Այսպիսի սխալից հետո, որ կատարեցիր դու, — խոսքն ավարտեց հայրը, — հավանորեն ինքդ էլ կուզենաս

մեկնել: Այլևս չես ուզենա անձնատուր լինել մահացու մեղքին: Դա ներհակ կլիներ բոլոր օրենքներին, և՝ աստվածային, և՝ մարդկային:

Նա սաստիկ փափագում էր, որ, վերջապես, էյլինի մեջ արթնանար իր կատարած մեղքի, իր արած քայլի անբարոյականության գիտակցումը: Բայց դուստրը հեռու էր դրանից:

— Դու ինձ չես հասկանում, հայր,— հուսահատ ձայնով բացականշեց էյլինը, երբ Բաթլերը վերջացրեց: — Չես կարող հասկանալ: Ես իմ հայացքներն ունեմ, դու՝ քոնք: Եվ ես չեմ կարող դրանց դիմադրել: Եթե ուզում ես իմանալ ճշմարտությունը, ապա ասեմ, որ այլևս չեմ հավատում կաթոլիկ եկեղեցու ուսմունքին: Այժմ ամեն ինչ ասված է:

Նոր էր էյլինն արտաքերել այս խոսքերը, որ զղաց ասելու համար: Դրանք ակամա դուրս պրծան նրա շրթներից: Բաթլերի դեմքի վրա երկաց անպատմելի վշտի ու հուսահատության արտահայտություն:

— Դու չե՞ս հավատում եկեղեցու ուսմունքին,— կըրկնեց նա:

— Ո՛չ... ո՛չ բոլորովին: Ու քեզ պես:

Հայրը գլուխն օրորեց:

— Սատանան տիրացել է քո հոգուն,— ասաց ծերունին: — Ինձ համար պարզ է, աղջի'կս, որ մի սոսկալ: Պժբախտություն է պատահել քեզ: Այն մարդը կործանել է քեզ, քո հոգին ու մարմինը: Որեէք բան պետք է անել: Ես չեմ ուզում դաժան վարվել քեզ հետ, բայց պետք է մեկնես Ֆիլադելֆիայից: Դու չես կարող մնալ այստեղ: Ես այդ թույլ չեմ տա: Մեկնիր արտասահման կամ նոր Օլեան, մորաքրոջդ մոտ, մեկ է՝ պիտի մեկնես: Ես քեզ թույլ չեմ տա մնաս այստեղ: Դա շատ վտանգավոր է: Այսպես թե այնպես աշխարհում ամեն ինչ երկան կգա: Մեկ էլ տեսար թերթերը հոտն առան: Դու երիտասարդ ես, ամբողջ կյանքդ նոր է սկսվելու: Ես սարսափում եմ քո հոգու համար, բայց քանի դեռ երիտասարդ ես ու կենսալի, դեռ կարող ես խելքի գալ: Ես անկոտրում կլինեմ. այդպես է իմ պարտականությունը քո ու եկեղեցու հանդեպ: Դու պետք է փոխես քո վարքը, պետք է բաժանվես այդ մար-

դուց։ Բաժանվես ընդմիշտ։ Նրա մտքով էլ չի անցնում ամուսնանալ քեզ հետ։ բայց եթե նույնիսկ ուզենար դառնալ քո ամուսինը, ապա դա հանցագործություն կլիներ աստծու ու մարդկանց հանդեպ։ Ո՛չ, ո՛չ, այդ բանը չի' լինի։ Նա սնանկ է, խարեւա, գող։ Ամուսնանալով այդ մարդու հետ՝ դու կդառնայիր աշխարհի ամենադժբախտ կինը։ Նա կդավաճաներ քեզ։ Նա անընդունակ է հավատարիմ լինելու։ Ես լավ եմ ճանաշում այդ տիպի մարդկանց։ — Սերուին շունչ քաշեց։ Վիշտը խեղդում էր նրան։ — Դու պետք է մեկնես. մի անդամ ընդմիշտ հասկացիր այդ բանը։ Քեզ բարիք ցանկանալուց եմ ասում, բայց հնազանդություն եմ պահանջում։ Միայն քո շահերի մասին եմ մտածում։ Ես քեզ սիրում եմ, բայց և այնպես պետք է մեկնես։ Յավալի է ինձ համար քեզ հեռացնելը, ինձ հաճելի կլիներ, որ դու առաջվա պես մնայիր մեզ հետ։ Ոչ ոք այնպես չի վշտանա քո մեկնելուց, ինչպես ես։ Բայց դու պետք է մեկնես։ Աշխատիր ամեն ինչ այնպես դասավորել, որ քո մեկնումը մորդ տարօրինակ չթվա. բայց մեկնելը պիտի մեկնես, լսո՞ւմ ես, պիտի՝ մեկնես։

Նա լոեց, տխուր, բայց հաստատ հայացքով նայելով էլլինին թավ հոնքերի տակից։ Դուստրը գիտեր, որ հոր որոշումը անփոփոխ է։ Սեր Բաթլերի դեմքն ստացել էր դժնի, համարյա աղոթասացի արտահայտություն։ Էլլինը չպատասխանեց։ Նա այլևս ի վիճակի չէր վիճելու։ Մեկ է՝ օգուտ չկա։ Բայց մեկնել… չէ՛, ո՛չ մի տեղ էլ չի մեկնի։ Այս մեկը հաստատ գիտեր։ Նրա զղերը պրկվել էին լարերի պես, և նա կանգնել էր հոր դիմաց գունատ ու վճռական։

— Ուրեմն այսպես. քեզ անհրաժեշտ իրերը ձեռք կրերես, — շարունակեց Բաթլերը, շհասկանալով, թե ինչ է կատարվում էլլինի հոգում, — ու հավաքիր այն ամենը, ինչ պետք կլինի քեզ։ Ասա, թե ուր կորոշես մեկնել և անհապաղ պատրաստվիր հանապարհ ընկնելու։

— Ո՛չ, հայր, ես չեմ մեկնի, — ասաց էլլինը նույնքան դժնի ու հաստատ, ինչպես հայրն էր խոսում։ — Ես չեմ մեկնի։ Ֆիլադելֆիայից դուրս չեմ գա։

— Ուզում ես ասել, աղջիկո, թե հրաժարվում ես են-

թարկվել ինձ, երբ ես խնդրում եմ քեզ անել այն, ինչ անհրաժեշտ է քո իսկ բարիքի համար: Ճի՞շտ հասկացա քեզ, թե՞ ոչ:

— Այո՛, — հաստատապես պատասխանեց Էլլինը: — Ես չե՛մ մեկնի: Կներես ինձ, բայց չե՛մ մեկնի:

— Միանգամայն լո՞ւրջ ես խոսում, — մոայլ ու վշտահար հարցրեց թաթլերը:

— Այո, հայր, — նույնպես մոայլ հաստատեց Էլլինը:

— Այն ժամանակ ես ստիպված եմ մտածել իմ անելիքի մասին, — ասաց ծերունին: — Այնուամենայնիվ դու իմ դուստրն ես, ինչպիսին էլ լինես, և ես թույլ չեմ տա, որ վերջնականապես տունդ քանդես անհնազանդությամբ, շցանկանալով կատարել այն, ինչ քո սրբազան պարտականությունն է: Ես քեզ մի քանի օր կտամ մտածելու համար. բայց մեկ է՛ պիտի մեկնես: Այլևս մենք խոսելու բան չունենք: Այս երկրում այնուամենայնիվ գոյություն ունեն օրենքներ և ներգործման միջոցներ նրանց համար, ովքեր խախտում են այդ օրենքների: Ես քեզ փնտրեցի-զտա, որքան էլ դա ծանր լիներ ինձ համար, և նորից կդառնեմ, եթի մտքովդ անցնի շսել ինձ: Դու պիես է փսխես քո վարքապիծը: Ես չեմ կարող թույլ տալ քեզ շարունակելու այդ կյանքը: Հիմա ամեն ինչ հասկանալի է քեզ: Սա իմ վերջին խոսքն է: Հրաժարվիր այդ մարդուց, և այն ժամանակ խնդրիր ինչ ուզում ես: Դու իմ աղջիկն ես, և ես աշխարհում ամեն ինչ կանեմ քեզ երջանիկ տեսնելու համար: Եվ կարո՞ղ է արդյոք այլ կերպ լինել: Էլ ինչի՞ համար ապրեմ, եթե ոչ իմ զավակների համար: Չէ՞ որ քեզ համար, բոլորիդ համար եմ ես աշխատել անդուկ-անդադար: Խելքի՛ արի, հիմարությանդ վե՛րջ տուր: Մի՞թե դու չես սիրում քո ծեր հորը: Ես օրորել եմ քեզ, երբ դու պստիկ արարած էիր ու տեղավորվում էիր իմ ափի վրա: Ես միշտ լավ հայր եմ եղել քեզ համար, դու չես կարող հերքել դա: Նայիր մյուս աղջիկներին՝ քո ընկերուհիներին: Մի՞թե նրանցից որևէ մեկը ունեցել է ավելի կամ թեկուզ այնքան, որքան դու: Դու չես հակառակի իմ կամքին, ես հավատացած եմ: Դու շատ ես սիրում ինձ: Շատ ես սիրում քո ծեր հորը, այնպես չէ՞:

Նրա ձայնը բեկրեեկվեց, արցումք երևաց աշբերում։ Նա լռեց և իր թուխ, խոչոր ձեռքը դրեց էլլինի ուսին։ Աղջկան հուզեց այդ աղաշանքը, և նա պատրաստ էր մեղմանալ, մանավանդ որ գիտեր, թե անօգուտ են հոր շանքերը։ Ինքը շիկարող հրաժարվել Քառիկերվուղից։ Հայրը պարզապես շիհասկանում իրեն, նա շի իմանում, թե ինչ բան է սերը։ Նա, իհարկե, երբեք շի սիրել այնպես, ինչպես աղջիկն է սիրում։

Բաթլերը շարունակում էր արթնացնել էլլինի խղճահարությունը, իսկ առ լուս կանգնել էր նրա դիմաց:

— Եսուրախի կլինեի ենթարկվել քեզ, — մեղմ, նույնիսկ քաղցր շեշտով ասաց ի վերջո էլլինը: — Հավատա, խնդրեմ, ինքս էլ ուրախ կլինեի: Ես քեզ սիրում եմ, այս՝ սիրում եմ: Եվ կուզենայի քո ասածն անել: Բայց չեմ կարող, չեմ կարող: Ես սիրում եմ Ֆրենկ Քառվերվուդին: Դու այդ չես հասկանում, չես ուզում հասկանայ:

Այս անունը լսելուն պես դժնդակ ծալք գոյացավ Բաթ-
լերի բերանի մոտ։ Հիմա նա հասկացավ, որ իր դուստրը գերի
է կրթին և նրա վրա ազգելու բժախնդրությամբ մտորած իր
փորձը ձախողվեց։ Ուրեմն մի ուրիշ բան պետք է հնարել։

— Շատ լավ, ի՞նչ արած, — ասաց նա այնպիսի անհոգ
թախծով, որ էլլինը շղիմացավ ու զրջվեց: — Ինչպես ուզում
ես, այնպես արա: Բայց ուզես-շուզես, մեկ է՝ պիտի մեկնես:
Ուրիշ ելք չկա: Խսկ ինձ մնացել է միայն մի բան. աղաշել
աստծոն, որ խելքի դաս:

Էլլինը դանդաղ դուրս եկավ սենյակից, իսկ Բաթլերը մոտեցավ իր գրասեղանին ու ծանր-ծանր նստեց թիկնաթոռին:

— Այսպես էլ փորձա՞նք, — շշնչաց նա: — Ինչպե՞ս ամեն ինչ խճճվեց:

Quality XXXVIII

Դժվար վիճակի մատնվեց էլլին Բաթլերը։ Ի բնե նվազ խիզախ ու վճռական մի աղջիկ չէր դիմանա այդ դժվարություններին ու կպիչեր։ Արովհնեակ, չնայած բազմաթիվ բա-

թեկամներ ու ծանոթներ ունենալուն՝ Էյլինը ծանր պահին համարյա ոչ ոքի մոտ չէր կարող ապաստանել: Ըստ էռթյան նա չէր կարող հիշել որևէ մեկի, որը համաձայներ առանց ավելորդ հարցուփորձի փոքրիշատե երկարատե ժամանակով տեղ տալ իրեն: Նա ուներ ամուսնացած կամ ամուրի, իր հանդեպ խիստ բարյացակամ ընկերուհիներ, բայց սրանց մեջ չէր ճարդի թերեւ հիրավի մտերիմ մեկը: Միակ մարդը. որի մոտ նա կարող էր ժամանակավոր ապաստան գտնել. ոմն Մերի Քելիգենն էր, բարեկամների շրջանում Մեյմի անունով հայտնի: Սա մի ժամանակ էյլինի դասընկերն էր, իսկ Հիմա ուսուցչուհի Ֆիլադելֆիայի դպրոցներից մեկում:

Քելիգենների ընտանիքը բաղկացած էր մորից՝ այրի դերձակոււի Կետերին Քելիգենից (նրա ամուսինը՝ տներ տեղաշրժելու մասնագետ, տասը տարի առաջ զոհվել էր պատի փլւելոց) և քսաններեքամյա դուստր Մեյմիից: Նրանք ապրում էին Զերրի փողոցում, աղյուսաշեն մի երկհարկանի տանը, Տասնհինգերորդ փողոցի մոտ: Միսիս Քելիգեննը այնքան էլ հմուտ չէր իր արհնոսում, համենայն դեպս Բաթլեր ընտանիքի կարծիքով, որն այնքան վեր էր բարձրացել սոցիալական սանդուղքի վրա: Ժամանակ առ ժամանակ էյլինը նրան էր պատվիրում կարել տնային հասարակ զգեստներ, սպիտակեղեն, սենեկազգեստ, ինչպես նաև ձևափոխել Զեսթնաթ-աթրիթի առաջնակարգ գերձակոււիների կարած իր արդուարդերը: Էյլինը լինում էր Քելիգենների տանը, որովհետեւ մի ժամանակ այդ ընտանիքի լավ օրերին, Մեյմին հետ էր գնում սուրբ Ագաթ վանքին կից դպրոցը: Հիմա Մեյմին ամսական վաստակում էր քառասուն դոլլար՝ դասավանդելով մոտակա դպրոցներից մեկի վեցերորդ դասարանում, իսկ միսիս Քելիգենը՝ օրական միջին հաշվով երկու դոլլար, այն էլ ոչ միշտ: Նրանց ապրած տնակը իրենց սեփականությունն էր, ոչ մի պարտք չկար այդ տան վրա, սակայն նրա կահավորումը պերճախոս կերպով ցույց էր տալիս, որ երկու բնակիչների եկամուտը ամսական ութսուն դոլլարից չէր անցնում:

Մեյմի Քելիգեննը սիրուն չէր և քիչ ագելի վատ տեսար ուներ, քան ժամանակին նրա մայրը: Միսիս Քելիգենը այժմ՝

երբ հիսուն տարեկան էր, դեռ խիստ թարմ էր, ուրախ, կենա-
սախինդ և բարեմիտ հումորի մեծ պաշարի տեր: Խելքով ու
խառնվածքով Մեյմին նույնպես զիջում էր մորը: Նա միշտ
հանդարտ էր ու լուրջ, որի պատճառը գուցե և նրա կյանքի.
Հանգամանքներն էին: Ասենք, ի բնե նա աշքի շէր ընկնում
ո՛չ աշխուժությամբ, ո՛չ էլ կանացի գրավչությամբ: Այդ բո-
լորով հանդերձ նա լավ, ազնիվ մարդ էր ու բարի կաթոլիկ,
օժտված այն յուրօրինակ ու ճակատագրական առաքինու-
թյամբ, որը այնքան մարդկանց է ի վերջո գժտեցնում արտա-
քին աշխարհի հետ, այսինքն՝ պարտականության զգաց-
մունքի հետ: Մեյմի Քելիգենի համար պարտականությունը,
ավելի ճիշտ, այն տեսություններն ու կանոնները պահպանե-
լը, որ լսել էր նա մանկությունից ու կատարել, մշտապես
առաջին տեղն էին գրավում և ուրախության ու միխթարանքի
աղբյուր էին: Մեյմիի համար տարօրինակ ու սակավ հասկա-
նալի կյանքում գլխավոր հենակետերը եկեղեցու հանդեպ,
գպրոցի հանդեպ, մոր ու բարեկամների հանդեպ ունեցած
պարտականությունն էր: Միսիս Քելիգենը Մեյմիին հոգ տանե-
լով, հաճախ էր ցանկանում, որ սա ավելի քիչ պարտակա-
նության զգացմունք և ավելի շատ տղամարդկանց դյութող
կանացի հրապուցրներ ունենար:

Չնայած մոր գերձակուհի լինելուն՝ Մեյմին երեք իրեն
պատշաճող հագուստ չէր հագնում, իսկ եթե այդպիսի բան
պատահեր, իրեն լավ չէր զգա: Նրա կոշիկները միշտ մեծ էին
լինում և անճոռնի, շրջազգեստները, անգամ լավ կտորից
կարված լինելու գեպքում, վատ էին ձևված և, ասես, անհե-
թեթ կախված էին նրա վրայից: Այդ տարիներին նոր էին
մողայական դարձել հյուսված ժագետները, որ շատ էին
պատշաճում գեղեցիկ կաղմվածքներին: Ավաղ, դա Մեյմի
Քելիգենին չէր վերաբերում: Նրա նիհար ձեռքերն ու տախ-
տակ կուրծքը այդ մողայական հագուստով ավելի խղճուկ
էին երեսում: Նրա գլխարկները սովորաբար նման էին բլիթի,
որի մեջ զգիտես ինչու մի երկար փետուր էին խրել, և
ամենակին չէին ներդաշնակում ո՛չ նրա սանրվածքին, ո՛չ էլ
դեմքին: Մեյմին համարյա միշտ հոգնած տեսք ուներ, բայց

դա ոչ այնքան ֆիզիկական հոգնություն էր, որքան բնածին ալարկոտություն: Թերեւս միայն էյլին թաթլերն էր ոռմանտիկական տարր մտցնում նրա գորշ կյանքի մեջ:

Իսկ էյլինին այդ տունն էր գրավում Մեյմիի մոր մարդամուտ բնավորությունը, նրանց աղքատիկ կացարանի անթերի մաքրությունը, սրտառուշ հոգատարությունը, որով միսիս Քելիգենը վերաբերվում էր էյլինի պատվերներին, մեկ էլ այն, որ երկուսն էլ սիրում էին լսել դաշնամուրի նվագը: Էյլինը գալիս էր նրանց մոտ հանգստանալու աղմկալի զվարճություններից և Մեյմի Քելիգենի հետ զրուցելու գրականությունից, որով երկուսն էլ հետաքրքրվում էին: Հետաքրքրքրաշարժն այն էր, որ Մեյմիին դուր էին գալիս այն գրքերը, որոնք և էյլինին, «Ջեյն Էյր», «Քենելմ Չիլինգլի», «Տրիկոտրին» և «Նարնջագույն ժապավենակապը»: Ժամանակ առ ժամանակ Մեյմին իր բարեկամունուն հանձնարարում էր կարգալ այդ ժանրի վերջին նորույթները, և էյլինը միշտ հիանում էր նրա ճաշակով:

Ահա թե ինչու զմվարին պահին էյլինը հիշեց Քելիգեններին: Եթե հոր խելքին փշի ձնշել իրեն, և ինքն էլ ստիպվի միառժամ հետանալ տնից, կգնա սրանց մոտ: Քելիգենները կընդունեն իրեն՝ առանց հարցուփորձ սկսելու: Թաթլերը ընտանիքի մնացած անդամները համարյա չէին ճանաշում Քելիգեններին և երբեք չէին մտածի այնտեղ փնտրելու էյլինին: Զերրի փողոցի մենության մեջ դժվար չի լինի թաքնվել, և մի քանի շաբաթ ոչ ոք նրանից լուր չի ունենա: Հետաքրքրականն այն է, որ Քելիգենների, ինչպես և թաթլերների, մտքով չէր անցնի, որ էյլինն ընդունակ է դատապարտելի արարք կատարելու եվ եթե այնուամենայնիվ ստիպված լինի հեռանալ տընից, ապա երկու կողմն էլ կհամարեն դա որպես նրա հերթական քմահաճություն:

Մյուս կողմից, թաթլեր ընտանիքն ընդհանուր առմանը էյլինին ավելի կարիք ուներ, քան էյլինը՝ նրան: Էյլինի ներկայությունը միշտ էլ նպաստում էր մնացած բոլորի լազ տրամադրությանը, և նրա հեռանալուց հետո առաջացող դատարկությունը հեշտ չի լինի լցնել:

Վերցնենք թեկուզ ծեր Բաթլերին. նրա աշքի առաջ փոքրիկ դստրիկը վերածվեց շլաքուցիշ գեղեցկություն ստացած կնոջ: Նա հիշում էր, թե ինչպես այդ դստրիկը գնում էր դրաբոց և դաշնամուր նվազել էր սովորում. Հոր կարծիքով՝ դա փառավոր դաստիարակության գագաթն էր: Նա տեսնում էր, թե ինչպես փոխվում էին Էյլինի շարժումները, հետզհեան ավելի բարեկիրթ դառնում. Նա կենսափորձ էր կուտակում և ապշեցնում էր հորը: Աստիճանաբար Էյլինը սովորեց վստահությունը անել զանազան բաների մասին, և հայրը հաճությամբ լսում էր նրա խոսքերը: Նա ավելի էր հասկանում արվեստից ու գրականությունից, քան Օուենն ու Քելեմը, և շատ լավ կարող է պահել իրեն հասարակության մեջ: Երբ Էյլինը գալիս էր սեղան նստելու, Բաթլերը հիացած նայում էր նրան: Դա նրա ձագուկն էր, և այդ դիտակցությունը հպարտությամբ էր: պարուրում ծերունուն: Ինքը չէ՞ր միթե փող տալիս նրան այդ բոլոր շքեղ արդուզարդի համար: Նա հետագայում ևս հոգ կտանի իր աղջկան: Զի թողնի մի նորելուկ կործանի նրա կյանքը: Նա պատրաստվում էր իր կտակն էլ այնպես կազմել, որ եթե հանկարծ ապս գա: ամուսինը սնանկանար, Էյլինը ապահովված լիներ: «Այս սրա՛ն եմ լեղի ասել», — բացականչում էր նա: Հաճախ ու քնքշանքով ավելացնում: «Որքա՛ն հրապուրիշ ենք մենք այսօր»: Էյլինը ճաշելիս սովորաբար նստում էր հոր կողքին ու հոգ տանում նրան: Բաթլերին հաճելի էր դա: Առաջ էլ, երբ դուստրը փոքր էր, միշտ նստեցնում էր իր կողքին:

Մայրն էլ անսահման սիրում էր իր մեծ աղջկան, իւր Քելեմն ու Օուենը եղբայրական պատշաճ բնքշանք էին տածում: Նրա հանդեպ, այնպես որ մինչև հիմա Էյլինը իր գեղեցկությամբ և աշխույժ, ուրախ բնավորությամբ հատուցում էր այն ամենին, ինչ ստանում էր ընտանիքից, և ընտանիքը զգում էր դա: Բավական էր, որ Էյլինը մի երկու օրով բացակայի, և տանը տաղտուկ էր տիրում, անդամ ուտելիքը նվազ ախորժելի էր երեսմ: Իսկ երբ նա վերադառնում էր, ամենքն էլ նորից դառնում էին ուրախ ու գոհ:

Էյլինն, անշուշտ, դիտակցում էր դա: Հիմա, երբ նա

մտադիր էր հեռանալ տնից և ինքնուրուցն կյանք սկսել, միայն թե խուսափի այդ ատելի ուղևորությունից, արիություն էր քաղում այն գիտակցությունից, թե ինչ նշանակություն ունի ինքն ընտանիքի համար: Մի անգամ ևս կշռադատելով այն ամենը, ինչ ասաց հայրը, էլլինը որոշեց գործի անհապաղ: Հաջորդ օրն իսկ, երբ հայրը գնաց իր գրասենյակը, նա հագնվեց, ինչպես զբոսանքի գնալիս, և որոշեց ժամը տասներկուսին մոտ հանդիպել Քելիգեններին. Հենց այդ ժամանակ էլ Մեյմին տուն էր գալիս նախաճաշելու, էլլինը որոշեց իր մտադրության մասին խոսք բացել իբր պատահաբար, և եթե նրանք շառարկեն, ապա անմիջապես փոխադրվել նրանց մոտ: Երբեմն նա հարց էր տալիս իրեն, թե ինչու Ֆրենկը այդպիսի ծանր դրության մեջ ընկնելուց հետո շառաջարկեց իրեն միասին փախչելու հեռավոր մի երկիր: Բայց իսկույն էլ պատասխանում էր իրեն. նա ավելի լավ է իմանում ինչպես վարվի: Էլլինը խիստ ընկճվել էր գլխին թափված պատուհաններից:

Միսիս Քելիգենը մենակ էր տանը և շատ ուրախացավ էլլինին անոնելով: Քաղաքային նորույթներից խոսելով ու շիմանալով, թե ինչպես խոսք բաց անի այն գործի մասին, որը այսուհետ էր բերել իրեն, էլլինը նստեց դաշնամուկի առաջ ու սկսեց մի տիսուր եղանակ նվագել:

— Ի՞նչ հրաշալի եք նվագում, էլլին, — ասաց միսիս Քելիգենը, որ հեշտ էր սենտիմենտալությամբ համակվում: — Մեծ վայելք եմ ես զգում՝ ձեզ ունկնդրելով: Օ՛, եթե ավելի հաճախ գայիք մեր տուն: Վերջերս ձեզ երբեք շենք տեսնում:

— Խիստ զբաղված էի, միսիս Քելիգեն, — պատասխանեց էլլինը: — Այս աշնանը այնքան շատ ու բազմապիսի գործեր ունեի, որ մի բուռե իսկ չէի կարող գտնել: Ծնողներս առաջարկում էին ինձ մեկնել Ելրուղա, բայց ես կտրուկ մերժեցի: Ա՛խ, աստված իմ, — հառչեց նա, և նրա մատները դարձյալ ոստոստեցին ստեղների վրա ու նվագեցին մի թափծոտ, ոռոմանտիկ մեղեղի:

Բացվեց դուռը, ու ներս մտավ Մեյմին: Նրա անդուր գեմքը պայծառացավ՝ ընկերուհուն տեսնելով:

— Ուրեմն էյլին թաթլե՞րն է սա, — բացականչեց նա: — Այդ ինչպե՞ս լուս ընկար և որտե՞ղ էիր չքվել այսքան ժամանակ:

Էյլինը վեր կացավ, և նրանք ողջագուրվեցին:

— Ռ, ես շատ զբաղված էի, Մեյմի: Հենց նոր էի այդ մասին խոսում մայրիկիդ հետ: Ասա, տեսնենք դու ինչպե՞ս ես, ինչպե՞ս է աշխատանքդ ընթանում:

Մեյմին հաճությամբ սկսեց պատմել դպրոցական ամեն տեսակ թերություններից. դասարաններում գնալով ավելանում է աշակերտների թիվը, աշխատանքն էլ օր-օրի վրա մեծանում:

Երբ Միսիս Քելիգենը սեղան էր գցում, Մեյմին անցավ իր սենյակը, էյլինն էլ հետեւց նրան: Մեյմին հայելու առաջ սկսեց մազերը հարդարել, իսկ էյլինը մտածկուտ նայում էր նրան:

— Քեզ ի՞նչ է պատահել այսօր, էյլի՞ն. — Հարցրեց Մեյմին: — Այնպիսի տեսք ունես...

Նա խոսքը շավարտեց ու մի անգամ ևս շեշտակի նայեց ընկերուհուն:

— Ինչպիսի՞ տեսք, — վրա բերեց էյլինը:

— Ինչ ասեմ. անվստահ ասեմ, վշտացած ասեմ: Քեզ այսպես երբեք չեմ տեսել: Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ, — պատասխանեց էյլինը: — Պարզապիս մտքերի մեջ ընկա:

Նա կանգնած էր բակի վրա նայող պատուհանի մոտ ու հարցնում իրեն՝ կկարողանա՞ արդյոք ապրել այդտեղ. պըստլիկ տնակ, ողորմելի կահավորում...

— Զէ, այսօր մի բան եղել է քեզ, էյլի՞ն, — նկատեց Մեյմին և մոտենալով՝ նայեց աշքերին: — Երեսիդ դույնը թուել է:

— Ինձ տանջում է մի միտք, — ասաց նա, — ես էլ շարունակ մտածում եմ: Եվ չեմ իմանում ինչ անեմ. այդ է վատը:

— Ի՞նչ ես ուզում ասել, — հարցրեց Մեյմին: — Ի՞նչ է պատահել քեզ: Եվ ինչո՞ւ չես ուզում պատմել ինձ:

— Կպատմեմ, քայց ոչ հիմա: — Ելլինը մի փոքր լռեց: — Ի՞նչ ես կարծում՝ քո մայրը դեմ չի՝ լինի, եթե ես միառժամանակ ապրեի այստեղ: Մի քանի պատճառով ես պետք է ժամանակավորապես հեռանամ տնից:

— Ի՞նչ կարիք կա հարցնելու, ելլին, — բացականշեց ընկերուհին: — Ընդհակառակը... Դու շատ լավ ես իմանում, որ նա սաստիկ կուրախանա, ինչպես և ես: Ա՛խ, ելլին, սիրելի՞ս, իսկապե՞ս կուզենայիր լինել մեզ մոտ: Բայց ի՞նչն է ստիպում քեզ հեռանալ տնից:

— Ահա այդ էլ մի որոշ ժամանակ չեմ կարող ասել: Եվ ոչ այնքան քո, որքան քո մոր պատճառով: Ես վստահ չեմ, թե նա ինչպես կնայի դրան, — ավելացրեց Ելլինը: — Հիմա հարցուիրձ մի՛ անիր: Ես դեռ պետք է մտածեմ: Ա՛խ, աստված իմ... Բայց իսկապես ուզում եմ տեղափոխվել ձեզ մոտ, եթե թույլ տաք: Դու ինքդ կասես մայրիկիդ, թե՞ ինքս խոսեմ նրա հետ:

— Ոչ, փհարկի, ինքս կասեմ, — պատասխանեց Մեյմին՝ իրազարձավիյանների այդ լինթացքից ալլած: — Բայց ձիշտ եմ առաւմ, ծիծաղելի է նույնիսկ հարցնել նրան: Ես նախօրոք դիտեմ, թե ինչ կասի նա, նմանապես և դու: Միայն մի րան ուետք է անես՝ գնաս իրերդ բերես: Ուրիշ ոչի՞նչ: Մայրիկը ոչ մի բան չի ասի, ո՛չ էլ հարցում կանի, եթե ինքդ չուզենաս պատմել:

Մեյմիի սիրութ, ասես, կրակ ընկավ: Նա շատ էր ցանկանում երկար ժամանակ վայելել Ելլինի ընկերակցությունը:

Ելլինը մտածելու նարեց նրան, հասկանալով, թե ինչու ընկերուհին այդպիսու հրճվեց և մայրն էլ հավանորեն կուրախանու: Ինքը մի թարմ շիթ կմտցնի նրանց միօրինակ կեցության մեջ:

— Բայց դուք ոչ ոքի չողետք է ասեք, որ ես ձեզ մոտ եմ. հասկանո՞ւմ ես: Դա դադանիք է բոլորից և ամենից առաջ իմ ծնողներից: Հավատա, որ դրա պատճառները կան, այն էլ խիստ ծանրակշիռ. Հիմա ես դեռ չեմ կարող ասել քեզ բանի էովթյունը: Ուրիշն դու խոստանո՞ւմ ես լուր մնալ:

— Իհարկե, — պատրաստակամ համաձայնեց Մեյմին: —

Բայց դու հու շե՞ս պատրաստվում ընդմիշտ հեռանալ տնից, էյլի՛ն, — անհանգիստ, բայց և ոչ առանց հետաքրքրասրբության ավելացրեց նա:

— Ա՛խ, ճիշտն ասած, ես էլ շեմ իմանում. իմանում եմ միայն, որ պետք է առժամանակ հեռանամ նրանցից: Ուրիշ ողի՛նչ:

Նա զոեց, և Մեյմին դարձյալ ապշած նայեց ընկերուհուն:

— Այս, — դուրս թուավ նրա բերանից: — Ինչպես երեւլում է, աշխարհում դեռ շեն դադարել հրաշքները: Բայց նու այնքան ուրախ եմ, որ դու կապրես մեզ հետ: Մայրիկի մասին խոսելն իսկ ավելորդ է: Եվ, իհարկե, մենք ձայն շենք, հանի, քանի որ դու այդպես ես ուզում: Մեր տանը ոչ ոք չի գինում. իսկ եթե բան է՝ մարդ գա, դու կարող ես շերեւալ: Դու պետք է տեղավորվես մեծ սենյակում, իմ կողքին: Օ՛, ի՞նչ հիանալի կլինի: Իմ ուրախությանը շափ չկա: — Գեռատի ուսուցչուհին զգալիորեն աշխուժացավ: Գնանք, շուտ, մայրիկին ուրախացնենք:

Էյլինը մի ակնթարթ տատանվեց. այդ պահին նա դեռ վատահ չէր, որ ճիշտ է վարվում, բայց վերջ ի վերջո երկուսըն էլ իջան ցած: Դուան մոտ էյլինը մի փոքր ընկրկեց, որպեսզի ընկերուհին առաջ անցնի, և սա վազեց դեպի մայրը, ասելով.

— Լսի՛ր, մայրի՛կ, տե՛ս ինչ եմ ասում: Էյլինը մի քի մեզ մոտ պիտի ապրի: Միայն թե չի ուզում, որ մեկնումեկը իմանա: Մոտակա օրերս կփոխադրվի մեզ մոտ:

Միսիս Քելիթենը, շաքարամանը ձեռքին, շրջվեց դեպի Հյուրը ու նայեց նրան նույնքան զարմացած, որքան և ուրախացած: Հետաքրքրասիրովյունը տոշորում էր նրան՝ ինչո՞ւ հանկարծ էյլինը որոշեց փոխադրվել իրենց տուն և ինչո՞ւ կարիք ունեցավ. հեռանալու տնից: Մյուս կողմից էլ այնքան էր նա սիրում նրան, որ չէր կարող անկեղծ ու մեծ հրճվանք չգգալ այդ մասին մտածելիս: Եվ ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ: Մի՞թե նշանավոր էդուարդ Բաթլերի դուստրը շափահաս, ինքնագլուխ կին չէ և ամենուրեք ցանկալի ներկայացուցիչը այնքան բարգավաճ այդ ընտանիքի:

Միսիս Քելիգենը շափականց շոյված զգաց իրեն, որ էլլինը իրենց տունը փոխադրվելու ցանկություն ունի, ի՞նչ էլ որ լինեին այդ քայլը անհելու մղող հանգամանքները:

— Չեմ հասկանում, էլլի՞ն, ինչպե՞ս են ձեր ծնողները թույլ տալիս ձեզ: Բայց մեր տանը, մեկ է, դուք կլինեք բաղձալի հյուր: Մնացեք, ինչքան ուզում եք, թեկուղ ընդմիշտ:

Եվ հրճվագին ժպտաց: Կարելի՞ էր երեակայել, որ էլլին Բաթլերը իրենց տունը տեղափոխվելու թույլատրություն է ինդրում: Այն չերմությունը, որով միսիս Քելիգենը ողջունեց նրան, և հենց Մեյմիի հիացմունքը ստիպեցին էլլինին թեթևացած շնչելու: Այնուհետև նա մտածեց, որ այդ տանն ապրելը հավելյալ ծախսերի տեղիք կտա Քելիգեն ընտանիքի համար:

— Ես, անշուշտ, իմ բաժինը պետք է մուծեմ տնտեսության մեջ, եթե փոխադրվեմ այստեղ, — ասաց նա, դառնաւով դեսի միսիս Քելիգենը:

— Ո՛, ի՞նչ անհիմեթ րան ասացիք, էլլի՞ն — բացականշեց Մեյմին: — Ես թույլ չեմ տա: Դու կփոխադրվես այստեղ և կլինես յու հյուրը:

— Ոչ, անկարելի է դա: Եթե դուք թույլ շտաք ինձ վճարեմ, ես չեմ գա, — բողոքեց էլլինը: — Պետք է համաձայնեք:

Նա գիտեր, որ մայր ու դուստր Քելիգենները ի վիճակի շեն շահել-պահել իրեն:

— Լավ, լավ, հիմա այդ մասին շխոսենք, — միջամբ տեղ միսիս Քելիգենը: — Տեղափոխվեցեք, երբ ուզում եք և մնացեք նույնական որքան ուզում եք: Մաքուր անձեռոցիկներ հանիր, Մեյմի:

Էլլինը նախաճաշին մնաց, բայց շուտով գնաց հանդիպելու Քառուփերվուդին՝ խիստ դոհ, որ գլխավոր դժվարությունն այլևս չկա: Այժմ նա աղատ է և կարող է դալ այստեղ, հենց որ ուզենա: Մնում էր միայն որոշ բաներ հավաքել և կամ պարզապես գալ, առանց հետը որևէ բան վերցը-

նելու: Կարող է պատահել, որ ֆրենկը որևէ խորհուրդ տա իրեն:

Մինչդեռ Քառափերվողը էյլինի հետ հարաբերության մեջ մտնելու փորձ չէր անում այն շարաբաստիկ օրվանից հետո, երբ նրանք բռնվել էին ժամադրությունների տանը։ Բայց նրանից նամակ սպասում էր. և դա շուշացավ: Ինչպես միշտ, մի երկար գրություն էր այդ՝ լի լավատեսությամբ, սիրով ու աշխուժությամբ: Այդտեղ էյլինը պատմել էր այն ամենը, ինչ տեղի էր ունեցել իրենց տանը, և հայտնում էր տնից հեռանալու իր ծրագիրը: Այս վերջին հանգամանքը բավական մտահոգեց ու անհանգստացրեց Քառափերվուդին:

Այլ քան է, երբ էյլինն ընտանիքի գրկումն է, ամենքից սիրված, խնամված, բոլորովին այլ՝ Ֆրենկի հոգատարությանը թողնված: Նրա մտքով երբեք չէր կարող անցնել, որ էյլինը կարող է տնից հեռանալ, նախքան ինքը պատրաստ կլինի ընդունելու նրան: Եթե նա այժմ որոշի այդ քայլն անել, կարող են խիստ անախորժ բարդություններ առաջանալ: Այնուամենայնիվ նա սիրում էր էյլինին, սիրում էր սաստիկ և պատրաստ էր ամեն ինչ անել նրա բախտավորության համար: Թեկուզե հիմա կարող էր պատշաճորեն պահել նրան, եթե, ի՞արկե, շրանտարկեին իրեն, ասենք, այդտեղից էլ կկարողանա հոգալ, որ նա ոչ մի բանի կարիք չունենա: Եվ այնուամենայնիվ շատ ավելի լավ կլինի, եթե ինքը կարողանա համոզել նրան մնալ տանը, մինչև վերջանականապես պարզվի իր վիճակը: Նա ոչ մի բոպե չէր կառակածուամ, որ, ինչպես էլ դասավորվեն մոտակա իրադարձությունները, ինքը ժամանակին դուրս կգա դժվարություններից և կրկին ունեռը մարդ կդառնա: Եվ այն ժամանակ ապահարդառնաքեն անպատճեն կբերի ու կամուսնանա էյլինի հետ: Իսկ եթե դրանից բան դուրս չգա, նրան առաջ՝ որևէ տեղ կմեկնի, իսկ այդ դեպքում գուցե և ավելի լավ է, որ էյլինն անմիաշապես հեռանա իր ընտանիքից: Բայց մյուս կողմից էլ իր գործերն այնպես են խճճված, գումարած դրան և որոնուաները, որ անկասկած, կձեռնարկի Բաթլերը. այս ամենը լինի վտանգներով: Ծերունին ընդունակ է բացահայտորեն մե-

զադրել իրեն, որ առևանգել է իր դստերը։ Ուստի և Քառվիերվուղը որոշեց համոզել էլլինին մնալ տանը, միաժամ ընդհատել հանդիպումներն ու նամակագրությունը, ավելին՝ մեկնել արտասահման։ Մինչև նրա վերադարձը ինքը կկարողանա շտկել իր գործերը, էլլինն էլ կհանդարտվի, իսկ հիմա իրենք պետք է զեկավարվեն նախ և առաջ բանականության թելադրանքներով։

Ահա այս մտքերով նա գնաց ժամադրավայրը, որ նշանակել էր էլլինը իր նամակով, թեև փոքր-ինչ վտանգավոր էր համարում։

— Վստա՞հ ես, որ այնտեղ քեզ լավ կգգաս, — հարցրաց Ֆրենկը՝ Քելիդենների բնակարանի նկարագրությունը լսելուց հետո։ — Այդ ամենից շատ է աղքատություն հառնում։

— Այո, բայց ես նրանց անկեղծորեն սիրում եմ, — պատասխանեց էլլինը։

— Եվ վստա՞հ ես, որ նրանք կկարողանան լռել։

— Օ՛, իհա՞րկին, ես վստահ եմ, միանգամա՞յն վստահ։

— Ի՞նչ տում, — եղբակացրեց Ֆրենկը։ — Դու ավելի լավ ես հասկանում։ Ես ոչ մի բան չեմ ուզում փաթաթել քո վկին, բայց եթե քո տեղը լինեի՞ բարվոք կհամարեի անսալ հորս և որոշ ժամանակ մեկնել։ Դա կհանգստացնի նրան, ես էլ քեզ կսպասեմ այստեղ։ Մենք կարող էինք նույնիսկ մերթ-մերթ գրել միմյանց։

Այս խոսքի վրա էլլինը խոժողովեց։ Այնքա՞ն սաստիկ էր նա սիրում Ֆրենկին, որ բաժանվելու միտքն անգամ, ասես, սրտին խրված դաշույն լիներ։ Իր Ֆրենկիը մնա այստեղ, փորձանիքի մատնված, գուցե և դատի ենթակա, իսկ ինքը մեկնի։ Ո՛չ մի դնով։ Զլինի՞ թե նա այնպես սաստիկ շի սիրում իրեն, ինչպես ինքը նրան։ Ինչպես է կարողանում արդարի բան ասացարկել։ Եվ ընդհանրապես՝ սիրո՞ւմ է արդյոք նա իրեն, — հարցնում էր էլլինն ինքն իրեն։ Զլինի՞ թե ուզում է լքել իրեն, և հենց այն ժամանակ, երբ ինքը պատրաստվում է անել մի քայլ, որը է՛լ ավելի պետք է մերձեցնի իրենց։ Նրա աշքերը մշուշապատվեցին։ Նա սառտիկ խոցված էր։

— Ինչպես կարող ես այդպես խոսել, — բացականչեց էլլինը: — Դու շատ լավ ես իմանում, որ հիմա ես չեմ մեկնի Ֆիլադելֆիայից: Մի՞թե դու կարծում ես, որ այսպիսի ժամանակ ես քեզ մենակ կթողնեմ:

Քառուփերվուզը հասկացավ նրա վրդովմունքը: Նա շատ էր խորաթափանց և սաստիկ սիրում էր նրան: «Աստված իմ, — մտածեց նա, — ամեն ինչ, միայն թե ցավ չպատճառեմ նրան»:

— Իմ սրտի՛ հատոր, — շտապ վրա բերեց նա՝ տեսնելով նրա մշուշված աշքերը, — դու իմ ասածը չհասկացար: Ես ուզում եմ միայն այն, ինչ դու ես ուզում: Դու այդ ամենը հնարել ես, որ ինձնից չբաժանվես. ուրեմն թող բո ուզածը լինի: Այլևս իմ ասածի մասին մի՛ մտածիր: Եւ վախենում էի, որ ձեր տնից հեռանալը երկուսիս էլ կվընասի, բայց հավատանք, որ ոչինչ չի պատահի: Դու գիտես, թե որքան է հայրդ սիրում քեզ, և հույս ունես, թե կստիպես նրան, որ փոխի իր որոշումը: Շատ լավ, փոխադրվեր միսիս Քելիգենի տունը: Բայց լավ իմացիր, իմ կյանքի ուրախություն, որ երկուս էլ վերին աստիճանի զգույշ պիտի լինենք: Գործը լուրջ ընթացք է ստանում: Եթե դու թողնես ընտանիքդ, և հայրդ էլ վեր կենա ու հրապարակով մեղադրի ինձ, որ առեանգել եմ քեզ, դա կակծալի հետևանք կունենա երկուսիս համար էլ: Հենց այդպիսի մի մեղադրանք բավական է, որ դատի տան ինձ: Իսկ ի՞նչ կլինի այն ժամանակ: Հիմա ավելի լավ է հազվադեպ հանդիպենք իրար: Այնքան հազվադեպ, որքան կարողանանք դիմանաւ: Եթե ժամանակին մենք բավական շրջահայաց լինեինք ու որոշ ժամանակ ընդհատեինք հանդիպումները, երբ հայրդ ստացավ այն նամակը, հիմա ամեն ինչ լավ կլիներ: Այժմ արդեն ոչինչ շենք կարող անել, բայց պետք է կրկնակի դգույշ լինենք: Մի՞թե համամիտ չես ինձ: Ուրեմն լսիր. Ճի լսվ մտածիր այս ամենի մասին և արա այնպես, ինչպես ձիշտ համարես: Իսկ երբ որոշես, իմաց տուր ինձ: Եվ ինչ էլ որ անես, ես նախօրոք հավանություն եմ տալիս. համկացա՞ր հիմա: — Նա էլլինին մոտեցրեց կրծքին ու համ-

բուրեց:— Հա՛, բայց չէ՞ որ դու դրամ շունես, այնպիս չէ՞,— հանկարծ մտաբերեց նա:

Ֆրենկի ասածներից խիստ հուզված էլլինը մի պահ մտածեց, բայց խկույն եղրակացրեց, որ իր ընտրած ուղին միակ ճիշտն էր: Հայրը շատ է սիրում իրեն և ոչ մի գնով շի անվանարկի հասարակության աշքում, հետևաբար շի օգտագործի իր տնից հեռանալը՝ բացահայտորեն Քառուփերվուդի վրա հարձակվելու համար: Ամենահավանականն այն է, որ կաղազի իրեն վերադառնալու տում, ասաց էլլինը, և նրա փաստարկների ազդեցությամբ Քառուփերվուդն ստիպված էր զիջել: Ի՞նչ օգուտ վիճելուց: Աշխարհում ոչ մի բան չի հարկադրի էլլինին լքելու իր սիրեցյալին:

Էլլինի հետ ծանոթ լինելու ամբողջ ժամանակամիջուցում առաջին անգամ նա գրպանից հանեց թղթադրամների մի կապոց:

— Ահա, սիրելի՛ս, այստեղ կա երկու հարյուր դոլար:— Առ քեզ կրավականացնի այնքան ժամանակ, մինչև ես նորից տեսնեմ քեզ կամ նամակ սահանամ քեզնից: Ես հոգ կտանեմ, որ զու ո՞չ մի բանի կարիք շունենաս: Եվ շհամարձակես կարծել, թե իբր շեմ սիրում քեզ: Ինքդ էլ գիտես, որ դա անհեթեթովթյուն է: Ես պաշտո՞ւմ եմ քեզ:

Էլլինը չէր ուզում վերցնել դրամը. ոչ մի բանի պետք շունի, բացի դրանից, տանը որոշ քան ունի. սակայն Ֆրենկը լցուց նրան՝ իմանալով, թե որքան կարող է դա պետք լինել նրան:

— Է՛լ շխոսենք այդ մասին, — ասաց նա, — ես լավ դիտեմ, որ փոսդր տեսք կդա քեզ:

Էլլինիր այնպիս էր վարժվել խոչոր գումարներ ստանալու հորից ու մորից, որ տունձնակի նշանակություն չըտվեց դրան: Ֆրենկը սիրում էր նրան, էլ ի՞նչ հաշիվ կարող էր լինել նրանց միջև: Երբ նա մի քիչ հանդարտվեց, նրանք սկսեցին քննել նամակադրության հարցը և եկան այն եղրակացության, որ ամենալավ միջոցը այնպիսի վստահելի մարդ գտնելն է, որի ձեռքով կարելի լինի նամակներ փոխանակել: Երբ նրանք բաժանվեցին, էլլինը, որ քիչ առաջ

Հուսահատության էր մատնվել, ինչպես թվում էր նրան, Ֆրենկի ոչ բավականաշափ սիրավառ վերաբերմունքից, գուտեպնդվեց: Ո՛չ, նա սիրում է իրեն, եզրակացրեց ելլինը և գնաց՝ երջանկության ժպիտը դեմքին: Նա ուներ իր Ֆրենկը, որին կարող էր հենվել, իսկ հիմա հորը մի լավ դաս կտա:

Քառուփերվուդը աշքով նրան ճանապարհ դնելիս օրորեց գլուխը: Հիմա էլլինը լրացուցիչ բեռ էր իր համար, բայց, իհարկե, չեր կարող հրաժարվել նրանից: Պոկե՞լ աղջկա սիրով ստեղծված պատրանքների վարագույրը և դժբախտացնել նրան, երբ ինքն էլ սաստիկ սիրահարլած է: Ո՛չ, եվ ինչո՞ւ այդպիսի քան աներ, Վերջ ի վերջո դեռ ամեն ինչ կարող է հաջող ընթացք ստանալ, եթե Բաթլերը նորից դիմի լրտեսների օգնության, ապա կպարզվի, որ ելլինը բնավ էլ Քառուփերվուդի մոտ չի ապաստանել, իսկ եթե գա այն պահը, երբ հարկ լինի գործի դնել իր ամբողջ ողջաշմբությունն ու սառն հաշվենկատությունը՝ մահացու վրտանգից փրկվելու համար, ապա ինքը ծածուկ կհայտնի Բաթլերներին էլլինի գտնված տեղը: Դա ապացուց կլինի, որ ինքը լոկ հեռավոր առնչություն է ունեցել նրա փախուստի հետ, իսկ նրանց հնարավորություն կտրվի համոզել էլլինին վերադառնալու: Կարող է պատահել, որ ամեն ինչ լավ կլինի, ի՞նչ իմանաս: Համենայն դեպս ինքը կպայքարի իր խոշոնդուների դեմ, ինչ շափով դրանք ծագեն: Քառուփերվուդն անմիջապես գնաց իր գրասենյակը, իսկ էլլինը տուն, իր մտադրությունը իրագործելու հաստատ որոշմամբ: Հայրը մտածելու համար ժամանակ էր ավել նրան. կարող է պատահել, որ նա երկարացնի դա, բայց էլլինը չի սպասիծ վարժված լինելով իր ամեն տեսակ ցանկությունների կատարվելուն՝ նա կարծում էր, թե հիմա էլ այդպիս շանելու պատճառ չկա: Ծուտով ժամը հինգը կլինի: Ինքը կսպասի մինչև յոթը, երբ ամբողջ ընտանիքը սեղան կնստի, և կամացուկ կծէկի տնից:

Սակայն մի անակնկալ ստիպեց նրան հետաձգելու իր մտադրությունը: Տանը հյուրեր կացին՝ միստր Մթեյնմեթան

ու կինը։ Սթեյնմեթսը՝ անվանի ինժեներ, աշխատակցում էր Բաթլերի հետ, նախագծեր կազմելով նրա կապալային աշխատանքներից շատերի համար։ Գոհության տոնի նախօրյակն էր, և Սթեյնմեթսները իրար խոսքը կտրելով, սկսեցին համոզել էլլինին ու նորային մի երկու շաբաթ հյուր գալ իրենց մոտ՝ Վեսթ-Ջեսթերի նոր տանը, որի անդորրավետության և գեղեցկության մասին էլլինը հաճախ էր լսել։ Շատ հաճելի մարդիկ էին նրանք, գեռ բնավ էլ ոչ ծեր, և նրանց տանը բազմաթիվ բարեկամներ էին հավաքվում։ Էլլինը որոշեց հետագել իր փախուստը և ընդունել հրավերը։ Հայրը շափազանց սիրալիր շեշտով էր խոսում դատեր հետ։ Սթեյնմեթսների ներկայությունը և խնդրանքը նրա համար էլ նույնպիսի թեթևություն էին, ինչպես էլլինի համար։ Վեսթ-Ջեսթերը քառասուն մղոն էր Ֆիլադելֆիայից հեռու, և այդտեղ ապրելով՝ էլլինը հազիվ թե կարողանար տեսնը լել Քառափերվուղի հետ։

Նու տնմիջառես զրեց Ֆրենկին իր ծրագրում առաջացած փոփոխություն մտախն, և Ֆրենկը թեթևացած շունչ քաշեց՝ այդ պահին երիակայելով, որ փոթորիկը կողքից անցավ։

ԳԼՈՒԽ XXXIX

Մինչ այս, մինչ այն մոտենում էր այն օրը, երբ պետք է լսվեր Քառափերվուղի գործը։ Նա չէր կասկածում, որ դատարանը, հակառակ փաստերի վկայությանը, հնարավոր ամեն ինչ կանի մեղադրական վճիռ արձակելու համար իր դեմ, սակայն ստեղծված դրությունից դուրս գալու ելքը չէր պատկերացնում։ Գուցե միայն մի բան՝ ամեն ինչ թողնել ու մեկնել Ֆիլադելֆիայից։ Բայց այդ մասին մտածել իսկ շարժեր։ Իր առագան ապահովելու և ֆինանսական աշխարհի որոշ մարդկանց հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու միակ հնարավորությունը որքան կարելի է դատարանի առաջ շուտ կանգնելն էր, հույս ունե-

նալով, որ եթե ինքը դատապարտվի, ապա իր բարեկամները ժամանակին կօգնեն իրեն դարձյալ հանապարհը գըտնելու: Նա շատ էր խոսում Սթեղերի հետ՝ դատական կազմի իր հանդեպ աշառու լինելու վերաբերյալ, սակայն փաստաբանը համամիտ չէր նրա վախին: Նախ՝ այնքան էլ հեշտ չէ կաշառել երդվալներին. երկրորդ՝ դատավորների մեծ մասը, չնայած քաղաքական համոզմունքների տարբերությանը, ազնիվ մարդիկ են և իրենց կուսակցությունների պարագուինների թելադրանքից հեռու չեն գնա, իսկ դա, վերջ ի վերջո, այնքան էլ սարսափելի չէ: Այն դատավորը, որ պետք է նախագահեր այդ դատավարությանը, ոմն Ուկրար Պեյզերսոնը, դատարանի եռամսյակային նստաշրջանի անդամ էր և հանրապետական կուսակցության անմիջական դրածոն, ուստի և ամեն ինչով Մոլենհաուերին, Սիմֆոնին ու Բաթլերին պարտական. բայց մյուս կողմից էլ Սթեղերը լսել էր, որ նա ազնիվ մարդ է:

— Զեմ հասկանում, թե ինչու այդ մարդիկ այդքան ուզում են պատժել ձեզ: Չլինի՝ թե ամբողջ նահանգին ի խրատ: Չէ՞ որ ընտրություններն արդեն տեղի են ունեցել: Ի դեպ, ասում են, որ հիմա արդեն միջոցների են դիմում Սթիներին ազատելու համար, եթե նա դատապարտվի. որից, անշուշտ, չի խուսափի նա: Կամա թե ակամա հարզ կլինի դատապարտել նրան: Մեկ-երկու տարի բանտարկության կդատապարտեն, ամենաշատը՝ երեք. հետո էլ ներման կարժանանա, ժամկետի կեսն էլ չնստելով: Հոռեգույն դեպքում նույնը սպասում է և ձեզ: Հո չե՞ն կարող նրանք Սթիներին ազատ արձակել, իսկ ձեզ ուղարկել բանտ: Բայց երբեք բանը դրան չի հասնի. Հիշեցեք իմ խոսքը: Մենք դատը կշահենք առաջին իսկ ատյանում, իսկ եթե ոչ՝ մեր բեկման գանգատը կբավարարվի նահանգի գերագույն դատարանում: Դատավորների այնտեղի հնգյակը ո՛չ մի դեպքում հավանություն չի տա այս անհեթեթ պատմությանը:

Սթեղերը անկեղծորեն հավատում էր իր ասածներին, և դա ուրախացնում էր Քառուփերվուղին: Մինչև հիմա երիտասարդ իրավաբանը շատ լավ էր վարել իր գործերը: Այ-

նուամենայնիվ նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ
թաթլերը հետապնդում էին: Այս հանգամանքը խիստ
բարդացնում էր գործը, իսկ Սթեղերի մտքովն իսկ չէր անց-
նում այդ բանը: Իր փաստաբանի լավատեսական հավաս-
տիացումները լսելիս Քառուփերվուղը միշտ հիշում էր այդ:

Գատավարովթյան լուրը ալեկոծեց վեց հարյուր հազար
բնակչություն ունեցող ողջ քաղաքը: Քառուփերվուղները
որոշեցին, որ իրենց ընտանիքի կանանցից ոչ մեկը դատա-
րան չի գնա: Այսպես էր պնդում Ֆրենկը, շուտենալով հա-
մեղ սնունդ մատակարարել թերթերի լրահավաքներին: Հայրը
դատարան կդնա, որովհետև կարող է պետք լինել
որպես վկար: Նախօրյակին նամակ ստացվեց էլլինից: Նա
հայտնում էր, թե վերադարձել է Վեսթ-Չեսթերից և հաջո՞
ղություն է բարեմաղթում Ֆրենկին: Նրա գործի ելքը այն-
քան է հուզում էլլինին, որ ի վիճակի շէ հեռու մնալ և վե-
րադարձել է Ֆիլադելֆիա՝ ոչ թե դատարան գնալու (քանի
որ Ֆրենկն այդ բանը չի ուզում), այլ որքան կարելի է մո-
տիկ լինելու նրան այն բոպեներին, երբ որոշվում է նրա
բախտը: Նա ցանկանում է վազել Ֆրենկի մոտ, շնորհավո-
րել, եթե արդարացնեն, միսիթարել, եթե դատապարտեն: Նա
հասկանում է, որ այդպես հապշտապ վերադառնալը
հավանուի կաստկացնի իր ու հոր կոնֆլիկտը, բայց...
այստեղ ինքը անզոր է:

Միստ Լիլիան Քառուփերվուղը գտնվում էր խիստ դժվա-
րին ու կեղծ վիճակում: Նա ստիպված էր ձևանալ սիրող ու
խանդակաթ կին, թեև հասկանում էր, որ Ֆրենկը բնավ էլ
չի ձկտում դրան: Այժմ Ֆրենկը բնազդաքար կռահում էր,
որ կինը դիտե իր ու ելլինի հարաբերությունները և հար-
մար որո՞ւի և միտյն սպասում՝ ամեն ինչ լացեիբաց ասե-
լու համար: Այդ ճակատագրական օրը ուղեկցելով ամուս-
նուն մինչև գուտը, գրկեց նրան գուսալ, ինչպես վերջին բո-
լոր տարիներին, և թվում էր, թե չի կարող ստիպել իրեն
համբուրելու նրան, թեև գիտակցում էր, թե որքան ծանր
փորձություն է սպասում ամուսնուն: Ֆրենկը նույնպես նը-
վազագույն ցանկովթյուն շուներ համբուրելու կնոջը, բայց

դա ցույց չտվեց: Այնուամենայնիվ կիլիանը հետո շրթումքան ները դիմում նրա այտին ու ասաց.

— Հուսով եմ, որ ամեն ինչ բարեհաջող կվերջանաւ:

— Կարծում եմ, որ դու տագնապելու պատճառ չունես, կիլիան, — առույգ պատասխանեց Ֆրենկը: — Ամեն ինչ լավ կլինի:

Նա արագ իշավ սանդուղքը, քայլեց դեպի Զիրարդ պողոտան, որով անցնում էր մինչ այդ իրեն պատկանող ձիւաքարշի զիծը, ու ցատկեց վագոն: Նա մտածում էր ելլինի մասին, երեակայում, թե որքան ուժգին է նա ցավակցում իրեն և ըստ էության ինչպիսի՞ ծաղր է հիմա իր ընտանեական կյանքը. մտածում էր, թե երդվյալ ատենակալները ողջամիտ մարդիկ կլինեն արդյոք, և այն, և այն: Եթե ձախողի, եթե... Այս, ծանր էր մինելու այդ օրը:

Երրորդ փողոցի անկյունում նա դուրս եկավ վագոնից և շտապ-շտապ քայլեց իր գրասենյակը: Սթեղերը արդեն տպասում էր նրան:

— Ուրեմն, Հարպե՛ր, եկավ վճռական ժամը, — արիաքար ասաց Քառուփերվոսդը:

Չորրորդ նստաշրջանի առաջին բաժնի դատարանը, որտեղ պետք է լսվեր գործը, գտնվում էր նշանավոր Անկախության պալատում (Վեցերորդ և Զեսթնեթ փողոցների անկյունում), ուր հիմա էլ, ինչպես հարյուր տարի առաջ, կենտրոնացած էր Ֆիլադելֆիայի դատական ու վարչական ամբողջ կյանքը: Դա կարմիր աղյուսից շինված երկհարականի գետնամած շենք է. նրա կենտրոնական մասը պսակած է շգիտես հինգ անգլիական, թե՛ հոլանդական ոճի մի ապիտակ փայտաշեն աշտարակով, հիմքի մոտ քառակուսի, մեջտեղը կլոր և գագաթը ութամկյունի: Շենքը բաղկացած է կենտրոնական մասից և երկու կողմնային թևերից, որոնցից ամեն մեկը Դ տառի ձև ուներ: Պատուհաններն ու դրաները, որոնց վերնամասերը մանր ապակեպատված կիսաշրջաններ ունեին, շինված էին այն ոճով, որն այնպես հիացնում է «գաղովթային ճարտարապետության» սիրահարներին: Այդ և «Պետական շարք» անունով հայտնի, հե-

տագյուռմ քանդված, իսկ այն ժամանակ գլխավոր շենքի ետևի պատից դեպի Ուղղնեթ փողոց ձգվող շենքում էին տեղավորված քաղաքապետի, ոստիկանության պետի, քաղաքի գանձապետի գրասենյակները, քաղաքային խորհրդի նիստերի դահլիճները և վարչական ուրիշ կարևոր հիմնարկներ, ինչպես նաև դատարանի եռամսյակային նըստաշրջանների չորս բաժանմունքները, որոնք քննում էին վերջերս Ֆիլադելֆիայում խիստ հաճախակի դարձած քրեական գործերը։ Հակայական քաղաքապետարանը, որ հետագյուռմ բարձրացավ Բրոդ ու Մարքեթ փողոցների անկյունում, այն ժամանակ դեռ նոր էր կառուցվում։

Դատական ընդարձակ սրահներին ավելի հանդիսավոր տեսք տալու համար շինեցին այնտեղ մուգ ընկուզենու փայտից բարձրույթներ, որոնց վրա դրված էին դատավորների սեղաններ։ Բայց այդ մտահղացումը այնքան էլ հաջող չստացվեց։ Թե՛ սեղանները, թե՛ երդիքալ ատենակալների տեղերը, թե՛ պատվարները շատ էին ծանրումներ և շենքին անհամաշափ։ Պատերի համար ամենահարմար գույնը, երբ կահույքը մուգ ընկուզենուց էր, համարեցին շգիտես ինչու կրեմագույնը, սակայն ժամանակն ու փոշին խիստ տխուր տեսք տվին դրան։ Մրահներում ո՛չ նկար կար, ո՛չ ևս որևէ այլ զարդարանք, եթե հաշվենք նոխ ու պաճուճված գազի աշտանակները «նորին ազնվության» սեղանի վրա և մեջտեղից կախված ջահերը։ Այդ տաղտկաբեր շենքը շէին զարդարում նաև դատական պարարտացած կատարածուներն ու պաշտոնյաները, ովքեր մտահոգված էին միայն մի բանով՝ շկորցնել իրենց օգտավետ պաշտոնները։ Երկու կատարածուները, որոնք այն սրահում էին, որտեղ պետք է քննվեր Քառօվկերվուտի դործք, այլ բան չէին անում, եթե ոչ շտապում էին իրար առաջ կտրելով մի բաժակ ջուր տալ դատավորին, երբ սա ձևորդի ուղարկում էր դրան։ Մեկը, որ նման էր ճարպակալած, լիսկած ու փոշոտված արքունապետի, «նորին ազնվության» տոշեցից էր քայլում, երբ սա գնում էր զոսպարան կամ վերադառնում այնտեղից։ Նրա պարտականությունն էր՝ դատավորը սրահ մտնելիս բարձ-

բածայն ազդարարել. «Դատարանն է գալիս. հանե՛լ գըլ-խարկները, Խնդրում եմ բոլորին ոտքի կանգնել», երբ դատավորը նստում էր, երկրորդ կատարածուն, որ կանգնած էր լինում նրա ձախ կողմը՝ երդվյալ ատենակալների տեղերի ու վկայի նստարանի միջև եղած տարածովթյան կեսին, անորոշ շուտասելուկով արտասանում էր այն, պարտավորությունների սքանչելի ու մարդկային արժանապատվությամբ լի դեկլարացիան, որ հասարակությունը գնում է իր յուրաքանչյուր անդամի վրա և որն սկսվում է «Լսեցեք բոլո՞րդ էլ, լսեցեք բոլո՞րդ էլ, լսեցեք բոլո՞րդ էլ» և ավարտվում «Ամեն ոք, ով գանգատվելու արդարացի հիմքունի, թո՞ղ մոտենա, և նրան կլսեն» խոսքերով։ Բայց այս խոսքերը այստեղ, կարծես, կորցրել էին իրենց նշանակությունը։ Սովորույթն ու անտարբերությունը դարձրել էին դրանք մի տեսակ անհասկանալի շուտասելուկ։ Երբորդ կատարածուն պահակություն էր անում խորհրդակցության սենյակի դռան մոտ։ Կատարածուներից բացի, սրահում գտնվում էին դատական սղագիրը և դատարանի քարտուղարը՝ մի փոքրամարմին, հյուծված, անարյուն դեմքով, ջրախառն կաթի գույն աշքերով մարդ, մազերը ցանցառ, իսկ մորուքը խողաճարպի գույնի, ինքն էլ ամերիկանացած ու զառամած չին մանդարինի նման։

Դատավոր Ուիլբար Պեյդերսոնը՝ տառեխի նման վտիս մի մարդ, որ նախագահել էր դեռ այն ժամանակ, երբ գործը քննվում էր հետաքննական ատյանում, երբ երդվյալները որոշում էին Քառուկերվութին դատի տալու հարցը, բավական հետաքրքիր տիպ էր։ Ուշադրություն էր նա գրավում, ամենից առաջ իր արտակարգ նիհարությամբ ու հյուծվածությամբ։ Դատական գործի տեխնիկան ու օրենքները լավ էր իմանում նա, սակայն պատկերացում չուներ իմաստուն դատավորների գիտեցածի մասին, այսինքն՝ իսկական կյանքի, հանգամանքների այն անտեսանելի միահյուսման մասին, որը կոչ է անում դատավորի սրտին՝ դեռ նետելով բուլոր գրված օրենքները, երեքմն էլ նույնիսկ վկայելով դրանց կատարելապես անպետք լինելը։ Բավական էր նայել այդ

սմբած իմաստակին, նրա խուճում, սպիտակ մազերին, կապտագորշ ձկնային աշքերին և ասել, որ նա ամբողջովին զուրկ է երեակայությունից: Ճիշտ է, նա՝ ձեզ չեր հավատա և... կտուգաներ դատարանը շհարգելու համար: Զանախնդրաբար օգտագործելով ամեն մի մանր հաջողություն, օգուտ քաղելով յուրաքանչյուր փոքրիշատե հարմար առիթից, ստրկորեն անսալով իր կուսակցության ձայնին և հաճոյակամ հնագանդվելով ամենազոր կապիտալին՝ նա կարողացել էր հասնել իր ներկա պաշտոնին: Ասենք, դա այնքան էլ բարձր նվաճում չէր: Նրա տարեկան ոռմիկն ընդամենը վեց հազար դոլլար էր, իսկ նրա համեստ ժողովը դականությունը դուրս չէր գալիս տեղական փաստաբանների ու դատական պաշտոնյաների նեղ շրջանից: Եվ այնուամենայնիվ մեծագույն գոհունակություն էր զգում գրեթե ամեն օր իր անունը կարդալով թերթերում, որոնք հաղորդում էին, թե միստր Պեյդերսոնը նախագահում էր այս կամ այն դործը քննող դատին կամ արձակեց այսպիսի վճիռ: Նա կարծում էր, թե զա նկատելի զեմք է դարձնում իրեն: «Տեսե՞ք, ես այնպես չեմ, ինչպես բոլորը»,— մատածում էր նա հաճախ և ուրախանուած: Խիստ շոյլած էր զգում իրեն, երբ նրա օրակարիտում լինում էր որևէ բարձրագործ գործ, և գահակալելով դատվող կողմերի ու հասարակության առաջ, երեակայում էր իրեն, հիրավի, կարևոր անձնավորություն: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ առօրեական հանգամանքների արտասովոր միահյուսումը շփոթեցնում էր նրա սահմանափակ միտքը, սակայն բոլոր այդպիսի դեպքերում էլ նա անխախտ հիշում էր օրենքի տարբ: Թափական էր քրքրել հին դատավարությունների թղթապանակները՝ իմանալու համար ինչպես էին այդպիսի հարցեր լուծում խելացի մարդիկ: Թացի դրանից, բոլոր փաստաբանները մեծ խարդախներ են: Նրանք դատավորի առաջ են դնում դատավճիռներ, ամենեին շմտածելով, թե ինչ կարծիք կամ ցանկություն ունի նա:

— Զե՞րդ ազնվություն, Մասաշուսեթ նահանգի դատավճիռների երեսուներկուերորդ հատորում՝ էջ այսինչ, տող

այնինչ, գործ էրանդելի ընդդեմ թեններմենի, դուք կգըտ նեք... և այլն, և այլն:—Որքա՞ն հաճախ կարելի է լսել դատարանում այսպիսի խոսք: Արդեն հարկ չի լինում շատ մտածել այսպիսի դեպքերի մասին: Իսկ օրենքի սրբությունը այդ միջոցին դրոշի պես բարձրացված է ի փառս իշխանությունները պահողների:

Ինչպես ճիշտ էր նկատել Սթեղերը, հազիվ թե կարելի լիներ անարդար դատավոր անվանել Պեյդերսոնին: Սակայն ինչպես որոշ կուսակցության, տվյալ դեպքում՝ հանրապետական կուսակցության առաջադրած ամեն մի դատավոր, նա մինչև ուղն ու ծուժը նվիրված էր նրան, ուստի և աշառու դատավոր էր: Եվ որովհետև ամեն ինչի համար պարագան էր այդ կուսակցությանը, ապա պատրաստ էր, իհարկե, իր ուժերի ներածի շափ, ամեն ինչ անել, միայն թե նպաստեր հանրապետական կուսակցության շահերին և իր տերերի օգտին: Մարդկանց մեծ մասը նեղություն չեղացում խորամուխ լինելու այն մեխանիզմին, որը կոչվում է խիղճ: Իսկ եթե նրանք նեղություն էլ կրեն այդ բանն անելու, ապա, որպես կանոն, նրանց պակասում է էթիկայի ու բարոյականության խճճված թելերն արձակելու կարողությունը: Դրանք անկեղծորեն հավատում են այն բանին, ինչ թելադրում է նրանց ժամանակի ոգին կամ իշխանակունքի գործարար շահերը: Մի անգամ մեկը բերանից խցորեց: «Առանց շողոքորթելու կոնցեռններին նվիրված դատավոր»: Իսկ այսպիսի դատավորներ շատ կան:

Պեյդերսոնը նույնպես սրանցից էր: Նա ակնածում էր հարստությունից և ուժից: Նրա աշքում Մոլենհաուերը, Սիմվոնն ու Բաթլերը մեծ մարդիկ էին, իսկ ով հզոր էր նա էլ իրավացի է: Վաղուց էր նա լսել այն վատնումի մասին, որին մասնակցել էին Քառութերվուան ու Սթիները, և քաղաքական բազմաթիվ գործիչներին ծանոթ լինելու շնորհիվ բախական ճիշտ էր պատկերացրել այդ գործի ընդհանուր պատկերը: Հանրապետական կուսակցությունը, նրա պարագլուխների կարծիքով, խիստ դժվարին կացության մեջ էր դրված Քառութերվուանի խորամանկ մեքենայությունը:

ներով։ Նրա շնորհիվ էր Սթիները բավական հիմնովին շեղվել արդար ուղղուց, քան թույլ է տրված քաղաքի գանձապետին. ու թեև նա էր ամբողջ գործի նախաձեռնողը, այնուամենայնիվ զլխավոր պատասխանատվությունն ընկնում էր գանձապետին դեպի այդ կործանարար արարքը մղող Քառուիերվոսի վրա։ Բացի դրանից, հանրապետական կուսակցությանը քավության նոխազ էր պետք, իսկ հենց միայն դրանով ամեն ինչ ասված էր Պետերսոնին։ Ճիշտ է, հիմա երբ ընտրությունները տեղի էին ունեցել, և ակներև էր դարձել, որ կուսակցությունը ոչ մի էական վնաս չունեցավ, Պետերսոնը լրիվ չէր հասկանում, թե ինչու այդքան համառորեն ներքաշում են այդ գործի մեջ Քառուիերվոսին. սակայն ենթադրելով, որ պարագումիները բավական հիմք ունեն դրա համար, այնքան էլ զլուխը չէր ցավեցնում այդ հարցի վրա։ Տարբեր աղբյուրներից նա լսել էր, որ Բաթլերը անձնական ատելություն է տածում Քառուիերվուղի հանդեպ։ Ոչ ոք ճիշտ չէր կարող ասել դրա պատճառը։ Իսկ ընդհանուր կարծիքը հայրիած էր ենթադրելու, որ Քառուիերվուղը ներգրավել էր նրան կասկածելի սպեկուլյացիաների մեջ։ Այսպես թե այնպես, բոլորն էլ հասկանում էին, որ որոշված էր ընթացք տալ այդ գործին՝ ի շահ հանրապետական կուսակցության և ի սաստում նրա շարքային անդամներին։ Հասարակության վրա բարոյական մեծագույն ազգեցություն գործելու համար Քառուիերվուղը պակաս պատժի չպետք է ենթարկվեր, քան Սթիները։ Իսկ Սթիները ենթարկվելու էր այդպիսի հանցագործությունների։ Համար նախատեսված բանտարկության մեծագույն շափին, որպեսզի ամենքն էլ հասկանա՞ն, թե որքա՞ն արդարադատ են հանրապետական կուսակցությունն ու դատարանը։ Հետագայում նահանգապետը կարող է իր կամքով, եթե ուզենա կամ այդ մասին ակնարկեն կուսակցության պարագը-լուսները, մեղմացնել պատիքը։ Լայն հասարակության միամիտ պատկերացմամբ եռամսյակային նստաշրջանի դատավորները նման էին վանական գիշերօթիկ դպրոցի դաստիարակչութիներին, այսինքն՝ ապրում էին աշխարհիկ

ունայնովթյուններից դուրս և տեղյակ չէին տեղի քաղաքաւ կան կյանքի կովիսներից այն կողմը տեղի ունեցածին։ Իսկ իրականում նրանք ամեն ինչին էլ հիանալի իրազեկ էին, և գլխավորը, գիտենալով, թե իրենց դիրքի և իշխանության համար ում են պարտական, կարող էին շնորհակալ լինել

Գ Լ Ո Ւ Խ Լ

Երբ Քառուփերվուդը դեմքը թարմ, ձգված (արտաքուստ նման էր տիպիկ գործարարի ու խոշոր ֆինանսիստի), իր հոր և փաստարանի հետ մտավ դատարանի լեփ-լեցուն դահումնը, բոլորն էլ հայացքներն ուղղեցին նրա վրա։ Զէ՛, անհավանական է, մտածում էր ներկաների մեծ մասը, որ այսպիսի մարդուն մեղադրական դատավճիռ արձակվի։ Անկասկած մեղավոր է նա, բայց նույնքան էլ կասկածից դուրս է, որ ձևեր ու միջոցներ կունենա օրենքը շրջանցելու համար։ Նրա փաստաբան Հարպեր Սթեղերը նույնպես խելացի ու ճարպիկ մարդ թվաց ամենքին։ Եղանակը ցուրտ էր, և երկուսն էլ հագել էին երկար, կապտագորշ վերաբեկու, վերջին նորածնությամբ կարված։ Զինջ եղանակին Քառափերվուդը սովորություն ուներ ծաղկեփնջիկ կրել լամբակի վրա, բայց այսօր հրաժարվել էր դրանից։ Բաց մասնիշակագույն, պինդ մետաքսե նրա փողկապին ամրացված էր խոշոր, շողջուն զմրուխտ-գնդասեղ։ Եթե չհաշվենք ժամացուցի բարակ շղթան, ապա ոչ մի զարդ չկար նրա վրա։ Նա առաջ էլ կենսուրախ, բայց միհաժամանակ զուապ ու բարեհոգի, դրա հետ և ինքնավստահ ու գործնական մարդու տպավորություն էր թողնում, սակայն այսօր այդ բոլոր հատկությունները առանձնապես ցայտուն էին երևում։

Առաջին իսկ հայացքով Քառուփերվուդն ընդգրկեց դատարանի յուրօրինակ պատկերը, որ հիմա շատ էր հետաքըրում իրեն։ Ուղիղ նրա դեմ էր դատավորի դեռ թափուր ամբիոնը, դրա աշ կողմում երդվյալ ատենակալների նմա-

նապես դատարկ տեղերը, իսկ դրանց միջև, դատավորի բազկաթոռի ձախ կողմում՝ վկայի նստարանը, ուր նա նըստելու էր հիմա և ցուցմոնքներ էր տալու: Դրա ետեղ արդեն կանգնել և դատավորի դուրս գալուն էր սպասում կատարածուն, ոմն Զոն Սփարքհիվերը, որի պարտականությունն էր՝ վկային տալ մի քրեված ու կեղտուված Աստվածաշշունչ գիրք և վկայի երդում տալուց հետո ասեր. «Անցեք այստեղ»: Մրահում կային և այլ կատարածուներ: Մեկը կանգնած էր դատավորի սեղանի դիմացի պատվարի անցուղու մոտ. այդտեղ էր մեղադրյալը լսում դատավճիռը և այդտեղ էլ գտնվում էին փաստաբանների տեղերն ու ամբաստանյալի նստարանը. մյուս կատարածուն կանգնած էր այն անցուղում, որը տանում էր խորհրդակցության սենյակը, և, վերջապես, երրորդը պահպանում էր այն դուռը, որով հասարակությունն էր ներս մտնում: Քառուիերվոողը անմիջապես նկատեց վկաների նստարանին նստած Սթիներին: Գանձապետը այնպես էր դողում իր բախտի համար, որ բացարձակապես ոչ որի հանդեպ շար զգացում չէր տածում: Ճիշտն ասած, նա առաջ էլ շէր կարողանում զայրանալ որևէ մեկի դիմ, իսկ հիմա, այսքան աննախանձելի վիճակի մեջ ընկնելուց հետո, միայն սաստիկ ափսոսում էր, որ շէր հետեւ Քառուիերվոողի խորհուրդին: Ճիշտ է, նրա հոգում տակավին նշուղում էր մի հույս, որ Մոլենհառուերը և նրա ներկայացրած քաղաքական կլիկը, մեղադրական դատավճոփի դեպքում, նահանգապետի առաջ միջնորդություն կհարուցի հօգուտ իրեն: Սթիները խիստ գունատ էր և կազգին նիհարել էր: Ոչ մի հետք չէր մնացել այն կարմրաթշի՛ դեմքից, մարմնեղությունից, որով աշքի էր ընկնում բարգավաճման օրերին: Հագել էր նոր, գորշ կոստյում, կապել կինամոնագույն փողկապ և մաքուր սափրովել էր: Զգալով Քառուիերվուդի սենյակ հայացքը՝ նա ցնցվեց ու աշքերը խոնարհեց, հետո էլ սկսեց անհեթեթ կերպով քաշքշիլ իր ականջը:

Քառուիերվուդը գլխով արեց նրան:

— Գիտե՞ք ինչ կասեմ ձեզ,— նկատեց նա Սթեղերին,—

խղճում եմ Զորշին: Չտեսնված ավանակն է: Ասենք, ես նըս
րա համար արեցի այն ամենը, ինչ կարող էի:

Քառափերվուգը աշքի տակով նայեց նաև միսիս Սթինեռ
րին՝ դեղնաղեմ ու սրակզակ մի կարճմիկ կնոջ, որ խիստ
վատ կարված զգեստ էր հագել: «Իսկապես էլ Սթինեռը
միայն կարող էր այսպիսի կին բնտրել», — մտածեց նա:
Ոչ այնքան բարգավաճող և դրա հետ նաև ոչ լիարժեք
մարդկանց միջև տեղի ունեցող ամուսնությունները միշտ
գրավում էին նրա երեսակայությունը: Միսիս Սթինեռը, ան-
շուշտ, չը կարող քարի զգացումներ տածել Քառափերվուգի
հանդեպ, քանի որ համարում էր նրան իր ամուսնու կոր-
ծանման պատճառ դարձած մի անխիղճ մարդ: Այժմ նրանք
դարձյալ աղքատ էին, պատրաստվում էին իրենց մեծ տնից
փոխադրվել ավելի էժանագին բնակարան, և նա բոլոր
ուժերով վանում էր իրենից այդ տիսուր մտքերը:

Մի քանի րոպե անց եկավ դատավոր Պեյզերսոնը. նըս
րան ուղեկցում էր մի կարճահասաւակ ու հաստլիկ դատա-
կան կատարածու, որն ավելի շուտ նման էր խպիպավոր
աղավնու, քան թե մարդու: Հենց որ նրանք ներս եկան, կա-
տարածու Սփարքհիվերը թիմկթիմկացրեց դատավորի սե-
ղանը, որի մոտ մինչև այդ գլուխը վեր-վար էր անում, ու
մրթմրթաց. «Ինդրո՛ւմ եմ կանգնել»: Հասարակությունը
վեր կացավ, ինչպես վեր է կենում ամբողջ աշխարհի բոլոր
դատարաններում: Դատավորը տնտղեց իր սեղանին դրված
թղթերի կույտը:

— Նախ ո՞ր գործն է քննվում, մի՛ստր Պրոտուս, —
հատ-հատ հարցրեց նա դատական քարտուղարին:

Այն միջոցին, երբ տեղի էր ոսնենում գործերը քննուա-
թյան պատրաստելու երկարածիք ու տաղտկալի արարողու-
թյունը և քննարկվում էին փաստաբանների զանազան մա-
նըր միջնորդությունները, Քառափերվուգը շթուկացող հե-
տաքրքրությամբ հետևում էր այդ տեսարանին, որը ի մի
վերցրած կոչվում է դատարան: Ինչպես էր նա տեսնուած
հաղթական դուրս գալ, ինչպես էր զայրանոամ հանգա-
մանքների տարաբախտ համակցության վրա, որը բերեց

նրան այդ սրահը: Նա միշտ էլ կատաղում էր, թեև ցուց
չէր տալիս, դատական պատրվակամոլությունից, այդ բռ-
լոր հետաձգումներից ու բանսարկություններից, որոնք
այնքան հաճախ դժվարացնում են ամեն մի համարձակ նա-
խաձեռնություն: Եթե հարցնեին նրան, թե ինչ բան է օրեն-
քը, կտրականապես կպատասխաներ՝ մարդկային քմահա-
ճույքներից ու սխալներից կազմված մշուշ, որ պարուրում
է կյանքի ծովը և խանգարում լողալ մարդու գործարարա-
կան ու սոցիալական խիզախումների խարխուլ նավակնե-
րին: Նրա կեղծ մեկնաբանումների թունավոր գարշահոտու-
թյունները կրծում են կյանքի մարմնին եղած խոցերը,
օրենքի պատահական գոհերը աղացվում են բռնության ու
կամայականության երկանաքարերի տակ: Օրենքը մի տար-
օրինակ, քստմնելի, հետաքրքրական և միաժամանակ անհ-
ասստ պայքար է, որտեղ կամագուրկ, տգետ ու անճարակ,
ինչպես նաև խորամանկ ու շարացած մարդը հավասարա-
պես դառնում է մի հետեակ, մի գնդակ այլ մարդկանց՝
իրավարանների ձեռքին, սկըեր հմտորեն խաղ են անում
նրա արամադրության ու փառասիրության, ցանկություննե-
րի ու կարիքների հետո Այդ քստմնելիորեն երկարաձիդ ոս-
հոգին աղականող տեսարանը մի տխնուր մեկնաբանություն
է մարդկային կյանքի ունայնության, դավ ու թակարդ, ծու-
ղակ ու զգետնարան: Ուժեղ մարդկանց ձեռքին, ինչպիսին
էր նա՝ Քառուփերվուրը, իր լավ օրերին, օրենքը սուր է ու
վահան, բայց բերանբացի համար նա կարող է դառնալ
թակարդ, իսկ հետապնդողի համար՝ դայլի փոս: Օրենքը
կարելի է թեքել որ կողմն ասես. դա դեպի արգելվածը
տանող սոլանցք է, փոշի, որ կարելի է փշել նրա աշքին,
ով կուզենար օգտվել տեսնելու իր իրավունքից, վարա-
գույր, որ կամայականորեն իշեցվում է ճշմարտության ու
դրա կենսագործման, արդարադատության ու նրա արած
եզրակացության, ոճրի ու պատժի միջև: Օրենսգետները
մեծ մասամբ լուսավորված վարձկաններ են, որոնց առնում
ու ծախոսմ են: Քառուփերվուրը միշտ զվարձանում էր, երբ
լսում էր, թե ինչ ճամարտակությամբ են ասում-դատում

բարոյախոսովթյան ու զգացմունքների մասին, և տեսնում, թե ի՞նչ պատրաստակամովթյամբ ստում են նրանք, գողանում, աղավաղում փաստերը ամեն մի առիթով և ամեն մի նպատակի համար: Խոշոր օրենսգետներն ըստ էության լոկ խոշոր խաբերաներ են, ինչպես օրինակ՝ նա. Նրանք սարդի պես նստում են ստվերում, իրենց խորամանկորեն հյուսած ոստայնի մեջտեղը և սպասում մարդկային պատկեր ունեցող անզգույշ մժեղների: Կյանքը լավագույն դեպքում իսկ մի դաժան, տմարդի, սառն ու անողոք պայքար է, և այդ պայքարի զենքերից մեկը օրենքի տառն է: Այդ ամբողջ կենսաշիռթի ամենաարգահատելի ներկայացուցիչները օրենսգետներն են: Քառիկերվուդն ինքն էլ դիմում էր օրենքին, ինչպես կդիմեր որևէ զենքի, որպեսզի փորձանքից պաշտպանվեր. և իրավաբանների էլ ընտրում էր այնպես, ինչպես կընտրեր մահակ կամ դաշույն ինքնապաշտպանության համար: Դրանցից ոչ մեկի նկատմամբ հարգանք չէր տածում, անգամ Հարպեր Սթեչերի հանդեպ, թեև սա ինչ-որ բանով դուր էր գալիս իրեն: Բոլորն էլ անհրաժեշտ զենք են միայն՝ դաշույն, կեռ, մահակ և ուրիշ ոչինչ: Եթե դրանք գործը վերջացնում էին, վճարում էին ու մոռանում նրանց: Ինչ վերաբերում է դատավորներին, ապա մեծ մասամբ դրանք ձախողակ փաստաբաններ էին, առաջքաշ բարեբախտ պատահականությամբ, մարդիկ, ովքեր հավանորեն շատ բանով վիշում էին իրենց առաջ համարտակող պաշտպաններին, եթե հարկ լիներ զերերը փոխել: Քառիկերվուդը չէր հարգում դատավորներին, որովհետև շատ լավ էր ճանաշում նրանց: Գիտեր, թե որքան հաճախ նրանց մեջ զինում են շողոքորթներ, քաղաքական կարիերիստներ, քաղաքական օրամշակներ, այլոց ձեռքին գործող շարքայիններ, անսկզբունք խրտվիլակներ և ստորահաններ, քաղաքական կառավարիչների ու ֆինանսական մաշնատների ոտքերի առաջ փուլողներ, որոնց օգտագործում են այդ հզորները որքան կարիք ունեն, ինչպես՝ կոշիկ սրբելու քուրշը: Դատավորները տիսմար են, ինչպես, ասենք, մարդկանց մեծ մասը այս զառամած ու անհաստատ աշ-

խարհում։ Օ՛, նրա խորաթափանց հայացքն ընդգրկում էր իր առաջ գտնվող բոլոր մարդկանց և մնում անայլալ՝ Քառուփերվուսդը միակ փրկությունը տեսնում էր իր մտքի արտասովոր հնարագիտության մեջ։ Ոչ ոք չէր կարողանա համոզել նրան, որ առաքինությունն է շարժում այս փոշ աշխարհը։ Նա շատ բան էր իմանում և ճանաշում էր իրեն։

Ավարտելով, վերջապես, բազմաթիվ մանր միջնորդություններ՝ դատավորը հրամայեց հայտարարել Ֆրենկ Ս. Քառուփերվուդի հանդեպ Ֆիլադելֆիա քաղաքի հարուցած հայցի քննությունը, և քարտուղարը ահեղաձայն հայտարարեց դա։ Դենիս Շենոննը՝ շրջանային նոր դատախազը և Սթեցերը հապճեպ վեր կացան։ Սթեցերն ու Քառուփերվուդը, ինչպես նաև Շենոնն ու Սթրոբիկը (վերջինս որպես Պենսիլվանիա նահանգի շահերը ներկայացնող հայցվոր), նստեցին շրջափակված տարածության ներսը գտնվող երկար սեղանի առաջ, պատվարի ու դատավորի ամբիոնի։ միջև Սթեցերը ավելի շուտ ձևականության համար առաջարկեց դատավոր Պեյդերսոնին կարճել դործը, բայց նրա միջնորդությունը մերժվեց։

Անմիջապես կազմվեց երդվալ ատենակալների ցուցակը՝ տասներկու մարդ այն անձերից, ովքեր կանչված էին մի ամիս կատարելու այդ պարտականությունը, և առաջարկվեց կողմերի քննություն։ Ցուցակ կազմելու գործը բավական պարզ էր այդ ատյանում։ Հինական մանդարինի նմանվող քարտուղարը առանձին թերթի վրա գրում էր երդվալ ատենակալության յուրաքանչյուր թեկնածուի անունը տվյալ ամսի համար (ընդհամենք մտտ հիսոմ հոգի էին նրանք), նետում էր այդ տոմսերը պտտվող թմբուկի մեջ, մի քանի անդամ պտտեցնում և քաշով առաջին պատահածը. այդ ժեսը փառաբանելով պատահականությունը՝ որոշում էր, թե ո՞վ է լինելու համար մեկ երդվալ ատենակալը։ Քարտուղարի ձեռքը տասներկու անգամ մտնում էր թմբուկի մեջ ու հանում անունները տասներկու երդվալ ատենակալների, ովքեր, հենց որ հայտարարում էին իրենց ազգանունները, հրավիրվում էին գրավելու իրենց տեղը։

Քառուփերվուդը մեծ հետաքրքրությամբ էր հետևում այդ արարողությանը: Ասենք, Էլ ի՞նչ կարող էր այժմ ավելի հետաքրքրել նրան, եթե ոչ այն մարդիկ, ովքեր դատեալու էին իրեն: Ճիշտ է, ամեն ինչ այնքան արագ էր կատարվում, որ նա չէր կարող ստույգ պատկերացում կազմել նըստանց մասին, թեև կարողացավ նկատել, որ բոլորն էլ պատկանում են բուրժուազիայի միջին խավերին: Նրա աշխարհին ընկավ միայն մի ծերունի, մոտ վաթուոնհինգ տարնեկան, կուացած, մազերի և մորուքի մեծ մասը սպիտակ, հոնքերը թավ ու դեմքը դժգույն. նա Քառուփերվուդին թվացի բնե բարյացակամ, մեծ կենսափորձ ունեցող մարդ, որին նպաստավոր հանգամանքներում և բավական համոզիչ փաստարկներով կարելի է թեքել իր կողմը: Մի ուրիշի, որ ըստ երեւլցին առևտրական էր, կարճահասակ, քիթը նուրբ ու կզակը սուր, Քառուփերվուդը չգիտես ինչու անմիջապես չսիրեց:

— Կարծում եմ, թե պարտադիր չէ, որ այդ տիպը մտնի երդվալների կազմի մեջ,— կամացուկ հարցմեց նա Սթեղերին:

— Իհարկե՝ ոչ, — պատասխանեց Սթեղերը: — Ես կը մերժեմ նրան: Մենք, ինչպես և մեղադրողները, իրավունք ունենք անելու տասնհինգ մերժում, առանց պատճառը հայտնելու:

Երբ վերջապես երդվալները գրավեցին տեղերը, քարտուղարը պաշտպանին ու դատախազին պարզեց մի փոքրիկ տախտակ, որի վրա ամրացված էին թերթեր՝ տասներկու երդվալների անունները այն կարգով, որով ընտրվել էին. վերսի անկյունում՝ առաջինը, երկրորդը, երրորդը, այնուհետև չորրորդը, հինգերորդը, վեցերորդը և այլն: Եվ որովհետև մեղադրանքի ներկայացուցչին է նախ իրավունք տրվում մերժել թեկնածուներին, ապա վեր կացավ Շենոնը և սկսեց երդվալներին հարցնել՝ ի՞նչ մասնագիտության կամ զբաղմունքի տեր են, ի՞նչ են իմանում գործի մասին նախքան դատը և նախօրոք այս կամ այն կողմի օգտին տրամադրված շե՞ն արդյոք:

Սթեղերն ու Շենոնը զանացին ընտրել այնպիսի մարդիկ, ովքեր գոնե մի կերպ հասկանալին ֆինանսական հարցերը, ուստի և այս ոչ բոլորովին սովորական գործը, ըստ որում կանխավ տրամադրված շլինեին (դրանով շահագրգոված էր Սթեղերը) ընդգեմ մի մարդու, որը խելացիորեն փորձում էր պաշտպանվել ֆինանսական փոթորկից, և կամ (դրանով շահագրգոված էր Շենոնը) դժկամ վերաբերվեին պաշտպանության միջոցներին, որոնց կարող էր դիմել մեղադրյալը, քանի որ այդ միջոցները մտածել էին տալիս կաշառակերության, խարդախության և անազնիվ մեքենայությունների մասին։ Ե՛վ Շենոնը, և Սթեղերը շուտով նըգավառեցին, որ երդվյալների մեջ գերակռում են մանր ձընկերը, որոնց այդպիսի դեպքերում զրի երես են հանում քաղաքացին կյանքի օվկիանոսը նետված ուռկանները։ Դրանք գերազանցորեն ձեռնարկների կառավարիչներ էին, ամեն տեսակ գործակալներ, առետրականներ, խմբագիրներ, ինժեներներ, ճարտարապետներ, մուրթավաճառներ, շրջիկ գործակատարներ, լրահավաքներ և աշխատավոր բնակչության այլ ներկայացուցիչներ, որոնց հարուստ կենսափորձը պիտանի էր դարձնում նրանց երդվյալի պարտականությունը կատարելու համար։ Հասարակական մեծ դիրք ունեցող մարդիկ համարյա շկացին նրանց մեջ, այնինչ շատերը օժտված էին մի նշանակալի հատկությամբ, որ կոչվում է առողջ դատողություն։

Այդ արարողության ընթացքում Քառուփերվուղը սառնարյուն կերպով ուսումնասիրում էր երդվյալների դեմքից։ Նրա ուշադրությունը զրավեց մի երիտասարդ ծաղկավաճառ, գունատ, մտածողի լայն դեմքով և սպիտակ, անարյուն ձեռքերով այդ մարդը Քառուփերվուղին թվաց մի էակ, որը չի կարող դիմանալ իր հմայքին, ուստի և Քառուփերվուղը շտապեց փսփսալ Սթեղերի ականջին։ Խորամանկալ աշքերով մի մորթավաճառ՝ հրեա մերժվեց, որովհետեւ սաշարունակ հետեւում էր բորսայի գործերին և երկու հազար դոլար էր կորցրել քաղաքացին երկաթուղու բաժնետոմսերից։ Պարենի մեծաքանակ առևտուր անող մի շաղ վաճառա-

կան՝ մազերը խարտյաշ, դեմքը վարդագույն և աչքերը կապույտ, բթամիտ համառի տպավորություն գործեց Քառի փերկուդի վրա: Սրա թեկնածությունը նույնպես մերժվեց: Երդվյալների մեջ էր նաև պատրաստի հագուստեղենի մի վաճառատան շքեղ հագնված դիրեկտորը, որը շատ էր ուզում խույս տալ երդվյալ ատենակալի պարտականությունից, հայտարարեց (թեև դա ճիշտ չէր), թե չի ընդունում Աստվածաշնչով երդվելը: Դատավոր Պեյդերսոնը խոժողովեց, բայց արձակեց նրան: Այնուհետև հավաքվեց և մի տասը մարդ, որ ծանոթ էին Քառի փերկուդին, ծանոթ էին Սթիներին և ովքեր ընդունեցին, թե կանխակալ կարծիք ունեն, և վերջապես մոլի հանրապետականներ, որոնք զայրացած էին Քառի փերկուդին գործառնություններից, այդ բոլորին էլ թույլ տվին հեռանալ:

Այնուամենայնիվ կեսօրի մոտ կազմվեց երկու կողմերի համար էլ շատ թե քիչ ընդունելի երդվյալների ցուցակ:

Գ Լ Ո Ւ Խ Լ

Ուղիղ ժամը երկուսին շրջանային դատախազ Դենիս Շենոնը սկսեց իր ճառը: Ամենասովորական և նույնիսկ բարեհոգի շեշտով (այդպես էր նրա խոսելակերպը) նա հայտարարեց, թե միստր Ֆրենկ Ա. Քառի փերկուդը, որ այժմ տեղ է գրավել վկաների նստարանին, մեղադրվում է, առաջին՝ հափշտակության, երկրորդ՝ վատնումի, երրորդ՝ վստահորդի սեփականությունը յուրացնելու, և, վերջապես, չորրորդ՝ դարձյալ մի որոշ գումար, ավելի ճիշտ վաթսուն հազար դոլար վատնելու մեջ, որը ստացել է նա հազար ութ հարյուր յոթանասունմեկ թվականի հոկտեմբերի իննին իր անվամբ գրված շեկով: Վերոհիշյալ վաթսուն հազարը հատկացված էր գնելու որոշ քանակությամբ քաղաքային փոխառության պարտատոմներ, որոնք միստր Քառի փերկուդը, որպես գործակալ կամ վստահված անձ, պարտավոր էր գնել՝ ըստ քաղաքի գանձապետի կարգադրության և վեր-

շինիս ու միստր Քառուփերվուդի միջեւ եղած համաձայնության՝ մարման ֆոնդի համար, նպատակ ունենալով գննէ ժամկետային սերտիֆիկատներ։ Այնուամենայնիվ միստր Քառուփերվուդի ստացած շեկը չի օգտագործվել ըստ նշանակման։

— Այժմ, զենտլմեններ, — նույն միահավասար ձայնով շարունակեց Շենոնը, — նախքան միանգամայն ոչ բարդ այդ հարցի քննությանն անցնելը, այն է՝ ստացե՞լ է միստր Քառուփերվուդը, թե չի ստացել վաթսուն հազար դոլլար քաղաքի գանձապետից, համենայն դեպս այդ գումարով արժեթիվներ մարման ֆոնդում շեն գրանցված։ Ես թույլ եմ տալիս ինձ բացատրել ձեզ, թե ինչու մեղադրանք է ներկայացված նրան, առաջին՝ գողության, երկրորդ՝ վատնումի, երրորդ՝ վստահորդի սեփականությունը յուրացնելու և շորրորդ՝ շեկով ստացված գումարը վատնելու մեջ։ Սյապիսով, դուք տեսնում եք, որ խոսելով իրավաբանների մեջով՝ մեղադրանքը ստահութեան և միայն վատնումի համար, և ահա շրջանային դատախազը, որ ներկայացնում է ժողովրդի շահերը, երբեմն վստահ չէ՝ ոչ թե այն բանին, որ մեղադրյալը կատարել է թե չի կատարել հիշյալ երկու հանցագործությունները, այլ այն բանին, ենթակա են դրանք մեղադրանքի մեկ կետին այնշափ, որ երկու հանցագործությունների համար հանցավոր անձը կրի արժանի պատիժը։ Այսպիսի դեպքերում, զենտլմեններ, լնդունված է մեղադրանք ներկայացնել ըստ առանձին կետերի, ինչպես և արել ենք մենք։ Տվյալ գործում այդ շորս կետերը որոշ շափով համընկնում ու հաստատում են իրար, և ձեր պարտականությունն է (երբ արդեն մենք մանրամասնորեն լուսաբանենք այդ կետերը և ձեզ ծանոթացնենք վկաների ցուցմունքներին) որոշել՝ ապացուցված է արդյոք մեղադրանքը ըստ մեկ, երկու, երեք կամ շորս կետերի։ Աս արդեն կախված կլինի ձեր տեսակետից, ավելի ճիշտ

կլինի ասել՝ այն բանից, թե որքա՞ն դուք ապացուցելի են՝ համարեք հանցանշաները կամ վկաների ցուցմունքները։ Գողովթյուն է կոչվում, ինչպես դուք հավանորեն գիտեք, ուրիշի փողի կամ ունեցվածքի յուրացումը, երբ օրինական տերը տեղյակ կամ համաձայն չէ դրան, իսկ վատնում ենք մենք անվանում ունեցվածքի և ամենից առաջ դրամի շարամիտ ու հօգուտ իրեն օգտագործումն այն անձի կողմից, որի հոգացողովթյանը վստահված է։ Վստահորդի սեփականության յուրացումը (այսինքն՝ մեր մեղադրանքի երրորդ կետը) գողովթյան մի հատուկ ձև է՝ վստահորդի ունեցվածքի հափշտակումը վստահված անձի կողմից։ Չորրորդ կետը, այսինքն՝ չեկով ստացված դրամի վատնումը, ճիշտն ասած, մեղադրանքի ձեւակերպման ճշգրտումն է երկրորդ կետի վերաբերյալ և նշանակում է յուրացումը այն փողի, որ տրված է չեկով որոշ նպատակի համար։ Այս չորս մեղադրանքները, շենտլմեններ, ինչպես տեսնում եք, հանգունակ են։ Դրանք համընկնում ու հաստատում են իրար։ Այսպիսով, ժողովուրդը իր ներկայացուցչի՝ շրջանային դատախազի միջոցով հաստատում է, որ մեղադրյալը՝ միստր Քառուփերվուդը, հանցավոր է չորս կետով էլ։ Իսկ հիմա, շենտլմեններ, մենք անցնում ենք կատարված հանցագործության պատմությանը։ ինձ համար անձամբ դրանից հետեւում է, որ մեղադրյալ միստր Քառուփերվուդը մեկն է այն առավելապես նենդ ու հանցապարտ տիպերից, ովքեր երբեք պատահում են ֆինանսական աշխարհում, որը և մենք հույս ունենք ապացուցել ձեզ վկաների ցուցմունքների միջոցով։

Օգովելով այն բանից, որ դատավարության կանոնները թույլ չեն տալիս բնդհատել մեղադրողին գործը շարագրելիս, Ծենոնն սկսեց երկար-բարակ պատմել, թե ինչպես Քառուփերվուդը ծանոթացավ Սթիներին, ինչպես կառողացավ ձեռք բերել նրա վստահությունը, որքան քիչ էր Սթիները այն ժամանակ հասկանում ֆինանսական հարցերից և այլն։ Ի վերջո նա ասաց, թե ինչպես Քառուփերվուդը ստացել էր վաթսուն հազար դոլարի չեկը իբր թէ

առանց քաղաքի գանձապետի իմացության, որը, ինչպես
ինքն է ասում, շեկ տալն իմացավ, երբ արդեն փաստը կա-
տարված էր, մի բան, որ հիմք է տալիս մեղադրելու Քառու-
փերվողին գողության մեջ. շեկին տիրանալուց հետո մե-
ղադրյալը ապօրինաբար յուրացրել է այն սերտիֆիկատ-
ները, որ պարտավոր էր ձեռք բերել մարման ֆոնդի հա-
մար, եթե ընդհանրապես դրանք ձեռք էին բերված: Այս
բոլոր փաստերի հանրագումարը, հայտարարեց Շենոնը,
հիմք է տալիս մեղադրելու միստր Քառուփերվողին. չորս
կետերով նշված հանցագործությունների մեջ:

— Մենք մեր ձեռքի տակ ունենք մեր բոլոր ասածները
հաստատող ուղղակի ու անհերքելի ապացուցներ,— ձայ-
նը բարձրացնելով ավարտեց միստր Շենոնը: Խոսքը շշուկ-
ների կամ ենթադրությունների մասին չէ, այլ փաստերի:
Վկաների անհերքելի ցուցմունքները կօգնեն ձեզ պարզ տես-
նելու, թե ինչպես է արգել այդ ամենը: Եվ եթե ձեր բոլոր
լսածներից հետո դուք այնուամենայնիվ կարծեք, թե այս
մարդի անմեղ է, որ նա չի կատարել այն հանցագործու-
թյունները, որոնց համար մեղադրվում է, ապա ձեր պար-
տականությունն է արդարացնել նրան: Եվ ընդհակառակը,
եթե դուք համոզվեք, որ ճշմարտացի են վկաների ցուցմունք-
ները, ձեր պարտականությունն է՝ ընդունել նրան հանցավոր
և մեղադրական դատավճիռ արձակել նրա մասին: Շնորհա-
կալ եմ ձեզ, շենտլմեններ, ինձ ցուցաբերած ուշադրության
համար:

Երդվյալները խլրտացին, ավելի հարմար նստեցին՝ մի
փոքր դադարի հույս ունենալով: Սակայն հանգստանալու մի-
շոց շունեցան, որովհետև Շենոնը կանչեց Ձորջ Սթիներին,
որը վեր կացավ և հասպճեալ առաջ եկավ, խիստ ճլորած ու
հոգնած: Երբ նա տեղ գրավեց վկայի նստարանի վրա և ձեռ-
քը դրեց Աստվածաշունչ մատյանին՝ երդվելով, որ ասելու
է ճշմարտությունը, հայացքը տագնապահար ման ածեց
դահլիճի վրա:

Սկզբում նրա ձայնը հաղիվ էր լսվում: Ամենից առաջ
նա պատմեց, թե ինչպես ծանոթացավ Քառուփերվութի հետ, որ

տեղի էր ունեցել հազար ութ հարյուր վաթսունվեց թվակառ նին. ճիշտ ամսաթիվը չէր հիշում: Դա այն ժամանակ էր, երբ ինքը նոր էր նշանակվել քաղաքի գանձապետի պաշտոնին, քանի որ առաջին անգամ ընտրվեց հազար ութ հարյուր վաթսունչորս թվականի աշնանը: Այն ժամանակ նա խստ անհանգստանում էր քաղաքային փոխառության դրությամբ, որովհետև դրա պարտատոմսերը շուկայում գնահատվուն էին նշանակվածից ցած, այնինչ քաղաքն իրավունք ուներ ծախել դրանք միայն համահավասար արժեքով: Մեկը հանձնարարել էր դիմել Քառուփերվուդին, կարծեմ Սթրոբիկը, թեև լավ չէր հիշում դա: Քաղաքի գանձապետները այդպիսի ճշգնաժամային պահերին միշտ դիմում էին բորսայական միշնորդներին, և նա՝ Սթիները, վարչել էր այնպես, ինչպես բոլորը: Այնուհետև անխոնց Շենոնի հարցումներից ու հուշումներից խրախուսված՝ Սթիները սկսեց շարադրել Քառուփերվուդի հետ ունեցած առաջին զրուցի բովանդակությունը, որ շատ լավ էր հիշում: Միստր Քառուփերվուդը վստահեցրեց նրան, որ այդ աղետը կարելի է դարձանել: Մշակելով կամ ավելի ճիշտ՝ գործողությունների պլան հղանալով, նա որոշ ժամանակ անց կրկին եկավ և Սթիներին հաղորդեց իր մտահղացումը: Շենոնի հմուտ օգնությամբ Սթիները շարադրեց այդ պլանի էությունը, որ բնավ էլ մարդկային ազնվության լավ բնութագիր չէր, բայց վկայում էր մարդկային մտքի խորամանկությունը և հնարամտությունը.

Երբ արդեն բավական տաղտկալի կերպով պատմեց այն հարաբերությունները, որ հաստատվել էին իր և Քառուփերվուդի միշեւ, Սթիները վերջապես խոսեց այն ժամանակի վերաբերյալ, երբ շատ տարիների ընթացքում ամրապնդված ու երկու կողմերի նյութական վիճակի վրա միանգամայն դրականապես արտացոլված բարեկամական ու գործարարական կապի հետեւանքով Քառուփերվուդը սկսեց ոչ միայն միլիոններ խաղացնել քաղաքի միջոցներից, այլև իր տրամադրության տակ ունենալ, շափազանց ցածր տոկոսով, հինգ հարյուր հազար դոլլար, որը և ներդրեց ճիաքարշի եկամտարեր գծերի մեջ՝ հօգուտ իրենց երկուսի: Սթիները բնավ էլ չէր

զանում կատարյալ հստակություն մտցնել այդ հարցի մեջ. բայց Շենոնն իմանալով, որ հետագայում ստիպված կլինի մեղադրել Սթիներին այդ նույն հանցագործության մեջ և հաշվի առնելով, որ Սթեգերը ուր որ է կմասնակցի խաչաձև հարցաքննության, քաղաքի գանձապետին թույլ շտվեց մշտ-շային խոսքերով գլուխն ազատել: Շենոնը ուզում էր ինչ գնով էլ լինի ներշնչել երդվյալներին, որ Քառուփերվուդը ճարպիկ ու նենգ մարդ է. և լրիվ հասավ դրան: Ինչքան ավելի էր հարցաքննվողը բերում Քառուփերվուդի արտակարգ ճարպկության օրինակներ, մերթ այս, մերթ այն երդվյալը շրջվում և հետաքրքրությամբ զննում էր նրան: Նկատելով դա և աշխատելով ըստ հնարավորին ավելի նպաստավոր տպավորություն գործել՝ Քառուփերվուդը շարունակ նայում էր Սթիներին անխոռվ, խելացի ու ըմբռնող հայացքով:

Վերջապես խոսքը եկավ վաթսոն հազար դոլլարի չեկի որատմավթյանը, որ Ալբերտ Սթայներսը ավել էր Քառուփերվուդին, Հսկաեմբերի իննին, պաշտոնեական օրվա վերջին: Շենոնն այդ չեկը ցույց տվեց Սթիներին որպես իրային առացուցյալ Մինչ այդ տեսե՞լ էր նա չեկը: Այո, տեսել էր: Որտե՞ղ, շրջանային դատախազ Փեթթիի գրասենյակում, Հոկտեմբերի վերջին տասնօրյակին: Առաջի՞ն անգամ էր նա տեսել այդ: Այո: Իսկ մինչ այդ երբեք չէ՞ր լսել դրա մասին: Ո՞չ, լսել էր: Ե՞րբ: Հոկտեմբերի տասին: Սիրալիրություն չի ունենա արդյոք նա պատմելու դատարանին, թե ինչպես և ինչ հանգամանքներում առիթ ունեցավ լսելու դրա մասին: Սթիները խլրուց աթոռի վրա: Այնքան էլ հեշտ չէր այդ բանն անել: Դուզակի պատասխանը առնվազն լավ վկայություն չէր լինի նրա սեփական բարոյական հատկություններին: Այնուամենայնիվ նա մաքրեց կոկորդը և սկսեց նկարագրել իր կյանքի այն կարճ, բայց դառն շրջանը, երբ Քառուփերվուդը ծանր դրության մեջ ընկնելով ու հասնելով սնանկության եզրին՝ եկավ գանձապետություն ու պահանջեց, որ միանվագ երեք հարյուր հազար դոլլար ևս փոխ տա իրեն, Այդ միջոցին Սթեգերի ու Շենոնի միջև ծայր առավ համարյա թե փոխադարձ հայհոյանք, որովհետև Սթեգերն ուզում

էր այնպիսի տպավորություն ստեղծել, որ իբր Սթիները ստում է ամենաանպատկառ ձևով։ Հարմար պահ գտնելով՝ նա բողոք հայտնեց (դրանով իսկ հիմնական թեմայից որոշ շեղում ձեռք բերելով), հենվելով այն բանի վրա, որ Սթիները շարունակ գործ է ածում «կարծում եմ» կամ «ինձ թվում է» արտահայտությունները։

— Ես առարկում եմ,— մի քանի անգամ բացականչեց Սթեղերը։ — Հարց եմ հարուցում, որ վկա Սթիների հայտարարությունը հանվի արձանագրությունից որպես վստահության ոչ արժանի, դատարկ և գործին շվերաբերող։ Վկային իրավունք չի տրված երկար-բարակ խոսելու, թե ինչ է մտածում ինքը, և մեղադրողը շատ լավ գիտե այդ։

— Զե՞րդ ազնվություն,— իր հերթին բողոքեց Շենոնը, — ինձնից կախված ամեն բան անում եմ ես, որպեսզի վկայից ստանամ փաստերի պարզ ու ճշմարտացի շարադրություն և ըստ իս՝ ոչ առանց հաջողության։

— Ես առարկում եմ,— կրկին որոտաց Սթեղերը։ — Զե՞րդ ազնվություն, ես պնդում եմ, որ դատախազը իրավունք չունի երդվյալների վրա ազդել՝ վկայի անկեղծության մասին գովելի կարծիքներ հայտնելով։ Դատախազի կարծիքը վկայի ու նրա անկեղծության մասին գործին չի վերաբերում։ Խնդրում եմ ձերդ ազնվությանը խստորեն նախազգուշացնել դատախազին։

— Միջնորդությունը բավարարված է, — հայտարարեց դատավոր Պեյդերսոնը։ — Մեղադրողին խնդրում եմ գործից չհեռանալ։

Շենոնը շարունակեց հարցաքննությունը։

Սթիների ցուցմունքները շափազանց էական էին, որովհետեւ լուս էին սփռում այն կետի վրա, ինչ Քառուփերվուգը ուզում էր լուսության մատնել, այսինքն՝ ինքը թունդ խոսակցություն էր ունեցել գանձապետի հետ, սա էլ կտրականապես հրաժարվել էր դրամական լրացրցից փոխատվություն անել նրան, Քառուփերվուգը շեկն ստանալու նախօրյակին, հետո էլ նույն օրը խոսել էր Սթիներին իր ֆինանսական աղետալի դրության մասին և նախազգուշացրել, որ եթե

Սթիները շօգնի իրեն երեք հարյուր հազար փոխ տալով, ապա ինքը կկործանվի, իսկ այն ժամանակ երկուսն էլ տնաքանդ կլինեն: Այնուհետև Սթիները հայտարարեց, որ հոկտեմբերի իննի առավոտյան (այսինքն՝ չեկն ստանալու օրը) ինքը գրավոր կարգադրություն էր արել Քառակի բարձրագույն ձեռնպահ մնալ մարման ֆոնդի համար սերտիֆիկատ ձեռք բերելուց: Իսկ Քառակի բարձրագույն արգեն իրենց խոսակցությունից հետո, որ տեղի ունեցավ նույն օրվա վերջը, խարդախ ձևով ստացավ Ալբերտ Սթայերսից վախտում հազար դոլլարի շեկ, առանց իր՝ Սթիների գիտության: Իսկ երբ ինքը Սթայերսին ուղարկեց նրա մոտ ու պահանջեց, որ չեկը վերադարձնի, Քառակի բարձրագույն հրաժարվեց անել այդ, թեև մյուս օրը, ցերեկվա ժամը հինգին հայտարարեց, որ գործերը հանձնում է խնամակալների կառավարչությանը: Իսկ սերտիֆիկատները, որոնք ձեռք բերելու համար էր չեկը վերցված, մինչև վերջն էլ շհանձնվեցին մարման ֆոնդին: Այս բոլոր ցուցմունքները ծայր աստիճան աննպաստ էին Քառակի բարձրագույնին:

Ավելորդ է ասել, որ խաշածե հարցաքննությունը հաճախ ընդհատվում էր «առարկում եմ» կամ «հանել» մերթ Սթեցերի, մերթ Շենոնի կողմից արվող գոշուններով: Լինում էին պահեր, որ դատարանի սրահը բառացիորեն բվկում էր այդ երկու ջենտլմենների հակածառությունից, և «ոնրին ազնվությունը» ստեպ-ստեպ հարկադրված էր լինում մուրճը խփել սեղանին և սպառնալ, որ կտուգանի նրանց դատարանը շհարգելու համար: Դատավոր Պեյդերսոնի այսպիսի վրդովմունքի խոսքերը աշխուժացնում էին երդվալներին, որոնք անսքող հետաքրքրությամբ լսում էին վեճը:

— Ջենտլմեններ, ես կոչ եմ անում ձեզ վերջ տալ ընդդիմախոսություններին. Հակառակ դեպքում ստիպված կլինեմ խոշոր տուպանքի ենթարկել ձեզ: Դուք դատարանում եք և ոչ թե գարեջրատանը: Մի՛ստր Սթեցեր, առաջարկում եմ անմիջապես ներողություն խնդրել ինձնից և ձեր պաշտոնակցից: Մի՛ստր Շենոն, խնդրում եմ ձեզ զուապ մնալ այդ-

քան ադրեսիվ մեթոդներից։ Զեր անթույլատրելի վարքը վկա-
րավորանք է հասցնում դատարանին։

Երկու իրավաբաններն էլ ներողություն խնդրեցին,
ինչպես պարտ է այդպիսի գեղքերում, բայց իսկույն էլ շա-
րունակեցին նախկինը։

— Ի՞նչ ասաց ձեզ Քառուփերվուդը, — հարցրեց Շենոնը
Սթիներին մի այդպիսի բուռն ընդհատումից հետո, — այն
օրը՝ հոկտեմբերի իննին, երբ եկավ ձեզ մոտ ու երեք հար-
յուր հագար դոլլարի լրացուցիչ փոխատվություն պահանջեց։
Կրկնեցեք նրա ասածը որքան կարելի է ճիշտ, ցանկալի է՝
բառ առ բառ։

— Ես առարկում եմ, — գոշեց Սթեչերը։ — Միստր Քառու-
փերվուդի ճշգրիտ բառերը դրոշմված են միստր Սթի-
ների հիշողության մեջ, իսկ նրա հիշողությունը տվյալ դեպ-
քում չի կարող հաշվի առնվել։ Վկան շարունակ պատմում
էր փաստերն ընդհանուր գծերով։

Դատավոր Պեյդերսոնը խոժողով հայացքով քմծիծալ
տվեց։

— Միջնորդությունը մերժվում է, — հայտարարեց նաև

— Պահանջո՞ւմ եմ մտցնել արձանագրության մեջ, —
գոշեց Սթեչերը։

— Որքան հիշում եմ ես, — պատասխանեց Սթիները՝
մատուցերը զղայնորեն բազկաթոռի արմնկակալին տկտկացնե-
լով, — նա ասաց, որ եթե երեք հարյուր հազար դոլլար
շտամ նրան, ինքը կսնանկանա, իսկ ես կդառնամ մուրացիկ
ու կընկնեմ բանտ։

— Առարկո՞ւմ եմ, — սուր ձայնով գոշեց Սթեչերը, տե-
ղից վեր ցատկելով։ — Զե՞րդ ազնվություն, ես առարկում եմ
հենց հարցաքննության մեթոդի գեմ, որը կիրառում է մե-
ղադրանքի ներկայացուցիչը։ Մեղադրողը ապօրինի ու ան-
հախընթաց բան է անում, երբ փորձում է վկայի բնավ էլ
ոչ հուսալի հիշողությունից կորպել այնպիսի ցուցմոնքներ,
որոնք բացարձակապես ո՞չ մի կապ չունեն դատարանի։
Հետաքրքրող փաստերի հետ։ այդ ցուցմունքները ո՞չ կարող
են հաստատել, ո՞չ էլ հերքել, թե իսկապես Քառուփերվուդը

Ենթադրում էր, որ ինքը կսնանկանա կամ ոչ: Միստր Սթի-ները կարող է մեջտեղ բերել այդ խոսակցության կամ մի ուրիշ զբույցի իր վերսիան, որ տեղի է ունեցել այն ժամանակ, իսկ միստր Քառափերվուդը՝ իր վերսիան: Փաստն այն է, որ նրանց վերսիաները բոլորովին տարբեր են: Չեմ հասկանում, թե, ճիշտն ասած, ինչի՞ է ձգտում միստր Շենոնը այսքան տարօրինակ մեթոդներով, թերևս միայն երդվյալների վրա ազդելու համար ու ներշնչելու նրանց վստահություն ստածել այն հայտարարություններին, որ հաճո է մեղադրողին անել և որոնք նա, որքան էլ ցանկանա, չի կարող փաստերով հաստատել: Ես կարծում եմ, ձե՛րդ ազնվություն, պարտ է ձեզ նախագորչացնել վկային, որ նա պետք է ցույց տա միայն այն, ինչ ճիշտ է հիշում, և ոչ թե այն, ինչ «կարծես հիշում է»: Ես անձամք կարծում եմ, որ այս վերջին հիմնգ լուակի ընթացքոա վկայի տված ցուցմունքները պետք է ջնջել արձանադրությունից:

— Մերժում եմ միշտորդությունը, — սառնեարյուն պատասխանեց դատավիր Պետրոսինը, և Սթեշերը, որ արտասանել էր այս ճառը դիսավորապես նրա համար, որպեսպի թուլացներ Սթինելի ցոսցմունքների՝ երդվյալների վրա գործած տպավորությունը, ծանրորեն նստեց:

Շենոնը դարձյալ դիմեց Սթիներին.

— Այժմ ես խնդրում եմ ձեզ, միստր Սթիներ, պատմե՛ դատարանին, որքան կարելի է ավելի ճիշտ, էլ ի՞նչ էր ասուն ձեզ այն ժամանակ միստր Քառափերվուդը: Հազիվ թե նա սահմանափակվեր միայն այն դիտողությամբ, թե դուք կրայքայինք ու կնեավեր բանտ: Մի՛թե լսա այդմ ուրիշ բան շատաց:

— Որքան հիշում եմ, — պատասխանեց Սթիները, — ասաց նաեւ, որ քաղաքական բանսարկուների ոհմակը փորձում է ահաբեկել ինձ, որ եթե ես երեք հարցուր հազար դոլար չտամ նրան, երկուսս էլ տնաքանդ կլինենք, և որ մեկ է պատասխան ես տալիս մի գառան, թե ոչխարի համար:

— Բհա՛, — ճշաց Շենոնը: — Այդպես էլ ասա՞ց:

— Այս, սը՞ր, այդպիս էլ ասաց, — Հաստատեց Սթիները:

— Բայց ինչպե՞ս արտահայտվեց նա: Չե՞ք կարող ճիշտ հիշել նրա բառերը, — ուրախացավ Շենոնը և ձեռքը պարզեց դեպի Սթիները, կարծես հորդորելով նրան ավելի որոշակի հիշելու նրա ու Քառուիերվուդի միջև տեղի ունեցած խոսակցությունը:

— Որքան հիշում եմ՝ հենց այդպիս էլ ասաց նա, — խուսափողաբար պատասխանեց Սթիները: — Դառ գողանակու համար պատասխանատու են նույնքան, որքան ոչխար գողանալու համար:

— Շատ ճիշտ է, — բացականչեց Շենոնը և թափով մեջքը շրջեց դեպի երդիլալները՝ Քառուիերվուդին մի հայացք նետելու համար: — Այդպիս էլ ենթադրում էի:

— Ցածրակ՝ կ խորամանկություն, ձե՛րդ ազնվություն, — գոռաց Սթեղերը, տեղից վեր ցատկելով: — Այս ամենն արքվում է պարոն երդյալների վրա ազդելու նպատակով: Այս ամենը ձեռնածությո՞ւն է: Ես կիսնդրեի ձեզնից նախազգուշացնել մեղադրության ներկայացուցչին, խնդրել, որ հենցի փաստերի վրա, եթե այդպիսիք ունի, և հրաժարվի այս դեռասանական ծերծեքումներից:

Դահլիճում շատերը ժպտացին: Նկատելով այդ՝ դատապահութերս խիստ խոժողովեց:

— Առաջարկությո՞ւն եք անում դուք, մի՛ստը Սթեղեր, — հարցրեց նա:

— Այո, իհարկե, ձե՛րդ ազնվություն, — հաստատեց անհանգիստ պաշտպանը:

— Միջնորդությունը մերժում եմ: Թե՛ մեղադրողը, թե՛ պաշտպանը ազատ են իրենց խոսքն ասելիս:

Սթեղեն էլ տրամադիր էր ժպտալու, բայց չէր համարձակվում:

Քառուիերվուդը վախենալով հանդերձ, որ Սթիների ցուցամունքները արդեն շատ աննպաստ լույսով ցույց տվին իրեն, այնուամենայնիվ կարեկցանքով նայեց նրան: Ինչպիսի՞ անկարագիր մարդ, ինչպիսի՞ թուլակամություն: Ահա թե ո՞ւր հասցրնց դրա երկշուսությունը իրենց երկուսին էլ:

Երբ Շենոնը վկացից կորպեց Քառվերվուսդի համար անմիտիթարական այս տեղեկությունները ու ավարտեց հարցաքննությունը, Սթիների օձիքը բռնեց Սթեղերը, բայց կարողացավ գանձապետից կորպել ավելի քիչ, քան հույս ուներ: Սթիները գուտ ճշմարտությունն էր ասում, իսկ ճշմարտության գործած տպավորությունը դժվար է թուլացնել որևէ ճարպիկ խաղով, թեև երբեմն հաջողվում է: Սթեղերը մանրակրկիտ կերպով քննեց Սթիների ու Քառվերվուսդի հարաբերությունների «բոլոր մանրամամները» զանալով վերչինիս ցուցադրել որպես անշահախնդիր միջնորդի և ոչ թե խորամանկ ու հանցագործ ավանտյուրա նախաձեռնողի: Նուաստանձնած խնդիրը հեշտ չէր: Այնուամենայնիվ Սթեղերը կարողացավ քիչ թե շատ նպաստավոր տպավորություն գործել: Ու չնայած դրան՝ երդվալները թերահավատությամբ էին լսում նրան: Գուցե և, մտածում էին նրանք, արդարացի չէ պատժել նրան այն բանի համար, որ նա այդպիսի ագահությամբ էր կառչել տրատ հարստանալու համար իրեն ներկայացած ասիմին: Իսկայ և նիշտ է, որ չի կարելի անմեղությամբ զինսաավորել մարդկային այդքան բացահայտ ընշաքալցությունը: Վերջապես երկուսն էլ՝ և՝ դատախազը, և՝ պաշտպանը, միառժամ հանգիստ թողին Սթիներին, և որպես վկա կանչվեց Ալբերտ Սթայերսը:

Սթայերսը մնացել էր նույնը՝ նիշար, արագաշարժ և լավ տպավորություն գործող մարդը, ինչպիսին էր իր պաշտոնեական կարիերայի բարգավաճ օրերին. Թերես փոքր-ինչ գունատ էր թվում, ուրիշ ոչինչ: Իր փոքր կարողությունը նա փրկել էր շնորհիլ Քառվերվուսդի, որը խորհուրդ էր տվել նրան հայտնելու «Քաղաքացին ինքնավարությանն օժանդակող ընկերության», թե իր երաշխավորները մտադիր են յուրացնել իր գյուավադրամը, մինչդեռ ըստ օրենքի դա պետք է անցնի քաղաքին, եթե վերջինս ունի հիմնավորված պահանջներ, իսկ Սթայերսի գեպքում այդպիսիք շկային: Մըշտապես աշարուց ընկերությունը այս առթիվ լույս էր ընծայել իր բազմաթիվ «հաղորդագրություններից» մեկը: և Ալբերտը հաճությամբ էր նկատել, թե ինչպես Սթրոբիկն ու

մյուսները անմիջապես ետ էին կանդնել իշենց ասածից։ Սթայերսը բնականաբար մի տեսակ երախտապարտ էր Քառուհերվութին, թեև մի անգամ իզուր էր օգնություն պաղատել նրանից։ Այժմ նա շատ էր ուզում օգտակար լինել նրան, բայց որպես ի բնե ճշմարտասեր մարդ, իր ցուցմունքների մեջ չկարողացավ ասել այլ բան, բացի փաստերից, որոնք մասամբ հօգուտ Քառափերվուդի էին, մասամբ նրա դեմ։

Սթայերսը ցուցմունք տվեց, թե Քառափերվուդը նույն օրը հայտնեց իրեն, որ սերտիֆիկատներ է ձեռք բերել, պահանջեց գրանց համար հասնող փողը և ավելացրեց, որ Սթիները բոլորովին զուր է այդպես ահարեկվել, ինչպես նաև այն, որ իրեն՝ Սթայերսին ո՛չ մի վտանգ չի սպառնում։ Այնուհետև Սթայերսը հաստատեց, որ ճիշտ են գրառումները քաղաքային գանձարանի իրեն ներկայացված հաշվապահական մատյաններում, ինչպես նաև համապատասխան գրառումները Քառափերվուդի մատյաններում։ Նրա այն ցուցմունքը, թե Սթիներն ապշեց, երբ իմացավ, որ գրասենյակի կառավարիչը չեկ է տվել, Քառափերվուդի դեմ էր։ Սակայն վերջինս հույս ուներ, որ կկարողանա իր ցուցմունքներով հարթել այս հաղորդման տպավորությունը։

Մինչ այդ պահը և՛ Սթեղերը, և՛ Քառափերվուդը կարծում էին, որ ամեն ինչ շատ թե քիչ նպաստավոր կդասավորվի իրենց համար և բնակ զարմանալի չի լինի, եթե իրենք շահեն դատը։

Գ Լ Ո Ւ Խ ԽLI

Քննությունը շարունակվում էր։ Իրար ետեկից հանդիս էին գալիս մեղադրության վկաները, մինչեւ որ, վերջապես Շենոնը համոզվեց, թե բավականաշափ մերկացվեց Քառափերվուդը, ուստի և հայտարարեց իր միսիան ժամանակավորապես ավարտված։ Այնժամ տեղից վեր կացավ Սթեղերը և սկսեց հականառել դատավորին, պահանջելով գործը

կարձել,՝ որովհետև շկան հանցագործության բաղկացությունը հաստատող այսինչ ու այնինչ հանցանշանները: Սակայն Պեյդեսոնը համառորեն իրենն էր պնդում: Նա շատ լավ գիտեր, թե ինչ նշանակություն են տալիս այդ գործին Ֆիզադելֆիայի քաղաքական շրջանները:

— Ես կարծում եմ, մի'ստր Սթեղեր, որ դա քննության ենթակա չէ, — հոգնած ձայնով ասաց նա, պաշտպանի երկար ճառախոսությունը լսելուց հետո: — Զաղաքային վարչության տրադիցիաները ծանոթ են ինձ, և այստեղ ներկայացված մեղադրանքը ո՛չ մի կապ չունի գրանց հետ: Հիմա ես շեմ կարող խորանալ այդ մանրամասնությունների մեջ: Ձեզ իրավունք է տրվում միջնորդություն հարուցել գործի քննության վերջում: Միջնորդությունը մերժված է:

Շրջանային դատախազ Շենոնը, որ լսում էր խոր ուշադրությամբ, նստեց իր տեղը: Համոզվելով, որ ոչ մի հնարամիտ փաստարկներով հնարավոր չէ դատավորին խաբել, Սթեղերը մոտեցավ Քառուկելուուրին, որը ժայռաց միայն նրա անհաջողության համար:

— Այնպիս է երևում, որ մեր ամբողջ հույսը ոլիտք դնենք երդվագալների վրա, — ասաց Սթեղերը:

— Չէի կասկածում դրան, — պատասխանեց Քառուկերվուրը:

Այն ժամանակ Սթեղերը իր խոսքն ուղղեց երդվալներին. համառոտակի շարադրելով իր տեսակետը այդ գործի վերաբերյալ, նա անցավ վկաների ցուցմունքներից եզրակացություն հանելու հարցին:

— Ճիշտն ասած, զենումիններ, առանձնակի տարբերություն չի կարող լինել մեղադրության վկաների և պաշտպանության վկաների ցուցմունքների միջև: Մենք շենք պատրաստվում վիճարկել ո՞չ այն, որ միստր Քառուկերվուրը միստր Սթիներից ստացել է վաթսուն հազար դոլլարի չեկ, ո՞չ էլ այն, որ նա տվյալ գումարի շափով քաղաքային փոխառության սերտիֆիկատներ չի հանձնել մարման ֆոնդին (որ, ի դեպ, նա օրինականորեն ստացել է որպես միջնոր-

դավարձ), թեև, ինչպես հավաստում է մեղադրողը, պարտավոր էր անել: Բայց մենք էլ մեր կողմից հավաստում ենք և կարող ենք ապացուցել սեռվ սպիտակի վրա, որ իբրև քաղաքային գանձարանի գործակալ, որը ավելի քան շորս տարի գործարարական հարաբերություններ է ունեցել քաղաքային ինքնավարության հետ, նա, ըստ գանձապետի հետ ունեցած պայմանավորվածության, իրավունք ուներ կատարել առևն տեսակ հաշիվներ, ինչպես նաև սերտիֆիկատները մարման ֆոնդին հանձնել հաջորդ ամսվա մեկին, այսինքն՝ այս կամ այն գործառնությունից հետո՝ մյուս ամսվա մեկին: Ի հաստատումն մեր ասածների՝ մենք կարող ենք տաչ մի քանի առևտրականների ու բանկիրների ամունները, ովքեր անցյալում գործեր են արել քաղաքային գանձապետության հետ ճիշտ այդպիսի պայմանավորվածության հիման վրա: Մեղադրողն ուզում է ներշնչել ձեզ, նախ՝ որ իբր միստր Քառակերպուդը այդ շեկն ստանալիս արդեն գիտեր իր մոռտարուտ սնանկությունը. երկրորդ՝ իբր թե նա, հակառակ իր հավաստման, բնավ էլ սերտիֆիկատ չի գնել մարման ֆոնդին հանձնելու համար, և վերջապես՝ իբր իմանալով, որ շուտով սնանկանալու է և հնարավոր չէ փոխառության սերտիֆիկատները հանձնել ըստ պատկանելույն, այնուամենայն նիվ հանգիստ գնացել է միստր Սթիների գրասենյակի կառուարիշ միստր Ալբերտ Սթայերսի մոտ ու հայտարարել, թե քաղաքի համար ձեւք է բերել այսքան սերտիֆիկատ և խաբեռությամբ շեկ է ստացել:

Ես մտադիր շեմ, շենտլմեններ, ավելորդ բանավեճ սկսել այս հարցի մասին. վկաների ցուցմունքները հիմա բավարար հստակությամբ կլուսաբանեն փաստերը: Մենք խոսք կտանք բազմաթիվ վկաների և շատ ենք խնդրում ձեզ ուշադիր լսել նրանց: Խոնարհաբար խնդրում եմ ձեզ նաև հաշվի առնել հետեւյալը. ո՛չ մի վկայից, եթե շհաշվենք պարուն Զորջ Սթիներին, մենք անդամ անուղղակի ակնարություն չենք առաջին շրենքինք առ այն, որ միստր Քառակերպուդը քաղաքի գանձապետին այցելելու պահին գիտեր իրեն սպառնացող սնանկությունը կամ իբր բնավ էլ չի գնել շարաբասա-

տիկ սերտիֆիկատները, ինչպես նաև այն, որ իբր իրավունք չուներ պահելու դրանք իր մոտ, որպեսդի մարման ֆոնդին հանձներ հաջորդ ամսվա մեկին, այսինքն՝ այն ժամկետին, երբ սովորաբար կատարվում էր նրա գործարքների հաշվեկշիռը քաղաքացին գանձարանի հետ։ Քաղաքի նախկին գանձապետ միստր Սթիները կարող է վերջապես հավաստել ինչ ուզենաւ Միստր Քառիկերվուդը հավաստելու է այլ բան։ Դուք, ջենտլմեններ, պետք է եղբակացնեք, թե նրանցից ո՞րն ավելի վստահություն է ներշնչում։ քաղաքի նախկին գանձապետ Ջորջ Սթիները, որ մի ժամանակ գործարարական ընկերակից էր իմ պաշտպանյալի հետ և այժմ զենք է բարձրացնում մի մարդու վրա, որի անխոնջ ու բազմամյա աշխատանքը հարստացրել է նրան, լոկ այն պատճառով, որ Ջիկագոյի հրդեհը խուճապ ու ֆինանսական անկում առաջացրեց բորսայում։ Թե՛ ականավոր բանկիր ու ֆինանսիստ Ֆրենկ Քառսփերվուդը, որ իրենից կախված ամեն ինչ արեց՝ սեփական ուժելով փոխորդին դիմապրելու համար, բացարձակ հշտովթյամբ կատարում էր քաղաքի հետ ունեցած իր համաձայնությունը և մինչև վերջին լուսեն ամեն ջանք թափում էր, որպեսզի հաղթահարեր հրդեհի ու խուճապի պատճառով նրա գիսին թափված դրամական դժվարությունները Տակաւին երեկ միստր Քառիկերվուդը առաջարկեց քաղաքին հատուցել իր ամբողջ պարտքը (թեև փաստացի նամիակ պարտապանը չէ) և ամենաշուտ ժամկետում (եթե միայն թույլ տան իրեն շփակել իր գրասենյակի դուռը) և վերադարձնել մինչև վերջին դոլլարը՝ ներառյալ և այն հինգ հարյուր հաղարբ, որի մասին խոսք եղավ այստեղ, և այդպիսով ապացուցել ոչ թե խոսքով, այլ գործով, որ ոչ ոք որևէ հիմք չունի ու չի կարող ունենալ կասկածելու, որ նա անազնիվ մտադրություններ ուներ։ Ինչպես հավանութեն կուտամ եք դուք, ջենտլմեններ, քաղաքը զբարեհաճեց լնդունել նրա առաջարկը։ Հետո ես համարձակություն կումենա՞ բացատրելու, թե ինչն էր պատճառը։ Իսկ առայժմ շարունակենք վկաների հարցաքննությունը։ Պաշտպանովթյան անունից ես ձեղ խնդրում եմ ուշադիր լսեք նրանց ցուցմունքնե-

ըր: Խորամուխս եղեք միստր Դեկսոնի ասելիքին, երբ նա հանդես գա այստեղ որպես վկա: Ոչ սակավ թծախնդրությամբ կշռադատեցեք միստր Քառսիերվուդի և մյուսների ցուցմունքները: Այն ժամանակ ձեզ համար դժվար չի լինի սեփական կարծիք կազմել այս գործի մասին և որոշել, թե թափականաշաբաթի հիմք կա՞ արդյոք այս դատավարության համար: Ես անձամբ այդպիսին շեմ տեսնում: Թույլ տվեք երախտագիտություն հայտնել ձեզ, զենալմեննե՛ր, այն ուշադրության համար, որով դուք լսեցիք ինձ:

Այնուհետև Սթեցերը կանչեց Արթուր Ռիվերսին, որը պետք է վկայեր, թե բորսայի խուճապի ժամանակ ինքը, որպես Քառսիերվուդի հատուկ գործակալ, մեծ պարտիաներով քաղաքացին փոխառության պարտատոմսեր էր գնել նպատակ ունենալով պահել շուկան: Նրանից հետո Քառսիերվուդի եղբայրները՝ էդուարդն ու Ջովեֆը, ցուցմունք տվին, որ Ռիվերսը հրահանգել էր իրենց գնել ու ծախել հիշյալ պարտատոմսերը; բայց գլխավորապես ծախել:

Հաջորդ վկան միստր Դեկսոնն էր՝ Զիրարդ աղքային բանկի վարչության նախագահը, մի խոշոր տղամարդ, ոչ այնքան գեր, որքան թիկնեղ ու ծանրամարմին: Նրա կուրծքն ու ուսերը զորեղ էին, մազերը բաց խարտյաշ, զլուխը խոշոր, խելացի ու ողջամիտ մարդու լայն, ուղիղ ճակատով: Հաստ ու մի քիչ ճմած քիթը նրա դեմքին տալիս էր ուժի արտահայտություն: Չրթունքները բարակ էին, պիրկ սեղմված և տւղիդ: Միստր Դեկսոնի սառն, կապույտ աշքերի մեջ երթեմն նշուզում էին սկեպտիկական հումորի կայծեր. ընդհանուրապես նա բարյացակամ, աշխույժ, խաղաղասեր մարդ էր, թեև նրա արտաքինը հակառակն էր վկայում: Նրա առաջին իսկ խոսքերից պարզ դարձավ, որ նա վարժված է հաշվի նստել ֆինանսական կյանքի անվիճելի փաստերի հետ և իր բնավորության կերտվածքով իսկ հակվում էր դեպի Քառսիերվուդը, թեև սա, որպես անձնավորություն, չէր հիացնում իրեն: Սեփական արժանապատվության գիտակցությամբ լի հանդարտ շարժումներից երևում էր, որ նա դատավարական այդ բոլոր ձեւականությունները համարում է մի անհեթե՛,

ավելորդ, իսկական ֆինանսիստի արժանապատվությունը կապող բան, կարճ ասած, տաղտկալի դատարկաբանություն։ Երդիքելու համար իրեն Աստվածաշունչ մատուցող քնկոտ կատարածու Սփարկհիվերին նա նույնքան քիչ ուշագրություն դարձրեց, ինչպես եթե նա փայտի կոճղ լիներ։ Նրա պատկերացումով՝ երդումը զուտ ձևականություն էր։ Երբեմն ձեռնտու է ճշմարտությունն ասել, երբեմն՝ ոչ։ Իր ցուցմունքը տալիս էր նա անքոնազբոսիկ ու պարզ կերպով։

Տասք տարուց քիչ պակաս է, ինչ նա ճանաչում է միստր Ֆրենկ Ալզերնոն Քառուփերվուդին։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում ինքը գործեր է արել նրա կամ նրա միջոցով ուրիշների հետ։ Միստր Քառուփերվուդի և միստր Սթիների հարաբերությունների մասին ինքը ոչինչ չի իմացել, վերջինիս հետ նույնիսկ ծանոթ չի եղել։ Իսկ ինչ վերաբերում է վաթսուն հազար դոլարի չեկին, այս, ինքը տեսել է։ Այդ չեկը տրվել է իր բանկին Հոկտեմբերի տասին, այլ արժեթղթերի հետ, ի տպահովում այն վարկի, որը գերազանցել էր «Քառուփերվուդ և Բնկ.» բանկիրային գրասենյակը։ Այդ գումարը գրանցված է «Քառուփերվուդ և Ընկ.» բանկիրային գրասենյակի վարկի հաշվին։ Բանկն էլ իրացրել է դա հաշվարկային պալատի միջոցով։ Դրանից հետո միստր Քառուփերվուդի վարկերը գերազանցող ո՛չ մի գումար բանկից չի վերցվել, այնպես որ վերջինիս հաշվը հավասարակշռված է։

Մինչդեռ միստր Քառուփերվուդը կարող էր մաս-մաս զգալի գումարներ վերցնել բանկից, և ոչ չէր կասկածի, որ նա դատապարանի գործողություն է կատարում։ Ինքը Դեյտոնը, գաղափար չուներ, որ Քառուփերվուդին սնանկություն է սպասնում ու երբեք էլ չէր ենթադրի, թե դա կարող է այդքան հանկարծակի ոլտահել։ Քառուփերվուդը հաճախ իր վարկից ավելի էր վերցնում ջիրարդ ազգային բանկից, իսկ դա միշտ էլ համարվում էր ամենասովորական երևոյթ։ Վարկի այդ գերազանցումը Քառուփերվուդին հնարավորություն էր տալիս ակտիվութեն օգտագործել իր միջոցները, իսկ ֆինանսական աշխարհում դա կոչվում է գործը հմտորեն վարել։ Նա միշտ ապահովում էր իր գերստացումները և սովո-

բարբար բանկ էր ուղարկում արժեթղթերի ու չեկերի ահաւ գին կապցներ, որ հետո տեսակավորում էր հաշվապահությունը: Բանկում ամենամեծ և ամենաակտիվ հաշիվը Քառակերպության էր,— ավելացրեց միստր Դեկոնը:— Քառակերպությի մնանկության պահին Զիրարդ ազգային բանկում կարքաղաքային փոխառության ավելի քան իննուն հազար դոլարի պարտատում, որ ուղարկել էր այնտեղ Քառակերպությունից ապահովում:

Խաչաձեւ հարցաքննության ժամանակ Շենոնը ջանալով պատշաճ տպավորություն գործել երդվալների վրա՝ փորձ փերում էր, թե միստր Դեկոնը որևէ ծածուկ պատճառներ չունի՞ արդյոք Քառակերպությի նկատմամբ բարյացակամ լինելու համար: Բայց այդ փորձից բան դուրս չեկավ: Նրանից հետո խոսք առավ Սթեղերը և իրենից կախված ամեն բան արեց, որպեսզի Քառակերպությի համար՝ միստր Դեկոնի տված նպաստավոր ցուցմունքները տպավորվեն երդվալների ուղեղներում. այդ նպատակով էլ նա բանկի նախագահին նորից ու նորից կրկնել տվեց իր ասածը: Շենոնը, անշուշտ բողոքում էր, բայց իզուր: Սթեղերը կարողացավ իր ուղածն անել:

Վերջապես, պաշտպանը խոսքը տվեց Քառակերպության հենց որ այս անոնքը արտաքերվեց, ամենքն էլ աշալը ջացան:

Քառակերպություն առուց ու արագ քայլվածքով առաջ եկավ: Նա հանգիտում էր ու ինքնավստահ: այժմ վճռվում էր նրա ամբողջ կյանքը, ար նա այնքան բարձր էր գնահատում: Ո՛չ իրավաբանները, ո՛չ երդվալները, ո՛չ այդ խըրտավիլակ դատավորները, ո՛չ էլ բախտի դավերը չէին ցնցել նրան, չէին հեղացրել և չէին ջրատել նրա ուժերը: Հիմա նա հանկարծ հասկացավ, թե ինչ են ինքնին այդ երդվալները: Նա ուզում էր օգնել իր պաշտպանին՝ շփոթեցնելու Շենոնին, խառնելու նրա բոլոր քարտերը, տակայն բանականությունը հրամայում էր գործի դնել միայն անհերքելի փաստերը կամ այնպիսիք, որ կարելի է ցուցադրել որպես այդպիսիք: Նա հավատացած էր, որ իբրև ֆինանսիստ՝ ճիշտ

վարվեց: Կյանքը պատերազմ է, մանավանդ ֆինանսիստի կյանքը. ուզմավարությունը նրա օրենքն է, անկյունաքարն ու անհրաժեշտությունը: Ինչո՞ւ ուրեմն անհանգտանեալ այդ բանը հասկանալու անընդունակ ողորմելի փոքրոգիների պատճառով: Սթեջերին օգնելու ու երդվյալների վրա ազդեցու համար նա պատմեց ամբողջ պատմությունը իր համար առավելապես խելացի ու նպաստավոր լույսով: Առաջին՝ նա գնացել էր Սթիների մոտ ոչ իր նախաձեռնությամբ, այլ միայն արձագանքելով նրա հրավերին: Երկրորդ՝ նա ոչ մի բան չի հարկադրել Սթիներին. միայն պատկերել է նրան ու նրա բարեկամներին ֆինանսական մի քանի հնարավորություններ, սրանք էլ ուրախությամբ օգտվել են դրանցից: (Սյդ Ժամանակ Շենոնը դեռ չէր կարողացել իմանալ, թե որքան խորամանկորեն էին կազմակերպված Քառուփերվուդի ձիաքարշ երկաթուղիների ընկերությունները: Իսկ դրա աչքակապությունն այն էր, որ Քառուփերվուդը շաբաթակ իրեն էր վերապահում իր բաժնեկիցներին «թափ տալու» հնարավորությունը, այն էլ այնպես, որ սրանք ծպտում հանելու ժամանակ շռանենան: Դրա համար էլ Քառուփերվուդը այժմ համարձակություն ուներ երկար-բարակ խոսել այն «փայլուն հնարավորությունների մասին, որ ընձեռնել էր ինքը Սթիներին: Շենոնը չէր կարող մերկացնել նրան, որովհետեւ, ինչպես և Սթեջերը, ֆինանսիստ չէր): Մնում էր միայն, որ նրանք հավատան Քառուփերվուդի խոսքին, թեև Շենոնը տրամադրի էլ չէր անելու այդ:

— Ինչպես կարող եմ ես պատասխանատվության ենթարկվել գանձապետության մեջ արմատացած սովորությունների համար, — հայտարարեց Քառուփերվուդը: — Վերջիվերջո ես միայն բանկիր եմ ու միշնորդ:

Երդվյալները նայելով նրան՝ հավատում էին ամեն ինչին, միայն՝ թե ոչ վաթսոսն հաղար դոլարի շեկին, թեև այս կետի վերաբերյալ ևս Քառուփերվուդը բավական հշմարտապատում բացատրություն տվեց: Այն օրերին, երբ ինքը դեռ լինում էր Սթիների մոտ, նրա գլխով իսկ չէր անցնում սնանկանալու միտքը: Ճիշտ է, ինքը խնդրել է Սթիներին

դրամ փոխ տալ իրեն, սակայն նկատի ունենալով իրենց գործնրի ծավալը, ոչ այնքան մեծ գումար՝ ընդամենը հարցուր հիսով հազար դոլլար: Եթե Սթիները կամենար, կկարողանար հաստատել, որ ինքը՝ Քառուփերվուդը, այն ժամանակ ոչ մի տագնապ երևան չէր բերում: Գանձապետ նրա համար լոկ մեկն էր այն աղբյուրներից, որտեղից նա միջոցներ էր ձեռք բերում: Այդ ժամանակ ինքը ուրիշ շատ աղբյուրներ էլ ուներ: Ինքը երբեք այնպիսի ուժեղ արտահայտություններ չէր գործածել, ինչպես Սթիները ցուցմունք տվեց, և բնավ կլ այնպես չէր պնդել այդ փոխատվության վրա, թեև Սթիներին ասել էր, թե սա սխալ է կատարում, ենթարկվելով խուճապին ու մերժելով հետագայում վարկավորել իրեն: Միջոցներ ստանալու այդ աղբյուրը ամենամատչելին ու հարմարն էր իր համար, բայց ոչ միակը: Ինքը բոլոր հիմքերն ուներ ենթադրելու, որ խոշոր ֆինանսիստների շարքում ունեցած իր բարեկամները անհրաժեշտության դեպքում կավելացնեն իր վարկը, ինքը հնարավորություն կունենա կարգի բերելու իր գործերը և կշարունակի աշխատել, իսկ այդ միջոցին կհանդարտվի փոթորիկը: Նա Սթիներին ասել էր, որ խուճապի առաջին օրը բորսայում գնել էր քաղաքային փոխառության պարտառմաներ զգալի քանակությամբ՝ նպատակ ունենալով պահել դրանց ընթացիկ արժեքը, իսկ իրեն քաղաքային գանձարանից հասնում է վաթսուն հաղար դոլլար: Սթիները չէր առարկում: Բացառված չէ, անշուշտ, որ գանձապետի տրամադրությունը փշացած լիներ և լավ լլսեր իր ասածները: Դրանից հետո, ի մեծագույն զարմանք Քառուփերվուդի, բանկիրական խոշոր տների վրա ձնշում էր գործադրվել (ինչպես և ինչ պատճառներով՝ ինքը չի խմանում), դա էլ մղել էր նրանց խիստ դաժան վարվել իր հետ: Այդ ձնշումը, որ ավելի սաստկացավ հաջորդ օրը, ստիպեց իրեն փակելու իր ձեռնարկության գույքը, թեև ինքը մինչև վերջին բոպեն չէր հավատում, թե դա հնարավոր է: Իսկ վաթսուն հազար դոլլարի չեկը իր ձեռքն էր ընկել հանգամանքների պատահական դասավորմամբ: Իրեն դրամ էր պետք, ինքը չի հերքում: այդ գումարը հասնում

Եր իրեն օրինական հիմունքով, իսկ իր բոլոր ծառայողներն այդ օրը խիստ զբաղված էին: Ինքը խնդրեց չեկ գրեն իր անփամբ և վերցրեց հետը ի սեր ժամանակի խնայողության: Սթիճները շատ լավ գիտեր, որ եթե հրաժարվեր այդ չեկն իրեն տալուց, ապա Քառութերվուղը կտանար դատական կարգով: Իսկ ինչ վերաբերում է իր գնած սերտիֆիկատները՝ մարման ֆոնդին հանձնելուն, ապա դա լոկ տեխնիկական հանգամանք է, և ինքը երբեք գործերի տեխնիկական կողմին հասու չի եղել: Այդ գործերը վարում էր իր հաշվապահը՝ միստր Սթեփիլին: Ինքը՝ Քառութերվուղը անգամ չէր իմանում, որ սերտիֆիկատները չեն հանձնված ուր պետք չ: (Բացահայտ սուստ. ինչ էլ շիմանար, այդ մեկը շատ լավ գիտեր): Զուտ պատահականությամբ էր այդ չեկը տրվել Ջիրարդ ազգային բանկին: Եթե հանգամանքներն այլ կերպ դասավորվեին, դա կարող էր նույնպիսի հաջողությամբ որևէ այլ բաններ տրվել:

Ահա այս տողվ էլ Քառութերվուղը շարունակեց իր ցուցմունքները. Սթեգերի ու Շենտոնի լուրի խորամանկ հարցերին նա պատասխանում էր այնպիսի առինքնող տնկելցությամբ, այնքան լուրջ, գործարար և տշագիր վերաբերվելով դատական արարողությանը, որ կարելի էր երդվել, թե այդ մարդը այսպես կոչված առևտրական պատվի մարմնացումն է: Ճիշտն ամած, նա խսկապես հավատում էր, որ իր բոլոր արածները, այն ամենը, ինչ հիմա զեկուցեց դատարանին, պատշաճում է օրենքին ու արդարանում է անհրաժեշտությամբ: Նա ջանում էր երդվյալներին բանն այնպես պատկերել, ինչպես իրեն էր երևում, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը կարողանար իրեն դնել նրա տեղը և հասկանալ իր մղումները:

Վերջապես նա ավարտեց, և պետք է նկատել, որ երդվյալները խիստ հակասականորեն վերաբերվեցին թե՛ նրա ցուցմունքներին, թե՛ նրան: Ըստ վիճակահանության առաջինը հանդիսացող երդվյալ Ֆիլիպ Մոլթրին եղրակացրեց, որ Քառութերվուղը ստում է: Նա չէր պատկերացնում, որ մարդը կարող է առաջուց շիմանալ իրեն սպառ-

Նացող սնանկությունը: Անշուշտ, նա իմացել է: Ասենք,
նրա բոլոր մեքենայությունները Սթիների ընկերակցությամբ,
այսպես թե այնպես, պատժվելու արժանի էին. Քառուիեր-
վուորի ամբողջ ճառի ընթացքում Մոլթրին միայն մի բան էր
մտածում. ինչպես էր ինքը խորհրդակցության սենյակում
ասելու. «Այս՝ հանցավոր է»: Դրա համար էր նա միայն
ապացույցներ հավաքում, որպեսզի մյուսներին համոզեր,
որ Քառուիերվուորը հանցավոր է: Երկրորդ երդվյալը՝ տեստիլ
գործարանի տեր Սայմոն Գլասբերգը, ընդհակառակը, կար-
ծում էր, որ Քառուիերվուորի բոլոր արարքները միանգամայն
օրինական են, և որոշել էր քվեարկել հօգուտ նրան անպարա-
հայտարարելուն: Նա Քառուիերվուորին անբիծ չէր համարում,
բայց և պատժվելու արժանի էլ չէր համարում: Երրորդ
երդվյալը՝ ճարտարապետ Ֆլեշեր Նորթոնը, կարծում էր, որ
Քառուիերվուորը հանցավոր է, բայց գտնում էր նաև, որ այդ-
պիսի շնորհքի տեր մարդուն չարժե բանտ նետել: Չորրորդը՝
Զարլզ Հելիգենը, իուլանդական ծագում ունեցող մի կապա-
լառու, կրոնական մտածողովթյան տեր մի մարդ, կարծում
էր, որ Քառուիերվուորը հանցավոր է և պետք է պատժի:
Հինգերորդը՝ ածխավաճառ Ֆիլիպ Լուկաշը, նույն կարծիքն
ուներ: Վեցերորդ երդվյալը՝ հանքային գործի գիտակ Բեն-
շամին Ֆրեյզերը, ոչ մի որոշակի եղրակացության շհանգիս:
Յոթերորդը՝ բորսայական միջնորդ Ջ. Բրիջեսը, որ գրասեն-
յակ ուներ երրորդ փողոցում, մի սահմանափակ և նեղ գործ-
նական մարդ, Քառուիերվուորին համարում էր վտանգավոր
գործարար, անպայման հանցավոր ու պատժվելու արժանի:
Նա հաստատ որոշել էր քվեարկել հօգուտ մեղադրական
վճռի: Ութերորդը՝ Գայոս Թրիփը, շոգենավայրին մի փոքր
ընկերության կառավարիչը, ո՛չ մի բան հստակ չէր կարո-
դացել պարզել, իններորդը՝ Ջոզեֆ Թիսդեյլը, որ անցյալում
խեժի ֆաբրիկան էր, կարծում էր, որ Քառուիերվուորը գուշե
հանցավոր է, բայց հոգու խորքում նրա արարքները հանցա-
պարտ չէր համարում. հանգամանքներն այնպես էին դասա-
վորվել, որ ուրիշ բան չէր մնացել անելու Քառուիերվուորին:
Թիսդեյլը որոշեց քվեարկել հօգուտ արդարացման: Տասնե-

բորդ երդվյալը՝ սենտիմենտալության հակում ունեցող Ռիշարդ Մարշը, որ ծաղկի խանութ ուներ, նույնպես կողմնակից էր Քառափերվուդին արդար ճանաշերու։ Տասնմեկերրորդը՝ Ռիշարդ Ուեբերը, մթերավաճառ ու առևտրական աշխարհում մի պատփիկ հենակ, բայց հաղթանգամ մի երիտասարդ, Քառափերվուդին դեմ էր և հանցավոր էր համարում։ Եվ, վերջապես, տասներկուերրորդը՝ ալրավաճառ Վաշինգտոն Բարձրացածը, Քառափերվուդին հանցավոր համարելով հանդերձ, կարծում էր, որ դատավճարից հետո նա պետք է ներման միշտորդություն հարուցի։ Մարդկանց ուղղել է պետք, այս էր նրա նշանաբանը։

Ահա ինչ դիրք էին բռնել երդվյալները, երբ Քառափերվուդը ավարտեց իր խոսքը և նստեց, սկսեց մտածելու փոքրիշատե՛ նպաստավոր տպավորություն գործեցի՞ն արդյոք իր ցուցմունքները։

ԳԼՈՒԽ ԽԼIII

Քանի որ փաստաբանին է առաջինն իրավունք տրվում իր խոսքն ուղղելու երդվյալներին, ապա Սթեցերը բարեկըրթորեն գլուխ տալով իր պաշտոնակցին, առաջ եկավ։ Զեռքերը հեներով այն պատվարին, որի ետեր նստած էին երդվյալները, նա սկսեց խոսել հանդարտ, խոնարհ ու համոզիչ շեշտով։

— Պարոնա՛յք երդվյալ ատենակալներ, իմ պաշտպանյալ միստր Ֆրենկ Ալչերնոն Քառափերվուդը՝ մեր քաղաքում հայտնի բանկիր ու ֆինանսիստ, որի դրասենյակը Երրորդ փողոցում է, մեղադրվում է Պենսիլվանիա նահանգի կողմից, որի ներկայացուցիչն այստեղ շրջանային դատախազն է, առայն, որ խաքեական միջոցով ստացել է վաթսուն հազար դոլար՝ հազար ութ հարյուր յոթանասունմեկ թվականի հոկտեմբերի իննին տրված շեկի միջոցով, որը նրա անվամբ գույս է գրել այն ժամանակիվա գանձապետի գրասենյակի կառավարիչ ու հաշվապահ Ալբերտ Սթայերսը։ Իսկ որո՞նք

են, պարունայք, գրաստերը։ Դուք լսեցիք մի քանի վկաների ցուցմունքները և ընդհանուր գծերով գիտեք ամբողջ պատմությունը։ Ամենից առաջ վերցնենք Զորշ Սթիների ցուցմունքները։ Նա հայտարարեց, որ հազար ութ հարցուր վաթսունվեց թվականին իրեն պետք էր մի մարդ՝ բանկիր կամ միջնորդ, որը կարողանար խորհուրդ տալ, թե ինչպես կարելի է անվանական արժեքի հասցնել բաղաքային փոխառությունը, որն այդ ժամանակ շատ ցած էր զնամատվում, և ոչ միայն խորհուրդ տար, այլև կենսագործեր այդ գործողությունը։ Այդ ժամանակ միստր Սթիները ֆինանսներից շատ բան չէր հասկանում։ Միստր Քառուփերվուդը եռանդուն երիտասարդ էր, վայելում էր վերին աստիճանի հմուտ բորսայական միջնորդի համբավի, նաև անմիջապես գտավ բաղաքային փոխառության արժեքի ոչ միայն տեսական, այլև գործնական բարձրացման հնարավորությունը։ Միստր Քառուփերվուդն ու միստր Սթիները այդ ժամանակ էլ համաձայնության եկան (դրա մանրամասնությունները դուք լսեցիք Հենց Սթիների բերանից), որի հիման վրա էլ բաղաքային փոխառության պարտատոմսերի մի մեծ ծրար միստր Սթիները հանձնեց իմ պաշտպանյալին իրացնելու համար, առ էլ հմուտ մաների շնորհիվ, մերթ զնելով, մերթ ծախելով պարտատոմսերը (դրա վրա մանրամասն կանգ առնել շարժեւ նկատեմ միայն, որ այդպիսի գործառնություններ հաճախ ու միանդամայն լեղալ կերպով կատարվում են ֆինանսական աշխարհում), փոխառությունը հասցրեց անվանական գնիքն և, ինչպես վկաները ցուց տվին, տարիներով պահեց նրա ընթացիկ արժեքը։

Ի՞նչ է ուրեմն հիմա պատահել, զենալմեննե՛ր, ինչպիսի՞ համեզամանքներ ստիպել են միստր Սթիներին ներկայանալ դատարանի դահլիճը և իր վաղեմի գործակալի ու միջնորդի դեմ հարուցել գողության ու վատնումի մեղադրանք։ Ի՞նչն է ստիպել նրան հավաստելու, որ իբր թե նա վաթսուն հազար դոլար է յուրացել բաղաքի գանձարանի միջոցներից ինչպե՞ս հասկանանք։ Գուցե միստր Քառուփերվուդը տարածամ մի պահ, հանցապարտ նպատակով, առանց միստր

Սթիների ու նրա օգնականների գիտության, սողուկել է գանձատուն ու քաղաքային դրամներից տարել է վաթսուն հազար դոլլար։ Ամենակի՞ն ոչ Այս մեղադրանքը, որ դուք լսեցիք շրջանային դատախազի բերանից, ասում է, որ միստը Քառուփերվուդը գանձարան է եկել օրը ցերեկով, ժամով չորսից հնգի միջև, իրեն անվճարունակ հայտարարելուց մեկ օր առաջ և մոտավորապես կես ժամ նստել է միստը Սթիների հետ նրա առանձնասենյակում։ Այնուհետև դուրս է եկել այդտեղից, հայտնել միստը Ալեքսանդրին, որ մարման ֆոնդի համար ձեռք է բերել վաթսուն հազար դուռարի քաղաքային փոխառության պարտատոմս, որոնց համար դեռ փոխարժեքը չի ստացել, և խնդրել այդ վաթսուն հազարը պահանջագրել գանձարանի հաշվետվության մեջ, փսկ իրեն այդ գումարի մի շեկ տալ. շեկը տալիս են նրան, և նա գնում է։ Ի՞նչ մի առանձնակի բան կա այստեղ, չենտրմեննե՛ր, կամ ի՞նչ արտասովոր բան։ Մի՞թե վկաներից որևէ մեկը հերքեց, որ միստը Քառուփերվուդը քաղաքի գործակալն էր հենց այսպիսի գործարքների համար։ Մի՞թե որևէ մեկը կասկածեց, որ միստը Քառուփերվուդը, հիւրավի, ձեռք է բերել քաղաքային փոխառության այդ պարտատոմսերը։

Ուրեմն ինչո՞ւ միստը Սթիները մեղադրում է միստը Քառուփերվուդին՝ խարդախությամբ յուրացնելու և հանցագործ կերպով վաթսուն հազար դոլլար վատնելու մեջ, Ֆիգումար, որ տրվել է նրան պարտատոմսերի համար, որ նա իրավունք ուներ գնել և որ, իսկ դա ոչ ոք չի վիճարկում, գնել է։ Ահա թե որտեղ է թաղված շան դլուխը. հիմա բոլորդ էլ, պարոնա՛յք երդվյալ ատենակալներ, կհասկանաք։ Ի՞ս պաշտպանյալը շեկ է սրահանչել, վերցրել է և ավանդադրել բանկոամ իր ամվանը՝ նեղություն շքաշելով, ինչպես մեղադրությունն է հավասարում, մարման ֆոնդին հանձնելու այն պարտատոմսերը, որոնց վճարելու համար էր սրված այդ շեկը։ Ժամանակին շանելով այդ բանը և օրվա ֆինանսական գեղքերի ճնշման տակ ստիպված լինելով վճարումները դադարեցնել՝ նա դրանով էլ, ինչպես երեսում է մեղադրանքից,

նմանապես և հանրապետական կուսակցության տագնապահար պարագլուխների ասույթներից, դարձել է զեղծարար, գող, ինչպես կուզեք, պարզ ասած, քավության նոխազ, որը հասարակական կարծիքը հեռացնում է Ձորջ Սթիներից և հանրապետական կուսակցության ղեկավարներից:

Այստեղ Սթեշերը տվեց Զիկագոյի հրդեհից հետո ստեղծված քաղաքական դրության և նրա առաջացրած խուճապի համարձակ, ավելին՝ գրգոհչ բնութագիրը, ըստ որում Քառութերվուղը դուրս եկավ որպես անարդարացի կերպով զըրպարտված մարդ, որին մինչև Հրդեհը Ֆիլադելֆիայի քաղաքական ղեկավարները շատ բարձր էին գնահատում, բայց դրանից հետո, վախենալով ընտրություններում տապալվելուց, քավության նոխազ ընտրեցին

Մոտ կես ժամ Սթեշերը այդ մասին խոսեց: Այնուհետև նշելով, որ Սթիները՝ քաղաքական կառավարիչների արքանյակն ու նաև վարագույրը, օգտագործվեց նրանց կողմից որպես կույր գործիք՝ իրագործելու համար այնպիսի ֆինանսական մտադրություններ, որոնց հետ չէին ուզում կապել նրանք իրենց անունները, շարունակեց:

— Հիմա, իմ բոլոր ասածներից հետո, խորապես մը տածեցեք, պարոնա՛յք երդվյալներ, թե որքա՞ն ծիծաղելի է այս մեղադրանքը, որքա՞ն անհեթեթ: Ֆրենկ Քառուփերվուղը շատ տարիներ գործել է որպես քաղաքի գործակալ նման գործարքներում: Իր գործողությունների մեջ նա ղեկավարվել է վարքի որոշ նորմաներով, որ մշակել էր նա միստր Սթիների հետ և, ակներևաբար, վերադաս անձանց օրհնությամբ, որովհետև այդ նորմաներն ու կանոնները կիրառեն նաև քաղաքային կառավարչության նախորդ գործիչները շատ ավելի առաջ, քան միստր Սթիները ասպարեզ կիշներ որպես քաղաքի գանձապետ: Ըստ այդ կանոններից մեկի՝ Քառուփերվուղը պարտավոր էր իր բոլոր գործարքների հաշվեկշիռը կազմել ու ներկայացնել քաղաքին յուրաքանչյուր հաջորդ ամսի մեկին: Նշանակում է, որ նա պարտավոր չէր վճարել քաղաքի գանձապետին որևէ գումար, ոչ էլ հանձն ներ նրան որևէ շեկ, ամանդադրել դրամ կամ սերտիֆիկատ

ճարման ֆոնդում մինչև հաջորդ ամսվա մեկը, որովհետեւ, խնդրում եմ ուշադրովթյամբ լսեք, խիստ կարևոր է առ, քաղաքացին փոխառության հետ կապված, ինչպես և մյուս բոլոր գործարքները, որ կատարում էր քաղաքացին գանձարանի համար, այնքան բազմաթիվ էին, այնքան կայժականացին, վաղօրոք այնքան աննախատեսելի, որ դրանք կատարելու համար անհրաժեշտ էր հաշվումների ճկուն, ձեռքերը չկաշեանդող մի սիստեմ. հակառակ դեպքում դրանք ընդհանրապես անիրազործելի կլինեին: Առանց այդպիսի սիստեմի միստր Քառուփերվուղը չէր կարողանա գոհացուցիչ կերպով կատարել միստր Սթիների կամ գանձարանի հետ կապ ունեցող այլ անձանց հանձնարարությունները: Հաշվետվության վարելը ծայր աստիճան կդժվարանար և միստր Քառուփերվուղի, և քաղաքացին գանձապետի համար: Միստրը Սթիները խոստովանեց այդ բանը իր ցուցմունքների մեջ: Ալբերտ Սթայերսը հաստատեց, իոկ հետո՞: Հետո ես կասեմ հետեւյալը. «Ռ գատարանը կարող է ենթադրել, ո՞ր տղամիտ մարդը կարող է հավատալ, որ այդպիսի իրադրության մեջ միստր Քառուփերվուղը անձամբ զբաղվեր տարբեր բանկեր, մարման ֆոնդ և քաղաքացին գրամարկը կատարվող այդ բոլոր ավանդադրումներով և կամ իր գլխավոր հաշվապահին հիշեցներ. «Լսեք, Սթե՛փլի, ահա ձեզ վաթսուն հազար դրվագի չեկ, հոգ տարեք, որ հենց այսօր էլ այդ գումարի շափ քաղաքացին փոխառության սերտիֆիկատ հանձնվի մարման ֆոնդին»: Ամենաանհեթե՛թ ենթադրություն: Հասկանալի է, որ միստր Քառուփերվուղը, ինչպես և ամեն մի գործարար մարդ, ուներ աշխատելու իր սիստեմը: Եթե ժամանակը գալիս էր, որոշ չեկեր ու սերտիֆիկատներ ավտոմատորեն հանձնվում էին ուր պետք էու: Միստր Քառուփերվուղը, չեկը հանձնելով իր գլխավոր հաշվապահին, այլևս ոչինչ չէր հիշում: Կարելի՞ է պատկերացնել, որ այդ թափի բանկացին գործիչը այլ կերպ վարվեր:

Միստր Սթեգերը շունչ քաշեց ու գագար տվեց, սպասելով հարցերի. բայց որովհետեւ հարցումներ չեղան, վըստահ շարունակեց.

— Ճիշտ է, դրան կարելի է առարկել, թե իբր միստր Քառվակերվուղը գիտեր, որ սնանկություն է սպառնում իրեն։ Սակայն միստր Քառվակերվուղը հավաստում է, թե դա նրա մտքով չի անցել։ Հենց հիմա նա մեզ ասաց, որ միայն վերջին րոպեին ինքը իմացավ, թե ինչպես են ընթացել դեպքերը։ Այդ դեպքում ո՞վ կարող էր մերժել տալու նրան մի չեկ, որի օրինական իրավունքն ուներ նա։ Բայց ես գիտեմ բանի էությունը։ Եվ կարծում եմ, թե կկարողանամ բացատրել ձեզ, եթե դուք բարեհաճեք ունկնդրեք ինձ։

Սթեջերը փորձեց մյուս կողմից գրոհել երդվյալների վրա։

— Պարզ է ամեն ինչ. միստր Սթիները հրդեհից և դրան հաջորդած խուճապից սարսափահար (գուցե նաև հենց այն պատճառով, որ միստր Քառվակերվուղը խորհուրդ տվեց նրան չվախենալ Ֆիլադելֆիայի բորսայում տեղի ունեցող դեպքերից), երևակայեց, որ իբր թե Քառվակերվուղը սնանկանալու սպառնալիքի տակ է։ Իսկ քանի որ միստր Սթիները շատ ցածր տոկոսով զգալի գումար էր ավանդադրել Քառվակերվուղի բանկիրային գրասենյակում, ուստի և որոշեց այլևս դրամ չտալ միստր Քառվակերվուղին, անգամ այն փողերը, որ հասնում էին նրան մատուցված ծառայության համար և պարզապես ոչ մի առնչություն չունեին այն գումարների հետ, որ փոխ էր առել նա երկոսունքես տոկոսի հաշվով։ Ամենաանհեթե՛թ վարվելակերպ։ Բայց դրա պատճառն այն էր, որ միստր Ջորջ Սթիները հրդեհից ու խուճապից հետո, որոնք սկզբում բնավ շազդեցին միստր Քառվակերվուղի վճարունակության վրա, բառացիորեն գումար էր սեփական մաշկի համար, և եթե որոշեց շտալ Ֆրենկ Քառվակերվուղին անդամ այն փողը, որ հասնում էր նրան իրավամբ, ապա լոկ այն պատճառով, որ Սթիները շահախնդրական նպատակով ապօբինաբար օգտվել էր քաղաքի միջոցներից (ճիշտ է՝ միստր Քառվակերվուղի միջոցով, որպես միջնորդի) և այժմ վախենում էր մերկացվելուց ու պատժվելուց։ Թույլ տվեք հարցնել ձեզ, պարոնա՛յք երդվյալներ, միստր Սթիների այդ որոշման մեջ խելամտության

թեկուզ մի հատիկ կա՞ր արդյոք Եվ ինչպե՞ս եք դուք բացատրում այդ որոշումը։ Միստր Քառափերմվուղը քաղաքի գործակալ չէ՞ր արդյոք այն ժամանակ, երբ գնեց փոխառության սերտիֆիկատներ, որոնց մասին խոսք եղավ այս տեղ։ Անշուշտ, գործակալ էր։ Իսկ եթե այդպես է, իրավունք ունե՞ր նա ստանալու այդ վախսուն հազար դոլարի շեկը։ Կը ինի՞ այստեղ թեկուզ մի մարդ, որ մտածի վիճարկել այդ իրավունքը։ Ուրեմն էլ ինչի՞ համար են նրա իրավունքների ու ազնվության նկատմամբ արտահայտվող այդ կասկածները։ Ընդհանրապես որտեղից կարող էին այդպիսի խոսակցություններ առաջանալ։ Հիմա պատասխանեմ ձեզ։ Դրանք կարող էին առաջանալ միայն մի պատճառով։ տեղական քաղաքական գործիչները ցանկանում էին կասկածը վերացնել հանրապետական կուսակցությունից և մեղքը գցել մի ուրիշի վրա։

Պարոնա՛յք երդվյալներ, ձեզ կարող է թվալ, թե ես շատ հեռու գնացի, երբ ուղեցի գտնել քաղաքացին գանձարանի գործակալը հանդիսացող միստր Քառափերմվուղին մեղադրելու այս, մեղմ ասած, տարօրինակ որոշման աստառը այն բանում, որ նա պահանջել ու ստացել է օրինապես իրեն հասնող դրամը։ Սակայն հաշվի առեք այն դրությունը, որի մեջ ընկել էր այն ժամանակ հանրապետական կուսակցությունը։ Հաշվի առեք, որ դա տեղի ունեցավ ընտրությունների նախօրյակին և քաղաքի միջոցներից արված այդպիսի խոշոր վատնումի մանրամասնությունների մերկացումը խիստ աննպաստ կանդրադառնար դրանց ելքի վրա։ Հանրապետական կուսակցությունը իր դրածներին պիտի նշանակել տար գանձապետի ու շրջանային դատախազի պաշտոններում։ Պետք է ասել, որ նրա պարագրումների մեջ աշմառավորվել է մի սովորույթ։ քաղաքի գանձապետներին ու նրանց արքանյակներին հանրապետի գործադրությունը անելու խիստ ցածր տուններում։ Պետք է ասել, որ նրա պարագրումների մեջ աշմառավորվել է մի սովորույթ։ քաղաքի գանձապետներին ու նրանց արքանյակներին հանրապետի գործադրությունը ընձեռել քաղաքի գրամներից փոխառություն անելու խիստ ցածր տուններում։ Նրանց այնքան էլ մեծ ոռնիկ չէր հասնում, հետևաբար, պետք էր միջոցներ որոնել բարեկեցիկ ապրելու համար։ Կարելի՞ է արդյոք միշտը Սթիներին պատասխանա-

տու համարել քաղաքին պատկանող դրամները փոխ տալու
այդ սովորության համար: Ո՛չ մի գեպքում: Միստր Քառ-
փերվուդը պատասխանատո՞ւ է արդյոք նրա համար: Ո՛չ
մի շափով: Այս պրակտիկան հաստատված է շատ ավելի
առաջ, քան միստր Քառփերվուդը և միստր Սթիները առ-
պարեզ են իշել: Իսկ ինչո՞ւ հիմա այսքան աղմուկ բարձրա-
ցավ. որովհետև և Սթիները, և հանրապետական կուսակա-
ցության պարագումները վախենում էին ընտրությունների
նախօրյակին մերկացվելուց: Դեռ երբեք որևէ քաղաքացին
գանձապետի ջրի երեսը դուրս չեն բերել: Լայն հասարակու-
թյան համար շշմեցուցիչ նորություն կլիներ այն անազնիվ
մեթոդների մերկացումը, որ օգտագործում էր միստր Սթի-
ները: Զիկագոյի հրդեհը և դրան ուղեկցած բորսայական
խուճապը սպառնում էին խարխլել մեր քաղաքի ֆինանսա-
կան շատ հաստատությունների, այդ թվում և միստր Քառ-
փերվուդի գրասենյակի, կայունությունն ու բարիկեցությու-
նը: Շատ ֆինանսիստների առաջ հառնեց սնանկանալու ըս-
պառնալիքը, հետևաբար կարող էր սնանկանալ և ֆրենկ
Քառփերվուդը: Իսկ սնանկանալուց հետո նա պարտք կմը-
նար քաղաքին հինգ հարյուր հազար դոլլար, որ փոխարինա-
բար ստացել էր քաղաքային գանձապետից խիստ նպաստա-
վոր պայմանով՝ տարեկան երկուառուկես տոկոսով: Թերես
վերջին հանգամանքն աննպաստ է բնութագրում միստր Քառ-
փերվուդին, թերևս ինքն է գնացել քաղաքային գանձապետի
մոտ ու խնդրել դրամ փոխ տալ իրեն երկուսուկես տոկոսի
հաշվով: Բայց եթե անգամ այս այսպես է, ի՞նչ հանցա-
պարտ բան կա այստեղ գործարարական տեսակետից: Մի՞-
թե ամեն ոք իրավունք չունի փոխ առնել դրամ որևէ տե-
ղից և քանի տոկոսով ուզենա: Մի՞թե միստր Սթիներին
ստիպել են դրամ տալ միստր Քառփերվուդին: Այսօր միս-
տըր Սթիները ցուցմունք տվեց, որ նախ ինքն է միստր
Քառփերվուդին հրավիրել իր մոտ: Ասացեք, խնդրե՞մ,
հապա որտեղից մեջտեղ եկավ գողության, վատնումի,
վստահողի սեփականությունը յուրացնելու այս անհեթեթ
մեղադրանքը և այլն:

Ահա թե որտեղից: Մի անգամ ևս, պարոնայք երդվյալներ, ձեր ուշադրությունն եմ խնդրում: Միստր Սթիների հետեւ կանգնած անձանց, նրա գործողությունները ղեկավարող անձանց, իրենց քաղաքական համբավը պահպանելու համար, պետք էր քավության նոխազ. իսկ նրանց ձեռքի տակ ընկալ ոչ այլ ոք, եթե ոչ Ֆրենկ Ալչերնոն Քառուկերվոալի: Այս է բոլորը: Ոչ մի այլ պատճառ չկա, չկար և չէր կարող լինել: Եթե միստր Քառուկերվոալը այդ դժվարին պահին դրամի կարիք ուներ պրծնելու համար, ապա նրանց շահերը պահանջում էին տալ փոխարինաբար այդ դրամը և ամբողջ գործը մոռացության մատնել: Դա, իհարկե, ապօրինի կլիներ, նույնպես ապօրինի, ինչպես ուրիշ շատ բան, որ անում էին նրանք, բայց շատ ավելի անվտանգ: Սակայն վախը, պարոնայք երդվյալներ, վախը, փոքրոգությունն ու ճգնածամի դեմքին նայելու անընդունակությունը խանգարեցին նրանց այդպես անելու: Նրանք վախսցան վստահություն տածել մի մարդու հանգեստ, որը մինչև այդ երբեք չէր շաբաշահել նրանց վատահությունը, այն մարդու հանդեպ, որի հավատարմությունը և ֆինանսական բացառիկ ձիրքը քիչ օգոստ չէին տվել նրանց ու քաղաքային ինքնավարությանը: Քաղաքային գանձափետը արիություն չունեցավ հավատարիմ մնալու իր զինակցին և բանի տեղ չդնելու նրա հնարավոր անանկության շշուկները. նա գերազանցեց, իսկ նա չի հերքում դա, իր կաշին փրկելու համար պահանջել միստր Քառուկերվոալից վերադարձնելու հինգ հարյուր հազար գովարը կամ այդ գումարի մեծ մասը, որ փաստացի միստր Քառուկերվոալը գործածել էր հենց իր՝ Սթիների օգտին, և ի լրումն դրա հրաժարվեց հատուցել այն դրամը, որն իմ պաշտպանյալը, ելնելով իրենց համաձայնությունից, ծախսել էր պարտատոմսեր գնելու համար: Մի՛թե ապօրինի է միստր Քառուկերվուդի կատարած գործարքներից թեկուզ և մեկը: Ո՛չ, ապօրինի չէ: Արդյոք ժամանակին հայց ներկայացված է միստր Քառուկերվուդին այդ հինգ հարյուր հազար գովարի համար, որ նա հազիվ թե հիմա կարողանա վերադարձնել քաղաքին սնան-

կանալու պատճառով; Բնակ էլ չի ներկայացվելու Ամբողջ Խնդիրն այն է, որ Զորք Սթիները համակվեց անխմասու խոսմապային սարտափով, իսկ համրապետական կուսակցության պարագլուխները իմանալով, որ գանձարանը պակասորդ ուժությունը գցել մի մարդու վրա, որն իրենց շարքերում չէր: Դուք լսեցիք, թե ինչ ցուցմունք՝ տվեց ացօր միստր Քառափեթուղթը. չէ՞ որ նա միսար Սթիների մոտ էր զնացել հենց այդպիսի հրանարավորությունն կանխելու համար: Եվ հասրկապես նրա արած նախագգուղացումից հետո էր միստր Սթիները հուղվել, կորցրել ամբողջ ինքնատիրապետումը ու պահանջել, որ իմ պաշտպանյալը վերադարձնի դրամը՝ հինգ հարյուր հազար դոլլարը, որ գանձապետը փոխ էր տվել նրան երկուսուկես տոկոսի հաշվով: Ի՞նչ կասեիք, մի՞թե ֆինանսական տեսակետից սա բացահայտ հիմարություն չէ: Ինչ խոսք, շատ հարմար պահ է պահանջելու, որ մարեն միանգամայն օրինականորեն փոխ տրված գումարը:

Բայց ես վերադառնալու եմ շարաբաստիկ վաթսուն հազար դոլլարանոց չեկի պատմությանը: Միստր Սթիներն այստեղ ցուցմունք տվեց, որ երբ մնանկանալու նախօրյակին միստր Քառափեթուղթը եկալ իր մոտ, ինքը կտրականապես հրաժարվելց փոխու տալ նրան, որից հետո միստր Քառափեթուղթը իբր թե համոզեց նրա կառավարիչ ու գլխավոր հաշվապահ Ալբերտ Սթայերսին վաթսուն հազար դոլլարի չեկ դուրս գրել իր անունով, մի գումար, որի իրավունքն իբր թե շուներ իմ պաշտպանյալը և միստր Սթիներն էլ եթե իմանար, բնավ թույլ չէր տա գրելու այդ չեկը:

Ինչպիսի անհեթեթուղթուն: Ինչպես կարող էր Սթիներն այդ բանը չիմանալ: Հաշվապահական մատյանները նրա մոտ էին՝ գանձարանում, և նա կարող էր ուզած րոպեին թերթել դրանք: Միստր Սթայերսը հաջորդ առավոտ ամենից առաջ արդ չեկի մասին զեկուցեց նրան: Իսկ միստր Քառափեթուղթը մոռացավ արդեն դրա մատին մտածել, որովհետև այդ փողի իրավունքն ուներ և առանց որևէ զժվարության պարտահած դատարանում կատարողական թերթիկ կստա-

նար այդ գումարը դանձելու համար, անկախ սնանկությունից: Սիստր Սթիների հավաստումը, թե նա կկասեցնէր չեկ տալը, պարզապես ծիծաղելի է: Այդ միտքը անկասկան ծագեց նրա գլխում միայն հաջորդ օրը, իր քաղաքական համախռների հետ ունեցած խոսակցությունից հետո, երբ որոշվեց ամեն գնով, ամեն ձեռնածության միջոցով կառկածը հեռացնել հանրապետական կուսակցության գործիչներից: Ահա այս գործի ամբողջ նախապատմությունը: Եղ դուք կարող եք վստահ լինել, որ սա շատ լավ են հասկանում նրանք, ովքեր եռանդագին ձգտում են մեղադրական դատավճիռ արձակել տալ միստր Քառափերվոսդի վերաբերյալ:

Սթեջերը մի պահ դադար առավ և բազմանշանակ նայեց Շենոնին:

— Պարոնա՝ յք երդվյալ ատենակալներ, — ասաց նա հանգիստ ու սրտաբուխ ձայնով՝ իր խոսքը ավարտելիս, — երբ դուք ձեռնամուխ լինեք այս դործի քննությանը խորհըրդակցության սենյակում, կհամոզվիք, որ և գողովածը են այս գաղտնումը, և վաթսուն հաղար դոլլարի ալորինի յուրացումը, այսինքն՝ մեղադրանքի բոլոր կետերը ցոսց են տալիս միայն մի բան. շրջանային դատախազը համառորեն ձգտում է հանցագործության տպավորություն ստեղծել, մինչդեռ այդ կետերը բացեիրաց միստր Քառափերվոսդի հաշվին իրենց սեփական կաշին փրկող երկշուր քաղաքագետների հուզված երթակայության արգասիքն են, այլ խոսքով՝ հերյուրանքն այն մարդկանց, ովքեր միայն մի նպատակի են հետամոստ. ուզում են ջրից շոր դուրս գալ: Նրանք վախենում են, որ չլինի՝ թե հանրապետական կուսակցության Պենսիլվանիայի անդամները չափից ավելի աննպաստ կարծիք կազմեն կուսակցական վերնաշերտի ու նրա տերուտիրություն անելու մասին մեղանում՝ Ֆիլադելֆիայում: Նրանք ձգտում են, որքան ուժները պատում է, պատասխանատվությունից ազատել Զորջ Սթիներին և ամբողջ հանցանքը նետել իմ պաշտպանյալի վրա: Բայց այդպիսի բան չպետք է լինի ու չի լինի: Լինելով ազնիվ ու խորհող մար-

դիկ՝ դուք թույլ չեք տա, որ գործն այդպիսի ընթացք ստանա: Ուստի և ես հանդիսաւ խղճով ավարտում եմ իմ ճառը:

Սթեղերը թափով շրջվեց երդվալներից և դիմեց դեպի իր տեղը, Քառակերպվուդի կողքին: Այդ միջոցին վեր կացաւ Շենոնը՝ երիտասարդ, անխռով, եռանդուն և ուժեղ:

Ճիշտն ասած, Շենոնը տարակարծիք չէր Սթեղերի հետ Քառակերպվուդի մասին և չէր դատապարտում նրան այն մեռողների համար, որոնց դիմում էր սա «փող շինելու» նրապատակով: Ավելին, Շենոնը կարծում էր, որ ինքն էլ Քառակերպուդի տեղ ճիշտ այդպիս կվարվեր: Բայց նա նոր էր ընտրվել շրջանային դատախազ, կարիք ուներ իրեն ցուց տալու և ի լրումն դրա սիրաշահելու իր տերերին, այսինքն՝ Հանրապետական կուսակցության պարագումաներին, ովքեր կարծում էին, որ տվյալ իրադրության մեջ Քառակերպվուդը պետք է դատապարտվի: Այդ պատճառով էլ Շենոնը ձեռքբերն ամուր հենեց պատնեշին, ակնասեռ նայեց երդվալներին և մտքում նշելով մի քանի ելակետային դրույթներ, սկսեց.

— Պարոնա՛յք երդվալ ատենակալներ, ինձ թվում է, որ եթե ամենքս էլ խելամտորեն վերաբերվենք այն բանին, ինչ պարզվեց այսօր այստեղ, ապա արդեն դժվար չի լինի հանգել որոշակի, և ես կասեի, վերջնականապիս ճիշտ եղանակացության. միայն թե պետք է բարեխղճորեն քննել փաստերը: Մեղադրյալ միստր Քառակերպուդը, ինչպես արդեն ասացի, ամբաստանվում է գողության, վստահողի սեփականությունը յուրացնելու, վատնուամի և առանձին՝ վաթսուն հազար դոլար վատնուամի մեջ, մի գումար, որ տատացել է նա չեկով, չեկն էլ տվել է հազար ութ հարյուր յոթանասսունմեկ թվականի հոկտեմբերի իննին «Ֆրենկ Ա. Քառակերպուդ և ընկերությանը» քաղաքացին գանձապետի գրասենյակի կառավարիչը վերջինիս անունից, սակայն իր ստորագրությամբ: Միստր Քառակերպուդը պնդում է, որ այդ պահին ինքը ոչ միայն կատարելապիս վճարունակ էր, այլև իսկապես ձեռք էր բերել քաղաքացին փոխառության տերութիվկատներ՝ վաթսուն հազար դոլարի և գրավադրել դը-

բանք կամ պատրաստվում էր մոտ օրերին գրավադրել քաղաքի մարման ֆոնդում, որը կլիներ մի սովորական գործարքի ավարտը, այսինքն՝ քաղաքի բորսայրական գործակալ Ֆրենկ Ա. Քառափերվոսդը որոշ քանակությամբ քաղաքային փոխառության պարտատոմսեր է գնել՝ հանձնելու մարման ֆոնդին և անմիջապես ստանալու արած ծախսերը: Այժմ, չենուրմեննե՞ր, փորձենք քննել, թե իրականում ինչպես է եղել այդ ամենը: Իսկապե՞ս «Ֆրենկ Ա. Քառափերվոսդ» (ի գեպ՝ ոչ մի «Ընկերություն» ըշկա, ինչպես դուք կարողացաք համոզվել այսօր, կա միայն Ֆրենկ Ա. Քառափերվոսդ), ուրեմն իսկապե՞ս հիշյալ Ֆրենկ Ա. Քառափերվոսդը իրավունք ուներ այդ չեկն ստանալու: Այլ խոսքով, այդ պահին նա քաղաքի լիազորված գործակա՞լն էր, թե՞ ոչ: Վճարունա՞կ էր: Այնուհետև, գիտե՞ր, որ ինքը սնանկանալու սպառնալիքի տակ է և չկառչե՞ց արդյոք այդ վաթսուն հաղարանոց չեկին այնպես, ինչպես խեղգվողը՝ օճից, իր դրությունը Փինանսական աշխարհում փրկելու համար, շմտածելով անողամ այն հետևանքների մասին, որ կարող է առաջացնել այդ քայլը, եթե նայենք նրան օրենքի, բարոյականության և այլ տեսակետից: Եվ կամ հիրավի՞ն ան ձեռք է քերել քաղաքային փոխառության սերտիֆիկատներ հիշյալ գոամարով, իր նշած պահին ու նշած ձևով և ըստացել լոկ այն, ինչ իրավամբ համուսմ է նրան: Մտադրված մասին էր նա գրավադրել քաղաքային փոխառության այդ սերտիֆիկատները (ինչպես ինքն է հավաստում և ինչպես, բնականաբար, պետք է աներ), մարման ֆոնդում թե՞ այդպիսի մտադրություն չուներ: Եվ ապա, այն օրը, երբ նա ստացավ վաթսուն հաղար դոլլարի այդ չեկը, նրա ու քաղաքի գանձապետի հարաբերությունները մնացի՞ն նույնը, ինչպես առաջ, թե՞ փոխվեցին: Եվ արդյո՞ք նրանց գործարարական աշխատակցությունը վերջացավ այն զրոյցից հետո, որ տեղի էր ունեցել չեկն ստանալուց քառորդ ժամ առաջ, կամ երկու օր, երկու շաբաթ առաջ (ժամկետն այստեղ դեր ձի կատարում): Ինչպես հայտնի է ձեզ, յուրաքանչյուր գործի մարդ իրավունք ունի ուղարծ բոպեին

լուծել պայմանագիրը, եթե այդ պայմանագրում չի նշված դրա վավերականության ժամկետը: Ես խնդրում եմ ձեզ հաջվի առնել այդ հանգամանքը գործը քննարկելիս: Այնուհետև, դադարեցրեց արդյոք Զորշ Սթիները հենց այդ ժամանակ՝ հազար ութ հարյուր յոթանասունմեկ թվականի հոկտեմբերի իննին, այսինքն՝ նախքան Քառուփերվողին վաՅսուն հազար դոլարի շեկ կտրվեր, այդ պայմանագրի վավերականությունը, իմանալով կամ ենթադրելով, որ Ֆրենկ Քառոփերվողը գտնվում է շափազանց նեղ հանգամանքներում և հետագայում չի կարողանա ազնվորեն և կանոնավորապես կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Անհրաժեշտ է նաև պարզել, իսկապես էլ միստր Քառոփերվուդը իմանալով, որ ինքը արդեն քաղաքային գանձապետի ու քաղաքի գործակալը չէ, ինչպես նաև իմանալով, որ անվճարումակ է (միստր Սթիները հաստատում է, որ նա ինքն է հայտարարել այդ բանը նրան) և սերտիֆիկատները մարման փոնդում գրավադրելու մտադրություն շոնենալով, որ իբր թե վերջինիս համար էր ձեռք բերել, մտել է միստր Սթիների գրասենյակը, նրա քարտուղարին հայտարարել, թե քաղաքային փոխառության սերտիֆիկատ է ձեռք բերել վաթուն հազար դոլարի, ինդրել իր անունով շեկ դրել, ապա հանդիստ դրել իր գըրպանը ու գնացել, անգամ շմտածելով, թե ինչպես պիտի հատուցի քաղաքին այդ գումարը, իսկ քսանչորս ժամ հատու սնանկացել է, պարտք մնալով քաղաքին, բացի հիշյալ գումարից, ևս հինգ հարյուր հազար դոլար, որ մինչ այդ էր վերցրել գանձարանից: Որո՞նք են այդ գործում ունեցած մեր փաստերը. ի՞նչ էին ասում այստեղ հանդես եկած վը կաները. ի՞նչ ցուցմունք տվեցին Զորշ Սթիները, Ալբերտ Սթայքերը, Զիրարդ ազգային բանկի վարչության նախագահ Դևիտոնը և հենց ինքը՝ միստր Քառոփերվուդը: Ի՞նչ պատկեր է ստացվում այդ գործի բոլոր մանրամասնություններից հետո: Պարոնա՛յք երդվյալ ատենակալներ, դուք լուծելու եք խիստ յուրօրինակ մի հարց:

Նա լոեց, հայացքը ման ածեց երդվյալների վրա, ուղ-

դեց թեզանիքները, և այդ ամենը այն մարդու արտահայտությամբ, որը, վերջապես, գտել է մի ճարպիկ, անորսալի, քաղաքային հարգարժան համայնքի վստահությունը ձեռք բերած երդվալների ոչ պակաս հարգարժան կողեգիշային մատի վրա խաղացնելու ընդունակ հանցագործի հետքը:

Այնուհետև նա շարունակեց.

— Այսպիսով, զենտլմեններ, ինչպես են փաստերը: Դուք ինքներդ լսեցիք, թե բանն ինչպես էր կատարվել: Ողջամիտ մարդիկ եք դուք: Բան չունեմ ես ձեզ բացատրելու երկու մարդ կա ձեր առաջ. մեկը Ֆիլադելֆիա քաղաքի կողմից ընտրված է քաղաքի գանձապետ, երդվել է պահպանել իր քաղաքի շահերը և ամենանպաստավոր կերպով վարել ֆինանսական գործերը. մյուսը մի մարդ է, որին ֆինանսական անկայուն իրադրության ժամանակ դիմել են ու խնդրել լուծելու ֆինանսական մի գժվարին, ես դա չեմ վիճարկում, խնդիր: Նրանք իրար հետ կնքում են ֆինանսական մի գաղտնի համաձայնություն, որի հետևանքն են լինում մի շարք ասլորինի դրսարքներ, և ահա այս երկու տից մեկը, որ այլելի նենդ է, խելացի, երրորդ փողոցի ծակութուկերին առկելի ծանոթ, մյուսին տանում է իր ետևից կապիտալ ներդրումների ձեռնուու, բայց վտանգավոր ուղիով և ի վերջո հասցնում, թեկուցե ոչ կանխամտածված կերպով, սնանկության անդունդին, հասարակական անարդանքին, մերկացումներին և այլն: Այն ժամանակ նա, ով ավելի խոցելի է, այլ կերպ ասած, ում դրությունն ավելի պատասխանատու է, այսինքն՝ Ֆիլադելֆիա քաղաքի գանձապետը, այլևս չի կարող կամ, ասենք, սիրտ չի անում ճամփան շարունակել իր ընկերակցի հետ: Եվ ահա մեր առաջ հասնում է այն պատկերը, որն իր ցուցմունքներում նկարագրեց միստր Սթիները. ֆինանսական խոշոր ընչափաղց ու անգութ գայլը դիշատիչ երախը բացած, բռնուժ է դողդողացող, միամիտ, այդ խաղերից բան չհասկացող գառնուկին ու մոնշում. «Եթե շտամ ինձ այն փողը, որ խնդրում եմ, այսինքն՝ երեք հարյուր հազար դոլարը, որ սաստիկ պետք է ինձ, կդառնաս կայանավոր, քո երեխանե-

րին կնետեն փողոց, քո կինն ու ամբողջ ընտանիքը կրկին կմատնվեն թշվառովթյան, և քեզ համար ոչ ոք մատը մատին չի խփի»։ Ահա, թե ինչ է ասել նրան, ըստ միստր Սթիների ասածի, միստր Քառսիերվուղը։ Ես էլ ամենեն շեմ կասկածում, որ այդ այդպես է եղել։ Միստր Սթեչերը շափազանց նրբին արտահայտովթյուններով, քանի որ խոսքը նրա պաշտպանյալին է վերաբերում, պատկերում է միստր Քառսիերվուղին որպես մի սիրավիր ու պատրաստակամ մարդու, մի շենտրմեն միջնորդի, որին գրեթե ստիպել են հինգ հարյուր հազար դոլար փոխ առնել երկուառեկես տոկոսով, մինչդեռ երրորդ փողոցում ցպահանջ վճարվող փոխառությունների համար ստանում են տասից տասնու հինգ տոկոս, երեսմն՝ ավելի շատ։ Բայց սրան ես արդեն շեմ հավատում։ Ինձ տարօրինակ է թվում, որ այդպիսի հառ ձեզի, սիրավիր, բարյացակամ մարդ, որ զուալում է վճարա վորդ գործակալի համեստ պաշտոն և, բնականաբար, շառ նում է սիրաշահել իրեն վարձողին, կարող էր վաթսուն հառ զարի շեկի պատուավելունից մի երեք օր առաջ գալ միստր Սթիների մոտ ու ասել (միստր Սթիները այդ մասին ցուցա մունք տվեց երդվելով)։ «Եթե դուք անմիջապես, հենց այս սօր էլ, ես երեք հարյուր հազար դոլար շտաք ինձ քաղաքային միջոցներից, ես կսնանկանամ, դուք էլ կձերբակալա վեք։ Դուք չեք խուսափի ուղղիչ բանտից»։ Խորամիտ եղեք նրա խոսքերին։ «Ես կսնանկանամ, դուք էլ կձերբակալա վեք։ Ինձ ոչ ոք ձեռք չի տա, իսկ ձեզ կձերբակալեն։ Ես սոսկ մի գործակալ եմ»։ Զգիտեմ, պատշաճ եմ արդյոք այս խոսքերը հաճելի, մեղմ, ոչ մի հանցանք շունեցող ու բարեկիրթ գործակալին և վարձու միջնորդին, թե՞ լվտիք ամբարտավան ու դաժան հրամայողին, մի մարդու, որը վարժվել է կարգադրովթյուններ անել, հրամայել ու ամեն գնով հաղթել։

Պարոնա՛յք երդվալներ, ես մտադիր շեմ այստեղ պաշտպանել Ձորց Սթիներին։ Իմ կարծիքով, նա պակաս, եթե ոչ ավելի, հանցավոր չէ, քան նրա ինքնագոհ մեղսակիցը։ այս խաբերա ֆինանսիստը, որ գառան մորթի հագած գայն

լի նման եկել է քաղաքային գանձապետի մոտ, որպեսզի
հրի նրան անձամբ հարստանալու անարդար ուղին Բայց
երբ իմ ներկայությամբ միստը Քառվիերվողին անվանում
են Հաճելի, սիրալիր ու պարզամիտ հանձնակատար, ինչ-
պես հիմա արվեց, ես սարսում եմ: Պարո՞ն երդվյալներ,
որպեսզի առեն ինչի մասին ճշշտ պատկերացում կազմեր,
պետք է հիշեք, որ մի տասն-տասներկու տարի առաջ, երբ
Զորշ Սթիները աղքատ մարդ էր և քաղաքական աշխար-
հում նորելով, նրա մոտ եկավ այս ճարպիկ ու խորամանի
բորսայականը և սովորեցրեց նրան օգուտ քաղել քաղաքի
գումարներից: Այն ժամանակ ոչ ոք չէր ճանաշոամ Զորշ
Սթիներին, ինչպես, ի դեպ, նաև Ֆրենկ Քառվիերվողին,
երբ սա առաջին անգամ հանդիպեց քաղաքի նորընտիր
գանձապետին: Օ՛, որքա՞ն պարզ եմ ես տեսնոամ այս մար-
դուն, այս խորամանկ աղվեսին: Ահա նա ներկայացել է
Սթիներին, պերճաշուք, երիտասարդ, թարմ, հիանալի հակ-
նըլված ու ասել. «Վստահեցե՞ք ինձ: Թույլ տվիք գործառ-
նություններ կատարեմ քաղաքային փոխառությունը, քա-
ղաքի դրամներից փոխ տվիք ինձ տարեկան, երկուսուկես
տոկոսով կամ դրանից էլ պակաս»: Մի՞թե ձեզ համար
դժվար է պատկերացնել այդ բանը: Մի՞թե դուք չեք տես-
նոամ նրան այդ դերուամ:

Զորշ Սթիները աղքատ էր, այո՛, այո՛, շատ աղքատ,
քըրք առաջին անգամ ստացավ քաղաքի գանձապետի պաշ-
տոնը: Ոչինչ չուներ նա, բացի ապահովագրության և ան-
շարժ կայք վաճառելու ողորմելի գործակալությունից, որը
բերում էր նրան տարեկան, ասենք, երկուսուկես հազար
դոլար: Նա պետք է ապրեցներ կնոջը և շորս երեխաներին
և նվազագույն քաղաքար իսկ շուներ այն մասին, որը կոչ-
վոամ է պերճանք ու հարմարավետություն: Բայց ահա ներ-
կայանոամ է միստը Քառվիերվոսդը, ճիշտ է, ոչ իր նախա-
ձեռնությամբ, այլ միստը Սթիների հրավերով, մի գործի
համար, որից միստը Սթիներն այն ժամանակ չէր մտածում
որևէ անձնական օգուտ քաղել, և մատուցոամ է նրան իր
փառակոր պլանը: Խաղեր անել քաղաքային փոխառու-

թյամք, որը պետք է հարստացներ երկուախն էլ: Հիմնվելով
այն տպավորության վրա, որ առաջացրեց այստեղ իբրև
վկա համդես եկած Զորշ Սթիները, կարո՞ղ եք դուք արդյոք
ենթադրել, որ նա ընդունակ էր հնարել ու առաջարկել
հարստանալու մի խորամիտ պլան ահա այս շենտյմենին:

Շենոնը մատնացուց արեց Քառվերվուդին:

— Նմա՞ն է արդյոք միստր Սթիները մի մարդու, որն
ընդունակ է այս շենտյմենին որևէ նոր բան սովորեցնել
ֆինանսների կամ բորսայական բարդ կոմբինացիաների
բնագավառում: Բավականաշափ հնարամիտ թվո՞ւմ է նա
ձեզ այդ բոլոր անհավատալի լարախաղացությունները հր-
նարելու համար, որոնց շնորհիվ երկուսն էլ հետաքայուժ
այնքան խոշոր կապիտալներ վաստակեցին: Ըստ այն հայ-
տարարության, որ արել է միստր Քառվերվուդը իր պար-
տատերերին սնանկանալոց հետո, մի քանի շաբաթ առաջ
նա իր կարողությունը հաշվում էր մեկ միլիոն երկու հար-
յուր հիսուն հազար դոլլար, մինչդեռ վերջերս միայն լրա-
ցավ նրա երեսունշորս տարին: Որքա՞ն էր նրա կարողու-
թյունը, եթե նա առաջին անգամ գործարար հարաբերու-
թյուններ սկսեց նախկին գանձապետի հետ: Հիմա ես ձեզ
կասեմ: Մոտավորապես մեկ ամիս առաջ, եթե ես ստանձնե-
ցի իմ պաշտոնը, տեղեկություններ պահանջեցի այս հար-
ցի մասին: Եվ ի՞նչ պարզվեց, պարո՞ն երդվաճմեր. այն
ժամանակ նրա կարողությունը երկու հարյուր հազար դոլ-
լարից քիչ ավելի էր: Երկու հարյուր հազար դոլլար, ուրիշ
ոչի՞նչ: Իմ ձեռքի տակ է «Դան և Ընկ.» բանկիրային գրա-
սենյակից հանված այդ տարվա քաղվածքը: Դրանով գուշ
կարող եք համոզվել, թե ինչպես է աճել այս նորագույն
Կեսարի կարողությունը, որքան է վաստակել նաև վերջին
մի քանի տարում: Բայց թերևս Զորշ Սթիներն էլ պակաս
կարողություն չուներ այն պահին, եթե նա հանվեց իր պաշ-
տոնից և դատի տրվեց որպես վատնող: Որքա՞ն եք դուք
կարծում: Ահա նրա պարտ ու պահանջի քաղվածքը, որ
վերաբերում է այդ ժամանակին: Կարող եք ձեր աշքով հա-
մոզվել, շենտյմեններ: Ուղիղ երկու հարյուր քսան հազար

Էր նրա կարողությունը երեք շաբաթ առաջ, և ես բոլոր հիմքերն ունեմ այդ տեղեկությունները ստուգի համարելու հսկ ձեր կարծիքով ինչո՞ւ միստր Քառվերվուսը հարստացել է այդքան արագ, իսկ միստր Սթիները այդքան դանդաղ: Չէ՞ որ նրանք հանցագործության մեղսակիցներ են: Միստր Սթիները առատորեն փոխատվություն էր անում միստր Քառվերվուսին քաղաքին պատկանած դրամներից տարեկան երկուսում, մինչդեռ երրորդ փողոց ցաղացանց փոխատվության համար երեսն վճարում էին տամնվեց-տասնյոթ տոկոս: Հազիվ թե որևէ մեկը տարակուսի, որ միստր Քառվերվուսը կարողանում էր իր համար առավելագույն շահավետությամբ օգտագործել այդքան էժան իր ձեռքն ընկած փողերը: Կամ շինի՞ թե նաև նման չէ մեծ գործեր անելու ընդունակ մարդու: Դուք տեսաք նրան, երբ նա ցուցմունք էր տալիս: Դուք լսեցիք այդցուցմունքները: Որքա՞ն սիրալիր, վարվեցող էր նա, որքա՞ն անլեղծ ու հոգին մաքուր: Նա կարծեմ միայն այն մասին էր մսոսծում, թե ինչպես ավելի լավ ծառայի Սթիներին ու նյառ բարեկամներին, բայց դրանով հանդերձ վեց տարում վաստակեց մեկ միլիոնից ոչ պակաս, իսկ միստր Սթիներին վաստակել տվեց հարյուր վավերական հազարից ոչ ավելի, որովհետև նրանց համագործակցության սկզբին այն մեկը այնուամենայնիվ քիչումիշ խնայողություն ուներ. մի քանի հազար դոլլար:

Այժմ Շենոնը իր ճառում հասավ գագաթնակետին, այսինքն՝ այն պահին, երբ Քառվերվուսը հոկտեմբերի իննին դուրս գալով Սթիների մոտից, Ալբերտ Սթայերսից կորպեց վաթսուն հազար դոլլարի շեկը: Համենայն դեպս ունկնդիրներին թվում էր, թե Քառվերվուսի նենգ ու հանցագործակցության սկզբին իմաստով, և Քառվերվուսը շատ լավ էր հասկանում, թե ինչ է անում, երբ Սթայերսին ինդրում էր շեկ գրտել իր անվանը:

— Երեակայո՞ւմ եք, — ասաց նա, շրջվելով, դեպի Քառ-

փերվուղը ու շեշտակի նայելով նրան, որը միանգամայն ան-
խոռվ և առանց շփոթության նշույլի հանդիպեց նրա հա-
յացքին:— Երեակայո՞ւմ եք, ինչ տուրումովիյում ունի այս
մարդը. նենգության ասպարեզում նա չի զիջում Մաքիավե-
լում: Նա գիտեր, որ անխուսափելիորեն սնանկանալու է:
Երկու օր անդուլ ճիգեր թափելուց, երկու օր հոահաւատորեն
փորձելուց հետո կանխելու աղետը, որը կզրկեր նրան իր
մեքենայությունները շարունակելու հնարավորությունից, նո
համկացավ, որ փրկության այլ աղբյուր չի մնացել, բայց
վերջինից, այսինքն՝ քաղաքային գանձարանից, համկացավ,
որ այդտեղ էլ, եթե սատար չգտնի, ապա սնանկությունն
անխուսափելի է: Առանց այդ էլ քաղաքի դրամարկղին
պարտք էր հինդ հարցուր հազար դոլլար և, օգտվելով քա-
ղաքի գանձապետից, որպես իր անխոս գործիքից, այնպես
իմանց նրան, որ Սթիները սարսափահար եղավ այդ հակա-
յական պարտքից: Եվ ի՞նչ, մի՞թե դա կասեցրեց միւտը
Քառափերվուղին: Բնա՛վ:

Ծենոնը մատը շարագուշակ թափ տվեց Քառափերվու-
ղի վրա, և սա զդայնացած շրջվեց:

— Ամե՞ն գնով ուզում է դուր գալ, — շշնչաց Քառ-
փերվուղը իր փաստաբանի ականջին:— Անհրաժեշտ է, որ
այդ բանն ասեք երդվյալներին:

— Ուրախովթյամբ կասեի, — դառն քմծիծաղով հառ
մածայնեց Սթեցերը, — բայց այլևս խոսք չեն տա ի՞նձ:

— Մտածեցեք, խնդրեմ, — շարունակեց որոտալ Շե-
նոնը, նորից շրջվելով գեպի երդվյալները, — ի՞նչ անսա՞ռ
ման, իսկապես գայլի ընշաքաղցություն պետք է ունենա-
մարդը, որպեսզի հայտարարի, թե իբր նոր է ձեռք բերել
վախտուն հազար դոլլարի սերտիֆիկատ և ցանկանում է
անհապաղ ստանալ իրեն հասնող այդ գումարի շեկը: Իսկ
կապես էլ ձե՞ռք է բերել նա այդ սերտիֆիկատները. ի՞նչ
իմանանք: Աշխարհում չկա մի մարդ, որ կարողանա գլուխ
հանել միստր Քառափերվուղի հաշվետվության աներևակա-
յելի լաբիրինթոսից: Սակայն լավագույն գեպօտմ, այսին-
քըն՝ եթե նույնիսկ ձեռք է բերել, ինչպես հավաստում է

նա, այդ սերտիփիկատները, ապա քաղաքը դրանից ո՞չ մի օգուստ չի ունեցել, որովհետև միստր Քառվիերվուսդը չի էլ մտածել հանձնել դրանք մարման Փոնդին, որտեղ պետք է դտնվեին: Նրա պաշտպանն ու հենց ինքը ասում են, որ նա պարտավոր չէր հանձնել դա հաջորդ ամսվա մեկից առաջ, թեև օրենքն ասում է, որ հանձնումը պետք է տեղի ունենա անմիջապես, և մեղադրյալն այդ գիտե: Նրա պաշտպանն ու հենց ինքը հավաստում են, որ իբր չէր իմանում, թե սնանկություն է սպասում իրեն: Այնպես որ այդ սերտիփիկատների համար անհանգստանարու կարիք չկար: Զեմ կարծում, որ ձեզնից որևէ մեկը, զենտրմեննե՛ր, հավատաց դրան: Պատահե՞լ է արդյոք, որ միստր Քառվիերվուսդը իր ֆինանսական ամբողջ գործունեովթյան ընթացքում այդպես հապշտապ ուղենա չեկ ստանալ: Հայտնի՞ են մեզ արդյոք նմանօրինակ դեպքեր նրա հանցապարտ գործարքների պատմությունից: Դուք շատ լավ գիտեք, որ երբեք այդպիսի բան չի եղիլ: Կյանքում նա երբեք չի եկել չեկ ստանալու: Բայց այս անդամ բարվոք է համարել ստանալ սեփական ձեռքով: Ո՞րն է զրո սլառճառը, որտեղից հանկարծ առաջացավ այդ հապճեղությունը: Նրա խոսքից երեսում է, որ մի քանի ժամկա ուղացումը ոչ մի գեր չի կատարել: Նա կարող էր իր զրասենյակի ծառայողներից մեկնումեկին ուղարկել չեկը ստանալու: Միշտ էլ այդպես էր արվում: Խակ ինչո՞ւ հանկարծ ամեն ինչ փոխվեց: Ես ձեզ հիմա կասեմ ինչու:— Ծենոնը առավելագույն շափով ձայնը բարձրացրեց:— Ես ձեզ կասեմ ինչու: Նա գիտեր, որ կործանված է: Նա գիտեր, որ փրկվելու վերջին քիչ թե շատ օրինական ձանապարհը, այսինքն՝ Զորշ Սթիների օգնությունը, փակված է իր առջև: Նա դիտեր, որ ապնիս ձանապարհով, բացահայտ համաձայնության միշոցով ինքը Ֆիլադելֆիա քաղաքի գանձարանից այլևս ոչ մի գոլլար չի ստանա: Նու գիտեր, որ եթե գանձապետի զրասենյակից գուրս գտ առանց չեկի, հետո էլ որևէ մեկի ուղարկի այն բերելու, ապա քաղաքի գանձապետը գրիսի կընկնի, կնախազգուշացընի իր ծառայողներին, և առն ժամանակ ինքը այդ փողը

Հի տեսնի: Այս թե ինչից է առաջացել այդ շտապողական նությունը: Հիմա, սղարո՞ն երդվալներ, դուք դիտեք իսկուժյունը:

Այսպիսով, ես մոտենում եմ իմ մեղադրական ճառի վերջավորությանը այս քաղաքավարի, ազնիվ ու օրինավոր քաղաքացու վերաբերյալ, որի մասին դուք, ինչպես ասում է նրա սղաշտպան միստր Սթեգերը, չեք կարող մեղադրական վճիռ արձակել՝ առանց աղաղակող անարդարություն գործելու ես կուզեի միայն ավելացնել, որ ձեզ համարում եմ ողջամիտ ու խելացի մարդիկ, որոնց նմաններին հանդիպում ենք ամեն մի ասպարեզում, այլ կերպ ասսած, դուք գործնական ու ազնիվ ամերիկացիներ եք: Ուրեմն,— Եենոնի ձայնը նորից դարձավ շողում,— ինձ մնում է միայն հետկյալն ասել. Եթե այն ամենից հետո, ինչ դուք լսեցիք ու տեսաք այստեղ, շարունակեք կարծել, որ Ֆրենկ Քառշակերվուղը կարգին ու ազնիվ մարդ է, որ նա կանխամտածված ու շարամտորեն վաթսուն հազար դոլար չի գողացնչի ֆիլադելֆիայի քաղաքային դանձարանից, որ նա հիրավի քաղաքային փոխառության սերտիֆիկատներ է ձեռք բերել ու մտադրություն ունեցել, ինչպես ինքն է հավաստում, հանձնել մարման ֆոնդին, այն ժամանակ ձեզ մնում է միայն մի բան. ազատ արձակել նրան, այն էլ շուտ, որպեսզի այսօր իսկ կարողանա վերադառնալ երրորդ փողոց ու կարգի բերի իր ֆինանսական խիստ խճճված գործերը: Այդ դեպքում դուք, որպես ազնիվ ու խղճամիտ մարդիկ, պարտավոր եք անմիջապես ազատ արձակել նրան ու նորից ընդունել մեր հասարակության գիրկը, որպեսզի որևէ շափով մեղմացնեք այն հանիրավի վիրավորանքը, որը, ինչպես ասում է իմ ընդդիմախոս միստր Սթեգերը, հասցվել է նրան: Եթե այդպես է մեր համոզմունքը, դուք պետք է իսկույն եեթ անմեղ հոչակեք նրան: Թո՛ղ Զորջ Սթիների վիճակը շանհանգտացնի ձեզ: Այդ մարդու հանցանքը հաստատված է իր ցուցմունքներով: Նա մեղավոր է ճանաշել իրեն: Առանց հետագա որևէ քննության՝ շուտով կառձակվի նրա դատավճիռը: Բայց այս մարդը՝ Ֆրենկ Ալզեր-

նոն Քառուփերվուղը, հավակնում է, թե ազնիվ է ու պարկեցտ: Նա հաստատում է, թե չի էլ կասկածել իրեն սպառնացիքի, հարկադրանքի ու ահաբեկման ոչ թե իր կործանումը կանխազգալու, այլ այն պատճառով, որ չէր ուզում ժամավաճառ լինել մի այլ տեղ աշակցություն որոնելու համար: Շատ եք հավանում սա, չէ: Կամ գուցե գուք հավատացի՞ք, որ նա ձեռք է բերել քաղաքացին փոխառության պարտատոմս վաթսուն հազար դոլլար գումարի և իւկապես էլ այդ դրամը հասնում էր իրեն: Եթե այդպես է, հապա ինչո՞ւ չի հանձնել դրանք մարման ֆոնդին: Մինչեւ այսօր էլ դրանք այնտեղ չեն, ինչպես որ չի գտնվում վաթսուն հազար դոլլարը: Ո՞ւմն է, ուրեմն, տրվել այդ փողը: Ջիշարդ ազգային բանկին, որտեղից միստր Քառուփերվուղը հարյուր հազար դոլլար էր վերցրել: Հիշյալ բանկը ստացե՞լ է այդ վաթսուն հազարը, գումարած ևս քառասուն հազար այլ շեկերով ու սպառտատոմսերով: Անշուշտ, ստացել է: Իսկ ինչո՞ւ Մի՞թե ձեր մտքով չի անցնեմ, որ Ջիրարդ ազգին բանկի վարչությունը հիմա երախտապարտ կլինի միստր Քառուփերվուղին այն վերջին փոքր ծառացության համար, որ մատուցեց նա նրան մնանկանալուց առաջ: Ջե՞ք կարծում արդյոք, որ բանկի վարչության նախագահ միստր Դևիտոնը, որը, ինչպես լսեցիք, ամեն կերպ պաշտպանում էր այստեղ միստր Քառուփերվուղին, թերևս (ես, իհարկե, չեմ պնդում) հենց դրա համար էլ բարյացակայ է միստր Քառուփերվուղի հանդեպ: Միանգամայն հնարավոր է: Իսկ, ընդհանրապես, ինքներդ դատեցեք: Այսպես թե այնպես, զենումնեններ, Դևիտոնը միստր Քառուփերվուղին անվանում է ազնիվ ու կարդին մարդ, նույն է ասում նրա մասին պաշտպանը՝ միստր Սթեղերը: Դուք լսեցիք բոլոր ցուցմունքները: Հիմա մնում է միայն մի բան, որ դուք մտածեք դրանց մասին ու կը պատեհեք: Եթե դուք ուզում եք այս մարդուն ազատ արձակել, ապա ձեր գործն է: (Նա ձեռքը հոգնած թափ տվեց): Քատավորները դուք եք: Ես այդպիսի բան չեմ անի: Բայց ես վերջինիրազ լոկ իրավա-

բան եմ և ծանր աշխատանքով եմ վաստակում իմ հացը։
Ես իմ համոզմունքներն ունեմ։ Դուք կարող եք ունենալ
այլ համոզմունքներ։ Այդ ձեր գործն է։ (Շենոնը դարձ-
յալ ձեռքը կիսաարհամարհական թափ տվեց)։ Ես ավար-
տեցի, չենտլմեններ։ Մնում է միայն, որ շնորհակալ լինեմ
ձեզ ուշադրության համար։ Հարցի լուծումը թողնում եմ
ձեզ։

Նա վեհաշուր շրջվեց, և երդվյալները խլոտացին, խլօր-
տացին նաև դաշիճը լցրած անգործ հանդիսատեսները։
Դատավոր Պեյդերսոնը թեթևացած շունչ քաշեց։ Այդ պահ-
հին արդեն բոլորովին մթնեց, և դաշիճում վառ լույս ար-
ձակեցին գաղել լամպերը։ Դրսում ձյուն էր գալիս։ Դատավորը
հոգնած շարժումով թղթերն էր թերթում և հանդիսավոր տեսք
տալով իրեն, դիմեց երդվյալներին ավանդական ողջերթի
խոսքով, որից հետո նրանք իրար ետևից շարժվեցին դեպի
խորհրդակցության սենյակը։

Քառուիերվուդը նայեց հորը, որ շտապ գալիս էր դեպի
իրեն արագ դատարկվող դաշիճով։

— Ծուտով ամեն ինչ կպարզվի, — ասաց նա։

— Այո, — հոգնած ձայնով պատասխանեց հայր Քառու-
իերվուդը։ Հուսանք, որ ամեն ինչ բարեհաջող կվերջա-
նա։ Մի քանի բոպե առաջ Բաթլերին տեսա այստեղ։

— Տես է, — զարմացավ Ֆրենկը, որի վրա այդ լուրը
չէր կարող տպավորություն շգործել։

— Այո, — հաստատեց հայրը։ Հենց նոր դուրս եկավ։

Ուրեմն, մտածեց Քառուիերվուդը, Բաթլերն այնքան է
շահագրգումած իմ հակատագործ, որ նույնիսկ չի ծովացել
դատարան գալու։ Շենոնը անխոս գործիք է նրա ձեռքին։
Պեյդերսոնը որոշ չափով նրա դրածոն է։ Սերունոն կարելի
էր հաղթել իր դստերը վերաբերող գործում, բայց հազիվ
թե հաջողվի հաղթել արտեղ, թերեւ միայն այն դեպքում,
եթե երդվյալները վճռականորեն իր կողմն անցնեն։ Իսկ
եթե սրանք հանցավոր ճանաչեն իրեն, ապա Բաթլերի դրա-
ծո Պեյդերսոնը, անշուշտ, առիթը բաց չի թողնի առավե-
լագույն բանտարկության դատապարտելու համար։ Հեղու

ի ասել՝ Հնգամյա՞ կալանք։ Սարսուռ անցավ նրա մարմնով հենց միայն գործի այսպիսի ելքի մասին մտածելիս։ Բայց արժե՞ արդյոք անհանգստանալ այն բանից, որը դեռ չի եղել։

Սթեջերը մոտեցավ նրան ու հայտնեց, որ Քառիկեր-վոսդին կալանքից զերծ թողնելու համար մուծված գրավականի ժամկետը վերջացավ այն րոպեին, երբ երդվյալները գնացին խորհրդակցության սենյակը, և այժմ նա փաստացի գտնվում է շերիֆի՝ ոմն Աղլեյ Զեսպերսի (ի դեպ, երկուսին էլ ծանոթ) հակողության ներքո։ Եթե երդվյալները շարդարացնեն Ֆրենկին, ավելացրեց Սթեջերը, ապա նա կմնա շերիֆի հակողության ներքո, քանի դեռ դատավճիռը չի բողոքարկված։

— Դրա համար պետք կլինի առնվազն հինգ օր, Ֆրենկ, — ասաց Սթեջերը, — բայց Զեսպերսը լավ տղա է, իրեն կարգին կպահի։ Հասկանալի է, որ եթե մեր բախտը բանի, դուք նրան այցելելու կարիք չեք ունենա։ Իսկ հիմա Հարկ կլինի, որ դուք հետևեք դատական կատարածուին։ Բայց պետք է կարծել, որ առմեն ինչ բարեհաջող կմերջանա, և մենք կլիւրադառնանք տուն։ Օ՛, ինչպես եմ ուզում շահել այս գործը, — ավելացրեց նա։ — Հրաշալի՛ բան կլինի, եթե մենք երկուսս կարողանանք ծիծաղել նրանց վրա։ Իմ կարծիքով, զգվելի վարվեցին ձեզ հետ և, ըստ իս, ես բավականին բացարեցի դա երդվյալներին։ Իսկ եթե մեղադրական դատավճիռը արձակեն, ես տասնյակ պատճառներ կտանեմ միջնորդելու, որ գործը վերանայվի։

Նա վեր կացավ և Քառիկերվոսդի ու նրա հոր հետ առանց շտապելու հետեւց շերիֆի օգնականներից մեկի՝ Էդդի Զանդերս անունով մի կարծահասակ մարդու, որին հանձնարարված էր հակողության տակ առնել կրտսեր Քառիկերվոսդին։ Նրանք մտան այսպես կոչված «պահականոցը», որ շենքի խորքում էր և որտեղ մեղադրվողները սպասում էին, որ երդվյալները վերադառնան խորհրդակցության սենյակից։ Դա մի բարձր, քառանկյունի ու մոայլ շենք էր՝ պատուհանը դեպի Զեսթնաթ-սթրիթը, իսկ դուռն էլ չգիտես

ուր էր բացվում: Առաստաղը մրոտ էր, հատակը քայլերից մաշված. պատերի երկայնքին, որոնց վրա չկար ո՞չ մի նկար և ո՞չ մի զարդ, դրված էին փայտե նստարաններ: Առաստաղի կենարոնից իջնում էր գազի խողովակը երկու ճյուղ ծայրին, Ամբողջ շենքը ներծծված էր նեխած ու կծու հոտով, որը խոսքից ափելի հատակ էր պատմում կյանքի այն թափոնքների ու բեկորների մասին, որոնք, հանցավոր թե անմեղ, ժամանակ առ ժամանակ ստիպված էին լինում նստել այդտեղ ու համբերովթյամբ սպասել իրենց բախտի վճռին:

Քառուիերվուղը սաստիկ զգվանք զգաց, բայց այնքան հավասարակշռված մարդ էր և այնպես էր տիրապետում իրեն, որ ցուց շուրջն զա: Մանկությունից արդեն նա աշքի էր ընկնում բացառիկ մաքրասիրությամբ և միշտ մանրակրկիտությամբ, անգամ բծախնդրությամբ հետևում էր իրեն: Իսկ հիմա ստիպված եղավ բախվել կյանքի այն կողմին, որը ակամա տարսուու պատճառեց նրան: Սթեղերը, որ քայլ առ քայլ հետևում էր նրան, ջանում էր մի քան բացատրել, հարթել անախորժ տպավորությունը, գոտեպնդել:

— Այնքան էլ հարմարավետ սենյակ չէ, — ասաց նա, — բայց մի քիչ համբերեցեք: Կարծում եմ երդվալները երկար շեն խորհրդակցի:

— Հնարավոր է, բայց ես դրանից քիչ օգուտ կունենամ, — պատասխանեց Քառուիերվուղը, մոտենալով պատռահնին: Մի փոքր լուելուց հետո նա ավելացրեց, — ինչ լինելու է, կինի:

Եեր Քառուիերվուղը մոայլվեց: Իսկ եթե Ֆրենկը հարկադրված լինի երկարատե բանտարկություն կրե՛ւ, այսինքըն՝ երկար ժամանակ մնալ այս մթնոլորտո՞ւմ: Աստվածիմ: Նա ցնցվեց և երկար տարիներից ի վեր առաջին անգամ մտովի աղոթք ասաց:

Այդ միջոցին խորհրդակցության սենյակում՝ իսկական՝ վիճաբանություն էր տեղի ունենում. այն բոլոր հարցերը, որոնք գատական նիստի ժամանակ ամեն մեկը մտմտում էր իր համար, այժմ քննարկվում էին բարձրածայն։

Խիստ հետաքրքրական է հետևել, թե ինչպես երդվյալները տատանվում և ծանր ու թեթև են անում բոլոր «թեր» և «դեմ»-երը այսպիսի գործեր քննելիս. հետաքրքրական է այն հոգեբանական տարտամ պրոցեսը, որի հետևանքով հանգում են այս կամ այն վճռին։ Այսպես կոչված «ճշմարտությունը» լավագույն դեպքում անդամ խիստ մշուշային մի բան է, որովհետև փաստերը, գործին խիստ ազնվորեն վերաբերվելիս էլ, հաճախ ենթարկվում են տարբեր ու հեղհեղովկ մեկնաբանման։ Այսօր երդվյալների առաջ ծառացած էր առանձնապես բարդ մի խնդիր, և նրանք քիչ շշարշարվեցին այն բաղմակողմանիորեն քննելու համար։

Երդվյալների դատարանը ոչ այնքան համարում է որոշ եղբակացությունների, որքան որոշակի լինուների և հանգում է շատ յուրօրինակ ձևով։ Պատահում է, որ առանձին երդվյալներ դեռ ոչինչ չեն կարողացել պարզել, իսկ կուեղիան՝ ամբողջովին վերցրած, արտեն վճիռ է արձակում։ Այստեղ, ինչպես գիտեն բոլոր իրավաբանները, որոշ դեր է կատարում ժամանակը։ Երդվյալները միասին կամ առանձին-առանձին տրտնջում են, որ ավելորդ ժամանակ շատ են կորցնում գործը քննարկելիս։ Մեծ հաճույք չէ ժամերով շարչարմնել ինչ-որ հարց լուծելու համար, բացի այնպիսի դեպքից, երբ դա այս կամ այն պատճառով չափաղանց ուշադրավ է լինուած։ Խրթին ու մուկթ սիլողիվմները վերջիվերջը հոգնեցնուել են ու վհատություն առաջացնում։ Տաղտուկ են արձակում անդամ խորհրդակցության սենյակի պատերը։

Մյուս կողմից էլ բննության ընթացքում առաջացող տարակարծիքները չեն կարող շղայնացնել երդվյալներին։ Մարդկային բանականությանը հատուկ է ստեղծագործական նախասկիզբը, և ամեն մի լուծված հարց տանջալի է նրա

Համար: Կյանքը առողջ ընկալող մարդուն նա հանգիստ չի տալիս, ինչպես ամեն մի թերավարություն գործ: Երդվյալները խորհրդակցության սենյակում նման են բյուրեղի ատոմներին, որոնց վրա այնքան շատ միտք են անում գիտնական-ներն ու փիլիսոփաները. Նրանք ձգտում են կազմել միաս-նական ու վայելչակերտ մի ամբողջովություն, անքակտելի ճա-կատ, որովհետեւ այն ժամանակ միայն դրանք կդառնան այն, ինչ պարտականության ու պարկեշտության զգացմուն-քից դրված, պարտավորվել են լինել, այսինքն՝ մի տեսակ միասնական, խոհական դատավոր: Միասնականության այդ նույն ձգտումը դրսեորվում է նաև բնության տարբեր երե-վույթներում. բերածո անտառի հոսանքի մեջ Սարգասի ծո-վում¹, հանդարտ ջրի մակերեսի վրա եղած օդի պղպջակների երկրաշափորեն ճիշտ բաշխման մեջ, ճարտարապետական այն ապահովությունը կառուցներում, որ անգիտակցաբար կեր-տում են որոշ միջամտներ, ատոմների միացության մեջ, որոն-ցից հյուսվում է տիեզերքի սուբստանցին ու կառուցվածքը: Երբեմն թվում է, թե կյանքի ֆիզիկական սուբստանցը՝ այն արտաքին ձևը, որ մեր աշխն ընդունում է որպես իրականու-թյուն, հագեցած է անսահման իմաստությամբ, այնպիսի իմաստությամբ, որը ձգտում է կարգ հաստատել, ավելին, ինքն էլ հենց այդ կարգն է: Այսպես կոչվող մեր էության, այսպես կոչված մեր բանականության ատոմները գիտեն ուր շարժվեն և ինչ անեն: Նրանք ինքնին մարմնավորում են մեզնից կախում չունեցող կարգը, իմաստությունը, կամքը: Նրանք ստեղծում են, կառուցում, գոյցություն ունենում կար-ծես մեզնից դուրս: Այդպես էլ աշխատում է երդվյալների եւ-թագիտակցությունը: Բայց այս դեպքում պետք է ճիշել նաև մի անձի մի ուրիշի վրա յուրահատուկ հիպնոզային ազդա-ցություն կատարելը, մարդկանց տարբեր տիպերի միմյանց

¹ Առանձին օվկիանոսի այն մասը, որ գտնվում է Անտիլյան կղզինե-րի հյուսիս-արևելքում և իր անունը ստացել է սարգաս կոչվող ծովային բույսերից, որոնց մեջ ապրող բազմապիսի կենդանիները սկսում են նման-վել այդ ջրիմաւունքն և ուրուն երանգ տալ: Ծ. Թ.

Վրա գործում զանազան ազդեցությունը, որ տեղի է ունենում մինչև այն պահը, երբ կկատարվի իսկական միաձուլումը բառի վաղնջական քիմիական խմաստով։ Խորհրդակցության սենյակում երկու-երեք մարդու հստակ արտահայտած միտքը կամ հաստատակամությունը կարող են գերիշխել մնացած բոլորին ու հաղթահարել մեծամասնության փաստարկումներն ու դիմադրությունը։ Այն մարդը, որ կարող է պաշտպանել վիովին որոշակիացած իր կարծիքը, կարող է դառնալ կամ անողնաշար զանգվածի հաղթական ղեկավարը, կամ թե մի թիրախ, որն անողոքաբար ծակծը վում է հետևողաբանների կենտրոնացած կրակից։ Մարդիկ արհամարհում են բոլթ, չպատճառաբանված դիմադրությունը։ Աշխարհում ո՛չ մի տեղ մարդուց այնպես չեն սպասում հաստատապես հիմնավորված կարծիք, ինչպես դատարանի խորհրդակցության սենյակում, եթե, ի՞նչորևէ, ցանկանում են զսել այդ կարծիքը։ Թիշ է ասել. «Ես համաձայն չեմ»։ Մենք գիտենք դեպքեր, երբ երդվաբները բորբոքված վիճակում հասել են տուրութմափոցի։ Խորհրդակցության սենյակի նեղ պատերում հաճախ ծնունդ են առել թշնամություններ, որոնք հետո տարիներ են տևել։ Զափից ավելի համառ երդվալները բոյկոտի են ենթարկվել դատարանի հետ ոչ մի առնչություն չունեցող գործերում, միայն փաստարկներով չհաստատվող իրենց համառության կամ «հատուկ կարծիք» ունենալու համար։

Իսկ այստեղ, երբ ամենքն էլ համաձայնեցին, որ Քառվիերվուղը անպարհան արժանի է պատժի, սկսվեցին վեճեր. պիետք է արդյոք հանցավոր ճանաշել նրան ըստ մեղադրանքի չորս կետերի էլ։ Ի վիճակի չինելով կարգին հասու լինել մեղադրանքի կետերի տարբերությանը, երդվալները ուզում էին զիշողական որոշում կայացնել. «Մեղավոր է չորս կետով էլ, բայց ներողամտության է արժանի»։ Սակայն անմիջապես էլ հրաժարվեցին վերջին ձևակերպումից. կամ Քառակերպուղը հանցավոր է, կամ չէ։ Դատավորը իրենցնց ոչ պակաս, եթե ոչ ավելի, լավ է հասկանում «մեղմացուցիչ հանդամանքները»։ Արժե՞ արդյոք կապել նրա ձեռքերը, մա-

նավանդ որ այդպիսի ձեւակերպումները սովորաբար մնում ան անուշադիր և միայն երդվյալների գրաված դիրքի խախուտությունն են առաջացուցում:

Այդպիսով գիշերը, տասներկուսից տասը րոպե անց, երդվյալները, վերջապես, պատրաստ էին հրապարակել իրենց որոշումը, ոստի և այդ մասին անմիջապես հայտնեցին դատավոր Պետքերսոնին, որ ամեննին չեղ հեռացել դատարանի սրահից՝ մասսամբ այդ գործի նկատմամբ ունեցած շահագրգոռությունից, մասսամբ էլ մոտիկ ապրելու պատճառով։ Կատարածումն ուղարկեցին կանչելու Քառուփերվուդին ու Սթեղերին։ Դատարանի սրահը ամբողջովին լուսավորված էր։ Կատարածումն, քարտուղարն ու սղագիրը իրենց տեղումն էին։ Երդվյալները իրար ետևից դուրս եկան խորհրդակցության սենյակից, իսկ Քառուփերվուդն ու Սթեղերը տեղ դրավեցին այն դռնակի մոտ, որը տանում էր սրահի պատվառով անջատված մասը։ մեղադրյալներն այժմեղ պետք է լսեին դատավճիրը և այն առենք, ինչ ուսումն էր ասել նրանց դատավորը։ Մեր Քառուփերվուդը, խիստ հուզված, նստած էր ոլորու մոտ։

Կյանքում առաջին անգամ Քառուփերվուդին թվաց, որ այդ ամենը թե՛ր թե երազում է կատարվում։ Մի՞թե ինքը այն նույն ֆրենի Քառուփերվուդն է, որը երկու ամիս առաջ հարուստ, քարտավաճող ու ինքնավստահ մարդ էր։ Մի՞թե հիմա դեկտեմբերի հինգը կամ վեցն է միայն (կեսիցերոն անցել էր)։ Ինչո՞ւ այդքան երկար էին խորհրդակցում երդվյալները։ Այդ ի՞նչ կարող է նշանակել։ Ահա նրանք առդեն սրահում են։ Կանգնել ու հանդիսավոր նայում են իրենց առաջ, ահա և դատավոր Պետքերսոնն է բարձրանում ամբիոնը, նրա գանգուր մագիստրը ծիծաղելիորեն ցցվել են։ Կատարածում ամենքին կարգի է հրավիրում։ Դատավորը նայում է ոչ թե Քառուփերվուդին (անքաղաքավարի բան կլիներ), այլ երդվյալ ատենակալներին, որոնք իրենց հերթին նայում են նրան։ Երբ քարտուղարը հարցրեց. «Պարո՞ն երդվյալ ատենակալներ, միաձայն որոշման հանգեցի՞ք արդյոք», ավագը պատասխանեց. «Այո»։

- Մեղադրյալին հանցավո՞ր եք համարում, թե՞ անմեղ:
— Մեղադրյալին համարում ենք հանցավոր, մեղադրական ակտին միանգամայն համապատասխան:

Ինչպես հանգեցին նրանք այդպիսի որոշման: Մի՞թե ամբողջ պատճառն այն է, որ ինքը վերցրել է իրեն շհասնող վաթսուն հազար դոլլարի շեկը: Բայց չէ որ ըստ էովթյան նա այդ դրամն ստանալու իրավունքն ուներ: Աստված իմ, ի՞նչ նշանակություն ուներ վաթսուն հազար դոլլարը, եթե հաշվի առնենք այն գումարները, որ շրջանառության մեջ էին դրել ինքն ու Սթիները: Ո՛չ մի նշանակություն: Թվուամ էր, թե շընչին մի գումար է, մինչդեռ հենց այդ էլ, այդ մանր, այդ շնչին շեկն էլ գուրս եկավ զրի երես ու վերածվեց թշնամության սարի, քարե պատի՝ հետագա բարգավաճման ուղին իր առաջ փակող բանտի պատին: Անլրմբոնելի՞ է: Քառիկերվուդը նայեց շորոջը: Ի՞նչ հսկայական, մերկ ու ցուրտ սրահ: Եվ այնուամենայնիվ ինքը առաջվա պես Ֆրենկ Քառսիերվուդն է: Զի կարելի թուզ տակ իրեն համելու այրպիսի անհեթեթ մտքերի: Տակամին շի վերջացել իր պայքարը սեփական աղատության, իրավունքների և իր անունը վերականգնելու համար: Աստված տեսնում է, որ դա դեռ շի սկսվել Հինգ օր հետո երաշխավորությամբ բաց կթողնեն իրեն: Սթեղերը բեկման գանգատ կտա: Ինքը ազատ կլինի և ուղիղ երկու ամիս ժամանակ կունենա պայքարը շարունակելու համար: Դեռ պարտված չէ ինքը և կպաշտպանի իրեն: Երդվյալները սխալվել են: Քարձր ատյանի դատարանը կհաստատի այդ հանգամանքը, կփոխի դրանց վճիռը. ո՛չ մի կասկած չկա: Քառսիերվուդը շրջվեց դեպի Սթեղերը, որն այդ միջոցին դատարանի քարտուղարից պահանջում էր մեկ առ մեկ հարցնել երդվյալ ատենակալներին. գուցե դրանցից թելուազ մեկը կխոստովանի, որ տեղի է տվել հորդորներին և քմեարկել հակառակ իր կամքին:

- Լիովին համաձայն եք արդյոք դուք արձակված որոշմանը, — լսեց Ֆրենկը համար առաջին երդվյալին՝ Ֆիպ Մոլթրիին ուղղված հարցը:

— Այո՛, — Հանդիսանվորապես հաստատեց այս արժանահարդ քաղաքացին:

— Լիովին համաձա՞յն եք արդյոք... — քարտուղարը մատով բռթեց Սայմոն Գլամբերդին:

— Այո՛, պարո՞ն:

— Լիովին համաձա՞յն եք արդյոք արձակված որոշմանը, — հարցրեց նա Ֆլեշեր Նորթոնին:

— Այո՛:

Այսպես հարցրին բոլոր երդվյալներին: Սրանք պատահած խանում էին հաստատ ու համոզված, հակառակ Սթեցերի տարտամ հույսին, որ նրանցից մեկնումեկը հանկարծ միտքը կփոխի: Դատավորը շնորհակալություն հայտնեց երդվյալներին, ավելացնելով, որ այդքան երկարատև նիստից հետո նրանք կարող են ազատ համարել իրենց ամբողջ սեսիայի ընթացքում: Հիմա Սթեցերին մնում էր միայն մի բան. խընդուրել դատավոր Պերեցոսոնին հետաձգել դատավճռի արձակումը, մինչև որ որոշակիանա գործը վերանայելու վերաբերյալ նահանգի գերագույն դատարանին արվելիք միջնորդության վիճակը:

Այն միջոցին, եթե Սթեցերը ըստ բոլոր կանոնների շարադրում էր իր միջնորդությունը դատավորին, սա անսքող հետաքրքրությամբ Քառափերվուսդին էր զնուած. ու քանի որ այդ գործը խիստ լուրջ էր, և գերագույն դատարանը կարող էր կատածել վճռի ճշտությանը, նա շտապեց համաձայնել փաստաբանի փաստարկներին: Այդ արարողությունից հետո Քառափերվուսդին մնում էր միայն, շնայած ուշ ժամին, պահակների հակողությամբ ուղևորվել շրջանային բանտը, որտեղ մնալու էր առնվազն հինգ օր ու թերես ավելի:

Մոյամենսինգի բանտի շենքը, որ տեղավորված էր Տասներորդ և Ռիդ փողոցների անկյունում, արտաքոսաւանախորժ տպավորություն չէր գործում: Նրա կենտրոնական մասում գտնվում էին բանտի սենյակները և շերիֆի կամ բանտի կառավարչության մի այլ պաշտոնատար անձի նըսակալայրը. եռահարկի բարձրություն, ատամնավոր քիվ և

կլոր, նմանապես ատամնալոր ու բարձրությամբ շենքի մեկ երրորդին հավասար աշտարակ ունեցող այդ կենտրոնական մասին կից էին ատամնավոր փոքրիկ աշտարակներով պսակված երկհարկանի թևերը։ Ամբողջ կառուցվածքը շատ էր հեշտում միշնադարյան դյուակ, ուստի և ամերիկացու տեսակետից բավական նման էր բանտի։ Շենքի ճակատը, որի միջնամասը երեսունհինգ ոտնաշափից կողմնային մասերն էլ քսանհինգ ոտնաշափից ավելի բարձր չէին լինի, փողոցից հարյուր ոտնաշափի խոր էր ընկած։ Երկու թևերից սկիզբ էր առնում ամբողջ թաղամասը շրջափակող քսան ոտնաշափ բարձրությամբ մի քարաշեն պատ։ Այդ շենքը մուայլ տպավորություն չէր գործում նաև այն պատճառով, որ նրա վենտրոնական մասում լոսամուտները լայն էին, առանց վանդակաճաղղի, իսկ վերևի երկու հարկերը նույնիմկ վարագույր ունեին, որը ամբողջ ճակատին տալիս էր բնակելի և ավելի շուտ հաճելի տեսք։ Աջ թևում էր գտնվում այսպես կոտշված շրջանային բանտը կարճատեն բանտարկության դատապարտված անձանց համար։ Զախ մասում հետաքննության ենթարկվուների բանտն էր։ Հարթ ու բաց գույնի քարից շինված այդ բանտ-դզյակը ներսից սակավ էր լուսավորված, և այդ բքաշունչ գիշերը տարօրինակ, ֆանտաստիկ ու համարյա գերբնական տպավորություն էր գործում։

Այդ գիշերը, երբ Քառուփերվուդին ուղարկեցին կալանքի, ցուրտ ու քամի էր։ Գետնամած հողմ էր փշոսմ։ Հորից ու Սթիշերից բացի, Քառուփերվուդին ուղեկցում էր էդդի Զանդերս՝ շերիֆի օգնականը, որ եռամսյա նստաշրջանների ժամանակ գործուղվում էր դատարան։ Կարճահասակ մասդ էր, մաղերը թուփ, բեղերը կարճ ու ցից, աշքերը անմիտ, բայց խորամանի։ Կրանքում երկու հոգս ուներ նաև պահելի իր կոշման արժանապատկությունը, որ խիստ պատվավոր էր թվում նրան, ու մի կերպ լրացուցիչ վաստակ ճարել։ Նա գիտեր միայն այն, ինչ վերաբերում էր իր գործունեության խիստ անձուկ ոլորտին, այսինքն՝ ինչպե՞ս կալանավորներին տանել բանտ ու ետ բերել և ինչպե՞ս հնատել նրանց, որ շփախչեն։ Կալանավորների որոշ մի տիպին, այսինքն՝ հա-

բուստ և ուննոր մարդկանց, բարեկամաբար էր վերաբերվում, որովհետև վաղուց էր արդեն հասկացել, որ այդ բարյացակամությունը վարձառվում է: Այժմ, բանտ գնալիս, նա սիրավիր շեշտով մի քանի դիտողություն արեց եղանակի մասին, ասաց, որ ճանապարհը շատ կարճ է, և հավանորնն շերիֆ Զեսպերսին կտոնեն տեղում, իսկ եթե ոչ՝ կարելի է մարդ ուղարկել արթնացնի: Քառուփերվումը նրան չէր լսում, մտածում էր մոր, կնոջ ու էլլինի մասին:

Երբ վերջապես տեղ հասան, Քառուփերվուին մտցրեն բանտի կենտրոնական մասը, քանի որ այդտեղ էր շերիֆ Աղեյ Զեսպերսի գրասենյակը: Զեսպերսը, որ վերջերս էր ընտրված այդ պաշտոնին, մանրակրկիտ հարդում էր իր պաշտոնավարության հետ կապված բոլոր ձեւականությունները, բայց հոգով բնավլ էլ ձեւապաշտ չէր: Որոշ շրջաններում հայտնի էր, որ Զեսպերսը իր նիշար աշխատավարձը «շաղացնելու» համար առանձին սենյակներ էր «վարձու տալիս» կալանավորներին, ինչպես նաև բազմաթիվ առավելություններ էր ընձեռում նրանց, ովքեր ի վիճակի էին վճարել իրեն: Նրանից առաջ եղած մյուս շերիֆներն էլ ճիշտ այրպես էին վարվել: Երբ Զեսպերսը գրավեց այդ պաշտոնը, մի քանի կալանավոր արդեն նման առավելություններ ունեին, նա էլ, իհարկե, շխախտեց մի անգամ մտցված սովորությունը: Այն սենյակները, որ նա, ինչպես ինքն էր ասում, վարձու էր տալիս «ուած հարկ է», գտնվում էին շենքի իհնտրունական մասում, որտեղ և նրա բնակարանն էր: Այդ սենյակների պատուհանները վանդակապատ չէին և բնավլ էլ բանտի նման չէին: Հարկ չկար վախենալ, որ մեկը կփախչի, որովհետև գրասենյակի գուան մոտ միշտ ժամապահ էր կանգնած, որին և պատվիրված էր ուշագիր հետեւել «վարձակալայների» վարքին: Այդ առանձնաշնորհումը վայելող կաշանավորը շատ տեսակետից ազատ մարդ էր: Եթե նա ուղենար, ուստեղիքը բերում էին ուղիղ սենյակը: Նա կարող էր կարդալ, թուղթ խաղալ, հյուրեր ընդունել և նույնիսկ ուզած երաժշտական գործիքը նվագել իր ընտրությամբ: Միայն մի կանոն էր անշեղորեն հարգվում այստեղ: Եթե կալանավորը

ականավոր անձ էր, ապա թերթի մի թղթակից այցելելու
դեպքում պարտավոր էր իջնել ցած, այցելուների ընդհանուր
ընդունարանը, որպեսզի թերթերը շրմանային, որ նա, ի
տարբերություն այլ կալանավորների, բանտի խցում չի պահ-
վում:

Այս ամենի մասին Սթեցերը վաղօրոք պատմել էր Քառ-
փերկոսդին, բայց երբ սա բանտի շեմքն անցավ, ակամա-
համակվեց դատապարտվածության ու աշխարհից կտրված
վիճելու տարօրինակ գգացմունքով: Քառութերվուդին ու նրա
ուղեկիցներին մտցրին մի փոքրիկ, գաղի լամպով աղոտ
լուսավորված սենյակ, որտեղ ոչինչ չկար, բացի մի գրասե-
ղանից ու աթոռից: Ծերիք Զեսպերս՝ մի մարմնեղ ու
կարմրադեմ մարդ, ողջունեց նրանց ամենասիրալիր ձեռք:
Նա անմիջապես ազատ արձակեց Զանդերսին, սա էլ անհա-
պաղ անհետացալ:

— Հիանալի՝ եղանակ է, — նկատեց Զեսպերս և, ավե-
լացնելով գաղի հոսանքը լամպի մեջ, պատրաստվեց կա-
լանավորին արձանադրելու արարողության:

Սթեցերը մոտեցավ շերիֆի դրասեղանին և սկսեց կա-
մացուկ մի բան ասել նրան. այդ զրուցից հետո Զեսպերսի
դեմքը պայծառացալ:

— Ա-ա-, իհա՛րկե, իհա՛րկե: Կարելի է, միստր Սթե-
չեր, անհոգ եղեք: Դեհ, իհա՛րկե, ինչ կա որ:

Քառութերվուդը, որ զնոււմ էր գիրուկ շերիֆին, կու-
հում էր, թե խոսքն ինչի մասին է: Նա արդեն կարողացել
էր ձեռք բերել իր սովորական սառնարյունությունը, քըն-
նադատական վերաբերմունքը կատարվող ամեն ինչի նկատ-
մամբ և հավասարակշռությունը: Ուրեմն, բանտ ասվածը
սա՞ է, և այս հարպակալարած ոչնչությունն էլ՝ շերիֆը, որ
պետք է հսկի իրեն: Թո՛ղ հսկի: Ինքը այսուեղ էլ կկարողա-
նա տեղավորվել: Մտքով անցավ՝ Ախնի՛ թե խուզարկեն,
քանի որ ընդունված է կալանավորներին խուզարկել: Սա-
կայն շոստով համոգեց, որ խոսքարկություն չի լինի:

— Դեհ, այդ էլ եղավ, մի՛ստր Քառութերվուդ, — ասաց
Զեսպերսը վեր կենակով: — Կարծում եմ, թե կկարողանամ

անհղավորել ձեզ որոշ հարմարություններով։ Սա, իհարկե՛ն հյուրանոց չէ, — քթի տակ ծիծաղեց նա, — սակայն որոշ բան կայող եմ անել ձեզ համար։ Զո՞ն, — ձայն տվեց նա, և կողքի սենյակից, քնկոտ աշքերը տրորելով, երեաց հըսկիչներից մեկը։ — Այստե՞ղ է վեցերորդ համարի բանալին։

— Այո՛, սը՛ր։
— Տո՞ւր ինձ։

Զոնն անհետացավ և անմիջապես էլ վերադարձավ, իսկ Սթեցերը այդ միջոցին բացատրեց Քառափերվուսդին, որ կառող են նրա համար հագուստ ու ամեն տեսակ այլ բաներ բերել այստեղ, ինչ որ ուզենա։ Առավոտյան ինքը կգա այստեղ գործերից խոսելու, իսկ եթե Ֆրենկն ուղենա հարազատներից որևէ մեկին տեսնել, ապա նրանց ևս թույլ կտրվի այցի գալ։ Ֆրենկն անմիջապես հայտնեց հորը, որ ինքը երեք շի ձգտում հարազատներին ընդունել այսուեղ։ Թող Զուկեֆը կամ էդուարդը առավոտյան սպիտակեղեն և մյուս բաներ ճամպրուկ լցրած, բերի այստեղ, գալով ընտանիքի մյուս անդամներին, ապա ավելի լավ կլինի սպասեն, մինչեւ դուրս գա կամ դառնա իսկական կալանավոր։ Ուզոամ չը գրել էլլինին և գգուշացնել, որ նա ոչ մի բան չծեռնարդի, բայց շերիֆը նշան արեց, և Քառափերվուսը սառնարյուն հետևեց նրան։ Սթեցերի և հոր ուղեկցությամբ նա բարձրացավ վեր, իր նոր կացարանը։

Դա տասնհինգ ոտնաշաբակ լայնություն և քսան ոտնաշաբակ երկարություն ունեցող սենյակ էր, պատերն սպիտակ և առաստաղը համեմատաբար բարձր։ Այդտեղ կար մի փայտե, գեղին, սնարը բարձր մահճակալ, նմանապես դեղին գզրոց, «բալենու փայտի» նմանեցված մի փոքր սեղան, երեք անբարետես աթոռ՝ նստոցները հյուսված, թիկնակները փորագրված (նույնպես «բալենու փայտի» նման ներկված), փայտե լվացարան՝ նույն մահճակալի գույնի, վրան ջրաման, կոնք, բաց օճառաման և վարդագույն ծաղիկների նախշ ունեցող մի փոքրիկ թաս բերանը ողողելու և ածիկվելու համար, որ աշքի էր ընկնում մյուս համեմատաբար լավորակ իրերի մեջ ու, երկի, արժեք տասը ցենտից ոչ ավելի։

Շերիֆ Զեսպերսի համար այդ սենյակը նշանակում էր շաբաթական երեսուն-երեսունհինգ դովլար եկամուտ։ Քառափեղ-վուդը պայմանավորվեց երեսունհինգովով։

Նա ընդուստ մոտեցավ պատոհանին, որը նայում էր ձևապատ մի բացատի, և ասաց, որ այստեղ բնավ էլ վառ չէ։ Հայրն ու Սթեջերը պատրաստ էին մնալ, որքան ինքը ցանկանար, բայց խոսելիք չունեին։ Ասենք, Քառափերվուդն էլ զրուցելու ցանկություն չուներ։

— Առավոտյան թող էդը ապիտակեղեն բերի ինձ և մեկ կամ երկու կոստյում։ ուրիշ ոչ մի բան պետք չէ ինձ։ Զոր-ջը կհավաքի իմ իրերը, — ասաց Ֆրենկը, նկատի ունենալով իրենց ծառացին, որը մյուս պարտականությունների հետ համատեղում էր նաև սենեկապանի պաշտոնը։ — Լիլիանին ասա, որ շանհանգուտանաւ Ես շատ լավ եմ։ Կգերադասեի, որ նա չգա այստեղ, քանի որ հինգ օրից դուրս եմ գալու իսկ թե դուրս չգամ, այն ժամանակ կկարողանա գալ։ Իմ փոխարեն համբուրիր երեխաներին, — ավելացրեց նա բարեմիտ ժպտալով։

Երբ առաջին ատյանում դատական գործի վախճանի մասին Սթեջերի հույսերը շարդարացան, նա արդեն վախճանում էր վատահովթյամբ ասել, թե ինչ դիրք կրոնի նահանգի գերագույն դատարանը։ Բայց մի բան պետք էր ասել։

— Ինձ թվոամ է, Ֆրենկ, որ դուք կարող եք շանհանգուտանալ իմ բողոքարկման վերաբերյալ։ Ես տեղեկանք կստանամ գործը վերանայելու մասին, և այն ժամանակ մենք տարկետում կունենանք երկու ու թերեւս ավելի ամիս։ Չեմ կարծում, որ գրավականը երեսուն հազար դոլլարից ավելի լինի։ Այսպես թե այնպես հինգ-վեց օրից դուրս կգաք այստեղից։

Քառափերվուդը պատասխանեց, թե ինքն էլ հույս ունի, որ այդպես կվերջանա, բայց հիմա արդեն ուշ գիշեր է, և շարժե քննել այդ հարցը։ Խոսակցությունը շարունակելու համար մի քանի ապարդյուն փորձ անելուց հետո հայր Քառափերվուդն ու Սթեջերը բարի գիշեր մաղթեցին Ֆրենկին և թողին նրան միայնակ խորհրդածելու։ Քառափերվուդը

Հոգնած էր, ոստի և արագ հանեց հագուստները, պառկեց
բավականին չոր անկողնին և շատ շանցած խոր քուն մտավ:

Գ. Լ. ՈՒ Խ. XLV

Որքան էլ ընդհանրապես խոսեն բանտերի մասին, որ-
քան էլ այնտեղ մնալը մէղմացվի, առանձին սենյակում լի-
նելով, հսկիչների հաճոյակամությամբ ու կալանավորին
որքան կարելի է լավ տեղավորելու ընդհանուր ջանքով, այ-
նուամենայնիվ բանտը մնում է բանտ, և այդ գիտակցու-
թյունը մարդուց չի հեռանում: Գտնվելով այնպիսի պայման-
ներում, որոնք ոչ մի բանով չեին վիշտու միշտին որակի օթե-
վանից, այնուամենայնիվ Քառուիերվուազը համակվեց այն
իսկական բանտի մթնոլորտով, որից առայժմ զերծ էր: Նա
գիտեր, որ մոտիկ մի տեղ են գտնվում խցերը՝ հավանորեն
կեղտուտ, գարշահոտ, ուր վխուամ են միշտաները, դռները
փանդակացանց են ու ծանր և կարող էին նույնքան արագ և
նույնպիսի ճոխնչով շրխակալ իր վրա, եթե ինքը դրամ չու-
նենար ամելի լավ կեցություն ապահովելու համար: Ահա և
տիրահոչակ հավասարությունը, մտածեց նա, անգամ այս-
տեղ՝ արդաշագաւության խստաշունչ կալվածներում, մի
մարդուն ընձեռվում է հարաբերական ազատություն, որը
վայելում է այժմ, օրինակ, ինքը, իսկ մի ուրիշը զբկված է
անհրաժեշտ բանից անդամ, որովհետև բավականաշափէ խո-
րամտություն, բարեկամ և ամենագլխավորը՝ դրամ չունի,
որպեսզի գնի արդ անհրաժեշտությունը:

Դատավարության հաջորդ առավոտը Քառուիերվուազը
զարթնեց, բացեց աշքերը և հանկարծ զարմանքով գիտակ-
ցեց, որ գտնվում է ոչ թե իր ննջարանի հաճելի ու սովոր
պայմաններում, այլ բանտի խցիկում, ավելի ճիշտ՝ դրան
փոխարինող բավական հարմար պանդոկային սենյակում:
Նա վեր կացավ ու նայեց լուսամուտից: Բակն ու ամբողջ
Պատաշունկ պողոտան ձյունալատ էին: Մի քանի քեռնա-
ռայլ անաղմովկ անցնում էին բանտի մոտով: Առավոտյան

այդ պահին հետիոտներն շտապում էին իրենց գործին։ Ֆրեն-կըն իսկույն սկսեց մտածել, թե ինչ պետք է ձեռնարկի, ինչ-պես անի, որ վերականգնի իր գործը, նմանապես և իր անունը։ Այդ մտքերով տարված՝ նա հագնվեց և քաշեց զանգի լարը, որը դեռ երեկ ցույց էին տվել։ Զանգի վրա պետք է ներկայանար բանտի ծառայողը, վառեր բովսարին ու նախաճաշ բերեր։ Հնացած կապույտ համագետ հագած այդ ծառայողը, որ կարծում էր, թե այդպիսի սենյակ գրաված մարդը պետք է խիստ կարևոր անձ լինի, կպչան դրեց, ապա՝ ածուխ, վառեց և մի քիչ սպասելուց հետո բերեց նախաճաշը, որը սակավ լինելով հանդերձ, քիչ էր նման բանտի ուստի լիդին։

Դրանից հետո, չնայած շերիֆի ամբողջ առերևույթ ընդառաջմանը, հարկ եղավ, որ Քառսիկերվուտը համբերությամբ մի քանի ժամ սպասի, մինչև թույլ տան սպիտակեղեն ու հագուստ բերած էգուարդը ներս գա։ Մի փոքր վարձատրությամբ՝ ծառայողներից մեկը բերեց նրան թերթեր, որոնք Քառսիկերվուտը անտարբերությամբ աշքի անցկացրեց, հետաքրքրությամբ կարդալով միայն ֆինանսական լուրերի բաժինը։ Ցերեկվա վերջին եկավ Սթեջերը, ուշանալու համար ներդրություն խնդրեց ու ասաց, թե պայմանագործել է շերիֆի հետ, որ թույլ տա իր մոտ գան բոլոր նրանք, ովքեր կարևոր գործ ունեն։

Մինչ այդ Քառսիկերվուտն արդեն գրել էր Էյլինին ու խնդրել, որ իր հետ տեսնվելու ոչ մի փորձ չանի, որովհետեւ մինչև ամսի տասը ինքն արդեն դուրս կփա բանտից և կտեսնըվի նրա հետ կամ նույն օրը, կամ հաջորդ օրերից մեկում։ Ֆրենկը հասկանում է, որ Էյլինը անհամբերությամբ ուղղամբ է տեսնել իրեն, սակայն հիմքեր ունի կարծելու, որ նրան հետևոամ են հոր վարձած լրտեսները։

Այդպիսի բան չկար, բայց նման հնարավորությունն ինքնին ճնշում էր Էյլինին, իսկ եթե ավելացնենք դրան այն մի քանի արհամարհական նկատողությունները, որ ճաշի ժամանակ փոխանակել էին նրա եղբայրները դատապարտված ֆինանսիսի մասին, ապա համկանալի լլինի, որ նրա

Համբերության բաժակը լցվել էր։ Քելիգենների հասցեով ուղարկված Քառվերվուտի նամակից հետո էլլինը որոշեց ոչ մի բան շճեռնարկել, մինչև որ ամսի տասի առավոտյան թերթում կարդաց, որ բավարարված է Քառվերվուտի միջնորդությունը դատավճիռը տարակուաելի ընդունելու մասին, և Ֆրենկը նորից, թեկուզ ժամանակավորապես, ազատ կարձակվի։ Այս լուրը արխություն ներշնչեց նրան իրագործելու այն, ինչ էլլինը վաղուց էր երազում, այսինքն՝ ապացուցելու հորը, որ ինքը կարող է ապրել և՛ առանց նրան, և հայրն էլ, մեկ է, չի կարող ստիպել, որ ինքը ենթարկվի նրան։ Էլլինի մոտ դեռ մնացել էր Ֆրենկից ստացած երկու հարյուր դոլարը և մի քիչ էլ սեփական փողերից, ընդունելով մոտ երեք հարյուր հիսուն դոլար։ Այս գումարը, ինչուս նա էր կարծում, պետք է բավականացնի իր մտադրությունն իրագործելու համար կամ համենայն դեպս այնքան ժամանակ, մինչև որ այսպես թե այնպես մի բան անի։ Իմանալով, թե որք քան են սիրում իրեն հարազատները՝ էլլինը վստահ էր, որ այդ ամբողջ պատմությունից նրանք ավելի կտառապեն, քան ինքը։ Հավանական է, որ հայրը համոզվելով դստեր հաստատակամությանը՝ կգերադասի հանգիստ թողնել նրան ու հաշտվել հետք։ Համենայն դեպս առաջին քայլը պետք է արմի, ոստի անմիջապես գրեց Քառվերվուտին, որ գնում է Քելիգենների մոտ և արդեն այդտեղ էլ կշնորհավորի նրա ազատվելու։

Որոշ տեսակետից այդ լուրը ուրախացրեց Քառվերվուտին։ Նա գիտեր, որ իր բոլոր փորձանքները առաջացել էին գլխավորապես Բաթլերի մեքենայությունների հետևանաքով, և խիղճը չէր տանջում իրեն, որ հիմա ինքը կդառնածեր իրանդացու տառապանքների անուղղակի պատճառք Նրա նախկին խոհեմ ձգտումը՝ ծերունուն համբերությունց շհանել, ոչ մի արդյունք չէր տվել, իսկ քանի որ Բաթլերը այդպես աննկուն է, ապա թերևս նրա համար օգտակար կլինի համոզվել, որ էլլինը կարող է պաշտպանել իրեն ու ապրել առանց նրա աշակցության։ Բացառված չէ, որ էլլինն այդպիսով կստիպի հորը վերանայել իր վերաբերմունքը դպու-

տեր նկատմամբ, գուցե և դադարեցնի քաղաքական դավեհը. Քառսկերվութի հանդեպ, Փոթորկի ժամանակ ամեն մի նավակայան լավ է: Բացի դրանից, հիմա ինքը ոչ մի բան չի կորցնի, այնպես որ որոշեց, թե էլլինի այդ քայլը կարող է նույնիսկ օգուտ բերել երկուսին էլ, ուստի և ոչինչ շարեց՝ նրան այդ քայլից ետ կանգնեցնելու համար:

Նավաքելով իր թանկարժեք զարդերը, մի քանի սպիտակեղեն, երկու-երեք շրջագգեստ, որոնց կարող էր պետք ունենալ, և մի քանի այլ մանր իրեն՝ էլլինն այդ ամենը զետեղեց իր ունեցած ուղեպայուսակներից ամենախոշորի մեջ, որը կապելուց հետո հիշեց կոշիկներն ու գուրպաները, բայց չնայած նրա բոլոր ջանքերին՝ դրանք շտեղավորվեցին: Ամենագեղեցիկ գլխարկը, որ անպայման ուսում էր տանել իր հետ, նույնպես դնելու տեղ չկար: Ուստի նա կազմեց ևս մի կապոց, արտաքուստ ոչ այնքան շքել: Բայց որոշեց այդպիսի դատարկ բաներին ուզք շդարձնել: Խուզարկելով արդուզարդի արկդիրկը, որտեղ դրամն ու զարդերն էր պահում, էլլինը հանեց երեք հալյուր հիսուն գոլլարը ու դրեց ձեռքի պայուսակը: Անշուշտ, խոշոր զսւմար շէր, բայց Քառսկերվուդը հոգ կտանի իրեն: Իսկ եթե սա շկարողանա ապահովել, հայրն էլ մնա անկոտրում, ապա մի որևէ աշխատանք կդանի իր համար: Էլլինը բնավ շէր իմանում, թե աշխարհը որքան սառն է դիմավորում այն մարդկանց, ովքեր գործնականապես ոչ մի բանի պատրաստված շեն. և ոչ մի տնտեսական խարիսխ չունեն: Նա շէր իմանում, թե ինչ բան է կյանքի տառապագին ուղին: Եվ ահա դեկտեմբերի տասին, քթի տակ մոմուալով (գոտեպնդվելու համար) ինչ-որ երգ, սպասեց, որ հայրը սովորականի պես իշնի ցած՝ ճաշատենայակ, այնուհետև կռացավ սանդուղքի բազրիքների վրա և, համոզվելով, որ Օսմենը, Քելեմը և Նորան, ինչպես և մայրը, արդեն սեղան են նստել, իսկ սպասուհի Քետլինն էլ մոտերքում չէ, կամացով մտավ հոր «ոռջը» և կորսածի տակից հանելով նամակը, դրեց սեղանին ու հապճեպ դուրս եկավ: Հասցեն շատ կարճ էր՝ «Հայրիկին», իսկ նամակում գրված էր հետևյալը.

«Սիրելի՛ հայրիկ, ես չեմ կարող անել այն, ինչ դու նս
ուզում: Ես շատ եմ սիրում միստր Քառվերվուդին, ուստի և
ճեռանում եմ տնից: Ինձ նրա տանը մի՛ փնտրիր: Ես չեմ լի՛
նի և այնտեղ, որտեղ կարծում ես: Ես նրա մոտ չէ, որ
գնում եմ: Կփորձեմ ինքնուրուցն ապրել, քանի դեռ նա չի
կարողանա ամուսնանալ ինձ հետ: Ինձ համար շատ ցավալի
է, բայց շեմ կարող համաձայնել քո պահանջին: Չեմ էլ կա-
րող մոռանալ, թե ինչպես վարվեցիր դու ինձ հետ: Բարեկիր
մայրիկին, տղաներին ու նորային:

Էլլին»

Է՛լ ավելի ապահով լինելու համար, որ հայրը կգտնի
նամակը, նա դրեց դրա վրա հոր հաստ շրջանակավոր ակա-
նոցը, որ սա կարդալիս էր գործածում: Այդ նույն րոպեին
նա իրեն զգաց այնպես, ասես գողություն էր արել: բոլո-
րովին նոր զգացողություն էր նրա համար: Հանկարծ նա
խոցվեց սեփական ապերախտովթյան գիտակցությունից: Գու-
ցեց և վատ բան է անում: Հայրը միշտ էլ խիստ բարի է
եղել իր հանդեպ: Մայրը հոսահատովթյան կմատնվի: Նո-
րան կվշտանա, նմանապես և Օուենն ու Քելեմը: Ո՛չ, մին-
նույն է, նրանք շեն հասկանա իրեն, իսկ հայրը իր արարքով
վիրավորել է արդեն: Նա կարող էր ավելի կարեկցաբար
վարվել դստեր հետ: բայց շատ է ծեր և շատ է թաղվել
կրոնական դոգմաների և ընթացիկի բարոյագիտովթյան սկրզ-
բունքների մեջ. որտեղից հասկանա իրեն: Գուցե և երբնք
թույլ շտա վերադառնալ տուն: Ի՞նչ արած, առանց հորն էլ
մի կերպ կապրի: Մի լավ դաս կտա նրան: Եթե պետք լինի,
երկար ժամանակ կմնա Քելիքենների տանը; ոսուցչունո
պաշտոն ձեռք կբերի կամ կսկսի երաժշտովթյան դասեր տալ:

Էլլինը գողեգող իշավ սանդուղքը, հասավ նախասենյա-
կին և բացելով դրսի դուռը՝ նայեց փողոց: Լապտերներն
արդեն առկայծում էին խավարով, ցուրտ ու ծակող քամի
էր փշում: Ուղեպարկը ձգում էր նրա բազուկը, բայց
նա ուժեղ աղջիկ էր: Արագ մի հիսում քայլ գնաց մինչև ան-
կյունը ու շրջվեց դեպի հարավ. նրա ջղերը լարված էին ծալր

աստիճան. այս ամենը մի տեսակ նոր էր, անարժան ու բնավ նման չէր այն բանին, ինչին վարժվել էր: Քառուղիներից մեկում վերջապես կանգ առավ հանգստանալու և ուղեպարկը դրեց գետնին: Անկյունը շրջվելով ու մի երգ սուլելով՝ երևաց մի տղա. և երբ սա մոտեցավ, ելլինը կանչեց նրան.

— Կսի՛ր, այ տղա:

Սա մոտեցավ և հետաքրքրությամբ զննեց էլլինին:

— Ուզո՞ւմ ես մի փոքր դրամ վաստակել:

— Ուզում եմ, տիկի՛ն, — բարեկրթորեն պատասխանեց տղան, կեղտոտ գլխարկը թեքելով:

— Վերցրու այս ուղեպարկը, — ասաց ելլինը:

Տղան վերցրեց, և նրանք շարունակեցին ճանապարհ:

Շատ շանցած նա հասավ Քելիկենների տուն և ընդհանուր հրմվանքի մթնոլորտում տեղավորվեց իր նոր կացարանոամ: Հենց որ իրեն առաջով զգաց, նրա ամբողջ անհանգստությունը փարատվեց, և նա սկսեց հոգատարությամբ տեղավորել ու կախել իր ունեցյածքը: Այն հանգամանքը, որ այդ գործում իրեն չէր օգնում միսիս Բաթլերին և երկու աղջիկներին սպասարկող սենեկապանուհի Թեթլինը, մի քիչ տարօրինակ թվաց էլլինին, բայց ամենկին չվշտացրեց: Ճիշտն ասած, նա այն զգացողությունը շուներ, թե ընդմիշագրկվեց ապրելու իր բոլոր սովորական պայմաններից, ուստի և աշխատում էր ավելի անդորրավետ տեղավորվել: Մեջմի Քելիկենը և նրա մայրը նայում էին ելլինին անհամարժակ պաշտամունքով, որ նույնպես հիշեցնում էր նրան այն մթնոլորտը, ուր նա վարժված էր ապրել:

ԳԼՈՒԽ XLV

Այդ միջոցին Բաթլեր ընտանիքը հավաքվել էր ճաշասեղանի շուրջը: Միսիս Բաթլերը բարեհոգությամբ համակված, բազմել էր նախագահական տեղում: Ետ սանրած նրա վարսերը բաց էին թողնում հարթ ու փայլող ճակատը: Հագել էր նա մոստ գորշ շրջազգեստ՝ զորշ ու սպիտակ ժապավենների

գարդով, որ լավ ստվերում էր նրա թարմ, վարդագույն դեմքը: Էլլինն էր ընտրել այդ զգեստի ձեզ ու հետեւ, որ լավ կարեն: Նորան, որ բաց կանաչ շրջազգեստով էր, թափշ կարմիր օճիքով ու թեղանիքներով, հրաշալի տեսք ուներ: Դեռատի էր նա, բարեկազմ և ուրախ: Նրա աշքերից, դեմքի վարդագույնից ու վարսերից թարմովթյուն և առողջություն էր հառնում: Նա շուռումուռ էր տալիս մարզանի մի շարան, որ նոր էր նվիրել նրան մայրը:

— Նայի՛ր, Քելեմ,— դիմեց նա եղբորը, որ նստած էր իր դիմաց և դանակով թեթև թխկթխկացնում էր սեղանը: Գեղեցիկ է, չէ՞: Մայրիկն է նվիրել ինձ:

— Մայրիկը շատ է երես տալիս քիզ: Եթե նրա տեղը լինեի, կնվիրեի... գուշակիր՝ ի՞նչ:

— Դեհ, ասա, ի՞նչ:

Քելեմը խորամանկ նայեց քրոջը: Ի պատասխան՝ Նորան շրթնակծկում արեց: Այդ բուգեին ներս մտավ Օռենը և նստեց իր տեղը: Միսիս Բաթլերը նկատեց նորայի ծամածությունը:

— Ա՛յ, կտեսնես, թե ինչպես եղբայրդ էլ կբարկանաքեզ վրա այդպիսի կատակների համար, — ասաց նա:

— Բայց ի՞նչ օր էր այսօր, — հոգնած ասաց Օռենը, բացելով անձեռոցիկը: — Աշխատանքից աշք բացել հնարավոր չէր:

— Ի՞նչ է, անախորժություննե՞ր կային, — կարեկցաբար հարցրեց մայրը:

— Ո՛չ, մայրի՛կ, ո՛չ մի առանձնակի բան: Պարզապես զանազան գլխացավանքներ:

— Դու էլ մի կուշտ կեր, և անմիջապես լավ կզգաքեզ, — քնքշագին ասաց միսիս Բաթլերը: Թումսոնը (Բաթլերներին բանջարեղեն մատակարարողը) այսօր թարմ բակլա է ուղարկել մեզ: Անպայման համտես արա:

— Դեհ, իհարկե, Օռեն, — ծիծաղեց Քելեմը, — բակլան ամեն ինչ կլավացնի: Մայրիկը միշտ էլ ճար գտնում է:

— Հրաշալի բակլա է, վստահեցնում եմ քեզ, — ալատասխանեց միսիս Բաթլերը, որդու հեգնանքը լնկատելով:

— Ոչ ոք չի կասկածում, մայրի'կ,— ասաց Քելեմը, — լավագույն սնունդն է ուղեղի համար: Զէր խանգարի, որ բակլայով կերակրեինք նորային:

— Լավ կանեիր ինքդ ուտեիր, խելքի' տոպրակ: Այսօր շատ ես ուրախ: Կա ու շկա ժամադրության ես գնալու:

— Հենց այդ է որ կա: Ա՛յ, խելացի' աղջիկ: Ժամադրություն, այն էլ ոչ թե մեկի, այլ միանգամից հինգի կամ վեցի հետ: Ամեն մեկին տասը րոպե: Քեզ էլ ժամադրություն կնշանակեի, եթե մի քիչ սիրուն լինեիր:

— Ստիպված կլինեիր շատ սպասել, — ծաղրաբար պատասխանեց նորան: — Ես շատ էլ չէի շտապի գալ քեզ հանդիպելու: Բանս բուրդ է, եթե քեզնից լավը չգտնեմ:

— Ուզում ես ասել ինձ նմանին, — ուղղեց Քելեմը:

— Երեխաննե՛ր, երեխաննե՛ր, — իր սովորական հանդարտությամբ վրա բաթեց միսիս Բաթլերը, միաժամանակ աշքով փնտրելով վաղեմի ծառա Ձոնին: — Քիչ էլ մնա, կլովիքը Դեհ, բավական է: Ահա և հայրը: Բա ո՞ւր է էլլինը:

Բաթլերը ներս մտավ ծանր-ծանր ու նստեց սեղան:

Եկավ Ձոնը, բերելով մատուցարանը, որի վրա, այլ կհրակուրների հետ, աշքի էր ընկնում նաև բակլան, և միսիս Բաթլերը կարգադրեց նրան, որ մեկին ուղարկի էլլինին կանչելու:

— Շա՞տ է ցրտել, — նկատեց Բաթլերը խոսակցություն սկսելու համար ու նայեց մեծ գտտեր դատարկ աթոռին: Հիմա ներս կգա նա, հոր սիրեցյալը և բոլոր տագնապների պատճառը: Վերջին երկու ամիսներին նա խիստ զգուց էր վարդում էլլինի հետ, ըստ հնարավորին խուսափելով նրա ներկայությամբ թառվիերվուղի տնունը տալուց:

— Այո, ցուրտ եղանակ է, — հաստատեց Քելեմը: — Շուտով իսկական ձմեռ կսկսվի:

Ձոնն սկսեց կերակուր մատուցել ըստ ավագության, ամենքն էլ արդեն լցրել էին իրենց ափսեները, բայց էլլինը գեռ շկար:

— Նայեցեք, Ձո՞ն, որտե՞ղ է էլլինը, — ասաց զարմացած միսիս Բաթլերը: — Թե չէ ճաշը բոլորովին կսառի:

Զոնը գնաց ու վերադարձավ, հայտնելով, որ օրիորդ
Բաթլերն իր սենյակում չէ:

— Չե՞մ հասկանում ո՞ւր է կորել,— զարմացած նկա-
տեց միսիս Բաթլերը:— Դեհ լավ. թե ուզենա ուտել, իր ոտ-
քով կզա, Գիտե, որ Ճաշի ժամանակն է:

Խոսակցությունն անցավ նոր ջրմուղի և քաղաքապե-
տարանի կառուցմանը, որն արդեն մոտենում էր ավարտին,
Քառուփերվուղին պատահած զանազան դժբախտովիւններին,
դրամական բորսայի ընդհանուր վիճակին, Արիզոնա նա-
հանգի նոր ոսկեհանքերին, եկող երեքշաբթի միսիս Մոլեն-
հառերի ու նրա աղջիկների Եվրոպա ուղևորվելուն (Վերջին աշխուժորեն մեկնաբանում էին նորան ու Քելեմը) և, վեր-
ջապես, բարեգործական նպատակով տրվող ծննդյան պա-
րահանդեսին:

— Էյլինն անտարակույս բաց չի թողնի, — նկատեց
միսիս Բաթլերը:

— Ե'ս էլ կգնամ, — գոշեց նորան:

— Թույլ տվեք հարցնել, թե ո՞ւմ հետ, — միջամտեց
Քելեմը:

— Դա արդեն իմ գործն է, տե՛ր իմ, — պատասխանեց
Քույրը:

Ճաշից հետո միսիս Բաթլերը առանց շտապելու գնաց
էյլինի սենյակը, իմանալու, թե ինչու ճաշի շեկավ: Բաթլերը
գնաց իր սենյակը, մտածելով, թե լավ կլինի իր անհանգը-
տությունը հայտնի կնոջը: Նոր էր նստել սեղանի առաջ ու
լույսը վառել, երբ աշքն ընկավ նամակին: Նա անմիջապես
ճանաշեց էյլինի ձեռագիրը: Այս ի՞նչ է նշանակում, ի՞նչն
է դրդել գրելու իրեն: Մի ծանր նախազգացում պաշարեց
նրան. նա դանդաղ բացեց ծրարը և ակնոցը դնելով, սկսեց
կարդալ լարված ուշադրությամբ:

Ուրեմն, Էյլինը թողել գնացել է: Ծերունին զննեց ամեն
մի բառը, և նրան թվաց, որ բոլոր բաւերը հրեղեն տառե-
րով են գրված: Նա գրում է, թե գնացել է ոչ Քառուփերվուղի
մոտ: Սակայն ավելի շուտ Քառուփերվուղին է փախել Ֆիլա-
դելֆիայից ու աղջկանն էլ տարել հետը: Այս կաթիլն արդեն

լցրեց բաժակը։ Դա արդեն վախճանն էր։ Էլլինը գայ-
թակղեցված է ու տնից տարված՝ ո՞ւր, ինչպիսի՞ ճակա-
տագրի ընդառաջ։ Եվ այնուամենալիկ Բաթլերը չէր կարո-
ղանում հավատալ, որ Քառուփերվուրն է մղել այդ քայլն
անելու։ Չափից ավելի վտանգավոր էր։ արդպիսի բանը կոր-
ծանարար կարող էր անդրադառնալ ոչ միայն Բաթլերների,
այլև նրա սեփական ընտանիքի վրա։ Թերթերն իսկուցն ամեն
ինչի հոտն առնում են։

Նա ոտքի ելավ, նամակը ձեռքում ճմրթելով։ Այդ միջո-
ցին լսվեց դռան ճռոցը։ Ներս մտավ կինը։ Բաթլերը վայր-
կենապես տիրապետեց իրեն և նամակը կոխեց պրանը։

— Էլլինն իր սենյակում չէ, — վարանամիտ շեշտով
ասաց միսիս Բաթլերը։ — Քեզ չի՞ ասել, թե ուր է գնում։

— Ոչ, — ազնվորեն պատասխանեց նա, մտածելով այն
ակնթարթի մասին, եթք ստիպված կլինի իսկությունը հայո-
նել կնոջը։

— Տարօրինակ է, — տարակուսանքով նկատեց միսիս
Բաթլերը, — երկի, որնէ բան առնելու կարիք է ունեցնել։ Բայց
ինչո՞ւ ոչ ոքէ բան չի ասել։

Բաթլերը ոչ մի բանով իր զդացմունքները չէր արտա-
հայտում, չէր ել կարող։

— Կվերադառնա, — ասաց ծերունին, ճիշտն ասած, մի-
այն ժամանակ շահելու համար։

Զեացնելու անհրաժեշտությունը տանջում էր նրան։
Միսիս Բաթլերը գնաց, և ամուսինը դուռը փակեց նրա վրա։
Այնուհետեւ կրկին հանեց նամակը և նորից կարդաց։ Այդ
աղջիկը խելքը թոցրել է. անհեթեթ, այլանդակ, անիմաստ
բան է արել։ Ո՞ւր կարող էր զնալ, եթե ոչ Քառուփերվուրի
մոտ։ Առանց այն էլ այդ ամբողջ պատմությունը մոտ էր
սկանդալի վերածվելու, իսկ հիմա անխուսափելիորեն կպայ-
թի։ Այժմ միայն մի բան էր մնում։ Քառուփերվուրը, եթե
դեռ Ֆիլադելֆիայում է, ի՞հարկե, զիտե որտեղ է Էլլինը։
Պետք է իսկուն ևեթ զնալ նրա մոտ, սպառնալ, խորաման-
կություն բանեցնել, իսկ եթե կարիք լինի, պարզապես հոգու-
տանել էլլինը պետք է վերադառնա տուն, Եվրոպա էլ թող

չգնա, բայց պարտավոր է վերադառնալ տուն ու պարկեղտ պահել իրեն մինչև այն ժամանակ, երբ Քառվիերվոսդը կարողանա ամուսնանալ նրա հետ։ Այժմ դրանից ավելին հուսալ չի կարելի։ Թող սպասի. գոսե և գա մի օր, երբ ինքը՝ հայրը, իրեն կստիպի հաշտվել նրա հիմար մտադրության հետ։ Սաբսափելի՛ միտք. Եյլինի արարքը կսպանի մորը, կպատվազրկի քրոջը։ Բաթլերը վեր կացավ, կախարանից հանեց գլխարկը, հագավ վերարկում ու դուրս եկավ։

Քառվիերվուղների տանը նրան տարան ընդունարան։ Տանտերն այդ միջոցին վերևն էր, իր առանձնասենյակում, զբաղված էր զանազան թղթեր նայելով։ Հենց որ հայտնեցին, որ եկել է Բաթլերը, նա շտապեց ցած։ Հետաքրքրական է նշել, որ Բաթլերի դալու լուրը, ինչպես պետք էր սպասել, շստիպեց նրան կորցնելու սովորական սառնարյունությունը։ Այսպես ուրեմն, Բաթլերն այստեղ է։ Այդ, իհարկե, նշանակում էր, որ Եյլինը տնից դուրս է եկել։ Հիմա նրանք շափելու են իրենց ուժերը. տեսնենք ուժեղն ով կինի։ Քառվիերվուղը կարծում էր, որ խելքով, աշխարհիկ վարվեցողությամբ և ուրիշ շատ բաներով ուժեղը ինքն է։ Նրա հոգեոր «եսը», որ անվանում ենք կյանքի նախասկիզբ, կոփած էր պողպատի պես։ Նա հիշեց, որ թեև հորն ու կնոշը ասել էր, թե ինչպես հանրապետական կուսակցության պարագուսիները, դրանց մեջ և Բաթլերը, ջանում են քավության նոխաղ դարձնել իրեն, այնուամենայնիվ հայրն ու կինը ծեր կապալառուին շեն համարում Քառվիերվոսդ ընտանիքի թշնամին, ուստի և հիմա պետք է բարեկրթությունը հարգել։ Քառվիերվուղը շատ ուրախ կլիներ, եթե կարողանար մեղմացնել ծերունուն և հանգիստ, բարեկամական ոգով խոսել նրա հետ, ասել, թե ինչ է պատահել։ Եյլինի հարցը պետք է լուծվի անհապաղ, մի անգամ ընդմիշտ։ Այդ մտադրությամբ էլ նա մտավ այն սենյակը, որտեղ սպասում էր նրան Բաթլերը։

Երբ ծեր Բաթլերը իմացավ, որ Քառվիերվուղը տանն է և հիմա կգա, հաստատապես որոշեց, որ իրենց հանդիպումը պետք է լինի կարճ, բայց հաջող։ Նա թեթևակի ցնցվեց,

Երբ լսեց Քառովիերվուդի ոտնաձայնը՝ թեթև ու արագ, ինչ-պես միշտ:

— Բարի երեկո, մի՛ստր Բաթլեր, — սիրալիր բարեկց Ֆրենկը, մոտենալով և ձեռքը մեկնելով: — Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

— Նախ և առաջ հեռացրեք ահա այս, — մոռայլ պատասխանեց Բաթլերը, մոտենալով և մատնացուց անելով նրա ձեռքը: — Այդ ինձ պետք չէ: Ես եկել եմ խոսելու ձեզ հետ իմ աղջկա մասին և ցանկանում եմ, որ ուղղակի ասեք ինձ, որտե՞ղ է նա:

— Դուք նկատի ունեք էլլինի՞ն, — շեշտակի նայելով նրան անխոռվ և հետաքրքրությամբ լի հայացքով, հարցրեց Քառովիերվուդը՝ պարզապես ժամանակ շահելու և իր հետագա խոսքերը մամտալու համար: — Իսկ ի՞նչ կարող եմ ասել ձեզ նրա մասին:

— Կարող եք ինձ ասել, թե որտեղ է նա: Եվ կարող եք ստիճել նրան, որ վերադառնա տուն, ուր և հարի է, որ ի՞նի: Զար բախուալ ձեզ բերեց իմ տունը, բայց ես շեմ եկել այստեղ ձեզ հետ վիճելու համար: Դուք կասեք, թե որտեղ է նա, և հանգիստ կիողներ նրան սրանից հետո, ապա թե ոչ ես... — ծերունին սեղմեց բուռնցքները, նրա կուրծքն սկսեց ելեխջել դժվարությամբ զապվող զայրույթից: — Խորհուրդ եմ տալիս ձեզ ավելի խելացի լինեք և ծայրահեղության շմդիք ինձ, հատկանո՞ւմ եք, — ավելացրեց նա, մի փոքր լուելուց և իրեն տիրապետելուց հետո: — Ես շեմ ուզում ո՛չ մի գործ ունենալ ձեզ հետ: Ինձ պետք է իմ դուստրը:

— Ինձ լսեցեք, մի՛ստր Բաթլեր, — անայլայլ պատասխանեց Քառովիերվուդը, որին իսկական բավականություն էր պատճառում այդ ահսարանը. դա ամրապնդում էր հակառակորդից գերազանց լինելու նրա դիտակցությունը: — Եթե թույլ տաք, ես միանգամայն անկեղծ կլինեմ ձեզ հետ: Հնարավոր է, որ ես գիտեմ, թե որտեղ է ձեր դուստրը, հնարավոր է և հակառակը: Հնարավոր է, որ ես ցանկանամ ասել ձեզ, հնարավոր է և հակառակը: Բացի դրանից, նա կարող է արդ բանը շուգենալ: Իսկ եթե դուք շեք կամենում քաղաքավարի

լինել ինձ հետ, ապա ընդհանրապես իմաստ չկա շարունակելու այս խոսակցությունը: Դուք իրավունք ունեք վարվելու այնպես, ինչպես հաճելի է ձեզ: Գէի՞ք ուզենա բարձրանալ վեր՝ իմ առանձնասենյակը: Այնտեղ ավելի հարմար կլինի մեզ համար:

Բաթլերը ապշանքից խելահեղ նայում էր այն մարդուն, որին մի ժամանակ հովանավորել էր: Իր ամբողջ երկար կյանքում այսպիսի քաղցրախոսիկ, խորամանկ ու անվեհեր գիշատչի չէր տեսել: Ներկայանալով Բաթլերին որպես գառ, ի վերջո դարձավ գայլ: Բանտում լինելը բնավ չէր հեղացրել նրան:

— Ես ձեր սենյակը չեմ գա,— առարկեց Բաթլերը, — դուք էլ չեք կարողանա էյլինի հետ ճողովրել Ֆիլադելֆիայից, եթե հույսը դրա վրա եք դրել: Դրա հոգսը ես կքաշեմ: Ինչպես տեսնում եմ, ձեզ թվում է, թե ուժեղը դուք եք և մտածում եք օգտվել դրանից: Բա՛ն չեք կարողանա անել: Իրը թե քիչ էր այն, որ եկաք ինձ մոտ որպես աղքատ և խնդրեցիք, որ օգնեմ ձեզ, ես էլ ձեզ համար արի այն ամենը, ինչ ներում էր իմ ուժը, կարիք ունեցաք նաև գողանալու իմ աղջկանը: Եթե չկինեին նրա մայրն ու քույրը, ինչպես նաև եղբայրները, որոնց ներբանն էլ դուք շարժեք, ես առանց տեղիցս շարժվելու կփշրեի ձեր գլուխք: Գայթակղեցնել մի գեռատի անմեղ աղջկա և դարձնել նրան անտուակ: Եվ այդպես է անում մի ամուսնացած մարդ: Ծնորհակալ եղաք աստծուց, որ այստեղ ես եմ խոսում ձեզ հետ և ոչ թե իմ որդիներից մեկը: այն ժամանակ դուք արդեն ողջ չէիք լինել:

Սերունին խեղդվում էր անզոր ցասումից:

— Ծատ եմ ցավում, միստր Բաթլեր, — նույն անայլացը պատասխանեց Քառափերվուղը: — Ես ուզում էի շատ բան բացատրել ձեզ, սակայն դուք փակում եք իմ բերանը: Ես չեմ պատրաստվում փախչել ձեր դստեր հետ, ոչ էլ ընդհանրապես մեկնել Ֆիլադելֆիայից: Դուք ճանաշում եք ինձ և գիտեք, որ ես այդպիսի բան չեմ անի՛ իմ ֆինանսական շահերը շատ են ընդարձակ: Մենք երկուս էլ գործի մարդ ենք: Հարկ էր, որ մենք քննեինք ստեղծված կացու-

թյունը և գայինք որեւէ համաձայնության: Ես արդեն մտածել էի գալ ձեզ մոտ և բացատրություն տրալ, բայց հավատացած չէի, որ դուք կցանկանաք լսել ինձ: Հիմա, քանի որ արդեն եկել եք ինձ մոտ, առավել ևս մենք պետք է համաձայնության գանք: Եթե հաճու է ձեզ բարձրանալ վեր, պատրաստ եմ լսելու ձեզ, հակառակ՝ դեպքում՝ մնաք բարով: Ուրեմն...

Բաթլերը հասկացավ, որ գերազանցությունը Քառուիերվուդի կողմն է: Ճար շկար, ստիպված էր գնալ նրա ետևից: Ալլապես, անշոշտ, անհրաժեշտ տեղեկությունները չեն ստանաւ:

— Համաձայն եմ,— մոմուաց նա:

Քառօհերվուդը սիրավիր ձեռվ թողեց, որ նա առաջ անցնի և նրանից հետո մտնելով՝ առանձնասենյակը, փակոց դուռը:

— Մենք պետք է քննենք այդ գործը և համաձայնության գանք,— ասաց նա:— Ես բնավ էլ այնպիսի վատմարգ չեմ, ինչպես դուք եք կարծում, թեև գիտեմ, որ դուք իմ մասին վատ մտածելու հիմքեր ունեք:

Բաթլերը ցասումնալի հայացքը չէր կարում նրանից:

— Ես սիրում եմ ձեր դատերը, նա էլ ինձ է սիրում: Զեղ համար հասկանալի չէ, թե ինչպես եմ ես համարձակվում խոսել այդ մասին, եթք ամուսնացած մարդ եմ. բայց հավատացեք, այդ այդպես է: Իմ ամուսնությունը երջանիկ չէ: Ես մտագիր էի համաձայնել իմ կնոջ հետ, ապահարզան ստանալ նրանից և ամուսնանալ էլլինի հետ: Ամեն ինչ փշացրեց այս խոռացապը: Իմ մտադրությունն ազնիվ է: Պետք է մեղադրել ոչ թե ինձ, այլ այն հանգամանքները, որ այնպիս անհաջող գասավորվեցին մոտ երկու ամիս առաջ: Ես այսքան էլ համեստ չեմ պահել ինձ, բայց չէ՞ որ ես մարդ եմ: Զեր գուստը չի գանգատվում. նա հասկանում է:

Դստեր անունը լսելուն պես Բաթլերի դեմքը ամոթից ու շայրութից արնակալեց, բայց խսկույն տիրապետեց իրեն:

— Եվ դուք կարծում եք, որ եթե նա չի գանգատվում,

ուրեմն ամեն ինչ կարգի՞ն է, — կծու հեղանքով հարց-
րեց նա:

— իմ տեսակետից՝ այս, ձեր տեսակետից՝ ոչ: Դուք,
մի՛ստր Բաթլեր, ձեր հայացքն ունեք իրադարձության մա-
սին, ես էլ՝ իմը:

— Այդ ճի՛շտ է, — գոշեց Բաթլերը: — Այս կետում
դուք միանգամայն իրավացի եք:

— Բայց և այնպես այդ բանը բնավ էլ չի ապացու-
ցում, — շարունակեց Քառվիերվուդը, — իմ կամ ձեր իրա-
վացիությունը: Ըստ իս, տվյալ դեպքում նպատակն այ-
դարացնում է միջոցները: Իսկ իմ նպատակը էլլինի հետ
ամուսնանալն է: Եվ ես կամուսնանամ, եթե, իհարկե, կա-
րողանամ դուքս գալ իմ ֆինանսական դժվարություններից:
Ես էլ, էլլինն էլ, անշոշտ, կոսգենայինք ամուսնանալ ձեռ
համաձայնությամբ, բայց եթե անկարելի է, ապա «չկա»-ին
դատ ու դատաստան չկա:

Քառվիերվուդը կարծում էր, որ իր այս հայտարարու-
թյունը, եթե չհանգստացնի ծեր կապալառուխն, ապա, այ-
նուամենայնիվ, կմղի նրան օգնության կանչելու իր առօ-
րեական իմաստությունը: Առանց ամուսնության հեռանկա-
րի էլլինի այժմյան վիճակը խիստ աննախանձելի կլիներ:
Թեկուզ և ինքը՝ Քառվիերվուդը հասարակության աշքում
վատնումի համար դատապարտված մարդ է, բայց հո դա
զեղծարար չի գարձնում նրան: Նա կծոտի ազատություն
ձեռք բերել և վերականգնվել, անտարակո'ւս ձեռք կրերի,
և դեռ էլլինը պատիվ կհամարի իր հետ ամուսնանալը: Այս-
պես դատելով՝ Քառվիերվուդը հաշվի չէր առնոամ Բաթլերի
կրոնական ու բարոյական համոզմունքների խորությունը:

— Որքան ես գիտեմ, — շարունակեց Ֆրենկը, — վեր-
շին ժամանակներս դուք ձեզնից կախված ամեն ինչ արհ-
ցիք ինձ անդունդ գլորելու համար. ըստ երեսյթին էլլինի
պատճառով: Սակայն դրանով դուք հապաղեցրիք իմ մտա-
դրության իրագործումը:

— Իսկ դուք ուզում էիք, որ օգնեի ձեզ, այս՝ —
անսահման արհամարհանքով, բայց զուսպ ասաց Բաթլերը:

— Ես ուզում եմ ամուսնանալ էլլինի հետ, — նորից զեշտեց Քառակերպուղը: — Նա էլ ուզում է դառնալ իմ կինը: Ներկա հանգամանքներում, ինչպես համանում եք դուք, առարկելու տեղիք չունեք, ինչ էլ մտածեք այդ մասին, մինչդեռ դուք շարունակում եք հալածել ինձ և արգելում եք կատարելու այն, ինչ իմ պարտականությունն է:

— Անպիտան մարդ եք դուք, — պատասխանեց Բաթերը, շատ լավ համանալով, թե խոսքն ուր է շեղում Քառակերպուղը: — Ես ձեզ համարում եմ խաբեքա և չէ՞ ուզենա, որ իմ զավակներից որևէ մեկը կապված լիներ ձեզ հետ: Ես չեմ բացասում, քանի որ այդպես է եղել, ոչ եթե դուք ազատ մարդ լինեիք, էլլինի համար լավագույն ելքը կըներ ձեզ հետ պսակվելու: Դա միակ կանոնավոր քայլն էր, որ դուք կարող էիք անել, եթե ուզենայիք, մի բան, որին խիստ կասկածում եմ: Բայց հիմա այդ բոլոր խոսակցությունները ավելորդ են: Ինչո՞ւ եք դուք ուզում, որ նա թաքնվի որևէ տեղ: Նրա հետ ամուսնանալ չեք կարող դուք: Աղջահարդան չեք ստոհնա: Առանց այդ էլ անհամար զվարացավանքներ ունեք ձեր հայցերի և ձեզ սպառնացող բանտարկության կատակցությամբ: Էլլինը ձեզ համար ավելորդ ծախս է միայն, իսկ փողը ձեզ շատ պետք կլինի, շատ, այլ նպատակների համար: Էլ ինչո՞ւ տանել նրան մի կարգին տնից և դնել այնպիսի դրության մեջ, որ հենց ձեզ համար ամոթաբեր կլինի նրա հետ ամուսնանալը, եթե արդեն բանը դրան հասնի: Եթե դուք թեկուզ մի կաթիլ հարգանք ունենայիք ձեր և այն բանի հանդեպ, որ ձեզ հաճու է անվանել սեր, պետք է թողնեիք նրան ծնողների ասանը, ուր նա կարող էր վարել պարկեցած կնոջ կյանք: Սակայն ականջի օղ դարձրեք ձեզ համար, որ դուք նրանից հեռու եք, որքան երկնքի աստղից, շնայրած այն բանին, ինչ արել եք նրան: Եթե ձեր մեջ պարկեշտուկթյան թեկուզ մի կաթիլ լիներ, դուք չէիք ստիպի նրան անպատվություն գցելու ընտանիքի վրա և փշրելու ծերացած մոր սիրաբ: Ի՞նչ օգուտ ունեք դուք դրանից, ձեր կարծիքով ինչի՞ կհանգեցնի դա: Աստված իմ, եթե մի քիչ խելք ունենայիք,

ինքներդ կհասկանայիք։ Դուք ոչ միայն շեք թեթևացնում ձեր վիճակը, այլ ավելի եք սաստկացնում դրա ծանրությունը։ Ասենք, էյլինն էլ հետագայում շնորհակալ չի լինի ձեզ այս ամենի համար։

Բաթլերը լոեց, ինքն էլ զարմանալով, որ թույլ տվեց իրեն այդպիսի խոսակցություն սկսել։ Այնպես էր նա արհամարհում այդ մարդուն, որ աշխատում էր չնայել նրա դեմքին, սակայն նրա հայրական պարտքն ու պարտականությունն էր տուն վերադարձնել էյլինին։ Իսկ Քառուփերը վուդր նայում էր իր զրուցակցին ուշի-ուշով լսող մարդու պես։

— Ճիշտն ասած, մի՛ստր Բաթլեր, — ասաց նա, — ևս երբեք չեի ուզում, որ էյլինը հեռանա տնից։ Եվ եթե դուք երբեմէ ցանկանաք հարցնել նրան, ինքը կհաստատի։ Ես ամեն շանք թափել եմ, որպեսզի ետ պահեմ դրանից. բայց քանի որ նա իրենն էր պիտօսմ, ինձ մնում էր միայն մի քան. ուր էլ նա գոտնվի, լավ տեղափորված լինի։ Էյլինը խիստ վիրավորված է այն բանից, որ դուք լրտեսներ եք գցել նրա ետևից։ Ահա այդ, ինչպես նաև հակառակ իր կամքին մի տեղ մեկնելու ձեր պահանջը, տնից հեռանալու գլխավոր պատճառն էին։ Մի անգամ ևս հավատացնում եմ ձեզ, որ ես այդ բանը չեի ուզում։ Դուք, երեկի, մոռանում եք, մի՛ստր Բաթլեր, որ էյլինը հասուն կին է և իր կամքն ունի։ Դուք կարծում եք, որ ես եմ զեկավարում նրա քայլերը՝ ի վնաս իրեն։ Մինչդեռ իրականում ես սաստիկ սիրում եմ նրան արդեն երեք թե շորս տարի, և եթե դուք գաղափար ունեք սիրո մասին, ապա գիտեք, որ միշտ չէ, որ սերը հավասարազոր է իշխանությանը։ Եվ ես ամենեին ճշմարտովթյան դեմ շեմ մեղանչի, եթե ասեմ, որ էյլինը ինձ վրա ազդում է ոչ պակաս, քան ես նրա վրա։ Ես սիրում եմ նրան. ամբողջ ցավն էլ այդ է։ Դուք եկել եք ինձ մոտ ու պահանջում, որ վերադարձնեմ ձեր դստերը։ Մինչդեռ ես բնավ էլ համոզված շեմ, թե կկարողանամ այդ բաւնըն անել։ Վստահ շեմ, որ նա կլսի ինձ։ Ավելին՝ իմ խընդրանքը կարող է վիրավորել նրան և մղել կարծելու, թե այ-

ըմս շեմ սիրում իրեն։ Իսկ ես երբեք չեի ուղենա, որ նա
այդպես կարծի։ Ինչպես արդեն ասացի, նա սաստիկ խոց-
ված է իր հանդեպ ունեցած ձեր վերաբերմունքից, ինչ-
պես և այն բանից, որ դուք ստիպում եք նրան հեռանալ
Ֆիլադելֆիայից։ Նրա վերադառնալը ավելի ձեզնից է կախ-
ված, քան ինձնից։ Ես կարող էի ասել ձեզ ուր է նա. բայց
դեռ շեմ իմանում, ճիշտ արած կլինեմ, եթե ասեմ։ Համե-
նայն գեպս ես նրա բնակավայրը կհայտնեմ ձեզ ոչ շուտ,
քան կիմանամ, թե դուք ինչպես կուզենաք վարվել ելինի և
այս ամբողջ գործի հետ։

Նա ավարտեց, շարունակելով անայլայլ նայել ծեր կա-
պալառովին, որը նույնպես իր վայրագ հայացքը չէր կտրում.
նրանից։

— Այդ ի՞նչ գործի մասին եք դուք խոսում, — հարցրեց
Բաթլերը, ակամա շահագրգովելով խոսակցության այդ ան-
սպասելի շրջադարձով։

Հիմա էլ նա, հակառակ, իր կամքին, սկսեց մի քիչ այլ
կերպ նայել այդ ամրող պատմովյանը։ Շատ բան նոր լույ-
սով երևաց նրան։ Ըստ երեսցին անկեղծ է խոսում Քառ-
փերլուսդր։ Հնարավոր է, ի՞հարկե, որ նրա բոլոր խոստուժ-
ները կեղծ ենք բայց հնարավոր է նաև, որ նա սիրում է Էլ-
լինին և իսկապես մտադիր է ժամանակին ապահարզան
ստանալ և ամուսնանալ նրա հետ։ Սակայն ապահարզանը
հակասում է կաթոլիկ եկեղեցու կանոնին, որն այնքան բար-
ձրը էր դասում Բաթլերը։ Ըստ աստծու և մարդու օրենքի՝
Քառփերլուսդն իրավունք չունի թողնելու կնոջն ու երեխանե-
րին և կապելու իր ճակատագիրը մի այլ կնոջ, թեկուզ և էլ-
լինի հետ, անդամ հանուն այդ կնոջ փրկության։ Հասարա-
կության տեսակետից դա հանցագործություն է և ապացու-
ցում է միայն, թե բայց էության ինչ սրիկան է Քառփերլուսդը։
Բայց մյուս կողմից էլ նա կաթոլիկ չէ, և Բաթլերի տե-
սակետը պարտադիր չէ նրա համար, բացի դրանից (և ամե-
նակարևորն էլ դա է), ելլինը վերջնականապես անվանարկ-
ված է (մասամբ դրա պատճառը, իհարկե, նրա անզուսպ
տաքարյունությունն է)։ Հիմա արքան էլ հեշտ չի լինի առ

Հայացքներ ներշնչել նրան և ստիպել, որ պարկեշտ պահի իրեն. այդ բոլոր թեր ու դեմք հարե կլինի քննել: Բաթէերը գիտեր, որ սրտի խորքում երբեք չի հաշտվի ելլինի այդպիսի ամուսնության հետ, իհա՛րկե՛ ոչ, չի կարող եկեղեցու դավանանքին դեմ գնալ, սակայն բավական ողջամտություն ունեցավ մտածելու Քառուիրկվուդի խոսքերի վրա: Գումարենք դրան այն, որ նա տենչում էր էլլինի վերադարձին ու հասկանում էր, որ հիմա էլլինն ինքն է որոշելու իր ապագայի հարցը:

— Ճիշտն ասած, խոսքը մեծ բանի մասին չէ, — շաբունակեց Քառուիրկվուդը, — միայն այն, որ դուք հրաժարվեք ձեր այն մտադրությունից, որով ստիպում եք էլլինին մեկնել Ֆիլադելֆիայից և դադարեցնեք ձեր դավերն հմ դեմ, — այս խոսքերն ասելիս նա շողոմ ժողով ժողովաց. տակավին հույսը չէր կորցրել, որ իր վեհանձն վարքով կմեղմացնի Բաթլերին: — Ես, իհարկե, չեմ կարող հարկադրել ձեզ, որ դուք վարվեք հակառակ ձեր ցանկության: Եվ այս մասին էլ խոսեցի, մի՛սոր Բաթլեր, միայն այն պատճառով, որ եթե էլլինի կապակցությամբ զայրացած լինեիք, հավատացած եմ, որ այդպես թշնամացած չէիք լինի իմ դեմ: Ես գիտեմ, որ դուք ստացել եք մի անստորագիր նամակ և նույն օրն էլ պահանջեցիք ինձնից ձեր ավանդը: Դրանից հետո ես տարբեր աղբյուրներից լսել եմ, որ դուք շատ եք զինված հմ դեմ, և ես չեմ կարող այդ առթիվ չցավել: Ես հանցավոր շեմ վաթսուն հազար դոլարը ծախսելու համար, և դուք գիտեք այդ: Ես ո՛չ մի շարամտություն չեմ արել: Չէի իմանում, որ կսնանկանամ, երբ իմ կարիքի համար օգտվեցի այդ սերտիփիկատներից, և եթե միաժամանակ չպահանջեինք, որ վճարեմ մի շարք ուրիշ փոխառած գումարներ, ես կշաբունակեի իմ գործը մինչև ամսվա վերջը և մյուս ամսի մեռ կին էլ սերտիփիկատները կհանձնեի մարման ֆոնդին: Ես շատ էի գնահատում ձեր բարյացակամությունն իմ հանդեպ և ցավալի էր ինձ համար կորցնել: Ահա այն ամենը, ինչ ուզում էի ասել ձեզ:

Բաթլերը նայեց Քառուիրկվուդին մտախոհ, փորձող հա-

զացքով։ Լավ հատկություններ կան այս մարդու մեջ, մտածում էր նա, բայց և որքա՞ն մեծ է նրա շգիտակցված չար նախասկիզբը։ Բաթլերը շատ լավ էր իմանում և այն, թե ինչպես էր Քառութերվուղը շեկն ստացել և այդ գործի ուրիշ շատ մանրամասնություններ։ Իսկ հիմա Քառութերվուղը այնպես էր պահում իրեն, ինչպես այն երեկո, հրդեհի լուրն ստանալուց հետո։ Ոչ, նա պարզապես խորամանկ է, հաշվենկատ ու անհոգի։

— Ես ձեզ ոչ մի խոստում չեմ անի, — հայտարարեց Բաթլերը։ — Ասացեք, թե որտե՞ղ է իմ գոսատրը, և ես կմըտածեմ ձեր ասածների մասին։ Այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել, դուք հիմք չունեք հույս դնելու ինձ վրա, ոչ մի շնորհ չեք կարող սպասել ինձնից։ Բայց և այնպես ես կմտածեմ։

— Դա միանգամայն բավարարում է ինձ, — պատասխանեց Քառութերվուղը։ — Ավելին ակնկալելու իրավունք չունեմ։ Սակայն խոսենք էլլինի մասին։ Դուք շարունակո՞ւմ եք պնդել, ուր նա մեկնի Ֆիլադելֆիայից։

— Ո՛չ, եթե նա վերադառնա տուն ու պարկեշտ պահի իրեն։ Սակայն պետք է վերջ դրվի այն բանին, ինչ եղել է ձեր մեջ էլլինը խայտառակում է ընտանիքին և կորստյան մատնում իր հոգին։ Նույնը կարելի է ասել և ձեր մասին։ Երբ դուք պատ մարդ լինեք, մենք կհանդիպենք իրար ու կիսունք։ Այլևս ոչինչ չեմ խոստանա։

Քառութերվուղը, որ արդեն գոհ էր էլլինի հարցի կարգադրվելուց, թեև իր համար մեծ բան ձեռք չբերեց, որոշեց, որ էլլինը ըստ հնարավորին պետք է շուտ վերադառնա առուն։ Ի՞նչ իմանաս, թե ինչ արդյունք կունենա գնրագույն դատարանին տված իր բեկման գանդատը։ Գործը վերանացելու միջնորդությունը, որ արված էր «դատավճոի ճիշտ լինելու տարակույս»-ի հիման վրա, կարող է մերժվել, և այդ դաշտքում ինքը կտարովի բանու։ Եթե իրեն վիճակված է կալանք, ապա էլլինը ավելի լավ, ավելի անխոռվ կզգա իրեն ընտանիքի գրկում։ Գալիք երկու ամսվա ընթացքում, մինչև գերագույն դատարանի որոշումը, ինքը գլխացալանքնիրնց

գերծ չի լինի: Իսկ հետո, հետո միանուցն է, կշարունակի պայքարել, ինչ էլ պատահի իրեն:

Այդ բանակցության ընթացքում Քառուփերվուղը շարունակ մտածում էր, թե ինչպես իրագործի իր փոխզիջման որոշումը՝ էյլինին հոր մոտ վերադառնալու խորհուրդ տալով՝ շվիրավորի նրան: Նա գիտեր, որ էյլինը չի հրաժարվի իր հետ հանդիպումներ ունենալուց, ասենք, ինքն էլ չէր ուզում: Եթե չգտնի բավականաշափ ծանրակշիռ հիմք, որն էյլինի աշքում արդարացնի այն հանգամանքը, որ ինքը հայտնել է հորը դստեր գտնվելու տեղը, ապա դավաճանական քայլ կարող է համարվել: Ո՞ւ, այդ բանն անելուց առաջ պետք է գտնել էյլինի համար ընդունելի բացարություն: Քառուփերվուղը գիտեր, որ էյլինը չի կարող երկար ժամանակ բավարարվել իր ներկա վիճակով: Նրա փախուստը մասամբ հետևանք է Ֆրենկի հանդեպ Բաթլերի ոնեցած թշնամական վերաբերմունքի, մասամբ էլ այն հաստատ վճռականության, որով նա ստիպում էր դստերը հեռանալ Ֆիլադելֆիայից ու բաժանվել Ֆրենկից: Ճիշտ է, հիմա արդեն շատ բան փոխվեց: Բաթլերը, ինչ էլ ասեր, այլևս այն պատճող նեմեսիսը¹ չեր: Փափկեց նա, տենչում է միայն վերադարձնել իր դրատերը և պատրաստ է ներել նրան: Պարուություն կրեց նա, տանուլ տվեց իր իսկ սկսած խաղում, և Քառուփերվուղը որոշակիորեն կարդում էր այդ բանը նրա հայացքի մեջ: Պետք է դեմառդեմ խոսել էյլինի հետ և դրությունը բացատրել: Հավանորեն, ինքը կկարողանա ներշնչել նրան, որ իրենց երկուսի շահերն էլ պահանջում են բանը խաղաղությամբ վերջացնել: Իսկ Բաթլերին պետք է ստիպել սպասի մի տեղ, թեկուզ և այստեղ, մինչև որ ինքը գնա ու խոսի էյլինի հետ: Իրեն լսելուց հետո էյլինը ամենայն հավանականությամբ չի վիճի իր հետ:

— Ամենալավն այն կլինի, — ասաց Քառուփերվուղը մի փոքր լուելուց հետո, — եթե երկու-երեք օր հետո տեսնվէ:²

¹ Ոտնահարված իրավունքների վրեժը լուծող աստվածուհին՝ ըստ հունական դիցարանության, Ս. Թ.

էլլինի հետ և հարցնեմ, թե ինչ մտադրություն ունի: Մեր խոսակցությունը կհաղորդեմ նրան, և եթե ցանկանա, ապա կվերադառնա տուն:

— Երկու-երեք օր հետո, — զղայնացած գոռաց Բաթ-լիրը: — Ինչի՞ս է պետք: Հե՞նց այսօր էլ պետք է վերադառնա: Մայրը դեռ չի իմանում, որ նա փախել է: Հե՞նց այսօր, լսո՞ւմ եք: Ես անմիջապես կփնամ նրա ետևից:

— Ոչ, դրանից բան դուրս չի գա, — առարկեց Քառիներվուդը: — Ես ինքս պետք է գնամ: Եթե հաճո է ձեղ սպասել այստեղ, ես կմեկնեմ, կխոսեմ նրա հետ և ամեն ինչ անհապաղ կհայտնեմ ձեզ:

— Լավ, — մոմուաց Բաթլերը, որ ձեռքերը մեջքին, երթևեկում էր սենյակում: — Միայն թե ի սեր աստծու շտապեցք: Ոչ մի րոպե չի կարելի կորցնել:

Կնոջ մասին էր նա մտածում: Քառուիերվուդը ծառային կանչեց, կարգադրեց կառքը լծի, հրամայեց ոչ ոքի շթողնի մտնել առանձնասենյակը և հատվեալ իջակ ցած, թողնելով, որ Բաթլերը զիա ու դա իր համար ատելի սենյակում:

ԳԼՈՒԽ ԽLVII

Թեև Քառուիերվուդը մոտավորապես տասնմեկին գնաց Քելիգենների տուն, այնուամենայնիվ էլլինը դեռ չէր քնել: Վերը՝ ննջարանում նստած, նա Մեյմիի և միսիս Քելիգենի հետ զրուցում և բարձր դասի կյանքի տպավորություններն էր սատարում, եթե հանկարծ զանգը հնչեց: Միսիս Քելիգենը իջավ ու բացեց դուռը:

— Եթե շեմ սխալում օրիորդ Բաթլերն այստե՞ղ է, — հարցրեց Քառուիերվուդը: — Մի՛ հրաժարվեք խնդրեմ հայտնելու նրան, որ հոր հանձնարարությամբ եմ եկել:

Զնայած էլլինի խիստ սկատվերին՝ ոչ ոքի, անգամ Բաթլեր ընտանիքի անդամներին շհայտնել, որ ինքն այստեղ է, Քառուիերվուդի վատահ վարվեցողությունը և Բաթլերի անունը տալը բոլորովին շփոթեցրին միսիս Քելիգենին:

— Սպասեցեք մի րոպեւ Գնամ իմանամ,— ասաց նաև
Եվ շրջվեց դեպի սանդուղքը, Քառուփերվուղն էլ արագ
մտավ նախասենյակ այն մարդու տեսքով, որը խիստ գոհ է
այն անձնավորությանը գտնելուց, որին հանձնարարություն
ուներ տալու .

— Հայտնեցեք խնդրեմ միսիս Բաթլերին, որ երկար
չեմ պահի նրան,— գոշեց նա սանդուղքը բարձրացող միսիս
Քելիգենի ետևից, հուսալով, որ էյլինը կլսի իր ձայնը:

Իսկապես էլ նա խկույն վազեց ցածր էյլինն ապշեց,
որ Ֆրենկը այդքան շուտ եկավ, և իրեն հատուկ ինքնավես
տահությամբ եղրակացրեց, որ տանը սոսկալի իրարանցում
է առաջացել: Նա խիստ կվշտանար, եթե, իրոք, այդպես
վիներ:

Մայր ու աղջիկ Քելիգենները շատ կուգենային իմանալ,
թե ինչ են խոսում նրանք, սակայն Քառուփերվուղը զգույշ
էր: Նոր էր էյլինը ցածր իշել, երբ Ֆրենկը նախադպուշացման
համար մատը դրեց շրթներին ու ասաց.

— Միսիս Բաթլերն եք դուք, այնպես չէ՞:

— Այո՛, ես եմ,— զանալով շփոտալ՝ պատասխանեց
Էյլինը: Ինչպե՞ս էր նա ուզում համբուրել Չրենեին:— Ի՞նչ
է պատահել, սիրելի՞ս,— կամացուկ հարցրեց նա:

— Վախենում եմ, աղջիկս, որ ստիպված կլինես վե-
րադառնալ տուն, — շշնջաց նա, — ապա թե ոչ աներևակա-
յելի խառնաշփոթ կառաջանա: Մայրդ հավանորեն դեռ ոչինչ
չի իմանում, իսկ հայրդ հիմա իմ առանձնասենյակում նըս-
տած, քեզ է սպասում: Եթե դու համաձայնես վերադառնալ,
մեծ դժվարություններից կազատես ինձ: Հիմա բացատրեմ
քեզ...

Եվ հայտնեց նրան Բաթլերի հետ ունեցած ամբողջ խո-
սակցությունը ու այդ խոսակցությունից արած եղրակացու-
թյունները: Էյլինի դեմքը մի քանի անգամ գույնը փոխեց
այս կամ այն մանրամասնությունները լսելիս: Սակայն
Ֆրենկի փաստարկումների հստակությունից և այն հավաս-
տիացումներից համոզված, որ իրենք առաջվա պես հանդիս-
պելու են իրար, զիջեց: Այսպես թե այնպես հոր զինաթաւ-

Դփովթյունը խոշոր հաղթանակ էր դստեր համար: Նա անմիշ չապես հրաժեշտ տվեց միսիս Քելիգենին ու Մեյմիին, հետո նական ժպիտով ասելով, թե տանը չեն կարող ապրել առանց իրեն, ավելացնելով, որ մի ուրիշ անգամ մարդ կուղարկի իրերը բերելու, ապա Քառսիերվոսդի հետ մեկնեց մինչև նրա տան դուռը: Ֆրենկն առաջարկեց նրան սպասել կառաքում, մինչև ինքը իմաց անի հորը:

— Հը՞— հարցրեց Բաթլերը, կուան ճռուցը լսելուց ընդուստ շրջվելով ու կյլինին շտեսնելով:

— Ներքեսում, իմ կառքում սպասում է,— հայտնեց Քառսիերվոսդը: — Չէի՞ք կամենա արդյոք օգտվել դրանից, տուն հասնելու համար: Հետո կառապահնին կուղարկեմ բերի:

— Ո՛չ, շնորհակալ եմ: Ոտքով կգնանք:

Քառսիերվոսդը կարգադրեց ծառացին, որ գնա կառքի մոտ, իսկ Բաթլերը ծանր քայլերով դիմեց դեպի դուռը:

Նա շատ լավ էր հասկանում, որ Քառսիերվոսդը իր աղջկան ամբողջովին էնթարկել է իրեն և հավանորեն երկար ժամանակով: Միակ բանը, որ մնում էր այժմ՝ կյլինին տանը պահելն էր այն հուսով, որ ընտանեկան մթնոլորտը կստիպի նրան խելք գալ: Տան ճանապարհին զրուցելով դստեր հետ, նա զգուշությամբ ընտրում էր բառերը, որպեսզի հանկարծ կրկին շվիրավորի նրան: Այժմ իմաստ չուներ կյլինի հետ վիճելը:

— Դու կարող էիր մի անգամ ևս խոսել ինձ հետ, եյլին, նախքան տնից փախչելը,— ասաց հայրը: — Չեմ կացող նույնիսկ պատկերացնել, թե ինչ կպատահեր մորդ, եթե իմանար այս դեպքը: Բայց նա ոչ մի բան չի կուահում: Դու ստիպված կլինես ասել նրան, որ մնացել էիր քո ծանոթներից մեկի մոտ ճաշի:

— Ես Քելիգենների մոտ էի, — պատասխանեց կյլինը: — Դրանից էլ պարզ բան: Մայրիկը բնավ էլ չի զարմանա:

— Շատ է ծանրացած իմ հոգին, կյլին: Բայց ես ուզում եմ հոսալ, որ դու խելքի կգաս և հետագայում այսպես չես վշտացնի հորդի: Հիմա այլևս ոչինչ չեմ ասի:

Էլլինը վերադարձավ իր սենյակը՝ տարած հաղթանակից արբշիո, և Բաթլերների տանը կարծես ամեն ինչ ընթացավ իր կարգով։ Սակայն ճիշտ չէր լինի կարծել, որ Բաթլերի կրած պարտությունը էապես փոխեց նրա տեսակետը Քառակի վերաբերյալ։

Այդ երկու ամսվա ընթացքում, որ մնում էր նրա տրամադրության տակ, բանտից դուրս դալուց մինչև բեկման գանգատի քննությունը, Քառուփերվուղը կաշվից դուրս գալով, ջանում էր կարգի գցելայնքան ջախջախիչ հարվածի ննթարկաված իր գործերը։ Այնպես նա անցավ գործի, որ ասես ոչինչ չէր պատահել. բայց հիմա, մեզապրական վճռի ննթարկվելուց հետո, հաջողության նրա հույսերը շատ թույլ էին։ Հիմնվելով այն բանի վրա, որ սնանկություն հայտարարելուց հետո կարողացել էր պաշտպանել ամենախոշոր պարտապանների շահերը, Քառուփերվուղը հույս ուներ, որ ազատ արձակվելուց հետո նորից հաճությամբ վարկ կբացեն իրեն այն ֆինանսական հաստատությունները, որոնց օգնությունը կարող էր առավելապես ազդեցիկ լինել, օրինակ՝ «Կուք և Ընկ.», «Կլարք և Ընկ.», «Դրեքսել և Ընկ.» և Զիւրարդ ազգային բանկը, եթե, անշուշտ, իր անվանը լուրջ վնաս չհասցնի դատավճիռը։ Իր անսպառ լավագեսության պատճառով Քառուփերվուղը հաշվի չէր առել, թե ինչ ճշշող տպավորություն կգործի այդ դատավճիռը, արդարացի կամ անարդար, անգամ նրա ամենաշերմ կողմնակիցների վրա։

Քառուփերվուղի՝ ֆինանսական աշխարհում ունեցած լավագույն բարեկամները այժմ եկան այն համոզման, որ նա դլորվում է անդունդ։ Մի գիտնական ֆինանսիստ ասել է մի անգամ, թե աշխարհում չկա ավելի դպայուն բան, քան դրամը. այս հատկությունը դպալապես անցել էր և ֆինանսիստներին, որոնք մշտապես դրամի հետ էին գործ ունենում։ Արժեարդյուքը օգնել մի մարդու, որը հավանաբար մի քանի տարի նստելու է բանտում։ Ա՛յ, եթե նա իր գործք տանուլ տա գերագույն դատարանում և այդ ժամանակ անխուսափելիորեն

պիտի բանտարկվի, այդ գեպքում հարկ կլինի մի բան անել նրա համար, օրինակ՝ միջնորդել նահանգապետի մոտ, բայց մինչև այդ ուղիղ երկու ամիս կա ու թերևս ամեն ինչ հարթվի: Ուստի և վարկը նորից բացելու կամ գործը վերականգնելու իր մշակած պլանն ընդունելու վերաբերյալ Քառութերվոտի արած բազմաթիվ խնդրանքները արժանանում էին քաղաքավարի, սակայն խոսափողական պատասխանների: Մտածենք, տեսնենք. որոշ խոշընդուներ կան... և այլն, և այլն, այսպես էին անվախճան պատրվակներն այն մարդկանց, ովքեր չեին ցանկանում մտահոգություն պատճառել իրենց: Այդ բոլոր օրերին Քառութերվուղը, առույգ ու գուսպ, գնում էր տարբեր բանկեր ու գրասենյակներ, սիրալիր բարեւում էր իր վաղեմի ծանոթներին և հարցերին պատասխանում, թե խոստումնալի հույսեր ունի և իր գործերը հիանալի են ընթանում: Զէին հավատում, բայց գաքիշ էր մտահոգում նրան: Նա ջանում էր համոզել կամ տարհամոզել միայն նրանց, ովքեր, արդարեւ, կարող էին օգտակար լինել իրեն. այս ինդրին էր նվիրում նա իր բոլոր ուժերը և ուրիշ ոչ մի բանով չէր հետաքրքրվում:

— Ա՛, բարի լույս, Ֆրե՛նկ,— ձայն էին տալիս բարեկամները: — Դործերն ինչպե՞ս են:

— Վատ շեն, բնավ էլ վատ շեն,— ուրախ պատասխանում էր նա: — Նույնիսկ շատ լավ են:

Եվ առանց ավելորդ մանրամասնությունների մեջ մըտնելու, բացատրում էր, թե ինչպես է գործում: Երբեմն իր լավատեսությամբ կարողանում էր վարակել նրանց, ովքեր ճանաշում էին նրան և համակրանքով էին վերաբերվում. սակայն մեծ մասը նվազագույն հետաքրքրություն չէր ցուցաբերում նրա նկատմամբ:

Այդ օրերին Քառութերլուղն ու Սթեջերը հաճախակի էին գնում դատարանները, որովհետև Քառութերվուղին ստեղծատեղ կանչում էին նրա սնանկանալու հետ կապված տարբեր հայցերի համար: Տանջալի շրջան էր, բայց նա շերերաց: Որոշեց մնալ Ֆիլադելֆիայում և պայքարել մինչև վերջը՝ վերադարձնելու այն դրությունը, որ ուներ հըր-

դեհից առաջ, վերականգնելու իր անունը հասարակության աշխատամ: Նա կատարելապես համոզված էր, թե կհասնի իր նպատակին, եթե շբանտարկեն իրեն և անգամ այդ դեպքում այնքան ուժեղ էր նրա բնածին լավատեսությունը, որ հույս ուներ հասնել իր նպատակին բանտից դուրս գալուց հետո: Ճիշտ է, Ֆիլադելֆիայում արդեն չէր հաջողվի նրան վերականգնել իր մաքուր անունը. սին երազներ էին դրանք:

Նրա դեմ մարտնչող գլխավոր ուժերն էին Բաթլերի անզուսպ թշնամությունը և քաղաքի կառավարիչների ուսնական ձգությունները: Ինչոր ձեռվ (թեև ոչ ոք չէր կարող ճշտությամբ ասել որտեղից է) քաղաքական շրջաններում այն կարծիքը կազմվեց, որ երիտասարդ ֆինանսիստը և քաղաքի նախկին գանձապետը տանով կտան իրենց գործը և վերջիվերջո կտարկեն բանակ: Սթիները, որ սկզբում պատրաստվում էր հանցավոր ճանաշել իրեն ու անմոռունչ կրել պատիքը, ենթարկվեց բարեկամների հորդորներին, ովքեր համոզում էին նրան բացասել հանցանքը և իր արարքները բացատրելիս վկայակոչել վաղուց գոյություն ունեցող սովորույթը. այլապես, ասում էին նրանք, արդարանալու ո՛չ մի հույս չի ունենա: Այդպես էլ արեց նա, բայց և այնպես դատապարտվեց: Հետո էլ, պատշաճության համար, բեկման դանգատ գրվեց, և նրա գործը հիմա գտնվում էր նահանգի գերագույն դատարանում:

Բացի դրանից, այն աղջկա թեթև ձեռքով, որը ժամանակին նամակ էր գրել Բաթլերին ու Ֆրենկի կնոջը, սկսեցին փսփսալ, որ Բաթլերի դուստր էլլինը սիրային կապ ունի Քառուկերվուդի հետ: Հոլովվում էր Տասներորդ փողոցում գտնվող մի տուն, որն իբր թե Քառուկերվուդը վարձում էր նրա համար: Էլ ի՞նչ զարմանալու բան կար, որ Բաթլերը այդպես վրեժինդրաբար է տրամադրված: Այս բացատրությունը լույս էր սփռում գործի շատ հանգամանքների վրա: Դրա հետեւանքը եղավ այն, որ գործարարական ու ֆինանսական շրջաններում սկսեցին համակրել Քառուկերվուդի հակառակորդներին: Ո՞վ չի իմանում, որ

իր գործունեության սկզբին Քառուփերվուղը վայելում էր Բաթլերի բարեկամական հովանավորությունը: Խոսք չկա, լավ երախտագիտություն է: Նրա կողմնակիցներից ամենավաղեմիներն ու կայուններն անգամ կշտամբանքով օրորում էին գլուխները: Ուրեմն Քառուփերվուղը այստեղ էլ զեկավարվել է «նախ և առաջ իմ ցանկությունները» սկզբունքով, որով մշտապես բնորոշվել է նրա ամբողջ վարքագիծը: Նա, իհարկե, ուժեղ, նույնիսկ փայլուն մարդ է: Դեռ երբեք երրորդ փողոցը չէր ճանաչել գործարարական մտահղացումներում այդպիսի հանդոսան, ձեռներեց, համարձակ ու միաժամանակ զգույշ ֆինանսատիր: Բայց միթե թե շափից ավելի հանդինությունը և մեծամտությունը չեն կարող զայրացնել նեմեսսիսին: Մա էլ մահվան նման հաճությամբ ընտրում է փայլուն թիրակն: Հասկանալի է, որ նա չպետք է գայթակղնցներ Բաթլերի դստերը: Եվ արդեն, անշուշտ, չպետք է այնպես, առանց այլևայլության, վերցրներ այդ շեկը, մանավանդ Սթիների հետ գտնվելուց ու կապը խոհելուց հետո: Զափալանցնց պնդերնեն է: Եվ շատ կասկածելի է, որ այսպիսի անցյալ ունենալուց հետո կարողանա կրկին գրավել նախկին դիրքը: Ամենից ավելի նրան մոտիկ կանոնած բանկիրներն ու ձեռնարկատերերը բավական թերահավատ էին այդ հարցում:

Գալով Քառուփերվուղին, առաջ նրա «նախ և առաջ իմ ցանկությունները» նշանաբանը, ինչպես նաև գեղեցկության ու կանանց նկատմամբ ունեցած սերը մնացել էին անփոփոխ, և այս տեսակետից նա առաջվա պես անզուսպ էր ու թեթևամիտ: Նույնիսկ հիմա էլլին Բաթլերի պես մի աղջրկա գեղեցկությունն ու թովշանքը նրա համար ավելի նշանակություն ունեին, քան հիսուն միլիոն մարդկանց բարյացակամությունը, եթե, իհարկե, նա կարողանար ապրել առանց այդ բարյացակամության: Զիկագոյի հրդեհից ու խումապից առաջ նրա աստղը այնպես արագ էր վնարարացել, որ հաջողաւթյունների արքեցման մեջ նա ժամանակ չէր ունեցել մտածելու, թե ինչպես է վերաբերվում հասարակությունը իր առարքներին: Երկիտասարդությունն

ու կյանքի հրճվանքը եռում էին նրա արյան մեջ: Թարմ էր նա ու կենսական ուժերով լի, ինչպես նորածիլ խոտը: Կյանքը թվում էր նրան փաղաքուշ, ասես գարնան զով երեկո, և ոչ մի տարակույս չէր շփոթեցնում նրան: Կործանվելուց հետո, եթք բանականությունը կարծես պետք է թելադրեր նրան, թե անհրաժեշտ է գոնե միառժամանակ հրաժարվել էլլինից, նա անգամ շմտածեց այդ բանն անելք էլլինը նրա անցյալի սքանչելի օրերի մարմնացումն էր, օղակն էր այդ անցյալի և նրա երազած հաղթական ապագայի:

Ճիշտ է, այժմ նա շատ էր անհանգստանում այն մըտքից, որ եթե իրեն բանտարկեն և պաշտոնապես սնահել ձանաշեն, ապա կզրկվի դրամական բորսայում ունեցած տեղից, և այն ժամանակ Ֆիլադելֆիայում միառժամ կամ նույնիսկ ընդմիշտ կփակվի բարեկեցության լայն պողոտան: Այժմ բորսայի նրա տեղը կալանքի տակ էր որպես նրա ունեցվածքի մի մասը և դրանով իսկ կասեցված էր նրա բորսայական գործոներությունը: Էղուարդն ու Զովեֆը գրեթե միակ պաշտոնյաներն էին, որոնց կարող էր պահել կամաց-կամաց և որոնք մանր գործերով շարունակում էին բորսայում գործել նրա փոխարեն. մյուս բորսայականները Քառուփերվուղի եղբայրների մեջ բնականաբար տեսնութ էին նրա գործակալներին, և եթի սրանք լուր տարածեին, թե իբր ինքնուրուցն են գործում, ապա դա կմղեր Երրորդ փողոցին կասկածելու, որ Քառուփերվուղը հղացել է մի խորածանկ մաներ, որը հազիվ թե ձեռնտու լինի նրա պարտ ստերերին և համենայն դեպս ապօրինի է: Բայց այսպես թե այնպես նա պետք է մնա բորսայում, եթե ոչ բացահայտութեն, ապա ծածուկ, և նրա արագաշարժ ու հնարամիտ խելքը անմիջապես ճարր գտավ. պետք է որոշ հատուցմամբ մի առերեսութ ընկերակից գտնել այն մարդկանցից, ովքեր արդեն անուն էին հանել բորսայում, և այդ ընկերն էլ կլինի փոխարինող անձ՝ գործիք Քառուփերվուղի ձեռքում:

Կարճատև մտորումներից հետո Քառուփերվուղի ընտրությունը կանդ առավ մի մարդու վրա, որը մի փոքր գործ

ուներ, բայց ազնիվ էր և լավ տրամադրված իր հանդեպ: Ոմն Ստեֆեն Ուինգեյթն էր դա, մի փոքրիկ միջնորդ, ոք նույնպես փոքր գրասենյակ ուներ Հարավային Երրորդ փողոցում: Քառասունհինգ տարեկան, միջահասակ, ամբակազմ, բավական համակրելի արտաքինով, խելացի ու աչք վստասեր այդ մարդը ոչ եռանդով էր աշքի ընկնում, ոչ էլ նախաձեռնության ոգով: Որպեսզի կարիերա ստեղծեր, եթե նրա համար առհասարակ կարող էր կարիերայի մասին խոսք լինել, նրան անպայման պետք էր Քառովիերվուսպինման մի գործընկեր: Ուինգեյթը դրամական բորսայում տեղ ուներ, լավ անուն էր հանել, հարգում էին նրան, բայց բարգավաճումից հեռու էր: Անցյալում նա հաճախ էր դիմել Քառովիերվուսպին, որը սիրալիր կերպով ու ոչ մեծ տոկոսով մանր գրիսատվություններ էր անում նրան, խորհուրդ տալիս և այն, ըստ որում անում էր հաճովթյամբ, որովհետև բարյացակամ էր Ուինգեյթի նկատմամբ և ուղարկում էր հոսանքն ի վայր ոչ այնքան ապահով ծերության ընդառաջ, ուստի և պետք է հեշտ համաձայնող լիներ: Այժմ ոչ ոքի մտքով էլ չեր անցնի կասկածել, թե նա Քառովիերվուսպին գործակալն է, իսկ մյուս կողմից Քառովիերվուսը կարող էր կատարելապես վստահ լինել, որ Ուինգեյթը բժախնդիր ճշտությամբ կկատարի իր ցուցումները: Քառովիերվուսը հրավիրեց նրան իր մոտ ու երկար զրուց ունեցավ հետք: Նա անկեղծորեն նկարագրեց դրությունը, ասաց, թե ինչով կարող է Ուինգեյթին օգտակար լինել որպես գործընկեր: Ինչ շափով հույսը գրել է նրա գրասենյակի գործերի վրա և այն: Ուինգեյթը հաճովթյամբ համաձայնեց այդ ամենին:

— Ուրախ լիլինեմ ևս գործելու ըստ ձեր ցուցումների, մի՛ստր Քառովիերվուդ, — վստահեցրեց նրան միջնորդը: — Ես գիտեմ, որ ինչ էլ լինի, դուք ինձ չեք լքի: իսկ ամբողջ աշխարհում չկա մի մարդ, որի հետ ես աշխատեի ավելի հաճությամբ կամ որին ավելի հարգանքով վերաբերվեի, քան ձեզ: Այս փոթորիկը կանցնի, և դուք նորից ձեր բարձրությունը կլինեք: Համենայն դեպս մենք կարող ենք փոր-

Ճել: Եթե մեր գործը լավ չընթանա, դուք վարկեցեք այն
պես, ինչպես անհրաժեշտ համարեք:

Այս պայմանով էլ կայացվեց այդ համաձայնությունը,
և Քառուփերվուղը սկսեց քիչ-քիչ զբաղվել գործով՝ Ուինգեյք
թի անվան տակ թաքնված:

ԳԼՈՒԽ XLVIII

Այն միջոցին, երբ Պենսիլվանիա նահանգի գերագույն
դատարանը վերջապես քննեց առաջին ատյանի հանած դա-
տավճիռը փոխելու ու գործը վերանայելու Քառուփերվուղի
միջնորդությունը, Ֆրենկի ու Էլլինի կապի մասին եղած
22ութիները լայնորեն տարածվեցին: Ինչպես արդեն գիտենք,
այս հանգամանքը վարկաբեկել էր նրան ու շարունակում
էր վարկաբեկել: Դա կարծես հաստատում էր այն տպավո-
րությունը, որը հենց սկզբից էլ ջանում էին ստեղծել հան-
րապետական կուսակցության պարագուխները, այսինքն՝
իսկական հանցագործը Քառուփերվուղն է, իսկ Սթիները լոկ
նրա զոհը: Քառուփերվուղի ոչ լիովին օրինական գործարար
մեքենայությունները՝ նրա ֆինանսական արտասովոր տա-
ղանդի արգասիքը, ներկայացվում էին որպես ժամանակա-
կից Մաքիավելիի վտանգավոր նենգարարություններ, թեև
նա թույլ չէր տվել իրեն ոչ մի անպիսի բան, որ շանեին
ուրիշները սուսափուս: Քառուփերվուղն ուներ կին ու երկու
երեխա, և նրա իսկական մտադրություններին անտեղյակ
ֆիլադելֆիացիները այդ բոլոր շշուկներից վրդովված, ար-
դեն որոշեցին, որ նա եթե ոչ այսօր, ապա վաղը կլքի ըն-
տանիքը, կբաժանվի կիլիանից և կամուսնանա էլլինի հետ:
Քայլացակամ մարդկանց տեսակետից սա արդեն ինքնին
հանցագործություն էր, և եթե հաշվի առնենք նաև Քառու-
փերվուղի ֆինանսական դժվարությունները, նրա դատա-
վարությունը, մեղադրական դատավճիռը և սնանկությունը,
ապա հասկանալի կդառնա, թե ինչու Ֆիլադելֆիայում այդ-
քան հաճությամբ էին հավատում այն ամենին, ինչ ասում

Եին նրա մասին քաղաքի կառավարիչները։ Կդատապարտ-
վի նա։ Գերագույն դատարանը շի հարցի նրա միջնորդու-
թյունը գործը նորից լսելու մասին։ Այսպես են երբեմն մեր
նվիրական մտքերն ու մտադրությունները ինչ-որ հրաշքով
դառնում լայն հասարակության սեփականություն։ Մար-
դիկ իմանում են շատ բան, որ թվում է, թե ոչ մի կերպ
չպետք է հասներ նրանց։ Կամա-ակամա ստիպված ենք
կարծել, թե գոլություն ունի մտքերի հեռավոր հաղորդակ-
ցություն։

Ահա այդ ձեռվ էլ այդ շշուկները հասան ոչ միայն Պենսիլ-
վանիա նահանգի գերագույն դատարանին, այլև նահան-
գապետին։

Այն ամսվա ընթացքում, երբ Քառակերպվողը բեկման
գանգատ տալուց հետո ազատ էր, Հարպեր Սթեցերը և Դե-
նիս Շենոնը կարողացան լինել գերագույն դատարանի ան-
դամների մոտ և արտահայտվել՝ մեկը գործը վերանայե-
լու մասին տրված միջնորդությունը բավարարելու օգափե,
մյուալ դեմ։

Քառակերպվուղը իր պաշտուանի միջոցով գերագույն դա-
տարանին ներկայացրեց հանգամանորեն պատճառաբան-
ված մի դանգատ, որով ապացուցում էր, նախ՝ Հիմնավոր-
ված չէ երդվյալների մեղադրական վճիռը, երկրորդ՝ խա-
խուս են այն ապացույցները, որոնց վրա կառուցված է
գողության և մյուս հանցագործությունների մեղադրանքը։
Սթեցերը երկու ժամ ու տասը րոպեի կարիք ունեցավ՝ շա-
րադրելու իր «պաշտպանի բացատրությունը»։ Չըշանային
դատախազ Շենոնը առարկեց նրան ավելի երկար, և հինգ
դատավորն էլ, բոլորն էլ իրավաբանական մեծ փորձ ունե-
ցող, սակայն ֆինանսական դործերից սակավ իրավեկ
մարդիկ, երկուսին էլ լսեցին ձեռվացող հետաքրքրությամբ։
Դրանցից երեքը՝ Սթիմոնը, Ռեյնին և Բեքուիսը, որ շատ
զգայուն էին արձագանքում ժամանակի քաղաքական հո-
վերին և իրենց տերերի ցանկություններին, սառն վերաբեր-
վեցին Քառակերպվուղի ֆինանսական գործողություններին,
որովհետև գիտեին, որ նա կապ ունի Բաթլերի դստեր հետ։

ևսա էլ բացահայտորեն թշնամական դիրք է գրավել Քառու-
փերվողի նկատմամբ։ Նրանք կարծում էին, թե գործը
քննում են արդարացի ու անաշառ, բայց իրականում ոչ մի
վայրկյան չէին մոռանում, թե ինչպես է Քառափերվուղը
վարդել Բաթլերի հետ։ Մյուս երկու դատավորները՝ Մար-
քինն ու Ռաֆալսկին, ավելի լայն հայցքների տեր մար-
դիկ, բայց իրենց արարքների մեջ ոչ պակաս կաշկանդված
քաղաքական նկատառումներով, հասկանում էին, որ Քառու-
փերվողի գործի վճիռը անարդար էր, սակայն ուզզելու
հնարավորություն չէին տեսնում։ Նա շատ էր վնասել իրեն
քաղաքագետների ու հասարակության աշքում։ Սթեղերի
ասածներից համոզված՝ նրանք ի նկատի առան այն վնա-
սը, որ կրել էր արդեն Քառափերվուղը։ Ավելին, գատավոր
Ռաֆալսկին, որը ժամանակին համարյա այդպիսի սիրա-
վեալ էր ունեցել մի դեռատի աղջկա հետ, ուզում էր առար-
կել մեղադրական վճռի դեմ, սակայն լուրջ խորհրդածու-
թյունից հետո եկավ այն եզրակացության, որ խելացի բան
չէր լինի ներհակ գործել իր քաղաքական տերերի պահանջ-
ներին։ Այնուամենայնիվ, երբ դատավորներ Սթիմսոնը,
Ռեյնին ու Բեքուիսը արդեն պատրաստ էին, առանց տա-
րակույններով նեղություն պատճառելու իրենց, գատավճի-
ռը թողնել ուժի մեջ, Մարքինն ու Ռաֆալսկին հայտարա-
րեցին, թե իրենք «առանձին կարծիք» ունեն։ Այսպիսով
ստեղծվեց իրավաբանական շափաղանց խճճված իրադրու-
թյուն։ Քառափերվուղը հնարավորություն ստացավ, հենվե-
լով «գործողությունների աղատության» իրավունքի վրա,
գործը փոխադրել Միացյալ Նահանգների գերագույն դա-
տարան։ Մեկ է ամեն մի դատարանում, Պենսիլվանիա-
յում թե մի այլ նահանգում, դատավորները անպայման կու-
զենան մանրակրկիտ կերպով քննել այսքան անսովոր ու
կարևոր մի գործ։ Ուստի և նրանք, ովքեր իրենց «առանձին
կարծիքն» ունենալը հայտարարելով՝ մնացին փոքրամաս-
նություն, ըստ էության ոչ մի ոիսկ շարին։ Հանրապետա-
կան կուսակցության պարագլուխները դժգոհություն չեն
արտահայտի, քանի որ Քառափերվուղն այսպես թե այնպես

դատապարտվելու է։ Այդ բանը նույնիսկ նրանց սրտով կլինի, որովհետև ամեն ինչ ավելի վայելու տեսք կունենա՞ թացի դրանից, Մարզինն ու Ռաֆալսկին ուսպում էին սահմանագատվել բավականաշափ շմտածված դատավճռեից, որը պատրաստվում էին արձակել Սթիմսոնը, Ռեյնին ու Բաքուսը։ Այսպիսով ճինգ դատավորներն էլ, ինչպես սովորաբար լինում է նման հանդամանքներում գտնվող մարդկանց, երեակայում էին, թե ազնվորեն ու անաշառ են քըննում գործը։ Եվ Սթիմսոնը իր և իր պաշտոնակիցներ Ռեյնիի ու Բեքուսի անունից 1872 թվականի փետրվարի 11-ին հրապարակեց հետեւյալ վճիռը.

«Մեղադրյալ Ֆրենկ Քառվերվուդը միջնորդում է փոխել երդվալ ատենակալների դատավճիռը առաջին ատյանի դատարանում, որ արձակված է ըստ Պենսիլվանիա նահանգի գործի ընդդեմ Ֆրենկ Քառվերվուդի, և նշանակեց գործի նոր ունկնդրություն։ Գերափույն դատարանը շի կարծում, որ մեղադրյալի նկատմամբ անարդարություն է թույլ տրվել (Այսուհետև կալիս էր գործի բոլոր հանդամանքների բավականին մանրամասն շարադրանքը, ըստ որում նըշվում էր, որ քաղաքային գանձարանում հաստատված սովորությներն ու տրադիցիաները, ինչպես նաև Քառվերվուդի հիրավի անկաշկանդ վերաբերմունքը քաղաքի գումարների հետ, ոչ մի հարաբերություն չունեն Քառվերվուդի՝ օրենքի ողին ու տառը շնարդելու համար պատասխանատու լինելու հարցի հետ)։ Մեղադրյալի կողմից իբր օրենական հիմունքով իրեն հասանելիք գումարների ստանար (բացատրեց դատավոր Սթիմսոնը մեծամասնովթյան անունից) կարող է որակվել որպես գողություն։ Տվյալ դեպքում երդվալները պարտավոր էին հաստատել, արդյո՞ք մեղադրյալը հանցագործ մտադրությամբ է զեկավարվել։ Երդվալները գործը վճռել են ոչ հօգուտ մեղադրյալի, և գերագույն դատարանը նրանց արձակած դատավճիռը համարում է բավականաշափ հիմնավորված։ Ի՞նչ նպատակի համար է մեղադրյալն օգտագործել քաղաքային գանձարանի շեկը։ Մեղադրյալը դտնվում էր սնանկանալու նախօրեին։

Նա իրացնելու համար իրեն հանձնված քաղաքային փոռառության սերտիֆիկատները գրավադրել է ի ապահովում իր պարտքի, իսկ մինչև այդ ապօրինի ձեռվ փոխ է վերցողել հիմք հարցուր հազար դոլար: Եվ երդվալները բոլոր հիմքերն ունեին կարծելու, որ նա օրինական ձեռվ չէր կարողանա լրացուցիլ դումար փոխ առնել քաղաքային դանձարանից: Ուստի և նա գնացել է այնտեղ և խաքեական միջոցով (եթե ոչ ձեւականորեն, ապա ըստ էության) ստացել ևս վաթսուն հազար դոլար: Երդվալները մեղադրյալի այդ գործողությունների մեջ հանցապարտ մտադրություն են տեսել»:

ԱՀա այսպիսի խոռվերով գերադույն դատարանը ձայների մեծամասնությամբ մերժեց Քառվիերվուդի միջնորդությունը գործը վերանայելու մասին: Դատավոր Մարվինը իր և Ռաֆալսկու անունից գրեց հետեւյալը.

«Դատարանի ունեցած ապացուցներից երկում է, որ միստր Քառվիերվուդը շեկն ստացել է որպես քաղաքային գանձարանի գործակալ, իսկ մյուս կողմից չի հաստատված, որ իբրև գործակալ նա չի կատարել (կամ համենայն դեպք կատարելու մտադրություն չի ունեցել) լիովին այն պարտավորությունները, որ նրա վրա էր դնում շեկն ստանալը: Դատարանում պարզվել է, որ քաղաքային փոխառության պարտատոմսերի քանակն ու արժեքը, որ գնված էին մարման ֆոնդի համար, քաղաքական նկատառումներով շպետք է հրապարակելին բորսայում և ոչ էլ որևէ այլ կերպ դառնային հրապարակման ենթակա: Միաժամանակ գանձարանի գործակալ միստր Քառվիերվուդին կատարյալ ազատություն էր տրված տնօրինելու իր պարտն ու պահանջը, պայմանով որ նրա գործառնությունների վերջնական արդյունքը լիովին գոհացուցիլ լինի: Պարտատոմսեր ձեռք բերելու ժամկետները պայմանավորված չեին որևէ համաձայնությամբ, ինչպես և այն գումարները, որ հատկացվում էին դրանց առանձին պարտիաներ ձեռք բերելու համար: Մեռ

ղաղոյալը կարող էր հանցավոր ճանաշվել առաջին կետով, եթե միայն նա փորձեր խարդախ ձևով տիրանալ չեկին՝ հօգուտ անձնական շահերի։ Սակայն երդվալների վճռով այս փաստը չի հաստատված, ավելին, եղած տվյալների հիման վրա չէր էլ կարող հաստատվել. այնուհետև երդվյալները մեղադրյալին հանցավոր են ճանաշել նաև մնացած երեք կետերով, որա համար բացարձակապես ոչ մի ապացույց չունենալով։ Ինչպես կարող ենք մենք հավաստել, որ նրանք անսխալ վճիռ են արձակել առաջին կետի համար, եթե մյուս երեք կետերի մեղադրանքի մեջ այսքան ակներև սխալ է թույլ տրված։ Զայների փոքրամասնությամբ ներկայացված կարծիքով առաջին ատյանի դատարանի վճիռը մեղադրյալին գողովթյան մեջ ամբաստանելու մասին (կետ առաջին) հիմնավորված չէ, երդվյալների վճիռը ենթակա է փոփոխման, իսկ գործը՝ հանձնելու նոր քըննության»։

Դատավլոր Ծափալսիին՝ գործնական, ստվար մտահայեցողական տիտի մի մարդ, ծագումով հրեա և արտաքուստ տիպիկ ամերիկացի, պարտք համարեց գրել նաև մի երրորդ կարծիք, որը պետք է արտացոլեր նրա անձնական նկատառումները, քննադատության ենթարկեր մեծամասնության որոշումը և դառնար լրացում այն կետերի, որոնց մեջ գա համընկնում էր դատավոր Մարվինի կարծիքին։ Քառուփերվուղի հանցավոր լինելու հարցը շատ էր խճճված, և դա երևում էր նախ և առաջ գերազույն դատարանի անդամների տարակարծովթյունից, թեև քաղաքական նկատառումներով նրանք ուղում էին մեղադրական վճիռ արձակել նրա մասին։ Օրինակ՝ դատավոր Ծափալսիին կարծում էր, որ եթե նույնիսկ Քառուփերվուղը հանցանք էր կատարել, ապա այդ հանցանքը չէր կարող որակվել գողովթյուն. դրան նա ավելացրեց.

«Դատարանի ունեցած ապացույցները թույլ չեն տափս եղրակացնել, որ Քառուփերվուղը չէր պատրաստվում մոտիկ ապագայում վերադարձնել իր պարտքը, ինչպես նաև

քաղաքային գանձապետը կամ նրա գրասենյակի կառավաշրիւ Ալբերտ Սթայերու մտադիր չէին ձեռք քաշելու այն արժեքից, որ ինքնին մարմնավորում էր այդ շեկը: Միստր Սթայերսը ցուցմունք է տվել, որ միտքը Քառուփերվոսդր հայտնեց իրեն, թե նա այդքան գումարի քաղաքային փոխառության պարտատոմս է գնել, մինչդեռ հակառակը պենդող փոքրիշատե համոզիչ ապացուց չունենք: Այն հանգամանքը, որ պարտատոմսերը չեն հանձնվել մարման ֆոնդին, թեև հակառակ է օրենքի տառին, սակայն ըստ արդարության պետք է դիտվի որպես վաղուց հաստատված սովորութիւն հետևանք: Գուցե և Քառուփերվոսդի համար սովորություն է դարձել հենց այդպես վարվելը: Իմ կարծիքով գերագույն դատարանի անդամների մեծ մասը շատ լայն է մեկնաբանում «գողություն» հասկացությունը. ահա այդ մեկնաբանման հետևանքով էլ դուրս է դալիս, որ բորսայում խոշոր ու բացարձակապես օրինական գործառնություններ կատարող ամեն մի գործարար հանկարծ, իր համար անակնկալ կերպով, բորսայական խումապի կամ հըբդեհի հետևանքով, ինչպես եղել է միստր Քառուփերվոսդի գեպքում, կարող է հանցագործ դառնալ: Այն, որ դատարանը գրավում է այնպիսի մի դիրք, որն ստեղծում է նման նախադեպեր ու հանգում է այսպիսի հետևանքների, ինձ թվում է առնվազն զարմանքի է արժանիք:

Թեև Քառուփերվուդը որոշ բավականություն էր զգում գերագույն դատարանի անդամների կարծիքները տարբեր լինելուց ու թեև նախօրոք պատրաստվում էր հոռեգույնին և շանում համապատասխանորեն դասավորել իր գործերը, այնուամենայնիվ դառը հրասթափություն էր զգում: Սիւալ կլիներ պնդել թե սովորաբար ուժեղ ու ինքնավստահ այդ մարդը տառապելու անընդունակ էր: Այս կարգի զգացմունքները անմատչելի չէին նրան, սակայն միշտ էլ գտնը վում էին նրա սառը դատողության անողոք վերահսկողության ներքո, որը ոչ մի ակնթարթ չէր դավաճանուած նրանու Այժմ, ինչպես ասում էր Սթեղերը, Քառուփերվոսդին մնում էր միայն մի բան. բեկման գանգատ տալ Միացյալ Նա-

Հարնգների գերագույն դատարանին, ելնելով այն հանգամանքից, որ դատավճռի կետերից մեկը իբր թե հակասում է սահմանադրության մեջ գրված ամերիկյան քաղաքացու հիմնական իրավունքների կանոնադրությանը: Իսկ դա երկարատև ու թանկ նստող պատմություն էր: Բացի դրանից, նրան այնքան էլ պարզ չէր, թե իրականում ո՞ր կետը ենթակա էր բողոքարկման: Դարձյալ շատ ժամանակ կանցնելու մի տարի, տարիուկես, գուցե և ավելի, իսկ ի վերջո գուցե և հարկ լիներ բանտարկության ժամկետն ավարտել, շխոսելով արդեն այն մասին, որ սպասելու ամբողջ ընթացքում չէր հաջողվի ազատություն վայելել:

Ունկնդեմ Սթեջերին, որ բացատրում էր գործի վեճակը, Քառուփերվուղը մի քանի ակնթարթ մտածեց, ապա ասաց.

— Ի՞նչ արած, ըստ երկույթին, մնում է, որ գնամ բանտ կամ փախչեմ Ամերիկայից. Ես լնտրում եմ առաջինը՝ Այստեղ՝ Ֆիլադելֆիայում, ես շարունակելու եմ պայքարը և վերջիվերջո կուրս կրամ հաղթական: Կաշխատեած հասնել կամ կործի վերանայմանը Միացյալ Նահանգների գերագույն դատարանում, կամ նահանգապետի ներմանը Չեմ պատրաստվում փախչել. ամեն ոքի համար պարզ է դա: Եվ սխալվում են նրանք, ովքեր երեակայում են, թե ինձ գցել են մեջքիս վրա: Ես արագ կուրս կպրծնեմ և այդ շնչին քաղաքագետներին կապացուցեմ, թե ինչ բան է իսկական պայքարը: Հիմա արդեն դրանք մի դոլար էլ չեն ստանա ինձնից, ո՞չ իսկ մի ցենտ: Եթե նրանք չհետապնդեին ինձ, ապա ժամանակին կհատուցեի նրանց ամբողջ հինգ հարյուր հազարը: Իսկ հիմա՝ ինչպես չէ:

Նա սեղմեց ատամները, նրա գորշ աշքերը սպառնալից շողշողացին:

— Ես ամեն ինչ արեցի, ինչ կարող էի, Ֆրենկ, — անկեղծ կարեկցանքով ասաց Սթեջերը: — Դուք չեք կարող լընդունել, որ ես պայքարում էի իմ բոլոր ուժերով: Կարող է պատահել, որ ես իմ բարձրության վրա չեղա, դուք ավելի լավ եք տեսնում. սակայն ինձնից կախված ամեն ինչ

արեցի: Ես, իհարկե, կարող եմ որոշ քայլեր էլ անել. բայց
արժե, թե ոչ, ինքներդ պետք է որոշեք: Ինչպես ասեք,
այնպես էլ կընի:

— Վերջ տվեք ցնդաբանովթյան, Հարպե՛ր, — զղայնա-
ցած ասաց Քառափերվուղը: — Եթե ես դժգոհ լինեի ձեր
արածից, չեի քաշվի, կասեի: Շարունակեցեք նույն ոգով և
աշխատեցեք բավականաշափ հիմքեր գտնել բողոքարկե-
լու համար Միացյալ Նահանգների գերագույն դատարանին,
իսկ այդ միջոցին ես կակսեմ կրել իմ պատիժը: Պետք է
կարծել, որ դատավոր Պեյդերսոնը շի ուշացնի դատավճիռն
արձակելու օրը նշանակել:

— Որոշ շափով այդ բանը կախված է ձեզնից, Ֆրե՛նկ:
Ինձ համար դժվար չէ դատավճիռն արձակելը մի շաբաթ.
Կամ տասն օր հետաձգել տալ, եթե դուք անհրաժեշտ հա-
մարեք: Վստահ եմ, որ Շենոնը չի հակառակի: Խնդիրն այն
է, որ վաղը Զեսպերսը կգա ձեր ետևից: Մանուցափիր ստա-
նալով, որ մերժել են վերանայել ձեր գործը, նա պարտա-
վոր է դարձյալ կալանքի տակ առնել ձեզ: Եթե փող շտանը
նրան, կշտապի արգելափակել ձեզ: Բայց նրա հետ կարե-
լի է համաձայնովթյան գալ: Եթե դուք ուզում եք հետաձգել,
կարծում եմ, թե նա կհամաձայնի ազատ թողնել ձեզ իր
գործակալի ուղեկցությամբ, բայց, ցավոք սրտի, պետք է
գիշերեք այնտեղ: Ալբերտսոնի պատմովթյունից հետո, որը
տեղի ունեցավ մի քանի տարի առաջ, այդ կանոնները խըս-
տիվ պահպանում են:

Սթեցերը նկատի ուներ մի բանկային գանձապահի,
որին գիշերը բանտից արձակել էին իրը թե պահակախմբի
ուղեկցությամբ, այնուամենայնիվ դա շխանգարեց նրան
փախչել: Ժամանակին դրա համար խիստ կշտամբանքներ
տեղացին շերիֆի հասցեին, և դրանից հետո դատապարտ-
վածները, անկախ իրենց ունեցվածքային ու հասարակա-
կան դրությունից, պարտավոր էին մինչև դատավճիռն ար-
ձակվելը մնալ բանտում գոնե գիշերը:

Քառափերվուղն անխոռվ մտմտաց դրության մասին,
կանգնած երկրորդ փողոցում գտնվող Սթեցերի գրասեն-

յանի պատուհանի մոտ: Զեսպերսի հյուրընկալությունը մի անգամ վայելելուց հետո նա առանձնապես չէր վախենուած բանտոամ լինելուց, այդ զենտլմենի հսկողության ներքո. սակայն գիշերներն անցկացնել փականքի տակ, եթե դա բնավ չէր կրծատուամ իր կալանքի ժամկետը, թվում էր նրան անհեթեթ: Ի դեպ, այն ամենը, ինչ կարող էր նա ձեռնարկել իր գործերը կարգի գցելու համար (քանի որ խոսքը ոչ թե ամիսների, այլ օրերի մասին էր, որ մնացել էին ազատ անցկացնելու), նա կանի համարյա նույն հաջողությամբ բանտի խցիկում, ինչպես երբորդ փողոցի իր գրասենյակում: Ինչի՞ համար է ուրեմն ավելի լավ է առանց ավելորդ խորհրդածությունների համակերպվել իր բախտին: Կարելի է, անշուշտ, մի երկու օր հապաղել լավ մտմտալու համար, բայց կարիք չկա ավելի միջնորդել:

— Իսկ եթե ամեն ինչին թույլ տանք ընթանա ինչպես ուզում է, ապա ե՞րբ պիտի կարդան ինձ դատավճիռը, — վերջապես հարցընց նա:

— Կարծում եմ ուրբաթ օրը կամ եկող շաբաթ՝ երկուշաբթի, — պատասխանեց Սթեցերը: — Ես չեմ իմանում Շենոնի մտադրությունը: Հարկ կլինի գնամ նրա մոտ ու պարզեն:

— Այո, հարկ կլինի, — համաձայնեց Քառուիերվուդը: — Ուրբաթ օր կամ երկուշաբթի, ըստ էության մեկ է: Ասենք, այնուամենայնիվ, թերես երկուշաբթի: Դուք չէի՞ք կարող համոզել Զեսպերսին մինչև այդ հանգիստ թողնել ինձ: Նա գիտե, որ ինձ կարելի է վստահել:

— Ոչինչ չեմ կարող ասել, Ֆրենկ, տեսնենք: Այս երեկոյան իսկ կխոսեմ հետք: Թերես մի հարյուր դոլլար ստիպի նրան մի փոքր զանց առնել կանոնների խստությունը:

Քառուիերվուդը մոայլ քմծիծաղեց:

— Ես կարծում եմ, որ հարյուր դոլլարը Զեսպերսին զանց առնել կտա ամեն մի կանոն, — ասաց նա, վեր կացավ ու պատրաստվեց գնալ: Ոտքի ելավ նաև Սթեցերը:

— Ես կտեսնվեմ և՛ Շենոնի, և՛ Զեսպերսի հետ, հետո
կդամ ձեզ մոտ Ճաշից հետո տանը կլինե՞ք:

— Այո՛:

Նրանք հագան վերարկուները և դուրս եկան փողոց.
փշում էր փետրվարյան ցուրտ քամի: Քառուփերվուղը շտա-
պեց երրորդ փողոց, իր գրասենյակը, Սթեջերը՝ Շենոնի,
ապա Զեսպերսի մոտ:

ԳԼՈՒԽ XLIX

Քանի որ շրջանային դատախալը շառարկեց մի փոքր
տարկետման դեմ, ապա դատավճուի արձակումը նշանակ-
վեց երկուշաբթի:

Շենոնի հետ խոսելուց հետո, Սթեջերը ժամը հինգին,
երբ արդեն բոլորովին մթնեց, ուղեկորվեց շրջանային բան-
տը: Շերիֆ Զեսպերսը ծուլորեն դուրս եկավ առանձնասեն-
յակից, որտեղ զբաղված էր իր ծխամորնը մաքրելով:

— Բարեկ ձեզ, մի՛սոր Սթեջերը, — ողջունեց նա այցե-
լուին: — Ինչպե՞ս եք: Ուրախ եմ ձեզ տեսնելով: Նստեցե՞ք:
իմդրե՞մ: Պետք է կարծել, որ դարձյալ Քառուփերվուղի կա-
պակցությամբ եք եկել: Հենց նոր շրջանային դատախալից
ծանուցում ստացա, որ ձեր պաշտպանյալը տանու է ավել
դատը:

— Ավա՞ղ, այդպես է, — շողոքորթ շեշտով հաստատեց
Սթեջերը: — Միստր Քառուփերվուղը խնդրեց ինձ գալ ձեզ
մոտ և իմանալ, թե ինչպես մտադիր եք վարվել: Դատա-
վոր Պեյդերսոնը դատավճուի արձակումը նշանակել է երկու-
շաբթի, առավոտյան ժամը տասին: Հուսով եմ, դուք դեմ
շեք լինի, եթե միստր Քառուփերվուղը ձեզ ներկայանա եր-
կուշաբթի, առավոտյան ժամը ովթին կամ համենայն դեպս
կիրակի երեկոյան: Դուք հո գիտեք, որ նա միանգամայն
բարեհույս մարդ է:

Սթեջերը զգույշ տնտղում էր նրա տրամադրությունը
և խոսում միտումնավոր անփութ շեշտով, ցուց տալու

Համար, որ Քաղաքիերվլուսդի բանադ վերադառնալու ժամկետի հարցը դատարկ բան է և դրանով էլ խուսափելու էր հարյուր դպրար վճարելոց: Սակայն Զեսպերսից ազատվելը այնքան էլ հեշտ չէր: Նրա շաղ դեմքը ձգվեց: Ինչպե՞ս է, որ Սթեղերը մի ծառայություն է խնդրում՝ անգամ որևէ «շնորհակալության» ակնարկ խսկ շանելով:

— Չէ՞ որ, մի՛ստր Սթեղեր, ինքներդ էլ եք հասկանում, որ դա հակասում է օրենքին,— սկսեց նա զգուշությամբ և իբր թե կարեկցաբար: — Ի սրտե ես ուրախ եմ աշակեցելու միստր Քառուփերվլուսդին, սակայն այն պատմությունից հետո, որ երեք տարի առաջ հենց այստեղ կատարեց Ալբերտոնը, մենք ստիպված եղանք մեծ խստություններ մտցնել եմ.

— Այո՛, այո՛, ես գիտեմ, շերի՛ֆ, — մեղմ ընդհատեց Սթեղերը, — բայց, ինչպես ինքներդ էլ հասկանում եք, դա այնքան էլ սովորական դեպք չէ: Միստր Քառուփերվուդը շատ խոշոր դորժարար է և շատ բանի պետք է հոգ տանի: Իհարկե, եթե խոսքը վկրագրերից մի յոթանասունհինդ կամ հարյուր դուլար որևէ զրագրի բուռզ դնելուն կամ տոսպանք վճարելուն, առա դրանի՛ց էլ պարզ բան, բայց...

Սթեղերը կանգ առավ ու փափկանկատորեն հայացքը շեղեց, իսկ հիասթափովթյան արտահայտությունն անմիշապես չնշվեց Զեսպերսի դեմքից: Օրենքը, որ սովորական պայմաններում այնքան դժվար էր խախտել, հանկարծ մըդվեց երկրորդական պլան. Սթեղերը հասկացավ, որ այնուուշ մի փաստարկ պետք չի լինի:

— Այս գործը խիստ փափուկ է, մի՛ստր Սթեղեր, — պատասխանեց շերիֆը վիշողաբար, բայց տակավին աղերսաձայն: — Թե մի բան պատահի, ես էլ վայրկենապես պաշտոնիցս կզրկվեմ: Ես ոչ մի գնով այդպիսի վտանդ հանձն չէի առնի, սակայն ընդհանրապես խոսելով՝ ճանաշում եմ միստր Քառուփերվուդին ու միստր Սթիներին, և երկուսն էլ դուր են գալիս ինձ: Բացի դրանից, ինձ թվում է, թե անարդար վարվեցին նրանց հետ: Ես համաձայն եմ բացառություն անել միստր Քառուփերվուդին, միայն թե նա

քիչ երեսա մարդկանց աշքին: Ես չէի ուզենա, որ դա իմանան շրջանային դատախազի գրասենյակում: Հուսով եմ, որ ձեր պաշտպանյալը չի առարկի, եթե ես ձեփ համար այդ ժամանակամիջոցում մի մարդ գնեմ նրա հետ: Օրենքն ստիպում է ինձ այդպիսի բան անել: Նա ոչ մի բանով չի կաշկանդի միստր Քառութերվոսին, կհետեւ նրան հեռվից և ընդհանրապես նրբանկատ կվարդի: Միստր Քառութերվոսի կարող է պարզապես չնկատել նրան:

Զեսպերսը նայեց Սթեղերին համարյա ակնասեռ, և Սթեղերը գլխով արեց՝ ի նշան համաձայնության:

— Լավ, շերի՛ֆ, շատ լավ, դուք ավելի լավ եք իմանում:

Այս խոսքերի վրա գրականից հանեց դրամապանակը, իսկ շերիֆը, ելնելով զգուշովթյունից, ետ տարավ նրան իր առանձնասենյակը:

— Ուզում եմ ձեզ ցույց տալ մի շարք իրավաբանական գրքեր, որ ինձ համար եմ ընտրել, մի՛ստր Սթեղեր, — բարեհոգի շեշտով նկատեց նա գրականը կոխելով տասը դոլլարանոց թղթադրամների փոքրիկ կապը, որ փաստաբանը հանձնեց նրան: — Ինչպես ինքներդ էլ հասկանու՞ն եք, մենք երբեմն տեղեկանքների մեծ կարիք ենք ունենում: Ես էլ ուրեմն մտածեցի, թե վատ չէ ձեռքի տակ ունենալ այս գրքերը:

Զեռքի լայն շարժումով նա ցույց տվեց պետական հաշվետվությունների, դատական կանոնագրությունների, բանտային օրենքների և այլ նորագույն հրատարակությունների շարքը:

— Լավ միտք է, շերի՛ֆ: Պարզապես հիանալի է: Ուրեմն դուք կարծում եք, որ եթե միստր Քառութերվոսը ներկայանա այստեղ երկուշաբթի, ասենք, ժամը ութին կամ ութին անց կեսին, ապա ամեն ինչ կանոնավո՞ր կլինի:

— Կարծում եմ, այո, — համաձայնեց Զեսպերսը, իսկստ ներվայնանալով, բայց ջանալով մնալ ըստ հնարավորին սիրալիր: — Հազիվ թե այդ ժամկետից առաջ ներկայանալու կարիք ծագի: Բայց եթե մի բան պատահի:

իմաց կանեմ ձեզ, և դուք կբերեք նրանք Ես հավատացած եմ, թե դրա կարիքը չի լինի, մի՛ստր Սթեղեր, պետք է կարծել, թե ամեն ինչ բարեհաջող կանցին:— Նրանք վերադարձան գլխավոր նախասենյակը:— Ծատ ուրախ կլինեի կրկին ձեզ տեսնելով, մի՛ստր Սթեղեր, շա՞տ ուրախ,— կըրկնեց Զեսպերսը:— Անցե՛ք, խնդրում եմ:

Շերիֆին սիրալիր կերպով հրաժեշտ տալուց հետո Սթեղերը շտապեց Քառսիերվուդի մոտ:

Տեսնելով Քառսիերվուդին, որ շքեղ, գորշ կոստյում ու հիանալի կարված վիրարկու հագած, իր գրասենյակից վերադրձին բարձրանում էր սեփական սքանչելի մենատան անդաստակը, ոչ ոք չէր կարողանա ենթադրել, որ նա այդ վայրկյանին հարցնում էր իրեն, թե դա իր վերջին գիշերը չէ՞ տանը: Ո՛չ դեմքի արտահայտությունը, ո՛չ էլ քայլվածքը ցույց չէին տալիս հոգեկան ընկճվածությունը: Նա մտավ նախասենյակ, որտեղ, չնայած վաղ ժամին, արդեն լույս էր վառվուա: Այդտեղ նա պատահեց վաղեմի սևամորթ ծառա Սիմսին, որին մականվանել էին «ամանլվիկ» և որը մի դույլ ածովս էր տանում բուխարու համար:

— Այօր շատ ցուրտ է դրսում, մի՛ստր Քառսիերվուդին, — ասաց Սիմսը, որ վաթսուն աստիճան ջերմությունից¹ ցած եղող ամեն ջերմաստիճան համարում էր «ցուրտ»: Կյանքում ամեն ինչից ավելի նա ափսոսում էր, որ Ֆիլադելֆիան չի գտնվում Հյուսիսային Կարոլինայում, որտեղ ծնվել էր ինքը:

— Այո, ցրտանման է, Սի՛մս, — մտացրիվ պատասխանեց Քառսիերվուդը:

Սիժմ նա մտածում էր իր տան մասին, միտք անում, թե ինչպե՞ս էր երևում այդ տունը Զիրարդ պողոտայից, երբ ինքը մոտեցավ դյուան, ի՛նչ էին մտածում հարեանները իր մասին, երբ իրենց լուսամուտներից տեսան իրեն: Այդ օրը պարզկա ու ցուրտ եղանակ էր: Ընդունարանում ու Հյուսիսակում լամպեր էին վառվում, որովհետև այն

¹ Հստ Յհսիուսի՝ մոտ 16 տոտիճան,

օրվանից, ինչ նրա գործերը վատացան, Քառուիերվուղը առանձնապես հոգ էր տանում, որ իր կաֆարանը մույլ ու տխուր շերևա: Փողոցի արևմտյան ծայրում բաց ու մուգ մանիշակագույն ստվերներ էին ընկել ձյան սպիտակ ծածկոցի վրա: Կանաչավուն գորշ տունը, որի պատուհանների կրեմագույն ժանյակե վարագույրներից դուրս էր սահում մեղմ լույսը, այժմ առանձնապես գեղեցիկ էր թվում: Քառուփերվուղը հիշեց, թե որքան եռանդ էր թափիլ այդ տունը շինելու ու պճնելու վրա: Ո՞վ գիտե, կհաջողվի՝ արդյոք դա պահել:

— Որտե՞ղ է միսիս Քառուփերվուղը, — իր մտքերից սթափիվելով, հարցրեց նա նեգրին:

— Կարծեմ հյուրասենյակում է, որ' ո, — եղավ պատասխանը:

Քառուփերվուղն սկսեց բարձրանալ սանդուղքը, մտածելով, որ ծեր Սիմսը նույնպես շուտով կզրկվի պաշտոնից, ևթե, իհարկե, կիլիանը կործանումից հետո շցանկանա պահել իր մոտ: Բայց դա այնքան էլ սպասելի չէ կիլիանից: Նա մտավ հյուրասենյակ, որտեղ կենտրոնում դրված ձվածկ սեղանի մոտ նստած՝ կիլիանը կեռ ու օղակ էր կարում փոքրիկ կիլիանի շրջագեստի համար: Հսկելով ամուսնու ոտնաձայնը՝ նա բարձրացրեց աշքերը ու ժպտաց, ինչպէս վերջին բոլոր օրերին, մի տարօրինակ, անվատահ ժպիտով, որը հոգեկան ցավի, վախի, տանջալի կասկածների վկայություն էր:

— Ի՞նչ լուրեր կան, Ֆրենկ, — հարցրեց կինը:

Նրա շրջումների վրա խաղացող ժպիտը նման էր գլխարկի, գոտու կամ գոհարազարդ գնդասեղի, որոնք ըստ կամս հանում են կամ դնում:

— Առանձնապես ոչինչ, — իր սովորական անհոգությամբ պատասխանեց Ֆրենկը, — եթե հհաշվենք այն, որ ես կարծեմ վերջնականապես տանու տվի իմ գատը: Շուտով Սթենքը կլինի այստեղ, պատասխան կբերի: Երկտող է ուղարկել ինձ, թե երեկոյան կանցնեմ:

Նա չէր ուղում ուղղակի ասել, թե դատը տանու է

տրված. գիտեր, որ կիլիանը առանց այդ էլ ծանր դրույթ իշխան մեջ է, ու չէր ուզում շշմեցնել նաև այդպիսի լուրով:

— Չի՛ կարող պատահել, — վախեցած ու զարմացած շշնչաց կինը՝ վեր կենալով:

Նա միշտ էլ ապրել էր այնպիսի շրջանում, որտեղ բանտերի մասին չեն մտածում, որտեղ կյանքն ընթանում է համաշափ՝ օրից օր, ուր մուտք չեն գործում այնպիսի սոսնկալի հասկացովիցներ, ինչպես դատ ու կալանք, իսկ այս վերջին ամիսները պարզապես խենթացնում էին նրանք Քառութերվուդը այնպիսի վճռականությամբ էր հեռացրել նրան իր կյանքից, այնքան քիչ էր հաղորդակից դարձնում նրան իր գործերին, որ կիլիանը բոլորովին շփոթվել էր՝ շվմանալով, թե իսկապես ինչ է կատարվում: Այն ամենը, ինչ գիտեր նա, իմացել էր ծնողներից ու Ֆրենկի քրոջից, ինչպես նաև թերթերից, որ կարդում էր, երբ ոչ ոք չէր առենում իրեն:

Նա ոչ մի բան չէր կասկածում անգամ այն օրը, երբ Ֆրենկը գնում էր շրջանային բանտ, մինչև որ ծեր Քառութերվուդը վերադարձավ այնտեղից ու պատմեց նրան: Սուհայի հարված էր դա կիլիանին: Իսկ դիմա Ֆրենկը այնքան անխռով՝ մի նոր հարված է հասցնում իրեն, որը, ճիշտն ասած, սրտի ճմլցով սպասում էր ամեն օր, ամեն ժամ: Սա արդեն շափից ավելի էր:

Կիլիանը, որ մանկական շրջազգեստը ձեռքին կանգնած էր ամուսնու դիմաց, մնում էր դեռ սքանչելի կին, թեև արդեն բառասուն տարեկան էր, Քառութերվուդից հինգ տարով մեծ: Նա հագել էր մի շրջազգեստ, որ կարված էր ոչ վաղուցվա բարդավառման օրերին. կրեմագույն ծանր մետաքսե և թուփ պաճուճանը ունեցող այդ զգեստը շատ էր պատշաճում նրան: Կիլիանի աշքերը մի փոքր ներս էին ընկել, կողերն էլ կարմրել. բայց դրանից բացի, ոչ մի բան չէր մատում նրա հոգեկան ծանր ապրումները: Դեռ մասամբ մնացել էր նրա մեջ այն մեղմ անդորրը, որ տասը տարի առաջ այնպես գերում էր Քառութերվուդին:

— Սարսափելի՞ է, — կամացուկ ասաց նա, և ձեռքերը

սկսեցին դողալ: — Սարսահիելի՛ է: Եվ էլ ոչինչ չի՛ կարթե՛
անել: Մի՛թե բանտից շես խուսափի դու:

Նրա հուսահատությունն ու վախը վանող ազգեցու-
թյուն գործեցին Քառափերվուղի վրա: Նա հավանում էր
ավելի ուժեղ, ավելի վճռական կանանց, բայց և այնպես
աս իր կինն էր, և մի ժամանակ սիրում էր նրան:

— Այո, այդպես է երկում, — պատասխանեց Ֆրենկը,
և նրա ձայնի մեջ առաջին անգամ վերջին տարիներին ջերմ
շեշտեր կային, որովհետեւ նա սրտանց մեղքանում էր կր-
լիանին, թեև միաժամանակ վախենում էր ցուցաբերել
քնքշանք, որը կինը կարող էր սիալ մեկնաբանել, քանի որ
ինքը վաղուց ոչ մի զգացմունք չէր տածում կիլիանի համ-
դեպ:

Սակայն կիլիանը այնքան էլ տխմար չէր և հասկանում
էր, որ նրա ձայնի մեջ եղած կարեկցանքն առաջացել էր
միայն նրա, ուստի և իր կրած պարտությունից: Կիլիանը
կամքի լարումով զսպեց արցունքները, բայց և այնպես
ազդված զգաց իրեն: Ֆրենկի ձայնի մեջ եղած նախկին
քնքշանքի արձագանքը կնոջ մեջ արթնացրեց վաղուց ան-
ցածքնացած օրերի հուշեր: Օ՛, եթե կարելի լիներ վերա-
դարձնել դրանք:

— Ես չեմ ուզում, որ դու այդպես մղկտաս իմ պատ-
ճառով, — ասաց Քառափերվուղը, նախքան կինը կարողա-
ցավ խոսել: — Ես դեռ անձնատուր չեմ եղել: Եվ դուրս կգամ
այս պատմությունից: Ես, ճիշտ է, ստիպված կլինեմ գնալ
բանտ, որպեսզի ավելի շքարդացնեմ դրությունը: Ես միայն
մի բան եմ խնդրում քեզնից՝ լմղկտալ մեր ընտանիքի մյուս
անդամների, հատկապես հորս ու մորս ներկացությամբ:
Ոետք է հոգու արիովթյուն պահպանել նրանց մեջ:

Մի ակնթարթ նա ուզեց բռնել կիլիանի ձեռքերը, բայց
զսպեց իրեն: Կինը մտովի նշեց այդ շարժումը: Որքա՞ն
տարբերություն կար տասը-տասներկու տարի առաջ եղածի
միջև: Բայց դա հիմա այնպիսի ցավ չէր պատճառում նրան,
որ կզգար մինչեւ այդ: Կիլիանը նայեց ամուսնուն ու ասելիք
չգտավ: Արդարեւ, ի՞նչ կարող էր ասել:

— Ուրեմն, եթե ամեն ինչ այդպես է լինելու, դու շուտով ստիպված կլինես գնալ, — դժվարությամբ արտաքիրեց նա:

— Դեռ չեմ իմանում. թերևս այսօր, թերևս ուրբաթ օրը՝ Բայց գուցե և երկուշաբթի միայն: Սթեղերից լուր եմ սպասում: Ամեն րոպե նա կարող է լինել այստեղ:

Բա՛նտ, բա՛նտ: Ֆրենկը՝ իր ամուսինը, ամբողջ ընտանիքի հենարանը, պետք է գնա բանտ: Լիլիանը հիմա անգամ չէր հասկանում ինչի համար ու կանգնել էր վարանամիտ. ի՞նչ անի հիմա, ինչպե՞ս վարվի:

— Գուցե և որեէ բան պետք է պատրաստել քեզ համար, — հարցրեց նա հանկարծ, կարծես քնից զարթնելով: — Որեէ բանով օգտակար լինել չե՞մ կարող արդյոք: Ասա՛, Ֆրե՛նկ, ավելի լավ չի՞ լինի, եթե մեկնես Ֆիլադելֆիայից: Չէ՞ որ եթե չուզենաս, կարող ես չգնալ բանտ:

Կյանքում առաջին անգամ լիլիանին դավաճանեց նրա անլրությունը հանդարտությունը:

Ֆրենկը նայեց նրան սառն, փորձող հայացքով. գործարարի զգասար միտքն անմիջապես արթնացավ նրա մեջ:

— Դա կնշանակեր ընդունեմ իմ հանցանքը, լիլիան, իսկ ես հանցավոր չեմ, — շոր պատասխանեց նա: — Ես այնպիսի բան չեմ արել, որն ինձ ստիպեր փախուստ տալ, նմանապես և ո՛չ մի այնպիսի բան, որն արժանի լիներ բանտարկության: Ես գնում եմ այնտեղ լոկ ժամանակ շահելու համար: Զի կարելի անվերջ ձգձգել այդ դատավարությունը: Կանցնի մի որոշ, ոչ այնքան երկարատև ժամանակ, և ինձ կարծակեն դատարանով կամ ներման միջնորդության ընդունուածելով: Իսկ հիմա ես ավելի նպատակահարմար եմ գտնում շրովուգարելել դատավճիռը: Չեմ էլ մտածի փախչել Ֆիլադելֆիայից: Գերազույն դատարանի հինգ անդամներից երկուսը «առանձին կարծիք» են արտահայտել, իսկ դա բավական ծանրակշիռ ապացուց է, թե անհիմն կերպով է հետապնդում հարուցված իմ դեմ:

Լիլիանը հասկացավ, թե ինչ սխալ գործեց ինքը: Ֆրենկի պատասխանը ամեն ինչ բացարեց նրան:

— Ես բնավ էլ չէի ուզում այդ ամել, Ֆրե՛նկ, — Հանձնավոր շեշտով ասաց նա: — Դու ինքդ էլ հասկանում ես իհարկե, ես գիտեմ, որ դու անմեղ ես: Եվ ինչպե՞ս ես, բոլորից անջատ, կարող էի երեակայել հակառակը:

Նա լոեց, սպասելով, թե կլսի՞ որևէ պատասխան, գուշե և քաղցր խոսք՝ երբեմնի սաստիկ սիրո արձագանքը... Բայց Ֆրենկն արդեն նստեց գրասեղանի առաջ, և նրա միտքը զբաղվեց այլ բանով:

Լիլիանը դարձյալ, ցավ զգալու աստիճան, վերհիշեց իր դրովյան կեղծ լինելը: Որքա՞ն թախծակի է այդ ամենը և որքա՞ն անհույս: Ի՞նչ անի ուրեմն ինքը սրանից հետու նվազական պիտի վարվի Ֆրենկը: Ներքին դողը ցնցեց Լիլիանին, սակայն դիմադրելու անընդունակ բնավորությունը ստիպեց նրան գուստ մնալ ու լոել. ինչո՞ւ ժամանակ խլել Ֆրենկից, ինչի՞ մասին խոսել: Մեկ է՝ ոչ մի խելացի բան չի ստացվի այդ խոսակցություններից: Ամուսինն այլևս չի սիրում իրեն. սրանով ամեն ինչ ասված է արդեն: Աշխարհում ոչ մի բան, անգամ այս ողբերգությունը, կրկին չի միացնի իրենց: Ուրիշ կնոջ է նա սիրում՝ էլլինին, և նրա համար նշանակություն չունեն կնոջ տագնապալի մտքերը, երկյուղը, վիշտն ու հոսահատությունը: Ֆրենկին ազատ տեսնելու իր սաստիկ ցանկությունը ամուսինն ընդունակ էր ընդունել որպես նրա հանցավոր լինելու ակնարկություն, որպես կասկած նրա իրավացիությանը, որպես նրա գործառնությունների քննադատություն: Նա մի ակնթարք շրջվեց, իսկ Ֆրենկը վեր կացավ ու դիմեց դեպի դուռը:

— Մի քանի րոպեից կվերադառնամ, — ասաց նա: — Երեխաները տա՞նն են:

— Այո, մանկասենյակում են, — կամացուկ պատասխանեց Լիլիանը՝ շփոթված ու ընկճված:

«Ա՞ի, Ֆրե՛նկ», — քիչ մնաց փախչեր նրա բերանից. բայց նախքան կկարողանար բերանը բացել, Ֆրենկն արդեն արագ իշավ սանդուղքը ու անհետացավ: Լիլիանը վկարադավ սեղանի մոտ, ձեռքով ծածկեց դողացող շըրթունքները: Նրա աչքերը շղարշվեցին խոր վշտի մշուշով:

Մի՞թե, մտածում էր նա, կյանքը կարող էր այսպիսի տիպոք ընթացք ստանալ, իսկ սերը այսպես վերջնականորեն, այսպես անդարձ մարել: Տասը տարի առաջ... Ո՛չ, ինչո՞ւ վերհուշներով քրքրել հոգին: Հնարավոր է ուրեմն դա, և ոչ մի խորհրդածություն այստեղ չի օգնի: Երկրորդ անգամ է արդեն, որ իր կյանքը փշուր-փշուր է լինում: Առաջին ամուսինը վախճանվեց, երկրորդը՝ դավաճանեց, սիրեց ուրիշի, և ի լրումն դրա՝ դեռ բանտարկվելու սպառնալիքի տակ է: Ինչո՞ւ այս բոլոր դժբախտությունները իր գլխին են պայթում: Մի՞թե ինքը այդքան վատ կին է: Եվ ի՞նչ անի հիմա: ո՞ւմ դիմի: Նա չէր պատկերացնում, թե ինչ ժամկետով կարող է դատապարտվել Ֆրենկը՝ մեկ, թե՝ հինգ տարով, ինչպես թերթերն են գրում: Աստված իմ: Հինգ տարվա ընթացքում երեխաները կմոռանան իրենց հորը: Նա ձեռքը սեղմեց ճակատին, որտեղ մի բոլթ ցալ էր զգում: Փորձեց մտովի թափանցել ապագայի մեջ, բայց հիմա գլուխը դատարկ էր: Եվ հանկարծ, անկախ իր կամքից, կուրծքն սկսեց սասաիկ ալեկոծվել, կոկորդը սեղմվեց սուր, ցավագին կը կումներից, աշքերն սկսեցին կծկծալ և այլևս չկարողացավ զսպել զղագական, վշտակոծ, անմխիթար, համարյա անարդյունք հեկեկանքը: Սկզբում նա չէր կարող իշխել իրեն և ամբողջ մարմնով ցնցվելով՝ մնացել էր կանգնած: բայց հետզհետե խուլ ցավն սկսեց հանդարտվել, և կիլիանը նորից դարձավ այն, ինչ մինչև այդ էր:

«Ինչո՞ւ լաց լինեմ,— արտասովոր կրքոտությամբ հանկարծ հարց տվեց նա իրեն:— Ինչո՞ւ մղկտամ այսպես սաստիկ և իւլուր: Մի՞թե կօգնի»:

Սակայն շնայած իրեն ուզգած այդ փիլիսոփիայական իմաստուն հորդորներին՝ նա դեռ լսում էր իր հոգին ցնցող փոթորկի արձագանքները. «Ինչո՞ւ լամ»: Նա կարող էր նույն հաջողությամբ ասել. «Էլ ինչպե՞ս լաց Ախնեմ», բայց չէր ուզում: Հակառակ բանականությանն ու տրամաբանությանը, նա գիտեր, որ այդ փոթորիկը չէր հպվել-անցել, որ ամպերը խոտացել են, կախվել իր գլխին, և ամպրոպը դեռ հարվածելու է նոր ուժով:

Սթեղերի գալն ու բերած լուրը, թե շերիֆը ոչ մի բան շի ձեռնարկի մինչև երկուշաբթի, երբ Քառվիերվուղը պարտավոր է անձամբ ներկայանալ նրան, մի քիչ թուղացրեց մթնոլորտը: Այդ հետաձգուղը Քառվիերվուղին հնարավորություն էր տալիս մտմտալ ամեն ինչ առանց շտապելու և կանոնավորել տնային որոշ գործեր: Նա ըստ հնարավորին մեղմորեն հաղորդեց ամեն ինչ ծնողներին, խոսեց հոր ու եղբայրների հետ, թե անհրաժեշտ է անհապաղ պատրաստվել փոխազդյվելու նվազ ընդարձակ բնակարան: Նրանք միասին քննեցին բազմաթիվ երկրորդական մանրամասնություններ, չէ՞ որ փլչում էր մի շատ մեծ տնտեսություն. բացի դրանից, Քառվիերվուղը հաճախ խորհրդակցում էր Սթեղերի հետ, այցելեց Դմիտրին, «Ձեյ Կուք և Ընկ.» ֆիրմայի ներկայացուցիչ էվերի Սթոռւնին, Զորջ Ռութերմենին (Քառվիերվուղի նախկին տերը՝ Հենրի Ռութերմենը, արդեն վախճանվել էր), նահանգի նախկին գանձապետ Վան-Նութրենդին, որ ընտրություններից հետո այդ պաշտոնը չէր վարում, և ուրիշ անձանց. մի խոսքով գլխացավանք շատ կար: Քանի որ, իսկապես, պետք էր գնալ բանտ, ապա նա ուզում էր, որ իր ֆինանսիստ բարեկամները միանան ու միջնորդնն նահանգապետին հօգուտ իրեն: Այդ միջնորդության ու իր ելակետի համար առիթ պետք է լինի գերագույն գատարանի երկու անդամների «առանձին կարծիքը», Քառվիերվուղն ուզում էր, որ Սթեղերը հետևի դրան, իսկ ինքը, ուժ շխնալնելով, շտապում էր տեսնվել այն բոլորի հետ, ովքեր կարող էին օգտակար լինել իրեն, այդ թվում և էղուարդ Թայի, որն առաջվա պես գործ էր անում Երրորդ փողոցում, Նյուտոն Թարգուղի, Արթուր Ռիվերսի, «տեքստիլի արքա» Ջողեֆ Զիմերմանի, որը հիմա միլիոնատեր էր դարձել, գատավոր Քիթլենի, Թերենս Մելիխենի, որ ֆինանսական շրջանների նախկին ներկայացուցիչն էր Հարիսբուրգում, և շատ ուրիշների:

Քառվիերվուղը Ռելիխենին խնդրեց կապ հաստատել

թերթերի հետ և զանալ այնպես տրամադրել նրանց, որ կամ-պանիա կազմեն ի նպաստ իր ազատագրման, իսկ Ուոլթեր Լիին՝ գլխավորել ներման համար նահանգապետին տրվելիք հանրագրի ստորագրությունները հավաքելու գործը։ Ենթադրվում էր, որ այդ հանրագրի ստորագրեն բոլոր խոշոր ֆինանսիստները և այլ ականավոր անձինք։ Լին, ինչպես և Անգլիանենը և շատ ուրիշներ, հաճությամբ խոստացան իրենց աջակցությունը։

Հստ էության ուրիշ բան չկար ձեռնարկելու, մնում էր միայն, որ մի կարճ պահ հանդիպի Էյլինին, մի բան, որ այդ բոլոր վազվագուքների ու շտապ գործերի մեջ երբեմն բուլորվին անկարելի էր թվում։ Եվ այնուամենայնիվ նա ժամանակ գտնում էր այդ հանդիպումների համար, այնքան մեծ էր Էյլինի սիրո ճաճանչներից շերմանալու նրա ձգտումը։ Ի՞նչ աշքեր ուներ Էյլինը այդ բոլոր օրերին։ Գրանք վառվում էին Ֆրենկին իրենը անվանելու, նրան երջանիկ տեսնելու ցանկությունից։ Երբ մտածում էր, որ այնպես շարշարում են նրան՝ իր Ֆրենկին։ Օ՛, նա կուահոմ էր ամեն ինչ, որքան էլ Ֆրենկը քաջ երեար, որքան էլ առավել խոսեր իր հետ։ Չէ՞ որ իր սերը նրան տարավ բանտ։ Էյլինն այդ գիտեր։ Ինչպիսի՞ դաժանության ընդունակ եղավ իր հայրը։ Իսկ որքա՞ն ստոր են Ֆրենկի թշնամիները, թեկուզ այդ տիսմար Սթիները, որի նկարները հաճախ էր տեսնում թերթերում։ Ֆրենկի ներկայությամբ Էյլինը հաճախ էր թալկանում իր ուժեղ, գեղեցիկ, ամենաուժեղ, ամենախիզախ, ամենախելացի, ամենափաղաքուշ սիրեցյալի՝ աշխարհի ամենագեղանի մարդու համար զգացած տառապանքներից։ Ինչպես նա չիմանար, թե ինչ է զգում այժմ իր սիրեցյալը։ Քառակերպուդը նայում էր նրա աշքերին, դրանց մեջ կարդում այդ խոլ, բոցալառ զգացմունքը և հուզված՝ ժպտում էր։ Ինչպիսի՞ սեր։ Մոր սերը իր ձագուկի, շան սերը իր տիրոջ հանդեպ։ Ինչպես կարողացավ ինքը արծարծել դա։ Քառուփերվուդը պատասխան չէր գտնում, բայց այդ զգացումը հրաշալի էր։

Այս վերջին ծանր օրերին նա ուզում էր որքան կարելի

է շատ տեսնել կը ինին: Ազատ անցկացրած մեկ ամսվա ընթացքում՝ մեղադրական վճիռ արձակվելու օրվանից մինչև գերագույն դատարանի կողմից նրա միջնորդությունը բավարարելու մերժումը, նա շորս անգամ հանդիպեց Ֆրենկին: Այժմ նրանց մնում էր մի հանդիպում ևս՝ շաբաթ օրը, ճակատագրական երկուշաբթիից առաջ, երբ պետք է դնար բանտ: Նա ելլինին չէր հանդիպել այն օրվանից, ինչ արձակված էր գերագույն դատարանի վճիռը, սակայն «ցպահանջ» նամակներ էր ստացել նրանից և տեսակցություն էր նշանակել Քեմդենի փոքրիկ պանդոկում: Գետի մյուս ափին գտնվող այդ ավանը Քառուիերվուդին թվում էր առավել անվտանգ վայրը Ֆիլադելֆիայի շրջակայքում: Նա չէր պատկերացնում, թե ելլինն ինչպես կընդունի գալիք երկարատև անշատումը և ընդհանրապես ինչ կերպ է վարվելու առաջիկայում, երբ հնարավորություն չի ունենա խորհրդակցել իր հետ որևէ առթիվ: Անհրաժեշտ է խոսել նրա հետ, հանգստացնել: Սակայն այս անգամ, ինչպես նախատեսել էր և որից, խղճալով նրան, վախենում էր, ելլինն ավելի մոլեկնորեն անձնատուր եղավ իր վշտին ու վրդովմունքին: Հեռվից տեսնելով Ֆրենկին՝ շտապեց նրան ընդառաջ այն վճռականությամբ ու համարձակությամբ, որ միայն նա էր թույլ տալիս իրեն նրա հետ վարվելիս, համարյա տղամարդու եռանդով, որը միշտ գմայլեցնում էր Քառուիերվուդին: Զեռքերը գցելով նրա վզին՝ ելլինն սկսեց արցունքները կուլ տալով:

— Միրելի՞ս, գու կարող ես ոչինչ շասել ինձ: Ամեն ինչ կարդացել եմ թերթերում: Մի՛ տանջիր քեզ, անուշի՛կս, ես քեզ սիրում եմ: Ես կսպասեմ քեզ, չեմ լքի քեզ, եթե նույնիսկ ստիպված լինեմ տասը տարի սպասել: Ի՞նչ տասը տարի, հարյուր տարի, բայց այնպես ցավ եմ զգում քեզ համար, թանկագի՞նս: Ես շարունակ մտովի քեզ հետ կի՞նեմ, սիրեցյա՞լդ իմ, հոգուս բոլոր ուժերով ես կսիրեմ քեզ:

Եվ շարունակում էր գուրգուրել Ֆրենկին, իսկ սա նաև յում էր նրան այն անխոռվ քնքանքով, որը վկայում էր թե՛ նրա զսպվածությունը և թե՛ ելլինի հանդեպ տածած սերն ու զմայլանքը: Մի՛թե կարող է շսիրել նրան, — ասում

էր ինքն իրեն Թառւփերվուգը:— Եվ ո՞վ ասես չէր սիրի: Այնքան կիրք կար նրա մեջ, այնքան թրթիռ ու տենչ: Այժմ ինքը պաշտում էր էլլինին թերես ավելի, քան երբեք, որովհետև չնայած իր ամբողջ ներքին ուժին, շկարողացավ ենթարկել նրան իրեն: Անդամ այն օրերին, երբ ինքը տրամադրված էր քննադատաբար և ներամփոփ, էլլինը վարվում էր իր հետ որպես իր անքակտելի սեփականության, որպես իր խաղալիքի: Նա հաճախ, մանավանդ երբ հուզված էր լինում, խոսում էր Ֆրենկի հետ այնպես, ասես սա իր իրոքը որիկ երեսառածը լիներ, իր երեխան: Ժամանակ առ ժամանակ Ֆրենկին սկսում էր թվալ, թե էլլինը կկարողանա ենթարկել իրեն իր կամքին, կստիպի ծառայել իրեն, այն աստիճան այդ աղջիկը յուրօրինակ էր ու վստահ իր կանացի հրապուցիրին:

Ահա նա հիմա սիրո խոսքեր է մրմնչում Ֆրենկին, կարծես սա բոլորովին հուսալքվել է և կարիք ունի մայրական հոգատարության ու քնքանքի, ու թեև վշտերը բնավ չէին խորտակել նրան, բայց մի ակնթարթ թվաց, թե հիրավի խորտակված է:

— Իմ գործերը այնքան էլ վատ չեն, էլլին,— ի վերջո սիրտ արեց նկատել Ֆրենկը, և նրա ձայնի մեջ ավելի քնքանք ու գորով կար, քան սովորաբար. սակայն էլլինը նվազագույն ուշադրություն շգարձնելով նրա ասածին, շարունակեց նույն ավյունով.

— Ո՛չ, ո՛չ, ամեն ինչ վատ է դասավորվում, տղա՛ս: Ես գիտեմ: Օ՛, Ֆրենկ, խե՞ղճ Ֆրենկ: Բայց ես կգամ քեզ մոտ: Համեմայն դիպս այդ բանը արդեն կարող եմ գլուխ բերել: Ի՞նչ հաճախականությամբ են այնտեղ թույլ տալիս այցելելու կալանավորներին:

— Ասում են երեք ամիսը մեկ, աղջիկս. բայց երբ ես այնտեղ լինեմ, կարելի կլինի այդ հարցը կարգադրել: Սակայն արժե՞ արդյոք, որ դու երես այնտեղ: Ավելի լավ չէ՞ մի քիչ սպասես: Չէ՞ որ այդ ձեռվ ավելի կբարկացնես հորդ: Եթե նա ուզենա, այնտեղ էլ կարող է խիստ վնասել ինձ:

— Երեք ամիսը մե՞կ, — խելակորույս րնդհատեղ Քառ-

փերվուդին, հենց որ սկսեց համոզել:— Ո՞չ, Ֆրե՛նկ, չի՛ կարող պատահել, չե՛մ հավատում: Երեք ամիսը մե՞կ: Չե՞մ դիմանա: Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել: Ես ինքը կգնամ բանտապետի մոտ, և նա թույլ կտա տեսակցել քեզ հետ: Վստահ եմ, որ թույլ կտա, եթե ինքս անձամբ խոսեմ հետ:

Հուգմունքից խեղդվում էր նա ու չեր կարող կանգ առնել, մինչև որ Քառափերվուդն ընդհատեց նրան.

— Դու շեմ մտածում քո ասածի մասին, եյլի՛ն: Ուշքի՛ եկ: Մոռանում ես քո հորը, քո ընտանիքը: Գուցե և քո հայրը ծանոթ է բանտապետին: Մի՛թե դու ուզում ես, որ ամբողջ քաղաքը խոսի, թե Բաթլերի աղջկեր վազում է բանտ՝ ինձ տեսնելու: Աստված դիտե, թե Հայրդ ի՞նչ կանի քեզ: Բացի դրանից, դու ինձ շափ շեմ իմանում քաղաքական բոլոր մանրը ինտրիգաններին, որոնք բամբասում են պառավ կանանց պես: Դու ստիպված ես շափել-կշռել քո ամեն մի քայլը: Ես շեմ ուզում կորցնել քեզ, և ինքս էլ եմ ուզում տեսնել քեզ: Միայն թե մտածված ու զգուշ գործիր: Մի՛ շտապիր տեսակցության գալ: Հասկանո՞ւմ ես, թե ինչպես եմ կարոտելու քեզ. բայց մինչ այդ պետք է տնտղենք-իմանանք ամեն ինչ: Դու ինձ շեմ կորցնի. այնտեղից ոչ մի տեղ շեմ փախչի:

Նա լոեց. նրա աշքին երևաց երկաթապատ խցիկների մի երկար շարք, որոնցից մեկում բանտարկվելու է ինքը, ինքեւս երկար ժամանակով... Պատկերացավ էյլինը՝ դռան վանդակի միջով կամ հենց խցիկի ներսում իր հետ խոսելիու Սակայն այս մոայլ հեռանկարը չխանգարեց նրան անմիշապես մտածելու, թե որքա՞ն հմայիլ է այսօր իր սիրուեին: Որքա՞ն մանկահասակ և ուժեղ է մնացել նա: Ինքը մոտնում էր հասունության, իսկ էյլինը տակավին դեռատի էր ու սքանչելի: Այդ գենստը շատ էր պատշաճում նրան. սե ու սպիտակ շերտավոր մետաքսի, հետնաբարձիկավոր (այդ ժամանակի տարօրինակ նորաձևությամբ) շրջազգեստ, ծովաշան մորթե մոլցտակ ու գլխարկ, որ անփութորեն նստել էր նրա շեկ-ոսկեթույր վարսերին:

— Գիտեմ, ամեն ինչ գիտեմ, — համառորեն պնդում էր Էլլինը: Բայց մտածիր. երե՞ք ամիս: Հոդյա'կս, ես չե՞մ կարող, չե՞մ ուզում այդքան սպասել: Հիմարությո՞ւն է. երե՞ք ամիս: Ես գիտեմ, որ իմ հայրը ստիպված չէր լինի սպասել երեք ամիս: Եթե խելքին փշեր տեսնվելու այդտեղ գտնվող մեկի հետ, ստիպված չէր լինի սպասել և' նա, ով աջակցության համար դիմեր նրան: Ուրեմն ես էլ այդքան շեմ սպասի: Ճար-ճամփա կգտնեմ, անպայմա՛ն:

Քառսկերվուղը ժպտաց: Հեշտ բան չի լինի էլլինին տար-համոզելը:

— Բայց դու միստր Բաթլերը չես, աղջի'կս: Ոչ էլ կուզենաս զեկուցել նրան, թե ինչ մտադրություններ ունես:

— Անշուշտ, բայց այնտեղ ոչ մի կենդանի էակ չ' իմանա ով եմ ես: Կզամ խիտ քող քաշած: Չեմ կարծում, թե բանտապետը ճանաշում է հորս: Ասենք, եթե նույնիսկ ճանաշում է, և եթե ես դիմում եմ նրան, նա ինձ շի մատնի:

Էլլինի՝ իր թովշանքին, իր հմայքին, իր մինաշնորհյալ վիճակին վստահ լինելը ոչ մի շափի ենթակա չէր: Քառսկերվուղն օրորեց զլուխը:

— Զքնա՛ղդ իմ, դու աշխարհի ամենալավ ու ամենաանդրդվելի աղջիկն ես, — քաղցրությամբ ասաց նա և մոտեցնելով կրծքին, ամուր համբուրեց: — Բայց և այնպես հարկ է, որ լսես ինձ: Ես ունեմ մի փաստաբան՝ Սթեցերը դու ճանաշում ես նրան: Հենց այսօր նա խոսելու է բանտապետի հետ մեր գործի մասին: Հավանորեն կարողանա ամեն ինչ սարքել, բայց նույնքան հնարավոր է, որ ձեռնունայն մնա: Ես այդ կիմանամ վաղը կամ կիրակի ու կգրեմ քեզ: Բայց տե՛ս, ո՛չ մի բան մի ձեռնարկիր, մինչեւ ինձնից նամակ չստանաս: Ես հավատացած եմ, որ կկարողանամ կես առ կես կրծատել տեսակցությունների միջև եղած ժամկետները. Հնարավոր է նաև, որ մենք կկարողանանք հանդիպել իրար ամիսը կամ երկու շաբաթը մե՛ր Այնտեղ գրելն էլ երեք ամիսը մեկ են թույլատրում...

Էլլինը դարձալ էր ուզում բռնկվել, բայց Ֆրենկը շարունակեց.

— Ես հավատացած եմ, որ որոշ շափով կկարողանամ շրչանցել նաև այս կանոնը. բայց ինձ մի՛ գրիր, քանի իմաց շեմ տվել, կամ համենայն դեպս մի՛ ստորագրիր ու ո՛չ մի հասցե ցուց մի տա: Այնտեղ բոլոր նամակները բացում ու կարդում են: Տեսնվելիս կամ նամակում, միենույն է, զգույշ եղիր. գիտեմ, որ դու այնքան էլ շրջահայց չես: Ուրեմն խելացի եղիր: Լա՞վ:

Ուրիշ շատ բաների մասին էլ խոսեցին. Հարազատների, երկուշաբթի օրը դատարանին ներկայանալու մասին, ինչպես նաև արդյո՞ք շուտ բաց կթողնեն, երբ քննեն իրեն ներկայացված հայցերը և ինքն էլ ներկա լինի, ապա կներեն՝ արդյոք իրեն և այլն: Էլլինը առաջվա պես հավատում էր նրա աստղին: Նա թերթերում կարդացել էր գերագույն դատարանի երկու անդամների առանձին, ինչպես նաև ոչ հօգուտ Ֆրենկի վճիռ կայացրած մյուս երեքի կարծիքները: Նա հավատացած էր, որ Ֆրենկի կարիերան Ֆիլադելֆիայում բնավ էլ վերջացած չէ. կանցնի որոշ ժամանակ, նա կվերականգնի իր դրությունը, հետո էլ կմեկնի որևէ տեղ ու իրեն էլ կտանի հետը: Ինքը, իհարկե, խղճում է միսիս Քառակիերվուդին, բայց սա Ֆրենկին հարմար չէ: Նրան պետք է դեռատի, գեղեցիկ, ուժեղ կին, մի խոսքով այնպիսին, ինչպես ինքն է, ճիշտ այլպիսին: Այժմ նա խելահեղորեն ու կրքոտ համբուրում էր Ֆրենկին, մինչև եկավ բաժանվելու ժամանակը: Նրանք մշակեցին հետագա գործողությունների պլան այնքան, որքան կարելի էր նման վիճակում, որը թույլ շէր տալիս որևէ բան նախատեսել ճըշտիվ: Վերջին բոպեին երկուսն էլ ընկճված էին, սակայն Էլլինը օգնության կանչեց իր ամբողջ սառնասրտությունը՝ անհայտ ապագայի աչքին համարձակ նայելու համար:

Եկավ երկուշաբթին՝ այն օրը, երբ Քառուփերվուզը վերջնականապես պետք է գնար բանտ: Արվել էր այն ամենը, ինչ կարելի էր անել: Նա հրաժեշտ տվեց հորը, մորը, եղբայրներին ու քրոջը: Կնոջ հետ խոսակցությունն ընթացավ մի տեսակ գործնական ու սառն: Տղային ու աղջկան առանձին մնաս բարե շասաց: Նախորդ օրերին՝ հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ ու կիրակի, երբ հայտնի դարձավ, որ երկուշաբթի պետք է գնա բանտ, տուն վերադառնալուց հետո Քառուփերվուզը պատրաստվում էր սրտազեղ ու քաղցր խոսել նրանց հետ: Նա հասկանում էր, որ այժմ ակամա վրնաս է հասցնում նրանց: Բայց, ի միջի այլոց, չէր հավատում դրան: Զէ՞ որ մարդկանց մեծ մասը դասավորում է իր կյանքը՝ շնայած հանգամանքներին և անկախ այն բանից, թե որքան է բախտը ժպառում նրանց: Վերջիվերջո այդ երեխաները կապրեն մյուս երեխաներից ոչ վատ, չխոսելով արդեն այն մասին, որ ինքը, անշուշա, նյութապես կօգնի նրանց, որքան ուժերը ներեն: Նրա ծրագրի մեջ չէր մտնում երեխաներին կնոշից խլել՝ մորից զրկել: Նրանք պիտք է մնային կիլիանի հետ: Ինքը անկեղծությամբ ուզում էր, որ նրանք լավ ապրեն: Մերթ-մերթ տեսության կդա ուր էլ նրանք ու մայրը հաստատվեն: Բայց իր համար գործելու ազատություն էր ուզում, ուզում էր բաժանվել կիլիանից, նորից սկսել կյանքը, նոր ընտանիք կազմել էլլինի հետ: Ահա թե ինչու վերջին երեկոները, մանավանդ կիրակնօրյա այդ երեկոյան նա ավելի ուշադիր էր երեխաների հանդեպ, քան սովորաբար, թեև զանում էր, որ նրանք շիմանան մոտալուտ անշատումը:

— Ֆրե՛նկ,— դարձավ նա իր բավական սառնարյուն տղային,— ես շատ կուգենայի, որ դու մի քիչ աշխուժանայիր և դառնայիր մեծ, ուժեղ ու առողջ պատանի: Դու շես սիրում խաղալ: Լավ կլիներ, եթե ընկերանայիր տղաներին ու դառնայիր նրանց պարագլուխը: Եվ ինչո՞ւ շպետք

է զբաղվեիր նաև մարմնամարզությամբ ու չփորձեիր զարգացնել քո մկանները:

Այս խոսակցությունը տեղի էր ունենում ծնողների տան հյուրասենյակում, ուր շփոթված և գլուխը կորցրած հավաքվել էին Քառուփերվոսդ ընտանիքի բոլոր անդամները:

Փոքրիկ կիլիանը, որ նստել էր մեծ սեղանի մոտ, հոր դիմաց, բարձրացրեց հայացքը և հետաքրքրությամբ նայեց նրան ու փոքր եղբորը: Երկու երեխաներից էլ խնամքով թաքցնում էին, թե ինչ տիսուր ընթացք էր ընդունել Քառուփերվոսդի գործը. սրանք կարծում էին, որ իրենց հայրը պարզապես մի երկու ամսով մեկնում է այլ տեղ: Կիլիանը կարդում էր Ծննդյան տոնի տոթիկ նվեր ստացված հեքիաթներ:

— Նա ոչինչ չի ուզում անել, — հայտարարեց աղջիկը, կտրվելով իր գոքից և անսպասելիորեն քննադատական հայացք նետելով եղբորը, — նույնիսկ չի ուզում մրցավագքի դուրս գալ ինձ հետ:

— Ասացե՞ք խնդրեմ, ինչքա՞ն հետաքրքիր է մրցավագքի դուրս գալ քեզ հետ, — փնչաց փոքրիկ Ֆլենկը: — Ուզենամ անոգամ, մեկ է՝ դու չես կարող:

— Զեմ կարող, հա-ա, — նեղացավ աղջիկը: — Հապա փորձի՛ր ինձնից առաջ անցնել:

— Լիլիա՞ն, — սաստով շեշտով կասեցրեց մայրը:

Քառուփերվուդը ժպտաց ու քնքշագին շոյեց որդու գլուխութ:

— Վնաս չունի, Ֆլենկ, դու կմեծանաս, քաջ տղա կըդառնաս, — ասաց հայրը՝ թեթևակի կսմթելով նրա ականցը: — Միայն թե մի՛ քաշվեր և պինդ կաց:

Բայց տղայից լսեց այն արձագանքը, որի հույսն ուներ: Քիչ հետո միսիս Քառուփերվուդը տեսավ, թե ինչպես Ֆլենկը գրկեց աղջկան, սեղմեց իր կրծքին և սկսեց քնքշությամբ շոյել գանդրահեր գլուխը: Մի ակնթարթ Լիլիանի մեջ խանդ առկայացեց դստեր հանդեպ:

— Իմ աղջիկը առանց ինձ խելոք կլինի, այնպիս չէ, — շշնչաց նրան Քառուփերվուդը:

— Իհարկե, Հայրի'կ, — ուրախ պատասխանեց փոքրիկ լիլիանը:

— Դեհ, ուրեմն, Հրաշալի է, — ասաց նա և կռանալով, քնքշագին համբուրեց աղջկան: — Աշիկներդ սիրեմ:

Միսիս Քառվիերվուդը նրա գնալուց հետո հառաջեց: «Երեխաներին ամեն ինչ, ինձ ոչի՞նչ», — մտածեց նա, թե երեխաներն էլ անցյալում այնքան փաղաքշանք չեին ստացել հորից:

Այդ վերջին պահին Քառվիերվուդն իր մոր հետ այնքան գորովալի էր ու պատրաստակամ, որքան սիրող որդին կարող է լինել: Ֆրենկը շատ լավ էր իմանում, թե որքան նեղ է մոր հետաքրքրությունների շրջանակը և որքան է նա տառապում իր համար... ամբողջ ընտանիքի համար: Երբեք չէր մոռանում նրա ջերմ հոգատարությունը իր հանդեպ մանկական տարիներին և պատրաստ էր ամեն ինչ անել, միայն թե այդ ժեր տարիիքին կարողանար զերծ պահել նրան այս սոսկալի հարվածից: Բայց եղածը եղած է: Երբնմն Ֆրենկի նյարդերը լարվում էին ծայր աստիճան, ինչպես լինում է միշտ մարդուն՝ հաջողության կամ պարտության պահերին. բայց նա հաստատ հիշում էր, որ անհրաժեշտ է շայլայլվել, ցույց շտալ, թե ինչ է կատարվում հոգում, քիչ խոսել ու ընթանալ իր ուղիով, ոչ թե հլուհնազանդ, այլ ինքնավստահ ընդառաջել այն բանին, ինչ սպասում էր նրան հետագայում: Հենց ալյապես էլ պահում էր նա իրեն այդ վերջին առավոտը՝ սպասելով, ոչ, իհարկե, իզուր, որ իր օրինակը վարակիչ կերպով կազդի ամբողջ ընտանիքի վրա:

— Դեհ, ուրեմն, մայրի'կ, — քաղցրությամբ ասաց նա վեր կենալով (թույլ չտվեց մորը, ոչ էլ քրոջը ու կնոջը գնան դատարան, սրովհետեւ ոչ մի օգուտ չէր տա իրեն, իսկ նրանց վրա ձնշող տապավորություն կգործեր), — ժամանակն է, որ գնամ: Մի՛ անհանգստանա, ոչ էլ ընկճակիր:

Ֆրենկը գրկեց մորը, որը երկար ժամանակ քնքշանքով ու խելահեղ համբուրում էր որդուն:

— Գնա, Ֆրենկ, — դժվարությամբ արտաքերեց մայ-

թը շնչակտուր, բաց թողնելով իր գրկից:— Կաղոթեմ քեզ
համար:

Ֆրենկը անմիջապես հեռացավ՝ մորից՝ վախենալով
այդ պահը երկարաձգելուց:

— Մնաս բարով, Լիլիա'ն,— մեղմ ու բարեկամաբար
ասաց նա կնոջը:— Ես հավանորեն մի քանի օրից ևս վե-
րադառնամ, ինձ բաց կթողնեն դատարան գնալու և որոշ
գործերի քննությանը ներկա լինելու համար:

Քրոջը Ֆրենկն ասաց.

— Մնաս բարով, Աննա', շթողնես, որ նրանք շատ
ողբուկոծ անեն:

— Նիստից հետո կտեսնվենք,— կարճ ասաց նա հո-
րը և եղբայրներին, ասլա, ինչպես միշտ ձգված ու պերճա-
տես, արագ իջավ ընդունարանը, ուր նրան արդեն սպա-
սում էր Սթեղերը, և միասին դուրս եկան:

Սաստիկ թախով համակվեց ընտանիքը, երբ դուռը
փակվեց նրա վրա: Մի քանի րոպե ևս նրանք շցրվեցին: Մայրը լոփկ լաց էր լինում. հայրն այնպիսի տեսք ուներ,
ասես կորցրեց վերջին ընկերոջը աշխարհում. բայց նա զո-
տեպնդվում էր և ամեն կերպ աշխատում շայլայլվել:
Աննան հորդորում էր լիկիանին ընկճվել, իսկ սա շիմանա-
լով ինչ մտածի, հույսն ինչի վրա դնի, շարունակ ճգնում
էր մտովի գուշակել ապագան: Արեք, որ քիչ առաջ դեռ այն-
քան շողշողուն էր, մայր մտավ նրանց տան վրա:

Գ Լ Ո Ւ Խ ԼII

Բանտում բարեհամբույր դիմավորեց Քառվիերվուդին
ջեսպերսը, ուրախացած, որ ամեն ինչ հարթ ընթացավ և
իր անունը անբիծ մնաց: Քանի որ դատարանի օրակարգութ
կար մի քանի գործ, նրանք որոշեցին այնտեղ գնալ ժամը
տասից ոչ շուրջ: Նորից եկավ էդդի Զանդերսը, որին հանձ-
նարարված էր հետեւ Քառափերվուդին՝ դատավոր Պերդեր-
սոնի մոտ բերելու, հետո էլ ուղղիչ բանտ տանելու Արդին

տրված էին նրան գործին վերաբերող բոլոր թղթերը բանապետին հանձնելու համար:

Կարծում եմ, թե ձեզ հայտնի է, որ Սթիները նույնպես գտնվում է այստեղ, — ծածուկ հայտնեց Սթենթին շերիֆ Ջեսպերսը: — Ոչ մի ցենտ չունի այլնա, բայց եռայնուամենայնիվ առանձին խցիկում տեղավորեցի նրան: Չէի ուզում այդպիսի մարդուն ընդհանուր բաժնում նստեցնել:

Ջեսպերսը բացահայտ կերպով համակրում էր Սթիներին:

— Ճիշտ եք արել, և ես շատ ուրախ եմ նրա համար, — Ժպիտը զսպելով, պատասխանեց Սթեղերը:

— Որքան ես եմ հասկանում, միստր Քառվիերվուդին անախորժ կլիներ Սթիներին հանդիպել այստեղ. ուստի նաև ամեն միջոց ձեռք եմ առել դրանից խուսափելու համար: Հենց նոր Զորջը գնաց այստեղից իմ մի ուրիշ օգնականի հետ:

— Շատ լավ! Հիանալի կանխատեսություն է դա ձեռ կողմից, — նորից հավանություն տվեց Սթեղերը:

Շերիֆը տակտով էր վերաբերվում, և Սթեղերը ուրախ էր Քառվիերվուդի համար: Ըստ երևույթին, Ջեսպերսի ու Սթիների միջև խիստ բարեկամական հարաբերություններ էին հաստատվել՝ չնայած վերջինիս շփոթված ու անհույս վիճակին: Քառվիերվուդն ու նրա ուղեկիցները ոտքով գընացին, որովհետև դատարանը հեռու չէր, և ճանապարհին շարունակ աննշան բաներից էին խոսում՝ գիտակցաբար շրջանցելով լուրջ հարցերը:

— Ամեն ինչ դասավորվում է ոչ այնքան վատ, — նուկատեց էդուարդը հորը: — Սթեղերը համողված է, որ մի տարի հետո կամ ավելի շուրջ նահանգապետը ներդաշնորհի Սթիներին, իսկ այն ժամանակ անխուսափելիորեն ազատ պիտի արձակի նաև Ֆրենկին:

Ծեր Քառվիերվուդը հազար անգամ լսել էր այս դատողությունը, սակայն չէր ձանձրանում կրկին ու կրկին լսելուց: Այդ խոսքերը հանգստացնում էին նրան, ինչպես օրորոշային երգը՝ մանկանց: Գետինը ծածկած և այդ տարի

կարծես հալչել շուզող ձյումը, պարզէա ու արևաշող օրը հույս էին ներջնչում, որ դատարանում այնքան մեծ բազմություն չի լինի. այս ամենը, թվում էր, թե սաստիկ ըզբաղեցնում էր Քառուփերվուդներին՝ հորն ու եղբացրներին: Թեկուզ մի փոքր շափով հոգին ճնշող ծանրությունը թեթևացնելու համար ծերունին խոսեց մի հացակտորի համար կովտող ճնճղուկների մասին և զարմացավ ձմռան ցուրտը տանելու նրանց ընդունակության վրա: Ֆրենկը, որ գնում էր առջեց՝ Սթիքերի ու Զանդերսի կողքին, զրուցում էր փաստաբանի հետ այն դատաքննության մասին, որ արվելու էր իր գրասենյակի գործերի կապակցությամբ, ինչպես նաև դրան պատրաստվելու անհրաժեշտ միջոցառումների մասին:

Դատարանի շենքը համանելուց հետո Քառուփերվուդին դարձյալ մտցրին այն փոքրիկ պահականոցը, որտեղ նա մի քանի շաբաթ առաջ սպասում էր երդվալների վճռին:

Մեր Քառուփերվուդը երկու որդիների հետ տեղ գրավեցին նիստերի սրահում: Էդդի Զանդերսը մնաց իր հսկողությանը հանձնված մեղադրյալի մոտ, այդտեղ էր գտնվում նաև Սթիները շերիֆի մյուս օգնականի՝ ոմն Ռիլկերսոնի հետ, բայց և՛ նա, և՛ Քառուփերվուդը ձևանում էին, որ իբր թե շեն նկատում իրար: Ֆրենկը, ճշշտն ասած, չէր առարկում իր նախկին գործընկերոջ հետ խոսելու դեմ, բայց տեսնում էր, որ Սթիները երկնչում ու ամաշում է, ուստի երկուսն էլ անխոս նստել էին՝ ամեն մեկն իր անկյունում: Քառասուն բոպե տեսած տանջալից սպասումից հետո բայց վեց դատարանի սրահը տանող դուռը ու եկավ դատական կատարածուն:

— Դատավճռին սպասող կալանավորներ, ուտքի ելեք, — հրամայեց նա:

Դատավճռին սպասողները, ներառյալ Քառուփերվուդն ու նախկին գանձապետը, վեց հոգի էին: Պրանցից երկուսը կողոպտիչներ էին, որոնց բռնել էին հանցանքի տեղում, գիշերային «գործողության» պահին:

Մյուս կալանավորը՝ քսանվեց տարեկան մի երիտասարդ, այլ բան չէր, եթե ոչ ձիու գող, որ հանցավոր էր ճա-

նաշված մի բանջարավաճառի ձին գողանալու ու ծախելու համար: Եկ վերջապես վեցերորդը՝ մի լողող, անշնորհք, անգրագետ ու թթամիտ նեզը, որ փայտի պահեստի մոտից անցնելիս տարել էր այդտեղ ընկած արձիճե խողովակի մի կտոր, նպատակ ունենալով՝ ծախել կամ փոխանակել մի բաժակ վիսկիի հետ: Ճիշտն ասած, նրա գործը չպիտի լըսվեր նահանգի գերագույն դատարանում: բայց քանի որ փայտի պահեստի պահակը նրան բռնելիս նեզը հրաժարվել էր հանցավոր ճանաչել իրեն, նույնիսկ Հասկանալով, թե ինչ են ուզում իրենից, ապա այդ գործը տրված էր դատարան: Հետագայում նա փոխել էր միտքը, խոստովանել էր և այժմ պետք է կանգներ դատավոր Պեյդերսոնի առաջ, մեղադրական վճիռը լսելու կամ ազատ արձակվելու համար, որովհետև թաղամասային դատարանը նրա դործը հանձնել էր բարձր ատյանին լսելու: Այս բոլոր տեղեկությունները հայտնեց Քառուիերվուղին էդդի Զանդերսը, որ ստանձնել էր ուղեցուցի ու դաստիարակի դերը:

Դատարանի սրահը լեփ-լեցուն էր: Քառուիերվուղը իրեն սաստիկ նվաստացած դպաց, երբ ստիպված եղավ մյուս կալանավորների հետ անցնել կողմնային անցուղով: Նրա ետևից գալիս էր Սթիները՝ լավ հագնված, բայց շփոթված, շախչախված, հիվանդ ու ընկճված:

Ըստ ցուցակի առաջինը նեզըն էր՝ անունը Զարլլ Աքերմեն:

— Ինչո՞ւ են այս մարդուն բերել ինձ մոտ, — զղայնացած հարցրեց Պեյդերսոնը, իմանալով, թե որքան է գնահատված այն իրը, որի գողության համար մեղադրվել էր Աքերմենը:

— Ձե՛րդ ազնվություն, — շտապեց բացատրել շրջանային դատախաղի օգնականը, — այս մարդը թաղամասային դատարանում հրաժարվել է հանցավոր ճանաչել իրեն՝ կամ հարրած լինելու և կամ մի այլ պատճառով: Իսկ քանի որ հայցվորը շի ցանկացել ետ կենալ մեղադրանքից, ապա քաղաքամասի դատարանը ստիպվել է մեղադրյալին փոխադրել այստեղ: Բայց հետո մեղադրյալը միտքը փոխել է և

շրջանային դատախազի մոտ հանցավոր ճանաչել իրեն։ Մենք
էլ ակամա հարկադրվեցինք ծանրաբեռնել ձեզ այս դորժով։

Դատավոր Պետքերսոնը ծաղրաբար նայեց նեգրին,
որին ի միջի այլոց թուավ էլ չչփոթեցրեց այդ հայացքը. նա
մնացել էր կանգնած, հարմար ձևով հենված պատվարին,
որի ետևը մեղադրյալները սովորաբար կանգնում են ձրգ-
ված ու աջից դողղալով։ Նա մինչ այդ էլ եղել էր դատված՝
հարբեցողության, անկարգության ու այդպիսի բաների հա-
մար, բայց և այնպես մնացել էր նախիլ ու միամիտ։

— Հապա՛, Աքերմե՞ն, — խստորեն հարցրեց «նորին
ազնվոսթյունը», — գողացե՞լ եք, թե՞ չեք գողացել արճիճի
խողովակի կտորը, որի արժեքը, ինչպիս նշված է այստեղ,
շորս դոլար ություն ցենտ է։

— Այո, սը՛ր, գողացել եմ, — ակսեց նեգրը։ — Ասեմ
ձեզ, պարո՞ն դատավոր, թե ինչպես եղավ։ Մի անգամ, շա-
բաթ օր, իրիկնադեմին անցնում էի փայտի պահեստի մո-
տից. իսկ այդ ժամանակ ես անգործ էի, ու ցանկապատի
արանքից տեսա խողովակի կտորն այցտեղ գցված։ Ես էլ
մի տախտակ գտա, մտցրի ցանկապատի տակից, գլորելով
մոտեցրի այդ խողովակը ու տարա։ Հետո էլ ահա այս պա-
րոնը՝ ուրեմն պահակը, — նա հոետորական ժեստով մատ-
նացուց արեց վկաների նստարանը, ուր տեղ էր գրավել
հայցվորը, նկատի առնենալով, որ դատավորը կարող է պա-
տահել որևէ բան հարցնի իրեն, — եկավ իմ տուն և գող ան-
վանեց ինձ։

— Բայց չէ՞ որ դուք իսկապես էլ տարաք խողովակը,
այնպես չէ՞։

— Տարա, սը՛ր ի՞նչ խոսք կարող է լինել։

— Եվ ի՞նչ արիք։

— Նաղեցի քսանհինդ ցենտով։

— Ուզում եք ասել ծախեցի՞ք, — ուղեց «նորին ազնվո-
վոսթյունը»։

— Այո, սը՛ր, ծախեցի։

— Մի՞թե չեք իմանում, որ լավ չէ այդպիս անել։ Մի՞-
թե չեք հասկանում, որ տախտակը մտցնելով ցանկապատի.

տակը ու խողովակը գլորելով ձեր կողմը՝ դուք գողություն եք անում:

— Այո, սը՛ր, գիտեի, որ լավ բան չէ, — բարեմտորեն ժպտալով, պատասխանեց Աքերմենը: — Ճիշտն ասած, և չէի կարծում, թե դա գողություն է. բայց գիտեի, որ լավ բան չէ: Ես, իջարկե, հասկանում էի, որ շպետք է վերցնեմ:

— Իհա՛րկե, հասկանում էիք, անշո՞ւշտ, հասկանում էիք: Ցավն էլ հենց այդ չ: Հասկանում էիք, որ դա գողությունն է և, այնուամենայնիվ, գողացաք: Խոկ նա, ով նեղ-բից գնել է գողոնը, ձերբակալվա՞ծ է արդյոք, — հանկարծ հարցրեց դատավորը դատախազի օգնականին: — Նրան պատասխանատվության պետք է կանչել, որովհետև որպես գողոն գնող, ավելի խիստ պատժի է արժանի, քան այս նեգրը:

— Այո, սը՛ր, — պատասխանեց դատախազի օգնականը, — նրա գործը հանձնված է դատավոր Յողերին:

— Լավ: Ուրեմն ամեն ինչ կանոնավոր է, — խստորեն հավանություն տվեց Պիյդերսոնը: — Ես անձամբ գողոն գլոնելը դասում եմ ամենալուրջ հանցագործությունների շարքը:

Այնուհետև կրկին դիմեց Աքերմենին:

— Հիմա լսեցե՛ք, Աքերմե՛ն, — շարունակեց նա ջղայնացած, որ ստիպված է զբաղվել ամենաշնչին գործով: — Հիմա ես ձեզ մի բան կասեմ, դուք էլ բարեհաճեցեք ուշադիր լսել ինձ: Կանգնեցե՛ք ուղիղ: Մի՛ հենվեք պատվարին: Հիշեցեք, որ դուք կանգնած եք դատարանի առաջ:

Աքերմենը զույգ արմունկները պատվարին հենած, կանգնել էր այն մարդու նման, որը առանց շտապելու զրուցում է ցանկապատի մյուս կողմում գտնվող բարեկամի հետ: Լսելով դատավորի սաստումը՝ նա շտապեց ուղղվել, դեմքին պահելով միամիտ ու հանցավոր արտահայտությունը:

— Աշխատեցեք ձեր գլխից շհանել այն, ինչ ասելու եմ ձեզ: Մի կտոր արմիճի խողովակ գողանալով դուք հանցագործություն եք կատարել: Էսո՞ւմ եք ինչ եմ ասում: Եվ ես

կարող էի դրա համար խիստ պատժել ձեզ։ Նկատի ունեցեք, որ օրենքը իրավունք է տալիս ինձ մի տարով ուղարկել ձեզ ուղղիչ բանտ, հասկանո՞ւմ եք, թե ինչ է նշանակում մի տարի ծանր աշխատանք կատարել խողովակի մի կտոր գողանալու համար։ Ուրեմն, եթե դուք ընդունակ եք հասկանալ, լավ լսեցեք իմ խոսքերը։ Ես ձեզ հիմա բանտ չեմ ուղարկի։ Մի քիչ կսպասեմ, թեև դատավճորի մեջ կը գրվի՝ մի տարի ուղղիչ բանտարկություն։ Մի՛ տարի։

Աքերմենի դեմքը կապտեց։ Լեզվով թրջեց չորացած շրթունքները։

— Սակայն դատավճիոը հիմա ի կատար չի ածվի։ Դա կախված կմնա ձեր վրա, և եթե դուք նորից բռնվեք ուրիշի պատկանածը վերցնելիս, ապա կպատժվեք միանգամից՝ և՛ այն, և՛ այս հանցագործության համար։ Հասկացա՞ք ինչ ասացի։ Պարզ է իմ ասածը։ Պատասխանեցեք, հասկացա՞ք։

— Այո, սը՛ր, հասկացա, սը՛ր, — մրթմրթաց նեգուը։ Այդ նշանակում է, որ դուք հիմա կազմառեք ինձ, ահա ձեր ասածի իմաստը։

Բազմությունից շատերը քրքչացին, անգամ դատավորը հազիվ գապեց ժամկետ։

— Ես ձեզ կազմառեմ մինչև առաջին գողությունը, — որոտաձայն գոշեց նա։ — Հենց որ մի անգամ էլ բռնվեք գողություն անելիս, անմիջապես ձեզ կրերեն այստեղ, և այն ժամանակ դուք կուղարկվեք ուղղիչ բանտ մի տարով և, բացի դրանից, գումարած այն ժամանակը, որին կրկին կարժանանաք։ Հասկանալի՞ է։ Իսկ հիմա ցանվեցեք ու հետագայում լավ պահեցեք ձեզ։ Մտքով շանցկացնեք գողություն անել։ Զբաղվեցեք որևէ աշխատանքով։ Չեռք մի՛ տաք ձեզ շպատկանող ոչ մի բանի։ Եվ մեկ էլ աշքիս շերձվաք։ Թե չէ՝ արդեն անպայման բռնատուն կուղարկենք ձեզ։

— Այո, սը՛ր։ Ոչ, սը՛ր, է՛լ չեմ անի, — թոթովեց Աքերմենը։ Երբեք ձեռք չեմ տա այն բանին, որ իմը չէ։ Նա դիմեց դեպի դուռը, մի թեթև հրվելով դատական

Կատարածուի կողմից, և, վերջապես, ողջ-առողջ դուրս հանվեց գոնից՝ նրա պարզամտության և Պեյզերսոնի անտեղի խստության համար բավական զվարճացող հասարակության փսփոցների ու ծիծաղի ներքո։ Սակայն կատարածուն անմիջապես հայտարարեց հաջորդ գործի ունկնդրումը, և ներկաների ուշադրությունը գամվեց մյուս մեղադրյալների վրա։

Երկու կողպատիշների գործն էր սկսվում, և Քառիկերվուդը շարունակ զննում էր նրանց անսքող հետաքրքրությամբ։ Կյանքում առաջին անգամ էր ներկա լինում դատավճոի արձակման։ Նա դեռ երբեք առիթ չէր ունեցել լինելու ո՛չ քաղմասային, ո՛չ էլ գերազույն դատարանում նհազվագեապ միայն եղել էր քաղաքացիական դատարանում։ Քառիկերվուդը գոհ էր, որ նեզրին ազատ արձակեցին ուզած տեղը գնալու, և որ Պեյզերսոնը ի հայտ բերեց ավելի ողջամտություն ու մարդկայնություն, քան կարելի էր ըսպասել նրանից։

Քառիկերվուդը նայեց շուրջը. Էյլինին էր փնտրում։ Նա առարկել էր նրա դատարան գալու դեմ, սակայն Էյլինը կարող էր բանի տեղ չդնել, նվ իսկապես էլ նա այստեղ էր, ամենահետին շարքերում, բազմության մեջ սեղմված, երեսին իիտ քող. ուրեմն, այնուամենայնիվ եկել է։ Նա չէր կարողացել դիմադրել իր սիրեցյալի ճակատագիրը շուտ իմանալու, դատարանի վճիռը սեփական ականջներով լսելու, այդ ծայրագույն փորձության (ինչպես թվում էր նրան) ժամին Ֆրենկի մոտ լինելուց անկության։ Էյլինը վրդովվեց, եթք Ֆրենկին սրահ մտցրեցին քրեական հանցագործների հետ և ստիպեցին սպասել բոլորի առաջ. բայց առավել ևս հիանում էր նրա արժանապատիլ կեցվածքով և ինքնավըստահությամբ, որը չէր դավաճանել նրան անգամ այդ րոպեներին։ Ֆրենկը ամենին չէր դժգունել, մտովի նշեց էյլինը, ահա կանգնած է նա էլի այնպես հանդարտ ու անայլալը, ինչպես միշտ։ Ա՛խ, եթե միայն նա կարողանար տեսնել իրեն հիմա, եթե թեկուզ մի հայացք նետեր իր կողմը, ապա նա ինքը քողը կբարձրացներ ու կժպտար։ Բայց

Ֆրենկը չէր նայում, որովհետեւ չէր ուզում էլլինին տեսնել այդտեղ: Մեկ է՝ շատ շանցած ինքը կհանդիպի Ֆրենկին և ամեն ինչ կպատճի նրան:

Երկու կողոպտիչների գործը շուտ վերջացրեց դատավորը՝ ամեն մեկին դատապարտելով մի տարի ուղղիչ բանտարկության, և նրանց տարան: Կողոպտիչները շփոթված էին, հավանորեն հստակ հաշիվ չեին տալիս ոչ իրենց հանցագործության նշանակությանը, ոչ էլ այն բանին, ինչ ըստ պասում էր նրանց հետո:

Հիմա հերթը եկավ Քառուփերվոսդի գործին, և «նորին ազնվությունը» պատկառելի տեսք ընդունեց: Քառուփերվոտքը սովորական հանցագործ չէր, և նրա հետ այլ կերպ պիտք էր վարվել: Դաստիլորը նախօրոք գիտեր, թե ինչ վախճան է ունենալու գործը: Երբ Մոլենհառերի արքանցակներից մեկը՝ Բաթլերի մոտիկ բարեկամը, կարծիք հայտնեց, թե Քառուփերվոսդին և Սթիներին պետք է տալ հինգ-հինգ տարի, դատավորը ընդունել էր գա ի գիտությունը:

— Ֆրենկ Ալզերնոն Քառուփերվո՛ւդ, — հայտարարեց քարտուղարը:

Քառուփերվուդը արագ առաջ անցավ: Նա ցավ, նույնիսկ ամոթ էր զգում, որ ընկել էր այդ զրության մեջ. քայլ ո՛չ հայցքը ովակ ո՛չ էլ որևէ շարժումով շմատնեց իր զգացմունքները: Պեյդերսոնը շեշտակի նայեց նրան, ինչպես սովորաբար նայում էր մեղադրյալներին:

— Զեր անո՞նք, — հարցրեց դատական կատարածուն, սղագիրն էլ պատրաստվեց գրի առնելու:

— Ֆրենկ Ալզերնոն Քառուփերվոսդ:

— Բնակավա՞յրը:

— Ջիրարդ պողոտայի № 1937 տունը:

— Ջբաղմո՞ւքը:

— Բանկիրային և բորսայական դրասենյակ:

Արծանապատվությամբ տոգորված ու նուանդուն Սթիները կանգնել էր Քառուփերվոսդի մոտ՝ պատրաստ, երբ ժամանակը դար, անելու դատարանին ու քաղմությանն ուղղվ-

ված իր «վերջին խոսքը»։ Դուան մոտ, ժողովրդին իւթունը՝ ված էլլինը կյանքում առաջին անգամ ջղայնորեն կծում էր մատները, ճակատին քրտինքի խոշոր կաթիլներ կային։ Ֆրենկի հայրը հուզմունքից շարունակ դողում էր, իսկ եղբայրները նայում էին այս ու այն կողմ, ջանալով թաքցնել իրենց վախն ու վիշտը։

— Երբեք դատարանի պատժին ենթարկվել եք։

— Երբեք քառութիւնի փոխարեն անհոռով պատասխանեց նրա փաստաբանը։

— Ֆրենկ Ալչերնոն Քառութիւնուդ, — առաջ գալով, ոնդաձայն ասաց դատարանի քարտուղարը, — առարկություն ունե՞ք դուք, որ հիմա արձակվի ձեր դատավճիռը։ Եթե ունեք, ասացե՞ք։

Քառութիւնուդն ուզում էր բացասական պատասխան տալ, բայց Սթեջերը բարձրացրեց ձեռքը։

— Դատարանի թույլատրությամբ ես պետք է հայտարարեմ, — բարձրածայն ու հստակ հայտարարեց նա, — որ իմ պաշտպանյալ միստր Քառութիւնուդը հանցավոր չի համարում իրեն. այդ նույն կարծիքն ունեն նաև Ֆիլադելֆիայի գերագույն դատարանի՝ մեր նահանգի դատական գերագույն առյանի հինգ դատավորներից երկուսը։

Այդտեղ կատարվող ամեն ինչով առավելապես հետաքրքրվող ունկնդիրներից մեկը էղուարդ Մելիս Բաթլերն էր, որ հենց նոր սրահ մտավ կողքի սենյակից, որտեղ իսկ սում էր մի ծանոթ դատավորի հետ։ Այդ հաճոյակամ պաշտոնյան հայտնեց նրան, որ հիմա արձակվելու է Քառութիւնուդի դատավճիռը։ Բաթլերը առավոտից իսկ գտնվում էր դատարանում մի անհետաձելի կարիքի պատրվակով, մինչեռ իրականում այդ պահը բաց շիողնելու համար։

— Միստր Քառութիւնուդը ցուցմունք է տվել, — շարունակեց Սթեջերը, — և նրա ցուցմունքը հաստատվել է այլ վկաներով, որ ինքը լոկ գործակալն է այն ջենտլմենի, որի հանցավոր լինելը հետագայում ճանաչել է դատարանի նույն կազմը։ Նա հաստատում է, և նրան համաձայն են մեր նահանգի գերագույն դատարանի հինգ անդամներից

երկուսը, որ իբրև գործակալ ինքը ամենայն իրավունք՝ և լիազորովիուն ուներ քաղաքային փոխառովթյան վաթսուն հազար դոլլարի սերտիֆիկատները շՀանձնել մարման ֆոնդին այն ժամկետում, երբ, շրջանային դատախազի կարծիքով, պարտավոր էր հանձնել: Իմ պաշտպանյալը ֆինանսական քացառիկ ընդունակությունների տեր մի մարդ է: Ի պաշտպանություն նրա՝ ձերդ ազնվությանն ուղղված բազմաթիվ դրավոր դիմումներից դուք կարող էիք համոզվել, որ նա վայելում է ֆինանսական աշխարհի առավելապես պատվարժան ու ականավոր ներկայացուցիչների ահագին մեծամասնության հարգանքն ու համակրանքը: Միտքը Քառակերպութը միանգամայն ակնառու դիրք է գրավում հասարակության մեջ և մեկն է իրենց ոլորտում զգալապես բարգավաճած մարդկանցից: Միայն ճակատագրի դաժան ու անսպասելի հարվածը հասցրեց նրան մեղադրյալների աթոռին. ես նկատի ունեմ հրդեհը և դրանից առաջացած խուճապը, որոնք խիստ ծանր անդրադարձան բացարձակապես առողջ ու ամուր ֆինանսական ձեռնարկության վրա: Հակառակ երդգյալների դատարանի արձակած վճռին ու Ֆիլադելֆիայի գերագույն դատարանի հիմք անդամներից երեքի որոշման՝ ես հաստատում եմ, որ իմ պաշտպանյալը զեղծարար չէ, որ նա ո՛չ մի գողովթյուն չի կատարել, որ զուր են հանցավոր ճանաչել նրան, հետևաբար և նա չի կարող պատիժ կրել մի հանցագործության համար, որը չի կատարել:

Ես հավատացած եմ, որ դուք, ձե՛րդ ազնվություն, թյուր չեք մեկնաբանի իմ խոսքերն ու այն մղումները, որոնք ստիպում են ինձ պնդել, թե ձիշտ են իմ բոլոր ասածները: Ես ոչ մի բոպե չեմ պատրաստվում կասկածի տակ առնել դատարանի տվյալ կազմի կամ ընդհանրապես դատարանի անաշառությունը, ինչպես նաև չեմ քննադատում բուն դատավարությունը: Ես միայն խորապես վշտացած եմ, որ հանգամանքների շարաբաստիկ ընթացքը ստեղծեց մի խաբուսիկ պատկեր, որին հասու չի կարող լինել ոչ-պրոֆեսիոնալը, և ահա այդ հանգամանքների բերմամբ էլ այն-

քան հարգարժան մի մարդ, ինչպիսին է իմ պաշտպանյալը, նստեց մեղաղբյալի աթոռին։ Տարրական արդարությունը պահանջում է, ըստ իս, որ սա ասվի այստեղ ի լուր ամենքի և ամենայն հստակությամբ։ Ես դիմում եմ ձերդ ազնը-վության և խնդրում զիջող լինել, իսկ եթե խիղճը ձեզ թույլ չի տալիս բոլորովին կարճել այս գործը, ապա ես ձեզ խնդրում եմ թեկուզեն հաշվի առնել ու կշռել իմ շարադրած փաստերը պատիժը սահմանելիս։

Սթեղերը վերադարձավ իր տեղը, իսկ դատավոր Պետքերսոնը գլխով արեց ի նշան այն բանի, որ ինքը լսեց արժանապատիվ պաշտպանի ամբողջ ասածը և մտադիր է վերաբերվել նրա խոսքերին այն ուշադրությամբ, որոնց արժանի են, բայց ոչ ավելի։ Այնուհետև նա շրջվեց դեպի Քառուփերվուղը և օգնության կոշելով իր ամբողջ դատավորական վեհությունը՝ սկսեց։

— Ֆրենկ Ալզերնոն Քառուփերվուղ, ձեր հալանությանն արժանացած երդյալները ձեզ հանաշել են դողության համար հանցավոր Գործը վերանայելու միջնորդությունը, որ ձեր անունից հարուցել էր ձեր ոլաշտպանը, մանրակրկիտ քննությունից հետո մերժվել է, որովհետև գերագույն դատարանի անդամների մեծ մասը անառակելիորեն համաձայնել է երդյալների վճոխն՝ կարծելով, թե դա արձակված է պարտ ու նպատշաճ կարգով՝ օրենքի ու վկաների ցուցմունքների հիման վրա։ Զեր հանցագործությունը չի կարող չկոչվել ծանր հանցագործություն թեկուզեն այն պատճառով, որ քաղաքին է պատկանում այն խոշոր գումարը, որին տիրացել եք դուք։ Զեր հանցավորությունը սաստկանում է նաև այն հանդամանքով, որ դուք անձնական շահերի համար ապօրինի կերպով օգտվել եք քաղաքին պատկանող հարյուր-հազարամյուր զոլլար զումարից, ինչպես նաև քաղաքային փոխառության սերտիֆիկատներից։ Առավելագույն պատիժը, որ նախատեսված է օրենքով, պետք է համարել խիստ մեղմ։ Այնուամենայնիվ դատարանը պատշաճ կերպով հաշվի կառնի ձեր նախկին աշքի ընկնող դիրքը և այն հանդամանքները, որոնք ոլատճառ դարձան ձեր սնան-

կանալուն, ինչպես նաև ձեր բազմաթիվ բարեկամների և ֆինանսական գործիշների միջնորդությունը։ Դատարանը անուշադրության շի մատնի ձեր կարիքնացի պատմության ոչ մի էական փաստ։

Պեյդերսոնը կանգ առավ, կարծես վարանած, թեև շատ լավ գիտեր, թե ինչ պիտի ասի դրանից հետո։ Նա հիշում էր, թե ինչ էին սպասում իրենից «տերերը»։

— Եթե ձեր գործից հնարավոր չէ այլ ուսանելի եզրակացություն հանել, — շարունակեց նա՝ թերթելով իր առաջ եղած թղթերը, — ապա այնուամենայնիվ շատերի համար օգտակար դաս կլինի դա և ցույց կտա, թե չի կարելի անպատիժ կերպով ձեռքը կոխել քաղաքի գանձարանը և կողոպտել դրամական գործառնությունների պատրվակով, ինչպես նաև շատերին կօգնի հասկանալու, որ օրենքը բավականին ուժ ունի թե՛ իրեն և թե՛ հասարակությանը պաշտպանելու համար։

Ուստի և դատարանը, — հանդիսավոր շեշտով ավարտեց Պեյդերսոնը, մինչդեռ Քառուկերվուղը շարունակում էր անայլայլ նրան, — դատապարտում է ձեզ վճարել հօգուտ շրջանի հինգ հազար դոլլար, ժամկելու դատական բոլոր ծախսերը, միայնակ բանտարկության Արևելյան ուղղիւ կալանատանը և չորս տարի ու երեք ամիս հարկադիր աշշատանքի՝ կալանքի տակ առնելով ձեզ մինչև դատավճռի ուժի մեջ մտնելը։

Այս խոսքերը լսելուց հետո ծեր Քառուկերվուղը խոնարհեց գլուխը, ջանալով թաքցնել արցունքները։ Էլլինը կծեց շրթունքները և ջղաձգորեն սեղմեց բռունցքները, որպեսզի լաց շլինի և ներսում խեղդի ցասումն ու վրդովմունքը։ Չո՞րս տարի և երեք ամիս ինչպիսի անվախճանորեն երկար բաց իր և նրա կյանքում։ Բայց ինքը կսպասի։ Ավելի լավ է, քան ութ կամ տասը տարին, քանի որ ինքը վախենում էր և այդպիսի դատավճռից, Գուցե և այժմ, երբ ամենածանրը անցնի ու Ֆրենկը տարվի բանտ, նահանգապետը ների նրան։

Դատավոր Պեյդերսոնը արդեն իր առաջ քաշեց Սթիների

դուրծի թղթապանակը: Նա գոհ էր իրենից. ֆինանսիստները հիմա չեն կարող ասել, թե ինքը պատշաճ ուշադրովթյուն չի պարձել ի նպաստ Քառափերվուդի արած իրենց միջնորդությանը: Մյուս կողմից էլ կբավարարվեն քաղաքական դորժիները. ինքը Քառափերվուդին դատապարտեց գրեթե առավելագույն պատժի, միայն թե այնպես, որ դրանց կարողանա թվալ, որ իր հաշվի է առել իրեն ուղղված ներողամտովթյան խնդրանքները: Քառափերվուդն անմիջապես այդ լարախաղացովթյունն ըմբռնեց, բայց սովորական հանդարտովթյունը չկորցրեց. միայն մտածեց, թե որքան վեհերու ու նողկալի է դա: Դատական կատարածուն մատեցավ նրան և ուզեց դուրս տանել:

— Թող դատապարտյալը դեռ մնա, — անակնկալ կանցրեց դատավորը:

Քարտուղարն արդեն տվեց Զորջ Սթիների անունը, և առաջին րոպեին Քառափերվուդը շհասկացավ, թե ինչու դատավորը պահում է իրեն, բայց միայն առաջին րոպեին, Պետք է նա լսիր նաև իր մեկստակցի գործի դատավճիռը նախկին գանձատիտի կոսքին մշտապես կանոնած էր նշարա փաստարան Ռոշեր Օ՛Մարան՝ ծագումով իրանդացի և փորձված քաղաքագիտ, որ խորհուրդներ էր տվել Սթիներին նրա բանտարկովթյան առաջին իսկ րոպեից. ի դեպ, հիմա նա բան չգտավ ասելու, միայն դատավորից խնդրեց հաշվի առնել իր պաշտպանյալի նախկին պարկեշտ կյանքը:

— Զո՞րջ Սթիներ, — սկսեց դատավորը, և բոլոր ներկաները, նմանապես և Քառափերվուդը, աշալլրացան: — Քանի որ ձեր գործը վերանայելու և դատավճիռը փոխելու ձեր միջնորդովթյունը մերժված է, դատարանին մնում է միայն նշանակել այն պատիժը, որը համապատասխանի ձեր հանցագործովթյան ընույթին: Ես չեմ ուզում բարոյախոսովթյուններով ծանրացնել առանց այդ էլ ձեզ համար ծանր այս պահը: Բայց և այնպես չեմ թերանա խստորեն դատապարտելու ձեր գործողովթյունները: Հասարակական միջոցների շարաշահումը դարձել է մեր ժամանակի խոցը, և եթե ամենայն վճռականությամբ արմատախիլ՝ շանենք

այդ չարիքը, ապա դա վերջիվերջո կխորտակի մեր ամբողջ հասարակարգը։ Կաշառակերությամբ որդնակեր պետությունը անկենսունակ է դառնում, նա գտնվում է առաջին իսկ լուրջ փորձության դեպքում փուլ գալու վտանգի տակ։

Ես կարծում եմ, որ ձեր և դրա նման բոլոր հանցագործությունների պատասխանատվությունը զգալի չափով ընկանում է հասարակության վրա։ Մինչև վերջերս հասարակությունը չափից ավելի անտարբերությամբ է նայել պաշտոնատար անձանց խարդախ արարքներին։ Մեր քաղաքականությունը պետք է ղեկավարվի ավելի վեհ ու ազնիվ սկըզբունքներով, մեր հանրային կարծիքը պետք է նշավակի պետական գումարների շարաշահումը։ Հասարակության անբավարար սկզբունքայնությունն է հնարավոր դարձել ձեր հանցագործությունը։ Բացի դրանից, ես ձեր գործի մեջ ոչ մի մեղմացուցիչ հանգամանք չեմ տեսնում։

Առավել ազդեցիկության նպատակով դատավոր Պետքերսոնը կանգ առավ։ Նա մոտենում էր իր պերճախոսության ավարտական թոկչքին և ուզում էր, որ իր խոսքերը դրոշմվեն ունկնդիրների մտքերում։

— Հասարակությունն իր դրամը վստահել է ձեր պահպանությանը, — հանդիսավոր կերպով շարունակեց նա։ — Ձեր հանդեպ ցուցաբերված է բարձր, սրբազն վստահություն։ Դուք պետք է պահպանեիք գանձատան դուռը, ինչպես սերովբեն արքայության դարպասը, և անկաշառ աղնքվության հրավառ սրով սպառնայիք ամեն ոքի, ով համարձակվեր հանցապարտ նպատակով մոտենալ դրան։ Այդ էր պահանջում ձեզնից հասարակության ընտրած ներկայացուցյի ձեր դիրքը։

Հաշվի առնելով ձեր գործի բոլոր հանգամանքները՝ դատարանը շի կարող ձեր նկատմամբ կիրառել օրենքով նախատեսված առավելագույն չափի պատժից պակաս։ Սակայն ըստ Քրեական օրենսգրքի յոթանասունշորսերորդ հոդվածի՝ մեր նահանգի դատարանները իրավունք չունեն ուղղիչ բանտարկության դատապարտել այնպիսի մի ժամկետով, որը վերջանում է նոյեմբերի 15-ի և փետրվարի

15-ի միջն ընկած շրջանում, և այդ հոդվածը ստիպում է ինձ երեք ամսով նվազեցնել այն առավելագույն ժամկետը, որին ես պետք է դատապարտեի ձեզ, այսինքն՝ հինգ տարվա: Ուստի և դատարանը ձեզ դատապարտում է՝ վճարել հինգ հազար դոլար տուգանք հօգուտ շրջանի (Փեղերսոնը շատ լավ գիտեր, որ Սթիները ի վիճակի չէ վճարելու այդ գումարը), միայնակ բանտարկության Արևելյան ուղղիչ կալանատանը՝ շորս տարի և ինն ամիս ժամկետով, մինչ օրենքը ուժի մեջ մտնելը կալանքի տակ առնելով ձեզ:

Դատավորը թղթերը դրեց սեղանին և ձեռքով մտախոչ շփեց կգակը: Քառափերվութին ու Սթիներին հապճեպորեն տարան: Գործի վախճանից միանգամայն գոհ Բաթլերը սրահից գուրս եկող առաջին մարդկանցից մեկն էր: Համոզվելով, որ ամեն ինչ վերջացած է և ինքն այստեղ այլևս անելիք չունի՝ էլլինը նույնպես շտապ-շտապ հասավ դուանը, իսկ նրանից մի քանի րոպե հետո մեկնեցին Քառուփերվութի հայրն ու եղբայրները: Նրանք ուղղում էին սովասել Ֆրենկին փողոցում և ուղեկցել մինչև բանտ: Նրա ընտանիքի մյուս անդամները տանը հուզված սպասում էին լուրի, ուստի անմիջապես Զողեփին ուղարկեցին նրանց մոտ:

Այդ միջոցին երկինքը պատվեց ամպերով, ցերեկը մը-թագնեց և թվում էր, թե ուր որ է ձյուն կգա: Էղդի Զանդերսը, որ ստացել էր տվյալ գործին վերաբերող բոլոր թղթերը, հայտարարեց, թե կարիք չկա վերադառնալու շըրջանային բանտ: Հետևաբար հինգ հոգին էլ՝ Զանդերսը, Սթեղերը, Ֆրենկն ու նրա հայրը և եղբայրը, նստեցին ձիաքարը, որի վերջին կանգառը ընդամենը մի քանի թաղամաս ետ էր Արևելյան ուղղիչ բանտից: Կես ժամ հետո բոլորն էլ նրա դարպասի առաջն էին:

Գ Լ Ա Խ Խ III

Պենսիլվանիա նահանգի Արևելյան ուղղիչ բանտը, որտեղ Քառուփերվութն անց էր կացնելու իր շորս տարվա ու երեք ամսվա միայնակ կալանքը, գտնվում էր Ֆեյրմառնդ

ու Քսանմեկերորդ փողոցների անկյունում, մոխրագույն քարե մի հսկայական շենքում։ Այդ մոայլ ու վեհակերտ շենքը մի քիչ հիշեցնում էր Միլանի Սֆորցա ապարանքը, թեև ճարտարապետական տեսակետից, անշուշտ, իսկսու զիջում էր նրան։ Սրա գորշ պատերը ձգվում էին շորս փողոցների երկայնքով, և բարձրացել էր նա միայնակ ու անմատչելի, ինչպես պատշաճ է բանտին։ Այն պատր, որը շրջափակել էր բանտի ահագին՝ ավելի քան տասն աքր բռնող տարածությունը և տալիս էր նրան այդ մոայլ վեհության դգալի մասը, երեսունհինգ ոտնաշափ բարձրություն և ավելի քան յոթ ոտնաշափ լայնություն ուներ։ Բուն բանտը, որ փողոցից չէր երեսում և բաղկացած էր ութուանանու շոշափուկների պնս կենտրոնական շենօնի շուրջը ձղված յոթ շինությունից, դրավում էր պատով շրջափակված տարածության գրեթե երկու երրորդը, այնպես որ բացատների ու սիզամարգերի համար շատ քիչ տեղ էր մնում։ Այդ շինությունները, որոնք կպած էին արտաքին պատին, քառասուն ոտնաշափ լայնություն և հարյուր ութսուն ոտնաշափ երկարություն ունեին։ դրանցից շորսը երկհարկանի էին։ Պատուհանների տեղ կային տանիքների վրա արված նեղ բաշվածքներ ոչ ավելի երեքուկես ոտնաշափ երկարությամբ և ութ մատնաշափ լայնությամբ։ Ներքեկի հարկի սենյակներից մի քանիսի մոտ կային պըսոլիկ բակեր տասը ոտնաշափ լայնությամբ և տասնվեց ոտնաշափ երկարությամբ, այսինքն՝ այդ սենյակներից ավելի չէին և իրենց հերթին շրջապատված էին աղյուսե բարձր պատերով։ Սենյակների պատերը, հատակներն ու տանիքները քարե էին։ քարե էին նաև միջանցքների հատակները, որուց լայնությունը տասը ոտնաշափ էր, իսկ միհարկանի միջանցքների բարձրությունը՝ տասնհինգ ոտնաշափ։ Նաև ուղիղ գետակների շենքից, այսպես կոչված ոռտոնդից, նայում էր հեռուն ձգվող անցուղիներին, ամեն ինչ թվում էր նրան նեղ ու գետնամած։ Երկաթե դռները (դրանց առաջ կային նաև փայտե հաստարեստ դռներ, որպեսզի կարիքի դեպքում բոլորովին մեկուսացնեին կալանավորներին) ծանր, ճնշող տպավորություն էին գործում։ Շենքերում ընդհանուր առմամբ

րավական լուս կար, որովհետև պատերը հաճախակի ճերմակեցնում էին, իսկ տանիքների նեղ բացվածքները ձմեռը ծածկում էին անփայլ ապակով. սակայն ամեն ինչ այնքան մերկ էր, այնքան աշքի համար հոդնեցուցիչ, ինչպես լինում է միայն կալանավայրերում, ուր կա միայն սակառլաքանակ և զուտ անհրաժեշտ կահ-կարասի: Այդ պատերից ներս, անկասկած, կյանք կար. այդ ժամանակ բանտն ուներ շորս հարյուր կալանավոր, ու համարյա բոլոր սենյակները լիքն էին: Սակայն բանտի բնակիչներից ոչ մեկը չէր տեսնում այդ կյանքը ու չէր գտում, Մարդիկ այդտեղ ապրում էին և միաժամանակ չէին ապրում: Բանտում երկար ժամանակ մնացած կալանավորներից մի քանիսին նշանակում էին «ավագ», բայց դրանք քիչ էին: Բանտն ուներ փուռ, մեքենաշինական ու հյուսնի արհեստանոցներ, մառան, ջրաղաց ու բանջարանոցներ, սակայն այդ գործանոցներին սպասարկելու համար քիչ մարդու կարիք կար:

Բանտը, որ կառուցված էր 1822 թվականին, աստիճանաբար, շինություն առ շինություն մեծացել էր ու հասել ներկա՝ խիստ պատկառելի շափերին: Նրա բնակչությունը բաղմազան էր թե՛ մտավոր դարդացմամբ և թե՛ կատարած հանցագործություններով՝ մանր գողությունից մինչև սպանություն: Բանտի ներքին կանոնները որոշվում էին այսպես կոչված «պենսիլվանյան սիստեմով», որն ըստ կության հանդում էր հետեւալին: միայնակ բանտարկություն, կատարյալ լուսթյուն պահպանել և անհատապես աշխատել մեկուսացված սենյակներում:

Եթե շաշվենք վերջերս շրջանային բանտում լինելը, որը, ճիշտն ասած, այնքան էլ բանտի նման չէր, ապա Քառվիերվուդը կյանքում երբեք այդպիսի հաստատությունում չէր եղել: Մի անգամ, երեխա ժամանակ, երբ նա ման էր գալրս մերձակա քաղաքներում, անցնում էր «քոնատան» մոտով, ինչպես կոչվում էին այն ժամանակ քաղաքի բանտերը, երկրորդ հարկի լուսամուտի մոայլ բացվածքներից մեկում տհամալ մի գինեմոլի կամ թափառաշրջիկի հարրեցողի անարյուն գեմբով, մաղերը դգգղված և հայացքը պղտոր: Ֆրենկին

նկատելով՝ այդ կալանավորը ձայն էր տվել (ամառ էր, և պատուհանները բաց էին).

— Ե՞յ, տղա՛ ջան, վազ տուր ու ծխախոտ առ ինձ համար. լա՞վ:

Ֆրենկը բարձրացրել էր հայացքը և կալանավորի վանող արտաքինից ապշած ու վախեցած՝ առանց մտածելու պատասխաննել էր.

— Ո՛չ... չեմ կարող:

— Տես որ մի օր էլ քե՛զ ծակը շկոխեն, անզգա՛մ,— կատաղած գոռացել էր թափառաշրջիկը, որ ըստ երեսութին ամբողջովին դեռ չէր սթափվել նախորդ օրվա գինարբութից:

Քառուփերվուրը երբեք չէր հիշել այս դրվագը, բայց այժմ հանկարծ ծագեց հիշողության մեջ: Այս հիմա իրեն էլ կարգելափակեն այս մոռայլ, տխուր բանտում, փողոցում մոլեղնում է բուքը, և ինքը անողոքաբար դուրս կնետվի կյանքից:

Մերձավորներից ոչ ոքի թույլ չէին տալիս ուղեկցել նրան արտաքին պատից ներս, անգամ Սթեղերին, թեև նա թույլ-տվություն էր ստացել այցելելու Քառուփերվուրին: Այս կանոնը անխախտ պահում էին: Զանդերաբին, որի մոտ էին ուղեկցական գրությունները, և որը ծանոթ էր դռնապանի հետ, անմիշապես ներս թողին: Մյուսները ետ դարձան՝ տխուր-տըրտում հրաժեշտ տալով Քառուփերվուրին, որը ջանում էր պահել իրեն այնպես, ասես այդ ամենը մի անկարեսոր դրվագ էր, ճիշտ արն ասած, նա այդպես էլ վերաբերվում էր իր գլխին եկածին:

— Ինչեիցե, ցտեսություն,— ասաց նա, սեղմելով ամենքի ձեռքերը: — Ոչ մի վատ բան չի պատահի ինձ, և շուտով ես դուրս կգամ այստեղից: Ա՛յ, կտեսնեք: Թող կիլիանը շատ շվշանաւ:

Նա մտավ բանտի բակը, և դուրս շարագուշակ ճոփնչով փակվեց նրա վրա: Զանդերսը գնաց առջեից՝ բարձր դարբասատակի մութ, մոռայլ կամարների ներքո դեպի երկրորդ դուռը, որտեղ մի ուրիշ դռնապան մի ահագին բանալիով բացեց վանդակաճաղ դռնակը: Մտնելով բանտի բակը՝ Զանդերսը շրջվեց ձախ, փոքրածավալ գրասենյակը, որտեղ բարձրադիր սեղանի առաջ կանգնել էր բանտի մի պաշտոնյա՝ համա-

զգեստը հագին, նիհար, բաց խարտյաշ մազերով ու գորշ, նեղ աշքերով մի մարդ: Սրա պաշտականությունը կալանավորներին արձանագրելն էր: Վերցնելով շերիֆի օգնականի հանձնած թղթերը՝ նա գործարար ձեռվ նայեց դրանք: Քառութերվուղին ընդունելու հրամանն էր դա: Պաշտոնյան իր հերթին մի տեղեկանք տվեց Զանդերսին առ այն, որ ընդունել է սրանից կալանավորին, և շերիֆի օգնականը թողեց-գնաց, խիստ գոհ այն կոնժադրամից, որ Քառութերվուղը դրեց նրա գուռով:

— Քաջառողջություն եմ ցանկանում ձեզ, մի՛ստր Քառութերվուղ,—ասաց նա հրաժեշտ տալիս: — Շատ եմ ցավում և հույս ունեմ, որ այնքան էլ վատ շեք զգա ձեզ այստեղ:

Նա ուզում էր վերակացուի առաջ պարծենալ այս արտասովոր կալանավորի հետ մոտիկ ծանոթ լինելով, և Քառութերվուղը նուրբ կեղծավորության իր քաղաքականությանը հավատարիմ, սրտագին սեղմեց նրա ձեռքը:

— Շա՛տ եմ երախտապարտ ձեր սիրալիրության համար, մի՛ստր Զանդերս, — ասաց նա, շրջվելով դեպի իր նոր մեծավորը այն մարդու տեսքով, որը ցանկանում է ըստ Հնարավորին նպաստավոր տպավորություն գործել:

Նա դիտեր, որ հիմա ընկնում է մանր պաշտոնյաների ձեռքը, որոնցից էր ամբողջովին կախված՝ որևէ արտոնություն կտա՞ն իրեն, թե ոչ: Նա ուզում էր անմիջապես ցուց տալ այդ վերակացուին, որ ինքը պատրաստ է անառարկելիութեն ենթարկվել քոլոր կանոններին, որ ինքը հարգում է մեծավորներին, բայց նաև մտադիր չէ իրեն նվաստացնել: Բարեցապես ընկճված էր նա, սակայն հոգու արիությունը չէր կորցնում անգամ այստեղ, արդարադատության մեքենայի մամլակի տակ, նահանգի ուղղիլ բանտում, որից ամեն կերպ աշխատել էր խոսսափել:

Վերակացուն՝ ոմն Ռոշեր Քենդալ, չնայած իր թուղակազմ ու պաշտոնյայի տիպիկ արտաքինին, բավական ընդունակ մարդ էր, համենայն դեպս բանտի կառավարչության մյուս ներկայացուցիչների համեմատությամբ, կուահող, ոչ շատ կրթված, ոչ այնքան ի բնե խելացի, ոչ շատ զանա-

ննդիր, բայց իր պաշտոնում մնալու համար բավական եռանգուն, վատ չէր որոշում ամեն մի կալանավորի ինչ լինելը, քանի որ մոտ քսանվեց տարի նրանց հետ էր գործունեցելու Վերաբերվում էր նրանց սառը, անվստահ, քննադատաբար:

Ոչ ոքի հետ նվազագույն մտերմություն թույլ չէր տալի՛ և պահանջում էր ներքին կանոնադրության բոլոր կանոնների ճշգրիտ գործադրություն:

Քառուփերվուղը ներս մտավ կապտագորշ գեղեցիկ կոստյումով, հիանալի կարված վերաբերություն մոդայի սև կարծրաթաղիք գլխարկով, մեղմ ու ազնիվ նախշեր ունեցող պինդ մետաքսե փողկապով: Նրա մազերն ու բեղերը վկայում էին, որ փորձված մի վարսավիր խնամքով հոգ է տանում, իսկ կոկիկ եղունգները փայլում էին:

Նրան նետած առաջին իսկ հայացքից վերակացուն հասկացավ, որ նորեկը բարձր սավառնման թռչուն է, մեկը նրանցից, ում բախտի անակնկալները հազվադեպ են նետում իր ցանցի մեջ:

Քառուփերվուղը կանգնել էր սենյակի կենտրոնում և թվում էր, թե ոչ մի բանի ու ոչ ոքի չի նայում, սակայն ամեն ինչ նկատում էր:

— Համար 3633 կալանավորը,— ասաց Քենդալը գրագրին ու հանձնեց գեղին մի թերթ, որի վրա գրված էր Քառուփերվուղի անուն-ազգանոմնը ու հերթական համարը, որ սկիզբ էր առնում բանտը հիմնվելու օրվանից:

Գրագիրը, որ նույնպես կալանավոր էր, այդ տվյալները արձանագրեց մատյանում, իսկ թերթիկը դրեց մի կողմ, հանձնելու համար «ավագին», որը և Քառուփերվուղին տանելու էր այսպես կոչված «ախտահանարան»:

— Հարկ կլինի, որ հանվեք և լոգանք ընդունեք, — ասաց Քենդալը Քառուփերվուղին, հետաքրքրությամբ զննելով նրան: — Ճիշտն ասած, հազիվ թե ձեզ լոգանք է պետք, բայց այդպես է մեր կարգը:

— Ծնորհակալ եմ, — պատասխանեց Քառուփերվուղը՝ գոհ, որ նույնիսկ այստեղ ինքը երկի պատշաճ տպավորու-

թյուն գործեց:— Ես պատրաստ եմ ենթարկվել բոլոր կանոններին:

Նա ուզում էր վերարկուն հանել, բայց Քենդալը ձեռքի շարժումներով կասեցրեց ու զանգ տվեց: Կողքի սենյակից դուրս եկավ շգիտես մի ծառայող, թե «ավագը»: Սա մի փոքրամարմին, թուխ ու ծուռկողանի մարդ էր. նրա մի ոտքը մյուսից կարճ էր, ուստի և մի ուսը ցած էր մյուսից: Չնայած ներս ընկած կրծքին, շիլ աշքերին ու անհավասար բայլվածքին՝ նա բավական արագ էր շարժվում: Նրա հագուստը կազմված էր մի շերտավոր պարկանման շալվարից և նույնույն շերտավոր, ինչպես բանտի կարգն էր, բաճկոնակից, որի տակից երևում էր օձիքը բաց ֆուֆայկան. գլխին կար խիստ մեծ շերտավոր գդակ, որ առանձնապես զգելի թվաց Քառուփերվուդին: Ֆրենկը չէր կարող ազատվել այն անախորժ տապալվորությունից, որ գործեցին նրա վրա այդ մարդու տնկված հովարի տակից նայող շիլ աշքերը: «Ավագն» ուներ բոպեն մեկ ձեռքը գդակին տանիլու և պատիվ տալու հիմար ու շողոքորթ սովորություն: Սա «տնային գող» էր և «ծեփել էին» վրան տասը տարի. սակայն լավ վարքի շնորհիվ նա հասել էր գրասենյակում աշխատելու և զլիին ստորացուցիչ պարկը շքաշելու պատվին: Դրա համար նա շատ էր պետերին երախտապարտ: Այժմ նա նայում էր Քենդալին երկշոտ շան հայացքով, իսկ Քառուփերվուդին՝ խորամաններեն՝ կարծես ցույց տալով, որ շատ լավ է հասկանում նրա վիճակը և վստահություն չի տածում նրան:

Սովորական կալանավորի աշքում դժբախտության բոլոր ընկերները հավասար են, ավելին՝ նա միայնակ է այն գիտակցությամբ, որ բոլորն էլ իրենից լավ շեն: Թեկուզկը բախտը դաժան վարվեց իր հետ, բայց նա մտովի ոչ պակաս դաժանորեն կվարվի մյուս կալանավորների հետ: Կանխամտածված թե պատահական նվազագույն ակնարկը, որ ես իբր քեզնից ավելի ազնիվ եմ, բանտի պատերից ներս համարվում է ծանր, ամենաաններելի մեղք: Այդ «ավագը» նույնպես անընդունակ էր հասկանալու Քառուփերվուդին, ինչպես ճանճը՝ հասկանալու թափանիվի շարժումը. սա-

կայն լինելով աննշան մարդ, հավատացած էր, թե նորեկի ինչ լինելու իմացավ: Սրիկան սրիկա է, ուստի և Քառուփերվուղը նրա համար ոչնչով չէր տարբերվում հետին գրպանահատից: Նա անմիջապես ցանկություն զգաց ստորացնելու նըրան, իր մակարդակին դասելու:

— Դուք ստիպված եք գրպաններից հանել ձեղ մոտ եղած ամեն բան,— ասաց Քենդալը Քառուփերվուղին: Սովորաբար նա հրամայում էր. «Խուզարկի՛ր կալանավորին»:

Քառուփերվուղը մոտեցավ նրան ու հանեց գրպանից քսակը՝ մեջը քսանհինդ դոլլար, գրշահատը, մատիտը, փոքրիկ ծոցատետրը և փղոսկրե մի պստիկ փիղ, որ ելլինն էր տվել «ի բախտավորություն» և որ Ֆրենկը շատ թանկ բան էր համարում հենց այն պատճառով, որ ելլինի նվերն էր: Քենդալը հետաքրքրությամբ նայեց այդ փղին:

— Կարող եք տանել,— գլխով արեց նա «ավագին»: Քառուփերվուղը գեռ պետք է ենթարկվեր հանվելու և լողանալու արարողությանը:

— Այստեղ,— ասաց «ավագը» և առաջ անցնելով, Քառուփերվուղին մտցրեց կողքի սենյակը, որտեղ պատվարի ետևում կար շուգունե երեք լոգարան, իսկ կոպիտ տախտակն դարակների վրա՝ հասարակ օճառ, կոշտ ու մաշված սրբիչ և լվացվելու այլ պարագաներ: Դարակների կողքին կեռեր էին դամված հագուստների համար:

— Մտի՛ր այստեղ,— կարգադրեց «ավագը»՝ թումաս Քյուբին, ցույց տալով լոգարաններից մեկը:

Քառուփերվուղը հասկացավ, որ դա ճշճիմ ու անդադրում հակողության սկիզբն էր, սակայն բարվոք համարեց պահել իր սովորական լավ տրամադրությունը:

— Հիմա, այս բոպեին,— ասաց նա:

«Ավագը» մի քիչ մեղմացավ:

— Ինչքա՞ն ծեփեցին քեզ,— հարցրեց նա:

Քառուփերվուղը տարակուսած նայեց նրան: «Ավագ» ըմբռնելով, որ այդ նորեկը բանտի ժարգոնը չի հասկանում, կրկնեց.

— Ինչքա՞ն ծեփեցին քեզ: Այսինքն՝ քանի՛ տարով են նստեցրել:

— Ա՛, հասկացա, — պատասխանեց Քառուփերվուդը: — Չորս տարի ու երեք ամիս:

Եվ որոշեց շղայնացնել այդ մարդուն: Այդպես ավելի լավ կլինի:

— Ինչի՞ համար, — հետաքրքրվեց Քյուբին:

Մի պահ Քառուփերվուդը շփոթվեց:

— Գողովթյան համար, — պատասխանեց նա:

— Ե՛, լավ ես պրծել, — նկատեց Քյուբին: — Իսկ ինձ տասը տարի շուլալեցին: Մի էնպիսի՛ դմբո դատավոր պատահեց որ:

Քյուբին երբեք չէր լսել Քառուփերվուդի հանցագործությունը, և եթե լսեր էլ, չէր կարողանա հասկանալ նրա գործի բոլոր նրբությունները: Քառուփերվուդը խոսակցությունը շարունակելու ոչ մի ցանկություն չուներ և չէր էլ իմանում ինչ ասի: Նա ուղում էր, որ այդ արարածը շուտ շքվի այդտեղից: Բայց նա մնացել էր կանգնած: Ավելի լավ է շուտ գնա խուցը և մենակ մնա:

— Այս՛, վիրավորական է, — կարեկցեց նա, և «ավագը» խոկույն հասկացավ, որ այդ մարդը իր կալանավոր եղբայրը չէ, ապա թե ոչ այդպիսի բան չէր ասի:

Քյուբին բացեց ծորակները: Մինչ այդ Քառուփերվուդը հանվել էր և հիմա կանգնել էր մերկ, առանց քաշվելու այդ կիսավայրենու ներկայությունից:

— Զմոռանա՛ս գլուխդ էլ լվալ, — ասաց Քյուբին ու դուրս եկավ:

Մինչեւ լոդարանի լցվելը Քառուփերվուդը վսորհրդածում էր իր վիճակի մասին: Առջեցուցիլ բան է, թե որքան դաժանորեն վարվեց իր հետ հակատագիրը վերջերս: Ի տարբերություն իր դրության մեջ գտնվող մարդկանց մեծ մասի, նա խղճի խայթերից չէր տանջվում և հանցավոր չէր համարում իրեն անազնիվ արարք կատարած լինելու համար: Պարզապես բախտը չէր բանել: Պատկերացնելո՞ւ բան է, որ ինքն ընկել է այստեղ, այս հսկայական անխոս բանտը, որ

կալանավոր է և այժմ պետք է կանգնի այս շուգունե նողկաւի լոգարանի մոտ, իսկ իրեն հսկում է մի խելքից պակաս հանցագործ։

Նա նստեց լոգարանի մեջ, արագ-արագ լողացավ դնդին, մրմռացնող օձառով ու սրբվեց գորշ ու կոպիտ երես-սրբիչով, հետո ձեռքը մեկնեց սպիտակեղենին, որը, սակայն, անհետացել էր։

Այդ ժամանակ եկավ Քյուրին։

— Արի՛ այստեղ, — առանց այլ կայլության կանչեց նա։

Քառուփերվուդը տկլոր հետեւեց նրան։ Գրասենյակի միշտ նրան տարան մի սենյակ, ուր կար կշեռք, չափող գործիքներ, արձանագրության մատյաններ և այլն։ Թարձյալ ուսուցավ դուան մոտ սպասող Քյուրին, իսկ գրագիրը տեսնելով նրան, մեքենայաբար մի շրջված բլանկ վերցրեց։ Քենդալը ուշադիր զննեց Քառուփերվուդի բարեկազմ մարմինը, որն արդեն սկսում էր մեջքից գիրանալ, և մտքում նշեց, որ այս կալանավորը իր կազմվածքով շատ ավելի լավ է բախտակիցների մեծ մասից։

— Կանգնեց՛ք կշեռքի վրա, — հրամայեց Քյուրին։

Քառուփերվուդը հնազանդվեց։ Հսկիչը տարավ-բերեց կշռաքարերը և մանրակրկիտ ստուգեց թվերը։

— Քաշը հարյուր յոթանասունհինգ, — հայտարարեց նա։ — Իսկ հիմա եկե՛ք այստեղ։

Նա ցույց տվեց պատը, որի վրա հատակից վեր էր ձրգվում մի բարակ ուղղահայաց ձող՝ յոթուկես ոտնաշափ բարձրությամբ։ Դրա վրա սահում էր մի ուրիշ ձողիկ, որ իջնում էր տակը կանգնած մարդու գլխին։ Զողիկի մի կողին նշված էին մատնաշափերն ու մատնաշափերի ստորաբաժանումները՝ կես, քառորդ, մեկ ութերորդ և այլն. աջ կողմում կար մի հարմարանք, որը չափում էր բազկի երկարությունը։ Քառուփերվուդը հասկացավ, թե ինչ են ուզում իրենից, և կանգնելով ձողիկի տակ՝ անշարժացավ։

— Ոտքերն իրար հետ, սեղմվե՛լ պատին, — հրամայեց Քյուրին։ — Եղա՛մ! Հինգ ոտնաշափ, ինը մատնաշափ և տասը տասնվեցերորդական, — գոշեց նա, և գրագիրը, որ գտնվում

Էր անկյունում, այդ տվյալները նշանակեց արձանագրական
թերթիկի վրա:

Այնուհետև Քյուրին հանեց ոլորվող յարդը ու սկսեց
շափել Քառուփերվուրի բազուկները, ոտքերը, կուրծքը, մեջ-
քը, ազդրերը: Բարձրաձայն հայտնեց նրա աշքերի, մազերի,
բեղերի գույնը ու բերանն ստուգելուց հետո, գոշեց.

— Թողոր ատամներն էլ տեղն են:

Երբ Քառուփերվուրը մի անգամ ևս հայտնեց իր հասցեն,
տարիքը, զբաղմունքը, իսկ որևէ արհեստ իմանում էր ար-
դյոք հարցին բացասաբար պատասխանեց, թույլ տվին նրան
վերադառնալ լողանալու սենյակը ու հագնել նրա համար
պատրաստված բանտի գենստը. Կոպիտ, անողորկ սպիտա-
կեղեն, բամբակե սպիտակ ֆուֆայկա՝ օճիքը բաց, կապտա-
գորշ հաստ, բամբակե գուպտա, որի նմանը կյանքում եր-
բեք չէր հագնել, և արտակարգ անձկուն ու ծանր, ասես փայ-
տից կամ երկաթից շինված կոշիկ, ներբանը սայթաքուն:
Այնուհետև նա հագավ կալանավորի տոպրականման շալ-
վար, որ կարված էր շերտավլոր կտորից, և մի տձեւ բամեկո-
նակ: Նա չէր կարող շիմանալ, որ այդ հագուստով ինքը
անհեթեթ ու ողորմելի տեսք ունի: Երբ նա կրկին մտավ
հսկիչի գրասենյակը, համակվեց անհուսության մի տարօրի-
նակ, տանջող զգացմունքով, որ երբեք չէր ունեցել և այժմ
անեն կերպ ուզում էր խեղդել ներսում: Ահա թե ինչպես
է հասարակությունը վարվում հանցագործի հետ: Վանում է
իրենից, հանում է նրա վայելուշ հագուստները և այս քրջերը
գցում վրան: Անձկությունն ու զայրույթը պաշարեցին նրան.
որքան էլ նա ջանում էր, այնուամենայնիվ չէր կարողանում
հաղթահարել իրեն համակած զգացողությունը: Նա միշտ էլ
կանոն էր դարձել իր համար թաքցնել այն, ինչ զգում էր,
բայց հիմա նրա ուժից վեր էր դա: Այդ հագուստով նա
նվաստացած, անճոռնի էր զգում իրեն և գիտեր, որ ուրիշ-
ներն էլ այդպես են տեսնում: Կամքի մեծ լարումով նա,
այնուամենայնիվ, ստիպեց իրեն կրկալ անխռով, հնազանդ
և ուշադիր այն բոլորի հանդեպ, ովքեր նրա մեծավորներն
էին հիմա: Վերջիվերջո, մտահում էր նա, սա պետք է դի-

տել որպես մի խաղ, մի վատ երազ կամ պատկերացնել, թե ընկել ես ճահիճ, որից, եթե բախտդ ժպտա, դուրս գալու հույս գեռ կա: Նա հավատում էր իր աստղին: Երկար չի կառող սա շարունակվել: Սա լոկ մի անհեթեթ ու անսովոր գեր է, որով նա հանդես է գալիս կյանքի վաղուց ուստիմնաւսիրած բեմում:

Այդ միջոցին Քենդալը շարունակում էր գննել Քառուիեր-վուդին:

— Հապա՛, մի գլխարկ գտիր նրա համար,— հրամայեց նա իր օգնականին:

Սա մոտեցավ համարագրված դարակներ ունեցող պահանին, հանեց այդտեղից բարձր եգր և ուղիղ հովար ունեցող մի գդակ և առաջարկեց Քառուիերվուդին փորձն: Գդակը շատ թե քիչ շափին էր, և Քառուիերվուդը եղրակացրեց, որ հասավ իր նվաստացումների վախճանը: Թվում էր, թե ուրիշ ոչ մի բանով չեն կարող զուգել իրեն: Բայց սխալ-վում էր:

— Իսկ հիմա, Քյուբի՛, տար նրան պարոն Զեպինի մոտ,— հրամայեց Քենդալը:

Քյուբին հասկացավ: Նա վերադարձավ լոգարանի սենյակն ու բերեց մի բան, որի մասին Քառուիերվուդը լսել էր միայն՝ սպիտակ ու կապույտ շերտավոր մի պարկ, որ լայնությամբ ու երկարությամբ հավասար էր մոտավորապես սովորական բարձերեսի կեսին: Քյուբին բացեց ծալքերը, թափ տվեց պարկը և մոտեցավ Քառուիերվուդին: Այդպես էր սովորությը: Այս պարկի կիրառումը, որ հաստապնել էր բանտի գոյության սկզբնական օրիրից, ուներ մի նպատակ՝ զրկել կալանավորին կողմնորոշվելուց և դրանով իսկ կանխել փախուստի հնարավորությունը: Այդ պահից սկսած Քառուիերվուդն այլևս իրավունք չուներ որևէ կալանավորի հետ շփում ունենալու, զրուցի բռնվելու նրա հետ, անգամ տեսնելու նրան. նմանապես արգելվում էր խոսել բանտի պետերի հետ, պարտավոր էր միայն հարցումներին պատասխանել: Դաժան էր այդ մեթոդը, սակայն խստորեն պահպանվում էր այդտեղ. թեև, ինչպես հետո հմացավ

Քառուիերվուղը, այս կետում ևս կարելի էր հասնել որոշ մեղմացման:

— Ստիպված ես հագնել այս բանը, — ասաց Քյուբին՝ դալիվաղը բացելով Քառուիերվուղի գլխի վրա: Քառուիերվուղը հասկացավ: Մի ժամանակ, վաղուց, նա լսել էր այդ սովորության մասին: Առաջին վայրկյանին նա, ճիշտ է, ապշեց ու նայեց պարկին անկեղծ զարմանքով: բայց իսկույն բարձրացրեց ձեռքերը, որպեսզի օգնի վրան քաշելու:

— Պետք չէ, — ասաց Քյուբին: — Եղեցրո՛ւ ձեռքերդ: Ես ինքս կանեմ:

Քառուիերվուղը հնազանդվեց: Գլուխը կոխած պարկը հասնում էր կրծքին, այնպես որ նա ոշինչ շէր տեսնում: Նա դժբախտ զգաց իրեն, զարդված, գրեթե ճիլված: Կապուլտ շերտավոր այդ սպիտակ քուրջը քիչ մնաց զրկեր նրան իրեն տիրապետելուց: Մի՛թե, մտածեց նա, շէր կարելի զերծ պահել ինձ վերջին ստորացումից:

— Թնա՛նք, — ասաց ուղեցուցը, և Քառուիերվուղին տարան: ո՛ւր, նա այդ արդեն չէր տեսնում:

— Ետ քաշիր ներքեմ եղոր ու կտեսնեմ ինչ կա սուբերիդ: տակ, — խորհուրդ տվեց Քյուբին:

Այդպես էլ արեց Քառուիերվուղը. Հիմա արդեն նա նկատում էր իր ոտքերը և հատակի այն կտորը, որի վրա ոտքը գնում էր: Եվ ահա գրեթե ոշինչ շտեսնող ֆրենկին տարան, նախ՝ մի կարճ անցուղով, ապա՝ երկար միջանցքով, անցկացրին մի սենյակով, որտեղ հերթապահ հսկիչներն էին նստել, և վերջապես երկաթե մի նեղ սանդուղքով հասցրին վեր՝ երկրորդ հարկի հսկիչի մոտ: Այստեղ էլ նա լսեց Քյուբիի ձայնը.

— Մի՛սար Չեպին, մի նոր կալանավոր եմ բերել ձեզ միստր Քենդալից:

— Հիմա գալիս եմ, — շգիտես որտեղից լսվեց անսպասելիորեն հաճելի մի ձայն:

Մեկի խոշոր, ծանր ձեռքը բռնեց Քառուիերվուղի արմունկը ու տարավ:

— Արդեն քիչ մնաց, — ասաց նույն ձայնը: — Իսկ այն-
տեղ պարկը կհանեմ ձեր գլխից:

Եվ չգիտես ինչու Քառվերվուղը (թերևս այն պատճա-
ռով, որ այդ խոսքերից կարեկցանքի շեշտ լսվեց) զգաց, որ
կոկորդը կարկամում է, սեղմվում:

Միայն մի քանի քայլ էր մնում նրան անելու:

Հասան մի դռան, և Քառվերվուղի ուղեկիցը երկաթե
ահագին բանալիով բացեց: Այնուհետև նույն խոշոր ձեռքը
թեթևակի հրեց Քառվերվուղին: Նույն վայրկյանին նրան
ազատեցին պարկից, և նա տեսավ, որ գտնվում է մի նեղ-
լիկ, սպիտակեցված, բավական մոայլ, անլուսամուտ, սա-
կայն առաստաղին ապակեպատ բացվածք ունեցող խցում:
Կողմնային պատերից մեկի մեջտեղը կեռից կախված էր
մի թիթեղի լամպ, որ ըստ երեսույթին երեկոյան լուսավորու-
թյան համար էր: Մի անկյունում կար երկաթե թախտ, վրան
խոտե ներքնակ ու երկու հատ, հավանորեն երբեք վվացված,
վերմակ: Մյուս անկյունում ամրացված էր մի խոշոր կոնք
ու պղնձե ծորակի: Թախտի դիմացի պատի վրա կար մի
փոքրիկ դարակ: Ոտքի կողմում դրված էր փայտե մի կո-
պիտ աթոռ՝ կլոր, այլանդակ թիկնակով. կոնքի մոտ, անկյու-
նում, տնկված էր մի կեղտոտ, մաշված ավել: Այդտեղ էլ
աշքի էր ընկնում նաև շուգունե միզամանը, որ դատարկվում
էր պատի մոտ զրհորդան խողովակի մեջ և ըստ երեսույթին
ձեռքով էր լվացվում: Խցիկում բնակվում էին առնետներ և
այլ մակաբուժներ, որոնց պատճառով էլ գարշահոտություն
էր տիրում այդտեղ: Հատակը քարաշար էր: Քառվերվուղի
հայացքն անմիջապես ընդգրկեց այդ ամենը և կանգ առավ
ծանր դռան վրա, որ շինված էր երկաթե խաշփակ ձողերից
և ուներ մի փայլուն ու զանգվածային փականք: Նա տեսավ
նաև, որ այդ երկաթե դռնից դենը կար նույնպես մի երկըրդ
փայտե դուռ, որը վերջնականապես մեկուսացնում էր նրան
արտաքին աշխարհից: Արկի սլայծառ, ամեն ինչ մաքրող
լուսը երազելու մասին այստեղ խոսք չէր էլ կարող լինել
Մաքրությունն ամբողջովին կախված էր զրից, օճառից ու

ավելից օգտվելու կալանավորի ցանկությունից ու հմտությունից:

Խցիկը զննելուց հետո Քառուփերվուղը հայացքը դարձրեց հսկիչ Զեպինին. սա մի խոշոր, ծանրաքաշ ու դանդաղկոտ մարդ էր, կարծես ամբողջովին փոշու հաստ շերտով ծածկված, բայց բացահայտորեն ոչ շար: Բանտային վերատեսաշության համազգեստը պարկի նման էր ամփոփել նրա անբարեծ մարմինը: Միստր Զեպինն այնպիսի տեսքով էր կանգնած, ասես անհամբեր էր շուտ նստելու նրա ծանր մարմինը բնավ էլ ուժեղ չէր թվում, բարեմիտ կերպարանքը ամբողջովին ծածկված էր ալեխառն կարճ մազով: Վատ խուզված մազերը ծիծաղելի փնջերով գուրս էին ընկել խոշոր գլխարկի տակից: Եվ այնուամենայնիվ Զեպինը լավ տպավորություն գործեց Քառուփերվուղի վրա: Ավելին՝ նա իսկոյն մտածեց, որ այդ մարդո թերևս ավելի ուշադիր կվարվի իր հետ, քան մինչ այդ վարվել էին ուրիշները: Դա գոտեաբնդեց նրան: Նա չէր կարող իմանալ, որ այդ մարդը «ախտահանման կետի» հսկիչն է, որի իշխանության ներքո նա մնալու էր ընդամենը երկու շաբաթ, մինչև լիովին ծանոթանար բանտի կանոններին, և ինքն էլ լոկ մեկն էր այն քսանվեց կալանավորներից, որոնց հանձնել էին Զեպինին:

Ծանոթացումն արագացնելու համար այդ պատվարժան այրը մոտեցավ մահճակալին ու նստեց, Քառուփերվուղին էլ մատնացուց արեց փայտե աթոռը, և սա էլ աթոռը մոտեցնելով նրան՝ իր հերթին նստեց:

— Ահա՝ և դուք այստեղ եք,— խիստ բարեմիտ շեշտով հաստատեց միստր Զեպինը. սա պարզամիտ, բարյացակամ, բազմափորձ մարդ էր կալանավորների հետ վարվելիու և մշտապես ներողամիտ նրանց հանդեպ: Տարիքը, բնածին բարեսրտությունը և կրոնական համոզմունքները (քվաքեր էր նա) մղում էին նրան գթասրտության. բայց միաժամանակ նրա պաշտոնական զննումները, ինչպես հետո իմացավ Քառուփերվուղը, հանգեցրել էին նրան այն եղբակացության, որ կալանավորների մեծ մասը ի ո՞նի փշացած մարդիկ են: Քենդալի նման սա էլ համարում էր

Նրանց կամագուրկ, որևէ բանի անպետք, տարբեր արատների անձնատուր եղած մարդիկ և ընդհանուր առմամբ չեր սխալվում: Դրանով հանդերձ նա պահել էր վարվեցողության իր ծերունական բարեսրտությունը և հայրական մեղմությունը, որովհետև բազմաթիվ թույլ ու սահմանափակ մարդկանց նման ամեն ինչից բարձր էր դասում մարդկային արդարությունն ու օրինավորությունը:

— Այո, ահա և ես այստեղ եմ, մի՛ստր Զեպին, — պարզապես պատասխանեց Քառուփերվուդը: Նա հիշում էր հսկիչի անունը, որ լսել էր «ավագից», և ծերունին խիստ շոյվեց դրանից:

Ծեր Զեպինը մի քիչ շփոթված էր զգում իրեն: Իր առաջ նստած էր նշանավոր Ֆրենկ Ա. Քառուփերվուդը, որի մասին հաճախ կարդացել էր թերթերում; այն խոշոր բանկիրը, որ կողոպտել էր քաղաքի գանձարանը: Ե՛վ սա, և սրա մեղսակից Սթիները (Զեպինն այդ կարդացել էր նույնպես լրագրերում) բավական երկար ժամանակ մնալու էին այստեղ: Այդ օրերին հինգ հարյուր հազար դոլարը հսկայական գումար էր, շատ ավելի, քան հինգ միլիոնը՝ քառասուն տարի հետո: Զեպինն ապշում էր անգամ այդպիսի մի անհավատալի գումար վատնելու մտքից, չխոսելով արդեն այն մեքենայությունների մասին, որ, ըստ թերթերի, արել էր այդ փողերով Քառուփերվուդը: Ծերունին վաղուց մշակել էր բազմաթիվ հարցեր, որ տալիս էր նա ամեն մի նոր կալանավորի՝ ցավո՞ւմ է, որ հանցանք է գործել. մտադի՞ր է արդյոք ուղղվել, եթե հանգամանքները նպաստեն. ծնողները ո՞ղջ են և այլն: Եվ-նայած, թե ինչպես էին սրանք պատասխանում՝ անտարբեր, զղջումով կամ գրգռիչ, նա էլ որոշում էր՝ արժանի՞ են պատճելու, թե՞ ոչ: Նա շատ լավ էր հասկանում, որ Քառուփերվուդի հետ չի կարելի խոսել ինչպես որևէ կողոպտիչի, տուն կտրողի, գրպանահատի կամ պարզապես մանր գողի ու խարեթայի հետ: Բայց այլ կերպ խոսել չէր իմանում:

— Այսպիսի՝ բան, — շարունակեց նա: — Պետք է են-

թաղրել, որ դուք երբեք էլ չեիք մտածել, թե կընկնեք այսպիսի տեղ, մի՛ստր Քառվիերվուդ:

— Զէի մտածել,— հաստատեց Ֆրենկը:— Մի քանի ամիս առաջ ես չէի հավատա սրան, մի՛ստր Զեպին: Ես չեմ կարծում, որ ինձ հետ արդար վարվեցին, իսկ հիմա, իհարկե, ուշ է դրա մասին խոսել:

Նա տեսնում էր, որ ծեր Զեպինը շատ է ուզում մի փոքրիկ բարոյախոսական կարդալ իր գլխին և պատրաստ էր լսել նրան: Ծուտով նա մենակ կմնա և էլ ոչ ոք չի լինի, որ հետը մի բառ փոխանակի. եթե կարելի է այս մարդու հետ քիչ թե շատ բարեկամական հարաբերություն ստեղծել, ավելի լավ: Փոթորիկի ժամանակ լավ է ամեն մի նավակայան, իսկ խեղդվողը օձին էլ է փաթաթվում:

— Այո, իհարկե, ամենքս էլ կյանքում սխալ անում ենք,— սեփական գերազանցության գիտակցությամբ շարունակեց միստր Զեպինը, որ միամտորեն համոզված էր, թե ինքը հովվի ու քարոզչի ընդունակություն ունի:— Միշտ չէ, որ մենք իմանում ենք, թե ինչ դուրս կգա մեր խորամանկ ծրագրումներից. Ճիշտ չե՞մ ասում: Ահա դուք հիմա գտնը-վում եք այստեղ և, պետք է ենթադրել, ձեզ համար վիրավորական է, որ շատ բան ընթացավ ոչ այնպես, ինչպես ակնկալում էիք: Բայց եթե ամեն ինչ սկսվեր սկզբից, կարծում եմ, թե դուք չեիք կրկնի այն, ինչ արել եք, այնպես չէ»:

— Ոչ, մի՛ստր Զեպին, հավանորեն ճշտությամբ չէի կրկնի, — բավական անկեղծ պատասխանեց Քառվիերվուդը, — թեև պետք է ասեմ, որ ես իմ բոլոր արարքների մեջ իրավացի էի համարում ինձ: Ես կարծում եմ, որ իրավաբանական տեսակետից ինձ հետ բնավ էլ ճիշտ շվարվեցին:

— Հը՛մ, միշտ էլ այդպես է լինում, — շարունակաց Զեպինը, մտածելու քորելով իր ալեհեր գլուխը և բարեմտուրեն ժպտալով:— Ես հաճախ եմ ջահել տղաներին ասում, երբ նրանք ընկնում են այստեղ, որ մենք շատ ավելի քիչ ենք իմանում, քան մեղ թվում է: Մոռանում ենք, որ աշխարհում կան մեզնից ավելի տիսմար մարդիկ, և միշտ էլ մարդ

կլինի, որ հետեւի մեզ: Ե՛վ դատարանը, և՛ գաղտնի գործառ-
կալները, և՛ բանտը մշտապես զգաստ են, պտույտ գալու
ժամանակ չես ունենում, և նրանք արդեն բռնում են քեզ:
Սրանից չի խուսափի նա, ով վատ է պահում իրեն:

— Այո, իրավացի եք դուք, միստր Զեպին, — համաձայ-
նեց Քառիկերվուդը:

— Լավ, իսկ հիմա, — նկատեց Զեպինը, երբ բարբառեց
ևս մի քանի բարոյախոսական, բայց ընդհանրապես միան-
գամայն բարյացակամ նկատառումներ, — ահավասիկ ձեր
մահճակալն ու աթոռը, այնտեղ էլ լվացարանն ու արտաքնոցը:
Նայեցեք, որ ամեն ինչ լինի մաքուր և կարգուկանոնով: (Կա-
րելի էր կարծել, որ նա Քառիկերվուդին է վստահում ինչ
իմանաս ինչպիսի՝ արժեքավոր կայք): Դուք ինքներդ պետք
է առավոտները կանոնավորեք ձեր անկողինը, ավլեք հա-
տակը, լվանաք միզամանը և խցիկը բարետես վիճակութ
պահեք: Ոչ ոք այդ բանը չի անի ձեր փոխարեն: Հենց առա-
վոտից էլ անցեք գործի, վեր կենաք թե չէ. Հետո էլ, մոտա-
վորապես վեց անց կեսին, ուտելիք կըերեն ձեզ: Այստեղ
վեր են կենում հինգն անց կեսին:

— Կուռմ եմ, մի՛ստր Զեպին, — հարգալիր պատասխա-
նեց Քառիկերվուդը: — Կարող եք վստահ լինել, որ ամեն
ինչ Հշտիվ կկատարվի:

— Ճիշտն ասած, այս է ամենը, — վրա բերեց Զեպինը: --
Շաբաթը մի անգամ կարող եք ոտից գլուխ լողանալ.
զրա համար ես ձեզ մաքուր սրբիչ կտամ: Ամեն ուրբաթ օր
պետք է լվանալ խցիկի հատակը: — Այս բանը լսելիս Քառ-
իկերվուդը մի թեթև ցնցվեց: — Եթե ուզենաք, կարող եք
տաք զուր ստանալ: Կհրամայեմ ծառային: Գալով հարա-
գատներին ու ծանոթներին... — Նա վեր կացավ մահճակա-
լից ու թափ տվեց իրեն՝ խոշոր, փոշոտ շան նման: — Դուք
ամուսնացած եք, այնպես չէ՞:

— Այո, — հաստատեց Քառիկերվուդը:

— Ուրեմն այսպես, ըստ կանոնի՝ ձեր կինն ու բարե-
կամները կարող են երեք ամիսը մեկ այցելել ձեզ, իսկ ձեր
փաստաբանը... Դուք, անշուշտ, փաստաբան ունեք:

— Եյո, սը՞ր, — պատասխանեց Քառվիերվուդը, որ սկսում
էր զվարձանալ այս խոսակցությունից:

— Ուրեմն այսպես. ձեր փաստաբանը, եթե ցանկանում
է, կարող է գալ ամեն շաբաթ, նույնիսկ ամեն օր: Փաստա-
բանների վերաբերյալ ոչ մի արգելք չկա: Նամակ գրել թուշ-
լատրվում է երեք ամիսը մեկ, իսկ եթե որևէ բան ուզենաք
բանտի խանութից, ասենք, ծխախոտ կամ մի այլ բան, ապա
գրեցեք մի երկտող, որ բանի որ բանտապեսի մոտ դուք փող
ունեք, ապա ամեն ինչ կբերեմ ձեզ:

Սերունին անպայման կաշառքի աշք չուներ, նրա մեջ
դեռ չէին ջնջվել հին տրադիցիաները, սակայն ժամանակին
նվերները կամ շղողքորթությունը ավելի զիջող ու մեղմաքա-
րո կդարձնեն նրան: Քառվիերվուդը բավական շուտ հասկա-
ցավ դա:

— Լավ, մի՛ստր Զեպին, — ամեն ինչ հասկացա, — ասաց
նա վեր կենալով, հենց որ վեր կացավ ծերունին:

— Մի երկու շաբաթ այստեղ մնալուց հետո, — մտածկուտ
ավելացրեց Զեպինը (մոռացել էր առաջ հայտնել), — բան-
տապետը ձեզ մշտական խցիկ կտա ներքեւում: Մինչ այդ դուք
պետք է որոշեք, թե ինչ աշխատանքով եք ուզում զբաղվել:
Եթե լավ պահեք ձեզ, հնարավոր է, որ ձեզ տան բակ ունե-
ցող խցիկ:

Նա դուրս եկավ, և դուռը շարագուշակ փակվեց նրա վրա:
Քառվիերվուդը մնաց մենակ, բավական վշտացած Զեպինի
վերջին խոսքերից: Միայն երկու շաբաթ հետո իրեն կտանեն
այս լավ մարդուց մի ուրիշի՝ անծանոթ հսկիչի մոտ, որի
հետ, կարող է պատահել, այնքան էլ դյուրին չի լինի հաշտ
ապրել:

— Եթե ես պետք լինեմ ձեզ՝ հիվանդանաք կամ ուրիշ
բան պատահի, հնարված է այսպիսի ազդանշան, — Զեպինը
կիսաբացեց դուռը. — սրբիչը կախեք դռան վանդակի ձո-
ղերից դուրս, և ուրիշ ոչինչ: Երբ անցնեմ, կտեսնեմ ու կգամ
իմանալու, թե ինչ է ոկետք:

Խիստ բարոյալքված Քառվիերվուդը մի ակնթարթ աշ-
խուժացավ:

— Հսում եմ, սը՛ր, — ասաց նա: — Ծնորհակալ եմ, մի՛ս-
աբր Զեպիս:

Ծերունին գնաց, և Քառվերվուղը լսում էր, թե ինչպես
ցեմենտե հատակի վրա հետզհետե լոռմ է նրա ոտնաձայնը:
Կանգնել էր նա լսողությունը լարած, և նրա ականջին հասան
մեկի հազը, ոտքերի քստքստոցը, ինչոր մեքենայի դռոցը,
փականքի մեջ մտնող բանալու երկաթե ճոխնչը: Այդ բոլոր
ձայները հասնում էին խլացած, կարծես հեռվից: Քառվեր-
վուղը մոտեցավ իր մահճակալին, որ մաքրությամբ աշքի շեր
ընկնում, քանի որ սպիտակեղեն բնավ շուներ. շոշափեց նեղ
ու պինդ ներքնակը: Ահա թե այսօրվանից ինչի վրա է քնելու
ինքը՝ այն մարդը, որ այնքան սիրում էր հարմարավետու-
թյունն ու պերճանքը և այնպես կարողանում էր գնահատել
դրանք: Ի՞նչ կլիներ, եթե էլլինը կամ նրա հարուստ բարե-
կամներից որևէ մեկը այժմ տեսնեին իրեն: Երբ մտածեց, որ
այդ անկողնում կարող են միջատներ լինել, սրտխառնուք
զգաց: Ի՞նչ պիտի անի այդ ժամանակ: Միակ աթոռը խիստ
անհարմար էր: Առաստաղի բացվածքից ներս մտնող լուսը
սակավ էր լուսավորում խուցը: Քառվերվուղն սկսեց ներշնչել
իրեն, թե քիշ-քիշ կվարժվի այդ պայմաններին, սակայն նրա
հայացքն ընկավ անկյունի միզամանին, ու դարձյալ զգվանք
զգաց: Ի լրումն ամենայնի, կակսեն խլրտալ նաև առնետները,
իսկ դա ավելի քան հավանական է: Ո՞չ նկար, ո՞չ գիրք, ո՞չ
մի այնպիսի բան, որ հաճելի լիներ աշքին, անգամ մարմնա-
կան շարժումների համար տեղ չկա, շուրջն էլ ոչ ոք, միայն
շորս մերկ պատ ու լոռվթյուն, որի մեջ սուզվելու է ամբողջ
գիշերը, երբ փակեն դրսի հաստ դուռը: Ի՞նչ սարսափելի
վիճակ:

Քառվերվուղը նստեց և սկսեց մտմտալ իր գրության
մասին: Ուրեմն ինքը այնուամենայնիվ արգելափակված է
Արևելյան ուղղիշ բանտում, որտեղ իր թշնամիների (դրանց
հետ և Բաթլերի) հաշվով հարկադրված է ապրելու շորս եր-
կար տարիներ, նույնիսկ՝ ավելի: Սթիները, հանկարծ անցավ
նրա մտքով, հիմա հավանորեն ենթարկվում է այն բոլոր
պրոցեդուրներին, որոնց քիչ առաջ ենթարկվեց ինքը: Խե՞զ

Սթիներ: Ի՞նչ հիմարություն արեց: Դե՛ք, հիմա էլ թող իր հիմարության համար հատուցի: Իր և Սթիների տարբերությունն այն է, որ աշխատում են Սթիներին ազատել այստեղից: Կարող է պատահել, որ նրա վիճակը հիմա այսպես թե այնպես թեթևացած է, և Քառուփերվուղը ոչ մի բան չի իմանում այդ մասին: Նա շփեց կզակը ու սկսեց միտք անել իր գրասենյակի, տան, բարեկամների ու հարազատների, ելլինի մասին: Հետո ձեռքը տարավ ժամացուցին, բայց այդ րոպեին էլ հիշեց, որ վերցրին իրենից: Ուրեմն զրկված է անգամ ժամանակն իմանալու հնարավորությունից: Նա ո՛չ ծոցատետր ուներ, ո՛չ գրիշ կամ մատիտ, որպեսզի թեկուզ որևէ բանով միտքը ցրեր, գումարած այն, որ առավոտից բան չէր կերպն: Բայց դա կարենոր չէր այն, որ ինքը արգելափակված է այդտեղ, կտրված է ամբողջ աշխարհից, բոլորովին մենակ է, անգամ չի իմանում, թե ժամը քանիսն է հիմա, և չի կարող որևէ բան ձեռնարկել, ո՛չ էլ գործերով զբաղվել, կամ ջանքեր թափել իր ապագան ապահովելու համար: Ճիշտ է, հավանութեն, Սթիչերը շուտով կգա իրեն տեսնելու: Այսպես թե այնպես միսիթարական է դա: Բայց և այնպես եթե հիշի, թե ո՞վ էր նա առաջ, ի՞նչ հեռանկարներ էին բացվում իր դիմաց նախքան հրդեհը, և ի՞նչ է դարձել հիմա: Նա սկսեց զննել իր կոշիկները, հագուստները: Աստված իմ... Այնուհետև վեր կացավ ու սկսեց երթեւկել, սակայն ամեն մի քայլը, ամեն մի շարժումը դղրդում էր նրա ականջներում: Այնժամ նա մոտեցավ դռանը և սկսեց նայել հաստ ձողերի միջով, բայց ոչինչ շտեսավ, բացի երկու ուրիշ խցիկների դռների եղրերից, որոնք ոչնչով չէին տարբերվում իր դռնից: Վերջապես նստելով իր միակ աթոռին, թաղվեց մտածմունքների մեջ, բայց հոգնություն զգաց, որոշեց այնուամենայնիվ օգտագործել բանտի կեղտոտ մահիճը ու պառկեց վրան: Պարզվեց, որ դա այնքան էլ անհարմար չէ: Այդուհանդերձ քիչ հետո նա վեր թռավ, նստեց աթոռին, նորից սկսեց շափշփել խուցը ու դարձյալ նստեց: Այսպիսի նեղ վայրում զբունել չի լինի, մտածեց: Ո՛չ, անտանելի է սա. կարծես ողջ-ողջ թաղված լինի: Եվ դեռ երևակայիցեք, որ հիմա

սահիպւած է ամբողջ ժամանակ այստեղ անցկացնել՝ օրից օր, օրից օր, մինչև...

Մինչև ի՞նչ:

Մինչև նահանգապետը ների կամ ինքը իր ժամկետի շափ նստի, կամ թե սպառվեն իր ունեցվածքի վերջին փշրանքները... և կամ...

Նա մտածում էր, իսկ ժամանակն անցնում էր ու անցնում: Ժամը վեցին մոտ էր, երբ վերջապես եկավ Սթեղերը, այն էլ կարճ ժամանակով: Նա շատ հոգսեր ուներ այն կապակցությամբ, որ առաջիկա հինգշաբթին, ուրբաթը և երկուշբթին նայելու էին բազմաթիվ հայցեր, որ ներկայացրել էին Քառուփերվուդի նախկին հաճախորդները: Սակայն փաստաբանի մեկնելուց հետո, երբ սկսեց մթնել, և Քառուփերվուդը մի թեթև խուզեց իր նավթե փոքր լամպի պատրույզը ու թունդ թեյ խմեց՝ հետև էլ ուտելով կեսն ալյուրից, կեսն էլ թեփից թխված գարշելի հացը, որ դուն պատուհանից ներս կոխեց «ավագը» (կարգուկանոնին հսկող վերակացուի ներկայությամբ), նրա հոգին արդեն ծայր աստիճան խոռվեց: Դրանից քիչ անց մի ուրիշ «ավագ», առանց ծպտուն հանելու, թափով փակեց արտաքին դուռը: Ժամը տասին (Քառուփերվուդը հիշեց զա) զգիտես որտեղ զողանչեց մի մեծ զանգ, և այն ժամանակ նա պարտավոր եղավ անմիջապես հանգնել լամպը, հանվել ու պառկել: Կանոնները խախտելու համար անկասկած պատիժներ կային՝ ոտելիքի պակասեցում, զլսող-հնազանդեցնող շապիկ, գուցե և մտրակահարում, որտեղից իմանար, թե ինչ... Նա ընկճված էր, շարացած ու հոգնաբեկ: Անցյալի գիրկն էր անցել մի այնպիսի երկարատև ու անհաջող պայքար: Ծորակի տակ լվանալով ֆայանսե հաստ թասը և թիթեղե ափսեն, Քառուփերվուդը ոտքերից նետեց կոշիկները, իր ամբողջ անարդ հագուստները, անգամ անողորկ վարտիքը ու հոգնած պառկեց մահմին: Խցիկը բնավ էլ տաք չէր, և նա զանում էր տաքանալ, փաթաթվելով վերմակով, բայց ապարդյուն: Ցուրտը նրա հոգումն էր:

— Զէ՛, այսպես չի ինի, — ասաց նա ինքն իրեն: — Զե՛ դա՛վ, այսպես երկար շեմ դիմանա:

Այնուամենայնիվ նա դիմքը շրջեց դեպի պատը ու մի քանի ժամ էլ տանջվելուց հետո քնեց:

Գ Լ Ո Ւ Խ LIV

Նրանք, ում բախտի բարեհաճությունը, ծննդյան պատահականությունը կամ հարազատների ու բարեկամների իմաստությունը օգնում են խուսափելու այն նզովքից, որը պատահում է ըստրյալ ու ապահով մարդկանց և արտահայտվում է «խեղել իր կյանքը» խոսքով, հազիվ թե հասկանան Քառվիերվուդի հոգեվիճակը այդ առաջին օրերին, երբ նա վճառ նստում էր իր իցում ու տխուր-տրտում մտածում, թե ահա, չնայած իր ամբողջ ճարպկության, գաղափար իսկ չունի, թե ինչ կլինի իրեն: Ամենաուժեղ մարդիկ երբեմն ենթարկվում են վհատության: Կինում են պահեր, երբ մեծ մտքի տհր մարդկանց (սրանց, անշուշտ, ավելի հաճախ) կյանքը պառկերանում է ամենամռայլ գույներով: Որքա՞ն սարսափելի բաներ կան կյանքի նենգությունների մեջ: Եվ միայն այն մարդիկ, ովքեր օժտված են արտասովոր համարձակությամբ և հավատում են իրենց իսկապես առկա ուժերին, ընդունակ են անվախ նայելու կյանքի դեմքին: Քառուիերվուն ամեններն օժտված չեր արտակարգ մտավոր կարողությամբ: Նա ուներ բավական սուր միտք, որին (ինչպես հաճախ լինում է գործնական խառնվածքի տեր մարդկանց) միանում էր անձնական բարեկեցության անզուսպ ձգտումը: Այդ միտքը հզոր լուսարձակի նման իր խորաթափանց ճառագայթներն էր նետում կյանքի մութ անկյունները, բայց նրան պակասում էր օբյեկտիվությունը, որպեսզի ուսումնասիրեր խավարի իսկական խորքերը: Քառուիերվուդը ինչ-որ շափով հասու էր լինում այն պրոբլեմներին, որոնց վրա խորհրդածում էին մեծ աստղագետները, սոցիոլոգները, փիլիսոփաները, քիմիկոսները, ֆիզիկոսները, ֆիզիոլոգները. բայց այդ ամենը ըստ էության այնքան էլ չեր հետաքրքրում նրան: Կյանքը լի է բազմաթիվ յուրօրինակ գաղտնիքներով: Աւ, հավանորեն, անհրաժեշտ է, որ մեկը հասնի դրանց լուծման: Բայց այսպես թե այնպես

նրան ձդում էր ուրիշ բան։ Նրա հակոսմը «փող շինելն» էր։ կազմակերպել խոշոր եկամուտ բերող ձեռնարկություններ կամ տվյալ ժամանակում թեկուզեւ պահել այն, ինչ սկսված էր մի անգամ։

Սակայն լուրջ խորհրդածելուց հետո վերջինս սկսեց համարյա անկարելի թվական։ Նրան գործը շատ էր խախտված, շատ էր խարխլած հանգամանքների շարաբաստիկ ընթացքից։ Նա կարող էր, ինչպես Սթեջերը բացատրեց, տարիներով ձգձգել այն հայցերի գործը, որոնք առաջացել էին իր սնանկանալու հետևանքով, պարտատերերի հոգին հանել, բայց այդ ժամանակամիջոցում նրա կարողությունը, մեկ է, կհալեր, կաճեին ստանձնած պարտավորությունների տոկոսները, կկուտակվեին դատական ծախսերը։ Բացի դրանից, նա ու Սթեջերը երեան հանեցին, որ պարտատերերից ոմանք իրենց թղթերը ծախել են Բաթլերին, ոմանք Մոլենհաուերին, սրանք էլ, իհարկե, շեն համաձայնի ու մի զիջում անելու և կպահանջեն, որ լիովին բավարարվեն իրենց պահանջները։ Միակ բանը, որի վրա նա կարող էր հույս դնել, հետևյալն էր՝ որոշ ժամանակ անցնելուց հետո համաձայնության գույն պարտատերերից ոմանց հետ և նորից սկսել «դրամ շինել» Ստեֆեն Ուինգեյթի միջոցով։ Այս մարդը մոտ օրերս պետք է այցելեր նրան, հենց որ Սթեջերը կարողանար այդ մասին պայմանավորվել բանտապետ Մայքլ Դեսմասի հետ, որը երկրորդ օրն իսկ եկավ Քառուիերվուդի խուցը, տեսնելու նոր կալանավորին։

Դեսմասը խոշոր տղամարդ էր՝ ծագումով իոլանդացի և քաղաքականությունից որոշ բան հասկացող։ Ֆիլադելֆիայում ապրած տարիներին նա տարբեր պաշտոններ էր վարել. երիտասարդությանը եղել էր ոստիկան, Քաղաքացիական պատերազմին՝ կրտսեր ենթասպա, իսկ հիմա՝ ո՛չ ավելի, քան Մոլենհաուերի հնագանդ գործիքը։ Լայնաթիկունք էր, արտակարգ մկանուտ և, չնայած հիսունյոթ տարեկան լինելուն, կարող էր հիանալի պաշտպանվել ձեռնամարտում։ Խոշոր ու ջուտ էին նաև ձեռքերը, դեմքն ավելի շուտ քառակուսի, քան կլոր կամ երկարավուն, ճակատը բարձր։ Գլուխը ծածկված էր

թուլս ու խիտ մազերով, վերին շրթունքի վրա ցցվել էին կարձ խուզված թուլս բեղեր. նրա կապտագորշ աշքերի հայացքը բնածին խելքի և խորաթափանցության վկայություն էր, այտերի վրա թրթոռմ էր վարդակարմիրը, իսկ երբ Դեսմասը ժպտում էր, որից երեսում էին միահավասար, սուր ատամները, ապա այդ ժպտի մեջ գայլային մի բան կար: Մինչդեռ նա դաժան մարդ չէր, երբեմն նույնիսկ բարեսիրտ էր, թեև մեկմեկ էլ զայրույթի նոպաներ էր ունենում: Ավա՞ղ, Դեսմասին պակասում էր մտավոր զարգացումը, որպեսզի տեսներ առանձին կալանավորների թե՛ հոգեկան և թե՛ հասարակական դիրքի տարբերությունը: Նա չէր հասկանում, որ ժամանակ առ ժամանակ բանտ են ընկնում այնպիսի մարդիկ, որոնց, անկախ նրանց քաղաքական նշանակալիությունից, պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Այս, եթե քաղաքական մեծամեծները ցույց տային Դեսմասին կալանավորների այդ տարբերությունը (ինչպես Քառուիերվուդի ու Սթիների դեպքում), այդ արդեն ուրիշ բան էր: Բայց քանի որ բանտը հասարակական հաստատություն է, և ամեն րոպե կարելի է սպասել փաստաբանների, գաղտնի ոստիկանների, բժիշկների, քահանաների, լրագրողների և կամ պարզապես կալանավորների ազգականների ու բարեկամների այցելությանը, ապա բանտապետը ստիպված է (թեկուզ իր ստորադասների վրա իշխանությունը շկորցնելու համար) ամեն կերպ կարգուկանոնը պահել, երբեմն նույնիսկ այս կամ այն քաղաքական ղեկավարի ցանկության հակառակ և ոչ մի կալանավորի շափից ավելի զիջողություն շանել: Պատահում էր, իհարկե, որ կալանավորների մեջ լինում էին հարուստ ու շփացած մարդիկ, զոհ դարձած այն ցնցումներին, որոնք ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում հասարակական կյանքում, և նրանց նկատմամբ ըստ հնարավորին ավելի ներողամիտ պետք էր լինել:

Դեսմասը, իհարկե, իմանում էր Քառուիերվուդի և Սթիների ամբողջ պատմությունը: Քաղաքական գործիչներն արդեն նախազգուշացրել էին նրան, որ նկատի ունենալով Սթիների ծառայությունները, պետք է մեղմ վարվել հետք: Քառուիեր-

վուղի վերաբերյալ ոչ ոք այդպիսի բան չէր ասել; Թանտապետն, իհարկե, կարող է նրա համար էլ մի բան անել, սակայն միայն իր համարձակությամբ:

— Բաթլերը ատամ է սրում նրա դեմ,— ասաց մի անգամ Սթրոբիկը Դեսմասին: — Նրա աղջկա պատճառով էլ ծագեց այս ամբողջ պատմությունը: Մարդ թե լսի Բաթլերին, ապա Քառուփերվուդին պետք է լոկ հաց ու ջրով պահել, մինչդեռ նա բնավ էլ վատ տղա չէ: Անկեղծ ասած, եթե Սթիները թեկուզ մի կաթիլ ողջամտություն ունենար, ապա Քառուփերվուդն այստեղ չէր լինի: Սակայն մեծամեծները աշքը չէին հեռացնում գանձապետից ու հնարավորություն շտվին, որ նա փոխատվություն անի Քառուփերվուդին:

Զնայած այն բանին, որ Սթրոբիկը Մոլենհառուերի ճընշմամբ խորհուրդ էր տվել Սթիներին այլևս ոչ մի ցենտ չտալ Քառուփերվուդին, այժմ իր զո՞դի վարմունքը սխալ էր համարում: Բայց նրա մտքով անգամ չէր անցնում, որ ինքն էլ հետեղական չէր:

Տեսնելով, որ Քառուփերվուդը շի վայելում «մեծ եռյակի» բարյացակամությունը, Դեսմասը որոշեց առանձնակի ուղղ շղարձնել նրան և մանավանդ շշտապել համենայն դեպս որևէ զիջում անելու: Սթիներին տվին հարմար բազկաթոռ, մաքուր սպիտակեղեն, հատուկ ամաններ և ճաշասպասք, թերթեր, արտոնություններ նամակագրության և այցելուներին ընդունելու հարցում և այլն: Իսկ Քառուփերվուդին... հը՝ մ, նախ՝ պետք է մի լավ զննել նրան և այն ժամանակ միայն որոշել: Մինչ այս, մինչ այն Սթեցերի ջանքերն էլ անհաջող շանցան: Քառուփերվուդի բանտարկվելու հենց հաջորդ օրը Դեսմասը մի նամակ ստացավ Համբուրգից, մի այնպիսի կարեռ անձից, ինչպիսին էր Թերենս Ռելիխենը, որն այդ նամակում ասում էր, թե ինքը շատ շնորհակալ կլինի միստր Քառուփերվուդին մատուցված ամենայն սիրալիքության համար: Նամակը կարդալուց հետո Դեսմասը գնաց Քառուփերվուդի խուցը և դուն բացվածքից նայեց նրան: Ճանապարհին նա մի կարձատեկ զրոյց ունեցավ Զեպինի հետ, որը խիստ գովասանգով խոսեց նոր կալանավորի մասին:

Դեսմասը մինչև այդ երբեք չէր տեսել Քառուիերվուդին, բայց սա, չնայած բանտի այլանդակ հագուստին, անձոռնի ոտնամաններին, կոպիտ շապկին ու զզվելի խցիկին, ուժեղ տպավորություն գործեց նրա վրա: Կալանավորի սովորական տիպի՝ թորշոմած, թուլակաղմ, երերուն հայացքով մարդու փոխարեն նա տեսավ իր առաջ մի եռանդուն, ուժեղ տղամարդ, որի բարեճկ կազմվածքը չէին այլանդակել ո՛չ նողկաւլի հագուստը, ո՛չ էլ կրած ձախորդությունները: Ուրախացած թեկուզ մի կենդանի էակի երեալով՝ Քառուիերվուդը բարձրացրեց գլուխը ու նայեց Դեսմասին խոշոր, զինջ ու սառն աշքերով, որոնք մի ժամանակ այնքան վստահություն էին ներշնչում և այնպես հանգստացնող ազգեցություն էին գործում բոլոր նրանց վրա, ովքեր առիթ էին ունենում գործ բռնել նրա հետ: Դեսմասը ապշեց: Համեմատած Աթիներին, որին առաջ էլ ճանաշում էր նա և հիմա կրկին տեսավ բանտում, Քառուիերվուդը ուժի մարմնացում էր, ինչ էլ որ ասեն, ուժեղ մարդը միշտ էլ հարգում է մի ուրիշ ուժեղի: Իսկ Դեսմասը օժտված էր ֆիզիկական արտասովոր ուժով: Նա նայում էր Քառուիերվուդին, Քառուիերվուդն էլ՝ նրան: Եվ Դեսմասը ակամա համակրանք զգաց նրա հանգեց: Թվում էր, թե երկու վագր են նայում իրար:

Քառուիերվուդը հոտառությամբ կռահեց, որ իր դիմաց կանգնած է բանտապետը:

— Միստր Դեսմաս՝ ն եք, եթե չեմ սխալվում, — հարգալիր ու սիրակամ հարցրեց նա:

— Այո, սը՛ր, ես եմ, — պատասխանեց Դեսմասը, հետրքհետե ալելի հետաքրքրվելով: — Այնքան էլ հարմարավեա չէ մեր ատլարանքը, ինչպես կասեք դուք:

Բանտապետը բարեկամաբար ժպտաց, ցուցադրելով հավասարաշափ ատամների զույգ շարքերը: Այդ ժպտի մեջ գայլային մի բան կար:

— Այո, իհարկե, մի՛ստր Դեսմաս, — հաստատեց Քառուիերվուդը, կանգնելով զինվորի պես ձգված: — Ասենք ես չեի էլ մտածում, թե կմտնեմ մի շքեղ հյուրանոց, — ժպտալով ավելացրեց նա:

— Որևէ բանով ձեզ օգտակար լինել չե՞մ կարող, մի՛սուր Քառուփերվուդ, — հարցրեց Դեսմասը, որի մտքով վայրկենապես անցավ, թե այսպիսի մարդը ժամանակին դեռ կարող է օգտակար լինել իրեն: — Ես զրուց ունեցած ձեր փաստաբանի հետ:

Քառուփերվուդը խիստ ուրախացավ իրեն «միստր» անվանելուց: Ահա թե որտեղից է քամին փշում: Ինչո՞ւ չէ, կարերելի է ուրեմն սպասել, որ այստեղ այնքան էլ վատ չի լինի իր վիճակը: Մի քիչ համբերություն: Պետք է «տնտղել» այս մարդուն:

— Ես ձեզնից ոչ մի այնպիսի բան չեմ պահանջի, որը ձեզ համար անհարմար լինի թույլ տալ ինձ, — քաղաքավարի պատասխանեց Ֆրենկը, — սակայն որոշ բաներ շատ կուղենացի փոխվեին: Կուղենայի սալաններ ունենալ անկողինի համար, այնուհետև թերևս թույլ աայիք, որ սպիտակեղեն տրվեր ինձ: Այն, ինչ իմ հագին է հիմա, շատ է գրգռում ինձ:

— Այո, Ճիշտն ասած, լավ բրդից չէ, — անխռով հանգըստությամբ պատասխանեց Դեսմասը: — Դա պատրաստում են այստեղ՝ Պենսիլվանիայում, չգիտեմ ուր, նահանգի կարիքների համար: Եթե ձեզ այնքան հաճելի է, որ գուրք հագնեք ձեր սեփական սպիտակեղենը, ես դրա գեմ չեմ առարկի: Նույնը նաև սավանների վերաբերյալ: Եթե ունեք, կարող եք օգտագործել: Միայն թե շպետք է շատ շտապել: Ապա թե ոչ միշտ էլ կլինեն բազմաթիվ մարդիկ, որ կուղենան բանտապետին սովորեցնել, թե ինչպես կատարի իր պարտականությունները:

— Ես շատ լավ եմ հասկանում, — հաստատեց Քառուփերվուդը, — և անշափ երախտապարտ եմ ձեզ: Կարող եք վստահ լինել, որ ըստ արժանվույն կգնահատվի այն ամենը, ինչ գուրք կանեք ինձ համար, և դա վնաս չի հասցնի ձեզ: Այս պատերից գուրս ես բավականաշափ բարեկամներ ունեմ, որոնք ժամանակին շնորհակալ կլինեն ինձ համար:

Նա խոսում էր դանդաղ և ազդեցիկ շեշտով, շեշտակի հայացքը շկտրելով Դեսմասից, որի վրա պատշաճ տպավորություն գործեց նրա ասածը:

— լավ, լավ,— ասաց նա նույն բարեկամական տոնով:— Ես, անշուշտ, շատ բան խոստանալ չեմ կարող: Կանոնը կանոն է: Սակայն որոշ բան անպայման կարելի է անել, քանի որ այդ նույն կանոնները որոշ զիջողություն են թույլ տալիս օրինակելի վարք ունեցող կալանավորներին: Եթե ցանկանում եք, մենք ձեզ կտանք ավելի հարմար աթոռ և մի քանի գիրք ընթերցանության համար: Եթե դուք զբաղվում եք դեռ գործերով, ապա ես ոչ մի դեպքում արգելք չեմ հարուցի այդ հարցում: Մենք, իհարկե, չենք կարող թույլ տալ, որ ստեղ-ստեղ երթեւեկեն այստեղ զանազան մարդիկ. բան-տը առևտրական գրասենյակ չէ: Բայց շեմ պատրաստվում խանգարել ձեզ, որ ժամանակ առ ժամանակ տեսնվեք ձեր բարեկամներից ոմանց հետ: Ինչ վերաբերում է ձեր նամակագրությանը... Ի՞նչ արած, սկզբնական շրջանում ստիպված ենք նայել դա՝ ըստ ընդհանուր կանոնների: Հետո կտեսնենք: Կրկնում եմ, շատ բան խոստանալ չեմ կարող: Սպասենք, որ ձեզ այս շենքից փոխադրեն ներքեւ: Այնտեղ կա մի քանի խույզ՝ փոքրիկ բակերով և եթե դրանք աղատ լինեն...

Բանտապետը բազմանշանակ աշբով արեց, և Ֆրենկը հասկացավ, որ ունենալու է թեև ոչ այնքան հեշտավետ, բայց և ոչ այնքան մոայլ վիճակ, ինչպես երկնշում էր: Դեսմասը առաջարկեց Քառուփերվուղին մտածել, թե ինչ արհեստ է ուզում ընտրել իր համար:

— Դուք անպայման ձեռքերը որմէ բանով զբաղեցնելու պահանջ կզգաք: Սա արդեն հաստատապես գիտեմ ես: Որոշ ժամանակ անց այստեղ ամենքն էլ ձգտում են աշխատել: Այլ կերպ չի լինում:

Քառուփուղը հասկացավ և բազմիցս շնորհակալություն հայտնեց: Նա սարսափում էր, երբ մտածում էր, թե անգործ կմնա խցիկում, որտեղ շուր գալն էլ դժվար էր. սակայն հիմա Ուինգեյթի ու Սթեցերի հետ հաճախակի տեսնվելը, որոշ ժամանակ հետո էլ նամակագրություն ունենալը, այնպես, որ իր գրածները բանտի կառավարչությունը շկարդար, մեծ թեթևացում էր խոստանում: Փա՛ռք աստծո, նա կհագնի իր սեփական սպիտակեղենը՝ մետաքսե ու բրդե, գուցե և շուտով

թույլ տան հանելու անձոռնի կոշիկները։ Երբ նա ստանա այս բոլոր արտոնությունները, սկսի արհեստով զբաղվէլ և կարողանա ման գալ բակում, որ Դեսմասը հիշատակեց, ապա նրա կյանքը կլինի եթե ոչ իդեալական, համենայն դեպս տանելի։ Բանտը, իհարկե, կմնա բանտ, սակայն հույս կա, որ դա այնպիսի մղձավանջ չի լինի իր, ինչպես շատ ուրիշների համար։

Երկու շաբաթվա ընթացքում, որ Քառվերվուժն անցկացրեց «ախտահանիչում», Զեպինի հսկողության ներքո, բանտի կենցաղի մասին իմացավ համարյա այնքան, որքան իր կալանքի ամբողջ ժամանակամիջոցում, որովհետև դա սովորական բանտ չէր՝ բանտի բակով, բանտի հասարակությամբ, զբոսանքին բանտի քայլքով, բանտի աշխատանքով ու ճաշարանով։ Ո՛չ նրա, ո՛չ էլ մյուս կալանավորների հիմնական զանգվածի համար այստեղ ընդհանուր բանտային կյանք չկար։ Կալանավորների բացարձակ մեծամասնությունը աշխատում էր իր խցում՝ քար լուսավոր մեջ, կատարելով որևէ որոշակի առաջադրանք և ոչինչ շիմանալով, թե ինչ է տեղի ունենում իր շուրջը։ Այտեղ ուժիմի հիմնականը միայնակ կալանքն էր, և միայն սակավաթիվ բանտարկյալների էր թույլ տրվում մասնակցել արտախցիկա ոչ բարդ աշխատանքների։ Ինչպես ենթադրում էր Քառվերվուժը, և ծեր Զեպինն էլ շուտով հաստատեց դա, շորս հարյուր կալանավորներից յոթանասունհինգը միայն, այն էլ ոչ կանոնավորապես, աշխատում էին՝ օգնելով խոհանոցում, բանշարանոցում, ծաղկանոցներում, ջրաղացում, մասնակցում ընդհանուր մաքրումին։ և դա միակ բանն էր, որ փրկում էր նրանց մենակությունից։ Բայց անգամ այդ բախտավորներին արգելված էր խոսել իրար հետ, ու թեև աշխատելիս նրանք ազատվում էին գլխին կրելու գարշելի պարկը, այնուամենայնիվ աշխատանքի գնալիս ու այնտեղից վերադառնալիս ստիպված էին քաշել գլուխը։ Քառվերվուղը հաճախ էր տեսել, երբ սրանք ծանրաքայլ անց էին կենում իր խցի առօնից, և այդ երթը նրա մեջ առաջացնում էր մի արտասովոր, անբնական ու քստմնելի տպավորություն։ Երբեմն սաստիկ ցանկություն էր ունենում նա հե-

տագայում ևս մնալ բարեմիտ ու զրուցասեր Զեպինի հսկողության ներքո, բայց գիտեր, որ անկարելի է:

Երկու շաբաթը շուտ անցավ, ճիշտն ասած, բավական տաղտկալի երկու շաբաթ, և անցան դրանք միակերպ ու առօրյա զբաղմունքների մեջ, ինչպես, ասենք, մահճակալի կանոնավորումը, խուցն ավլելը, հագնվելը, հինգն անց կեսին վեր կենալը, իննին անկողին մտնելը, ամեն անգամ ուտելուց հետո ամանը լվանալը և այլն, և այլն: Քառուփերվուղին թվում էր, թե ինքը երբեք չի վարժվի բանահի ուտելիքին: Վեց անց կեսին տրվող նախաճաշը, ինչպես արդեն ասել ենք, կոշտ ու սև հաց էր՝ թիված թեփից ու մի քիչ էլ սպիտակ ալյուրից, և սև սուրճ՝ ձաշին՝ տասնմեկն անց կեսին, տրվում էր բակլայի կամ բանջարի բրդոշ մի կտոր պինդ մսով ու նույն հացը: Ժամը վեցի ընթրիքին բանտարկյալներն ստանում էին մուգ թեյ ու գարճյալ հաց, ո՛չ կարագ, ո՛չ կաթ, ո՛չ էլ շաքար: Քառուփերվուղը ծխող էր, ուստի և հասանելիք փոքրանակ ծխախոտը չէր հետաքրքրում նրան: Առաջին երկու թե երեք շաբաթը Սթեղերը գալիս էր ամեն օր, իսկ Քառուփերվուղի բանտարկվելու երկրորդ օրվանից նրա նոր գործընկեր Ստեֆեն Ուինգեյթը նույնպես թուլլավություն ստացավ ամեն օր այցելելու: Դեսմասը արտոնեց դա, թեև կարծում էր, թե թուլլավությունը մի քիչ շուտ է: Այցելուները սովորաբար մնում էին Քառուփերվուղի մոտ մի կամ մեկուկես ժամից ոչ ավելի, որից հետո նորից ձգվում էր երկար, երկար ցերեկը: Մի քանի անգամ, առավոտյան իննի և երեկոյան հինգի միջն Ֆրենկին տանում էին դատարան՝ ցուցմունք տալու սնանկության կապակցությամբ նրան ներկայացված հայցերի վերաբերյալ, և սկզբում դա մի քիչ կարծում էր ժամանակը:

Նշանակալի է, որ Քառուփերվուղը հուսալի ու ըստ երեսութին երկար տարիներով ամբողջ աշխարհից կտրվելու պայմանով բանտ նետվելուց անմիջապես հետո, բոլոր նրանք, ովքեր ժամանակին այնքան անկեղծ էին նրա հետ, դադարեցին անգամ նրա մասին մտածել: Վերջացած մարդ է, այսպես էր ընդհանուր կարծիքը: Միակ բանը, որ դեռ կարելի էր անել նրա համար, հետկյալն էր. ժամանակին գործադրել իրենց

ազդեցությունը՝ բանտից ազատելու նրան. բայց ո՞վ կարող էր ասել, թե երբ կգա այդ ժամանակը: Դրանով էլ հարցը սպառվում էր: Նա այլևս երեք չի գրավի նախկին դրությունը, երբեք փոքրիշտառ նշանակալի դեր չի կատարի. սա ևս ընդհանուր կարծիք էր: Շատ ափսոս, ավելին՝ շատ ողբերգական է, բայց նա գնաց, և նրա տեղը այժմ նրանը չէր համարվում:

— Բնդոմնակ երիտասարդ էր,— նկատեց Զիրարդ ազգային բանկի նախագահ Դեկսոնը, երբ թերթում կարդաց, որ Քառուփերվուղը դատապարտված է ու կալանավորված:— Ափսոս տղան, շատ ափսոս: Խոշոր սիալ թույլ տվեց նա:

Միայն Քառուփերվուղի ծնողները, էլլինն ու Լիլիանը, որի սրտում կսկիծն ու վրդովմունքն իրար էին խառնվում, հիրավի զգում էին նրա պակասը: Բոլորից ավելի տառապում էր սիրատոշոր էլլինը: Չորս տարի ու երեք ամիս, մտածում էր նա: Եթե ժամկետից շուտ դուրս չգա, ինքը կլինի մոտ քսանինը, իսկ Ֆրենկը գրեթե քառասուն տարեկան: Այն ժամանակ նա կուզենա՝ իրեն, ինքը դարձյալ այսպես սիրուն կլինի, գրեթե հինգ տարի անցնելուց հետո ընդհանրապես շեն փոխվի արդյոք Ֆրենկի հայացքները: Այդ նույն ժամանակամիջոցում նա կալանավորական հագուստ պիտի հագնի, և նրա վրա ընդմիշտ կմնա բանտարկյալի անախորժ անունը: Որքան էլ ծանր լինեին այս մտմտուքները, այնուամենայնիվ դրանք ամրապնդում էին միայն նրա որոշումը՝ չհրաժարվել Ֆրենկից ի՞նչ էլ լինի և ամբողջ ուժով օգնել նրան:

Դատավճռի հաջորդ օրն իսկ էլլինը գնաց դիտելու ուղղիչ բանտի շարագուշակ, գորշ պատերը: Եվ որովհետև նա բան շեր հասկանում օրենքի և պատժական օրենսգրքի բարդ լաբիունիսից, ապա բանտը շափազանց սարսափելի թվաց նրան: Ինչե՞ր ասես շեն անի իր Ֆրենկին: Շատ է արդյոք տառապահամ նա, իր մասին մտածում է այնքան, որքան ինքը նրա մասին: Օ՛, որքան սարսափելի է այդ ամենը: Որքա՞ն վիրավորական է իր համար, նրա հանդեպ տածած իր անսահման սիրո համար: Էլլինը վերադարձավ տուն, հաստատապես որոշելով տեսնվել նրա հետ, բայց քանի որ Քառուփերվուղն ասել

Հր, թե այցելուներին թուզլ են տալիս երեք ամիսը մեկ գալ, թե ինքը կգրի այցելության օրվա կամ բանտի պատերից դուրս տեսնվելու հնարավորության մասին, ապա նա չէր իմանում ինչպես ձեռնամուխ լինի դրան։ Նախ և առաջ զգություն։

Բայց և այնպես հաջորդ օրն իսկ ամեն ինչ գրեց ֆրեն-կին. Հայտնեց, որ վատ եղանակին գնացել-տեսել է բանտի շենքը, որ սարսափում է, երբ մտածում է, թե այդ մոռալ պատերից ներս է գտնվում նա, որ ինքը անխախտ որոշել է ըստ հնարավորին շուտ տեսնվել նրա հետ։ Վերջերս բանտապետի հետ ունեցած պայմանավորվածության շնորհիվ այդ նամակն անմիջապես հանձնվեց Քառուիերվուուին։ Սա էլ գրեց պատասխանը և տվեց Ուինգեյթին ուղարկելու Պատաժանը հետեւալն էր.

«Իմ սիրելի՝ աղջիկ».

Տեսնում եմ, որ հուսալբիկել ես այն բանից, որ մենք կըր-
կին միասին չենք լինի այնքան շուտ. բայց պետք է արիա-
նալ: Դատավճիռն արգեն գիտես դու թերթերից: Մուս կեսօրին
ինձ բերին այստեղ, ուղղակի դատարանից: Եթե հնարավորու-
թյուն ունենայի, անմիջապես կգրեի քեզ մանրամասնորեն և
ամեն ինչ՝ քեզ միամտացնելու համար. սակայն հնարավոր
չէր: Այստեղի կանոնները թույլ չեն տալիս. ճիշտն ասած, հի-
ման էլ ծածուկ եմ գրում: Այսպես թե այնպես հաստատ նըս-
տել եմ բանտում և, իհարկե, տեխնում եմ դուրս գալ այնտե-
ղից: Շատ եմ խնդրում, միրելի՞ս, եթե ուղենաս գալ այստեղ,
զգուշությունն անտես չառնես: Դու միմիայն հրճվանք կպատ-
ճառես ինձ ու կգոտեպնդես, բայց քեզ կարող ես մեծ վնաս
հասցնել, մանավանդ, որ ես կարծում եմ, թե առանց այդ էլ
շատ եմ շարիք պատճառել քեզ՝ ավելի, քան կարող եմ երբեք
քավել, և քեզ համար ամենալավը այն կլիներ, եթե մոռա-
նայիր ինձ. բայց գիտեմ, որ այդպիսի բան չես անի, ես փիստ
կտիրեի: Ուրբաթ օրը, ցերեկվա ժամը երկուակն, պետք է
զնամ հատուկ գործերի դատարան՝ Վեցերորդ և Զեսթնաթ-
սթրիթի անկյունում: Բայց այդտեղ տեսնվել չենք կարող: ինձ

ուղեկցելու է պահակը: Զգո՞ւշ եղիր: Գուցե և մի լավ մտածելոց հետո դու կորչես հրաժարվել այդ հանդիպումից»:

Վերջին տողերը համակված էին նրա ու էլլինի հարաբերությունների մեջ առաջին՝ անգամ սողոսկած խոր վճառությամբ. սակայն հանգամանքներն էին փոխել Քառուփերվողին: Առաջ նա երկակայում էր, թե ինքը մի գերազույն էակ է, որի բարեհաճությանը պետք է ձգտել, թեև էլլինն էլ այնպիսի կիմ էր, որի բարեհաճությունն արժեր փնտրել: Երբեմն Ֆրենկին թվում էր, թե այդ կապը ինքնին կկտրվի. շէ՞ որ ինքը կարող է հասնել այնպիսի բարձունքների, որ էլլինն այլևս համապատասխան չի լինի իրեն: Բայց հիմա՝ կալանավորի շերտավոր հագուստով, այլ կերպ էր նայում այդ հարցին: Էլլինի դիրքը, որ նրա երկարամյա ու կրքոտ կապի պատճառով քիչ էր մնացել թուլանար, բավականին ամրացնել էր: Առավելությունը բացահայտորեն նրա կողմն էր: Վերջին վերջո մի՞թե նա էդուարդ Բաթլերի դուստը չէ և մի՞թե անկարելի բան է, որ երկար անջատումից հետո նա չուղենազառնալ բանտարկյալի կինը: Էլլինը, Ճիշտն ասած, պետք է լքի Ֆրենկին և հավանորեն ինքն էլ է ուզում: Ինչո՞ւ պետք է սպասի Ֆրենկին: Նրա կյանքը դեռ խորտակված չէ: Հասարակությունը շի իմանում, համենայն դեպս այդպես էր թվում Ֆրենկին, կամ գեթ ոչ բոլորը գիտեն: Որ նա եղել է իր սիրուհին: Նա կարող է ուրիշի հետ ամուսնանալ, կարող է ընդմիշտ հեռանալ իր կյանքից: Բայց որքա՞ն ցավալի կլիները: Իսկ մի՞թե ինքը դրանով հանդերձ պարտավոր չէ, ելնելով օրինավորության ամենապարզ զգացմունքից, առաջարկել նրան խղելու իրենց կապերը կամ համենայն դեպս մտածի, թե ինչպիսի վերաբերմունք ունենա Ֆրենկի հանդեպ:

Նա այնքան լավ էր հանաշում էլլինին, որ ընդունակ չէր համարում նրան այդպիսի քայլ կատարելու: Եվ ինչ էլ դա սպառնար էլլինին, նրա ներկա դրության մեջ մեծագույն երջանկություն էր պահել այդ սերը՝ իր և իր անցյալ լավ օրերի այդ օղակը: Հապճեպորեն գրելով այդ երկտողը էլլինին՝ Ուինգեյթի ներկայությամբ, որը պարտավոր էր առաքել (վերա-

կացու Զեպինը մի պահ սիրալիք կերպով դուրս եկավ Քառ-
փերվութիւնցից), նա այնուամենայնիվ չէր կարող զսպն.
իրեն և վերջին բոպեին շարտահայտել իր տարակույսը, և երբ
էլլինը կարդաց այդ տողերը, ապա դրանք խոր խոցեցին նրա
սիրտը: Այդ տողերում արտահայտված էր Ֆրենկին համակած
վհատությունը, հոգեկան կատարյալ անկումը: Երևում էր, որ
բանտը այնուամենայնիվ և շատ շուտ խորտակել է նրա կամ-
քը՝ երկար ժամանակ և արիաբար պայքարելուց հետո: Հիմա
արդեն էլլինը ամբողջ էությամբ տենչում էր գոտեպնդել նը-
րան, մուտք գործել նրա խցիկը, որքան էլ դժվար ու վտան-
գավոր լիներ: «Պարտավոր եմ», — ասաց նա ինքն իրեն:

Գալով ընտանիքի անդամների՝ ծնորչերի, եղբայրների,
քրոջ ու կնոջ այցելության, ապա Քառուէերվուդը հասկացրեց
նրանց մի այնպիսի օր, երբ իրեն տանում էին գատարան, որ
եթե նույնիսկ թույլտվություն ստանան, ապա այնուամենայ-
նիվ շպետք է ավելի հաճախ այցի գան, քան երեք ամիսը մեկ,
եթե, իհարկե, ինքը շնորի կամ Մթեցերի միջոցով իմաց
շտա: Ճիշտն ասած, նա առայժմ նրանցից ոչ ոքի տեսնելու
ցանկություն չուներ: Նա զզվել էր հասարակական կյանքի
ամբողջ կառուցվածքից, այժմ միայն մի բան էր ուզում, մո-
ռանալ այն իրարանցումը, որի մեջ ապրում էր առաջ և,
ինչպես պարզվեց, քիչ օգոստ կար: Մինչև հիմա Քառուիեր-
վուդն արդեն ծախսել էր գրեթե տասնհինգ հազար դոլլար դա-
տական ծախքերի, պաշտպանության, ընտանիքի ապրուստի
համար և այլն, բայց դա չէր անհանգստացնում նրան: Նա
հույս ուներ որոշ շափով վաստակ անել՝ Ուինգեյթին գործեր
անել տալով: Նրա հարազատները բոլորովին անփող չէին
մնացել, համեստ կյանք վարելու համար բավական միջոց
ունեին: Նա խորհուրդ տվեց տեղափոխվել քիչ ծախս պահան-
ջող տներ, և այդպես էլ արեցին. ծնողները, եղբայրներն ու
քույրը փոխադրվեցին մի եռահարկ տուն, որը համարյա
այնքան տարածություն ուներ, որքան Բաթնվուդ փողոցի
իրենց հին տունը, իսկ կինը՝ ավելի փոքր ու էժան մի երկ-
հարկանի տուն Հյուսիսային Քառանմեկերրորդ փողոցում,
բանտից քիչ հեռու: Այդ տեղափոխության վրա ծախսվեց

այն երեսունհինգ հազար դոլարի մի մասը, որ թաքցրել էր Քառուիկերվուղը՝ խարեհական միջոցով Սթիներից շեկ կորպեալուց հետո: Զիրարդ պողոտայի առանձնատան համեմատությամբ նոր կացարանները Հենրի Քառուիկերվուղին թվում էին սոսկալի անկում: Այդտեղ հետքն անգամ չէր մնացել այն պերճանքի, որով աշքի էր ընկնում Զիրարդ պողոտայի նրանց շափից ավելի շքեղ տունը. խանութից էր գնված կահույքը, բավական գեղեցիկ, բայց էժանագին դուռ-լուսամուտի վարագույրները և այլ զարդարանք: Պարտապահանցային վարչությունը, որին էր հիմա անցել Ֆրենկի անձնական ունեցվածքը և որին հանձնեց իր ամբողջ կարողությունը նաև ծեր Քառուիկերվուղը, թույլ շտվեց տանեն որևէ փոքրիշատե արժեքավոր բան: Ամեն ինչ պետք է աճուրդով ծախվեր հօգուտ պարտատերերի: Վաղուց արդեն կատարված վերգրումից Քառուիկերվուղները կարողացան թաքցնել մի քանի մանր բան: Հատուկենտ իրերից, որ ծեր Քառուիկերվուղը շատ կուգենար պահել, մեկն էլ իր գրասեղանն էր, որ շինել էր տվել ըստ Ֆրենկի էսքիզի. բայց գա գնահատվել էր հինգ հարյուր դոլար և կարող էր ետ ստացվել միայն այն ժամանակ, եթե այդ գումարը վճարվեր շերիֆին կամ գնվեր աճուրդի պահին. իսկ քանի որ Հենրի Քառուիկերվուղը այդպիսի գումար չուներ, ապա սեղանն ընկավ ուրիշի ձեռք: Երկու տանն էլ շատ էին այնպիսի իրերը, որ ամենքն էլ ուզում էին պահել, և Աննան բարի բուն իմաստով թոցրեց դրանցից մի քանիսը և շատ ժամանակ անց միայն խոստուկանեց ծնողներին:

Եկավ այն օրը, եթե շերիֆի հրամանով Զիրարդ պողոտայի երկու տներում էլ պետք է աճուրդ լիներ: Հիմա ամեն ոք կարող էր ման գալ սենյակներում ու զննել նկարները, արձանները և արվեստի առարկաները, որոնք ձեռքից ձեռք էին անցնում, հենց որ մեկը բարձր գին էր առաջարկում: Քառուիկերվուղը հայտնի էր որպես արվեստի սիրահար ու կուլեկցիոներ. այդ հոշակին նպաստում էր ոչ այնքան նրա հավաքած իրերի իսկական արժեքը, որքան այնպիսի գիրտակների կարծիքը, ինչպիսիք էին նորթոն Ֆլեշերը, Ուիլ-

թոն էլսուորթը, Գորդոն Սթրեյքը և այլ հայտնի ճարտարապետներ ու հնախույզներ, որոնց կարծիքն ու ճաշակը հաշվի էին առնում Ֆիլադելֆիայում, Հրաշալի իրերը, որ թանկ էր նա գուահատում, իտալական Վերածնության լավագույն շրջանի բրոնզե արձանիկները, հոգատարությամբ ընտրված վենետիկյան ապակե իրերը, Պառւերսի, Հոսմերի և Թորվալդսենի քանդակները, "այնպիսի բաներ, որոնց ժպտալով կնայեին երեսուն տարի հետո, բայց որոնք բարձր էին գնահատվում այդ օրերին, ամերիկյան ականավոր նկարիչների՝ Ջիլբերթից սկսած մինչև Ջոնսոն՝ կտավները, ինչպես նաև ժամանակակից ֆրանսիական ու անգլիական դպրոցների մի քանի նմուշները, բոլորն էլ շնչին գնով ծախվեցին աճուրդում: Այդ տարիներին Ֆիլադելֆիայում արվեստից այնքան էլ բան չէին հասկանում, ուստի և արժանի գին շստացած մի քանի նկար իրենց իսկական արժեքից բավական պակաս ծախվեցին: Սթրեյքը, Նորթոնն ու Էլսուորթը եկան և աճուրդից գնեցին այն ամենը, ինչ հնարավոր էր:

Սենատոր Սիմփսոնը, Մոլենհաուերն ու Սթրոբիկը նույնպես եկան տեսնելու, թէ հետաքրքրական որևէ բան չկա՞ արդյոք: Այնտեղ եղավ նաև քաղաքական պվելի մանր գործիչների մի ահագին բազմություն: Սակայն վաճառքի հանված իրերից ամենալավերը գնեց Սիմփսոնը, որ արվեստի լրջմիտ գնահատող էր: Նրա ձեռքն անցան վենետիկյան ապակեղեն պարունակող բրգաձև դարակը, մավրիտանական մի զույգ բարձրագիր, կապտասպիտակ սկահակները, նեֆրիտից շինված շինական տասնչորս զարդառարկաները, գրանց մեջ և մի քանի անոթ, ուր նկարիչները վրձիններն են սղողում, և կանաչ նրբերանգի ցանցկեն պատուհանակալը: Շատ էժան գնով Մոլենհաուերի ձեռքն անցան Հենրի Քառվիերվուդի շքամուտքի սրահի կահույքն ու զարդարանքը, իսկ էդուարդ Սթրոբիկին՝ ննջարանի երկու «ծտի աշք» իջայտից շինված կոմպլեկտները: Աղամ Դեկիսը նմանապես իր ներկայությամբ մեծարեց աճուրդը և ձեռք բերեց «ըռկ» գրասեղանը, որ այնքան թանկ էր ծեր Քառուիերվուդի սրտին: Նորթոն Ֆլեշերին բաժին ընկան հունական «կիլիքս» շորս

անոթները, մի փոքր և երկու խոշոր սափորները, որ նա համարում էր արվեստի հիանալի գործ և ինքն էլ ժամանակին ծախել էր Քառիկերվուդին: Ուրիշ բազմաթիվ սքանչելի իրեր, որոնց մեջ և Սկրի ճաշասրբ, գորելենյան մի գորգ, Բարիի բրոնզե անդրին, և Դետայի, Ֆորտունիի և Զորջ ինեսի նկարները գնեցին Ռուլթեր լին, Արթուր Ռիվերսը, Զողեֆ Ջիմերմենը, դատավոր Քիթչենը, Հարպեր Սթեղերը, Թերենու Ռելիխենը, Թրենոր Դրեյքը, միստր Սայմոն Զոնսն ու նրա կինը, միստր Դեմոնը, Ֆրուեն Քեսոնը, Նորթոն Ֆլեշերը և դատավոր Ռաֆալսկին:

Աճուրդն սկսվելուց չորս օր հետո երկու տներն էր արդեն դատարկ էին: Անգամ այն իրերը, որ ժամանակին գտնվում էին Հյուսիսային Տասներորդ փողոցի № 931 տանը և դրված էին ի պահ, երբ ավելի նպատակահարմար համարեցին հրաժարվել այդ տնից, հանվեցին պահեստից և աճուրդի դրվեցին մյուս երկու տների կայքի հետ: Ահա դա էլ Քառիկերվուդի ծնողներին մղեց մտածելու, որ մի գաղտնիք գոյություն ուներ իրենց որդու և նրա կնոջ միջև: Քառիկերվուդներից ոչ մեկը ներկա շեղավ ավերածության այդ մոայլ տեսարանին: Էյլինը, որ թերթերում կարդացել էր ամուլդի մասին, իմանալով, թե որքան թանկ էին Ֆրենկի սրտին գեղեցիկ իրերը, շխռսելով արդեն այն մասին, թե որքան հրաշալի վերհուշներ էին կապված դրանցից մի քանիսի հետ, հուսահատության մատնվեց: Բայց երկար ժամանակ նա անձնատուր շեղավ մոայլ մաքերին, որովհետեւ հաստատ համոզված էր, թե կգա այն օրը, երբ Ֆրենկը, ազատ արձակվելով, ավելի բարձր դիրքի կհասնի ֆենանսական աշխարհում: Որտեղից էր նրա մեջ այդպիսի հաստատ համոզմունք ստեղծվել, ինքն էլ շգիտեր, բայց և այնպես այդ այդպիս էր:

Գ Լ Ո Ւ Խ ԼV

Այդ օրերին Քառիկերվուդին տեղափոխեցին մի ուրիշ վերակացուի հսկողության ներքո, № 3 շենքի ստորին հար-

կում տեղավորված նոր խցիկը: Խցիկն ուներ տասը ոտնաշափ լայնություն և տասնվեց՝ երկարություն, որ մյուսներից չէր տարբերվում, սակայն կից կար, ինչպես Հիշատակել ենք, փոքր բակ: Դրանից երկու օր առաջ Քառուփերվուդի մոտ եկավ բանտապետ Դեսմասը, և նրանք մի կարձատու խոսակցություն ունեցան դռան վանդակապատ բացվածքի միջով:

— Երկուշաբթի ձեզ այստեղից կտեղափոխեն,— ասաց Դեսմասը սովորականի պես համաշափ ու առանց շտապելու: — Ձեզ կտրամադրեն բակով խուց, ասենք, դրանից մեծ օգուտ չեք ունենա. Խցիկից գուրս միայն կես ժամ կարելի է մնալ: Ես արդեն նախազգուշացրել եմ հսկիչն գործով ձեզ այցելողների վերաբերյալ: Նա չի առարկի դրա զեմ: Միայն թե գուք աշխատեցեք շատ ժամանակ շվատնել դրանց հետ, և ամեն ինչ կարգին կլինի: Ես որոշել եմ աթոռ հյուսել սովորեցնել ձեզ: Ըստ իս՝ ձեզ համար ամենահարմար աշխատսնքը դա է. Հեշտ է և ուշադրություն էլ չի պահանջում:

Բանտապետը և նրա հետ կապված մի քանի քաղաքական գործիչներ բանտի այդ արդյունագործությունից շաշավելի վաստակ ունեին: Այդ աշխատանքը հիրավի ժանր չէր և բավական էլ պարզ. օրվա համար տրված առաջադրանքը շափակոր էր, սակայն արտադրանքն անմիջապես սպառվում էր, իսկ վաստակը մտնում էր գործատուների գրանց: Ուստի և նրանք բնականաբար ջանում էին, որ կալանավորները անգործ շմնան, իսկ սրանց նմանապես օգտակար էր դա: Քառուփերվուդն ուրախ էր, որ հնարավորություն կունենար որևէ բանով զբաղվելու, որովհետև զիրք կարդալու առանձնակի ձգտում չուներ, իսկ Ովինգեյթի հետ գործարար հարաբերություններ վարելը և հին գործերի լուծարքը բավական չէին նրա միտքը զբաղեցնելու համար: Եվ այնուամենայնիվ նա չէր կարող շմտածել, որ եթե հիմա ինքն իրեն օտար է թվում, հապա որքա՞ն ավելի կաճի այդ զգացողությունը, երբ խցիկում նստած՝ պիտի զբաղվի աթոռ հյուսելով: Այնուամենայնիվ Քառուփերվուդը շնորհակալու-

թյուն հայտնեց Դեսմասին Հոգատարության, ինչպես նաև սավաններ և արդուզարդի պարագաներ ունենալու թուղթովության համար, որոնք հենց այդ ժամանակ ստացել էր:

— Զարժե այդ մասին խոսել,— մեղմ ու բարեհամբույր պատասխանեց Դեսմասը, որ արդեն սկսել էր խիստ հետաքրքրվել Քառուփերվուղով:— Ես շատ լավ եմ հասկանում, որ այստեղ էլ, ինչպես ամենուրեք, մարդ կա, մարդ էլ կա: Եթե մարդը վարժվել է այս իրերին և ուզում է մաքուր պահել իրեն, ես էլ մտագիր չեմ խանգարել նրան:

Նոր վերակացուն, որի հսկողությանը հանձնվեց Քառուփերվուղը, ոչ մի բանով նման չէր ելիս Զեպինին: Սրա անունը Ուղղթեր Բոնհեգ էր՝ մի հաղթանդամ երիտասարդ, երեսունյոթ տարեկան, սառնարյուն, բայց խորամանկ. նրա կյանքի գլխավոր նպատակը հավելումն էր այն եկամտի, որը ոռճիկն էր ապահովում: Բոնհեգի վարվեցողությունից կարելի էր ենթադրել, որ նա Դեսմասին տեղեկություն տվողի դեր էր կատարում, սակայն դա մասամբ միայն ճիշտ էր: Իմանալով Բոնհեգի խորամանկությունն ու ստրկամտությունը, ինչպես նաև իր և ուրիշի վաստակի արտակարգ հոտառությունը, Դեսմասը բնազդաբար հասկացավ, որ նրանից դժվար չէ զիջումներ ձեռք բերել այս կամ այն կալանավորի համար, թեկուզեւ մի ակնարկությամբ հասկացնել տալով նրան, որ դա ցանկալի է: Կարճ ասած, եթե Դեսմասը հվազագույն հետաքրքրություն էր ցուցաբերում որևէ կալանավորի նկատմամբ, նույնիսկ Հարկ չէր ունենում այդ մասին հայտնելու Բոնհեգին. բավական էր ի միջի այլոց նկատել, թե ահա այսինքն վարժվել է բոլորովին այլ կյանքի կամ թե անցյալում ունեցած ծանր ապրումների հետևանքով նրա վրա կարող է վատ անդրադառնալ խիստ վարվեցողությունը, և Բոնհեգը պատրաստ էր եռանդագին ծառայել այդ կալանավորին: Ցավն այն էր, որ խելացի և փոքրիշատե կուահող մարդու համար անախործ էր նրա ցուցաբերած ուշադրությունը, որովհետև այդ վերակացուն բացահայտորեն միտում էր «ոսկոր» ստանալու, իսկ աղքատ ու տգետ մարդկանց հետ վարվում էր կոպիտ ու մեծամիտ: Բոնհեգը եկա-

մըտի մշտական աղբյուր էր ստեղծել. կալանավորներին ծախում էր ապրանքներ, որ ծածուկ բերում էր բանտի ոեժիմի կանոնները խստորեն արգելում էին, համենայն դեպս թղթի վրա, այնպիսի բաներ մատակարարել կալանավորներին, ինչ չկար բանտի կրպակում, այսինքն՝ ծխախոտ, գրելու թուղթ, թանաք, վիսկի, սիգար և որևէ անուշեղեն: Մյուս կողմից էլ, իսկ դա շատ էր ձեռնտու Բոնհեղին, կալանավորներին տալիս էին ամենավաշտ ծխախոտը և բոլորովին անպետք թանաք, գրիչ ու թուղթ, որ չէր օգտագործում փոքրիշատե իրեն հարգող ոչ մի մարդ, եթե, իհարկե, հնարավորություն ուներ ավելի լավը ճարելու: Վիսկի ընդհանրապես թույլ չէր տրվում, իսկ քաղցրավենին անթույլատրելի էր համարվում, որովհետև մատնում էր ստացողի արտոնյալ վիճակը: Այնուամենայնիվ թե՛ մէկը, թե՛ մյուսը հազվագյուտ բաներ չէին բանտում: Եթե կալանավորը դրամ ուներ և ուզում էր որևէ բան ճարել Բոնհեղի միջոցով, կարող էր վստահ լինել, որ ցանկացածը կստանա: Դրամով կարելի էր գնել և «ավագի» կոչում, որը թույլ էր տալիս լինել բանտի գլխավոր բակում, ինչպես նաև մնալ խցիկին կից փոքր բակում՝ օրինական կես ժամից ավելի:

Որքան էլ տարօրինակ լինի, բայց և այնպես Քառուիերվուղին խիստ ձեռնտու եղավ այն հանգամանքը, որ Բոնհեղը մտերիմ էր այն վերակացուի հետ, ում հսկողության տակ էր Սթիները. նախկին գանձապետի հետ շափազանց ներողամտաբար էին վարվում, շնորհիվ նրա քաղաքական բարեկամների հովանավորության, և այդ բանն իմացավ Բոնհեղը, Սա թերթ կարդալու սեր շուներ և քաղաքական դեպքերից էլ լավ չէր հասկանում, բայց գիտեր, որ և՛ Քառուիերվուղը, և՛ Սթիները անցյալում մեծ կշիռ ունեցած մարդիկ են եղել, իսկ այդ երկուսից առավել կարևոր անձը Քառուիերվուղն է: Բացի դրանից, Բոնհեղը լսել էր, որ Քառուիերվուղը գեռ փող ունի. այդ մասին հայտնել էր նրան կալանավորներից մեկը, որը թերթ կարդալու իրավունք ուներ: Այսպիսով, Բոնհեղը, անկախ բանտապետ Դեմքասի ցուցումներից, որ տվել էր սա ի միջի այլոց և մի երկու

բառով միայն, ինըն էլ ուզում էր հաճոյանալ Քառուկերվուղին, անշուղտ, ոչ ձրի:

Հենց այն օրը, երբ Քառուկերվուղին տարան նոր խցիկ, Բոնհեգը արագ մոտեցավ տակավին բաց դռանը և հովանավորական շեշտով հարցրեց.

— Հը՞, ձեր բոլոր իրերը տեղափոխեցի՞ք:

Ճիշտն ասած, նա պարտավոր էր անմիջապես դուռը փակել, հենց որ կալանավորը մտներ խցիկը:

— Այո, սը՞ր,— պատասխանեց Քառուկերվուղը, որ կանխատեսաբար Զեպինից իմացել էր նոր վերակացուի անունը:— Կարծյոքս միստր Բոնհեգն եք:

— Հենց նա եմ,— հաստատեց վերակացուն, ոչ սակավ շոյված հարգավիրության այդ ցուցադրումից, բայց է՛լ ավելի շատ շահագրգոված այն բանով, որ գործնականապես խոստանում էր իրեն այդ նոր ծանոթությունը: Նա անհամբեր էր տնտղելու Քառուկերվուղին, իմանալու ինչ մարդ է դա:

— Կտեսնեք, որ այստեղ շատ ավելի լավ է, քան վերկը, — նկատեց նա:— Այնքան հեղձուցիլ չէ: Դրսի այս երկրորդ դուռը այնուամենայնիվ մի բան նշանակում է:

— Իհարկե, — ճարպկորեն մեջ գցեց Քառուկերվուղը:— Ակներևաբար սա էլ այն բակն է, որի մասին խոսեց միստր Դեսմասը:

Եթե Բոնհեգը ձի լիներ, ապա նրա ականջները կտնկվեին այդ մոգական անվան արտաքերվելուց: Զէ՞ որ, եթե Քառուկերվուղը այնպիսի բարեկամական հարաբերություններ ունի Դեսմասի հետ, որ վաղօրոք նկարագրել է, թե ինչպիսի խցիկ է ունենալու, ապա պետք է հատուկ ուշադրություն ցուց տալ նրան:

— Այո՛, սա ձեր բակն է: Բայց դրա օգուտը քիչ է, — ավելացրեց հսկիլը, — պետերը թույլ շեն տալիս օրական կես ժամից ավելի մնալ այտեղ: Իհարկե, ոչինչ էլ չէր պատահի, եթե ոմանց թույլ տային ավելի մնալ...

Սա կաշառք ստանալու, որոշ թողավորություն գնելու հնարավորության առաջին ակնարկն էր, և Քառուկերվուղը իսկույն հասկացավ:

— Շատ ցավալի է, — ասաց նա, — ուրեմն լավ վա՞րքն էլ չի փոխում կարգը:

Նա իր հարցի պատասխանն էր սպասում, բայց Բոնհեգը շարունակեց, իբր բան չէր լսել:

— Ես պետք է արհեստ սովորեցնեմ ձեզ: Պետն ասել է, որ դուք զբաղվելու եք աթոռ հյուսելով: Եթե ուզենաք, հենց հիմա էլ կարող ենք ձեռնամուխ լինել գործին:

Եվ առանց սպասելու Քառվիերվուդի համաձայնությանը՝ դուրս եկավ ու շուտ էլ վերադարձավ, բերելով երեք հատ շներկված, առանց նստոցի աթոռ, մի կապոց էլ եղեգնի շերտեր կամ թելեր, որ գցեց հատակին: Այնուհետև նա հանդիսավոր շեշտով գոշեց.

— Հետեւեցե՞ք իմ արածին, — և սկսեց ցույց տալ Քառվիերվուդին, թե ինչպես պետք է հյուսել շերտերը, մինչ այդ մտցնելով դրանք աթոռի եղրերին եղած ծակերից, ինչպես հավասար կտրել ու ամրացնել ընկուզենու փայտե փոքրիկ սեպերով:

Քիչ հետո նա բերեց բիզ, մուրճ, մի արկղ սեպ ու սրարերան աքցան: Մի քանի անգամ ցույց տալով, թե ինչպես կարելի է ստանալ երկրաշափական այս կամ այն նախշը տարբեր երկարության շերտերից՝ Բոնհեգը Քառվիերվուդին թույլ տվեց ինքնապլուխ փորձել և նրա ուսի վրայից սկսեց հետեւ աշխատանքին: Երիտասարդ ֆինանսիստը, որ արագ էր ըմբռնում ամեն ինչ, լիներ զա մտավոր կամ ֆիզիկական աշխատանք, գործի անցավ իր համար սովորական եռանդավ և հինգ րոպե հետո արդեն ապացուցեց Բոնհեգին, որ կարող է գուսի բերել իր առաջադրանքը որևէ ուրիշից ու պահանջ Արագությունն ու ճարտարությունը, անշուշտ, գալու էին հետո՝ գործի ժամանակ:

— Գործը լավ կընթանա ձեր ձեռքի տակ, — ասաց հըշկիշը: — Պահանջվում է օրական հյուսել տասը հատ: Առաջին օրերին, քանի գեռ ձեռքներդ վարժված շեն, իհարկե, հաշիվ չի արվում: Հետո արդեն կգամ տեսնելու, թե ինչպես եք գործ անում: Հավանորեն իմանո՞ւմ եք սրբիշը դռնից կախելու մասին, — հարցրեց նա:

— Այս, միստր Զեպինը բացատրել է, — պատասխանեց Քառուփերվուդը: — Կանոնների մեծ մասը հիմա երկի գիտեմ և կաշխատեմ շխախտել:

Հաջորդ օրերը բազմաթիվ փոփոխություններ մտցրին Քառուփերվուդի բանտարյին կենցաղի մեջ, սակայն բնավ էլ ոչ այնքան, որ կյանքը հանդուզժելի դառնար: Աթոռ հյուսելու արհեստը սովորեցնելով Քառուփերվուդին՝ Բոնհեղը պարզորդ ակնարկեց, որ պատրաստ է շատ ծառայություններ մատուցել նրան: Այդ պատրաստակամության պատճառներից մեկը հետևյալն էր. նրան հանգիստ չէր տալիս այն հանգամանքը, որ Սթիների մոտ ավելի շատ են այցելուներ գալիս, քան Քառուփերվուդի մոտ, որ նախկին գանձապետին ժամանակ առ ժամանակ զամբյուղով միրգ են ուղարկում, և նա էլ հրսկիչին էր տալիս դրանք, և նրա կնոջն ու երեխաներին թույլ են տալիս տեսնվել Սթիների հետ սահմանված ժամկետներից դուրս: Նախանձը կրծում էր Բոնհեղին: Եղա՞վ. իր հսկիչը ընկերակիցը հիմա գոռողանում է նրա առաջ, պատմելով, թե որքան ուրախ են ապրում № 4 վերնատանը: Բոնհեղը շատ կուգինար, որ Քառուփերվուդը գոտեպնդվեր և ցույց տար, որ ինքն էլ մի բան արժե:

Ուստի և նա սկսեց դրա վրա բերող հարցեր տալ.

— Ինչպես տեսնում եմ, ամեն օր ձեզ մոտ են գալիս ձեր փաստաբանն ու գործընկերը: Բայց թերեւս դուք որևէ ուրիշի՞ էլ կուզենայիք տեսնել: Ճիշտ է, մեր կանոնները կնոշը, քրոջը կամ որևէ ուրիշի թույլ չեն տալիս գալ ոչ սահմանված օրերին: — Այստեղ նա դադար առավ և բազմանշանակ նայեց Քառուփերվուդին, կարծես հասկացնելով, թե ուզում է մի խիստ գաղտնի բան հայտնել: — Բայց չէ՞ որ այստեղ ոչ բոլոր կանոններն են ճշգրտորեն կատարվում, — ավելացրեց նա:

Այնպիսի մարդ չէր Քառուփերվուդը, որ զիշեր ներկայացած առիթին: Նա հազիվ նկատելի ժպտաց, մասամբ ծիծաղելու ցանկությանը ելք տալու համար, մասամբ էլ Բոնհեղին ցույց տալու, որ երախտապարտ է նրան, իսկ բարձրածայն ասաց.

— Բանն այն է, մի՛ստր Թոնհեգ, որ դուք ուրիշ շատ-շատերից լավ եք հասկանում, թե ինչ վիճակի մեջ եմ ես, հետեւ վարար խոսելու եմ ձեզ հետ շիփ-շիտակ: Ի՞արկե, կան մարդիկ, որ կուզենային գալ ինձ մոտ, բայց ես վախենում էի կանչել նրանց, առանց իմանալու թույլատրվո՞ւմ է, թե՞ ոչ: Եթե դուք ընդառաջեք ինձ, ես խիստ երախտապարտ կլինեմ ձեզ: Մենք երկուսս էլ գործնական մարդկի ենք, և ես շատ լավ եմ հասկանում, որ երբ մեկին ծառայություն են մատուցում, նա պետք է հիշի, թե ո՞ւմ է պարտական այդ ծառայության համար: Եթե ես ձեր օժանդակությամբ սկսեմ քիչ ավելի հարմարություններ ունենալ, ապա ձեզ կապացուցեմ, որ կարող եմ գնահատել դա: Ինձ մոտ փող չկա, բայց միշտ կարող եմ ճարել և, անշուշտ, հոգ կտանեմ, որ դուք ստանաք պատշաճ վարձատրություն:

Թոնհեգի կարձ ու հաստլիկ ականջները շառագունեցին: Հաճելի է խելացի խոսք լսել:

— Ձեզ համար կարող եմ այդ բանը գլուխ բերել, — ստորահաճովթյամբ հավաստիացրեց նա Քառվիերվուտին: — Կարող եք հույս դնել ինձ վրա: Երբ և ում էլ ցանկանաք տեսնել, բավական է միայն, որ հայտնեք ինձ: Հասկանալի է, որ ես զգուշություն պետք է պահպանեմ, նմանապես և դուք: Բայց այդ ամենը գլուխ կգա: Եվ եթե ուզենաք առավոտյան ավելի մնալ բակում կամ մի այլ ժամանակ գուրս գալ այնտեղ, ասացեք: Մեծ դժբախտություն չէ: Դուռը բաց կթողնեմ: Իսկ եթե մոտիկ մի տեղ լինի միստր Դեսմասը կամ մեծավորներից մի ուրիշը, ես բանալիով կզնացնեմ ձեր դուռը, դուք էլ ներս կմտնեք ու կփակեք: Երբ կարիք ունենաք որևէ բան գնելու, ասենք, մուրաբա, ձու, կարագ կամ այդպիսի մի բան, ես կճարեմ: Հավանորեն դուք կուզենաք բազմազան դարձնել մի քիչ ձեր ուտելիքը:

— Զափազանց երախտապարտ եմ ձեզ, մի՛ստր Թոնհեգ, — հանգիստ և հարգալիր պատասխանեց Քառվիերվուտը, դժբախտությամբ զսպելով ժպիտը և մնալով լրջադեմ:

— Ինչ վերաբերում է այն բանին, որի մասին արդեն խոսեցինք, — կրկնեց հսկիչը (նա նկատի ուներ սահմանված

օրերից դուրս ահսակցություն ունենալուն), — աղա կարող եմ գլուխ բերել ուզած ժամանակ: Բոլոր պահակներին ձանաշում եմ: Երբ ուզենաք որևէ մեկի տեսնել, մի երկտող գրեցեք այդ մարդուն ու տվեք ինձ: Երբ նա գա, պետք է հարցնի ինձ, ես էլ կրերեմ ձեզ մոտ: Հյուրի հետ կխոսեք ձեր խցիկում: Հասկացա՞ք: Բայց Հենց որ մի թեթև թխկացնեմ, նա պետք է մեկնի: Այս մեկը չմոռանաք: Ուրիմն այսպիս. իմաց տվեք ինձ և ուրիշ ոչինչ:

Քառուփերվուդը սրտանց ջնորհակալ էր նրան և արտահայտեց դա ամենասիրալիր խոսքերով: Առաջին մարդը, որին հիշեց նա, էլլինն էր. հիմա նա կարող է այցելել իրեն, մնում է միայն հայտնել նրան: Անհրաժեշտ է, իհարկե, որ նա խիտքող գցի. այն ժամանակ ո՛չ մի բան չի սպառնա նրան: Ֆրենկը նստեց ու գրեց, և երբ Ուինդեյթը եկավ, խնդրից, որ նամակն ուղարկի:

Երկու օր հետո, ցերեկվա ժամը երեքին, Քառուփերվուդի ձիշտ նշանակած պահին, էլլինը եկավ բանա: Հագել էր նա մահուդե գորշ կոստյում՝ սպիտակ թավշե զարդերով և արծաթի պես փայլուն պողպատե բազմակող կոճակներով. կվաքիսի մորթե ճեփ-ճերմակ վզնոցը, գլխարկը և թենոցը նրա համար թե՛ զարդարանք էին, թե՛ ցրտից պաշտպանվելու միջոց: Աշքի խփող այդ զարդարանքի վրայից նա հագել էր մի թուխ, երկար թիկնոց, որը մտադիր էր հասնելուն պես հանել: Մեծագույն ջանախնդրությանը էր էլլինը հագնվել այդ սովորության համար և քիչ ժամանակ չէր վատնել սանլվածքը, կոշիկները, ձեռնոցներն ու ոսկե զարգերն ընտրելու վրա: Դեմքը, ինչպես խորհուրդ էր տվել Քառուփերվուդը, ծածկված էր կանաչ, խիտքողով: Նա եկավ այնպիսի ժամանակ, երբ ֆրենկը ննթագրում էր, թե մենակ կլինի: Ուինդեյթը սովորաբար դալիս էր չորսին, գործարար օրը վերջանալուց հետո, իշկ Սթեղերը, եթե գար էլ, ապա առավոտները: Էլլինին խիստ հուզում էր լինելիքի անսովորությունը: Իշնելով ձիաքարշից (տվյալ գեաքում մի այլ տեղ գնալու այդ միջոցը ամենահարմարը թվաց նրան), կողմնային մի փողոցով ուղղվեց դեպի բանա: Ցուրտ եղանակը և գորշ պատերը նույնպիսի գորշ

երկնակամարի տակ հուսահատովթյամբ համակեցին նրա հոգին, բայց նա ամեն գնով ուզում էր հանգիստ մնալ, որպեսզի իր տեսքով գոտեպնդեր սիրեցյալին։ Գիտեր, թե որքան եռանդով է Ֆրենկն ընկալում համապատասխանողուն շրջանակավորված իր գեղեցկությունը։

Սպասելով նրա գալուն՝ Քառուփերվուղը ջանաց քիչ թե շատ տանելի տեսք տալ իր խցիկին։ Մի անգամ ևս ավլեց հատակը և կրկին կանոնավորեց մահճակալը, ապա ածիլվեց, սանրեց մազերը և ընդհանրապես կարգի բերեց իրեն, որքան հնարավոր էր իր աշխատանքը՝ անավարտ նստոց ունեցող աթոռները, կոխեց մահճակալի տակ։ Թասն ու ամանը լվացված էին ու դրված դարակի վրա, իսկ ծանր կոշիկները մաքրեց խոզանակով, որ ձեռք էր բերել դրա համար։ Դեռ երբեք էլլինը այդպես շէր տեսել նրան։ Այդ ամբողջ դոյավիճակը վիրավորում էր Ֆրենկի գեղազգացությունը։ Էլլինը մշտապես հիանում էր, թե որքա՞ն ճաշակով է Ֆրենկը հագնդում, կարողանում է կոստյումը կրել, իսկ հիմա ինքը կկանգնի սիրոհու առաջ այնպիսի հագուստով, որը ոչ մի կազմվածքով չի գեղեցկանա։ Նըա հոգեկան հավասարակշռության սատարը սեփական արժանապատվության զիտակցումն էր ու իայն։ Վերջիվերջո ինքը նույն Ֆրենկ Քառուփերվուդն է, իսկ դա որևէ բան նշանակում է, ինչպես էլ հագնված լինի։ Էլլին էլ նույն կարծիքը կունենա։ Զէ՞ որ դեռ կարող է գալ մի օր, երբ ինքը կրկին ազատ ու հարուստ կլինի, և էլլինը հաջատում է դրան։ Բացի դրանից, ինչ տեսք էլ որ ունենար և ինչ հանգամանքներում էլ գտնվեր, ելլինը միշտ նույն կերպ պիտի վարվեր իր հետ կամ ավելի սաստիկ սիրեր։ Եթե մի բանից վախենում էր, ապա դա էլլինի կարեկցանքի խիստ բուռն արտահայտումն էր։ Ի՞նչ երջանկություն, որ Բոնհեզն ինքը առաջարկեց էլլինին խցիկ մտցնել։ Նրա հետ վանդակացանցի միջով խոսելն անտանելի կլիներ։

Բանտ հասնելուն պես էլլինը հարցրեց միսար Բոնհեզին։ Նրան տարան կենտրոնական շենքը և անմիջապես մարդուղարկեցին կանչելու։

— Ես կուզենայի, եթե կարելի է, տեսակցել միստր

Քառուփերվուղի հետ,— կմկմաց էյլինը, երբ կանգնեց թոնհեազի առաջ:

— Հրամեցեք, ես ձեզ կառաջնորդեմ;— պատրաստակամ վրա բերեց թոնհեղը:

Կենտրոնական շենքը մտնելուն պես հսկիչն ապշեց այցեւ լուհու գեռատիությունից, թեև չէր կարող լալ տեսնել նրա դեմքը: Դա միանգամայն համապատասխանում էր այն բառ նին, ինչ սպասում էր նա Քառուփերվուղից: Մի մարդ, որ կարողացել էր կես միլիոն դոլլար գողանալ և ամբողջ քաղաքը մատի վրա խաղացնել, իհարկե, ամենազարմանալի արկածների կդիմի, իսկ էյլինը իսկական արկածախնդրուհու տեսք ուներ: Թոնհեղը տարավ նրան այն սենյակը, որտեղ իր սեղանն էր և որտեղ սպասում էին տեսակցության եկած այցելուները, իսկ ինքը շտապեց Քառուփերվուղի մոտ, որ զբաղված էր աշխատանքով: Բանալին թեթևակի շնկացնելով դռանը, թոնհեղը հայտնեց.

— Ձեզ մի շահել լեզի է հարցնում: Բերե՛մ այստեղ:

— Շնորհակալ եմ, իհա՛րկե, բերե՛ք, — պատասխանեց Քառուփերվուղը, և թոնհեղը արագ հեռացավ, մոռանալով ոչ թե դիտմամբ, այլ նրբանկատության պակասից, դուռը բաց թողնել, այնպես որ ստիպված եղավ բաց անել էյլինի ներկայությամբ:

Տեսնելով երկար միջանցքը, գաստամեստ դռները, այդ ամբողջ շենքը, որ մաթեմատիկորեն ճիշտ պատվարված էր վանդակացանցերով, և գորշ քարե հատակը՝ էյլինի սիրար կսկծալի սեղմվեց: Բա՛նտ, երկաթե վանդակնե՞ր: Եվ դրանցից մեկի մեջ է նա: Սովորաբար արիասիրտ այդ աղջիկը ամբողջ մարմնով սառեց: Նրա ֆրենկը այսպիսի սարսափելի տեղ է: Ինչպիսի՞ ստորոտյուն է արգելափակել նրան այստեղ: Դատավորները, երդվալները, իրավաբանները, բանտապահները պատկերացան նրան որպես աշքները վայրագործն իր և իր սիրո վրա չուած մարդակերների մի խաժամուժ: Բանալու շխկոցը փականքի մեջ և ծանր բացվող դուռը ավելի սաստկացրին էյլինի հոգեկան թախիծը: Հետո նա տեսավ Քառուփերվուղին:

Հիշելով խոստացված վարձատրությունը՝ Թոնհեզը ներս թողեց էլլինին և խոնարհ հեռացավ։ Էլլինը նայեց Ֆրենկին քողի տակից, վախենալով թեկուզ մի բառ արտաքրել, որով հետև գեռ վստահ չէր, որ վերակացուն գնացել է։ Իսկ Քառուի բարձրվուղը, որ կամքի ահագին լարումով միայն իր արդությունը չէր կորցնում, անմիջապես նշան շարեց, որ իրենք մենակ են։

— Ամեն ինչ կարգին է, — ասաց նա վերջապես։ — Ոչ ոք չկա։

Էլլինը բարձրացրեց քողը և հանելով թիկնոցը, ծածուկ մի հայացքով ընդգրկեց նեղիկ, ասես պատերից սեղմված խուցը, Ֆրենկի սարսափելի ոտնամանը, տձև հագուստը, նրա ետևի երկաթե դուռը, որը տանում էր խցին կից բակը։ Ֆրենկը այդ խցում, ուր, ի լրումն ամենայնի, մահճակալի տակից ցցված էին աթոռների անավարտ հյուսվածքները, անբնական, քստմնելի տպավորություն գործեց նրա վրա։ Իր սիրեցաւը։ Եվ այսպիսի՝ պայմաններում։ Ելլինը ցնցվում էր ասես տենդից և զուր փորձում էր խոսել։ Միայն նրան գրկելու ուժ ունեցավ և շոյելով գլուխը՝ կմկմաց։

— Իմ սիրելի՝ մանշ, սրտի՝ ս հատոր, այս ի՞նչ են արել քեզ, խե՞ղճ տղաս։

Էլլինը նրա գլուխը սեղմեց կրծքին։ Քառուի բարձրվուղը բոլոր շանքերը գործադրում էր իրեն տիրապետելու համար, բայց հանկարծ ցնցվեց, և դեմքը ծոմովեց։ Անսահման էր Էլլինի սերը, և այնքան անկեղծ, որ դա հանդարտեցնում, միաժամանակ և, ինչպես համոզվեց Ֆրենկը, թուլացնում էր իրեն ու վերածում անօգնական երեխայի։ Այսպես թե այնպես, սակայն կույր, խորհրդավոր ուժերի ազդեցությամբ, որոնք երբեմն գերիշխում են բանականությանը, Ֆրենկը կյանքում առաջին անգամ իրեն զսպել շկարողացավ։ Էլլինի խոր հուզմունքը, նրա ձայնի սիրատոշոր մրմունջը, ձեռքերի թափշացին քնքշությունը, նրա գեղեցկությունը, որ միշտ տիրականորեն հրապուրում էր իրեն և գուցե ազելի շլացուցիւ էր այստեղ՝ այս պատերի մեջ, իր սեփական ֆիզիկական նվաստացումը, այս ամենը խլեցին նրանից կամքի մնացորդը։ Նա չէր

Հասկանում, թե ինչ պատահեց իրեն, զանում էր հաղթահարել իր թուլությունը, բայց չէր կարողանում: Երբ իմադաքչելով Ֆրենկին՝ էլլինը նրա գլուխը սեղմեց իր կրծքին, նա զգաց սրտի սեղմում, շունչը կտրվեց և հիվանդագին ջղաձգությունը կծկեց կոկորդը: Լալու տարօրինակ ու անսովոր ցանկությունը համակեց նրան. նա հուսահատորեն դիմադրում էր դրան, բայց ամբողջ էությունն էր ցնցված: Եվ կարծես թե բոլորովին շլատելու համար Քառուփերվուդի երեակայության մեջ հառնեց յուրօրինակ, խայտաբղետ պատկերը այն ընդդարձակ աշխարհի, որից վերցերս էր հեռացել, որ այնքան սքանչելի էր ու դյութիչ և ուր հույս ուներ ժամանակին վերադառնալ: Այդ ակնթարթին, ավելի սուր, քան երբեք, նա զգաց իր կոշտուպոշտ ոտնամանների, բամբակե հասարակ կտորից վերնաշապկի, շերտավոր բաճկոնակի և ընդմիշտ իր վը-բայից չշնչվող «կալանավոր» մականունի ամբողջ նվաստացումը: Նա ընդուստ ետ քաշվեց էլլինից, մեջքը շրջեց նրան, սեղմեց բոռնցքները. նրա բոլոր մկանները լարվեցին, բայց ուշ էր, նա լաց էր լինում ու չէր կարող դադարել:

— Անե՛ծք,— ցասումնալից ու աղերսագին բացականչեց Քառուփերվուդը՝ համակված ամոթով ու զայրույթով: — Ինչո՞ւ եմ լաց լինում, ի՞նչ է կատարվում ինձ հետ, գրո՛ղը տանի:

Էլլինը տեսավ նրա արցունքները: Մի ակնթարթում նա նետվեց գեալի ֆրենկը, մի ձեռքով գրկեց նրա գլուխը, մյուսով էլ մաշված բաճկոնակը և այնքան ամուր սեղմեց կրծքին, որ նա անմիջապես շկարողացավ ազատվել:

— Ո՞չ, սիրելի՛ս, սիրելի՛ս, սիրելի՛ս,— տեսնդագին, խղճահարությունից ուժասպառ՝ շշնչաց էլլինը: — Ես քեզ սիրո՞ւմ եմ, պաշտո՞ւմ եմ: Ես կհամաձայնեի, որ կտոր-կտո՞ր անեն ինձ, եթե դա օգուտ տար քեզ: Երբ մտածո՞ւմ եմ, որ նրանք քեզ հասցրին արցունք թափելու Ո՞վ իմ հոգեհատոր, իմ հարազա՞տ, սիրելի՛ մանշուկ:

Եվ ավելի ամուր էր սեղմում կրծքին հեկեկանքից ցնցվող նրա մարմինը և ազատ ձեռքով շոյում նրա գլուխը: Համբու-

րում էր նրա աշքերը, մազերը, այտերը: Ֆրենկը փորձեց ազատվել ու նորից բացականչեց.

— Ի՞նչ է կատարվում ինձ հետ, գորդը տանի:

Բայց էլլինը դարձյալ կրծքին սեղմեց:

— Լա՛ց, սիրելի՞ս, լա՛ց. մի՛ ամաշիր քո արցունքներից: Դլուխդ դիր իմ ուսին ու լաց: Լա՛ց ինձ հետ, փոքրի՛կս, զա՞նձս:

Մի երկու րոպե անց նա հանգստացավ և հիշեցրեց էլլինին, որ հիմա կարող է ներս գալ վերակացուն: Քիշ-քիշ ինքնատիրապետումը վերադարձավ, որը կորցնելուց այնքան ամաշում էր:

— Հրաշալի՛ աղջիկ ես դու, — շշնչաց նա քաղցր ու հանցավոր ժպիտով: — Իսկական մարդ. այդպիսին էլ պետք է ինձ. դու հսկայական սատար ես ինձ համար: Բայց իմ պատճառով մի՛ մղկտա: Ես շատ լավ եմ զգում ինձ, և այստեղ այնքան էլ վատ չէ, ինչպես թվում է քեզ: Իսկ հիմա պատմիր քո մասին:

Բայց այնքան էլ հեշտ չէր հանգստացնել էլլինին: Վերջին ժամանակներս նրա գլխին եկած փորձանքները և այն պայմանները, ուր գտնվում էր Ֆրենկը, վրդովեցնում էին արդարության ու մարդկային արժանապատվության նրա զգացումը: Բավական է երևակայել, թե ինչի են հասցրել իր հիանալի, սքանչելի Ֆրենկին, որը լա՛ց էր զինում: Նա քընքշությամբ շոյում էր սիրեցյալի գլուխը, մինչդեռ նրա հոգին ալեկոծվում էր կատաղի ու անողոք ցասումից ընդդեմ կյանքի, ընդդեմ ճակատագրի պատահական հեղադարձությունների ու այն խոշընդուների, որ զնում է սա մարդու ճամփին: Հայրը. նզովվի՛ նա: Հարազատները. ի՞նչ գործ ունի նրանց հետ: Ֆրենկը, Ֆրենկն է նրա համար ամե՞ն ինչ: Որքա՞ն սակավարժեք է մնացած աշխարհը, երբ խոսքը վերաբերում է Ֆրենկին: Ինքը երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք չի լքի նրան, ինչ էլ պատահելու լինի: Եվ հիմա, անխոս փարզած նրան, էլլինը հոգում անողոք պայքար էր մղում կյանքի դեմ, օրենքի, բախտի ու հանգամանքների դեմ: Օրենքը ցընդարձանություն է: Մարդիկ գագա՞ն են, դև՝, թշնամի՛, կա-

տաղած շուն: Հրճվանքով, հիացմունքով նա կզոհաբերեր իրեն: Պատրաստ էր փախչել ուր աշքը կտրեր ի սեր Ֆրենկի կամ Ֆրենկի հետ: Նրա համար ընդունակ է ամեն ինչ անելու: Ընտանիքը ոչինչ է նրա համար, կյանքը նույնպես ոչինչ է, ոչի՞նչ, ոչի՞նչ: Ինքը կանի այն ամենը, ինչ ուզենա Ֆրենկը, ինչ նրա խելքին փշի: Կարեոր է միայն մի բան՝ փրկել նրան և որքան կարելի է շատ բախտավորություն պարգևել: միայն նրան, էյլինի համար այլս ոչ ոք գոյություն չունի:

Գ Լ Ո Ւ Խ VI

Ժամանակն անցնում էր: Բոնհեղի հետ պայմանավորվելու հետևանքով կինը, մայրն ու քույրը սկսեցին մեկ-մեկ այցելել Քառուփերվուդին: Լիլիանն ու երեխաները բնակություն հաստատեցին մի փոքր տան մեջ, որի համար վճարում էր Ֆրենկը, իսկ մյուս ծախքերի համար Ուինգեթը, ի չաշիվ Քառուփերվուդի եկամուտների, վճարում էր ամսական հարյուր քսանհինգ դոլլար: Քառուփերվուդը հասկանում էր, որ պարտ էր ավելի վճարել, սակայն իր հնարավորությունները այդ ժամանակ բնավ էլ փայլուն չէին: Նրա ֆինանսական գործերի վերջնական կործանումը տեղի ունեցավ մարտին, երբ պաշտոնապես սնանկ հայտարարեցին նրան և ամբողջ ունեցվածքը գրավեցին հօգուտ պարտատերերի: Միայն քաղաքային գանձարանի պարտքը՝ հինգ հարյուր հազար դոլլարը, վճարելու համար ավելի փող էր պետք, քան կարելի էր իրացնել, եթե շահմանեին երեսուն ցենտ մեկ դոլլարի փոխարեն: Սակայն դրանից հետո էլ քաղաքին բան շհասավ, որովհետեւ տարբեր մեքենայությունների միշտոցվ խլեցին նրանից այդ գումարն ստանալու իրավունքը: Քաղաքն իբր թե ուշացել էր պահանջ ներկայացնել: Դա անշուշտ նպաստեց մյուս պարտատերերին, որոնք իրար մեջ բաժանեցին այն գումարը, որ մերժել էին քաղաքային գանձարանին:

Բարեխախտաբար Քառուփերվուդը շատ շանցած փորձով

Համոզվեց, որ Ուինգեյթի հետ կատարած գործառնությունները բավական լավ վաստակ են խոստանում: Նրա գործընկերը անտարակույս շափազանց ազնիվ մտադրություններ ուներ Ֆրենկի հանդեպ: Նա իր մոտ ծառայության վերցրեց, ճիշտ է, շատ համեստ վարձատրությամբ, Քառուիերվուղի երկու եղբայրներին. մեկը պետք է հաշվիտվությունը վարեր ու կառավարեր գրասենյակը, մյուսը Ուինգեյթի հետ գործեր բորսայում, քանի որ այնտեղ պահպանվել էին ջոյի ու էղուարդի տեղերը: Բացի դրանից, թեև մեծ դժվարությամբ, Ուինգեյթը գործավարի պաշտոն ճարեց ծեր Քառուիերվուղի համար մի բանկում:

Ազգային երրորդ բանկից հեռանալուց հետո ծերունին բարոյապես խիստ ընկճված վիճակում էր՝ շիմանալով, թե հետագայում ինչպես լցնի իր կյանքը: Որդու խայտառակվելու, նրա դատավարության սոսկալի ժամերի ու հսկողության տակ առնելու, երդյալների կողմից Ֆրենկին դատապարտելու, մանավանդ դատավճիռն արձակելու և բանտ ուղարկելու օրվանից ծեր Քառուիերվուղը ասես քնի մեզ էր մանգալիս: Ա՛խ, այդ դատավարությունը, Ֆրենկի դեմ հարուցված մեղադրա՞նքը: Իր հարազատ որդին կալանավոր, շերտավոր հագուստով, երբ վաղուց չէ, ինչ Ֆրենկն էլ, ինքն էլ հպարտանում էին, որ պատկանում են քաղաքի առավելապես բարգավաճող ու հարգված մարդկանց դասին: Ինչպես շատերը վշտի պահերին, ծերունին էլ սկսեց եռանդագին կարդալ Աստվածաշունչ, ջանալով նրա էշերում գտնել այն մխիթարությունը, որը, ինչպես վարժվել էր հավատալ պատանեկան տարիներից, թեև վերջին ժամանակներս հազվագեց էր հիշում, պարունակում էր այդ գիրքը տառապյալ հոգիների համար: Սաղմոսը, Հորի գիրքը, Ժողովողի գիրքը... Սակայն վիշտը մեծ էր, և Աստվածաշունչը չէր բուժում:

Օրբստօրե նա մեկուսանում էր իր նոր սենյակում, որը նրա ննջարանն էր ու աշխատասենյանկը, հավատացնելով կնոջը, թե տակավին մնացել են զանազան անհետաձգնիլի, մեծ կենտրոնացում պահանջող գործեր: Դուռը բանալիով

փակելուց հետո նա սկսում էր մտմտալ իր բոլոր ձախորդությունների ու կորուստների վրա, որոնցից ամենադառնը՝ բարի համբավը կորցնելն էր: Իսկ երբ մի քանի ամիս հետո Ովհնգելթը հաշվապահի պաշտոն գտավ նրա համար արվարձաններից մեկի բանկում, նա սկսեց վաղ առավոտյան դուրս գալ տնից ու վերադառնալ ուշ երեկոյան, միշտ էլ տիսորտրտում մտմտալով անցյալ, գուցե և ապագա դժբախտությունների մասին:

Ողորմելի պատկեր էր ներկայացնում այդ ծերունին՝ ֆինանսական աշխարհի ո՛չ առաջին, ո՛չ էլ վերջին զոհը: Նա մի փոքրիկ տուփով ուտելիք էր տանում իր հետ, քանի որ կեսօրի կարճատև ընդմիջման ժամանակ տուն վերադառնալը դժվար էր, իսկ ճաշարանում ուտելը չէր կարող նա թույլ տալ իրեն ներկա իր եկամուտով: Նրա միակ ցանկությունն այժմ պարկեցտ ու աննկատելի ապրելն էր, մինչև գար մահու ժամը, որին սպասելը, ինչպես հույս ուներ, արդեն քիչ էր մնացել: Զէր կարելի առանց խղճահարության նայել նրա ոսկրոտ մարմնին, բարակ սրունքներին, ալեհեր մազերին ու ձյունասպիտակ այտմորուքներին: Սաստիկ նիշարել էր, շարժումները դարձել էին անշնորհք: Երբ պետք էր ունենում լուծել որևէ դժվարին հարց, կանգնում էր փակուղու առաջ ու չէր կարողանում կենտրոնանալ: Զեռքը բերանին տանելու և աշքերը զարմացած շռելու վաղեմի սովորությը, որ առաջացել էր նրա լավ օրերին, հիմա ամբողջը վին տիրացել էր ծեր Քառվիերվուդին: Ինքն էլ շգիտակցելով, աստիճանաբար վհատվել էր ու վերածվել մի տեսակ ավտոմատի: Կյանքը վաղուց է իր ափերը նետում կործանման այդպիսի ահավոր ու ողորմելի բեկորներ:

Այդ շրջանում Ֆրենկ Քառվիերվուդը քիչ չէր մտածում իր կնոջ հանդեպ անտարբեր լինելու վրա, որ նա առանձնապես որոշակի գիտակցեց վերջերս, ինչպես նաև այդ անտարբերությունը նրան հայտնելու և դրանով իսկ ամուսնությանը վերջ դնելու վրա: Բայց նա ոչինչ չկարողացավ հնարել, բացի չոր ու ճշմարտացի բացատրությունից: Ֆրենկը նկատում էր, որ կինը հիմա ամեն կերպ շանում էր շեշտել

իր անձնվերությունը և այնպես էր պահում իրեն, որ ասես
ոչ մի կասկած չէր խռովում նրան։ Մինչդեռ դատավարու-
թյան օրվանից սկսած տարբեր աղբյուրներից նրա ական-
ջին ստեղ-ստեղ հասնում էին լուրեր, որ շարունակվում է
նրա մտերիմ կապը Էյլինի հետ, և միայն ամուսնու գլխին
պայթած աղետները և դարձյալ նրան բարգավաճող ֆինան-
սիստ տեսնելու հույսը կասեցնում էին նրան Ֆրենկի հետ բա-
ցատրություն ունենալուց։ Նա մեկուսացված է բանտի խցի-
կում, ասում էր իրեն Լիլիանը և իսկապես անկեղծորեն խըզ-
ձալով հանդերձ՝ արդեն չէր տածում նրա հանդեպ առաջվա-
սերը։ Ճշմարտապես արժանի էր նա իր անարժան վարքի
համար, դրա համար էլ պատժեց նրան բարձրյալի ձեռքը։

Դժվար չէ պատկերացնել, թե ինչպես արձագանքեց այդ
վերաբերմունքին Քառուփերվուղը, երբ նկատեց դա։ Թեև Լի-
լիանը բերում էր նրան ամեն տեսակ համեղ ուտելիքներ ու
մղկացում էր նրա գրության վրա, նա բազմաթիվ մանր նշան-
ներից կուահում էր, որ կինը ոչ միայն վշտակցում, այլև կըշ-
տամբում է իրեն, իսկ Քառուփերվուղը կյանքում ո՛չ քարոզ էր
հանդուրժում, ո՛չ էլ թթված դեմք։ Հուսադրող կենսուրախու-
թյամբ և մարտական տաքարյունությամբ լի Էյլինի համեմա-
տությամբ միսիս Քառուփերվուղի հոգնած անորոշությունը
առնվազն ձանձրալի էր։ Էյլինը Ֆրենկի բախտի հանդեպ ցու-
ցաբերած առաջին բռնկումից հետո, որը, ի դեպ, արցունք
շքամեց նրանից, ըստ երևույթին կրկին էր հավատում, որ նա
կազատվի ու դարձյալ կսկսի բարգավաճել։ Էյլինն անընդհատ
փսոսում էր ապագայի, Քառուփերվուղի գալիք հաջողություն-
ների մասին, որովհետև սրբորեն հավատում էր դրանց։ Նա
բնագդով հասկանում էր, որ բանտի պատերը շեն կարող նը-
րան կալանավոր դարձնել։ Առաջին տեսակցության օրը, մեկ-
նելուց առաջ, տասը գոլլար պարզեց Բոնհեգին, իր քաղցր
ձայնով շնորհակալություն հայտնեց, առանց դեմքը բացելու,
ուշադրության համար և խնդրեց հետագայում ևս սիրալիք լի-
նել Քառուփերվուղի՝ այդ «մեծ մարդու» նկատմամբ, ինչպես
բնորոշեց նրան։ շահամոլ ու փառամոլ Բոնհեգը վերջնակա-
նապես տեղի տվեց։ Դրանից հետո նա պատրաստ էր ամեն

ինչ անել թխաթիկնոց տիկնոջ համար, Եթե նրա կտմքով լիներ, ապա այցի եկող տիկինը կարող էր մի ամբողջ շաբաթ դուրս չգալ Քառուփերվուդի խցիկից, սակայն ցավոք սրտի դոյլթյուն ունեին նաև բանտի կարգուկանոնները:

Բանտարկության մոտավորապես շորորդ ամսին Քառուփերվուդը որոշեց վերջապես խոսել կնոջ հետ, ասել, որ անկարելի է շարունակել համատեղ կյանքը, որ ինքը ցանկանում է ապահարզան ստանալ: Այդ միջոցին նա արդեն կարողացել է վարժվել կալանավորի կեցությանը: Խցիկի լոռությունը և սև աշխատանքը, որ ստիպված էր կատարել նա, սկզբում խիստ ճնշող էր ու նախնական, իր անիմաստ միօրինակությամբ խենթացնելու ընդունակ, այժմ թվում էր առօրեական՝ բութ, բայց ոչ տանջալի: Բացի դրանից, նա ձեռք բերեց միայնակ բանտարկյալի հմտություն. օրինակ՝ սովորեց իր լամպի վրա տաքացնել կնոջ և էյլինի ուղարկած ճաշերի կամ ուսուլիքների մնացորդը. քիչ թե շատ ազատվեց իր խցիկի գարշահոտությունից, խնդրելով Բոնհերգին փոքր ծրարներով կիր բերի իրեն, և օգտագործում էր բնավ էլ ոչ խնայողաբար: Բացի դրանից, թակարդների միջոցով հաղթեց ամենալկտի առնետներին: Բոնհեռ գի թույլտվությամբ երեկոյան պահերին, երբ արդեն խցիկը գիշերվա համար փակվում էր և «զմուսվում» արտաքին փայտե դռնով, նա իր աթոռը տանում էր գուրս՝ բակը, և երբ եղանակը շատ շատ ցուրտ չէր լինում, երկար ժամանակ նստում էր այնտեղ ու դիտում պարզ գիշերներին աստղազարդ երկինքը: Աստղաբաշխությունը, որպես գիտություն, առաջ երբեք չէր հետաքրքրել Ֆրենկին, իսկ հիմա համաստեղությունները, Օրիոնի շուզը եղած գոտին, Մեծ Արջը, Բևեռային աստղը գրավում էին նրա ուշադրությունը և բորբոքում երեակայությունը: Նա զարմանում էր մաթեմատիկական այն ճշտության վեա, որով դասավորված էին աստղերը Օրիոնի շուրջը ու մըտածում, թե որևէ ծածուկ իմաստ չկա՞ արդյոք դրա մեջ: Համաստեղություններում գտնվող արևների միզամածությունները խոսում էին անհուն տարածության անշափելի խորությունների մասին, և նա մտածում էր երկրի՝ այն պստիկ գնդիկի մասին, որ լողում է եթերի անծայրածիր տարածություննե-

բում: Տեսնելով այդ երկույթները, սեփական կյանքն սկսում էր թվալ նրան խիստ չնշին մի բան, և մեկ-մեկ էլ մտքով անցնում էր, թե ընդհանրապես որևէ նշանակություն ունի՞ արդյոք այդ կյանքը: Ասենք, նա առանց դժվարության թութափում էր այդպիսի տրամադրությունները, որովհետեւ մեծության ծարավը հատուկ էր նրան, և ինքը շատ բարձր էր դասում իրեն և իր գործունեությունը, իսկ խառնվածքով մատերիալիստ էր ու կենսասեր: Մի ներքին զգացում թելադրում էր նրան, որ ինչ էլ լինի իր ներկա դրությունը, ինքը գեռ կը դառնա մի մեծ մարդ և իր հուշակը կտարածվի համայն աշխարհում. պետք է միայն խիզախել, խիզախել և խիզախել: Ամենքը չէ, որ ունեն կանխատեսելու ձիրք և պահը բռնելու կարողություն, մինչդեռ իրեն տրված է այդ շնորհքը և ինքը պետք է դառնա այն, ինչի համար ստեղծված է: Նա չի խուսափի իր բնածին մեծությունից, ինչպես ուրիշ շատ-շատերը՝ ոչնչությունից:

Միսիս Քառուփերվուդը եկավ օրվա երկրորդ կեսին՝ վշտաբեկ, ձեռքին պայուսակ, որով բերել էր մի քանի ձեռք սպիտակեղեն, սավաններ, կաթսայում՝ խաշած միս ու կարկանդակ: Ու թեև այդ օրը սովորականից ավելի տխուր չէր, Ֆրենկը կարծեց, որ դրա պատճառը իր ու էյլինի կապի մասին մտածելուց է, քանի որ ինքը գիտեր, թե կիլիանը իրազեկ է դրան: Կնոջ վերաբերմունքի մեջ նկատելով ինչ-որ բան՝ Ֆրենկը որոշեց այդ մասին խոսել նրա հետ: Երեխանների մասին հարցնելուց և հաջորդ անգամ ինչ բերելու վերաբերյալ նրա հարցերին պատասխանելուց հետո՝ Ֆրենկը իր միակ աթոռին, կինն էլ մահակալին նստած՝ խոսեց.

— Կիլիա՞ն, վաղուց արգեն ես ուզում էի լրջորեն խոսել քեզ հետ: Ըստ էության առաջ պետք է ասած լինեի, բայց ավելի լավ է ուշ, քան երբեք: Քեզ հայտնի են իմ և էյլին թաթլերի հարաբերությունները, ես այդ գիտեմ, և ամենաւլավն այն է, որ խոսենք այդ մասին բացահայտ և ուղղակի: Ես շատ եմ սիրում նրան, և նա էլ խիստ կապված է ինձ հետ: Եթե երբեք դուրս գամ այստեղից, կուգենամ ամեն ինչ այնպես անել, որ կարողանանք ամուսնանալ: Նշանակում է,

որ դու պետք է ապահարզան տաս ինձ. ես հույս ունեմ, որ կհամաձայնես. ահա այդ մասին էլ ուզում էի խոսել քեզ հետ իմ այս ցանկությունը հազիվ թե մեծ անակնկալ լինի քեզ համար. չէ՞ որ դու ինքդ էլ վաղուց ես նկատել, որ մեր հարաբերությունները հեռու են լավ լինելուց. Ներկա հանգամանքներում ես շեմ կարծում, որ դա ծանր հարված կլիներ քեզ համար:

Նա սպասողական հայացքով լուեց, որովհետև տիկինը անմիջապես շպատասխանեց: Առաջին պահ կիլիանը մտածեց, որ զարմանք կամ զայրույթ ցուցադրի, սակայն նկատելով Ֆրենկի իրեն սկեռած շեշտակի ու խուզարկու հայացքը, որը պարզորոշ ապացուցում էր, թե բուռն զգացմունքների ոչ մի ժայթքում չի հուզի իրեն, հասկացալ, որ բոլորովին անօգուտ էր դա: Միայն թե այդ ի՞նչ շոր ու գործարարական խոսելակերպ է, ինչպիսի՝ անամոթությամբ է նա խոսում այնպիսի բանի մասին, որ իրեն՝ կիլիանին թվում էր վերին աստիճանի անձնական ու մտերմական: Նա երբեք չէր կարող հասկանալ Ֆրենկի վերաբերմունքը կյանքի նվիրական գաղտնիքներին: Ֆրենկը սովորություն ուներ անայլայլ կերպով խոսելու այն մասին, որի վրայոք, ինչպես կիլիանն էր կարծում, մշտապահ պետք է լուսությամբ անցնել: Հաճախ էր նա ստիպված եղել կարմրելով՝ լսելով, թե ինչպիսի՝ անսքողությամբ է Ֆրենկը ֆննարկում աշխարհիկ կյանքի այս կամ այն դեպքը, սակայն կարծել էր, որ այդպես առանց այլեայլության խոսելը հատուկ է բոլոր ականավոր անձանց, ուստի և լոել էր: Կան մարդիկ, ովքեր չեն ցանկանում ոչ մի բան հաշվի առնել, և սստ երեսությին հասարակությունն անզոր է նրանց դեմ: Գուցե և երկնավորը մի օր պատժի նրանց, բայց կիլիանը դրան էլ հավատացած չէր, և որքան էլ վատ, շոր ու անպատկառ մարդ լիներ Ֆրենկը, այնուամենայնիվ ավելի հետաքրքիր էր նա, քան այսպես կոչվող պատկառելի մարդկանց մեծ մասը, որոնց համար ամենակարենորը խոսելու բարեկրթությունն է և մտքերի համեստությունը:

— Ես գիտեմ,— սկսեց կիլիանը բավական խաղաղ շեշտով, թեև ոչ առանց գսպված վրդովմունքի: — Վաղուց գիտեի

և միշտ էլ սպասում էի, որ դու կխոսես այդ մասին։ Վատ վարձատրություն չէ իմ անձնվիրությանը։ Բայց դա իսկը նման է քեզ, Ֆրե՛նկ։ Երբ դու մի բան ես մտցնում գլուխդ, ոչ մի բան չի կասեցնի քեզ։ Ամեն ինչ ընթանում էր շատ լավ։ մենք ունենք երկու երեխա, որոնց դու պետք է սիրեիր-բայց քիչ թվաց քեզ, և դու կապվեցիր այդ փուլ Բաթլերի հետ, և հիմա ամբողջ քաղաքը ձեր մասին է խոսում։ Ես գիտեմ, որ նա վազ է տալիս այստեղ՝ բանտ։ Մի անգամ ես ունա գեմդեմի եկանք, երբ նա այստեղից դուրս էր գալիս, և, իհարկե, ամենքն էլ իմանում են այդ այցելությունների մասին։ Նա շի հասկանում, թե ինչ բան է պարկեշտությունը։ Նա՝ այդ փառասեր անպետքը, որ ոչ ոքի հետ գործ չունի. բայց դու, Ֆրե՛նկ, պետք է ամաշեիր այդ ուղիղվ ընթանալուց, քանի գեռ ես քո կինն եմ, քանի որ դու ունես երեխաներ, հայր ու մայր և երբ, այդ լավ գիտես, ինչ համառ պայքար պետք է մղեմ, որպեսզի նորից ոտքի կանգնես։ Եթե նա գնթ մի կաթիլ սլար-կեշտություն ունենար, չէր կենակցի քեզ հետ, այդ անամոթ պղշիկը։

Քառուփերվուդրալսեց կնոջը ու աշքն էլ շթարթեց։ Նրա ասածները մի ավելորդ անգամ հաստատեցին այն, որին նա վաղուց էր համոզվել, այսինքն՝ կինը իր ամբողջ էությամբ օտար է իր համար։ Լիլիանն արդեն արտաքուստ այնպես գրավիչ չէր, իսկ մտավոր մակարդակով ցածր էր ելլինից առավել ես, որ շփումը կանանց հետ, որոնք պատիվ էին անում այցելելու իր տունը բարգավաճման օրերին, վաղուց արդեն մղել էր Քառուփերվուդին գիտակցելու, որ Լիլիանը զորկ է իսկական աշխարհիկությունից ու նրբաճաշակությունից։ Ճիշտ է, այս տեսակետից ելլինը այնքան էլ գերազանց չէր նրանից, բայց նա դեռատի էր, ընկալող, նրբանկատ ու դեռ կարող էր ձեռք բերել այդ հատկությունները։ Նպաստավոր պայմանները (համենայն գեպս Ֆրենկն այդպես էր ուզում մտածել) դեռ կարող էին շատ բան տալ ելլինին, մինչդեռ Լիլիանը (հիմա նա վերջնականապես համոզվեց դրան) անհույս էր։

— Ես վաստահ չեմ, որ դու կհասկանաս ինձ, Լիլիա'ն, —

ասաց ի վերջո Ֆրենկը, բայց մենք երկուսս այլկս հարմար չենք իրար:

— Երեք թե շորս տարի առաջ դու այլ կարծիք ունեիր, — դառնությամբ ընդհատեց կինը:

— Երբ ես ամուսնացա քեզ հետ, քսանմեկ տարեկան էի, — շոր ու անողոր շեշտով շարունակեց Քառիկերպուղը՝ ուշք շդարձնելով նրա ասածներին, — և, հիրավի, շատ փոքր էի, որ կարողանայի հասկանալ, թե ինչ եմ անում: Երեխա էի: Բայց կարեորը դա չէ: Ես արդարացում շեմ փնտրում, ուզում եմ ասել հետեւյալը՝ իրավացի՞ եմ, թե՞ անիրավ, հարգելի պատճառներ ունե՞մ, թե՞ ոչ, բանն այն է, որ իմ հայացքներն այդ ժամանակից հետո փոխվել են: Ես այլկս շեմ սիրում քեզ ու շեմ ուզում, անկախ այն բանից, թե ուրիշներն ինչպես են նայում դրան, շարունակել այն հարաբերությունները, որոնք ինձ շեն բավարարում: Դու քո տեսակետը ունես, ես՝ իմը: Դու քոնը համարում ես ճիշտ, և հազարավոր մարդիկ համաձայն կլինեն քեզ, բայց ոչ ես: Մենք դրա պատճառով երբեք շենք գծովել, որովհետև ես կարծում եմ, որ այս դեպքում խոսելու բան էլ չկա: Իմ կարծիքով, ստեղծված պայմաններում ես ոչ մի անարդար բան արած շեմ լինի, եթե խնդրեմ վերադանել ինձ իմ ազատությունը: Ես մտադիր շեմ քեզ կամ երեխաներին թողնել բախտի քմահաճույքին, ես կկարողանամ ապահովել ձեզ համար միանգամայն պատշաճ ապրուստ, բայց, եթե ինձ վիճակված է երբեք դուրս գալ այստեղից, ես պետք կունենամ անձնական ազատության, և դու ստիպված կլինես այդ տալ ինձ: Այն դրամը, որ դու ունեիր, և նույնիսկ ավելի, ետ կստանաս, հենց որ ես ազատվեմ ու նորից սկսեմ իմ գործը: Միայն թե այն դեպքում, եթե դու խոշընդուներ շհարուցես իմ դեմ, ընդհակառակն, ընդպառաջես ինձ: Ես ուղում եմ օգնել քեզ և ճիշտ էլ կօգնեմ, բայց այնպես, ինչպես անհրաժեշտ համարեմ:

Նա մտածկոտ տեսքով ուղղեց իր շերտավոր շալվարի ծալքը ու ձգեց բաճկոնակի թեքը: Այդ պահին Քառիկերվուդը նման էր ավելի շուտ խելացի ու զարգացած բանվորի, բան բարգավաճող շենտլմենի, որպիսին էր դեռ վերջերս:

Միսիս Քառուփերվուգը վրդովվեց.

— Եա՞տ հաճելի է այդպես խոսել ու վարվել ինձ հետ, — ողբերգական ձայնով բացականշեց նա, վեր թոշելով ու սկսելով երթեւկել ոչ ավելի, քան երկու քայլ տարածության վրա՝ պատի ու մահճակալի միջև: — Երբ դու ուզում էիր ամուսնանալ ինձ հետ, ես պետք է նկատի ունենայի, որ դու շատ ես փոքր ու ինքդ քեզ չես ճանաշում: Միակ բանը, որի մասին մտածում ես, փողն է, մեկ էլ այն, որ բավարարես քմահաճույքներդ: Դու անգամ չես հասկանում, թե ինչ բան է արդարությունը, ու երբեք էլ չես հասկացել: Դու միայն քո մասին ես մտածում, Ֆրենկ: Ես երբեք այդպիսի մարդու չեմ հանդիպել: Այս ամբողջ պատմության ընթացքում դու ինձ հետ վարվել ես ինչպես շան հետ: Իսկ այդ միջոցին ինքդ գլուխ ես դրել այդ իոլանդացի անպիտան աղջկա հետ և հավանորեն իրազեկ ես դարձրել նրան քո բոլոր գործերին: Մինչև վերջին րոպեն դու թողնում ես, որ ես չտածեմ, թե առաջվա պես սիրում ես ինձ, հետո էլ առանց այլնայլության ապահարզան ես պահանջում: Բայց խելքդ քեզ պահիր: Ես քեզ ապահարզան չե՛մ տա. Կարող ես այդ մասին շմտածել անգամ:

Քառուփերվուգը լուր լսեց նրան: Նա հասկանում էր, որ ընտանեկան այդ բարդ կոնֆլիկտում իր դիրքը շատ ձեռնտու էր. ինքը բանտարկված է և ընտանեկան կյանքից երկար ժամանակով անջատված. այդ միջոցին կինը կվարժվի ապրել առանց իրեն: Երբ ինքը բանտից դուրս գա, կիլիանի համար դժվար չի լինի ապահարզան ձեռք բերել կալանավորից, մանավանդ, եթե նա նշի, որ իր ամուսինը կապ ունի մի այլ կնոջ հետ, մի հանգամանք, որ Ֆրենկը, անշուշտ, չի հերքի: Պետք է հուսալ, որ այդ դեպքում կհաջողվի խուսափել էլլինի անունը տալուց: Եթե ինքը շվիճարկի մեղադրանքները, կիլիանը կարող է տալ որևէ մտացածին անուն: Բացի դրանից, թուլակամ կին է կիլիանը: Ինքը կկարողանա իր կամքին ենթարկել նրան: Իսկ հիմա, կարելի է ասել, միտք էլ չունի շարունակել խոսակցությունը: Սառուցը փշրված է. պետք է

կարծել, որ դրությունը պարզ է հիմա կիլիանին, իսկ մնացածը ժամանակը կանի:

— Ողբերգություն սարքելու կարիք չկա, կիլիա՞ն, — անտարբեր շեշտով ասաց նա: — Մեծ դժբախտություն չէ ինձ կորցնելը, քանի որ ապրուստի միջոց կունենաս: Հազիվ թե ես մնամ Ֆիլադելֆիայում՝ այստեղից դուրս գալուց հետո: Ես մտածում եմ Արևմուտք մեկնել և ավելի շուտ մենակ կգնամ: Չեմ էլ պատրաստվում անմիջապես ամուսնանալ, եթե նույնիսկ ինձ ապահարզան տաս: Ոչ էլ պատրաստվում եմ որեւէ մեկի տանել ինձ հետ: Երեխաների համար ավելի լավ է, որ մնաս այստեղ ու բաժանվես ինձնից: Այն ժամանակ հասարակական կարծիքը ձեր կողմը կլինի:

— Ես համաձայն չե՞մ դրան, — կտրականապես հայտարարեց միսիս Քառուփերվուդը: — Չե՞մ համաձայնի, երբե՞ք և ո՞չ մի գնով: Ինչ ուզենաս կարող ես ասել: Այն ամենից հետո, ինչ ես եմ արել քեզ համար, դու պարտավոր ես մնալ ինձ և երեխաների հետ: Եվ ես չեմ համաձայնի ապահարզան տալ: Կարող ես այլևս շխնդրել. համաձայն չեմ ու վե՛րջ:

— Ի՞նչ արած, — հանգիստ ասաց Քառուփերվուդը՝ վեր կենալով, — հիմա այլևս չարժե քննել այդ հարցը, առավել ես, որ քո ժամանակը համարյա վերջացել է: (Որպես կանոն այցելուներին թույլ էր տրվում մնալ քսան րոպե): Գուցե և հետո միտքդ փոխես:

Լիլիանը վերցրեց իրերը՝ մուշտակ-թենոցը և պայուսակը, որով սպիտակեղեն էր բերել ամուսնուն, և պատրաստվեց դուրս գալ: Սովորաբար հրաժեշտ տալիս նա շինծու քնքանքով համբուրում էր Ֆրենկին, բայց հիմա շատ էր բարկացած, որպեսզի հետևեր այդ սովորությանը: Միաժամանակ նրա սիրուղ ցավում էր, ցավում էր իր համար և, ինչպես թվում էր նրան, նաև Ֆրենկի համար:

— Ֆրե՛նկ, — ողբերգական ձայնով բացականշեց նա վերջին րոպեին, — ես երբեք քեզ պես մարդ չեմ տեսել: Ինձ թվում է, թե դու սիրու չունես, արժանի շես լավ կնոց: Քեզ վայել է հենց այնպիսին, որը կընկնի ձեռքով: Ո՛չ, երբ մտածում եմ...

Արցունքը ողողեց նրա աշքերը, և նա թափով դուրս եկավ խցից՝ զայրացած և միաժամանակ խղճահարությամբ համակված:

Քառվիերվուղը տեղից չշարժվեց: Համենայն դեպս այլնս չեն լինի բոլորովին ավելորդ այդ համբուլրները, ոչ առանց համույթի մտածեց նա: Այս ամենը, իհարկե, բավական դաժան բան բան է՝ նկատի ունենալով կիլիանի զգացմունքները: Ըստ էության ինքը վատ բան շարեց կնոջը, մտածում էր նա, քանի որ մտադիր չէր նյութապես նեղել նրան, իսկ դա ամենակարևորն է: Այսօր կիլիանը համբերությունից դուրս եկավ, բայց խելքը դուրս կատար կատար կամանակին կհասկանա իրեն: Ի՞նչ իմանաս: Համենայն դեպս ինքը բացատրեց կնոջը իր մտադրությունները և կարծում էր, թե դրանով արդեն որոշ բան ձեռք է բերված: Հիմա Ֆրենկը ամենից ավելի նման էր այն ճուտին, որը իր համար անցք է բաց անում կճեպից, այսինքն՝ կյանքի նախկին, կաշկանդող պայմաններից: Թեկուզենա բանտում է, թեկուզեն մոտ չորս տարի ևս պետք է պատիժ կրի, բայց հոգու խորքում իմանում է, որ իր առաջ բաց է ամբողջ աշխարհը: Եթե շկարողանա վերականգնել իր գործը Ֆիլադելֆիայում, կարող է մեկնել Սրեմուտք: Սակայն այս քաղաքում կմնա այնքան, որքան պետք կլինի նորից նվաճելու այն անձանց համարումը, ովքեր ճանաչել են իրեն անցած օրերին, և դրանով իսկ կարծես ստանալու «հավատարմագրեր», որ նա կտանի իր հետ այլ երկրներ:

«Հայհոյանքը այսօր կասվի, վաղը կմոռացվի,— մտքում ասաց նա, երբ դուռը փակվեց կիլիանի վրա:— Քանի մարդը չի մեռել, նա կենդանի է: Ես դեռ այդ պարոններից մի քանի դատաստանը կտեսնեմ»:

Երբ Բոնհեգը եկավ խցիկի դուռը փակելու, Քառվիերվուղը հարցրեց՝ անձրև հո՞ չի գալու, միջանցքում շատ է մութ:

— Երեկոյան կողմ հավանորեն գա, — պատասխանաց Բոնհեգը, որին դեռ շարունակում էին զարմացնել Քառվիերվուղի բարդ ու խճճված գործերի վերաբերյալ ամեն կողմից եկող լուրերը:

Ուղիղ տասներեք ամիս Քառուկերվուղը մնաց Պենսիլվանիայի Արևելյան ուղղիշ բանտում մինչև ազատվնը։ Ժամկետից շուտ ազատվելու համար նա պարտական էր մասսամբ իրեն, մասսամբ էլ իրենից անկախ հանգամանքների։ Սկսենք այն բանից, որ նրա բանտարկությունից վեց ամիս անց վախճանվեց էդուարդ Մելիս Բաթլերը իր առանձնասենյակում, սեղանի առաջ նստած էյլինի վարը կործանարար ազգեցություն ունեցավ նրա սրտի վրա։ Այն օրվանից, ինչ բանտարկության դատապարտվեց Քառուկերվուղը, մանավանդ երբ Ֆրենկը լաց եղավ սիրուհու ուսին հակված, բանտում տեսակցության ժամանակ, էյլինը շարացավ ու զինվեց հոր դեմ։ Նրա վերաբերմունքը հոր հանգեպ, որ անքնական էր զստեր համար, միանգամայն բնական էր հոգեկան տառապանքներ ունեցող սիրուհու համար։ Քառուկերվուղը ասել էր նրան, որ իր կարծիքով Բաթլերը գործադրել էր իր ամբողջ ազգեցությունը՝ թույլ լտալու համար, որ նահանգապետը ների իրեն նույնիսկ այն դեպքում, եթե ներման արժանանա Սթիները, որի բանտային կյանքին Քառուկերվուղը հետեւում էր անդուզ հետաքրքրությամբ։ Էյլինը համակվեց խոլ մոլուցքով։ Նա օգտվում էր ամեն մի պատըրվակից՝ հորն ավելի սաստիկ վիրավորելու համար, շանում էր չնկատել նրան, ըստ հնարավորին խուսափում էր ճաշին նրա հետ նստելուց, երբ չէր հաջողվում, տեղը փոխում էր նորայի հետ ու մոր կողքին էր նստում։ Հիմա նուերերեք չէր համաձայնում դաշնամուր նվազել կամ երգել հոր ներկայությամբ և համառորեն խուսափում էր քաղաքական ասպարեզում հույսեր ներշնչող երիտասարդներից, որոնց տուն էր հրավիրում Բաթլերը գլխավորապես ի սեր էյլինի։ Ծերունին, իհարկե, շատ լավ էր հասկանում բանի էությունը, սակայն ոչինչ չէր ասում։ Այլևս հույս չուներ նա աղջկան մեղմացնելու։

Մայրն ու եղբայրները սկզբում բան չէին հասկանում։ (Միսիս Բաթլերը մինչև վերջն էլ ճշմարտությունը շիմացավ)։

Բայց Քառուփերվուղի դատապարտվելուց շատ չանցած Օուենն ու Քելեմը սկսեցին կոահել էլլինի այդ վարքի պատճառը։ Մի անգամ, երբ Օուենը արդեն պատրաստվում էր դուրս գալ այն երեկոյից, որ տրվում էր այն տներից մեկում, որտեղ նա ֆինանսական աշխարհում աճող իր նշանակության շնորհիվ ցանկալի հյուր էր, լսեց, թե ինչպես իրեն սակավածանոթ երկու երիտասարդներից մեկը վերարկուն կոճկելիս ասաց մյուսին։

— Կարդացի՞ք, որ այդ Քառուփերվուղին շորս տարի են տվել։

— Այո՛, — եղավ պատասխանը։ — Բայց, պետք է խոստովանել, խելացի տղա է։ Ես ձանաշում էի մի աղջկա, որի հետ նա... ասենք, դուք հասկանում եք ում նկատի ունեմ՝ ոմն միսս Բաթլերի։

Օուենը մտածեց, թե սխալ լսեց։ Նրա մտքով անգամ կասկածի նշույլ շանցավ, մինչև որ մյուս հյուրը դուռ բանալով և դուրս գալով փողոց, ավելացրեց։

— Ի՞նչ կա որ, ծեր Բաթլերը վրեժը լուծեց։ Ասում են՝ նա՛ բանտարկել տվեց նրան։

Օուենը խոժոռովեց. աշբերում խիստ, մարտական փայլ երևաց։ Բնավլորությամբ Հորն էր քաշել նա, Գրո՛զը տանի, այդ ի՞նչ են խոսում, Այդ ի՞նչ միսս Բաթլեր է։ Կարող է պատահել, որ նրանք նկատի ունեն էլլինին կամ նորային. Բայց ի՞նչ հարաբերություն կարող էր ունենալ Քառուփերվուղը մեկի կամ մյուսի հետ։ Հազիվ թե խոսքը վերաբերում է նորային, մտածեց նա։ Նորան սաստիկ սիրահարված է մի ծանոթ երիտասարդի և պատրաստվում է ամուսնանալ։ Բայց էլլինն իսկապես միշտ էլ բարեհաճ է եղել Քառուփերվուղի հանդեպ և ամեն անգամ հավանությամբ է խոսել նրա մասին։ Մի՛թե նա է։ Ո՛չ, Օուենը չէր հավատում. նա ուզում էր հասնել այդ երկու բարեկամներին և բացատրություն պահանջել, բայց երբ փողոց դուրս եկավ, տեսավ, որ նրանք բավական հեռացել են, մանավանդ ոչ այն ուզզությամբ, որ ինքը պետք է գնար։ Այնժամ Օուենը որոշեց հարցնել հորը։

Ներ թաթլերը անմիջապես և ամեն ինչ պատմեց նրան, բայց պահանջեց, որ տղան լեզուն իրեն պահի:

— Ավոսո՞ս, որ ես այդ շէի իմանում, — շարացած ասաց Օռւենը: — Շա՞ն պես կսպանեի այդ Քառուփերվուդին:

— Կամաց, կամաց, — կասեցրեց նրան թաթլերը: — Քո կյանքը ավելի թանկ է, քան այդ արարածի կյանքը, և բացի դրանից, մեր ամբողջ ընտանիքը ցեխը կկոխվեր նրա հետ: Նա արդեն իր ստորոտիյան պատճեղը ըստ արժանվույն ստացել է և էլի կստանա: Իսկ դու, տե՛ս, ձայն Հաննես: Սպասել է պետք: Մեկ կամ երկու տարուց շուտ նա ազատ չի արձակվի: Էլլինի հետ էլ ո՛չ մի բան մի խոսիր: Ի՞նչ օգուտ ասել խոսելուց: Հույս ունեմ, որ երկարատև բաժանումը խելքի կրերի նրան:

Այս խոսակցությունից հետո Օռւենը ջանում էր որքուն կարելի է պատրաստակամ լինել բրոջ հետ, բայց ինքը այնքան էր ձգտում դեպի բարձր դասը և այնպես էր ջանում հաջողություն ունենալ աշխարհիկ հասարակության մեջ, որ չէր հասկանում, թե ինչպես կարող էր Էլլինը այդպիսի արարք կատարել: Նա զայրանում էր, որ քրոջ պատճառով իր ճանապարհին մի մեծ խոշընդուռ է առաջանում: Այժմ իր թշնամիները, բացի մնացած ամեն ինչից, կարող էին ցանկության դեպքում իր երեսին շպրտել նաև այս կշտամբանքը, իսկ որ այդպիսի ցանկություն կունենան նրանք, կարելի էր շկասկածել:

Քելեմը Էլլինի պատմությունն իմացավ բոլորովին այլ աղբյուրից, բայց համարյա նույն ժամանակ: Նա անդամ էր Մարզիկների ընկերության, որը հիանալի սեփական շենք ուներ քաղաքում ու անդրքաղաքային սքանչելի ակումբ, ուր մերթ-մերթ մեկնում էր Քելեմը ավագանում լողալու և թուրքական բաղնիքում մեղկանալու համար: Մի անգամ բիլիարդանոցում նրան մոտեցավ իր բարեկամներից մեկը և ասաց.

— Լսեցեք, թաթլե՛ր, դուք գիտեք, որ ես ձեր բարեկամն եմ:

— Այո, իհարկե, — պատասխանեց սա: — Իսկ ի՞նչ
կա որ:

— Գիտեք ինչ, — շարունակեց երիտասարդը՝ ոմն Ռի-
շարդ Պետիկ, նայելով Քելեմին համարյա շափազանցված
քաղցրությամբ, — ևս չէի ուզենա պատմել մի բան, որը կա-
րող է վշտացնել ձեզ, սակայն կարծում եմ, թե իրավունք
շունեմ լուսնիան մատնել:

Նա ձգեց բարձր, կզակին հենված օձիքը:

— Ես չեմ կասկածում ձեր բարի մտադրությանը, Պե-
տիկ, — ասաց Քելեմը՝ աշալրջանալով: — Բայց ի՞նչ է եղել
ի՞նչ նկատի ունեք դուք:

— Կրկնում եմ՝ ևս բնավ էլ չեմ ուզում վիշտ պատ-
ճառել ձեզ, բայց այդ տղան՝ Հիրսը, զանազան լուրեր
տարածում ձեր քրոջ վերաբերյալ:

— Ի-ի՞նչ, — գոչեց Քելեմը, օձից խայթվածի պես վեր
թռչելով. նա անմիջապես հիշեց, թե հասարակությունը վար-
քի ինչպիսի կանոններ է թելադրում արագիսին դեպքերում:
Պետք է ցույց տալ զայրույթն ամբողջովին: Եթե պատիվն է
շոշափված, պետք է պատշաճ բավարում պահանջել, իսկ
սկզբում հավանորեն մի ապտակ հասցնել վիրավորանք
պատճառողին: — Իսկ ի՞նչ է ասում նա իմ քրոջ մասին,
ի՞նչ իրավունք ունի նրա անունը հիշատակել այստեղ: Ան-
գամ ծանո՞թ չէ նրա հետ:

Պետիկը ձեւացավ, թե իբր շափազանց անհանգտանում
է Բաթլերի ու Հիրսի միջև որեւէ բան ծագելուց: Ուստի դար-
ձյալ սկսեց վստահեցնել, որ չի ուզում անախորժություն
պատճառել Քելեմին, թեև իրականում սաստիկ տենչում էր
բամբասանք անել: Ի վերջո նա սիրտ արեց.

— Հիրսը տարածում է այն ցնդաբանությունը, որ ձեր
քույրը ինչ-որ ձեռվ կապված է եղել Քառափերվուդին, որին
վերջերս դատեցին և որը այդ պատճառով էլ բանտարկու-
թյան դատապարտվեց:

— Ի-ի՞նչ, — բացականչեց Քելեմը, վայրկենապես
դեն ցցելով շինծու հանդարտությունը, և խորապես վիրավոր-
ված մարդու տեսք ընդունեց: — Այդ նա՝ ասաց: Խո՞սք չու-

նեմ: Որտե՞ղ է նա հիմա: Տեսնենք՝ կկրկնի՞ արդյոք նույն բանը իմ ներկայությամբ:

Նրա պատանեկորեն նիշար ու բավականին նրբագիծ դեմքի վրայով անցավ մի բան, որը հիշեցնում էր հոր անզուսպ, մարտական ավյունը:

— Լսեցե՞ք, Քելեմ,— հասկանալով, որ իսկական փոթորիկ էր առաջացրել և մի քիչ էլ վախենալով դրա ելքից՝ փորձեց հանդարտեցնել նրան Պետիկը,— զգո՞ւշ եղեք ձեր խոսքերի մեջ: Կորիվ մի՛ գցեք: Ակումբում ընդունված չէ: Բացի դրանից, կարող է պատահել, որ նա խմած է և պարզապես կրկնում է որևէ տեղ լսած անհեթեթ լուրերը: Ի սե՞ր աստծու, այդպես մի՛ տաքանաք:

Այս ամբողջ իրարանցման պատճառը եղող Պետիկը զղայնանում էր, վախենալով, որ սկանդալն աննպաստ կանդրադառնա հենց իր վրա: Իրեն կհամարեն բանսարկու, և ինքը խառն կլինի այդ պատմությանը՝ Քելեմից ոչ պակաց: Բայց սրան արդեն այդքան էլ հեշտ չէր զսպել: Դեմքը ճերմակած՝ նա գնաց ճաշասրահ, անզիհական ոճի մի հին շենք, որտեղ նստած էր Հիբու և իր բարեկամներից ու հասակակիցներից մեկի հետ բրենդի¹ էր խմում:

— Լսեցեք, Հի՛բս,— կանչեց Քելեմը:

Իր անունը լսելով և դռանը տեսնելով Քելեմին՝ Հիբու վեր կացավ ու մոտեցավ նրան: Բավականին գեղեցրկ երիտասարդ էր, Պրինսունի համալսարանի տիպիկ սան: Տարբեր աղբյուրներից, այդ թվում և ակումբի տարբեր անդամներից լուրեր էին հասել նրան էլլինի մասին, և նա հառմարձակվեց կրկնել դրանք Պետիկի ներկայությամբ:

— Ի՞նչ եք պատմել դուք այստեղ իմ քրոջ վերաբերյալ, — ցասումնալից հարցրեց Քելեմը, շեշտակի նայելով Հիբուին:

— Ե՞ս... այսինքն..., — կմկմաց սա, նախազգալով անախորժությունը և զանալով գլուխը պրծացնել: Մեծ քաշությամբ աշքի չէր ընկնում նա, որի պերճախոս ապացույցն

1 Կոնյակի, օղի (անգլ.): Ա. Թ.

Եր նրա արտաքինը: Նրա մազերը ծղոտագույն էին, աչքերը՝ կապույտ, այտերը՝ վարդագույն:— Ինչ, ես, ճիշտն ասած, ոչինչ... Ո՞վ է ասել ձեզ, որ ես խոսել եմ նրա մասին:

Հիբուր նայեց Պետիկին, կռահելով, թե ով է մատնել իրեն. սա էլ հապճեպ վրա բերեց.

— Ավելի լավ է չուրանաք, Հիբուր: Դուք շատ լավ գիտեք, որ ես լսեցի ձեր շաղակրատանքը:

— Եվ ձեր կարծիքով ի՞նչ ասացի, — գրգոիշ շեշտով հարցրեց Հիբուր:

— Հենց այդ էլ ես ուզում եմ իմանալ, — կատաղած ընդհատեց Քելեմը, նախաձեռնությունն իր ձեռքն առնելով:— Խնդրում եմ ձեր խոսքերը կրկնեք իմ առաջ:

— Այդ ի՞նչ ո՞չ, չեմ իմանում, — հուզված կմկմաց Հիբուր, — իմ կարծիքով, ես չեմ ասել ոչ մի այնպիսի բան, որ չեն ասել ուրիշները: Ես կրկնել եմ միայն ուրիշների խոսքը. որ ձեր բույրը շատ էր բարեկամություն անում միտքը Քառուփերվութի հետ: Իսկ ինքոս ոչինչ չեմ ավելացրել այն բանին, ինչ լսել եմ մարդկանցից:

— Ա-ա-, ուրեմն դուք ոչինչ չե՞ք ավելացրել, — բացականշեց Քելեմը և աջ ձեռքը արագ հանելով գրավանից, խփեց Հիբուրի դեմքին: Ապա մոլեգնելով՝ հարվածը կրկնեց ձախ ձեռքով:— Գուցե սա քեզ, լակո՛տ, սովորեցնի զուսպ մնալ իմ քրոջ մասին խօսելուց:

Հիբուր անմիջապես սեղմեց բռունցքները: Նա բռնցքամարտի որոշ վարժություն էր ձեռք բերելու ետ մղելով հարձակումը՝ նա մի քանի բավական ուժգին հարված հասցրեց Քելեմի կրծքին ու զգին: Ճաշարանի երկու սրահում աներեվակայելի իրարանցում առաջացավ: Սեղաններն ու աթոռները շուրջ տալով՝ ամենքն էլ նետվեցին դեպի կովողները: Ճակառակորդներին արագ բաժանեցին իրարից. ներկաներից յուրաքանչյուրը անցնում էր այն մեկի կողմը, ում հետ բարեկամական հարաբերություններ ուներ, և ընդհատելով մյուսներին, շտապում էր հայտնել իր կարծիքը: Քելեմը զննում էր Հիբուրի հարվածից արյունոտված իր ձեռքը: Որպես իսկական շենտլմեն, կատարյա, հանդարտություն էր ցուցա-

թերում: Հիմսը բորբոքված, սաստիկ հուզված, պնդում էր, թե ենթարկվել է վիրավորանքի առանց որևէ հիմքի: Ի՞նչ խայտառակություն. ակումբում հարձակվել իր վրա: Ամեն ինչում հանցավոր է Պետիկը, որ լսել է ուրիշի խոսակցությունը, հետո էլ գրապարտել իրեն՝ Հիբսին: Նա էլ իր հերթին էր զայրացել ու հավատացնում էր, որ վարվել էր այնպես, ինչպես վայել է ընկերոց: Այս պատահարը այնպիսի աղմուկ բարձրացրեց ակումբում, որ ահագին ջանքերով միայն թերթերի նյութ շգարձավ: Քելեմը մոլեգնեց, համոզվելով, որ էլքինի վերաբերյալ շշուկներն անհիմն չէին: Նա դիմում տվեց ակումբին, թե հրաժարվում է նրա անդամությունից և այլնս շերեւաց այնտեղ:

— Շատ եմ ցավում, որ ապտակել ես այդ տղային, — նկատեց Օուենը, երբ իմացավ տեղի ունեցած սկանդալը: — Դա միայն յուղ կցնի կրակի վրա: Լավ կլիներ էյլինը գնար որևէ տեղ, բայց չի ուզում, ոեռ սիրահարված է այդ արարածին, և մենք պետք է թափցնենք այդ բանը մայրիկից ու Նորայից: Մենք երկուսս էլ դեռ շատ դառնություն կճաշան կենք մեր քույրիկի պատճառով:

— Գրո՞ղը տանի, — բացականչեց Քելեմը, — պետք է ստիպել, որ մեկնի:

— Ի՞նչ կարող ենք անել, եթե ինքը չի ուզում, — պատասխանեց Օուենը: — Հայրիկը փորձեց ստիպել, բայց ոչ մի արդյունքի չհասավ: Թողնենք ամեն ինչ ընթանա իր կարգով: Քառուփերվուզը հիմա բանտում է, և պետք է կարծնի, որ նրա բանը պրծած է: Հասարակությունը կարծում է, որ հայրիկն է կոխել նրան այդտեղ, իսկ դա մի բան նշանակում է: Գուցե և որոշ ժամանակ անց կարողանանք էլլինին ճամփու գնել գնա: Այս, ավելի լավ է երբեք շնանաշեինք այդ անպետքին: Զեռքերս քոր են գալիս սպանելու նրան՝ հենց որ բանտից դուրս գա:

— Չարժե, — ասաց Քելեմը: — Դա է՛լ ավելի կերկարացնի մարդկանց լեզուները: Բացի գրանից, նա հիմա վերցացած մարդ է:

Եղբայրները որոշեցին նախ և առաջ շտապեցնել Նորայի

Հարսանքը: Իսկ էլլինի հետ այնքան սառն ու չոր էին, որ միսիս թաթլերն անտրամադիր էր և անվերջ տիսուր վարան-մունքի մեջ:

Հանուր թշնամության այս աշխարհում ծեր թաթլերը բոլորովին շփոթվել էր և շեր իմանում ինչ անի, ինչպես վարվի: Քանի ամիս էր արդեն, ինչ նա անվերջ մտածում էր նույն բանի մասին, բայց այդպես էլ լուծում չէր գըտնում: Նա ընկավ մոհայլ, գրեթե բիբլիական հուսահատության մեջ և վերջապես յոթանատուն տարեկան հասակում, հոգնածու անմիտար, շունչը փշեց՝ իր առանձնանենյակում, գրասեղանի առաջ նստած: Մահվան ֆիզիկական պատճառը սրտի ծախ խորշի վնասվելն էր, բայց քիչ դեր չկատարեց նաև էլլինի մասին ծանր մտահոգություններ ունենալուց առաջացած հոգեվիճակը: Անշուշտ, նրա մահը չէր կարելի վերագրել միայն դատեր պատճառած վշտին, որովհետև նա ծանրամարմին մարդ էր, կաթվածային կազմվածքով և վազուց էր արդեն տառապում անոթների կարծրացումից, մանավանդ որ քանի տարի էր, ինչ սակավաշարժ կյանք էր վարում, իսկ դա կործանարար էր ազգում մարտողության վրա: Եվ ընդհանրապես յոթանատունն արդեն անցավ, և իր կյանքն ապրեց: Առավոտյան գտան նրան արդեն փայտացած, գլուխը կրծքին կախ և ձեռքերը ծնկներին:

Հուղարկավորությունը փառաշուրջ էր: Թաղման կարգը տեղի ունեցավ սբ. Տիմոթեոս եկեղեցում՝ մեծաթիվ բազմության ներկայությամբ: այդտեղ էին բազմաթիվ քաղաքական գործիչներ և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ. բազմության մեջ փսփսում էին, որ թաթլերի վախճանը գուցե և արագացրեց դատեր պատճառած վիշտը: Քիչ շխոսվեց նաև նրա արած բարեգործությունների մասին: Մունհառուերն ու Սիմփսոնը ուղարկել էին հսկայական պսակներ՝ իրենց վշտի առհավատչյան: Նրա մահը շատ վշտացրեց սրանց, որովհետև նրանք միասին միակամ երրորդություն էին կազմում: Բայց քանի որ նա այլևս չկար, ապա, ճիշտն ասած, շարժեր այլևս հիշել դա: Իր ամբողջ կարողությունը թաթլերը թողել էր կնոջը, և նոա կտակը հավանորեն ամեն-

նակարձն էր, որպիսին երբեք արձանագրված է եղել Ֆիլա-
դելֆիայում:

«Կտակում եմ իմ սիրեցյալ կնոջը՝ Նորային, իմ ամ-
բողջ ունեցվածքը, ինչ ձեռվ էլ դա լինի, իրավունք առալով
նրան տնօրինել իր սեփական հայեցողությամբ»:

Այդ կտակը շէր կարող առաջացնել ո՞չ մի աղավաղված
մեկնաբանություն։ Սակայն մահվանից քիչ առաջ Բաթլերը
կազմեց երկրորդ գաղտնի վավերաթուղթը, ուր բացատրեց,
թե ինչպես կինը տնօրինի ժառանգությունը իր մահից
առաջ: Ճիշտն ասած, դա էր իսկական կտակը, միայն
թե սքողված, և միսիս Բաթլերը ոչ մի գնով շէր հա-
մաձայնի որևէ բան փոխել: Բաթլերն անպայման ուզում էր,
որ նա մինչև մահը մնար իր ամբողջ կարողության միակ
ժառանգը: Հենց սկզբից էլ էլլինի համար կանխորշված
գումարը ոչ մի փոփոխության շենթարկվեց: Ըստ հոր կամքի
(և աշխարհում ոչ մի բան չէր ստիպի միսիս Բաթլերին շեղ-
վել զրա ճիշտ կատարումից), էլլինը մոր մահվանից հետո
ստանում էր երկու հարյուր հիսուն հազար դոլլար: Սակայն
միսիս Բաթլերը, որ այդ վավերաթուղթը համարում էր իր
կտակը, ոչ ոքի ոչ մի բառ շասաց ո՞չ էլլինին վերաբերող
կարգադրության և ո՞չ էլ այնտեղ եղած մյուս կետերի մասին:
Էլլինը հաճախ էր մտածում, թե հայրը որևէ բան չի թողել
իրեն, բայց երբեք չէր փորձում իմանալ: Հավանորեն ոչինչ,
եղրակացրեց նա, և պետք է հաշտվել դրա հետ:

Բաթլերի մահվանից հետո ընտանիքի հարաբերություն-
ների մեջ մեծ գոփոխություններ առաջացան: Նրան թաղե-
ւոց հետո ըստ եղելութին վերադարձան նախկին համատեղ
ու խաղաղ կյանքին, բայց դա սոսկ առերևույթ էր: Օուենն
ու Քելեմը անզոր էին թաքցնելու իրենց արհամարհական
վերաբերմունքը էլլինի հանդեպ, բայց սա հասկանալով բա-
նի էությունը, նույն կերպ էր հատուցում նրանց: Էլլինը
խստ մեծամիտ էր պահում իրեն: Օուենն ուզում էր ստի-
պել, որ նա մեկնի հոր մահվանից անմիջապես հետո, բայց
հետո միտքը փոխեց՝ եղրակացնելով, որ դա ոչ մի օգուտ
չի տա: Միսիս Բաթլերը կտրականապես հրաժարվելով հեռա-

նալ հին տնից՝ աստվածացնում էր մեծ աղջկան, և այդ բանը նույնպես թույլ չէր տալիս եղբայրներին, որ պնդեն էլլինի մեկնելու վրա: Բացի դրանից, քրոջը «վոնդելու» ամեն մի փորձ կհանգեցներ ամեն բան մորը բացատրելու անհրաժեշտության, իսկ նրանք անկարելի էին համարում այդ: Օուենը շատ էր սիրաթովում Կարոլինա Մոլենհաուերին, որի հետ հույս ուներ ամուսնանալ մասսամբ այն պատճառով, որ հոր մահվանից հետո մեծ հարստություն էր սպասում զատերը, մասսամբ էլ նրա համար, որ հիրավի սիրահարված էր նրանց Հաջորդ տարվա հունվարին (Բաթլերը վախճանվել էր օգոստոսին) Նորան համեստ կերպով կատարեց իր հարսանիքը, իսկ գարնանը նրա օրինակին հետևեց և Քելեմը:

Այդ միջոցին մեծ փոփոխություններ առաջացան Ֆիլադելֆիայի քաղաքական կյանքում: Ոմն Թոմ Քոլինզ, որ առաջ Բաթլերի կամակատարներից մեկն էր, իսկ վերջերս խոշոր ուժ Առաջին, Երկրորդ ու Չորրորդ շրջաններում, որտեղ նա պահում էր բազմաթիվ գինետներ և նման ուրիշ հաստատություններ, սկսեց քաղաքում զեկավար դեր կատարելու հավակնություն ունենալ: Մոլենհաուերն ու Սիմիոննը ստիպված էին հաշվի նստել նրա հետ, որովհետեւ նրա հակազդեցությունը կնշանակեր մոտ հարյուր տասնհինգ հազար ընտրական թերթիկի համարյա աներկրա կորուստ, ճիշտ է, դրանց մեջ կեղծերը քիչ չէին, բայց այնուամենայնիվ սրանք վճռական նշանակություն չունեին: Բաթլերի գաղվակները այլևս չէին կարող քաղաքական լայն գործունեության հույս ունենալ, ուստի և ստիպված եղան սահմանափակել առևտրական գործառնություններով քաղաքային երկաթուղիների ասպարեզում և կապալներով: Քառուիերվուդի և Սթիների ներումը, որին, իհարկե, կհակառակեր Բաթլերը, որովհետեւ Սթիներին պահելով բանտում, դրանով իսկ այնտեղ կպահեր և Քառուիերվուդին, հիմա զգալապես ավելի պարզ խնդիր դարձավ: Քաղաքի գումարները կողոպտելուց առաջացած սկանդալն աստիճանաբար հանդարտվեց, թերթերը նույնիսկ դադարեցին հիշատակել այդ: Սթեգերի և Ուինգերի ջանքերով կազմվեց ու նահանգապետին մատուց-

վեց քոլոր խոշոր ֆինանսիստների ու բորսայականների ստու-
րագրած մի քնդարձակ հանրագիր, որով ցույց էր տրվում,
որ բացահայտ անարդարություն էր Քառուփերվուղին դամի
տալն ու բանտարկության դատապարտելը, ուստի և իրենք
միջնորդում են ներում շնորհել նրան։ Գալով Սթիներին,
ապա նրա համար առանձնապես չարչարվելու կարիք չե-
ղավ. հանրապետական կուսակցության պարագուխները
հարմար առիթի էին միայն սպասում, որպեսզի դիմեն նա-
հանգապետին ու խնդրեն ազատել նրան։ Մինչև հիմա նը-
րանք ոչինչ չէին ձեռնարկում, որովհետև գիտեին, որ Բաթ-
լերը դիմադրելու է Քառուփերվուղի ազատվելուն։ իսկ ազատ
արձակել մեկին և մոռանալ մյուսին՝ անկարելի էր։ Նա-
հանգապետին ուղղված հանրագիրը, որ մատուցվեց արդեն
Բաթլերի մահվանից հետո, հարցի լավագույն լուծումը եղավ։
Եվ այնուամենայնիվ վճռական քայլերը կատարվեցին
միայն մարտին՝ ծեր կապալառուի մահվանից կես տարի
հետո միայն, երբ Սթիներն ու Քառուփերվուղը արդեն տասն-
երեք ամիս էին անցկացրել բանտում, մի ժամկետ, որ միան-
գամայն բավական էր լայն հասարակությանը հանդարտեց-
նելու համար։ Այդ ժամանակամիջոցում Սթիները խիստ
փոխվել էր թե՛ փիզիկապես, թե՛ հոգեպես։ Զնայած այն
բանին, որ ժամանակ առ ժամանակ այցի էին գալիս նրան
քաղաքացին ինքնավարության երկրորդական անդամները,
որոնք ժամանակին այս կամ այն ձևով օգտվել էին նրա
շուայլություններից, և նա ինքն էլ, իհարկե, բանտային հաս-
կացություններով, համարյա ոչ մի բանով կաշկանդված չէր,
ընտանիքը նույնպես զրկանք չէր քաշում, այնուամենայնիվ
նա հասկանում էր, որ իր քաղաքական ու հասարակական
կարիերան վերջացած է։ Թեկոսկ մերթ այս, մերթ այն բա-
րեկամը զամբյուղով միրգ էր ուղարկում նրան և լիարերան
հավատացնում էր, որ շուտով ազատ կարձակեն, այնուամե-
նայնիվ նախկին գանձապետը հաստատապես գիտեր, որ
բանտից դուրս գալուց հետո կարող է միայն հույս զնել
ապահովագրության և անշարժ կայքի վաճառման գործա-
կալի իր փորձի վրա։ Դա խիստ անհույս գործ էր դեռ այն

օրերին, երբ նա փորձում էր ամրանալ քաղաքական ասպարհուում: Իսկ ի՞նչ կլինի հիմա, երբ իրեն ճանաշում են միայն որպես մի մարդու, որը կես միլիոն դոլար է կողոպտել քաղաքային գանձարանից ու դատապարտվել հնգամյա ուղղիշ բանտարկության: Ո՞վ գոնե չորս-հինգ հազար դոլար փոխ կտա նրան ամենահամեստ սկզբնավորման համար: Արդյո՞ք ոչ ոչ նրանք, որ հիմա այցելության են գալիս իրեն և իրենց ցավակցությունն են հայտնում անարդար դատավճռի առթիվ: Զէ, ո՞չ մի գնով: Դրանք ամենքն էլ կհավատացնեն իրեն, թե ոչ մի ավելորդ ցենտ չունեն: Ա'յ, եթե ինքը կարողանար լավ երաշխիք առաջարկել, այն ժամանակ ուրիշ բան: Բայց եթե ինքը լավ երաշխիք ունենար, ապա նրանց դիմելու կարիք էլ չէր ունենա: Միակ մարդը, որը իսկապես կօգներ իրեն, եթե իմանար իր կարիքը, Ֆրենկ Քառուիեր վուդն էր: Եթե Սթիները ընդուներ իր սխալը, իսկ Քառուիերը վուդը նոր փոխատվություն անելուց հրաժարվելն էր համար ուսման այդ, ապա սա հաճությամբ փող կտար իրեն՝ անդամ ետ ստանալու հույս չունենալով: Սակայն մարդկանց լավ ճանաշել չիմացող Սթիները կարծում էր, թե Քառուիերվուդը պետք է, որ իր թշնամին լինի, և ինքը երբեք արիություն չի ունենա, ո՞չ էլ գործիմացություն, որ դիմի նրան:

Իր ամբողջ բանտարկության ընթացքում Քառուիերվուդը փոքր գումարներ էր ետ գցում Ուկնգեյթի միջոցով: Նա մեծ հոնորաբներ էր վճարում Սթեցերին, մինչև որ սա վերջապես որոշեց, թե այլևս ոչինչ չպետք է առնի նրանից:

— Եթե դուք երեք նորից ոտքի կանգնեք, Ֆրենկ, շնորհակալ եղեք ինձ: Բայց ես կարծում եմ, որ չեք էլ ուզենա հիշել ինձ: Ես միայն այն արեցի, որ տանու տվեցի ձեր գործը տարրեր ատյաններում: Ներման միջնորդությունը կկազմեմ ու կներկայացնեմ առանց որևէ հոնորարի: Մրանից հետո ես ձրի կաշխատեմ ձեզ համար:

— Քավական է հիմարություն դուրս տաք, Հարպե՛ր, — պատասխանեց Քառուիերվուդը: — Ես չեմ ճանաշում այնպիսի մեկի, որը կարողանար ավելի լավ վարել իմ գործը: Համենայն գեպս ոչ ոքի, որին վստահեի այնպես, ինչպես

‘ձեզ: Կարծեմ դուք նկատեցիք, որ ես չեմ սիրում փաստաբաններին:

— Ի՞նչ արած,— պատասխանեց Սթեղերը,— փաստաբաններն էլ ֆինանսիստներին չեն սիրում, այնպես որ երկուսս էլ քվիթ ենք:

Եվ նրանք սեղմեցին իրար ձեռք:

Այսպիսով, երբ 1873 թվականի մարտի սկզբին որոշվեց միջնորդություն հարուցել Սթիների ներման մասին, կամակամա հարկ եղավ նույնը խնդրել նաև Քառուփերվուդի համար: Այդ պատվիրակությունը, որ կազմված էր Սթրոբիկից, Հարմոնից ու ոմն Ուինփենիից, որը պետք է արտահայտեր քաղաքային խորհրդի ու կառավարչության, ինչպես նաև նրանց միացած Մոլենհառուերի ու Սիմֆոնի իբր թե միահամուռ ցանկություն՝ ազատ տեսնելու նախկին գանձապետին, Հարիսբուրգում այցելեց նահանգապետին և հանձնեց նրան պաշտոնական միջնորդություն, որ կազմը ված էր հասարակության վրա պատշաճ տպավորություն գործելու ձեռվի: Միաժամանակ Սթեղերը, Դևիսոնը և Ուոլթեր լին ներման հանրագիր տվեցին Քառուփերվուդի համար: Նահանգապետը, որ առաջուց դրա մասին ցուցում էր ստացել Հիշյալ պատվիրակություններից շատ ավելի ազդեցիկ ոլորտներից, առանձնակի ուշադրությամբ վերաբերվեց միջնորդություններին: Ինքը անձամբ կզբաղվի այդ գործով: Կծանոթանա երկու կալանավորների կատարած հանցագործություններին, նրանց անցյալ կյանքի տվյալներին: Ինքը, անշուշտ, ոչինչ չի կարող խսուտանալ, սակայն գործին ծանոթանալուց հետո և այլն... Տասն օր հետո, երբ հանրագրերը նրա գրասեղանի դարակում արդեն ծածկվել էին փոշու զգալի շերտով, նա արձակեց երկու առանձին հրամանագիր ներման վերաբերյալ՝ հարցն ուսումնասիրելու համար մատն անգամ շշարժելով: Դրանցից մեկը, ի նշան հարգանքի, նա հանձնեց Սթրոբիկի, Հարմոնի և Ուինփենիի ձեռքը, որպեսզի արանք, ըստ իրենց արտահայտած ցանկության, կարողանային անձամբ հանձնել Սթիներին: Երկրորդն էլ, Սթեղե-

րի խնդրանքով՝ տվեց նրան, և երկու պատվիրակություններն էլ, որ եկել էին այդ հրամանագրերն ստանալու, մեկնեցին։ Նույն օրը, երեկոյան, բանտի դարպասին մոտեցան, ճիշտ է, տարրեր ժամերի, երկու խոսմբ։ Մեկը կազմված էր Սթրոբիկից, Հարմոնից և Ուինֆենիից. մյուսը՝ Սթեղերից, Ուինգեյթից և Ուոլթեր Լիից։

ԳԼՈՒԽ LVIII

Ներման միջնորդություն հարուցելու պատմությունը, ավելի ճիշտ, իսկական ժամկետը թաքցնում էին Քառուփերվուդից, թեև ամենքն էլ իրար առաջ կտրելով հավաստում էին նրան, որ շուտով ներման կարժանանա կամ որպա՞ն հուսալու ծանրակշիռ հիմքեր ունի։ Ուինգեյթը և Սթեղերը մըշտապես, որքան հնարավոր էր, իրազեկ էին դարձնում նրան իրենց կատարած քայլերին։ Բայց երբ նահանգապետի անձնական քարտուղարի բերանից խմացան ներման հրամանագիրն ստորագրելու օրը, Սթեղերը, Ուինգեյթը և Ուոլթեր լին պայմանավորվեցին ոչ մի խոսք շասել այդ մասին և անակնկալ պատճառել Քառուփերվուդին։ Սթեղերն ու Ուինգեյթը նույնիսկ այնքան հեռու գնացին, որ ակնարկեցին՝ իր թե դժվարություն է առաջացել և նրա աղատվելու գործը կարող է ձգձգվել։ Քառուփերվուդը տիրեց, սակայն ստորիգությունը պահեց, ներշնչելով իրեն, թե դեռ կարելի է համբերել, քանի որ, մեկ է, այդ ժամը կգա։ Առավել ևս սաստիկ զարմացավ նա, երբ մի ուրբաթ օր, ցերեկվա երկրորդ կեսին, Ուինգեյթը, Սթեղերը և Ուոլթեր լին մոտեցան նրա խցիկի դռանը՝ բանտապետ Դեսմասի հետ։

Դեսմասը շատ ուրախ էր, որ վերջապես Քառուփերվուդը ազատ է արձակվում, որովհետև անկեղծորեն հիանում էր նրանով, և որոշեց գնալ խցիկը՝ տեսնելու, թե ինչպես կընդունի նա հրձվալի լուրը։ Ճանապարհին իր պարտքը համարեց նշելու, որ Քառուփերվուդը մշտապես կարգին է պահել իրեն։

— Իր բակում պարտեզ է տնկել, — Հայտնեց բանտառ պետը Ռւոլթեր կիին: — Աճեցրել է մանուշակ, մեխակ, խորդենի և լավ էլ կպել են:

Լին ժպտաց: Դա շատ է Քառուփերվուղի խառնվածքին համապատասխան՝ գործունյա լինել և ջանալ գեղեցկացնել կյանքը անգամ բանտում: Այդպիսի մարդուն չի կարելի հաղթել:

— Բացառիկ մարդ է, — ասաց Լին Դեսմասին:

— Այո՛, այո՛, — հաստատեց բանտապետը: — Համոզվելու համար բավական է նայել նրան:

Չորսն էլ վանդակացանցից նայեցին ներս. Քառուփերվուղը շնկատեց նրանց, որովհետև խիստ կամաց էին մոտեցել, և շարունակեց աշխատել:

— Զանասիրաբա՞ր եք աշխատում, Ֆրե՛նկ, — Հարցրեց Սթեցերը:

Քառուփերվուղը, գլուխը շրջելով, նայեց ու վեր կացավ:

Ինչպես և վերջին օրերին, այժմ էլ մտածում էր՝ ինչով պիտի զբաղվի բանտից դուրս գալուց հետո:

— Այս ի՞նչ է նշանակում, — Հարցրեց նա: — Իսկակա՞ն քաղաքական պատվիրակություն:

Եվ նույն վայրկանին էլ կուահեց: Չորսն էլ հրճվագին ժպտացին, իսկ թի հեզը պետի հրամանով բացեց դուրը:

— Առանձնապես ոչինչ չի նշանակում, Ֆրե՛նկ, — ուրախ պատասխանեց Սթեցերը, — Թերևս միայն այն, որ դուք հիմա ազատ մարդ եք: Եթե հաճո է՝ կարող եք հավաքել ձեր եղած-շեղածը և դուրս գալ:

Քառուփերվուղը անայլայլ նայեց իր բարեկամներին: Այն բանից՝ հետո, ինչ ասել էին նրանք, այսքան շուտ չէր սպասում ազատվելուն: Նա այն մարդկանցից չէր, ովքեր զվարձանում են նման կատակներից կամ անակնկալներից, սակայն ազատ լինելու հանկարծակի գիտակցությունը ուրախացրեց նրան: Ճիշտ է՝ այնքան վաղուց էր արդեն սպասում այդ պահին, որ դրա հրապուրի զգալի մասը նրա համար կորել էր: Թանտում նա դժբախտ էր, բայց ոչ խորտակված: Ակդրում ծանր էր կրել անարգանքն ու նվաստացումը: Բայց

Հետագայում, երբ ընտելացավ գոյավիճակին, նեղվածք վայրի և վիրավորված արժանապատվության զգացումը բթացավ։ Նրան ջղայնացնում էր միայն այն գիտակցությունը, որ բանտում նստած՝ իզուր ժամանակ է կորցնում։ Եթե շհաշվենք լբավարարված ձգտումները՝ գլխավորապես հաջողության և վերականգնման ծարավը, նա համոզվեց, որ կարելի է ապրել նեղլիկ խցում և բնավ էլ վատ շղգալ։ Արդեն վաղուց էր նա վարժվել կրի հոտին, որը թուլացնում էր մի ուրիշ՝ ավելի գարշ հոտ, և բազմաթիվ առնետներին, որոնց, ի գեպ, եռանդագին բնաշնչում էր։ Նրա մեջ որոշ հետաքրքրություն էր առաջացել աթոռ հյուսելու նկատմամբ, և այնքան էր հմտացել, որ, եթե ցանկանար, կարող էր օրական քսան հատ գործել։ Պակաս հաճությամբ շէր աշխատում Քառուիերվուդը գարնանը, ամռանն ու աշնանը իր մի ափ ծաղկանոցում։ Ամեն երեկո այնտեղ նստած, նա ուսումնասիրում էր երկնակամարը, և հետաքրքիրն այն էր, որ այդ երեկոների հիշատակը հանդիսացող հիանալի հետադիտակը շատ տարիներ անց նվիրեց մի նշանավոր համալսարանի։ Քառուիերվուդը երբեք իրեն սովորական կալանավոր շէր համարում, ինչպես նաև չէր կարծում, թե բավականաշափ պատիժ կրեց, եթե նրա արարքների մեջ հիրավի հանցագործության որոշ տարր կար։ Բոնհեգը պատմել էր նրան բազմաթիվ կալանավորների մասին, որոնց մեջ կային մարդասապաններ, ի՛ւ ավելի ծանր ոճիրներ գործած մարդիկ, ինչպես նաև մանր հանցագործներ։ ոմանց նույնիսկ ճանաշում էր Քառուիերվուդը, երբ Բոնհեգը հաճախակի գլխավոր բակն էր տանում նրանց։ Քառուիերվուդը տեսել էր, թե ինչպես են կերակուր եփում կալանավորների համար, լսել էր, որ Սթիները բավական տանելի կենցաղավարություն ունի բանտում և այլն։ Վերջիվերջո նա համոզվեց, որ բանտը այնքան էլ սարսափելի բան չէ, ափսո՞ս, որ ինքը զուր ժամանակ է կորցնում։ Ինչքա՞ն շատ բան կարող էր նա անել, եթե բանտում լիներ և զբաղվեր այդ բոլոր հայց հարուցող դիմումներով։ Դատարաններ՝ ու բանտեր։ Նա

ակամա օրորում էր գլուխը, մտածելով, թե որքան կորսված ժամանակ կա այս բառերի տակ:

— Շատ լավ,— ասաց նա մի տեսակ անվստահ ձայնով ու նայեց շուրջը:— Ես պատրաստ եմ:

Նա դուրս եկավ միջանցք, նույնիսկ առանց հրաժեշտի հայացք նետելու իր խցիկին և դարձավ թոնհեգին, որը խիստ տիրել էր այդքան ձեռնտու հաճախորդից զրկվելու պատճառով:

— Ես խնդրում եմ ձեզ, Ուոլթեր, հոգ տանել, որ իմ անձնական իրերը ուղարկվեն մեր տուն: Քաղկաթոռը, պատի ժամացույցը, հայելին, նկարները, կարճ ասած, ամեն ինչ, կտրող եք պահել ձեզ, բացի սպիտակներնից, ածիլվելու գործիքներից և այլպիսի մանր իրերից:

Այս առատաձեռն նվիրատվությունը մի քիչ հանգստացրեց թոնհեգի ցավահար հոգին: Քառիկերվուդը իր ուղեկիցների հետ գնաց «ընդունաբան» և շտապ-շտապ հանեց բանորի բաճկոնակն ու շապիկը: Կոշտուպուշտ ոտնամանների փոխարեն կաղուց էր նա հագնում իր թեթև կոշիկները: Այնուհետև նորից դրեց կլորածկ գլխարկը ու հագավ մոխրագույն վերաբերեն, որով մի տարի առաջ բանտ էր եկել և հայտարարեց, թե պատրաստ է: Դուան մոտ մի պահ կանգ առավ ու նայեց ետք վերջին աղամ, այգին տանող երկաթե դռանը:

— Կարծեմ, ափսոսանքով չեք հրաժեշտ տալիս այս ամենին, Ֆրենկ, — հետաքրքրվեց Սթեղերը:

— Ոչ բոլորովին այդպես, — պատասխանեց Քառիկերվուդը:— Ոչ մի բան էլ չեմ ափսոսում. պարզապես ուզում եմ մտքումս պահել այս ամենը:

Մի րոպե անց նրանք արդեն հասան արտաքին շրջափակին, և Քառիկերվուդը հրաժեշտ տալիս՝ սեղմեց բանտապետի ձեռքը: Այնուհետև չորսն էլ նստեցին գոթական ոճի տպավորիչ դարպասի մոտ սպասող կառքը, և ձիերը շարժվեցին:

— Պրծաղ-գնաց, Ֆրենկ, — ուրախ նկատեց Սթեղերը:— Էլ երբեք այսպիսի բան չեք զգա:

— Այո՞;— համաձայնեց Քառիկերվուդը, — այն գիտակ-

ցությունը, թե այս ամենը արդեն անցյալ է, ավելի հաճելի է, քան երբ գիտակցում ես, որ նոր պիտի լինի:

— Կարծում եմ, որ մի կերպ պետք է տոնել այսքան մեծ իրադարձությունը, — միշտամտեց Ուղթեր լին: — Նախքան Ֆրենկին տուն տանելը, լավ կլիներ գնայինք «Գրին». լավ եմ առում, չէ՞: Ինչպես եք կարծում:

— Զբարկանաք, ես կգերադասեի ուղիղ գնալ տուն, — պատասխանեց Քառվերպուղը, նույնիսկ մի քիչ հուզված ձայնով: — Մենք իրար կհանդիպենք քիչ ուշ: Իսկ հիմա ուզում եմ լինել տանը և հագուստներս փոխել: — Նա մտածում էր Ելլինի, երեխաների, հոր և մոր, իր ապագայի մասին: Այժմ կյանքը իր առաջ կրացի մեծ, լայն հորիզոններ, նա հավատացած էր դրան: Անցած տասներեք ամիսներին նա սովորել էր մանր գործերում ևս անձամբ սպասարկել իրեն: Նա կտեսնը վի էլլինի հետ, կիմանա նրա վերաբերմունքը տեղի ունեցած ամեն ինչին, հետո էլ կսկսի այնպիսի գործ, որ ուներ առաջ, միայն թե Ուինգեյթի հետ համատեղ: Հարկ կլինի լավ բարեկամների աջակցությամբ կրկին մի տեղ ձեռք բերել դրամական բորսայում, և որպեսզի փոքր առաջվա կալանավորի վատ համբավը մարդկանց շխանգարի գործ անել իր հետ, սկզբնական շրջանում կգործի որպես «Ուինգեյթ և Ընկ» գրասենյակի գործակալ ու ներկայացուցիչ: Ոչ ոք չի կարող ապացուցել, որ ինքը փաստորեն այդ ֆիրմայի գլխավորն է: Այնուհետև պետք կլինի սպասել բորսայում տեղի ունենալիք մի խոշոր իրադարձության, օրինակ, կուրսերի շտեսնված բարձրացման: Եվ այն ժամանակ արդեն ամբողջ աշխարհը կիմանա՝ վերջացած մարդ է Ֆրենկ Քառվերվուղը, թե՞ ոչ:

Կառքը կանգ առավ մի փոքրիկ քոթեզի առաջ, որ զբաղեցնում էր նրա կինը, և Ֆրենկը արագ մտավ կիսամութ նախասենյակը:

1873 թվականի սեպտեմբերի 18-ին, աշնանային հաճելի կեսօրին, Ֆիլադելֆիա քաղաքը դարձավ ամենաշշմեցուցիչ ֆինանսական ողբերգություններից մեկի բեմադրավայրը, որ երբեքէ տեսել էր աշխարհը: Ամերիկայի խոշորագույն ֆի-

նանսական հաստատությունը՝ «Զեյ Կուք և Ընկ.» բանկիրային տունը, որ գրասենյակ ուներ Հարավային Երրորդ փողոցի № 114 տանը և բաժանմունքներ նյութություններում, Վաշինգտոնում ու Լոնդոնում, հանկարծ դադարեցրեց վճարումները։ Ով պատկերացնում է, թե ինչ բան է ֆինանսական ճգնաժամը Միացյալ Նահանգներում, պատկերացնում է նաև այն նշանակությունը, որ ունեցավ այդ իրադարձությանը հաջորդած բորսայական խուճապը։ Դա ստացավ «1873 թվականի խուճապ» անունը, և տնաքանդությունների ու աղետների ալիքը, որ այն ժամանակ վարարելով ընթացավ ամբողջ երկրում, հիրավի իր հավասարը շունի Ամերիկայի պատմության մեջ։

Այդ միջոցին Քառուիերվուդը դարձյալ գործ էր անում երրորդ փողոցում որպես միջնորդ (պաշտոնապես՝ միջնորդի գործակալ), այսինքն՝ «Ուինգեթ և Ընկ.» ֆիրմայի ներկայացուցիչ, աշխատում էր բորսայում։

Ազատվելու օրվանից անցած կես տարում նա կարգացել էր վերականգնել որոշ կապեր ոչ միայն հասարակության մեջ, այլև առաջուց իրեն ճանաշած ֆինանսիստների շրջանում։

Բացի դրանից, «Ուինգեթ և Ընկ.» ֆիրման վերջերս ակնհայտ կերպով բարգավաճ էր, և դա խիստ նպաստավոր էր անդրադառնում Քառուիերվուդի վարկունակության վրա։ Կարծում էին, որ նա ապրում է կնոջ հետ Հյուսիսային Քսանմեկերորդ փողոցի մի տնակում, իսկ իրականում ամուրիի մի բնակարան էր վարձել Հյուսիսային Տասնհինգերորդ փողոցում, ուր հաճախ այցի էր գալիս էլլինը։ Նրա ու Լիլիանի գժտության մասին հիմա արդեն ամբողջ ընտանիքը գիտեր և նույնիսկ մի քանի անհամարձակ և ապարդյուն փորձեր էր արել ամուսիններին հաշտեցնելու համար։ Ասենք, վերջին երկու տարիների ծանր փորձությունները ծեր Քառուիերվուդներին այնքան էին վարժեցրել ամեն տեսակ տհաճ անակնկալների, որ այդ ամբողջ պատմությունը թեև ապշեցրեց նրանց, սակայն այնպես խիստ շխոցեց, ինչպես մի քանի տարի առաջ եղավ։ Այն-

քան էր կյանքը վախեցրել նրանց, որ մտքով իսկ չէին անցկացնում նրանք պայքար սկսել դրա անըմբոնելի հեղհեղուկությունների դեմ: Այժմ ծերոնինները կարող էին միայն աղոթել և հույս դնել լավ ժամանակների վրա:

Գալով Բաթլերներին, ապա նրանք անտարբեր դարձան էլլինի վարքի նկատմամբ: Երկու եղայրներն ու նորան, որ վաղուց ամեն ինչ իմանում էին, աշխատում էին պարզապես չնկատել մեծ քրոջը, իսկ մայրը այնքան էր նվիրվել կրոնին, այնքան էր խորասուզվել իր կրած կորստյան վշտի մեջ, որ այլևս չէր հետեւում դստեր կյանքին: Ավելացնենք նաև, որ Քառուփերվուդն ու նրա սիրուհին կրկնապատիկ զգուշություն էին հանդես բերում: Նրանք շանում էին հաշվել իրենց ամեն մի քայլը, թեև նրանց հարաբերությունները բնավլ չէին փոխվել: Քառուփերվուդը մտածում էր տեղափոխվել Արևմուտք, անշուշտ՝ էլլինի հետ, ուզում էր մի փոքր վերականգնել իր դրությունը Ֆիլադելֆիայում և ապա մոտ հարյուր հազար դոլար կապիտալով անցնել գեպի անծայրածիր պրերիաները՝ Զիկագո, Ֆարզո, Դուզոթ, Սուլիքս-սիթի, այսինքն՝ այն վայրերը, որոնց մասին Ֆիլադելֆիայում և ընդհանրապես Արևելքում խոսում էին որպես ապագա խոշոր կենտրոնների: Ճիշտ է, նրանց ամուսնության հարցը մնում էր շլուժված, մինչև լիլիանը շհամաձայներ ապահարզան տալու (որի մասին հիմա մտածել իսկ կարելի չէր), սակայն ո՛չ Ֆրենկը, ո՛չ էլլ էլլինը դրանից չէին անհանգստանում: Պսակված թե անպսակ՝ միենույն է, նրանք միասին պետք է կառուցեն նոր կյանքը: Իսկ առայժմ Քառուփերվուդը միայն մի ելք էր տեսնում. Էլլինին տանել իր հետ, հուսալով, որ ժամանակն ու անջատումը կստիպեն կնոջը փոխելու իր որոշումը:

Բորսայի խուճապը, որին վիճակված էր այնքան վճռական ազդեցություն գործել Քառուփերվուդի հետագա կյանքի վրա, այն յուրօրինակ երեսութներից էր, որոնք բնականաբար բխում են ամերիկյան ժողովրդի լավատեսությունից և երկրի անզուսպ զարգացումից: Ճիշտն ասած, դա հետեւանքն էր Զեյ Կուքի մեծամտության և ինքնավստահության. նու

մեծացել էր Ֆիլադելֆիայում, այդտեղ էլ սկսել հաջողություն ունենալ ֆինանսական ասպարեզովամ, այնուհետև դարձել էր իր ժամանակի խոշորագույն ֆինանսիստը: Մենք մտագիր շենք ցուց տալու այդ մարդու գեղի փառքը տանող ուղին: Բավական է ասենք, որ նրա ցուցումների ու իր իսկ հնարած մեթոդների շնորհիվ ԱՄՆ-ի կառավարությունը երկրի համար ամենաճգնաժամային պահերին կարողացավ ճարել միջոցներ, որ անհրաժեշտ էին Հարավի դեմ պայքարը շարունակելու համար: Քաղաքացիական պատերազմից հետո այդ մարդը, որ բանկիրային մի վիթխարի տուն էր ստեղծել Ֆիլադելֆիայում, բավական խոշոր բաժանմունքներ ունենալով նյու-Յորքում և Վաշինգտոնում, որոշ ժամանակ մնաց անորոշ վիճակում. չէր իմանում էլ ի՞նչ գործ ընտրեր իր համար, ստեղծագործական ո՞ր գաղափարում ըստ արժանվույն կիրառեր իր ֆինանսական հանճարը: Պատերազմը վերջացել էր. հերթական հարցը խաղաղ ժամանակի ֆինանսներն էին, և ձեռներեց գործարարի համար ամենալայն ասպարեզը միջցամաքամասային երկաթգծերի շինարարությունն էր: Խաղաղօվկիանոսյան Միացյալ ընկերությունն արդեն կառուցում էր դեռ 1860 թվականին պետական հավանության արժանացած երկաթուղին: Այդ գործը նախաձեռնողների պայծառ ս ոքերը արդեն մտմտում էին Խաղաղ օվկիանոսի Հյուսիսային և Հարավային մերձակինյա երկաթուղիներ կառուցելու գաղափարը: Մի՛թե մեծ գործ չէր պողպատե ուղիներով Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսները միացնելը, ի մի կապել ամրապնդված և տերիտորիալ տեսակետից աճած պետության անջատ մասերը կամ լայն թափ ու ծավալ հաղորդել հանքերի և ամենից առաջ ոսկու ու արծաթի հանքերի արդյունահանմանը: Սակայն ամենաայժմեականը, այնուամենայնիվ, կարծես երկաթուղային գործն է, և երկաթուղային բաժնետոմսերը մյուսներից ավելի բարձր են արժենորվում Ամերիկայի բոլոր դրամական բորսաներում: Ֆիլադելֆիայում իրար ձեռքից խլում էին նյու-Յորք Սենտրալ, Ռոք-Այլենդ, Ուորել, Կենտրոնական Խաղաղօվկիանոսյան, Սենտ-Պոլ, Հաննիբալ և Սենտ-Ջոնս,

Միացյալ Խաղաղօվկիանոսյան և Օհայո-Միսիսիպի գծերի բաժնետոմսերը։ Շատ մարդիկ հարստացան ու հոշակվեցին այդ արժեթղթերի շարաշահ առուժախով։ Հայտնի գործարարներ, Արևելքում՝ Կոռնելիոս Վանդերֆիլդը, Զեյջ Գուլդը, Դանիել Թրյուն, Զեմս Ֆիշը և այլք, Արևմուտքում՝ Ֆեյրը, Կրոքերը, Հերստը և Կոլիս Հանտինգտոնը այդ ձեռնարկների շնորհիվ դարձան ամերիկյան արդյունաբերության սյուները։ Կրքոտ կերպով այդպիսի թոփշք երազողներից մեկն էլ Զեյջ Կուքն էր. չունենալով ո՞չ Գուլդի գալային խորաման-կությունը, ո՞չ էլ Վանդերֆիլդի ահագին փորձը՝ նա իր ամբողջ մտադրությունը կենտրոնացրել էր մի բանի վրա. Ամերիկայի հյուսիսային լայն տարածությունները պատել պողպատե ժապավենով, որը և կդառնա նրա հավերժական հուշարձանը։

Կուքին ամենից ավելի գրավում էր այն նախագիծը, որով զարգացվելու էր այդ ժամանակ տակավին շհետազոտված մի շրջան՝ Վերին լճի արևմտյան ափի (որտեղ հիմն դուլութ քաղաքն է) և Խաղաղ օվկիանոսի առափնյա այն մասի միջև, ուր Կոլումբիա գետը թափվում է ծով, այլ խոսքով ասած, Միացյալ Նահանգների ամբողջ տերիտորիայի համարյա մեկ երրորդը. Երկաթուղու կառուցումը շէր կարող այդտեղ կյանքի շկոլել խոշոր քաղաքներ ու ծաղկած շենքրւ ենթադրվում էր, որ Ապառածուտ լեռների այն մասի ընդունակութը, որով պետք է անցնի երկաթուղին, հարուստ է տարբեր մետաղների հանքավայրերով, իսկ դաշտերը կրերեն եգիպտացրենի ու ցորենի շտեսնված բերք. Դուլութ հաւցվող մթերքները կարելի է Ատլանտյան օվկիանոս ուղարկել ջրային ճանապարհով։ Մեծ լճերի սիստեմով և իրի ջրանցքով, շատ ավելի էժան փոխադրավարձով։ Սա ոչ պակաս վիթխարի ու փառահեղ հեռանկարներ էր բաց անում, քան անցկացումը Պանամայի ջրանցքի, որ ստեղծվում էր այդ ժամանակաշրջանում և պետք է ոչ պակաս շափով նպաստեր մարդկության բարօրությանը. Կուքը ոգեշնչվեց այդ նախագծով։ Քանի որ հայտնի էր, թե կառավարությունը հողային մեծ տարածություններ է տալիս երկաթգծի երկու կողմում

այն կազմակերպությանը, որը կկարողանա համեմատաբար կարծ ժամկետում կառուցել այն: Կուքը հաշվի առնելով, որ դա հնարավորություն կտա իրեն պահելու խոշորագույն գործարարի իր հողակը, ձեռնամուխ եղավ նախագծի իրագործմանը: Վերջինս հանդիպեց բավական առարկությունը ների ու ենթարկվեց խիստ քննադատության. սակայն վերջիվերջո ամենքն էլ համաձայնեցին, որ Քաղաքացիական պատերազմի ժամանակ երկրի ֆինանսական հզորությանը սատարել կարողացած մարդը, անշուշտ, գլուխ կրերի Հյուսիսային Խաղաղօվկիանոսայան երկաթուղու ֆինանսավորումը: Կուքը ձեռք զարկեց գործի՝ մտադրվելով այնքան լայնորեն հասարակությանը ծանոթացնել իր ձեռնարկման օգուտները, որ կարողանա գործել առանց որևէ խոշոր ֆինանսական կոնցեռնի օգնության և բաժնետոմսերն ու փայերը ծախել անմիջականորեն մսավաճառներին, հացավաճառներին ու մոմ ծախողներին:

Հսկայական օգուտ էր խոստանում այդ ծրագիրը: Դեռևս
Քաղաքացիական պատերազմի ժամանակ Կուբը մի փայ-
լուն միտք հղացավ՝ կառավարական խողորագույն փոխա-
ռությունների պարտատոմսերը ծախել անմիջականորեն
բնակչությանը: Ինչո՞ւ ուրեմն այդ մաները չկրկնել Հյուսի-
սային Խաղաղօվկիանոսյան սերտիֆիկատներով: Մի քանի
տարի շարունակ Կուբը շռնդակ կամպանիա էր մղում,
ուսումնասիրում ապագա երկաթուղու վայրերը, շինարար-
ների մեծաթիվ ջոկատներ ուղարկում այնտեղ, բնական
խիստ դժվարին պայմաններում հարյուրավոր մղոն ոելսա-
յին ուղիներ գցում և ծախում երաշխավորված շահարաժին
ունեցող մեծաքանակ բաժնետոմսեր: Եթե ինքը քիչ ավելի
իրազեկ լիներ երկաթուղային գործին, և այդքան վիթխարի
աշխատանքների ղեկավարումը մի մարդու ուժը պատեր,
թեկուզե հանճարեղ լիներ, ապա նրա գործը կբարգավաճեր,
ինչպես բարգավաճեց հետագայում, նոր կառավարման օրոք:
Սակայն ծանր ժամանակը՝ ֆրանս-պրուսական պատերազ-
մը, որ կապել էր եվրոպական կապիտալի ձեռքն ու ոտքը
ու եվրոպական գործարարներին անտարբեր դարձրել ամե-

բիկյան ընկերությունների նկատմամբ, նախանձը, զրպարտությունը, ոչ միշտ հմուտ տնտեսվարությունը իրար միացմած՝ կործանեցին Կուքի ձեռնարկությունը: 1873 թվականի սեպտեմբերի 18-ին «Ձեյ Կուք և Ընկ.» բանկիրային տունը սնանկացավ մոտավորապես ուժ միլիոն դոլարով, Հյուսիսային Խաղաղօվկիանոսյանը՝ ներդրված ամբողջ կապիտալով, այսինքն՝ հիսուն միլիոն դոլարից մի քիչ պակաս գումարով:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ տեղի ունեցավ, եթե նույն օրը և նույն ժամին սնանկացավ խոշորագույն ֆինանսիստը և փուլ եկավ ժամանակի ամենամեծ երկաթուղային ձեռնարկությունը: «Ֆինանսական որոտ պայծառ երկնքում», զրում էր Ֆիլադելֆիայի «Պրես» թերթը: «Եթե ամուսն շոգ կեսօրին ձյուն գար, ավելի զարմանք չէր պատճառի», կրկնում էր «Ինքուայերերը»: Լայն հասարակությունը, որ շլաշել էր Կուքի աննախընթաց հաջողություններից և անխորտակ էր համարում նրան, միանգամից շհասկացավ, թե ինչ պատահեց: Ոչ ոք չէր ուզում հավատալ: Ձեյ Կուքը սնանկ: Դատարկ խոսք է. այդպիսի բան չի կարող պատահել: Այնուամենայնիվ Կուքը սնանկացավ, և Նյու-Յորքի գրամական բորսան նույն օրը գրանցելով ևս մի քանի սնանկություն՝ մի շաբաթով դադարեցրեց իր գործունեությունը: «Էեյք Շոր» երկաթուղային ընկերությունը շկարողացավ վճարել մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դոլարի փոխառությունը: Վարկավորման միացյալ բաժնետիրական ընկերությունը, որ կապված էր Վանդերբիլդի հետ, փակեց իր դուռը՝ մինչ այդ դիմանալով վավանդատուների երկարատև ճնշումին: Վարկավորման Նյու-Յորքի ազգային ընկերությունը, որի շհրկիզվող դրամարկղերում պահվում էր ուժ հարյուր հազար դոլարի պետական արժեթուղթ, շկարողացավ դրա դիմաց ստանալ ո՛չ մի դոլար և նույնպես դադարեցրեց վճարումները: Հիմա արդեն ամենքն էլ վատքան կասկածեցին, տագնապալի լուրեր սկսեցին շրջել քաղաքում:

Աղետի առաջին բոթը Ֆիլադելֆիայում ծանուցողը

Եղավ նյութորքի բորսայի ներկայացուցիչների ուղարկած հակիրք հեռագիրը բորսայական կոմիտեի հասցեին. «Հուռեր են պտտվում «Զեյ Կուք և Ընկ.» սնանկության վերաբերյալ, Պատասխանեցեք»: Ոչ ոք չհավատաց դրան, և հեռագիրը մնաց անպատասխան: Ոչ ոքի մտքով այդպիսի բան չէր անցնում: Բորսայական աշխարհը պարզապես ուշք շգարձրեց այդ անհեթեթ հաղորդմանը: Քառուփերվուգը, որ անվտահաբար էր հետևում «Զեյ Կուք» ընկերության հաջողություններին և նրա պետի փայլուն հնարանքին, այսինքն՝ արժեթղթերը անմիջականորեն բնակչությանը ծածխելուն, թերևս միակ մարդն էր, որ հնարավոր կործանման կասկած էր տածում: Մի անգամ, ի պատասխան մեկի հարցապնդման, նա քննադատական մի հիանալի տեսություն գրեց այդ ընկերության գործունեության մասին՝ նշելով, որ գեռ երբեք այնպիսի վիթխարի մի ձեռնարկություն, ինչպես Հյուսիսային Խաղաղօվկիանոսյան երկաթուղին է, կախված չի եղել մի բանկիրային տան, ավելի ճիշտը, մի մարդու վարկունակությունից, և ինքը՝ Քառուփերվուգը, ոիսկու գործ է համարում գա: «Ես ընավ էլ համոզված չեմ, թե այն տերիտորիան, որով անցնում է հիշյալ երկաթուղին, այդքան արտասովոր է իր կլիմայական պայմաններով, հողով, անտառի որակով, հանքերի առատությամբ և այլն, ինչպես միստր Զեյ Կուքն ու նրա համախոհներն են նախշուն նկարագրում: Ես չեմ կարծում նույն, որ այդ ձեռնարկությունը ներկայումս կամ մոտիկ ապագայում կարողանա իր բաց թողած հսկայական քանակությամբ բաժնետոմսերին համապատասխան վաստակ բերել: Այդպիսի հարցադրումը ոից կոտ է և վտանգավոր»:

Հազիվ էր Քառուփերվուգը բորսայում կարդացել այնտեղ կախված հեռագիրը և արդեն սկսել էր մտածել, թե ինչ տեղի կունենա, եթե «Զեյ Կուք և Ընկ.» իսկապես սնանկ հայտարարի իրեն:

Երկար մտմտալու կարիք չեղավ: Նույն տախտակի վրա, առաջին հեռագրի կողքին, երեաց երկրորդը, որը ասում էր,

«Նյու-Յորք, սեպտեմբերի 18. «Զեյ Կուք և Ընկ.»-ը դադարեց-
րեց վճարումները»:

Քառակիերվուղն անմիջապես շհավատաց իր աշքին: Սոս-
կալի հուզմունք պատեց նրան՝ մտածելով, որ հասել է եր-
կար սպասած առիթը: Մյուս բորսայականների հետ նա
սլացավ երրորդ փողոցը, որտեղ № 114 տանն էր այդ հնա-
մենի ու նշանավոր բանկը: Նա ուզում էր սեփական աշխով
համոզվել: Մոռանալով իր սովորական հանդարտությունն
ու զսպվածությունը՝ չքաշվեց վազելով գնալ: Եթե ձիշտ է
դա, ապա եկել է իր ժամբ: Շուտով, շուտով ամենուրեք
կսկսվի խումապ, մեծ աղետ կպայթի: Բաժնետոմսերի գները
սրբնթաց կընկնեն: Պետք է լինել առաջացող իրադարձու-
թյունների շրջապատուցում: Անհրաժեշտ է հոգ տանել, որ իր
եղբայրները և Ուինգեյթը մոտերքում լինեն: Ինքը ցուցում-
ներ կտա նրանց երը և ինչ ծախելու և գնելու վերաբերյալ:
Հասավ իր ժամբ:

ԳԼՈՒԽ LIX

«Զեյ Կուք և Ընկ.» բանկիրային տունը՝ շնայած իր կա-
տարած հսկայական գործառնություններին, գտնվում էր
աղյուսից ու կրաքարից շինված մի խիստ համեստ, քառա-
հարկ և վաղուց արգեն տգեղ ու անհարմար համարվող շեն-
քում: Քառակիերվուղը հաճախ էր լինում այնտեղ: Բանկիրա-
յին տան սրահներում վազվում էին կոյուղու խողովակների
միջով գետափից այնտեղ հասնող խոշոր առնետներ: Բազ-
մաթիվ գործավարներ տքնում էին բանկային մատյանների
առաջ զաղալապտերների աղոտ լույսի տակ, կիսախավար և
վատ օդափոխվող սենյակներում: «Զեյ Կուք և Ընկ.» հարե-
վանն էր Զիրարդ ազգային բանկը, որտեղ առաջվա պես հա-
ջող զարգացնում էր իր գործունեությունը Քառակիերվուղի
բարեկամ Դեփսը և որտեղ կատարվում էին երրորդ փողոցի
ֆինանսական խոշորագույն գործառնությունները: Ճանա-
պարհին Ֆրենկը պատահեց եղբորը՝ էդուարդին, որ շտա-
պում էր նրա մոտ՝ Ուինգեյթից բերելով մի ծրար:

— Անմիշապես վազիր ու կանչիր Ուինգեյթին ու Զուլին, — գոշեց Քառուփերվուղը: — Այսօր խոշոր իրադարձություններ տեղի կունենան: Զեյ Կուքը դադարեցրել է վճարումները:

Առանց ծպտուն հանելու՝ էդուարդը սուրաց հանձնարարությունը կատարելու:

Քառուփերվուղը «Զեյ Կուք և Ընկ» բանկը հասնող առաջին մարդկանցից էր: Ի մեծագույն զարմանս նրա՝ կաղնեփայտե հաստամեստ, փակ դռան վրա, որով հաճախակի ելումուտ էր արել ինքը, փակցված էր հետևյալ դիմումը:

«Մեր հաճախորդներն: 1873 թվականի սեպտեմբերի 18: Սրտի կակիծով հայտարարում ենք, որ փոխառությունները մարելու վերաբերյալ անսպասելի կերպով ներկայացված պահանջների հետևանքով ֆիրման ստիպված է ժամանակավորապես դադարեցնել վճարումները: Մոտ օրերս մենք կկարողանանք մեր պարտատերերին հաշվետվություն տալ գործերի վիճակի մասին: Մինչ այդ մնում է, որ մենք խընդունք նրանց համբերատար ու ներողամիտ վերաբերմունք ունենան: Մենք հավատացած ենք, որ մեր պահանջներն զգալի շափով ավելի են պարտքերից:»

Զեյ Կուք և Ընկ»:

Քառուփերվուղի աշքերը հաղթական շողշողացին: Ուրիշ շատերի հետ ու էլ շրջկեց ու կրկին սլացավ բորսայի ուղղությամբ, երբ մի լրահավաք, որ եկել էր տեղեկություններ ստանալու, իզուր բախում էր բանկի մեծ դուռը, մինչև որ շեղանկյուն պատուհանից գլուխը դուրս հանեց բարապանը և հայտնեց, որ միստր Զեյ Կուքը գնացել է և այսօր ոչ ոքի շի ընդունի:

«Հիմա, — մտածեց Քառուփերվուղը, որին այդ խուճապը ոչ թե տնաքանդություն, այլ հաջողություն էր խոստանում, — հիմա են գիտեմ ինչ կանեմ: Ես կսկսեմ ծախել ամեն ինչ, բացարձակապես ումեն ինչ»:

Անցած անգամ, Զիկագոյի հրդեհից առաջացած խուճապի ժամանակ, նա չէր կարող ծախծինել իր պորտֆելում եղածը, նրա սեփական շահերը պահանջում էին մի շարք արժեթղթեր պահել: Հիմա նա ոշինչ չուներ կամ թերևս՝ յոթանասունհինգ հազար դոլար, որ կարողացել էր մանրմանը հավաքել: Եվ փա՛ռք աստծու: Ուրեմն անհաջողության դեպքում ոշինչ չի վտանգի, բացի «Ուինգեյթ և Ընկ.» հին ֆիրմայի բարի համբավից, իսկ դա քիչ էր անհանգստացնում նրան: Բայց առայժմ, որպես այդ ֆիրմայի ներկայացուցիչը բորսայում, նրա անունից առնելով ու ծախելով՝ նա կարող էր հսկայական կարողություն դիմել: Այն պահերին, երբ մեծ մասին կործանում էր պատկերանում, Քառուիերվուղը մտածում էր հարստանալ: Իր երկու եղբայրը և Ուինգեյթը գործելու են ըստ իր ցուցումների: Եթե կարիք լինի, երկու կամ երեք գործակալ ևս կընտրի իր համար: Հրաման կարծակի նրանց ծախել, շարունակ ծախել, թեկովել ընթացիկ գնից տասը, տասնհինգ, քսան և նույնիսկ երեսուն կնտցածր. ինքը կսկսի որսալ անզգույշներին, ճնշել շուկայի վրա, վախեցնել երկշուներին, ում իր գործառնությունները խիստ համարձակ կթվան, հետո էլ կսկսի գնել, գնել ու գնել էլ ավելի ցածր արժեքով՝ ծախած գործարքները ծածկելու և մաստակը հավաքելու համար:

Հոտառությունն ասում էր նրան, որ խուճապը կտարածվի ամենուրեք և երկարատև կլինի:

Հյուսիսային Խաղաղօվկիանոսյանը հարյուր միլիոնանոց ձեռնարկություն է: Այնտեղ ներդրված են հարյուր հազարավոր մարդկանց՝ մանր բանկիրների, առևտրականների, քահանաների, փաստաբանների, բժիշկների ու այրի կանանց խնայողությունները, երկրում սփոված զանազան հիմնարկությունների կապիտալները. բոլորն էլ վստահել էին Ձեզ Կուքի ազնվությանն ու գործարարությանը: Մի անգամ Քառուիերվուղը առիթ ունեցավ տեսնելու մի շքեղ պրոսպեկտում քարտեզով հանդերձ, որ, չգիտես ինչով, այրվող Զիկագոյի հրդեհն էր հիշեցնում. այդ պրոսպեկտուսի վրա շրջագծված էր Կուքի վերահսկողության տակ գտնվող երկրա-

մասը, որով անցնում էր հսկայական տարածություններ պատող Հյուսիսային Խաղաղօվկիանոսյան երկաթուղին։ Այդ ուղին սկսվում էր Դուկութից՝ «քաղցր ջրերի մայրաքաղաքից» (ինչպես կծու հեգնանքով անվանում էր նրան կոնդրեսում արտասանած իր ճառում դոկտոր Պրոկտոր Նոտր) և Միստրուրիի վերին հոսանքով ու Ապառաժուտ լեռների վրայով հասնում էր Խաղաղ օվկիանոսին։ Քառուփերվուղը հասկանում էր, որ Կուքը ձեանում է, թե յուրացնում է այդ պետական պարզեց՝ հազար շորս հարյուր մղոն երկարություն ունեցող վիթխարի երկրամասը. դա ընդամենը մի հսկայական խաղ էր։ Բացառված չէ, անշոշտ, որ այդտեղ կան ոսկու, արծաթի ու պղնձի համքեր։ Հողն էլ պիտանի է մշակման համար, ավելի ճիշտ, պիտանի կլինի ժամանակին։ Իսկ հիմա ի՞նչ օգուտ դրանից. հիմա պիտանի է թերևս մի բանի՝ տիսմարների երեսակայությունը բորբոքելու համար, ոչ ավելի։ Այդ հողերը յուրացված չեն ու դեռ շատ տարիներ չեն յրացվի։ Հազարավոր մարդիկ իրենց խնայողությունները տվել են ուղին կառուցելու, հազարներ պետք է տնաքանդ լինեն, եթե Կուքի ձեռնարկությունը սնանկանա։ Եվ ահա դա տեղի՝ է ունեցել։ Անսահման կլինեն տուժածների հոսահատությունն ու զայրույթը։ Երկար, շատ երկար տարիներ կանցնեն, մինչև որ մարդկանց մեջ վերականգնվի վստահությունը, վերանա վախր։ Հիմա հասել է ի՞ր ժամը։ Եկել է վաղուց սպասված առիթը։ Գիշերը աստղերի սառը և տիսուր լույսի տակ թափառող գայլի նման Քառուփերվուղը զննում էր պարզամիտ մարդկանց հեզ բազմությունը՝ իմանալով, թե ինչ գնով՝ Հնարելու նրանք իրենց անտեղյակության ու միամտության համար։

Քառուփերվուղը շտապեց վերադառնալ բորսա՝ այն նույն սրահը, որտեղ երկու տարի առաջ ինքը այնպես անհույս պայքար էր մղում։ Տեսնելով, որ իր եղբայրներն ու գործընկերները դեռ այնտեղ չեն, սկսեց ինքը ծախել ինչ պատահի։ Չորս բոլորը իսկական դժոխք էր։ Թղթատար մանշուկներն ու գործակալները ամեն կողմից ներս էին խուժում։ Հրամաններ բերելով ահարեկված բորսայականներից ծա-

խե՛լ ու ծախել, ապա քիշ հետո՝ գնե՛լ։ Սյուները, որոնց շուրջ գործարքներ էին կատարվում, ճաքում ու երերում էին խլրտացող բորսայականների ու միջնորդների ձնշումից։ Փողոցում, «Զեյ Կուք և Ընկ.», «Կալարք և Ընկ.» բանկիրային տների, Զիրարդ ազգային բանկի և ֆինանսական այլ հիմնարկությունների շենքերի առաջ արդեն հսկայական բազմություններ էին խոնավել։ Ամեն ոք շտապում էր այդտեղ իմանալու ինչ է պատահել, ետ առնելու իր ավանդը, գոնք մի կերպ պաշտպանելու իր շահերը։ Ոստիկանը ձերբակալեց մի լրագրավաճառ մանշուկի, որ գոռում էր, թե սնանկացել է «Զեյ Կուքը», բայց մեկ է, մեծ աղետի բոթը տարածվում էր տափաստանային հրեհի արագությամբ։

Այդ խումապահար մարդկանց մեջ Քառուփերվուդը մնացել էր անխոռվ, սառն ու անալլայլ. նա այն նույն Քառուփերվուդն էր, որ բանտում լրջադեմ կատարում էր իր օրական առաջադրանքը՝ տասը նստոց էր հյուսում, թակարդներ էր լարում առնետների դեմ և կատարյալ լուսթյան ու մենակության մեջ մշակում էր խցիկին կից պստիկ պարտեզը։ Հիմա միայն նա լի էր ուժով ու ներքին եռանդով։ Նա արդեն բավական ժամանակ նորից եղել էր բորսայում, որպեսզի կարողանար հարգանք ներշնչել իրեն ճանաշող բոլոր մարդկանց։ Դժվարությամբ հասնելով հուզված և գոռզուալուց խոպոտած բազմության խռնված կետին՝ նա սկսեց առաջարկել նույն արժեթղթերը, որ ուրիշներն էին առաջարկում, սակայն շատ մեծ քանակությամբ և այնպիսի ցածր գներով, որոնք չէին կարող շգայթակղեցնել նրանց, ովքեր ուզում էին օգտվել բորսայական գների տարբերությունից։ Սնակությունը հայտարարելու պահին նյու-Յուք Սենտրալի բաժնետոմսերը գնահատվում էին 104 7/8, Ռոդ-Այլենդին՝ 108 7/8, Ուեսթերն-Յունիոնին՝ 92 1/2, Ուոքեշին՝ 70 1/4, Պանամային՝ 117 3/8, Կենտրոնական Խաղաղօվկիանոսային՝ 99 5/8, Սենտ-Պոլին՝ 51, Հաննիբալ և Սենտ-Ջոզեֆին՝ 48, Հյուսիս-արևմտյան՝ 63, Խաղաղօվկիանոսայան՝ 26 3/4, և վերջապես Օհայո-Միսիսիպիին՝ 38 3/4։ Այն ֆիրման, որի ետեր թաքնվել էր Քառուփերվուդը, այդ բաժնետոմսերից այդ-

քան մեծ քանակությամբ շուներ: Ոչ մի հաճախորդ տակավին հրաման չէր տվել դրանք ծախելու վերաբերյալ, սակայն Քառուփերվուղն արդեն ծախում էր ու ծախում ամեն ոքի, ով ցանկություն էր հայտնում առնել դրանք այնպիսի գներով, որոնք (Քառուփերվուղը հաստատ գիտեր) պետք է դայթակղեցնեին գնորդներին:

— Նյու-Յորք Սենտրալի հինգ հազար բաժնետոմս իննսունինով, իննսունովով իննսունվեցով... իննսուն-հինգով... իննսունշորսով... իննսուներեքով... իննսուներկուսով... իննսունմեծով... իննսունով... ութսունինով,— լսվուած էր շարունակ նրա ձայնը՝ իսկ երբ գործարքներ չէին կատարվում բավական արագ, նա անցնում էր այլ արժեթղթերի՝ Ռոդ-Այլենդ, Պանամա, Կենտրոնական Խաղաղօվկիանոսյան, Ուեստերն-Յունիոն, Հյուսիս-արևմտյան, Խաղաղօվկիանոսյան: Նկատելով եղբորն ու Ռինգեյթին, որոնք շտապ մտան սրահ, նա կանգ առավ՝ նրանց անհրաժեշտ հրահանգներ տալու համար:

— Մախեցեք ամեն ինչ, ի՞նչ հնարավոր է,— կամացուկ ասաց նա, — թեկուզե գնից տասնհինգ կետ պակաս ավելի էժան առաջմ շարժե. գնեցեք բացարձակապես այն ամենը, ինչ կառաջարկեն ավելի ցածր գնով: Է՛ղ, դու հետեւ վիր, տե՛ս, թե քաղաքային երկաթուղու բաժնետոմսերը գնից տասնհինգ կետ պակաս հո շե՞ն ծախվում. իսկ դու, ջո՛, մոտիկ կա՛ց և գնիր, երբ ես ասեմ:

Փոքրիկ պատշամբում երևաց բորսայական կոմիտեի քարտուղարը: Ժամը ուղիղ մեկ անց կես էր:

— «Կլարկ և Ընկերությունը» հենց նոր դադարեցրեց վճարումները, — հայտարեց նա:

— «Թայ և Ընկերությունը», — նորից լսվեց նրա ձայնը ժամը մեկից քառասուն անց, — ծանուցում է, որ դադարեցրել է վճարումները:

— Ֆիլադելֆիայի առաջին ազգային բանկը, — ազդարեց նա ժամը երկուսին, — հայտնել է մեզ, որ չի կառող այլևս վճարում կատարել:

Ցուլրաքանչյուր այդպիսի հաղորդումից հետո, հիմա,

ինչպես և առաջ, լսվում էր գոնգի լոռության կոչող զնդոցը, իսկ բազմությունն արձակում էր միահամուռ, սրտաճմլիկ տնքոց. «Վա՞-ա՞-այ»:

«Թայ և Ընկ.» Քառուփերվուղը մի վայրկյան կանգ առավ այդ անունը լսելիս, ահա նրա վերջն էլ եկավ: Եվ անմիջապես դարձալ մկնեց գոռուլ իր առաջարկները:

Երբ եկավ բորսան միակելու ժամը, Քառուփերվուղը խօցկվելով դիմեց դեպի դուռը՝ սերթուղը պատոված, փողկապը մի կողմ սահած, օձիքն արձակված և առանց գլխարկի, որ շքացել էր որևէ տեղ, սակայն անխոռվ, զգաստ ու բարեկիրթ:

— Հը, է՛դ, գործերն ինչպե՞ս են,— հարցրեց նա՝ հանդիպելով եղբորը:

Սա էլ նույնպիսի բգկտված տեսք ուներ՝ տանջված ու հոգնաբեկ:

— Ողորմա՞ծ տեր,— գոշեց էղը՝ թեղանիքներն ուղղելով:— Կյանքումս այսպիսի բան չէի տեսել: Քիչ էր մնացել տկլոր մնայի:

— Քաղաքային երկաթուղու բաժնետոմսերը մի բան արեցի՞ր:

— Գնեցի հինգ հազար հատ կամ մոտավորապես այդքան:

— Կարծում եմ, որ հիմա պետք է գնանք «Գրին» (դա Ֆիլադելֆիայի լավագույն հյուրանոցներից մեկն էր և ուներ հարշալի՝ ճաշարան),— ասաց Քառուփերվուղը:— Վերջը դեռ չի եկել: Այնտեղ շարունակվելու են գործարքները:

Նա որոնեց գտավ Զոյին և Ուինգեյթին, և բոլորն էլ հեռացան՝ ճանապարհին կատարելով իրենց հիմնական առուժախի հանրագումարը:

Ինչպես ենթադրում էր նա, բորբոքումը շհանդարտվեց անգամ ուշ երեկոյան: Ժողովրդի բազմություններ դեռ կանգնած էին երրորդ փողոցում՝ «Զեյ Կուք և Ընկ.» ու այլ բանկերի դռների առաջ, հուսալով, որ դեպքերը կարող են բարեհաջող ընթացք ստանալ: Բորսայականների համար վեճի ու տենդագին հուզման կենտրոնը հիմա տեղափոխվել էր

«Գրին» հյուրանոցը, որի նախասրահն ու բոլոր միջանցք-ները սեպտեմբեր 18-ի երեկոյան լեփ-լեցուն էին բանկիր-ներով, միջնորդներով ու սպեկուլյանտներով։ Ճիշտն ասած, բորսան իր ամբողջ կազմով տեղափոխվել էր այժեղութեան է, հիմա որտեղից փող պիտի ճարվի։ ահա թե ինչ էր մտածում ու ասում ամեն ոք։ Նյու-Յորքից ստեղ-ստեղ նոր սնանկությունների լուրեր էին հասնում։ Թանգեր ու տրեստներ էին խորտակվում, ինչպես ծառերը՝ մրրիկի ժամանակը Ամենուրեք համող Քառուփերվուղը, տեսնելով այն ամենը, ինչ կարելի էր նկատել, և լսելով ամեն ինչ, որ կարելի էր լսել, կատարեց գործարքներ, որ բորսայում համարվում էին ապօրինի, բայց այնպիսի գործարքներ, որ կատարում էին ուրիշները։ Շուտով նա նկատեց, որ իր շուրջը պտտվում են Մոլենհաուսերի և Սիմփոնի գործակալները, և նախօրոք ուղախանում էր՝ մտածելով, որ փառավորապես փետրահան կանի նրանց մոտ օրերս։ Քառուփերվուղը դեռ չէր որոշել՝ արդյոք ինքը կդառնա՞ որևէ քաղաքային երկաթգծի տերը, բայց համենայն դեպս այդպիսին ձեռք բերելու հնարավորություն կունենա։ Նյու-Յորքից և այլ քաղաքներից հասած շշովներից ու հաղորդումներից նա գիտեր, որ վերին աստիճանի ծանր է այն անձանց կացությունը, ովքեր հաշիվները կառուցել են բնականոն իրադրությունը արագ վերականգնվելու վրա։ Քառուփերվուղի մտքով անգամ շանցավ գնալ տուն, քանի այդտեղ մնացել էր թեկուզ մի մարդ, մինչդեռ արդեն լույսը բացվում էր։

Եկավ ուրբաթ օրը՝ նախագուշակելով ոչ սակավաթիվ ճակատագրական ու քեր։ Արդյոք դա չի դառնա շարաբաստիկ «սև ուրբաթի» կրկնությունը։ Քառուփերվուղը եկավ Ուինգեյթ ֆիրմայի գրասենյակը, երբ քաղաքը նոր էր արթնանում։ Նա նախօրոք բոլոր մանրամասնություններով մշակել էր օրվա ամբողջ ծրագիրը՝ բոլորովին այլ կերպ զգալով իրեն, քան երկու տարի առաջվա խուճապի ժամանակ։ Երեկ, չնայած տեղի ունեցածի անակնկալ լինելուն, նա հարյուր հիսուն հազար դոլար «շինեց» և այսօր էլ հույս

ուներ վաստակել ոչ պակաս, թերևս ավելի: Անկարելի է առաջուց որոշել, թե որքան կհաջողվի վաստակել, մտածում էր Քառուփերվութը. Կարեւոր է միայն, որ իր փոքրաթիվ միավորման բոլոր անդամները աշխատեն բավական պարզ-որոշ և անառարկելիորեն ենթարկվեն իրեն: Շատերը հենց առավոտից իմացան, որ կործանվել են, երբ հայտարարեցին գեռես «Քաղաքացիական պատերազմի շրջանում Կուրքի հետ հավատարմաբար աշխատակցող «Ֆիսկ և Հել» ֆիրմայի սնանկությունը:

Բանկը բացելու առաջին իսկ տասնհինգ րոպեում «Ֆիսկ և Հել»-ից պահանջեցին մեկովես միլիոն դոլարի ավանդ, և նրանք հարկադրված եղան իմկույն ևեթ բանկը փակել: Ըստ շշուկների՝ այդ ընկերության սնանկանալու հանցանքն ընկնում էր Կենտրոնական Խաղաղօվկիանոսյան երկաթուղու վարչության (որը գլխավորում էր Քոլինզ Հանտինգտոնը) և Զեզապիկ-Օհայո երկաթուղու վրա: Ավանդատուների համառ ճնշմանը երկար ժամանակ դիմացավ Վարկավորման բաժնետիրական ընկերությունը: Նյու-Յորքում տեղի ունեցած նոր սնանկացումների հաղորդագրություններն անընդհատ սաստկացնում էին խուճապը, որը բարենպատ էր Քառուփերվութինք նա շարունակ ծախում էր դեռ համեմատաբար բարձր գներով և գնում արդեն բավական ցածր գներով: Կեսօրին նա պարզեց, որ հարյուր հազար դոլար մնաց իրեն: Ժամը երկուամբ այդ գումարը եռապատկվեց: Օրվա վերջը՝ ժամը երեքից մինչև յոթը, նա հատկացրեց հաշվեհարդարն անելուն և գործերը կարգի բերելուն, իսկ յոթից մինչև գիշերվա մեկը (անգամ ճաշելու ժամանակ շունենալով) գրաղվեց տեղեկություններ հավաքելով և հաջորդ օրվան պատրաստվելով: Շաբաթ օրը Քառուփերվութը գործեց ոչ պակաս եռանգով, իսկ կիրակին դարձյալ հաշիվներն ամփոփեց և երկուշաբթի վաղ առավոտից արդէն բորսայում էր: Կեսօրին վերջնականապես պարզվեց, որ ինքը (անգամ հանելով որոշ վնասներ ու կասկածելի գումարներ) դարձել է միլիոնատեր: Հիմա սքանչելի ապագա էր բացվում նրա առաջ:

Օրվա վերջին իր գրասեղանի առաջ նստած ու պատուհանից նայելով Երբորդ փողոցին, որով դեռևս երթևեկում էին բորսայականներ, լրատարներ ու հուզված ավանդատուններ, նա որոշեց, որ եկել է Ֆիլադելֆիայից Հեռանալու իր պահը։ Միջնորդի գործը ո՛չ այստեղ, ո՛չ ևս մի այլ քաղաքում այլևս չեր հետաքրքրում նրան։ Այս խուճապը և երկու տարի առաջ կատարված աղետի վերհուշը Քառուփերվուդին բուժեցին թե՛ բորսայական խաղի և թե՛ Ֆիլադելֆիա քաղաքի սիրուց։ Բախտավոր շատ տարիներից հետո նա մի ժամանակ խիստ դժբախտ էր այդ քաղաքում, իսկ կալանավորի խարանը այստեղ ընդմիշտ փակում էր նրա առաջ մուտքը դեպի այն շրջանները, ուր նա կուգենար մտնել։ Այժմ, երբ գործարարի նրա համբավը վերականգնված էր, երբ ներել էին նրան մի հանցանքի համար, որ նա չէր կատարել (Քառուփերվուդը հույս ուներ, որ ամենքն էլ հավատում են դրան), այլ անելիք չէր մնացել, եթե ոչ հեռանալ Ֆիլադելֆիայից և սկսել մի նոր ասպարեզ որոնել։

«Եթե ես մարսեմ սա, — ասում էր Ֆրենկը իրեն, — ապա պետք է վերջակետ դնել։ Կմեկնեմ Արևելուտք և կզբազվեմ քոլորովին այլ գործով»։ Նա արդեն մտածում էր քաղաքային երկաթուղիների, հողամասերի առուծախի, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների և նույնիսկ հանքեր շահագործելով մասին, անշուշտ, միանգամայն օրինական հիմունքներով։

«Ինձ լավ դաս տրվեց, — մտածեց նա վեր կենալով ու պատրաստվելով դուրս գալ։ — Ես նույնքան հարուստ եմ, ինչպես առաջ, իսկ ժամանակ քիչ է կորսված։ Մի անգամ ինձ թակարդը գցեցին, բայց այլաս չի կրկնվի»։

Նա բանակցություններ էր վարում Ուկնգեյթի հետ՝ շարունակելու աշխատանքը նախկին պայմաններով, անկեղծ մտադրություն ունենալով նվիրվել դրան, իրեն հատուկ եռանդով, սակայն նրա ուղեղում ստեպ-ստեպ հառնում էր այս ուրախ միտքը։

«Ես միլոնատեր եմ, աղաս մարդ Երեսունվեց տարնեական եմ և դեռ երկար եմ ապրելու»։

Այսպես մտածելով՝ նա գնաց էլլինի մոտ, ապագայի մասին միասին երազելու:

Ընդամենը երեք ամիս հետո գնացքը սլանալով Պենսիլվանիայի լեռներով և Օհայոյի ու Ինդիանայի հարթավայրերով՝ Արևմուտք էր տանում այդ միլիոնատիրոջը, որ, չնայած իր հարստության, երիտասարդության ու հիանալի առողջության՝ վախվսելով էր մտածում, թե ինչ է սպասում իրեն: Բազմակողմանի ու երկարատև խորհրդածություններից հետո նա եկավ այն եղրակացության, որ Արևմուտքը հարուստ է ամեն տեսակ հնարավորություններով: Նա ուշադիր ուսումնասիրում էր Նյու-Յորքի հաշվային պալատի ամփոփագրերը, ինչպես նաև բանկերի հաշվեկշիռները, հետևում, թե ուր է շարժվում ոսկին և համոզվեց, վերջապես, որ մեծ քանակությամբ հոսում է Զիկագո: Քառուիերվուղը ֆինանսների ակնառու գիտակ էր և հասկանում էր, թե ինչ է նշանակում ոսկու հոսանքի ուղղությունը: Գործարար կյանքը բարգավաճում է այնտեղ, ուր հոսում է դա, ամեն ինչ եռում է այնտեղ, ամեն ինչ գտնվում անընդհատ աճի վիճակում: Հիմա նա ուզում էր սեփական աշքով տեսնել, թե ինչ կարելի է սպասել Արևմուտքից:

Երկու տարի էր անցել այն օրվանից, ինչ Դուկութում ասուպի պես փայլեց երիտասարդ ֆինանսիստը, Զիկագոյի գործարար աշխարհն էլ դարձավ Արևմուտքի արտադրած ցորենի հսկայական պաշարների իրացումով զբաղվող «Ֆրենկ Քառուիերվուղ» հացահատիկային-կոմիսիոն գրասենյակի առաջին քայլերի վկան, միսիս Քառուիերվուղը, որ առաջվագես ապրում էր Ֆիլադելֆիայում, առանց ավելորդ աղմուկ բարձրացնելու, հավանորեն սեփական ցանկությամբ, ապահարզան տվեց ամուսնուն: Ժամանակը ողորմած եղավ նրա հանդեպ: Միսիս Քառուիերվուղի նյութական վիճակը, որ վերջերս այնքան ողբալի էր, լավացավ, և դարձյալ սկսեց ապրել Արևմտյան թաղամասում, իր քույրերից մեկի հարևանությամբ, մի հարմար ու գեղեցիկ՝ միջին կարողության տեր բուրժուայի տիպիկ առանձնատան մեջ: Հիմա նա նորից խիստ աստվածավախ էր դարձել: Նրա զավակները՝ Ֆրենկն ու Լի-

լիանը, մասնավոր դպրոց էին գնում ու երեկոյան վերադառնում էին մոր մոտ: Տնային գործերի մեծ մասը կատարում էր ծերունի նեզր Սիմսը: Կիրակի օրերը լիլիանին սովորաբար այցելում էին ծեր Քառուփերվուղները, որոնց նյութական դժվարությունները նույնպես անցած-գնացած բան էին, բայց երկուսն էլ մի տեսակ սակված ու հոգնած էին երևում. քամին այլևս չէր ուռեցնում նրանց երբեմնի այնքան երջանիկ կյանքի առագաստները: Հայր Քառուփերվուղը բավական փող ուներ, որպեսզի փոքր պաշտոնյայի տաղտկալի աշխատանք չկատարեր, բայց կյանքը վերադասավորելու ցանկություն այլևս չուներ: Նա ծերացել էր, թուղացել և ամեն ինչի նկատմամբ գարձել անտարբեր: Վերհիշելով անցած տարիներին իր շուրջը իշխող պատիվն ու աշխուժությունը՝ իրեն այլ մարդէր զգում: Անցել էին ցանկությունները, անցել էր համարձակությունը, մնացել էր միայն մահվան սպասումը:

Երբեմն իր նախկին եղբորկնոջը այցի էր գալիս նաև Աննա-Աղելախիդա Քառուփերվուղը, որ հիմա ջրամատակարարման քաղաքային բաժնի պաշտոնյա էր: Նա սիրում էր խորհրդածել կյանքի անըմբոնելի հեղհեղուկովթյունների մասին և հետաքրքրությամբ էր հետևում իր եղբոր կարիերային, որին, ինչպես երեւում էր, բախտն ինքն է կանխորոշել միշտ առաջին դերերը կատարելու, սակայն հրաժարվում էր հասկանալ նրան: Համոզվելով, որ բոլոր նրանք, ովքեր կապված են: Նրան, ունենում են անկուսմներ ու թոփշներ, նայած նրա հաջողություններին, Աննան խճճվում էր՝ կռահումներ անելով, թե ի՞նչ բան է բարոյականովթյունն ու արդարությունն այս աշխարհում: Կան բոլորի՝ մարդ պարտադիր սկզբունքներ, թե՝ միայն մարդիկ են այդպես կարծում: Բայց ավելի շատ բացառություններ ես տեսնում այդ կանոններից: Իր եղբայրը՝ անպայման չէր ղեկավարվել այդ սկզբունքներով, մինչեւ նորից առաջ ընթացավ: Ի՞նչ է ուրեմն նշանակում դա: Միսիս Քառուփերվուղը՝ նրա նախկին կինը, դատապարտում էր Ֆրենկի գործելավերպը, բայց հաճությամբ օգտըվում էր նրա բարգավաճման բոլոր բարիքներից: Ինչպես զուգադրել սա բարոյախոսության ըմբռնման հետ:

Քառուփերվուղի ամեն մի քայլը, նրա բոլոր գործերն ու տենչերը հայտնի էին էյլին Բաթլերին: Ֆրենկի ու Լիլիանի ապահովանից քիչ անց, Ֆրենկի հաճախակի Ֆիլադելֆիա գալուց ու այն նոր աշխարհը մեկնելուց հետո, որտեղ նա այժմ ծավալում էր իր գործունեովիզումը, նրանք մի անգամ, ձմռան մի օր, մեկնեցին միասին: Էյլինն ասաց մորը, որը ցանկացավ ապրել նորայի մոտ, թե ինքը սիրել է մի նախկին բանկիրի և պատրաստվում է ամուսնանալ նրա հետ: Մայրը ստիպված եղավ բավարարվել այդ բացատրությամբ և տալ իր համաձայնությունը:

Այսպես էլ էյլինի համար ընդմիշտ վերջացավ նախկին կյանքը իրեն ծանոթ հին աշխարհում: Այժմ նրան սպասում էր Զիկագոն, որ, ըստ Քառուփերվուղի պատմածների, շատ ավելի փայլում ապագա էր խոստանում, քան այն, որին կարող էին հույս ունենալ Ֆիլադելֆիայում:

— Հիանալի է, չէ՞՝ որ վերջապես մեկնում ենք, — հարց-րեց էյլինը:

— Համենայն դեպս խելացի քայլ է, — պատասխանեց Քառուփերվուղը:

Կա մի ձուկ, որի գիտական անունը *Mycteroptera Bonacis* է, իսկ ժողովուրդը ասում է ծովային սև պերկես. այդ ձուկը արժանի է, որ խոսենք նրա մասին այն ամենի կապակցությամբ, ինչ պատմվեց վերևում: Սև պերկեսը շատ խոշոր ձուկ է, երբեմն նրա քաշը հասնում է երկու հարյուր հիսուն ֆունտի, ապրում է երկար ու չի իմանում ինչ բան է վտանգը, որովհետև օժտված է շրջապատին հարմարվելու զարմանալի ընդունակությամբ: Այն խորամանկ բանը, որ մենք անվանում ենք ստեղծարար ուժ և օժտում բարության ոգով, մեր պատկերացմամբ, միշտ կարգավորում է այս աշխարհում կյանքը այնպես, որ հաղթոամ են ազնվությունն ու առաքինությունը: Սակայն կարծես ի խրատ մեզ բնությունն ստեղծել է ծովային սև պերկես: Ուշադիր զննելով մեզ շրջապատող աշխարհը, մենք երևան ենք բերում դրա նման, սակայն սակավ նենք մի շարք հանցագործներ. այդպես է սարդը, որ սստայն

Է գործում անհոգ ճանձի համար, այդպես է սքանչելի Երօ-
սեցա-ն (ցողախոտը), որի կարմիր բաժակը բացվում է ու իր
մեջ ընդունում նրա գեղեցկությամբ գերված արարածներին,
ապա կրկին փակվում է՝ դրանց կուլ տալու համար. կամ թե
ծիածանակերպ մեղուզան, որ տարածում է հյուսիսափայլի
զմայլելի ճաճանչներին նմանող շոշափուկները և խոշտան-
գում ու տանջում այդ շողջողուն մամլակի մեջ ընկած ամեն
մի կենդանի շունչ: Եվ մարդն էլ առանց մտքով անցկացնե-
լու փոս է փորում իր համար, ծուղակ է լարում իրեն: Պատ-
րանքը շլացրել է նրան, և ահա նա բռնված է հանգամանք-
ների թակարդում:

Կանաչ շրերի մութ խորխորատներում շարժվող Mycte-
roperga-ն մի որոշակի ապացույց է այն բանի, որ բնության
արարչական հանճարը գուրկ է բարու նախասկզբից, և դա
հաստատվում է ամեն մի քայլափոխի: Mycteroperga-ի գե-
րազանցությունը ստորշրյա թագավորության մյուս բնակիշ-
ներից այն է, որ նա օժտված է ձևանալու համարյա ան-
հավատալի ընդունակությամբ, իսկ սա էլ պայմանավորված
է նրա մաշկի պիգմենտացիայով: Առաջադիմելով էլեկտրա-
մեխանիկայի ասպարեզով, մենք հպարտանում ենք, որ մի
ակնթարթում կարող ենք մի փառահեղ նկար փոխարինել մի
ուրիշով, հանդիսատեսի առաջ ծավալել հանկարծակի հառ-
նող ու նորից անհետացող տեսիլների երկար շարանը: Սա-
կայն Mycteroperga-ն ավելի տիրակալորեն է օգտագործում
իր արտաքինը: Ով երկար է նայում նրան, ակամա են-
թարկվում է այն զգացմունքին, որ նրա առաջ գտնվում է մի
ֆանտասիկ, գերբնական արարած. այնքա՞ն փայլուն է
խարեկանք առաջացնելու նրա ընդունակությունը: Սև վիճա-
կից վայրկենապես դառնում է սպիտակ. թուխ-հողագույն
էր, հանկարծ ստանում է զրի հիանալի կանաչավուն գույն:
Նրա վրա սփռված բծերը ձևափոխվում են, ինչպես երկնքի
ամպերը: Եվ շի կարելի շզարմանալ, թե որքա՞ն բազմազան
են նրա նենագ հնարքները:

Ծովածոցի հատակին, տիղմի մեջ պառկած, նա կարող
է հարմարվել այդ տիղմին: Ծվարելով փարթամ զրիմուռ-

ների հովանու տակ՝ ընդունում է նրանց երանգը։ Հույսի շերտում շարժվելիս, նա էլ թվում է զրի մեջ աղոտ առկայծող լույս։ Ապշեցուցիչ բան է հետապնդումից ճողովրելու և գաղտագողի հարձակվելու նրա ունակությունը։

Իսկ ի՞նչ նպատակով է սև պերկեսին այս առանձնահատկությամբ օժտել ամենազոր և խելացի բնությունը։ Որպեսզի խաբելու անընդունակ դարձնի կամ թե տա նրան շփոխվող արտաքի՞ն, որով կճանաչի նրան ամեն մի պարզամիտ ու կենսասեր ձուկ։ Եվ կամ Myctegoregca-ն ստեղծելիս բնությունը գործի է դրել նենգությունը, դրուժանությունը, կեղծությունը։ Զէ՞ որ նրան կարելի է ընդունել որպես խաբեության գործիք, ստի մարմնացում, որպես մի արարած, որին կանխորոշված է թվակ ոչ այնպես, ինչպիսին է, պատկերել այն, որի հետ ոչ մի ընդհանրություն չունի, որ իր սնունդը պետք է ճարի նենգությամբ, որի հանգեց անզոր է անգամ ամենաուժեղ թշնամին։ Եվ այսպիսի ենթադրությունները ճիշտ կլինի։

Կարելի՞ է արդյոք ճանաշելով Myctegoregca-ի նման մի արարածի՝ ասել, որ բարի, բարեգործ և ամենազոր արարչական ուժը երբեք որևէ խաբեական ու նենգ բան չի ստեղծում։ Եվ կամ թե դուք կպատասխանեք, որ մեզ շրջապատող տեսանելի աշխարհը լոկ պատրանք է։ Բայց եթե այդպես է, ապա որտեղից առաջ եկան տասը պատվիրանները, որտեղից ծագեց արդարության պատրանքը, ինչո՞ւ մարդիկ միշտ երազել են բարին, և ի՞նչ օֆուտ են տվել նրանց այդ երազանքները։

ՄՈԳԱԿԱՆ ԲՅՈՒՐԵԴ

Ընթերցո՞ղ, լինես դու միստիկ, կամ վհուկ, կամ իրազեկ թու՛ անքների, կանխագուշակ երազների, կախարդական թասի և բյուրեղապակե գնդի միջոցով գուշակելու գաղտնիքներին և դիտես այդ առեղծվածային խորությունները, կտեսնես այն զույգին սպասող գեպքերի շղթան, որը հիմա կարծես

շտապում է մի նոր ու խնդուն կյանքի ընդառաջ։ Կախարդական կաթսայի գոլորշու մեջ, փայլվուն բյուրեղապակու նշուլման մեջ քո առաջ կերևային քաղաքներ, քաղաքներ, քաղաքներ, ապարանքների, փառաշուր երթևեկների, թանկարժեք իրերի, գեղեցկության աշխարհը՝ վիթխարի մի քաղաք՝ մի մարդու կամքով աղետի մատնված. ահագին մի պետություն՝ այն ուժի մոտ ույրանալիս, որին ի վիճակի չէ հաղթել. Հըսկացաւում ու մահներ՝ պատերին մեծագույն վարպետների անգին կտավները, փառահեղությամբ հավասարը չունեցող մի պալատ. ամբողջ մարդկությունը՝ ժամանակ առ ժամանակ զարմանքով մի անուն արտաքերելիս։

Եվ վայ նրան, վայ նրան, վայ նրան։

Այն երեք վհուկները, որոնք փոթորկի պահին անապատում ողջունեցին Մակրեթին, եթե տեսնեին Քառուիերվուդին, կարող էին ասել.

— Ողջույն քեզ, ո՞վ տիրակալ երկաթուղային հսկայական ցանցի։ Ողջույն քեզ, Ֆրե՛նկ Քառուիերվուդ՝ կառուցողդ փառահեղագույն ապարանքի։ Ողջույն քեզ, Ֆրե՛նկ Քառուիերվուդ՝ հովանավոր արվեստների, տիրողդ անհամար հարստությունների, փառավորվելու ես դու դարեցդար։

Սակայն վհուկ քուրերը սուստ ասած կլինեին, որովհետեւ նրա փառքին խառն էր Մեռյալ ծովի սաղմերի աճյունը՝ խելքը, որ ընդունակ չէ ցանկությամբ բռնկվելու, փառահեղությամբ հագենալու սիրտը, որ վաղուց արդեն հոգնել է պորյա փորձառությամբ։ Հոգին, որ սառն է, ինչպես լուսինը անհողմ գիշերը։

Իսկ էլլինին նրանք, ինչպես Մակրուֆին, կարող էին խոստանալ բազմաթիվ տագնապներ, խորտակվող շատ ու շատ հույսեր։ Ունենալ և չունենալ։ Հարստության ու ճոխության մեջ՝ չունենալու թախիծ։ Փայլուն հասարակություն, որ մի ակնթարթ բացեց նրա առաջ իր դռները, որպեսզի անմիջապես ի բաց վանի նրան։ Սեր, որ թուավ-գնաց խտուտիկի սերմերի նման և մարեց խավարում։

— Ողջույն քեզ, Ֆրենկ Քառուիերվուդ, անզոր տիրա-

Կալդ, իշխանդ ցնողական թագավորության: Իրականությունը քեզ համար պատրանքների կորուստն է միայն:

Այսպես կարող էին գուշակել վճռեկները. նրանց կարող էին կրկնել կախարդական կաթսայի գոլորշու մեջ հառնող տեսիլները: Եվ այդ ամենը ճշմարտություն կլիներ:

Ամեն մի խելացի մարդ այդպիսի նախաբանից այլ վերջարան չի կարդա:

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԱՍՔ հԱՅՈՐԳՐՎ

Հատոր III

ՖԻՆԱՆՍԻՍ

Խմբագիր՝ Հ. Կ. Սեան
Նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Ա. Բեդրոսյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Ա. Ախիրյան
Վերստ. սրբագրիչ՝ Դ. Պ. Հովհաննիսյան,
Բ. Բ. Սահմակյան

Դանձված է արտադրության 7/X—1966 թ., ստորագրված է տպագրության 1/VII—1967 թ.: Պատվեր 1742, տիրաժ 20000: Թուղթ՝ տպագրական № 2, 84×108¹/32, հրատ. 31,6 մամ., տպ. 44,0 մամ.=36,08 պայմ. մամ.։ Գինը՝ 1 լ. 05 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:
ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուկի կոմիտեի պոլիգրաֆ-արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան,
Երևան, Ալավերդյան № 65: